



856

L. III. 5







ՆՈՐ ՇՐՋԱՆ

III ՏԱՐԻ

ՄՈՒՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№. 1

ՅՈՒՆՈՒԱՐ

1903



ԹԻՖԼԻՍ

Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի:

Միքայելեան փողոց № 81.

1903

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 1

	Երէս
1. ՄԻՐԿԻ ՍՈՒՐԲԸ, գէղ Ա. Ահարոնեանի	5
2. ՓԱՐԻԱՆԱ, լեզենդ, Յոզ. Թումանեանի	33
3. ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁԸ, յօդ. Առանձարի	39
4. ՎԱՌ ԵՐԿԻՆՔԸ..., բանաստեղծ. Ա. Իսահակեանի	56
5. ՇՈՒՇՈՒՑ—ԹԱՐԻԶ, ճանապ. նկատալ. ըժ. Բ. Օհանեանի	57
6. ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ԱՍՈՐԻՆԵՐԸ, յօդ. Ե. Փրանգեանի	69
7. ՀԱՅ ԿՆՈՁ ՁԱՅՆԸ, յօդ. Տիկին Նրանոյշի	77
8. ՆԵՐՍԸ, գրամատիկ. պատկեր Մ. Մետերլինկի, թարգմ. Ա. Ա.	88
9. ԵՍ ԳԻՏԵՄ..., բանաստեղծութիւն Ա. Իսահակեանի	100
10. ԳԵՐՄԱՆՆԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ԿԱԶՄԸ, յօդ. Quidam-ի	101
11. ՆԵԿՐԱՍՍՈՎԻ ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, թարգմ. Ալ. Ծառուբեանի	116
12. ՅՐԱՆՍՍՅԻ ՄԷԿ ՔԱՆԻ ՀԱՍԱՐՄԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ, յօդ. Տիգրանի	119
13. ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՎ, Կուրբաթ-Հարունի	131
14. ՓՕԼԻՍ, յիշողութիւն Սեղրակ Օտեանի	139
15. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— 1) Mars. «Բոյրը».— 2) Յար. Թումանեան. «Նուպներ».— 3) Յար. Թումանեան. «Մուսա».— 4) Կ. Մտեհանեան. «Արտի խորքերից».— 5) Մ. Գօրկիյ. «Ամալի գաշտում», թարգմ. Ա. Մ-ի.— 6) Ա. Չէխով. «Գիմախ», թարգմ. Յ. Ե.— Ի. 7) Վ. Գարշին. «Ազղանշան», թարգմ.— 8) Գ. Գր Մօլլասան. «Հայր Միօնը», թարգմ. Ա. Տ.— Պ.— Ի. 9) Բերդնիկով. «Նոր պետութեան վերաբեր. գէպի կրօնը», թարգմ. Գ. Ալթ., Տ. Յ.	
Պ. Գաղաշեանի պատասխանի ստեղծ. Ստ. Մալխասեանցի.	159
Նոր ստացուած գրքեր	175
16. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ.— Մանգանէզ եւ նրա արդիւնաբերութիւնը Կովկասում, Յ. Կարապետեանի	176
17. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. Ախալքալաքի գաւառի հայ եկեղեցական հայրերը	181
18. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ.— Մոսկուայի ղեղարուեստական թատրոնը.— ձարտարապետական նոր ոճը.— Մաքսիմ-Գօրկիյի «Нá ДНЪ» պիեսը Գեղարուեստական թատրոնի բեմի վրայ.— Այդ պիեսի համառօտ բովանդակութիւնը Լ. Ա.— Տիկին Սիրանոյշի Թիֆլիսում.— Ա. Գամեանի յիշատակին ցերեկոյթ Տ.	186

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.ՄՍԱԳԻՐ

№ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

1903



ԹԻՖԼԻՍ

Արագատիպ Մ. Մարտիրոսանցի:

Միքայելյան փողոց № 81.

1903

Дозволено цензурою. Тифлисъ, 27 января, 1903 г.

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 1

	Երև.
1. ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ, վեպ Ա. Ահարոնեանի	5
2. ՓՄՐԻԱՆԱ, լեզու, Յով. Թումանեանի	33
3. ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁԸ, յօդ. Առանձարի	39
4. ՎԱՌ ԵՐԿԻՆՔԸ... րանաստեղծ. Ա. Խաճակեանի	56
5. ՇՈՒՇՈՒՑ—ԹՄԻՐԻՉ, ճանապ. նկատող. ըժ. Բ. Օհանեանի	57
6. ՊՄՐԱԿԱՍՏՅԱՆԻ ԱՍՈՐԻՆԵՐԸ, յօդ. Ե. Փրանգեանի	69
7. ՀԱՅ ԿՆՈՁ ՉԱՅՆԸ, յօդ. Տիկին Հրանդշի	77
8. ՆԵՐՍԸ, գրամատիկ. պատկեր Մ. Մետերլինկի, թարգմ. Ա. Ա.	88
9. ԵՍ ԳԻՏԵՄ... րանաստեղծութիւն Ա. Խաճակեանի	100
10. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ԿԱԶՄԸ, յօդ. Quidam-ի	101
11. ՆԵԿՐԱՍՕՎԻ ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, թարգմ. Այ. Ծատուրեանի	116
12. ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷԿ ՔԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ, յօդ. Տիգրանի	119
13. ՇՎԷՅՅԱՐԱԿԱՆ ԳԻՒՂ, Կուրքաթ-Հարունի	131
14. ՓՕԼԻՍ, յիշողութիւն Սեդրակ Օտեանի	139
15. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— 1) Mars. «Բոյրը».— 2) Յար. Թումանեան. «Նուագներ».— 3) Յար. Թումանեան. «Մուսա».— 4) Կ. Ստեփանեան. «Սրտի խորքերից».— 5) Մ. Գօրկիյ. «Ամայի դաշտում», թարգմ. Ա. Մ-ի.— 6) Ա. Չէխով. «Գիւմակ», թարգմ. Յ. Ե.— Ի. 7) Վ. Գարշին. «Ազդանշան», թարգմ.— 8) Գ. Կը Մօպսսան. «Հայր Միօնը», թարգմ. Ա. Տ.— 9) Բերդիեւով. «Նոր պետութեան վերաբեր. դէպի կրօնը», թարգմ. Գ. Ալթ., Տ. Յ.	
9. Գաղբաշեանի պատասխանի առթիւ. Ստ. Մալխասեանցի	159
Նոր ստացուած գրքեր	175
16. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ.— Վանդանէզ և նրա արդիւնաբերութիւնը Կովկասում, Յ. Կարապետեանի	176
17. ԳՍԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. Ախալքալաքի դաւառի հայ եկեղեցական հաշիւները	181
18. ԳԵՂԱՐՈՒԹԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ.— Մոսկուայի գեղարուեստական թատրոնը.— ձարտարապետական նոր ոճ:— Մարտի-Գօրկիյի «На дне» պիեսը Գեղարուեստական թատրոնի բեմի վրայ.— Այդ պիեսի համառօտ բովանդակութիւնը Լ. Ս.— Տիկին Սիրանոյշը Թիֆլիսում.— Այսամեանի յիշատակին ցերեկոյթ Տ.	186

19. **ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.** — Արեւելյու վերաբերմունքը դէպի «բարերարները». — Հարստութեան հասարակական ծաղումը. — Հասարակութիւնը բարոյական իրաւունք ունի բարեգործութիւն պահանջելու հարուստներից. — Իրոնց եկամտով որ մասն են նուիրում մեր բարեգործները. Նիւթական ոյժի հասարակական սանձահարումը. — Մայրերնի լեզուի նշանակութիւնը ժողովրդական դպրոցներում. — Պարբերական մամուլի հարիւրամեակը Ռուսաստանում, *Լեւոն Սարգսեանի*

Ֆինանսների մինիստրի գեկուցումը. — Նոր հայերէն թերթ. — Հայոց հողերը վարչութեան դատը 194

20. **ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.** — Կեանքի հակասական կազմուածքը. — Օպպորտիւնիստ արմատականի փետուրներով զարգարուած. — Միշտ իր համոզմունքներին հաստատ քաղաքական դործիչը. — Ժօրէսի ճառը եւրոպական խաղաղութեան մասին. — Վակեդոնիան դիպլոմատների մրցման զոհ, *Լ. Ս.*

Պատրիարք Յովնանեանին սպանելու փորձը. — Կիլիկիայի նորընտիր կաթողիկոսի հաստատումը. — Ատրպատականի թեմի համար կազմուած կանոնադրութիւն: 211

21. **ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.** 220

22. **ՆՍՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.** 230

23. **ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.** 231

24. **ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ** «

25. **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.**

26 **ՅԱԻԵՂՈՒՄՑ, Ա. Ըօլլէսի՝ Հրաչալի պարր, Թարգմ. Սա. Լխիցեանի** 1—32

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագիւններից զրել պարզ, մտնաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:
2. 2՛րնդունուած մեծ յօդուածները պահւում են խմբագրատունը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերազարձուում: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:
3. Գրուածքների վարձատրութեան շափը սրոշում է խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերադարձում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուճի» համարը չ՛օտացուելու դէպքում պէտք է խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պոստային զրասենեակի հաւատարմիրը (уведомление), որ ամսագրի համարը չի յանձնուած գանգատուորին:

ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ

I

Առաւօտ էր. Գայլատուայ լճակը դեռ չէր ազատուել վաղորդեան մշուշից, որ մի փոքր բարձրացած ջրի մակերևոյթից, թափանցիկ ամպի պէս հանդարտ կանգնել էր վերեւում, կարծես դժուարութեամբ էր բաժանուում իր յեղեղեղուտ անկողնից, ուր անց էր կացրել գիշերը լճակի գրկում: Գարնանային առաւօտեան շողերով ողորդւած վճիռ լճակը գրաւիչ նազանքով ծփծփում էր հանդարտ, ծոյլ-ծոյլ շոյում էր իր կանաչապարզ ավերը, նման քնից նոր արթնցած գեղեցիկուհու, որ կիսամերկ պառկած՝ ձգձգուում, յօրանջում է մեղմիւ և պչրանքով ցնցում, փռում է իր հարուստ վարտերը: Թեթեղեփիւն անցնում էր ջրի մակերևոյթով, պեակները իրար էին գիպչում և միեւնոյն անկողնում կոպր կոպրի պառկած չորածճի մանուկների պէս ասես քչիչում էին իրար սկանջում, բաներ պատմում և սարս միահամուռ քրքջոյ բարձրացնում: Այեակների շարժումից ջրերի մակերևոյթի վրայ անթիւ, մանր պսպղուն օղակներ էին կազմուում, որանք փրփրուն կնճիւնների պէս փայլվում էին և խաղում արևի գրաւիչ շողերի երեսին:

Սպիտակ ձկնկույները, վայրենի մեծ ու փոքր բազերը և այլ ջրային թռչունների մեծ բազմութիւն և բամբերով խաղում էին ջրերի վրայ, յուզում այրները,

իրանց առաւօտեան որսը կատարում, սուր ճիշերով խնդակցութիւն յայտնելով ծագող արևին: Կարմրախոյտ ձկները բազմաթիւ վտառներով խաղում էին ափերի մօտ, երբեմն երբեմն իրանց վարդադոյն թևերը ցոյց տալով արևին կամ նրանցից մէկն ու մէկը ցատկում էր վեր ջրի մակերևոյթից, կարծես ձկնկուլների ճաշակը դրդուելու համար մի վայրկեան սուսկում, ոսկեզօծւում էր արևի շողերի առաջ, ապա նորէն ծածկւում ջրերի վճիռ ծոցում:

Լճի կենտրոնում մշուշի միջից սևին էր տալիս կըղզին, մութ ու անձև զանգուած, որ կարծես լողում էր ջրերի մէջ, իսկ նրա դէմ ու դէմը, ցամաքի մի կտոր, երկարացած բազուկի պէս ձգուած մինչև լճի խորքը, կարծես աշխատում էր բռնել, դուրս քաշել ջրերի մէջ մնացած իր եղբօրը՝ կղզին, բայց ալիքները չէին թողնում, նրանք յուզւում ու խաղում էին երկսի մէջ, ասես հեգնելով նրանց անօգուտ ճիգերը: Հեռու արևելքում Մասիսը սպիտակափառ գլուխը բարձրացրած՝ իր չորս կողմի բլուրների և սարերի կատարների վրայից ասես աշխատում էր լծակին նայել, իր պատկերը տեսնել նրա վճիռ ջրերում, բայց իր անզօրութեան մէջ գլուխը քաշ էր ձգել, մոռայլուել ինչպէս մի վշտացած ծեր իշխան, որ առաջին անգամն է զգում զօրութեան թուլանալը: Բարդուղեան լեռներն իրանց ալևոր մօր փէշերից բռնած մանուկների պէս իրար հրհրելով ձգւում, գալիս էին հիւսիսից, նրանց առաջապահները՝ Սինակայ սարերը արգէն գրաւել էին լճակի հիւսիսային ափերը և ոտները կախած ջրերի մէջ կարծես գոհութեամբ ժլատում էին իրանց այս յաջողութեան համար և չարածճի կերպով ալիքների հետ խաղալով հեգնում էին յետ մնացած ընկերներին: Աւելի հեռու հարաւում՝ Սուկաւէտ ու Ջրաբաշխ լեռները տխրութեամբ դիտում էին լիճն ու իր շրջակայքը և կարծես դժգոհ էին որ իրանց քոյրերի պէս չեն կարող գրկել, գուրգուրել այդ յեղշիզուկ գեղեցկուհուն, որի գալար մարմինը ալեղի պէս

կորացած, փարեղ էր շրջապատի լեռներին, կանաչազարդ ավերի մէջ նազելով հետում էր մերթ մէկին, մերթ միւսին ժպտալով: Օդը լի էր ցոլազարդ ու ծաղկաւէտ մարդագետիններից բարձրացող նուրբ անուշահոտութեամբ, ողջ շրջակայքը կարծես բուրմունք էր արտաշնչում: Այդ ժամին գեղեցիկ էր և՛ ծովակը և՛ Մասիսի թիկունքից բարձրացող արևը և՛ ծաղկազարդ լեռներն ու ձորերը իրանց վազորդեան մշուշով, որ նուրբ քողի պէս թափանցիկ ծալքերով սքողում էր ամեն ինչ:

Օրուայ այդ ժամին Արեգին գիւղից մի երիտասարդ դուրս եկաւ և հանդարտ քայլում էր դաշտերով գէպի լճակը: Նա բարձրահասակ էր և գեղատեսիլ, գլխարկը ճակատի վրայ լիւնցրած, շուրջը չէր նայում: գնում էր գլխակոր, խիստ մտապէս կերպարանքով: Նա հասաւ լճին, անցաւ գէպի թերակղզին, առաջ անցաւ մինչև ծայրը, բարձրացաւ աւերակ վանքի քարերի վրայ և հայեացքն ուղղեց գէպի հեռու, գէպի շրջապատի լեռները: Յետոյ նրան գրաւեցին զոյգ հաւալուսներ, որոնք փռահանգորէն լողում էին կապոյտ ջրերի վրայ իրար գուրգուրելով քնքոյշ հպումով:

—Երանի՛ ձեզ, մրմնջացին նրա շրթունքները:

Թոչունները մի վայրկեան նայեցին այս մարդուն, նա անշարժ նստած էր, ուստի շարունակեցին իրանց սրբը: Նրանց բաց վարդազոյն փետուրները փայլովում էին արևի շողերի տակ և իրանց ցցունքազարդ գլուխներն անդադար ներս էին թաղում ջրերի մէջ, տափակ լայն կոցով բռնում էին ձկները, ապա բարձրացնում գէպի վեր իրանց պարանոցը, պահում ուղղահայեաց, ձուկն ընկնում էր կտորոցի տակի լայն, գեղնաուսն պարկի մէջ, և կրկին թաղում էին գլուխները ջրերի մէջ: Նրանցից հեռու բազերի երամները օրորւում էին ալիքների վրայ կամ խաղաւ կորչում էին ջրերի տակ, մի այլ տեղում խմբով յայտնուելու համար:

Երիտասարդը շարունակում էր նայել, և կարծես ձանձրացած այս բոլորից, նստած տեղում երեսի վրայ

ընկաւ և նայում էր հէնց իր առաջը ծփծփացող ալիքներին, ուր ձկներն ահագին բազմութեամբ հաւաքուած իրար սղմում, հրհրում էին քարերի մօտ. երիտասարդը մի խիճ առաւ, ձկեց նրանց վառուի մէջ, կենդանիները ցրիւ եկան և կորան ջրի խորքում:

— Ի՞նչ էլ ձանձրալի էք, գնացէք, դարձեալ մըր՝ մընջաց երիտասարդը:

Արևը բարձրացաւ, մշուշը վերացաւ, առաւօտեան հովն իսպառ դադարեց, փոքրիկ ալեակներն էլ խաղաղուեցին. լճի մակերևոյթը հարթ հաւասար ապակու պէս այժմ սղաղում էր ակնախտից փայլով, արևի շողերն ասես էլ չէին ներս թափանցում, այլ անդադագառնում էին և բեկբեկում մ'թնոյրդի մէջ օսկեդոյն խուրձերով:

Երիտասարդը նայում էր և չը կարողացաւ նկատել, թէ ինչպէս մի տարիքաւոր կին, որ դիւղից նոյն ժամին դուրս գալով քայլ առ քայլ հետեւ էր նրան, հասել էր նոյն լճերակղզուն, անցել է հինաւուրց վանքի աւերակներին և այժմ մի փոքր հեռու կանգնած՝ ուշի ուշով հետևում էր նրան, նայում էր նրա շարժումներին ծայրայեղ զգուշութեամբ: Կինը երևի արտասուում էր, նա բարձրացրեց առաջի գոգնոցը աչքերը սրբելու, այդ շարժումը խրանեցրեց հաւարումներին, նրանք մի անախորժ ճիչ արձակելով իրանց լայն թևերը զարկեցին ջրի մակերևոյթին, մի քանի անգամ թափ առան և բարձրացան օդի մէջ: Նրանց հանած ազմուկից վախեցած նաև բազերն իրար անցան, կռկռացին, ձկնկուլներն էլ միւս կողմից խառնուեցին, ճչացին և ամենքը, կարծես խօսք մէկ արած, թռան դէպի Բայազէտի շամբումները:

Երիտասարդը ցնցուեց, գլուխը բարձրացրեց, շուրջը նայեց և տեսաւ տարիքաւոր կնոջը և սօքի կանգնած լուռ նայում էր մռայլ, վշտոտ հայեացքով:

— Ա՜ճ, քի մեռնեմ, գնաակս, դառնուկս, ինչ է սատահել, եղները դամում մնացին, արօրը դրանը, ինչո՞ւ ես մօրդ ողջ ողջ թաղում, քեզ ինչ է եղել, երեսիդ նայեցի, սգաւոր բալա, և յետևիցդ ընկած եկայ:

Երիտասարդը շարունակում էր նայել մօրը միևնոյն ցաւոտ հայեացքով, ապա առաջացաւ դէպի նա, ձեռքն ուսին դրեց. մայրն արցունքոտ աղաչական աչքերը նրան դարձրեց.

— Տուն գն՛ մայրիկ, ես կը դամ, կը դամ, ասաց Ասօն և հեռացաւ գնաց դէպի հեռաւոր ամերը, հեռաւոր լեռները:

Մայրը կանգնած՝ նայում էր նրա յետևից երկար ժամանակ, երբ որդին ծածկուեց, գոգնոցով աչքերը սրբեց, մտաւ աւերակ եկեղեցին, ծունկ չոքեց մամուռ պատ քարերի վրայ և աղօթում էր, աղօթում իր որդու համար, որ չարից ազատ մնայ:

Ճաշ էր արդէն, երբ նա աղօթքը վերջացրեց և երեւրալով ու վշվշալով տուն դարձաւ ջարդուած:

II

Ա... գիւղում ոչ ոք չիմացաւ, թէ ինչո՞ւ յանկարծ սուս կացաւ Ասօն: Գիւղի ամենից սիրուն, ամենից սքրտոտ, ամենից ուրախ այդ տղամարդը, աղջիկների սիրոյ, երազների գողտրիկ առարկան, «Ջան-դելիւմի» վիճակախաղի մշտական հերոսը յանկարծ մուայլուեց ու լռեց: Ասօն մեջեջ՝ ինչպէս կարկաչին աղբիւրը խեղտուած երաշտից, ինչպէս սաղարդում երգող փոքրիկ թռուչունը, որ ամպերի տակ յանկարծ նշմարում է բազէի ստուերը: Այնպէս լռեց Ասօն:

Նա տխուր էր, նա դարդ տնէր: Յաւեր կան, որ հսկայ սարն էլ տանել չի կարող, ջահիլ դալար սիրտն ի՞նչ անի, երբ հոգին մեմուռ է լալիս ու կրծքի տակ փոթորիկ կայ՝ ձեռքն ինչո՞ւ գործի, ինչպէս գործ: Գիշերն ամբողջ Ասօն անկողնում իր բարձր ճմեռեց, կուճքը շանդոեց, շրթունքները կծստեց, մրմնջաց, տնքաց, լուսաբացին վերկացաւ, թողեց եղներն ու արօր, պատից կախած թողեց կաշուէ խարաղանն և հաստ քղանը, վըշ-

սոս հայեացք ձգեց այդ բարբի վրայ և լուռ դուրս եկաւ գոնից: Մայրը հասկացաւ, որ սրդին մեծ ցաւ ունի, սղ զիշերը հետեւել էր նրա տնքացին:

— Ասօ, սրգի, վար ու ցանքը, արան ու արօր, ցաւդ ինչ է սրգի ջան, հիւանդ ես:

— Ձեմ կարող մայրիկ, աշխատանքը ձեռքիցս վայր է ընկնում: Եւ նա դուրս գնաց, բայց մայրն ինչպէս համբերէր, դուրս եկաւ յետեւից ու քայլեց կամացուկ, իմանալու համար թէ ո՞ր է գնում սրգին: Ասօն վանքի աւերակներում մօրը ճանապարհ գրեց և ինքը անորոշ մնար հայեացքով գնաց թափառելու գաշտերի և ձուրերի խուլ հեռաւորութեան մէջ: Եւ մայրը՝ խեղճ նուստֆարը, ցաւած սրտով սուն եկաւ, նայեց սրահում, աչքերը յառեց դրանք, մինչև երեկոյ սրգուն էր սպասում, իսկ նա չը կար ու չը կար. ասաց կը գամ, մայրը հաւատաց, բայց չեկաւ: Եւ նուստֆարը նստած մտածում է հազար ու մի սև բաներ և անցեալից շատ յուշեր ու պատկերներ մէկիկ մէկիկ եկան ներկայացան նրա աչքին. նրանք ամենքն էլ խօսում են իր տնից, իր օջաղից և շարքն այնքան երկար է, որ համնում է մինչև իր ամուսնութեան առաջին տարիները, մինչև իր հարսնութիւնը: Ի՞նչ օրեր էին:

Լաւ է յիշում նուստֆարը. նա նոր ամուսնացել է Մուրադի հետ. օջաղը շէն է, բաղդը ժպտում է, նա ջահիլ, սիրուն կին է, ցանք ու արա ունին, լուծ ու եզ ունին: Յետոյ վրայ են համնում նոր աւելի երջանիկ օրեր, նուստֆարը մայր է, երկու գոզարիկ երեխաների մայր, նախ ծնուեց Գրքօն, երկու տարի յետոյ աշխարհ եկաւ Ասօն, իր թառլան Ասօն: Մեծացան, հօրը թև ու թիկունք դարձան: Ա՛հ, երբ երեկները իր զոյգ զաւակները զոյգ արծիւների պէս եզների մէջքին թատած գաշտից սուն էին դալիս, երբ նրանց ձայնը հնչում էր դրան առաջ, ինչ էին զգում հայրն ու մայրը: Լաւ էր է՛է... շէն, պայծառ օջաղ, ժրտան գլխաւորը՝ բարի աշխատաւոր ամուսինը կենդանի, սրգիներն՝ աննման: Հե-

ուս են այդ բոլորը, երազի պէս են դալիս անցնում նրա աչքի առաջով:

Յիշում է ինչպէս հիմա. Նունուֆարն Ասօին էր շատ սիրում, հայրը՝ Գրքօին: Մեծն աւելի աշխատասէր, հօրն աւելի հնազանդ էր, իսկ Ասօն, դէ նա ուրիշ բան էր: Նա կարծես արծւի ճուռ լինէր, կարծես այս աշխարհում, այս երկնքի տակ, սեւուոր, ցուռոտ գիւղում ծնուած չը լինէր, նա գեղեցիկ էր և սիրում էր, որ ամեն բան լաւ, գեղեցիկ, դրաւիչ լինի, որ աշխարհում գէշ բան չը լինի: Ա՛խ նրա գլխարկը, այն միշտ թեք դրած գլխարկը, որ այնպէս սազում էր նրա լայն երեսին, մազի այն փունջը, սիրուն գալարուն փունջը, որ կախուած էր ճակատի վրայ աջ կողմից:

Փոքր ժամանակ՝ Նունուֆարը լաւ յիշում է, նա Ասօին տանում էր հետը դաշտ, երբ ինքը գնում էր բանջար քաղելու: Ասօն հեռանում էր խմբից ծածկուած խոտերի մէջ և յետոյ վերադառնում ուրախ ուրախ կանչելով մի հազուադիւրս ծաղիկ ձեռքին բերում էր մօրը ցոյց տալիս:

— Տես, տես մայրիկ, որքան գեղեցիկ է, ծմակում գտայ, բարձր տեղ էր է՛հ հեռուից տեսայ, չանգուելով բարձրացայ և քաղեցի, էլի կ'երթամ: Թէ գտնեմ, կը բերեմ: Եւ երեխան կարմրած, հեւալով նորէն վազում էր ծածկուած խոտերի մէջ, նոր ծաղիկներ հաւաքում, և դարձեալ ճշտով, ուրախ ուրախ մօրը բերում: Իսկ թիթեռները, ախ նա որքան էր սիրում, ինչպէս էր ընկնում նրանց յետևից, մանաւանդ՝ երբ թեւերը դոյնզդոյն էին ու նախշուն: Քանի՛ քանի անգամ լաց է եղել, երբ երկար շարչարտելուց յետոյ չի կարողացել բռնել ցանկացած սիրուն թիթեռ:

Հասցա ամպերը... Ասօի մշտական սիրոյ, հիացմունքի այդ առարկաները: Մայրը քաղհան է անում, իսկ փոքրիկ Ասօն պառկել է խոտերի մէջ, ձեռքերը գլխի տակ դրած անյագ նայում է դէպի երկինք, ուշադիր, բորբոքուած աչքերով, ամպերի խաղին է հետևում, նը-

րանց զանազան ձևերը գիտում: Այդ երկնային խաղը յափշտակում է նրա մանկական ողին, Ասոն տեսնում է նրանց ջրի գալը պատառ-պատառ, տեսնում է նրանց պարը, պայտաները, հետևում է նրանցից իւրաքանչիւրի ամենաքնքոյշ, ամենանուրբ գալարներին, երազում է կարծես և ապա վազում է մօր մօտ:

—Մայրիկ, մայրիկ, տես այն ամպը, որքան սիրուն է, տես նա գնում է դէպի Մասիս, մայրիկ ինչո՞ւ բարբ ամպերը դէպի Մասիս են գնում:

Խեղճ մայրը չի հասկանում, թէ իր փոքրիկն ի՞նչ է գտել ամպերի մէջ, բայց անորոշ կերպով զգում է, որ դա լու բան է, ապա բռնում է իր զուակի սիրուն գլուխը և խանդաղատանքով սղմում է իր բազուկների մէջ, սղմում է մայրական տաք, սիրալիլ կրծքին:

—Ա՛խ, արծիւ բալա:

Նուռուֆարն ինչպէս մնումնայ, մի օր, ան, հապար երանի էր էն օրին, Ասոն հազիւ տաս-տասներկու տարեկան եզները տարել էր արածացնելու լճի ափերին, ինքը նստել էր մի քարի վրայ, աչքերը յառել ջրերին ամբողջ ժամերով, իսկ եզները ազատ, արձակ ձգւած՝ մտել, տրորել էին հարեան Յուսօի արտառ: Գեռ ճաշ չեղած՝ մէկ էլ տեսաւ Յուսօն ինքը եզներն առաջն արած եկաւ գողգոռարով, իսկ նրա յետեից գալիս էր Ասոն գլուխը քաշ և այտերն ուռեցրած, սիրաբ լցւած: Հայրը՝ Մուրադը, զայրացած որդու այս անհոգութեան համար յանդիմանել սկսեց.

—Ախր ինչո՞ւ ես թողել եզները հարեանի արտը տրորեն:

Երեխան լուռ էր, գլուխը քաշ ձգած:

—Չէ՛ քեզ եմ հարցնում, կրկնեց հայրն աւելի զայրացած նրա յամառ լուռութեամբ:

—Ես... ես... լճին էի նայում... ձկները խաղում էին... էլ չեմ անի, ասաց երեխան հեկեկաց և գլուխը ծածկեց մօր փէշերի մէջ:

Հարեանը ժպտաց, դո՛հ այդ բացատրութեամբ,

Հայրն աւելի խոժոռուեց երեխայի այս տարօրինակ պատասխանի վրայ, նա դայրացաւ, որ որդին դաշտ է դընտում փոխանակ եզներին հսկելու, նստում, նայում է, թէ ձկներն ինչպէս են խաղում, ալիքներն ինչպէս են իրար հըհըում. բայց մայրը... դէ ինչ անէր, իր ազան այնպէս էր, սիրուն էր ու սիրուն բանով դբաւում էր. նա գրկեց իր արտասուղ զաւակին, համբուրեց թաց աչքերը.

—Օճ, թաւան բաւա, քեզանից ինչ պիտի դուրս գայ: Տարիներ անցան Գրքօն և Ասօն հասած տղամարդիկ դարձան: Հայրն ասում էր, թէ երկսին մի անգամ մից պիտի պսակել և մի օրում հարսանիք անել: Գրքօնն նշան գրին, բայց Ասօն ոչ ոքի չհաւանեց, սիրուն չէն, ասում էր: Հայրը փորձեց ստիպել իր ուղած աղջկայ հետ նշանել, իզուր, Ասօն բացէ ի բաց մերժեց: Ճար չը կար, պէտք էր Գրքօնն հարսանիք անել Գիւլնաղի Շողերի հետ: Բայց բազմի ալ կերպ էր անօրինել. հարսանիքից մի քանի շաբաթ առաջ Գրքօն մի քանի ընկերներով Բայազէտի շամբուաների մէջ կինճ սրաւու էր գնացել, նոյն երեկոյեան ընկերները նրա անկենդան դին բերին տուն. կատաղի կինճը գնդակից ազատուած, իր փախստի ժամանակ, ժանիքով հարուածել էր Գրքօնն և փորը պատուել և տեղն ու տեղը մահացրել էր: Տէր Աստուած. խեղճ ծնողների գլխին ասեա երկնքից քար ընկաւ. բազմի առաջին հարուածները այդ Մուրադի ընտանիքին. բայց ինչ հարուած. ո՞վ կարող էր տանել: Մուրադը նրանից յետոյ երկար չապրեց և նուսնուֆարը մնաց իր մի հատիկ Ասօի և իր տասն տարեկան աղջկայ Շուշիկի հետ: Յաւը մեծ էր, բայց էլի, դէ Ասօն մենակ մի ընտանիք արժէր, նա մենակ մի ամբողջ տուն կը լցնէր, մայրն իր ցաւն Ասածուն յանձնեց և չը սրանձաց: Ասօին աղերսեց, որ իր մեռած եղբօր նշանածը չը թողնի իր հօր օջաղից դուրս գնայ. Գրքօնն բաժին չեղաւ, թող ինքն առնի: Ասօն մի փոքր մտածեց մօր առաջարկութեան վրայ և համաձայնեց:

էլի լաւ էր, Նունուֆարը Ասօի պէս հասած ու նշանուած սրբի ունէր, փոքրիկ Շուշիկն ունէր, այսքան նով էլ դս՛ն էր Աստուծուց. բազդն ումն է միշտ ժպտացել, ո՞վ ցաւեր, սեւեր չի տեսել, ո՞վ է այս փուշ աշխարհում կատարեալ երջանիկ: Բայց այժմ այս ինչ է պատահում, բազդն այսքանն էլ շատ է համարում: Ի՞նչ ունի Ասօն, որ այս քանի օր է մուսլուսել է ու սգուորել: Նունուֆարը հեկեկաց, գոգնոցը դէպի աչքերը տարաւ: Գուռը ճոճաւով բացուեց, ներս եկաւ մի փոքրիկ աղջիկ. Շուշիկն էր, դաշտից էր դալիս և փոքրիկ գոգնոցի մէջ բանջար էր բերում:

—Մայրիկ, Ասօին տեսայ, վազեցի հասայ, վրաս չը նայեց, թողեց գնաց, մայրիկ չորս կողմից ինձ ասացին, թէ եղբայրդ քեզ չի սիրում:

—Օճֆ Շուշիկ ջան, բոլորը գնացին, բոլորը թողին ինձ սգաւոր ու անտէր, մէկ դու մնացիր, բալաս, քո սգաւոր մօրը մխիթարելու: Նունուֆարը դրկեց փոքրիկ աղջկան, որ նայում էր արտասուող մօրը և չէր հասկանում, թէ ի՞նչ կայ, ինչո՞ւ է արտասուում. ապա ինքն էլ սկսեց լալ:

—Մայրիկ, երբ կը գայ Ասօն. ես նրա համար այսօր այնքան սիրեց ու զօխ եմ բերե՛լ:

—Կը գայ, կը գայ աղջիկս. Աստուած ողորմած է, կը գայ:

Երեկոյ էր, արեւը թեքուեց դէպի հորիզոնը, մայրն սպասում էր, Ասօն չը կար և չը կար:

Գաշարը դատարկուեց, մարդիկ յետ եկան, մառախուղն իջաւ, բայց Ասօն չը կար դեռ, մայրն ինքը հոգայ եղները, կերակուր տուեց, գամը մաքրեց և նստեց էլի սպասեց: Շուշիկի հետ կծկուած սրահի թմբի վրայ նա աչքերը յառել էր բակի դրանը: Վերջապէս սանաճայն լսուեց, մայրը վեր կացաւ ընդ առաջ վազեց: Ասօն էր... դարձեալ ախար, դարձեալ մուսլուսած: Մեծ, սիրուն աչքերի վրայ թախիժը ծով էր կապել, գեղեցիկ, առնացի ճակատի վրայ կնճիւնները կախուել էին ինչպէս

մութ ամպեր: Մայրը վախեցած՝ նայում էր և կարծես էլ չէր ճանաչում իր գաւակին, այնքան փոխուել, մաշուել էր նա այս կարճ ժամանակում:

— Ասօ, քե մեռնեմ, ի՞նչ ունես:

— Դարդ ունեմ մայրիկ, դարդ ծովի չափ:

— Յաւդ տանեմ Ասօ, սրդի, ծով դարդդ ինձ տուր, անխ, ջահէլ ջիւան քո արեին թող մութ ամպը հով չանի, դալար կեանքիդ հաստա ծագիլին թող ցուրտ հովը չը դիպչի:

— Ձէ, քեզ չեմ տայ դարդս մայրիկ, մի քիչ կը տամ սարին-քարին, մի քիչ կը տամ սև ժայռերին, գիժ գետակին աղերս կանեմ, մի քիչ էլ նա հեաը տանի, թէ ծով դարդիցս էլի մնայ, էն էլ սրտունս խոր կը թաղեմ, որ աշխարհում մարդ չիմանայ, դարդս մեծ է, մայրիկ շատ մեծ, թէ որ յանկարծ «խալխն» խմանայ... ախ չեմ կարող, դարդը լաւ է քանց ամօթը:

— Հէյրան լինիմ քեզ Ասօ ջան, թող աշխարհում մարդ չիմանայ, դարդդ մենակ խեղճ մօրդ տուր, շատ չեմ պահի ըյս աշխարհում, չոր դիխիս հեա շուտ կը թաղեմ հողի տակ, մի մեծ ծանր քար էլ վրաս քաշիր, ես ու դարդդ շուխտ քրօջ պէս լաւ կը քնենք փոսի մէջ, էլ աշխարհում մարդ չիմանայ, դարդդ մենակ խեղճ մօրդ տուր:

— Ձէ, չէ, մայրիկ, դուն էք խեղճ ես, սարերն են մեծ, ձորերն են լայն ու խորունկ, մեր գիժ գետն էլ գիտե՞ս ի՞նչ սրքան ուժեղ է, թող որ այնտեղ թաղեմ դարդս. քամիների հեա կը վաղեմ ձորերում, փոթորկի հեա ժայռերի կատարներին կուռնամ, գիժ գետակի մոնչիւնի հեա ես ցաւիս երգը կասեմ և ամեն տեղ պատառ-պատառ ես ծով դարդս կը փռեմ, թող իմ մայրը չը տանջուի սրտիս խոր-խոր ցաւերով: Հանդիստ մայրիկ, թող ինձ հանդիստ դարդիս հեա:

— Ա՛խ, քե մեռնեմ, էդ ի՞նչ դարդ է, ի՞նչ ամօթ, Ասօ ջան, որ սևաւոր մէրդ էլ պէտք է չիմանայ: Օ՛ֆ, օ՛ֆ, Աստուած, մէջք եմ կտարել, ծամ սիպտակել, որ

սեն իմ դաւկից հեռու մնայ, օջազի ծիլ ծագիկը չը թու-
մի, ինչ ես անում կապուտուր Տէր: Ասօ, Ասօ, մեղք է
մէրդ, կամ ցաւդ տուր, կամ գերեզման, դաշտ ու ձո-
բերն ինչ ես թափառում:

— Գաշտն ինձ կը փրկի, մայրիկ, դարդս եմ ցանում
ձորերովը մէկ, անխ, սարեր-ձորեր, ջան ձորեր, ողորմած
ձորեր, այնտեղ բաց է մայրիկ, շատ բաց ու արձակ.
լիբ-լիբ կը ծքով շունչ եմ առնում և քամիների թևերի
փրայ վազվզում, բաց ճակատս այրուած կուրծքս ծովին
եմ տալիս, այնպէս լաւ է, այնպէս հանգիստ, այնտեղ
այնքան բան եմ մոռանում, իսկ ինչքան շատ բան է
պէտք ինձ մոռանալ:

Նունուֆարի ջուխտ աչքերից ջուխտ կաթիլներ կա-
խուեցին և չորացած պառաւ այտերն ակօսեցին վերից
փոր. բայց մայրական տաք արցունքը չը կարողացաւ
մարել գաւակի սրտի կրակը: Սիրող մայրը տանջուած
սրգու սրտի դարդը չիմացաւ: Զահիլ-Վիւան սրտի ցաւը
Ա... գիւղն էլ չիմացաւ:

Ասօն դարդ ունէր, դարդ ծովի չափ:

III

Գիւղը գաղտնիք չի սիրում, մեւթ բանից վախե-
նում է: Գիշերը երբ սև խաւարն իջնում է պատում
արարաչխարհ, երբ աչքն ու գլուխը էլ չեն հաշտում
իրար հետ, այնքան բաներ կան գիւղում, գաշտերում,
սարերում, որոնք ցերեկը սչինչ են, նայն իսկ սիրուն
գրաւիչ բաներ են, մթնում գառնում են սարսափելի:
Մենաւոր ծառը թևեր ու գլուխ է սառնում և բռունցք
է ցոյց տալիս ուշացած ճամբորդին, սարի կատարին
չար աչքեր են պլպլում, ժայռը դալարում է, օրօրում,
մտցառները հաջում են, թմբերը՝ անքում, փոսերը՝ հե-
ւում, տերևները փափսում են չար բաներ, առուններն օձե-
րի պէս քստում են, վիշապները բազմանում, գետերը լըց-

նում են շրջակայքը և ողջ ընտելիւնը գառնում է հազար բերանով, հազար աչքերով, հազար ճիրաններով մի հրէշ, որ խեղտել լափել է ուզում ուշացած ճամբորդին:

Գիւղը մութ բան չի սիրում, գաղտնիքն էլ մութ գիշեր է, հոգի է հանում, փոյթ չէ նոյն իսկ, թէ գա մի հատիկ սրտում թաղուած ծածուկ վիշա է: Ինչ կարիք կայ գաղտնիքի, թող ամեն բան պարզ, աշխարայ լինի, արևի պէս պայծառ, սրտերի խորքի խաւարն էլ լաւ չի: Արեգինը տեսաւ Ասօնն, ուշի ուշով նայեց նրա ճակատի կնճիռներին, նրա աչքերի մէջ փայլող վշտին, տեսաւ այդ տանջուած դէմքը, այդ ծանր թախիծը և ինքը գիւղն էլ յօնքերը կախեց, աչքերը մռայլեց, երևի Ասօն մի խորհրդաւոր բան ունէր, մի ծածուկ բան, որ դուցէ նոյնքան ահաւոր նոյնքան անհաճոյ գիւղի համար, որքան մութ գիշերներին սարերում ձորերում գալարուող ստուերները: Թնոյ ամեն բան պարզ լինի, խորհրդաւոր գաղտնիքն ինչ պէտք է, մութից խաւարից միայն չար բան է ծնում, քանի՛ քանի՛ գիտկներ են արիւնաշաղախ փոսել մութ ձորերում ուշ գիշերին. քանի՛ սև բաներ են պատահել սրտերում թաղուած գաղտնիքներից:

Ասօն ինչ ունի, Արեգինը պէտք է իմանայ:

Ասօն լուռ է, մօրն էլ չի ասում իր դարզը, տէրտէրին էլ չի ասում, լայց պէտք է իմանալ, պէտք է սրտնել, քրքրել, ծագումը պէտք է գտնել, մութ բանի վրայ մի ճրագ վառել, մի շող ցոլացնել: Երևի մի պատճառ կայ, խօսմ Ասօն չէր կարող հէնց այնպէս առանց պատճառի սեւաւորել, լուռ, քարանալ: Կամ չար է պատահել, կամ վախեցել է, կամ ո՞վ գիտէ ինչէ: Թէ չէ ինչո՞ւ է գիււհարի պէս աչքերը չռած, մաղերը խառնակ թափառում գաշաբրում, վաղում գետի հեռ, հօտաղներին վախեցնում: Հարց ու փորձ արին, դէս ու դէն ընկան պատաներն եկան գնացին Նունուֆարի հեռ փոփոսցին, գլուխներն օրօրեցին, աղջիկներն էլ իրար մէջ հազար ու մի պատմութիւններ սարքեցին, քչփչացին նրա նշանածի՛ Շողերի անուն էլ մէջ ընկաւ:

երկու անգամ նշանուած աղջիկ, ս'վ դիտէ... բայց այդ բոլորից բան չը դուրս եկաւ:

Ա... գիւղը չիմացաւ Ասօի դարգը, նրա սարի գաղտնիքը:

Բայց գիւղը գաղտնիք չի սիրում; նա գաղտնիքից վախենում է, նա մութ բանից դողում է, մի բան պէտք էր անել, մի բան պէտք էր հնարել: Սիրուն «բոյ ու բուսածով» աղամարդ է Ասօն, Արեգինի պարձանքն է, աչքն է, երբ յայտնուում է, ողջ նրան են նայում, մօրը երանի տալիս, մատով իրար ցոյց տալիս, դէ երբ մի ամբողջ գիւղ աչքը անկած մի հատ թիկունքի, մի հատ ճակատի, մի հատ երեսի նայի, գրանից բարի բան չի դուրս գայ: Աչքն ինչ ասես չի անի. Ասօին աչքով են տուել, Ասօն գժուել է:

Գիւղը հանդատացաւ, էլ գաղտնիք չը կար, այսպէս լաւ էր, ինչ փոյթ՝ թէ Ասօն մնաց էլի թափառական, սղաւոր ու մնայլ, որ նա շարունակոււմ է վազվզել գետի ընթացքով մտղերը քամուն տուած, բաւական է, որ այժմ գիւղը գիտէ գաղտնիքը, Ասօին աչքով են տուել, նա գժուել է: Գաղտնիքի վրայից խաւարը վերացաւ, բանը պարզ էր. աչկարայ, արևի պէս պայծառ:

Այսպէս լաւ էր:

Մի բան միայն մութ էր մնացել գիւղի համար, ոչ ոք չէր կարողանում բացատրել, թէ ինչո՞ւ Ասօն գաշտ գնալիս երբէք չի անցնում Շիրինենց փողոցով, որ ամենայարմար և ամենակարտուկ ճանապարհն է գիւղից դուրս գնալու: Ինչո՞ւ է ընտրում խոտոր ճանապարհներ: Առաջ իսօմ նա այդպէս չէր, նա էլ ողջ գիւղի պէս այդ փողոցով էր անցնում, այժմ՝ յանկարծ ինչ պտտահեց:

Երկար մտածեցին, հազար ու մի ենթադրութիւններ արին, վերջ ի վերջոյ եկան այն եզրակացութեան, թէ այնտեղ՝ Շիրինենց փողոցի վրայ է բնակուում արաբացու Գրիգորը, հուշակատոր զբբացը, նա՝ որ շարերը կապել, կաշկանդել դիտէ: Դէ, Ասօին շարերը կապել, կաշկանդել են, որ այն կողմերից չանցնի, որ անցնի,

ո՞վ գիտէ, կարող է փրկուել: Հաւատացնում էին, որ եթէ Ասօն յանկարծ անցնի այդ փողոցով, տիրացուի զարմանալի սուրբ գրքերի թըլխամը նրա վրայից չար աչքի զօրութիւնը կը հանի, բայց չարը կապել է, նա չի զնայ այն փողոցով, անպատճառ հեռուից կ'երթայ: Զօրով էլ տանել չի կարելի, դա Ասածուն դուր չի գայ: Այս մութ բանն էլ պարզուեց. գիւղն իսպառ հանդստացաւ: Կամաց-կամաց Ասօն իսպառ մոռացուեց, մարդիկ էլ նրանով չէին զբաղւում և արժէք միթէ. Ասօն մի խեղճ ու կրակ խենթ էր, կարծողներ կային նոյն իսկ, թէ դեւերն էլ նրան խեղտում են ամիսը մի երկու անգամ, թէ նա ընկնում, փրփրում է, և հէնց այդ դեւերի համար է չալերն ընկել, փախչում է նրանցից, որ ազատուի, բայց գեւերը հետեւում են:

Ասօի փոյթը չէր ամենեին, թէ ի՞նչ է մտածում իր մասին գիւղը, նա շարունակում էր իր թափառական կեանքը և մօր բոլոր հարց ու փորձերին տալիս էր խուսափողական պատասխաններ: Երբեմն նոյն իսկ կարծէր, որպէս զիջողութիւն մօր թախանձանքներին նա մի քանի օր իրար վրայ տանն էր մնում, գործի էր կենում, բայց յետոյ նորից թողնում էր ամեն բան և էլի թափառում, օրերով տուն չէր գալիս:

Կամաց-կամաց նա գաշտերի ինքնազուլիս պահապանը դարձաւ, մի երկու անգամ մուրրուած անասուններ բերեց տէրերին յանձնեց, այնպիսի լրջութեամբ և այնպիսի խրատներով ու խորհուրդներով, որ գիւղացիք զարմացած մնացին. խենթի գործ չէր: Այդ քիչ է, երբ նա տեսնում էր գաշտում մէկի ձեռքով կատարում հարեանի արտի զիանը, այնպէս էր զայրանում, կարծէր սեփական արաբ արորելիս լինէին: Հօտայնորէ հեռուից նրան տեսնելիս աւելի զգոյշ էին պահում իրանց անասունները: Բայց եթէ նա վրայ էր հասնում և մէկին բռնում էր յանցանքի մէջ, մօտենում էր լրջութեամբ, բռնում էր յանցաւորի ձեռքից, ցոյց էր տալիս իր կատարած

չարիքը, նայում էր աչքերի մէջ շեշտակի, ծակող հայեացքով և ասում.

—Սա վատ բան է, վատ բան, դէշ, զարշելի բան է. տէրն արիւնքրտինք է թափել, արիւնը սուրբ է, քրտինքը՝ թանկ: Եւ այդ բանը նա ասում էր այնպիսի համոզիչ, ու ցաւոտ շեշտով, որ անկարելի էր նրա հետ չը համաձայնիլ, նրա բորբոքուած լայն բացուած աչքերի մէջ մի բան կար, որից ամենքը քաշոււմ էին, ոչ ոք չէր կամենում լսել նրա այդ յանդիմանութիւնը, ոչ ոք չէր կամենում նայել նրա այդ տարօրինակ աչքերի մէջ:

Ասօի համար գիւղացիք շարունակում էին ասել, թէ խենթ է, բայց իրանք էլ իրանց հօգու խորքերում անորոշ կերպով զգում էին, թէ նա սովորական խենթ չէ, մի անօրինակ, խորհրդաւոր բան ունի իր հայեացքի, խօսքերի, վարմունքի ամբողջ արտաքինի մէջ: Ասօն դարձեալ սիրելի էր:

IV

Լճակի ափով այն աղջիկը մենակ էր քայլում: Միջահասակ էր, հարուստ, լիքը մարմնով, մէկն այն գիւղացի աղջիկներից, որոնք համարւում են գեղեցիկ իրանց կարմիր այտերի, կալոր դէմքի, մեծ աչքերի, երկար մազերի համար: Եւ այդ աղջիկը համարեա վազում էր առանց յետ նայելու, կարծես յետին ընկած նրան հալածում էին: Նա չէր ճշում, ձայն չէր հանում, բայց արտասուում էր կամացուկ, մի վայրկեան կանգ էր առնում, աչքերը սրբում իր փէշով և կրկին շտապում: Երեք ուրիշ աղջիկներ, երեւի ընկերուհիները նրան յետեից կանչում էին.

—Շոգեր, Շոգեր:

Աղջիկը շարունակում էր գնալ:

—Շոգեր մի գնա մենակ, յետ արի. էլ ոչինչ չենք ասի, արի:

Աղջիկը յետ չէր նայում: լալիս էր և շտապում: Ընկերութիւնները յուսահատուած յետ դարձան դիմեցին դէպի դաշտը, իսկ Շողերը շուտով ծածկուեց բլրի յետևում:

Նա բանջարաքաղի էր դուրս եկել ընկերութիւնների հետ. դէ գնում էին, եկան, համոզեցին, տարան. մայրն էլ յորդորեց, որ գնայ, գուցէ դաշտում մի առ ժամանակ մոռանայ իր ցաւը սրտակիցների շրջանում: Բայց հակառակը դուրս եկաւ. հաղիւ դիւղից մի փոքր հեռոցան, որ նրանք իրար հետ փսփսալ սկսեցին.

— Աղջի Շողեր, ինչ նիհարել ես, ասաց մէկը:

— Աղջի, ինչպէս գոյնդ ձգել ես, աւելացրեց միւսը:

Այդ էլ անտանելի էր, բայց էլի համբերեց, տարաւ. աշխատեց խօսքը փոխել, երբ մէկ էլ երբորդը մտնեցաւ ու կամացուկ հարցրեց.

— Շողեր, նշանածդ ինչի է քեզ թողնում, խեղճ աղճիկ, ախ էդ տղամարդիկ:

Սա արդէն չափազանց էր. բիրտ ձեռքով նրա ցաւոտ վէրքը շօշափեցին. Շողերն էլ պատասխան չը դատուկարմրեց, լեզուն կարկամեց, գլուխը քաշ ձգեց և միայն կարողացաւ ասել.

— Ձեզ ի՞նչ... հեկեկաց, արցունքը թափուեց ուշքերից և յետ դարձաւ:

Այժմ նա սղալով տուն է գնում անիծելով այն վայրկեանը, երբ համաձայնեց դուրս գալ, գնում էր առաջուայ պէս տանը փակուելու իր ցաւն ու կսկիծը հայրենի յարկի տակ թագցնելու համար: Նա չըթուերները պինդ սղմել էր իրար վրայ, աչքերը գետին ձգել և քայլում էր անընդհատ առանց ուշք դարձնելու լճի, լեռների, դաշտերի վրայ, առանց լսելու. բազմաթիւ ջրային թռչունների ձիւն ու աղմուկը: Իր փութկոտութեան մէջ սաքի մտչիկի մէկը դուրս թռաւ, աղջիկը կուացաւ վերցրեց և կրկին շարունակեց գնալ շտապ, կարծես վախենալով թէ կը հասնեն և նայն հարցը կը կրկնեն իր ակամջին:

— Անողորմ Աստուած, ինչ եմ արել քեզ, միմեծում
Յունուար, 1903.

էին նրա շրթունքները, մէկն այնպէս եղաւ, սև կապեցի, այս էլ... օճֆ:

Լացը դադարել էր, նա այժմ մտածում էր: Քանի ժամանակ է չի տեսել Ասօին, ա՛խ մէկ տեսնէր, մէկ երեսին նայէր, մէկ աչքերի մէջ նայէր, հարցնէր, թէ ինչո՞ւ այսպէս... ընկերուհիներն ասացին թէ Ասօն նրան թողնում է, թէ ուրիշին է սիրում, թէ նրա համար է սար ու ձոր ընկել, ինչո՞ւ... Մի տարի առաջ Շողերն այս օրը երևակայել անգամ չէր կարող, այն դժբաղդ դուժխնից, իր առաջին նշանածի մահից յետոյ էլի ամեն բան լաւ էր. ինչո՞ւ այժմ այսպէս, ինչո՞ւ... Ա՛խ այն օրերը, դիւզի աղջիկները ողջ Ասօի բազդով էին զբաղուած, որքան յոյսեր կային, ախր ո՞վ նրան չէր ուզի. Գրքօի մահից յետոյ երբ լուր տարածուեց, թէ եղբօր նշանածը Ասօն պիտի առնի, ոչ ոք չէր ուզում հաւատալ, ամենքը նախանձից ճաքում էին, ահա այդ նախանձի թոյնն է, որ ամենքը, իր ընկերուհիները թափում են նրա գլխին: Ինչո՞ւ... Ի՛նչ է արել ինքը, ի՛նչ մեղք ունի: Մէկ անգամ արդէն ջահիլ-ջահիլ սև կապեց, երևի Աստուած էր կամեցել, ինքն ի՛նչ անէր, որ առաջին նշանածը մտրաղին չը հասաւ: Ասում են, թէ Շողերն ուրախացաւ, որ Գրքօն սպանուեց, ասում են, որ նա առաջ էլ հէնց Ասօի վրայ է աչք ունեցել, ասում են հազար ու մի բաներ:

—Անողորմներ, անաստուածներ, որ քարասիրտը կարող էր դեռ ուրախանալ, որ խեղճ Գրքօն այնպէս պատառ եղաւ. ի՛նչ էք ուզում ինձանից, դու դառես Աստուած:

Աղջիկն ինքն իրան խօսում էր ու դնում: Նա այժմ մտ էր թերակզզուն, որի վրայի հինաւորց վանքի աւերակները արդէն ծրագրւում էին իրանց մամռապատ քարերով: Չը գննել արդեօք այն քարերի մէջ, սուրբ տեղերում ուռած սիրտը դուրս թափել, աղօթել և լալ, պատմել ցաւերը Աստծուն, մտածեց աղջիկը: Նա իր չորս կողմը նայեց, մարդ չը կար. ճանապարհը ծուեց և

դիմեց դէպի թերակղզին, դէպի աւերակները: Մի քիչ յետոյ նա կանգ առաւ. նրան թւաց, թէ հազիւ ձայն է լսում: ուշադրութեամբ նայեց չորս կողմը. ոչ ոք: Առաջացաւ և դարձեալ կանգ առաւ. այս անգամ նա իրօք նշմարեց մէկին լծի ափին, փրած պատի յետևում, մի քարի վրայ նստած էր. ազջիկը նայեց և կամայուկ ձեռքը տարաւ դէպի կուրծքը, սիրտը բռնեց յուզմունքից... Ասօն էր այնտեղ...: Առաջի վայրկենին ազջիկը կամեցաւ փախչել, և նոյն իսկ մի քանի քայլ ձգեց յետ, բայց կրկին ուշքի եկաւ յուզմունքից, կանգնեց, նորէն նայեց: Ասօն նստել էր, նայում էր լծին և չէր տեսնում, ապա ձեռք առաւ իր մեծ ձեռնափայտը և սկսեց մեղմիւ տաշել: Ազջիկը կամայուկ մօտեցաւ յետևից, կանգ առաւ և նայում էր շնչակտուր: Ասօն շարունակեւմ էր տաշել զլուխը կախած, երբեմն-երբեմն ծանր հողոց հանելով: Շողերը նայում էր յափշտակուած, վազուց էր, որ չէր տեսել: Որքան դեղեցիկ էր, Տէր Աստուած, և որքան տխուր միաժամանակ: Մազերի մի փունջ աջ կողմից, գլխարկի սակից կախուել էր ճակատի վրայ. Ասօն սովորութիւն ունէր միշտ յետ յետ տանել այն, բայց այժմ սիրուն փունջը կախուել էր և մուացուել կարծես: Քանի, քանի անգամ Շողերն իրանց քաղցր սիրոյ ժամերին համբուրել է մազերի այդ սրբը և իր ձեռքով յետ տարել ճակատից, փուել սիրուն գլխի վրայ կամ ցած բերել ծածկել նրանով աչքերը՝ նրան զուարճացնելու համար: Էլի նա էր, նոյն Ասօն նոյն թառան Ասօն: Նստած էր, որ կանգնէր յանկարծ՝ մի ծառ, թէ նայէր՝ մի Աստուած. միայն այժմ աչքերն էին թախծապատ, ճակատի վրայ՝ յօնքերի արանքում մի կնճիռ կար, իսկ միրուքը՝ սև սաթի պէս միրուքը՝ անօրինակ ձևով աճել էր, երկարել: Շողերը նայեց՝ կուրծքը շարունակ յուզմունքից բռնած, այտերը բոցավառ, ապա թաթերի վրայ մօտեցաւ և քնրչութեամբ փարեց նրա պարանոցով.

— Ասօ՛ւ:

Ապշած երկտասարդը ցնցուեց, ոտքի ելաւ և մեղ-

մով յետ մրեց ազճկան՝ ոտքից գլուխ նայելով: Ազճիկը հորաբուեց, գլուխը քաշ ձգեց ասես ամուշելով իր արածից և սաքի ծայրով սկսեց փոքել գետինը՝ աչքերը մի կէտի յառած:

—Ազոթելու եկայ, այս քարերը լիզելու, թըջելու իմ արցունքով, Ասօ, եկայ այս սրբի ոտքը ցաւերս Աստը՝ ծուն պատմելու, եկայ իմ սրտի կսկիծն այստեղ թաղելու, այնտեղ էի, ուրիշների հետ, տեսայ, սր էլ տեղ չ'ունեմ, աշխարհում էլ տեղ չ'ունեմ: Ինչէր ասացին, ան որքան կ'ուզէի խուլ լինել, չը լսել, ինչեր են ասում իմ չորս կողմում: Ասօ, Ասօ, մեղք եմ ակար, ինչու այսպէս... Երիտասարդը շարունակում էր լուռ նայել ազճկան:

—Շողեր, զուր եկար... և նա երեսը ծածկեց, աւելի մնայլ, աւելի գունատ ու տխուր, կարծես ամաչում էր նայել իր նշանածին, մի առ ժամանակ այնպէս մնաց, ապա կրկին նայեց: Նստեց իր տեղում, քարի վրայ, բռնեց ազճկայ ձեռքը, նստացրեց իր կողքին.

—Որ եկար, գէհ նստիր:

Ձեռքն իր ձեռքում պահած՝ քնքուշութեամբ նայում էր ազճկայ աչքերին, կարծես աշխատում էր որոշել նրա վշտի խորութիւնը: Ազճիկը հնազանդ՝ լուռ նայում էր, կարծես սպասելով ինչ է լինելու:

—Երէկ նստած էի մեր գետակի ամին, շարունակեց Ասօն, լուռ նայում էի ալիքներին, ինչպէս այժմ նայում եմ այս լճին. յանկարծ դու էլ միտս ընկար, պատկերդ եկաւ, ուղեց առաջս կանգնել, ես էլ էի ուզում, որ մնայ, բայց չը մնաց, ես էլ չը կարողացայ պահել և նա ալիքների պէս, ալիքների հետ գնաց հեռացաւ: Երկու չոր տերև ձգեցի ջուրը, միատեղ ձգեցի, նոյն տեղն ընկաւ, ջրի պտոյտը նրանց հետ խաղաց, խաղաց, նրանք առ ժամանակ իրար փարած՝ շրճաններ արին ջրերի վրայ, բայց մէկ էլ յանկարծ մի չոր ալիք վրայ հասաւ. հեռու տեղերից և նրանց առաւ իրարից բաժանեց: Եւ գնացին այն տերևները զանազան կողմեր, և ես լացեցի, լացեցի՝ Ի՛նչ լաց եղէ՛լ ես, Շողեր:

Աղջիկը հեկեկաց:

—Հն, դժւ էլ ես լայիս, չը լինի՞ թէ դու էլ ես տերեւներ ձգել գետի երեսին, և նրանք փախել են դա՛նազան կողմեր. խեղճ...

—Ես տերեւներ չեմ ձգել, ես չոր տերեւը չեմ սիրում:

—Դու տերեւներ չես ձգել, այդ բաւ է: Այստեղ՝ լճի ափի մացառներում անցեալները ես մի բոյն տեսայ, թռչնի բոյն, զոյգ գեղձանիկներ իրանց լալկան ճթճթոցով նստում էին այնտեղ և զուրգուրում, այնպէս լաւ էր: Ես ազօթում էի նրանց համար, ես ուզում էի, որ նրանք միշտ այնտեղ մնան, մնան, ես էլ նայեմ, ինչ շատ բան է, միայն նայեմ.դու խօսք սիրում ես նայել թռչուններին, թիթեռներին, գաշտերին, սարերին: Ես էլ նայում էի իմ թռչուններին. աշխարհի մէջ շատ անգամ մեր բազդի համար նայելն էլ մեծ բան է: Այսօր էլ եկայ՝ բունն աւերուած, մացառը ջարդուած գտայ, թռչնիկներին մէկը չը կար, միւսը վիրաւոր ու տխուր կծկուել էր մի ճիւղի վրայ, և նրա շուրջը մանրիկ փետուրներ, որ քամին առնում, ցրում էր լճի երեսին, և ալիքները տանում էին հեռո՛ւ, հեռո՛ւ ավերից: Սգաւոր թռչնիկն ինձ նայեց, ապա թափ առաւ թռաւ, երևի անիծելով այս տեղերը, ուր այնքան ցաւ տեսաւ. ես մեղաւոր չէի, բայց ինձանից փախաւ: Ի՞նչ կարող էի անել, նայեցի աւերակ բնին, նայեցի փետուրներին և լացեցի, լացեցի: Դու թռչնի բոյն քանդել ես, Շնչեր:

—Չէ, չէ, Ասօ, ես բոյն չեմ քանդել, ուրիշը քանդեց իմ հիւսած բոյնը, քանդեց անսպասելի կերպով և իմ խղճուկ փետուրները քամուն տուաւ աշխարհի չորս կողմերում, ինձ թողնելով բնուեր ու սգաւոր: Թո՛ղ, թո՛ղ որ ես լամ իմ բունն ու փետուրները. Ասօ, ինչո՞ւ այսպէս, ինչ է պատահել, օճֆ, բութ գանակով ես մտրթում ինձ, ինչեմ արել քեզ, Աստծուն, աշխար... Նրա ձայնը խզուեց. հեկեկոցը խեղդեց կոկորդը, և արցունքը թափուեց վերըստին:

—Հն, իրաւունք ունիս, ընց, ընց՝ գու ոչ ոքի բուն չես քանդել, բայց քոնը քանդեցին և փետուրներդ քամուն տուին: Երեկ գիշեր ես էլի այնտեղ էի, գետի ավերում: Ես սիրում եմ փախչող ալիքների ձայնը, նրանք էլ ինձ պէս կ'ասես իրանց ցաւիցն են փախչում, որ ազատուեն: Հեռու ձորից, այ էն սարից էն կողմը մի երգ էր լսում:

«Էս լեռներում, ճանապարհից քիչ հեռու,

«Մի եղջերու մրմնջում է, հառաչում

«Ծանր ցաւից, մի վիրաւոր եղջերու

«Էս լեռներում, ճանապարհից քիչ հեռու:»

—Գիտես, Շոգեր, երգը ճշմարիտ էր ասում: Նետը գիպաւ մի օր խեղճ ու կրակ եղջերուին, նա վիրաւոր ու արիւնաքամ սարերըն ընկաւ իր ցաւից, փախաւ՝ որ ազատուի մահաբեր նետից, բայց խեղճը չը գիտէր, թէ նետը ամեն տեղ ման է ածում վէրքի մէջ և ճար ու փրկութիւն չունի, հեծեծում է, լալիս է լեռների, ձորերի միայնութեան մէջ, և քարերը տնջում են նրա ցաւից: Երբ երգը լռեց, ես էլ լացեցի եղջերուի համար. աշխարհում կոնց մէկը, որ ինձ համար լաց լինի, Շոգեր:

—Ախր ինչ ունիս, Ասո՛, մատաղ, ինչո՞ւ ես այսպէս խօսում:

—Դարդ ունիմ, Շոգեր, դարդ՝ ծովի չափ, թո՛ղ ինձ իմ դարդով, ա՛նձն դարձիր շուտով և էլ ամենևին մի արի. այժեամի պէս մ'ենակ կը թափառեմ ձորերում և նրա արեան կաթիլների պէս ցաւս կը փռեմ ամեն տեղ: Գնան, գնան Շոգեր, քամու բերածը քամին կը տանի:

Աղջիկը ձեռքերը մեկնեց, փաթաթուեց նրա պարանոցով և ճակատը սղմեց նրա գէմքին:

—Ասո ջան, մի ասա այդ, մեր սիրոյ համար, ես էլ կը գամ քեզ հետ, սար ու ձոր ընկած քայլ առ քայլ կը վազեմ քո յետևից. թէ սարում մնաս, կողքդ կը նստեմ, թէ քարում պառկես, վրադ կը հսկեմ, թէ ար-

ցունք թափես, թող սր ես սրբեմ, Ասօ շան, մեր սիրոյ համար...

—Սէրը, Շնդեր... խեղճ աղջիկ, երբ ծառի վրայ թռչունի բոյնն աւերես, նա էլ երբէք այնտեղ չի գայ բոյն դնելու: Եւ Ասօն մեզմով հեռացրեց աղջկայ ձեռքերը, մի փոքր յետ քաշուեց և ձեռնափայտը տաշել սկսեց:

—Ասում են Ասօն խենթ է, չար աչք է գիպել չէ, դու խենթ չես, դու մոռանում, դու թողնում ես ինձ, դու անսիրտ ես: Թող այդպէս լինի. հին սևը կը գտնեմ, նորից գլխիս կը ձգեմ, եղբօրդ դերեզմանի վրայ կ'երթամ կը կծկուեմ, կը պատմեմ, կը պատմեմ իմ սև օրը:

—Գերեզման ես ուզում, հեռու մի գնա, Շնդեր, իմ սրտում այժմ մի գերեզման կայ խոր ու սև. տես, ես տաշում եմ, տաշում անընդհատ, դադար եմ չիտում՝ նրա մէջ մի կեանք թաղելու համար: Թող ինձ, Շնդեր, տերևները շատ պտոյտ եկան ջրերի վրայ, չար ալիքն եկաւ հասաւ, ժամանակ է բաժանուելու, թող դնան այժմ իւրաքանչիւրն իր ճանապարհով: Խնչ կարող ենք անել, կեանքի ծովը լայն է, ալիքները բազմապիսի: Բնդ...

—Դու ինձ էլ չես սիրում...

—Ձէ, չէ, Շնդեր, օճֆ... պատասխանեց Ասօն սրտնեղութեամբ, վերցրեց ձեռնափայտը, ոտքի կանգնեց և առանց յետ նայելու հեռացաւ, գնաց: Աղջիկը նայում էր նրա յետուից, ապա մի բան միմնջաց, դողնոցով աչքերը սրբեց և դառնալով նայում էր լճին: Գարձեալ բադերն օրօրում էին ջրերի վրայ, դարձեալ հաւալուսները լողում էին արևի շողերով ողողւած, ամեն բան դեղեցիկ էր շրջակայքում, բայց աղջիկը նստած, կամ աւելի ճիշտ՝ ընկած էր ջարդուած, նայում էր, բայց ոչինչ չէր տեսնում: Աղօթքի մասին էլ չէր մտածում, ինչու աղօթել, ո՞ւմ աղօթել. նա գլուխը բռնեց ձեռքերի մէջ. ո՞ւր գնալ այժմ: Խոնքը դադարիկ է, ցուրտ, ընկերուհիներն անսիրտ, նախանձոտ, մայրը

չարունակ վշվշում է և սրբերի դուռը գնում: Ո՛ր գնալ, ո՛ր փախչել, ո՛ր թագնուել: Ալիքները գալիս՝ մեզմով զարկում էին ափերին թեթև ճղփխնով, նրանց ցայտումները թրջում էին Շողերի սաները, և նա շարունակում էր մնալ միևնոյն տեղում:

Աւերակներին նայեց, մնայլ ու սգաւոր հինաւուրց քարերն իր սրտի պէս սև, իր սրտի պէս վշտահար կանգնել էին ջրերի ափին, նայում էին ալիքների մէջ և կարծես լալիս էին նրանց ծոցում իրանց դարաւոր ցաւը: Ամեն բան այստեղ համապատասխանում էր Շողերի սրտին, ամեն քար ասես նրա հետ լալիս էր: Այս աւերակները, այս կիսափուլ պատերը, այս խոնարհած կամարները ամենքը միասին ասես մի մեծ սիրտ լինէին նոյնպէս սև, նոյնպէս քանդուած, սրպէս Շողերի սիրտն էր: Եւ նա կ'ուզէր երկար, թէկուզ յաւիտեան մնալ այստեղ, այս ծիծփան ալիքների մօտ, սրտնք գալիս, զարկում էին աւերակների սաքին և կարծես փափսում էին նրանց հետ այս խուլ միայնութեան մէջ, ուր վրշտահարը կարող է խօսել իր սրտի հետ, ինչպէս մի ուրիշ անձի հետ, ուր արցունքը վկայ չ'ունի, ուր վերքը մզկտում, մումում է աշխարհից հեռու:

Այլիկը շարունակում էր մնալ մի և նոյն տեղում նստած, ծնկները բազումներով մէջ և դուրսն օրօրում էր մեզմով: Զոյգ հաւալուսները լողում էին փոռահեղօրէն արևի շողերի տակ սակեզօծ, կարծես լճի տէրերը լինէին:

—Երանի՛ ձեզ, անգորգ հաւքեր, երկիրը ձերն է, երկինքը ձերն է, թէ չար աչք հասնի ձեզ ջրերի վրայ, անէծքով կը փախչէք դէպի վերերը. ա՛խ, թէ ես էլ ձեզ պէս թևեր ունենայի, ձեզ հետ տարուէի ջրերի երեսին կամ ձեզ հետ միասին երկնքում ճախրէի:

Հեռու, դէպի հիւսիս, ափերը քերելով՝ լճի վրայ օրօրում էր մի փոքրիկ ձկնորսական նաւակ՝ բաց տրած սպիտակ առագաստը, որ այնպէս նմանում էր ծիծեռնակի զոյգ թևերին: Շողերն այն չէր տեսնում

և նաւակը կամաց կամաց գալիս էր գէպի թերակղզին:

Հովը փչում էր հեռու ձորերից և Շողերի ականջին հասցնում մի ուրախ երգի ձայն: Ընկերուհիներն էին, որոնք երգում էին և բանջար քաղում: Նրանք երգում էին մատաղ սրտի յոյզերը, երգում էին սէր ու խնդու-թիւն, վարդ ու դարուն, ծաղկազարդ ձորեր ու սա-րեր: Ծանօթ էր երգը, ինքը Շողերը քանի՜ անգամ նոյն տեղերում նրանց հետ երգել է, նրանց հետ ցնծացել, իսկ այժմ...

—Երջանիկներ, մրմնջաց նա.

Երգի ձայնը մօտեցաւ, երևի բնկերուհիները գալիս էին. նա վեր կացաւ, որ հեռանայ նրանց չը հանդիպելու համար: Ծանր էր մի անգամ ևս տեսնել երջանիկու-թեամբ փայլող այն գէմքերը:

Շողերը հազիւ մի քանի քայլ էր ձգել, երբ իր յե-տևից լսեց մի ձայն.

—Շողեր:

Աղջիկը յետ նայեց վախեցած... Ափի մօտ կանգ-նած էր փոքրիկ ձկնորսական նաւակը, և նրա մէջ նրօ-տած էր իր հայրը, ձկնորս Նավօն, որ գուրս էր եկել լճի գանազան մասերում գրած ձկնորսական կողովներն այցելելու և այժմ յետ էր գնում տուն: Նա մի առոյգ, յաղթանդամ ծերունի էր, մանրիկ, եռանդուն աչքերով, որոնց տեսողութիւնն այնպէս սրուել էր՝ տարիների ըն-թացքում լայնարձակ լճի վրա հեռաւոր հորիզոնները և երկինքը գիտելուց: Նավօն ոտաբոբիկ էր, վարտիկը ծա-լած մինչև ծնկները, ջլուտ բազուկները նոյնպէս մերկ էին մինչև արմունկները: Նա հագին ունէր մի հին ար-խարուղ ու մի կարճ մազէ աբայ, իսկ գլուխը կապած էր թաշկինակով գլխարկի տեղ: Արևից այրուած ու թխացած մորթին ոտների ու ձեռների վրայ պատած էր թաւ մազերով: Հաստ ու ճերմակ բեխերի տակ նրա շրթունքներն իսպառ ծածկուել էին, իսկ գուրս ցցուած այտերը և ծնօտը ուժեղ վկայում էին մի կոշտ ու բիրտ բնասորութիւն, որ մշակուել ու կազմակերպուել է ազատ

բնութեան ծոցում, տարերքի հետ մըլած կրխների մէջ: Ամբողջ Ա... գիւղում նա յայտնի էր որպէս սրտոտ, անվախ, նոյն իսկ անսպորճ մարդ. ստում էին, որ նա երբէք լաց չէ եղել և արցունքն ատելով ատում է. հաւատացած էին նոյնպէս, որ նա զարհուրելի կերպով վըրէժխնդիր լինել գիտէ: Ահա այս մարդն էր կանգնած նաւակի մէջ թիակին յենուած իր հասակի բոլոր բարձրութեամբ. նաւակը տարուբերում էր նրա ոտների տակ, միջգեռ նափօն լսա երևոյթին զարմացած՝ շարունակում էր նայել աղջկան: Հանգիւզումն անսպասելի էր և՛ մէկի, և՛ միւսի համար. Շողերը շփոթուեց, մի վայրկեան կանգ առաւ քարացած, սաստիկ գունատուեց, սպա գլուխը քաշ ձգեց ու մնաց յանցանքի մէջ բըռնուածի պէս:

—Շողեր, ինչ ես անում այստեղ մենակ, կրկնեց հայրը ափը ցատկելով և գէպի աղջիկն առաջանալով:

—Ես... ես, ոչինչ, հայրիկ, բանջար քաղելու էի եկել... յետոյ չը քաղեցի, տուն եմ գնում...

—Տուն ես գնում, ինչո՞ւ չը քաղեցիր, լաւ եղանակ է. մենակ ես:

—Ձէ, հայրիկ, ընկերներս այն կողմը գնացին, ես չը հասայ, տուն եմ գնում:

—Բայց մենակ այստեղ, ճանապարհից հեռու, Շողեր ջան, լաւ չէ ախր:

—Ես գիտէի, որ դու այս տեղերը կը լինես, սպասեցի չեկար, ես էլ գնում էի:

Աղջիկը ստում էր, բայց ոչ յաջող, սրովհետև խօսակցութեան բոլոր ժամանակ նրա ձայնը կերկերում էր, գէմքն՝ սկզբում գունատ ներքին յուզմունքից, այժմ՝ կարմրեց, ճակատը քրտնեց, այտերը վարդ գարձան: Հայրը նայում էր ուշադրութեամբ, նա կարծես զգում էր, որ աղջիկը խաբում է: Մի առ ժամանակ գէմ՝ առ գէմ կանգնած՝ նրանք լուռ մնացին:

—Արի, Շողեր, արի, նստիր նաւակը, տոսայ վերջապէս հայրը. այսպէս աւելի շուտ կը համեննք:

Շողերը մծտեցաւ գլխակոր, ցած իջաւ նաւակի մէջ, հայրը բացաւ սպիտակ առագաստը, և նրանք սրլացան ջրերի վրայից դէպի դիւզ, որ հեռու լեռնալանջի վրայ երևում էր իր տափարակ աներով, որոնք այնպէս նմանում էին արևկող արած քարաթոթոշներէ: Խրճիթներէից ծխի պոռոյտը ոլոր մուրը բարձրանում էր և լեռների վրայ վաղանցուկ մաւթ ամպեր կազմում: գիւղից վեր՝ կանաչ լեռնալանջի վրայ երևում էին մեծ ու փոքր անասուններ, իսկ վարում, դէպի դաշտերը գնացող մեծ ճանապարհի վրայ երկու եզներ քաշում էին կանաչ խտտով բարձած մի սայլ: Այս բոլորը գեղեցիկ էր, ինչպէս և կապուտակ լիճը, և բոլորը ողողուած էին դարնանային արևի պայծառ շողերով, բայց և սրանցից ոչ մէկը չէր գրաւում Շողերին, ոչ մէկի վրայ նրա վշտոտ հայեացքը չէր հանգստանում: Նա գիտէր, որ հայրն իրան է նախում և գլուխը քաշ ձգած՝ աչքերը չէր հեռացնում ջրերից, որոնք կոհակներ կազմելով փախչում էին նաւակի տակից: Շողերն այնքան տխուր էր, նա այժմ դարձեալ այնպէս գունատ էր:

— Գիտես, Շողեր՝ ջան, կողովները մէկիկ-մէկիկ նայեցի, յոյս ունիմ առատ ձուկ հանել, կղզու շուրջը անթիւ են:

Աղջիկը դարձեալ լուռ էր, հայրը նայեց խռովուած ու շեշտակի.

— Շողեր:

Աղջիկը գլուխը չը բարձրացրեց և յանկարծ բարձրաձայն հեկեկաց, յորդ արցունքները թափուեցին, և նա գլուխը թաղեց հօր կրծքում: Նավօն այս անգամ սաստիկ շփոթուեց, ինչ անելը չիմանալով՝ գրկեց զաւակի սիրուն գլուխը, ջերմութեամբ սեղմեց կրծքին ու մնաց կարկամուած, վշտոտ հայեացքը նաւակի մի կէտին յառած: Աղջիկը շարունակում էր հեկեկալ. հայրը յազմունքից լսեղբուած՝ աշխատում էր ցոյց չը տալ իր թուլութիւնը, լուռ էին, առանց խօսքերի հասկանում էին իրար: Շողերը երբէք հօրը չէր գանգատուել իր բախ-

տից, ոչ առաջին նշանածի մահից յետոյ և ոչ երկրորդի՝ Ասօի այս անօրինակ վարմունքից յետոյ. բայց հայրը միշտ կարգացել էր նրա գէմքի թախիծը, զգացել էր նրա խորը վիշտը և թագցրել էր իր յուզմունքը: Անգամ կինը՝ Գիւլնազը նրա ծնողական թուլութեանը ականատես չէր եղել երբէք: Այժմ առաջին անգամն էր, որ հայրը տեսաւ աղջկայ արցունքը, առաջին անգամ զգաց, որ իր սիրտն էլ փշուր փշուր է եղել և էլ չը դիմացաւ. — ծեր, խտտասիրտ նազօն հեկեկայ երեխայի պէս:

— Ի՞նչ անեմ, զաւակս, ո՞ր ջուրն ընկնեմ, Աստու կամեցածի գէմ մենք հողեղէններս ի՞նչ կարող ենք անել:

Շուքերը շարունակում էր հեկեկալ, հօր ծեր աչքերից քամւում էին արցունքները, նաւակը պատռում էր ջուրը, և սգաւոր զոյգը տարւում էր ակիքների վրայով: Կապուտակ լիճը մեղմ ծփանքներով ժպտում էր, հորիզոնը եղերոյ կանաչապատ ու ծաղկաւէտ լեռները կարծես ծիծաղում էին վճիտ կոհակներին նայելիս, երկինքը ջինջ էր ու ժպտուն, միայն հայրն ու աղջիկն էին սգաւոր, սրտնք տարւում էին նաւակի մէջ խռոռներով արցունքները կապոյտ ջրերին:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Պր շարունակով)

Փ Ա Ր Ի Ա Ն Ա *)

(Լ Ե Ղ Ե Ն Ղ)

Բարձրագահ Աբուլն ու Մըթին սարեր
Մէջք մէջքի տըւած՝ կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Զաւախքից էլ վեր՝
Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ:
Ասում են այնտեղ արծըլի նըման,
Ծիծղուն, կապուտակ երկընքի ծոցում,
Նըստում էր էն սէգ սարերի արքան
Իրեն Փարւանայ ճերմակ ամրոցում:
Փարւանայ արքան մի աղջիկ ունէր.
Ու ոչ մի սրական գեռ իրեն օրում
Այնքան գեղեցիկ եղնիկ չէր տեսել
Իր սրան անելիս Մըթին սարերում:
Աշխոյժ մանկութեամբ զարգարում էր նա
Ծերութեան օրերն ու սարերն իր հօր,
Ու ապրում էր ձեր արքան Փարւանայ
Իրեն այն քնքոյշ ծաղկով բազմաւոր:
Մեծ բազրը սակայն առաջին էր գեռ:
Եկաւ այն օրն էլ հասաւ երջանիկ,

*) Փարւանա լիճը գտնւում է Ախալքալաքից 20 վ. հիւսիս-արեւելք: Փարւանա են կոչւում ն' այն թիթեռները, որ թրթռում են ճրագի շուրջը:

Ու զըրկեց արքան ուրախ գեազաններ
Ամեն մի ամրոց, ամեն արքունիք:
—Ո՞րտեղ է, ասու, էն քաջը, թէ կայ,
Իմ չընաշխարհիկ դըստերն արժանի,
Թոյ առնի իւր ձին, իր զէնքն ու զրահ,
Դայ, ցոյց աայ իրեն, իր բազդը տանի...»

*

* *

Հադամ, կազած զէնք ու զրահ
Զխանք հեծած ամեհի,
Ահա եկել, հաւաքուել են
Կըտրիճները Կովկասի,
Ծեր Փարւանա թագաւորի
Ապարանքի յանդիման
Կազմ ու պատրաստ ըսպասում են
Մօտիկ ժամին մըրցութեան:
Ըսպասում է ողջ աշխարքը
Եկած, կիտուած Փարւանա,
Թէ որ կըտրիճն արեօք պիտի
Էն սիրունին տիրանայ:

*

* *

Փողը հընչեց: Ահա փունջ-փունջ ջ
Դըրանիկներ, նաժիշտներ,
Ահա աղջիկն իր գեղանի
Ու թագաւորն արեհեր:
Հայրը ինչպէս մըռայլ մի ամուգ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամուգ ու լուսին իրար փարուած
Դուրս են գալի միասին:
Հառաչում է ողջ աշխարքը,
Կըտրիճները, քարացած՝
Երազների մէջ են ընկնում՝
Էս աշխարքից վերացած...
*
* *

—Նայիր, գըտարիկ, իշխանազուն
Այս քաջերին լայնալանջ,

Այժմ պիտի հանդէս գուրս գան,
 Պայքար մըտնեն քո առաջ,
 Մէկը իրեն ուժը ցոյց տայ,
 Միւսը շնորհքն իր բազկի,
 Որը ճարպիկ ձիարշաւը,
 Որն էլ թափը կը վազքի...
 Իսկ երբ կըսին առնի դադար,
 Յայտնի լինին քաջն ու վասն,
 Ու երբ անցնեն մեր առջևից
 Կըտրիճները պայտապատ,
 Ընտրիր, զարկիր ձեռքիդ խնձորն
 Անյաղթներից անյաղթին,
 Որ ողջ աշխարհ մայիլ մընայ
 Անզուգական քո բաղդին»

*
* *

Աստ. արքան, ձեռքը ձրգեց
 Նշան տայ գու պայքարին,
 Աղջիկն յանկարծ առաջ եկաւ
 Կարմիր խնձորն իր ձեռին.
 —Գուցէ, հայրիկ, տըկար լաւին
 Յաղթէ մի վէս տըմարդի,
 Բայց չի կարող լինել երբէք
 Նա սիրելին իմ սըրտի...
 —Է՛յ, Փարւանայ չքնաղ փերի,
 Ի՞նչն է հաւան քո սըրտին...
 —Խըռըւում են կըտրիճները,
 Խնդրում նորից ու նորից:
 —Ասն, դատրիկ, ինչ ես ուզում
 Էս աննըման քաջերից.
 Գանձ ես ուզում, սակի՞, արծաթ,
 Անգին քարեր ու գոհար,
 Ա՞սոց ես ուզում, էլ երկնքից
 Վէր կը բերեն քեզ համար:
 —Ինչի՞ս են պէտք սակին, արծաթ
 Եւ կամ ասոցը երկընքի,

Ոչ գոհար եմ ես պահանջում
Սէր-ընկերից իմ կեանքի:
Ես նրանից հնւր եմ ուզում,
Անշէջ հուրը սրբապան.
Ով կը բերի անշէջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան...»

*

* *

Ատաւ աղջիկն. իրար անցան
Կրտսիճները քաջարի,
Ձիանք հեծած թրուան հապճեպ
Դէպի չորս կողմըն աշխարհի.
Թրուան, շուտով գտնեն, բերեն
Անշէջ հուրը աղջրկան...
Բայց... տարիք են դալիս, գնում;
Նրանք չը կան ու չը կան:

*

* *

—Հայրիկ, ինչո՞ւ ետ չը դարձան
Էն քաջերը սիրատենչ.
Միթէ, հայրիկ, ինձ մտացան,
Էլ չեն բերիլ հուրն անշէջ:
—Ո՛չ, իմ դստրիկ, կըգան անշուշտ
Ու կը բերեն էս տարի.
Կըսիւներով արիւնքուշտ
Լիքն է ճամբան քաջերի:
Ո՛վ իմանայ՝ պէտք է անցնեն
Մտի՞ աշխարքից, սև ջրից,
Ո՛վ իմանայ՝ պէտք է փախցնեն
Եօթ գըլխանի գեերից:
—Անց է կենում գարձեալ տարին,
Նայում է կոյսն ամեն օր.
—Ո՞ւր է, հայրիկ, երբ կը գայ նա,
Սարից թրուած՝ ձիաւոր:
Միշտ երազում ես տեսնում եմ
Էն հերոսին ապագայ
Հուր կարօտով թրուած իմ դէմ,

Լուսանում է... ու չը կայ:
 — Կը դայ, դտարիկ իմ թանկագին,
 Հեշտ չի բերւում հուրն անշէջ...
 Շատ-շատ անգամ բերող հողին
 Ինքն է այրւում նորա մէջ...
 Անց է կենում դարձեալ տարին,
 Նայում է կոյսն ամեն օր,
 Ոչ մի տարից, ոչ մի ճամբում
 Չի երևում ձիաւոր:
 — Հայրիկ, հայրիկ, միթէ չը կայ
 Էս աշխարքում անշէջ հուր.
 Թառամում է սիրտըս ահա,
 Պաղ է այս կեանքն ու տխուր:
 Էլ չի խօսում, մնայլ, արտում,
 Լուս է արքան ալեօր,
 Սեփե ցաւերն իրեն սրտում
 Միտք է անում գլխակոր:

*
* *

Այսպէս անցան շատ տարիներ,
 Տըխօր աղջիկն արքայի
 Նայեց-նայեց սարերն ի վեր,
 Ճամբաներին ամայի,
 Յոյսը հատաւ ու... լաց եղաւ.
 Այնքան արաւ լաց ու կոծ,
 Որ ծով կըտրեց արտասուքը,
 Ծածկեց քաղաքն ու ամրոց.
 Ծածկեց, կորան, ինքն էլ մէջը...
 Այժմ այնտեղ արբամաշուք
 Խոր Փարւանայ լիճն է ծրփում
 Յըտտակ, ինչպէս արտասուք.
 Ու այն վըճիտ ջրերի տակ
 Յոյց են տալի մինչ այսօր
 Ծեր արքայի ձերմակ ամրոցն
 Ու շէնքերը փառաւոր:

*
* *

Ասում են այն թիթեռները,
 Որ գիշերուայ խաւարում
 Որտեղ ճըրագ, որտեղ կըրակ,
 Որտեղ լոյս է հէնց վառւում;
 Հաւարում են, շուրջը պատում;
 Մէջն են ընկնում խելագար,
 Ասում են թէ՛ այն Փարւանայ,
 Զահեկներն են սիրաւառ.
 Ըշտապերուց թև են առել,
 Գարձել թեթև թիթեռներ,
 Ու, տակաւին, հուր անմնկիս
 Մէջն են ընկնում անհամբեր,
 Զանք է անում ամեն միւր
 Շուտով տանի, տիրանայ...
 Ու այրւում են, այրւում անվերջ
 Կրարիճները Փարւանայ:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

Աստուծոյ զօրքով անդ մըն ալ պիտի չը կրնայիրք զըտնել նմանը այն տխուր երեւոյթին, որ մեր գրական կեանքին մէջ կը նկատուի այսօր: Փոքրաթիւ ազգի մը երկու մեծագոյն հատուածները լիտխաղարձաբար անձանօթ կը մ'նան իրարու գրականութեան: Գիտեմ. տեսակ մը մարդիկ, որոնք արտաքին պայմաններով կը բացատրեն ու կ'արդարացնեն ամեն չարիք, անմիջապէս սահմանադիժը պիտի ցուցնեն ինծի իրենց վութկոտ ցուցամատներով: Չեմ հերքեր բնաւ քաղաքական բաժանումի մեծ ազդեցութիւնը այս չարիքին վրայ, սակայն միւս կողմէ չեմ ալ ընդունիր թէ՛ երէկուան սահմանները կրնան իրարմէ այս աստիճան հեռացնել ընդհանուր աւանդութիւններով ու ընդհանուր յիշատակներով հինցած բազմազարեան ազգի մը զբայի երկու մասերը: Ես աւելի ներքին պայմաններու, մեր կամքէն ու կարողութենէն կախուած ազդակներու կը վերադրեմ այս երեւոյթը, հետեւաբար յօդուածիս մէջ ալ այս կարգի պատճառներու վրայ պիտի ծանրանամ, որպէսզի կարելի ըլլայ չարիքին հնարաւոր դարման մը ցուցնել:

* *

Որչափ ալ որ չ'ուզեմ առաջին տողէս իսկ կողմնակալութեան կասկածը հրաւիրել վրաս, չեմ վարանիր սակայն համարձակօրէն խոստովանելու, թէ իմ կարծիքովս՝ թիւրքահայերուն վրայ չէ որ կը ծանրանայ պատասխանատուութիւնը այս պարագային մէջ:

Թիւրքահայ ժողովուրդը՝ սկսած իր ամենաստորին խաւերէն մինչեւ իր ամենազարգացած դասակարգը՝ սկիզբէն ՚ի վեր միշտ մեծ յարգանք ու համարում ունեցած է իր սուսահայ ազգակիցներուն հանդէպ. կրնամ ըսել, կրտսեր եղբօր մը իր մեծ եղբօրը նկատմամբ սաժամ այն տեսակ մը միամիտ զգացումը, որով իր աւագին վրայ չափազանց մեծ գաղափար մը կ'ունենայ, զանի ամեն բանի կարող կը հաւատայ եւ ամեն առթիւ անոր պաշտպանութեանն ու օգնութեանը կ'ապուխի:

Իմ նպատակէս դուրս է յամենալ հոս՝ բացատրելու համար այս զգացումին ծնունդ տուող շարժառիթները: Բաւական է միայն շեշտել՝ թէ անժխակի իրողութիւն մըն է սա, որ ընդհանրապէս մինչև այսօր ալ կը շարունակուի, հակառակ յուսախարութեան շատ մը տխուր առիթներու: Այս զգացումին մեծ զարկ տուած են անշուշտ Բաֆֆիի և Գամառ-Քաթիպայի պէս զրողներ, որոնք իրենց գրչին իբր գլխաւոր նիւթ ընտրած են թիւրքահայ ժողովուրդին կեանքն ու իղէալները: Եւ սակայն ասոնք չեն միայն, որ երախտադիտութեան ու հիացումի պաշտամունք մը ստեղծած են թիւրքահայուն սրտին մէջ: Չը կայ ուստանայ ծանօթ գրող մը կամ գործիչ մը, որ հաւասար ժողովրդականութիւն չը վայելէ մեր քով ալ, գէթ անունով: Մինչև թիւրք կառավարութեան՝ Սուլթան Համիդի գահակալութենէն ՚ի վեր՝ սահմանած բացարձակ արդելքը, ուստանայ գրականութեան բոլոր արտագրութիւնները մուտք ու տարածում կը գտնէին թիւրքիոյ ամեն հայաբնակ քաղաք: Մինչև այսօր ալ, ծայրայեղ խստութիւններու հակառակ՝ թիւրքահայաստանի ամենախուլ անկիւններն իսկ կարելի է գտնել այդ «արգիլուած գրքեր»էն, որոնք՝ հայրենի հալածական թերափներու պէս՝ թագաւորներու մէջ և յաճախ հողի տակ կը պահուին երկիւղած խնամքով: Այդ գրքերը, թէև շատ դժուարութեամբ՝ բայց փոխ կը տրուին միշտ վստահելի խնդրողներու և գաղտնի ու խորհրդաւոր շրջաբերութեամբ մը ձեռքէ ձեռք կ'անցնին, իրէական կիրքը տարածելով սրտէ սիրտ: Թէև կառավարական անսկարագրելի խստութիւնները այսօր գրեթէ անկարելի ըրած են ուստանայ հրատարակութիւններու մուտքը թիւրքիս, բայց միւս կողմէ կարծես արգիլուած պատղի հրապոյրը տուած են անոնց: Չը նայելով որ արտասահմանէն եկած հայատառ թուղթի կտոր մը մէկու մը քովէն երբ գտնուի, բաւական է անսահման տարիներով բանտերու ու աքսորավայրերու դառնութիւնը ճաշակել տալու անոր, բայց և այնպէս հասարակութիւնը անդիմադրելի ախորժակ մը ունի այդ կարգի թուղթերու համար: Հերթը է որ զորօրինակ ուստանայ թերթի մը սովորական մէկ թիւը ունէ ճանապարհով թիւրքահայաստանի քաղաք մը իյնայ: Ա՛լ տեսնելու է թէ ինչպէս ձեռքէ ձեռք կը խլեն, կը կարգան ու կրկին կը կարգան, մինչև անգամ յայտարարութիւններն ալ, առանց երէք ուշադրութիւն դարձնելու թերթի թուականին, որ երբեմն մինչև տարուան մը հնութիւն կը ցուցնէ: Այսպիսի դէպքերու յաճախ անձամբ ականատես եղած եմ և առանց չափազանցութեան երկիւղի կրնամ պնդել, որ եթէ ուստանայ հրատարակութիւնները այնչափ ազատ մուտք ունե-

նային թիւըքիս, որչափ թիւըքահայոցը Ռուսաստան ունին, անոնք շատ աւելի մեծ սպառում կը դանէին մեր մէջ, քան բուն իսկ ռուսահայոց մէջ: Մինչև այսօր ալ թիւըքահայերը իրենց անձուկ ազատութեան ամեն կարելիութիւններէն կ'օգտուին, հազորդ մնալու համար ռուսահայ կեանքին ու գրականութեան: Կովկասէն զրկուած ունէ թղթակցութիւն միշտ պատուոյ տեղը կը գրաւէ պաշտահայ թերթերուն մէջ և մեծ հետաքրքրութեամբ կը կարդացուի: Ասկէ զատ այդ թերթերը առիթ չեն փախցնելու ռզղակի արտասպումներ ընելու ռուսահայ թերթերէն, թէև առանց ազբիւրը ցուցնելու, որովհետև արգիւտուած է... արգիւտուած է ռուսահայ թերթի մը մինչև իսկ անունը տանլ:

Հիմա գանք ռուսահայոց վերաբերումին:

Իրաւ է որ ռուսահայերը սկիզբէն 'ի վեր հետաքրքրուած են թիւըքահայ կեանքով, սակայն այդ հետաքրքրութիւնը խիստ միակողմանի եղած է: Թիւըքահայաստանի քաղաքական կացութիւնն է, որ իր բացարձակ հանդամանքով տարամերժօրէն զբաղեցուցած է զիրենք: Ու չը մոռնանք, որ այդ անօրինակ կացութիւնը օր մը ամբողջ աշխարհը զբաղեցնելու նախասահմանուած էր...: Վիպասաններուն ու բանաստեղծներուն առջև նիւթի անսպառ հանք մը կը բանար մեր եղերական կեանքը, իսկ գաղափարական երիտասարդութեան առջև գործունէութեան փառաւոր ասպարէզ մը: Եւ իսկապէս երեսուն տարիէ 'ի վեր զրեթէ չէ եղած ռուսահայ գրող մը, որ իր գրիչը չը փորձէր թիւըքահայ նիւթին վրայ, կամ հանրային գործիչ մը, որ իր ետանդէն աւելի կամ պակաս խոշոր բաժին մըն ալ թիւըքահայաստանին չը հանէր: Ոչ ոք կրնայ հերքել այն պերակչիւ ազդեցութիւնը, զոր թէ ստաջիւնները և թէ վերջիւնները ունեցան թիւըքահայ ժողովուրդի բախտին վրայ: Ռուսահայոց այս հետաքրքրութիւնը սակայն երբէք մեր կեանքին ու գիրքին լուրջ ու հմուտ ծանօթութեանը առաջնորդած չէ զիրենք և ընդհակառակը շատ մը թիւր ըմբռնումներու ու ազետաբեր սխախտութեան առիթ տուած է, հէնց այն պատճառով թերեւ, որ ինչպէս ըսի՝ միշտ միակողմանի եղած է: Անոնք՝ եթէ ոչ բոլորովին անգիտացած՝ դէթ շատ հարեանցի, շատ մակերեսային կերպով ճանչցած են թիւըքահայ ժողովուրդին ազգային ներքին կեանքը, կրթական ու գրական զարգացման ամբողջ ընթացքը: Իրենց հետաքրքրութիւնը այս մասին, կրնանք ըսել՝ կրաւորական եղած է միշտ. գարձեալ թիւըքահայեր են, որ ութսունական թուականներէն սկսած՝ յարաբերութեան միջնորդի դերը ստանձնած են ազգին այս երկու հատուածներուն միջև և երբ դանազան պատճառներով այդ միջնորդութիւնը

զադրած է, ուստի այս հետաքրքրութիւնն ալ մէկտեղ դադարած է: Ինծի այնպէս կը թուի՝ թէ ուստիայրը սկիզբէն ՚ի վեր չեն կրցած հաւատալ, որ Թիւրքիոյ մէջ հարստահարութենէ, թալանէ, բռնաբարութէ, կոտորածէ զատ ուրիշ գործունէութիւն կարելի ըլլայ և այս ուղղութեամբ դատելով՝ ուս և Թիւրք սահմանազուխը ամեն յառաջդիմութեան վերջին սահմանը կարծած են:

Եւ սակայն այսպէս չէ իրողութիւնը:

Թիւրքահայ ժողովուրդը՝ հակառակ երկաթէ անուրի մը պէս զինք չըջափակող բարբարոս ցեղերուն և հակառակ բռնապետական կառավարութեան մը ծայրայեղօրէն կամայական ու վատթար վարչութեան, շատ մը դիւրութիւններ ալ գտած կամ ստեղծած է և կրցած իրեն համար ազգային ինքնուրոյն կեանք մը ձեւաւորել: Այդ կեանքը՝ մանաւանդ սասնիներորդ դարու կիսէն մինչև 1895 կարմիր թուականը՝ անգուլ ու անվընատ յառաջդիմութեան պայքար մըն է, փոքրաթիւ ու քաղաքականապէս զժբաղղ ժողովրդի մը բարոյական պայքարը տղիտութեան բիրտ ուժին դէմ: Ձեռք բերուած արգիւնքը թէև ոչ համապատասխան սպառուած եռանդին ու ճիղին, բայց հէնց այդ պատճառով ալ սուելի գնահատելի է, աւելի շահեկան ու զեղեցիկ, ազրանոցի մէջ բուսած ծաղիկի մը պէս: Հիմա շարենք անուններ՝ ընդհանուր պատմութեան մէջ թերևս անօրինակ՝ մեր այդ շրջանէն: Պալեան, Օտեան, Ռուսինեան, Զօրայեան, Հէքիմեան, Միսաբեան, Պէշիքթաշլեան, Դուրեան, Շիշմանեան, Ստեփան Ոսկան, Մամուրեան, Գարագաշեան, Խրիմեան, Վարժապետեան, Նարպէյ, Սրուանձտեան, Յ. Սվաճեան, Թէրզեան, Պարոնեան, Սրբուհի Տիւսար, Տէմիրճիպաշեան, Զիլինկիրեան, Տէվկանց, Շահնազար, Արփիար, Հրանտ, Սիպիլ, Զօհրապ և այլն: Ասոնց մեծամասնութեան անունն իսկ անձանօթ է ուստիայրուն և շատ քիչերուն գործը ծանօթ: Իսկ այդ շրջանէն ետքը ալ գրեթէ անձանօթ աշխարհ մըն է իրենց համար մեր գրականութիւնը. Պարոնեանէն սաղին թերևս ոչ մէկ թիւրքահայ գրագէտի անուն կը յիշեն: Իմ կարծիքովս այս անտեսութեան առիթ տուող պատճառները երեք կարգի պիտի բաժնեն, քննութիւնս դիւրացնելու համար: 1. Ռուսահայ հասարակութեան և մանաւանդ մտաւորական դասակարգին մէջ տիրող անտարբերութիւնը, ընդհանրապէս դէպի մայրենի լեզուն ու գրականութիւնը: 2. Տեսակ մը արհամարհանք մասնաւորապէս դէպի թիւրքահայ գրականութիւնը: 3. Լեզուի դժուարութիւն:

1. Անտարբերութիւն: — Երկար խուզարկութիւններու պէտք չը կայ բնաւ, անտարբերութեան երեոյթը հաստատող

փաստեր դանելու համար: Ռուսահայ արդի բոլոր խմբագիրներն ու գրագէտները սրտակէզ պիտի վազեն ինծի վկայելու: Ռուսական կայսրութեան մէջ $1\frac{1}{2}$ միլիօն հայեր կ'ապրին, մեծամասնութիւնը հայրենի հողին վրայ համախումբ: Կովկասի էն քաղաքակիրթ և էն հարուստ տարրն են ասոնք և սակայն ինչ կը տեսնենք: Չեն կրնար պահպանել իրենց լեզուով ընդամէնը երկու օրաթերթ և քանի մը հանդէս, որոնց տարաբաղդ հրատարակիչները ամէն տարուան վերջը իբր Կաղանդի նուէր դէֆիցիտի սրտածմլիկ ողբերգութիւն մը կը յօրինեն իրենց ընթերցողներուն համար: Մինչդեռ թիւրքահայ ժողովուրդը իր կրած զգեստիչ հարուածէն յետոյ իսկ՝ թերթերուն թիւը անկողնու վրայ է և վեց մեծ օրաթերթ ու շատ մը հանդէսներ ունի այսօր: Պատճառը՝ Ռուսիոյ ընթերցանութիւնը երթալով կենսական պահանջ մը կը դառնայ մեր մէջ, մեր զարոյցներէն հետըզհետէ նոր սերունդներ կեանքի ասպարէզը կը թևակոխեն, որոնք եթէ գիտական մեծ պաշար չ'ունին, բայց գոնէ մայրենի լեզուի ծանօթութիւն և ազգային կեանքի հետաքրքրութիւն կը բերեն հետերնին: Գիտեմ, հոս պիտի առարկեն ինծի, թէ Ռուսաստանի մէջ մրցում կայ, շատ աւելի լաւ խմբագրուած և բազմաբովանդակ ուսմամուլին մրցումը: Այս առարկութիւնը շատ եմ լսած և սակայն մինչև օրս չեմ կրցած ըմբռնել: Մեր մէջ ալ օրէ օր կը ստուարանայ թիւը այն երիտասարդներուն, որոնք եւրոպական ոեւէ լեզու գիտեն, գլխաւորաբար ֆրանսերէն կամ անգլիերէն՝ յաճախ երկուքն ալ՝ և իրենց ինքնազարգացումը այդ լեզուներու օժանդակութեամբը կը շարունակեն: Բայց այսպիսիները շատ հեռու են անտես ընելէ ազգային գրականութիւնն ու մամուլը, ընդհակառակը ամենահետաքրքիր հետնողներն են, որովհետև իրենց համար անդիմադրելի պահանջ մըն է ազգային կեանքի հետաքրքրութիւնը, իսկ օտար հրատարակութիւններ մերիներուն վրայ ինչ առաւելութիւն ալ ունենան, միշտ սա պակասութիւնը ունին որ օտար են ու մեր կեանքը չեն շօշափեր: Ահա իմ կարծիքովս այս հետաքրքրութեան բացակայութիւնն է միակ պատճառը ուսահայ պարբերական մամուլին ու գրականութեան ներկայ անքաջակեր, տխուր, ամօթալի վիճակին: Կովկաս չեմ եղած, որ տեղին վրայ ուսումնասիրուած փաստերով խօսիմ, բայց հոս Եւրոպայի մէջ իսկ բաւականաչափ առիթներ ունեցած եմ այս իրողութիւնը հաստատելու: Գոհութիւն Աստուծոյ, հոս ուսահայ ուսանողութեան մէջ ալ չեն պակասիր դիտելու նմուշներ: Շատեր տեսած եմ—և ասոնք ջախջախիչ մեծամասնութիւն կը կազմեն—որոնք հայոց գրականութեան այնչափ միայն ծանօթ են, որչափ թերևս

չինացի մը: Այս երանելիները որ մը օրանց փորձութիւնը չեն ունենար հայերէն գիրք մը կամ թերթ մը ձեռք անելու ինքնաբերաբար և սակայն կը վիրաւորուին անտարբերութեան ունէ ակնարկութենէ, բարձրաձայն առարկելով ու բողբոջելով թէ՛ «հայերէն կարգալու բան չը կայ»: Դեռ քանի մը ամիս առաջ էր որ հանդիպեցայ այս դասակարգին մէկ տիպար ներկայացուցչին: Պարոնը, որ կիսամեակէ մը իր ուսումը կ'աւարտէ և արդէն հասարակական մեծագործութիւններու վիթխարի ծրարներ կ'որոճայ՝ հետեւալ ապշեցուցիչ կարծիքը կը յայտնէր հայ գրականութեան մասին. «Շուտով ուսումս կ'աւարտեմ և իբր բժիշկ կ'երթամ Կովկասեան քաղաք մը հաստատուելու: Գիտէք որ եւրոպական բժիշկները սովորութիւն ունին իրենց նախասննեակին մէջ, սեզանի մը վրայ՝ գրքեր դնել, սպասող հիւանդներու ժամանցին համար: Ես՝ իհարկէ իբրև հայ և ազգասէր բժիշկ՝ (հոս ժպիտ մը) պիտի ուղէի անպատճառ քանի մը հայերէն գրքեր ալ ունենալ սեզանիս վրայ, հայ յաճախորդներուս համար: Հիմա՝ խնդրեմ հայերէն՝ շատ չէ՛ մի երեք գրքի անուն տուէք ինձ»: Եւ երեք մասները սպանական թափով մը աչքերուս առջև ճօճելով՝ բարձրագոյն կը կրկնէր. «մի երեք գիրք»...

Կերպնում որ այս աստիճան ժպիտի թեթեամտութիւնն ոչ մէկ հոսնոսի քով պիտի կրնաք գտնել:

Հնդուները պահ մը թէ իսկապէս «հայերէն կարգալու բան չը կայ», բայց այս մաշած յանկերգին թութակները վերջապէս հաճէին ցուցնել մեզի, թէ ո՞վ պիտի գրէ այդ կարգալու բանը, երբ անոնք, որոնցմէ ապ կը սպասուէր՝ աչքերնուն լոյսը կը խնայեն իրենց մայրենի լեզուն սորվելու համար. երբ բարձրագոյն կրթութեան մեր սիդապանձ սլախաւորները՝ համալսարանի դռնէն դուրս խոյանալնուն պէս խելայեղ ու շնչասպառ կը վազեն դէպի Բաքու, դէպի այդ Նոր-Կովքիսը, ուր առասպելական ոսկեգեղմին տեղ իրական ոսկիհեղուկը գտնուած է...:

Հիմա վերագառնալով մեր բուն նիւթին, ծիծաղելի պահանջկոտութիւն մը չը պիտի ըլլար սպասել այս նոր Արգօնաւորդներէն կամ արգօնաւորգոյններէն, որոնք իրենց քթին տակ լոյս տեսնող հայ հրատարակութիւնները հարեանցի ակնարկի մը իսկ չեն արժանացներ՝ որ «մի ինչ որ» թիւրքահայ գրականութեամբ հետաքրքրուելու եղնէին:

Անցնենք երկրորդ պատճառին:

Արհամարհանք մասնաւորապէս դէպի թիւրքահայ գրականութիւնը:—Հոս ուղղակի ռուսահայ հրատարակագիրներու օձիքէն պիտի բռնեմ: Թիւրքահայոց վերաբերումին մասին խօսելով ըսի, որ անոնք շատ մեծ յարգանք ու վարէն վեր դիտո-

զի համարումը ունին ուստահայոց նկատմամբ: Կեանքի փորձա-
տութեամբ զիանք, որ անհատական յարաբերութեանց մէջ եր-
կու կողմերն ալ զգայումի միեւնոյն ձեւը չեն կրնար տածել
իրարու վերաբերմամբ. երբ մէկինը վարէն վեր ուղղութիւնը
ուսննայ, միւսինն ալ բնականօրէն վերէն վար պիտի իջնայ:
Ճիշդ նոյնը նաև հասարակութիւններու յարաբերութեանց մէջ:
Հետեաբար եթէ ուստահայերը թիւրքահայոց կրտսեր կզբօր միա-
միա փարուսին մեծ կզբօր գորովագութ ու հոգածու վարմունքով
պատասխանէին, ոչ անհասկանալի և ոչ ալ վիրաւորական պիտի
ըլլար մեզի համար: Ռուսահայերը՝ քաղաքական զէպքերու բե-
րումով՝ կանուխէն զարգանալու, տնտեսապէս և բարոյապէս
բարգաւաճելու նպատաւոր պայմաններու մէջ ինկան և պէտք
էր որ առաւելութիւններ ունենային մեր վրայ: Սակայն զըժ-
բազդաբար աս չէ կղած իրենց փոխադարձ վարմունքը մեզի
հետ: Անոնք տեսակ մը գտող արհամարհանքով վերաբերած են
մեզի ու այդ արհամարհանքին պատմութիւնը նոր չէ: Մեզմէ
բաժնուելով կանոնաւոր յառաջդիմութիւն մը երաշխաւորող
զիւրութիւններ գանելէ և իրենց համբաւած «կուլտուրայի»
ճամբուն մէջ իջնալէ յետոյ, սկսած են մեզ նկատել իբր թեթե-
սօլիկներ, սկզբունքի ու համոզումի համար կաց ու կայարան
չունեցող յեղեղուկ արարածներ. մինչև որ դերպոյն պէտքը
իրենց բերնին մէջ հոսհոս մակդիրը ստեղծած է, վերոյիջեալ
բոլոր աննպատտ ածականներուն ամբողջ իմաստը այս միակ
պատկերաւոր անուանակոչութեան մէջ խտացնելով: Այս գոր-
ծին մէջ աշխատանքի մեծագոյն բաժինը անտարակոյս իրենց
մտաւորական վարիչներն են ունեցած: Անկարելի է երևակայել
ուստահայ խմբագիր մը, որ թիւրքահայոց մասին ունէ տեսու-
թեան մը առթիւ ինքզինք զրկէր իր կապարէ ծանր և անտաշ
տողբուն մէջ այդ հեշտալուր հոսհոս-ը հնչեցնելու երանու-
թենէն: Եւ ահա դատողութեան այս ուղղութեամբ զիտուած ու
քննուած են մեր բոլոր գործերը: Տաճկահայոց Սահմանադրու-
թիւնը—մի ծիծաղաշարժ կ'ոմեզիա. հոսհոսներ: Տաճկահայոց
զպրօցները—Տէր-Թողիկեան գամեր. հոսհոսներ: Տաճկահայոց
զրականութիւնը—ճիշդ իրենց մտքին հայելին. Վոսիօրի ափեր,
կոյսի աչքեր, դարնան սիւքեր, վարդ, մեխակ, մանուշակ, լուս-
նակ. հոսհոսներ: Հոսհոսի այս տեղատարափին ու ընդհանուր
արհամարհանքէն զերծ մնացած են սակաւաթիւ թիւրքահայեր
միայն, որոնց անունը համազգային երախտագիտութիւնը նուի-
րազործած է: Սպասելի էր որ գէթ այս կարգի գրողներու գոր-
ծերը տարածուած ըլլային կովկասի մէջ, սակայն իմ հաւա-
քածս փաստերը բոլորովին հակառակը կ'ապացուցանեն: Օրինակի

համար Պէշիկթաշլեանի պէս նուրբ արուեստագէտի մը մէկհատիկ հատորը, որ Թիւրքիոյ մէջ սպառած ու արգելուած է՝ նոր սպաղորութեան չէ արժանացած Կովկասի մէջ և ուստիայ ուսանողներ կը ճանչնամ, որոնք ուսւ Վեսելովսկիի մը շնորհիւ իմացած են իր անունը... ու մինչև այսօր ալ միմիայն անունը դիտեն: Ալիշանի ոչ թէ միայն գիտական, այլ և բանաստեղծական գործերը նեղ շրջանի մը մէջ սահմանափակ կը մնան: Աւելի մեծ ժողովրդականութիւն մը չէ՝ որ կը վայելէ Դուբլան: Միակ ժողովրդականացած թիւրքահայ գրողը ուստիայոց մէջ Պարոնեանն է և այս բացառիկ շնորհին պատճառն ալ դժուար չէ հասկանալ, Պարոնեան կը խնդացնէ... Իսկ Պարոնեանէն ասպին թիւրքահայ գրողներու անուններ տուէք ուստիայու մը. Հրանդ, Զօհրապ, Կամսարական, Թլքատենցի, Գեղամ, Տողրամաճեան, Զարգարեան և այլն: Ան հայրական փպիտով մը պիտի պատասխանէ ձեզի. «Ինչայո՞ւ են դրանք, որ մի բան լինէին, գոնէ անունները կ'իմանայինք էլի»: Բայց ուրկէ պիտի իմանայիք, երբ խեղճերը միջոց չ'ունին ձեր թերթերուն մէջ գրելու, իսկ ձեր հրատարակագիրներն ու գրագէտներն իսկ շատ հաւանական է որ ձեզի պէս առաջին անգամն ըլլալով կը լսեն այս անունները: Անշուշտ նորութիւն մը պիտի ըլլայ ուստիայոց համար, երբ յայտնեմ թէ իրենց վատահամբաւած պոլսական գրականութեան դէմադէմ մեր մէջ արդէն գրական նոր ուղղութիւն մը սկսած է ծրարուիլ, Գաւառական նորածին գրականութիւն մը, որ հարազատ թիւրքահայ գրականութեան իր իրաւունքը կը պահանջէ Պոլիսէն: Այս նոր ուղղութեան յառաջամարտ ակոյցեանները քանի մը տարի առաջ համարձակ բանակուիւ մը սկսան Պոլսոյ գրական ներկայացուցիչներուն դէմ: Այդ բանակաւոր՝ որչափ կը յիշեմ՝ ոչ մէկ արձագանգ գտաւ ուստիայ մամուլին մէջ*), ուստի կարծէ որ հոս համառօտակի ծանօթացնեմ իրենց իրաւադահանջումները:

Ասոնք կը պնդեն թէ մինչև հիմա մայրաքաղաքին մէջ մշակուած գրականութիւնը չունի սեէ իրաւունք թիւրքահայ գրականութիւն կոչուելու, քանի որ Պոլիսը իբր միջավայր չուրի է ճշմարտապէս հայ գրականութիւն մը ստեղծելու կամ վարելու ամէն յարմարութենէ: Պոլսոյ հայ հասարակութիւնը կորսնցուցած է իր ցեղական յատկութիւններէն այն ամեն տարրերը, որոնք հայրենիքին և անոր բնակչութեան համայնական ամբողջութեանը մէջ միայն կրնան պահպանուիլ: Ահա այս

*) Այդ բանակաւորի մասին տես «Մուրճ» 1901, № 8, ելուս 250—255:

է պատճառը, որ պոլսական գրականութիւնը ընդունակ եղած չէ և չի կրնար ըլլալ պատկերացնելու մեր ցեղին ամբողջ էութիւնը, իր ազգագրական, բնախօսական և հոգեբանական ամէն մանրամասնութիւններովը: Այդ գրականութիւնը մինչև իսկ իբր միջավայրի արտագրութիւն խորթ է մեծ մասամբ, որովհետև շատ քիչ եղած է պոլսեցի այն գրողներու թիւը, որոնք՝ ինչպէս օրինակ Պարոնեանը՝ իրենց շուրջը դիտելու կարողութիւնը ունեցած ըլլան: Ճշմարտապէս հայ գրականութիւնը, որ կարենայ մեր տարորոշութիւնը երաշխաւորելով մարդկային ընդհանուր գրականութեան մէջ առանձնայատուկ տեղ մը ապահովել մեզի՝ հայրենիքին մէջ, հայ ցեղին դարաւոր արմատին վրայ միայն կրնայ ածել: Մինչև իսկ Պոլսոյ բարբառը, որ զըտուելով, մաքրուելով, կանոնաւորուելով թիւրքահայ ընդհանուր գրական լեզուի նուիրադարձումին բարձրացած է՝ իր կատարելագործումին հասնելու համար անհրաժեշտ պէտք ունի գաւառաբարբառներու բառամթերքին ու ոճին, «որոնք իբրև հայ լեզուին հարազատ այլ անտեսուած սեփականութիւնը, սլափ Կան արզի աշխարհաբարին մէջ գրաւելու իրենց համար բայ մնացած տեղերը, այնքան զեղեցկապէս ու օգտակարապէս հերքելով օտար լեզուներու բառարանին ու ոճին խաթարող ու այլափոխող արշաւանքը»: Մինչոյն ատեն այս ընդհանուր սկզբունքէն դուրս՝ անոնք չեն հերքեր պոլսական գրականութեան արժէքը, ոչ իբր ամբողջութիւն այլ իբր մաս ամբողջութեան: Բանի որ մայրաքաղաքը մեր ամբողջութենէն կտոր մըն է, հետևաբար իր կեանքն ու զայն արտացոլացնող գրականութիւնը իրենց սահմանին մէջ միշտ շահեկան պիտի մնան մեզի համար: Դժբաղդաբար գաւառացի գրողներուն միջոցներ կը պակասին, Պոլսոյ դէմ իրենց այս օգտակար պայքարը գործնականապէս ալ մղելու: Ասոր համար անհրաժեշտ էր որ գաւառն ալ իր մամուլը ունենար, որպէսզի կարողանար պոլսականին դիմաց գաւառական բնատոհմիկ գրականութիւն մը կանգնելով, մեր գրականութեան ծանրութեան կեդրոնը Պոլիսէն խախտել և մայրաքաղաքին խորթ ազդեցութիւնը չեզոքացնել: Մինչդեռ այսօր՝ Պոլիսէն ու Իզմիրէն դուրս՝ հայ մամուլի հաստատում կարելի չէ թիւրքիցի մէջ և միմիայն այս արդիւնքին չնորհիւ է, որ Պոլիսը դեռ կը շարունակէ իր մտաւորական կեդրոնի դերը, առանց ուրիշ սեէ գերազանցութիւն ունենալու գաւառներու վրայ, ուր շատ աւելի լուրջ նկարագրով և զրտկան ամուր ձիրքերով օժտուած երիտասարդութիւն մը կայ: Հետևաբար այս խեղճերը առայժմ ուրիշ բան չեն կրնար ընել, բայց եթէ տեսական պայքարներով Պոլսոյ հեղինակութեան հաւատքը քան-

դեկ և նախնական ստաղծները պատրաստել վաղուան գրականութեան շէնքին: Ասոնցմէ շատերը Պոլսոյ թերթերուն մէջ ցիրուցան իրենց ցանցառ բայց շատ արժէքաւոր արտադրութիւններով իրենց ջատագոված գրականութեան կենսունակութեան ապացոյցները և հրատուրիչ նախաճաշակը տուած են արդէն: Այսպէս՝ Խարբերդէն Թլկատինցին՝ բազմարդիւն ուսուցիչ մը, մեր նոր ընդհանուր գրականութեան է՛ն ինքնատիպ գրողը և է՛ն մեծ տաղանդը թերես, աւելի քան 15 ասրիէ իվեր Պոլսոյ և Իզմիրի պարբերականներուն մէջ՝ ինչպէս հայրենի տարերէն քաղուած ծաղիկներ՝ կը ցանցնէ հըզօր, նկարագեղ սծով ու նուրբ իւժօսով գրուած էջեր: Թըլկատինցին Իզմիրի Արեւելեան Մամուլին այս տարուան առաջին թիւերուն մէջ հրատարակեց Ընդի-Դէմէն (այսինքն Անդի աշխարհէն) անունով թատերախաղ մը, զոր Պոլիս Դանատէի Դժոխքին կամ Քաւարանին հետ համեմատելու (?) էլան, և որուն վրայ ուսասնայ մամուլը ուշադրութիւն իսկ չը դարձուց: Ասկէ զատ Թլկատինցին պատրաստ ունի գաւառի կեանքէն՝ վէպ և թատերգութիւն՝ քանի մը հատորներ, որոնք փոշիներու տակ՝ մեկենասի մը կը սպասեն լոյս տեսնելու համար: Իր երիտասարդ աշակերտը Ռուբէն Զարգարեան, ժողովրդական հէքեաթներ գրական ձեռի վերածեց, Վալմիկին յիշեցնող արձակով մը: Գեղամ (Ուխտաւոր), Տարօնոյ կեանքէն գրուողներ կը դժէ արձակագիր աշուղի միամիտ ու մեղանոյշ շեշտով մը: Գալուստ Անդրէասեան՝ զարձեալ Մուշէն՝ ժողովրդական կեանքի լուրջ ուսումնասիրութիւններ տուաւ: Յովհաննէս Գաղանձեան՝ Թօքաթէն՝ գաւառաբարբառներու լեզուարնական ուսումնասիրութեանը կը հետամտի և գաւառական գրականութեան դիտաւոր փաստաբաններէն է: Եւ զիս ուրիշներ՝ Տօղրամաձեան, Որբերեան, Յարութիւնեան և այլն, որոնցմէ իւրաքանչիւրը իր գաւառէն համով ու հոտով նմուշ մը բերած է վաղուան գրականութեան:

Արդ՝ ցաւալի բլլալէ առաջ զարմանալի է, որ այս նոր շարժումը մինչև հիմա ոչ մէկ արձագանգ գտած է ուսասնայ մամուլին մէջ, քանի որ ուսասնայ հրատարակագիրները սկիզբէն ՚ի վեր աչքէ չեն փախցներ սեկ վկայութիւն, որ կրնայ պոլսական գրականութեան դէմ իրենց տեղի-անտեղի քրննադատութիւններուն ուժ տալ: Իրենց այս տարօրինակ լուծիւնը ուրիշ մեկնութիւն չի վերցներ, բայց եթէ ենթադրել որ խնդրէն բոլորովին լուր չ'ունին: Ինչպէս կ'երի, թիւրքահայ թերթերը ձեռք կ'առնեն միմիայն ազգային լուրեր քաղելու համար, իսկ գրական յօդուածներուն վրայ ակնարկ մը իսկ չեն

նեաւեր, այն կանխակալ համոզումով՝ թէ բոլորն ալ դատարկ բաներ են: Թուսահայ մամուլը ունենալով հանդերձ ամեն դիւրութիւն իր ընթերցողները թիւրքահայ գրականութեան տեղեակ պահելու, մինչև այսօր ոչ մէկ ջանք կը ցուցնէ այս ուղղութեամբ, ընդհակառակը՝ չի փախցներ ոեւէ առիթ հինցած նախապաշարումները ամրապնդելու: Մէկը, որ միմիայն ուստահայ մամուլին միջոցով կը ճանչնայ թիւրքահայ մտաւոր կեանքը, պիտի կարծէ անշուշտ՝ թէ արդէն երկար տարիներէ ի վեր հրապարակին վրայ յաւիտենական հոսանքներէն, դատարկ ֆրազներ թիտղիսէն զատ մարդ չը կայ: Չենք յաւանիւր պնդելու թէ այսօր բառին բուն նշանակութեամբ գրականութիւն մը կը զարգանայ մեր մէջ: Վերջին ազէտները՝ շատ մը ուրիշ բաներու հետ՝ անոր ալ ծանր հարուած մը տուին իր ամէնէն յուսատու շրջանին մէջ, բայց վերջապէս կը շարունակուի գրականութիւն մը, որ պարբերականներուն մէջ սեղմուած է: Համեմատութիւն մը մինչև իսկ կրնայ պատուարեր ըլլալ թիւրքահայոց: Որովհետև մինչդեռ ուստահայոց մէջ գրական կայունութեան գլխաւոր պատճառը անտարբերութիւնն է և աշխատողներու պակասը, թիւրքահայոց մէջ ազոր միակ պատճառը քաղաքական դժոխային կացութիւնն է: Մենք այս պահուս մեր մէջ պատրաստ ունինք շատ մը կարող գրողներ, որոնք պիտի կրնան գրական փայլուն չըրջան մը բռնալ, անմիջապէս երբ թիւրքիոց ներկայ վիճակը բարեփոխուի:

Սակայն դժբախտաբար հոս կանց չի առներ ուստահայ մամուլին ձախող ազդեցութիւնը, ընդհակառակն աւելի տխուր դեր մը կը խաղայ վերև առաջ բերուած երրորդ պատճառին մէջ, զոր հիմա պիտի պարզեմ:

3. Լեզուի դժուարութիւն:—Ահա մեզ իրարմէ բաժնող մեծ խրամ մըն ալ, որ երթալով անանցանելի դառնալու վտանգը կը սպառնայ, չնորհիւ մեր լեզուի մասին ուստահայոց մէջ արմատացած սխալ ըմբռնումին:

Թիւրքահայոց համար գոյութիւն չ'ունի այս դժուարութիւնը, որովհետև անոնք ազգային վարժարաններու մէջ կըրթուելով հիմնապէս կը սորվին իրենց մայրենի լեզուն: Ով որ լեզու մը լաւ գիտէ, մեծ դժուարութիւն չի կրեր անոր զանազան գրարարքաւորները հասկնալու: Մինչդեռ ուստահայ զարգացած դասակարգին մեծամասնութիւնը օտար վարժարաններու մէջ առած է իր ուսումը և հայերէնը սորված է առօրեայ խօսակցութեամբ ու պատահական ցանցառ ընթերցումներով: Ակներն է որ անոնք այս պայմաններու մէջ չէին կրնար հայերէն գիտնալ և սակայն սպասելի էր որ անպատ-

ճառ գիտնային զէթ բան մը—իրենց հայերէն չը գիտնալը: Ու ապշեցուցիչ, ընդվզիչ երևոյթը հոն է, որ այս գիտակցութիւնը կը պակսի իրենց: Մարդիկը կը կարծեն՝ թէ արդէն իրենց գիտցած հայերէնովը իրաւունք ունին հասկնալու ամեն բան, իսկ երբ չը հասկնան, ուրեմն զրուածքը հայերէն չէ, «թխած խօսք» է ամէն բան, որ իրենց ողորմելիօրէն աղքատ բառամթերքէն դուրս է մնացած: Քանիներու ես ինքս անձամբ տուած եմ կարգաւ Ալիշանի, Պէշիքթաշիանի, Գուրեանի գործերը, զորս աչքիս առջև քիչ մը թերթիկէ յետոյ փակած մէկդի դրած են, առարկելով թէ «լեզուն շատ է ծանր»: Արդ, քանի լեզուի այս դժուարութիւնը կայ, ինչպէս կուզէք որ ուսանայ երիտասարդութիւնը հետաքրքրութիւն ցոյց տայ թիւրքահայ և ընդհանրապէս հայ գրականութեան համար: Գրական սեղ գործ մը միայն այն ժամանակ համ ու հրապոյր կ'ունենայ, երբ ընթերցողը չի դժուարանար լեզուն հասկնալու: Իսկ երբ լեզուին մէջ այն աստիճան համբակ ըլլայ, որ կըմկըմալով կարգայ և առօրեայ դործածութիւնէն դուրս ամէն բանի առջև զէմքի զարմացական ծամածոթեամբ մը կանգ առնէ, շատ բնական է, որ չուսող ճանճբանայ ու մէկդի նեաէ զրուածքը: Եւ սակայն լեզուի այս արգելքը պիտի կրնայ վերանալ այն ուղղութեամբ, որուն կը հետեւեն Կովկասի մէջ:

Կը յիշեմ քանի մը տարի առաջ արեւելեան և արևմտեան գրական բարբառներու հին վիճարանութեան արծարծումին առթիւ «Մշակի» աշխատակիցներէն մէկը ուսանայ գրական բարբառին կենդանութեան ու բնականութեան իբր ազայցոյց հետեւեալ փաստը կը բերէր: Մեր երիտասարդներէն շատեր, կ'ըսէր յօգուածագիրը, օտար վարժարաններու մէջ կրթուելով, առիթ չեն ունենար իրենց մայրենի լեզուն սորվելու: Սակայն վարժարանէ կ'ընկէ յետոյ թերթ կարդալով կարճ ժամանակի մէջ այնչափ հայերէն կը սորվին, որ կը յաջողին յօգուածներ գրել հայ թերթերուն:

Ի՞նչպէս կը գտնէք այս փաստը, ուրախալի, թէ ցաւալի: Եթէ ուրախալի, ուրեմն անկենդան, անբնական, թխած լեզուներ, պէտք է համարել օրինակի համար Ֆրանսերէնը և գերմաներէնը... մանաւանդ գերմաներէնը: Քանի որ հայ և օտարազգի ուսանողներ Ֆրանսայի կամ Գերմանիոյ մէջ տարիներով ուսանելէ և իրենց ուսման ընթացքը աւարտելէ յետոյ իսկ այդ լեզուներէն մէկով յօգուած մը շարադրելու կարողութիւնը չեն ունենար մեծ մասամբ: Աւելին կայ: Ռուսական միջնակարգ վարժարաններէ չըջանաւարտ հայ երիտասարդներէն շատեր, իրենց իսկ խոստովանութեամբը՝ համարձակութիւն չեն դար

ուսերէն յօգուած մը գրելու: Ահա թէ ուր է վերջին արմատը: Ռուսահայերու մեծամասնութիւնը իսկապէս «Մշակի» յօդուածագրին զմայլած ձևովը կը սորվին հայերէնը և օրին մէկն ալ գրող դասնալով՝ իրենց լեզուական սպիտութիւնը օրէնքի կարգ կ'անցընեն: Ու մայրենի լեզուն սորվելու այս տխուր մեթոդին հետևանքը կ'ըլլայ այն ունիթոռական սղորմելի աշխարհաբարբը, որով այսօր ուսանայ գրողներու մեծամասնութիւնը կը գրէ և ուր միայն բառերը հայերէն են և ան ալ, աւանդ, գէթ ոչ բոլոր բառերը: Չարիքին հետևանքը այսչափ մեծ չ'ըլլար թերևս, եթէ այս կարգի հայագէտներուն հասկըցնէին, թէ ուսանայ սեղ թերթի լեզուն զիտ շատ հեռու է ամբողջ հայ լեզուն ըլլալէ և թէ պարզապէս յանդգնութիւն է յաւակնել, որ այդ պաշարով իրաւունք ունենան հայերէն ամէն գրուածք հասկնալու, իսկ ինչ որ չը հասկնան, իրրև ծանր, հինցած, թխած՝ մէկդի նուտելու: «Մշակի» աշխատակիցին յիշած տեսակէն յօդուածագիր մը կը պնդէր ինծի, թէ հայերէնը աղքատ լեզու է: Պատճառ: Որովհետև ինք՝ կամ իրեն չափ հայագէտ ուրիշ մէկը՝ չէին կըրցած Տուրգենևիւն բան մը պէտք կ'զածին պէս թարգմանել: Բաւական ճիգ թափելի, բայց վերջ ի վերջոյ կարծեմ չը կրցայ համոզել այդ ինտելլիգէնտ-ը, թէ ադ ոչ թէ հայերէնի աղքատութեան, այլ իր հայերէն չը գիտնալուն հետևանքն է: Թէ մեր նոր աշխարհաբարբ կրցած է օրինակի համար Հիւդօի Թշուառներուն պէս գլուխ-գործոցի մը բոլոր նրբերանգները արտայայտել և եթէ կան բաներ, որոնք իսկապէս չեն թարգմանուիր՝ այսինքն թարգմանութեան մէջ բնագրին համն ու հոտը կը կորսնցընեն՝ ազոնք լեզուի մը առանձնայատուկ դարձուածներու նրբութիւններ են, որոնցմէ հայերէնն ալ շատ ունի և գորս նոյնպէս կարելի չէ թարգմանել, մինչև անգամ աշխարհի ամենէն հարուստ լեզուին:

Սակայն մեղադրելի չեն բնաւ այս խեղճերը, երբ ուսանայ գրականութեան վարիչներն են, որ լեզուի հարցին մէջ բռնած իրենց սխալ բնթաքով այս կարգի թիւր ըմբռնումներու առիթ կուտան: Հաստատ գիտեմ, որ անոնք յօդուածս կարդացած ասուներին, իրենց հին խրատը պիտի կրկնեն ինծի.

— Պարզ գրեցէք, պարզ, որպէսզի հասկանան ձեր գրուածքները և գէն չը չպատեն:

Պարզութիւնը՝ ինչպէս ամէն բանի՝ այնպէս էլ գրականութեան մէջ յանձնարարելի յատկութիւն մըն է և սակայն սոսկալի բան է լեզուի այն պարզութիւնը՝ կամ աւելի ճիշդ՝ բառով մերկութիւնը, զոր ուսանայիք կը դաւանին: Ապացոյց:

Այն լեզուն, որով այդ պարզասէրները կը գրեն: Եզան սայլի

պէս դանդաղ ու ճոնչուն ոճ մը, ծանր ու միօրինակ համաձայնութիւն մը, նախադասութիւններու նախնական, անտաշ, անչընորհք շինուածք մը, արտայայտութեան անարուեստ, թափթրփած ու գրեթէ երկխայական ձև մը և վերջապէս այն ամբողջ արզահատելի հայերէնը, որուն արհեստական դազունիքին թափանցելու համար, մարդ պէտք չէ հայերէն սորված ըլլայ: Ասոնք իրենց գիտցած ու չը գիտցած բոլոր լեզուներէն՝ թիւրքերէնէն սկսած մինչև վերմաներէնը՝ անխտիր փոխառութիւններ ըրած են ու դեռ կը շարունակեն ընել առանց ունէ խղճահարութեան: Կ'իմանամ թէ արդէն ուսասանայեր սկսած են երթալ գէպի Մանչուրիա, աչքերնիս լոյս, ուրիմն հեռու չէ այն վեղեցիկ օրը, երբ չինական չայահարուսա բառերու ջուրը մըն ալ պիտի դայ ճոխացնելու ուսասանայ բառարանը: Աս այսպէս ըլլալով հանդերձ, պէտք է տեսնել իրենց սարսափը, երբ ունէ գրուածքի մէջ մեր հին լեզուէն փոխանցուած բառի մը հանդիպին: Կը զարմանամ, որ այդ գրաբարատեացները հանդիստ սրտով կը շարունակեն գործ ածել Նաց, ջուր, գլուխ-ի պէս բառեր, որոնք նոյնպէս գրաբար են... Մեր հին լեզուէն իրենց այս անմիախորհունն է պատճառը, որ յաճախ մէկ երեսի մէջ տասն անգամ միևնոյն բառը կը դործածեն, չը նայելով որ աչոր գեղեցիկ համանիչները ունենանք, և հայ լեզուի ողբին հակառակ բարդութիւններ ու անանցումներ կը շինեն:

Մանկավարժութեան մէջ երբ կը պահանջուի, որ երեխաներու համար գրուած գրքերը կարելի եղածին չափ պարզ ու դիւրահասկանալի ըլլան, ոչ ոք հակառակը կընայ պնդել: Ի՞նչ պիտի ըսէիք սակայն, եթէ վեղեցիկ օր մը բոլոր աշակերտները խօսք մէկ ըրած, պահանջէին որ փոխանակ իրենք իրենց մայրենի լեզուն սորվելու համար նեղութիւն կրելու, ընդհակառակը բոլոր գրքերը այնպիսի լեզուով մը գրուէին, որ անմիջապէս հասկանալի ըլլային իրենց: Անձ ճիշդ այս արտաուայ տրամաբանութեան կը հետին մեզի պարզութիւն քարոզողները, որովհետև պէտք է զիտնալ թէ հայերէն չը սորվող ինտելլիգէնտները՝ հակառակ իրենց մտաւորական սնունդի պաշարին՝ հայերէն լեզուին մէջ երեխաներ են պարզապէս: Իսկ ուսասանայ մտաւորական վարիչները՝ փոխանակ այդ չափահաս երեխաներուն իրենց մայրենի լեզուին հանդէպ ցոյց տուած անտարբերութիւնն ու ծուլութիւնը դատապարտելու, ընդհակառակը կը քաջալերեն և այն թեթև, այլանդակ դադափարը կ'արմատացնեն անոնց մէջ, թէ աշխարհիս վրայ ամէն բան յամառ ու յարատև աշխատութեամբ ձեռք կը բերուի, միայն հայ լեզուն է, որ կարելի է ճաշէն հաքը բազմոցին վրայ երկրն-

ցած կրկնման թերթ կարգալով սորվել ու հայ զրոյ զառնար:

Ու վերէն բղխած այս թիւը ըմբռնումները, ամէն կարգի անտարբերներու կողմէ նոր օժանդակներ գտնելով, հետզհետէ նախապաշարումի հեղեղ մը կը զառնան ու անանցանելի կընեն լեզուի տարբերութեան խրամը:

Ասով չը կարծուի սակայն, թէ կնւզեմ պաշտպան կանգնել Պոլսոյ գրական այն կեղծաւորներուն, որոնք ճիշդ կը թափեն իրենց զգացումի ու գաղափարի պարագը բառերու կոյտով լեցնելու: Թիւրքահայ լեզուին չէ յանցանքը, եթէ այդ լեզուով յաճախ յիմարութիւններ կը գրուին: Ոչ նուազ յիմարութիւններ գրուած են ու կը գրուին ռուսահայ լեզուով ալ, ինչպէս նաև մարդկային բոլոր լեզուներով: Միևնոյն լեզուով կարելի է թէ մեծ յիմարութիւններ և թէ մեծ հրաշակերաններ արտադրել: Ոչ մէկ լուրջ ու անկողմնակալ դատող կրնայ ուրանալ, որ այսօր արևմտեան հայ աշխարհաբարը շատ աւելի կատարերապարծուած գործիք մըն է մարդկային նոր զգացումներն ու մտածումները արտայայտելու, քան արևելեանը:

Աւելի չեմ ուզեր ծանրանալ այս կէտին վրայ: Յօդուածիս ծրագրէն բոլորովին դուրս է լեզւական հին պայքարը վերստին արծարծելու գիտաւորութիւնը: Ես միայն փորձեցի պարզել լեզուի գծուարութեան խախտանիչ դերը մեր մտաւոր հաղորդակցութեան մէջ և ասոր պատճառները վերլուծել:

* * *

Նիւթի ընդարձակութեանը հետ համեմատելով այս համառօտ ատուութեանս եզրակացութիւնը կարծեմ բաւականաչափ պարզ է ընթերցողներուս համար: Հայ ազգին երկու հատուածներուն միջև մտաւոր փոխանակութիւնը զագրած է: Ռուսահայերն են այս ամօթալի երևոյթին պատասխանատուն, քանի որ թիւրքահայերը սկիզբէն իվեր մեծ հետաքրքրութեամբ հետևած են ռուսահայ գրականութեան և եթէ այսօր չեն կրնար այլ ևս պէտք եղածին պէս հետևիլ, քաղաքական տարապայման կաշկանդումներու մէջ պէտք է փնտռել ասոր պատճառը: Հետևաբար այսօր ռուսահայերուն կ'իջնայ չարիքը եթէ ոչ բոլորովին անհետացնելու, դեթ կարելի եղածին չափ չէզոքացնելու միջոցներ խորհիլ:

Ասոր համար անհրաժեշտ է որ նախ ռուսահայ հրապարակագիրները, իրենց իսկ ձեռքով քանդեն թիւրքահայոց և թիւրքահայ գրականութեան նկատմամբ ռուսահայ հասարակութեան մէջ արմատացած բոլոր նախապաշարումները: Երկրորդ՝ ռուսահայ նոր սերունդին քիչ մը աւելի լուրջ ըմբռնում ու վերաբերում թելադրեն հայ լեզուին հանդէպ: Եւ միևնոյն ատեն ան-

միջապէս գործնական միջոցներու գիմն իրենց ընթերցողները թիւրքահայ գրականութեան ծանօթացնելու և միշտ հաղորդ պահելու համար: Այս կարգի միջոցներէն ըստ իս էն նպատակայարմարը և էն մատչելին արտատպումն է: Գրական հատուածներու կարելի եղածին չափ յաճախակի արտատպում թիւրքահայ թերթերէն և հանգէսներէն: Եթէ սովորութիւն ընեն կանոնաորոշապէս աչքէ անցընել այդ թերթերն ու հանգէսները, արտատպելու բան պիտի չը պակսի իրենց: Լոկ սիւնակներ լեցնելու համար հրատարակուած անհամութիւններու քով, պիտի գտնեն յաճախ գրական արժէքաւոր կտորներ, որոնք արտատպումով ուսանայ հասարակութեան մէջ տարածուելով, թիւրքահայ լեզուին հասկցողութիւնը պիտի դիւրացնեն տակաւ և հետաքրքրութիւն պիտի զարթեցնեն դէպի թիւրքահայ գրականութիւնը: Այս առաջարկին գործնականապէս նպաստած ըլլալու համար՝ յօդուածիս հետ «Մուրճ»-ին կը զրկեմ մեր գաւառացի գրողներէն երկու հատուած, որոնք Պոլսոյ Մասիս շաբաթաթերթին մէջ լոյս տեսած են *) Կը ցաւիմ, որ ձեռքի տակ շատ քիչ բան ունենալով՝ ընտրութիւնս սահմանափակուած էր: Սակայն ինչ որ գտուար է անհատներու համար, շատ կը դիւրանայ, երբ հաւաքական ուժերու կողմէ ձեռնարկուի: Պոլսոյ հայ պարբերականներուն մասնաւանդ 15—20 տարուան թիւերուն մէջ կորսուած՝ կրկին տպագրութեան արժանի շատ մը բաներ կան, որոնք նորութիւններ պիտի ըլլան ուսանայ ընթերցողներու համար: Այս կարգի հին գրուածքները, եթէ թերթերու մէջ արտատպել յարմար չը գտուի, կրնան առանձին հատորներով հրատարակուիլ: Պէտք չէ մոռնալ, որ այսօր միայն ուսանայերը կրան թէ իրենց և թէ մեզ թիւրքահայերուս մատչելի ընել թիւրքահայ գրողներու գործերը, որոնցմէ շատերը անկարելի է կրկին տպագրել թիւրքիոյ մէջ: Գրական սրչափ անհրաժեշտ պէտքեր կան, որոնք աշխատող ձեռքերու կը սպասեն: Մեր մէջ անհատական տոկուն ձեռներէցութիւնն իսկ զիս հրաչքներ կրնայ կատարել այս ուղղութեամբ: Ասոր կենդանի ապացոյցն է Լէօն, որուն վերջին ստուար աշխատութիւններէն երկուքը Հայկական տպագրութիւնը և Ստեփան Ոսկանի կենսագրութիւնը մեծ զարկ պիտի տան թիւրքահայ կեանքն ու գրականութիւնը ծանօթացնելու գործին: Ռուսահայ համալսարանականներու ստուար լեզէտնին մէջ քանի մը հետաքրքրուող-

*) Իբրև նմուշ բերուած են Գեղամի «Թղթարացը» և Թլկատենցու «Վերջին տեղը», որոնք տպուած են «Մասիս» 1902 թ. № 14-ում և 1900 թ. № 29-ում:

հեր եթէ գտնուին և քովքովի գալով այս յօդուածիս վրայ քիչ մը գլուխ յօգնեցնեն, վստահ եմ որ շատ բան պիտի կրնան ընել: Սակայն երևակայութեանս թոխքովը արդէն ոլիմպական ժպիտ մը կը նշմարեմ անոնց շրթունքներուն վրայ—«սպլլիասիֆներ են զրանք»:

Բայց վերջապէս վատութիւն է արտաքին պայմանները մատնանիչ ընել ու պնդործ նստիլ: Եթէ մեր ուժէն վեր է փոխել այդ պայմանները, գէթ ջանանք անոնց արդիւցութիւնը կարելի եղածին չափ տկարացնել: Ակնարկ մը մեր պատմութեան վրայ ու պիտի տեսնէք որ այսօրուան մեր ամբողջ ունեցածը ձեռք է բերուած հակառակ այդ աննպաստ պայմաններուն, որոնք գրեթէ միշտ անպակաս են եղած մեր զլխէն...

ԱՌՍԵՋԱՐ

11/24 Դեկտեմբեր 1902

Միւնիխ

* * *

Վառ երկինքը լուս գիշերին
Երկրի կուրծքը համբուրեց.
Աստղաչեքը սիրով լցուան,
Երկրի ծով-սիրան խոր երգեց...

Ո՞ւր կը ճտխրէ հոգիս անհուն,
Ի՞նչ կ'որոնէ, կը աննչայ...
Միայն ես էի ինձ հասկանում,
Եւ ես էլ ինձ չ'հասկացայ...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿՅԱՆ.

ՇՈՒՇՈՒՑ—ԹԱԻՐԻՉ

(Ծանապարհորդական նկատողութիւններ)

I

Առաւօտեան լոյսը դեռ չը բացուած՝ մենք արդէն ճանապարհ ենք ընկնում: Ձիւաների սմբակները սովորականից աւելի բարձր աղմուկ են հանում քաղաքի նեղ, քարած, այդ պահին անապատ փողոցներում: Քաղաքից դուրս ենք գալիս և դառիվայրով իջնում ենք դէպի Շօշու գիւղը:

Ծանապարհին հանդիպում ենք հայ գիւղացիների, որոնք մթերք են տանում քաղաքում վաճառելու:

Ձը նայած աշնանային առաւօտեան ցրտին, այդ գիւղացիները հաղնուած են աֆսպէս, ինչպէս և տարուայ տաք եղանակներին. միայն մի քանիսները փափախի վրայից կապել են կանայցի շալ և դողալով՝ իրանց կենդանիներն են քշում:

Գիշերն արդէն անցնելու վրայ է: Արեւելեան հորիզոնում, Դոնավազի սարի ետևում, ահա երևում է մի թեթև լոյս՝ վերը կանաչ, ցածը վարդագոյն. սրանց ներքև մի ոսկէ ժապաւէն գնալով լայնանում է: Աստղերը, կարծես, այդ լոյսից խուսափելով, կամաց-կամաց չքանում են երկնակամարից: Արշալոյսն աւելի բացուած է և ամբողջովին վարդագոյն դառնում: Եւ ահա մի կարմիր դունդ գողդողալով վեր է բարձրանում, լուսաւորելով նախ լեռների ամենաբարձր գագաթները, սպիտակագլուխ Մուսը, Դալիբարան և Քիրսը շառագունում են, մինչդեռ ձորերի անդունդները դեռ կիսախաւար են:

Արդէն լոյս է: Անցնում ենք աղմկալից փոքրիկ լեռնային դետակը մի հին կամուրջով, որի մօտ կառուցուած է մի գե-

զեյիկ ջրաղայ: Մտնում ենք հայաբնակ Շօշու գիւղը, որը քաղաքից մօտ լինելու պատճառով, բաւական հարուստ է. կան քարաշէն, թիթեղեայ տանիքաւոր շատ տներ և մի քանի խա-նութներ, որոնց թւում և զինեաներ:

Գիւղամիջին երկու տեղ եզ են մորթել վաճառելու. այս կողմերում և՛ է գիւղացին միս է գործածում, այդ արդէն ու-նեորութեան ապացոյց է:

Շօշուցիները յայտնի են իրենց քաջութեամբ: Մի ժամա-նակ կառավարութիւնը գիւղացիներին բաժանել էր 15 արա-դածիգ հրացան, որ սրանք հետամուտ լինեն «զաչազներին» և աւաղակներին:

Գիւղում կայ պետական ուսումնարան, որը փոխարինել է փակուած ծխական դպրոցին:

Այս գիւղի մօտ մեր փոքրիկ քարվանին, որը բաղկացած է ինձնից և երկու թուրք շարվազարից, միանում է մի շուշե-ցի թուրք, որը, ինչպէս յետոյ իմացայ, առևտրական յարաբե-րութիւն ունէր Թաւրիզի հետ: Հասնում ենք Քեօնդալան գե-տին, որի եզերքով երեք ժամուայ ընթացքում գնալուց և գե-տը շատ անգամ անցնելուց յետոյ, մտնում ենք Ղաջար թուր-քաբնակ գիւղը, կէսօրից երկու ժամ անցած: Այս գիւղում պէտք է հանդատանանք, որ հետևեալ օրը նորից ճանապարհ ընկնենք:

Իջնում ենք շարվազարի ծանօթ գիւղացու մօտ: Մեզ հրաւիրում են «զարաղամը». այստեղ տանտիկինը, անխօս, երեսը ծածկած, աչխատում է մեզ նամար յարմարութիւններ ստեղծել. աւելում է «վրթօջաղի» (խարոյկի) շուրջը ճիշտ այն-քան տեղ, որքան կարող է մի մարդ տեղաւորուել, մնացած տեղերը թողնելով կեղտոտ, չաւելած:

Մաքրած տեղը սիրում է մի կապերս և հրաւիրում է ինձ նստել:

Տնեցիները մէկ-մէկ ներս են մտնում, կանայք հեռուից հետաքրքրութեամբ դիտելով, իսկ տղամարդիկ բարև տալուց յետոյ նստում են խարոյկի շուրջը: Կիսամերկ երեխաները չեն համարձակւում մօտենալ. երեխաներից մէկը, մի չորս տարե-կան տղայ, բոլորովին մերկ է, սակայն մի մեծ վալիսիս գըլ-խին հագած: Որքան նկատեցի իմ ճանապարհորդութեան ժա-մանակ, թուրք ծնողները առհասարակ խիստ մեղմութեամբ են վարւում իրենց երեխաների հետ, երբէք չեն ծեծում, նոյն իսկ երես են տալիս: Խարոյկի խեղդող ծուխն արդէն լցուել է զարաղամը և դժուարութեամբ է դուրս դալիս բարձր երդի-կով և միակ ցածլիկ ու նեղլիկ դռնով: Տնեցիները չեն նկատում այդ ծխից. նրանց աչքերն արդէն ընտելացել են նրա այրող աղ-

դեցութեանը: Սակայն զարագամտերում ապրողների աչքերը յա-
ճախ ցաւում են ձմեռուայ ընթացքում:

* *

Հետեւեալ օրը դեռ չը լուսացած ճանապարհում ենք:
Գիւղից ոչ հեռու ձգւում են թթենիների այգիներ, որոնք սա-
կայն պատկանում են Թաղավարդ հայաբնակ գիւղին:

— Ղաջարի աղբիւրը թաղավարդցի հայերն են շինել, — ա-
սում է մեր չարվազարը:

Մտաբերեցի, որ Շուշու չըջակայքի համարեա բոլոր աղ-
բիւրները և կամուրջները հայերի գործեր են:

Մեր կողմերի թուրքերի հասարակական բնազդը դեռ թոյլ է.
չինելու փոխարէն նրանք քանդում են. Շուշու մօտերքի աղ-
բիւրների քարէ «նոսրերը» այժմ բոլորը փշրված են, և այդ թուր-
քերն են արել:

Ճանապարհին պատահում ենք պարսիկների բազմաթիւ
խմբերի, որոնք ամեն տարի գալիս են կովկասում մշակութիւն
անելու:

Անցնում ենք Գիրս լեռնաշղթայից և քիչ ժամանակից
յետոյ մտնում Խորհատ ձորը, որ արդէն Ջիրբայէլի դաւառն է:
Այս ձորը սկսւում է Շուշու դաւառի սահմաններից և 25 վերս-
տաչափ երկարութեամբ ձգւում է մինչև Նրասիւր: Ջիրբայէլ
դաւառի ամենախիտ բնակեցրած տեղն է Խորհատ ձորը, որ
ամբողջ երկարութեամբ պատած է այգիներով:

Գիրս և միւս սարերի զէպի հիւսիս նայող լանջերը ծածկուած
են խոտաբոյսերով և անտառներով, մինչդեռ հարաւային լան-
ջերը բուսականութիւնից զուրկ են: Անշուշտ այդ նրանից է, որ
լեռների արևառ կողմերը խիստ ենթարկուած լինելով արեգակի
կիզիչ ճառագայթներին՝ քիչ խոնաւութիւն և պարունակում,
չորանում են և քամհար լինում:

Ջիրբայէլ դաւառում քիչ անտառներ կան: Ասում են, թէ
մի 40—50 տարի սրանից առաջ բոլոր լեռները պատած էին
պեխի և կաղնի ծառերի կուսակախ անտառներով: Սրանց մնա-
ցորդներն այժմ էլ երևում են մեր անցած Խորհատ ձորի հիւ-
սիսային կողմում, Արեգիւհնաչ կոչուած լանջերի վրայ: Միւս
տեղերի անտառներն արդէն կտրտուած են. տեղ-տեղ միայն
մնացել են թփեր և ծառերի բուներ:

Աղբիւրներից զոյսացած Խորհատի գետակը ոռոգում է քսան
դիւղերի այգիներ, որոնք մեծ մասամբ հայերին են պատկանում:

Այս ձորում հայերը զինի և պատրաստում և պարապում
են շերամապահութեամբ. դաւառից տարեկան արտադրում է
40 հազար պուղ կոկոն (քարամա):

Հայերի թիւը Ջիբրալթէլ գաւառում հասնում է ութ հազարի, բնակւում են բացառապէս սարերում:

Չընայած որ հողի կողմից հայերն աղքատ են և այդ հողն էլ այնքան արգաւանդ չէ, սակայն նրանք թուրքերից աւելի ունեւոր են, որովհետև մշակում են կուլտուրական բոյսեր:

Թուրքերի թիւը այս գաւառում աւելի մեծ է, հասնում է 40 հազարի, որոնցից $\frac{2}{3}$ -ը թարաքեամաններ են: Սակայն Մեծ ու Փոքր Բահմանլուներ և Մարալիան զիւղերի բնակիչները նստակէաց թուրքեր են:

Թուրքերը գլխաւորապէս բնակւում են տափարակ տեղերում, մասամբ սարահարթերի վրայ:

Թարաքեամանները ձմեռն սնց են կացնում Երասխ և Քեօնգալան գետերի հովիտներում: Ամառը սրանք բարձրանում են Շուշու, Զանգեզուրի և Շարուր-Դարալաղեաղի գաւառների սարերը:

Վերջին ժամանակներս թարաքեամանները սկսել են իրանք էլ երկրագործութեամբ պարապել, վարում են ցորեն և գարի: Նրանց մի մասը տանն է մնում մինչև մայիսի վերջերքը, որ կարողանայ իրենց արտերը հնձել, արտերը հաւաքելուց և դէզեր սալուց յետոյ, գնում են սարերը և այնտեղ մնում են մինչև օգոստոս ամիսը: Օգոստոսին, երբ իջնում են սարերից, սկսում են ցորենը կալսել: Սակայն կան և այնպիսիները, որոնք իրենց սալրանքը և ընտանիքը «եայլաղ» հասցնելուց յետոյ վերադառնում են իրենց արտերը հաւաքելու և կալսելու:

Ժամը 2-ին հասնում ենք Ջիբրալթէլ քաղաքը: Իջնում ենք չարվաղարի ծանօթ թուրքի մօտ: Սակայն մեզ այստեղ լաւ չը հիւրասիրեցին, ինչպէս Դաջար գիւղում, որովհետև տեղացիները սիւննի աղանդին են պատկանում, մինչդեռ իմ ուղեկիցները շիա են:

Ջիբրալթէլ փոքրիկ քաղաքը հիմնուած է բլուրի վրայ և նայում է Երասխ գետին, որի հեռաւորութիւնը մօտ ութ վերստ է:

Հայերը, թուրքերը և ուսաները խառն են ապրում:

Կան դատարան, հեռագրատուն, ուսումնարան և մաքսատուն, ուր առնում են Պարսկաստանից բերած ապրանքների մաքսը: Քաղաքի մէջտեղը բղխում է մի մեծ ակնափոր աղբիւր (Քեահրիզ):

* *

Երբորդ օրը գուրս գալով քաղաքից՝ բլուրների միջով իջնում ենք Երասխի հովիտը, որի լայնութիւնն այստեղ երկուսից մինչև ութ վերստի է հասնում և որը Մուղանի տափարակի շարունակութիւնն է: Ջիբրալթէլի տափարակը մինչև Հա-

քարու գետը կոչւում է Արազար: Ամառ ժամանակը, երբ թարաքեամաններն իրենց հօտերով քաչւում են սարերը, Արազարն անապատի է նմանում: Ամբողջ տարածութեան վրայ բացի «եալան» բոյսից (ПОЛЫНЬ) և Երասխի ափերում բուսած կղեղնից ու քալուշից (СОСОНА) ոչինչ չէ կրեում: Տեղ-տեղ սկին են տալիս «ղլաղները» ազքատիկ այգիները և բանջարանոցները:

«Ղլաղները» չէն են լինում միմիայն կօթ ամառայ ընթացքում, այսինքն սեպտեմբեր ամսից մինչև ապրիլի սկիզբները, երբ գետինը խոտով ծածկուած է լինում: Սակայն փետրուար և մարտ ամիսների ընթացքում խոտը վերջանում է և խաչնարածները դժուարութիւն են քաչում. այդ ժամանակ խոտի փոխարէն անասուններին կղեգնի տերևներ են տալիս ուտելու:

Գարնան Երասխի ջուրն ափերից դուրս գալով հեղեղում է չրջակայքը երբեմն կրկու վերատաշալի լայնութեամբ, սակայն ոչ մի վլաս չը պատճառելով մարդկանց, որովհետև այս տափարակի միակ բնակիչները թարաքեամաններն արդէն սարերումն են լինում: Յունիսի վերջերքին, երբ ջուրը նստում է, ափերին մնում են ջրի բերած բուսական և կենդանական մնացորդներ, որոնք փակելով ամառուայ ընթացքում՝ տենդի դարգայման համար բարեյաջող միջնավայր են դառնում:

—Նախօրօք կարելի է լինում գուշակել, թէ գարնան Արազի ջուրը ափերի վրայ որքան տեղ կը բռնի, —բացատրում է մեզ մի հայ դիւղացի, որը մեզ ընկերակցել էր Զիբրայէլից և գնում էր Երասխի մօտ քարտաշութիւն անելու:—Մորեխը, որ այնքան վլասներ է մեզ պատճառում, նա է իմաց տուողը: Նա երբէք ձու չէ ածում այն տեղերում, որոնք յետոյ ջրով պէտք է ծածկուեն. եթէ ջուրը սակաւ է լինում, մորեխն իր ձուաններն ածում է գետից մօտ, հակառակ դէպքում, երբ գետը պէտք է հեղեղէ երկար տարածութիւն, մորեխը վաղօրօք հեռանում է Երասխից և ձու դնում աւելի հեռու տեղերի հողի մէջ:

—Այսպիսի հանգամանքներում կենդանիների բնագոյն աւելի բարձր է, քան թէ մարդկանցը: Մեր անտառների մլըծեռնը (սկիւռը) ճշտութեամբ գուշակում է կղանակը, —չարունակում է գիւղացին.—սկիւռը վատ կղանակից մի քանի օր առաջ ծառերի վրայ մի ճիւղից միւս ճիւղն արադութեամբ ցատկոտելով՝ պաշար է հաւաքում, որ վատ կղանակին իր բոյնից գուրս չը գայ: Այդ փոքրիկ կենդանին ձմեռուայ իր պաշարը հաւաքում է աշնանը, և այդ պաշարի քանակութիւնից կարելի է լինում գուշակել, արդեօք ձմեռն երկար պիտի լինի, թէ կարճ:

—Ահա Արազն երևում է, յանկարձ բացականչեցին բոլորը միաձայն:

Սարերի ստորոտում գալարուում է սլաոմական Երասխը, արեգակի ճառագայթներից տեղ-տեղ սպաղալով սրբած թրի սկես, տեղ-տեղ սևին տալով, անտառապատ լանջերը քերելիս:

Ա՛հ, Երասխ... Առաջին անդամն եմ քեզ տեսնում... Երբէք ոչ մի դեռ, ոչ մի լեռ, ոչ մի քաղաք այնպիսի ծանր յիշողութիւններ չէ յարուցել իմ մէջ, որքան դու—Բնութիւնը, այդ չքնազ յաւերժահարսը, մեզ համար աւելի տենչալի, աւելի խորհրդաւոր է գառնում, երբ նրա հետ կապուած են լինում անցած-գնացած օրերի յիշատակներ, յիշատակներ, որոնք որքան աւելի խոր անցեալի մնացորդներ են լինում, այնքան առուել են զրգուում մեր հետաքրքրութիւնը: Այդ փամփանակ մեր տեսողական զգացողութեան վրայ աւելանում է մի տեսակ միստիկական հրապոյր:

Մտածողութիւններից ինձ դուրս է բերում թուրք չարժագարի երգը.

«Արսղ, Արսղ,
Խան—Արազ,
Սուլթան—Արազ,
Խան—Արազ.

Սիրականս ջրովդ անցնելիս միշտ խնայիր նրան, արնոտ Արազ:»

Նկատել էք, որ թէ հայերը և թէ թուրքերը Երասխի մասին շատ են երգում, մինչդեռ Քուռը երբէք չեն յիշում: Երասխի մասին, որքան ինձ յայտնի է, հայերէն քսանից աւելի երգեր կան՝ ժողովրդի հիւսած կամ բանաստեղծների յօրինած:

Երեւելի բանաստեղծ Հաֆիզը նոյնպէս երգել է այս սիրուած գետը:

Պարսից հողը մտնելու համար սկսեք է անցնել Խուզափիրինի նոր կամուրջը: Այս կամուրջն ունի 15 աշք, որոնց ոտերը շինուած են մանր քարերից և կանգնած են վիթխարի «քարուածքի» վրայ *). Իսկ կամարները շինուած են թրձած աղիւսից:

Նոր կամուրջից ոչ այնքան հեռու կառուցուած է միւսը խիստ հնաշէն և համակ սրբատաշ մեծ քառակուսի քարերից շինուած. սա ունի 9 աշք, որոնց չորս կամարը գետ կանգուն են, ոտերը հաստատուած են նոյնպէս բնական վե՛մ քարերի վրայ:

*) Դարաբազում «քարուածք» են տուում մի շարք քարեր, որոնք գետի լայնութեամբ միմեանցից մօտիկ գետեղուած լինելով բնութիւնից, թոյլ են տալիս առանց թրջուելու անցնել գետակը:

Առաջներն այս ճանապարհը ծառայում էր սագմական և վաճառականական նպատակների, իսկ այժմ բարձի թողի արուած է:

—Աղա-Մամադ-խանը 1795 թ. Խուզախիքինի կամուրջով անցաւ Երասխ գետից. նա անթիւ սարքազներով գալիս է Շուշին կործանելու և Ղարաբաղը կողոպտելու:

—Այս արիւնարբու խանից չորս դար առաջ, «1403 թւականին Լանդթամիրի բանակը ձմերում է Ղարաբաղում եղեզնաչէն խրճիթների մէջ: Գարնան սկզբներին Թամիրն անցնում է Երասխը յատուկ կառուցուած կամուրջով: Նախ քան Ղարաբաղը թողնելը, թուրքերը ոչնչացնում են բոլոր խաղողի այգիները, իսկ պողատու ծառերի կեղիը պոկում են...» *)

«Pontem indignatus Araxes».

Այսպէս է գրել յայտնի հռոմայեցի բանաստեղծը մեր Երասխի մասին: Դրանով («կամուրջ չը յարգող Երասխ») Վերդիլիսոսը ցանկացել է գետի սրբնթացութեան մասին պաղափար տալ, թէ չէ Երասխի վրայ շատ հինուց կամուրջ է եղել: Երասխի կամուրջների մասին յիշում են մեր պատմաբանները՝

—Ազաթանգեղոս, Փաւստոս Բիւզանդացի և ուրիշները:

Մի տեղ կարդացել եմ, որ 2500 տարի սրանից առաջ Զրադաշտը մտասկայ սարերից իջնելով մտնում է Պարտաւ քաղաքը և պարսկաստան դնալու համար անցնում է Երասխ գետից առանց թրջելու իր ոտները...

Նոր կամուրջի մօտ է գտնուում սուսայ մաքսատունը: Այստեղ նայում են անցագրերին, բայց Պարսկաստանից եկած ապրանքներից մաքս չեն վերցնում, այլ գինուորների ուղեկցութեամբ ապրանքը ուղարկում են Զիրբայէլ, երբ մեծ քանակութեամբ է լինում. իսկ քիչ ապրանք սենեցողներին յետ են դարձնում պարսից ափը, տաբէկելով թէ քիչ ապրանքի համար չարժէ մի քանի գինուորների նեղութիւն պատճառել:

Պատահել է, որ նոր շորեր հալած մարդուն չեն թողել, որ մանի սուսայ հողը:

Այսպիսով մաքսատան հետու լինելը յաճախ անյարմարութիւններ է ստեղծում: Յանկալի է, որ մաքսատունը տեղափոխէին կամուրջի մօտ:

Կամուրջի երկու ծայրին երկու դռներ կան շինուած: Ռուս պահստպանն, անցագրերը նայելուց յետոյ, բայ է անում դուռը և մեղ թողնում մանկու կամուրջի վրայ: Մտանում ենք միւս դռան և բաղխում... Մարդ չը կայ մօտը, որ բայ անի:

*) Langles. «Tamerlan.»

Մեր չարվագարը կանչում է, որ դան բանան գուռը, ոչ հեռու գտնուող պարսից մաքսատնից ինչ-որ բան են պատասխանում, չարվագարը ձեռքը մեկնում է դան կողքից և «չկիլը» բաց անում:

Պարսից մաքսատան մօտ հաւաքուած են բազմաթիւ բեռնակիրներ և օրերով այստեղ մնում են, չը կամենալով կատարել մաքսատան կապալառուի ապօրինի պահանջները:

Մաքսատան անպարկեշտ հետաքրքրութիւնից ազատուելու նպատակով, վճարում եմ մի երկու բուրբի և անարգել կերպով շարունակում եմ ճանապարհս արդէն պարսից հողի վրայ, Ղարաղաղ գաւառում:

II

Ղարաղաղ գաւառում առաջին պատահած գիւղը Սուջէյլու թուրքաբնակ մեծ աւանն է: Հիւրընկալ գիւղացին մեզ պատում է աւանդական փլաւով, միենոյն ժամանակ ներողութիւն խնդրելով, որ փլաւը «չոր» է, առանց հաւի կամ ճախ:

—Մեր գիւղում, գանգատուեց գիւղացին, մի հատիկ ձու, մի հաւ չէք գտնի այժմ. ամբողջ գիւղում մի աքաղաղ չը կայ, որ կէսգիշերին «ծուղրուղու» կանչի... Բոլորը մեր գիւղի տիրոջ-խանի փորն է մտել: Ում մօտ մի հատ, մի քանի հատ ձու գտնուեց, նա իսկոյն մարդ է ուղարկում և պահանջում, մենք էլ ոչինչ չենք պահում...

Ճաշին մեզ մասնակցում է միայն տանտէրը, ընտանիքի միւս անդամները մօտ կանդնած են և նայում են ուղղակի մեր բերաններին: Տան տէրը մի բուռը փլաւ իր ամանում թողեց, ամանը հրեց դէպի կնոջ կողմը, ասելով, թէ տարէք կերէք: Սովորաբար թուրք կինը կերակրում է իւր ամուսնուց յետոյ, սրտ թողած մնացորդից, մի կերպ եօլա է դնում, յաճախ կիսաքաղցած մնալով:

Խուզափրիչներ կամուրջից ճանապարհն ընկած է Երասխի ափով և զիմում է դէպի արեւմուտք, մերթ հեռանալով, մերթ բոլորովին մօտիկանալով գետին: Երկու ժամից յետոյ հասնում ենք ուղղաձիգ ապառաժների ստորոտը, ուր Երասխն իր պղզտոր ալիքներով լիզում է ժայռերի սև կուրծքը:

Ամենադժուար տեղը, ուր առաջները գետի յորպացած ժամանակ ճանապարհն անանդանելի էր դառնում, այժմ Երասխի կողմից բարձր պատ է քաշած բաւական երկար տարածութեամբ և ճանապարհը գետի մակերեսոյթից բարձրացրած: Մի անդ, ճանապարհ տանելու համար, ապառաժը ծալուած է:

Այս պատը շինել է տուել մի թուրք կին, Ահմադ-խանի կինը: Ատրպատականում շատ տեղ եմ ճանապարհորդել, սակայն միմիայն այստեղ տեսայ, որ ճանապարհի վրայ մարդու ձեռք է աշխատել...

Այս ճանապարհին կարելի է տեսնել հիւսիսային երկիրնե-րին յատուկ աղքատ բուսականութիւնը բարձր սարերի վրայ, իսկ ներքե զաշտի վրայ, բարեխառն կլիմայի բնութիւնը դար-մացնում է իր ճոխութեամբ: Դէպի ձախ, ապառաժոտ սարե-րի վրայ բուսնում են կարճահասակ ցրտնին (МОЖЖЕВЕЛЬНИКЪ) և գենին (ТИСЪ), քերձերի ձերպերից կախ է ընկած «ծաիճին-ջին», իսկ ներքեում բաւիղը և վայրի խաղողը գրկախառնուած են ծառերի հետ, ծառեր որոնց բազմատեսակութիւնը զարմաց-նում է մարդու: Այստեղ Երասխի ավին բուսնում են կաղնի, պխի (грабъ), նոնենի, թղնենի, փոշնի (celtis caucasica), թեղի (դարաղաջ, Ulmus campestris), ալաջահի (viburnum opu- lus), քլլվերաի, կարդնենի և բազմաթիւ թփեր, որոնց չը կա-րողացայ ճանաչել:

Նեղ կածանը ոլոր-մոլոր ընկած է քարերի անագին բե-կորների արանքով:

Յանկարծ հեռուից լսում ենք մի սիրուն երգ, որ հաղիւ-մեր ականջին է հասնում: Գնալով աւելի լսելի է դառնում եր-գը՝ տխուր և զանգատուող կանայի ձայն է, և այսպիսի մի գեղեցիկ ու վայրի բնութեան մէջ մեզ այնպէս է կաշկանդել, որ լուռ կանգնած լսում ենք: Ահա երգող կինն երևայ ապա-ռաժի ետևից, բամբակով լի քսակը շալակին, գլուխը կորա-ցած շարունակում էր երգել: Սրա ետևից երևայ մի պատաւ-կին, նոյնպէս բամբակ շալակած. վերջինս մեզ նկատեց և առաջ վազելով, սաստեց երիտասարդ կնոջը, որ չ'երգէ:

Երգը դադարեց: Երգչուհին մեր մօտով անցնելիս՝ մի վայր-կեան գլուխը բարձրացրեց և դէպի մեր կողմը նայեց... Մի վայրենի գեղեցիկութիւն էր, որ միմիայն լեռներում են պատա-հում. ծիծեռնակի թևի նման սեւթոյր մազերը պարփակած են շառագունած ձուածն սիրուն, թուխ երեսը, սևորակ խոշոր աչ-քերը թախիժ են արտայայտում, իսկ կիտարայ կարմիր չըր-թունքների միջից պսպղում են սպիտակ ատամները, սսես, եր-կու շարք մարգագեալներ:

Իմ ուղեկից չուչեցի թուրքը մի կեղտոտ խօսք չպրտեց նրա հասցէին. կինը ոչինչ չը պատասխանեց, աւելի կորացրեց գլուխը և առաջ գնաց: Վրդովմունքս չը կարողացայ զսպել, սկսեցի պախարակել թուրքին, տմարդի անուանելով նրան, ով վիրաւորում է անպաշտպան կնոջը:

—Անտէր ոչխարին դայլը կը տանի, իսկ մենակ կնոջ ամեն մարդ կարող է «սաթ աչմիչ» լինել, — պատասխանեց թուրքը:

Կուռ շարունակում ենք ճանապարհը և վեց ժամ Երասխի ավտով ճանապարհ կարելուց յետոյ, հասնում ենք Աչըղլու գիւղը, ուր պէտք է մի քիչ հանգստանանք:

Մտանք մի գիւղացու բակ, ուր կանայք նստուած աշխատում էին: Մեծ եղաւ դարմանքս, երէ տեսայ, որ այդ կանայք տղամարդկանց տեսնելով՝ երեսները չը ծածկեցին և չը փախան, այլ շարունակում էին աշխատել և չարվազարի բարին բարեւոյով պատասխանեցին: Բանից երեսաց, որ սրանք բարխականներ են, որոնք, ինչպէս յայտնի է, տարբերում են մահմեդականներէց:

Կանանցից մի քանիսը նոր քաղած բամբակ էին ընտրում, միւսները ցորեն էին շուարում, աղջիկներն էլ կար էին անում:

Այստեղ էլ զեղջիւռնին կարում է այնպէս, ինչպէս աշխարհիս բոլոր զեղջիւռնիները, այսինքն կարը գնում է ծնկան, թիւր մարմնից բաւական հեռացնում է և սկսում է կարել՝ ասեղի սուր ծայրը դէպի իրան դարձրած:

Բարինների շատ գիւղեր կան Երասխի ափին. բացի Աչըղլը գիւղից կան և՛ հետեւեւները. Կարագեօզ, Սիւթա, Մաղըղտը, Գիւլմահմադը, Դաչագիրան, Շըխհիւսէյինլը, Ուլագարա և Փալըթալ:

Մեզ հիւրասիրող գիւղացին, մի ութսուն տարեկան ծերունի, նոյնպէս բարեխական է: Մերունի Մուստարը 1848 թուականին գնացել է Չըխրիզ ամրոցը, ուր բանտարկուած էր այդ ժամանակ ինքը մեծ Բաբը, սրան տեսնելու և օրհնութիւնն առնելու:

«Յետոյ Թէհրանումն էի և տեսայ, թէ ինչպէս նահատակեցին այդ քաղաքի բարինների առաջնորդ Սուլէյման-խանին, — շարունակեց ծերունին: Այդ օրը բազարը մարդկանցով լիքն էր, ասեղ պցելու տեղ չը կար: Յանկարծ լսեցինք երաժշտական ձայներ... բերում էին Սուլէյման-խանին, պարանոցը թոկ պցած, մերկ կուրծքը ծակոտած էր սուրիններով և ծակերի մէջ վառած մոմեր կոխած... Նրա շրթունքներից սչ մի գանդատ, սչ մի անէծք չէր լսում, ընդհակառակը, երբ մոմերից մինը հանդչում էր, նա անցորդներից խնդրում էր, որ նորից վառեն: Սուրբ նահատակը մի անգամ, այն էլ վերջին անգամ բղաւեց, երբ նրան միջից կէս արեցին... Թո՛ղ կուրանան իմ աչքերը, — երկար լուսթիւնից յետոյ շարունակեց արտասուող ծերունին, — ևս տեսել եմ և կօռէթ-ուլ-Այն (Աչրի լոյս) գեղեցկուհուն,

որին իր երկու հարիւր համախոհների հետ ոչնչացրեց կառավարութիւնը:»

* *

Ծանր սպառնութեան տակ՝ թողեցինք մեր բարիակամի տունը:

Գլուզամիջով անցնելիս, աչքի էր ընկնում սիրուն և ուժեղ ձիերի առատութիւնն այդ գիւղում: Մեր չարվազարը բացատրեց, որ այդպիսի լաւ ձիեր պահում են Երասխի մօտ ապրող գիւղացիները յատուկ նրա համար, որ մաքսանկնայ (ղաչաղ) ապրանք գետով անցկացնեն: Այս պարագամունքը գիւղացիների համար ապրուստի մի աղբիւր է: Սովորաբար ապրանքը բերում են Թաւրիզից և Երասխով անց են կացնում ձիերի վրայ, այդպիսի ձիերը սովոր են արաղընթաց ջրում լող տալու: Ապրանքը հաւաքում են Դումլը թուրքաբնակ գիւղում, որ գտնուում է սուսայ հողի վրայ, ոչ հեռու Խուզափիբինի կամուրջից: Երասխից անցկացնելու համար՝ ձիատէրերը վերցնում են 5 բուրլի ամեն մի հակ չիթեղէնից, իսկ թէյի հակի համար վերցնում են 3 բուրլի, որովհետև վերջինս աւելի թեթեւ է լինում:

Սըրլը գիւղից ճանապարհը ծուռում է ուղիղ գէպի հարաւ և մտնում է Հասանովի ձորը: Գետը մեր աչքից անհետանում է:

Հազիւ էինք հասել ձորի բերանը, երբ յանկարծ մեր առաջ գուրս եկան երեք սպառազինուած թուրքեր:

— Կանոնեցէք, տեսնեմ որտեղից էք գալիս և ուր էք գնում, — խորիսա ձայնով հարցնում է նրանցից մէկը:

— Ռուսաց կոնսուլի մարզին տանում ենք Թաւրիզ, գլխիդ գուրբան, — վախեցած պատասխանում է սրամիտ չարվազարը:

Կոնսուլի անունը բաւական էր, որ աւազակները մեզ հանդիստ թողնէին: Ճանապարհին երբ նեղ տեղն էինք ընկնում, թուրք ուղղեկիցներս ինձ կոնսուլի մօտ ծառայող էին յայտարարում և այդպիսով ազատում: Առհասարակ սուսները մեծ յարգանք են վայելում Ատրպատականում, տեղացիները միշտ սիրածութեամբ են վերաբերում գէպի Ռուսաստանի սցօր:

— Հաքիմ-Բաշի, մի վախիր, ես այստեղ եմ, — ետեկից կանչում է չուչեցի թուրքը, երբ աւազակները հազիւ էին անհետացել:

Յետ դարձայ, նայեցի թուրքին և ծիծաղս չը կարողացայ պահել. քաջ թուրքի երեսը սիրտունել էր, կաւիճի պէս սպիտակել: Վախից այնպէս էր գողում, որ հազիւ կարողանում էր նստած մնալ ջորու վրայ:

— Այդ ինչ ես գտուել, հարցրի ես:

— Գլխիդ գուրբան, քիչ էր մնացել անից մեռնէի, սիր մօտս մի քիչ փող աւնեմ, եթէ գու չը լինէիր, մեզ անպատ-

ճառ կը թալանէին: Այդ անպիտանները կօնսուլից շատ են վախենում:

—Առաջները, շարունակեց թուրքը, կարելի էր լինում պատահած աւազակներին զիմադրել. իսկ ուռու-թրքական պատերազմից յետոյ, երբ արագածիզ հրացանները լոյս աշխարհ ընկան մեր երկրում, աւազակները և զաշափները աւելի ուժեղ դարձան, որովհետեւ այդ ժամանակից ի վեր սրանք և ժողովուրդը միատեսակ չեն զինուած: Մինչդեռ խաղաղ ժողովրդին արգելուած է պատերազմական հրացաններ պահել, աւազակները ձեռք են բերում ամենանոր սիստէմի զէնքեր:

—Ի՞նչ կարող ենք անել մեր բեւօլվերներով հէնց մեր սեսած աւազակներին, ոչինչ,—տաքացած շարունակում է թուրքը. եթէ մենք էլ ունենայինք բերդաններ, այդ անպիտանները իսկի չէին համարձակուի մեր աչքին երևալ: Իսկ այժմ. այժմ մի քանի քոստա լակոսներ կարողանում են հարիւրաւոր մարդիկ թալանել:

Այսպէս էր լուծում փորձուած թուրքն այն բարդ խնդիրը, որ կովկասում մեծ աղմուկ է հանել վերջին ժամանակները: Եւ իրաւ, աւազակութեան զարգանալուն քիչ չէ նպաստել զինավառութեան անհաւասարութիւնը աւազակների և ժողովրդի միջև մեր երկրում:

—Աղն, մեր թաղիբի դարդն այն է, որ գնաց Թաւրիզից իր «սիգա»-ին Շուշի բերի,—խօսքը կարեց շարվազարը:

Բանից երեսայ, որ շուշեցի թուրքը երկու կին ունէր, մէկը օրինական, որ ապրում է Շուշում, իսկ միւսը ժամանակաւոր (սիգա) Թաւրիզում: Այժմ գնում է Թաւրիզ համոզեցնելու սիգա կնոջը, որ իր հետ Շուշի դայ, որովհետեւ պայմանագրի ժամանակամիջոցը շուտով պիտք է լրանայ:

Թուրքի խնդրեցի, որ այդ պայմանագիրը ցոյց տայ ինձ: Խանդոտ արեւելցին դժուարութեամբ ցոյց տուեց ժամանակաւոր ամուսնութեան պայմանաթուղթը (Սիգա-Նօմէ), որ դրուած էր պարսկերէն. թարգմանութիւնը մօտաւորապէս հետեւեալն է.

«Տալիս եմ իմ կիրքը ծառայեցնելու Հալիպա Ահմադ-զզի կրքերին երկու տարուայ ժամանակով, տարեկան 120 բուրլու վարձատրութեամբ:»

Ներքև աւելացրուած էր կնոջ կողմից.

«Վերոյիշեալ պայմանին համաձայն եմ:»

Ամենից ներքև երեք կնիք կային, երկուսն ամուսիններինը, իսկ երրորդը մօլլինը:

ԲԺ. Ք. ՕՀԱՆԵԱՆ

(Վերջը միւս համարում)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՍՈՐԻՆԵՐԸ

Պարսկաստանի ասորիները զաղթել են իրանց հայրենիքից — Ասորեստանից — Պարսկաստան IV և V դարերում: Այդ ժամանակներում կրօնական երկպառակութիւնը և վէճերը մի կողմից, օտար ազգերի հալածանքները միւս կողմից առաջացրել էին Ասորեստանում մի խառնաշփոթ և անորոշ դրութիւն:

Կրօնական վէճը Քրիստոսի մարգեղութեան և աստուածութեան մասին էր, և այդ վէճի վերաբերմամբ ասորական ամբողջ ժողովուրդը բաժանուած էր երկու կուսակցութեան: Մի մասը պնդում և հաստատում էր, թէ Քրիստոսը չարչարուել է և՛ սրպէս Աստուած, և՛ սրպէս մարդ-արարած, և գրանք իրանց զլիսաւորի անունով կոչւում էին Նազուրէններ, իսկ միւս մասը ընդունում էր, որ Քրիստոսը սրպէս Աստուած չէ չարչարուել, այլ սրպէս սոսկ մարդ, և գրանք էլ իրանց առաջնորդի անունով կոչւում էին Նփրեմեաններ, կամ ինչպէս սովորաբար անունանում ենք՝ նեստորականներ:

Թէպէտ կայսեր յարուցած հալածանքներից ասորիների մեծապէս մասը թողնում է իր երկիրը և շարժւում այս ու այն կողմ, մի մասը, զլիսաւորապէս Նփրեմեանները, գնում են գէպի հիւսիս և հաստատւում են մեծ մասով Ջուլամերկ գաւառը, ըրթնալուծ լեռները և բնում անառիկ վայրերը, իսկ միւս մասը Պարսից ծոցի ափերով գնում և հաստատւում է Հնդկաստանում: Արանք Նազուրէններն են:

Ժամանակի ընթացքում Ջուլամերկ գաւառից, Բաղլաաից և Մօսուլից ասորիների մի մասը անցնում է Պարսկաստանի սահմանը և բնում է Ուրմից լճի արևմտեան ափերը:

Պարսկաստան մտած ասորիները երկար ժամանակ մի սրջ տեղ չեն հաստատւում, նրանք միշտ խումբ-խումբ շարժւում

են մի գաւառից միւսը, Տաճկաստանից Պարսկաստան, Պարսկաստանից Տաճկաստան, երկար նրանք թափառական և աստանգական կեանք են վարում: Պարսկաստանի ասորիները ժամանակի ընթացքում կամաց-կամաց շարժւում են դէպի Ուրմի լճի հիւսիս-արեւմտեան և հարաւ-արեւմտեան ափերը, բնոյճանրապէս դաժ հաշթու թիւնը, գաշտային տեղերը, իսկ մի փոքրիկ մասը դիմում է արեւմուտք, բարձրանում լեռները, բռնում Քիւրդրասանը, զլխաւորապէս Մարգաւար և Թարգաւար գաւառակները:

Այժմ ասորիներ կան Ուրմի *), Սալմաստ գաւառներում, Սուլղուզ, Սոււչ-Բուլազ, Խօյ և Մարգաւար ու Թարգաւար գաւառներում:

Թէ որքան է եղել սկզբում Պարսկաստան զաղթած ասորիներ թիւը յայտնի չէ, ճշգրիտ տեղեկութիւններ չը կան, այժմ նրանց թիւը հաշւում են 30—35000: Բայց անշուշտ պէտք է բնորոշել, որ այս թւից առաջներում շատ է եղել, որովհետեւ դարերի ընթացքում շատերը կուլ են դնացել, ձուրել են տեղական տարրի հետ, ինչպէս նկատելի է նոյն այդ երեսներ և՛ այժմ: Բացի այդ, բաւական թուով զաղթել և բնակութիւն են հաստատել Կովկասի դանազան կողմերում, օր. Երեւանի և Էջմիածնի շրջակայ գիւղերում:

Այժմ ասորի ժողովուրդը բաժանուած է Սարպատականում մօտաւորապէս այսպէս.—

Ուրմի գաւառ	5—6000 ա.,	տունը հաշ. 5 անց. 25—30000
Քիւրդասան	2—300 »	» » » 1—1500
Սալմաստ	6—800 »	» » » 3—4000
Սուլղուզ, Սոււչ-Բուլազ	80—120 »	» » » 4—600
Խօյ, Սինա և այլն	50—60 »	» » » 2—300

Ուրիշ կերպ էլ չէ կարող լինել, քանի որ չը կայ ստատիստիկա: Մանաւանդ անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ այն հանդամները, որ ասորիները զրուած են մի շարք գիւղերում, խառնուել են բնիկ ժողովրդի հետ, օրինակել նրանց նիստ ու կացը, փոխուել նոյն իսկ արտաքինով, հաա-հաա բնիկ այս և այն խաւ անկիւնները. այդպիսի պարագաների մէջ անհնարին է վիճակագրութիւն կողմել, թէկուզ պատես սնձամբ, սցցելես իւրաքանչիւր գիւղը:

* * *

Ինչպէս տեսանք բնակութեան զիրքը ասորիներին բա-

*) Ես օգտուել եմ դանագան գրաւոր աղբիւրներից գտտ նաև գործին մօտիկ մարդկանցից:

ժանկ է երկու մասի—գաշտային և լեռնային ժողովուրդ։ Առաջինները կազմում են մեծագույն մասը, իսկ երկրորդները նուազ մասը։

Գաշտայինները բնուստով թեամբ առհասարակ փչացած են։ Նրանք առանձին մշտական զբաղմունք չեն լինի և չունեն։ մասնաւոր կերպով պարագում են մի քանի արհեստներով, ինչպէս հիւանդութիւն, զերծակութիւն, սրմնադիրներ են և այլն։

Գարաւոր սարկութիւնը, նրանց աստանդական կեանքը, տեղական գիւղատէրերի կեղերումները և բնիկ ժողովրդի բարբարոսութիւնները ստեղծել են մի ժողովուրդ, որ ստակալի պատկեր է ներկայացնում։ Իսկ եթէ այդ լուրջի վրայ աւելացնենք և միասօծարների վատ ազդեցութիւնը, պատկերը կատարեալ կը լինի։ Նա, գաշտայի ստորին, միանգամայն ընկած է, նրա համար սրբութիւն, բարոյականութիւն, բնասնական մարքութիւն գոյութիւն չունի։ Նա, ընտելանալով քիչ չաա լաւ աղբուստի և այդ չը կարողանալով ձեռք բերել, գիտում է ամենաստոր միջոցների, խաշագոյութեամբ է զբաղում։ Նրանք պանդխտում են Ռուսաստանի հետու կողմերը, նոյնպէս և Կովկաս, մի գումար ձեռք բերելով՝ նորից վերագտնում են Պարսկաստան՝ բնուստուած հաղարաւոր վարակիչ հիւանդութիւններով և աւելի այլանպատակ ստանց այդ էլ փչացած ստորիններին։

Ասորի աղամարդը մեծ մասով կեանքը անց է կացնում պանդխտութեան մէջ. հէնց այս հանդամանքին գլխաւորապէս պէտք վերագրել և անշուշտ զբանով պէտք է բացատրել այն երեւոյթը, որ ստորի կանանց մէջ անբարոյականութիւնը տարածուած է սարսափելի չափերով։ Տարի չէ անցնում, որ 20—30 ստորի կին չ'ամուսնանայ թուրքերի հետ։

Չունենալով ոչ մի ինքնուրոյնութիւն՝ գաշտայի ստորիները կորչում են, կուլ են գնում տեղական ազգաբնակչութեան մէջ և բաժան-բաժան շինում այս և այն դաւանութեան։ Ընչա է, ստորիները ունեցել են ստանդներում եկեղեցիներ, զեռ միասօնարների մուտքից առաջ, եղել են թուով շատ ստորի կոյսկուպաներ և քահանաներ, բայց միանգամայն անմխիթար վիճակի մէջ են եղել, եկեղեցիները զուրկ լինելով արդիւնքից, հողեւոր պետերը աննախանձելի զրութեան մէջ լինելով, հնարաւորութիւն չեն ունեցել բաւարարութիւն առ ժողովրդի հոգեւոր պէտքերին և մասաւոր պահանջներին։ Տղիտութիւնը սարսափելի սասիճանով էր տիրում։ Կարգաւորել, խմայազին կարելի էր մատով ցոյց առլ. չը կային գպրոյներ, տրիչ կրթական և հասարակական հիմնարկութիւններ։

Նրանց անտեսական կեանքը միանգամայն քայքայուած էր։

չը կար նրանց ոտի տակ հաստատ հող, չունէին մշտական դրադմունք, չը կար մշտական արգիւնքի աղբիւր իր պէտքերը հոգալու համար, իսկ պարտաւոր էր վճարել գիւղատէրերի պահանջած առատակալական աստիճանի հասած հարկը և միևնոյն ժամանակ բաւարարութիւն տալ գիւղական զանազան աղբուկներին, լըցնել նրանց սրկորք:

Այդպէս էր գաշտեցի ասորիների վիճակը և՛ շատ հեռու, և՛ շատ մօտիկ անցեալում, այժմ էլ գրեթէ նոյնն է, դեռ աւելի վատթար:

Դաշտեցիները միանգամայն հակադասուելուն ևն ներկայացընում լեռնային բարձրութիւնները թառած մի բուռն ասորիները: Ճիշդ է, այնտեղ էլ սպիտութիւնը հաւասար աստիճանով տիրում է, բայց նրանք իրանց բարոյականով շատ բարձր մակերեսի վրայ են կանգնած: Լեռնայիները թէև թւով շատ քիչ են, բայց պահպանել են իրանց աղբութիւնը և անհամեմատ ինքնուրոյն են, չեն ենթարկւում և ձուլւում բնիկների հետ: Սրանք գրաւած լինելով անառիկ տեղերը, սպրում են մի տեսակ անջատուած գաշտային ժողովրդից, զերծ են մնացել այն բոլոր ախտերից, որոնցով նեխուել, փչացել են գաշտեցիները: Լեռնայիները շորհիւ իրանց գիրքի և քաջութեան՝ գրաւել են պարսից կառավարութեան ուշադրութիւնը, և կառավարութիւնը սրանցից հեծելազօրքի յատուկ գունդ ունի կազմակերպած Բէջան զօրապետի ղեկավարութեամբ: Այց գունդը ունի յատուկ իր զբօշակը:

Բնդհանրապէս լեռնցի ասորիները ամբողջ շրջակայքում քաջ և կորիչ կուռօղների, ինքնապաշտպանների համբաւ են վայելում, քիւրղերը և թուրքերը չեն համարձակւում սրանց մի չոփին անդամ գիպչել, առիթներ են եղել շատ անգամ, որ կառավարութիւնը սրանց միջոցով պաշտպանուել է Տաճկաստանի քիւրղերի դէմ:

Լեռնցի Ասորիները որոշ անկախութիւն են վայելում, միայն վճարում են յայանի չափով աւերք: Շատ քիչ է պատահում, որ սրանք ցած իջնեն իրանց գրաւած տեղերից, լեռնային բարձրութիւններից: Սրանք թէև ցրուած են մի քանի գաւառներում իրանցից մի քանի անգամ աւելի քիւրղերի մէջ, բայց էլի իրանց անկախութիւնը չեն զիջում, և քիչ չէ այնպիսի զէնդքերի թիւը, որ ասորիները մի փոքրիկ խումբը հալածել, յաղթել է իրանցից եռապատիկ, քստապատիկ աւելի քիւրղերին:

Լեռնցի ասորիները չեն պանդխտում ուրիշ երկիրներ, ոչ էլ Պարսկաստանի այս կամ այն կողմերը, սրանք երկրագործներ են, հողի հետ գործ ունեն, և ստանում են այնքան ար-

գիւնք, որ կարողանում են ապրել գոհ, բաւարարութիւն տալ իրանց պահանջներին: Ուրեմն սրանք անտեսապէս էլ բարուրովիճակի մէջ են, քան իրանց ազգակից գաշտեցիները:

*
* *

Չանաղան գաւառութիւնների պատկանող միասնօնարները օգտուելով Պարսկաստանի անտեսական վատթար դրութիւնից բաւական հունձ են անում, մանաւանդ ասորիների մէջ:

Բողոքական միասնօնարները մտել են Պարսկաստան 1835 թւականին և պատկանում են ամերիկական պրեսբիտերական կամ երիցական եկեղեցուն: Այդ միասնօնարական ընկերութեան (Board) կենտրոնական վարչութիւնը ոչինչ չէ խնայում իր քարոզիչների գործունէութիւնը գիւրացներու համար, նա ուղարկում է առատ միջոցներ, սկսում է օգնել ասորիներին, նրանց ընտանիքների դրութիւնը բարելաւել, ձրի աղքատանոցներ և հիւանդանոցներ բանալ, հիմնում է ստորին, ժողովրդական ուսումնարաններ, ուր ուսումը աւանդւում է ձրիարար, նոյն իսկ բոլոր աշակերտները աննշան բացատրութեամբ՝ ստանում են գաւառական պիտոյքներ, որոշ չափով և՛ հազուատներ: Այդ բոլորին աւելցրէք և՛ այն հանգամանքը, որ բողոքական ասորիները աւելի ապահով, աւելի ազատ են լինում պարսիկ հարստահարիչներից և կառավարութեան ազդեցութիւնից, նրանց կեանքը աւելի ապահով է լինում, քան բողոքականութիւն չ'ընդունող ասորիներինը:

Բողոքականները հաստատուել և գործում էին դաշտեցի ասորիների մէջ. լեռնցիները մնացել էին, ինչպէս և այժմ, անմատչելի: Այժմ բողոքական միասնօնարները գործում են ոչ միայն Ուրմիում, այլ և նրա շրջակայ գաւառներում, ինչպէս Սուլթուզ, Սուլզ-Բուլազ, Սալմասա: Այդ բոլոր տեղերում ունեն մօտ 40—50 ասորի զարոյցներ, ուր սովորում են 1200—2000 աշակերտներ և աշակերտուհիներ: Իսկ Ուրմի քաղաքից քիչ հեռու, Շէհիրչայի վրայ մի ընդարձակ գեանում կառուցել են իրանց կօլլէջը, հիւանդանոցը և ուրիշ հաստատութիւններ: Այդ կօլլէջը առաջ եղել է միջնակարգ դպրոց և կենտրոնականի դեր է կատարել շրջակայ գիւղերի համար, ունեցել է 6—7 դասարան, աստուածաբանական, բժշկական, արհեստագիտական առաջին բաժիններ, ուր ստարասաւում էին չրջիկ քարոզիչներ և ֆէլչիկներ, բայց այժմ այդ կօլլէջը վերածուել է հասարակ վարժարանի:

Պէտք է ասել, որ ժամանակին այդ կօլլէջը մեծ դեր է խաղացել, տուել է բաւական թւով ասորի կրթուած երիտասարդներ, մօտակայ գիւղերի և գաւառների համար ուսուցիչներ, պատրաստել է հմուտ արհեստաւորներ, գլխաւորապէս դերձակ-

ներ և հիւաներ: Առհասարակ բողոքականները ասորիների մէջ կրթական գործին մեծ դարկ են ասել անցիալում, և այժմ ահապէն թուով կրթած ասորիներ կան:

Բողոքական միասիծարներն ունեն իրանց մամուլը: Գրեթէ կէս դար է, ինչ հրատարակում է «Ջահրեր գր-բարա» թերթը: «Ջահրեր գր-բարան» (Լուսոյ ճաստղայթներ) կրօնական, բժշկական և պատմական թերթ է և հրատարակում է ասորիէն: Այս թերթի խմբագիրը մի բողոքական միասիծար է. թերթը ար-պապրում է միասիծարների սեփական սպարանում:

Բողոքականներից յետոյ գալիս են կաթողիկ միասիծարները նոյնպէս ասորիների մէջ քարոզելու: Ասորիներից չատերը յանկարծ տեսնելով, որ կաթողիկները (ֆրանսիացի) աւելի առաւ են պարզեաւորում, աւելի լաւ են ինամում, թողնում են բողոքականութիւնը և ընդունում են կաթողիկութիւն:

Ճիշդ է, կաթողիկ միասիծարները բողոքականներից ոչ են սխալ իրանց պրօպագանդան ասորիների մէջ, բայց նախ քան բողոքական քարոզիչներն մուտքը Ուրմի, այնտեղ եղել են Մօսսուլից եկած կաթողիկ ասորի քարոզիչներ *), բայց գրանք ոչ մի սջողութիւն չեն տնկել: Այն էլ պէտք է ասել, որ կաթողիկները զեռ գարեր առաջ մտել են Պարսկաստան և սխալ իրանց պրօպագանդան, նրանք զեռ Շահ-Աբրահամ ժամանակներից եղել են Հին-Նախիջևանում, Նոր-Ջուղայում և Պարսկաստանի ուրիշ մասերում: Պարսկաստանը թէև վաղուց է ծանօթ ֆրանսիացի կաթողիկներին, բայց Ուրմիում սխալ են իրանց գործը, ինչպէս ասացի, ոչ:

Կաթողիկ միասիծարները այժմ Ուրմիի զանազան մասերում ունեն գարսցներ, բայց սրանց գործունէութիւնը Ուրմիում աւելի նեղ և սահմանակ է, աւելի քիչ սջողութիւն ունի, քան բողոքականներին: Կաթողիկների գործունէութիւնը կենտրոնացած է աւելի մօտիկ դաւաններում, մանաւանդ Սալմաստում, Ռոսրովա գիւղում, ուր բոլոր ասորիները կաթողիկներ են, ունեն չքեղ և զեղեցիկ շէնքեր, եկեղեցիներ, ունեն և գարսցներ, ժողովարաններ:

Կաթողիկները Ուրմիում ունեն սպարան, և ահա մօտ 10 ասորի է հրատարակում են «Կալա-գր-չրարա» (Ճամարաութեան ձայն) թերթը, որ խմբագրում է մի կաթողիկ եպիսկոպոս «Կալա-գր-չրարան» աւելի ազատամիտ է «Ջահրեր-գր-բարայի» հետ համեմատած: Այս թերթը որոշ չափով սչապրու-

*) Տաճկաստանի կողմերի ասորիները մէջ կաթողիկները աւելի շատ են սխալ իրանց կրօնական պրօպագանդան:

թիւն է, դարձում լեզուի մշակման վրայ, քարոզում է, որ պէտք է, նոյնիսկ անհրաժեշտ է, ասորի փոքր լեզատէ՛ դարգացած գասի համակրութիւնը:

Միայն բողոքական և կաթոլիկ միասնաբանները չեն, որ զործում և քարոզում են ասորիների մէջ: Այստեղ, այս և այն ժամանակներում եկեղ և հաստատուել են նաև ուրիշ դաւանութեան ներկայացուցիչներ: Կան անգլիական-կաթոլիկոսական եկեղեցու ներկայացուցիչներ, այս անգլիական բողոքականները հին ծէսերը սիրողներ են և ձգտում են վերականգնել հին եկեղեցին, իսկ զրանց հակառակ ամերիկական բողոքականները հին ծէսերը միանգամայն մերժում են:

Եպիսկոպոսականները զործում են զլիտուրգիայէ Տաճկաստանի ասորիների, ջէյթների մէջ և մասամբ Ռւբինում:

Կան նաև զերմասնացի բողոքականներ: Սրանք ունեն միայն երկու սրբանոց. մէկը Ռւբինում, երկրորդը Խօյում, որ ստաց Սալմաստունէ էր:

Ռուսացաւան քարոզիչներն էլ զրաւեցին Ռւբինի ասորիներին 1899 թւականին. սոս քարոզիչները հէնց սասջին օրից ունեցան արտակարգ աջակցութիւն:

Այդ արտակարգ և փայլուն աջակցութիւնը պէտք է անշուշտ բացատրել նրանով, որ սոսական ազդեցութիւնը շատ ստորածուած է Պարսկաստանում, մանաւանդ Ատրպատականում, իսկ սոսահայտակի կեանքը և զոյքը միանգամայն սղահով է, նա սղգաւ է ամեն կեղերմներից, ահա այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով՝ ասորիների բազմաթիւ բնտանիքներ, բաւականին քահանաներ և կաթոլիկոսներ բնդում են սոսացաւանութիւն: Կաթոլիկ ասորիների գրեթէ կէսը և բողոքականների մօտ 20⁹/₁₀-ը գաւնում են սոսացաւան: Ասորիների հաւմաման սոսաց եկեղեցու ծայր և՛ բաւական թւով Ռւբինի հայերից:

Այդ կրօնափոխութիւնից շատ զժգոհ է Ռւբինի մահմեդական տարրը, զլիտուրգիայէ զիւղասերերը, որովհետև վերջիններիս անտեսական գրութիւնը սրտ չափով վասնդում է զրանով: Ռուսացաւանութիւն բնդանող ասորիները սոսաց աէրութիւնից պաշտպանութիւն գանելով՝ սկսում են զիւղասէր թաւրքերի վերաբերմամբ իրանց աւելի անկախ պահել, սուրբ և բեգասից խոյս տալ: Ահա այդ աւելից զլիտուրգիայէ ստաջանում է թուրք լէյտող տարրի մէջ այն զօրեղ հակակրանքը զէպի սոսանէքը, որ, բացի յայանի ցոյցից բնդղէմ սոսա բարդիչների, Թաւրիզի սոսաց հիւղատոս Պետրօլը 1899 թուի ամառը Ռւբինի եղած ժամանակ չէ կարողանում մի կտոր հող

ձեռք բերել ուսաց եկեղեցու շինութեան համար. ոչ մի թուրք չի համաձայնում ծախել իւր հողը, թէկուզ շատ թանկ գնով: Միայն Վեհափառ Շահը, երբ Եւրոպա կատարած իր առաջին ճանապարհորդութիւնից վերադառնալիս, Ռուսաց հիւպատոս Պետրովը պիմում է և խնդրում մի կտոր հող, յարգելով նրա խնդիրը, հրամայում է սալ, իսկ հողատիրոջը տալիս է մի ուրիշ կտոր հող:

Ռուս միասփոնարները գեռ սեփական հաստատութիւններ չ'ունեն:

Ասորիների մէջ, ինչպէս ասենում էք, գործում են մի քանի գաւանութիւնների ներկայացուցիչներ, և ասորիների մեծապէս մասը բաժանուած է այդ գաւանութիւնների մէջ: Չը մտանանք ասել, որ բոլոր քարտղիչներն էլ գործում են գաշտարընակ ասորիների մէջ, և սրանք բաժանուած են այսպէս.

Ռուսապաւան ասորիներ մօտ	15—16,000	հողի	
Բողղքական	»	»	7—8,000
Կաթոլիկ	»	»	5—6,000
Եպիսկոպոսական	»	»	500

Կան դանադան կողմերում գաշտեցի ասորիներ, շատ ան-
նըչան թւով, մօտ 200—250 հողի, սրանք գեռ հաւատարիմ են
մնացել իրանց հին ասորական եկեղեցուն:

Միանգամայն մարտը, հաւատարիմ են մնացել իրանց
ասորական եկեղեցուն և կրօնապետ Մար-Շիմօնին՝ լեռնաբնակ
մի բուն ասորիները: Նրանք սղտա թառած լեռներին ապրում
են դո՞ իրանց վիճակից, գեռ աղգայնական գաղափարը և սգին
վառ, անչէջ պահած, լեռնցուն վայել վարը ու բարբոյ, մար-
բութեամբ:

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

ՀԱՅ ԿՆՈՉ ԶԱՅՆԸ

I

Կեանքը կռիւ է, գոյութեան կռիւ:

Ինչպէս ամեն մի կենդանի արարած, նոյնպէս և մարդը չի կարող ապրել առանց սնունդի: Ահա հէնց այդ պատճառով էլ ապրուստ ձեռք բերելու հարցը շատ մեծ դեր է խաղում մարդկային կեանքում: *)

Բոլոր կենդանիների մէջ, շատ քիչ բացառութեամբ, էզը անկախ է արուից կերակուր ճարելու հարցում: Իսկ մարդկային կեանքում մի սեռը անտեսական կախում ունի միւսից և այս յարաբերութիւնը միայն չէ սեռական յարաբերութեան հետ: Կնոջ անտեսական զրութիւնը կախուած է տղամարդուց: Բացառութիւն չեն կազմում նոյն իսկ վայրենի ցեղերի կանայք և գեղջկուհիները, որոնք տղամարդու հետ զրեթէ հաւասար չափով ֆիզիկապէս աշխատում են:

Ներկայումս ամբողջ աշխարհի անտեսական գործունէութիւնը կենտրոնացած է բացառապէս տղամարդկանց ձեռքում:

Տղամարդը ձեռք է բերում հարստութիւն, իսկ կինը գործագրում է: Տղամարդը որսորդութիւն ու ձկնորսութիւն է անում, անասուններ է պահում, հող է մշակում, արհեստներով

*) Աչքի առաջ ենք ունեցել զլսաւորապէս հռչակաւոր ամերիկացի կին զրոյ Չարլոտա Ստեսօնի յայտնի աշխատութիւնը, որը արդէն թարգմանուած է գրեթէ բոլոր եւրոպական լեզուներով—(ի միջի այլոց և ռուսերէն „Женщины и экономическое отношение“ վերնագրով): Բացի դրանից օգտուել ենք նաև մի քանի գերմանական աորիւններից, այն է՝ A. Bebel—„Die Frau“, H. Lange und S. Bäumer—„Handbuch der Frauenbewegung“, E. Lüders—„Stand der deutschen Frauenbewegung“ և այլն:

ու վաճառականութեամբ է պարապում, իսկ կի՛նը... Նա վայելում է գրանցից ստացած բարիքները:

Իսկ ի՛նչ է տալիս կի՛նը իր վայելած սնտեսական բարիքների փոխարէն:

Գուցէ ասողներ լինին, թէ ոչինչ տալու չէ, որովհետև իր ամուսնու ընկերն է: Շատ լաւ: Բայց չէ՞ որ մէկի հետ ընկերանալ — կը նշանակէ նրա գործակիցը զառնալ: Ի՞նչ ընկեր է կի՛նը իր ամուսնու համար, երբ չէ կարող նրա պարտավունքներին խառնուել, նրա գործերի մէջ իր լաժին կապիտալը, զիտութիւնն ու աշխատանքը մացնել:

Եթէ կի՛նը ամուսնու գործակիցը չէ հանդիսանում, հապա էլ ի՛նչ իրաւունքով է նա ստանում նրանից իր կերակուրը, հագուստն ու բնակարանը:

Կան կարծողներ, թէ նա այդ բաները ստանում է իր կատարած անային աշխատանքի փոխարէն:

Եթէ այդպէս լինէր, այն ժամանակ իւրաքանչիւր կին որպէս անային աշխատանք կատարող պիտի ստանար միմիայն այնքան, որքան որ ստանում է մի խոհարար, աղախին, ծրծմայր և այլն: Բայց իրականութիւնը հակառակն է ցոյց տալիս: Թէև կանանց անային աշխատանքը սնտեսակսն մեծ արժէք ունի, բայց այդ արժէքը որոշ չափ չ'ունի, այդ աշխատանքը զնահատող չը կայ: Աւելի շատ աշխատող ու տանջւող աղքատ կի՛նը աւելի քիչ է ստանում, աւելի քէչ է վայելում, քան թէ հարուստի կի՛նը, որը առանց ոչինչ անելու հազարներ է չարբտում զարդերի ու զանազան պաճուճանքների համար:

Այդպէս ուրեմն, կհոջ անային աշխատանքը սնտեսական փոխարինութեան մէջ իր արժանի զնահատութիւնը չի ստանում և եթէ ստանար էլ, այն ժամանակ բոլոր կանայք անային ծառաների աստիճանին կը հասնէին:

Ճիշտ է՝ կի՛նը իր անային աշխատանքով նպաստում է սըղամորդուն աւելի շատ հարստութիւն, աւելի շատ սնտեսական բարիքներ ձեռք բերելուն, այնուամենայնիւ նա չ'ունի մարդավայել ազատութիւն, չ'ունի սնտեսական անկախութիւն: Այդ ստեսակէտից նրա դրութիւնը շատ քչով է տարբերւում ընտանի կենդանիների դրութիւնից:

Շատերը կարծում են, թէ կի՛նը իրաւունք ունի ամուսնուց սպրուստի միջոցներ ստանալու որպէս մայր:

Եթէ այդպէս է, եթէ մայրութիւնը մի պարտականութիւն է, որի փոխարէն կի՛նը հագուստ և ուտելիք է ստանում, այն

ժամանակ ով շատ երեխաներ է ծնում, նա աւելի շատ բարիքներ պիտի ստանար, իսկ անդաւակ կինը միշտ պիտի մնար դատարկածեռն, առանց ապրուստի միջոցների:

Բայց չէ որ դա ծիծաղելի է, չէ որ կեանքում այդ տեսակ փաստեր բոլորովին չը կան: Ընդհակառակը կարելի է յիշել բազմաթիւ օրինակներ, երբ անդաւակ կինն աւելի հարուստ է, աւելի բարիքներ է վայելում, քան բազմաթիւ երեխաների ատէր կինը: Ուրեմն մայրական կոչումն էլ ոչ մի կապ չունի կնոջ անտեսական դրութեան հետ:

Գուցէ դրա հակառակ ասողներ լինեն, թէ մայրական պարտականութիւնները դրկում են կնոջը անկախ կերպով կերակուր ձեռք բերելու հնարաւորութիւնից, ուստի և նա իրաւունք ունի ամուսնուց ստանալու ապրուստի միջոցները:

Բայց միթէ դա ճիշտ է, միթէ կինը մայր դառնալով կորցնում է իր ոյժերը, միթէ նա այլ ևս չի կարողանում կառավարել իր ուղեղն ու մարմինը, իր խելքն ու ընունակութիւնները:

Ոչ: Իրականութեան մէջ այդպէս չէ: Մայր-կինը երբեմն աւելի շատ է աշխատում, աւելի շատ է տանջւում, քան թէ սղամարդը: Նա աշխատում է յաճախ ոչ միայն իր երեխաների, այլ և իր ամուսնու, մօր, քրոջ, ազգականներէ համար:

Վայրենի մայրը ծանրութիւններ է կրում և գերիի պարտականութիւններ է կատարում իր ցեղի մէջ: Գեղջկուհի մայրը աշխատում է դաշտում, իսկ բանւորի կինը—տանր, կամ գործարանում: Սրանցից շատերը ոչ միայն ծնում և մեծացնում են իրանց զաւակներին, այլ և կողմնակի աշխատանքով կերակրում են նրանց:

Սրանից պարզ երևում է, որ կինը մայր դառնալով չէ դադարում աշխատել և՛ ուրիշ ասպարէզներում:

Այն, նա միշտ էլ ձգտում է անկախ աշխատանքի. բայց նրա առաջ արգելքներ են գնում պատճառ բերելով այն հանդամանքը, թէ մայրը չէ կարող աշխատել և չը պէտք է աշխատէ:

Եթէ հիմնաւոր լինէր այդ պատճառարանութիւնը, այն ժամանակ ամբողջ մարդկութիւնը պէտք է բաժանուէր երկու դասակարգի—կանայք, որոնք բացի մայր լինելուց և երեխաների մասին հոգ տանելուց ուրիշ ոչինչ չը պէտք է անէին, և սղամարդիկ, որոնք պէտք է մնացած բոլոր գործերը կատարէին և բացի դրանից կանանց վրայ էլ հոգ տանէին:

Բայց այդպիսի բան չը կայ և չէ էլ կարող լինել, որովհետև կինը աշխատում է մինչև մայր դառնալը, աշխատում է մայր

դառնալուց յետոյ էլ: Մայրական աշխատանքը մարդկային կեանքում միշտ էլ աչքի ընկնող գործօն է եղել:

Մայրը միևնույն ժամանակ աշխատաւոր է, բայց զժրախտաւորար նրա աշխատանքը չ'ունի այնպիսի յատկութիւն, որը ազդէր նրա տնտեսական գրութեան վրայ:

Կար ժամանակ, երբ մարդ-արարածն էլ իր զազանութեամբ և վայրենութեամբ չէր զանազանուում միւս կենդանիներից: Թէ տղամարդիկ և թէ կանայք միասին թափառում էին անտառից-անտառ, դաշտից-դաշտ, գետից-գետ և իրանց համար կերակուր որոնում:

Տղամարդիկ կանանցից տարբերուում էին միմիայն իրանց պատերազմաւէր բնաւորութեամբ: Բոպկապէս կնոջը տէր դառնալու համար նրանք մենամարտում էին իրար հետ, իսկ կանայք նստում, հանդիսատես էին լինում դրան և վերջը անձնատուր լինում յազմողին:

Բայց վերջապէս վայրենի մարդն սկսեց հասկանալ, որ իրան աւելի հեշտ ու յարմար է միանդամից տէր լինել էզին՝ կնոջը, քան թէ ամեն անգամ նրա համար կուել և կեանքը վրտանդի ենթարկել: Ահա այդ ժամանակուանից սկիզբն առաւ մշտական կին ունենալու սովորութիւնը:

Այդպիսով կինը կամաց-կամաց զրկուեց իր ազատութիւնից, իսկ տղամարդը իրրև ամուսին և հայր սկսեց խնամք տանել թէ կնոջ և թէ երեխաների մասին:

Կեանքի այդ նոր պայմանները հետզհետէ ձեւափոխեցին կնոջը: Նա կորցրեց իր արագաշարժութիւնն ու ոյժը, որոնք նրան անհրաժեշտ էին կերակուր ձեռք բերելիս: Այժմ նրան թոյլ չեն տալիս առաջուայ նման ազատ թափառել, ասլրուստ որոնել: Այդ բոլորը միայն տղամարդու գործը դարձաւ: Դրա փոխարէն կինը ձեռք բերաւ այնպիսի նոր յատկութիւններ, որոնց չնորհիւ հարողանում էր գրաւել և իր մօտ պահել տղամարդուն: Արտաքին գեղեցկութիւնը դարձաւ նրա ամենազըլխաւոր գէնքը:

Հէնց մեր օրերումն էլ միևնույն բանն է կատարուում: Կանանց զիրքն ու տնտեսական վիճակը շատ սերտ կերպով կապուած են հակառակ սեռին գրաւելու ընդունակութեան հետ: Ահա այդպիսի պայմաններն էին, որ ժամանակի ընթացքում հետզհետէ հեռացրին կնոջը գործունէութեան շատ ու շատ ասպարէզներէց, որ կամաց կամաց սահմանափակեցին նրա ազատութիւնը:

Կնոջ ազատութեան սահմանափակումը հետզհետէ սահմանափակեց նաև նրա մտաւոր աշխարհը: Եւ զա շատ բնական էր:

Մեկ շրջապատող միատեսակ շրջանը—միևնոյն առարկաները, ձևերը, գոյները, ձայները դարձնում են կեանքը տաղտկալի և մեռելային: Քանի լայնանում է այդ շրջանը, այնքան էլ մարդու զարգացումը բազմակողմանի է դառնում:

Դժբախտաբար կինը զուրկ է այդ տեսակ բազմակողմանի կեանքից: Փակուելով տան չորս սլափերի մէջ, նա զրկուել է շատ ու շատ տպաւորութիւններից, բազմակողմանիութիւնից, մտաւոր լայն զարգացումից:

Եթէ օյնութեան չը վար ժառանգականութեան անխափտելի օրէնքը, այսինքն եթէ հայրը իր յատկութիւնները չը տար աղջկան, իսկ մայրը որդուն, այն ժամանակ կինը բոլորովին կը զրկուէր իր կամքից և ինքնուրոյնութիւնից:

Դժբախտաբար կնոջ իրաւունքների սահմանափակումը սկսում է հէնց մանկութիւնից: Մենք տարբեր ձևով ենք դաստիարակում մեր աղաներին և աղջիկներին և դրանով դեռ մատող հասակից նրանց մէջ զարգացնում ենք սեռական հակումները 'ի վնաս մարդկային բարձր արժանիքների:

Մենք պատանիներին շատ իրաւունքներ ենք տալիս, իսկ նոյն հասակի օրիորդներին քիչ:

Երիտասարդների առաջ բաց է մի ամբողջ աշխարհ, գործունէութեան մի լայն ասպարէզ: Նա կարող է իր բոլոր ուժերը գործադրել և սխալուած գէպքում մի քանի անգամ իր պարսպամուկի տեսակն ու եղանակը փոփոխել: Եթէ մի գործ չը յաջողուի, նա կարող է մէկ ուրիշ գործ սկսել: Մի խօսքով նա կարող է այնպէս լինել, ինչպէս ուզում է, այն անել, ինչ որ ցանկանում է:

Իսկ օրիորդը... Նա ազատ չէ, նա անկարող է իր ցանկութիւնն իրազործել: Նրա գիրքը հասարակութեան մէջ սրուշուում է «ամուսնական մատանու» հետ միասին: Առանց ամուսնութեան նրա կեանքը կորած է, օրը խաւարած...

Այդպիսի գրութիւնը ասիպում է նրան հետզհետէ մոռանալ մարդկային բարձր պարտականութիւնները և աւելի ու աւելի զարգայնել սեռական հակումները:

Վերջնենք կանոնը կորսեալ, փորձենք հազցնել ազամարդուն կամ մի այնպիսի կնոջ, որ բոլորովին նրան չէ գործածել, այն ժամանակ նրանք կը զգան մկանների ճնշում, ցաւ, ծանրութիւն և նրանք բարկութեամբ կը բացսկանչեն. «ինչպէս կարելի է մի այդպիսի բան հաղնել»:

Իսկ մշտապէս կորսեա գործածող կինը այնպէս վարժուած

է լինում յիշեալ ճնշումներին, որ իրան վաս կը զգայ առանց կորսեալի:

Հէնց այդ միևնոյն երեոյթը նկատուում է և հասարակական կեանքում:

Երբ մենք ստըրում ենք այնպիսի պայմաններում, որոնք իրանց գոյութիւնն ստացել են շատ հին ժամանակներից և որոնք մեզ վրայ ազդում են հէնց ծնուած օրից, մենք վարժուում ենք դրանց և ուշադրութիւն չենք դարձնում դրանց վրայ: Սակայն անհատներ են գտնուում, որոնք չեն կարողանում ընտելանալ այդ սովորական կարգերին, զգում են նրանց անյարմարութիւնը և ձգտում ազատուել դրանցից:

Այդ միևնոյնը կարելի է ասել նաև կանանց հարցի վերաբերմամբ: Ներկայումս կանայք ճնշուած ու զրկուած են ազատութիւնից, բայց շատ քչերն են խոստովանում այդ բանը:

Տղաները հէնց փոքր հասակից ծրագրերն են կազմում, թէ ազագայում ինչ պիտի անեն, ինչ գործով պիտի պարապեն: Իսկ աղջիկները դրա փոխարէն մտածում են, թէ ինչպէս պիտի ամուսնանան և ո՛ւմ հետ պիտի ամուսնանան:

Ամուսնութիւնը կնոջ միակ նպատակն է: Ձէ որ նա դրա համար է ծնուել, կրթուել և ՚ի ցոյց դրուել: Ամուսնութիւնը նրա գոյութեան միակ միջոցն է, ուստի նա պիտի աշխատէ շուտով ձեռք բերել այդ միջոցը, շուտով ամուսնանալ: Բայց նա այդ ուղղութեամբ էլ համարձակ քայլ անելու իրաւունք չունի: Նա պիտի նստէ ու սպասէ, մինչև որ բախտը ժպտայ և նրա համար ամուսնութեան դուռ բանայ:

Երևակայեցէք հասած օրիորդի նեարդային լարուած դրութիւնը, երբ նրա ապագան կախուած է մի բարեյաջող հանդամանքից և երբ նա տեսնում է, որ այդ հանգամանքը չէ գալիս, իսկ ինքը իր կողմից ոչ մի քայլ անել չէ կարող: Մինչև վերջը նա պիտի համբերութեամբ ու պարկեշտութեամբ սպասէ...

Իսկ վերջը: Այն, որ եթէ նրան չը յաջողուի մի ամուսին ձարել, այն ժամանակ նրա վրայ վաս աչքով կը նայեն, նա ծաղրի ու արհամարհանքի առարկայ կը դառնայ և «պատուած աղջիկներին» շարքը կը դասուի:

Մեթէ գատապարտելի չէ հասարակութեան այդպիսի վերաբերմունքը:

Սակայն դրա պատճառը հասկանալու համար հարկաւոր է աչքի առաջ ունենալ մարդկանց անտեսական-սեռական յարաբերութիւնները:

Սովորաբար ամուսնութիւնը թէն տալիս է կնոջը սպորտստի միջոց, բայց դա այն արդար աշխատանքի վարձը չէ, որ ամեն մի մարդ տունը ամաչելու կարող է ստանալ, կարող է պահանջել: Ո՛չ, դա մի տեսակ բարերարութիւն է կնջ սեռական յատկութիւնների փոխարէն: Այդտեղ կինը ներկայանում է իբրև «էգ» և նշ իբրև մայր:

Ո՛րքան ամօթալի է այդ փոստը: Ո՛չ մի կրթուած կին չը պիտի համաձայնի այդպիսի ամուսնութեան, որովհետև դա իսկական ամուսնութիւն չէ, այլ մի կեղծ գրութիւն, մի անսպասուարեք մութացկանութիւն:

Քանի որ կինը իրան բացառապէս «էգի» տեղ է դնում և աշխատում է զարգացնել իր սեռական գրաւչութիւնը, քանի որ նրա ամուսնութիւնը այդ հանդամանքից է կախուած, ուստի ամուսին չը դանելու անաջող դէպքը մի փաստ է, որ կինը սեռական գրաւչութիւնից զուրկ է: Եւ որովհետև նա բացի անային հասարակ ծառայութիւնից ուրիշ ոչինչ չէ կարող ա՛նել, ուստի բնական է, որ նրան պիտի արհամարհեն իբրև ձրիակերի, իբրև մի անպէտք արարածի:

Ի՞նչ արժէք կարող է ունենալ այն անհատը, որ չէ կարողանում կատարել մինչև անգամ այն ֆունկցիաները, որոնց համար նա ծնուած է, որոնց համար նա ապրելու է...

Գիւղերում, որտեղ կինը բացի սեռական արժէքից ունի նաև տնտեսական արժէք, ամուսնութիւնները շատ վաղ են կատարուած: Գիւղացին ամուսնանալով ձեռք է բերում օգնական-աշխատատուր: Իսկ քաղաքներում բոլորովին հակառակ է լինում:

Քաղաքացի երիտասարդը, որ պարագում է արհեստով կամ վաճառականութեամբ, չէ կարող շուտ ամուսնանալ, որովհետև նրա սպալաց կինը բացի կին և մայր լինելուց (իհարկէ, քանի երիտասարդ ու սուղջ է) ուրիշ արժէք չ'ունի, նա լինելու է միայն սպասող: Դրա համար էլ երիտասարդը պիտի յետաձգէ իր ամուսնութիւնը, մինչև որ նրա միջոցները բաւարար լինեն այդ կեանքի համար:

Գլխաւորապէս զբանով պէտք է բացատրել այն իրողութիւնը, որ շատ տեղերում տարէց-տարի պակասում է ամուսնութիւնների թիւը: Այսպէս օրինակ, Ֆրանսիայում ամուսնութիւններ տեղի են ունեցել.

- 1886 թ.—283,208
- 1887 թ.—277,060
- 1888 թ.—276,848
- 1889 թ.—272,934
- 1890 թ.—269,332

Նոյնաման վրաստեր գոյութիւն ունեն և ուրիշ երկրներում: Վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ իւրաքանչիւր 10,000 հոգուց ամուսնացել են.

	Ննգվայում	Աստիայում	Իտալիայում	Հոլանդիայում	Քելիֆայում	Փանիայում	Քարիբիայում
1873 թ.	176	188	159	171	156	162	152
1874 թ.	170	181	153	168	152	164	166
1875 թ.	167	171	168	167	145	170	179
1876 թ.	166	165	163	165	142	171	162
1877 թ.	157	150	154	162	149	161	157
1878 թ.	152	152	142	155	135	148	147
1879 թ.	144	155	150	153	136	147	138
1880 թ.	149	152	140	150	141	152	137
1881 թ.	151	160	162	146	142	156	136
1882 թ.	155	164	157	143	140	154	135
1883 թ.	154	157	161	142	136	154	136
1884 թ.	151	157	164	144	136	156	136
1885 թ.	144	152	158	139	136	151	138
1886 թ.	141	155	158	139	134	142	137
Միջին թւով	156	161	156	153	141	156	147

Այս ազիւսակը պարզ ցոյց է տալիս, որ բոլոր երկրներում էլ ամուսնութիւնների թիւը ընդհանուր առմամբ պակասել է:

Այդ իրողութիւնը մի մեծ չարիք է թէ հասարակական և թէ բարոյական տեսակէտից: Այդ չարիքն է, որ բարձրագոյն երիտասարդների մղում է դէպի անառակ կեանքը: Ամուսնանալու հնարաւորութիւն չունենալով՝ նրանք սկսում են անառակութեան միջոցով յաղուրդ տալ իրանց սեռական պահանջներին:

Աննպաստ հասարակական-տնտեսական պայմաններն են, որ շատ կանանց զցում են անառակութեան զիրկը: Նրանք պոռնիկ են դառնում, որպէսզի ապրել կարողանան, որպէսզի օրական հաց ձեռք բերել կարողանան:

Դժբախտաբար այդ պայմանները տարէց-տարի վատթարանում են, ուստի պոռնիկների թիւն էլ աւելանում է: Այսպէս օրինակ, միայն Բերլինում այդ թիւը հասել է.

- 1886 թ.—3006-ի
- 1887 թ.—3063-ի
- 1887 թ.—3392-ի
- 1889 թ.—2703-ի
- 1890 թ.—4039-ի

Ի հարկէ դատապարտելի է ապրուստի այդ միջոցը. բայց չէ որ հասարակութիւնն ինքն է մեղաւորը այդ բանում: Ինչո՞ւ է նա ճնշում ազատութիւնը, ինչո՞ւ բաց չէ անում կանանց առաջ գործունէութեան բոլոր ասպարէզները:

Մենք պախարակում ենք այն կանանց վարմունքը, որոնք սեռական ֆունկցիաները ապրուստի միջոց են դարձրել, բայց միթէ միևնոյն բանը չի կատարում ամուսնական կեանքում: Միթէ սեռական յատկութիւնների համար չէ, որ տղամարդը կերակրում է կնոջը: Այդ երկու աստիճանների տարբերութիւնը շատ չնչին է:

Տնտեսական պայմանների և հասարակական կարծիքի ազդեցութեան տակ օրիորդներն աշխատում են շուտ ամուսնանալ և զբոսնով որոշ դիրք ստեղծել: Փամանակի հոսանքը հետզհետէ ծանրացնում է կանանց տնտեսական վիճակը. նրանք շատ անզամ ստիպուած են լինում ամուսնանալ միմիայն «հացի խնդրի» համար, առանց ուշք դարձնելու փեսայացուի մտաւոր ու բարոյական յատկութիւնների վրայ, առանց խիստ բնորութիւն անելու: Հէնց այդ պատճառով էլ տարէց-տարի աւելանում է գերախոս ամուսնութիւնների ու սպաճարգանների թիւը:

Այսպէս օրինակ, Ֆրանսիայում կատարուել են.

- 1884 թ.—1657 ապահարգանի դէպք
- 1885 թ.—2477 » »
- 1886 թ.—2950 » »
- 1887 թ.—3636 » »
- 1888 թ.—4708 » »
- 1889 թ.—4786 » »
- 1890 թ.—5457 » »

Անգլիայում 1867 թ. իւրաքանչիւր 1378 ամուսնութեան մէջ միայն մի ապահարգան էր գալիս, 1877 թ.—2, 1886 թ.—3: Միացեալ-Նահանգներում ապահարգանի թիւը հասնում էր.

- 1867 թ.— 9937-ի
- իսկ 1886 թ.—25,535-ի

Գերմանիայում էլ զգալի չափով մեծացել է ապահարգանների թիւը: Այդտեղ ապահարգանի դիմել են.

- 1881—85 թ.—իւրաքանչիւր 1430 ամուսնական գոյգից 1-ը:
- 1886 թ.— » 1283 » »

1887 թ.— » 1237 » »
 1888 թ.— » 1179 » »

Եթէ համեմատելու լինենք զանազան երկրների վիճակազրբական տեղեկութիւնները, այն ժամանակ կը գանք այն եզրակացութեան, որ ամենից շատ ամուսնալուծութեան դէպքեր են եղել այն երկրներում, որտեղ օրինական խտութիւնները համեմատաբար թեթեւ են, որտեղ կնոջ անտեսական վիճակը ուրիշ տեղերի համեմատութեամբ աւելի անկախ է։ Եւ զաշատ բնական է։ Տնտեսական անկախութիւն չ'ունեցող կինը չէ կարող ապահարզանի մասին մտածել։ Նա դժբախտ ամուսնութեան լծի տակ պիտի տանջուի անվերջ, կեղծիքով, կողմնակի ճանապարհներով պիտի ուշխատէ թեթեացնել իւր թշուառութիւնը, մինչև որ վրայ հասնի մահը և վերջ դնէ այդ ամենին։

Եթէ քիչ խորը մտածենք այդ դառն իրականութեան մասին, այն ժամանակ կը հասկանանք, թէ քանի՛-քանի՛ հարուածներ է հասցնում այդպիսի ամուսնութիւնը ընտանեկան սրբութեանը, թէ սրբան թունաւոր է նա մատաղ սերնդի համար։

Բայց ինչեր չէ անում անտեսական կարիքը։ Բարեւոյնի Բահազ սաճարում ջահիլ աղջիկները անառակութեամբ պարապելով էին ձեռք բերում իրանց օժիտը։ Չընայելով որ այդ բանը թէ ֆիզիկական և թէ բարոյական մեծ վնասներ էր հասցընում նրանց, բայց այնուամենայնիւ նրանք իրանց արածը օրինաւոր էին համարում։ Ինչո՞ւ։ Որովհետև ամուսնանալու համար օժիտ էր հարկաւոր, իսկ այդ բանը նրանք ուրիշ ճանապարհով ձեռք բերել չէին կարողանում։

Մենք պախարակում ենք այն օրիորդներին, որոնք ամուսնանում են փողի համար, բայց ներողամիտ ենք դէպի այն կիները, որը դատարկում է իր ամուսնու զրպանը, որը հարիւրներու հազարներ է ծախսում իր զարդ ու պաճուճանքի համար։ Միթէ հակասութիւն չէ դա։

Մենք գիտենք, որ սէրը մի բարձր զգացմունք է, որ ոչ մի կապ չ'ունի նիւթական հաշիւների հետ, բայց հաշտ աչքով ենք նայում, երբ մարդիկ սիրոյ քողի տակ ծածկում են այդպիսի հաշիւները։ Միթէ դատապարտելի չէ դա...

Մենք կանանց փակել ենք տան չորս պատերի մէջ, պատնէջ ենք բարձրացրել նրանց ազատ գործունէութեան առաջ, բայց միևնոյն ժամանակ դանդաղում ենք, թէ նրանք տղամարդու նման չեն առաջադիմում, թէ նրանք թոյլ արարածներ են... Միթէ անարդարութիւն չէ դա։

Այն, անարդարութիւն է, բայց նա այնքան յաճախ է կըր-

կնուել, որ արդէն սովորական երևոյթները չարքն է անցիլ և աննկատելի դարձել:

Մինչև երեխան լաց չը լինի—մայրը ծիծ չի տալ, ասում է առածը: Եւ դա շատ ճիշտ է կանանց վերաբերմամբ. նրանք ճնշուած են և իրաւագուրկ: Նրանց հարկաւոր է ազատութիւն ու անտեսական անկախութիւն: Բայց այդ բոլորը ձեռք բերել կարելի է միայն անդուլ ջանքերով, անվհատ գործունէութեամբ:

Ուրեմն, ամեն մի կին հէնց իւր շահերի տեսակէտից պիտի աշխատէ մասնակցել այդ գործունէութեանը, պիտի ջերմ հետաքրքրութիւն ցոյց տայ դէպի կանանց շարժումը:

ՏԻԿԻՆ ՀՐԱՆՈՅՇ

(Պերճը միւս համարում)

Ն Ե Ր Ս Ը

(Intérieur)

ՄՕՐԻՍ ՄԷՏԵՐԼԻՆԿԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Պ Ա Ր Տ Ի Ջ Ո Ի Մ

ԾԵՐՈՒՆԻՆ

ՕՏԱՐԱԿԱՆԸ

ՄԱՐԻՍԱ

և

ՄԱՐԹԱ

ՄԻ ԳԻՒՂԱՑԻ

ԱՄԲՈՆ

} Ծերանու թոռները.

Տ Ա Ն Մ Է Ջ

ՀԱՅՐԸ

ՄԱՅՐԸ

ԵՐԿՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ

ԵՐԵՒԱՆ

} Անխոս անձինք.

Ուրիներով տնկած մի հին պարտէզ, խորրում մի տուն, որի ներքին յարկի երկը լուսամուտները լուսաւորուած են: Ներսում բաւական որոշ կերպով լամպի լոյսի տակ նկատուում է մի ընտանիք: Հայրը նըստած է օջաղի առաջ. մայրը յենուած է սեղանին՝ անորոշ հայեացքը հենուեն ուղղած: Սպիտակ շորերով երկու ջահիլ աղջիկներ ասեղնադործում են եւ երազում՝ ժպտալով սենեակի խաղաղութեան մէջ: Սրանցից մէկն ու մէկը եծէ վեր կենայ քայլի կամ մի ժեստ անի, թուում է թէ այդ շարժումները լինելու են խորհրդաւոր, հազուադէպ, մի տեսակ տարածութեան մէջ եծերացած, լոյսի եւ լուսամուտների թափանցիկ վարադրյունների պատճառով: Կերուինն եւ օտարականը նախազգուշութիւններով մտնում են պարտէզ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Այժմ մենք պարտիզի այն մասունն ենք, որ ստարածուում է ասան յեանք: Նրանք այստեղ երբէք չեն գալիս: Դստերը հակառակ կողմից են և վախուած իսկ լուսամուտների տախտակէ փեղկերը ծածկուած են: Բայց այստեղ լու-

սամուաները տախտակէ վեղկ չ'ունին, և ես լոյս եմ տեսնում... Այս, նրանք դեռ նստած եւ լամպի առաջ: Լաւ է, որ մեր սանաձայնը չը լսեցին, մայրը կամ աղջիկները գորս կրկային գոյէ, և այն ժամանակ ինչ պէտք է անէինք...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ի՞նչ պէտք է անենք:

ԾԵՐՈՒՆԻՆ. Նախ եւ կը կամենայի տեսնել, թէ արդեօք նրանք բոլորն էլ զահլիճումն են, այն, եւ տեսնում եմ հօրը նստած կրակի առաջ և ձեռները ծնկներին... մայրը արմունկով յենուած է սեղանին. նա մեզ է նայում:

ԾԵՐՈՒՆԻՆ. Ո՛չ, նա ինքն էլ չը դիտէ, թէ ինչ բանի է նայում և չէ կարող մեզ տեսնել, որովհետեւ մենք մեծ ծառերի ստուերում ենք: Բայց շատ մի մօտենար... Մեծածի երկու քոյրերը նոյնպէս սենեակումն են: Նրանք ասեղնագործում են գանգաղութեամբ, իսկ վարդիկ երեխան նիբճում է: Փամի ինն է պառի ժամացոյցով... նրանք ոչինչ չը դիտեն և չեն էլ խօսում:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Եթէ կարելի լինէր հօր ուշագրութիւնը դրուել և նրան մի քանի նշան անել: Նա զլուխը սեր կողմը դարձրեց: Չէ՛ք կամենայ արդեօք, որ ես ծեծեմ լուսամուաներից մէկը. վերջապէս պէտք է, որ նրանցից մէկն ու մէկը միանեցից աւելի վաղ խմանայ...

ԾԵՐՈՒՆԻՆ. Ես չը դիտեմ որին բնորել... պէտք է մեծ զգոյս թիւններ ձեռք առնել... հայրը ծեր է և հիւանդոտ... մայրը նոյնպէս. քոյրերը շատ ջահիլ են... և ամենքը նրան այնպէս էին սիրում, ինչպէս էլ ոչ որ չի կարող սիրել: Այս անից աւելի երջանիկ սուն եւ երբէք չէի տեսել: Ո՛չ, ո՛չ, մի մօտենար լուսամուտին. սա ամենից աւելի ծանր կը լինէր... աւելի լաւ է յայտնել ամենապարզ ձևով, որպէս թէ սա լինէր մի սովորական երեայթ, պէտք չէ սխտաբ երեայ, թէ չէ նրանց ցաւը ձերից կ'անցնի և էլ չափ չի ունենայ... զնանք պարտիզի միւս կողմը: Մենք կը ծեծենք դուռը և ներս կը մտնենք այնպէս, որ սուս ոչինչ պատահած չը լինէր. նախ եւ կը մտնեմ, նրանք չեն դարմանայ, որովհետեւ երբեմն երեկոները եւ ծաղիկներ և պառուհներ եմ բերում և անց եմ կացնում նրանց հետ մի քանի ժամ:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ի՞նչ հարկայւոր է որ ես ձեզ ուղեկցեմ: Գնացէք մենակ. ես կը սպասեմ, մինչև ինձ կ'անչեն... նրանք ինձ երբէք չեն տեսել... Ես մի անցորդ եմ, մի օտարական...

ԾԵՐՈՒՆԻՆ. Լաւ չէ մենակ լինել: Մի քանի հոգով բերած զժբարդութիւնը աւելի նուազ վճռական և նուազ ծանր է... Ես այդ մասին մտածում էի ճանապարհին... Եթէ եւ մենակ մրտնեմ, պէտք է հէնց սկզբից խօսեմ. նրանք բոլորը կ'իմանան մի քանի խօսքից և եւ ասելու էլ ոչինչ չեմ ունենալ, իսկ եւ վա-

խնամեմ եմ այն լուսթիւնից, որ հետեւում է գծրազգութիւնը
գումող խօսքերին... Այց այն ժամն է, երբ սիրար կտոր կտոր
է լինում... Եթէ մենք միասին մտնենք, և ես՝ օրինակ եր-
կար գէս ու գէն ձղերուց յետոյ ասեմ՝ նրան գտել են այսպէս...
Նա ծփծփում էր գետի վրայ և ձեռներն իրար էին փակում...
ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ձեռներն իրար փակում չէին, թեկերը
կախում էին մարմնի երկարութեամբ:

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Դուք տեսնում էք, մարդ հակառակ իր կամ-
քի խօսում է... Եւ գծրազգութիւնը կորչում է մանրամասնու-
թիւնների մէջ... այսպէս եթէ ես մենակ մտնեմ, հէնց առա-
ջին խօսքերը, ինչքան ես նրանց ճանաչում եմ, ստակայի կը լի-
նեն, և Աստուած գիտէ, թէ ինչ կը պատահի... Բայց եթէ մենք
փոխ առ փոխ խօսենք, նրանք մեզ կը լսեն և չեն էլ մտածի
դոյժի մասին... Մի մտանալ, որ մայրն էլ այնտեղ է և նրա կեան-
քը մազից է կախում... Լաւ կը լինի, որ առաջին աղիքները
փչուեն մի քանի անոցուա խօսքերի վրայ... Մի փոքր խօսակ-
ցութիւն է հարկաւոր գծրազգիների շուրջը, պէտք է որ նրանք
չըճապատուած լինեն: Ամենամանասրբերներն անգամ առանց
խմանալու կրում են զաւի մի մասը, որ այսպիսով բաժանում
է առանց աղմուկի, առանց գժուարութեան, ինչպէս օգր կամ
լոյսը:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ձեր թրջումը զգեստից ջուրը կաթկլծում
է սարսաղատակի վրայ:

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Միմիայն իմ փերտրկուսի՞ վարի մասն է թրջ-
ումը. դուք կարծես թէ մրտում էք: Ձեր կուրծքը ցեխատում
է... Ճանապարհին, ես այդ չեմ նկատել մթութեան պատճառով:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ես ջուրը մտայ մինչև գոտիս:

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Երբ ես հասայ, դուք վազուց էիք արդէն զը-
տել նրան:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Հազիւ մի քանի վայրկեան առաջ, արդէն
օրը տարածում էր և գետափը խաւար: Ես քայլում էի աչքերս
յտնած դեպին, որ սուկի պայծաս էր, քան ճանապարհը, երբ
տեսայ մի տարօրինակ բան եղէգների մի խմբից երկու
քայլ հեռու... Մտանում եմ և տեսնում նրա երկայն վարսերը,
որոնք զլիտի վրայ բարձրացած համարեա աղեղնաձի, պատյա-
պտոյտ էին անում հասանքի հետ...

(Սենեակում երկու աղջիկները զինները դարձնում են գլխի լուսա-
մուտը):

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Տեսաք ինչպէս նրա քոյրերի ուսերի վրայ
երերացին վարսերը:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք զլուխները գէպի մեզ գարձրին...

Նրանք հէնց այնպէս զլուխները դարձրին: Գուցէ ես շատ բարձրը խօսեցի: (Ներու աղջիկները ընդունում են իրանց առաջուայ դիրքը): Ահա, այժմ էլ չեն նայում... Ես մտայ ջուրը մինչև դօսիս և կարողացայ բռնել ձեռքից և առանց դժուարութեան հանեցի օփր... Ես նայալէս զեղեցիկ էր ինչպէս իր քոյրերը...

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Նա թերև աւելի զեղեցիկ լինէր... Չը զիտեմ ինչու ես բոլոր արիւթիւնս կորցրի...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ո՞ր արիւթիւնից էր խօսում դուք: Մենք արինք բոլորը, ինչ մարդ կարող էր անել... Մի ժամից աւելի էր, ինչ նա մեռած էր...

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Նա զիս այս ստաւօս կենդանի էր... Ես նրան հանդիպեցի երբ եկեղեցուց դուրս էր զալիս... Ինձ ասաց, թէ դնում է տեսնելու իր մեծ աստիճանի գետի միւս կողմում, այն գետի, որի մէջ դուք դուրս նրան... Չը դիտէր, թէ ես երբ կը տեսնեմ իրան... Կարծես թէ մի բան էր ուզում ինչպէս ինձանից, բայց չը համարձակուեց և հեռացաւ յանկարծակի. այդ մտախն ես այժմ եմ մտածում... Եւ ես ոչինչ չը նկատեցի... Նա ժպտաց ինձ այնպէս, ինչպէս ժպտում են նրանք, որոնք կամենում են ըսել և կամ որոնք վախենում են, որ չը լինի թէ իրանց հասկանան... Թւում էր թէ նա դժուարութեամբ է յոյս տալով... Աչքերը սարդ չէին և համարեա ինձ չը նայեց...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Գիւղացիներն ինձ ասացին, թէ տեսել են նրան թափառելիս օփերին մինչև երեկոյ... նրանք կարծել են, թէ աղջիկը ծաղիկներ է հաւարում... Կարող է պատահել, որ իր մահը...

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Ո՞վ դիտէ... Եւ առհասարակ մարդս ինչ դիտէ... Նա դուցէ այնպիսիներից էր, որոնք չեն կամենում ոչինչ ասել. իւրաքանչիւր որ ապրել չը զանկանալու շատ հիմունքներ ունի... Մարդու հոգին այնպէս սարդ չէ երևում, ինչպէս ահա այս սենեակը: Բոլոր հոգիներն այնպէս են... Նրանք ասում են միմիայն ամենաստուգական բաներ և մարդ ոչինչ չի հասկանում... Ամիսներով ապրում ես մէկի կողքին, որ էլ այս աշխարհից չէ, և որի հոգին էլ չի կարողանում խոնարհուել. նրան պատասխանում ես առանց այն մտախն մտածելու, և ահա տեսէր, թէ վերջն ինչ է պատահում... Նրանք սնցոյց են, որպէս օփիկներ, և սակայն ահաբան անցքեր են կատարում իրանց հոգիներում... Իրանց ինչ լինելը իրանք էլ չը դիտեն... Այս աղջիկը կարող էր ապրել, ինչպէս ապրում են ուրիշները. մինչև իր մահը նա կարող էր ասել՝ «Պարոն, Տիկին, այս ստաւօս անձրև կը դայ» կամ՝ «Մենք չուսով կը նախաճաշենք, տասն երեք հոգի կը լինինք սեղանին» կամ՝ պտուղները տակաւին

հասած չենք: Ընկած ծաղիկների մասին նրանք խոսում են ժպտալով, բայց արտասոււմ են մթաթխան մէջ... Մինչև իսկ մի հրեշտակ չի կարող տեսնել այն՝ ինչ պէտք է տեսնել, և մարդ բանը գլխի է ընկնում զժբաղցութիւնից յետոյ... Երեկ երեկոյ նա այստեղ էր՝ լամպի ստաջ, ինչպէս իր քոչրերը, բայց դուք չէիք կարող սրանց տեսնել այնպէս, ինչպէս պէտք է տեսնել, եթէ այս բանը պատահած չը լինէր... Ինձ թւում է, թէ ևս սրանց առաջին անդամն ևմ տեսնում... Ստխրական կեանքը հասկանալ կարողանալուց առաջ հարկատք է նրա վրայ մի բան աւելայնել... Նրանք ձեզ մօտ են, ձեր աչքի ստաջ, և դուք նրանց կարողանում էք նկատել միայն այն ժամանակ, երբ մեկնում են յաւիտեան... Եւ սակայն սրբան փոքրիկ է կզել նրա հողինչ խեղճ, միամիտ և անսպառ փոքրիկ հողին, որ տնէր իմ դուռկը, եթէ նա ասել է, ինչ որ սսած պիտի լինէր, եթէ արել է, ինչ պէտք է որ արած լինէր...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Այժմ նրանք ժպտում են սենեակի լուծխան մէջ:

ԾՆԲՈՒՆԻՆ. Ու հանցիտա են... Այս երեկոյ նրան չէին սպասում...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք ժպտում են առանց չարժուելու... Բայց ահա հայրը մի մատը գրեց չրթուներին...

ԾՆԲՈՒՆԻՆ. Նա մատով ցոյց է տայիս մօր կրծքին ննջած երեխային:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Մայրը չի համարձակում աչքերը բարձրացնել, վախենալով խոսվել մանկան քոտր:

ԾՆԲՈՒՆԻՆ. Աղջիկները էլ չեն աչխատում... Տիրում է խորին լուծխան:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանց մետաքսէ թևի կծիկը վար ընկաւ...

ԾՆԲՈՒՆԻՆ. Ամենքը նայում են երեխային:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք չը գիտեն, որ սրբիչներն էլ նրանց են նայում...

ԾՆԲՈՒՆԻՆ. Մեզ էլ են նայում...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք աչքները բարձրացրին...

ԾՆԲՈՒՆԻՆ. Բայց ոչինչ չեն տեսնի:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ի՞նչ երջանիկ են... չը գիտեն թէ ի՞նչ է պատահել...

ԾՆԲՈՒՆԻՆ. Իրանք իրանց լսու պատասպարուած են կարծում... Փակեցին դռները, լուսամուտներն էլ երկաթէ վանդակ ունեն, սնդապրել են հին տան պատերը և կաղնի վայսէ երեք դռների վրա հաստատել սողնակներ... Նրանք նախատեսել են բոլորը, ինչ կարելի է նախատեսել...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Վերջ խիրջոյ պէտք է բանը յայտնել, թէ չէ մի ուրիշը կարող է գալ և յանկարծակի ասել... Գիւղացիներն մի ամբոխ կար այն մարդպիսանում, ուր գտնուում է մեռելը... Եթէ նրանցից մէկը գուռը ձեծի...

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Մարթան և Մարիամը փոքրիկ մեռելի մօտ են: Գիւղացիները ճիւղերից մի սառցարակ պատրաստելու գրնացին, և ես սպասուիրեցի մեծ աղջկաս շտապով գալ մեզ յայտնել, հէնց որ նրանք ճանապարհ կ'ընկնեն: Ապասենք մինչև նրա գալը. նա ինձ կ'ընկերանայ... Մենք չէինք կարող սրանց այսպէս նայել... Ես սկզբում կարծում էի, որ միայն պէտք է գուռը ձեծել, պարզապէս մանկել, մի քանի խօսք գտնել և ասել... Բայց ես նրանց կեանքը լամպի առաջ խիստ երկար տեսայ...

(Ներս է մտնում Մարիամը):

ՄԱՐԻԱՄ. Գալիս են, պապիկ:

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Այդ գնւ ես. նրանք որտեղ են:

ՄԱՐԻԱՄ. Նրանք վերջին ըլուրների աստրոտումն են:

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Լուսթեամը կը գան:

ՄԱՐԻԱՄ. Ես ստացի, որ ցածր ձայնով աղօթեն: Մարթան նրանց ուղեկցում է...

ԾՆԵՐՈՒՆԻՆ Շնա են:

ՄԱՐԻԱՄ. Բոլոր դիւրը բերողների շուրջն է թափուել. ճրագներ էլ էին բերել: Ասացի, որ մարեն...

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Ո՞ր ճանապարհով են գալիս:

ՄԱՐԻԱՄ. Նրանք գալիս են փոքրիկ շախիզներով և յամբարայլ:

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Ժամանակ է...

ՄԱՐԻԱՄ. Գուք յայտնել էք, պապիկ:

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Տեսնում էք, որ սչինչ չենք ասել... Նրանք դեռ նստած են լամպի առաջ... Նայեցէք, զաւակս, նայեցէք, զուք մի բան կը տեսնէք կեանքից...

ՄԱՐԻԱՄ. Օ, Ի՞նչ խաղաղ են... Կարծես թէ ես իրանց երազով եմ տեսնում...

ՕՏԱՐԱԿԱՆ. Զգուշացէք, ես տեսնում եմ, որ երկու քոյրերը ցնցուեցին...

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Նրանք վեր կացան...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Կարծեմ գալիս են դէպի լուսամուտը...

(Երկու քոյրերից մէկը այս վայրկենին մօտենում է առաջին լուսամուտին, միւսը՝ երրորդին և յենելով ձեռները ապակու վրայ՝ երկար նայում են խաւարին):

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Ոչ որ չէ գալիս դէպի միջին լուսամուտը...

ՄԱՐԻԱՄ. Նրանք նայում են... Նրանք տկանջ են գնում...

ԾԵՐՈՒՆԻՆ. Մեծ աղջիկը ժպտում է մի բանի, որ ինքն էլ չէ տեսնում...

ՕՏԱՐԱԿԱՆՆՐ. Իսկ երկրորդի աչքերը լի են երկիւ զով:

ԾԵՐՈՒՆԻՆ. Զգուշացէք, սրովհետեւ ով գիտէ թէ հային մինչև ուր է տարածուում մարդկանց շուքը...

(Երկար լուռութիւն: Մարիամը կաշում է ծերունու կրծքին եւ համբուրում է նրան):

ՄԱՐԻԱՄ. Պապիկ...

ԾԵՐՈՒՆԻՆ. Լաց մի լինիք, գաւանկա... Մեր հերթն էլ կը գայ...

(Լուռութիւն):

ՕՏԱՐԱԿԱՆՆՐ. Նրանք երկար են նայում:

ԾԵՐՈՒՆԻՆ. Խեղճեր... Նրանք կարող են նայել հարիւր հազար տարի ե զարձեալ ոչինչ չեն տեսնի, զիչերը շատ խաւար է... Նրանք նայում են այս կողմը, ե հէնց այստեղից է գալիս գժբաղլութիւնը...

ՕՏԱՐԱԿԱՆՆՐ. Լաւ որ նրանք մեր կողմն են նայում... բայց այս ինչ է առաջանում մարդապետնի կողմից:

ՄԱՐԻԱՄ. Կարձեմ ամբոխն է գալիս... Այնքան հեռու են, որ մարդ հազիւ է ջոկում...

ՕՏԱՐԱԿԱՆՆՐ. Շաւղի անհարթութիւնների վրայ նրանք չարժուում են ալիքաձև... Ահա կրկին յայտնուեցին լուսնի շողերով սղաղուած լեռնադանձիւն...

ՄԱՐԻԱՄ. Օ՛, ինչ շատ են... Քաղաքի աբուարձաններից մարդիկ վազէ վազ հասնում էին, երբ ես եկայ... Ահա նրանք մի մեծ պտոյտ են սնում:

ԾԵՐՈՒՆԻՆ. Ինչ ե լինի, կը գան, ահա ես էլ եմ տեսնում... Նրանք քայլում են մարդաեղախնների վրայ ե այնպէս փոքր են թւում, որ մարդ հազիւ է ջոկում խոտերի մէջ... Կասեա լուսնի շողերի տակ խաղաղսղ երեխաներ լինեն, այս աղջիկները թէ տեսնեն էլ նրանց, զարձեալ բան չեն հասկանայ... Եւ ինչքան ուզում են թող երեաները զարձեն, նրանք այնուամենայնիւ մօտենում են քայլ առ քայլ, ահա երկու ժամ է որ գժբաղլութիւնն աձում է ե նրանք անկարող են այն արդելել: Դժբաղատութիւնը բերողներն էլ նրա բնթաղքը կանդնեցնել չեն կարող, նա աէր է, որին նրանք էլ պարտական են ծառայել... Դժբաղլութիւնն իր նպատակն ունի ե գնում է իր ճանապարհով... նա անխոնջ է ե միայն մի հատիկ իղէալ ունի... Պէտք է նրանք իրանց ոյժերը տան նրան: Տխար ես, բայց գալիս են... Խրղճում են, բայց ե այնպէս պէտք է առաջ բնթանան...

ՄԱՐԻԱՄ. Մեծ աղջիկն էլ չի ժպտում, պապիկ...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք հետանում են լուսամուտներից...

ՄԱՐԻԱՄ. Ահա համբարում են իրանց մօրը...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Մեծ աղջիկը շոյում է երեխայի խոսքու-
ները, իսկ երեխան չի դարձնում...

ՄԱՐԻԱՄ. Օ՛, հայրը ցանկանում է, որ իրան էլ համբու-
րեն...

ՕՏԱՐԱԿԱՆ. Այժմ լուսվում ավերեց ..

ՄԱՐԻԱՄ. Աղջիկները յետ եկան իրանց մօր մօտ...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Եւ հայրը նայում է սրտի ժամացոյցի մեծ
ձօձանակին...

ՄԱՐԻԱՄ. Եւ կարծես թէ աղօթում են առանց հասկանա-
լու իրանց արածը:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Կարծես ականջ են գնում իրանց հոգու
ձայնին...

(Լուսվում):

ՄԱՐԻԱՄ. Պապիկ, նրանց մի լայանեղէք այսօր...

ՆԵՐՏՈՒՆԻՆ. Տեսնում էր, դուք էլ էք կորցնում ձեր
արխաթիւնը... Ես լուս գիտէի, որ պէտք էր նայել: Ես մօտ
ուխտուն երեք տարեկան եմ, և այս առաջին անգամն է, որ
կեանքի պատկերն ինձ աղչեցնում է: Ձր գիտեմ թէ ինչու ըս-
չորն ինչ նրանք անում են, ինձ թուում է այնպէս տարօրինակ,
այնպէս խորհրդաւոր՝ նրանք պարզապէս նստած են և լամպի
առաջ սպասում են, որ զիշերը հասնի, ինչպէս որ մենք կ'ըս-
տաւէինք մեր լամպի առաջ. և սակայն ինձ թւում է, թէ ևս
նրանց տեսնում եմ մի ուրիշ աշխարհի բարձրաթիւնից,
որովհետեւ գիտեմ մի ճշմարտութիւն, որ նրանք դեռ չը գիտեն...
Ա՛յս է պատճառն արդեօք, դատակներս. ասացէք ինձ, դուք ին-
չու էք դառնաւ. կոյ մի՞թէ մի ուրիշ բան որ մարդ անկարող է
ասել, և որ մեզ լացացնում է: Ես մինչև այժմ չը գիտէի, թէ
կեանքի մէջ կայ այնպիսի մի տեսք բան, որ վախեցնում է գի-
տաղներին... Եթէ ոչինչ էլ պատահած չը լինէր, ես կը վախե-
նայի սրանց տեսնել այնպէս հանդիստ... Նրանք շատ մեծ հա-
ւատ ունեն այս աշխարհի վրայ... Նրանք այնտեղ են, թէ՛նա-
մուց բաժանուած այս ողորմելի լուսամուտներով... Կարծում
են, թէ ոչինչ չի պատահի, որովհետեւ փակել են դուռը,
բայց չը գիտեն, որ այնուամենայնիւ հողիներին միշտ մի բան հաս-
նում է, և որ աշխարհը չի վերջանում տների գոների առաջ...
Նրանք այնպէս ապահով են իրանց փոքրիկ կեանքի համար, և
չեն էլ կասկածում, թէ այնքան ուրիշներ այդ կեանքի մասին
տեսլին գիտեն, և որ ես սղորմելի ձերտ կա, երկու քայլ նրանց
գոնից հեռու, պահում եմ նրանց ամբողջ փոքրիկ բաղաւորու-

Թիւնը իմ պատաւ ձեռներն մէջ, որ ես չեմ համարձակուում բացել...

ՄԱՐԻԱՄ. Գիտցէք, պապիկ...

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Մենք խղճում ենք նրանց, զաւակս, բայց մեզ չեն խղճում...

ՄԱՐԻԱՄ. Վաղը յայտնեցէք, պապիկ, երբ որ լոյս կը լինի, և նրանք այնպէս տխուր չեն լինի...

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Դուք դուրսէ իրաւունք ունիք... Ասելի լաւ կը լինէր այս ամենը թողնել զիջերուայ մէջ: Եւ լոյսն էլ մեզ մայնում է ցաւը... Բայց ինչ կ'ստեն մեզ նրանք վաղը: Դրժ-բազում թիւնը սովորաբար դարձնում է նախանձառ. բազմի հարսածին ենթարկուողները ուղում են տեղիակ լինել օտարներին առաջ: Նրանք չեն սիրում մնալ անտրտէութեան ձեռներն մէջ... Մենք այդ զէպրում կը նմանէինք մի բան զողացող մարդկանց...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ասենք ժամանակ էլ չը կայ, ես լսում եմ արդէն աղօթողների մամուսը...

ՄԱՐԻԱՄ. Նրանք այնտեղ են... անա անցնում են կանաչէ ցանկապատի յետիկ:

(Ներս է մտնում Վարժան):

ՄԱՐԻԱ. Ահա և ես: Ես նրանց առաջնորդեցի մինչև այստեղ և առայի, որ սպասեն ճանապարհի վրայ: (Ղուում են երեխաների աղաղակներ) Ահ, երեխաները զեռ աղաղակում են... ևս նրանց արդիւն էի գալ... բայց այդ փորթիկներն էլ են կամենում տեսնել, իսկ մայրերը նրանց ցանկութիւնը չեն ուղում կատարել... Կ'երթամ սաստելու. բայց ոչ, անա նրանք լռեցին. —ամեն ինչ պատրաստ է: Ես բերել եմ այն փորթիկ մատանին, որ գանուկն նրա վրայ... Ես ինքս մեռելին պապիկների պատգարակի վրայ, նա կարծես քնած է... Լաւ չարչարեցի, մազերը չէին կամենում հնազանդուել. քաղել տուի եղնակներ... ցաւալի է, բայց ուրիշ ծագիկ չը կար... Ի՞նչ էք անում զուր այստեղ: Ինչու նրանց մօտ չէք... (Նա նայում է լուսամուտներին) Չեն լալիս արդեօք... նրանք... զուր չէք յայտնել:

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Մարթն, Մարթն, քո հուր մէջ շատ կեանք կայ, դու չես կարող հասկանալ...

ՄԱՐԻԱ. Ինչու չը պէտք է հասկանամ... (Մի քիչ լուռ թիւնիկի յետոյ և յանդիմանական եղանակով) Դուք չէք կարող այդ սնել, պապիկ...

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Մարթն, դու չը զիտես...

ՄԱՐԻԱ. Ես ինքս կ'երթամ կը յայտնեմ:

ԾՆԵՐՈՒՆԻՆ. Մնա այստեղ, զաւակս և նայիր մի վայրկեան:

ՄԱՐԹԱ. Օ՛ր, ինչ դժբաղդ են նրանք... էլ չեն կարող սպասել:
ԾԵՐՈՒՆԻՆ. Ինչո՞ւ:

ՄԱՐԹԱ. Չը գիտեմ... բայց դա այլ ևս անկարելի է:

ԾԵՐՈՒՆԻՆ. Այստեղ արի, դաւակա...

ՄԱՐԹԱ. Որպիսի համբերութիւն ունեն նրանք:

ԾԵՐՈՒՆԻՆ. Այստեղ արի, դաւակա...

ՄԱՐԹԱ. (Կառնալով) Ո՞ւր էք, պապիկ. ևս այնպէս դժբաղդ
եմ, որ էլ ձեզ չեմ տեսնում... Ես ինքս էլ չը գիտեմ ինչ անել...

ԾԵՐՈՒՆԻՆ. Էլ մի նայիր նրանց, մինչև որ խմանան բո-
ւրբ...

ՄԱՐԹԱ. Ես ուզում եմ ձեզ հետ դնալ այնտեղ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Ո՛չ, Մարթա, մեա այստեղ... նստիր քրոջ
կողքին, այս քարէ հին նստարանի վրայ տան պատի աակ և մի
նայիր... Դու շատ ջանիլ ևս և էլ չես կարող մտաւնալ... Դու
չես կարող խմանալ, թէ ինչ է մի գէմք այն վայրկեանին, երբ
մահը գալիս է անցնելու նրա աչքերով... Գուցէ ազաղակներ
լուեն... Չը դառնաս նայելու... Գուցէ և ոչինչ չի լինի... Մա-
նուանց յետ մի նայիր, եթէ դու ոչինչ չը լես... Մարդ կան-
խառ չի կարող խմանալ ցաւի բնթացքը... սովորաբար մի քանի
խոր հեծկաանքներ, և ահա բոլորը... Ես ինքս էլ չը գիտեմ թէ
ինչ կ'անեմ, երբ այդ հեկեկանքները լես... Այս կեանքից դուրս
է այդ բանը... Գնալուցս առաջ համբուրիր ինձ, դաւակա...

(Աղօթքի մտնողը աստիճանաբար մտնում է. ամբոխի մի մարդ
ձափում է պարտէզ, լուում են վաղողների խուլ ոտնաձայնի և ցած
ձայնով խօսակցութիւն):

ՕՏԱՐԱԿԱՆԸ. (ամբոխին) Մնացէք այստեղ... Մի մտանաք
լուսամտաներին... Ո՞ւր է նա:

ՄԻ ԳԻՒՂԱՅԻ. Ո՞վ:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Միւսները... բերողները...

ԳԻՒՂԱՅԻ. Նրանք գալիս են այն ծառուղիով, որ տանում
է գէպի դուռը: (Ծերունին հեռանում է. Մարթան և Մարիամը նստած
են նստարանի վրայ, մէջքները դէպի լուսամտաները: Ամբոխի մէջ փոք-
րիկ շշուշ):

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Լուութիւն: Մի խօսէք: (Քոյրերից մեծը վեր է
կենում և զնում է քաշելու դրան սողնակը):

ՄԱՐԹԱ. Նա բոց է անում:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ընդհակառակը. փակում է: (լուռիւն)

ՄԱՐԹԱ. Պապս չը մտն:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ոչ... Աղջիկը յետ եկաւ նստելու մօր կող-
քին... միւսները չեն չարժուում, իսկ երեսուն չարունակում է
քնել: (Լուռիւն):

ՄԱՐԹԱ. Քոյրիկ, տուր ինձ քո ձեռքը:

ՄԱՐԻԱՄ. Մարթն: (Նրանք փաթածուում են եւ համբուրում)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նա երևի դուռը ձեռեց... Բարբը միաժամանակ գլուխները բարձրացրին... և նայում են իրար...

ՄԱՐԹԱ. Օ՛, օ, իմ խեղճ քոյրիկ... ես էլ կ'ազդագակեմ...

(Նա խեղզում է իր հեծկլամները քրոջ ուսի վրայ)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Երևի նա նորից ձեռեց դուռը... հայրը նայում է ժամը. նա վերհացաւ:

ՄԱՐԹԱ. Քոյրիկ, քոյրիկ, ես էլ եմ ուզում ներս մտնել... Նրանք էլ չեն կարող մենակ մնալ...

ՄԱՐԻԱՄ. Մարթն, Մարթն: (նա նրան պահում է):

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Հայրը զրան մօտ է... նա քաշում է սոդ-նակը... նա բաց է անում զլուշուժեամբ...

ՄԱՐԹԱ. Օ, դուք չէք տեսնում...

ՕՏԱՐԱԿԱՆ. Ի՞նչը:

ՄԱՐԹԱ. Նրանց, որոնք բերում են...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նա հազիւ մի փոքր բաց է անում դուռը... ես տեսնում եմ կանաչ հարթավայրի միայն մի անկիւնը և շատըրուանը... նա դուռը ձեռքից չի թողնում... նա յետ յետ է քաշում... նա կարծես ասում է՝ «ան, այս գուր էք...» Նա բարձրացնում է բազուկները... և փակում է դուռը խնամքով... Ձեր պապը ներս մտաւ...

(Ամբոխը մտնում է լուսամուտներին. Մարթն և Մարիամը նախ բարձրանում են կիսով չափ, ապա նոյնպէս մտնում են պինդ փաթածուում իրար: Երեւում է ինչպէս ձերուներն առաջանում է դահլիճում: Վեռելի երկու քոյրերը վեր են կենում. մայրը երեսային խնամքով բազկածոռի մէջ նստեցնելուց յետոյ նոյնպէս վեր է կենում, բազկածոռը սենեակի կենտրոնում է այնպէս, որ դրսից երեւում է քնած փոքրիկը, զլուխը մի փոքր թերուած: Մայրը գնում է ձերուներն ընդ առաջ և նրան մեկնում է ձեռքը, բայց իսկոյն յետ է քաշում նախ քան ձերուներն կը կարողանար այն բռնել: Աղջիկներից մէկը կամենում է վերցնել այցելուի վերաբրուան, և միւսը նրան դէմ է անում մի բազկածոռ: Բայց ձերուներն անում է մերժողական մի փոքրիկ չարժում: Հայրը ժպտում է զարմացած դիրքով: Ձերուներն նայում է դէպի լուսամուտները:)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նա չի համարձակուում ասել... Նա մեզ նայեց:
(Ամբոխի մէջ շշուկ):

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Լռեցէք...

(Ձերուներն լուսամուտի դէմքերը տեսնելով շտապով աչքերը դարձնում է. որովհետեւ աղջիկներից մէկը նրան շարունակ դէմ է անում նոյն բազկածոռը, նա վերջ ի վերջոյ նստում է, և աջ ձեռքը մի քանի անգամ սահեցնում է նակատի վրայով):

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նստեց...

(Գահլիճում դռնուող միւսանձինք նոյնպէս նստում են, մինչդեռ հայրը խօսում է ծերունու հետ հանդակատար եղանակով: Վերջապէս ծերունին բաց է անում բերանը, եւ իր ծայնի հնչիւնները ասես ուշադրութիւն են գրաւում: Բայց հայրը նրան ընդհատում է. ծերունին վերսկսում է եւ փոքր առ փոքր միւսները անշարժանում են: Յամկարձ մայրը ցընցւում է եւ վեր կենում:)

ՄԱՐԹԱ. Օ՛, մայրը հիմազ կը հասկանայ...

(Մայրը դռնում է եւ ծածկում է երեսը ձեռներով. նոր շշուկ ամբոխի մէջ իրար հրհրում են: Երեխաները ճշում են, որ նրանց էլ բարձրացնեն տեսնելու համար: Մայրերի մեծամասնութիւնը հնազանդում է:)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Լռութիւն... նա դեռ չի յայտնել...

(Երեւում է ինչպէս մայրը յուզմունքով հարցեր է տալիս ծերունուն, վերջինս էլի մի բանի խօսքեր է ասում, յետոյ յանկարծ բոլոր միւսները վեր են կենում եւ կարծես հարցեր են տալիս, այն ժամանակ նա ղխով հաստատութեան մի լայն նշան է անում:)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ասաց... նա ասաց բոլորը միանգամից:

ԱՄԲՈՒՅԻ ՄԷՋ ՄԻ ՉԱՅՆ. Յայտնեց, յայտնեց:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ոչինչ չի լսում:

(Երեւունին նոյնպէս վեր է կենում եւ առանց յետ դառնալու մատով ցոյց է տալիս յետեւի դուռը: Մայրը, հայրը եւ երկու աղջիկները նետւում են դէպի այն դուռը, որ հայրը չի կարողանում խօսյն բանալ: Ծերունին աշխատում է մօրն արգելել դուրս գալ:)

ՄԻ ՉԱՅՆ ԱՄԲՈՒՅԻ ՄԷՋ. Դուրս են գալիս, դուրս են գալիս...

(Իրարանցումն պարտիզում. ամենքը նետւում են տան միւս կողմը եւ անյայտանում են բացի Օտարականից, որ մնում է լուսամուտների առաջ: Գահլիճում դրան երկու փեղկերը բացւում են վերջապէս, եւ բոլորը դուրս են թափւում միաժամանակ: Երեւում է աստղազարդ երկինքը, կանաչ հարթութիւնը եւ շատրուանը լուսնի լոյսի տակ, մինչդեռ սենեակի կենտրոնում մնացած երկխան շարունակում է հանդարտ ընել թափաթուղի մէջ: Լռութիւն:)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Երեխան չը գարթնեց:

(Նա էլ է դուրս գալիս:)

Թարգմ. Քրանտ. Ա. Ա.

* *
* *

Ես գիտե՛մ, գիտեմ, որ կեանքիս շէմբից
Խոր աստապանքն է ինձ բաժին ընկել:
Եւ թէ ասանց վիշտ, ե՛ թոյն, ե՛ թախիժ
Սնկարելի է անհունը գրկել:

Թո՛ղ վիշտս լինի անեղբ ու յաւերժ,
Ես չեմ երկնչում դժխեմ տանջանքից:
Միայն թէ մնայ հաւաստս անկեղծ
Թէ գէպի միաբը եւ թէ գէպի ինձ:

Եւ առագաստներս ես ըն՛ի կը բանամ
Կը լսզամ վերե՛ հոտանքին ընդգէմ:
Այրուած հոգացս նոր խօսքեր կը տամ,
Ինչպէս բխրեցներ, մարնո՛ր ու վրսեմ՛..

Ա. ԻՍՍ.ՀԱԿԵԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ԿԱԶՄԸ

«Ձե՛ս տարուց ի վեր Գերմանիան ս'չ
մի քայլ առաջագիւնութիւն չէ արել
քաղաքական ասպարիզում»:

Բ է Ե Ը

(Հրայրատակական նորագոյն մի ձառից)

«Գիտօթէն չէ՛, այլ Բիսմարկն է, որ
զեկովարում է ներկայումս մեր հա-
սարակական կեանքը»:

Պրօփ. Պաուլսէն: *)

Դեռ ամբողջ հինգ դար Ք. Մ. առաջ Հերակլիտէսը ուսու-
ցանում էր, որ ամեն ինչ շարժւում ու հոսում է, չը կայ ոչինչ
մնայուն: Տիեզերքը, ասում էր նա, ամբողջովին գտնւում է
անընդհատ փոփոխման մէջ, մի կերպը փոխարինում է միւսին.
ամեն ինչ զեզերում է կեանքի ու մահուան սահմանի մէջ, մէ-
կի մահը միւսի համար կեանք է... Յոյն փիլիսոփայի արտայայ-
տած այս խորունկ միտքը միայն 19-րդ դարում ստացաւ զի-
տական կերպարանք էվօլյուսիօնի թէօրիայի մէջ:

էվօլյուսիօնի թէօրիան պատկանում է մտքզկային մտքի
հզօր նուաճումների կարգին. նրա կատարած գիտական աշխար-
հակալութիւնները անթիւ են, իսկ կատարելիների վերջը ան-
հընարին է նախատեսել...

Ամեն մի բնական թէ սոցիալական երևոյթ, որ մի անդամ
դոյութիւն է առնում, մտնում է մշտական փոփոխման ու զար-
գացման հոսանքի մէջ: Մի կերպը փոխարինում է միւսին, հէնց
որ նրա սլայմանաւորող հանգամանքները տեղի են ապրիս ուրիշ

*) Der Höhere Lehrerstand... von Prof. Friedrich Paulsen. 197
Յունուար, 1903.

նոր պայմանների: Կեանքի այս արտաքին կերպարանափոխութիւնը զրաւել է թէ անդրապատմական պարզամիտ մարդու և թէ ներկայ փարթամ կուլտուրայից երես առած մեր ժամանակակիցների խոր ուշագրութիւնը: Նա է հէնց, որ առիթ է տուել մօրալիստներին համեմատել կեանքը բեմի, իսկ մարդկանց՝ դերասանների հետ: Եթէ հետևելու լինենք այս համեմատութեան, պէտք է ասենք, որ մարդիկ չեն միայն, որ կատարելով իւրեանց դերը՝ հեռանում են կեանքի բեմից տեղի տալով միւսներին. նոյնը մենք նկատում ենք—մասնաւորում ենք մեր խօսքը—նաև քաղաքական-սոցիալական ասպարիզում:

Դիտեցէք, օրինակ, այնպիսի հիմնարկութիւններ, ինչպէս են պետութիւնը, ընտանիքը, սեպհականատիրութիւնը: Այսօր մենք կարող ենք պատմական անդրդուելի փաստերով ապացուցանել, որ կար ժամանակ, երբ մարդկութիւնը նոյնիսկ գաղսփար չ'ունէր, թէ ինչ ասել է սեպհականատիրութիւն, ընտանիք, պետութիւն: Իւրաքանչիւրը այդ հիմնարկութիւններից ունեցել է իր երկարատև, տասնեակ դարեր տեած պատմութիւնը և ամեն մի պատմական շրջանում նա ունեցել է առանձին նշանակութիւն, կրել է բոլորովին տարբեր կերպարանք: Մարդկութեան ընդհանուր կուլտուրական յառաջագիմութեան հետ զարգացել ու կերպարանափոխուել են և՛ այդ հիմնարկութիւնները, մինչև որ հասել են ժամանակակից դրութեան ու կազմակերպութեան... Հետաքրքիր է նաև այն, որ պատմական էվոլյուսիօնի ամեն մի շրջանում գտնուել են որոշ խումբ մարդիկ, որոնք պնդել և ուսուցել են, թէ այդ հիմնարկութիւնները սրբազան են, որովհետև հաստատուած են «ի վերուստ» աշխարհի սկզբից ի վեր, իսկ այն, ինչ աստուածների ստեղծագործութեան է պատկանում, կատարեալ է ամեն կողմից, հետևաբար և անփոփոխ ու մշտնջենաւոր... Թէև եթէ դրանք իրանց հայեացքը ձգէին արևելք թէ արևմուտք, հիւսիս թէ հարաւ, կը տեսնէին, որ կեանքը իր անողոր ընթացքով ամեն ակնթարթում հերքում է անշարժութեան այդ ժանտ փարդապետութիւնը:

Եւրոպայի ժամանակակից ազգերի սամանադրական կարգերը կազմում են պետութեան քաղաքական էվոլյուսիօնի վերջին աստիճանը:

Անգլիան հանդիսանում է քաղաքական կազմակերպութեան զարգացման կրասիկական երկիրը. նա առաջինն էր, որ ստեղծեց ու մշակեց պարլամենտարիզմը: Բայց այսօր, եթէ աչքի անցնելու լինենք նոյն Անգլիայի քաղաքական կեանքի ընթացքը, մենք դիւրին կը համոզուենք, որ պարլամենտական կարգերին սպառնում է լուրջ վտանգ: Ներկայ սահմանադրական

կազմը այլևս բաւարարութիւն չէ տալիս ոչ բուն ժողովրդի պահանջներին, ոչ բարձր ունեւոր զասակարգերի շահադիտական ձգտումներին: «Իմպերիալիզմը» և բանուորների հետզհետէ աճող ձգտումը՝ ձեռք բերել քաղաքական իշխանութիւն՝ կազմում են երկու ծայրայեղ հոսանքներ, որոնց ընդհարումը սնխուսափելի է: Այս հոսանքների կողմի մէջ պէտք է վճռուի ժամանակակից պարլամենտարիզմի «լինել, թէ չը լինելը»:

Սակայն Անգլիան չէ միակը, որ այսօր յղի է նոր քաղաքական կարգերով. ամբողջ եւրոպական ցամաքը, կօնտինենտը, գտնուում է նոյն փոխանցական շրջանում, բայց այն զանազանութեամբ, որ կօնտինենտը աւելի վատթար պայմանների մէջ է, քան Անգլիան:

«Պարլամենտարիզմի անկումը առնուազն ցամաքային Եւրոպայի համար—ասում է հռչակաւոր պատմագէտ պրօֆ. Լամպրելտը—երկու տասնեակ տարիներից ի վեր մի բացայայտ իրողութիւն է, բայց նա գոյութիւն ունի նաև Անգլիայում... Պարլամենտների անկումը ինչպէս Եւրոպայի ցամաքի վրայ, այնպէս և Անգլիայում սկսուել է իրօք շատ առաջ, քան հասարակութեանը այդ նկատելի է. ինչ վերաբերում է գերմանական ու աւստրիական կեանքին, կարելի է համարեա պնդել, որ նա սկսուեց հէնց պարլամենտարիզմի յաղթութեան մօմէնտից» *):

Եւ արգարև, Գերմանիայի սահմանադրութիւնը իր ծնած օրից կազում է ոչ միայն շնորհիւ նոր տնտեսական ու սոցիալական պահանջների, որոնք ընդհանուր են ամբողջ Արևմտեան Եւրոպայի համար, այլև շնորհիւ միայն Գերմանիային յատուկ քաղաքական պայմանների:

Մենք մեր անցեալ յօդուածում***) արդէն մատնանիչ ենք արել, որ Գերմանիայում պարլամենտարիզմ առած բանը համարեան գոյութիւն չ'ունի: Ծիշտ է՝ Գերմանիան սահմանադրական միապետութիւն է, բայց մինչևև միապետական սկզբունքը ամբողջութեամբ ու լրիւ թէ de jure և թէ de facto պահպանուած է, սահմանադրական կարգերի միայն ստուերն է նշմարւում... Ռայխստագն է այն միակ օրդանը, որ գեւես յիշեցնում է սահմանադրութեան գոյութեան մասին Գերմանիայում... Իսկ ինչ է ներկայացնում այսօր Ռայխստագը:

«Նա—ասում է Բերլինի համալսարանի ակաճաւոր պրօֆ.

*) Զեռքի տակ չ'ունենալով «Neue freie Presse»-ն, ուր պրօֆ. Լամպրելտը գետեղել է իւր յօդուածը, մենք օգտոււմ ենք պատուր նաուամանի արած քաղուածքներից. տես «Die Zeit» № 42.

**) Տես «Մուրճ» 1902 թ. № 10.

Դէլբրիւկը—չինովնիկները ու խեղկատակները մի ժողովասելի է: Եւ եթէ այսօր նա ունի մեկ մօտ որեէ նշանակութիւն, մենք կարող ենք անուանել՝ ամեն տեսակ աղտեղութիւնների փողօրակ»... ^{*)}

Արդ, ինչո՞ւ և ի՞նչ պիտի պայմանների չնորհիւ է Ռայխստագը հասել ներկայ թշուառ վիճակին, մի դրութեան՝ որ ամեն կողմից անվայել է ժողովրդական ներկայացուցչութեան օրդանին:

Այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է մի հայեացք ձգել Գերմանիայի պետական կազմակերպութեան ու նրա ներքին քաղաքականութեան ժամանակակից ուղղութեան և ընթացքի վրայ:

Երբ 60-ական թւականներին գերմանական ազգային միութեան զաղափարը այնչափ հասունացել էր, որ պահանջում էր պատմականօրէն իր իրականացումը, իշխան Բիսմարկը ներկայացրեց Գերմանիայի միութեան մի օրինագիծ, որ յետոյ, 1870/71 թթ. դարձաւ պետական դաշնագրութեան ընդհանուր սահմանադրութիւնը: Հզօր կանցլէրը այդ օրինագիծը կազմելիս մի դժուար լուծելի այտերնատիւի առաջ էր կանգնած: Մի կողմից նա պաշտպանում էր Պրուսիայի գերիշխանութիւնը ազգայ միութեան մէջ ընդդէմ Աւստրիայի, միւս կողմից զիտակից լինելով գերմանական փոքր տէրութիւնների վառ ատելութեան դէպի Պրուսիան, վախենում էր սրանց ապագայ սեպարատ ձգտումներից... Բիսմարկը զգում էր, որ անհրաժեշտ է ձեռք առնել զօրեղ միջոցներ կանխելու պարտիկուլիարիզմը:

Բայց ի՞նչ միջոց կար: Իրօք տաղանդաւոր պետական դործչին արժանի հեռատեսութեամբ Բիսմարկը ըմբռնեց, որ միակ ելքն է՝ կառավարութիւնների հակապրուսսական, ապա եւ հակապետական հակումների դէմ դնել նրանց ժողովուրդների սերտ կապակցութիւնը քաղաքական ինքնավարական ասպարիզում: Որպիսի ծանր լուծում. դա պատմութիւնն էր հեգնում «երկաթէ» կանցլէրին...

Լինելով իր ամբողջ էութեամբ ծայրայեղ միապետական, առող ու հալածող ժողովրդի ամեն ինքնավար պահանջների և վերջապէս, արհամարհող հասարակական կարծիքի, —նա հարկադրուած էր պատմական այդ նշանաւոր մօմէնտին մի խոշոր կօմպրօմիսս անելու: Եւ ահա որպէս անմիջական արդիւնք այդ ստիպողական հանդամանքների, պետութեան սահմանադրութեան մէջ սպրդում է ընդհանուր և ուղղակի ընտրողական ի-

**) 88 «Die Zeit» № 42.

բաւուներք «վասնգաւոր» սկզբուներք. իսկ այդ հիման վրայ ծնունդ է աւնում Ռայխստագը, ըստ իր էութեան զուտ ժողովրդական մի հիմնարկութիւն: Բայց Բիսմարկը յոյս ունէր, որ կարելի կը լինի ընտրողական իրաւունքով օգտուել յօգուտ կառավարութեան շահերի: Միթէ՞ այդպէս չէ եղև ամբողջ կէս դարի ընթացքում համայն միապետական Եւրոպայում՝ սկսած Նապօլէօն առաջինից: Անցեալը վկայում է, որ կարելի է նոյնիսկ ընտրողական իրաւունքի վրայ հիմնուած քաղաքական օրգանները գարծնել բռնակալութեան գործիք, — հարկաւոր է միայն ամեն կերպ աշխատել կանխելու նրա կորստաբեր հետեանքները... Եւ «մեծ» կանցլէրը իրօք չը զլացաւ ձեռք առնել այդպիսի միջոցներ ամենայն առատութեամբ: Նա ամենից առաջ, սահմանափակեց ընտրողական իրաւունքը, մտցնելով ընդհանուր, սեղ-դակի ու դաղանի, բայց ոչ հաւասար իրաւունք և ապա բաժանելով ընտրողական շրջանները այնպէս, որ ժողովրդի ստոր խաւերը հնարաւորութիւն չ'ունենան մեծամասնութիւն կազմել ընտրութիւնների ժամանակ: Այսչափը, թւում էր, բաւական է պահպանելու ունեւոր դասակարգերի գերիշխանութիւնը և վասկելու Ռայխստագի զօները արմատական տարրերի առաջ *):

Յետոյ: Ամեն մի սահմանադրութեան էական պահանջներից մէկն է՝ վարձատրել ժողովրդական ներկայացուցիչներին (Diäten), որոնք իրանց ժամանակի ու աշխատանքի մեծ մասը նուիրում են պետութեան: Յայտնի փաստ է, որ հասարակութեան միջին դասակարգերից են տիրապէս զուրս գալիս ընդունակ քաղաքական գործիչներ, իսկ այդ դասակարգի մարդիկ ընդհանուր առմամբ նիւթապէս անապահով են լինում, հետեաբար և կարօտ պետութեան աջակցութեան: Վարձատրութիւնը (Diäten) հնարաւորութիւն է աալիս ժողովրդին ընտրել ներկայացուցիչ անապահով, բայց ընդունակ ու բարեխիղճ մարդ: Սակայն Բիսմարկը շատ լաւ գիտէր, որ հէնց անապահովներն են լինում արմատական ձգտումներով ու հայեացքներով օժտուած, հետեաբար նպաստել դրանց ընտրութեանը, ասել է ստեղծել սամկալարական ժողովրդական ներկայացուցչութիւն... Երկաթ է կանցլէրը, պարզ է, չէր կարող թոյլ տալ այդպիսի մի բան, և նա զուրս ձղեց պետական սահմանադրութիւնից Դիե-

*) Մեր յետագայ յօդուածներից մէկում, որ նուիրած կը լինի Գերմանիայի սոցիալական կեանքին, կը տեսնենք, թէ ինչպէս յուսախաբուեց մեծ կանցլէրը այս դէպքում...

տայի սկզբունքը *): Սակայն այդքանն էլ բաւական չը թւայ Բիսմարկին. Ռայխստագը շարունակում էր դեռ երեալ նրան Փրանսիական «Վօնվէնտի» պատկերով... Եւ անոն որպէսզի ամեն չար պատահականութեան առաջն առնի, կանցլէրը նախ սահմանափակում է Ռայխստագի ֆունկցիաները, իրաւասութեան շրջանը և ապա ստեղծում է Ռայխստագին հակադէպ թագաքական մի ուրիշ բարձր օրգան Bundesrath անունով, որ զուտ արիստոկրատիկ ու միապետական հիմնարկութիւն է: Ռայխստագը հրաւիրւում է ամեն տարի (ունի երկու սեսիա) պետական բիւջէն ու կառավարութեան առաջարկած օրինագրքերը քննութեան առնելու: Նա կարող է միայն ընդունել կամ մերժել օրինագրքերը, այսինքն նրան վերապահուած է սոսկ քաջասական իրաւունք, բայց նա չունի իշխանութիւն կամ որեէ միջոց ազդելու կառավարութեան վրայ, չը կայ պատասխանատու նախարարութեան, չունի հաւասարմութեան քուէի իրաւունք, որովհետև նախարարութիւնը նշանակում է ինքը կայսրը: Ճիշտ է՝ Ռայխստագը ունի օրէնսդրութեան մէջ նախաձեռնութեան իրաւունք, այսինքն նա կարող է առաջարկել նոր օրինագրքեր, սակայն այդ իրաւունքը լոկ անուանական նշանակութիւն ունի, որովհետև վիշին խօսքը պատկանում է Bundesrath-ին ու կայսեր:

Ինչ վերաբերում է «Պետական գաշնագրութեան խորհրդարանին» (Bundesrath), բաւական է ասել, որ նա հանդիսանում է 25 ինքնուրոյն տէրութիւնների և կառավարութիւնների լիազօր ներկայացուցիչների ժողովը: Չայններ բաժանուած են այսպէս. Պրուսիան ունի 17 ձայն, Բաւարիան՝ 6, Սաքսօնիան՝ 4, Վլրբաեմբերգը՝ 4, Բադենը՝ 3, Հեսսենը՝ 3, մնացեալ 19 մասերը ունեն իւրաքանչիւրը մի կամ երկու ձայն. ընդամենը 58 ձայն **): Նախադահում է կայսրը կամ պետական կանցլէրը: Լիազօրների այս խորհրդարանը կազմում է պետական բարձրագոյն օրէնսդրական օրգանը: Ամեն մի օրինագիծ միայն այն դէպքում է օրէնքի ոյժ ստանում, երբ խորհրդարանը, Ռայխստագի քննութիւնից յետոյ, տալիս է իր հաւանութիւնը: Այս իրաւունքի շնորհիւ Bundesrath-ը ոչ միայն հակադէպում, այլ

*) Գիետայի սկզբունքը ունի ուրիշ լուրջ դրական կողմեր, սակայն այստեղ մենք անկարող ենք կանգ առնել դրանց վրայ: Յիշենք, որ զիետա նշանակելու հարցը այսօր կազմում է օրուայ շարիքը: Գուսակցութիւններից ոչ միայն սօցիալ-դեմօկրատները, այլև Centrum-ը, նացիօնալ-լիբերալները և նոյնիսկ պահպանողականների մի մասը զիետայի կողմնակից են, սակայն կառավարութիւնը, ինչպէս եղել է և՛ անցեալում, հակառակ է:

**) Տես Max Schippel—«Reichstags-Handbuch». 1902, երես 324.

նոյնիսկ կասեցնում է Ռայխստագի ներդրածական նշանակու-
թիւնը պետական մեքենայի գործունէութեան մէջ...

Բայց այս հաւաքական մարմիններից Գերմանիայի սահ-
մանազրութիւնը ճանաչում է մի երրորդ օրգանն էս, այն է՝
Միութեան պետի՝ կայսեր իշխանութիւնը: Կայսրը, որ միևնոյն
ժամանակ Պրուսիայի վեհագեան է (König), նախագահելով
Bundesrath-ում՝ իր ստորագրութեամբ վաւերացնում է պե-
տական օրէնքները, սակայն նրան de jure վերապահուած չէ
արտօլիւտ veto-ի իրաւունք. նա չէ կարող մերժել միաժամա-
նակ Ռայխստագի ու Bundesrath-ի կողմից հաւանութիւն գը-
տած օրէնքները: Բայց պէտք է նկատել, որ սահմանազրու-
թեան այս սրուշումը—ինչպէս և մի քանի ուրիշները—լոկ տե-
սական նշանակութիւն ունի: De facto կայսեր ազդեցութիւնը
«Միութեան խորհրդարանի», հետեւեալ և ամբողջ պետական
օրէնագրութեան վրայ, խիստ զօրեղ է: Այս հանդամանքը բա-
ցատրւում է այն պարզ նկատումով, որ Bundesrath-ը բուն
բիւրօկրատիկ օրգան է, ենթակայ կառավարութիւններին և ա-
մենից առաջ Պրուսիայի կառավարութեան:

Արտաքին քաղաքականութիւնն ու զինուորական գործե-
րը վարում է ինքը կայսրը. նրա ձեռքին է կենդրոնացած՝ որ-
պէս «Միութեան զօրքի» հրամանատարի՝ պետութեան ամբողջ
նիւթական—ծովային թէ ցամաքային—ոյժը:

Կայսեր ներկայացուցիչն է «պետական կանցլէրը» (Reichs
Kanzler), նախարարութեան առաջին մինիստրը. ինքը կայսրն
է նրան նշանակում կամ հեռացնում պաշտօնից ըստ իր ազատ
հայեցողութեան: Կայսեր բոլոր կարգազրութիւններն ու հրա-
մանները de jure ստորագրում է կանցլէրը և այդպիսով ստանձ-
նում է միակ պատասխանատուութիւնը, որը, սակայն, լոկ բա-
րոյական է, զուրկ որեւէ իրաւաբանական ստիպողական նշա-
նակութիւնից: De facto Վիլհէլմ II-ը—ինչպէս մենք յետոյ կը
տեսնենք—ստէպ գործում է առանց կանցլէրի զիտութեան...
Կայսեր է պատկանում նաև Ռայխստագի հրաւիրելու ու ար-
ձակելու իրաւունքը:

Գերմանիայի պետական սահմանազրութեան երկը գլխա-
ւոր օրգանների իրաւասութեան այս համառօտ նկարագրից
արդէն պարզ կրեւում է, որ պետական կեանքի մէջ ի-
րական, գերիշխող դերը վերապահուած է Պրուսիայի միա-
պետին. Ռայխստագը և Bundesrath-ը կատարում են մի-
այն երկրորդական դեր, ունեն լոկ պաշտօնատար նշանակու-
թիւն: Բիւսմարկը տալով Գերմանիային այս կազմակերպութիւ-
նը, հասաւ միաժամանակ իր երկու գլխաւոր նպատակներին.

նախ, ապահովեց Պրուսիայի գերիշխանութիւնը միւս փոքր պետութիւնների առաջ և ապա ձեռք բերեց ի դէմս Bundesrath-ի հաստատուն միջոց մաքառելու Ռայխստագի գեմօկրատիկ ժողովրդական պահանջների դէմ...

Գերմանիայի քաղաքական կարգերի նոյնիսկ այս ընդհանուր համառօտ ակնարկը կը մնայ թերի ու անկատար, եթէ մերկու խօսք չ'ասենք դաշնագիր տէրութիւնների ներքին կալմակերպութեան մասին:

Պետական միութիւնը կազմող 25 դաշնագիր մարմիններից *) իւրաքանչիւրը ունի իր առանձին քաղաքական կազմը, իսկ նրա կապն ու յարաբերութիւնները կայսրութեան հետ (Reich) չափազանց բազմատեսակ են:

Մենք կանգ կ'առնենք միայն վեց մեծ մասերի ներքին կազմակերպութեան վրայ. դրանք են՝ Պրուսիա, Բաւարիա, Սաքսոնիա, Վիւրտեմբերգ, Բադեն ու Հեսսեն: Սրանք ընդունել են երկու ժողովների (կամերի) սիստեմը: Առաջին կամերները իրանց կազմով բուն արիստոկրատիկ հիմնարկութիւններ են. մասնակցում են իշխանական տոհմերի ներկայացուցիչներ, ազնւականներ, հարուստ կալուածատէրեր և այլն: Երկրորդ կամերները կրում են ժողովրդական բնուորութիւն, ժողովուրդն է ընտրում նրանց անդամներին ընտրողական իրաւունքի հիման վրայ:

Ամեն մի տէրութիւն ունի իր ուրոյն ընտրողական իրաւունքը, որ տարբերում է նաև կայսրութեան ընդհանուր ընտրողական իրաւունքից: Երկու կամերները միասին կոչւում են լանդտագ: Ներքին օրէնսդրութիւնը՝ բիւջէի հաստատութիւնը, սուրբերի կարգաւորումը, տէրունական փոխառութիւնները, ընտրողական իրաւունքի փոփոխումը, կրթական գործը և այլն,

*) Դոքա են՝

- | | |
|-------------------------|-------------------------------|
| 1. Պրուսիա. | 14. Սաքսեն-Վորտերգ-Իօթա. |
| 2. Բաւարիա. | 15. Սնհալտ. |
| 3. Սաքսոնիա. | 16. Զվարցբուրգ-Ռոզլախտադտ. |
| 4. Վիւրտեմբերգ. | 17. Զվարցբուրգ-Սօնդերհաուզեն. |
| 5. Բադեն. | 18. Վալդեկ. |
| 6. Հեսսեն. | 19. Ռօյսս I. |
| 7. Մեկլենբուրգ-Չվերին. | 20. Ռօյսս II. |
| 8. Սաքսեն-Վայմար. | 21. Զաուբուրգ-Լիպպէ. |
| 9. Մեկլենբուրգ-Չտրելից. | 22. Լիպպէ. |
| 10. Յիլդերբուրգ. | 23. Լիւքեկ. |
| 11. Բրաունշվայգ. | 24. Բրեմեն. |
| 12. Սաքսեն-Մայնինդեն. | 25. Համբուրգ: |
| 13. Սաքսեն-Ելզենբուրգ. | |

—վարում են կառավարութիւնն ու լանդտագը փոխադարձ հաճախութեամբ:

Աւելի կարեւոր ու հետաքրքրական է մեզ համար այստեղ պարզել փոքրիկ տէրութիւնների զիրքը կայսրութեան դէմ, նրանց յարաբերութիւնների սահմանները: «Սկզբունքով, ասում է յայտնի իրաւագէտ Ղաքանդը *), առանձին տէրութիւններն ունեն այն իրաւունքները, որոնք վերաբերում են ընդհանրապէս ինքնավար մարմիններին, իսկ կայսրութիւնը (Reich) գործադրում է այն իրաւունքները, որոնք վերապահուած են ամեն պետական բարձրագոյն իշխանութեան (Staatsgewalt), այն է՝ որոշել օրէնքների նորմաները ու հսկել նրանց գործադրութեան վրայ: Սակայն իրապէս երկու կողմերն էլ չեղում են այս ընդհանուր սկզբունքից: Այդպէս, կայսրութիւնը բացառապէս վարում է հիւպատոսարանական (Konsulatwesen), գաղութների, ծովային գործերը, ապա և մի մասը ֆրանսիական պրոտային ու հեռագրական և դատաստանական վերջին ատեանին վերաբերեալ գործերի: Առանձին տէրութիւնները վարում են իրանց ներքին կազմակերպութեան գործերը, կարգադրում են դահաժառանգութիւնը, ընտրողական իրաւունքը, նահանգական, գաւառական ու համայնական կազմակերպական ու վարչական գործերը, սահմանում ու ժողովում են տուրքերը, վարում կրթական գործը և այլն: Այս իրաւունքների շրջանում առանձին տէրութիւնները չեն հանդիսանում որպէս կայսրութեան ստորադիր ինքնավար մարմիններ, այլ ընդհակառակը նրանց զիրքը ազատ ու անկախ է, որովհետեւ նրանք ենթարկուած չեն պետութեան ո՛չ օրէնսդրութեան, ո՛չ էլ հսկողութեան»: Յիշենք մի-երկու իրաւունքներ ևս, որոնք որոշ սահմանափակումներով վերապահուած են դաշնագիր տէրութիւններին. գրանք են՝ պահել սեպհական զօրք, փող կտրել (Münzmonopol), և հաստատել արտաքին յարաբերութիւններ օտար պետութիւնների հետ (Gesandtschaftsrecht):

Արդ, եթէ եզրափակելով մեր խօսքը՝ ուղենայինք մի ամփոփ ու ընդհանուր գրութեամբ որոշել դաշնագիր տէրութիւնների զիրքը կայսրութեան մէջ, պէտք է ասէինք, որ բոլոր այն ինչի իրենքում, որոնք չօշակում են ամբողջ կայսրութեան շահերը, վերաբերում են հաւասարապէս պետական Միութեան բոլոր 25 անդամներին, սրանք ստորադիր են կայսրութեան և պարտաւոր են թարկուելու պետական կառավարութեան սահմա-

*) Laband—Das Staatsrecht des deutschen Reiches. 4 հատոր. 1902 թ. տես հատոր I, էր. 96.

նած օրէնքներին: Պետութեան իրաւասութեան այս շրջանից դուրս դաշնադիր տէրութիւնները կատարելապէս ազատ ու անկախ են: Այսպէս է de jure, այսպէս է ըստ սահմանադրութեան, այսպէս են որոշում առանձին տէրութիւնների կայսրութեան հետ կապած դաշնադրութիւնները: Սակայն de facto ուրիշ կերպ է: Եթէ դիտելու լինենք պետական ընթացիկ օրէնսդրութիւնը, առօրեայ քաղաքական կեանքը, գիւրին կը նկատենք, որ կայսրութիւնը, իսկ իրօք Պրուսիան, ձգտում է մի կողմից լայնացնել հետզհետէ իր իրաւասութեան ասպարէզը, միւս կողմից՝ ընդարձակել տէրութիւնների պարտաւորութիւնները: Այսպէս, օրինակ, սրանց համար չափազանց զգալի է աճող միլիտարիզմի լուծը: Միայն կայսեր նոր-նոր պահանջները՝ զօրացնել գերմանական նաւատորմիդ՝ ստիպում են փոքր տէրութիւններին շարունակ բարձրացնել իրանց կայսրութեան զրամարկին տալիք վճարի չափը, իսկ այդ սպառնում է հասցնել նրանց ֆինանսական անակոթեան... Կայսրութեան բիւջէի գէֆիցիտը այսօր հասնում է մօտ 100 միլիօն մարկի: Ո՞վ պէտք է լրացնի այդ պակասորդը, եթէ ոչ մեծ մասամբ դաշնակից տէրութիւնները:

Բայց տնտեսական հարցերը չեն միայն, որ Պրուսիան քաշում է իր յետևից մնացեալ տէրութիւններին: Նա թէ քաղաքական և թէ սոցիալական ասպարիզում ոչ մի առիթ ձեռքից չէ թողնում, ոչ մի ջանք չէ խնայում սահմանափակելու նրանց իրաւասութեան շրջանը, ոչնչացնելու այս կամ այն արտօնութիւնները, մի խօսքով հպատակելու, իր անպայման գերիշխանութեան: Պրուսիայի այս ձգտումները՝ իր մէջ ձուլել Միութեան միւս մասերը, բնականօրէն, հանդիպում են զօրեղ ընդդիմադրութեան, օպպօզիցիայի, նրանց կողմից, թէ կառավարութիւնները և թէ հասարակութիւնը հաւասարապէս ատում են պրուսսակներին: Բաւարացու համար, օրինակ, պրուսսակը նոյնն է, ինչ որ անտիսէմիտի համար հրէան... Այս, թէև յաճախ քողարկուած, բայց և այնպէս անտարակուսելի թշնամական վերաբերմունքի մէջ գեր են խաղում ոչ միայն տնտեսական ու քաղաքական մօտիւնները, այլև փոքրիկ տէրութիւնների պատմական տրագիդիաները, որոնք հիմնուած են թէ ցեղային ուրոյն յատկութիւնների և թէ նրանց իշխանների տոհմային ու ֆէօդալական ձգտումների վրայ:

Այս ամենը առատ նիւթ է մատակարարում դաշնադիր տէրութիւնների առանձնական, պարտիկուլեար ձգտումներին, որոնց ոչնչացնելը իշխան Բիսմարկի «հնարագէտ» սահմանադրութեան նպատակներից մէկն էր: Սեպարատիզմը այսօր ոչ

միայն չէ թուլացել, այլ առաւել ևս զգալի է Գերմանիայի ներքին քաղաքական կեանքում,

Այսպէս, մի կողմից Պրուսիայի գերիշխանական ճգտումները ու դաշնագիր տէրութիւնների պարտիկուլեարիզմը, միւս կողմից սահմանադրական կարգերի (Ռայխստագի) կատարեալ անկումը՝ հանդիսանում են այն զլխաւոր գործօնները, որոնք ներկայումս պայմանաւորում են Գերմանիայի ներքին քաղաքական կեանքի զարգացման ընթացքը: Սակայն կայ մի ուրիշ, երրորդ գործօն, որի ազդեցութեան տակ կայսրութեան քաղաքական կեանքը ընթանում է խիստ լարուած:

Դա քաղաքակիրթ ազգերի սոցիալական զարգացման այն նոր զօրեղ հասանքն է, որ երևան եկաւ 19-րդ դարուայ ընթացքում համայն Եւրոպայում:

Տեխնիկայի կատարեալ յեղափոխութիւնը արդիւնաբերութեան մէջ, հաղորդակցութեան ու տեղափոխութեան միջոցներին հիմնական բարեփոխումը, արդիւնապործութեան կերպերի ու փոխանակութեան նախկին սխտեմի արմատական կերպարանափոխումը, պատերազմական միջոցների ու միջազգային յարաբերութիւնների զարգացումը մի շարք ուրիշ բարենորոգումների ու զիւտերի հետ, որ տեղի ունեցան կեանքի ու զիւտութեան բոլոր ասպարէզներում 19-րդ դարուայ ընթացքում՝ տակնուվրայ արին Եւրոպայի քաղաքակիրթ ազգերի սոցիալական ու քաղաքական յարաբերութիւնները: Ասպարէզ եկաւ նոր՝ չորրորդ հասարակական դասակարգ, պարզ ու որոշ սոցիալական-քաղաքական պահանջներով: Որչափ ազգերի անտեսական զարգացումը ծաւալոււմ ու ընդարձակոււմ էր, այնչափ խստանում, սուր կերպարանք էին առնում դասակարգային յարաբերութիւնները, ինչպէս անտեսական, այնպէս և քաղաքական հողի վրայ: Հասարակութեան այն փոքրամասնութիւնը, որի ձեռքին էր կառավարչական ղէկը, ջանք չէր խնայում պահպանելու իր արտօնեալ դիրքը: Բաւական է մի թեթև հայեացք ձեռքի Եւրոպայի բոլոր ազգերի օրէնսդրութեան վրայ 19-րդ դարուայ ընթացքում, որպէսզի համոզուել, որ իրօք նոցա ամբողջ օրէնսդրական գործունէութիւնը ընթացել է սոսկ յօգուտ անտեսապէս ապահով ու քաղաքականապէս զօրեղ դասակարգերի: Հասարակութեան կարող խաւերի այդ միակողմանի իշխանութիւնը ընտանաբար առաջ պիտի բերէր ժողովուրդների ճնշում ու հարստահարում մասի զօրեղ բողոքը: 1848 թ. այգալիսի մի բողոքի տարի էր համայն Արեւմտեան Եւրոպայում: Դա մանուկ դասակարգի առաջին անգոր աղաղակն էր: Այնուհետև որչափ յառաջ էր ընթանում ազգերի ընդհանուր

կուլտուրական կեանքը, այնչափ որոշ ու պարզ կերպարանք էր առնում սոցիալական հարցը: Դորա հետ միասին փոխում էր և կառավարութիւնների ու բուրժուա դասակարգերի վերաբերմունքը. զրանք անմիտ ու վտանգաւոր էին համարում փակել աչքերը սոցիալական նոր յարաբերութիւնների առաջ: Դրանք հանդէս էին գալիս նոյնիսկ զանազան բարեփոխողական ծրագիրներով, նպատակ ունենալով բարւոքել աշխատաւոր դասակարգերի անսպասելի անտեսական վիճակը, բարձրացնել նրա ընդհանուր կուլտուրական զարգացման մակերեսը *):

Այսպէս սոցիալական հարցը անցաւ քաղաքակիրթ ազգերի սոսորեայ կեանքի «այրող խնդիրները» շարքը և այսօր կազմում է նրանց ներքին ու արտաքին քաղաքականութեան գործից գործօնը:

Գերմանիան իր հսկայական արդիւնաբերական զարգացմամբ առաջին տեղն է բռնում Եւրոպայի ջամաքի վրայ և հէնց զրա շնորհիւ նա հանդիսանում է սոցիալական խնդրի կրասիկական երկիրը: Այստեղ ամենից զիւրին է գիտել սոցիալական յարաբերութիւնների զարգացման ուղին, նրանց ազդեցութիւնը պետական ընդհանուր կեանքի վրայ:

Սակայն ներկայ գրութեան շրջանից զուրս է ծանրանալ այդ կողմերի վրայ. մեր նպատակն էր լսի մասնանիշ անել սոցիալական այն զօրեզ հոսանքի վրայ, որը կանդնած է այսօր Գերմանիայի սահմանադրական կարգերի յետադէմ ընթացքի, Պրուսիայի զերիշխանական ու գաշնադիր տէրութիւնների սեպարատ և ֆէօդալական ձգտումների գէմառդէմ:

Այս իրար հակառակ ընթացող հոսանքների մշտական ընդհարումն է, որ կասեցրել է Գերմանիայի կանոնաւոր քաղաքական զարգացումը: Եթէ աչքի անցնելու լինենք Գերմանիայի վերջին 25 տարուայ պատմութիւնը, մենք զիւրին կը համոզուենք, որ Գերմանիան այդ ժամանակամիջոցում ընթացել է միշտ թոխքներով, սասանուելով ու երերալով զանազան ծայրայեղութիւնների միջև, երբէք ոյժ չէ ունեցել կրակի ու սրի միջից զուրս գալու, իսկ եթէ խօսելու լինենք կայսր Վիլհէլմ II-ի սիրած ծովային բարբառով—պետական նաւի ղեկը միշտ թերուել է աջից ձախ, ձախից աջ... Յիշեցէք ու համեմատեցէք գէթ Բիսմարկի 70-ական թուականներին մզած «կուլտուրկամպֆը» պապականութեան գէմ, և «նոր կուրսի» կղերական ոգին:

*) Յիշենք Գերմանիայի 70-ական թուականների պատմութիւնից գէթ այսպէս կոչուած «կաթեղի սոցիալիստ»-ներին՝ Բերլինի համալսարանի պրօֆ. Վազներին ու պրօֆ. Յոլլերին:

նոյն Բիսմարկի 1878 թ. բռնի օրէնքը սոցիալ-դեմոկրատների ղէմ (Umsturzgesetz), և «նոր կուրսի» 90-ական թւականների սկզբի սոցիալ-քարենորոգչական տենչանքները և նոյն Umsturzgesetz-ի վերացումը, Բիսմարկի լեհացիների ղէմ բարձրացրած հալածանքը ու Կապրիվիի հաշտ ու մեղմ քաղաքականութիւնը և այլն, և այլն:

Սակայն Գերմանիայի ներքին քաղաքականութիւնը երբէք չէ կղել այնչափ անհետևողական, անհաստատ ու երերուն, ինչպէս վերջին 10—12 տարիների ընթացքում, Վիլհելմ II-րդի օրերում, ուստի Պրուսիայի վեհապետի նաև անձնաւորութիւնը իր տեմպերամենտով, հայեացքներով, անկախ ու ինքնուրոյն բնաւորութեամբ մեծ նշանակութիւն ունի Գերմանիայի քաղաքական-սոցիալական կեանքի վրայ. բայց դրա մասին կը խօսենք միւս անգամ:

QUIDAM

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՆԵԿՐԱՍՕՎԻ)

1

Երանի՛ անչար այն բանաստեղծին

*Երանի՛ անչար այն բանաստեղծին,
Ում մտղձն է սակառ, զգացումը — լի.
Ողջագուրճում են նորան սրբազին
Բարեկամները խողազ արուեստի:*

*Ամբոխի միջում նորա սկանջին
Հասնում է անվերջ, շոյիչ համակրանք.
Օտար է նորան կասկածանք ներքին —
Ստեղծագործ սգու այդ խորին տանջանք:*

*Անձնատուր անվոյթ և հանդիստ կեանքին,
Խստաշունչ, հեղնող նա երգն ատելով,
Խոր տիրանում է ամբոխի սրբախն.
Իր խաղաղասէր, շոյիչ քրնարով՝*

*Յովչտակեճում են նորա մեծ խեղբից,
Չունի նա նեղիչ, չունի բամբասող.*

Եւ նորան մարդիկ ժամանակակից
Մահից առաջ են պատրաստում կոթոյ . .

Բայց վնց այն երգչին, որ քաջ, անվեհեր
Հանդէս է հանում ազնիւ հանճարով
Ամբօրի ախտեր ու մնլութիւններ—
Դէպի նա բախան է անդուծ, անգորով:

Կրքճքում սրնուցած սերմն ատելութեան,
Զինուած հեղնանքով, ծաղրը—չբլթունքին,
Նա միշտ անցնում է տատասկոտ ճամբան
Իր պատուհասող քլնարը ձեռքին:

Եւ մասնուած անգուսպ, չար պարսաւանքի,
Նա դբրուասներին ազանջ է դրնում
Ո՛չ անոյշ խօսքում վառքի ու գովքի,
Այլ գոտ ու վայրագ ազազակներում:

Վառ ցընտրքներին իւր վըսեմ կոչման
Եւ հաւատալով, և՛ կասկածելով,
Նա կեանքում սէր է քարոզում մարդկան
Քարոզում ժըխտիչ, հակաճառ լեզուով:

Եւ նորա խօսքի ամեն մի հընչիւն
Ծընում է անհաշա թըշնամիք գաժան՝
Թէ գատարկամիտ, թէ խել, թէ գիտուն—
Ամե՛նքն էլ պատրաստ խաչելու նորան:

Անէ՛ճք են թափում չորս կողմից վերան...
Բայց մարդիկ նորա մահը տեսնելով,
Ի՞նչեր նա արեց— այն ժամ կիմանան,
Եւ ի՛նչպէս սիրեց—նա միշտ ատելով...

2

Օ Ր Հ Ն Ե Ր Գ

Աստուած, տներ ազգիս բարիք ամենայն,
 Օրհնիր ազգային և՛ գործ, և՛ վաստակ,
 Ազգում ազատ կեանք, արդար դատաստան
 Հաստատուն պահիր ամեն ժամանակ:

Որպէսզի ազատ աճեն, զարգանան
 Նորածիլ գործքեր՝ ազգին շահաւոր,
 Սփռիր ազգի մէջ Դու սէր զխօսութեան,
 Յնչ տուր ուսմունքի ուղին լուսաւոր:

Եւ մի թող տանջուիլ մաշիչ լուծի տակ
 Այն ընտրեալներիդ շար կապանքներում,
 Որոնց ձեռք մի օր Դու լուսոյ գրօշակ
 Սիրով պիտի տաս հայրենի երկրում...:

3

Է Լ Ե Պ Ի Ա

(Հատուած)

Թո՛ղ այս ներկայ խախուս մօղան պընդէ միշտ,
 Որ հին նիւթ է «ժողովրդի ցաւն աւ վիշտ»,
 Որ արուեստը պէտք է նորան մնաւնայ.—
 Մի հաւատաք, չէ հընանում երբէք նա:
 Երանի՛ չէ տարիներից նա մաշուէր,
 Աստծոյ աշխարհն այն ժամ զուարթ կը ծագիէր...
 Բայց քանի դեռ ազգեր նեղուած և աստանդ
 Կեանք են վարում՝ խարազանին հընադանդ,

Որպէս նիհար հօտեր խանձուած դաշտերում,—
 Նոցա սև օրն պէտք է ողբալ երգերում,
 Նոցա պէտք է սպասաւորէ միշտ մուղան,
 Եւ այդ դաշն է ամենից վեհ, սրբազան...
 Հասարակաց ցաւն ու կարիքն յիշեցնել
 Ամբոխ դասին, երբ խրախճանքին անձնուէր՝
 Նա անփոյթ է, նա խնդրում է ու երգում
 Շարժել խիղճը հրդօրների չոր կրքով,
 Նոցա ուշքը հանուր վըշտին դարձնելով,—
 Օ՛ր, դորանից էլ մեծարժան, մեծագով
 Ի՞նչ նըպատակ, ի՞նչ կոչում կայ, ընկերներ,
 Որին պօէսն իր քընարով ծառայէր...
 Ես հէզ ազգիս նուիրեցի իմ քընար.
 Գուցէ, մեռնեմ ազգիս անյայտ ու օտար.
 Բայց ես նորան ծառայեցի—և խաղաղ,
 Հանգիստ խըղճով կը ողջունեմ ցուրտ դադաղ:
 Կըռիւ, կըռիւ ազգի համար՝ եռանդուն.
 Թո՛ղ չը յաղթէ ամեն կըռուղ թըշնամուն,
 Թո՛ղ նա ընկնի՛... բայց ամեն մէկն, սիրելիք,
 Պէտք է անշո՛շտ նետուի կըռուի փոթօրիկ...

4

Ա Կ Ա Ն Ջ Դ Ր Ա Ծ

Ականջ դըրած ահեղ մարտի տազնապին,
 Ամեն անգամ, երբ նոր զօհ է նա տանում,
 Ես չեմ ցաւում, թէ զօհն սենի ընկեր, կին,
 Եւ ո՛չ իրան հերօսին եմ մեղքանում...
 Աւանդ, կինը կը սփոփուի իւր ցաւից,
 Եւ մոռացման կը տայ ընկերն ընկերին.
 Բայց կայ մի սիրտ—միշտ բաբախուն, սիրալից,
 Նա մինչև մահ չի մոռանայ խեղճ զօհին:

Յունուար, 1903.

8

Կեզծ ու պատիր մեր առօրեայ դործերում,
Ուր վերջ չը կայ ամեն տեսակ լրկաութեան,
Տեսայ միակ անկեզծ արցունք աշխարհում—
Խեղճ մայրերի այն արցունքն էր սրբազան:
Նոքա երբէք չեն մոռանալ սոջ կեանքում
Իրանց որդոյ՝ ընկած արեան փոթորիւմ,
Ինչպէս երբէք չի ամբառնալ գէպի վեր
Լացող ուռին գետին թեքած իր ոստեր...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ .

ՔՐԱՆՍԱՑԻ ՄԷԿ ՔԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

1896 թւականի սկիզբները Պարիզի մէջ հրապարակ կ'ելլէր նոր օրաթերթ մը *Օնօն* անունով: Պարիզի մէջ թերթեր չուէա կը ծնին, սակայն չուէաով ալ կը մեռնին: Բայց այս նոր լրագիրը, որ կոչուած էր այնքան մեծ դեր մը կատարելու Ֆրանսայի հասարակական կեանքին մէջ, առաջին վայրկեանէն իսկ ուշադրութիւն գրաւեց իր խմբագրական ուժերուն և իր ուղղութեան չնորհիւ:

Թերթին տնօրէնը՝ Էրնէստ Վօզան՝ որ նախկին կօմիւնստի մը հանգամանքին կը միացնէր ճարտար հրապարակախօսի մը ու լրագրական փորձուած վարիչի մը յատկութիւնները, խմբագրական մարմինը կազմած էր հազաւցիւտ յաջողութեամբ: Ժօնօ Կլէմանսօյի՝ Ֆրանսայի արմատական կուսակցութեան նախկին պետին, Ժիւսթիս լրագրի նախկին վարպետ խմբագրին շուրջը հաւաքուած էին փրանսական հրապարակախօսութեան ամենէն առաջադէմ, ամենէն վեհանձն ներկայացուցիչները:

Ի՞նչ էր *Օնօն*ի յայտագիրը: Դժուար պիտի ըլլար այս հարցումին պատասխանել: Նորածին թերթը սահմանափակ յայտագիր չ'ունէր: Բացարձակապէս անկախ՝ *Օնօն*ը բայ էր ամեն ազնիւ ու մարդկային պահանջներու, ամեն գեղեցիկ ու բեղմնաւոր բողոքներու առջին: Իր խմբագիրներուն ու աշխատակիցներուն իւրաքանչիւրը մէջ մէկ յայտագիր էր արդէն. Կլէմանսօյի քով կային Գօհիէն, Ժան Ժիւլիէնը, Լիւսիէն Դէզալը, Լօուան Թայեստը, Բէնեաա Լազարը և տակաւին ուրիշներ, որ ժողովրդական դատին ամենէն համոզուած ու թունդ զինուորնե-

րը եղած էին: Ասոնց վրայ կուի տաք վայրկեանին աւելցան նաև երկու կարևոր ուժեր՝ Պրէսանտէ՝ Թան լրագրի քաղաքական բաժնի հանրաժանութ խմբագիրը և Օկտաւ Միրբօ:

Այսպիսի ուժերով կազմուած լրագրի մը երևումը աննկատ չէր կարող անցնիլ, և իրաւ ալ՝ Օոոոը շուտով ժողովրդականացաւ:

Մինչև այն ատեն գոյութիւն ունեցող թերթերը կամ շահադիտութեան անխիղճ ու ստոր ձեռնարկներ էին և կամ նեղ ու փակ կուսակցութիւններու օրգաններ: Օոոոը ամեն կուսակցութենէ վեր՝ ներկայի անիրաւութիւններուն ու փտութիւններուն վրայ պայթող ապագայի աւետարեք ձայնն էր: Մինչդեռ իր շուրջը ուրիշներ կը կուէին դիրքի, տիտղոսի կամ կառավարական պաշտօններու մէջ հանդարտօրէն հաստատուելու մտահոգութեամբ, Օոոոը առաջադրած էր քիչ մը աւելի արգարութիւն, քիչ մը աւելի վայելք ձեռք բերել տառապող ժողովուրդին համար: Այս ընդհանուր ուղեգծին զուգահեռաբար՝ Օոոոը կը ձգտէր ուրիշ շատ ազնիւ ու շատ համակրելի նպատակի մը, այն է՝ պաշտպան կանգնել բոլոր ճշնուող ու արիւնուող ազգերուն:

Օոոոին առաջին ու անմիջական գործը եղաւ հակահրէականութեան դէմ կռիւը: Հրէաները՝ բազմաչարշար ցեղի մը այդ դժբաղդ զաւակները, ինչպէս ամեն տեղ, Ֆրանսայի մէջ ևս կը հալածուէին: Դուրմօն՝ իր Լիբըր Պառօլ թերթով Սեմի օրդիններուն դէմ խաչակրութիւնը սկսած էր, որուն զօրեղապէս կը մասնակցէին կղերականութեան ու կղերամիտ կուսակցութիւնները:

Ի՞նչ է հակասեմականութիւնը:

Հակասեմականութիւնը ուղղակի կրօնական աններողամբտութեան, կղերական ատելութեան արդիւնք է: Պաշտօնական քրիստոնէութիւնը երբէք չը պիտի մոռնայ հրէաներուն՝ «Քրիստոսը խաչած» ըլլալու յանցանքը: Թէպէտև Խաչուողը՝ Ինքը՝ ներեց խաչողներուն, բայց եկեղեցիի զաւակները՝ Քրիստոսէ աւելի քրիստոնեայ՝ քսան դարու հալածանքէ ետք հրէաներու հետ իրենց հաշիւը փակած չեն նկատեր: Անշուշտ պիտի փորձուիք հարցնելու, թէ ինչ արգարութիւն է օրդիններուն քաւել տալ հայրերու մեղքը, թէ ժամանակակից իսրայէլացին ի՞նչով յանցաւոր է քսան դար առաջ ապրող իր նախահայրերու մէկ տըխմար արարքին մէջ: Ասիկա ներողամտութեան և զթութեան կրօնքի մը ներկայացուցիչներուն խորհրդաւոր ու անմերձենալի զաղանիքներէն մէկն է: Ասոր համար է անտարակոյս, որ հակահրէական շարժումը ամենէն շատ ծաւալած է այն երկիրներուն մէջ, ուր կղերը ամենազօր է:

Ժամանակի ընթացքին հետ հակահրէականութիւնը առանց իր սղին փոխելու՝ ձեռ փոխեց: Դիտողութեան և դատողութեան զարգացումով՝ կրօնքը զողորեցաւ խղճմտանքներու վարիչն ըլլալէ: Այլևս կարելի չէր հրէան հալածել Քրիստոսի անունով: Պէտք էր հրէաներուն դէմ կտիւ մղել հասարակական գիտութիւններու անունով: պէտք էր հրէան հալածել ոչ թէ «գուն մեր Քրիստոսը իսաչեցիր» ըսելով, այլ «գուն հասարակաց թշնամին ես» ամբաստանութեամբ:

Այս պատճառաբանութիւնը եթէ խորհելու վարժ մարդերու կողմէ հալած իւզի տեղ չ'ընդունուեցաւ, գէթ պարզ ու տղետ ժողովուրդը, պատճառներու խորը իջնելու անկարող մտքերը համոզելու առաւելութիւնն ունէր: Ու այս բանը շատ հասկանալի էր: Փաստ մը կար մէջտեղ, անուրանալի փաստ մը. — ժողովուրդը, կը կեղեքուէր: Բայց թէ ովքեր էին այդ կեղեքողները, որոնք էին այդ հիւանդ երեսյթի իսկական պատճառները, ժողովուրդը այդ չը գիտէր ու չէր ալ կարող գիտնալ:

Հակահրէականները անգիտակից ժողովուրդին ցոյց տալով հրէաները՝ կըսէին. «հա քու կեղեքողներդ»: Ու ժողովուրդը՝ Ռոչիլդները, Հիրչերը միայն տեսնելով կը հաւատար: Չէր խորհեր, որ ափ մը հրէայ հարուստներուն քով կար նոյնպէս հրէայ անժառանգներու ցաւաղին բանակ մը, որը նոյնքան և թերևս աւելի կը տառապէր տիրող անարդարութենէն, քան ինքը քրիստոնեայ անժառանգը. որովհետև հրէայ բանուորը կը հարստահարուէր ընդհանրապէս թէ իբրև բանուոր և թէ իբրև մասնաւորաբար հրէայ. հրէայ բանուորը զոհն էր թէ անտեսական անիրաւ օրէնքներու և թէ կրօնական տակութեան. հետևաբար հրէայ անժառանգը կրկնապէս դժբաղդ էր:

Բայց այս իրողութիւնը ժողովուրդին աչքէն կը վրիպէր: Հակահրէականութեան ճարպիկ demagogue-ները՝ իրեն մատնանիչ կ'ընէին հարուստ իսրայէլը միայն, որ ամեն հարուստի պէս իր պերճանքն ու մոլութիւնները կը փռէր զրկուածին աչքերուն առջև:

Աւելորդ է ըսել, որ հրէայ հարուստը, զրամագլխատէրը չարիք մըն էր ժողովուրդին համար. բայց որոն էր յանցանքը: Ինքը չարիք մըն էր այնքան՝ որքան ամեն ցեղի և կրօնքի զրամագլխատէրը:

Կեանքը մահացու մրցում մըն էր: Հասարակական այնպիսի կարգ մը գոյութիւն ունէր, ուր ապրելու համար կուէլ հարկաւոր էր: Հրէան՝ ամեն մարդու պէս՝ առաջ անցնելու համար ստիպուած էր իր արմուշկները շարժել: Հրէան հարկադրուած էր նոյն իսկ քիչ մը աւելի ճիւղ ընել, որովհետև իր ցեղին դէմ

մոլեզնօրէն մզուած կռիւէն անոխաս մնալու միտակ ճարը՝ իրեն բարեկեցիկ վիճակ մը ստեղծելն էր: Հրէան իր չարչարուած գլուխը տեղ մը գնելու կարող կ'ըլլայ այն ժամանակ միայն, երբ նիւթական ապահովութիւն ձեռք բերած է:

Այս է պատճառը հրէայի ընչաքաղցութեան: Հրէայ ցեղին դէմ մզուած դարաւոր հալածանքն է, որ ծնունդ է տուած Եհովայէն ընտրուած ժողովուրդի բացասական յատկութիւններուն: Բնական օրէնք մըն է, որ տկարը, հալածեալը իր մէջ զարգացնէ խորամանկութիւնը՝ խոյս տալու համար զօրաւորին հալածանքներէն: Եթէ քրիստոնէական մոլեռանդութիւնը հրէայ ժողովուրդը չը հալածէր, ապահովաբար Սպինոզաներու, Կարլ Մարկսերու և Հայնէներու պէս հոյակապ իմացականութիւններու ծրնունդ առողջ ցեղը զերծ պիտի տեսնէինք իր այժմեան մէկ քանի տրտում յատկութիւններէն, որոնց համար, պէտք է կրկնել՝ պատասխանատու են իր հալածիչները միայն:

Բայց ինչ որ հակահրէականութեան մէջ ամենէն աւելի ամարդի է և ըմբոստացնող, այն է, որ անխնայ հալածանքը կ'ուղղուի աւելի հրէայ զրկուածին, անժառանգին՝ քան հարուստին դէմ: Ամենէն կատաղի հակասեմիտականը հրէայ գրամագլխատերին առջև զինաթափ կ'ըլլայ: Այն բոլոր կոմսուհիները, մարկիզուհիները և դքսուհիները, որ հրէայ անունը լսելով՝ երկիւղած և քրքրիստոնէաւայել ցատումով մը կը լեցուին, իրենց սալօններուն դռները միշտ կոնակի վրայ բաց պահած են հրէայ գրամատէրերուն առջև:

Ասիկա ամօթ էր Մեծ Յեղափոխութեան Ֆրանսային համար, որ հոյակապ խանդի մը մէջ ցեղի և կրօնքի ատելութիւնը ջնջելով՝ մարդերու և զբայրութիւնը հուշակած էր: Հակասեմականութեամբ ցեղական ու կրօնական ատելութիւնն է որ յարութիւն կ'առնէր: Ամբողջ ժողովուրդ մը կը հալածուէր, որովհետև Յաբեթէն սերած չ'ըլլալու աններելի յանցանքը գործած էր, սրովհետև չէր պաշտեր խաչուած Աստուած մը:

Ամեն ճշմարիտ ֆրանսացիի պարտականութիւնն էր պաշտպանել Հայրենիքի վառաւոր աւանդութիւնները, չը թողուլ որ յետադիմական հրէշը իւր գլուխը բարձրացնէ. ուստի Օնօրը անմիջապէս ձեռք առաւ հրէական գառը:

Օնօրը՝ կռիւի համար ծնած էր, ու կռիւը՝ ներկայացաւ իրեն, ցաւապին, ախտանական, Դրէյֆուսի խնդիր երևոյթի սակ:

Խնդիրը նոր կը սկսեր արծարծուիլ: Կառավարութիւնն, ինչպէս և ժողովուրդը՝ դատապարտուած հրէայ սպային անունն անգամ չէր ուզեր լսել: Ֆրանսական բոլոր թերթերը կը մեր-

ժէին անով զբաղուիլ ու եթէ զբաղուէին ալ, «մատնիչ»-ին հասցէին քանի մը նոր հայհոյութիւններ ուղարկելու համար էր: Օոոն՝ նոյնպէս հակառակ էր, որովհետև տակաւին ոչ մէկ յայտնութիւն չէր եղած. իր աշխատակցին՝ Բէննաու Լագառի հետ՝ որ Դրէյֆուսի խնդրին առաջին ախոյեանն էր և զրէյֆուսեան շարժումի նախապատճառը, Վօզան՝ պայման զբաժ էր որպէս զի այդ հարցը չը յուզէ երբէք իր թերթին մէջ: Պայմանը խզուեցաւ, բայց Վօզանի կողմէ, որովհետև Օոոն ստուգութիւն ունեցաւ, թէ դատին մէջ անկանոնութիւններ սպըրդած են: Ու կոխն սկսաւ, հերոսական կոխւ մը: Ոչ մէկ լրագիր ամբոխային բնազդներու դէմ այնքան արիւարար, անձնուիրօրէն չը պայքարեցաւ, որքան Օոոնը: Դրէյֆուսը պաշտպանել՝ ուղղակի անյաջողութեան դիմել էր նորածին թերթին համար: Բայց ոչ մէկ նկատողութեան կարելի էր դո՛նել սկզբունքը: Ճըշմարտութիւնը պէտք էր ըսել ամեն բանի հակառակ, ամեն զրնով:

Ու թունաւոր հայհոյանքներու, մահացու սպառնալիքներու և վայրագ ոռնումներու տեղատարափին տակ՝ Օոոնը ըսաւ ինչ որ պէտք էր ըսել.—արգարութիւն՝ անխրաւուած հրէային համար:

Ու երբ, Օոոնը՝ Զօլայի՝ Ֆէլիկս Ֆօրին ուղղած հռչակաւոր նամակը՝ j'accuse-ը (կ'ամբաստանեմ) հրատարակեց, ամբոխին կատաղութեան և զայրոյթին այլ ևս չափ չը կար: «Մատնիչ, Գերմանիայի հարուստ հրէաներուն ծախուած», ահա ամենէն անմեղ տիաղոսները, որ վիճակուեցան արի թերթին: Միջին դարու հաւատարմական ժամանակներու ահաւոր ու նողկալի տեսարանները նորէն կրկնուեցան: Ատելութեամբ ու քանդումի հաճոյքէն զինովցած ամբոխը, որուն մէջ տենդոտ կերպով կը ծածանէր ֆարաջաւորին սև քղանցքը, երբեմն պատնէչներ կանգնած յեղափոխական Պարիզի հրապարակներուն վրայ հանդիսաւորապէս այրեց Օոոնը: Մարդասպանութիւն գործելը՝ Օոոնը ձեռքը փողոցէն անցնելէն նուազ վտանգաւոր էր: Բանի անդամ մազ մնաց Սէնը նետէին ճշմարտութիւնը պաշտպանող թերթին ընթերցողները: Ճիզուէթներու վարժարաններէն փախած լաճերը monôme կազմած՝ բուլվարներուն վրայ ման կու գային՝ Զօլան ու Օոոնը նախատելով: Փողոցային տենդը նոյն իսկ համալսարաններու սեմէն ներս մտած էր: Պրօֆէսսօսին դասարանը մտնելէն առաջ ֆրանսացի ուսանողը իր ազդասիրական պարտականութիւնները կատարել չէր մոռնար՝ Զօլան, Օոոնն ու անոր խմբագիրը conspuer ընկելով:

Շատ երկար պիտի ըլլար նկարագրել զանազան շրջաններ-

ըը այն անարկու կուին, զոր Օոնոը՝ իր դրչի փի մը զինուոր-
ներով մղեց բովանդակ մոլորած երկրի մը դէմ: Ամբողջ աղ-
գերու լրագրական պատմութեան մէջ միակ երևոյթ մըն է այն,
որ մէկ հատիկ թերթ մը՝ իրեն միմիակ գէնք ունենալով ճըշ-
մարտութեան խանդավառ ու անձնուէր խօսքը, յաղթանակել
տայ արդար դատը՝ հակառակ ամբողջ փողովուրդի մը յուսա-
հատ ու գործօն ընդդիմութեան:

Այս տիտանական կուին ամենէն վիթխարի գործաւոր-
ներէն մէկը եղաւ Իւրբէն Գօհիէ:

Ամեն իրիկուն Մօնաթր փողոցէն՝ ուր կը գտնուի Օ-
ոնոի խմբագրատունը, Կլօդ-Բէրնար փողոցը տանող ճամբուն
վրայ պիտի հանդիպիք միջանասակ, նիհարկէկ, ամբողջ ջիղէ
ու զգայնականութենէ շինուած անձի մը, որուն տարիքը երե-
սունէն քառասունին մէջ կը խաղայ: Դիմագծութիւնը այնքան
արտայայտիչ է, որ ձեր ուշադրութիւնը կը բռնադատէ կանդ
առնել: Ձուածն, սուր գէմքի մը վրայ, որ կը վերջանայ սրածայր
մօրուքով, երկու խոշոր, անհանդարտ աչքեր՝ իրենց յարաչարժ
բիբրը կը թաւալեն աջ ու ձախ, ամեն բան տեսնելու, ամեն բան
դիտելու և ըմբռնելու պէտքէն մղուած: Ու նայուածքը՝ որ կը
բղխի այդ զոյգ մը անհանդիստ բիբերէն, իր սեւեւելու եղանա-
կով մարդուն զգալ կու տայ, թէ հասարակ նայուածք մը չէ:

Ոճը մարդն է: Գօհիէի դիմագիծն ալ հարազատ ու հաւա-
տարիմ հայելին է Գօհիէի հրապարակախօսութեան:

Ամեն մարդ կարող է հրապարակախօս գտնալ. բայց Գօ-
հիէ յատկապէս այդ բանին համար ստեղծուած է: Հրապարա-
կախօսի մը էական յատկութիւնները ոչ ոք իրմէ աւելի բարձր
աստիճանով ունի: Պարզ, ամենուն հասկանալի լեզու մը, ջը-
ղուտ ու կարճ նախադասութիւններ, որ սալին վրայ զարնուած
մուրճի հարուածներու պէս կը հնչեն:

Օոնոի խմբագիրը՝ Ֆրանսայի առջին pole'miste-ն է:

Հապա Հանրի Ռօշֆօրը, պիտի ըսէք, որու համբաւը նա-
պօլէօն Գ-ի դէմ մղած կռիւին շնորհիւ ժամանակ մը Եւրո-
պայի չրջանն ըրաւ: Բայց այսօր Ռօշֆօրը ողջ-մեռած մըն է
Պարիզին համար, որովհետև Դրէյֆուսի խնդրին ժամանակ
Ռօշֆօր ազգայնականներու կողմն անցաւ ու սկսաւ պաշտել
ինչ որ ատենօք ցեխերու մէջ քաշքշած էր—զինուորականու-
թիւնը (militarisme): Բազդը ինչ տրտում խաղեր ունի. Ռօշֆօր,
այդ կարմիր ազատականը, այդ ընկերվարականը՝ անգամ մը
հոսանքէն տարուած՝ սկսաւ հետզհետէ մտնել կատաղի յետա-
դիմականի մը կաշիին մէջ: Զինուորականութեան խուճկ ծխելէ
յետոյ դարձաւ հակահրէական: Իր թերթը՝ Լ'նթրաժիզանը՝ որ

ազնւական սալօններէ ներս չէր մտած երբէք (որովհետև Ռօշֆօր՝ ծագումով ազնւական՝ այդ անուանարկուած դասակարգին դէմ ստեղծութիւնը այն աստիճանին հասուցած էր, որ կը՛ստորագրէր պարզ Հանրի Ռօշֆօր, թէպէտև ինքը մարքիզ ծնած ըլլար), այնուհետև այդ միևնոյն սալօններու զարդը եղաւ: Պարիզի աշխատող դասակարգը Ռօշֆօրի չը ներեց սակայն իր դաւաճանութիւնը. զգուանքը յայտնեց՝ զանիկա վերստին կոչելով պարոն մարքիզ, և միշտ միտինգներու, ժողովրդական ցոյցերու մէջ իր անունը հայտնուեցաւ (conspuer):

Ռօշֆօրի ժողովրդական քայքայումին ոչ նուազ նպաստեց ուրիշ պարագայ մը: Ատիկա Գօհիէի տաղանդին յայտնութիւնն էր:

Այն օրէն՝ երբ Գօհիէ սկսաւ ժողովուրդին հետ ուղղակի խօսել Օնօրի միջոցով, այն վայրկեանէն՝ երբ Գօհիէ դիւրութիւնը ունեցաւ ինքզինքը արտայայտելու ամբողջապէս և անարգիլ, Ռօշֆօրի դժբախտութիւնը կատարեալ եղաւ: Եւ անաթ է ինչու:

Ռօշֆօրի յաջողութեան գաղտնիքը կը կայանար՝ ծիծաղել ստիպող բառերու, լուտանքներու, հայհոյութիւններու, ծանրը խօսքերու ճարպիկ շահագործումին մէջ. իր ամենասովորական բառերն են rapule, canaille, cre'tin, vidange, vidangeur ու տակաւին ինչ որ ֆրանսական լեզուն ունի ստոր ու փողոցային: Ռօշֆօր նոյն իսկ ամենալուջ հարցերու մէջ պահած է իր ծիծաղաշարժի, հայհոյողի դերը:

Ճշմարիտ հրապարակախօսութեան առարկան իրողութիւնները, փաստերը կը կաղմեն: Հրապարակախօսին արժանիքը՝ այդ իրողութիւնները, այդ փաստերը լաւ շարակարգելու, լաւ մեկնելու և անոնցմէ տրամաբանական եզրակացութիւններ հանելու գործողութեան մէջ կը կայանայ:

Արդ Ռօշֆօր փաստերու հետ երբէք գործ ունեցած չէ. իսկ եթէ երբևմն պատահած է որ փաստերու լեզուն չ'արհամարհէ, այս պարագաներուն մէջ ալ սա շատ կատակերգական բանը տեղի ունեցած է—իր առաջ բերած փաստերէն՝ գլխովին հակառակ եզրակացութիւններ հանած է:

Գօհիէէն ստորագրուած յօդուած մը չէք կրնար գտնել ուր այս եղական հրապարակախօսը փաստերով խօսած չ'ըլլայ, ուր իր առաջ բերած փաստերէն՝ երկուք—երկուք ալ չորսի պէս անողոք եզրակացութիւններ հանած չ'ըլլայ: Ա՛հ, սարսափելի է իր տրամաբանելու ուժը: Ֆրանսական հրապարակախօսութեան մէջ-մէկ հատիկ դէմքն է, որուն հարուածները անբուժելի են: Քանի քանի անգամ իր վեհանձն, անխնայ ու հա-

մարձակ մարակը՝ յետագիմական հրէշը քիչ մը շատ ուժով անհանգիստ ըրած ըլլալուն համար Գօհիէ դատի կանչուեցաւ. քանի քանի անգամ կառավարութիւնը վրդովուած՝ Գօհիէի՝ զինուորականութեան մասին ըրած գայթակղեցնող մերկացումներէն, երդուած դատաւորներու առջև հանեց զինքը. բայց ամեն անգամ ալ դատաւորները անպարտ հռչակեցին ըմբոստացումի այս ահարու զաւակը: Առաջին պատասխանն ու անպարտ արձակումը մանաւանդ տեղի տուաւ հոյակապ ցոյցի մը, որու մասին պիտի խօսիմ քիչ յետոյ:

Գօհիէի տաղանդը կը խոստովանեն նոյն իսկ անոնք, որոնց դէմ ուղղած է իր ամենաթունաւոր սլաքները: Հետեւեալ դէպքը բաւական նշանակիչ է այս մասին:

Երեսփոխանական ժողովի նիստերէն մէկուն մէջ՝ Պ. Լազը՝ կայսերական կուսակցութեան ամենէն յայտնի պատգամաւորներէն մէկը՝ վիճարանուած նիւթին վրայ Գօհիէի կարծիքը յիշել հարկ գտելով՝ խորհրդարանական բեմի բարձունքէն յայտարարեց. «Պ. Գօհիէ, որուն հետ թէպէտև հակակարծիք կը զբտնուիմ շատ մը խնդիրներու մէջ, և որու տաղանդին առջև ամենքս կը խոնարհինք և այլն ...»

Էռնէսթ Վոզան Օոռոի մէջ հրատարակեց յօդուածներու շարք մը, ուր խօսեցաւ Օոռոի հիմնարկութեան պարագաներուն վրայ: Ինչպէս միւս խմբագիրներուն՝ նոյնպէս Գօհիէի նուիրեց յօդուած մը, որը այնքան գեղեցիկ ու ճիշտ կերպով կը պատկերացնէ Գօհիէին, իր նկարագիրը, իր ձգտումները, իր գործերը: Ահաւասիկ այդ յօդուածին գլխաւոր մասերը.

— Իւրբէն Գօհիէ Սօլէյլի մէջ կը գրէր 13 տարիէ ՚ի վեր, երբ ևս բարեբաղդութիւնն ունեցայ իրեն առիթը հայթայթելու, որպէսզի ինքզինքը կատարեալ լոյսի մէջ դնէ ու ազատ կերպով, առանց դարձուածքներու, առանց խնայումներու ըսէ իր մտածումը իր բնական և անկեղծ ոչ-օպպորտիւնիստ մը (inopportuniste):

«Սօլէյլի մէջ Էդուար Էովէի խելացի ու ազատամիտ տընօրինութեան տակ Գօհիէ կարելի եղած չափով իր մտածումը կ'արտայայտէր՝ ի մեծ գայթակղութիւն թերթին ազնւական, անհոգ ու ջերմեռանդ յաճախորդներու մէկ մասին: Մնացածը կ'ամբողջացնէր բրօշուրներով, որ խիզախ պանֆիլէներ էին, և որոնց ծաւալումը ստիպողաբար սահմանափակ կը մնար: Ուսնիկա հասկանալի է: Պահպանողական թերթերը՝ այս անկարգապահ ձեռնասունի ընթացքէն անհանգիստ՝ բառ մը անգամ չէին ըսէր այդ գրքոյլներու մասին, իսկ յեղափոխական թեր-

թերը այս անակընկալ մրցումէն ոչինչ հասկանալով՝ կը կասկածէին և անոնց մասին նոյնպէս ձայն չէին հաներ:

Ճիշտ է թէ, իր նոր ասպարէզ մտած ժամանակ՝ Իւ. Գօհիէ պէտք չէ ունենար անշուշտ այն դադափարները, զորս ունի այսօր, բայց նոյնքան եռանդ և քաջութիւն ունէր: Բնաշրջումը (e'volution) անխուսափելի էր. ինչ կուսակցութեան կ'ուզէ թող պատկանի սրտի և իմացականութեան տէր մարդը, եթէ կեանքին մէջ է, կամաւ, գիտմամբ աչքերը փակ չ'անցնէր, վերջ 'ի վերջոյ յեղափոխականի մը մտրթին մէջ է որ կը մեռնի:

Իմ հին բարեկամս Բերտիէն է, որ զիս Գօհիէի հետ ծանօթացուց, որու աշխատակցութեան կոչում ընել մտքէս իսկ չը պիտի անցնէր, թէպէտև մեծապէս հիանալի իր տաղանդին վերայ: Ես իմ ձեռնարկիս ձախողումները շատ լաւ կը՛ղբայի, և ով որ ալ ըլլար՝ չէի ուզեր հրաւիրելով ինձի բաղբակից ընել, փտանդել կամ 'կորսնցնել տալ անոր արդէն ձեռք բերած, հաստատուն գիրքը:

Գօհիէի համար ռիսկը կէս մը ստոյգ էր. քիչ յետոյ բուլտրովին երեսակացութիւն դարձաւ: Ես չը դիտէի սակայն, ուր կը հանէր անխախտութեան համար իր ունեցած սէրը:

Համաձայնութիւնը շուտով կայացաւ. մեր մէջ: Մէկ երկու տեսակցութիւն և նոյնքան նամակ բաւական եղան:

Կլէմանսօ՝ որուն երբ փութացի յայտնել այս թանկագին նորեկին զինուորագրումը՝ իմ արդէն ըրած զիտողութիւններէն զատ ուրիշ առարկութիւն չըրու, միայն առաջարկեց, որ Գօհիէի անունը մեր ազդերու (affiche) առաջին տողին մէջ չը գնենք: Ինձի խորհուրդ տուաւ նոյնպէս՝ Գօհիէէն ինչդրել, որ չէ՞ր հաճէր արդեօք *Ononի* մէջ սկսիլ վէպով մը՝ քաղուած իր պատրաստելու վրայ եղած *drame*-էն: Կլէմանսօ վարպետ է այս տեսակ կարգադրութիւններ ընելու մէջ, բայց ինքը *drame* մըն է, որ քաղեց իր վէպէն:—Այս մտքով գրեցի Իւրբէն Գօհիէի, որ 1897 Սեպտ. 28 թւական նամակով մը ինձի պատասխանեց բառ առ բառ հետեւեալը:

«Մեծապէս շնորհակալ եմ, սիրելի պարոն, ձեր այնքան սիրուն առաջարկին համար: Բայց այս տեսակ փոփոխումի մը կարելիութեան վրայ չէի խորհած, և ներկայացուելու արժանի ոչինչ պատրաստ պիտի ըլլայ ճիշտ ժամանակին:

Շւ. յետոյ «գրականութիւն»-ը ձերունի օրերուս համար պահած եմ, երբ այլ ես կուրի բոլորովին անպէտք դառնամ: Հիմակունձիմա հարուածներ միայն կը ցանկամ (մանաւանդ իջեցընելու հարուածներ): Եթէ դուք այդ առիթը հայթայթէք ինձի լաւ կուսութիւնը մը մէջ, լրագրի մը մէջ որ ստեղծուած

ըլլայ մեծ քաղաքներու կենդանի տարրերուն համար, քահանայապետներ չ'ունեցող լրագրի մը մէջ, մէկ քանի շնորհքով հրապարակասուններու լրագրի մը մէջ—ան՝ ինչ որ կ'ակնկալեմ: Այն ատեն ձեզի պիտի օժանդակեմ, որքան և ինչ ձեկերու տակ որ ուզէք:»

Իւրբէն Գօհիէ Օոռոի մէջ մտաւ այն միակ'պայմանով, որ պրէ առանց կօնարօլի: Ես յանձն առի շահագործողի իրաւունքներս իր նկատմամբ գործադրել միայն իր կատարեալ ազատութիւնը ապահովելու համար և վարձատրելու իր աշխատանքը ոչ իր արժէքին չափով, աւանդ, սրովհետեւ երբէք այդ աստիճան հարուստ չը պիտի ըլլայի, այլ իմ նիւթական միջոցներուս համեմատ:

Կարծեմ թէ ոչ ես և ոչ ալ ան՝ մեր յայտագրին դէմ չը դրժեցինք: Իրաւ է թէ մենք ոչ նախարար, ոչ պատղամաւոր, ոչ ալ նոյն իսկ քաղաքապետական խորհրդական էինք:

Իւրբէն Գօհիէ երկու գօրաւոր ատելութիւն ունի, ատելութիւնը անարդարութեան և ատելութիւնը անգթութեան դէմ: Իշխանութեան զեղծումի մը պատմութիւնը, տկարներու կողմէ կըրած չարչարանքներու, և կենդանիներուն կատամամբ ցոյց տրուած անգթութեան տեսարանը իր զգայնութեան վրայ արտակարգ կերպով արձագանգ կը գտնեն: Ու ձեզի յայտնի է, թէ այս պարագաներուն մէջ ինչ անարկու հարուածներ գիտէ իջեցնել: Երբեմն նոյն իսկ կը պատահի, որ—անձնական խոնարհ կարծիք մըն է այս, զոր կը համարձակիմ յայտնել—պատիժին մէջ շատ առաջ կ'երթայ, ու ինքն ալ քիչ մը կ'ընկնի անարդարութեան և անգիտութեան մէջ: Երբ, օրինակի համար, սայլապաններէ ոմանց՝ իրենց դժբախտ անասուններու վրայ գործ դրած վարչելի վայրագութեանց դէմ Գօհիէ կը բողոքէ, յիշեալ սայլապանները ներողութեան անարժան գտնելէ հետո չէ: Այս սայլապանները իրենք ևս մեր հասարակական հրէշաւոր կազմակերպութեան զոհերն են, Մանկութենէ ի վեր իրենց վրայ գործ դրուած անգթութեամբ է որ զիրենք վարժեցուցած են անգթութեան. այդ անգթութիւնն է, որ իրենց իմացականութիւնը և սիրտը իրենց մորթին չափ կարծրացուցած է: Մենք պէտք է խղճանք այս դահիճ-մարտիրոսներուն վրայ: Մենք պէտք է խղճանք թիարանի պահապաններուն, ենթասպաններուն, գործաւորներու վերակացուներուն և զինեվաճառներուն վրայ, որ ժողովուրդի աղիքներէն ելած՝ ժողովուրդը կը շարչարեն տխմարօրէն, շահուն և օգտին համար այն առանձնաշնորհուածներուն, որ ինչպէս իրենց՝ նոյնպէս ուրիշներու երջանկութեան արդար բաժինը գողցած են:

Ճշմարիտ է թէ, եթէ Գօհիէ իր ժամանակը իմաստասիրելով անցնէր, այլ ես Գօհիէ չը պիտի ըլլար, ու ես մեծապէս իրաւունք կու տամ իրեն ու շատ ուրախ եմ, որ մեզի կը հայթայթէ իր բուն ու տաք ցասումին հաճոյքը: Շատ ու շատ մարդիկ այնպէս կը դատեն, թէ խօսքն ու գիրը մարդուն տրուեցան, որպէսզի իր մտածումը ծածկէ:

Բարեկամս Իւրբէն Գօհիէ իր գանձային տուփը զարդարող բազմաթիւ ցցուածքներու թւին մէջ ապահովաբար հաշտութեան ցցուածքը (bosse) չ'ունի—բնութեան մոռացում, միակ յանցաւորը այս պարագային—ասիկա չ'արգելեր սուկայն, որ հարկ եղած ժամանակ անձնատուր ըլլայ լաւ և մինչև իսկ վատ պատճառաբանութեանց առջև:

Ռենի դատավարութեան միջոցին, երբ հանրապետութեան պաշտպան կառավարութիւնը տարօրինակ միտքն յղացաւ Ալֆրէդ Դրէյֆուս հարիւրապետը արդարութեան համեմատ դատել տալու հոգը յանձնել Գալիֆէին, պայմանադրական հրահանգն (consigne) էր զինուորականները չափազանց չ'ը գրգռել: Այդ Գօհիէի ամենապզտիկ բառը այդ պարոններու կողմէ զիւրութեամբ կը խեղաթիւրուէր, ծուռ կը մեկնուէր:

Խնդրուեցաւ իրմէ ժամանակաւորապէս մեղմել իր յարձակումները: Ոչ միայն ընդունեց, այլ յարձակումներ ձեռնկերպելու փորձութիւնէն անդամ խոյս տալու համար Անգլիա պզտիկ ճամբորդութիւն մը ընելու ելաւ:

—Պիտի տեսնէք, կ'ըսէր մեզի, որ այս զիջողութիւնը բանի մըն ալ չը պիտի ծառայէ:

Արդարեւ, բանի մը ալ չը ծառայեց:

Պրիտորականներն և կրօնաւորները ամեն զիջողութիւն կ'ընդունեն, բայց իրենք մէկ հատ չեն ըներ: Եւ արդէն ատիկա իրենց անկարելի պիտի ըլլար, քանի որ այնպէս կ'երևակայեն, կամ երևակայել ցոյց կու տան, թէ իրենք բացարձակը կը ներկայացնեն: Եթէ Դրիւմօնի պէս հաւատաքննիչի հոգի մը ունենայի, ես իրենց պիտի մաղթէի իրենց ընտրած մէկ գերեզմանատան մէջ լաւ վերջնական ու յաւիտենական հողային գեկուցում մը. բայց կ'ընդունեմ թէ ձուկերը միայն իրաւունք ունին ձկնորսին մահը ցանկալու:

Բնականաբար ես Իւրբէն Գօհիէի նկարագիրը չ'ունիմ: Եթէ ամեն մարդ իրարու նմանէր, չիտակը ամեն մարդ փառաւորապէս պիտի գուարձանար: Ես իրեն համեմատութեամբ ձերմկած մորուք մը, հնացած զարդ մը, գրեթէ նախահայր մըն եմ. բայց նախահայր մը, որ չի յաւակներ ոչ ոքի ընկճել իր կարծեցեալ փորձառնութեան ծանրութեան ասկի: Գլտրելով, գլո-

րելով—և գլորուած ըլլալովալ (d'etre roule'-Քրահսերէնի դարձուածք մըն է, որ կը նշանակէ՝ խարուելով) —իմ անկիւններս կլորցած են: Ես այլ ես ներողամիտ քարձայ շատ անձերու և շատ բաներու նկատմամբ: Ներողամտութիւնը յաճախ կը ծնի չարաչար յոգնութենէ, տաղտուկէ: Եւ երբեմն պատահած է, որ Գօհիէին ըսեմ, ոչ իբրև անօրէն, այլ իբրև ընկեր, թէ ժամանակ առ ժամանակ եթէ մտքին հանդիստ տար ու նուազ կըժու ըլլար, աւելի շահաւոր պիտի ելլէր: Քիչ մը զուարթութիւն, կ'աւելցնէի, զէչ չ'ըլլար:

Ա՛հ, բարեկամներս, գամս, շիտակը, ընւ կը միտէր պատին:

—Ապրիս, Գօհիէ, թնդ անոնք որ չեն կրնար կամ չեն ուզեր կուրլ, ազատ ձգեն գէթ իրենցմէ աւելի արխները, խանգարել չ'աշխատեն անոնց ճիգերը, ու չը ըթացնեն անոնց կորովը»:

ՏԻԳՐԱՆ

(Կը շարունակուի)

ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂ. *)

VI

Յիշում եմ, սիրելիս, իմ նամակներից մէկում ակնարկելով մեր երկրի գիւղական կեանքի տխուր և քրոջմենքից մէկի՝ զխանի մասին, խոստացայ քեզ զրեւ թէ ինչպէս է հասկանում շվէյցարական գիւղացին սեփականութեան գաղափարը, ինչով և ինչպէս է արտայայտուում նրա յարգանքը դէպի ուրիշի քրտինքի արդիւնքը: Այսօր կատարում եմ խոստումս, և զբան առիթ տուող դէպքը այն աստիճան ուշադրաւ է, որ ես կ'սկսեմ հէնց այդ դէպքից:

Տունը՝ ուր ես ապրում եմ, դանոււմ է գիւղի եզրին. իմ լուսամուտի տակից անցնում է այն մեծ խճուղին, որ մի կողմից անցնելով դաշտերից գնում է դէպի Մօն-Պելլրէն և Բերնի կանտօնը և միւս կողմից միանում է այն ճանապարհին, որ տանում է դէպի Լօզան: Պարապ ժամերին ես սիրում եմ իմ լուսամուտից նայել լայնարձակ ու կանաչադարձ գաշտերի և շենալանջերի մէջ զաղարուող սպիտակ ճանապարհին, որ այնպէս պարզ ու սիրուն դժպրւում է համատարած կանաչաւուն ֆօնի վրայ: Ճանապարհն ինքն ըստ ինքեան միշտ հետաքրքիր է, այն դիտելիս մարդ մի փոքր փիլիսոփայ է դառնում: Եւ դա հասկանալի է, սիրելիս, մեծ ճանապարհի վրայ կատարուող անցուդարձը երբեմն յարուցանում է այնքան խոհեր, նայում ես երկար, երկար, և քեզ թւում է, թէ առաջը կեանքի մեծ ուղին է, որով անցնում են այնքան մարդիկ՝ իւրաքանչիւրը շաբակած իր ճակատադիրը: Ինձ համար, իբրև արևելցու, ճանապարհը կրկնակի խորհրդաւորութիւն է ներկայացնում. դու յիշում ես անշուշտ մեր հէքիաթները, որ լսել կ'ընք ձմեռ ժամանակ սաքուններում, բուխարու կրակի առաջ. յիշում ես, թէ արևելքի երևակայութիւնը ինչեր է կապել հեռուոր, մեծ ճանապարհնե-

*) Տես «Մուրճ» № 12. 1902 թ.:

րին, որոնք զէպի անյայտն են տարել և միացել ճակատագրի գաղափարին: Այնքան խորիմաստ անցքեր, նշանակալից զիպուածներ, անակընկալ արկածներ, բարձր առաքինութիւններ ու սև ոճիրներ, որոնք անցել են արևելքի մեծ ճանապարհների վրայ: Չը կայ մի հէքիաթ, որի հերոսը զէպի հեռաւոր, անյայտ աշխարհները ճամբորդած չը լինի: Մեծ ճանապարհը դեռ այսօր էլ արևելքում այն խորհրդաւոր հովիտն է, ուր կեանքը պարզում է իր միտները, իր փիլիսոփայութիւնը:

Այժմ, երբ ևս դիտում եմ այս մեծ ճանապարհը, զգում եմ, թէ որքան արևելյի եմ ինքս, այնքան բան եմ բերել ինձ հետ մեր հին հէքիաթներից: Ամեն բան ինչ կատարում է այս ճանապարհին, իմ աչքում մի առանձին խորհուրդ ունի. չէ որ մենք արևելյիներս արամազրուած ենք զէպի միստիցիզմ: Առաւօտները այստեղով աշխատաւորները դաշտ են գնում դեռ արևը չը ծագած, երբ ևս անկողնում եմ լինում, աւելի ուշ մանուկները հեռաւոր խրճիթներից գալիս են դպրոց, լուսամուտի տակից անցնում են քաղցրիկ շատախօսութեամբ: Երեկոյեան գաշտերից գալիս են խոսով բարձած սայլեր ու սայլակներ և դաշտերի զիւրալի բուրմունքը տարածում են գիւղի փողոցներում, աղջիկները խմբով անցնում են երգելով իրանց ժողովրդական երգերը, որոնք ի զէպ է ասել, ինձ բնաւ դուր չեն գալիս, որովհետև նրանցում տխրութեան, ցաւի նշոյլ չը կայ. իսկ արևելյին կարծես առանց սևի ու վշտի գեղարուեստ հասկանալ չէ կարող: Պատահում են նաև բնորոշ զգեստով տուրխասներ, անգլիացի կամ գերմանացի օրիորդներ ու կանայք, որոնք խըմբերով գնում են վերելք կատարելու զէպի շլէյցարական լեռների ամպամած կատարները:

Եւ ևս դիտում եմ այդ բոլորը, գիտում և մտածում մեր հէքիաթների մեծ ճանապարհների և անձայր արկածների մասին: Այս բոլորն անշուշտ հետաքրքիր է, բայց այսօր ճանապարհի վրայ մի զէպք սեղի ունեցաւ, որ հետաքրքիր լինելուց զատ, նաև խիստ բնորոշ է այս երկրի բարքերի ու բարոյական հասկացողութիւնների տեսակէտից:

Ես իմ լուսամուտից անսայ, թէ ինչպէս մի գիւղացի ճանապարհով քչում էր մի եղ, կամ աւելի ճիշտ՝ քաչում էր՝ մի հաստ չուան պարանոցից կապած: Հնադանդ եզը հետևում տիրոջը առանց զուինն այս կամ այն կողմը դարձնելու: Գիւղացին հասաւ ճանապարհի վրայ շինուած մի տան և կանգ առաւ մտածողութեան մէջ: Նա նայեց այս ու այն կողմը, երեւում էր մի տեղ է փնտրում եզը կապելու համար գրսում: Նրա մտահոգութիւնն ինձ անհասկանալի էր, որովհետև հէնց իր աչ-

քի առաջ ճանապարհի եզրին ծառեր կային, որոնցից շատ հեշտ էր կապել եզը, ուր մնաց, որ կարելի էր կենդանին ազատ թողնել՝ առաջի խտերն արածելու, մինչև որ տէրը կը դարբաց ակերը երևի ուրիշ կերպ էր մտածում, նա յետ գնաց գէպի այն կամուրջը՝ որով անցել էր քիչ առաջ, եզը քաշեց առուի ջրի մէջ և պարանը պնդացրեց կամուրջի փայտերին ու յետ եկաւ, ներս մտաւ առաջի տունը։ Քիչ յետոյ նա գուրս եկաւ, արծաիկեց իր եզը, պարանը ձեռք առաւ և շարունակեց ճանապարհը։ Ես ցած իջայ և նրան ընկերացայ։

— Բարեւ պարոն...

— Բարեւ պարոն։

— Թոյլ կը տայիք արցեօք մի փոքր տեղ ձեզ ընկերանալ։

— Հաճութեամբ, եղաւ պատասխանը։ Մենք քայլեցինք միտսին գէպի գիւղից զուրս։

— Ես ձեզ մի քանի հարցեր ունեմ տալու և յոյս ունեմ չէք զլանայ ինձ պատասխանել։

— Խնդրեմ, ես պատրաստ եմ կատարել ձեր ցանկութիւնը, անշուշտ օտարական էք։

— Այն, օտարական եմ, ես ձեզ տեսայ հեռուից և նախ կ'ուզէի խնայել, թէ ինչո՞ւ համար այս կենդանուն չէք թողնում ազատ գնալ ճանապարհով և կաշկանդել էք պարանով, ինձ թւում թէ նա խաղաղ է և բնառ փախչելու նպատակ չ'ունի։ Գիւղացին ժպտաց։

— Այդ այդպէս է, սիրելիս, բացց մեր երկրում, օրէնքով յունիս, յուրիս օդատեսս ամիսներում անասուններին ազատ չէ կարելի թողնել, որպէս զի չը արորեն հարեանի խտերը, բնոհանուր խտաունձից յետոյ միայն մեր գամերից հանում ենք անասուններին և արձակ՝ թողնում գաշտերում. իսկ մինչև այդ՝ նրանք բոլորն էլ փակուած են գամերում և կերակրւում են հնձած խտաով։ Եզը՝ որ անտում էք, ես գնեցի այսօր հարեան գիւղից. նա փախչող չէ, բացց էլի անասունէ, կարող է ճանապարհի եզրից գնալիս այս ու այն կողմից կանաչին մնաս տալ, իսկ կանաչը իմը չէ, ուրիշին է, որ աշխատել է, հասցրել, որ հաւարի իր անասունների համար։ Դէ, որ ամեն մի մարդ, որ եզ է քշում մեծ ճանապարհով թոյլ տայ, որ իր անասունները մի փոքր արարեն մօտի արտերը և խտասեղերը մնան անգին կը լինի, և շտաերը կը թշուառանան, ահա թէ ինչո՞ւ ես իմ եզը քաշում եմ պարանը կտպած պարանոցից, այսպէս լատէ, թէ իմ խիզը հանդիսա է և թէ այս արտերի տէրերը կարող են հանդիսա լինել։

— Այժմ մի ուրիշ հարց, ասացէք խնդրեմ, ինչո՞ւ քիչ ա-

ոաջ ձեր եզը քշեցիք առուի մէջ մտցրիք և կապեցիք կամրջից:

— Պատասխանս համարեա նոյն է, ևս չը գիտէի ուր թողնել կենդանուն, երբ ևս ստիպուած էի մի առ ժամանակ հեռանալ նրանից, ճանապարհի ծագին կայել չէի կարող, որովհետև կ'ուռէր ծառի տակի կանաչը. ազատ ձգել նոյնպէս անհնարին էր, չորս կողմս ուրիշի չը հնձած խոտատեղեր էին: Միակ ելքն այն էր, ինչ որ արեցի:

Դուք գուցէ զարմանում էք, շարունակեց շփեցարացին, որ մենք այս աստիճան ծայրայեղ հոգատարութիւն ունինք զէպի մեր խոտատեղերն ու արօտատեղերը, բայց պիտի գիտենաք, որ մենք նրանցից բացի ուրիշ ոչինչ չ'ունինք, մեր աղքատ բնութիւնը միայն խոտ է տալիս մեզ, և խոտը մեզ համար ամեն ինչ է. նա է մեր ցորենն է, և մեր գարին, և մեր այգին, նրանով ենք պահում մեր անասունները, հետևապէս նա է մեր զլիաւոր արդիւնարեութեան, այսինքն կաթնեղէնի աղբիւրը:

Ես լսում էի ծայրայեղ ուշադրութեամբ, ինձ համար այս փոքրիկ խօսակցութիւնը, այս փոքրիկ գիպուածը շատ բան էր պարզում:

— Մեր երկիրը, ինչպէս տեսնում էք, աղքատ է, շարունակեց խօսակիցս, ինչպէս է ձերը:

— Օ՛, մերը շատ հարուստ է, բնութիւնը մեզ տալիս է ամեն ինչ և այն քիչ աշխատանքով, տաք, հարատային երկիր է:

— Բաղդաւորներ, ասաց նա, ևս նայեցի երեսին և չը կարողացայ ժպտաւ ծածկել: Ինքն էլ չը գիտէր, այս միամիտ չը վէցարացին, թէ ինչ կ'ծու հեզութիւն կայ այս մի հատիկ բառի մէջ, բաղդաւորներ...

Գիւղից շատ էինք հեռացել, ևս սեղմեցի խօսակցիս ձեռքը և յետ դարձայ զէպի գիւղ, նոյն ճանապարհով:

Ես քայլում էի հանգարտութեամբ, գիտելով կանաչազարդ չրջակայքը, ճանապարհը և նրա երկու կողմին շարուած պղտղատու ծառերը: Ես տեսնում էի, թէ ինչպէս անմիջապէս ճանապարհի եզրին երկու կողմից բարձրանում է խոտը պատիպէս, որովհետև ոչ մի կենդանու սաք չէ գիպել: Յիշում ևս սիրելիս, մեր արտերի մարդերը, մանուսանդ այն արտերի, որոնք մեծ ճանապարհների եզրերին են դառնում. մարդ ասելով մեզանում հասկանում են խրաքանչիւր արտից մի բաւական մեծ տարածութիւն, որ թոյլատրուած է արտել, ուտացնել, ոււերել, երանի թէ միայն մարդով բաւականանան. յաճախ նրա անունով հասնում են կենտրոնին: Ո՞վ է մտածում, թէ որքան աշխատանք, որքան քրքրինք է արտուում յանցաւոր ստների տակ:

Անցնում եմ այս ճանապարհով, գիտելով նաև պատուհներով

ժանրաբեռնուած ծառերը հետաւոր դաշտերում: Այս ծառերը տնկուած են խրաքանչխր արտի կամ խոտասեղի մօտ և ի հարկ է պատկանում են հողատիրոջը: Ինչ ասել կ'ուզէ, որ նրանց վրա հսկող պահապան չը կայ, ստուգները մեծանում, հասնում են, ժանրաբեռնուած ճիւղերը կախում են ճանապարհի վրայ, օրօրում են անցորդների գլխին կամ քսում են նրանց ուսին, ասես ուշադրութիւն զրաւելու համար, բայց և այնպէս ոչ որ, ոչ որ ձեռք չի բարձրացնում քաղելու թէկուզ մի հատ պտուղ, կարելու մի փոքրիկ սաս, որովհետեւ զրանք ուրիշի սեփականութիւն են, ուրիշի քրտինքի արդիւնք, որ խորին յարգանքի առարկայ է:

Ճանապարհին ևս տեսնում եմ սալորի, կեռասի, խնձորի բազմաթիւ ծառեր, նրանցից շատերի տակ թափթփած են հասած պտուղները, անցորդները տեսնում են, բայց ոչ որ չի կրօնանում մի հատ վերցնելու, մինչև տէրը կը դայ և կը հաւաքի,

Եւ ինչ որ ուշադրաւ է, այստեղ դաշտերի պահապաններ չը կան. զրոնում, ինչպէս և զիւղերում, ամեն ինչ թողուած է հասարակաց խնամքին: Զխանը և զտղութիւնը վաղուց անցել են հէքթիթների կարգը: Արեւաշատ տեղերում պատահում են խաղողի այգիներ, որոնցից և ոչ մէկը ցանկապատ չ'ունի: Պտուղը հասնում է, կախում ճանապարհի վրայ, զեղին սղկոյգները ախորժեղի տեսքով զրաւում են անցորդների հայեացքը և սակայն ոչ որ չի մօտենում, ոչ մի ձեռք չի մեկնում, չը նայելով որ հսկող աչք չը կայ: Եւ աւելի հետաքրքիրն այն է, որ հասակաւորներից ոչ պակաս ուշադիր են գէպի ուրիշի սեփականութիւնը նաև փոքրիկ երեխաները: Այսպէս իմ լուսամուտից երեւում է հարեանի բակը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ պողատու. ծառերի մի պարտէզ փռուած սանն առաջ: Բակի ասելով մեր երկրում հասկանում ենք սովորաբար մի փոքրիկ տարածութիւն. ազրի մէջ կորած և երեք-չորս արշին բարձր պատով չըջտպատուած: Շատ անգամ այլքանով էլ չը բաւականացած, մեղանում պատերի վրայ շարում են սպակաւ կտորաւոր, փուշ, որ բարձրանալն անհնարին լինի: Այստեղ բակին ինչպէս ասացի մի ծառազարդ պարտէզ է, չորս կողմից բայ, առանց պատերի, առանց պատուարի կամ խրամապի: Այսպէս է նաև մեր հարեանի բակը, խնձորենիները պտուղներով ժանրաբեռնուած՝ կախկիլուել են հէնց ճանապարհի վրայ, որ անցնում է այց տան առաջից: Օրական երկու անգամ ևս տեսնում եմ զպրոց յաճախող հինգից տասն տարեկան երեխաների խմբեր, որոնք կանչուտակելով անցնում են այց ծառերի տակից, և ինչ, մինչև անգամ վերև չեն նայում: Այց փոքրիկներից և ոչ մէկը մի հասիկ քար

չի ձգում գէպի ծառերը: Սա ինձ ուղղակի սպչեցնում է: Նըրանք վազվզում են ճանապարհով, քաչքչում են իրար և ոչ մէկը չի նեւուում գէպի արձակ դաշար, որպէսզի չը տրորեն խտաները: Բաւական է, որ նրանցից մէկն ու մէկը մի քիչ դուրս գայ ճանապարհից և ահա մի քանիսը մի անգամից կանչում են, «c'est défendu», այդ արգելում է:

Շվէյցարական դաշտերով անցնելիս մարդ երբեմն տեսնում է այս ու այն տեղ տնկուած փայտեայ փոքրիկ սիւներ և վրան գրուած մեծ տասերով՝ «այս կամանք մասնաւոր է և ոչ հասարակական» կամ թէ «այս մասնաւոր սեփականութիւն է և ներս մանելն արգելուած», է կամ «ճաշտարար դատաւորն արգելել է այստեղ մտնել»: Ես այս փոքրիկ յայտարարութիւնները միանգամայն բաւական են, որ անցորդները յարգեն սրա կամ նրա սեփականութիւնը:

Դու յիշում ես սիրելիս, մեր զգրոցի ճանապարհը. մենք գնում էինք հարեան գիւղը սովորելու. բացի իսկական ճանապարհը, որ բաւական երկար էր, կար մի այլը, որ թէն շատ կարճ էր, բայց անցնում էր մի շարք արտերի միջից: Եւ ամենայն տարի աշնանից հասարակութեան և այդ արտերի տէրերի մէջ սկսում էր մի անվերջ պայքար: Հասարակութիւնն իր երթեկուտի համար ընտրում էր կարճ տարածութիւնը բուրովին անփոյթ, թէ այդպիսով արտում է իր հարեանի արտերը, ոչնչացնում է նրա երեխաների սպրուստը: Արտերի տէրերը զիմում էին իրանց կարծիքով մի շատ բազիկալ միջոցի, իրանց բարիքը փրկելու համար: Նրանք երթեկուտի հաւանական տեղի առաջ փորում էին մի լայն, երկար ու խոր խրամատ, նոյն բանն էին անում արտի միւս ծայրում, որտեղից պէտք է դուրս գային անցորդները: Նրանք կրկնակի նպատակ ունէին, նախ արգելել անցուղարձը, իսկ ու ըմբոստ է, մըտածում էին նրանք, թող ընկնի, ոտը կտարուի, որպէս պատիժ: Հասարակութիւնը սակայն այնքան էլ յիմար չէր, նա պոսպո էր գործում արտի մէջ, աւելի լայն չըջաններով էր տրորում, նոր անցք, նոր ճանապարհ հարթում. փորում էին նորանոր խրամատներ, բացում էին գարձեալ նոր շաւիղներ, մրցութիւթիւնը շարունակուում էր մինչև մայիս, երբ վերջնական յաղթանակը մնում էր հասարակութեանը, որովհետև տէրերը պապարում էին բողոքելուց, քանի որ էլ ոչինչ չէր օյնի. արտում տեղում էլ ոչինչ չէր բուսնի: Ես ու գու էլ ի հարկէ շատ ուրախ էինք հասարակութեան այդ յաղթանակով, որ խիստ կարճացնում էր մեր ճանապարհը: Ես լաւ յիշում եմ, մեր համարեա բոլոր զիւղերում նման երեւոյթներ կան. վայ այն մարդուն,

որի արտը կտրուկ ճանապարհի յարմարութիւն է ներկայացնում, նա անպատճառ սոփ տակ կ'երթայ, նա անպատճառ ճանապարհ կը դառնայ:

Ես յիշում եմ նաև մեր դաւառի ս. Լուսաւորիչ ուխտատեղին, որ դանւում է Ա... դիւղի հանգերի մէջ: Ուխտադնացութիւնը ամառն է կատարւում, երբ արտերն ու աոււոյտները զեռ հնձուած չեն լինում: Ա...եցիք ուխտադնացութիւնից մի օր առաջ ստիպուած են լինում ջրել եկեղեցուն մօտիկ դանուող տափերը, որպէսզի ուխտաւորները արտրկչը կարողանան, թէ չէ ոչինչ չի փրկի: Հարբած ու զուարճացող ամբողջը աւերած է ավուում այն եկեղեցու շուրջը, ուր աղօթելու է եկել, առանց մտածելու, որ այդպիսով իր ուխտադնացութիւնը մի կատարեալ յանցադորժութիւն է: Զարմանալի է, ամենից աւելի ամենուած, ամենից աւելի տառապող ժողովուրդը այդպէս սիրում է թշուառութիւն տարածել իր շուրջը: Սա մի ուշադրաւ երևոյթ է:

Հասարակութիւնն անհատի դէմ, այստեղ է մեր երկրի շատ չարիքների հանդայցը: Որբը, անգօրբը, այրին, խեղճը, մենակ մարդը, սրանք բոլորը մի մի զոհեր են այն հաղար դիւանի հրէշին, որի անունն է հասարակութիւն: Ես հասկանում եմ թէ ինչու մեր երկրում, ուր իշխում է հասարակութեան համարեա զազանային կամայականութիւնը, մարդիկ այնպէս ուղում են եղբայր, մերձաւոր, ազգուտակ, կամ ինչպէս իբանք են ասում «քեօմագ» ունենալ: Յիշում եմ, ինչպէս հայրս յաճախ կրկնում էր, թէ որ Աստուած էլ «անքօմագ», առանց ակալէր լինի, խղճալի է: Որքան դառն ճշմարտութիւն կայ այս խօսքերի մէջ: Հասարակութիւնն անհատի դէմ է սեր երկրում, հասարակութիւնն անհատի համար է Շվէյցարիայում: Սա մի ուշադրաւ հակադրութիւն է. մեղանում ուրախանում են սեմնելով որ մի մարդ առաջինը արտեց և անցաւ մէկի արտի միջից, որովհետև միւսները հետևում են նրան առանց վրդովելու. այստեղ, Շվէյցարիայում, եթէ ճարուէր էլ մի այնպիսի անողորմ մարդ, որ առանց խղճահարուելու արորէր, անցնէր մէկի արտով, այնուամենայնիւ դա ընդհանուր զայրոյթ կը յարուցանէր և ոչ ոք նրան չէր հետևի: Հասարակական խիղճը մի արդար և զրատա դատաւոր է այստեղ, որի վճիռներից ոչ ոք խուսափել չի կարող: Մեղանում նա քնած է:

Բարոյական զազաւարները սիրելիս, ինչպէս և սեփականութեան վերաբերեալ հասկացողութիւնները յարաբերական են տեղին և ժամանակին: Ծատ բան որ մի ժամանակ համարուել է ընդհանուրի սեփականութիւն, այժմ մասնաւոր է, ինչ որ

մասնաւոր էր, դասնում է ընդհանուրս Ով գիտէ զուցէ և ոչ շատ հեռաւոր ապագան սեփականութեան իրաւունքի և առհասարակ նրան կապուած բարոյական հասկացողութիւնների չորջանում այնպիսի աւերած առաջ կը բերի, որ ներկայումս մենք երեակայել անգամ չենք կարողանում: Ինչ որ պարզ է, ինչ որ զուրս է ժամանակից և տարածութիւնից, զա մարդկային հոգուն յատուկ արդարութեան և արդարադատութեան զգացմունքըն է, որին այս կամ այն հասարակութիւն ենթարկում է իր այս կամ այն բարոյական հասկացողութիւնը և նրա վճռին ականջ դնում: Իր շէմքից հեռացող հիւրին կողապտող քիւրզը իր որոշ բարոյական օրէնքն ունի, որ համապատասխանում է իր արդարադատութեան զգացմունքին. նա չի էլ հասկանայ, եթէ փորձես նրան բացատրել իր վարմունքի գէշութիւնը: Այստեղ սեղադրանքը տեղ չ'ունի, նրա գլուխը ամբողջապէս յեղաշրջել է պէսք է հեռեանքի հասնելու համար: Յունական մի հին երգ ասում է ձիւմ հարստութիւնը՝ իմ տէգն է, իմ սուրբ և իմ սիրուն վահանը, որ մարմնիս պատասպարանն է. սրանցով եմ ես վարում, հնձում և քամում իմ խաղաղի որթերի զինին: Սա էլ կատարեալ քրդական հասկացողութիւն է եղել յատուկ և բնորոշ հնագոյն ժամանակներին: Բայց նոյն յոյնը իր մտածողների, փիլիսոփաների, բանաստեղծների շնորհիւ վերջ ի վերջոյ մշակից այն քաղաքացիական առաքինութիւնները, որոնց վրա մենք նոյն իսկ այսօր սրանչանում ենք: Այսպէս միշտ պատմութեան էջօլիււցիայի ընթացքում բարոյական հասկացողութիւնները փոփոխում են անընդհատ, անխախտ և կայուն է միայն արդարադատութեան զգացմունքը, որը զարթեցնել, այսպէս ասած յղկել, կռկել է հարկաւոր:

Իսկապէս մեծագործ մարդ կը լինի նա, ով կարողանայ մեր ժողովրդի հասարակական խիղճը կրթել, զարդացնել, բզդալուն դարձնել զէսլի չրջապատող չարիքը: Մի միայն հասարակական այնուայսմ խիղճը կարող է վերջ դնել տգէտ, խաւար ժողովուրդների զլիսին ծանրացող չարիքին որի խոչոր հիմունքներից մէկն է անհատի և հասարակութեան շահերի անհամաձայնութիւնը, այդ երկու ֆակտորների մշտական պայքարը:

Լնյս, լնյս մեր ժողովրդի հասարակական խղճի մութ խորշերը լուսաւորելու:

Յղբութիւն!

Բնկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

Փ Օ Լ Ի Ս

Ինձ էլ վիճակուած էր խմել դառն բաժակը... Օսմանլուի դաժան մտրակը քշեց զիս արեղակնային շողերով լուսաւորուած մեր այս երկրի երեսից մի ստուերամած ներքնաշխարհ, ուր ես թմրութենէ սթափուածի մը նման յանկարծ աչքերս բացած՝ գտայ... Վանայ բանար: Որոշուած էր որ չատ անմեղների նման ես ես քամէի դառն բաժակը. տարիներ փակուած մնայի իմ այգ սև բնակարանի մէջ:

Այդ թշուառութեան սև օրերին մէջ էլ ինչերի ասես չի հանդիպեցայ. ինձ վիճակակից տարաբաղդիկ կալանաւոր եղբայրներիս ինչ ահուելի տանջանքներ չի տեսայ, որոնց յիշելու ժամանակ աչքիցս արցունք հոսել կը սկսի:

Արդ, հիմա որ անցել են սև օրերը, ու ես էլ սղատ եմ կապերից, պիտի փորձեմ թիւրքական բանտային աշխարհին մէջ գոյութիւն ունեցող փօլիսական կեանքից մի քանի ճշգրիտ գծեր վեր հանել:

Փօլիսի մերկ ու խոնաւ յատակին վրայ փռուած էի անշարժ, անկենդան դիակի մը նման: Փորձեցի վեր կենալ նստել, գիտել իմ շուրջը... սակայն չի լաջողուեց ինձ, որովհետեւ թրմրած ջիղերս ապստամբուել էին կամքիս դէմ: Յունուարի սառեցուցիչ սաստկադին ցուրտը, թանձրախուռն ցամաք պատերի վրայ կազմուած բորբոսի վարշ հոտը, ահա այն ամենը, զոր կրքնամ զգալ իմ շուրջը եղածներից:

Գիշեր է, սև, ահաւոր գիշեր: Արդէն օր ցերեկով մութ եղած խցիկս այժմ դժոխքի ամենախուլ անկիւնների նման խաւարապատ է դարձել, ճրագ չի կայ, լոյս չի կայ: Ապա հոգեկան աշխարհս... անոր յուզումներն ու արհաւիրքները... անդիմադրելի քաղցա-

ծուլթիւնն էլ հօ ստամոքսս կը ծակծկէ չարաչար: Մերթ կարծես երկրի բնակիչի մէջէն լսելի կը լինի բանալիներ ու խուլ շառաչք, որուն ազգած սարսափն ու սուկումը վատարազգիկ փօշխականներ միայն կարող են զգալ: Ահաւոր շառաչ, որուն քիչ յետոյ պիտի յաջորդէր աղէխարչ ազազակներու ճիչեր, սրբտակակիմ հառաչանքներ, որոնց արբանջիւն արծազանքները զնդանի գծոխային յարկին տակ կը մարմրին:

Ուրից համաչափ արտփուն մը, զորս միշտ կը լսէի, կը մասնէր ինձ պահակ զինուորի մը ներկայութիւն. մտածումի առաջին թափը կը զրոյէր զիս մեծապազատ ազերսանքով զիմեւ պահակի զթասրտութեան, որ ուտելիք ու ճրագ բերէր, բայց լըջութիւնը հասկցոյց ինձի, որ լսելը աւելի նախընտրելի էր, որովհետեւ իսլամի սրբիներ զթուլթիւնը շատ ազէկ բան չեն նկատեր, և իրաւ էլ, սաճիկները այդ իմաստով ժողովրդական առած մ'ունին՝ «մէրհամէթաէն մարազ գեալուր», զթուլթիւնէն ցաւ կը ծնի:

Վերջապէս ցուրտն ու խոնաւութիւնը ստիպեցին ինձ բուրբ ուժերս հաւաքել, ճիղ գործ գնել կանդնելու ու շարժուելու: Աչքի լոյսից զուրկ մարդու նման ամբիւրդով, արմարով-բալով, պատը ինձ ուղեցոյց արած՝ մի չըջան սափ ճղնաւորական տանս մէջ, դուռը դտայ, սկսեցի տախտակի արանքներ որոնել, որպէսզի անոնցմէ գուրս նայելով տեսնեմ թէ արտաքոյ այս գերեզմանային խոռոչից լոյս մը, շարժում մը չը կայ. բայց յուսախարութեան մասնուեցայ, բոլոր ծակ-ծուկերը պիտոյ գուցուած էին:

Յուրար թափանցած էր մինչև ոսկորներս ծուծը, ու ասեղի պէս կը ծակծկէր զայն, սաստիկ կը գողայի, ատամներս իրար զարնուելուց սղտիկ ճարճատիւններ կը լսուէին. աւանդ, ինչ անել, երբ տարնալու ամեն միջոցներից էլ զրկուած էի, էլ չի կրցայ սափ վրայ կանգնել, սղտագած նստեցայ քամակս ցուրտ պատին սոււած: Այդ վեճակի մէջ քուն երեակացել հօ անմտութիւն էր, ինչպէս կ'ասեն—աչքերս ազնծացել էին: Միայն վառ ու կենդանի բացած էր երեակայութեան թևերը, որոնք արտաքին աշխարհի հորիզոնի վերեւ խուլ թախչրներով կը տարուբերէին. սփ, ինչէր կ'անցնէր այդ պահուն իմ հոգեկան աշխարհին մէջ, ինչ ցաւատանջ կսկիծներ, ինչ փոթորկայցոյզ մրրիկներ:

* * *

Երբ ես այս կէս-նստած վեճակի մէջ՝ ինկած էի մտածութեանց ուղիւնը, յանկարծ սկանջիս զարկեց երկաթների խուլ շառաչ մը, որուն անմիջապէս յետոյ յաջորդեց այնպիսի խու-

րին հառաչանք մը, որ ապտոածներ կրնար վշրել: Է՛լ ուրիշ բան չի լսեցի, բայց լսածս էլ բաւական եղաւ ինձ հասկըցնելու, որ կալանաւորի մը գրացութիւնը կը վայելեմ, որուն և իմ միջև եղած անջրպետար սլառ մը լինելու էր միայն: Աղու հառաչանք մ' էլ իմ կուրծքից թռաւ, համակ լսողութիւն գարձած ուղեցի իմանալ, թէ հառաչանքիս արձագանդը պիտի կրնամ առնել գրացի կալանաւորից, երբ յանկարծ լսելի եղաւ ոտնաձայն մը, որը գալով մօտեցաւ: Մէկ էլ հնչեցին բանալիներ, և դուռ մը ակար ճօննչ հանելով, իր ծխնիին վրայ դարձաւ. դեղնափայլ լուսոյ քանի մը աղօտ նշայներ իմ խցիկը սողացին, որով իմացայ թէ իմ ու գրացիս միջև եղած որմը բացուածք մ'ունի, ու ես անցայ այդ բացուածքի առջև, աչքս դրի նեղիկի ծակին. առաջին ակնարկիս հանդիպեցան երկու զապտիէներ, մէկի ձեռքը ճրագ կար, իսկ միւսին հաստ դաւազան մը: Աղոնք կանդնած էին մեռելի նման փռուած երկայն գիակի մը մօտ, որի սաները մեծաօղ չղթայով մը կապուած էին իրար, միջից անցուցած էին մի ուրիշ երկայնաձիգ չղթայ մը, որ կ'երկարէր մինչև վիզը, որուն վրայ անցուցած անուրից (Varcen) մտնելով կ'երթար գրան շէմքի տակ փորուած անցքից գուրս կ'երնէր ու... էլ չեմ գիտեր ո՞ւր: Զապտիէներից մէկը կ'ատէր միւսին.

—Օսման, չի լինի թէ այս դեաւուրը սատկած է:

—Ո՞ւր էր որ սատկէր, պատասխանեց միւսը—այդ քեափիրներն կաղմուածքը ապտոածից էլ ամուր է. մէկ երկու շարթուաց շարչարանքը ի՞նչ կ'անէ անոնց:

Այդ ժամանակ Օսմանը, որուն մի կողմի վրայ ծռուած տափակ քիթն ու հրէշային կերպարանք սարսուռ կնիղդէին ինձ, մի քանի դաւազանի և ոտքի հարուածներ տալով գիակին՝ դուռաց.

—Վեր կաց, գինի-գիւրզի քեափիր: Բայց ո՞չ մի ձայն, չարժում չ'եղաւ գիակից:

Բարկացաւ, կատաղութեամբ որոտաց գծոխային արարածը.

—Գեաւուր օղլի, գեաւուր, վեր կաց ասի է, չեմ լսեր, դեռ շատ պիտի սպասեցնես մեզ այս ցուրտ որջոյ:

Դարձեալ ոչ պատասխան, ոչ շարժում:

Այս անգամ անաղորոյն զապտիէի համբերութիւնը հատնելով, մօտեցաւ գիակին ու գլխից բռնելով թափ տուեց զայն. տեսնելով որ կը շնչէ տակաւին, կարծեց ու շաղնայ եղած է միայն, և բնիկից խնդրեց, որ մի քիչ ջուր բերէ. վերջապէս սթափեցուցին գիակը ու վզի անուրը արձակելով ասին տարան գինքը, խուրը թողնելով սեաւոր մթութեան մէջ կրկին:

Մի քառորդ ժամ հաղիւ էր անցել, գուոր կրկին ճանչաց. անմիջապէս ծակին դէմ անցայ, նոյն երկու զապտիէներ իրենց

տարածը քիթն ու բերան արիւնաներկ ներս ձղեցին, դուռը կղպելով զնացին իրենք իրենց մուտաւրով, ռորչափ չես խոստովաներ, աւելի և աւելի չարաչար տանջանքների պիտի ենթարկուես, մինչև որ պիղծ չունչդ դուրս փչես»:

Աղոնք տաս քայլ չէին հեռացել, երբ հրամանի մը վրայ կրկին ետ դարձան, իմ խուցի շուռը բացին, ինձ նստած գանկւով՝ հրէշային ծիծաղ երեսներն հարցուցին.

— Ի՞նչպէս ես, լու ես...

Ինձ էլ տարան գոմիստէրի (ստիկանապետ) մօտ. ապա հրամայեցին որ ինձ խալաթեն^{*}). և խալաթեցին էլ...

* *

Ան բնակարանիս մէջն եմ, բայց հիմայ էլ առաջուայ նման չեմ կրնար ազատ շարժուիլ, ահազին օձ մը փաթաթուած է երկու սաներս, կը սեղմի ամբապինդ, երկաթից է սակորներս փշորդ այդ սոսկալի օձը, որուն մաքինայ անուն տրուած է: Հինդ մեծ՝ երկու տեսակ օղակներից կազմուած է: Օղակներից երկուքը ստանց վէզերի վրայ կը բևեռն, իսկ երեքն ալ իրար կպցնելով՝ կը կապեն սաներ. այդ հինգ օղակ միասին 6-8-12 օխայ ծանրութիւն անջրան կը քաշէ սոքի երեսներ, մինչև ուսոյցներ և վէրքեր կը գոյանան:

Օր ցերեկ էր եղել, չըջափակող խաւարը փոքր ինչ նոսրացել էր, թէպէտ կար փոքրիկ սպասուհան մը, որ ոչնչի չէր ծառայեր: Այժմ կրնամ իմ չըջապատը որոշել: Խցիկիս տարածութիւնն է հինգ քառակուսի քայլ, այսինքն՝ լայնութիւնն երկու քայլ, իսկ երկարութիւնը երեք, զոր կը չըջանակեն չորս թանձրաչէն սրմեր, որոնց վրայ շինուած է խիտ դերաններով ծածկուած առաստաղը: Պատերէն միտն վրա բացուած ծակ մը կայ, որ ստիպուած եմ գուռ անուանել. տեսական խոնաւութիւնից առաջացած բորբոսը բռնել է ամեն կողմ և անշնչելի դարչահոսութեամբ օղը անշնչելի կը դարձնէ. անմիտ սարդը իւր սատայներով ծածկել է բոլոր անկիւնները, այն ինչ՝ ճանձերն այնտեղ մտնելուց անգամ կը սորսափին: Մի քանի մկներ, որոնց բոջնը չեմ գիտեր ուր էր, երբեմն գուռս գալով՝ յարձակում կը գործէին. վերջապէս ամեն բանէ դուրկ, բայց ամեն սոսկալիներով լի խոնաւ ու խաւար խոստչ մը, ահա ձեզ մի բնակարանի ընդհանուր նկարագիրը, այդ է ազէտաւոր փօլիսը, որուն մէջ խալաթի որդին փակելով հայ Պոլիսապիտին՝ դժխտային անդուր տանջանքներով կը մաշէ ու կը դրաւէ անոր կեանքը, որպէս իւր հօր սեփականութիւն:

*) Բանտային լեզուին մէջ մէկ մը խալաթել՝ կը նշանակէ ընծայ տալ... շղթայ, անուր և այլն:

Անօթի եմ... Բաղցածութիւնս կը ծակծկէ ստամոքսս, սակայն ո՞վ պիտի աայ ինձ մի պատաս հաց, որոչել են քաղցած պահել: Շատ լաւ գիտե՞նալով՝ որ աղերսանքով կարելի չէ տաճկի գութը չարժել, ակամայ համակերպեցայ վիճակիս: Դժբաղ-զարար ինձ մօտ գրամ էլ չի կար, որուն անխօս՝ բայց ազդեցիկ միջնորդութեան գիտէի...

* *

Չարմանք, իմ կալանաւոր զրացին (պատի տակէն կը դիտէի), որ գիշեր գիակի մը նման գետին փռուած անշարժ և անկենդան, այժմ երկու ձեռքերով իր ծնկները զրկած՝ հանդիստ նստել է մտածկատ երկոյթով մը. 25—27 տարու երիտասարդ մը կ'երեւէր, շալուշալվար էր հագած, որով հասկըցայ չինական մ'էր: Անդրմազրկի բաղձանք մը կը մըղէր զիս անոր ուշադրութիւնը դէպի իմ կողմ գրաւել, որպէս զի առիթ գտնեմ իւր հետ խօսելու. մի քանի անգամ հազացի, ստիցս շղթաներ իրար զարնելով՝ ուժգին հնչեցուցի, նա հագիւ իր զլուխը դարձուց, բայց տեղից չը շարժուեցաւ, այնպէս որ ստիպուեցայ ուշիկ մը ձայն տալ իրեն հետեւալ խօսքերով.

—Ախպէր ջան, ո՞վ ես դու, ո՞ր գիւղից:

Շղթայակապ գիւղացին կամայ դէպի պատի ճեղքն յառաջանալով՝ պատասխանեց.

—Ա՛խ, ես մինչև հիմա գիտէի թէ դու տաճիկ ես. այն անպիտան տաճիկները ասին, թէ քեզ թուրք զրացի մը ենք տուած, այդ պատճառաւ կը զլուշանայի խօսելու: Ես Ո... գիւղից եմ, անունս է Մուրադ:

Եւ ապա պատասխանելով զանազան հարցմունքներին՝ պատմեց, թէ ինչպէս քիւրդ ֆազիներ (կարդացող կրօնաւոր) զինք կողոպտելէն վերջ բռնել բերել են կառավարութեան, իրենց յանցանքը ծածկելու համար ամբաստանելով զինք իբրև հայ կաշախների ուղեցոյց-առաջնորդ. պատմեց, թէ ինչպէս երկու շարաթներէից ՚ի վեր զանազան տանջանքներով կը շարչարեն զինք, որպէսզի յայտնի, թէ որոնք են այն հայ գիւղերը, որ հայ կաշախներին հաց և ապաստան կը տան:

Երկուստեք էլ համակրութիւն մը ծնաւ մեր մէջ, մենք սկանք իրար միմիկարել ու սրտապնդել:

Առաւօտից մի քանի ժամ անցիկ էր կարծեմ, երբ Մուրադին հաց տուին: Երբ զպատիէներ դնացին, Մուրադ մօտենալով ծակին՝ ինձ ասաց.—Այս ամբողջ երեք օր է, որ բերանս մի բան գրած չէի, կ'երեւի թէ անգութներ մտածել են անունդով կազդուրել ուժերս, որպէսզի աւելի խիստ տանջանքներ կրել կարենամ:

—Չի լինի թէ երեկ դիչերուայ ուչադնացութեանդ պատճառը երկար անօթութիւնդ էր:

—Չէ տօ, երեք օրն ինչ է, որ մարդ չի կրնայ երեք օրուայ քաղցածութեան զիմանալ. ես զիտմամբ այգալէս կեղծեցի, որպէսզի այն անդուլթ արարածներին հաւատացնեմ, թէ՛ էլ չեմ կրնար տանջուել:

Մութադ կուշա-կուշա կերաւ հացն ու չօր ժաժիկը և ապա սաստիկ ծարաւ զգաց, բայց ջուր չի կար. փօլիսի դուռը զարնելով՝ կանչեց իրեն հաց բերող զապտիէին և քիչ մը ջուր խնդրեց:

—Սալասիր. սիրայիր կերսով պատասխանեց իրեն խորամանկ զապտիէն, —բերել կը տամ, հաց տուողը անշուշտ ջուր էլ կը տայ:

Եւ իրաւ քանի մը վայրկեան վերջ կիտով չափ լեցուն փարչ մը բերին Մութադին, որը սաստիկ ծարաւից չորցած, պապակած, մէկէն բերան տարաւ զայն ու... մէկ էլ յանկարծ փարչը ձեռքից փար նետեց ուժգին, սկսեց բերան առած և խմածը դուրս թափել ու սրժկալ... Ի՞նչ էր պատահել... Տէր Աստուած... Այդ ատէն փօլիսի դրան առջևից հրէշային ծիծաղի մը հետ լսելի եղան հետևեալ խօսքեր.

—Մութադ, խմածդ աննշ...

Տարաբաղդիկ Մութադին ջուրի տեղ մէջ խմեցուցին, ինչպէս և աւերակցի Տէր Սարգիս քահանային: Մութադ փրփրեց, կատաղեց իւր զգացած անհուն զայրոյթից և գոռաց... Բայց ի զուր, ինչ կարող էր անել վանդակի մէջ փակուած աւրածի կորիւնը:

Այդ տխուր օրուայ իրիկուն ինձի քիչ մը չոր հաց և ջուր տուին, իւրաքանչիւրից 30-ական դրեմ (մօտ 20 մսխալ) ու մի փաղասի կտոր. այս բանը ինձ առիթ տուաւ հաւատալու, թէ զօրաւոր միջնորդութիւն մը եղած է դրսից ինձ համար, և իրաւ էլ այդպէս էր, հօրս գեղին սակիներ մեղմացուցին սև օրերիս ցաւերը:

* * *

Գիշեր է... կժկուել եմ չոր փաղասի կտորին վրայ. ծանր շղթայի ազդեցութիւնից ստներս սաստիկ կը ցաւին. ցուրտը կը հարուածէ թուրցած մարմինս. երկու օրուանից ի վեր չի դոցուած աչքերս էլ թմրութենէ աներ դոցուեր են: Անակընկալ ազմուէի մը լսուեցաւ Մութադի փօլիսին մէջ, ճրագի մը ճառագայթներ պատի ճեղքից իմ փօլիսը թափանցեցին, բան մը... կ'անցնէր այնտեղ: Ծակին դէմ անցայ և... Այնտեղ

երկու զառարկէներ, բանասայնն անօրէն—[Թօմրուզ *) ազատին և հարցարննիչ ստտիկան մը, որոնք բոլոր միասեղ կ'աշխատին ուշադնաց մարդը սթափեցնել ծրագրուած նոր տանջանքի մը համար, բայց ինչ էլ որ արին, չի յաջողուեց իրենց վեր հանել զայն: Այդ ժամանակ զազանամիտ Թօմրուզ ազատին դէպի հարցարննիչ ոտտիկանը զանուշով՝ ասաց:

—Մամօջ էֆէնդի, այս քեաֆիրը ինչպէս որ կ'երևի, այսպէս կեղծելով կը խարէ մեզ, եկէք հրամայուած տանջանքը վաղու ան թողնենք այն պայմանաւ որ, այս զիշեր մի ուրիշ օյին խաղանք իրեն զլխին, որ նա համոզուի, թէ խարելով չէ թէ մեր խտաութիւնից կրնայ ազատուիլ, այլ ընդհակառակն կը սաստկացնէ զայն:

—Շատ լուս, պատասխանեց Մամօջ էֆէնդին, ես էլ համաձայն եմ քեզի, բայց ինչ է արդեօք քո նոր օյինը, որ քիչ մը ազդեցիկ լինելու յատկութիւն ունենայ:

—Ես կ'ասեմ որ այդ քեաֆիրի մարմնի մազերը այրեմք:

—Ենչա (կեցցես), կը խոստովանեմ, որ այդ առաջարկը շատ հանճարեղ է և ազդեցիկ, միանպամայն և զուարճացնող:

Ես պատին ետև՝ հրէշի խօսքերից սարսափահար եղայ և սկսեցի գողալ: Մուրացն էլ սարսափած ու սոսկումով համակուած՝ բնզոստ վեր թռաւ, որ կատաղած առիւծի նման յարձակուի զինք շրջապատող զազանների վրայ, բայց ինչ կարող էր անել միայնակ, այն էլ թոյլ ու ուժասպառ. չորս զոյգ ձեռներ զինք գետին խփեցին ու քամիի վրայ պտտեցնելով թեք ու ոտներ ամուր բռնեցին, և կարծես էլ աւելի աղաճով լինելու համար ուրիշ մէկ էլ կուրծքին նստեցուցին, ապա մերկացուցին ու բոցավառ խանձեցին...

Անցաւ մի զիշեր միայն, հետեակ օրը, ցերեկով եկան ի գործ դնելու հրամայուած տանջանքը... Յուսատանջ Մուրազի կիսամեռ վիճակը արդեւ չ'եղաւ իրեն նոր տանջանքի մը կենթարկուելու. նախ ձեռները ամուր կապեցին ետև, ապա կայնեցուցին զինք այն պատին առաջը, որուն վերին էր փօլխի սղափի պատուհանը, զոր խաչաձև կը կարէին երկու հաստ երկաթներ. այդ երկաթներից կախուած էր միակտուր երկայն և երկատակ շղթայ մը, որ անցունելով Մուրազի կզակի տակից՝ այնքան վեր բաշխեցին, մինչև որ չարատանջ նահատակը գետին կայնած մնալու համար իւր ոտքի ծայրեր միայն ունեցաւ: Այսպէս կէս կախ մնաց զժբաղոյ մարդը: Մամօջ էֆէնդին զարձաւ նորան և ասաց.

—Մուրազ, օղլում, ինչո՞ւ իզուր տեղ այսչափ կը շար-

*) Չարչարանքի մի սոսկալի գործիք:

չարութիւն, ինչո՞ւ չես խոստովաներ ճշտութիւնը, այդ է միայն
բո փրկութեան միջոցը: Հակառակ պարագային այդպէս պիտի
տանջուիս:

—Ոչ ես տեղեկութիւն ունեմ, ոչ էլ ուրիշ մը կրնամ գրը-
պարտել, կ'ուզէք սպաննեցէք:

—Դէ սատկիր ուրեմն, քեաֆիր օղլի քեաֆիր:

Փօլիսին գուռը գոցուեցաւ, ու Մուրադ մնաց այդպէս կէս-
կախ:

Քանի ժամ վերջ կրկին բացին փօլիսի գուռը՝ տեսնելու
համար, թէ ինչպէս է իրենց զոհը. սեռսն էր խեղճը: Քաղաքա-
յին բժիշկը—Մէհմէդ Էֆէնդիսն եկաւ հաստատեց անոր ընական
մահը, որ առաջ եկած էր զարկերակի պայթիւնից:

*
*
*

Իրիկուն, երբ սկսեց խառարը թանձրանալ, եկան տարան
բազմաչարչար նահապետիկն գիտիլը: Մանր ու տխուր զգացում-
ներ սկսան ճնշել սիրտս: Ո՛հ, էլ չի կար ազնիւ Մուրադը:
Բռնութեան անեղ սուրը գրաւել էր անոր կեանքը. այս գիտակ-
ցութիւնը բազմապատիկ կը դարձնէր իմ ցաւերը:

Ողբացեալ Մուրադի փօլիսը պարապ չի մնաց: Գրչերտան
չեմ գիտեր որ պահուն, երբ ես ցրտից գողանար, մտքով աչկեմ,
փալաւսի վրայ կծկուած, տաճիկ կարգացողներու նման իրանս
ու զրուխս ես ու առաջ կը շարժէի, յանկարծ լսուեց բանալի-
ների ձայն, ու բացուեցան այն աղետաւոր ծածկին գուռը: Մի
նոր, ուրիշ զոհ էին բերել, այս անգամ աւելի թարմ, աւելի
պարարտ:

Ինձ ծանօթ 18—20 տարու պատանի մ'էր դա, թխաթոյր,
անուշ գէմբով մը, սրուն վրայ կը փալկէին երկու խոշոր սև
աչկունք:

Հոգիս կսկծաց, սիրտս արիւնով լեցուեց, երբ գիտեցի
հրէշների վերարեմունք գէպի նա, սրուն կ'ըստատէր նորատե-
սակ, նորահնար չարչարանքներ: Ոտարօրիկ էր, մայրինան իր
սրարերան օղակներով կը ճնշէր նորա մերկ ստներ, ձմերային
խոտաչունչ եղանակին և ստարօրիկ...

—Այս գիշերը—տոաց պաշտօնեաներից մէկը միւսին—
մեզմ կը վարուենք իրեն հետ, արդի այս հանդիստ վիճակը չենք
խտապցներ, սրպէս զի մինչև ստատօտ լուս մտածէ և մեզ գո-
հացում տայ, այսինքն գէտքի իրողութիւնը խոստովանի. հա-
կառակ պարագային ինչպէս վարուիլը ես գիտեմ:

Այս խօսքերը խկապէս ուղղուեցան պատանիին, որ ան-
փախ համարձակ պատասխանեց...

—Մտածելու հարկ չը կայ, մինչև հիմա ստամներս արդէն

սուտ չեն, ինձ եթէ կտոր-կտոր էլ անէք, գարձեալ այց են իմ խօսքերը: Ո՛չ ես տեղեկութիւն ունիմ, ոչ էլ ուրիշ մը տեսած եմ:

—Եթէ ասածներից հակառակն ապացուցանող վիայ մը բերեմ դէմը, այն էլ քու ազգիցն ու հաւատից, անոր ինչ պիտի տես—պատասխանեց հաստ պաշտօնեան:—Մեծ է Բահրի փաշայի գութը, բայց անոր շնորհներ վայելիլ կարենալու համար նախ հաւատարմութիւն, ապա եթէ սատանայից մոլորուած յանցանքի մը մէջ գտնուած ես՝ զզջում պէտք է. միթէ չես ուզեր փաշայի սնուղաս, քեզ էլ յայտնի շնորհներին արժանանալ, ինչո՞ւ ինքզինքդ կը զրկես ազոնց բարերար հետեանքներից:

—Բայց երբ ոչինչ չեմ դիտեր, սուտ խօսիմ, ձեր խղճմբտանք կընդունէ այց:

—Հապս քու հաւատակից վկան ու մենք, ամբողջ պաշտօնէութիւն սուտ կը խօսենք, քեանֆեր, ասաց Վրատաղած պաշտօնեան:

—Վկան հասկացողութենէ զուրկ յիմարի մէկն է, սրունքանի մը ապտակների հարուածներով ինչ ուղեն՝ ասել կու տան:

—Ուրեմն, «գինի զիւրդի», մենք յանիրաւի քեզ կ'ամբաստանենք հա՛, ասեա ինչպէս լեզուդ բեզ քաշել կու տամ հիմա. երբ չես ուզեր մեր շնորհներ վայելել, վայելիր ուրեմն մեր պատուհասներ:

Ու սրտմտած հրէջը իւր ստորադասեալներին դատնալով՝ հրամայեց պիթլամիշ *) անել պատանիի երեսը:

Երկու դապտիէներ սկսեցին գործը, պեխի և երեսի նորածիլ մազերը փունջ-փուջ դուրս քաշել, ու զլուխն էլ ետեանց տրմի-տրմի հարուածել, շատ չ'անցաւ, երբ խեղճ տղան ուշազընաց զեախն փոռեցաւ, այդ ժամանակ միայն անսիրտ դազանները թողին խեղճ տղան, հեռացան մոմնալով, հայհոյելով:

Ժամեր վերջ սեաբազդիկ պատանին երբ սթափուեց, ազէխարչ հառաչանքով մը սղջունեց իւր սե ընակարանը, ապա տափատը հանեց, մերկ սոճների տակ ձգելով՝ վրան նստեց: Մօտեցայ ճեղքին և ձայն տուի իրեն, մօտեցանք պատին և սկսեցինք հարց ու փորձ:

Յաջորդ առաւօտ դժոխային պաշտօնեաները եկան հաւկանալու, թէ ինչ ազգեցութիւն էր ունեցել պատանիին վրայ կրած չարչարանքները, երբ տեսան անոր անխախտութիւնը իւր խօսքերի մէջ, վճռեցին նոր տանջանքներ:

Դարձեալ եկաւ սե զիշեր:

*) Պիթլամիշ անել բանտային լեզուն մէջ մազեր փետել կը նշանակէ:

Պաշտօնէից ճիւղալային խումբը Տիգրանի, ալլալէս էր պատանիի անունը, փօլխի մէջն է, կը սպառնան կրակի մէջ չիկացած երկաթներով այրել, խորովիլ ղինքր: Ո՛վ որ էլ չարժուի, նվ որ կը վախնայ, Տիգրանը չի վախնար, ապառաժի նման կարծր է անոր կամքը, որ չի փշուրի:

Փօլխի մէջտեղը, Տիգրանի սոների առաջ, գրուած էր հոգէ պղտիկ կրակարան մը, որուն ծիրանագեղ, այլ անկղ կրակների մէջ գրուած էր լայնարերան ունեղի մը:

Անխիզճ պաշտօնեաների զլխաւորը ունեղին մասնանիչ անելով՝ ասաց Տիգրանին.

—Տես, խղճալով քեզ, վերջին անգամ կը յորդորեմ իրողութիւնը խոստովանելով ազատուել այս չիկացած երկաթի համբոյրներից:

—Չի գիացած բանը չեմ կրնար ասել, կ'ուզէք այրեցէք, կ'ուզէք խորովեցէք:

Սօսքը պատանիի բերնին մէջ կիսատ մնաց: Գեախն զարկին իրեն, երեսն իվար պառկեցնելով մարնոց մասը մերկացուցին, սկեցին ճիւղալային գործը... Ես չեմ կարող նկարագրել, թէ ինչպէս խումբ մը մարդիկ մատաղ երիտասարդ մը իրենց սօքին ասին առած կը խաչխչին. ինչպէս բացատրել չարասանջ երիտասարդի սրտախաչ հառաչանքների անհուն կակիծը...

Այդ սոսկալի սանձանքը չի կրցաւ գրաւել պատանիի նորարողը՝ կեանքը, բայց աւանդ, նա փօլխից գուրս դարուց վերջ հազիւ մի երկու շաբաթ կրցաւ տալրել ներքին բանախ մէջ: Տանձանքները ծանր էին նստել իր վրայ, սրնոց ազդեցութիւնից չորցաւ գեռ չի բացուած ծաղկի նման:

* * *

Անցան շաբաթներ, կակիծներով, ցաւերով լի շաբաթներ, ու ասիաւին փօլխի մէջն էի: Ինձ հետ շատ մեղմ կը վարուէին կաշառուած լինելով, սանձանքներիս սահմանը այնքան բնդարձակ չէր, որուն մէջ կային միայն անունոցի պակասութիւն, չորթայ ու ցուրտին դէմ անպաշտպան լինելը: Այդ ժամանակի մէջ Մուրադից ու Տիգրանից դատ քանի մը գրացիներ էլ ունեցայ, սրնոցից վերջինը խրոխտ երեսթով, յաղթանդամ երիտասարդ մ'էր, որուն հոգեկան կորովը շատ ակար էր սակայն. նա քաղաքական յանցանքի մէջ ամբաստանուած էր:

Գիշեր մը պառկեցնելով ղինը՝ դաւազանի մի քանի ստանեակ հարուածներով մէջքի սակորները նղրեցին, դուլ դմկլի ծայրով ծեծուած ակզեր ծակիկեցին: Առաջին վայն էր այց, որին կրցաւ գիմանալ, կարգը երկրորդ վայն էր հիմայ. փօլխին մէջ, պատին առջև կէս արշին խորութեամբ փոս մը փորելով մէջ

տաք ջուր լեցուցին, որ աստիճանաբար սառելով կը տանջէր իր միջի տաարկան... մարդը: Պարզ ասենք, զրացիս մինչև ծունկեր թազուած էր ջրով լեցուն փոսին մէջ, նա չէր կրնար այդ տեղից դուրս գալու համար շարժում մը, խըրտին մ'անել, որովհետև երկու պահակներ իւր կշտեր ցցուած՝ անխարթ աչքերով կը հսկէին, և թէ իւր ձեռներ պինդ կապուած էին ետև, պատի վրայ դարնուած ցիցերին: Զմերայցին այդ սառնաչունչ եղանակին մի այցելոսի տանջանքի սաստկութիւն տանել զրժուար էր, ևս կարծեցի թէ խեղճ զրացիս հոգին փչեց, և իրաւ, աչքերը պոսուեցան. իւր ծանրութեամբ կախուած մնաց պատի ցիցերից, սրնք չի կրնալով դիմանալ այդ ծանրութեան՝ դուրս եկան պատից և... նա գետին ասպարուեց. Ահրիմանի սրդիները գիւայցին ծիծաղով մը ու դարմանքով սկսան իրար հարցնել. «արդիօք ինչու գուրս եկան ցիցը», սրպէս թէ չէին գիտեր պատճառը:

Իմ զրացին մեռած չէր, այլ ուշադնաց էր եղած. երբ սթափուեցաւ, յո սահառութեան թանձր մնայլը պատել էր անոր ճակատը սև կնճիռներով, իր մէջ հանդել էր արխարար ասկարու կարողութիւնը: Քրտինքի փայլակները ճակատը կ'ողողէին. փորձեցի յուսադրել, խրախուսել անք, բաց իղնք, մի պատասխան միայն ունէր, — չեմ կարող դիմանալ, պիտի ինքնասպան կամ... Աչքեր դէս ու դէն ամէլով ակնարկը կէտի մը վրայ սևեռեց: Ես կարծեցի թէ փօղիսի մէջ անձնատպանութիւն զորժելու միջոց մը չ'ունենալով՝ չի պիտի կրնայ իւր վատ գաղափարը իրադրծել, այն ինչ ևս կը սխալուէի, այն կէտը, սրի վրայ սևեռած էր իւր ակնարկը, երկաթի կտոր մ'էր, սրուն ինչպէս փօղիսին մէջ գտնուիլը ինձ խորհրդաւոր թուաց: Նա ակնխարթի մը մէջ վերցուց երկաթի կտորը, բութ ծայրը պատին տուեց, իսկ սուր ծայրին խփեց իւր ճակատը... Հարուածը մահացու չ'եղաւ... Բանասցին պաշտօնէութիւնը աննկելով անոր արարքը, հասկացաւ իր յոսանատ լինելը և ուղեց օգտուիլ Դէպրի յաջորդ օրը եկան, դայն տարան մի ուրիշ տեղ: Էլ ինչեր անցաւ իր զլիտով, ինձ շատ յայտնի չէ, այնուհետև սկսեցին շատ ձերբակալումներ... Նա, որ ինքզինք մեռնելու քաջութիւն ունէր, ուրիշից մը ազնիւ կերպով մեռնելու քաջութիւնը չէր կրցած ունենալ...

* * *

Այսպէս անցան արկածներով լի օրեր, վշտերով ու սևերով լի չարաթներ: Մի օր էլ յանկարծ հրամայուեցաւ, որ փօղիսիցս — ձգնաւորական այդ անարև խցիկից դուրս գամ: Անսահման հրճուանքով սղաղուեցաւ սիրտս ու հոգիս, թէև գիտէի

որ տակաւին շատ հետո էր ազատութեան երանաւետ լոյս օրը... Ուրեմն ինչն էր պատճառը իմ հրճուանքին, երբ տակաւին ոչ ազատութիւն կար, ոչ հանդատութեան յոյսը, այլ ծանրակուռ շղթաների, նոր-նոր տանջանքների տառապանքին արհաւիրքը: Այդ հոգեկան հրճուանքին զազանիքը մարդկային այն բնական ձգտումի, բազդի մէջն է, որ կը մղէ գմեղ բնկերական կեանքով մ'ապրելու: Շարաթներէ 'ի վեր մարդկային էակի մը երես տեսած չ'ունէի երբէք, բացի մի քանի Ահրիմանի սլաշտօնեաներից, որոնք միայն գիշերային խաւարին մէջ հրէշաւոր ուրուականների նման դէմն կը սցուէին բերանաբաց: Հիմա այդ մահաչունչ միայնութիւն թողելով՝ կրկին պիտի իյնայի նրմանատիպ մարդկանց շրջանին մէջ, մանաւանդ որ ազոնց մէջ սրտիս մօտ բարեկամներ էլ կային, ինչպէս չի հրճուէի:

Վանայ ներքին բանաբը—Թաշ-խանան (քարէ տուն) բազկացած է վեց միջակ մեծութեամբ «հօւուչ»-ներէ*, որոնց իւրաքանչիւրին մէջ առնուազն 40—50 բանտարկեալներ լեցուած կը լինին. իւրաքանչիւր քառակուսի մէթրի վրայ 3—4 մարդ կը պառկի. Դէ, երևակայիք, ընթերցող, ասոնց չարատանջ վիճակը. կը լինին ամբողջ գիշերներ, որ սարաբազդիկ կալանաւորը անքուն, կամ քնով ծանրաբեռնուած աչքերով ստիպուած կը լինի նստած, պուպուղած մնալ: Գոց, անմաքուր մթնշուրտի մահաբոյր ապականութեան լմասին հօ տակ աւելորդ է, որու կծու հոտը տակաւին ոռնգերիս մէջ կը շնչէ...

Արի մայր մանկուց մի ժամ առաջ սկսած մինչև առաւօտ, արեւածագ, չարժական արտաքնոյցներ... կը զետեղուին նոյն այդ հօւուչների մէջ, ուր մարդիկ, այդ խոցալի արարածներ, ան, ապրել ստիպուած են. անբազդ կալանաւորը ստիպուած է իւր սև գիրերով ծածկուած գլխիկը գնել այդ գարշահոտ կուժին մօտ ու քնել... անց կժի, ուր կը թափէ իր արտաթորութիւններ: Օ՛հ, կեանք: Այդ վեց հօւուչներ միասին կը կոչուին ներքին բանա, սրի մուտքը կը զոցեն ինն զանազան ամբաշէն գոնէր, որոնց երկուքը երկաթէ են: Հսկողութիւնը չափազանց աշալուրջ է, զոր սակայն ճարտար, արի բանտարկեալները 'ի դերն կը հանեն երբեմն իրենց յանգուզն ձևնաբերութիւններով:

Բանտի ընդհանուր պահպանութիւնը յանձնուած է 70 հոգիէ բաղկացեալ զապաթէների խմբի մը, որուն կը հրամայեն երկու յիւնապետ և մէկ հարիւրապետ, ասոնց վրայ ալ կ'իշխէ

*) Ներքին բանտի—երկաթէ գոներէն ներս բանտարկեալների սենեակներին զօւուչ կ'ըսեն:

թօմբուց ազատին: ներքին բանտի թէ արտաքին և թէ ներքին շրջափակների մէջ կը դանտին ութ հատ փօլիաներ, սրոց սարսափելի պատկերը ոչ ևս կը նկարագրեմ, ոչ ալ ուրիշ մը կարող է:

Մըարպների (զնչու) հօւուչին մէջ փակուած ևս, ուր դրժոխային խառնակութիւն մը կը տիրէ, քիւրզ, տաճիկ, մըարպ իրար խառնուած մէկ միւսի միւսը կ'ուտեն, կը հայհոյեն, ևս միայնակ ևս ազոնց մէջ... սև տրտմութիւնը պատել է հոգիս, բանտային յարկը կը լինողայ չղթաների շանգալից շառաչներին խառնուող այդ վայրենի բանտարկեալների գոռում-գոչումներից, գազանային տանոյներեց: Ո՛հ, մարդկային կոչումի աստիճանից, սրչափ ինկած են ազոնք, կարծես մարդուց սերուած չի լինին. և իրաւ, ազոնց շարութեան գրոշատարին պէս այդ գարշելի էակների վրայ մարդկութեան նմանող ոչ մի նշոյլ չէր տեսնուիր. մարդկութեան մրտրն են ազոնք, որ այնտեղ իրար վրայ խառնալով կը մնան:

Դուրս գալ պէտք էր մարդկային հրէշներով լեցուած այդ դժոգքից: Ազիրասնօք դիտելի Չաւուչին, որ կատաղած գոտայ խնդիրս մերժելով, երկրորդ անգամ գլմեցի՝ ձեռքիս մէջ սպիտակ մետաղ մը բռնած, այս անգամ էլ չի մերժեց, այլ բնդհակառակն բնասանի շան մը նման քծնիլ սկսեց, և ապա հրամայեց ինձ երթալ Ռայեա հօուուչին, ուր սխտի կրնայի գանել ծանօթ գէմեր... այսպէս անս սպիտակ փողը պայծառացուց սև օրը:

Էլ բարեկամներուս գրկին մէջն էի:

Այս հօուուչը, որ բարեբաղդարար ուրիշ հօուուչներից շատ աւելի մարտը պաճուճուած էր, մեծամասնութիւն հայեր կը կազմէին: Ընկերական համերաշխութիւնը կատարեալ էր՝ բուրբի սեղանը մէկ: Իրիկուն երբ աղօտալոյս կանթեղները վառուեցան, մեր հօուուչին մէջ երկու անհասար խումբեր կազմուեցան. մէկը պղտիկ խալաններին էր, որոնք ժողովուած՝ կըր շրջան մը կազմած էին, մուկի մը նման սև ու կեղտոտ սօֆիի (մաքրակիսայ կրօնաւոր) ճէննէթի հիւրիների մասին պատմած առատպելներ կը լսէին: Միւս մեծը՝ մերն էր: Մերոնց խօսակցութեան նիւթերը շատ հետաքրքրական էին:

Կառավարութիւն այց օրեր արգելիք էր գրսի հետ շարաբերութիւն տնտեսալ, սիրելիների հետ տեսնուել, 'ի հարկէ միայն հայերին: Եթէ անգամ մը բանտի երկաթակառ դռնից — «ասեղի ծակից» ներս գլրբուելու լինէր մի հայ, էլ սխտի գատապարաուէր արտաքին աշխարհի մէջ գանուած իր սիրելիների և գործերի մասին լեթէական ջուր խմելու:

— Զարննք, կտարննք, պատասխանեցին մի քանիսը — բան-

տը խոռովութեանց ովկիան մը դարձնենք, մինչև որ անապոսոյն պաշտօնատարները ձանձրանալով՝ լսեն մեր ինդիբերը:

—Օվանի հալից, Աբրօ, ինչ լուր. այսօր կրցար հաց տալ: Օվանը ողմնցի շինական մէք, ձերբակալուած էր իբրև հայ կաշախներից մէկը և անասելի տանջանքների էր ենթարկուել փոլիսի մէջ:

—Աստուած—պատասխանեց մտկացի ջրհէլ Աբրօն—Օվանին ուժ ու զօրութիւն տայ, որ կարենայ դիմանալ, ապա թէ ոչ այս գիշեր անպատճառ կը մեռնի. երէկ գիշեր խաչել են իրեն չորս ժամ, սպառնացել են այս գիշերն էլ կրկնել նոյնը, եթէ խոտտովանանք չ'անէ. հնարքով մը այսօր էլ հաց ուղարկեցի, բայց ախոս որ չի կրնար ուտել:

Թշուառաբաղդ կալանատուներ իրենց անբաղդ եզրօր ասանջանքներին ի լուր, յուզուած ու անբահամակ, էլ չ'ուզեցին շատ խօսել, մէկը միայն լալահատաչ սկսեց երգել.

Ո՛վ ախուր զնդան, սև՝ ընակարան,

Կսկիծնէրով լի մտալ գերեզման,

Մինչև երբ այսպէս սառած գրկիդ մէջ

Պիտի տանջես մեկ ցաւերով անփերջ:

Մեր զգացուած կալանաւորը էլ չի կրցաւ շարունակել իւր երգը. ախուր, սրտատուչ լուսթիւն մը տիրեց, այն ինչ միւս կօւռչներից բարձրացած քրդական սիրերգութեանց և գիւցազներիգութեանց ձայները կը զղրղէին բանաբ:

Քիչ յետոյ պահակների դաժան ձայնը հրամայեց մեկ քնել. ոչ մէկս էլ քնելու տրամադրութիւն չ'ունէինք, բայց պէտք էր հնազանդուել հրամանին:

Հազիւ անկողնիս մէջ պարզուել էի թէ ոչ, անհամար լուս. ոճիւններ, անիծ ու մլուկներ յարձակուեցին վրաս. ասոնց տուած շարշարանքն էլ քիչ չէ... Պէտք էր կռուել արիւնս ծրծող միջատների դէմ...

Առաւօտեան սև լուր բերին, ողմնցի Օվանն էլ մեռել էր խաչի վրայ: Դարձեալ քաղաքային բժիշկ Մէհմէդ Էֆէնդին եկաւ, քննեց և հաստատեց ընական մահը, որ ասոջայել էր զարկերակի պայթիւնից:

Այսպիսի դժոխային միջնադրդի մը մէջ կսկծայի կեանք մը ապրեցայ, մինչև ծագեց ազատութեանս արշալոյսը:

ՍԵՂՐԱԿ ՕՏԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

MARS. «ՔՈՅՐԸ», պատկեր, հրատ. Յ. Յոփոէփեանի, 109 եր. գին 25 կ.
Քաղու, 1902:

Պատկերի սկզբում տպուած է յառաջաբան:

Այդ յառաջաբանում պ. հրատարակիչը յայտնում է ի միջի
այլոց հետեւեալը.

«Վճռեցի հետզհետէ լոյս ընծայել պ. Mars-ի (Արշակ) թեր-
թերի բանասիրականներում տպուած կամ անտիպ աշխատու-
թիւնները և ահն սրանով ընթերցող հասարակութեան սեղանի
վրայ եւմ գնում նրա «Քոյրը»:

Արտատպութիւն է «Քոյրը», թէ նոր տպուած՝ յայտնի չէ:

Այսպէս թէ այնպէս՝ «Քոյրը» պատկանում է վիպական
գրուածքների այն տեսակին, որ կոչւում է ֆէյլիէտօնական վէպ:

Ինչպէս յայտնի է, Եւրօպական, մասնաւորապէս Ֆրան-
սիական լրագիրները սովորութիւն ունեն լցնել իրանց բանա-
սիրականները վիպական գրուածքներով, որոնցից առհասարակ
պահանջւում է ոչ այնքան գեղարուեստական արժանաւորութիւն,
որքան հետաքրքրութիւն և գիւրընթերցանելիութիւն:

Եւրօպայում կան այդպիսի վէպերի յատուկ հայթայթիչ-
ներ, որոնք տաանեակներով թիւում են այդպիսի վէպեր, իսկ
յաճախ նոյն իսկ հանդիսանում են լոկ կապալառու և ուրիշ-
ներին են յանձնում այդ վէպերը թխելու աշխատանքը:

Այդպիսի մի թիւում ֆէյլիէտօնական վէպ է պ. Mars-ի
«Քոյրը»:

Վէպի հերոսը Ռուսաստանից գնում է Պոլիս, սիրահար-
ւում է մի օրիորդի վրայ, արժանանում է նրա փոխադարձ սէ-

րին և հրաւիրում է մօրը Պօլիս իրանց նշանադրութեան հանգիսին: Ամեն ինչ պատրաստ է նշանադրութեան համար. հիւրերը հաւարուել են. սպասում են երկաթուղու գնացքին, որ բերելու է Պօլիս հերոսի մօրը: Օրիորդի հայրը սպասողութեան ձանձրայի ժամերը կարճելու համար սխում է պատմել մի միջնադէպ իր կեանքից: Այդ միջնադէպը բնում է ամբողջ պատկերի $\frac{1}{5}$ — $\frac{1}{6}$ մասը:

Գուրգէն էֆէնդին (այդպէս է օրիորդի հօր անունը) պատմում է, թէ ինչպէս շատ տարիներ առաջ ինքը Ռուսաստան գնաց, Թիֆլիսում սիրահարուեց մի աղքատ, մուրացիկ օրիորդի վրայ, սիրուեց նրանից և արգէն զաւակի էր սպասում նախ քան ամուսնանալը (ինչ որ արգելքներ թող չէին տուել մինչ այդ ամուսնանալ), բայց այդ օրիորդը յանկարծ չքացաւ, կամեւ լիազարդ տիկնոջ նման տեղի տալով իր (Գուրգէնի) հօր ազաւանքներին:

Գուրգէն էֆէնդու վերջին խօսքը բերանուսն էր, երբ ներս մտան վէպի հերոսն ու իր մայրը...

Այդտեղ վերջանում է պատկերը, սրովհետեւ գուրս է գալիս որ հերոսի մայրը այն նախկին մուրացիկ օրիորդն է, որի հետ պէտք է ամուսնանար Գուրգէն էֆէնդին, և ուրեմն նշանուելիք երիտասարդն ու օրիորդը քոյր և եղբայր են...

Ձուր աշխատանք կը լինի վնասել պ. Mars-ի պատկերում հոգեբանութիւն և գեղարուեստ:

Պօլսոյ հայերը Ռուսաստանի հայերի բարբառով են խօսում: Գուրգէն էֆէնդին տասնեակ տարիներից յետոյ անցիր ասում է մի ամբողջ նամակ, որ բնում է զրբոյցի չորս երես:

Պ. Mars-ի պատկերը լիքն է այդպիսի հոգեբանական սրխալներով, սակայն ունի նաև սրտչարժանատրութիւններ:

Եղելութիւնը կատարում է Պօլսում անցեալ դարի վերջերում, հայկական սարսափներից յետոյ: Հեղինակը օգտուելով այդ առիթից՝ բնորոշում է թիւրքական ոէժիմբ և աւողմ մտքեր է քարոզում իր հերոսի բերանով:

Պատկերի լեզուն հայերէն է և բաւական կանոնաւոր, թէև տեղ-տեղ պատահում են նաև անհարթութիւններ. «Շոգենաւր սուլելով և անբալով միշտ լողում էր առաջ, որը կանց առաւ...» կամ՝ «Մայրենի լեզուն, որ անարգուած և հալածուած էր և որը այնքան վնասում էր հայերի կուլտուրական առաջադիմութեան, սխուեց աւանդուել նորարաց զգրոյցներում»:

Յարութիւն Թումանեան. «ՆՈՒԱԳՆԵՐ», 78 եր. գ. 30 կ. Քիֆլիս, 1902 թ.

Ժամանցի համար կարելի է կարգալ պ. Յարութիւն Թումանեանցի «Դալի-Մահրասա» պատմական պօէմը, որ ներչընչուած է համակրելի գաղափարով և կարգացուած է թեթև կերպով:

Այդ պօէմը տպուած է պ. Թումանեանի «Նուագները» երկրորդ բաժնում: Առաջին բաժնում տպուած են մի շարք քնարերգական ոտանաւորներ, որոնք սակաւ բացառութեամբ («Նրբ ժպտում էր ուրախ, զուարթ», «Ծաղկոց մտայ» և «Աւերակների մէջ») լսի յանդաւոր դատարկաբանութիւններ են, թէև պ. հեղինակը համոզուած է, որ «մեր ազգը» «երկար գարեր» «բերան արած՝ կ'երգի» իր «սիրոյ երգերը»:

Խնդճ ազգ:

Տ. Յ.

Յարութիւն Թումանեան. «ՄՈՒՄԱ». Պատմական պօէմ. նուագ առաջին. 40 եր. գ. 20 կ. Քիֆլիս 1902 թ.

Պ. Յարութիւն Թումանեանը (պէտք է տարբերել պ. Յովհաննէս Թումանեանցից) այն հեղինակների թւին է պատկանում, որոնք «գրելացաւով» են բռնուած:

«Պատմական պօէմաներ» է, որ թխում է մեր «պօէտը»:

Սակայն վերջին «Պատմական պօէման», «Մուսան», աչքի է ընկնում նրա միւս պօէմաների մէջ:

Այս նոր պօէմայում պ. Յար. Թումանեանն անվերջ չեղումներ է անում à la Բայրըն՝ իր անձնական հաշիւները մաքրելու համար այն անձանց հետ, որոնք երբ և իցէ աշխատել են ապացուցանել, որ ինքը բանաստեղծ չէ, այլ միմիայն ոտանաւորներ թխող:

Թէ որքան արդար և իսկացի են «պօէտի» յարձակումները՝ կարելի է եզրակացնել նրանից, որ նա «թերուս» է անուանում Գէորգեան ձեմարանի ամբողջ դասընթացը և այնուհետև Մոսկուայի համալսարանը աւարտած մի քննադատի, որովհետև այդ քննադատը յանդիմնել է աննպատակ կարծիք յայտնել նրա (պ. Յար. Թումանեանի) ոտանաւորների մասին:

Տ. Յ.

4. Ստեփանեան. «ՍՐՏԻ ԽՈՐԲԵՐԻՑ». Բանաստեղծութիւններ, 30 եր. գ. 10 կ. Թիֆլիս 1902 թ.

Պ. Կ. Ստեփանեանի զրքոյկը աւելի ճիշտ կը լինէր առաւանել «Տղիսութեան խորքերից»:

Պ. Կ. Ստեփանեանի Արազը «հրաբորբոր» է, նրա գերեզմանի վրայ յինելու է ոչ թէ «հողաթումբ», այլ «թմբահող», երբ նրա թռչունները երգում են, լաւում է ոչ թէ դայլայլիկ, այլ «դայլայլեղ» (որովհետեւ բանաստեղծին հարկաւոր է յանդ «տեղ» խօսքին), իսկ երբ մարդիկ քնում են, տիրում է ոչ թէ լուսթիւն, այլ «լուս»:

«Մարդկութիւնը բուն է մտել,
 Լուս է տիրում ամեն տեղ,
 Թռչունները բուն են մտել,
 Էլ չէ լուսով դայլայլեղ»:

Տ. Յ.

Մաքսիմ Գորկի. «ԱՄՍՅԻ ԴԱՃՏՈՒՄ». Թարգմ. Մարգիտ Մ.—Իսահակեան, 31 եր. դիւր 5 կող. Ալեքսանդրապոլ, 1902 թ.

«Ի՞նչ ենք մենք այսօր ուտելու և իրանդ ու ի՞նչպէս», — ասում է «Ամայի գաշտում» պատմաւածքի հերոսներից մէկը:

Ընթերցողներից նրանք, որոնք սովոր են ասին օր ճաշել, դուցէ չը գիտեն, իսկ եթէ գիտեն, անշուշտ յաճախ մտածում են, որ աշխարհումս, նոյն իսկ քաղաքակիրթ երկիրներում կան բազմաթիւ մարդիկ, որոնք առաւօտեան հարց են տալիս իրանց, թէ արդեօք ի՞նչ են ուտելու այդ օրը, և չեն կարողանում պատասխանել այդ հարցին ոչ թէ այն պատճառով, որ այդ կախում է իրանց ծնողներից, իրանց անտեսուհուց կամ խոհարարից, այլ որովհետեւ ոչինչ չունեն ուտելու, որովհետեւ քաղցիւր նրանց համար կանոն է, իսկ ուտելը բացառութիւն:

Եւ սակայն նրանք էլ մեզ պէս, ամեն օր ճաշողներին պէս բանական արարածներ են: Նրանք էլ սովոր են գտնել և ընդունակ են զգալ: Նրանք էլ գիտեն եզրակացութիւններ անել, օրինակ, թէ «քարթու հացը աւելի կշտացնող է, քան փափուկը, որովհետեւ քարթու հացի մէջ ջուր քիչ կայ» և ուրիշ շատ ուշատ այդպիսի փիլիսոփայական եզրակացութիւններ, որոնք վերջ ի վերջոյ մեծ փափախութիւններ են մտցնելու աշխարհիս երեսին:

Մաքսիմ Գորկին իր հինգ մատի պէս ճանաչում է այդ քարթու հացի արժանաւորութիւնները գնահատողներին, այդ

մտածող ու զգացող «չիլիաբներին», այդ БОСЯКЪ-ներին, և իր գրուածքներով տաղանդաւոր կերպով վերարտադրում է նրանց վարք ու բարքը, նրանց թշուառութիւնը և այդ թշուառութիւնից յառաջացող արատները, նրանց մտածմունքներն ու զգացմունքները, սրտնք գործեր են դառնալու մօտիկ ապագայում: Սոր հողերանի աչքով նա տեսնում է նրանց մէջ գաղանքը, որ սճիրներ է գործում, և մարդը, որ կարող է հրաշքներ գործել:

Թարգմանութիւնը անաջող է: «Առջևում, հորիզոնում,— գրում է թարգմանիչը,— բուսնում էին ինչ որ կերպարանքներ...» (Մրիմի լեռների մասին). «Սայլի սուր ճոխնչը, որ մըրդեր է տանում...» «Մի սուրու սչխար». «քնել հրապարակի վրայ...» «Պէտք չէ նրան (պատկած մարդուն) ձեռք տալ, բայց մենք կ'ուտենք նրա այն ամենը, ինչ որ կը գաննէք»: «Մեռելային—խաղաղ էր ամեն ինչ դաշտում... «Ի՞նչպէս քեզ (какъ тебѣ?):

Տ. Յ.

Անտօն Զեյսով. «ԴՆՄԱն», Թարգմ. Յարութիւն Եսայտն. 12 եր. զինը 5 կող. Թիֆլիս 1902 թ.

Պեատիցորօյը շատ հարուստ է և փոքր ինչ բարեկործ: Այդ բաւական է, որ «ինտելլիգենտները» քծնեն նրա առաջ:

Դիմակահանդիսի ժամանակ Պեատիցորօյը զիմակաւորուած և հարբած՝ սաստիկ անվայել է պահում իրան, անկարգութիւններ է անում և վիրաւորում է «ինտելլիգենտներին»:

Կանչում են ոստիկանական պաշտօնեային, ուղում են զուրս քշել այդ ամբարտաւան զիմակաւորին, արձանագրութիւն են կազմում, ստորագրում են... Բայց յանկարծ այդ ամբարտաւանը հանում է երեսի զիմակը, և ամենքը տեսնում են, որ նա միլլիօնատէր՝ Պեատիցորօյը է... Ընդհանուր չփոփոխիւն և քծնումն...

«Ինձ ձեռք տուեց հրածեչտի ժամանակ», ասում է «ինտելլիգենտներից» մէկը,—նշանակում է, որ չէ բարկացել...»

Պատմուածքը գրած է Զեյսովին յատուկ տաղանդով: Թարգմանութիւնը վատ չէ:

Տ. Յ.

Վ. Մ. Գարշին. «ԱԶԴԱՆՇԱՆ» թարգմանութիւն ռուսերէնից. 16 եր. դ. 2 կ. Բազու 1902 թ.

«Ազգանշանը» („СИГНАЛЪ“) Գարշինի ամենայաջող պատմութեանը մեկն է և կրում է նրա համակրելի տաղանցի կնիքը:

Այդ պատմութեանը արդէն մի անգամ թարգմանուել է հայերէն: Շատ կարելի է, որ այս գրքոյը նոր թարգմանութիւն չէ, այլ հնի արտատպութիւն:

Թարգմանութիւնը բաւական յաջող է:

Տ. Յ.

Գիւրի դը-Մօպասան. «ՀԱՅՐ ՄԻՆՈՆԸ». թարգմ. Ա. Տ.-Պ. 15 եր. գինը 2 կոպ. Բազու 1902 թ.

Պատմութեանը նիւթը վերցրած է ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակից:

Ֆրանսիացի մի ծերուկ, «Հայր Միւնը», զաղանի սպանում է գերմանացի զինուորներին, ի վերջոյ բռնուում է և մահուան պատժի ենթարկուում:

Պատմութեանը, ինչպէս Մօպասանի երկերի մեծ մասը, զըրուած է խտացած, զօրեղ և մուսլ սճով:

Թարգմանութիւնը վատ չէ, թէև մէջը պատահում են անհարթութիւններ, որոնք բացատրուում են թարգմանչի անփորձութեամբ, օրինակ պ. Ա. Տ.-Պ. կարծում է, թէ հայերէն է այսպիսի մի նախադասութիւն. «Ծաղիկների անուշահոտութիւնը խառնում է բաց ախոռների ծանրաշունչ հոտի և գոլորշու հետ բորբոսնած աղբակոյտի, որի վրայ լիքը հաւեր քշուջ են անում»:

Տ. Յ.

Պրօֆ. Ի. Բերդնիկով. «ՆՈՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵԸ ԴԵՊԻ ԿՐՕՆԸ» թարգմ. Գէորգ Ալթունեան. խմբ. Ս. Տիգրանեան. 121 եր. գինը 25 կ. Ալեքսանդրապոլ 1902 թ.

Պրօֆ. Բերդնիկովի գրքոյի թարգմանութեամբ լաւ գործի անաջող սկզբնաւորութիւն է գրուում:

Պ. Ս. Տիգրանեան շատ համակրելի միտք է յղացել տալ ընթերցողներին մի շարք հանրամատչելի իրաւաբանական գրքոյկներ:

Սակայն հանրամատչելի գրքոյկները պէտք է գրուած լինեն թեթե ու կենդանի սճով և, եթէ ինքնուրոյն չեն, պէտք է թարգմանուած լինեն նոյնպիսի սճով: Մինչդեռ պրոֆ. Բերդնիկովի գրքոյկը գրուած է ուս. պրոֆէսորների մեծամասնութեանը յատուկ անհատ ու անհամ սճով, որով կարելի է գրել միայն արձանագրութիւններ, և թարգմանուած է «Ճեմարանական» ջերմոցային սճով, որի արժանաւորութիւնը կանոնաւորութիւնն է, իսկ պակասութիւնը՝ խօսակցական լեզուին յատուկ կենդանութիւնից զուրկ լինելը:

Թարգմանութեան պակասութիւններից մէկն էլ սարկահանութիւնն է, որ հասնում է այն աստիճանի, որ ուսուցիչ bezопасность բար «անվանդութիւն» է թարգմանած, մինչդեռ «անվանդութիւն» կը նշանակէ ոչ թէ ապահովութիւն, այլ վտանգաւոր չը լինելը:

Այն էլ պէտք է նկատել, որ գիտական բառերի թարգմանութիւնը տեղ-տեղ անյաջող է, տեղ-տեղ էլ հակասական (նոյն բարը երկու տեսակ է թարգմանուած): Աչքի է ընկնում մանուանդ процессія բառի սխալ թարգմանութիւնը, որի շնորհիւ գրուածքի իմաստը չիտփուում է. «արդիւում է կրօնական յուզարկաւորութիւններ (processія) անել եկեղեցուց գուրս...» Յուզարկաւորութիւն կը նշանակէ միմիայն похоронная процессія.

Մտադրայ ասել, որ պրոֆ. Բերդնիկովը լուսարանում է հարցը յետադիմական տեսակէտից:

Տ. Յ.

Պ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌԹԻՒ *

Պ. Դաղբաշեանը մեր գրախօսութեան գէտ նրա ու լա-հայերէն բառարանի մասին («Մուրճ» 1902 թ. սեպտեմբեր) տպել է մի պատասխան («Մուրճ», հոկտեմբեր), որը մենք առանց ուշադրութեան կը թողնէինք, եթէ «Մուրճի» ընթերցողները բարձրն էլ լեզուային և բառարանագրական հարցերին լաւ ծանօթ լինէին և պ. Դաղբաշեանի «Պատասխանը» կարգադիս՝ ուշի ուշով նրան համեմատէին մեր գրախօսութեան հետ: Բայց քանի որ այսպէս չէ լինում, պ. Դաղբաշեանի պատասխանը ընդունակ է

*) Խմբագրութիւնս մինչև այժմ անկարող եղաւ տպել այս յօդուածը, որ մօտ երկու ամիս առաջ է գրուած: Ծ. Խ.

չատ շատերին մուրեցնելու: Աւստի և մենք ստիպուած ենք մեր գրախօսութեան պատիւը պաշտպանել:

Նախ խօսինք պատասխանի մի քանի վիճարանական յատկութիւնների մասին:

Պ. Դաղբաշեանը լաւ չէ վարուած նրանով, որ չէ յայտնում, թէ իր պատասխանի մէջ շօշափում է մեր գրախօսութեան միայն այն կէտերն ու օրինակները, որոնք ինքը սխալ է համարում, իսկ ինչ որ ուղիղ է համարում՝ նրանց մասին լուռ է: Նա այս չէ յայտարարում, և ընթերցողին համոզելու համար, թէ ինքը աղնուարար հրապարակագէտ ընդունում է մեր գիտողութիւններից իրան ուղիղ թուած կէտերն և՛ նա յիշում է հինգ հատ քառ, որոնց մէջ ինքը սխալուած է կղել բառարանում, մենք ուզղղ ենք, և ինքն ընդունում է մեր ուզղածը:

Այդ բառերն են՝ «Ժպիրհ», «խոչընդոտ», «ներգոյական», բառերի ուղղագրութիւնը, «ТОРГЪ» բառի նշանակութիւնը, «հաւատազրուծ» բառի աւելորդ գործածութիւնը: Դուրս է գալիս, գտնէ պ. Դաղբաշեանը հաւատացնում է ընթերցողին, որ մեր 16 երես գրախօսութեան մէջ միայն հինգ քառի մասին մենք ուղիղ գիտողութիւն ենք արել, իսկ մնացածներում... սխալուել ենք կամ բծախնդրութիւն ենք արել: 16 երեսում միայն հինգ բառ ուղիղ: Սա խօ խայտառակութիւն է:

Բայց մի խորամանկութիւն կայ այստեղ: Պ. Դաղբաշեանը հրապարակաւ 5 բառի վերաբերմամբ մեր գիտողութիւնն ընդունելով՝ այնուհետև լուրջեայն կուլ է տալիս մեր բազմաթիւ ու կարեւոր գիտողութիւնները նրա սխալումի այս կամ այն պակասութեան մասին: Օրինակ՝ մենք յայտնել ենք, որ անհրաժեշտ էր բառարանից դուրս ձգել՝ մարութ հասարակութեան ու գրականութեան մէջ ընաւ չը գործածող անպարկեշտ և անվայել բառեր (օրինակները ցոյց ենք տուել կրթաներով)։—յայտնել ենք և ապացուցել օրինակներով, որ պ. Դաղբաշեանը բազմաթիւ օտարազգի բառերի առաջ չէ դնում ցուցում նրանց օտարազգի լինելու մասին, և որ այս անհետողութիւնը մոլորութեան մէջ կը ձգէ բառարանը գործածողին։—յայտնել ենք և ապացուցել, որ պ. Դաղբաշեանի բառարանը մի անսխալում, անհետողական աշխատութիւն է նրանով, ոչ որ բացատրական է և ոչ թարգմանական, այլ մի խառնուրդ, որ վատ է ազդում բառարանը դործ ածողի վրայ։—յայտնել ենք և օրինակներով ցոյց տուել, որ պ. Դաղբաշեան ի չարն է դործ գնում զբարբար և նոր շինուած բառեր ու գրաբար ձևեր, որոնցից կարելի էր շատ անգամ խոյս տալ։—յայտնել ենք և սովապուցել, որ պ. Դաղբաշեանի բառարանը պարունակում է անծիշտ, անորոշ բա-

յատուցութիւններ լեզուարանական տեսակէտից—և այս բոլորի մասին և ոչ մի խօսք չէ ասում պ. Դաղբաշեանը:

Այս լաւ չէ: Նա կամ պէտք է հրապարակաւ ընդունէր և՛ այս նկատողութիւնները, ինչպէս ընդունել էր այն հինգ բառը, կամ պէտք է չընդունէր ու հերքէր, ինչպէս վարուել է մեր շատ նկատողութիւնների վերաբերմամբ:

Լաւ չէ վարում պ. Դաղբաշեանը և հերքելու մեթօդով:—Մեր գրախօսութեան մէջ մենք ոչ թէ պատահական բառերի վրայ էինք կանգ առել, ոչ թէ բառեր քննադատել, այլ բառարանի սխառմի պակասաւոր կողմերը.—հրեք պակասաւոր կողմ առներէնի բաժնում և բազմատեսակ պակասաւոր կողմեր հայերէնի բաժնում, և մեր զատողութիւնները բացատրելու և ապացուցանելու համար բերել էինք ամեն մի պակասաւոր կողմի համար մի քանի օրինակ: Վերջն էլ աւելացրել էինք, թէ մենք նայել ենք բառարանից հաղիւ մի քառասուն երես (այսինքն՝ սուլում երկու պրակներէ հաղիւ եօթներորդ մասը), և մեր նկատած բոլոր օրինակներն էլ չենք բերել: Ուրեմն մեր նկատողութիւնները հերքելու երկու ճանապարհ կար.—կամ պէտք էր հերքել մեր սկզբունքները իբրև սխալ, կամ՝ մեր սկզբունքները ուղիղ ճանաչելու դէպքում՝ պէտք էր մի առ մի հերքել բոլոր օրինակները, որոնք բերուած էին իբրև ապացոյց, թէ այս-ինչ սկզբունքը չէ գործադրուած:

Բայց պ. Դաղբաշեան այլապէս է վարում. նա մեր բերած օրինակներից մէկը կամ երկուքը իրենաւարի «հարքելով» հերքած է համարում և ամբողջ սկզբունքը Օրինակ, մանք իբրև սկզբունք ասել էինք, թէ Ակադեմիական բառարանում եղած բոլոր բառերը չը պէտք է ղետեղուէին պ. Դաղբաշեանի բառարանում. պէտք էր դուրս ձգել՝ ինչ որ բոլորովին հնացած է, ինչ որ մի յետ ընկած գաւառում գործածական է, և այլն: Իբրև օրինակ այսպիսի անելորդ ղետեղում բառերի՝ բերել էինք браница, гоить, гуня, варовина (էրդ նշանակութիւնը), барабанная шкура, богатство (երրորդ նշանակութիւնը): Պ. Դաղբաշեանը մեր բերած 6 օրինակից միայն մէկն է պաշտպանում—«барабанная шкура» հայհոյական դարձումքը—և զրանով հերքում է մեր սկզբունքն՝ ասելով «բազմաթիւ հնացած բառեր ու գաւառարանութիւններ չը կան մեր բառարանում»:

Մենք իբրև պակասութիւն նկատել ենք պ. Դաղբաշեանի բառարանում՝ թարգմանական բառերի՝ կուտակումը մի թարգմանելի բառի դէմ, յոյց էինք տուել այդ պակասութեան մեաները և «հարիւրներից» բերել էինք իբրև օրինակ всеславный, веревка, беременная, ажурный, бойкий, гнусный,

заглохнуть բառերի կազմութիւնը: Պ. Դաղբաշեանը ի նկատ է ստեղծում այս բառից միայն երկուսը, «հերքում է»—և մեր ստորոջ նկատառութիւնը գրանալով ոչնչացնում է կարծում ենք պարզ է, որ այս կերպով չեն հերքում հակասակարգին:

Կտ. չէ վարւում պ. Դաղբաշեանը և նրանով, որ բանա-կուի մէջ գիտնում է յեղաշրջումների: Բերենք մի-երկու օրի-նակ: Պաշտպանելով իւր գործը գրած՝ առւերէն բառերի կր-ճատ գրելու սխառնք և յայտնելով, որ այդ արել է միմիայն տեղ խնայելու համար, «ամենին ուշադրութիւն չը դարձնելով բառի լեզուարանական և քերականական կողմերի վրայ»՝ նա աւելացնում է. «Յամենայն դէպս պ. Ստ. Մալխասեանի առա-ջարկութիւնը այլ կերպ վերոյիշեալ բառերը բաժանելու, այն է. добав|а, добав|ение... կապիտ սխալ է սողադարձութեան կանոնների դէմ, (см. Гротъ, Правописаніе, стр. 98, изд. 13-ое): Այնպէս է գորս գալիս, որ մենք գեո ծանօթ չենք սողա-դարձի կանոններին և այս տեսակէտից կապիտ սխալ ենք ա-նում, որին իբրև ապացոյց՝ մեզ դէմ է անում պ. Դաղբաշեանը Գրօտի Ուղղագրութեան ձեռնարկը և երեսը: Այն-ինչ հէնց նոյն Գրօտի ձեռնարկը դեռ 10 տարի առաջ մենք յիշել ենք մեր «Գրարարի համաձայնութիւնը» զասպարհում, իբրև մինը այն ազգիւրներից, սրոնց հետեւ ենք արհուրթեան և աւազա-նութեան կանոնները կազմելիս («Գրար. համաձ.» եր. 174, ծանօթ.):

Պ. Դաղբաշեանի այս վարմունքը բացատրելու համար բերենք մեր գրախօսութիւնից մի քանի տող. «Սնհասականալի է մնում, թէ ինչ սխառնում է բառը անջատում երկու մասերի. ոչ միևնոյն խմբի բառերի մէջ անստիտիս կրկնուող անդամն է անջատուած, և ոչ բառի լեզուարանական արմատը... Սր. ինչ-չու վերը բերուած բառը բաժանուած է до|бава հայն, և ոչ թէ добав|а, добав|ение... կամ զոնէ доба|ва, доба|вление: Ի՞նչ խորհուրդ կար բաժանել би|ИТИКЪ... և ոչ бинт|ИКЪ... (կամ զոնէ бин|ТИКЪ)»: Ուրեմն մեր խօսքը սխառնքի բացա-կայութեան մասին է բառերի մասերը բաժանելու մէջ և ոչ թէ սողադարձի Քանի որ տեղ խնայելու համար է այս կրճատումը, ինչպէս ասում է ինքը պ. Դաղբաշեանը, ինչպէս նկատել էինք և մենք, և քանի որ «ամենին ուշադրութիւն չէ դարձուած բառի լեզուարանական և քերականական կողմերի վրայ», ինչ-պէս խոստովանում է պ. Դաղբաշեանը, ինչպէս նկատել էինք և մենք—ապա բնական էր սողանել добав|а, бинт|ИКЪ բաժա-նումը, որով տեղի առելի խնայողութիւն կը լինէր: Այս կրճա-տումը, որ մենք առաջարկել էինք (добав|а, бинт|ИКЪ), ունէր

բացի գրանից և մի ուրիշ լաւութիւն—դրանով այդ բառերի լեզուարանական արմատն է բաժանուում, այսինքն նրա մէջ կայ սրեւէ սխտեմ: Բայց սրպէսդի այդ բաժանումը տողադարձի տեսակէտից խորթ չը թւար՝ ամենք զրել էինք և ուրիշ բաժանում՝ համաձայն տողադարձի կանոններին—զրել էինք՝ «կամ զոնէ доба||ва, доба||вление... կամ զոնէ бин||тикъ»: Ահա այս երկրորդ, տողադարձի կանոնով մեր արած բաժանումը ս. Դաղբաշեանը մէջ չէ բերել, որպէսզի բնութեցողներին մոլորութեան մէջ ձգէ, իբր թէ մենք տողադարձի կանոններին անգամ անձանոթ ենք:—(Տողադարձի կանոնները այդքան պաշտպանող ս. Դաղբաշեանին յիշեցնելու ենք մեր կողմից, որ ինքը տողադարձի կոպիտ սխալ է արել՝ бин||тикъ, бин||нто-вание... բաժանելով, և ստիպուած ենք նորան ցոյց տալ նոյն Գրօսի ուղղագրութեան նոյն 98 երեսը (8-րդ տպագրութեան), 5-րդ յօդուածը, որտեղ աւանդուած է երկու բաղաձայններ անջատելու կանոնը և բերուած է бин—ты, —ապա ուրեմն бин||тикъ):

Մի ուրիշ օրինակ: Մենք նկատել էինք, որ ս. Դաղբաշեանի բառարանում գործ են ածուած օտարոտի և անհասկանալի բառեր, և բերել էինք մի քանի նմուշներ: Պ. Դաղբաշեան այս առիթով գրում է. «ս. Ստ. Մալխ. մեր բառարանում օտարոտի և անհասկանալի բառեր ևս դասել է: Դոքա են արանքոհնակ, արանքոհնակաւոր, հեց, քաղցրիտ, աքեթենի, ծս(յ)լ, յամրուկ»: Այնուհետեւ պաշտպանելով արանքոհնակ բառը, իբրև Ղազարի գաւառում գործածուող բառ՝ բացատրելու է միւսների մասին. «Են ինչ մեղաւոր ևմ, որ ս. Ստ. Մալխասեանին հեց, ոգորենի, աքեթենի, ծս(յ)լ, յամրուկ, քաղցրիտ զրական և յաճախ գործածական բառերը անհասկանալի են»:

Մի շատ տղեղ խաղ է խաղացել այստեղ ս. Դաղբաշեանը՝ իրան արգարացնելու և մեղ դարձեալ իբրև տղէտ ներկայացնելու համար: Բանն այն է, որ բացի արանքոհնակ, արանքոհնակաւոր և հեց բառերից միւս օրինակները ս. Դաղբաշեանը չէ ներկայացրել այնպէս՝ ինչպէս որ կան իր բառարանում և ինչպէս որ մենք էլ բերել էինք. այլ ուղղել է, մեղմացրել է սուս ու փուս, և արդէն ուղղուած ձևերը բերում է՝ իրան արգարացնելու և մեղ յանդիմանելու համար, առանց մի բառով զգուշացնելու ընթերցողին իր արած փոփոխութեան մասին: Այսպէս՝ նրա բառարանում տպուած է և մենք բերել էինք՝ «յամրուակը».—իսկ ս. Դաղբաշեանը ներկայացնում է այդ բառը «յամրուկ» ձևով.—մենք բերել էինք «ծսլ».—ս. Դաղբաշեանը գրասել է «ծս(յ)լ».—մենք բերել էինք «քաղցրիտ օշանակ».—ս. Դաղբաշեանը յիշել է միայն «քաղցրիտ».—մենք բերել էինք «տղորե-

նու արեթենի».—պ. Դաղբաշեանը բերել է «սզորենի, արեթենի»: Դուքս է գալիս, որ բառարանից մեր բերած բառերը «ԾՈՂ, յամբուակը, քաղցրիս օշանակ, սղորենու արեթենի» յիրաւի անհասկանալի են բոլոր հայ մարդկանց համար, սրովհետեւ գրանք գոյութիւն չունին, բայց և այնպէս պ. Դաղբաշեանի մի ձեռնածութեամբ մենք ենք մեզաւոր գուրս գալիս, որ գրական և յաճախ գործածական (?) բառեր չենք հասկանում:

Բայց ինչն էր ստիպում պ. Դաղբաշեանին գիմել այս օգեղ միջոցին, քանի որ նա կարող էր հեշտ միջոցով ազատուել յայտարարելով թէ «յամբուակը, ծու, սղորենի» ձևերը տառասխալների հետեանք են:—Մի շատ հետաքրքրական հանդամանք, որ արժէ ընթերցողներին հազորգել. «սզորենի» ձևը պ. Դաղբաշեանը չէր կարող յայտարարել առառախալ, որովհետեւ ինն անգամ դարձ է ամել միմեանց յետևից (եր. 51ա). իսկ այդ սղորենի բառը հնարել է ինքը պ. Դաղբաշեանը, և հնարել է՝ սզորենի բառից, սրա միջի գ դիրը սխալմամբ ղ կարգացած լինելով:—Տգիտութեան այս խայտառակութիւնը պարտակելու համար պ. Դաղբաշեանը ընտրել է վերոյիշեալ միջոցը:

Լաւ չէ վարում պ. Դաղբաշեանը և նրանով, որ պլայլում է մեր առածները և մեզ բռնի կերպով վերադրում է այնպիսի հայեացքներ և մտքեր, որ մենք չունինք և որոնց գէտ, ընդհակառակն, հէնց մենք կուում ենք: Դարձեալ բաւականամանք երկու օրինակով:

Պ. Դաղբաշեանը սեղ կոչում է «գանհկարանութեան սխերիմ թշնամի», բռնում է մեզ հակասութեան մէջ, որ գործ ենք ամել «ուղ անուր» դարձուածքը, հեղնելով կոչում է մեզ դրաբարպէա և այնուհետեւ ասում է. «Թու չը զարհուրի պ. Սա. Մ. այգլիսի բառերից: Ռամիական, ժողովրդական և դաւառական բառեր գործ են ամում մեր բոլոր գրողներն և թարգմանիչները»: Այսպէս է մեզ ներկայացնում ընթերցողներին պ. Դաղբաշեանը: Բայց ահա մենք ինչ հայեացքներ ենք յայտնել մեր գրախօսասութեան մէջ: «Պ. Դաղբաշեանը ի չարն է գործ գնում գրաբար և նոր չինուած բառերը, գրաբար ծեւեր կային, որոնցից կարելի էր շատ անգամ խոյս սար»... «Պ. Դաղբաշեանը կամեցել է կենդանի ժողովրդական լեզուից բառեր վերցնել իր բառարանի համար: Միտքը գովելի է»... «Պ. Դաղբաշեանը ծայրայեղութիւնների մէջ է ընկնում՝ աւելորդ տեղը գրաբար բառերի եւ դարձուածքների հետ գործածելով գոհնկաբանութիւններ և օտար բառեր» (եր. 196): Մենք գատապարտել ենք գրաբար բառերի և դարձուածքների անտեղի գործածութիւնը այժմեան մեր գրական լեզուի մէջ (և այս մասին բոլորովին

լուի է պ. Գաղբաշեանը). գտաապարակ ենք և գործածութիւնը «այնպիսի գտնիկ և օտար բառերի, որոնց չէ կարող գիտնալ նորք ճաշակը, և այն՝ երբ ամենեին հարկ չը կայ այդպիսի ծայրայեղ միջոցի գիմեղու»: Կենդանի ժողովրդական լեզուից բաներ վերցնելու միտքը գովել ենք սկզբունքով, բայց պախարակել ենք պ. Գաղբաշեանի անճաշակութիւնը և լեզուաբանական հտատութիւնից գուրկ լինելը, որ չէ կարողացել որոշել, թէ ինչ բառ կարելի և հարկաւոր է վերցնել և ինչ բառ չէ կարելի: Ահա այս մեր միտքը պ. Գաղբաշեանը այլայլել է վերոյիշեալ կերպով և մեզ բողբոջած ուրիշ հայեացքի և ճաշակի աէր է ներկայացրել ընթերցողներին:

Պ. Գաղբաշեանը յայտնում է, իբր թէ Նորայր Բիւզանդացին և Հայր Քաջունին իբրև բառարանագիրներ՝ անսխալական են մեզ համար: Այդպիսի բան մենք ոչ ասել ենք, և ոչ մտերովս անցել է: Նորայրի բառարանի մասին սենք առիթ չենք ունեցել կարծիք յայտնելու. բայց պ. Աբ. Յովաննիսեանի բառարանը քննելիս՝ մենք անցողակի կերպով մի-եքիւս նկատարութիւն ենք արել Նորայրի պակասութիւնների մասին, և պ. Գաղբաշեանը, որ այնքան լաւ ուսումնասիրել է մեր այդ քննութիւնը, չէր կարող չը նկատել, որ Նորայրի բառարանը անսխալական չէ մեր աչքում: Իսկ հ. Քաջունու բառարանի մասին ունինք զրաժ համառօտ քննութիւն («Արձագանք» 1891, №-ը չենք յիշում). այնտեղ պ. Գաղբաշեանը կը ասենէ, որ հ. Քաջունու բառարանն էլ անսխալական համարելուց մենք շատ հեռու ենք: Մենք այս երկու հեղինակները յիշեցրել էինք պ. Գաղբաշեանին՝ իբրև քարեխղճութեան օրինակ (որ բնորոշում է և՛ պ. Գաղբաշեանը՝ Նորայրի բառարանը կոչելով «անպայման բարեխիղճ, լաւը, գնահատելի բառարան»), իսկ որ նրանք ունին շատ պակասութիւններ և շատ սխալական են, այդ մենք գիտենք և աւելի լաւ, քան պ. Գաղբաշեանը: Վերագրել մէկին մի միտք կամ կարծիք, որպիսին այդ անձը ոչ յայտնել է և ոչ ունի, աններելի վարմունք է:

Դառնանք այժմ պ. Գաղբաշեանի հերքումները մի առ մի քննելու:

Բոլոր նրա հերքումների մէջ օրինաւոր են հետևեալները.— պ. Գաղբաշեանը սպառնացել է, որ «գեղջ», «հրահանք» սպարանական սխալներ են բառարանում և ոչ թէ աստասխալներ, ինչպէս մենք ենթադրել էինք. սպառնացել է, որ «գերեզմանոց» զրութիւնը օրինաւոր է (թէպէտ դարձեալ նախընտրելի է գերեզմանոց ուղղագրութիւնը): Բայցի սրանից՝ հաւատում ենք պ. Գաղբաշեանին, որ «կարիճ ատամ», «պղպձակ» և «յարդուս»

(=հարթում) ձևերը ազարանական սխալներ են, թէպէս «ինքր անկարող է ապացուցանել»:—Նրա բոլոր մնացած փաստարանութիւնները անհիմն են և սխալ:

«Барабанная шкура» «սուս գրական լեզուի մէջ խիստ գործածական գարծուածք» չէ. նա է և մնում է գարծեալ գատաւրանութիւն, չը նայելով որ «Воскресенье» վէպի մէջ գործ է ածուած (գոծհիկ կնաջ բերանում): Պ. Դաղբաշեանի թարգմանութիւնը—«փուչ, յիմար կին», *եթէ ճիշտ էլ լինէր,**) այնուամենայնև կը լինէր նրա փոխարեւական, սնկինդան նրչանակութիւնը. մինչդեռ բառացի նշանակութիւնը «թմբուկի կաշի», ինչպէս թարգմանել է Տ. Յովհաննիսեան, աւելի պատկերաւոր և ուժեղ է, և ամեն մի կարգացող կը հասկանայ, որ «թմբուկի կաշին» իբրև անարգական խօսք է գործ ածուած: Վերջապէս սխալում է պ. Դաղբաշեան, թէ հայերէն «թմբուկի կաշի» հայհոյանք չը կայ: Արարատեան նահանգում գործ են ածում հայհոյական մաքով «զհոյի կաշի»:

Պ. Դաղբաշեանը ընդունել է, որ բառերի կրճատումն արել է՝ «ամենևին ուշադրութիւն չը գարծնելով բառի լեզուաբանական և քերականական կողմերի վրայ»: Եւ եթէ սրա վրայ աւելացնենք այն անուրանալի երևոյթը, որ «տեղ խնայելու» նպատակին էլ խելացի կերպով չէ ծառայեցրել նա այս կրճատումը, ապա բառացի դուրս կը դայ այն, ինչ որ մենք ասել էինք այս մասին մեր գրախօսութեան մէջ:—Իսկ որ կրճատումը շատ դժուարացնում է բառ փնտռելը, սա ապացուցների կարօս չէ:

Акклиматизация, Амфора բառերի մասին պ. Դաղբաշեանը դուր է ճից թափում և մի սխալից միւս սխալի մէջ ընկնում: Փոխանակ դիմելու Մէյէրի Հանրապետական բառարանին (որ լեզուագիտական-մասնագիտական չէ) և Գրօտի Ուղղագրութեան (որի մէջ մեր ունեցած օրինակում Акклиматизация բառի ծագումը նշանակուած չէ), աւելի լաւ կը լինէր՝ պ. Դաղբաշեանը դիմէր հէնց նոյն Գրօտի Ակադեմիական բառարանին, որտեղ գրուած է շատ ճիշտ կերպով «Амфора (лат. отъ греческаго amphoreus), Акклиматизация (нѣм. отъ греческаго klima)»: Իսկ որ պ. Դաղբաշեանը կարծում է, թէ բառի ծագումը իւր բառարանում նշանակուած է համաձայն նրա «պատմական ծագման», նայելով թէ սր ազգից են վերցրել ուսաները այս կամ այն բառը՝ այդ սխալ է և ցոյց է տա-

*) Ակադեմիական բառարանում գրուած է «пустая, вздорная женщина», որ չէ նշանակում «փուչ՝ յիմար կին»:

լիս, որ պ. Դաղբաշեանը ինքն էլ չէ հասկանում, թէ ինչ է անում իւր բառարանում: Այսպէս՝ նա նշանակել է *Аллилуія*՝ երբայեցեղէն, *Аллопатія*՝ յունարէն. մինչդեռ աշխարհին էլ յայտնի է, որ առաջին բառը ուսաներն ստել են ոչ թէ երբայեցեղէնից, այլ յունարէնից, իսկ երկրորդը ոչ թէ յոյներից (որոնց բառարաններում այս բառը չը կաւ իսկի), այլ եւրոպական նոր ազգերից, որոնք այս բառը ինչպէս և շատ հարիւրաւոր բառեր իրանք են կազմել յունական արմատներից:

Գալով պ. Դաղբաշեանի յայտարարութեան, թէ մենք չաբաշար սխալում ենք՝ սխալ համարելով յանկ, գրէթէ, ամէնուկարող, ցատկիլ, սայթաքուն և այլն ձևերը՝ պէտք է ասենք, որ պ. Դաղբաշեանը կատարեալ իրաւունք ունի այսպէս մեզ խայտատակելու՝ քանի որ հայերէնի ուղղագրութեան մէջ տիրող գիտական հիմքերն են՝ ապիտութիւնը և յանդգնութիւնը: Նրա քէֆն ուզել է այսպէս գրել—և այսպէս գրել է, ո՞վ է նրա ձեռքը բռնողը. եթէ մէկը նկատէ, որ սա սխալ է, իսկոյն մի ամանով ցիխ կ'ածէ նրա գլխին, և պրծաւ: Մենք դարմանում ենք, ինչո՞ւ պ. Դաղբաշեանը նոյն մէթոդով չէ վարուել նաև «գեղջ», «խոջնդոս» և այլ բառերի վերաբերութեամբ. չէ որ գրանք էլ «անխոր» գրուում են թէ այց ձևով և թէ «գեղջ», «խոջընդոս» ձևով—Ուրիշ կերպ կը լինէր բանը, եթէ պ. Դաղբաշեանը ծանօթ լինէր հայերէնի հնչիւնական օրէնքներին և հասկանար, թէ ինչ ասել է «ընդունուած ուղղագրական ձև», այն ժամանակ կը տեսնէր, որ ինքն է չաբաշար սխալուողը, իսկ մենք շատ իրաւացի ենք արել մեր նկատողութիւնը: Որովհետև թէ հնչիւնական օրէնքով և թէ ընդունուած ուղղագրական ձևով՝ ճիշտ ձևերն են գրեթէ, ամենակարող. ընդունուած ուղղագրական ձևերն են՝ յանգ, ցատկիլ, սայթաքուն: Մեզ վրայ պ. Դաղբաշեան պարտք է գնում բացատրել, թէ «ինչո՞ւ պէտք է գրել խորհրդակցիլ, աշխատիլ, բայց ցատկիլ, ընկնել»: Մենք չենք առաջարկել առաջին երկու ձևերը (թէպէտ նրանք կանոնաւոր կը լինէին միջնադարեան գրաբարի ուղղագրութեամբ, ինչպէս և ընկնիլ ձևը). մենք առաջարկել ենք գրել՝ քծնել, լինել, ընկնել, նոյնպէս կ'առաջարկէինք գրել՝ խորհրդակցել, աշխատել և այլն. այսինքն ըստ երկրորդ (ևմ) և երրորդ (իմ) լծորդութեան բայերի անորոշ գերբայները գրել՝ «ել» վերջաւորութեամբ: Պատճառը բացատրել շատ երկար կը լինէր. (պ. Դաղբաշեանին հարկաւոր կը լինէր ծանօթացնել երրորդ լծորդութեան դարաւոր պատմութեան հետ, որ այստակ անկարելի է). բառականանաք առաջարկելով պ. Դաղբաշեանին, որ քծն(ու)իլ, լինիլ, ընկնիլ ձևերը հոլովէ.—այն

ժամանակ դրանց «և» գիրը ինքն էլ կը տեսնէ (քծնելու, լինելուց, ընկնելով և այլն)։

Պ. Դաղբաշեանը գրում է «աւիլ», «սանդուխտ», «սրովհեան այս բառերը կենդանի ժողովրդի (ուրեմն լինում են և մեռած ժողովուրդներ) բերանում այսպէս են հնչում, և այս ոչ պ. Ստ. Մայիսասեան և ոչ էլ մի ուրիշ սք կարող է հերքել»։ Ինչու հերքենք այս բանը, քանի որ ինքներս էլ ասել ենք, որ պ. Դաղբաշեանը համըակնների նման սխալուելու գրել է սանդուխտ։ Ընդհակառակը, մենք խորհուրդ կը առնէինք պ. Դաղբաշեանին գրել նաև՝ «ձանտր», «մենծ», «Յօթի», «թաքւոր» կամ «թքււոր», սրովհեան ժողովրդի բերանում այսպէս են հնչում։ — Ցաւալի է արդարև պ. Դաղբաշեանի հերքելու եղանակը. — նա ոչ թէ նպատակ ունի սպացուցանել իւր կարծիքի ճշմարտութիւնը, այլ մի կերպ զլուխը պրծցնել. մի տեղ՝ Առձեռն բառարանն է նրա նկատուելը, երբ սա է ձեռք առլիս, ուրիշ տեղ՝ ժողովրդի արտասանութիւնը, երբ Առձեռն բառարանը օգնութեան կանչել չէ լինում։ Այսպէս վարուելով՝ ամեն մի սխալ ձև կարելի է օրինաւորել. բայց այսպիսի վարմունքին ասում են յամառ սովեստութիւն։

Այսպիսի սովեստութիւն է անում պ. Դաղբաշեանը և «ճննդական» բառի վերաբերութեամբ. նա գիտում է Առձեռն բառարանի օգնութեան, որպէսզի ցոյց տայ, թէ այդ բառը նշանակում է նաև՝ «որ պիտի ծնանի», և այս հօգօր վկայութեամբ գինուած՝ յայտարարում է մինչև իսկ, որ մենք ենք սխալուել կարծելով, թէ ճննդական միայն ծնած, այսինքն աղատուած, երկիայ բերած կին է նշանակում։— Թէ «ճննդական» բառը ինչ է նշանակում՝ զրաքարում՝ այդ մենք շատ լաւ գիտենք առանց կարօտութիւն ունենալու պ. Դաղբաշեանի և Առձեռն բառարանի օգնութեան։ Բայց պ. Դաղբաշեանը կարօտութիւն ունի իմանալու երկու ճշմարտութիւն. առաջին՝ որ նա կազմում է բառարան ուսերէնից աշխարհաբար հայերէն, և երկրորդ՝ որ հարիւրաւոր բառեր կան, որոնք գոյութիւն ունին գրաբարում էլ, աշխարհաբարում էլ, բայց տարբեր նշանակութեամբ։ Այս երկու ճշմարտութիւնների հիման վրայ՝ ճննդական (և ոչ գրաբար ճննդական) բառը նշանակում է՝ նոր ծնած կին—այս է այս բառի նշանակութիւնը այժմեան գրական լեզուում և գաւառաբարբառներում. — ուստի և նա իրաւունք չ'ունէր այս բառը գնել ուսերէն Երեմիայի բառի պէմ, որ նշանակում է լով՝ յղի կին։

«Յղիութիւն, յղիանար» ձևերը «նորածնութիւն» են. այս խոստովանում է պ. Դաղբաշեանը։ Այսպէս էլ գիտենանք։

«Արանքոհնակ» բառը, որը պ. Դաղբաշեանը գործ է անել «անճարացած»՝ բառական չէ որ դուռ թուրքերէն բարդ բառ է, (որ նշանակում է դաշտի շապիկ), բառական չէ, որ балахонъ բառի ճիշտ նշանակութիւնը չէ տալիս, (որովհետեւ балахонъ ընդհանրապէս վերնազգեստ է առանձին տարազի, և ոչ թէ լոկ աշխատանքի ժամանակ հաղնելու շապիկ), բառական չէ որ Դաղբաշի գաւառում էլ շատերին ծանօթ չէ (մեր հարցրած մարդկանցից երեքը ամենեին չը գիտէին, մէկը գիտէր՝ արաբօհնակ ձևով),—նա չէ գրուած նոյն-իսկ չակերանների մէջ, ինչպէս պ. Դաղբաշեանը պայմանաւորուել էր վարուել գաւառական բառերի հետ—«Խնջոյք տալ», «Խնջոյք սարքել» օտարոտի են, որովհետեւ մի բաժակ թէյով էլ, մի-երկու ֆունտ մրգով էլ կարելի է ջուրը քաշել (օր. նոր զղեստի, պաշտօնի, առհասարակ ուրախութիւթ մի բանի), արդ մի բաժակ թէյը կամ մի քիչ միւրդ տալը «Խնջոյք տալ» կոչելու համար հարկաւոր է առնուազն պ. Դաղբաշեանի չափ յանդուզն լինելը «Մաղարիչ առնելը» անպայման տղեղ է, որի փոխարէն լաւ կը լինէր պ. Դաղբաշեանի գիտեմար և գործ անէր գաւառական «Ջուրը քաշել», «Ջուրը վրադ» դարձուածքը: Ինչու համար նրա բառարանի գործածողը պէտք է իմանայ Դաղբաշի մի փոքրիկ անկիւնում գործ անուող արանքօհնակ թուրքերէն բառը (և դրանից պ. Դաղբաշեանի ձեռքով թիւում արանքօհնակաւ որ բառը), իսկ ըստարանագիր պ. Դաղբաշեանը չը պէտք է իմանայ «Ջուրը քաշել», «Ջուրը վրադ է» հայերէն գաւառական դարձուածքը, որ գործ է անուում Ախալցխայի, Ախալքալաքի, Նոր-Քայաղէտի, մասամբ Աղէրսանդրապոլի գաւառներում, նոյնպէս և Տաճկահայաստանի մեծ մասում:

«Հեց» բառը այժմեան կենդանի լեզուում, ոչ գրականում և ոչ գաւառականներում, չէ գործածում. ուստի պ. Դաղբաշեանի բառարանը գործածողների ամենամեծ մասի համար մնում է անհասկանալի, ինչպէս և ասել ենք մենք: Եթէ սակայն պէտք էր այդ մեծած բառին յարութիւն տալ՝ ապա պէտք էր գործածել նրա ընտրելագոյն ձեր «խեց», ինչպէս գրում է Եղնիկը: Յամենայն դէպս ընտրելի էր գործ անել «անուի չըջանակ» հասկանալի բառը, կամ համանիչ մի գաւառական բառ (Այս նոյն բառը գուդայի նշանակութեամբ գործ է անուում պ. Դաղբաշեանի բառարանում և եր. 147 բ. «Հեց կամ գուդա քաշելու համար»: Գուցէ այստեղ այս երկու բառերը տարբեր առարկաների համար են գործ անուում—չենք վիճում):

Երեք գտեհկարանութիւնները պ. Դաղբաշեանը գործ է անել բառարանի 81 երեսում. (մեր յօդուածում սխալմամբ

սպուած էր 184, որից պ. Դաղբաշեան խորհմաստ եզրակացու-
թիւն է անում): Մենք ոչ «գարհուրում ենք ժողովրդական և
ոսմկական բաներից» և ոչ խորչում ենք օտար լեզուի բանե-
րից, ինչպէս ասիթ էլ ունեցել ենք զրելու: Մենք պահանջում
ենք, որ գոհակարանութիւն և օտարաբանութիւն չը գործա-
ծուեն այնտեղ՝ ուր, հարկ չը կայ: Այսպէս, սուրբրդ գործ ածուած
գոհակարանութիւններ են «քօյու երկարութեամբ», «քօթակ»,
«քօթակիր», «գլամաղա» բարձրացնել, որոնք եթէ չը լինէին,
բառարանը կը շահուէր, և ոչ թէ կը մնասուէր: Հէնց նոյն 84-րդ
երեսում պատահում են «թրխիւն», գրմիւլ, չրխիւլ, ծուռտիկ,
բառանչել, հարու սալ, փննուս» դատաբանութիւնները, «բու-
կեփալ, պարուսինեայ, կոպետ, կոփտան, բուխնալէք» օտա-
րաբանութիւնները, որոնց մասին նկատողութիւն չէինք արել.
նշանակում է՝ բնորոշում էինք այդ գաւառական և օտարաղբի
բաների գործածութեան օրինատարութիւնը. իսկ այն երեքը
անձաշակ և անտեղի են, և բառարան կազմողը պէտք է ունենայ
չառ թէ քիչ ճաշակ՝ բնորութիւն անելու:

«Մասիօլ» բառի գործածութիւնը պաշտպանելով (փոխանակ
հերձուած բառի)՝ պ. Դաղբաշեանը մի քանի հետաքրքրական
ճշմարտութիւններ է յայտնում: Օրինակ՝ որ «սովորական հեր-
ձուածողները լոկ կրօնական միութիւններ են եղել, կրօնական
ձգտումներով. ըղրորովին ուրիշ, սոցիալական ձգտումներ ունի
ուսու եկեղեցու ոսակօլը»: Չնայելով որ պ. Դաղբաշեանը կար-
ծում է, որ մենք «թիւր հասկացողութիւն ունինք սուս եկեղե-
ցու ռասիօլի մասին», համարձակում ենք այնու ամենայնիւ
նրան յայտնել, որ սուս հերձուածողների այդ «բողբոլին ու-
րիշ, սոցիալական ձգտումները» ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ սովո-
րական հերձուածողների բուն «կրօնական ձգտումները»՝ էլօլիւ-
ցիայի ենթարկուած, և նրանց ամեն մի «սոցիալական տարբեր
ձգտումը» առաջ է գալիս նրանց կրօնական համոզումից:

Նոյնպէս «կատարեալ մուրութիւն» է կոչում նա մեր
խօսքը, թէ հերձուած բառը պատմական նշանակութեամբ ճիշտ
համապատասխանում է расколъ բառին (պ. աստուածարանը
մի անգամ էլ Մովսէս Խորենացուն բռնեց հերիափկասութեան
մէջ՝ նրա ասածը չը հասկանալով): Մենք ասել ենք, որ հեր-
ձուած բառը թէ ծագումով և թէ պատմական նշանակութեամբ
ճիշտ համապատասխանում է расколъ-ին, որովհետեւ ծագումով
թէ հերձուած և թէ расколъ բառացի նշանակում են ճեղքուածք,
ճեղքումն, իսկ պատմական նշանակութեամբ՝ որովհետեւ թէ
հայերէն հերձուածք և թէ սուսերէն расколъ-ը նշանակում եւ
այն մարդկային խումբը, որ մայր եկեղեցուց անջատուելով՝ ա-

ուանձին եկեղեցի է կազմում: Եկեղեցական պատմութեան որ դասադրում կամ որ մասնագիտական դրբում պ. Դաղբաշեանը գտել է ցուցում, թէ հերձուածը առ առուելն այսքան հոգուց պէտք է բաղկանայ և ոչ աւելի: Արդեօք բողոքական եկեղեցիները, որ ոչ միայն 13 միլիօն, այլ տասնապատիկ էլ աւելի հետևողներ ունին, հերձուած Վն ներկայացնում կաթողիկ եկեղեցու տեսակէտից և նրա վերաբերմամբ:

„Всемогуственный“ և «всемогуцій» բառերի նշանակութիւնների մասին էլ վիճում է պ. Դաղբաշեան, կամենարով գլխովը պատը կտորելը: Մենք այդ բառերի մասին գրելիս Ակադեմիական բառարանը նայելու կարիք չէինք զգացել: Շատ ուրախ ենք, որ այդ բառարանն էլ բերած վկայութիւններով հաստատում է մեր ասածը, թէ առաջին բառը կարելի է գործածել և՛ մարդկանց համար, իսկ երկրորդը միայն Աստու համար: Գրուելից բերուած օրինակը, որտեղ ВСЕМОГУЦІЙ բառը գործ է ածուած Նապօլէօնի համար, միակը չէ. կարելի է դեռ ուրիշ շատ օրինակներ բերել, որտեղ այդ բառը գործ է ածուած և՛ մարդկանց, և նոյն-իսկ անշունչ իրերի համար (օր. ВСЕМОГУЩЕСТВО ДЕНЕГЪ): Բայց զրանք այդ բառի փոխաբերական կամ չափազանցական առումներն են, որոնք պէտք է զանազանել նրա բուն, բառազննական նշանակութիւնից: Իսկ որ ВСЕМОГУЩЕСТВЕННЫЙ բառի դէմ Ակադեմիական բառարանում զրուած է ВСЕСИЛЬНЫЙ, ВСЕМОГУЦІЙ, որով կարծես թէ այդ երկու բառը նշանակութեամբ հաւասարեցրած են միմեանց, դա չը պէտք է խաբէր պ. Դաղբաշեանին: Թուսերէնից ռուսերէն բառարանի մէջ (որտեղ թէ թարգմանելի բառը և թէ թարգմանութիւնը ռուսերէն է), անխուսափելի է բառը իւր հոմանիշներով բացատրելը, ինչպէս հայերէնից հայերէն և այլ այսպիսի բառարաններում միշտ տեղի ունի: Հմուտ բառարան գործածողը նայում է այս դէպքերում ոչ թէ բառի բացատրութեան, որ կարող է չը լինել բոլորովին ճիշտ, այլ օրինակներին:

«Раздѣльный актъ имѣнію» խօսքի թարգմանութիւնը, որ մենք իրաւացի կոչել էինք «ծայրէ ծայր սխալ և բազմաթիւ թիւրիմացութիւնների տեղիք՝ տուող բացատրութիւն», պ. Դաղբաշեանը պաշտպանում է նրանով, որ աչքի առաջ է ունեցել Տուրքենովի «Степной Король Лиръ» գրուածքը: Ուրիշ խօսքով ասելով պ. Դաղբաշեանը իրաւաբանական քառերի քաջատրութիւնը որոնում է քանաստեղծական գրուածքների, վէպերի մէջ, փոխանակ օրէնքների ժողովածուի, օրէնքների մեկնութիւնների և իրաւաբանական բառերի մասնագիտական

բառարանների մէջ որոնելու: Այսպիսի մէթոդի հետեանքը անշուշտ իրանց կաշու վրայ կը փորձեն պ. Գաղբաշեանի բառարանը գործածողները, եթէ միամտութեամբ հաւատան նորան: — Հարիւր անգամ լուս չէր պարզապէս խոստովանել իւր սխալը, քան այնպիսի պաշտպանութիւն բերել, որ միանգամայն վարկազուրկ է անուսթ թէ բառարանը և թէ նրա յօրինողին*):

„Variacia“ բառի թարգմանութիւնը մենք կոչել էինք խոշոր սխալ, և այս պատճառով բժախնդիր ենք յայտարարուել պ. Գաղբաշեանից: Մենք ասել էինք, որ «հեղինակը երևի մինչև այժմ էլ ոչինչ հասկացողութիւն չունի, թէ ինչ է նշանակում երաժշտութեան մէջ վարիացեան», և մեր խօսքը ապացուցանում է պ. Գաղբաշեանը իր պատասխանով: Այս բաւական չէ, դուրս է գալիս, որ լիակատար բառարան կազմող մարդը «այժմ ևս չէ հասկանում, թէ ինչ տարբերութիւն կայ «փոփոխութիւն» և «ղարգարուն զանազանակերպութիւն» բացատրութիւնների մէջ»: Շատ ավաստ: Բացարեւել այս երկու բառերի տարբերութիւնը մեզ հետու կը տանէր. այսօրան միայն ասենք, որ փոփոխութեան առսերէն տառն են измѣненіе, перемѣна, իսկ զանազանակերպութեան՝ разнообразіе: Գուցէ առսերէն բառարաններն օգնեն պ. Գաղբաշեանին հասկանալ այս բառերի տարբերութիւնը *):

Շատ չարացու է պ. Գաղբաշեան, որ մենք իրան ատաջարկել ենք՝ հէնց իր բառարանի բառերով թարգմանել сereбрянный ажурный подсвѣчникъ՝ խօսքը — և մի «կողկլիկ» թարգմանութիւն է արել — «արծաթէ աշտանակ ցանցակերպ ղրուազով (կամ նաշխով): Այս թարգմանութիւնից երեսու է նախ, որ նրա բառարանում գրուած հինգ թարգմանական բառը զիս պակասաւոր են եղել ажурный բառը թարգմանե-

*) Բայց Տուրգենևից բերած վկայութեան վերաբերմամբ էլ պ. Գաղբաշեանը ընկել է մի խայտառկութեան մէջ. — նա չէ հասկացել բանի կռթիւնը: „Раздѣльный актъ имѣнію“ գարձուածքը պ. Գաղբաշեանի թարգմանած նշանակութեամբ զործ է ածել ոչ թէ պատմող հեղինակը, այլ նրա հերոսը, Մարտին Խարլովը, որին գիտմամբ այսպէս սխալ է գործածել տալիս հեղինակը այդ գարձուածքը, որպէս զի ցոյց տայ նրա բնակիչութիւնը իրաւարանութեան, մէջ, իսկ ինքը, Տուրգենևիկը, յաջորդ գլխում (XIII) այդ նոյն տեղը իրաւարանօրէն ճիշտ կերպով անուանում է „дарственная запись“:

*) Մենք մեզ կըբէք անսխալական շեք համարել Չատ ճիշտ է նկատել պ. Գաղբաշեան, որ «Արարտում» 1889 թ. (և ոչ 1899-ին, ինչպէս տպուած է պ. Գաղբաշեանի յօդուածում) մենք սխալ ենք թարգմանել Намылить кому голову գարձուածքը, «մէկի գլուխը իւղ քսել» գարձուածքով, փոխանակ զըբու «մէկի գլուխը լուղ»: Տասը տարի հայրենիքից հետո, Պետերբուրգում տպւած լինելով՝ մենք շփոթել ենք այն ժամանակ ժողովրդական այս երկու գարձուածքերը:

լու, ուստի ինքը ստիպուել է դըրուագ կամ նաշխ բառն էլ աւելացնելու. (տրեմն բառարանում պէտք է լինէր՝ «ծախձկուած, ծախտկէն և այն դըրուագ կամ նաշխ ունեցող»): Երկրորդ՝ որ իր թարգմանութիւնը միանգամայն սխալ է, որովհետեւ ցանցակերպ գրուագով կամ նաշխով աշտանակ՝ նշանակում է աշտանակ, որի վրայ կայ ցանցակերպ գրուագ կամ ցանցակերպ նաշխ (подсвѣчникъ съ сѣтчатой կամ сѣткообразной инкрустациею, лѣпкой, съ сѣтчатымъ узоромъ), բայց ոչ թէ աշտանակ, որի բուն մարմինը ծախձակու է, որի միջով լոյս կարող է անցնել (ажурный подсвѣчникъ). Երրորդ՝ որ ամուսի ծախտիւնները կարող են և ցանցակերպ չը լինել, այլ լինել, օրինակի համար, տերևի, անասունի կամ այլ ասարկայի ձևով: — Տեսնում ենք տրեմն, որ պ. Դաղբաշեան հէնց իր բառարանի բառով և իր լուրջ հեղինակական, «ոչ միմոսների և ծաղրածուների համար» արած թարգմանութեամբ խայտատուութեամ է: Հասցաւ ինչ կը լինի բառարանը գործածողների գրութիւնը, որոնք ажурный բառի նշանակութիւնն էլ չը գիտեն և ուղում են այդ բառարանից ստիպել:

Варенецъ բառի վերաբերմամբ մենք, իբրև «կաթնաարնտեա», պէտք է յայտնենք, թէ բոլորովին ճիշտ է մեր ասածը. — Փարբ-Ռուսիայում պատրաստուող варенецъ-ը թէ համով և թէ պատրաստութեան եղանակով նոյնն է ինչ որ մեր մածուցը. իսկ кислое [молоко (Sauermilch, lait caillé) մածուցն չէ, և միայն Անդրկովկասում ճարահատակարից գործ է անում մածուց բառի համար, „мацунъ“, „мацони“ բառերի հետ միաժամանակ:

„Аблакаты“ բառի մասին մեր նկատողութիւնը հերքում է պ. Դաղբաշեանը նրանով, որ Воскресенье վէպում այդ բառը «ռամիկ գիւղացին գործ է անել ինտիլիցենտ փաստաբանի համար»: Նախ պէտք է նկատենք, որ պ. Դաղբաշեանի այս յայտարարութիւնը, — մեզմ խօսելով — կամայական է: Воскресенье վէպում, ցոյց արուած տեղում, դատապարտուած գիւղացին իր յանցանքի պատմութիւնն անելով ասում է „Аблакаты нанять не на что было, а потому присудили къ четыремъ годамъ“ — (Արլակատ վարձելու միջոց չունէինք, ուստի դատապարտեցին չորս աստուայ տաժանակիր աշխատանքի): Այստեղ չըկաւ մի խօսք, մի ցուցում, որ արլակատը ինտիլիցենտ փաստաբան լինէր նշանակելիս, և ոչ ստիպական գիւղական կեանքում յայտնի արլակատ: Երկրորդ՝ որ գիւղացին արլակատ բառը կարող է գործածել անխափր թէ արլակատի և թէ փաստաբանի համար. բայց զբանով իրողութիւնը չէ փախուում: Аб-

ЛАКАТЪ բառը գործ է ամուսմ և զրական լեզուսմ (որպիսի լեզուսի բառարան է կազմել պ. Դաղբաշեանը): Իսկ զրական լեզուսմ аблакаты միշտ արհամարհական նշանակութիւն ունի, որը անշուշտ հարկաւոր էր ցոյց տալ բառարանում: Ի՞նչ պէտք է անէ պ. Դաղբաշեանի բառարանով օգտուող մարդը՝ եթէ պատահի այսպիսի խօսքերի: «Вы аблакаты, а не адвокаты», «народъ обираютъ я кулаки, и ростовщики, и аблакаты» են: Կարծենք հասկացաւ պ. Դաղբաշեանը:

Մեր նկատողութեանը, թէ պ. Դաղբաշեան ամեն մի բառի դէմ չէ գրել թարգմանական բառ և մինչև իսկ նեղութիւն չէ յանձն ատել գիմել այս կամ այն բառարանի օգնութեան, (ցոյց էինք տուել օրինակներ և բառարաններ), պ. Դաղբաշեան պատասխանում է, թէ լեզուն հնարողը ժողովուրդն է. թէ չինձու բառերով ցանկալի չէ լցնել բառարանը*), թէ բառարանը ժամանակաւոր բան է և այլն: Այս մտքերը շատ էժանազին են — ամեն մի դպրոցական երեխայ գիտէ: Բայց զրանցով չէ կարելի խուսափել մեր զրած հարցից: Եթէ Նորայրի բառերը «չինձու» էին — (թէ պէտք պ. Դաղբաշեանը հիանում է նոր հնարուած բազմաթիւ բառերով, որոնցից չատերը, սակայն, հէնց Նորայրի բառարանից են մտել կիրառութեան մէջ) — թող որոնէր ուրիշ ազրիւրներում. եթէ Նորայրի հոգապայ (= ГНОМЪ) հնաբառին չէ հաւանել ինչո՞ւ չէ գիմել Քաջուռուն, որի անունն, անդամ չէ տալիս (երևի ձեռքին չ'ունենալով այս երկհատոր բնագործակ բառարանը). ինչո՞ւ չէ գիմել ժողովրդի զիցաբանութեան, վերջապէս ինչո՞ւ չէ գրել օտարազգի բառը Պ. Դաղբաշեանը սրա դէմ էլ ունի ստարկութիւն. «ամեն մի բառի դէմ անպատճառ մի հայերէն բառ դնելը») ունի ևլ այն վիսար, որ... կաշկանդում է թարգմանիչների մտքի թոփշքները, նրանց սուսջ քար է դրում և թոյլ չէ տալիս նրանց ազատ մտածելու և հնարելու»:

Այս խօսքերը ինքը պ. Դաղբաշեանն է գրել: Ուրեմն ընթերցողները գեւ ևրախտապարտ էլ պէտք է լինին բառարանազիր պ. Դաղբաշեանին, որ թարգմանական բառեր չէ դնում իւր բառարանում՝ իրանց մտքի թոփշքը չը կաշկանդելու համար: Ո՞րպիսի խելացի հոգաատարութիւն պ. Դաղբաշեանի կողմից. — թէ ընթերցողները դո՛ւ կը մնան, որ իրանց մտքի

*) Մենք թոյլ էինք տուել և օտարազգի բառ դնել, որ պ. Դաղբաշեանը զանց է անում յիշել:

*) Բայց և այնպէս վիցիերինի սաղոնի փոխանակ զրել է «քաղցրիւմ օշանակ» գոհարը և ուրիշ նմանները:

Թոբչքը չէ կաշկանդում, և թէ ինքը, պ. Դաղբաշեանը, որ այսպիսի դործնական միջոցով աղաւուսւմ է բառեր փնտոելու, աշխատելու պարտականութիւնից...

Մենք վերջացրինք: Մենք գիտեմամբ չը բերինք պ. Դաղբաշեանի բառարանից բաղմամբիւ նոր ու պերճախօս օրինակներ մեր նկատողութիւններից ամեն մէկը նորից հաստատելու համար. սրովհետեւ մենք նպատակ ունէինք քննել ոչ թէ նրա բառարանը, այլ նրա պատասխանը միայն: Եթէ մեր այս յօդուածում պ. Դաղբաշեանն ու նրա բառարանը աւելի վստո գոյնով պատկերացան ընթերցողներին՝ մեզքը մերը չէ: Փաստերն են խօսում:

ՍՏ. ՄԱԿԽԱՍԵԱՆՑ

Ժ Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ա Ն Գ Ր Ք Ե Ր

- 1) „Современные армянские поэты“, подъ редакціею Льва Уманца и Аракела Дервишъ. 96 стр. цѣна 1 р. Москва 1903 г.
- 2) Հ. Ս. Երեմեան, «Տարիկն», Աղղաղէպ. պատկերազարդ. 82 էր. գինը 2½ ֆրանկ. Վենետիկ, 1903 թ.
- 3) «Գրիգոր Զանգեան ուսմամու ի էջերում», թարգմ. Գ. քահ. Մկրտումեանց. 92 էր. գինը 35 կ. Ս. Պետերբ. 1902 թ.
- 4) Յովհաննէս Մալխասեան, «Հօրու-մօրու», պատկերներ իրական կեանքից. երկրորդ գիրք. 153 էր. գինը 30 կոպ. Թիֆլիս, 1903 թ.
- 5) «Ախուրեան», Հայ կանանց օրացոյց—հանդէս 1903 թ. խմբադրեց արիկն Նուարդ Ափինեան. 122 էր. գինը 50 կոպ. Ալեքսանդրապօլ 1902 թ.
- 6) Ե. Սպիրի. «Լիբան աղջիկը», նուէր մանուկներին. փախ. օր. Մ. Ս. 124 էր. գինը 20 կ. Թիֆլիս, 1902 թ.
- 7) Տրգրան Ամիրճանեան «Ուսեալ պանդուխտ» (վանեցոյ կեանքից), ամիսիկից Խ. Տէր-Յովհաննիսեանց 40 էր. գինը 15 կոպ. Թիֆլիս, 1903 թ.
- 8) Ա. Ե. «Գրիգոր Արծրունի», հատոր առաջին, Թիֆլիս, 1902 թ.:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Մանգանէզ եւ նրա արդիւնաբերութիւնը Կովկասում:

41

Կովկասի լեռնային արդիւնաբերութիւնների մէջ նաւթից յետոյ ամենախոշոր տեղն է բռնում մանգանէզը (марганецъ), որը ոչ միայն Կովկասի, այլև ամբողջ Ռուսաստանի զլխաւոր արտահանութիւններից մէկն է կազմում:

Դեռ հին ժամանակներից մարդիկ գիտէին այս հանքի դո-յութեան մասին և՛ ինչպէս վկայում է Պլինիոս պատմագիրը, գործ էին ածում ապակի պատրաստելիս: Արդէն 155 տարի է, որ մշակւում են Ֆրանսիայում մանգանէզի հանքերը: Մանգա-նէզի ուսումնասիրութեան առաջին հիմքը դրեց Շելլի յայտնի գիտնականը 1774 թւին:

Զուտ մետալիկ-մանգանէզը բնութեան մէջ չէ պատահում. շատ տարածուած է նա զանազան բաղադրութիւնների ձևով: Մանգանէզով հարուստ մետաղների տեսակներից յայտնի են՝ պիրոլիզիտ, ըրաունիտ, գաուսմանիտ, պսելոմելան, ման-գանիտ, մանգանէզի շպատ և րոտոնիտ:

Մանգանէզը կոտրելիս դոյնով նման է պողպատի, կտրում է ապակի և հալւում է միայն 1900° ջերմութեան մէջ: Եթէ վերցնենք մի կտոր մանգանէզ և փչենք վրան, առաջ է գալիս մի անախորժ հոտ:

Մանգանէզը գործ է ածւում ապակի պատրաստելիս՝ նրան թափանցիկ դարձնելու համար, ունենալով իր մէջ քլորի մեծ %՝ պարզում է ապակին, ուստի և կոչւում է ապակու սապոն:

Մանգանէզը հալում են զլխաւորապէս երկաթի հետ՝ հա-յելի, պողպատ կամ ֆերրոմանգան ստանալու համար: Ման-գանէզի գործածութիւնը երկաթի հետ՝ պողպատ ստանալու

համար՝ 1850 թ. ախանից սկսած քանի դնում շատանում է, հետևաբար զգացում է մանգանէզի մեծ պահանջ, և որ առաջ է բերում մանգանէզի նոր հանքերի որոնելը և մշակելը: Այսպէս 1882 թ. ամբողջ աշխարհի պողպատի արդիւնաբերութիւնը եղել է 371,098000 պուդ, իսկ 1899 թ. նա հասել էր արդէն 1,656,014,000 պուդի. պողպատագործութեան աճման հետ շատացաւ նաև մանգանէզի արտահանութեան պահանջը: Այս պահանջը աւելացաւ նամանաւանդ այն ժամանակից, երբ Բևսսեմերը երկաթուղու գծի ձողեր պատրաստելիս՝ դրանց յարատև գիմացկունութեան համար մէջը խառնեց մանգանէզ: Մանգանէզի հանքեր գտնուած են երկրագնդի շատ տեղերում: Փանակութեամբ ամենահարուստ հանքերը գտնուած են Ռուսաստանում, գլխաւորապէս Կովկասում և չնչին քանակութեամբ Ուրալում և Եկատերինսուլաւ նահանգի Նիկոպոլ աւանի շրջակայքում:

Կովկասի մանգանէզի գլխաւոր հանքերը կենդրոնացած են Քութայիսի, Թիֆլիսի և Գանձակի նահանգներում, բայց մշակւում են և արտահանւում առայժմ միայն Քութայիսի նահանգի Կվիրելի գետի հովտում Չխատուր գիւղի շրջակայքում ընկած մանգանէզի հանքերը, որ գտնուած են Թիֆլիս—Բաթումի երկաթուղու գծի Շորապան կայարանից 38 վերստ դէպի հիւսիս *):

Մանգանէզը Կովկասում գտնուած է 59 թւականին, յայտնի երկրաբան Աբիխի ճանապարհորդութեան ժամանակ, բայց արտահանութիւնը սկսուած է 1879 թ., երբ կանոնաւոր ճանապարհների բացակայութեան պատճառով կարողացել են արտահանել միայն 50,000 պուդ: Արտահանութեան գործին մեծ վարկ տուին 2 ֆրանսիացիներ՝ Պիօ և Պուժէ, որոնք կանոնաւոր կերպով սկսեցին մշակել և արտահանել մանգանէզի հանքերը: Որովհետև Կովկասի տեղական ժողովուրդը սովոր չէր արդիւնաբերութեան այդ նոր ճիւղի աշխատանքներին, ուստի Պիօն և Պուժէն ստիպուած եղան բանուորներ բերել տալ Իտալիայից և առաջին տարին մանգանէզի արտահանութիւնը բարձրացրին $2\frac{1}{2}$ միլիօնի:

Չխատուրի մանգանէզը շերտաձև է, ունի համարեա հորիզոնական գիբը և բնում է 126 քառակուսի վերստ տարածութիւն: Մանգանէզի շերտի միջին հաստութիւնն է 0,9—1,8 սաժէն: Ենթադրելով ամեն մի քառակուսի սաժէնի մէջ 300 պուդ մանգանէզ, 126 քառակուսի վերստ տարածութեան մէջ հաշււած է 6 միլիարդ պուդ, որ եթէ տարեկան արտահանուի 35

*) Համեմատեցէք նաև «Մուրճ» 1901 թ. № 4-ում յօդուածը նոյն հարցի մասին
Ծ. Խ.

միլլիօն պուղ, մանդանէզի պաշարը կը բաւականանայ ամբողջ երկու դար: Այդ ամբողջ տարածութիւնը կտրատուած է ձորերով, որ բնականաբար կտրատել է մանդանէզի շերտերը և շատ սեղերու մերկացրել հանքը, որով շատ հեշտացրել է մշակման գործը: Այդ բացուածքներից սկսած են առաջին փորուածքները և շերտի ուղղութիւնով համարեա հորիզոնական դիրքով ներս են գնացել հողի մէջ ստորերկրեայ անցքերով. այդ անցքերը ունեն մօտաւորապէս մէկ սաժէն լայնութիւն և մէկ սաժէն բարձրութիւն: Դուրս բերած հանքը մաքրուած են հողից, քարից և պատրաստ, ջրկած մանդանէզը դարսուած առանձին:

1892 թ. Շորապան կայարանից դէպի Չիատուր անց է կացրած երկաթուղու նեղ գիծ: Պատրաստի հանքը հանքատէրերը բերել են տալիս երկաթուղու կայարանը, բաճնուած և ուղարկուած են Բաթում կամ Փոթիի նաւահանգիստները, որտեղ յանձնուած են նաւերին և այսպիսով արտահանուած են Ռուսաստան և արասահման:

Մինչև այժմ 1886 թւից սկսած արտահանուած է 204,363,699 պուղ մանդանէզ, որից 90% Փոթիի իսկ 10% Բաթումի վրայով արտահանուած է Անգլիա, Ամերիկա, Գերմանիա, Բելգիա, Ֆրանսիա, Հոլլանդիա և Ռուսաստան: Ամենից շատ արտահանուած է դէպի Անգլիա:

Չիատուրում մանդանէզի ամեն մի ստորերկրեայ անցքում կարողանում են աշխատել 4—5 բանուոր: Բանուորները իրանց վարձը ստանում են հետևեալ ձևով.

1. Խորանարդ սաժէնով—ամեն մի մաքուր, ջրկած խորանարդ սաժէն մանդանէզից, որ միջին թւով կշռում է 2700 պուղ, նայած ստորերկրեայ անցքի խորութեան և դիրքին, ստանում են 25-ից մինչև 60 բուբլի:

2. Պուղից—ամեն մի ջրկած, մաքրած պուղից, նայած էլի հանգամանքներին, $1\frac{1}{2}$ կոպ.— $2\frac{1}{2}$ կոպ.:

3. Ամեն մի խորանարդ սաժէն ստորերկրեայ անցք փորելուց (դուրս բերելով մանդանէզը և ջրկելով) հաշւելով անցքի լայնութիւնը, բարձրութիւնը, խորութիւնը մի սաժէն, ստանում են 25—30 բուբլ.:

Բանուորների միջին աշխատանքը կարելի է այսպէս հաշւել. 4 մարդ պատրաստում են մի խորանարդ սաժէն մաքրած, ջրկած մանդանէզ, ծանրութեամբ մօտ 3000 պուղ 8—10 օրում, եթէ հաշւենք 10 օր մի խորանարդ սաժէն դարսելը, այն ժամանակ ամեն մի բանուոր պատրաստում է 85 պ.:

Բանուորները աշխատում են մութ, փոշոտ, ստորերկրեայ անցքերում, որոնցից շատ քչերն ունեն կանոնաւոր օդանցքներ.

ճրագի մուխը, մանգանէզի սև փոշին իրար խառնուած՝ անտանելի են դարձնում երկար մնալ այդ անցքերում:

Ձմեռը հանքատէրերից շատերը կապալով տալով նոյն բանուորներին խորանարդ սաժէնով՝ իրանք հեռանում են: Ձիւնը ծածկում է ամեն կողմ, չըջակայքում տիրում է ամայութիւն, միայն ներքնաշխարհի մարդիկն են, որ անդադար աշխատում են այդ խոնաւ և մութ անցքերում: Անցքերում բանող բանուորների վարձը միջին թւով լինում է 1 ր.—1 րուբլի 50 կոպ. սըրանց թիւը հասնում է մօտ 2000-ի. կան և կանայք և երեսաներ, որոնք անցքերից դուրս զբաղուած են հանք ջոկելով: Սրանք ըստանում են 20-ից 40 կոպ.:

Ստորերկրեայ հորերի մէջ աշխատող բանուորների թւի չափ են նաև շարվաղարները, որոնք հանքերի մօտից մանդանէզը կրում տանում են երկաթուղու կայարանը ձիաներով, սայլերով, էշերով և ֆուրգօններով: Այս տեղափոխութիւնը կանոնաւոր ճանապարհների բացակայութեան պատճառով շատ վտանգաւոր է և կատարում է շատ դանդաղ:

Մի անդամից ձիաբեռը տանում է 12—15 պուդ, իսկ սայլը 50—70 պուդ. ձին, կարող է 4—6 անգամ դնալ գալ, իսկ սայլը 3—4 անգամ. այս հաշւով մարդը ձիով ստանում է օրական 1 ր. 50 կ.—2 րուբլի:

Բոլոր բանուորների թիւը, հաշուելով հանքերում աշխատողներին, հանք ջոկողներին, բարձողներին և կրողներին միասին, մօտ 5000 է, մօտաւորապէս ենք ասում, որովհետև չը նայելով որ կայ առանձին ստատիստիկական բիւրօ Չիատուրում ի միջի այլոց և բանուորների թիւը ճիշտ որոշելու համար, բայց այդ նրան չէ յաջողում, որովհետև այստեղի բանուորները մըշտական բանուորներ չեն. սրանց մեծ մասը զիւզացիներ են, որոնք անդադար փոփոխւում են, դնում և զալիս: Բանուորները բաղկացած են զանազան ազգերից, եկած են զանազան տեղերից. այստեղ կան բացի վրացիներից և՛ հայեր, պարսիկներ, յոյներ, ռուսներ և այլ ազգեր:

Մանգանէզի արդիւնաբերողների կարիքների, մանգանէզի արտահանութեան, և այդ արդիւնաբերութեան հետ կապուած այլևայլ հարցերի համար՝ երկրագործական մինիստրութեան թոյլտուութեամբ լինում է մանգանէզի արդիւնաբերողների համաժողով (СБЪЗДЪ): Մինչև այժմ կազմուած է 5 ժողով: Վերջին ժողովներում հանքատէրերը բացի իրանց կարիքներից՝ սկսեցին հող տանել նաև բանուորների վիճակի մասին:

Մանգանէզի իւրաքանչիւր արտահանած պուդից՝ ժողովից ընտրած վարչութիւնը վերցնում է $\frac{1}{2}$ կոպ.: Այդ կէս կոպէկ-

ները հաւաքելով՝ գործածում են քանազան կարիքների համար: Չիատուրում հիմնուած է գրադարան, հիւանդանոց, ժողովրդական թատրոն, կիրակնօրեայ դպրոց, երեխաների դպրոց, ապահովեցնում են բանուորների կեանքը և այլն:

Ինչպէս վերիը յիշեցինք, Կովկասի մանդանէզի արտահանութիւնը 1879 թ., առաջին տարում, եղել է 50.000 պուդ. չը նայելով ճանապարհների վատ հաղորդակցութեան, պրիմիալ կերպով մշակելուն, արգիւնարերութիւնը քանի գնաց, աւերացաւ և 1886 թ. հասաւ 4.215.1000 պուդի, իսկ 11 տարուց յետոյ՝ այսինքն 1900 թ. բարձրացաւ 40.363,492 պուդի: Մանդանէզի արտահանութեան ամենայայտու տարին եղել է 1900 թւականը: Վերջին 1901 թ. և անցեալ 1902 թ. արգիւնարերութիւնը քչացաւ և այժմ հասնում է մօտ 25 միլլիօնի: Արգիւնարերութեան այսքան ընկնելու պատճառն է Բրազիլիայի մանդանէզի արտահանութիւնը, որը թէև յատկութիւնով ցածր է Կովկասի մանդանէզից, բայց որովհետեւ աւելի էժան է նստում, ուստի գործարանատէրերը սկսել են Բրազիլիայի մանդանէզը ստանալ: Չիատուրի մանդանէզի գնի թանգութեան գլխաւոր պատճառներից մէկն էլ երկաթուղու չափազանց թանգ սակազինն է, տեղափոխելու վճարը: Ներկայ V համաժողովի գլխաւոր դրադմունքներից մէկն էր՝ խնդրել մինխտորութիւնից՝ քչացնել այդ վճարը, որով հանքատէրերը հնար կ'ունենան նորից ազատ մրցելու Բրազիլիայի մանդանէզի հանքատէրերի հետ: Երկրորդ պատճառը՝ մանդանէզի գնի ընկնելը 8 կամ 8½ մինչև 6 ու 6½ կոպ.: Բացի սրանցից կայ մի գլխաւոր ներքին պատճառ. Չիատուրի հանքերում մանդանէզի տոկոսը հասնում է 50—64-ի, բայց արտահանած մանդանէզի տոկոսը 48—50 է. դա ոչ թէ մանդանէզի %-ի բնական կերպով պակասելն է, այլ հետեանք է նրան, որ սպիկուլեանտները խառնում են հողաքար՝ աւելի կշռելու համար, որի դէմ ոչ մի միջոց ձեռք չէ սանուած. հասկանալի է, որ եւրոպական գործարանատէրերը այդ տեսակ խաբէութիւններից զզուած՝ յետ են քաշուած և վախենում են մեծ քանակութեամբ պատուէրներ տալուց: Յաւալի է այս երևուոյթը, որովհետեւ Կովկասի մանդանէզը իր առատութիւնով և բարձր յատկութիւնով կարող է Կովկասի ամենագլխաւոր արգիւնարերութիւններից մէկը մնալ, ինչպէս և է, և համարձակ կարող է մրցել Բրազիլիայի մանդանէզի հետ եւրոպական շուկաներում:

ՅՈՎ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.

ԳԱՒՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ախալքալաքի գաւառի հայ գիւղերի եկեղեցական հաշիւները:

Դարերի ընթացքում մեր մէջ իբր թէ գոյութիւն է ունեցել և ունի ընարողական մի որոշ սիստեմ և իբր թէ ժողովուրդը ինքը կոչուած է պաշտպանելու իր շահերը որոշ սահմաններում: Բայց չը նայած այդ աւանդական և պետական օրէնքներով սրբազործուած իրաւունքներին՝ մեր ժողովուրդը քաղաքացիապէս դաստիարակուելու, հասարակական զգացմունքներ ձեռք բերելու արամադրութիւն չէ ցոյց տալիս: Եւ այդ ցաւալի երևոյթը նկատելի է, օրինակ, սչ միայն չինական համայնական գործերում, որոնց անօրինում է միայն մի նեղ դասակարգ, այն է՝ ինտելլիգենտ տարրերից զուրկ գիւղական դասակարգը, այլ և մեր եկեղեցական-ժխական գործերում, որոնք ըստ երևոյթին համադասակարգային (всесословный) բնուորութիւն են կրում և, զիցուք, լոկ գիւղական դասակարգի սեփականութիւն չեն, և այդ գործերին ըստ երևոյթին պէտք է մասնակցեն ինտելլիգենտ կամ կիսաինտելլիգենտ տարրեր՝ զիւղերում ապրող այլ դասակարգերից: Եւ դրա գլխաւոր պատճառն այն է, որ այդ բոլոր աւանդական գեղեցիկ պարտականութիւններն ու իրաւունքները լոկ թղթի վրայ գոյութիւն ունեն և լոկ արտաքին գեղեցիկ ձևականութիւններ լինելով՝ ինչպէս ասացինք, սչ մի նշանակութիւն չեն ունեցել մեր խաւար մասսայի գիտակցութեան կամ քաղաքացիական զգացմունքների զարգացման գործում:

Յիրաւի ժողովրդից ընարուած երեսփոխ, հաշւետեաներ, հաշւեմատեաններ, հողեր վարչական ինստանցիաների օրինաւոր հակողութիւն, ժողովրդի մասնակցութիւն եկեղեցական գու-

մարները անօրինելու գործում և այլն զեղեցիկ սկզբունքները մեր գաւառներում, մանաւանդ զիւզական խաւերում, մի-մի խարուսիկ ֆիկցիա են...

Այդպէս է եղել գէթ մինչև հիմա Ախալքալաքի շատ զիւղերում, եթէ ոչ սամրոզ զաւառում: Բաւական է ասել, որ պաշտօնական հաշւեմատեանները գրուելիս են եղել ոչ թէ ընթացիկ կերպով զիւղերում երեսփոխների կամ գոնէ քահանաների ձեռքով, այլ զիւղերից հեռու, գործակալ քահանաների «քարտուղարների» կամ, ինչպէս անցեալ տարի էր, Թիֆլիսի կոնսիստորիայում այդ նպատակով կարգուած մի ինչ որ պաշտօնակայի ձեռքով...

Բայց ամեն բան վերջ ունի: Ախալքալաքի առաջնորդական փոխանորդ Բարդէն վարդապետ Աղաւելեանը չէ ուզում իր նախորդների նման մեր գաւառից ստացած եկեղեցական հաշւեմատեանները առանց ստուգելու կոնսիստորիա ուղարկել, այլ առաջին անգամ այցելութեան գալով Ախալքալաքի գաւառի իր հօսին՝ հետը վերցնում է այդ հաշւեմատեանները, որ զիւղերում, ծխական ժողովներում տեղնու-տեղը հրապարակով քննէ հաշիւները, մանաւանդ որ գրանից առաջ կոնսիստորիայից կարգադրութիւն էր եղել մեր գաւառի եկեղեցական հաշիւները կարգի բերելու:

Բարդէն վարդապետը՝ հետն ունենալով տեղական գործակալին՝ այցելել է գաւառի 57 հայ-լուսաւորչական զիւղերը և ամեն տեղ եկեղեցու բեմից կաթողիկոսի մի կոնգակը կարգալուց և քարոզ խօսելուց յետոյ՝ հէնց եկեղեցիների մէջ ծխական ժողովներ է կազմել եկեղեցական հաշիւները ստուգելու և եկեղեցիների կամ սուհասարակ ծխերի կարիքները քննելու:

Ահա այդ ժողովներում սարալայի համար շատ խրատական բաներ են բացուել: Գիւղացիները առաջին անգամն են իմանում, որ իրանց սուրբ իրաւունքն է իրանց եկեղեցու հաշիւները հրապարակով քննելու: Այդ թիւրիմացութիւնը պարզուրուց յետոյ՝ շատերի փակ լեզուները բացուում են. հաշիւները կարգալու ժամանակ այս կամ այն զիւղում շատ զիւղացիներ նկատողութիւններ են անում: Դուրս է գալիս, որ մի տեղ «չայ-իրի» փողը չի մտցրուած մատեանի մէջ, մի ուրիշ տեղ ստացած գումարի փոխարէն դարձեալ մուրհակն է ներկայացնուում, և նախկին պարաստարան զիւղացին ստիպուած է տպացուցանել, որ փողը վճարել է, բայց մուրհակը յետ չէ ստացել... Եւ նեղն ընկած «աթոռակալները» (երեսփոխները) խոստովանել են այդ ամենը և խոտացել են վճարել:

Սակայն այդ ընդհանուր հաշվեքննութիւնը ուրիշ շատ բաներ էլ է պարզում:

Առանց ծխականների կամքը հարցնելու՝ Արագովա գիւղի եկեղեցական գումարներից 500 բուբլի է վերցրել նախկին գործակալ քահանան՝ կոնսիստորիա ուղարկելու անյայտ նպատակի համար*):

Վաչիան գիւղի երեսփոխը մատենանում ցոյց է տուել, թէ իբրև եկեղեցապատկան 120 բուբլին «սելաֆը» (հեղեղը) քշել տարել է. բայց ծխական ժողովում պարզւում է, որ սուտ է, և երեսփոխը հանդիսաւոր կերպով խոստանում է վճարել:

Դատէշ գիւղի եկեղեցու մատենանում ցոյց տուած 210 բ. գումարը ամբողջովին աներևոյթացել է, և այդ եկեղեցին հիմա կոպէկ չ'ունի:

Օրճա գիւղի եկեղեցու գումարներից անհետացել է 3577 բուբլի 33 կոպէկ:

Ագաւրէթ գիւղի եկեղեցու գումարներից պակասում է 144բ.:

Ականա գիւղի եկեղեցու՝ մուրհակով տուած գումարներից 195 բ. մուրհակի ժամանակը անցել է: Այդ եկեղեցին արտերից ստանալիք ունի նաև 428 բուբլի:

Բզաւէթ գիւղի եկեղեցական գումարներից 300 բուբլի կերել է երեսփոխը:

Բուռնաշէթ գիւղի եկեղեցական գումարներից 531 բ. շարունակ ինն տարի գտնւում էր տեղական տանուտէրի մօտ առանց մուրհակի: Փոխանորդ վարդապետը նոր միայն մուրհակ է առել նրանից:

*) Առանց ժողովրդի կամքը հարցնելու՝ եկեղ. փողիքը տնօրինելը հոգևոր իշխանութեան կողմից, ինչպէս երևում է, բացառիկ երևոյթ չէ մեզանում: Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու 19 հազար ղեփատին հողի տարեկան կապալավարձը, մօտ 20,000 բուբլի, իւրաքանչիւր տարի ստանում է կոնսիստորիան, և կարծես ժողովուրդը այդ գումարի աէքը չէ, քանի որ առանց նրա կամքը հարցնելու՝ այդ գումարներից փոխառութիւն են տրւում Բաթումի եկեղեցուն կամ նրանով ինչ որ խանութներ են շինւում Քիֆլիսում, կամ Եջմիածնում են ինչ որ բանի վրայ գործադրում: Անկասկած Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու նորընտիր ինտելիգենտ երեսփոխը կը պաշտպանս այն ծիւի իրաւունքները և շահերը, որի ներկայացուցիչն է ինքը. բայց ո՞վ պէտք է պաշտպանէ Արագովա գիւղի ժողովրդի և եկեղեցու շահերը... Ահա քանի տարի է՝ այդ գիւղի եկեղեցին փակուած է խարխուլ լինելու պատճառով. հիմա միայն կառավարութիւնից թոյլտուութիւն ստացուեց նոր եկեղեցի շինելու, և ժողովուրդը փողի կարիք ունի: Եթէ, յիշուի, կոնսիստորիան 500 բ. վերցրել է այդ գիւղի գումարներից, ինչպէս ասում են գիւղացիները, և զրուած է մատենանում, նա պարտական է վերադարձնելու այդ գումարը, որը կը գործազրուի եկեղեցու շինութեան վրայ:

Չակ գիւղի եկեղ. գումարներից 80 ր. նախկին երեսփոխն է կերել, իսկ 135 ր. 8 կողմ ուրիշները վերջիններս խոստացել են վճարել:

Թխախլա գիւղի եկեղ. գումարներից 1540 ր. գտնուում է քաղաքացիների վրայ:

Ղաղօ (կամ Ղաղօլար) գիւղի եկեղ. գումարներից պակասում էր 57 ր. 40 կողմ, որի համար մուրհակ է ստացուել:

Մերինիա գիւղի եկեղեցու՝ մուրհակով տուած գումարներից 217 րուբլու մուրհակների ժամանակը անցել է:

Չանդուրու գիւղի եկեղեցական գումարներից չէ երևում 360 ր. 90 կողմ:

Սուլլայի եկեղ. գումարներից պակասում է 48 ր. 54 կողմ:

Գանձա գիւղի երեսփոխը կերել էր 100 ր., որի համար մուրհակ է ստացուած:

Խոճաբէկ գիւղի եկեղեցապատկան խանութում առուտուրով պարապուող գինեվաճառը՝ գինիով և արաղով փակելով գիւղի «սառաջաւորների» բերանները՝ աջողեցնում էր սչինչ չը վճարել եկեղեցուն. բայց հիմա կանոնաւոր պայման է կապուած:

Մաճագիա գիւղի եկեղեցին արաւերից ստանալիք ունի 600 րուբլի:

Սյրպիսով վերի յիշած գիւղերի մատեաններում ցոյց տուած եկեղեցական գումարներից պակասում էր 8644 ր. 25 կ., որից 1028 ր. եկեղեցական արաւերից պէտք է ստացուէին, իսկ 7616 ր. 25 կողմ կանխիկ դրամներից էին կորած. այս գումարից 412 ր. մուրհակների ժամանակը անցել է. 943 ր. 56 կողմէկ իւրացնողները որոշուել են, և նրանցից օրինաւոր մուրհակներ են առնուել. մնացածից 1540 ր. քաղաքացու վճարայ է, իսկ 4720 ր. 70 կողմ. առայժմ անյայտ է, և այդ գումարի համար քննութիւնները պէտք է շարունակուեն: Նոյնպէս քննութիւն պէտք է սկսուի և այն եկեղեցապատկան հացահատիկի մասին, որ թագըրել էր Գիւմուրղա գիւղի երեսփոխը:

Ուրեմն եթէ անյայտ մնացած 4720 ր. 70 կողմ. գումարի վրայ աւելացնենք և ժամանակը անցած մուրհակների գումարները, կը տեսնենք, որ մատեաններում նշանակած գումարներից պակասում է 5132 ր. 70 կողմ: Բայց թէ տասնեակ տարիների ընթացքում սրբան գումարներ են կորել ներկայ, մատեաններից դուրս, նրանց գրելուց առաջ, դա անկարելի է որոշել:

Գաւառիս 44 գիւղերի եկեղեցիները ունեն մուրհակներով 32638 ր. 75 կողմ, առձեռն գումար երեսփոխների մօտ՝ 398

բ. 4 կող., իսկ գաւառական գանձատան կէց խնայողական կասսայում՝ 8673 բ. 60 կող., ընդամենը 41,710 բուբլի 39 կոպ., չը հաշուած մատենաներից պակասած 8644 բ. 25 կոպէկը:

Մնում եմ Աբուլ, Բալխո, Դիլիֆ, Խանդո, Մեծ-Խանչալի, Փարբ-Խանչալի, Կորխ, Կօչիօ, Ղատւրմա, Սաթխա, Թոկ-Սամսար, Տրկնա, Օլավէրթ և Մօլիթ գիւղերը, որոնց վերաբերմամբ տեղեկութիւնները պակասում են:

Եկեղեցապահական փողը գանձատուն տալը մի ուրախալի նորութիւն է մեզանում՝ չնորհիւ ներկայ փոխանորդ և գործակալ վարդապետներին: Յանկալի է, որ բոլոր գումարներն ըստացուն են եկեղեցիների պարտապաններից և մոյնուն գանձատուն:

Քանի որ մեր ներկայ երեսփոխները ոչ առաջուայ կրօնական երկիւղածութիւնն ու ջերմեռանդութիւնն ունեն գէպի եկեղեցու շահերը, ոչ էլ ժողովրդի վստահութեանը արժանացածներին վայել բարեխղճութիւն, պարտաճանաչութիւն և հասարակական բնազդ,—պէտք է գէթ այդ միջոցով սանձահարել նրանց գրգուռած ախորժակները: Դրանից յետոյ միայն կարելի կը լինի այդ գումարները ժողովրդի ցանկութեամբ և պաշտօնաւոր իշխանութեան թոյլտուութեամբ գործադրել եկեղեցիների պայծառութեան և ծխերի մտաւոր-բարոյական և նոյն իսկ տնտեսական կարիքների վրայ: Սակայն այդ մասին մի այլ անգամ:

ՍՍ.ԼԼ.ԻՄԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐԿԻՑ

Մոսկուայի զեղարուեստական քասրոնը.—ձառսարսպեսական նոր սն.—Մախիւմ Գորկիյի «На дне» պիեսը Գեղարուեստական քասրոնի քեմի վրայ.—Այդ պիեսի համառոտ բովանդակութիւնը.—Տիկին Սիրանոշը Թիֆլիսում.—Աղաւեսնի յիշատակին ցերեկոյր:

Անցած զեկտեմբերի 21-ին եւ սուրի՛մ ունեցայ տեսնելու Մոսկուայի Գեղարուեստական թատրոնի բեմի վրայ Մախիւմ Գորկիյի «На дне» պիեսը, որ առաջին անգամ ներկայացրուեց նոյն թատրոնում զեկտեմբերի 18-ին եւ մեծ աջողութիւն ունեցաւ, զառնարով հեղինակի համար մի կատարեալ արիւմէֆ: Մի քանի օր շանցած «На дне»-ն արդէն ներկայացրուեց Բերլինում, եւ սաղանդաւոր ուսու հեղինակը արժանացաւ Գեօթէի եւ Շիլլերի հայրենակիցներից սպիտուած հեռագրական շնորհաւորականներին...

Գեղարուեստական թատրոնը, որ ներկայացրուեց առաջին անգամ Գորկիյի այդ երկրորդ պիեսը, (ինչպէս որ ներկայացրուել էր եւ նրա առաջին պիեսը—Мещане-ն) ահա մի քանի տարի է արդէն, որ գոյութիւն ունի Մոսկուայում եւ իր տեսակի մէջ մի եզակի երեսի՛թ է ժամանակակից Ռուսաստանի մտաւոր-զեղարուեստական կեանքում:

Գեղարուեստական թատրոնի զերասանական խմբի զըլխաւոր կազմակերպող—զեկաւարը եւ կարելի է ասել ողին պ. Ստանիաւրովսկին է, մի հարուստ, կրթուած ու նորը ճաշակի աէր անձնաւորութիւն, որի իսկական ազգանունը Ալէքսեւով է (միջին կրթութիւնը ստացել է Լազարեան ձեմբարնում): Ստանիաւրովսկին ոչ միայն իղէալական բեմիսեսօր *) է, այլ եւ սաղանդ-

*) Երկրորդ բեմիսեսօրը յայտնի գրող Նեմիրովիչ-Պանչենկօն է:

դաւոր գերասան, նշանաւոր զբաւատարգնների երկերի ոգին ու արամադրութիւնը նուրբ և խոր կերպով մեկնող գեղարուեստագէտ:

Գեղարուեստական թատրոնը ներկայացնում է միայն տեւողական նշանակութիւն ունեցող երկեր. Իբսէն, Համպտան, Չեխով, Տոլստոյ, Գորկիյ—աճա նրա սիրած հեղինակները: Ամբողջ սեզօնի ընթացքում նա տալիս է ընդամենը 6—7 պիես, սակայն խրատանչիւրը զբանցից ներկայացնում է մի սեզօնի ընթացքում մի քանի տասնեակ անգամներ և Մոսկուայի ուսու հասարակութիւնը երբէք դատարկ չի թողնում այդ բարձր գեղարուեստական տաճարը:

Գեղարուեստական թատրոնի գերասանական խմբի կենդանի, անդամ իր հնչին մանրամասնութիւնների մէջ խոր մտածուած խաղը և մինչև իրական կեանքի կատարեալ խլիզիա ներկայացնող գեկօրացիաները, հազուադէպ և այլն՝ զուրս են բերում բնական արուեստը իր ամբողջ սպասադիմութեամբ՝ զբաւատարգների ստեղծագործութիւնները կատարեալ կերպով ընդհանրութեան սեխականութիւնը դարձնելու համար:

Գեղարուեստական թատրոնը այժմ գեանդուած է Գաղեանայա կոչուած փողոցում, Լիանօզովի տան մէջ:

Թատրոնի հէնց մուտքից ձեր ոչազրութիւնն է զբաւում նրա ներսում տիրող ու բոյն ճարտարապետական ոճը: Այդ նոր, մօղերն ոճը միանգամայն համապատասխանում է Գեղարուեստական թատրոնի լուրջ, ինտիլիգենտ ուղղութեան, կիրթ, նուրբ ճաշակին:

Ժամանակի հետ փոխում են մարդկանց աշխարհահայեցողութիւնը, ճաշակը. սմեն բանի մէջ ինքնուրոյն այդ թատրոնը չ'ու գից ճարտարապետութեան մէջ ևս կրկնել հին սճերը. կրասիկ, բիս զանդական, բոմանական, զօթական, բենեսանս, բօկօկօ, և այլն, սրտնք գեղեցիկ լինելով հանդերձ արդէն անցած դնացած օրերի արդիւնք են և այժմ մեր ոչուն բիչ բան ասող ձևեր են. նոր մարզը, նոր ժամանակը պահանջում են նաև նոր խօսք, մարդկային տեկի նուրբ յոյզեր արտացոլող ձևեր, գեղարուեստական նոր ճաշակ: Այդ ժամանակակից, մօղերն ուղղութիւնը բանաստեղծութեան և նկարչութեան մէջ այնքան անաջող փորձեր ունեցաւ, որ մկրտուեց ղեկադանս ճաղբանունայ: Բայց այդ նոր ուղղութեան փորձը ճարտարապետութեան մէջ յամենայն գէպ ծիծաղելի չէ և նոյն իսկ շատ աջող, ինչպէս այդ կարելի է տեսնել հէնց այս թատրոնի ներքի ճարտարապետութիւնից:

Գեղարուեստական թատրոնը ներքուստ ամբողջապես մոգերն ոճով է շինուած ու դարդարուած: Մօզերն ոճը ճարտարապետութեան մէջ անպաճոյճ է և լուրջ: Նա յիշեցնում է մաքուր ու պարզ ճաշակով հաղնուած մի ինտելիգենտ կին, որ ցանկանում է գիմպեյնի մէջ մտածող տեսնել և ոչ իր մաքնի հրապոյրներով զմայլուած աղամարդ, ինչպէս այդ անում է չրոպլորէն պճնուած կօկետուհին: Բօկօկօ ոճը այդ կօկետուհուն է յիշեցնում...

Գեղարուեստական թատրոնի օբնամկնանքի մէջ գուք չէք գտնի օրգանական ձևերի (տերև, պտուղ, ծաղիկ, կենդանիներ, գէղերք և այլն) նմանութեամբ շինուած գրուպներ, այլ միայն զծերից, քառակուսիներից, խորանարդներից և այլ գեօմետրիկական ձևերից զաբգարանքներ: Դուք չէք գտնի այդ թատրոնում վառ դոյն, մարմար, սոկի, բրոնզ, թափշ, ապրիչում, այլ ամեն բան աւելի պարզ և համեստ նիւթերից. գոյները մեղմ, պատկերները հասարակ շրջանակներում, նստարանները և սիւները փայտէ, գրուպուտը ճոխ ջահերի տեղ հասարակ, խորանարդաձև կաթնագոյն լուսամտիովներով ծածկուած ելեկարական լամպեր:

Արդէն նստած եմ իմ տեղում: Թատրոնը ծայրէ ի ծայր լի է: Բեռք ծածկուած է զորչագոյն վարապոյրով, որի միակ դարդարանքը նրա մէջտեղում, մի փոքրիկ քառակուսիի մէջ գեկողենտական ոճով նկարած թեատարած մի ուրու բն (чайка) է. այդ էմբէյմը նկարուած է նաև տոմակների ու ափիշանների վրայ:

Վարապոյրը միջից երկվեզկ բացուեց: Ապշեցուցիչ բեալականութեամբ ներկայացրուած է մեր ստաջ թշուառութեան այն սրճը, որ յայտնի է միայն մեծ քաղաքներում, ուր մարդավայել բնակարան ունենալու համար պէտք է բախտաւոր ծնուել: Այդ ապատարանում (НОЧЛЕЖКА) զլուխ պնկու. մի անկիւն են գտել քաղաքակիրթ հասարակութեան կեանքի «ջատակում» գոյութիւն պահպանող չբոսեակները»:

Ինչպէս ովկիանոսի անդնդում, արևգալի լոյսից և ջերմութիւնից յաւիտեան զրկուած, զարհուրելի խուարի և սամնամանիքի մէջ ապրում են բնութեան խորթ զուտակ արարածները, այնպէս և հասարակական կեանքի ամենաստոր խուերում, գիտութեան և քաղաքակիրթութեան բարբիքների անմաս, ահա այդպիսի սրճերում թշուառ գոյութիւն են պահպանում գոյութեան կուում խոբտակուածները:

Բարեկեցիկները միայն հեռուից լսել են այդ թշուառների կեանքի մասին, մինչգեռ Գօրկին դրանց հեռ աղ ու հաց է կերել և այժմ իր զօրեղ գրչով դարձնում է ամբողջ քաղա-

քակիրթ մտորդութեան ուշադրութիւնը այդ անձանօթ սոխարհի վրայ:

Մեծ քաղաքի խուլ փողոցներից մէկում, մի հին տան ներքնայարկում է զեռեզոււած այդ ապաստարանը: Կամարապատ, ցած, երկայն ու մնայլ այդ որջի բնակիչները զարթել են ծանր քնից: Առաւօտ է: Ջախ, պատի մօտ, փաշտաներով բաժանուած մի մահճակալի վրայ, պառկած է մերձ ի մահ հիւանդ մի կին (Աննա), որի հազը և սիրտ մաշող անբոցը չէ չարժում թշուառութիւնից բխացած և կազաացած չրջապատողների գոթեր: Հիւանդի մօտ, մի սալի առաջ նստած, բանում է նրա մարդը, աղքատ մի փականագործ (Կլեչչ): Այդ մարդու կը գեռ ևս յոյս ունի իր աշխատանքով սափ կանգնել, գուրս գալ այդ որջից: Այլ կե՞րպ է մտածում բնութանուր չոր թախտի վրայ պառկած, յօրանջող ու ճնրկող Սաաինը, հեռադրական նախկին ծառայողը, որ սպանել է իր քրոջ անպատու սղին, նստել բանտում և այժմ հասարակական անարգարութիւնից զայրացած զանում է որ աշխատասիրութիւնն ու շխտակութիւնը աւելորդ են դոյութեան կրոււում: Այդ «ինակիրքները» սիրում է երբեմն երբեմն արասանել անկասկ, օտար դեղեկի խօսքեր. «տրանսցենդետալ, օրդանօն, Գիբրալտար»: Նրանից ոչ հեռու, աջ պատին կպած, փոքրիկ լուսամտի տակ, իր առանձին անկողնու վրայ նստած, բանում է «կարաուզնիկ» Բուլնօվը, ապաստանարանի փիլիսոփաներից մէկը: Պէտք է նկատել որ բոլորն էլ սիրում են փիլիսոփայութիւններ և դատողութիւններ անել այդ պիեսում, ինչպէս և Мѣщане-ի մէջ... Դրա անկողնու յեռուում, սախտակներով պատած մի ծակուռի մէջ, քնած է գող Վայսիկ Պետելը: Ներքնայարկի տէրը, մի ժլատ, խանդոտ, անսիրտ ծերուկ, առաւօտ կանուխ պատում է իր աէրութեան մէջ, յիշեցնում ապաստարանում անկիւններ վարձած այդ թշուառներից իւրաքանչիւրին սողառիկների մասին (կողէկներ): Նա մօտեցել է գողի ննջարանի փակ դռան և ճեղքերից դիտում է ներսը: Սաաինը հեզնում է և ակնաբկում ծերուկի ջանել կնոջ՝ Վասիլիսայի և Վայսիկայի սիրային յարաբերութիւնների մասին. գողը չէ սիրում այդ «անհոյի» կնիւն և աւելի համակրում է, նրա քրոջ Նատաշային: Այդ առիթ է տալիս խանդոտ Վասիլիսային շարունակ նեղել, կռուել, ծեծել Նատաշային: Որջի մի մութ անկիւնում, օձիքը վեր բարձրացրած մի հին վերարկուի մէջ, սրկած է ալիօօլիկ գերասանը և իր անցեալ փառքով է երազում: Երբեմն զբաից ներս է վազում ամեն ինչ գինու սոււած, «գարմօնիկան» ձեռին, ստաբրիկ Ալեօշան, այդ միշտ հարբած և միշտ ուրախ կոշկակարը, որի դեպիղն է „Ничего не хочу, ничето не желаю“: Ապաստարանի բնակիչներից է և

մի «ընկած արարած» (Նաստեա) որ ինքը հաւատացած է և իզուր է աշխատում նա և ուրիշներին հաւատացնել թէ ինքը մարտը սէր էլ է ունեցել, սիրել է և սիրուել «պապալուն կօշիկներ» ունեցող մի ուսանողից: Նաստեան շարունակ կարգում է բուլ-վարային բօմաններ և ոգևորում այդ գրքերի սազեմներով: Այդ դուր չէ զալիս նրա այժմեան սիրականին, որին բոլորը ծաղրելով «բարօն» են անուանում, սրովհետև նա մի ժամանակ «խր սեփական ձիերն, կարէթան» է ունեցել, մի ժամանակ առաւօտները իր անկողնում սերով կաֆէ էր խմում, օրը մի քանի անգամ շրեր էր փախում, պճնում... Այդ անձերին աւելացրէք մի թաթար և մի ուսւ բեռնակիր, փողոցներում կարկանդակ ծախող մի կին (Կվաշնեա) և աղաստարանիս տիրոջ ազգական՝ քաղաքապահ սատիկանին (գօրօգօլօյ) և դուր կը ծանօթանար НОЧЛЕЖКА-ի բոլոր բնակիչների հետ: Թղթախաղ, արեցողութիւն, վիճարանութիւն, սրախօսութիւն, երգ և այդ բոլորի հետ դատողութիւններ, զանազան հայեացքներ կեանքի և մարդկայնութեան մասին անցնում են ձեր առաջ:

Ահա բարեկեցիկներից մտացուած, իր ինքնուրոյն կեանքով ապրող այդ միջնադարի մէջ երեան է զալիս մի օտարական (Լուկա). զուպը ձեռին, պարկը ուսին թափառում է նա առն տեղ. շերկրի վրայ բոլորս էլ անցաւորներ ենք, թէ նրանք, սրանք մի տեղում են ապրում և թէ նրանք, սրանք թափառում են. լսել եմ որ մեր երկիրն էլ երկնքում թափառաչըլի է», ասում է այդ բարեսիրտ, հեղ, մեղմ, սրախօս մարդը: Մի քանի օր մնալով աղաստարանում նա դառնում է բոլորի սիրելին, առն մէկին սիրովում է, յուսադրում, բարձրացնում իր աչքում, նրա մէջ մարդկային արժանապատւութիւն զարթեցնում. «բոլորն էլ ապրում են լուսադոյն աղապայի համար», «պէտք է յարկել մարդուն», «պէտք է խղճալ մարդկանց», — ահա նրա ասածների խնասար: Եւ նա մխիթարում է ու սիրտ առաջի մեռնող Աննային, որ առատալանքներով լի իր ամբողջ կեանքում ծեծից, վիրաւորանքից, քաղցից զատ ուրիշ բան չի տեսել «Դու յոյս ունեցիր... ասում է Լուկան մեռնողին, ահա կը մեռնես և կը հանդատանաս, այլևս ոչինչ հարկաւոր չի լինի և փախնալու բան չը կայ, մահը ամեն ինչ հանդատացնում է... կը մեռնես կը հանդատանաս, սրովհետև ո՞ր այստեղ հանդատանայ մարդ... Աստուած կը նայի քո վրայ հեղութեամբ և սիրով և կասի. «Ես ճանաչում եմ այդ Աննային... Տարէք նրան գրախա—Թող հանդատանայ... զիտեմ նա իր կեանքում չատ է տանջուել»...

Համոզում է նա և Վայսկա Պեպելին թողնել այդ սրճը և իր սիրած Նատաշաի հետ փախչել հեռու, Սիբիր, և այնտեղ նոր

կեանք սկսել նա յորդորում է և ալիօճօլիկին բժշկուել իր ցաւից, զիմել ալիօճօլիկ հիւանդների համար շինած հիւանդանոցը: Նա աստիում է և Նաստեային. «Եթէ ինքդ հաւատում ես որ դու ունեցել ես իսկական սէր, ուրեմն այդ եղել է»:

Սակայն երկարատև չի լինում այդ օտարականի ազդեցութիւնը. երբ Վասիլիսան ևս եկած ջուր է ածում իր քրոջ ոտերի վրայ, վրէժ հանելով սիրականին խլելու համար, և ընդհանուր իրարանցման ժամանակ Պեպելը սպանում է սպաստարանի տէր ծերուկին, իսկոյն յանցանքի տեղն է դալիս սլօլիցիան. և անցալթուղի չունեցող Լուկան անհետանում է: Յաւեց իրան կորցրած Նասաչան յայանում է ոստիկանին թէ Վասիլիսան և Վայսիան առջուց պայմանաւորուել էին սպանել ծերուկին և այդպիսով ազատուել նրանից: Յանցաւորները կալանաւորուում են:

Լուկայի անհետանալուց յետոյ սպաստարանի մէջ, որին տէր են դանում կարկանդակներ վաճառող կիներ և նրա հետ ամուսնացած «գորօզօլօյը», վերսկսում է հին կեանքը. բոլորը յիշում են խեղճ ու բարի օտարականի խօսքերը, վերաբերմունքը, մտաբերում է իւրարանչիւրը իր անցեալը. դարձեալ թղթախաղ, արբեցութիւն, դատողութիւններ: Վերջում բոլորը սկսում են երգել մի սրտատուչ, ախուր և միաժամանակ ազատասէր երգ, որ ընդհատուում է «բարօնի» յայանած բովով, թէ ալիօճօլիկ դերասանը ինքն իրան կախեց:

Նա կարողացայ հազարգել ընթերցողին այդ զօրեղ գրուածքի միայն կմախքը, սրովհետև Գօրկիի այդ պիեսը զեռ չի աւելուած, իսկ յիշողութեանս մէջ, այն էլ մի ամիս անց, շատ բան բնականաբար, ազօտ կերպով է պահպանուել: Կարելի է համարձակ ասել, որ այլ բեմի վրայ երբէք այն աճողութիւնը չէր ունենալ „На дне“-ն, ինչ որ նա ունեցաւ Գեղարուեստական թատրոնի հռչակաւոր խմբի աննման խաղով և զարմանալի գրուածքով: Այդ երկը իսկապէս գրամա չէ սովորական մաքրով, այլ հզօր վրձինով նկարուած գարմանալի տեսարաններ, որոնք առիթ են սաղիս հեղինակին հասարակութեան մէջ սրուչ հայեացքներ արծարծելու:

Լ. Ս.

Յունուարի 9-ից սկսած հայոց գրամատիկական բնկերութեան խմբի ներկայացումներին մասնակցում է աիկին Սիրանոյշը:

Մինչև այս սողերս զրելը աիկին Սիրանոյշը բեմ է դուրս

և կեղծ երեք անգամ—«Կառելիազարդ տիկնոջ», «Կեանքի արժեքի» և «Շղթաների» մէջ:

Եւ մտադիր չեմ մանրամասն հաշիւ տալ ընթերցողներին այդ ներկայացումների մասին, այլ կ'ազէի միայն յայտնել այստեղ թոռացիկ ազատութիւններս:

Եւ առիթ եմ ունեցել տեսնելու «Կամելիազարդ տիկնոջ» մէջ այնպիսի բեմական հսկաների խաղը, ինչպէս են էլէօնորա Գուդէ և Սառա Բէննար, և այնուամենայնիւ ինձ ահազին գեղարուեստական հաճոյք պատճառեց տիկին Սիրանոյշի խաղը, որ սկզբից մինչև վերջը խորապէս մտածուած էր և զգացուած:

Տիկին Սիրանոյշին յաջողուեց պարզել հասարակութեան առջ անկեղծ սիրոյ համար ստեղծուած, բայց՝ կեանքի անըզտաստ պայմանների շնորհիւ՝ ծախս սիրով ապրող հեղտուհու հոգեւորանութիւնը և համակրութիւն ներշնչել գէպի այն յաւերժ կանաչին և վեհօրէն մարդկայինը, որ ապրում է Մարդբիտ Գօթիէի հոգու խորքում՝ կեանքի պղտոր ալիքներից մնացած աղմի տակ:

Պակաս նպատաստ որ ազատութիւն թողեց իմ վրայ տիկնոջ խաղը Աննա Դեմուրինայի գերում («Կեանքի արժեքը»):

Իմ կարծիքով Դեմուրինան պէտք է հիպնոզացածի նման լինի Մօրսիօյի ինքնասպանութիւնից յետոյ և յամենայն գէպս աւելի սղբերգօրէն հանդիսա կարգաց նրա նամակը:

«Շղթաներ» պիէսի ներկայացումը մի նոր առիթ էր տիկին Սիրանոյշի համար իր բեմական տաղանդը ամբողջ փայլով ցոյց տալու: Վօլքինցեւայի գերը շնորհալի տիկինը խաղաց ուղղակի վերստուօղ կերպով:

Եւ առիթ եմ ունեցել տեսնել տիկին Սիրանոյշի խաղը մի քանի անգամ, և այժմ ինձ թւում է, թէ տիկինը աւելի եւ կատարելագործել է իր խաղը, որ աչքի էր ընկնում ոչ միայն այն ժամանակ, այլ և ինչպէս տկանատես անձինք վիպիկ և վիպում են, նոյն իսկ սրանից 20—25 տարի առաջ, երբ տիկինը խաղում էր Ագամեանի պէս ստղանցի հետ և չրջապատուած էր օր. Աստղիկի, տիկ. Հրաչեւայի և Գարադաշեան քոյրերի նման բեմական աստղերով: Ինձ թւում է, որ տիկնոջ խաղը այժմ աւելի բնական է, աւելի հարթ, չարժամակերպ աւելի բազմակերպ, արաստանութիւնը աւելի որոշ: Տիկին Սիրանոյշը այժմ խաղում է սկզբից մինչև վերջը հաւասար եռանդով և ուշադրութեամբ, մինչդեռ առաջ նրա խաղի մէջ գերի մի քանի ուժեղ կէտերը փայլուն կերպով էին անցնում, իսկ մնացած մասերը, ինչպէս ուսաներն ասում են, ճմուռում էին:

Այդ ոչ միայն պատիւ է բերում տիկնոջը, այլ և յոյս է տալիս մեզ կարծելու, որ զեռ նրա տաղանդը կանց չէ անել իր առաջագիմութեան մէջ և որ պոցէ նա զեռ համեմու է իր զազաթնակէտին և նոր երեան եկող սցփերի ու պ. պ. Արեշեանի և Պետրոսեանի հետ տարու հայկական բեմին իր նախկին փայլը:

Ի գէպ է ասել, այս տարի լրանում է տիկին Սիրանոյցի բեմական գործունէութեան երեսնամեակը: Որքան մեզ յայանի է, Հայոց Դրամատիկական ընկերութիւն վարչութիւնը որոշել է հանգիստօր կերպով ածուել յարգելի տիկնոջ յարեղանք տաղիկայ սէզոնի սկզբին:

Կիւրակի յունուարի 26-ին ի յիշատակ հանդուցեալ արագիկ Ազատեանի՝ արտիստիկական թատրոնում հայոց Դրամատիկական ընկ. վարչութիւնը կազմել էր մի յուշահանդէս:

Ամբողջը կազմուած էր երեք մասից. նախ ներկայացրին մի փոքրիկ մելոդրամ՝ Ազատարգան, որ տասը տարի առաջ թիֆլիսում առաջին անգամ խաղացել է Ազատեանը: Այս սիւետը խաղացին մեր բեմի չորս լաւագոյն սցփերը—ա. ա. Սիրանոյց, Մայսուրեան, պ. պ. Պետրոսեան և Արեշեան: Ներկայացումը լաւանցաւ:

Յուշահանդիսի երկրորդ մասում Ազատեանի պատկուած բիւտաի առաջ պ. Մամաջանեանի երգեցիկ խումբը երգից մեծ արտիստի անուանը նուիրուած մի բաւական լաւ կանատատ, որ հասարակութիւնն ընդունեց ոգևորուած ծափահարութիւններով և մի քանի անգամ կրկնել առաւ: Պ. Մամաջանի խումբը այնուհետեւ էլի մի քանի ժողովրդական խմբական երգեր երգեց, որոնք շատ լաւ տպաւորութիւն գործեցին:

Այս յուշահանդիսի ամենահետաքրքիր մասը Ազատեանի սողօթէօղն էր: Դա մի լաւ մտածուած և յաջող կատարուած կենդանի պատկեր էր: Բարձր պատուանդանի վրայ նստած է Ազատեանը, և երկու մասաներ պատկներ բռնել զլիսին: Ասելի վար երկու կարգ շարուած՝ մի քանի զերատաններ ներկայացնում են Ազատեանին իր խաղացած դերերում՝ բնորոշ սրտաններ ընդունած. բեմի վրայ երկու կազմում շարուած են զերատանուհիներն ու զերատանները՝ երեաները գարձրած գէպի վեր, գէպի Ազատեանը, ա. Սիրանոյցը հանգիստօր քայլուածքով բարձրանում է և մի մեծ պսակ գնում Ազատեանի սարերի տակ:

Ամբողջը շատ յաջող էր. հասարակութիւնը բաւան ծափահարութիւններով արտայայտեց իր գոհունակութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արևելոցու վերաբերմունքի դեպի «բարերարները».—Հարսուրբեան հասարակական ծագումը.—Հասարակութիւնը բարոյական իրաւունք ունի բարեգործութիւն պահանջելու հարուստներից.—Իրանց եկամուտի ո՞ր մասն են ևնչում մեր բարեգործները.—Նիւրսական ոյժի հասարակական սանձահարումը.—Մայրենի լեզուի նշանակութիւնը ժողովրդական դպրոցներում.—Պարերական մանուշի հարիւրամասիկը Ռուսաստանում.—Փիւնիկների միևնույնի զինուորը.—Նոր հայերեն քերթ.—Հայոց հոգեւոր վարչութեան դասը:

Խնկարկել մարդկանց, որոնցից, շահ ևս սպասում—դա առաւելագէտ ստրկահողի արեւելցուն է յատուկ: Արեւելցին կարծես չի էլ դիտակցում թէ իր այդ վարժունքի մէջ որքան ստորութիւն կայ: Այդ անդիտութիւնն է պատճառ որ մեզանում շատ հեշտ է «բարեգործ անունը վաստակել. բաւական է որ մէկը իր աճազին հասոյթներէից մի փշրանք շարտէ հասարակութեան և այդ վերջինը պատրաստ է մինչև երկինք բարձրացնել նուիրատուին, իր զլխի վրայ տեղ տալ նրան: Այլ ևս ո՞ր «ապերախտը» կը համարձակուի քննադատել «բարերարի» արարքները: Եւ ահա ստեղծւում է մի այնպիսի ստորաքարչ վերաբերմունք դէպի հարուստ բարերարը որ այս վրբջինը սկսում է երեւակայել իրան մի մեծութիւն, մի կուռք, որի քմահաճոյքին անդամ պէտք է համակերպուի հասարակութիւնը: Հասարակական անչափ յարգանքները այդպիսով անբարոյականացնող են երկու կողմերի համար էլ, թէ տուողի և թէ ընդունողի, ուստի պէտք է որոշել հասարակութեան արժանավայել վերաբերմունքը դէպի բարեգործները:

Անշուշտ այս կամ այն անձնաւորութիւնը իսկապէս մեղաւոր չէ որ յայտնի հասարակական-անտեսական պայմանների շնորհիւ ներկայումս դրամական ոյժը չէ մնում հասարակու-

Թեան մօտ, այլ կենտրոնանում է միքանի անհատների ձևոքում, և զրանով ստեղծում են երկու ծայրայեղ բևեռներ. մի կողմից անբաւ հարստութիւն, իսկ միւս կողմից՝ անծայր աղքատութիւն: Այդ զրութիւնը, պէտք է հաւատալ, անցողական է, ինչպէս անցողական էին հասարակական զարգացման այն ֆազիսները, երբ տիրում էր սարկութիւն և ճորտութիւն: Սակայն հէնց բոլոր հարցը նրանում է որ սարկութեան և ճորտութեան ժամանակ ևս իշխողները չէին զիտակցում թէ իրանց վայելած իրաւունքը անարդարութեան հիմքերի վրայ է կառուցուած: Երբ մասսան սկսեց զիտակցել այդ բանը—վերջ զրուեց և տրամարդի հարստահարութեան. նոյնը և այժմ. զրամական ոյժի աէր անհատները չեն զիտակցում թէ բախտի բերմամբ իրանց ձեռքը պցելով հասարակական պայմաններով ստեղծուած նիւթական ոյժը—բարոյական իրաւունք չունեն իրանց տիրացածի մէջ ուրանալ հասարակական մասը:

Անապատում մեն-մենակ թափառող մարդը չի կարող հարըստութիւն գիգել. զրա համար հարկաւոր են՝ բազմաթիւ անհատների համախմբուած գոյութիւն, կեանքի և գոյքի արտօնովութիւն, հազորդակցութիւններ, գիտութիւն և տեխնիկա: Արգ, այդ բոլորը չէ որ հասարակութեան, նոյն իսկ դարերի ընթացքում համայն մարդկութեան լաւագոյն ոյժերի ստեղծած հանգամանքներ են: Հասարակական կարգերի ներկայ անկատարելութիւնն է պատճառ որ հասարակութեան և մարդկութեան ըստեղծած այդ պայմաններից և մասսայի աշխատանքից օգտուում են միայն անհատները: Այդ անկատարելութիւնը մի անփոփոխ մշտական զրութիւն չէ: Միայն պէտք է որ ընդհանրութիւնը զիտակցէ այդ, և այն ժամանակ աւելի արագ կերպով առաջ կը դայ բարեշրջում ներկայ պայմանների մէջ: Այսօր մենք տեսնում ենք բազմաթիւ աստորական-արգիւնաբերական ձեռնարկութիւններ, որոնք անցել են տէրութեան և հասարակական ինքնավարութիւնների ձեռքը, ուրեմն կեանքը արդէն զարգանում է յայտնի ուղղութեամբ: Եւ երբ այդ ուղղութիւնը աւելի ևս մեծ ծաւալ ստանայ—կարիք էլ չի լինի հասարակութեան սպասել անհատների նուիրատութիւններին, յոյս դնել մասնաւոր բարեկործութեան վրայ: Ինքը տէրութիւնը, հասարակութիւնը կ'ունենան բաւականաչափ միջոցներ սեպհական ոյժերով հոգալու հասարակական բոլոր կարիքները: Սակայն քանի դեռ չենք հասել այդ իդէալական զրութեան, պէտք է անհատական բարեկործութիւններին ևս մեծ նշանակութիւն տալ:

Վերև բերած տեսակէտները եթէ ի նկատի ունենան թէ նուիրատուները և թէ ընդունողները, կ'իմանան որ մէկը տա-

լով իսկապէս կատարում է իր բարոյական պարտականութիւնը, որովհետեւ նա օգտուում է ներկայ հասարակական անկատար կազմութիւնից և սեպհականացնում մի բարիք, որ հանրային ծաղում ունի, իսկ միւսը ընդունելով այդ նուէրները, կարիք չունի շողքորթելու և քծնելու, որովհետեւ ստանում է այն, ինչ որ իսկապէս այլ պայմաններում պէտք է պատկանէր իրան: Այնուամենայնիւ, ի հարկէ, շնորակալութեան արժանի է իր պարտքը գիտակցող հարուստը: Սակայն շնորհակալութեան և քծնութեան մէջ սարեր ու ձորեր կան:

Մի այլ կէտ ևս չը պէտք է մոռանալ «բարերար» անունը սրան-նրան տալու ժամանակ: Վերջիննք մի օրինակ: Մեղանում շատ կան մի կամ երկու միլլիօն ունեցող հարուստներ, թէև ունենք նաև 20—40 միլլիօնատէր անհատներ: Այն ինչ պէտք է ասենք միլլիօնաւոր չհամար, և թէ բազմապատկէք, կը ստանաք և՛ աւելի ունեցողների նկատմամբ...

Դիցուք մէկը ունի մի միլլիօն կարողութիւն: Ներկայ պայմաններում նա հանդիստ կերպով կարող է այդ կապիտալից ստանայ տարեկան 100,000 ռ. եկամուտ: Եթէ այդ պարոնը աւսօրմալ մարդ չէ, նա իր կուլտուրական պահանջներին առատօրէն բաւականութիւն կարող է տալ տարեկան 20 հազարով, իսկ եթէ աւելի կիրթ ու ինտելիգէնտ ճաշակի տէր լինի նա, այդ դէպքում և շատ աւելի սլակաս մի գումարով: Մնում է ուրեմն աւելորդ դեռ 80,000 ռ.: Այդ գումարը համարձակ կերպով կարող է նա նուիրել հասարակութեան, առանձին ոչինչ չը կորցընելով և չը վտանգելով թէ իր և թէ իր ժառանգների մշտական փառաւոր ապրուստը: Բայց նա, սովորաբար, տալիս է հասակութեան միջանի հարիւր կամ երկու երկը հազար թուրի և լսում հիացմունքի և փառաբանութեան ձայներ, մնացածը ազահարար պահում իր համար: Իսկապէս, ինչ էր նրա արածը, միթէ իր կարողութեան համեմատ նոյնը չէ անում մի չքաւոր արհեստաւոր, որ իր տաննակ բուրլիներից կոպէկներ կամ բուրլիներ է տալիս նոյն նպատակներով: Ինչու հրճուանքով չեն յիշատակում նրա անունը, «մեկեւստ», «բարերար» չեն աւսուանում նրան: Չէ որ, ուղիղն ասած, աւելի ծանր է չքաւորի համար տալ միջանի բուրլիներ, քան միլլիօնատէրի համար իր ստացած տոկոսներից տոկոսի չնչին մասից բաժանուել: Միթէ իրաւ կարելի է բարեգործութիւն համարել այն չնչին նուէրները, որ իբրև փշրանքներ գցում են մեր հարուստները հասարակութեան առաջ: Ի հարկէ ոչ, այդ փշրանքներով շօշափելի դործ չէ կարելի կատարել, մինչդեռ ինքը երկոյթը, ընդունուած ձևով ու հանդամանքներով, լսի անբարոյականացնում է հասա-

րակութիւնը, մուրացկանութեան ու աչք տնկելու վարժեցնելով նրան: Մի բանն է աւելորդ չէ նկատել:

Անհատները ձեռքում կենտրոնացած ոյժը յաճախ գործադրում է նաև հասարակական շահերի դէմ. էլ չենք ասում այն բանի մասին, որ աննկատելի կերպով կապիտալիզմը ստրկացրելով է իրան թէ դիտունին, թէ սպէտին. նա շատ անգամ առանց քաջուելու օգուում է ոսկու ոյժից իր եսական-անսփառական ձգտումների համար նիւթական ոյժի այդ կամայականութեան դէմ արդէն սկսել է միջոցներ առնել արեւմտեան արթուն ինքնաճանաչութիւնը: Այդպէս, օրինակ, նորերս, Ֆրանսիայի ազգային ժողովը անվաւեր համարեց մի միլլիօնատէրի (Fould) պատգամաւորական ընտրութիւնը, որովհետև յայտնի էր թէ Մամոնայի այդ գոռոզացած ներկայացուցիչը բացարձակօրէն կաշառում էր ընտրողներին, տեղական թերթերին իրան փառաբանել էր տալիս: Իզուր չեն Ամերիկայում, ուր միլլիարդատէրերը այսօր հասարակական ազատ կարգերի համար վտանգաւոր տարր են ներկայացնում, հարց դրել առհասարակ սահմանափակել մասնաւոր անհատի նիւթական կարողութիւնը որոշ չափերով... զրանից թէ չտէրութիւնը, թէ հասարակութիւնը և թէ նոյն իսկ իրանց միլլիօնատէրերի մարդկայնութիւնը միայն կարող են շահուել...

Յունուարի 14-ին, Կովկասեան Գիւղատնտեսական նիստում լսուեց Ն. Ա. Սուլթան-Կրէմ-Գիրէյի և Ա. Ի. Նատրօսովի ղեկուցումը «այլազգիների զպրոցներում տեղական լեզուներով ուսուցման և զրա նշանակութեան մասին» գիւղատնտեսական գիտելիքներ և հմտութիւններ տարածելու գործում»:

Գիւղատնտեսական զարգացման անշարժութեան զլխաւոր պատճառը մեր հարուստ երկրում համարելով ժողովրդի տգիտութիւնը, ղեկուցանողները անհերքելի փաստերով ապացուցեցին որ ժողովրդական զպրոցներից աւելի մեծ արդիւնքներ ստանալու համար պէտք է նրանց մէջ դասատուութիւնը կատարուի մայրենի լեզուով:

Զեկուցման մէջ ի միջի այլոց առաջ էին բերուած Ալէքսանդր Ս-ի հրովարտակից (1867 թ.) հետեւեալ նշանաւոր խօսքերը:

«Մանկավարժականի վերաբերմամբ կառավարութեան հոգսը պէտք է լինի պատանեկութեան մէջ առողջ գիտելիքների տարածումը, զարգացումը նրա մէջ սէր դէպի խելացի աշխատանքը, հիմնաւոր գիտական կրթութիւնը: Չը թող տալով ոչ ինձ, ոչ էլ սրիէ մէկին դարձնել գիտութեան սերմնարանները

գործիք՝ քաղաքական նպատակների հասնելու, զպրոցական վարչութիւնները պէտք է ի նկատի ունենան միմիայն անչաճ ծառայութեան լուսաւորութեան, միշտ բարւոքելով ընդհանուր դաստիարակութեան սիստեմը... Ազգութիւններից իւրաքանչիւրը պէտք է սաշտպանուած լինի ամեն մի բռնի տանձու-թիւնից, ուստի անհրաժեշտ է հոգ տանել իւրաքանչիւր ազգութեան համար առանձին զպրոցներ հիմնելու մասին և ընդհանուր, մանաւանդ ուստական զպրոցներում, դասաւանդու-թիւնը վարել ազգաբնակչութեան մեծամասնութեան մայրենի լեզուով»:

Բացի Արևմտեան Եւրոպայի համոզեցուցիչ փաստերից, ականաւոր մանկավարժների և գիտնականների կարծիքներից բերւում էր իրրև ապացոյց և Յինամղդարեան զպրոցի երկարա-մեայ փորձը: Այդ մասնաւոր գիւղատնտեսական ուսուցմարա-նում վարչութեան թողլուութեամբ բոլոր առարկաները աւանդ-ւում են վրաց լեզուով համաձայն նրա կանոնների 21-րդ յօ-դուածի: Եւ հետևանքները փայլուն են, ինչպէս այդ հաստատ-ւում է զպրոցական վարչութեան հեղինակաւոր վկայութիւն-ներից:

Ի վերջոյ զեկուցումը առաջարկում է հետեւեալը. 1) Չորս-ամեայ դասընթաց ունեցող միդասեան զպրոցներում առաջին երեք տարիների ընթացքում, իսկ վեցամեայ դասընթաց ունե-ցող երկդասեան զպրոցներում առաջին երեք տարիների ըն-թացքում բոլոր առարկաների ուսուցումը վարել սովորողների մայրենի լեզուով, աւանդելով և մայրենի լեզուն իրրև առան-ձին զպրոցական առարկայ ամեն օր ամբողջ դասընթացքի տեղ-լութեան ժամանակ. 2) Ազահովել ուստայ լեզուի ուսուցումը, զրա համար ամբողջ դասընթացքում, սկսած առաջին տարուայ երկրորդ կիսամեակից, ինչպէս և բացի կրօնից բոլոր առարկա-ների դասաւութիւնը միդասեան զպրոցներում վերջին տա-րին, իսկ երկդասեաններում վերջին երկու տարին—կատարել ուստայ լեզուով: 3) Միջնորդել տեղական միջոցներից աւելի գումար յատկացնելու ժողովրդի կրթութեան. 4) զպրոցներին կից բանալ զբաղարան-ընթերցարաններ, գիւղատնտեսական հանրամատչելի զբքերով, իսկ ուր միջոցները կը ներեն, նաև հասարակ գիւղատնտեսական մուղէումներով և կազմակերպել գիւղատնտեսական զանազան ճիւղերից դասախօսութիւններ. 5) Մտքերի փոխանակութեան և ուսուցման լաւագոյն եղանակ-ների հետ ծանօթացնելու նպատակով, իւրաքանչիւր տարի ժո-ղովրդական ուսուցիչների համաժողովներ գումարել և հիմնել գիւղատնտեսական և մանկավարժական կարճատև կուրսեր. 6)

Լաւադոյն մանկավարժական ոյժեր գրաւելու և պահելու համար բարւոքել ժողովրդական ուսուցիչների նիւթական և հասարակական գրութիւնը:

Աղմկալի ծախածարութիւններով ծածկուեց զեկուցումի ընթերցանութիւնը. Ընդհանուր ժողովը որոշեց շնորհակալութիւն յայտնել և ի նկատի ունենալ նրան:

Յունուարի 26-ին լրացաւ ուստաց պարբերական մամուլի երկու հարիւրամեակը, որի հիմքը գրեց Մեծն Պետրոսը: Պարբերական մամուլը Ռուսաստանում սկիզբն առաւ իբրև պետական գործ, բայց յետոյ կամաց կամաց անցաւ և հասարակութեան ձեռքը: Չը նայած ուրոյն պայմաներին, որոնց մէջ զարնուում էր մամուլը Ռուսաստանում, նա, այնուամենայնիւ, այս երկու հարիւր տարուայ ընթացքում հսկայական առաջադիմութիւն արաւ և ահազին ազդեցութիւն ունեցաւ ուսու հասարակական մտքի զարգացման և ինքնաճանաչութեան արթնանալու գործում: Ռուսաց մամուլի մեծագոյն մասը ազնիւ կերպով է ծառայում իր կոչման, միշտ ժողովրդի շահերի և արդարութեան ջատագով հանդիսանալով և, որքան թոյլ են տալիս հանգամանքները, մերկացնելով հասարակական չարիքները: Ռուս մամուլի ընթերցողների թիւը այսօր մի քանի միլիոնների է հասնում, բնականաբար նրա ազդեցութիւնը այնքան մեծ է որ նրան կարելի է համարել ներքին կեանքի նշանաւոր գործօններից մէկը: Կարելի է ցանկալ որ աւելի ևս բարեկաջող պայմանների մէջ շարունակուի այդ գործօնի կատարելիք դերը այս բազմացեղ կօլոսս պետութեան կեանքում:

Լ. ՍՍՐԳՍԵԱՆ

Յունուար 25.

Ֆինանսների մինիստր ստատս-սեկրետար Սէրգէյ Վլատէի աւելնահպատակ զեկուցման մէջ 1903 թիւականի համար պետական հասոյթների և ծախքերի ընդհանուր հաշւեկշիւը արուած է հետևեալ կերպով. *)

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Ս Ո Յ Թ Ն Ե Ր

I

Սովորական հասոյթներ:

- 1) Ուղղակի հարկեր 132,0 միլ. ռ.
- 2) Կողմնակի հարկեր 405,9 » »

*) Առաջ ենք բերում միայն միլիոնները, իսկ ընդհանուր գումարում կ' ձիշտ գումարը: Ծ. Խ.

- 3) Մարս 98,1 » »
- 4) Պետական մենաշնորհներից 562,2 » »
- 5) Արքունական կայքերից և զբամազլիներից 523,4 » »
- 6) Պետական կայքերի օտարացուցումից 0,5 » »
- 7) Յեռնման վճարներից 89,1 » »
- 8) Պետական գանձարանի ծախք. հասուցում 79,0 » »
- 9) Այլ և այլ հասոյթներ 6,3 » »

Գումարը 1,897,10 միլ.

II

Արտաքոյ կարգի աղբիւրներ

- 10) Մշտնջեաական աւաղ պետական բանկում 2,5 միլ. ռ.
- 11) Պետական գանձարանում կանխիկ 172,1 » »

Ընդամենը 2,071,667,472 ռ.

Պ Ե Տ Ա. Կ Ա. Ն Ծ Ա. Խ Ք Կ Ր

I

Սովորական ծախքեր

- 1) Պետական պարտքից վճարներ 290,9 միլ. ռ.
- 2) Բարձրագոյն պետական հիմնարկու թիւններ 3,2 » »
- 3) Սրբազնագոյն սինօչի վարչութիւն 28,3 » »
- 4) Կայսերական Դրան մինիստրութիւն 15,8 » »
- 5) Արտաքին գործոց » 5,7 » »
- 6) Զինուորական » 329,9 » »
- 7) Ծովային » 105,6 » »
- 8) Ֆինանսների » 369,1 » »
- 9) Երկրագործութեան և պետական կայքերի 49,0 » »
- 10) Ներքին գործոց մինիստրութիւն 99,7 » »
- 11) Ազգային յուսաւորութեան » 39,2 » »
- 12) Հաղորդակցութիւնները » 458,4 » »
- 13) Արդարագատութեան » 49,3 » »
- 14) Պետական կօնտրօլի » 8,3 » »
- 15) Պետական ձիարուծութեան գլխ. վարչ. 2,0 » »
- 16) Զօրքի՝ պաշարի թանգանալու. պէտքում 3,0 » »
- 17) Զբոսաշրջութեան, տարուային թացքում
- արտակարգ ծախքերի համար 12,0 » »

Գումարը 1,880,4 միլ. ռ.

II

Արտակարգ ծախսեր

18) Մտակաւ-Նարօւլաւեան երկաթ. $4\frac{1}{2}\%$	
օրլ. յետդնումն	2,4 միլ. ռ.
19) Սիբիրի երկաթուղու կառուցման . . .	20,9 » »
20) Սիբիրեան երկաթուղու հետ կապուած	
օժանդակիչ ձեռնարկ.	3,4 » »
21) Այլ երկաթուղիների կառուցման . . .	145,1 » »
22) Մասնաւոր Ընկերութիւններին նպաստ	
երկաթուղիներ շինելու	9,2 » »
23) Մասնաւոր անձանց և հիմնարկութիւն-	
ներին՝ նրանց կայքային իրաւունքների պաշարաց-	
ման համար	10,0 » »
	Գումար 191,2
	Ընդամենը 2,071,667,472.

Մեր աշխատակից բժշկապետ Վահան Արծրունին մամուլի գլխաւոր վարչութիւնից թույլաւութիւն է ստացել հրատարակելու Թիֆլիսում հայերէն լեզուով մի բժշկական ասոցիացիաների երկչարաթիւերի «Առողջապահական Թերթ» անունով: Երկչարաթիւերի պրօգրամը հետևեալն է. 1) Կառավարչական կարգադրութիւններ և կառավարութեան գործադրութիւններ, որոնք վերաբերուած են ժողովրդական ասոցիացիաներին. 2) Ինքնուրոյն, թարգմանական և կօմպիլիատիվ յօդուածներ ասոցիացիաներին, բժշկականութեան և անասնաբուժութեան վերաբերեալ. 3) Քննադատութիւն և մատենագրութիւն նոյն հարցերին վերաբերեալ. 4) Հաշիւներ գիտական, բժշկական, ասոցիացիաներ և անասնաբուժական ընկերութիւնների նիստերի մասին. 5) Փոստարկղ (պատասխաններ պրօգրամի սահմաններում ասոցիացիաներին). 6) Յօդուածները լուսաբանող նկարներ, նոյնպէս և պատկերներ հասարակական ասոցիացիաներին ասպարիզում յայտնի դարձած գործիչներին՝ սրանց կենսագրութեան հետ միասին. 7) Առանձին յաւելումներ պրօգրամի սահմաններում, և 8) Մասնաւոր յայտարարութիւններ: Երկչարաթիւերի հրատարակելու է ամեն ամսի 1-ին և 15-ին, իսկ յաւելումները լինելու են 4—6 հասարակ մէջ: Բաժանորդագինն է 2 ռուբլի:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Յունուարի 9-ին Ռիֆլիսի դատաստանական պալատում քննում էր Շամախու հայոց կոնսիստորիայի գառը լուսաւորութեան մինիստրութեան հետ՝ ՚ի դէմս Կովկասեան զպրոցական չրջանի հոգաբարձուի՝ Բազուայ հայոց եկեղեցու բախում զըտնուող շինութեան մասին:

Բազուի նահանգական դատարանը գործը վճռած լինելով յօդուտ կոնսիստորիայի, զպրոցական վարչութիւնը դժգոհ էր մնացել և բողոք ներկայացրել դատաստանական պալատին:

Շամախու կոնսիստորիայի շահերը պաշտպանում էր երգուեալ հաւատարմատար Ս. Յարութիւնեանը, իսկ զպրոցական վարչութեան ներկայացուցիչն էր Բազուի նահանգի և Դաղըստանի չրջանի ժողովրդական գոլոցների վերատեսուչ Տիօրօս սկին:

Գործի հանգամանքները կայանում են հետևեալում:—70-ական թուականների սկզբին Բազուի հայոց եկեղեցական վարչութիւնը կառուցանում է եկեղեցու բախում մի միայակ տուն՝ առաջնորդարանի և եկեղեցական զանազան կարիքների համար: Մի քանի ժամանակից յետոյ եկեղեցական իշխանութեան թոյլտուութեամբ շինութեան մի մասը յատկացուած է Մարգասիրական Ընկերութեան զբաղարանին, իսկ միւս մասը՝ եկ.—ծխ. զպրոցին, որը սակայն միշտ միևնոյն սենեակներում չէր մնում, այլ փոփոխում էր իր տեղը, ինչպէս յարմար էր տեսնում եկեղեցական իշխանութիւնը, իսկ 1896 թ. այդ զպրոցը բոլորովին փակուած է հոգևոր իշխանութեան հրամանով: Դրանից երկու տարի յետոյ Բազուի վերատեսուչութիւնը հիմնուելով Կովկասեան զպրոցական չրջանի հոգաբարձուի հրամանի և 1898 թ. մարտի 26-ին Բարձրագոյն հատատուած կանոնադրութեան վրայ, խլում է շինութեան մի մասը—6 սենեակ, համարելով այդ փակուած զպրոցի գոյք: Այս հանգամանքը առիթ է տալիս Շամախու կոնսիստորիային դատ բանալ զպրոցական վարչութեան դէմ:

Գպրոցական վարչութիւնը շինութեան գրաւած մասը համարում է զպրոցին պատկանող այն հիման վրայ, որ նախ՝ զպրոցը աջտեղ է եղել զեանդուած և յետոյ, որ 1887 թւին Բազուի մարգասիրական ընկերութիւնը գիտել էր քաղաքային ինքնավարութեան, որպէսզի նա Կարանտոխնայա փողոցում տեղ յատկացնէ զպրոցի նոր շինութեան համար, որովհետև հինն այրուել էր:

Երգուեալ հաւատարմատար Ս. Յաւութիւնեան իր ընդարձակ բացատրութեամբ ապացուցանում էր, որ զպրոցական վարչութիւնը ուղիղ չէ հասկացել 1898 թ. մարտի 26-ին Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեան խմատար, իլեղով եկեղեցապատկան շինութիւնը: Այդ կանոնադրութիւնն իրաւունք է տալիս զպրոցական վարչութեանը դրաւել զպրոցապատկան գոյքերը հետեւեալ երկու պայմաններով. 1) զպրոցական վարչութիւնը պէտք է գրաւէ այն զպրոցների գոյքերը, որոնք 1897 թ. յունիսին 2-ին յանձնուած են եղել զպրոցական վարչութեանը և 2) այն գոյքերը, որոնք պատկանելիս են եղել զպրոցներին, սրպէս նրանց սեփականութիւն: Ներկայ պարագայում երկու պայմաններից սչ մէկն էլ գոյութիւն չունի:—1897 թ. զպրոցը յանձնուած չէ եղել մինիստրութեանը, սրովհետեւ արդէն 1896 թ. փակուած է եղել հոգևոր վարչութեան կարգադրութեամբ. բացի այդ՝ յիշեալ զպրոցը չէ ունեցել և չէր կարող ունենալ սեփականութիւն, սրովհետեւ նա պատկանում էր այն տեսակ զպրոցների կարգին, որոնք օտարազաւան հոգևոր գործերի օրինադրքի 1213 յօդուածի հիման վրայ պահուում են եկեղեցիների, վանքերի և բարեգործական ընկերութիւնների օժանդակութեամբ և համարուում են բովանդակ հայ-լուսաւորչական եկեղեցու սեփականութիւն:

Իր ասածը հաստատելու համար երգ. հաւատարմ. Ս. Յարութիւնեանը բերաւ և՛ հետեւեալ փաստերը:—Որովհետեւ յիշեալ շինութեան մասը գտնուում է եկեղեցական հողի վրայ, ուրեմն X հ., I մ. 386 յօդուածի հիման վրայ պատկանում է եկեղեցուն: Վերջապէս տասնեակ տարիների ընթացքում Բագու քաղաքի գոյքացուցակներում և եկեղեցական գոյքերի մատեանում այդ շինութիւնը ցոյց է արուած իբրև եկեղեցու սեփականութիւն: Իսկ ինչ վերաբերում է նրան, թէ այդ շինութեան մէջ մի ժամանակ զպրոց է եղել զետեղուած, սակայն և այնպէս այդ զպրոցը սեփականութիւն ձեռք բերելու իրաւունք ունենալ չէր կարող, սրովհետեւ նա օգտուում էր շինութիւնից հոգևոր վարչութեան թողաւութեամբ, պահուում էր նրա՝ այդ վարչութեան միջոցներով, փակում և բացոււ էր նոյն այդ վարչութեան կարգադրութեամբ: Այդպիսի կախեալ գրութիւն, X հ. I մ. 56 յօդ. հիման վրայ, սրբան և տեէր, չէր կարող ստեղծել օգտուողի համար սեփականութեան իրաւունք: Այդ հիմունքներով կոնսիստորիայի հաւատարմատարը խնդրում էր վաւերացնել նախանդական պատարանի վճիռը և զպրոցական վարչութեան բողոքը թողնել անհետանք:

Նոյն օրը, դատաւորների նոյն կազմով, քննուեց Շամախու կոնսիստորիայի նոյնօրինակ դատը ժողովրդական լուսաւորութեան մինխատութեան գէ՛մ՝ Դերբենդի հայոց եկեղեցութեան գանուղ տան համար:

Այդ դատը նոյնպէս կոնսիստորիան տարած լինելով նահանգական դատարանու՛մ, դպրոցական վարչութիւնը դժգոհ էր մնացել և բողոք ներկայացրել դատաստանական պալատին:

Երկու կողմի շահերի պաշտպանողները նոյն մարզիկն էին—երգ. հաւատարմատար Ս. Յարութիւնեան և իսկ. սախորհրդ. Տխօրժեակի:

Երկու գործի համար էլ դատաստանական պալատը կարճատև խորհրդից յետոյ վճռեց իր որոշումը յայտարարելը յետաձգել մինչև յունուարի 18-ը:

Յունուարի 13-ին Թիֆլիսի դատաստանական պալատի քաղաքացիական I դեպարտամենտում քննուե՛մ էր երեք գործ՝ որոնց մասին բողոքել էր Էջմիածնի Սինօղը դպրոցական վարչութեան գէ՛մ՝ ի գէ՛մս Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի, որի ներկայացուցիչները գրաւել էին որպէս դպրոցապատկան կալուածներ Կարսի եկեղեցապատկան տասը կրպակներն իրանց նկուղներով, երկյարկանի տունը, որ Եղիշէ վարդապետի օրօք էին չինուած դպրոցների փակումից յետոյ, Կաղզուանի եկեղեցապատկան հինգ այգիներ, որոնք դեռ տաճկաց տիրապետութեան ժամանակ կազմուե՛մ էին եկեղեցական սեփականութիւն, և Վաղարշապատում գանուած երկյարկանի տունը, որ չինուած է դեռ 60-ական թւականներին հանդուցեալ Գէորգ կաթողիկոսի օրօք յատկապէս Սինօղի պրօվերօրի բնակութեան համար և միմիայն 95—96 ուսումնական սարիքների ընթացքում Վեհափառ Կաթողիկոսի հրամանով և այն էլ մասամբ տրուած է եղել՝ Վաղարշապատի եկեղեցական ուսումնարանը ժամանակաւորապէս ղետեղելու համար:

Նիստին նախապահում էր Պետրօպաւլօվսկի, անդամներն էին Ուսնելօվ, Ֆէրսման և դատախաղի օգնական Սամսոն: Դպրոցական վարչութեան կողմից եկել էր Կարսի ժողովրդական դպրոցների տեսուչ Դևիցկի, իսկ Էջմիածնի շահերը պաշտպանում էր երգ. հաւատարմատար Ս. Յարութիւնեան: Ձեկուցանողն էր պալատի անդամ Ուսնելօվը: Ձեկուցումից յետոյ եկեղեցական շահերի պաշտպան պ. Յարութիւնեանը բացատրեց դատարանին հետեւեալը.

Դպրոցական վարչութիւնը 1898 թւին գրաւեց Կարսում

երկյարկանի շինութիւն և տասը կրպակներ, որոնք պատկանում էին ս. Աստուածածնայ եկեղեցուն և որոնք իբրև թէ շինուած էին Կարսի եկեղեցական-ծխական գարոցի ու նրա պահպանութեան համար, և հետևապէս համաձայն բարձրագոյն հաստատուած մինխարական խորհրդի որոշման՝ պէտք է անցնէին զըսորոցական վարչութեան իրաւասութեան ներքոյ:

Փորձը պարզաբանելու համար կարևոր է անցնել այդ կարուածների ծագման պատմութեանը:

1887 թ.ին Կարսի հայոց հոգևոր կառավարութիւնը դիմելով քաղաքի բարեշինութեան ջմանաժողովին, խնդրում է տեղ յատկացնել քաղաքի հայ աղգարնակութեան համար մայր եկեղեցի շինելու: Մասնաժողովը իր արձանագրութեամբ՝ որ հաստատուած է Կարսի գինուորական նահանգապետի կողմից՝ յատկացնում է այդ նպատակու № 3 քաղաքամասը միմիայն այն պայմանով, որ այդ տեղում մասնաւոր անձանց սեփականութիւն կազմող շինութիւններն ու գետինը հողեր կառավարութիւնն ինքը ձեռք բերի եկեղեցական միջոցներով: Այդ առաջարկութիւնը նա հաղիւ և մեծ դժուարութեամբ կարողազանում է կատարել միմիայն 1892 թ.ի վերջերին, պատրաստում է յիշեալ հողաբաժինը, պատրաստում է քար և առաջարկում մայր եկեղեցու յատկացիծն ի հաստատութիւն, որ յետ է ստացւում 1894 թ.ին:

Առաջ է դադես մի ուրիշ հարց զինուրական-ուղմական տեսակէտից, և յիշեալ հողաբաժնի վրայ ծրագրած մայր եկեղեցու շինութիւնն արդէլուում է, և քաղաքապատկան հողաբաժինը յետ պահանջուում:

Դպրոցների փակումից յետոյ Կարսի այն ժամանակուայ փոխանորդ Նզիչէ վարդապետ Մուրադեանը գիմում է նահանգապետին և խնդրում, որ կամ, քաղաքապատկան հողաբաժինը վաճառուի հողեր իշխանութեան և կամ քաղաքը վերադարձնի վերջինիս արած ծախսերը և ստանայ հողեր իշխանութեան բաժինը:

Նահանգապետի կողմից 1896 թ.ի մայիսին հաստատուած արձանագրութեամբ որոշուում է քաղաքային հողաբաժինը—422 սածէն վաճառել հողեր կառավարութեան 1266 սուբլիով: Փոխանորդը վճարում է հարկաւոր դրամը, ստանում յատկացիծ և առաջարկում է Ս. Աստուածածնայ եկեղեցու 10 կրպակների յատկացիծն ի հաստատութիւն, որ ստացւում է յունիսի 19-ին: Չր պէտք է մոռանալ, որ Կարսում Ս. Աստուածածնայ եկեղ.—ծխական գարոցը փակուել էր դեռ մարտ ամսի 6-ին: Նոյն յունիսի 14-ին Նզիչէ վարդապետ Մուրադեանը գիմում է

Վեհափառ Հայրապետին և նկարապրելով Կարսի յաջորդարանի խղճուկ և սուրակ կացութիւնը, խնայրում է թոյլաւութիւն յաջորդարան, հոգևոր կառավարութիւն և աղօթատուն շինելու: Վեհափառ Կաթողիկոսից ստացւում է յիշեալ թոյլաւութիւնը յունիսի 17 № 879, և ահա օգոստոս ամսին առաջարկւում է նոր յատակապիծն ի հաստատութիւն:

Կրպակները շինում էին, երկյարկանի շինութիւնը ըսկւում է 1897 թւի յունիսի սկզբներէից, իսկ երկրորդ յայրկի յատակապիծը պատրաստւում և առաջարկւում է հաստատութեան 1897 թ. դեկտեմբերին, իսկ շինութիւնը սկսւում մայիսին:

Նոյն փոխանորդի միջնորդութեամբ Վեհափառ Կաթողիկոսը 1896 թւի հոկտեմբերին № 1315 կոնդակով թոյլ է տալիս բանալ Կարսում ս. Նշան եկեղեցու անուամբ երկուս երկդասեան դպրոց զուտ եկեղեցական եկամուտներով, որ և բացւում է վարձու տան մէջ: Անցնում է երեք ամիս, յանկարծ դպրոցական վարչութիւնը պահանջում է, որ յիշեալ դպրոցին էլ ենթարկուի իրեն ընդհանուր օրէնքներով: Բայց որովհետև հոգևոր իշխանութեան կողմից ոչ մի կարգադրութիւն չը կար, այդ պատճառով էլ յիշեալ ուսումնարանը փակւում է:

Հոգևոր իշխանութեան տեղական ներկայացուցիչ եղիչ վարդապետ Մուրադեանը սկսում է շինութիւնը, բայց այնքան ընդարձակ, որ ապագայում հնարաւորութիւն ունենայ այնտեղ գետեղելու յաջորդարան, հոգևոր կառավարութիւն, աղօթատուն և վերջապէս նոր հոգևոր դպրոց, որի գասարանների թիւն ու տիպը դեռ մշակուած և սրտչ չէր, և ընդհանրապէս այգպիսի մի դպրոցի հարցը դեռ ցանկութիւն և միմիայն ենթադրութիւն էր: Այդ տունը գեռ աւարտած չէր և մի քանի մասերը դեռ առանց տանիքի էին, երբ դպրոցական վարչութեան ներկայացուցիչներն եկան և գրաւեցին այն՝ տասը կրպակների հետ միասին, հանելով այգպիսով հոգևոր իշխանութեան իրաւատութիւնից և պատճառաբանելով, որ այդ տունը կառուցւում է յատկապէս դպրոցի համար, իսկ կրպակներն էլ շինուած են որպէս նրա պահպանութեան աղբիւր:

Այստեղ հարց է ծագում, արդեօք իրօք որևէ կապ կար այս շինութիւնների և փակուած եկեղեցակած ծխական դպրոցի մէջ:

Պատասխանը բացառական է հետեւեալ պատճառներով. — Կարսում կար երկու եկեղ.— ծխական դպրոց. մինը գոյութիւն ունէր Ս. Ածածնայ եկեղեցու կից և փակուեց 1896 թւի մարտի 7-ին: Այս դպրոցի հետ է կապում ուսումնարանական վարչութիւնը եկեղեցական նոր շինութիւններն ու կրպակները.

բայց այսպիսի հայեցակէտի սխալ լինելը աւելի քան պարզ է և ակներ և, որովհետև այդ դպրոցը փակուեց շինութիւններն սկսելուց և հոգը գնելուց առաջ և փակուեց վերջնականապէս:

Այս շինութիւնները նոյնպէս կապ չունեն միւս եկեղ.— ծխական դպրոցի հետ, որը բացուեց 1897 թւի վերջին և փակուեց 1897 թ. ապրիլին, որովհետև այդ դպրոցը բացուեց 1896 թւի հոկտեմբերի 2-ին շնորհած № 1365 կոնզակով, որով ոչ մի կաշք կամ յատուկ ազրիւճներ չեն յատկացրուած հոգևոր իշխանութեան ձեռքով այդ փակուած դպրոցին:

Այսպիսով վերոյիշեալ հանգամանքները ոչ մի կասկած չեն թողնում, որ շինութիւնների տակի հոգը կազմում է հայոց եկեղեցու անխղիւի սեփականութիւն և ձեռք է բերուած եկեղեցի կառուցանելու նպատակով, որի շինութեան առիթով ծագած արգելքների պատճառով հոգևոր բարձրագոյն իշխանութեան թոյլատու թեանմբ փոխանորդը կառուցել է շէնքեր եկեղեցական զանազան կարիքների համար և եկեղեցական միջոցներով: Ապա պ. Յարութիւնեանը՝ անցնելով դպրոցական վարչութեան իրաւասութեան՝ իբր գոյութիւն ունեցող օրէնքների վրայ հիմնուած և նախարարական մասնաժողովի 1898 թ. մարտի 20-ին բարձրագոյն հաստատուած կարծիքի, յայտնեց, որ դպրոցական վարչութեան գործողութիւնը սոյն կալուածների վերաբերութեամբ չէ կարող օրինական և կանոնաւոր ճանաչուել, և ահա թէ ինչո՞ւ:

1898 թւի կանոնը իրաւունք տալով կովկասի ուսումնարանական վարչութեան ընդունելու հայոց եկեղեցական ծխական դպրոցների գոչքը, պարտք դրեց յիշեալ վարչութեան վրայ ի նկատի ունենալ երկու պայման.—

Նախ՝ որ այն դպրոցները, որոնց կայքը պէտք է ընդունէին, ենթարկուած լինէին ուսումնարանական վարչութեան՝ համաձայն 1897 թւի յունիսի 2-ի օրէնքի, և երկրորդ, որ այդ գոչքը պատկանէ դպրոցներին, լինի նրանց սեփականութիւն՝ որպէս իրաւաբանական անձնաւորութեանց: Այդ մտքով էլ 1897 թւին բացատրութիւն է ուղարկուած սինօզ օտար դաւանութեանց դեպարտամենտի կողմից:

Ներկայ դէպքում ոչ առաջին պայմանը գոյութիւն ունի, և ոչ երկրորդը:

Կարսի երկու դպրոցներն էլ փակուած էին մինչև 1897 թւի յունիսի 2-ի հրատարակութիւնը, որից յետոյ և պէտք է տեղի ունենար դպրոց յանձնելու գործողութիւնը: Նրանցից ոչ մինը սեփական յատուկ որեւէ միջոցներ և կայքեր չունէր, որովհետև նրանք բացուած էին 1884 թւի կանոնների համաձայն,

սրմնք կազմում են օտար գաւանու թեանց վերաբերեալ օրէնրսդրքի 1178-դ յօդուածի յաւելուածը:

Յաւելուածի՝ հէնց առաջին կանոնի մէջ աււած է—հայ-լուսաւորչական եկեղ.-ծխական դպրոցները գոյութիւն պիտի ունենան եկեղեցիներին, վանքերին կից և պահպանուեն կամ բացառապէս եկեղեցական-վանքական եկամուտներով և կամ ծխականներ օժանդակութեամբ: Այսպիսով ինքնբառախրեան պարզ է, որ Կարսի եկեղ.-ծխական դպրոցները իրաւարանական մարմիններ չը լինելով, օրինական կարգով անշարժ կալուածք ձեռք բերելու և վաճառելու իրաւունք չ'ունենալով, ինչպէս այդ ընդունում է և դպրոցական վարչութեան ներկայացուցիչը իր՝ նահանգական գատարանին ներկայացրած յայտարարութեան մէջ, չէին կարող գոյութիւն ունեցող օրէնքների հիման վրայ անշարժ կայք դնել, նու իրաբերական թղթով (дарственная запись) կամ կտակագրով կալուածք ստանալ անմիջապէս: Երանք չեն կարող պաշտպանուել և տիրապետութեան 10-ամեայ տևողութեամբ, որովհետեւ այդ ուսումնարաններից ոչ մինը չէր օգտուում և եթէ օգտուէր էլ որևէ կալուածքով, այդ չէր կարող տեղի ունենալ առանց եկեղեցութեան թոյլտւութեան,՝ իսկ այս կերպով օգտուելու ձևը սենատի բազմաթիւ բացատրութիւնների համաձայն, որ տեղի են ունեցել X հատորի I մասի 560-րդ յօդուածի վերաբերութեամբ, ինչքան էլ տեղի լինէր, չէր կարող սեփականութեան իրաւունք ստեղծել:

Ներկայ խնդիրը պէտք է վճռուի յօդուած եկեղեցու և՛ այն պատճառով, եթէ շինութիւնների տակի հողը պատկանում է եկեղեցուն, այն ապա և՛ շինութիւնները պէտք է եկեղեցական սեփականութիւն համարուեն, որովհետև Սենատի բացատրութիւնների համաձայն՝ օտարի հողի վրայ կառուցած շինութիւնները՝ թէկուզ այդ տեղի ունեցած լինի հողատիրոջ համաձայնութեամբ, եթէ առանձին արձանագրութեամբ և փաստաթղթով յանձնած չեն միտին, կազմում են հողատիրոջ սեփականութիւն:

Որովհետև ներկայ դէպքում այդպիսի փաստաթուղթ չկայ, ուստի ակնբեր է, որ շինութիւնները եկեղեցական են:

Վերջում երդուեալ հաւատարմատար Յարութիւնեանը՝ մասնանիչ անելով դպրոցական վարչութեան այն առարկութեան վրայ, որով նա ասում է՝ իբր թէ շինութիւնները յատկապէս նշանակուած էին այս կամ այն նպատակի համար, ասաց.

—Եթէ մինչև անգամ այդպիսի բան տեղի ունեցած լինի, այդ հանգամանքն էլ իրաւաբանական ոչ մի նշանակութիւն չ'ունի,

որովհետև այդ միայն ենթադրութիւն է, մտադրութիւն, որ ինքն-բառնարեան ոչ մի իրաւասութիւն չէ ստեղծում, որովհետև դեռ չէ կատարուած յիշեալ կալուածների իրր սեփականութիւն փոխանցումն այն հիմնարկութեան կամ անձի, որոնց համար ենթադրուած էին: Ներկայ դէպքում այդպիսի փոխանցումն էլ տեղի չէր կարող ունենալ, որովհետև բարձրագոյն հոգևոր իշխանութեան կողմից այդ առիթով ոչ մի կարգադրութիւն տեղի չէ ունեցել:

Վերջապէս ինչ վերաբերում է յատակագծերին, այդ փաստերն էլ դպրոցական վարչութեան ոչ մի իրաւունք չեն տալիս, որովհետև յատակագծերը միմիայն տեխնիկական նշանակութիւն ունեն. այն ինչ ներկայ դէպքում յատակագծերից մինի վրայ գրուած է.—«յատակագիծ Կարսի Ս. Աստուածածնայ հասոց եկեղեցու կրպակներին», իսկ միւսի վերայ—«յատակագիծ Կարսի հայոց հոգևոր կառավարութեան կառուցանելիք հոգևոր ոչ թէ եկեղ.—ծխական դպրոցի»:

Վերոյիշեալ հանդամանքների հիման վրայ սինոդի հաւատարմատարը՝ ներկայացնելով հարկաւոր փաստաթղթեր, խնդրեց յարգել ներկայացրած բոլորը:

Ուսումնարանական շրջանի լիազօր Վ. Ս. Դեկեղին՝ խօսելով բոլորող կողմ առաջ բերած փաստերի դէմ, բացատրեց, որ՝ դպրոցական վարչութիւնը գրաւելով ներկայումս վիճելի կալուածները՝ ղեկավարում էր 1898 թւի մարտի 26-ին օրէնքով: Ճիշտ է Ս. Աստուածածին եկեղեցուն կից եղած գուրոցը փակուել 1896 թի մարտին, բայց նրանից յետոյ բացուեց այլ եկեղեցական ծխական դպրոց, որը գոյութիւն ունէր մինչև 1897 թիւը և կազմում էր չարոնակութիւն առաջնի:

Առաջին դպրոցը փակուեց շինութեան հին և անպէտք լինելու պատճառով, իսկ նորը ղետեղուած էր Կոստանեանի վարձու բնակարանի մէջ՝ մինչև դպրոցական շինութեան վերջը, ինչպէս այդ երևում է հսկա. 30-ին փոխանորդի՝ զինուորական նահանգապետին ուղղած գրութիւնեց: Որ լիշեալ շինութիւնները՝—տունն ու տասը կրպակները կառուցում էին եկեղ.—ծխական դպրոցի համար, այդ երևում է յատակագծերից և բաղմամբիւ գրադրութիւններից, որոնք կցուած են գործին: Թէև եկեղ.—ծխական դպրոցները չեն օգտուել յիշեալ շինութիւններով, բայց այդ դեռ չէ սպացուցանում, որ դպրոցական վարչութիւնը պարտաւոր չէր ցուցակապել այն, երբ նրան յայտնի էր շինութիւնների կառուցման նպատակը: Այս պատճառով դրոցական վարչութեան ներկայացուցիչը խնդրում էր դատարանից անհետանք թողնել հոգևոր իշխանութեան ներկայա-

ցուցչի գանգատը նահանգական դատարանի կայացրած վճռի դէմ:

Պալատի դատախազի օգնականը իր եզրակացութեան մէջ՝ գտնելով սինօզի պահանջը միանգամայն ապարուցուած, կարծում էր, որ պէտք է անվավեր համարել նահանգական դատարանի վճիռը և բաւարարութիւն տալ բողոքող կողմին: Դատաստանական պալատը կարճ խորհրդածութիւնից յետոյ յայտնեց, որ սոյն գործի վճիռը կը յայտարարուի ամսոյս 18-ին:

18-ին պայտառը յայտարարեց Կարսի եկեղեցական շինութեան ու տասը կրողակիներէ վերաբերեալ վճիռը յօգուտ եկեղեցու, որոչև իմ ստնել յիշեալ կալուածները դպրոցական վարչութեան իրաւասութիւնից և յանձնել հոգևոր իշխանութեան՝ պատասխանատու կողմին ենթարկելով դատաստանական ծախսերի: Գայով Վաղարշապատի Էջմիածնապատկան տան և Կաղզուանի եկեղեցապատկան հինգ այգիների վճիռներին՝ պալատը յետաձգեց, մի քանի կարևոր խնդիրներ պարզաբանելու համար՝ տալով դպրոցական վարչութեան ներկայացուցչին առաջին երեք դործերի համար եկամտեայ ժամանակամիջոց, իսկ Կաղզուանի այգիների վերաբերութեամբ՝ պալատի որոշած հարցերին բաւարարութիւն տալու համար սինօզի հաւատարմատարին տալով երկու շաբաթ ժամանակամիջոց:

վ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կեսնֆի հակասական կազմուածքը:—Օպորտիւնիզ արմատականիս փետուրներով զարդարուած.—Միշտ իր համոզմունքներին հասցւոյս խղիւղական գործիչը.—Ժօրեւի ձառը եւրոպական խաղաղութեան մասին.—Մակեդոնիան դիպլոմատների մրցման զոհ.—Պատրիարք Օրմանեանին սպանելու փորձը.—Կիլիկիայի ետրընէի կարողիկոսի հասցասոււմը.—Ասրլասականի քեմի համար կազմուած կանոնադրութիւնը:

Մարդկային կեանքը, ընդհանուր առմամբ վերցրած, մի խառնուրդ է ստույթեան ու ճշմարտութեան, ստորութեան և վեհութեան, մտքի խիղախ թռիչքների և վախկոտ ըթամտութեան: Եւ այդ արգարացի է ոչ միայն անհատների նկատմամբ, այլ և ամբողջ ազգերի. ազատասէր Անգլիան իրլանդացիների և բօէրների նկատմամբ բռնակալի դեր է ստանձնում, քրիստոնեայ Գերմանիան իրախուսում է Սուլթանին դրժելի խոստումները, հակակղերական Ֆրանսիան դրսում պաշտպան է կանգնում միսիօնար եզուիտներին, ազատ մտածող կուսակցութեան մի պարապլուխ յանկած այնպիսի մի կարծիք է յայտնում, որ ապշեցնում է բոլորին: Եւ այդ բոլոր հակասութիւնները իրար հետ խառնուած ապրում են կողք կողքի՝ համակերպուելով նոյն ազգերի, նոյն անձանց մէջ:

Այս տեսակէտից հետաքրքրական էր այն, ինչ պատահեց վերջերումս Ֆրանսիայում: Ֆրանսիական առաջին մինիստր Կամբը, արմատական մեծամասնութեան այդ ներկայացուցիչը, որի հակակղերական ուղղութեան մասին երկու կարծիք չէր կարող լինել և որը մինչև այժմ արդէն մերժել է՝ փակուած միաբանութիւնների կողմից վերաբացման թոյլտուութիւն հայցող 2000 խնդիրքներ՝ յանկարծ յունուարի 13-ին պարլամենտում մի դարմանայի հայացք է յայտնում...

Քննուում էր բիզֆէաի այն մասը, որ վերաբերում էր հոգևորականութեան պահպանութեան յատկացրած ծախքերին: Յայտնի է, որ եկեղեցին պետութիւնից անջատելու հարցը արմատականների պաշտպանած սկզբունքներից մէկն է, ուստի նրանք միշտ բիզֆէաի քննութեան ժամանակ առաջարկում են ջնջել այդ ծախքերը, կրօնը համաբերով քաղաքացիների մասնաւոր գոբժ: Կօմբը, ինչպէս և նրանից առաջ Վալդէկ-Ռուսօն կողմակից չէ այդ ծայրայեղութեան, բայց նա փորձեց նաև հիմնաւորել իր բննած գիրքը և արտասանեց այնպիսի խօսքեր, որոնք հակասում են նրա արածներին. «Ես չեմ կարծում, ասաց նա, թէ ժամանակակից հասարակութիւնը կարող է բաւականանալ պարզ մօրալով (բարոյականութեամբ), որ մակերևութային կերպով աւանդուում է մէք գպրոցներում, և համարում եմ եկեղեցու աարածած կրօնական դադափարները առժամանակ զեռ անհրաժեշտ»:

Դուրս է գալիս որ նա համ աշխատում է փակել կրօնական գպրոցները, համ ընդունում է որ աշխարհական գպրոցները չեն կարող այն բարոյական կրթութիւնը տալ, որ տալիս են եկեղեցու պաշտօնեաները:

Դժուար չէ երևակայել, թէ ինչ հիասթափութիւն տիրեց արմատականների շարքերում, և հրճուանք՝ ընդգիմազիր կուսակցութեան մէջ:

Արմատականների զայրոյթը բնորոշում է հետևեալ խօսքերով, որ արտասանեց երեք օր անց հասարակական աշխատանքների մինիստրութեան բիզֆէաի քննութեան ժամանակ ձախակողմաններից մէկը, խօսքը ուղղելով մինիստր Մարիւէ-ժուին. «Երեկ չէ անցեալ օրը ևս իմ մի քանի ընկերների հետ զգացի կատարեալ հիասթափութիւն, լսելով մինիստր նախագահի ճառը: Հետաքրքրական է իմանալ արդեօք չեն պատրաստուում մինիստրները մէկը միւսի յետևից դաւաճանել այն պրօգրամը, որի համաձայն նրանց թոյլ էր տրուած մուտք գործել այս գահիճը և որի համար մեր բոլոր ձախակողմեան ընկերները ձայն էին տուել: Ես կ'ուզենայի իմանալ արդեօք պատրաստուում չէք և զուր Կօմբից յետոյ մի անգամ ևս դաւաճանել մեծամասնութեան»:

Իր անտակտ խօսքերի չնորհիւ Կօմբը կորցրեց պարլամենտի արմատական մեծամասնութեան վստահութիւնը և երևի ստիպուած կը լինի հրաժարուել:

Այդպիսի հակասութիւն դժուար է դանել որոշ և բոլոր կէտերում հետևողական աշխարհահայեցողութիւն ունեցող գործե-

րի մէջ, թէկուզ նրան աշխատեն զրպարտութիւններով, սպառնալիքներով սեպնել ժողովրդի աչքում:

Այդպիսի գործիչներից է իր պերճախօսութեամբ և շխտակութեամբ համաշխարհային հոշակ ստացած Փօրեսը, որ նոր ընտրուել է ֆրանսիական պարլամենտի փոխ-նախագահի (չորրորդ) պատուաւոր պաշտօնում:

Այդ ընտրութիւնը ծայրայեղ կուսակցութեան փառաւոր յաղթանակներից մէկն է, մի յաղթանակ որ ցոյց է տալիս թէ հասարակական կեանքը կամաց-կամաց ինչ ուղղութեամբ է առաջ գնում: Թշնամիները չը կարողացան տանել այդ ընտրութիւնը և դիմեցին սովորական զէնքի-չարախօսութեան և զրբւարտութեան: Այդ պարոններին Փօրեսը պատասխանեց հետեւեալ նշանաւոր ճառով.

«Այստեղ նորերս արտասանած ճառերի նպատակը պարզ է: Ընդդիմադիր կուսակցութեանը վաղուց է ձգտում երկպառակութիւն սերմանել հանրապետական կուսակցութեան մէջ: Սկզբում նա ցանկանում էր զինել կուսակցութեան չափաւոր մասը սօցիալիստների գէմ, անուանելով զրանց սեփականութեան թշնամի, բայց աջողութիւն չ'ունեցաւ: Այժմ նա սօցիալիստներին անուանում է հայրենիքի թշնամիներ: Պ. Դեշանելը փոխանակ քննադատելու իմ գաղափարները նրանց ամբողջութեամբ, գերադասեց դիմել կոպիտ էֆէէկտների, դուրս քաշելով ատանձին՝ առանձին նախադասութիւններ: Սակայն ինչու՞մ են ինձ սեղազըրում: Ես մասնացոյց արի որ Եւրոպայում խաղաղութիւնը հաստատ է և թէ ինձ հնարաւոր է թւում մշտական, կազմակերպուած խաղաղութիւն: Իսկ ինձ զրա գէմ պատասխանում են. եթէ մինչև անգամ իրազործելի է խաղաղութեան իդէալը, այնուամենայնիւ կարելի չէ ժողովրդին ասել զրա մասին, որովհետև այդ թմբկոցում ի նրա եռանդը: Իսկ ըստ իս ոչինչ այնպէս չի կտարում ժողովրդի եռանդը, ինչպէս մշտական վախաստունը միշտ հեռացնուող վտանգի մասին: Դրանով ազգը ընտելացնում է մի հերոսութեան, որ բաւականանում է խօսքերով: Ինչ ինձ ատանձնապէս ստիպում է յոյս դնել խաղաղութեան հաստատուն լինելու վրայ, այդ—Եւրոպայում երկու մեծ դաշնակցական խմբերի գոյութիւնն է. զրանք զսպում են իրար, հետևում են միմեանց և սանձահարում են ազգայնական և դինաստիկ փառասիրութիւնը: Դաշնակցական այդ երկու խմբերն էլ աւելի և աւելի խաղաղ բնոյթ են ստանում, մօտենում են իրար և կարծես համաերօպական մեծ դաշնակցութեան կարագետ են հանդիսանում: Ես լսում եմ, ինչպէս իմ ընդդիմախօսները ասում են, թէ ես ոչ այլ ինչ եմ, եթէ ոչ միամիտ լաւատես:

Բայց միթէ երկու դաշնակցութիւնների աստիճանական մերձեցումը իրականութիւն չէ: Գերմանիան ձգտում է մեզ հետ ունենալ համարեա սրտագին յարաբերութիւններ: Իտալիան մերձենում է մեզ: Ի՞նչն է զրա պատճառը: Արդեօք Անգլիայի և Գերմանիայի մէջ անտեսական մրցումը, թէ՛ Իտալիայում ազատականութեան բարձրացումը: Ի հարկէ, բայց առաւել ևս այն, որ Ֆրանսիական հանրապետականները տապալեցին ցեղարիզմը, որը Նւրսուան պահում էր լարուած գրութեան մէջ, ինձ մեղադրում են այն բանում, որ ես հակառակ եմ դաշնակցութեան Ռուսաստանի հետ: Այդ ուղիւ չէ: Ես միայն հրաժարում եմ համաձայնուել նրանց հետ, որոնք կարծում են թէ առանց այդ ղինակցութեան Ֆրանսիան չէր կարող ազատ շունչ քաշել: Մինչև 1891 թւականը Ֆրանսիան ապրում էր առանց դաշնակցութեան, և այդ չը խանդարեց նրան վերականգնել իր զօրքը և ընդարձակել իր գաղութային կալուածները: Ամենագծուար բօպէներում Ֆրանսիան մենակ է եղել: Դաշնակիցը եկաւ այն ժամանակ, երբ Ֆրանսիան ուժեղ դարձաւ: Ես բնաւ չեմ բացասում էլլաս—լօթարինդեան հարցը, բայց ես կարծում եմ, որ նա կը լուծուի ոչ պատերազմով, այլ ազատուած դեմօկրատիայի իսողազ աշխատանքով: Հանրապետական ոգու զարթումը տուաւ ազգային եռանդին նոր ոյժ, և մենք յոյս ունենք որ 1870 թ. պատերազմը վերջինն էր Գերմանիայի և Ֆրանսիայի մէջ: Ֆրանսիան վերջին 30 տարիների ընթացքում այնքան հերոսութիւն ցոյց տուեց, որ հարկ չը կայ նրան միշտ իր ուշքը յառել իր պատմութեան արիւնտտ էջերի վրայ: Ես գիտեմ, դուք ինձ կ'ասէք, որ հարցի իմ առաջարկած լուծումը հեռուոր ապագայի գործ է: Լաւ, իսկ ձերը: Ի՞նչ ժամանակամիջոց էք առաջարկում դուք: Վերցնում էք դուք արդեօք պատասխանատուութիւն պատերազմի անյապաղ յայտարարութեան համար: Ոչ, դուք վախենում էք նրանից, յետաձգում էք նրան: Թող ինձ անուանեն օտար պետութիւնների գործակալ, այդ ինձ չի յուզում: Ես ոչ մի հանրապետական չեմ ճանաչում, որին այդ անունը չը տային: Գամբետտան ջէնուաղցի էր, Սպիւլլէրը—բաղենցի, Ֆերրին—պրուսսակ, Բիբօն—անուլիացի, բոլորն օտար պետութիւններից կաշառուած գործակալներ: Այն բոլոր անձինք որոնք կրուել են հանրապետութեան համար, արսորուած են եղել հայրենիքից: Ֆրանսիայի դէմ դէնք բարձրացրած էմիգրանտների սրղոց ձեռքով: Կօնտր-բեւօլիւցիա և գրպրտութիւն այդ—համանիչներ են»:

Այդպէն մտածող որդիներ ունենալով հանդերձ Ֆրանսիան ոչինչ չէ կաբօղանում անել ճնշուած ազգութիւնների դրու-

թիւնը բարուօքելու հարցում. Թիւրքիան շարունակում է իր ընթացքը և ոչ միայն լուրջ կերպով չի մտածում մտցնել իր թէ եւրոպական և թէ ասիական նահանգներում իր խօստացած բեֆորմները այլ և ռազմական արամադրութիւն է ցոյց տալիս, սպառալինում է, դարնան Մակեդոնիայում էլ այնպիսի աֆհաւիրքներ առաջացնելու, ինչ արաւ սկզբում Յունաստանում և 1895—96 թուականներին Հայաստանում: Եւ պատերազմական ողի ունեցող իսլամը այդ կանի, խրախուսուած խաղաղասէր քրիստոնեայ մեծ պետութիւնների փոխադարձ նախանձից և դիպլոմատների նեղսիրտ մրցութիւնից:

Լ. Ս.

29 Յունուարի:

Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս Տ. Սահակ Արքեպիսկոպոս հեռագիր մը ուղղելով Կայս. Պալատ, իր հաւատարմական զգացումները յայտնած և արտօնութիւն ինչդրած է, որ Պօլիս գայ իր հաւատարմական և երախտագիտական զգացումները անձամբ յայտնելու համար յոտս Կայս. Գահոյից: Տ. Սահակ Արքազան սոյնօրինակ հեռագիր մըն ալ ուղղած է Ս. Պատրիարքին և կը ինչդրէ որ աջակից գտնուի իր այս ինչդրանքին:

—Սանասարեան վարժարանի խնամակալութիւնը նկատելով որ վարժարանին Խարբեղ փոխադրութիւնը դժուարութեանց պիտի մասնուի, կը խորհի Սըվազ հաստատել զայն: Պատրիարքարանէ գրուած է Սըվազի Առաջնորդին՝ Ս. Նշանի հողերէն գուրս ուրիշ ծախու հրէքը գտնել և անդեկագրել Պատրիարքարան: Ս. Նշանի մօտ գտնուած գետին մը յարմարագոյնը կը նկատուի:

Յունուարի 6-ին, Պօլսում, Գում—Գափուի Հայոց տաճարում, պատարագի արարողութեան ժամանակ հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանեանի վրայ մի հայ երիտասարդ արձակեց ատրճանակի երկու գնդակներ, որոնք դիպան և ոչ ծանր վիրաւորեցին: Տեղական լրագրներին արգելուած է որևէ բան հազրդել այդ գէպքի մասին:

Յունուարի 29-ին Պօլսից հեռագրում են հետեւեալը.

«Հայոց պատրիարքի վրայ ըէվօլվէր արձակողը և նրա փախած գործակիցը գատապարտուած են մահուան պատժի. կրեքը գատապարտուած են զանազան պատիժների, նրանցից կրկուսը ցմահ բանտարկութեան: Մեղադրուողները յայտնեցին, որ գէտաւորութիւն ունէին սպառնալիքներով փող կոբզել նշանաւոր

հայերից և ասում են, որ իրանք ոչինչ չարաբերութիւն չ'ունեն հայկական կօմիտէաի հետք»:

«Մշակ»-ի № 14-ում սպում է մի յօդուած Ատրպատականի հայերի նոր կանոնադրութեան մասին, որից քաղում ենք հետևեալը.

Վեհափառ Կաթողիկոսը 1902 թիւն № 1854 կոնդակով Ատրպատականի թեմում որպէս փորձ՝ գործադրութեան յանձնեց մի թեմական կանոնադրութիւն:

Կանոնադրութիւնը բաժանուած է հետևեալ ութը գլուխների.

- 1) Հայոց աղգային-եկեղեցական հաստատութիւնների և պաշտօնեանների ընդհանուր իրաւունքներն ու արտօնութիւնները.
- 2) Թեմակալ առաջնորդ.
- 3) Առաջնորդական տեղապահ.
- 4) Առաջնորդական փոխանորդներ.
- 5) Պատգամաւորական ժողով.
- 6) Թեմական խորհուրդ.
- 7) Գործակալներ և գործակալական խորհուրդներ.
- 8) Ծխական խորհուրդ:

Առաջին գլուխը վերաբերում է հոգևորականների, եկեղեցիների, դպրոցների ընդհանուր իրաւունքներին: Առաջ բերենք միայն մի քանի յօդուածներ այդ գլխից.

1) Պարսկաստանի հայ ժողովուրդը Իրանի Վեհապետների Հնորձած բազմաթիւ հրովարտակների համաձայն՝ ազատ է կատարելու իր կրօնական պաշտամունքը՝ իր եկեղեցական կանոններով և ձէսով ամբողջ պարսից տէրութեան մէջ, արեղակնափայլ Շահնշահի հովանաւորութեան ներքոյ:

2) Ատրպատականի թեմի բոլոր հայ հոգևորականներն ու եկեղեցական այլ պաշտօնեանները ենթակայ են թեմական հոգևոր իշխանութեան, որ քննում և վճռում է նրանց բոլոր վէճերը, կրօնաւորների համար ծայրայեղ դէպքերում գիմելով Ասենայն Հայոց Կաթողիկոսին, իսկ միւս պաշտօնեանների համար՝ տեղական մարմնաւոր իշխանութեան:

3) Հայոց բոլոր աղգային-եկեղեցական հիմնարկութիւնները, այն է եկեղեցիները, վանքերը, դպրոցները, զրադարանները, հիւանդանոցները, սրբանոցները և ստհաստրակ կրթական և բարեգործական բոլոր հաստատութիւններն իրաւունք ունեն ձեռք բերելու շարժական գոյքեր և անշարժ կալուածներ, որպէս իրաւարանական անձինք, և այդ բոլոր կայքերը համար-

ւում են ազգային-եկեղեցական անձեռնմխելի սեփականութիւն:

4) Ատրպատականի հայերի ազգային-եկեղեցական գործերը կառավարում են թեմակալ առաջնորդը և թեմական խորհուրդը:

5) Ատրպատականի թեմի կառավարութիւնը հայոց եկեղեցու հնաւանդ սովորութեան համաձայն հիմնուած է ընտրական սկզբունքի վրայ:

6) Թեմակալ առաջնորդին հայոց եկեղեցու կանոնների համաձայն անորոշ ժամանակով ընտրում է թեմի հայ ազգաբնակիւթիւնը և առաջարկում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի հաստատութիւն:

7) Ատրպատականի թեմի բոլոր ազգային վանքերը, եկեղեցիները և կրթական ու բարեգործական հիմնարկութիւնները գտնուում են թեմակալ առաջնորդի իշխանութեան ներքոյ, որ սահմանափակում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերիշխանութեամբ և պատգամաւորական ժողովի վերահսկողութեամբ:

Ապա հետևում են պատգամաւորական ժողովի ընտրութեան վերաբերեալ մանրամասն կանոններ և 45-րդ յօդուածով սրշւում է պատգամաւորական ժողովի իրաւասութիւնը: Ահա այդ յօդուածը.

Պատգամաւորական ժողովը հարկ եղած դէպքերում ընտրում է առաջնորդ և առաջարկում Ամենայն Հայոց Կաթողիկոսին ՚ի հաստատութիւն, հրաժարեցնում է առաջնորդին Ամենայն Հայոց Կաթողիկոսի թույլտւութեամբ. ընտրում է և հրաժարեցնում թեմական խորհրդի և վերաստուգող յանձնաժողովի անդամներին և փոխանդամներին. ջննում է թեմակալ առաջնորդի և թեմական խորհրդի մէջ ծագած տարաձայնութիւնները և կայացնում է այդ մասին վճիռներ, որ ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի հաստատութիւն. ջննում և հաստատում է թեմական խորհրդի երկամեայ հաշիւը՝ թեմի ազգային եկեղեցական գործերի, գոյքերի և հիմնարկութիւնների և վիճակի և կառավարութեան, ինչպէս նաև ազգային եկեղեցական հաստատութիւնների և պաշտօնեաների գործունէութեան մասին, նախապէս լսելով վերաստուգող յանձնաժողովի ղեկուցազրբը:

48-րդ յօդուածը արամագրում է. թեմական խորհուրդը բաղկացած է ինն անդամից, որոնցից երկուսը ի պաշտօնէ են, այն է առաջնորդն ու տեղապահը, իսկ եօթին ընտրում է պատգամաւորական ժողովը իր անդամների միջից կամ գրսի անձերից՝ չորս տարի ժամանակով:

Թեմական խորհուրդը հսկում է թեմի բոլոր ազգային-ե-

կեղեցական հաստատութիւնների և պաշտօնեաների վարչական գործունէութեան վրայ. քննում և որոշում է հիմնել նոր վանքեր, եկեղեցիներ, ազգային հասարակական զարոցներ ու զբոսայգիներ, բարեգործական հիմնարկութիւններ և այլն. կազմում է բոլոր ազգային կրթական և այլ հիմնարկութիւնների կանոնադրութիւններ և մտցնում նրանց մէջ փոփոխութիւններ. ժողովում պահում և շահեցնում է բոլոր թեմապատկան հասոյթները. կատարում է ընդհանուր թեմական ծախսեր և առհասարակ վերջնական վճիռներ է կայացնում թեմի ընդհանուր անտեսական հարցերի մասին. նշանակում է թեմական տեսուչ թեմի բոլոր ազգային-կրթական հիմնարկութիւններին վերահսկելու համար. հարկաւոր դէպքում նշանակում է վերաքննիչներ ազգային-եկեղեցական հիմնարկութիւնների գործերն ու հաշիւները վերաստուգելու համար, թոյլտուութիւն է տալիս հանդանակութիւններ անել Ասորպատականի թեմում և 30 թումանից աւելի ծախսեր անել վանքերի և եկեղեցիների վրայ. հաստատում է իրանց պաշտօններում և հրաժարեցնում է զարոցների հոգաբարձուներին, գործակալական խորհուրդների աշխարհական անդամներին և ծխական խորհուրդականներին. հրահանգներ է տալիս թեմի բոլոր ազգային մարմիններին, հիմնարկութիւններին ու պաշտօնեաներին—զեկավարուելով այս կանոնադրութեան հիմնական սկզբունքներով:

Իբրև երկրորդ ատեան՝ քննում և վճռում է այն բոլոր վէճերն ու խնդիրները, որոնք սկսուել են գործակալական խորհուրդում: Քննում և վճռում է թեմի բոլոր ազգային մարմինների կողմից և նրանց դէմ ստացուած բողոքները և հողերականները ու ժողովրդի մէջ ծագած տարաձայնութիւնները. իբրև առաջին ատեան՝ քննում է ամուսնալուծութեան վերաբերեալ գործերն ու առաջարկում Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի տնօրինութիւն: Իբրև երկրորդ ատեան՝ վճռում է ինամակալութեան վերաբերեալ բոլոր հարցերը.—իբր նօտարական հաստատութիւն՝ հաստատում է ազգայինների կտակադիրները, մուրհակները, կալուածագրերը, կապալաթղթերը և այլ այդպիսի փաստաթղթեր և վաւերացնում է իրան դիմողների ստորագրութիւնը:

Թեմական խորհուրդը տարեկան մի անգամ ղեկուցագիր է ուղարկում Ամենայն Հայոց Կաթողիկոսին և երկու տարին մի անգամ հաշիւ է ներկայացնում պատգամաւորական ժողովին:

Թեմական սնդուկի անմիջական հսկողութիւնը և բանալին յանձնուած է թեմական խորհրդի դանձապահին, որին խորհուրդն ընտրում է իր միջից չորս տարի ժամանակով:

Շուտով կը ազգազրուի այս կանոնադրութիւնն ու կ'առաջարկուի հասարակական քննադատութեան, որտեղից կ'երևայ նրա նր աստիճանի նպատակաչարմար և հայոց եկեղեցու ողուն համապատասխան լինելը:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Revue des deux mondes.

Նորերս ինչպէս հազորգեցին լրագրերը, Ֆրանսիական կառավարութիւնը Պատույ լէզէօնի շքանշանը շնորհեց մի ֆրանսուհու՝ տիկին Կօլիէին: Սա այն կինն է, որ 1895 թի հայկական սարսափների ժամանակ Սերաստիայում իր ամուսնու՝ Ֆրանսիական հիւպատոսի հետ իր կեանքը բազմաթիւ վտանգների ենթարկելով, աշխատել է անել, ինչ որ հնարաւոր է թիւրքական զազանութիւններից անմեղ զոհերին փրկելու համար: Արիասիրա ու բարի կրնոջ այդ անձնուիրութիւնն էր, որ Ֆրանսիական կառավարութիւնը վարձատրեց շքանշանով:

Revue des deux mondes-ի այս տարուայ յունուարի 15 Ռ-ում տիկին Կօլիէն հրատարակել է այն սարսափի յիշողութիւնները En Arménie (Հայաստանում) վերնագրով: Մարդասէր տիկնոջ այս յիշողութիւններն են, որ մենք պէտք համարեցինք թարգմանաբար տալ «Մուրճի» ընթերցողներին:

1895 թ. օգոստոս. (ամսարանոցում)

«...Մօրիսը ենթադրում է, որ լուրջ դէպքեր են տեղի ունենալու մեղմ եղանակներին (saisondouce): Թիւրքերը, յայտնի յափշտակիչներ, աւարառութիւններն սկսում են միայն լաւ եղանակներին, երբ ոչ շատ տաք է, ոչ շատ ցուրտ:

Մեր ամառանոցը գտնուում է Սե-

բաստիայից 5 կիլոմետր հեռու Ղըզլիբմաք շրվէթի մօտ, որ բանայնում է մի հայկական ջրաղաց, որ պատկանում է սակայն մի փաշայի և այս պատճառով կոչուում է Թիֆֆաք փաշայի ջրաղաց:

17 Օգոստ. Խոհարարն այսօր մեզ բերեց վատ լուրեր: Դուրս է գալիս, որ Վանի կողմերում, ուր Ֆրանսիական հիւպատոս չը կայ, շատ քրիստոնէաներ են կոտորել: Միթէ ճըշմարիտ է: Արեւելքում չափազանցում են. սակայն մթնոլորտի մէջ մի բան կայ...

Սերաստիայում մենք արդէն առիթ ունեցանք տեսնելու մի շիֆոթութիւն: Վերջին ամսում, երբ ես այնտեղ մենակ էի սենեակումս, փոքրիկս էլ գնացել էր զբօսանքի, յանկարծ լսում եմ ամբոխի մոմռոց, նայում եմ և տեսնում բազմաթիւ հայեր, որոնք վազում են: Հարցնում եմ պատճառը, նրանք ինձ պատասխանում են, թէ գնում են եպիսկոպոսին (լուսաւորչական) խնդրելու, որ նա պաշտպանէ քաղաքական բանտարկեալներին, որոնց զափթիւնները ծեծով կիսամահ են արել:

Յանկարծ լսում են սուր ճիշեր: Մի խումբ փոքրիկ թիւրքեր, որոնք գալիս են հակառակ կողմից, ընդհարում են հայ մանուկների հետ: Վերջիններս ցրիւ են գալիս, բայց սրանցից մէկն ստանում է դանակի մի ծանր հարուած քունքի վրայ: Նա պառկած է գետնին

Թիւրքերն անցնում են ծիծաղելով իսկ հայերը յետ եկան շափուած քայլերով, շփոթուած, բայց նայում են վիրաւորին առանց նրան օգնութեան հասնելու:

Եւ մանուկը շարունակում է ճշար, և նրա ճիչն այնքան ցաւալի է: Ես վար եմ իջնում, մարդիկ գլխարկները հանում են, և ճանապարհ տալիս. ես բռնում եմ երեխայի երկու ձեռքից և քաշ տալիս դէպի հիւլապտոսարան:

Ամբոխը խիստ զարմացած է, մանաւանդ երբ եկաւ բժիշկ Գարեգին Յէրիմեան: Մարդիկ զարմացել են, որ հիւլապտոսարանի բժիշկը կանչուում է մի աղքատ տղայի համար:

Բժիշկը պահանջեց մի բերեացակամ մարդ երեխային բռնելու համար, մինչև որ ինքը կարէ ճակատը, որի կաշուի մի կտորը կախուել է խեղճ երեխայի աչքի վրայ, բայց ոչ որ յանձն չի առնում, ծիծաղում են: Ես չեմ կամենում դիմել Պանայիօտովին (իմ յոյն ծառային), որ իր պաշտօնից դուրս որևէ բան անելու խիստ անտրամադիր է և սաստիկ ատում է հայերին: Այն ժամանակ ես յանձն եմ առնում առանց քաշուելու, մանաւանդ որ իմ շրջագրեատը արևունով պատած է արդէն, սակայն ես սիրտ չեմ անում նայել: Ինչ վերաբերում է երեխային, նա չի էլ ճշում—այս մարդիկ պաշեցուցիչ դիմացկունութիւն ունեն:

Երկու ժամ յետոյ, մեկնելիս, երեխան ցատկոտում էր՝ ձեռքին բռնած մի արծաթէ դրամ

.

Օգոստ. 18.—Մեր կեանքը շարունակում է խաղաղ լինել: Ժանի (իւր երեխան) առողջութիւնը հիանալի է, բժիշկը յաճախ գալիս է մեզ տեսնելու, նրա այցելութիւնը մեզ զբաղեցնում է. նա լաւ խօսող է, բայց նորութիւններ չէ բերում: Այնպէս քիչ կեանք կայ Սեբաստիայում, մի հատ օտար հիւլապտոս, Մ. Ժ... Միացեալ—Նահանգների հիւլապտոսը, մի շատ սիրալիւր անձ, որ սակայն միայն երաժշտութիւնից է խօսում, մի բան, որ այս տեղին պատշաճ չէ: Ինչ վերաբե-

րում է հայ ընտանիքներին, նրանցից մինչև իսկ կրթուածները, խոստովանում եմ, ինձ համար սակաւ են համակրելի. բնշ արծաթասիրութիւն:

Օգոստ. 30. Երեխաս մեծանում է: Հարկաւոր կը լինի նրան նոր շորեր ձեռել, որովհետև Փրանսիայից ուղարկուածները չ'ստացուեցին, երևի ճանապարհին գողացուել են: Ի՞նչ անեմ, չեմ կարող այս փոքրիկ Փրանսիացուն հագցնել Թիւրքի կամ հայի ձեռով: Ձողն անտանելի է. խոտի մի ծիւ էլ չը կայ, և մեր կովը հիւանդ է:

Սեպտեմբ. 19.—Մենք մի տագնապ ունեցանք: Առաւօտեան ժամի 1-ին, մի մութ գիշեր, մենք զարթեցինք շնեքի հաշուցից: Որովհետև շնեքի մոմուտը մեծանում էր, Մօրիսը վեր կացաւ, ատրըճանակը լցրեց, և վրանի եզրը բարձրացնելով, առանց աղմուկի դուրս սողաց: Նա շուտով պատահեց Պանայիօտիին հրայանը ձեռքին, որ աշխատում էր խաւարի մէջ բան ջոկել: Կազման ասաց, որ մի քանի բոլբ է, ինչ նա նշմարում է խաւարի մէջ շարժուն ստուերներ: Նա հետևել է այս ստուերներից մէկին, յետոյ կանգ է առել, վախենալով ընկնել դարանի մէջ: Մօրիսը և նա գնացին միասին. ես լսեցի, ինչպէս նրանք հեռանում են, և սիրտս թրթռում էր... Նրանց պրտոյտն անօգուտ անցաւ և սակայն չընեքը չէին հանգստանում:

Այս առաւօտ մի հայ հովիւ յայտնեց մեզ, որ գիշերը Պանայօտիին սպանելու են եկած եղբւր Մանրամանութիւններ անկարելի եղաւ իմանալ: Հովիւը չէր համարձակում աւելին ասել: Արդեօք եկողները քրդեր, Թիւրքեր, Թէ՛ չեքքեղներ էին, ո՞վ գիտէ:

—Գիտե՞ս սա ինչ է նշանակում, ասում է ինձ Մօրիսը: Դա նշանակում է, որ շուտով շարդեր են լինելու, և որ իմ ներկայութիւնը ճնշում է, որովհետև նրանք գիտեն, որ ես մէջ կ'ընկնեմ. իսկ եթէ կորցնեմ Պանայօտիին, նրա տեղը ոչ զրի դնել չեմ կարողանայ: Լսի՛ր, բաւական է ամարանոցի կեանքը, զընանք Սեբաստիա:

27 Սեպտ., Սեբաստիա.—Մեր վերադարձը բարի չ'եղաւ. փոթորիկ ունեցանք. եղանակը ցուրտ է, Մօրիսը մըրսել է և հազում է:

Սեպտ. 29.—Լաւ եղանակները վերսկսուեցին, և մենք խեղդուում ենք քաղաքի արտաքերը փոշու մէջ: Բայց և այնպէս՝ լաւ որ այստեղ ենք, պարզ է, որ մի բան է պատրաստում...

Նախ հայերը շատ լցուած են երևում: Նրանք մտածում են ապստամբութեան մասին. մի բան, որ կատարեցնում է Մօրիսին, որ երբէք չէ հասկանում ապստամբութիւնները, ինքը կարգապահ զինուոր է:

.....
.....
.....

Հոկտ. 1.—Յուզումներն աճում է երկրում, ընդհարումներ են տեղի ունենում: Արիւնը հոսում է: Այս ողորմելի հայերը խենթացել են, լինչ է: Նրանք շատ են ձայները բարձրացնում: Նրանց կօմիտէաները զէնքեր ունեն: Բայց ում օգնութեան վրայ են յոյս դրել:

Այն, ևս գիտեմ, նրանք յիշում են Սիրիայում արած մեր արշաւանքը. խոստովանում եմ, այստեղ զալուցս առաջ ևս այդ մասին երբէք չէի լսել. նրանք համոզուած են նոյնպէս, որ Միացեալ-Նահանգները շատ աւելի զօրաւոր են, քան Անգլիան, որը սահնքի միջի այլոց, մեծամեծ խոստումներ տալուց յետոյ՝ նրանց միանգամայն մոռացել է, և նայն իսկ Սեբաստիայում հիւպատոս չ'ունի:

Հոկտ. 3.—Մօրիսը այս առաւօտ դուրս գնաց և յետ եկաւ խիստ մտաւրացադ: Ես չը կարողացայ նրանից մի հատ խօսք դուրս քաշել: Բայց նախաճաշի ժամանակ նա յանկարծ ասաց.

—Լսի՛ր, փոքրիկս, դու մեկնում ես վաղը և եթ ժանի հետ.

—Ս, հա՛... բայց ինչո՞ւ համար:

—Որովհետև շուտով կուի է լինելու, և եթէ ես կեանքս պարտական եմ իմ կառավարութեանը, պարտական չեմ սակայն զոհել իմ կիներն ու երեխան: Ես սկսեցի ծիծաղել:

—Նախ բանները ևս այնպէս էլ սև չեմ տեսնում ինչքան դու, ասացի, և մէկ էլ աշխարհում ոչինչ չէ կարող ինձ քեզանից հեռացնել, երբ դու զտնում ես, թէ վտանգ կայ:

Մօրիսը յօնքերը կիտեց, բայց էլ չը պնդեց, միայն պտտում էր սեղանի շուրջը բեխերը քաշքշելով, յետոյ մօտեցաւ համբուրեց ինձ:

Հոկտ. 14. Մօտենում է: Իրար կոտորում են շրջակայքի գիւղերում: Ես շտապեցնում եմ Մօրիսին առանց ուշացընելու կազմակերպել մեր պաշտպանութիւնը: Լիւսին (աղախին) և ես տուպակները լցնում ենք աւազով՝ լուսամուտները փակելու համար: Պանայօտին նշանի տախտակ է դրել պարտիզում և ինձ սովորեցնում է հրացան կրակել. նրա համար միևնոյն է վառօդի հոտ առնել, իսկ ես առաջի հարուածներին զուլիս դարձնում եմ, այնպէս որ քիչ էր մնում մի անգամ կրակէի նրա երեսին: Այժմ ես շատ էլ վատ չեմ կրակում:

Նոյեմբեր 5.—Մեզ հասնող լուրերը հաստատում են, որ հայերը չեն ապրտամբուել, այլ թուրքերն են կոտորում ու թալանում:

Կարահիսար, Ջարա, Դիվերգի բոցերի մէջ են: Այնտեղ կոտորել են շրոլորին, մի քանի հարիւր փոքրիկ երեխաներ միայն թողնուած են աւերակների մէջ: Նրանք էլ կը կոտորուեն սովից, եթէ վայրի գազաններից տակաւին չեն յօշոտուած: Դժբաղդաբար մենք ոչ որ այնտեղ ուղարկել չենք կարող: Վստահելի մարդիկ համարում ենք Պանայօտիին և երկրորդ կալաս Մհամմեդին. այս վերջինը մի վիթխարի է, բայց այնպէս յիմար, որ միւսը նրան պէտք է առաջնորդէ:

Չուկայում մենք մեծ քանակութեամբ պաշար ենք գնում, որովհետև թալանի ժամանակ ոչինչ չի մնայ, քանի որ բոլոր խանութները պատկանում են հայերին: Կացութիւնը դառնում է սնհանգստացուցիչ: Ամեն գիշեր մենք սպասում ենք հրացանաձրգութեան և անքուն ենք: Միայն մեր

աղաթինը, Լիւսին, չի կորցնում իր հոգու խաղաղութիւնը: և կրկնում է ժողովուրդը:

—Ոչ, տիկին, այդ անկարելի է, Աստուած այդ թոյլ չի տայ:

Նոյեմբեր 7.—Ես գնացի լատեններու եզուրի հայրերին և քոյրերին, որոնք բնակուում են մի հեռուոր թաղում, վալիի պալատից հեռու և մահմեդականների թաղից այն կողմը. (այդ երկու միասիօնները մէկը միւսից բաւական հեռու են): Ես նրանց ասացի, թէ Մօրիսը խորհուրդ է տալիս պաշար ձեռք բերել և ղինուել:

—Մենք ղինուեմք. օ, ոչ, տիկին, ասաց ինձ գլխաւորը. Տէրն ասել է՝ «Մի սպանիր»:

—Բայց ձեզ կ'սպանեն:

—Մենք Աստուծոյ ձեռքումն ենք:

Քոյրերը աւելի նուազ խաղաղ և անվի պահաս հնազանդ թրացիին, բայց ներանք էլ սիրտ չեն անում ղէկրին ձեռք տալ:

Մօրիսը հաղորդում է Պօլիս, թէ բանը վատ է: Բարբերաղաբար մենք հեռագրալար ունենք: Մի պաշտօնեայից իմացուեց, որ Դիւրբէքիին հիւպատոսը շատ տխուր լուրեր է ուզարկում, բայց իմ ամուսինը շարունակում է պահուանել իր լաւ տրամադրութիւնը, նրա կարծիքով մինչև ջարդի վճռական հրամանը ղուրս դայ, սարսափելու ոչինչ չը կայ: Արդեօք ասում է բոլորն, ինչ մտածում է. կարծեմ ոչ, որովհետև նա սկսել է ինձ սովորեցնել կարգաւ ծածկագիր հեռագիրները:

Նոյեմբեր 10. Ես ղիպուածով իմացայ, որ ջարդերն սկսուած են Էրզրումում. Մօրիսն ինձ չէր ասում:

Նոյեմբեր 11. Մեզ ասացին որ մի հիւպատոս քիչ է մնացել սպանուի թուրքերի ձեռքով, նա հեռագրել է ղեսպանին իր ծանր կացութիւնը, որի վրայ պ. Վամբօնը ուղղել է վալիին հետևելու սպառնալիքը. «Եթէ իմ հիւպատոսը կորչի, ձեր ղլուիը կ'ընկնի»: Այս շշուկը ինձ սարսափեցնում է, բայց Մօրիսն ինձ հաւատացնում է, թէ մին-

չև այժմ ղէպը չէ եղել, որ հիւպատոսարանում փակուած հիւպատոսը ըսպանուի, կամ հիւպատոսը յարձակման ենթարկուի, եթէ մինչև իսկ նրա տունը փախստականներով լի լինի: Պատուող շուկները ուրեմն լուրջ չեն:

Այն ժամանակ ես աշխատում եմ նրանից խոստում առնել, որ բաց կ'անէ դուր միայն հայերի առաջ, իսկ ոչ ինքը: և ոչ էլ կ'ավանդուր, ինչ էլ որ պատահելու լինի, ղուրս չեն գայ: Մօրիսը տատանում է և յետոյ ինձ տալիս է խուսափողական պատասխաններ: Դժուար է երևակայել այսպիսի ըսպատողական վիճակի յուզմունքը:

Նոյեմբեր 12.—Ուղիղ կէսօրին ես և Մօրիսը կարդում էինք մի հեռագիր, ծանր խաղում էր ներքևի ղրասնեակում, բակի վրայ, երբ լուեց Պանայօտտիի շտապ տննաձայնը, նա ղրացեց դուրը, խլեց հրացանը կոշելով:

—Այս անգամ սկսուած է.

—Ի՞նչը, ասաց Մօրիսը ցատկելով, մինչդեռ ես խլեցի երեսան.

—Փողը հնչում է վալիի բնակարանից. համիդիէի մի բատալիօն կրակում է փողոցներում, շարժում են ղէպի շուկան: Ահա, լսում էք:

Եւ իսկոյն լսում են ղրագմաթիւ հրացանների ձայներ:

Մօրիս վազում է իր սենեակը, հագնում է իր համազգեստը, խլում է հրացանը և կանգնում է լուսամուտի առաջ: նա հրամաններ է տալիս: «Դու, Պանայօտտի, իջիր փողոց. դու, Մհամմեդ, ղնա ղէպի եկեղեցին»:

Ես յանձնում եմ երեսան Լիւսիին, որը, շուտով իր անկողինը բարձրացնում է լուսամուտի առաջ ղնողականների ղէմ մի պատուար պատրաստելու համար: նա մի բառ էլ չի ասում, ղլուիը չի կորցնում իմ քաջ հայրենակցուհին. Մօրիսը բարձրանում է տերրասի վրայ: Այստեղից մենք լսում ենք ղարհուրիքի հրացանաձգութիւն: Երբեմն լսում են աւելի խուլ որոտներ. կարծեմ թնդանօթի ձայն է: Մօրիսը հաւատացնում է, որ դա կանոնաւոր ղօրքի հրացանաձգութիւն է:

Ամեն կողմից լուում են յուսահատ ձիշեր, խոխոտցներ, ոռնոցներ: Սա տևում է 20 լուպէ: Յետոյ ամեն ինչ լուում է:

Տիրում է մահուան լուռ ին. ամուսինս կրկին վար է իջնում դանդաղութեամբ: Նա կատարել է այս ատղակների դէմ: Ես նրան աղաչում եմ խաղաղ մնալ:

Իր պատուէրի համաձայն՝ ես վերջնում եմ ռազմամթերքը և տանում եմ ներքևի գրասենեակը, ուր գտնուում են զէնքերը:

Պանայոտովին պահպանում է փողոցը. Մհամմեդը հիւպատոսարանից դընում է եկեղեցի, ուր 2000 քրիստոնեաներ կան փակուած և կրկին յետ է գալիս:

Մենք ստանում ենք հակիրճ լուրեր Պանայոտովից: Ամենքին կոտորել են շուկայում. ոչ մի հայ չէ ազատուել: Մի քանիսը փախել, ծածկուել են մի ամբարում, բայց զօրքը ական է փորել, ներս է մտել, այս վայրկենիս նրանց կոտորում են սուլիններով, սրա համար է, որ էլ ազմուկ չի լուում: Ջինուորներն անցնում են փողոցով բեռնաւորուած աւարով, ձեռներն արիւնոտ: Երկու սպաններ գնում են և նրանց հետևում են երկու համալիներ:

Ամուսինս ինձ ասում է.

— Ես չեմ կարող այսպէս մնալ աւանց իմանալով՝ թէ ի՞նչ եղան մեր հայրենակիցները:

Ցանկարժ նա մտածում է, թէ գուցէ նրանք այդտեղից իրան նշաններ են անում: Նա շուտով բարձրանում տերրասի վրայ, ես նրան հետևում եմ. հետևում լուում է գնդակների սուլոց: Մենք ոչ մի նշան չենք տեսնում:

Ցանկարժ Մօրիսն ինձ ասում է. Այ քեզ բան: Ի՞նչ է անում այս մեր դիմացի մարդը:

Ես նայում եմ, նա ինձ ցոյց է տալիս մեզանից երեսուն մետր հեռու վերնատան հերթիկից մի հայի զլուս, հըրացանը այտին: Չտապով ինձ մի կողմ է մղում, մի գնդակ անցնում է, մի քիչ ծուկ է դուրս գալիս հերթիկից:

— Օհ, օհ, սա ինձ համար էր, ասում է Մօրիսը, այ քեզ օյին!... այդ բանը մենք կը պարզենք յետոյ: Իսկ այժմ զիններ ծառաներին. թիւրք զինուորները վերջացրին, նրանք յղիացան, այժմ ամբոխն է սկսելու:

Ծառաները զողողալով մերժում են մեր առաջարկած զէնքերը:

Այս վայրկենիս հասնում է բժիշկ Գարեգինը ինչպէս մի խենթ, շորերը պատառոտած. նա փախել է մի խումբ կատարիների ձեռքից. իր տունը տակն ու վրայ են անում: Հէնց որ նա մեզ մօտ մտաւ, ամեն կողմից հայերը թափուեցին նրա յետևից թանկագին իրեր ձեռներին: Նրանք իրար հրհրում են, ճշում են, ընկնում են:

Ոմանք ներս են մտնում պատերի վրայից. պարտէզը, բակը, բնակարանը լցում է, ամուսինս զբօշակը սևով է ծածկել տալիս, որ նշանակում է, թէ մեծ վտանգ կայ:

— Գիհ, ասում է նա, փրկենք նախ Ս.-ի ընտանիքը:

Մ. Ս. զբազօմանը սերիացի է, մեծ վտանգ չը կայ նրա համար դուրս գալ, բայց նա զլուսը կորցրել է:

Մհամմեդը, մեր երկրորդ կավասը, մի վիթխարի շերքեզ, մենակ է գնում նրա ընտանիքը փնտռելու, իսկ Պանայոտովին մնում է մենակ պահպանելու և՛ փողոցը, և՛ եկեղեցին:

Այս վայրկենիս՝ բոլորովին մեկ մօտիկ լուում է մի բարձր ձիշ. դա մի հայ է, որ փախչում էր և որ լսողութեց: Ունացող մի լուումը դէպի մեզ է գալիս ճշալով՝ «դէպի եկեղեցին, դէպի եկեղեցին»։ Մօրիսն ինձ ասում է. — Կրակիւր, բայց օդի մէջ, պէտք չէ սպանել:

Գրսի ազմուկի վրայ մեկ մօտ զըտնուող հայերը բոլորը մէկն աղաղակում են, սարսափած գետին են թափուում կամ կծկուում անկիւններում:

Մի կէս ժամ յետոյ Մօրիսն ինձ ասում է.

— Բանը սրանով չի վերջանայ, իսկ մեր Մհամմեդն էլ յետ չ'եկաւ. գուցէ նա սպանուած է. մնում է Պանայոտ-

տին: Փոյթ չէ, նախ և առաջ մեր հայրենակիցները ապահովութիւնը. ես այժմ Պանայոտտին կ'ուղարկեմ վալիին ասելու, որ ես նրան պատուիրում եմ պաշտպանել Քրանսիական միսսիաները:

—Պանայոտտի, կանչում է ամուսինս լուսամուտից: Քաջասիրտ մարդը վաղէվազ դալիս է: Մօրիսը նրան հասկացնում է ինչ պէտք է ասել:

—Լաւ, ասում է ծառան առանց տատանուելու. զնում եմ:

—Աշխատիր յետ գալ:

Գալիսը հեռանում է.

—Դէհ, տիկին Կարլիէ, սսում է Մօրիսը վտանգի առաջ եռանդի եկած, ևս ձեզ նշանակում եմ առաջին կավաս: Դուք պիտի պահպանէք հիւպատոսարանի դուռը. իսկ ես վերից կը հսկեմ այն փողոցը, որ տանում է դէպի եկեղեցին:

Յետոյ նայելով մեզ լսող այս սհագին բազմութեանը՝ նա շարունակում է.

—Ի՞նչ ասել, երբ այս հինգ հարիւր հոգուց և ո՛չ մէկը ընդունակ չէ դէնք բռնելու...

Փաստն այն է, որ նրանք մեր առաջ կանգնած հառաչում և լալիս են... Այս վայրկեանիս ես լսում եմ, ինչպէս Մօրիսը կըրակում է: Ես դուրս եմ գալիս դրան առաջ. փողոցը դատարկ է, բացի խորքից, միւս նեղ փողոցի մօտ: Եւ քանի ամուսինս կըրակում է, ես էլ եմ կըրակում հէնց այնպէս: Զուտով մի կատաղի խումբ առաջանում է, բոլոր ուժով նետում են դէպի մեզ կացիններ:

Ես սաստիկ վախեցած՝ յետ եմ քաշում: Կացինները ընկնում են գետին կայծեր արձակելով քարերի վրայ: Ես իրաւունք ունէի կարծել, որ ամեն ինչ վերջացաւ... նրանք հեռացան:

Մեծ վտանգը անցած է թոււմ. ահա և Պանայոտտին: Նա զինուորների սուլիները հեռացնելով՝ ներս է մտել վալիի մօտ և նրա աչքերի մէջ նայելով՝ հրամայել է քրանսիական հիւպատոսի կողմ:

Մեց—պէտք է տեսնել, թէ նա ինչպէս է արտասանում այս խօսքերը—անմիջապէս զինուորների ուղարկել պաշտպանելու միսսիաները և դադարեցնել կոտորածը: Եւ նա յաջողեցրել է. զենեքալը և վալին իրար երես են նայել քարացած. դափթիկներ են գնացել վաղէվազ: Տասն ըոպէից յետոյ մենք էլ կ'ունենանք մեր պահապանները և նոյն իսկ չըջող պահապաններ կը հաստատուեն:

—Ձատ լաւ, ասում է Մօրիսը, հիւնալի է: Ահա մի լաւ գործ, և որովհետեւ այսօր էլ վտանգ չը կայ, Պանայոտտի, ճանապարհ դիր այս մարդկանց... Ի՞նչպէս չեն մտածում սրանք, որ թիւրքերն աւելի համարձակօրէն կը կողոպտեն ու կ'այրեն նրանց անաէր մնացած տները:

Հայերը դուրս են զնում հայհոյելով: Աւելի խելացիները զտնում են, որ հիւպատոսն իրաւունք ունի, մեր սալօնում մնում է միայն Գարեգիինը, մի քանի պատաւոր անձինք, կանաչք և երկու եպիսկոպոսներ, մէկը կաթողիկէ, միւսը լուսաւորչական:

Ամենն էլ խիստ սոված են: Ես Լիւսիի հետ խոհանոց եմ դնում կրակ անելու, և մի քառորդ ժամից յետոյ մենք բերում ենք բիֆշտեկսի պէս մի բան, որից ծխի հոտ է գալիս, Մօրիսը բաց է անում սարգիլի մի արկղիկ: Սեղան ենք նստում, բայց անմիջապէս պայթում է հրացանաձուլիւնը մեզանից մօտիկ: Թիւրքերի լամբեր են, որոնք գալիս են դէպի եկեղեցին զրոհ տալու համար, և Պանայոտտին ցրում է: Երեք անգամ ամուսինս դուրս է գնում փողոց, հրացան արձակում և վերադառնում

Վերջապէս գալիս է մի սպայ քրասն և հինգ դափթիկներով: Բայց այս զինուորները մեզ բնաւ վստահութիւն չեն ներշնչում: Ամուսինս նրանց տուն չէ թողնում՝ մեզ մօտ եղած փախստականները պատճառով: Նա պահանջում է, որ նրանք մնան փողոցի մէջտեղում, մէջքերը դարձրած մեր տանը: Սա նըրանց շատ էլ հաճելի չէ, բայց երբ

Մօրիսը հրամայում է, պէտք է հնազանդուել:

Բայց ի՞նչ եղաւ մեր Մհամմեդը: Անհանգիստ ենք նրա համար: Մօրիսը պահանջում է սպայից, որ նա ուղարկէ երեք մարդ նրան փնտրելու և ազատելու, եթէ պաշարուած է:

Վերջապէս ահա և նա Մ. Ս.-ի քրորոջ և եղբօր որդիներին հետ. նրանք էլ են սեղան նստում:

—Այս լաւ, Մհամմեդ, ստում է Մօրիսը. դէ հիմայ էլ զնա եկեղեցի և ընկերացիլը այն հայերին, որոնք կը կամենան վերագաւնալ տուն: Դնա, գօտիդ պնդացրու, հոգիս. տես, ես էլ չեմ նախաճաշում:

Բարձրահասակ շէքքէզը գնում է: Մի քանի մուսուլմաններ նրան տեսնելով, դուրս են գալիս մի տնից, առաջաբկում են նրան իրանց ընկերանալ և կողոպտել:

Նա մերժում է:

Ձարունակ լսում են հրացանի ձայներ աւելի և աւելի հեռուից: Ես տեսնում եմ, ինչպէս անցնում են մահմեդականներ կողոպուտը շալակած, հրբաշալի մետաքսեղէններ, ոսկեթել բաւումած կտորներ:

Մօրիսը հրամայում է բռնել բոլոր թալանողներին, որոնք կը համարձակուեն անցնել մեր հիւպատոսարանի առաջից:

—Թող ինչ ուզում է լինի, բայց նրանք պարտական են յարգանք տածել դէպի մեզ:

Երեկոյեան դէմ Պանայօտտին իմանում է, որ միսսիաների կրօնաւորներն ու կրօնաւորուհիները ողջ և առողջ են: Ամբոխը շարունակում է կողոպուտը մանաւանդ անտէր ձգուած տներում: Այս ամբոխը կատարել է գազանութիւններ: Ձէնք շունենալով՝ նրանք կոտորել են իրանց զոհերին մահակներով, երկաթէ ձողերով, կամ փշրել են նըրանց գլուխները քարերի տակ կամ խեղդել առուի մէջ նրանց սարսափած կանանց և զաւակների աչքի առաջ: Չատ հայեր այսպէս կոտորուել են ա-

ռանց պաշապանութեան փորձ անելու: Նրանց մերկացնում և սարսափելի կերպով խոշտանկում էին սպանելուց առաջ:

...
Նա իմանում եմ, որ ժամի 6-ին մուէզգիները մինարէների կատարներից շընորհաւորել են ժողովրդին լաւ կոտորածի համար:

Նոյեմբեր 13.—Խաղաղ օր է սկսուում, թէև մի քանի հրացանի ձայներ են լսում մէջընդմէջ: Մօտ 1200 մարդ է սպանուած, բայց 5000-ից աւելի մնացել են ողջ առողջ, մեր շուրջը եղած թաղերը ազատ են: Պանայօտտին տեսնելով որ եպիսկոպոսները ու իրանց հետևորդները մեզ վրայ թափուած են մնում, նրանց խորհուրդ է տալիս գնալ: Նրանք էլ մեկնում են...

Ամուսինս ինձ յայտնում է, թէ իր երկու կալաների հետ գնում է այցելելու կրօնաւորներին: Ասացին, որ նրանք սպատուած են, բայց նա կամենում է իր աչքով տեսնել: Նա իր դրագօման Մ. Ս.-ին պատիրում է զինուել. բայց սա սարսափած աղիբսում է նրան դուրս չը գնալ: Ամուսինս դարմանքով ուսերը բարձրացնում է:

—Մի վախենաք, պարոն. կինս ձեզ կը պաշտպանէ:

Բժիշկ Գարեգինն էլ կորցրել է սառնասրտութիւնը, բայց նա գոնէ գիտէ, որ իր գլուխը գնահատուած է. ինչ որ ինձ ապշեցնում է, դա այս մարդկանց սարսափն է հրազէնների առաջ:

Մօրիսի բացակայութեան բոլոր ընթացքում ես մնում եմ վերի լուսամտի մօտ և հսկում եմ զինուորների վրայ... Անցնում է վալիս, լաւ շրջապատուած թիկնապահներով, նա ժպտալով ինձ բարևում է ձեռքի նշանով, իսկ իր ըսպաները՝ սրով:

—Այդ ինչպէս համաձայնեցիք տիկին, ստում է նա, որ հիւպատոսը հեռանայ, ուրեմն դուք էլ էք գտնում, որ իմ թիւրքերը վտանգաւոր չեն:

—Այո՛ պատասխանում եմ ես ցոյց

տարով ատրճանակս, երբ մարդ սրանից ունի, վտանգաւոր չեն:

Վալին էլ չէ ժպտում. նա հեռանում է հուստացնելով ինձ, թէ նա գնում է քաղաքում կարգ հաստատելու:

Ամուսինս վերադառնում է: Դուրս է գալիս, որ դեռ կոտորածը չարունակում է, միայն հեռուոր ազարակներում: Միսիանները չեն տերուել, բայց դռները ծակոտուել են զնդակներից և կայինների հարուածներից: Քոյրերը ժողովել են շատ երեխաներ, իսկ հայրերը տղամարդիկ:

Սյս վայրկենին ամուսինս տեսնում է ուշացած կողապտողներից մէկին, որ անցնում է սիլաքը բերանին և յախորտանքով մեզ է նայում.

— Բռնեցէք այս թշուառականին. հրամայում է ամուսինս:

Ձինուորը տեղից չէ շարժում: Մօրիւր ցատկում է և իր ատրճանակի փողը նրա ճակատին բռնում: Սյն ժամանակ զինուորը հայհոյելով բռնում է աւաղակին և տանում է վալիի մօտ: Մօրիսն ասում է միւսներին, թէ նրանք պիտի օգտուեն այս դասից, բայց մի հաստավիզը նրան պատասխանում է:

— Սա պղտիկ է. բոլոր մեր ընկերները հարստացան, մինչդեռ մենք ուշին չը շահուեցինք: Դուք մեզ վրնասում էք:

Կատաղի դէմքով մի ուրիշ զինուոր ասում է ատամների արանքից.

— Սյն խարոյկը, որ ձեր Գարեգիներին պիտի այրէ, բոլորովին պատրաստ է:

Ի՞նչ անել:

(Պը շարունակուի)

ԱՄՋՄԱՎԷՊ. Յունուար. «Գերմանական ազդեցութեան վրայ» վերնագրի տակ Բազմավէպի այս տարուայ տուաշին համարում սպուած է մի ուշագրաւ յօդուած:

Գերմանական Վիլհելմ Բ. կայսրը մի անգամ ասել է, թէ գերմանական հանճարը գերազառ է բոլոր ազգերի

մէջ: Քրանսիացի դրող Ժակ-Մորլան այս պարծենկոտ յայտարարութեան անհեթեթութիւնը ցոյց տալու համար՝ մի քանի հարցերով դիմում է մի շարք ֆրանսիացի և օտար նշանաւոր անձանց՝ նրանց կարծիքն իմանալու գերմանական մտքի ազդեցութեան մասին: Պատասխանները շատ են և հետաքրքիր: Բայց մեր կարծիքով ամենահետաքրքիրը Տուրինի հուշակաւոր ուսուցչապետ Չեղարէ Լօմբոզօյի կարծիքն է, որ քաղում ենք Բազմավէպից:

«Թեքև հիմա Անգլիա Գերմանիայէ աւելի հանճարաւոր իմաստասէրներ և գիտնականներ ունենայ, մանաւանդ թէ Միացեալ-Նահանգք սկսան Անգլիոյ տեղն անցնիլ:

Բայց ինչ սր ալ ըլլայ, ես անոնցմէ եմ, որ կ'ընդունեն և չեն մերժիր օտար ազդեցութիւնները: Վասն զի գիտութիւնը քաղաքական պատեր չ'ունի. եթէ ազգ մը ինքզինք սկսի ուրիշներէն վեր դնել, երթալով կ'իյնայ, որովհետև չ'օգտուիր ուրիշներէն: Ազգ մը արհամարհելով օտար ազդեցութիւններն ու չ'ընդունելով օտար գիւտերը, կը վնասէ նոյնիսկ իւր գիւտերուն և կ'իյնայ հիւժմօն մէջ: Ներկայիս Գերմանիա այդ վտանգին մէջ է. իր ներկայ մեծութեամբ և ամբարհաւածութեամբ չափազանց կ'արհամարհէ ուրիշ ազգաց արդիւնքը:

Ինքնըստինքեան մեր կեանքի հետ ոչ մի առնչութիւն չ'ունեցող այս խնդիրը առիթ է տուել Բազմավէպին մի գուտ ազգային-գրական հարց դարթեցնելու. նացանկանում է իմանալ թէ՛

1) Ներկայիս գերմանական մատենագրութիւնն է, որ ունի աւելի ազդեցութիւն հայ ազգին վրայ, թէ՛ գաղղիականը.

2) Ո՞րը կրնայ օգտակար համարուիլ մեր ազգին ապագայ յառաջադիմութեան համար, միշտ ի նկատի առնելով անոր տրդի կացութիւնը:

«Ես չեմ ուզեր և չեմ ալ կարող միւիլ այս հարցմանց պատասխաննի-

րուն մէջ—շարունակում է Բագմավէպի յօդուածագիր չ. Մ. Նուրիխան—միայն կը համարձակիմ համառօտիւ հաստատել, ինչ որ էր անցեալն, և կամ ինչ որ է ներկայն»:

Մի համառօտ տեսութեամբ յօդուածագիր չ. Մ. Նուրիխան գալիս է այն եզրակացութեան, թէ ռուսահայերը՝ գերմանական և թիւրքահայերը ֆրանսիական ազդեցութեան ներքոյ են. այս կարծիքը ճշմարիտ է, բայց բնաւ նորութիւն չէ. վաղուց է, որ երբ հարց է ծագում հայ ժողովրդի երկու մեծ հատուածների մտաւորականի և զրակում ուղղութեան մասին, մէջ է բերում նոյն կարծիքը:

Մասնաւորապէս մեզ համար աւելի ուշագրաւ պիտի լինէր չ. Նուրիխանի յօդուածը, եթէ նա ծանրանար թիւրքահայ և ռուսահայ զրականութիւնների ուրոյն-ուրոյն զոյն տուող այլ գործօնների վրայ:

Յայտնի է, որ թիւրքահայ զրականութիւնը իր Մաթիլդներով, Փօզէֆիններով, Փանթիիններով Պօլսոյ զրականութիւն եղաւ, կտրուած գաւառներից, հայ ժողովրդի ամբողջութիւնից. մինչդեռ ռուսահայ զրականութիւնը հէնց սկզբից բուն ժողովրդական կնիք կրեց, ծնունդ ժողովրդից և սնունդ առաւ համարեա բացառապէս ժողովրդական ոգուց: Երկու զրականութիւնների այս խոշոր տարբերութիւնը վերագրելի է արդեօք ամբողջապէս մէկի Ֆրանսիական և միւսի գերմանական ազդեցութիւն կրելուն, թէ՛ կան և այլ խորունկ պատճառներ, որոնք առաջնակարգ նշանակութիւն են ունեցել ռուսահայ և թիւրքահայ մտքերի իրարից տարբեր ուղղութեան մէջ:

Անշուշտ կան և՛ այլ հանդամանքներ. այստեղ նպատակ չ'ունենք ծանրանալ այս հարցի մանրամասնութիւնների վրայ, կ'ասենք սակայն, որ նորագոյն զրական անդաստանի առաջին մշակները բացառապէս ժողովրդից ծնուած և ժողովրդի մէջ ապրած մարդիկ եղան. Երովեան, Բաֆ-

ֆի, Պօռչեան, Աղայեան ամենքն էլ զիւզեց առաջ եկան և ժողովրդի լայն, բեղմնաւոր ոգու երկունքի պլտուղներ եղան: Դա մի վերին աստիճանի խոշոր հանգամանք է ռուսահայ զրականութիւնը բնորոշելու համար:

Գիւղի, ժողովրդի, նրա ցանրի դպրոցն այնքան կրթիչ է, այնպէս ուժեղ մղումն է տալիս բնաւորութիւններին, որ ապագայ հանգամանքները մեծաւ մասամբ անկարող են դառնում այլ ուղղութիւն տալ նրանց. մեզ անհրճաբարն է թուում կարծել, թէ գիւղացի Երովեանը եթէ ֆրանսիական դաստիարակութիւն ստանալ, պէտք է աչքաթող անէր ժողովրդական կեանքը, որ մենք «Վէրք Հայաստանի» ժողովրդական վէպը չէինք ունենալ: 2որս-հինգ տարուայ օտար կեանքը չէ կարող ջնջել մի քանի տասնեակ տարիներ ապաւորուած պատկերները շիտակ, զգայուն հագիններում:

Բագմավէպի հէնց միև ոյն համարում Խ. Երովեանի կենսագրականի մէջ չ. 2րաքեան պ. 2ուպանեանի հետ իրաւացի կերպով ստում է. «հինգ տարուան երրօրական կեանքէ և համալսարանական ուսումնասիրութիւններէ յետոյ Երովեան իր վէպին մէջ կը մնայ գեղջուկ մը»: Մեր կարծիքով Երովեան կը մնար նոյն գեղջուկը, եթէ այդ հինգ տարին Ֆրանսիայում անցրած լինէր:

Այդպէս չ'սկսուեց թիւրքահայ արդի զրականութիւնը. նա ծնաւ Պօլսում, այսինքն Երոպայում, մինչդեռ բուն ժողովուրդը մնաց Սփիւրում. բաժանող ահագին տարածութիւնը արուեստական հեշտութիւններ էլ չը տուեց յարաբերութեանը. գաւառները մոռացուեցին, և ժողովուրդը դուրս մնաց Պօլսի զրականութիւնից: Հետաքրքիր է, արդեօք Պօլսիս աւելի պիտի ուշք դարձնէր գաւառական կեանքի վրայ, եթե նա հրաշքով գերմանական ազդեցութիւն կրած լինէր: 2ենք կարծում: Պօլսի զիրքը այստեղ բացատրութիւնների սեղ չէ թողնում. Ինչպէս երևում է, վերջերս թիւր

քահայերի մէջ սկսուել է մի գրական շարժում, որ զուտ ժողովրդական բընոյթ ունի: Անշուշտ դա մի վերին աստիճանի ուրախալի երևոյթ է, սակայն այժմէն իսկ կարելի է տեսլ, որ այդ շարժումը յաջողութիւն կ'ունենայ միայն երկու դէպքում—կամ գաւառները պէտք է հնարաւորութիւն ունենան իրանց ինքնուրոյն գրականութիւնն ստեղծելու, կամ Պոլիսը նիւթական յարմարութիւններ պիտի ունենայ աւելի սերտ, աւելի մօտիկ յարաբերութեան մէջ մտնելու դաւառական ժողովրդի հետ: Եթէ Պոլիսը թիւրքահայերի գլուխն է, գաւառները սիրտն են կազմում. որքան ժամանակ որ սրանք անջատուած մնան, գրականութիւնը կը լինի թերի, անկատար:

Ի դէպ է տեսլ, որ «Մուրճի» ներկայ համարում մեր աշխատակից պ. Առանձար ի միջի ալոյց խօսելով թիւրքահայերի մէջ սկսած այդ ժողովրդական գրական շարժման մասին՝ այն կարծիքն է յայտնում, թէ ուսանողները բաւականաչափ լուրջ ու շարժութեան շին առնում այդ նշանաւոր երևոյթը:

Պէտք է նկատենք պ. Առանձարին, որ այդ գրական շարժումը ուսանողների համար թէև շատ ուրախալի, շատ միտիթարական երևոյթ է, բայց զարմանք, հիացմունք չարժեպուց շատ հեռու է, որովհետև մեզ համար դա մի ծանօթ, համարեա անցնող մտաւոր

շրջան է: Այն, ինչ թիւրքահայերն այժմ են սկսում, այսինքն ժողովրդական կեանքի ուսումնասիրութիւնը, ուսանող գրական գործիչներն անում են սկսած անցեալ դարի կիսից: Թրկատենցիներ, Ջարդարեաններ, Գեղամներ մենք ունեցել ենք և ունեւք նաև այժմ, հաճ թէ ինչու սրանց գրական գործունէութիւնը մեզ համար մի նոր երևոյթ չէ համարում: Պ. Առանձարի հիացմունքը իբրև թիւրքահայի, հասկանալի է, նոյնչափ հակահայի պիտի լինի նաև մեր ուսանողներին նուազ ոգևորութիւնն այս երևոյթով:

Պոլսական և գաւառական հայ միտքն ի մի ձուլելու համար՝ ինչպէս ասացիք, պակասում են նիւթական հանգամանքներ. օտար գրական ազդեցութիւնները այդ միացումը մըտքին այս կամ այն ուղղութիւնը տալ կարող էին, բայց նրանց իրաքից անջատել երբէք չեն կարող:

Ահա թէ ինչու մենք գտնում ենք թիւրքահայերի մէջ սկսած գրական շարժումը խիստ ուրախալի, բայց նրա յարատեւութիւնը և արդիւնքը կարծում ենք կախուած է մեծաւ մասամբ քաղաքական պայմանների հրենարար և մօտիկ փոփոխութիւնից: Այլապէս այդ շարժումն էլ նոյն վախճանը կ'ունենայ, ինչ վախճան ունեցաւ Խրիմեանի ձեռքով սկսածը Վանում և Վարազում:

Թիֆլիս, 16 յունուարի 1903 թ.:

«Մուրճ» ամսագրի նույնիմանի համարում մի քանի խօսք էր նուիրուած Բագուայ նահանգական դատարանում անցեալ տարուայ հոկտեմբերի երեքին քննուած իմ և պ. Չագիրդանեանի գործի առիթով, և մի շարք եղբակացութիւններ էր արուած իմ գործունէութեան մասին՝ այդ գործում վկայ երդուեալ հաւատարմատար պ. Պապաշանեանի և այլոց տուած ցուցմունքներէ հիման վրայ: Արդարութիւնը վերականգնելու համար հարկ եմ համարում յայտնել, որ միջնորդ պատուոյ դատարանը հինգ անձինքներէց բաղկացած, ասանուչորս նիստ ունենալուց յետոյ միաձայն վճռեց բարոյական խնդիրները իմ օգտին, և իմ գործունէութեան մէջ իբրև կառավարիչ Չագիրդանեանի գործերի՝ զեղծումի մի նշոյլ անգամ չը գտաւ: Անցեալ տարուայ մայիսի 17-ին ես տպագրեցի մի նամակ, ուր յայտնեցի, թէ ես առաջին օրէց պահանջում եմ պատուոյ դատարան, բայց հակառակ կողմը հրաժարուած էր, ես նոյնը կրկնեցի յուլիսին «Новое Обозрение» թերթում: Վերջապէս ինձ յաջողուեց ստիպել համաձայնելու միջնորդ դատարանի՝ միմիայն շնորհիւ մեծ. պ. Մարկոս Գոլուխանեանցի, որին ես դիմեցի պ. Յով. Ալիխանեանի միջոցով: Այս վճռից սակայն ես զոհ չէի և զեկտեմբերի 31-ին «Бакы» լրագրում տպագրեցի մի նամակ, որով դարձեալ իրաւունք եմ տալիս պ. Չագիրդանեանին դիմելու պատշաճաւոր իշխանութեան, եթէ այս վճիռը բաւականաչափ չէ համոզել նրան իր սխալները: Պ. Պապաշանեանը պատմել էր դատարանում (իմ բացակայութեան ժամանակ), որ ես զնել եմ կալուածք իմ անունով Չագիրդանեանի փողերով, բայց պատուոյ դատարանում պարզուեց, որ առաջին օրուանից Չագիրդանեանը ինձանից զբաւոր ապացոյց ունէր, որ կալուածքը նրանն է (պ. Մելիք-Նուբարեանի ցուցմունքը), որ մեր մէջ դժգոհութիւններէց շատ առաջ երկու անգամ КУПЧАЯ էր տուած Չագիրդանեանին և որ բոլոր գրքերում կալուածքը Չագիրդանեանցին էր յիշատակած: Պ. Պապաշանեանը սակ էր, որ ես մէկ միլիոն պարտք էի աւելացրել՝ ծածկելով, որ մէկ միլիոն պարտքի դէմ երկու միլիոնից աւելի ծախս է եղել գործերի վրայ, և պատուոյ դատարանը այս խնդիրը ևս դուրս չպրտեց մեղադրանքներէ ցուցակից, թէպէտ նա պարտական էր ուղղակի ասելու, որ այս մեղադրանքը ևս ուրիշ շատերի պէս անբարեխիղճ գրպարտութիւն էր: Բայց ամենից հետաքրքրականը պ. Պապաշանեանի ցուցմունքի այն մասն է, թէ ես հաշիւ չէի տալիս, և նա իբրև բարեկամ համոզում էր ինձ: Բայց այս տեսակ կառավարչին վերաւորել չէ հարկաւոր, այլ զատի հրաւիրել և ուրիշ ոչինչ: Հաշեւտութիւնից ի հարկէ ես չէի կարող հրաժարուել, բայց կանուխ էի համարում և ասում էի, որ մի քանի ամսից յետոյ պատրաստ կը լինի: Ես մտադիր էի հաշիւները յանձնել, երբ Պապաշանեանը պատկուած վերջացած լինէր Չագիրդանեանի դատեր հետ:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

ԱՍՏԲԱՆԱՆ.—Հանգուցեալ Գաբրիէլ Միրզոյեանցի յիշատակը յարգողներինց ստացուած 10 ր.—ով «Մուրճ» կ'ուղարկուի Հաւաքարի էժանդին գրադարան-ընթերցարանին:

ԲԱԳՈՒ. ԲԺ. Գ. Ա.—Ձեր նուիրած 10 ր.—ով ամսագիրս կ'ուղարկուի Եալաա, Նիկ, Այգ, ուս. հ. աշակերտներին:

» Ինժ. Մ. Տ.—Ձեր նուիրած 30 ր.—ով ամսագիրս կ'ուղարկուի.

1) Գանձակի Արհեստ. ուս. հ. աշակերտներին, 2) Թիֆլիսի էժանդին գրադարանին եւ 3) ժընեւի հայոց գրադարանին:

Վ. Ա. Գ. Ի. Կ. Ա. Վ. Ա. Չ. *—Ստացուած է 10 րուբլի՝ ամսագիրս տեղիդ հայ զինուորներին ուղարկելու համար:

ԳԵՐԲԵՆԳ. պ. Յ. Բ.—Ձեր գրադարան ընթերցարանին չենք կարող ձրի «Մուրճ» ուղարկել. շատ դիւզերից, գրադարան ընթերցարաններից եւ ուսանողներից դիմում են նոյն խնդիրքով: Խմբագրութիւնս գոհացում կը տայ այդ խնդիրներին, երբ իր տրամադրութեան տակ կ'ունենայ յատուկ այդ նպատակով ուղարկուած գումարներ:

ԹԻՖԼԻՍ. պ. Տ. Յ.—Հանգուցեալ Յովնանէս Մուսինեանի յիշատակին կ'ուղարկուի «Մուրճ» Մոսկուայի հայ ուսանողութեան:

Ի Մ Բ Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Ի Յ

Բանալով «Մուրճի» նոր շրջանի երբորդ տարուայ բաժանորդագրութիւնը՝ մենք դարձեալ յիշեցընում ենք ընթերցող հասարակութեանը, որ մեկենասներին յուսով լուրջ գրական ձեռնարկութիւն պահպանել մեզանում անկարելի է, եւ ինքը ընթերցող հասարակութիւնը պէտք է աջակցէ՝ նիւթական հնարաւորութիւն տալով հաստատ հոգի վրայ գնելու մեր միակ ամսագրերի հրատարակութիւնը: Երկու տարուայ փորձը ցոյց է տալիս մեզ, որ առնուազը հարկաւոր է ունենալ 1 0 0 0 բաժանորդ՝ ծախքերի ծայրը ծայրին հասցնելու համար:

Յանկալի է, որ մեր բաժանորդները մտածէին նաև խմբագրութեան յարմարութիւնների մասին եւ շտապէին՝ սրբան կարելի է շուտ նորոգել իրանց բաժանորդագրութիւնը: Դրանից շատ բան է կախուած:

Բ Ա Յ Ո Ւ Ա Ծ Է 1903

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄՈՒՐՃ

Գ Ր Ա Վ Ա Ն, Հ Ա Ս Ա Ր Ա Վ Ա Վ Ա Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(նոր շրջան, III-րդ տարի)

Խմբագրութեան անդամների եւ աշխատակիցների նոյն կազմով:

1903 թւականին «Մուրճում» սպուկըու է ի միջի այլոց Ա. Ահարոնեանի մի նոր սեծ վէպ՝ «ՄԲԿԻ ՍՈՒՐԲԸ», շարու-նակուկըու է Լէօի «ՀԱՅՈՑ ԳՐԱՎԱՆՈՒԹԻԻՆԸ», թարգմանուկըու են Ա. Ըօլլէսի «ՀՐԱՇԱԼԻ ԴԱՐԸ» և Զօլայի վերջին՝ «ՃԸՇ-ՄԱՐՏՈՒԹԻԻՆ» վէպը:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը՛

Ռուսաստանում տարեկան 10 ըուք.	Արսաստանում	12 ըուք.
" կէս տարին 6 " "	" "	7 " "
" 1 ամսուան 1 " "	" "	1 " 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է բաժանորդ գրուել.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձաւձաւաձեան փողոց, տ. № 16):

Պայտուրեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлис, въ редакцію журнала „МУРЧЪ“.

Արսաստանից՝ Tiflis, Rédaction de la revue „MOURTCH“.

Բացի այդ, «Մուրճին» կարելի է գրուել նաև՝

Թիֆլիսում—«Գուտենբերգ» զրաւձաւաւանոցում:

Ծանօթութիւն. Ռուսաստանի բաժանորդներին նրանք, որոնք դժուարա-նում են տարեկան բաժանորդագինը (10 ռ.) վճարել միտնուակ՝ կարող են տալ մ ա ս - մ ա ս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.:

Ոչ-Թիֆլիսի բաժանորդները հասցէն փոխելու համար պէտք է ուղարկեն 40 կոպ.:

Չեռագիրները և նամակները պէտք է ուղղել խմբագրու-թեան, Լեհոն ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով:

„Մ Ձ Ա Կ“

Լ Ր Ա Գ Ի Ր Ը

1903 թվին

12	ամսուանը	10	բուրլի
11	»	»	»
10	»	9	»
9	»	8	»
8	»	»	»
7	»	6	»
6	»	»	»
	Մնացածները ամսական	1	»

Եւրոպայում՝ 30 ֆր., Ամերիկայում՝ 6 դոլլար, Պարսկաստանում՝ 10 ր.:
 Հասցէն՝ Тифлисъ. Редакция. "Мшакъ".

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ“ Ի

1903 տարւոյ

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ.—«Բազմավէպ»ը օրէ օր կը ձգտի ըլլալ զուտ ժողովրդական-գրական թերթ մը. իր նպատակն է ազգային գրականութիւնը ժողովրդականացնել:
 Պարսկահայք և Ռուսահայք կրնան ղիմել մեր Ռուսաստանի գործակալներուն.

ԹԻՖԼԻՍ.—M. Kaloust Kaloustian TIFLIS
 ՌՈՍՏՈՎ.—M- Michel de Roman Timindjian ROSTOFF
 (Sur le Don)

ՊԱԳՈՒ.—M. Grégoire Ter-Ovanessian BAKOU
 Մեր հասցէն է „Pazmaveb“ (St.-Lazare) VENISE (Italie)
 ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Ս. Ուղղակի մեզ ղիմող բաժանորդները Բաժնեգէլնը Կանխիկ պէտք են վճարել. հակառակ պարագային չեն կրնար թերթս ստանալ:
 Բ.—Ոչ ապահովագրեալ թերթ մը բաժանորդը չ'ստանալուն՝ կրկին յղելու պարտական չենք:
 Գ.—Ապահովեալ թերթը պարտական ենք անպատճառ բաժանորդին հասցնել:

Գ.—Բաժանորդ մը իր թերթը կորսնցրնելուն՝ զըրանով իսկ չենք կրնար տրիշ մը յղել, վասն զի ամբողջ տարեկան «Բազմավէպ» մը կը փճանայ:

Ե.—Բաժանորդն իր սուփրական հասցէն տարեղիսէն վերջը փոխելուն պարտական է 50 ամսօրմ յղել:

Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի⁶⁶

1903

Ձատկէն առաջ կը հրատարակենք «Գեղունին» միևնույն ծաւալով և փոխանակ 6ի, 10 թերթ միասին կազմուած և հիանալի կողքով: Խմբագրութիւնս և տպարանի վարչութիւնն այս տարուան «Գեղունին» զերազանցապէս չքեղ նախանձելի ընելու համար առեն ճիշտ սկսած են թափել: Թերթը ճիշտ պայմանաժամուն լոյս կը տեսնէ: Յօդուածները և պատկերները զուտ ազգային են. «Գեղունին» պիտի ծառայէ զրական և զեղարուեստական թանկացին յիշատակարան մը մնալու:

«Գեղունի»էն պոյայցած մարտը հասցիքին կէտը՝ զարձեպ ազգային սրբերու և աղբատներու կը յատկացրնենք:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Բազմավէպ (առանձին) Գեղունի (առանձին)		
Ոչ ապահովադրեալ	10 ֆր.	12 ֆր.
Ապահովադրեալ	13 »	
Բազմավէպ Գեղունի միասին		
Ոչ ապահովադրեալ	15 ֆր.	
Ապահովադրեալ	18 ֆր.	

ОТКРЫТА ПОДПИСКА на 1903 ГОДЪ
(III ГОДЪ ИЗДАНІЯ)

на газету

„НЕФТЯНОЕ ДѢЛО“

Издание Совѣта съѣзда нефтепромышленниковъ въ Баку.

Выходить 2 раза въ мѣсяць

Подписная цѣна съ доставкой:

на годъ 10 руб., на 6 мѣсяцевъ 6 руб., на 3 мѣсяца 4 руб

Подписка принимается въ г. Баку, въ редакціи, въ помѣщеніи Совѣта съѣзда нефтепромышленниковъ.

Объявленія принимаются тамъ-же.

Открыта подписка на 1903 годъ

на общественн.-литературную и политическую газету

“Б А Қ У.,

съ обширнымъ нефтянымъ отдѣломъ.

Съ пересылкой: на годъ 8 р. 50 к., 11 м. 7 р. 50 к., 10 м. 7 р., 9 м. 6 р. 50 к., 8 м. 6 р., 7 м. 5 р. 50 к., 5 м. 4 р. 50 к., 4 м. 4 р., 3 м. 3 р., 2 м. 2 р. 50 к., 1 м. 1 р. 50 к.

За границу: на годъ 15 р., на полгода 8 р.

Подписываться можно на все сроки, на иначе какъ съ перваго числа каждаго мѣсяца.

За перемѣну адреса просить высылать 5 семикопѣчныхъ марокъ.

Допускается разсрочка подписныхъ денегъ на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится не менѣе 4 р. 50 к., а затѣмъ 15 февраля и 15 марта по 2 рубля.

Допускается разсрочка и на болѣе льготныхъ условіяхъ, но по соглашенію съ конторой редакціи.

Годовые подписчики на 1903 годъ въ 1902 г. получаютъ газету безплатно со дня подписки.

Подписка принимается въ г. Баку, въ конторѣ редакціи (Парацетъ, домъ Степановой).

Редакторъ-издатель А. Н. Лавровъ.

Открыта подписка на 1903 годъ

НА ЕЖЕДНЕВНУЮ (не исключая понедѣльниковъ) ГАЗЕТУ политической и общественной жизни и литературы

„Бакинскія Извѣстія“.

Подписная цѣна: съ доставкою въ Баку и пересылкою въ другіе города на годъ—7 р., на 6 мѣсяцевъ—4 р., на 3 мѣсяца—2 р. и на 1 мѣсяць—1 руб. Подписчики на 1903 г. получаютъ газету въ 1902 г. со дня подписки безплатно.

Такса за объявленія: За строку петита или мѣсто занимаемое ею впереди текста—10 к., а позади текста—7 к. Многократныя объявленія по соглашенію.

Редакція и контора: Баку, пассажъ Шагиданова.

ОТКРЫТА ПОДПИСКА

на еженедѣльную газету

„АРГОНАВТЪ“

Газета выходитъ подѣ новой редакціей.

Условія подписки.

Годовая плата для городскихъ подписчиковъ—5 руб., для иногороднихъ—7 руб. На полгода: для городскихъ—3 руб., для иногороднихъ—4 руб.

Отдѣльные №№ по 15 коп.

Бывшіе подписчики газ. „Аргонавтѣ“, внесшіе плату за 1902 г., будутъ получать возобновляемое изданіе до 15 іюня 1903 г. Тѣ изъ нихъ, которые пожелаютъ получить „Аргонавтѣ“ до 1 января 1904 г., вносятъ дополнительно 3 рубля.

За объявленія взимается: за строку петита на послѣдней страницѣ 10 коп. Годовыя объявленія со значительной скидкой.

Подписка и объявленія принимаются: 1) въ редакціи „Аргонавтѣ“ (Сергіевская, д. № 2) ежедневно отъ 10 до 2 ч. 2) въ Центральной книжной торговлѣ (Головинскій, д. Мириманова) и 3) въ табачномъ магазинѣ „Гаванна“ (Головинскій, д. 3). Иногородніе адресуютъ: Тифлисъ, редакція „Аргонавта“.

Փակվանկիւնը պատասխանատու խմբագիր՝

Յ. ՍՊԵՆՏԻՆՔԵՆ

Հրատարակիչ՝ Գ. Կրասիկովկեան

19. **ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.** — Արեւելյու վերաբերմունքը վերին «բարերարները». — Հարստութեան հասարակական ծաղուցումը. — Հասարակութիւնը բարոյական իրաւունք ունի բարեգործութիւն պահանջելու հարուստներից. — Իրանց եկամուտի որ մասն են նուիրում մեր բարեգործները. Նիւթական ոչժի հասարակական սանձահարումը. — Մայրենի լեզուի նշանակութիւնը ժողովրդական զպրոջներում. — Պարբերական մամուլի հարիւրամեակի Ռուսաստանում, *Ղեւոն Սարգսեանի*

Ֆինանսների միջնադրի զեկուցումը. — Կոր հայերէն թերթ. — Հայոց հոգեւոր վարչութեան դատը 194

20. **ԱՐՏԱՔԻՆ, ՏԵՍՈՒԹԻՒՆ.** — Կեանքի հակասական կազմուածքը. — Սպարտիէնիտը արմատականի փետուրներով զարդարուած. — Միշտ իր համոզմունքներին հաստատ քաղաքական գործիչը. — Ժօրէսի ձառը եւրոպական խաղաղութեան մասին. — Մակեդոնիան զիպրամատների մրցման զոն, *Լ. Ս.*

Պատրիարք Օրմանեանին սպանելու փորձը. — Կիլիկիայի նորընտիր կամոյիկոսի հաստատումը. — Ատրպատականի թեմի համար կազմուած կանոնադրութիւն: 211

21. **ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.** 220

22. **ՆԱՄՍԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.** 230

23. **ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.** 231

24. **ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ** «

25. **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.**

26. **ՅԱՒԵԼՈՒԱԾ, Ա. ԸՕԼԷՍԻ՝ ՀՐԱՇԱԿԻ ԴԱՐՐ, ԹՎԱՐԳՈՒՄԱՆ ԼԻՏԻԳՐԱԿԱՆԻ** 1—32

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ ինդրում է յօդուածագիրներից զբոյ պարզ, մտնուանդ թուերը, յատուկ սնուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի կրեսի վրայ:
2. Չընդունուած մեծ յօդուածները սրահուած են խմբագրատանը 6 տմիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները շին վերագարձնուած: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանադարձածախսը:
3. Գրուածքների վարձատրութեան շափը սրոշում է խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերադարձում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուշի» համարը շտապուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրոժեշտ է կցել տեղական պոստային գրասենեակի հաւաստագիրը (у до ст о в ъ - р е н и е), որ տմազրի համարը չի յանձնուած զանդատուորին:

Բ Ա Յ Ո Ւ Ա Օ Է 1903

Բ Ա Վ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Ո Ւ Բ Ճ

Գ Ր Ա Վ Ա Ն, Հ Ա Ս Ա Ր Ա Վ Ա Վ Ա Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(նոր շրջան, III-րդ տարի)

Խմբագրութեան անդամների եւ աշխատակիցների նոյն կազմով:

1903 թիւականին «Մուրճում» տպուեցու է ի միջի այլոց
Ա. Ահարոնեանի մի նոր մեծ վէպ՝ «ՄԲԲԿԻ ՍՈՒՐԲԸ», շարու-
նակուեցու է Լէօի «ՀԱՅՈՑ ԳՐԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ», թարգմանուե-
լու են Ա. Ըօլլէսի «ՀՐԱՇԱՆԻ ԴԱՐԸ» եւ Ջօլայի վերջին՝ «ՃԸՇ-
ՄԱՐՏՈՒԹԻՒՆ» վէպը:

Բ Ա Վ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ի Ն Ը՝

Ռուսաստանում տարեկան 10 ըուր.	Արաստանում 12 ըուր.
" կէս տարին 6 " "	" " " 7 " "
" 1 ամսուան 1 " "	" " " 1 " 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է բաժանորդ դրուել.

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճափճափճեան փողոց, տ. № 16):

Կայսրուքեան այլ ճեղերից պէտք է գրիմել՝ Тифлисе, въ редакцію
журнала „МУРՉԷ“.

Արաստանից՝ Tiflis, Rédaction de la revue „MOURTCH“.

Բացի այդ, «Մուրճին» կարելի է դրուել նաև՝

Թիֆլիսում—«Գուտենբերգ» գրավաճառանոցում:

Ծանօթութիւն. Ռուսաստանի բաժանորդներից նրանք, որոնք դժուարա-
նում են տարեկան բաժանորդադիւնը (10 ռ.) վճարել միանուգ՝ կարող են տալ
մ ա ս - մ ա ս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.:

Ոչ-թիֆլիսի բաժանորդները հասցէն փոխելու համար պէտք է ուղար-
կեն 40 կոպ.:

Չեռագիրները և նամակները պէտք է ուղղել խմբագրու-
թեան, ԼեհՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով:

ՆՈՐ ԵՐԶԱՆ

ԻՒՒ ՏԱՐԻ

ՄՈՒՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№. 2

Փ Ե Տ Ր ՈՒ Ա Ր

1903



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի:

Միքայելեան փողոց № 81.

1903

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 2

	Էջեր
1. ՄԲԲԿԻ ՍՈՒՐԲԸ, լէպ Ա. Ահարոնեանի.	5
2. ՇՈՒՇՈՒՅ—ԹԱՒՐԻԶ, ճանապ. նկատագ. քժ. Բ. Օհանեանի.	43
3. ԱՐՇԱՂՈՒՄԻՆ, վէպ յունաց կեանքից, Ե. Բենսունի, Թարգ. Յ. Արարաջեանի.	53
4. ՍԱՍՈՒՆՏԻ ԴԱԻԹԸ, Յովհ. Թումանեանի.	118
5. ՀՈԳՈՒՍ ՀՍՄԱՐ, Թիւրքահայերի կեանքից, Առանձարի	125
6. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԳԱՒԱՆԵՐՈՒՄ, Ե. Փրանգեանի	150
7. ԵՐԱԶ, Բայրօնի, Թարգմ. Յ. Մասեհեանի.	156
8. ՇՎԻՅՅԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրքաթ-Հարունի.	166
9. ՀԱՅ ԿՆՈՋ ՉԱՅՆԸ, տիկ. Հրանտշի.	174
10. ՀԱՅ. ԵԿ. ԾԽԱԿ. ԿԱՆՈՆԱԴՐ. ՆԱԽԱԳԻԾԸ, Յ. Սպենդիարեանի.	197
11. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) «Զգացմունք», խմբ. Գրիգ. Բալասեանի.—2) «Ոտանաւորներ», Լ. Բ. Նաղարեանցի.—3) «Ուսեալ պանդուխտ», Տ. Ամիրճան.—4) «Գրքացի Ստրուկներ», Յար. Եսայեանի, Տ. Յ.—1) Ruchard Hermann: «Anatolische Landwirtschaft» 2) Wilhelm von Pressel: «Les chemines de fer en Turquie d'Asie»-ի, Ե. Թ.:	
12. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ.—Մանդանէզ արդիւնաբերողների եւ արտանաւորների V համաժողովը, Յով. Կարապետեանի	231
13. ԳԵՂԱՐՈՒՆԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՅ.—«Բաղէներ եւ ազուաներ» Սոււրաթօփի.—«Բուզան» Մուրացանի.—«Կնոջ պայքարը» Զօխիելի.—«Համէտ» Շէքսպիրի.—Բեմական եւ իսկական Համէտը.—Տիկին Սիրանոյշ եւ Համէտ, Ա.	241
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Գիւղատնտեսական արդիւնագործութեան կարիքների հարցը.—Առանձին Խորհրդակցութիւն եւ նստանգական ու զատուական կոմիտեաներ.—Կարծիք յայտնելու ազատութիւն.—Գիւղատնտեսութեան յետադիմացութեան հիմնական պատճառները.—Գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքները Անդրկովկասում.—Պ. պ. Տարատրնօփի եւ Գօղիսայշվիլի զեկու-	

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.ՄՍԱԳԻՐ

№ 2

ՓԵՏՐՈՒԱՐ

1903



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի:

Միքայելեան փողոց № 81.

1903

Дозволено цензурою. Тифлисъ, 28 февреля 1903 г.

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 2

	Երև.
1. ՄՐԲԿԻ ՍՈՒՐԲԸ, վեպ Ա. Ահարոնեանի	5
2. ՇՈՒՇՈՒՑ—ԹԱՒՐԻՁ, ճանապ. նկատող. ըԺ. Բ. Օհանեանի	43
3. ԱՐՇԱԼՈՒՍԻՆ, վեպ յունաց կեանքից, Ե. Բենսօնի, Թարգ. Յ. Արարալեանի	53
4. ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՒԻԹԸ, Յովհ. Թումանեանի	118
5. ՀՈԳՈՒՍ ՀԱՄԱՐ, Թիւրքահայերի կեանքից, Առանձարի	125
6. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԳԱՒԱՌԵՆՐՈՒՄ, Ե. Փրանգեանի	150
7. ԵՐԱՁ, Բայրօնի, Թարգմ. Յ. Մասեհեանի	156
8. ՇՎԷՑՍԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրքաթ-Հարունի	166
9. ՀԱՅ ԿՆՈՋ ՉԱՅՆԸ, տիկ. Հրանդշի	174
10. ՀԱՅ. ԵԿ. ԾԽԱԿ. ԿԱՆՈՆԱԴՐ. ՆԱԽԱԳԻԾԸ, Յ. Սպենդիարեանի	197
11. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) «Ձրացմունք», խմբ. Գրիգ. Բալասեանի.—2) «Ոտանաւորներ», Է. Բ. Կարաբանցի.—3) «Ուստալ պանդուխտ», Տ. Ամիրճան.—4) «Գրքայի Ստորուկներ», Յար. Եսայեանի, Տ. Յ.—1) Ruchard Hermann: «Anatolische Landwirtschaft» 2) Wilhelm von Pressel: «Les chemines de fer en Turquie d'Asie»-ի, Ե. Թ.:	
12. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ.—Մանկանէզ արդիւնաբերողների եւ արտահանողների V համաժողովը, Յով. Կարապետեանի	231
13. ԳԵՂԱՐՈՒՆՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ.—«Բաղէներ եւ ազուներ» Սոււբաթօվի.—«Բուղան» Մուրացանի.—«Կնոջ պայքարը» Չօխվեղի.—«Համէտ» Շէքսպիրի.—Բեմական եւ իսկական Համէտը.—Տիկին Սիրանոյշ եւ Համէտ, Ա.	241
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Գիւղատնտեսական արդիւնագործութեան կարիքների հարցը.—Առանձին արհրդակցութիւն եւ նոհանդական ու զաւտական կօմիտետներ.—Կարծիք յայտնելու ազատութիւն.—Գիւղատնտեսութեան յետամնացութեան հիմնական պատճառները.—Գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքները Անդրկովկասում.—Պ. պ. Տարատրնօվի եւ Գօգիչայշվիլի ղեկու-	

ցումները.— Կովկասեան Բժշկական ընկերութեան կար-
ծիրը տեղական ինքնավարութեան անհրաժեշտութեան
մասին.— Մտքի եւ բննադատութեան ազատութիւն եւ
Վելիչիօ.— Փետրուարի 19 իրրեւ Ռուսաստանի համա-
ժողովրդական տօն.— Կոր դատաստանական կարգերի
երեսնհինգամեակը Կովկասում եւ սպասելիք դատաստա-
նական բեֆօրմներ Անդրկովկասում.— Անդիժանի Էր-
կրրաշարժի հետեւանքները, Լ. Սարգսեան 245

15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ռուս-աւստրո-ունգարական ծրա-
գիրը Մակեդոնիայի բեֆօրմների մասին.— Բուլղարիայի
բռնած դիրքը.— Միւս մեծ պետութիւնների վերաբեր-
մունքը.— Բուլղար ժողովրդի եւ մակեդոնացի յեղափո-
խականների տրամադրութիւնը.— Թիւրքիայի սպասուելի-
նունքը.— Եւրոպական հասարակութեան համեմատական
անտարբերութիւնը.— Քաղաքական ճառեր արեւելեան
հարցի մասին Բերլինում եւ Պարիզում.— Անգլիայի
այժմեան դիրքը.— Սուլթանի օրօրները Օրմանեան պատ-
րարքին.— Ռուսաստանի ազդեցութեան աճումը Պարս-
կաստանում.— Թիւրքմէնչայի դաշնագրի III-րդ յօդ.
փոփոխութիւնը, Լ. Ս.— Կառավարչական հաղորդագրու-
թիւն մակեդոնական հարցի մասին.— Զմիւռնեցի վա-
ճառական Պալեօզեանի սպանութեան գործը.— Կիլիկիա-
յի կաթողիկոսի պատրաստութիւնները Սիւս գնալու.—
Արփիարեանին սպանելու փորձը: 248

16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 259
17. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ 265
18. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ 271
19. ՎՐԻՊԱԿՆԵՐ —
20. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից զրել սյուրդ մանաւանդ թիւերը, յատուկ անուններն ու օտար բառերը, եւ թերթի միայն մի երեսի վրայ:
2. 2^{րդ} ընդունուած յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնում: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:
3. Գրուածքների վարձատրութեան շափը որոշում է խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուռնի» համարը չ'ոտացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պոստային գրասենեակի հաւաստագիրը (удостоверение), որ ամսագրի համարը չէ յանձնուած զանգատատրքին:

ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ *)

V

Գայլատուայ լճի հարաւային ծայրին ջրերն անընդհատ խաղում են դէպի ավերը և կարծր ժայռի կողւած կառարից դահալիժուում են վար ու ներքևում Ձկնգետը կազմում: Գիշեր ու ցերեկ աղմուկ է այնտեղ. փրփրուն ալիքները կարծես անկման սարսափով բռնուած՝ մռնչում են, երկնքի երեսին շփում են կաթնային ամպեր, լաց ու կականով բաժանւում են մայր լճից և դնում են Ձկնգետի կանաչազարդ ավերին պատմելու իրանց ատանդական կեանքի կսկիծը: Գայլատուայ լճի ջրվէժն է այն, որ հին-հին օրերից թափւում է, թափւում անընդհատ, քաշում իր յետևից լճի ձկնոտ ջրերը, իջնում դէպի գաշտավայրը, բայց լիճն այնտեղ է միշտ, ծփծփան ու սիրուն:

Այնտեղ՝ Ձկնգետի ավին, ջրվէժից քիչ ներքև ծերունի Գուգէն իր ջրազայն ունի: Հին է այդ ջրազայրը, այնքան հին, որ կարծես ջրվէժի դահալիժուելու առաջին օրում, առաջին ալիքի հետ այնտեղ դուրս է յցուել դեանից Ձկնգետի ավին իր ծերունի տիրոջ հետ և այն ժամանակից անխախտ մնացել: Չորս ծումուում ու մաշում պատերը կրում են իրանց մէջքին թափթփում,

*) Տես «Մուրճ» № 1.

ծակոտուած կտուրը, որի ծածկի եղեգները չորս կողմից կախկիսուել, օրօրում են, խշխշում են քամիների առաջ, ասես սգում են իրանց տակ ծուարած շէնքի ծեր օրերը: Չրաղացը մի «աչքանի» է, ճակատի պատի վրայ միայն մի հատիկ նեղ լուսամուտ ունի, այն էլ սարգի խիտ ոստայնով և ալիւրի սպիտակ փոշիով ծածկուած: Յետեւում Չրաղացը մի նաւ ունի, ներսում մի դոյգ քար, իսկ ներքեւում, շէնքի տակ մի ջրտուն, ուր անվերջ շրփոցով դառնում է բազմաթեւ փառը հն դառնում, իր դլխին թափուած ջրերը քրքրում, ալմլկում և քարը պատեցնում: Բոլորածև քարի վրայ փայտեայ փոքրիկ լեղուակը՝ «չախչակը» անընդհատ չխկչխկացնում է միակերպ ու ձանձրալի, ինչպէս ամարային տօթ օրին միջատի բզզոց:

Ամենից աւելի հետաքրքիր է Գսպէի Չրաղացի յետեւի մասը: Այնտեղ է գործում նաւը, փոքրիկ շէնքին անհամաչափ մի ահագին նաւ, որ ջրերի առաջը փակող ամբարդակից զառիվայր իջնում է վիշապի պէս և իր լայն կոկորդով ջրերի հասանքները գրկում և փառի վրայ շարում ահագին թափով: Գսպէն չի յիշում, թէ այդ նաւը ով և երբ է հաստատել այնտեղ. բայց նա հպարտ է նրա հաստութեամբ, նրա խողովակածև անցքի լայնութեամբ, ուր մարդ ի հարկին կարող է ներս սողալ մարբելու համար. նա հպարտ է ջրերի այդ անըսպառ քանակութեամբ, որ ջրվէժից իջնելով ալիք ալիքի հետ կրծում են իրար նաւի անցքի մէջ, աղմկում, ճշում, կաղկանձում և իրար յետեւից փառի վրայ ընկնում պատառ պատառ:

Գսպէն ծանօթ է Չրաղացի յետեւի ամբարդակի բարդ կազմութեան հետ. նա գիտէ ի հարկին շատացնել և քչացնել ջուրը. իսկ երբ առուն վարարում է աշնանային և գարնանային անձրևներից, երբ լճի ջուրը բարձրանալով ջրվէժը դառնում է կատաղի և սպառնում է Չրաղացին, նա գիտէ կապել զանազան անցքեր, բանալ ամբարդակի կողերը, խոտոր ճանապարհներով ջուրը

դուրս թափել և իր ջրադացն ու նաևն ազատել: Բարձր առուի ամուր թմբերի մէջ ջուրը միշտ ուռած՝ բարձրացած է, բայց այդ բոլորից Գոպէի նաւը վերցնում է այնքան, սրբան հարկաւոր է փառը դարձնելու համար, մնացած ջուրը առուի կողքի սահանքաւոր բացուածքից՝ «սաւաղից» թափւում է վար: Լաւ չի լինիլ, եթէ այդ անցքը աւելի լայնանայ, այն ժամանակ բոլոր ջրերը նաւին չը հասած՝ կը թափուեն այնտեղից և կ'երթան անօգուտ, լաւ չի լինիլ նոյնպէս, որ անցքն իսպառ փակուի, այն ժամանակ ջրերն աւելի կ'ուռեն, կը բարձրանան և ամբարդակն ու նաւը կը քշեն կը տանեն: Այդ բոլորի վրայ Գոպէն աչալուրջ կերպով հսկում է: Իր գիտութեամբ ու փորձառութեամբ հպարտ՝ Գրուպէն օրը մի քանի անգամ գալիս է գիտելու ջրադացի յետևի ամբողջ կողմը, հանդարտ քայլուածքով գնում է մինչև աւելորդ ջրերի անցքը, մինչև «սաւաղը», գիտում է, թէ չի՞ մեծացել արդեօք ջուրը, չի՞ լայնանում արդեօք այդ անցքը, պլինդ են կղերը, ապա յետ է դալիս. նայում է նաևի երկու ականջները, որոնք խորը թաղուած են ամբարդակի մէջ, մի վայրկեան կանդնում, լսում է ջրերի աղմուկը, կուսնում նայում է ջրտանն մէջ սրտացոյց փառին և երբ ամեն բան դանում է իր տեղում հաստատուն, ժպտում է գոհութեամբ, մտաբան, կոչուած ձեռներով շոյում է ձեր սպիտակ միտքը, թափ է տալիս վրայից ալրի փոշին և ուրախ սրտով գնում է իր բազարձը պատրաստելու:

Գոպէն սիրում է իր ջրադացը, իր նաւը, իր ահագին քարերը. սիրում է իր լայնաթև փառը, որ ջրտանն մէջ դառնում է անդադար խեղադարի պէս, դարկում է ալիքներին իր լայն թևերը դռում դոշումով, բայց այդ ամենից աւելի նա սիրում է չախչախը, փայտէ այն փոքրիկ լեզուակը, որ անդադար ցատկրտում է պատուոյ քարի վրայ և իր միակերպ չխչխկոցով յայանում է ձեր ջրադացդանին, որ ամեն բան կարգին է: Գոպէն իր միայնութեան ժամերին գիշերով թէ ցերեկով սիրում է

նստել և նայել չախչակի ցատկրասցին, լսել նրա միակերպ աղմուկը և հազար ու մի բաներ մտածել: Մանաւանդ ձմերային երկար գիշերները, երբ տերևազուրկ ուռիները հեծում են խաւարում չարագուշակ փոփոցով, և դրսում քամին ոռնում է ջրազացի պատերը ծեծելով ասես ապաստան է խնդրում, երբ ձիւնը թափւում է վերից, փակում ճանապարհները և Գսպէին կտրում գիւղից ու ողջ աշխարհից: Այդ ժամանակ չախչակը, այդ շարժուն փայտէ լեզուակը Գսպէի համար անընդհատ երգող, ցատկասող թռչուն է, մի ընկեր, մի խօսակից: Չախչակը Գսպէի համար նաև մի զգաստ ազատարար է. նստած է Գսպէն, նայում է չախչակին, ականջ է դընում նրա միակերպ ձայնին և կամաց-կամաց նիրհում է. փայտէ լեզուակը շարունակում է ցատկրակել քարի վրայ, շարունակում է իր համաչափ, միակերպ ներգաշնակութեամբ օրօրել ծեր ջրազացպանին, և նա քնում է, քնում է խոր ու հանգիստ:

Եւ ինչո՞ւ չը քնէ. երբ չախչակն աղմկւում է, երբ նա ցատկրտում է քարի վրայ, կը նշանակէ ամեն բան կարգին է, փառը ներքեւում պտտւում է շրփոցով, քարը վերևում դառնում է հս գառնում, ալիւրն աղացւում: Բայց ահա չախչակը լռեց, նա էլ չէ ցատկրտում, կամ ջուրն է կտրուել, կամ փառը ջարդուել, կամ փառն ու վերին քարն իրար հետ միացնող երկաթեայ ձողն է դուրս թլուռել, ջրազացն էլ չէ գործում, չախչակը լուռ է, նրա օրօրն էլ չէ հնչում քնած ջրազացպանի ականջին, և նոյն վայրկենին ծերունին զարթնում է, չռած աչքերն ուղղում չախչակին և ամեն բան հասկանում: Չախչակը Գսպէի յուշարար աքաղաղն է, որ սակայն նրան զարթեցնում է ո՛չ թէ իր երգով, այլ իր լուռութեամբ:

Քանի՜ տարիներ էր այնտեղ ծերունի Գսպէն, ջրազացի նաւից շատ ջուր էր անցել գնացել, և նրա զլխով շատ անցքեր կատարուել: Մազերը վաղուց ճերմակել էին, ինչպէս իր աղացած ալիւրը, շատ չար ու բարի էր տեսել աշխարհում, հազար ու մի մարդ ընդունել և ճանա-

պարհ գրել, նրանց պատմութիւնները, նրանց ցաւ ու հոգսերը լսել ինչպէս մի ժայռ, որի վրայ քամիները գալիս են դանդատուելու իրանց վշտերը, փսփսալու իրանց գաղտնիքները, հանգիստ փնտրելու իրանց թափառական գլխին: Այն ալեղարդ գլուխը որքան բան գիտէր, որքան փորձուած էր: Գայլատուայ լիճն այնքան գար ու փոս չունէր, Բարդողեան լեռներն այնքան խուժ ու խոռոչ, որքան Գապէն գաղտնիքներ ունէր. նա մի իմաստուն էր:

Ամեն առաւօտ զարթնում էր նա, ճռուալով բաց անում ջրաղացի ցածրիկ դուռը, անցնում նրա յետևը, բարձրանում ամբարգալի վրայ, մի քանի բուռ ջրով լուացուում, երեք անգամ խաչակնքում երեսը գէպի աղօթարանը գարձրած, ապա գալիս էր մի բաղարջ ձեռք առնում, դուրս գնում, ջրաղացի առաջի թմբի վրայ նստում, ծեր ծնօտներով դանդաղութեամբ ծամում էր բաղարջը և նայում հեռուն, գէպի գիւղը տանող ճանապարհը: Եւ երբ նըշմարում էր որևէ շարժուն ստուեր, ձեռքը ճակատին էր դնում, աչքերի վրայ հովանի անում սրոշելու համար, թէ եկողն ո՞վ է, ցորեն է բերում արդեօք:

Եւ այսպէս ապրինէր:

Այն առաւօտ սակայն, ծերունի Գապէն պարապ չէր. նա գիւղին չէր նայում, ցորենի չէր սպասում, որովհետև ջրաղացի քարը պէտք էր սրել: Նախորդ երեկոյ ջրաղացաւորների հետ նա քարը շուռ տուեց և այժմ հազիւ նախաճաշը վերջացրած՝ ծեր մէջքով կուացել է մեծ քարի վրայ, հաստ մուրձով թակում է հն թակում քարի կարծր երեսը և փոքրիկ խորա ու բորդեր պարաստում, որ դառնալիս հատիկները լաւ փշրի. նա զարկում է և կրդում:

«Էս սարերում, ճանապարհից քիչ հեռու
Մի եղջերու մրմնջում է, հառաչում
Ծանր ցաւից, մի վիրաւոր եղջերու
Էս սարերում, ճանապարհից քիչ հեռու»:

—Բարի լոյս, Գոպէ ամի:

Մերունին երգն ընդհատեց և դլուխը բարձրացրեց. նրա առաջ կանգնած էր Ասօն:

—Աստծու բարին, Ասօ, խէրով եկար, լաւ միտգ բերիր Գոպէին:

—Էդ դու ես երգում ամեն օր եղջերուի երգը էլի, լսում եմ էէ, Գոպէ ամի, սարի յետեից լսում եմ. էս օր էլ լսեցի ու եկայ. ստացի՞ դնամ տեսնեմ ի՞նչ է անում Գոպէ ամին:

—Էհ, որդի, դէ մենակ եմ չօլի մէջ, ինձ համար մնումում եմ. դիտես, սրդի, երբ մարդ երգում է, իր ձէնն իր ականջն է ընկնում, թւում է, թէ էլ մենակ չի, մօտը ուրիշ մարդ կայ, սիրաը մխիթարում է: Մենակ եմ է է, Ասօ, դու էլ շուտ-շուտ չես դալիս, սր խօսե՞նք, սիրաս բացուի. թէ ջրաղացաւոր կայ, հօ լաւ է, թէ չը կայ, աշնանն ընկերները կորցրած, ուշացած կռունկի պէս կղզում եմ և մենակ թառում այ էն թմբի վրայ. մենակութիւնը ցաւ բան է:

—Քեզնից աւելի մենակը կայ:

—Ինձանից մենակը թող գուշմանս չը լինի:

—Ապա վիրաւոր եղջերուն:

—Հն, իրաւ է Ասօ, մարդու սիրտ մնումում է. տես ի՞նչ է ասում երգը. —«վիրաւոր եղջերուն լեռներն ընկած մրմնջում է, հառաչում». ավսր էլի Աստծու աշխարհին է, ցաւ է զգում, մեղք է. էհ, սրտորդութիւնն անողորմ բան է:

Ասօն նստեց քարի վրայ, գլուխը քաշ դցեց ու լսեց:

—Գիտես, Ասօ, մեր պապերը զօր չեն ասել, սր աշխարհում երեք տեսակի աններելի մեղաւորներ կան: Մէկ ձուկ բռնողները, մեղք բան է, ինչ ուզում ես ասա, խեղճ ձկնորին հանում են ջրից, զցում գետնին թրփրատով, մինչև մեռնեն: Մէկ էլ քար կործակերը, որ էն սիրուն քարափները փշտում, ջարդում են. մէկ էլ կեանք վերջացնողները, սր հաւքերի, անասունների, մարդկանց ազիզ արեւները խաւարեցնում, ջնջում են ի-

բանց շահի, չարութեան համար: Խօսքս մեր մէջը մնայ, սրգի, հէնց սրա համար է, որ իմ ու քս աներով Նաւօի ջուրը մի առուով չի գնում: Անողորմ մարդ է տնաքանդը, նա հօ մենակ ձուկ չի բռնում, ինչ ձեռքն անցնի, կը խեղդի, խոկ և խոկ դազանի պէս: Ես հէչ չեմ մոռանայ, դեռ շատ ջահիլ էինք, մի անգամ նրանց կատուն մի փոքր կարագ էր կերել, փախել մտել ծախքի տակ, Նաւօն յետեն էր ընկել, գիտե՞ս ինչ արաւ— վերցրեց շամիրըը դրաւ կատուի մէջքի վրայ, սյորեց, մազերը կաշխառն փաթաթուեցին երկաթին, անաստուածը դուրս քաշեց շամփուրը, կատուին ծէրին փաթաթած բարձրացրեց ու թափով գետին դարկեց, խեղճ կենդանին ո՛չ տուեց, ո՛չ առաւ, ճչաց ու սատկեց: Ձէ, անողորմ մարդ է Նաւօն, էհ, Տէրն իրան հետ աղջիկը լաւ աղջիկ է, Շողերն իր թայը չունի: Հը, դու սոյն ասա, ախպօր տղա, հարստ-նիքիդ ալիւրը երբ ենք աղում, տես, քարը սրում եմ:

— Հարսանիքիս ալիւրը... երբ որ եղջերուն կ'ընկնի արնաքամ, տառապած գլուխը կը գնի լեռնալանջին և աշխարհի դարդ ու ցաւից կ'ազատուի:

Գսպէն մուրճը դարկում էր քարին թրը՛խկ, թրը՛խկ, նա կարծես չը հասկացաւ կամ չը լսեց Ասօին:

— Գիտե՞ս, Ասօ, սղորմած-հոգի հօրդ հարսանիքի ալիւրն էլ էս քարերն են աղացել. ինչ ժամանակ էր, ի՛նչ օրեր էին հոս. հազար օղորմի քեզ, Մուրսնդ, ախպէր չունէի, Մուրաբն ախպօրից լաւ էր. երբ Գրքօին, քս մեծ ախպօրը էն սւեր պատահեց, խեղճ մարդի մէջքն ասես կոտրեցին. կը դար, ժամերով կը նստէր սոյ էն թմբի վրայ, կը նայէր հեռուն ու կ'ասէր. — ախպէր, էլ չեմ ապրի, ֆալագը մէջքս ջարդեց, չեմ ապրի. կ'ասէի՝ սիրտդ լէն պահիս, ախպէր, ախր Ասօն կայ, տղամարդ չէ՛ մի Սիս-Մասիս, Աստծու գէմ մի տրտնջալ էդքան, Ասօն մենակ մի տուն է. — Հո՛, իրաւունք ունիս, Գսպէ սխպէր, ամա էլի սիրտս ասում է՛ չեմ ապրի, ջիգեարի մըր-մուռը գուլում բան է: Ասածն էլաւ, գնաց մարդն էլի,

չապրեց ու դադեց, դադեց ինձ. ի՞նչ ընկերներ էինք, ինձանից շատ փոքր էր, բայց սրտակիցներ էինք:

—Ասւ ընկերներ էիք... կրկնեց Ասօն մեքենայաբար, կարծես չէր լսում: Գոպէն էլի մուրճով զարկեց ու շարունակեց.

—Հողին սաղիս ձեռքս բռնեց, աչքերիս նայեց օդորմածը երկար-երկար, ախպէր՝ սոսաց, իմը չ'էլաւ, էս աշխարհից ես բան չը հասկացայ, ամանաթ իմ Ասօն քեզ, աչքդ վրան պահիր, հօ տեանձում ես, շուխ սոգայ է, աշխարհում չարը շատ է. մէկ էլ, ասաց, Շողերը իմ հարսն է, թո՛ղ իմ հարսն էլ մնա, թո՛ղ Ասօն առնի:

Վերջին խօսքերի վրայ Ասօն մի անհանդիստ շարժում արեց՝ կարծես մի անախորժ միտք հեռացնելու իր գլխից, ձեռքը ճակատը տարաւ և աւելի մուայրուեց:

—Զօրանաս, որդի, շարունակեց Գոպէն, հօրդ վերջին սուրբ կամքը կատարեցիր, դէ ես էլ աչքս ինչ վրադ պահեմ, Աստծու աչքն է վրադ, բոյ ու բուսաթիւղ նայելիս՝ խեղքս գնում է, օդորմածին եմ յիշում: Ախ, երանի թէ կենդանի լինէր, Ասօ, հարսանիքդ էլ տեսնէր դոնէ, ու յետոյ թող Աստծու կամքը լինէր: Է՛հ, ո՞վ է հասկանում երկինքի բանը, երբեմն մենակ մնալիս նայում եմ էս քարին, նա դառնում է, չորս կողմն ալիւր փչում, ու ես մտածում եմ: ասում եմ, Տէր-Աստուած, միևնոյն քարը ալիւր է աղում կնունքի համար, յետոյ հարսանիքի, յետոյ էլ թաղման. ախր ինչո՞ւ համար է բոլորը, թէ կնունք կայ, էլ ի՞նչ թաղում: Թէ թաղում կայ, էլ ի՞նչ կնունք, ինչո՞ւ էնքան սրտեր ցաւոտ, սևատ, էնքան հոգիներ դալուած, մարմոքուած. իսկ քարը դառնում է հն դառնում, օրերն անցնում են իբար յետևից: Է՛հ, ո՞վ է հասկանում երկինքի բանը: Բայց էլի փառք Նրան:

—Հէ՛չ էլ չէ, երանի թէ երբէք ծնուած չը լինէինք:

Գոպէն մուրճը վար դրեց, գլուխը բարձրացրեց և իր թաւ, ճերմակ յօնքերի տակից ուշադիր հայեացքով նայեց իր խօսակցին.

—Ասօ:

—Ի՞նչ է, Գոպէ ամի:

—Ի՞նչ ունիս, սրգի:

—Վիրաւոր եղջերուն ի՞նչ ունի:

—Վիրաւոր եղջերուն... կրկնեց Գոպէն, գլուխն օրօրեց, ձեռքը խառնեց թանձր միրուքի մէջ, ապա մուրճն առաւ և շարունակեց զարկել քարին:

Ասօն էլ լուռ էր երկար ժամանակ:

—Գոպէ ամի:

Ծերունին գլուխը բարձրացրեց:

—Գոպէ ամի, դու սրբան ծեր ես, տես մազերդ, ի՞նչ ճերմակ են:

Չարմացած ծերունին նայում էր և կարծես ոչինչ չէր հասկանում. ապա միրուքը շոյեց՝ ասես համոզուելու համար, թէ ինքն իրաւ շատ ծեր է:

—Գու նոյգքան ծեր ես, Գոպէ, և սասում են՝ չես ամուսնացել երբէք:

—Հո՛, չեմ ամուսնացել երբէք:

—Ինչո՞ւ:

Գոպէն դարձեալ լռեց, գլուխը կախեց, մի րոպէ յետոյ ասաց.

—Ի՞նչ է պատահել քեզ, տղա՛, գիշերը վատ երազ հօ չե՞ս տեսել:

—Երան՞գ... չէ, տեսածս երազ չէր, ամի, տխ, բաց աչքով տեսայ, բաց աչքով:

—Ո՞ւմ, ինչը:

—Իմ սրտորգին, ամի, սրի նետը սրտիս գիպաւ: Ասօի ձայնը դողաց, նա գլուխը քաշ գցեց և նայում էր մի կէտի:

—Ասօ, ի՞նչ ունիս:

—Ոչինչ, ես ոչինչ չ'ունիմ, հէնց այնպէս... ինչո՞ւ դու չես ամուսնացել:

—Չեմ ամուսնացել, ի՞նչ պէտք է քեզ իմանալ՝ թէ ինչո՞ւ:

—Ես էլ չեմ ուզում ամուսնանալ, քո օրինակին եմ հետևում:

—Ասօ, Ասօ, այդ ինչ ասացիր, հօրդ կաակը, Շո-
ղերը, մայրդ... քեզ ինչ է պատահել, որդի:

—Ոչինչ, տեսնում ես, աշխարհում պատահում է
այնպէս, որ մարդիկ չեն ամուսնանում, օրինակ դու:

—Է՛հ, իմն ուրիշ եղաւ, որդի, ուրիշ եղաւ, եաման
բան էր: Գոպէն դուրս քաշեց դօսկից շիրուխը, լըց-
րեց, վառեց և ծխել սկսեց. մի քանի անգամ իրար
վրայ հաղաց ու շարունակեց. —եաման բան էր, որդի,
քանն ուրիշ է. ինչ որ ինձ եղաւ, թող Աստուած էլ ոչ
մի ազամորդու չը սայ երբէք. վառեց սիրտս է՛, վա-
ռեց: Ամուսնացիր, որդի, նշանուած ես, ամուսնացիր,
լաւ բան չի լինի, խեղճ Շողեր, ջրատար Նունուֆար:
Ասօ, ես տեսնում եմ, դու էլ չես ուզում նշանածիւ,
նայիր ծեր ալիքներիս, հաւատո՛ւ, որ լաւ բան չի դուրս
գայ. ջահիլ սիրտը երկու անգամ չի կարող փշրուել,
այդ շատ է: Ես հօ լացեցի՛, քանի տարի է, գեռ մըղ-
կրտում եմ: Ծերունին հեկեկաց, ասես կրճքում կու-
տակուած մի հին ցաւ քանդուում էր, և յորդ արցունք-
ները թափուում էին ճերմակ միրուքի վրայից:

Ասօն նայում էր և ինքն իրան ասում մեզմիւ.

—Նեար գիպաւ եղջերուին, խեղճը փախաւ սա-
րերն ընկաւ ու ամեն տեղ իր հետ տարաւ մահացու
վէրքը:

—Ասօ, ասա արցունքներս, հո՛ւ՛ւ, քանի՛ տարի է,
խիղճս սուած է ցաւով, սիրտս լեցուն է արցունքով, այս-
քան տարի միայնութեանս մէջ թափում եմ թափում, և
չի սպառուում: Յաւիս փոսն այնքան խորն է, որ ինչքան
էլ քամեմ, էլի շատ կը տանեմ գերեզման. հին վիշտը
ծեր, սև ագռաւի պէս կրճքիս տակ նստած անո-
ղորմ կերպով կացում, կրճում է սիրտս և գեռ չի վեր-
ջացրել. դու վիրաւոր եղջերո՛ւ ես... օճֆ. իսկ ես...

—Գոպէ՛ ամի, ներիր ինձ, ես քեզ մօտ եկայ ու-
ռած սիրտս դուրս թափելու, իսկ դու լալիս ես, ես քեզ
ցաւեցրի:

—Թո՛ղ լամ, զաւակս, վնաս չ'ունի. նայիր հեռուն,

նայիր էն ջրվեժին, որ ազմուկով թափուում է լճից վար, մի օր այն ջրերը իրանց փրփուրէ պատանի մէջ փաթաթած մի աղջկայ գիտակ բերին գէպի իմ ջրազայը թաւալ-թաւալ, և այն աղջիկը ինձ էր սրտահանում... իմ նշանածն էր... — Նա ձայնը ցածրացրեց. — իմ կինն էր, Ասօ. քո հասակին էի, երբ սիրեցի նրան, օ, ինչպէս սիրեցի. իմ սիրտը կպաւ նրան ինչպէս պատուտակը ծառի բնին. նրան նույնիսկ հոգիս այնպէս էր բացուում, ինչպէս ծագիկ կուկան, որ փթթում է արեւի վազորգեան ատաղին շողերով. ևս գիշեր ցերեկ հետեւում էի նրան, լեռներում և դաշտերում նրա կոխած տեղերից քայլում էի, բնկերը փնտրող այծեամի պէս խոտերն ու ծագիկները հոտտակով կարտազնում էի նրան գանել: Երբ հեռուից տեսնում էի նրա հրեշտակային պատկերը գաշտելու, ձորերում, շնչարգել հեռում էի բորբոքուած հայեացքս գէպի նա ուզված և զայրանում էի, որ բոլոր ծագիկները, բոլոր խոտերը չեն թեքում գէպի նրա շարմաղ երեսը, ինչպէս արեւածաղիկը գէպի արեւ: Նա կարծես բռնած տանում էր իր ձեռների մէջ իմ սիրտը, ինչպէս մանուկը տանում է թակարդով բռնած թռչունը, ուզէր, կըծղմէր, արիւնքամ կ'անէր, ուզէր կը փայփայէր, կեանք կը տար: Եւ այն հրեշտակն իմն էր ամբողջապէս, իր մտքերով, հոգով, մարմնով, իր ամբողջ էութեամբ, նա իմն էր, ինչպէս իմն է այս գժբազգ, փշրուած սիրտը, որ գեռ թպրտում է չորացած կրճքի տակ, նա իմն էր, և ես նրան էի, և մենք Մրրկի սրբի առաջ ուխտեցինք մեր կոտորած բազդերը երբէք չը բաժնել իրարից: Եւ այլքան երջանկութիւնն անողորմ ձեռքով փշրուեց... Հայրը... օճֆ, դարձեալ օղորմի քեզ, խոտտախրա մարդ. և հայրս արգելեց, հայրս չ'ուզեց, տոանց ինձ հարցնելու ուրիշ աղջիկ ուզեց ինձ, և նայն օրը նա, իմ կեանքը, իմ հոգին էն ջրվեժից վար նետուեց, Ասօ. ամօթ կար թագւցընելու աշխարհից... Եւ այն օրից, սրգի, ես ուխտեցի

այլևս երբէք չ'ամուսնանալ որևէ ուրիշի հետ, կեանքս թաղել այս ջրաղացում, քաւել իմ մեղքը, որ պատճառ եղայ նրա մահուան, և չ'ամուսնանալով՝ վրէժինդիր լինել հօրիցս նրա խօսասիրտ վարմունքի համար: Ուզում էի, որ նրա սերունդը ջնջուի: Տես, այժմ ես ծեր եմ, որդի, ծեր և մենակ աշխարհում, թէ գլուխս է ցաւում, մի խնամնա ձեռք չը կայ, որ ճակատս բռնէ, թէ արցունքներ ունիմ, տաք կուրծք չը կայ, որ այնտեղ լամ, թէ հառաչում եմ, հարազատ ականջ չը կայ, որ լսէ. և մրմնջում եմ, հառաչում, ինչպէս վիրաւոր եղջերուն լուռ միայնութեան մէջ. ես մենակ եմ և հազիւ կախուած կեանքից, ինչպէս աշնանը դեղնած՝ միակ տերևը, որ դողդողում է իր սատի վրայ, կպչում է նրան, որ էլի մի քանի օր պաշտպանուի ցրտաշունչ քամուց. ինչո՞ւ եկայ աշխարհ, ինչո՞ւ եմ գնում, չը գիտեմ: կեանքս անապատ եղաւ, սիրտս աւերակ, մահս էլ հեռու չէ: Ա՛խ մենակութիւնը լաւ բան չէ, որդի, դու էլ մեղք ես, նա էլ, այն խեղճ աղջիկը: Մի թողնիր Շողերին, զաւակս, ջահիլ սիրաը մեծ ցաւ տանել չի կարող:

—Ջահիլ սիրաը մեծ ցաւ տանել չի կարող, կրկնեց Ասօն մեքենայաբար, աչքերը դէպի անտրոշ հեռուն ուղղած:

—Եւ գնում եմ տարին մի քանի անգամ Մրրկի սրբի խաչքարի թևերից կախուում, լալիս, աղաչում եմ, որ ների իմ հօրը, ների ինձ: Հն, որդի, հին ցաւ է, բայց դեռ խեղդում է ինձ. ինձ արդելեցին, դու հօ ազնաւ ես:

—Ես ազատ չեմ, Գոպէ ամի, սիրտս է բռնուած:

—Ի՞նչ է պատահել, Ասօ:

—Ձեռ տեսնում, որ ես խենթ եմ, չէ՞ ամենքն են ասում:

—Ասօ, այդ խենթութիւնը ես հասկանում եմ. ասն, որդի, ասա ինձ, ինչ ունիս, ինչ ցաւ է կրծում քո սիրաը:

—Սրտիս վրայ ծանր դարդ կայ, դարդ սարի պէս.

լեռ ու դաշտին, սար ու քարին մաս-մաս տուի իմ դար-
դից, էլի չը պրծայ. վա՛խ, ես վառւում, փոթոթւում
եմ, մի ճար, մի հնար, Գոպէ ամի, ախր դու շատ ապ-
րած, ցաւեր տեսած մարդ ես, ախր դու էլ ծովի չափ
դարդ ես ունեցել, սրտի մրմուռ, հոգու կրակ ես տե-
սել:

—Ախր ինչ ունիս, որդի:

—Օճ, ես ամաչում եմ, եկայ քեզ ասելու, էլի ա-
մաչում եմ, գետինն եմ մտնում. դարդն ամօթից լաւ
է, Գոպէ ամի, բայց մեռնում եմ, էլ չեմ կարող, ու-
ժիցս վեր է. ես սիրում եմ մի ուրիշին, ես Շողերին
առնել չեմ կարող, չեմ կարող, չեմ կարող!

Գոպէն դուրսը քաշ ձգեց, չիբուխը գանդաղու-
թեամբ գատարկեց դեռին և նրա կոթով դեռինը փո-
րել սկսեց:

—Ես մարդով կնիկ եմ սիրում... դիտես ո՞ւմ...
Շիրինենց թաղայ հարսին, Սառային. ինչ անեմ, տեսայ,
մի անգամ տեսայ, սիրտս կպաւ: Թող աչքս քուռանար,
չը տեսնէի. ասում էին սիրուն է, շատ սիրուն, ամեն-
քնն էին ասում. ձորն իջայ գիշերով, աղբրի մօտ քարի
յետև թագ կացայ, եկաւ ջուր տանելու, երեսից կար-
միր քողը յետ դցեց, լուացուեց. Տէր Աստուած, էն ինչ
էր, խեղբս թուաւ, ստներս դողացին, գլուխս շշմեց: Էն
ինչ երես էր, շարմաղ, թշերից նուռ էր կաթում, ինչ
աչքեր, ջուրս ասողեր: Փախայ, ամի, հաւատան, փա-
խայ. ինձ թուում էր, թէ այդ պատկերը յետևս ընկած
հալածում է. փախայ սարերն ընկայ վիրաւոր այծեամի
պէս, բայց էլի չապատուեցի: Գիշեր-ցերեկ այն պատ-
կերն աչքիս առաջն է, հալածում է ինձ, Գոպէ ամի,
հեռւում է ինձ. այ, այժմ էլ եմ տեսնում, փախչում
եմ, դալիս է, ինչ անեմ, ո՞ր ջուրն ընկնեմ: Շողերն աչ-
քիս հոյ ու մոխիր է դարձել: Ասում են՝ Ասոն խեն-
թացել է, աչքով են տուել. թէ խենթ եմ, Սառան է
խենթացրել, թէ աչքով են տուել, էլի Սառան է արել,
նրա բոց աչքերը: Ի՞նչ անեմ, ախր մեղք եմ, շիվան եմ:

Գսպէն լուռ էր, նա շարունակում էր գետինը քանդել առանց վեր նայելու:

— Ասո՛ւ էէ՛, Գսպէ՛ ամի, այս չօլերում, սարերում ես մենակ՝ դու մենակ, տես, քո գուռն հմ՝ եկել, ինչ պէս կը գան սրբի գուռը, ասը մութագս, կամ առ հսգիս, էլ չեմ կարօյ, մեղք հմ, այրում հմ, վառւում հմ:

Գսպէն լուռ էր:

— Դու էլ ոչինչ չես ասում, դու, որ աշխարհի բաները գիտես, դու էլ լուռ ես. իմ ցաւը ծովի չափ է, ի՛նչ անեմ, գնամ ջրերի ամկ թաղեմ:

Գսպէն լուռ էր. նա նորից պատրաստեց չիւսիւք, վառեց, մի քանի կում ծխեց, նայեց հեռուն մտապապու շուարած:

— Քեզնից բացի ոչ ոք չը գիտէ ցաւս աշխարհում, դու էլ լուռ ես, օ՛ճ, անողորմ Գսպէ: Ես գնամ, գնամ չօլերը:

Նա վերկացաւ:

— Լսիր որդի, ճար ես փնդրում:

— Ճար, ճար:

— Մնա ինձ մօտ, ջրապայտմ:

— Քեզ մօտ ի՛նչ անեմ:

— Մնա՛ ինձ մօտ ջրապայտում մի քանի օր:

Ասօն նորից ընկաւ քարի վրայ ինչպէս արմատախիլ ծառ, ընկաւ ու գլուխը ձեռքերի մէջ աւաւ ե բարձրածայն հեկեկաց:

— Ա՛խ սիրտս, սիրտս...

Գսպէն էլ սրբեց աչքերը, նորէն մութը ձեռք առաւ, վերսկսեց ընդհատուած աշխատանքը. նա էլ չէր երգում, միայն մութի ձայնն էր լուում թրրիկ, թրրիկ, թրրիկ...

VI

Այն գիշեր Ասօն չը կար. դա սարսափի, ցաւի մի

չար գիշեր եղա՝ Նունուֆարի համար: Առաջին անգամն էր պատահում որդու գիշերային բացակայութիւնը: Սովորաբար նա գիշերները տուն էր գալիս և լուռ անկողին մտնում: մայրը խաւարի մէջ մի քանի անգամ վեր էր կենում, սողալով, շօշափելով դանում էր նրա անկողինը, լսում էր շնչառութեան ձայնը, և երբ համոզւում էր, թէ նա այնտեղ է, յետ էր քաշւում հանդըստացած:

Այսօր չեկաւ. նախրի դալուց յետոյ Նունուֆարը քանի՜ անգամ Շուշիկի հետ գուրս գնաց, գաշաի ճանապարհին աչք անկեց, Ասօն չը կար ու չը կար: Ճարը կարուած ետ եկաւ, նստեց դրանք, նայեց աստղերին, որոնք մէկիկ մէկիկ փայլեցին երկնքում, նայեց երկար և մրմնջաց.

—Օհ, անողորմ որդի, քեզ ինչ եմ արել:

Ապա ներս գնաց տուն, անկողնի վրայ կծկուեց և անխափ աչքերը դրանք յառեց:

—Մայրիկ, եղբայրս ինչն չի գալիս, ո՞ր է, հարցը՝ նում էր Շուշիկը:

—Կը գոյ գուտակս, կը գոյ, հանդիստ կաց:

Երեխան լուց և քնեց՝ գլուխը մօր ծնկանք դրած: Ձիթէ ճրագը պլպլաց, վառուեց, մարեց, Նունուֆարը նորէն ձէթ ածեց, էլի շարունակեց նայել դրանք՝ լսողութիւնը սրած, հոգին ազմկուած: Դրսից մերթընդմերթ լսում էր մի ձայն, մի խղճուկ մրմունջ. տխուր, ու բէխէր ձայն էր, լու չէր, Նունուֆարը գուռը բացեց խմանալու, թէ ինչ էր. դրան առաջ կծկուած էր մի անաէր թափառական կատու և ներս մտնել էր ուղուս: Նունուֆարը նրան վերցրեց և ներս գցեց, «վարձք է» մտածեց, ո՞վ գիտէ, թէ իմ որդին էլ այս ուշ գիշերին մի գուռ չի բացխում և ապաստան փնտրում: Այժմ տան մէջ երեք էին, ինքը, Շուշիկը և կատուն, այսպէս աւելի լու էր: Եւ մինչև լոյս պառաւը մնաց անքուն ու տանջուած, և մինչև լոյս որդին չեկաւ ու չեկաւ:

Լոյսը բացուեց և Նունուֆարը հանդիստ չ'ունէր. սարի պէս իր զաւակն էր «աւարական ջրերը» խմել, դարձել խերառ, թափառական, մայրն ինչպէս մուսնար: Գիւզն ասում է, թէ աչքով են տուել, խենթացել է, Շողերն ասել է, թէ էլ իրան չի ուզում: խենթացել է. Նունուֆարն այդ բանով բաւականանալ չէ կարող, նրան իր զաւակն է հարկաւոր, սարի նման իր զաւակը, Ա... գիւղի զարդն ու պարծանքը: Այն կապուտակից վերև հօ Աստուած կայ, Նունուֆարը էրբ խեթ նայեց, էրբ յանցանք գործեց, որ այսպէս եղաւ, այսքան սևեր, ցաւեր մէկը միւսի յետեից. ինչո՞ւ: Չէ, նա այժմ կը խնդրէ, կ'աղերսէ, կ'աղօթէ, դուցէ երկնքից մի ճար լինի: Եւ Նունուֆարն սկսեց աղօթել այնպէս, ինչպէս զգայուն մայրերը գիտեն աղօթել զաւակների, և մանաւանդ ցաւազար կամ գժբաղդ զաւակների համար: Նա սկսեց գիւղի ժամից, մի ամբողջ շաբաթ ամեն երեկոյ նրա խոնաւ յատակի վրայ տրտուեց, արտասուեց, Տիրամօր պատկերի առաջ մոմեր վառեց և կանգնած մնաց, սպասեց, որ բոլորը վառուի, ոչինչ չը մնայ: Կիրակի օրը աղքատներին հաց բաժանեց, տաք տաք հաց: Նրանից յետոյ յաջորդ օրերում գիմեց դէպի հեռաւոր ուխտատեղիները, մէկիկ-մէկիկ այցելեց շէն ու աւերակ վանքերը, եկեղեցիները, մատաղներ տարաւ, մտրթեց, բաժանեց քաղցածներին:

Ուխտերն անցօր էին, սրբերը՝ խուլ, երկինքն՝ անողորմ, Նունուֆարի զաւակը շարունակում էր մնալ թափառական: Խեղճ կինն էլ սուրբ չէր ճանաչում, նա էլ աղօթելու տեղ չ'ունէր: Բայց էլի ճար էր պէտք, ճար Ասօին վրկելու: Նունուֆարը գնաց թիղ բանալ տուեց, նրան հաւատացրին թէ գիւղում տարածուած լուրը ճիշտ է, թէ Ասօին աչքով են տուել: Նունուֆարը թոնիրը վառեց, թէժ արեց, խմորի տաաը գնդակները շարեց կողքին և նստեց բոցերի առաջ: Առաջին երեք գլնդակը ձողեցին բոցերի մէջ: Արտևանունքներն ու յօնքերը խանձելով, պառաւր քրտնաթոր հեալով նայում էր

բոցերի մէջ, իր խեղճ լսողութիւնն ուղղած և սպասում էր լսելու գնդակների պայթիւնը: Դեղին, կարմիր բոցերը խաղում էին նրանց շուրջը, թափով լիզում էին անցնում վրաներով, կրկին կռանում, գրկում, իրանց դեմնաւուն ծոցի մէջ ծածկում: Պառաւը նայում էր. գնդակները կամաց-կամաց ուռչում, գիզանում էին, պառաւն այդ տեսնում էր, նա կ'ուզէր, որ մի ուրիշ աչք էլ այդ նկատէր:

—Շուշիկ ջան, աես, այ ուռան, այնպէս չէ:

—Հա, մայրիկ ջան, ուռան, հիմա կը տրաքեն:

—Մտտալ լինիմ աչքերիդ, լաւ տեսար:

—Հա, հա, լաւ եմ տեսնում, այ էն մէկը, ամենից մեծը:

Ահա այն մէկը առանց ազմուկի, կամացուկ փլաւ, չը տրաքեց. պառաւը ծնկներին տուեց:

—Շուշիկ ջան, դու ձայնը չը լսեցիր:

—Չէ, մայրիկ, չը լսեցի, չը տրաքեց:

—Կուրանսոս, չար աչք, տէրդ մեռնի:

Ահա երկրորդը բարձրացաւ, բարձրացաւ, մօտ է պայթելու և ինչպէս կը պայթի: Նունուֆարն այս անգամ նայում է յուսով, անհամբերութեամբ. թոնրի գոյն սյրում է նրա դէմքը, քրտինքը ծորան-ծորան հոսում է խորշումած, խզճուկ այտերի վրայով, բայց նրա փայթը չէ, նա նայում է և կը նայի, եթէ մինչև իսկ դէմքը բոց կտրի, միայն թէ պայթի, բարձրաձայն պայթի, չար աչքը պատուտի. բայց գնդակը շարունակում է ուռչել ու բարձրանալ, պառաւն ականջ է դնում. ահա, ահա... հիմա կը տրաքի:

—Շուշիկ ջան, նայիր, նայիր, ինչքան ուռաւ:

Գնդակը կամացուկ բացուեց և նստեց առանց ազմուկի:

—Չար աչք, կուրանսոս, տէրդ մեռնի:

Նունուֆարը դայրացած՝ բոցերը շտաղրեց, վերջըրեց մնացած բոլոր գնդակները, և մէկէն ամեց թոնրի մէջ, դարձեալ կուացու կրակի վրայ: Բոցերը բար-

ձրրացան, ուրուեցին, կրկին լիզեցին զնգակները, իսկ պառաւը նայում էր հեալով ամբողջապէս տեսողութիւն և լսողութիւն դարձած: Գնգակներն ուռան, միթէ այս բոլորից և ոչ մէկը պայթելու չէ, որ չար աչքը տըրաքուի: Ահա այս մէկը, որ ամենից բարկ տեղումն է, մօտ է տրաքուելու. պառաւը նայում է հէնց նրան, միւսները մոռացել է, և յանկարծ նա պայթեց ահագին աղմուկով: Նունուֆարը լայն շնչեց, երեսը խաչակնքեց:

— Փնօք Գեղ, Աստուած:

Պայթեց և՛ երկրորդ, երրորդը, և՛ միւսները մէկը մէկի յետևից ճարձատեցին: Նունուֆարի երեսը պարզուեց, նա գլուխը բարձրացրեց:

— Փնօք քեղ, Աստուած, դու ինչ ցաւի ճար չ'ունիս:

Այժմ նա բոլորովին հանգիստ է, ութ գնդակ պայթեցին, այն էլ ինչպիսի ձայնով. թէ չար աչք էր, թըլիսիմն անցաւ: Բայց էլի օրեր անցան և Նունուֆարի Ասօն նոյնն էր, չար աչքի ոյժը ծանրացած էր նրա գլխին, թախիժը չէր փարատում, դէմքի մուսլին աճում էր օր աւուր: Նա այժմ նմանում էր մի սգոյ, որ ով գիտէ՝ ինչ դժոխային ծրագրներով թափառում է աշխարհի վրայ, մութ բաներ որոճում իր գլխում: Աչք պատառող գնգակներն էլ չ'օգնեցին. Նունուֆարի ճարը կըտրուած՝ էլի մի օր որդուն գիմեց.

— Ասօ ջան, ոտքդ համբուրեմ, Ասօ ջան, գլխովդ պտոյտ դամ, ինչո՞ւ ես սեւաւօր մօրդ սիրաը խորովում, ինչո՞ւ ես սե բերում գլխիս. կամ տո՞ւր ինձ հէնց օրը ցերեկով ողջ-ողջ թաղիւր մի փոսի մէջ, կամ ասօ՞ ինչ ունիս, ինչո՞ւ ես քո լոյս արևը սեւացնում:

— Դարդ ունիմ, մէքիկ, դարդ՝ ծովի չափ. դարդը լաւ է, քանց ամօթը:

Մայրը լռեց, գլուխը քաշ դցեց, լացեց, լացեց ցաւից ու զայրոյթից, որ չը գիտէ, թէ որդին ինչ ունի:

Օրեր անցան, Նունուֆարը դարձեալ չը հանգստացաւ. նա այժմ կ'երթայ գրբացի մօտ, հաստ գրքեր ունի մարդը, միրուքն ու մագիւրը ճերմակիկ են դրի սե

ու սպիտակի վրայ. մի անգամ, ասում են, կորեկ է բարձրացրել սինը իր աղօթքի զօրութեամբ, մի ուրիշ անգամ ասող է ցած բերել երկնքից և ներս տարել ջրհորի մէջ թաղել: Ինչե՞ր չը գիտէ տիրացու Մարտիրոսը:

Նունուֆարը լաւ յիշում է, թէ ինչպէս երբ դեռ Ասօն ծծկեր երեսայ էր, վախեցել էր, Մարտիրոսը թուղթ գրեց, եռանկիւնի ծալեց և ասաց, որ այրի, մոխիրը գցի ջրի մէջ ու լողացնէ: Գրեացի պատուէրը կատարեց, և երեսան վրայ եկաւ:

Ճարն այնտեղ է, մէկէլ թաղում՝ Շիրինենց նեղ փողոցի ծայրին, որտեղից Ասօն երբէք չէ անցնում այլ ևս: Ճարն այնտեղ է, տիրացու Մարտիրոսի այն նեղ բակում, ուր մի հատիկ փշատի ծառ է բուսել, չոր, պղնձաւած հողի մէջ: Ո՞վ է տեսել փշատի ծառը մոխիրների մէջ բուսնի անջուր, անմշակ: Տիրացուն է տնկել. ասում են տնկեց, խաչակնքեց, մի հաստ գիրք առաւ, կարդաց, կարդաց, և ծառն առանց ջրելու այրող մոխիրների մէջ կպաւ, արմատ գցեց: Այժմ մեծ ծառ է, ճիւղերը կախուկ են ցած՝ խիտ ստուերներ շինելով. այնտեղ այն խորհրդաւոր ստուերումն է նստում տիրացուն, այնտեղ է կարդում, այնտեղ է գրում, երգում, աղօթում: Այդ ծառը նրա տաճարն է, նրա սեղանն է: Երբ նա նստած է, հեռուից կարելի է նրան տեսնել ամբողջապէս. բայց երբ ոտքի է կանգնում, նրա ալեզարդ, իմաստուն գլուխը ծածկւում է ճիւղերի մէջ, միայն ոտներն են երևում, կապոյտ կտակէ վարտիկը և լայն քօշերը:

Այսպէս կանգնած՝ տիրացուն նմանում է մի սրբի, որի գլուխը թաղուած է ամպերի մէջ, և միայն ոտներն են երկրի վրայ: Նա դնում, գալիս է, խօսում է ինքն իրան, դէմքը չէ երևում, բայց ձայնը լսում է. մի զարմանալի ձայն, յտակ ու հնչուն, զարմանալի խօսքեր, ինչեր է ասում, երևի մէկ ինքը տիրացուն գիտէ այն, մէկ էլ Աստուած: Նունուֆարն այդ բոլորը տեսել է, այդ բոլորը գիտէ: Ճարն այն փշատի ծառի տակին է,

ուր տիրացու Մարտիրոսը զարմանալի բաներ է գրում, կարդում: Այնտեղ պէտք է գնալ, ամեն բան այնտեղ է:

Եւ Նունուֆարը գնաց գէպի տիրացուն: Քանի մտնենում էր սուրբ մարդու դրանք, յուզմունքն այնքան աւելանում էր. ինչ պիտի լինի, ինչ պիտի ասեն: Ճար կը լինի արդեօք: Ահա նա հասաւ, կանգ առաւ, մի քանի անգամ բոլոր կրծքով շունչ առաւ, ապա բռնեց դրան երկաթէ թակը և շրջիկ, շրջիկ, երկու անգամ իր պառաւ. ձեռքի բոլոր ուժով խփեց ու սպասեց: Մէկը մտտեցաւ դրանք. Նունուֆարի յուզմունքը զադաթնակէտին հասաւ. եթէ յանկարծ տիրացուն լինի, ինքը սուրբ մարդը, Նունուֆարը կը շշկլի, խօսք չի գտնի: Գուռը ճոռալով բացուեց, տիրացուի կինն է թամամը: — Բնորև, թամամ բաջի:

— Աստծու բարին, Նունուֆար խաթուն. հը, էլի ինչ կայ:

— Էլ ինչ ասեմ, գիտես էլի դլխիս եկած սեւ. ձեր գուռն եմ եկել, ձեր օրհնուած օջաղն եմ ընկել:

— Մեր գուռն ես եկել, խեղճ քուրիկ, հոգիս դուրս գայ քեզ համար, Աստուած կրակիդ վրայ ջուր անի:

Երկու կանայք իրար հասկանալով միաժամանակ վշլշացին:

— Տիրացուն...

— Տանը չի, քնւրիկ. էհ, ինձ թաղես, տիրացուն ինչ անի:

Նրանք խօսելով առաջացան բակում, այն զարմանալի բակում, ուր խեղքից, մոռից վեր բաներ են կատարում: Նունուֆարը նայեց խորհրդաւոր վշատի ծառին, նրա կապոյտ ու սպիտակ տերեւերին, նրա վշաւոր ճիւղերին, որոնք կարծես չար աչք ծակելու համար լինէին շինուած: Ի՞նչքան շատ բան կար այդ ծառի մէջ. նա կարող էր վրկել Նունուֆարի սրբուն. նրա տակը շարուած են այնպիսի դրքեր, այնպիսի դրքեր: Իէ որ նրանք այսպիսի սև օրին էլ ագամսրդուն չը հասնեն, նրա ցաւին դարման չ'անեն, էլ ինչի են հարկաւոր. ախր

Աստծու հրամանով, Նրա սուրբ կամքով գրուած բաներ
են, Աստծու խօսքը կայ նրանց մէջ: Այս մարերը մի վայր-
կենում անցան Նունուֆարի գլխով, երբ Թամաւիւ խօ-
սում էր:

— Տիրացուն ինչ անի, ինձ թաղես, կրկնեց Թա-
մաւիւ, երբ մտայնան ծառին. — գիրն ինչ անի, գրքերն
ինչ անեն, թող Աստուած հասնի. ժամանակն է փուշ,
ժամանակն է վատ, տիրացուն որ ջուրն ընկնի:

Նունուֆարը կանդ առաւ սառած, աչքերը խորհրդ-
գաւոր ծառին յառած, նա կարծես էլ չէր լսում:

— Ինչի՞ քար կտրեցիր, Նունուֆար քուրիկ:

— Չեռքերս երկնքից գետնքից կարուեց, քուրիկ. թէ
ձեր օջաղից էլ փրկուեթիւն չը կայ, թէ այն հաստ-հաստ
գրքերն էլ բան չեն ասում, թէ նրանց մէջ էլ ճար-
գարման չը կայ, ապա էլ ես որ գնամ, որ ջուրն ընկ-
նեմ, որ քարին տամ գլուխս, ո՞ւմ ասեմ... Նրա ձայնը խը-
զուեց, խօսքը մնաց կիսատ, աչքերը ծածկեց գոգնոցով
ու հեկեկաց:

— Քուրիկ, լալով ճար չի լինի, այստեղ նայիր, մէկ
տե՛ս:

Նունուֆարը աչքերը սրբեց ու նայեց.

Հարեան կտրում կանգնած էր Շիրինենց հարսը,
չքնաղ Սառան: Այնտեղ կտրանը ցորեն էր փռած, և ջա-
հիլ կինը կանգնած՝ պահում ճնճղուկներից, իր ձեռ-
քի երկայն ձողը անգագար շարժում, վերև ներքև էր
անում աներես թռչուններին հալածելու համար: Նա
չէր նկատում, որ իրան նայող կար, իր միայնութիւնից
օգտուելով երեսի քողը յետ էր տարել և ագահաբար
նայում էր հեռուն, գէպի Գայլատուայ լիճը, գէպի Սի-
նակայ սարերը: Նա կին չէր, այլ մի հրեշտակ, հարաւի
մի փարթամ վարդ, որ գաշնանային շողազարդ ա-
ռաւօտին փթթել էր բուրաշատ վարդենու վրայ: Սև
երկայն մազերը բազմաթիւ հիւսերով փռուել էին գե-
ղեցիկ թիկունքին, որի միայն մի մասն էր երևում կար-
միր քօղի տակից. այտերը կարմիր էին, ինչպէս նուան

ջուրը, որ մատով դիպչելի, արևն կը ցայտեր. երկար արտեանունքները հովանի էին անում սև աչքերի վրայ. հասակը բարձր էր ու ճկուն, ինչպէս մի մատաղ կաղնի: Նա մի դիւթիչ արարած էր, որ բարձր կտրին, աշխարհից վեր կանգնած էր ինչպէս մի յաւերժահարս և իր քնքոյշ կանացիութեան հմայքը սփռել էր չորս կողմը:

Նունուֆարը հիացած նայում էր այդ գեղեցիկ արարածին և ոչինչ չէր հասկանում իր խօսակցի վարմունքից: Նա վաղուց էր լսել Շիրինենց հարսի՝ Սառայի գեղեցկութեան մասին, դեռ հարսանիքից առաջ խօսում էին, թէ Շիրինենք Բայաղէղից մի աննաման հարս են բերելու, բայց այժմ ինչ կապ կարող էր լինել նրա գեղեցկութեան և իր ծով ցաւի մէջ, Թամամն ինչու է ցոյց տալիս Սառային:

—Սրան սիրողը կը խենթանայ, ապա ինչ կը լինի, ասաց Թամամը:

—Ո՞վ է սիրել:

—Ո՞վ է սիրել... Թամամը գէժքը մօտեցրեց հարևանուհու գէժքին և աչքերի մէջ նայելով իր խորաթափանց նայուածքով՝ ասաց փափսուկով ու խեղդուած ձայնով.

—Ասօն...

—Սո՛ւս, սո՛ւս, Թամամ, որդուդ արեւին սո՛ւս, ինչ ասիր, իմ տղան ուրիշին է սիրում, այն էլ մարդով կնիկ:

—Հո՛, Նունուֆար քուրիկ, ապա դու չը գիտես, մարդով կնիկ, հէնց էս թառլանին: Սար ու ձոր ընկներուց առաջ ես տեսայ, Ասօն մեր փողոցումն էր թափառում ողջ գիշերներ: Ինչ աչքով տալ, ինչ բան, այն էս կտրան ջուխտ աչքերն են կպել նրան, էս ջուխտ բոցերն են նրա հոգին կրակ գցել, սիրտը դարդով լցրել: Ես էլի շատ բաներ եմ տեսել, էլի շատ բաներ գիտեմ, լուռ էի, ասացի մարդ է, ջահիլ է, կանցնի, բաղդդ սև էր, բանն էսպէս եղաւ:

Նունուֆարը շարունակում էր նայել կտրին: Սա-

ուան այնտեղ էր, հարուածն այնտեղից եկաւ, այն բարձր կտրից, այն սիրուն կանացի պատկերից, ապա կամաց կամաց նա թուլացաւ, երերաց և կանգնած տեղում նստեց մէջքը տուած վշատի ծառին.

—Մի քիչ ջնւր:

Թամամը ջուր բերեց, պառաւը խմեց մի քանի կում, նայեց վեր, վշատի ծառին, նայեց նրա տակ շարած գրքերին: Եւ այս սուրբ վայրերին այսքան մօտիկ, այս խորհրդաւոր գրքերից մի քանի քայլ միայն հեռու կատարուել է այնքան մեղսաւոր գործ, մի տղամարդ, մի նշանուած տղամարդ սիրել է ուրիշի կնիկան, հարուղատ կնիկան, որովհետեւ նրա այտերն աւելի կարմիր են, քան իր նշանածինը, որովհետեւ աչքերն աւելի մեծ են, հասակն աւելի բարձր է, մազերն աւելի երկար:

—Թամամ բաջի, տիրացուն... ախր նա ի՞նչ ասաց... ապա էս գրքերը... էս ծառը... սուրբ բաները...

Թամամը լուռ էր:

—Քանդուեա, աշխարհ, մեմուում էր նունուֆարը՝ ծնկներին տալով. Սողոմ-Գոմոր գառնաս, Ասօն խալխի հարան է սիրում, նրա համար է չօլերն ընկել, ի՞նչ կ'ասեն, որ լսեն, ի՞նչ կ'ասեն, վայ սեն ինձ տանի:

«Իարդը լաւ է, քանց ամօթը», այժմ միայն նա հասկացաւ իր որդու այս խորհրդաւոր խօսքերը, հասկացաւ, թէ ինչո՞ւ նա ցերեկով այս կողմերից չի անցնում, իսկ գիշերները այստեղ է լուսացնում:

—Հա՛, դարդը լաւ է, քանց ամօթը:

Նունուֆարը ոտքի կանգնեց ջարդուած ու սգաւոր, գնում էր դէպի տուն: Նա շտապով անցաւ Շիրինենց փողոցից, կտրանը չը նայեց, որ չը տեսնէ Սառային, իր հոգեհան հրեշտակին. շտապով, յանցաւորի պէս անցաւ գիւղամիջից, նրան թւում էր, սրտեղից որ է հազար կողմից հազար բերան կը պուան ու կ'ասեն. «ամօթ, նունուֆար, ամօթ, տղադ մարդով կնիկ է սիրել, տղադ նշանածը թողնում է, ամօթ»: Եւ Նունուֆարը համարեա փախչում էր՝ իր ամօթը սեփական յարկի տակ

Թաղցնելու: Դարդը մեծ էր, և այդ դարդին մի ճար էր պէտք:

VII

Այն ժամանակ, երբ մայրը սրբերի, գրբացների դուռն էր մաշում ու լացով լուսացնում գիշերները, երբ նա անդադար մտածում էր մի ճար, մի հնար գտնել իր որդու դարդին և իրազեկ սարսափելի դադանիքին, դուռում էր նրա բոլոր հեռեանքների մասին մտածելիս, Ասօն՝ մուսլ ու անհանգիստ ինչպէս միշտ, ապրում էր Գսպէի ջրաղացում: Ծերունին նրան նպատակով պահեց իր մօտ, նա փորձուած մարդ էր և գիտէր, թէ ինչ ծանր է դարդոտ, յուսահատ մարդուն մենակ լինել: ով գիտէ, գլխին ինչ չար կարող է բերել, մտածում էր նա, ջահէլի սիրտը մեծ ցաւ տանել չէ կարող, փուխը է և կը վշտուի, սար կայ, որի կատարից հեշտ է նետուել անդունդը, լիճ կայ, որի տակ հազար դարդեր թաղել կարելի է: նա լաւ յիշում է, թէ այն սարսափելի դէպքից յետոյ ինքը քանի-քանի անգամ փորձեց վերջ տալ իր կեանքին, և միայն հօր և ընկերների, մանաւանդ Ասօի հօր հսկողութիւնը կարողացաւ նրան արգելել իր խելագար քայլն անելու: Գսպէն մտածում էր կամաց կամաց Ասօին սովորեցնել աշխատանքի, ձեռքը տաքացրնել: ցերեկները նա Ասօին մերթ ուղարկում էր ջրի ամբարդակները գիտելու, մերթ սաւաղն ամրացնելու, մերթ նաւի առաջը մաքրելու, իսկ գիշերները ջրաղացի քարերի, չախչալի և նաւի ջրերի միակերպ աղմուկի տակ նա պատմում էր վշտոտ երիտասարդին հազար ու մի պատմութիւններ, հազար ու մի արկածներ, սրոնք անցել էին իր ծեր գլխով, և գիտէր, շատ բան գիտէր ծերունի Գսպէն աշխարհից, կեանքից, սրբերից, մարդկանց սրտերից: Եւ Ասօն լսում էր լուռ ու մտածկոտ նայելով մի կէտի:

—Յիսուն երկու տարի էս ջրաղացումն եմ, որդի,

ասում էր գիշերը Գսպէն, յիսուն երկու. ինչքան խէր ու շառ եմ տեսել, էս ճերմակ մազերիցս շատ: Որքան ջուր է անցել էս ջրատունի տակից, որքան պտոյտ է արել էս քարը, և նրանց հետ անցել է նաև իմ կեանքը, մի կորած, անօգուտ կեանք: Աչքս քո վրայ է, որդի, դու հօ գիտես, որ աշխարհում բացի քեզանից ոչ ոք չ'ունիմ: Տուն ընտանիքի տէր եղիր և թող ինձանից յետոյ էլի ջուրը հօսի ջրատունից, էլի էս քարը պտոյտ գալ: Գիշերներ եմ ունեցել էէ', անքուն, սարսափի գիշերներ: Ուռիները քամիների հետ գրսում փսփսում էին՝ օրօրուերով խաւարի մէջ, և մի բու կար, մի անողորմ բայուշ, գալիս էր նստում հէնց ջրագացի ետևի մեծ ուռնու վրայ և՛ վո՛ւ-վո՛ւ... մազերս էին գիզանում: Եւ մի գիշեր ճիշտ այսպէս նստած մտածում էի սև բաներ, նայում էի քարին ու չախչակին, և քունս չէր տանում: Գրսում քամին խաղում էր ուռիների հետ, և բայուշը վոյ-վոյ անում: Մէկ էլ՝ թրը՛խկ... դուռս թակեցին: Վեր թուայ տեղիցս, «ո՞վ է», ձայն տուի. պատասխան չը կայ. «ո՞վ է», գարձեալ պատասխան չը կայ, բայց դուռը թակում են: Բաց չ'արի, մնացի կանգնած: Մէկ էլ դուռը շրխկալով բացուեց, տեսայ սալտակ չարսաւի մէջ փաթաթուած մի կին, մի սարսափելի բան, որ ներս մտաւ, կանգնեց, ինձ նայեց վշտօտ աչքերով: Ծն էր, իմ նշանածը. լեզուս չորացաւ, մազերս գիզացան, երեսիս վրայ ընկայ ու մնացել էի այնպէս մինչև լուսաբաց: Այսպէս էր, որդի, առաջին տարիները իր խեղճ դուելուց յետոյ նա ինձ հանգիստ չէր տալիս, գալիս էր գիշերները դուռս թակում, կամ ջրատունի մէջ հեծեծում էր ջրերի հետ. ես դիւահարի պէս էի: Բայուշն էլ հօ իր տեղումն էր ամեն գիշեր վո՛ւ-վո՛ւ անում: ճարս կորած, մի օր հնար գտայ, անիծած թռչունին սպանեցի ու դիակը տուի ջրերի բերանը, բայց էլի նա եկաւ, էլի հեծեծում էր ուռիների և ջրերի հետ: Փախայ ջրագացից, չօլերն ընկայ քեզ պէս, սրբերի դուռը չ'ըբե-

ցի, էլի փրկողը Մորկի Սուրբն եղաւ, մեռնեմ նրա զօրութեանը:

—Մորկի Սուրբը այդպէս հզօր է:

—Օճ, շատ է հզօր, որդի, շատ է զօրաւոր:

—էն սարի մեծ խաչքարը:

—Հն, էն սարի մեծ խաչքարը, որի ծայրն էլ կոտրուած է:

—Ինչո՞ւ է կոտրուած, Գսպէ ամի, ո՞վ է կոտրել, ախր սուրբ բան է, և ինչո՞ւ է նա սարի կատարին:

—Երկար պատմութիւն է այդ, որդի, բայց լսի՛ր պատմեմ. դէ դուք ջահիլներդ էլ այդպէս բաների շատ ականջ չէք դնում: Այն խաչքարը երկար ժամանակ անտէր-անտիրական ընկած էր գիւղի առաջի ձորի մէջ, որտեղից աղբիւրն է հոսում: Մի օր թանգուրակցի մի քիւրդ անցնելիս՝ տեսնում է խաչքարը ու մտածում, լաւ տաշած քար է, արի դուրսը պոկեմ, տանեմ սեան քար շինեմ: ասե՛ն ու անելը մէկ է լինում. դէ էդ անօրէնների համար ի՛նչ կայ, խաչը հօ նրանց համար սուրբ չէ: Զարդում է խաչքարի վերի մասը, շալակում է ու ճանապարհ ընկնում տուն: Տեղ հասնելով կնիկ, ասում է, արի տես ի՛նչ սեան քար եմ բերել, բռնիր, մէջքիցս իջեցնեմ: Կինը մօտենում է, բռնում, քաշում, բայց քարը պոկ չի գալիս, հայ դէս, հայ դէն, քարը կպած է մէջքին: Քրդի լեզուն բռնում է երկիւղից, էլ բան ասել չի կարողանում կնկան. բայց մտածում է, այ հայ, ասում է մտքում, կայ չը կայ էս սուրբ քար էր, ես կոտրեցի, պատիժն ստացայ. և իսկոյն յետ է գալիս քարը մէջքին, հասնում է խաչքարին, ընկնում է երեսի վրայ, լալիս, աղօթում, էն սհաթին քարը մէջքից ընկնում է ցած: Քիւրդը թողնում է գնում, բայց էլ լեզուն չի բացւում, մնում է համր մինչև մահ: Հայ քրիստոնեաներն իմանում են, գալիս խաչը պատուով, փառքով առնում, տանում են ժամ ու այնտեղ պահում: Մարդ չի իմանում, թէ դա ի՛նչ սուրբ է, մինչև աշխարհ է գալիս մի սուրբ մարդ, մի ճգնաւոր: Ահա այս

սուրբը մի անգամ եկեղեցի է դալիս լալով, գոռալով, մազերը փետեղով. «էս ինչ ենք արել, ասում է, սուրբն եկաւ երազիս ու յայտնեց, թէ իմ տեղն այստեղ չէ, այլ էն սարի կատարն է, էն բարձր տեղը, որովհետեւ ես Մրրկի սուրբն եմ, իմ տեղը բաց ու արձակ պիտի լինի, ինչպէս արձակ է մրրկի տեղը երկնքում»: Քրիստոնեաները ահով-գողով վերցնում են սուրբ խաչքարը և մեծ դժուարութեամբ բարձրացնում են սարի ամենաբարձր տեղը տնկելու: Այնտեղ սարի կատարին տեսնում են նստած մի մեծ լայնաթև արծիւ. թռչունը տեսնում է եկողներին, բայց չի փախչում, այլ սկսում է կտուցով ու ճանկերով դետինը փորել՝ ասես խաչքարին տեղ պատրաստելու համար: Մարդիկ կանգնում են և զարմացած նայում: Իսկ արծիւը փորում է հսփորում, ապա յանկարծ թափ է առնում և վեր սըլանում, ամպերի մէջ պտոյտներ անում հէնց այն լեռան կատարի վրայ: Մարդիկ տնկում են խաչքարը, հազիւ մի փոքր հեռանում են, որ արծիւը ցած է սլանում ամպերի միջից և նստում է խաչքարի վրայ: Ամենքը հասկանում են, որ դա Աստծու հրամանով եղած բան է, որ այդ թռչունը եկել էր ցոյց տալու խաչքարի տեղը: Այսպէս է եղել, որդի, որ խաչքարը բարձրացել է այն սարի կատարը:

—Ապա ինչո՞ւ է նա մրրկի սուրբ, Գսպէ՛ ամի, ինչ գործ ունի սուրբը մրրկի հետ:

—Հէ որդի, դեռ ջահիլ ես: Մեր աշխարհը հօմրրկի, փոթորկի աշխարհ է եղել միշտ, մրրիկ երկնքից, մրրիկ գետնքից, մերթ մարդկանց երեսից, մերթ Աստուծոյ կամքով. ինչե՛ր եմ տեսել հէնց իմ կեանքում, ցաւեր, ցաւեր, իսկ մեր աշխարհի ամեն մի ցաւը փոքրիկ քամու պէս չի եղել, այլ տնաքանդ մրրկի: Շատ հին ժամանակ, որդի, մեզանից շատ տարիներ առաջ այս լեռներում մի խուլ այրի մէջ ապրում էր մի ծերունի ճգնաւոր, մի սուրբ, անարատ, աստուածապաշտ մարդ, որ գիշեր ու ցերեկ աղօթում էր աշխարհի համար: Մի

օր մեր աշխարհի վրայ զարկեց մրրկիլը. մեր լեռները ողջ ծածկուեցին անօրէններով, աւազակներով, մարդակերպ գազաններով: Հայքրիստոնեան օտի տակ դընաց, ճխուեց ու լողում էր արեան մէջ. էլ սրբութիւն, օրէնք, պատիւ, հաւատ չը մնաց: Ուղիղ մէջքերը ողջ ծռուեցին ծանր բեռի տակ, մարմինների սակօրները ցաւով ճարճատեցին, հառաչանքներն ու սղբերը երկինք բարձրացան, տուն, ընակութիւն աւերակ դարձան, մենաւոր փապարները, սարերի կատարները, խուլ ծըմակներն ու ձորերը, լեռների բոլոր այրերը լցուեցին փախստականներով: Նրանց յեռեւից հասան անօրէնները հազարներով, կուտակ-կուտակ գիւղները գիղուեցին, սար ու ձոր անքաց նրանց սճիրներից, ծառերը սգւորան իրանց ծծած արիւնից, գետերն ու աղբիւրները կուպ—կարմիր կտրեցին, և գլորում էին արեան կոհակներ: Երկիրը պղծուեց. ճգնաւորը իր սուրբ աղօթքների համար էլ տեղ չունէր, նա գուրս եկաւ այրից, տեսաւ, թէ ինչ է կատարւում իր շուրջը, լսեց հնչուող հառաչանքները, աչքով տեսաւ իր սաքերի տակ փռւած շարան-շարան գիւղները, հեկեկաց, լաց եղաւ սրտի խորքերից, մխիթր ցանեց գլխին, ապա հեռացաւ արիւնստ տեղերից, բարձրացաւ էլ աւելի վեր՝ դէպի լեռները, մի ահագին ժայռ գլորեց, մի հատիկ մուրճ ճարեց, մենմենակ տաշեց, տաշեց և մի ահագին խաչքար պատրաստեց ու տնկեց այնտեղ, ուր անօրէնների պիղծ սաքերը դեռ չէին հասել: «Այժմ քեզ աւելի մօտ եմ, երկինք, ճշաց նա. — թէ վարից չը լսեցիր իմ աղօթքը, դոնէ այստեղից լսիր, տես ինչ է կատարւում իմ հօտի հետ»: Եւ վազեցին եկան նրա մօտ բոլոր կենդանի մնացածները, եկան ու թափուեցին խաչի պատուանդանի տակ ինչպէս մաղալ տուած ոչխարներ: Ծերունի ճգնաւորը նայեց այդ սղորմելի հալածականներին, սիրտը ցաւով լըցուեց, կախուեց խաչքարի թևերից և ուխտեց մնալ աղօթքը շրթունքին, գիշեր թէ ցերեկ, մինչև երկինքը ազատէ աշխարհը այդ արիւնստ մրրկից, մինչև իր հօտի

մնացած մասը փրկուի: Եւ աղօթում էր նա երկար-երկար աշխարհի համար, իր հօտի համար, հայ զբխառնէի համար, իսկ բազմութիւնը նրա սաքերի տակ աղաղակում ու լալիս էր: Երկինքն այդ էլ չը լսեց, երեւի մեզերը շատ էր մեծ, անօրէնները այնտեղ էլ հասան, բռնեցին բողբոխն, մարդ, կին, երեխայ և մէկիկ-մէկիկ ցած գլորեցին ժայռի կատարից, իսկ ճգնաւորին էլ խաչի տակ սպանեցին և անթաղ թողեցին: Թուշունները եկան պտոյտ-պտոյտ արին նրա գիակի շուրջը, չը կերան, դաղաններն եկան չորս կողմը շարուեցին, չը կերան, քամիները զով փչեցին, սուրը գիակը մնաց անվնաս երկար օրեր, շաբաթներ, և գիշերները հեռուից սարի կատարին երևում էր լոյսի մի գունդ, որ ցածրանում, բարձրանում էր նրա վրայ: Այնքան մնաց այսպէս, մինչև որ երկիրը խաղաղուեց, և այն ժամանակ նրա մարմինը յանկարծ անյայտացաւ, ասում են, որ երկինք բարձրացաւ:

Եւ այնուհետև ամեն անգամ մրրկոտ գիշերներին, երբ մեծ ծառերը ճռնչում են քամու թափի տակ, լեռներըն իրանց այրերով տնքում են բնութեան ցաւից, երբ երկիրը դողում է սարսափով բռնուած, կամ արիւնի փոթորիկ է զարկում մեր աշխարհի վրայ, այն ժամանակ սուրբը սպիտակ զգեստներով յայտնւում է մութ ամպերի վրայ, սլանում է երկնքով, գալիս վար է իջնում այն լեռան կատարին, ուր խաչքարն է: Այնտեղ նա կախում է խաչքարի թևերից, էլի լալիս է աշխարհի համար, աղերսում է, որ մրրիկն անցնի, որ խաղաղութիւնը վերջապէս թագաւորէ երկրի վրայ:

Ահա, որդի, այսպէս հզօր է Մրրկի սուրբը, մեռնեմ նրա զօրութեանը, վերջացրեց Գոպէն՝ երկիւղածութեամբ խաչակնքելով:

Ասօն լսեց այդ պատմութիւնը հետաքրքրութեամբ, յափշտակուած: Գոպէն վերջացրեց, բայց նա երկար ժամանակ լուռ էր, նայում էր ջրաղացի քարին, և կարծես տարուած էր ծանր մտածմունքով:

— Գսպէ՛ ամի, դու ինչքան բան գիտես. դու ասում ես, որ արիւնը երկնքին դուր է գալիս:

— Ե՞ս... ես չեմ ասում այդ, մեղայ Ասածու, ես ինչպէս կ'ասեմ:

— Հապա ասացիր, քանի սուրբը կենդանի էր, երկինքը նրա աղօթքը չէր լսում, հէնց որ սպանեցին, արիւնը թափուեց, այնուհետև լսում է. ուրեմն երկինքըն սպանում էր, որ անմեղին սպանե՛ն...

Հարցը ծանր էր, Գսպէն կարկամուեց, նա երբէք այդպիսի բան չէր մտածել, բայց տեսաւ, որ խօսակիցն իրաւունք ունի այդպիսի եզրակացութիւն հանելու իր պատմածից. սակայն նա համոզուած էր, որ երկինքը արիւն չէ սիրում, ախր նա ինչպէս կարող էր արիւն, անմեղ, սուրբ արիւն սիրել, այդպիսի կարծիքի դէմ նրա հողին ըմբոստանում էր:

— Ձէ, չէ, ես այդ չեմ ասում, ճշաց նա յանցաւորի յուսահատ աղաղակով. երկինքը... դէ ես ինչ իմանամ, ես մի մահկանացու մեղաւոր եմ, որդի, ինչպէս հասկանամ երկնքի բանը, դէ սուրբը որ սպանւում է, հալբաթ երկինքն է ուզում, ուրիշ ո՞վ կարող է ուղեւ, սպանւում է, դէ արիւնը ի հարկէ թափւում է, արդար արիւն է, ես ինչ իմանամ: սրբերի աղօթքն էլ, բարեխօսութիւնն էլ Աստուած լսում է...

«Վու՛վո՛ւ, վու՛վո՛ւ...» բռի ձայնը հնչուեց դրսուում. Գսպէն լռեց, սպրանեց ու նայեց Ասօին. երկսով էլ առժամանակ լուռ մնացին:

— Աս՛ճ, սա ինչ բան է... ասաց Գսպէն դողալով.
— այն չի կարող լինել, այնպէս չէ՛, Ասօ, ես նրան սպանել եմ:

— Ո՞ւմը:

— Այն բուին, հին բայդուչին, որ...

— Վու՛վո՛ւ, վու՛վո՛ւ:

— Օ՛ճ, ճիշտ այսպէս էր, Ասօ, ճիշտ այսպէս. ինչ է լինելու:

—Ոչինչ, ամի, ինչ կարող է լինել. այն սպանել էս, այս մէկը նոր է յայտնուում, թուշուն է էլի:

—Թուշուն է է՛:

—Հա, ուրիշ ի՛նչ:

—Ձը գիտեմ, բայցուշը չեմ սիրում, բանից չեմ վախենում, բայց այդ բայցուշը... թող Աստուած ինձ ազատէ նրանից... գուռը լաւ փակել էս, Ասօ:

—Փակել եմ, ամի, պինդ եմ փակել:

Գոպէն չէր հանգստանում և սարսափած հայեացքը դռնից չէր հեռացնում, իսկ բուն դրսում շարունակում էր վու՛վու՛ կանչել, և ուռեները վափսում էին քամիների հետ: Ասօն վաղուց քնել էր արդէն. փառը դառնում էր հօ գառնսւմ, ջրերը ջրտան մէջ աղմըկուում ու վշըւում էին, չախակը միակերպ չխչսկացնում էր, այդ բոլորը միախառնուելով կազմում էին մի նիրհեցնող երգ գիշերային ընդհանուր լուսթեան մէջ, բայց Գոպէն աչք փակել չէր կարողանում, նրան թւում էր, թէ գուռը հիմայ կը բացուի ինքն իրան, և շեմքի վրայ կը յայտնուի հին օրերի սպիտակ ուրուականը: Անցաւ այդ անախորժ գիշերը, լուսաբացը մօտ էր, Գոպէն նայեց պատի փոքրիկ անցքից, տեսաւ լուսոյ առաջին շաւիղները, Ասօին քնած թուկեց և գուրս եկաւ, ջրաղացի յետեն անցաւ, նա ուզում էր տեսնել այս շարագուշակ բուրն, իր աչքով տեսնել համոզուելու համար, թէ նոյնը չէ՛, որ ինքն սպանել է շատ տարի առաջ: Թափառեց ուռիների տակ, ծեր աչքերով մէկիկ-մէկիկ նայեց ծառերի ճիւղերին, սչինչ չը կար, բուն անյայտացել էր:

VIII

Վատ, մի շատ վատ գիշեր էր, որ անց կացրեց Գոպէն: Լոյսը, արևի ծագումը նրա համար այս առաւօտ առանձնապէս գրաւիչ էր: Նա նստած էր ջրաղացի դրանը թմրի վրայ, ազահուլթեամբ շնչում էր վա-

զորդեան թարմ օգը և կարծես միաժամանակ վայելում էր լոյսը, շողչօյուն, կենդանարար լոյսը, որ ցրում էր այնքան սև մութեր, հալածում էր այնքան մռայլ ստուերներ: Գսպէն սկսեց նայել հեռուն՝ իմանալու համար, թէ ոչ ոք չէ՞ գալիս գիւղից. նա սաստիկ ուզում էր, Ասօից բացի, մի նոր մարդու հետ զրուցել այսօր: Հեռու ճանապարհի վրայ մի քանի ստուերներ շարժուեցին, Գրասպէն ոտի կանգնեց, ձեռքով հովանի արաւ ծեր աչքերի վրայ և նայում էր: Եկողները ցորեն բերդներ չէին երևում, որովհետև ոչ սայլ ունէին և ոչ բարձած գրասաններ, մի խումբ ձիաւորներ էին, որ գալիս էին սրարչաւ: Խումբը մօտենում էր. իսկ Գսպէն շարունակում էր նայել ուշադրութեամբ, հետաքրքրուած: Չիաւորները շատ մօտեցան, նրանք հեռու չեն ջրաղացից: Առջևից գնում է մի բարձրահասակ, ալեղարգ ծերունի, նրա տակ կատաղաբար խաղում է մի սպիտակ ձի. կեռ սուրը ձախ կողքին, թիկունքին հրացան, կապոյտ մահուղից կարծ ջուբան երկու կողմից բացուած առաւօտեան հովի առաջ, և երկար, սպիտակ միրուքը, որ վէհօրէն հողմահարում է ձիու քայլուածքի հետ, այս բոլորը նրան նմանեցնում են մի լեռնական իշխանի, որ իր հետևորդներով որսի է դուրս եկել: Ծերունու կողքից գնում է մի պատանի մօտ տասնևվեց տարեկան, բարեձև ու թիկնաւէտ, լայնապէմ ու սևաչեայ, առաջինի որդին լինի կարծես և զինակիրը միաժամանակ: Այս զոյգի յետևից խառն ի խուռն գալիս են վեց-եօթ ուրիշ ձիաւորներ, նոյնպէս զինուած, նոյնպէս առնացի շարժումներով: Երևում էր՝ նրանք հեռուից էին գալիս, ձիերը յողնած էին, թամբերի շուրջը ժապաւէնի ձևով ինչպէս և կրճքերի վրայ նրանց մարթին ծածկուած էր քրտինքով: Խումբը հասաւ ջրաղացին և կանգ առաւ:

— Բարի լոյս, ծերունի, բացականչեց գլխաւորը, կանգնեցնելով իր փրփրած ձին:

— Աստուծոյ բարին, բարեկամներ:

— Հիւր կուզես:

—Հիւրն Ասածուն է:

—Սոված ենք և պահանջող չենք, սուրբ Կարապետի ուխտաւորներ ենք, ծերունի, հեռու տեղից ենք գալիս, Ղըզըլ-բաշի երկրից, դէ ձեր Իւջ-Քիլիսէն էլ կը համբուրենք, եթէ զլուսներս ունենրիս մնայ, ձեր երկիրը հարամիների բուն է, քանի փորձանքից ազատուեցինք, ուխտաւորներ ենք, էլի հանգիստ չեն թողնում:

—Ով և լինիք, բարի էք եկել, Աստուած ուխտները ընդունելի անի:

—Մեր ուխտը...

—Հնա, ձեր ուխտը, ամենքի ուխտը, բոլոր հայ ժողովատաների ուխտը, ցած իջէք, ես էլ ջրազայ ունիմ մի աչքանի, նաւն էլ է մէկ, բայց ջուրը շատ է, փառք գառնում է ու լաւ է գառնում, թափով, ազմուկով, լսում էք ձայնը, երեսուն կուռիկ ալուրից մէկ կուռիկն իմն է, քարն չորս կողմի փոշին էլ հետը, թոնիր էլ կայ, կրակ էլ կայ, ձեր աչքերս էլ գեռ բան տեսնում են, բազարջն առատ կանեմ:

—Ցած իջէք, հրամայեց գլխաւորը:

Ձխաւորներն իջան, իրարից կապեցին ձիերը և դէպի ջրազայն առաջացան: Ծերունին ներս մտաւ, զարթեցըրեց Ասօին, խմոր հունցեց, թոնիրը վառեց և թխել սկսեց: Կոլոր, փափրիկ բազարջները մէկիկ-մէկիկ հանում էր, թոնրի շաւրջը փռում: Ապա նա վերկացաւ, բերեց մի ահագին մաթրաթ, պատի դարեկից ցած բերեց մի մեծ կտոր կարագ, դրեց ամանի մէջ, տաք բազարջները կտորեց և կարագի վրայ ածեց, իւրը մի վայրկեանում հալուեց և հացի կտորների հետ շաղախուեց:

—«Ճմուռը» պատրաստ է, բացականչեց Գապէն՝ գառնալով դէպի ճանապարհորդները: Վերջիններս շորջանակի բազմեցին մեծ մաթրաթի տառջ և ուտել սկսեցին: Ծերունին նստած հեռու՝ նայում էր նրանց դէմբերին. Ասօն իր անկիւնում նստած՝ լուռ էր, բայց նոյնպէս ուշադրութեամբ դիտում էր: Լուսում էր միայն

չախշակի չխշխկոցը և ջրերի միակերպ շառաչը ջրադացի տակից:

Մաթրաթը շուտով դատարկուեց:

—Շէ՛ն մնա ջրադացդ, ծերո՛ւկ, ասաց խմբապետը՝ սրբելով բեխերն ու իւրօտ մասները:

—Աստուած ձեր ուխտն ընդունելի անի:

—Մեր ուխտը, հա, թէ ողջառողջ կարողանանք Ս. Կարապետի դուռը թակել:

—Ուխտաւորի վրայ Աստուծու հովանին կայ:

—Կայ, բայց երէկ քիչ մնաց արեան բան անէինք:

—Անպիտանները կը տանէին, թէ չը հասնէինք, վրայ բերեց խմբից մի ուրիշը. նամարդ շներ, երեխայ էին գտել:

—Անպատճառ կը տանէին, շարունակեց խմբապետը, բայց ի՛նչպէս փախան, նրանք հաստատ հաւատացած էին, թէ կ'սպանենք, և երևի շատ ուրախացան, որ այդպէս աժան պրծան:

—Ողորմելիները պիտի կարծեն, թէ գնդակները վրիպեցին, շարունակեց առաջին ձայնը. թո՛ղ գնան մատաղ լինին Ս. Կարապետին, որի սիրուն չը կամեցանք արին թափել և գիտմամբ մեր հրացանները դըլուխներից բարձր էինք կրակում:

Ծերունին լսում էր ուշադրութեամբ և զարմացած էր:

—Բարեկամներ, ասաց նա, երևում է դուք կուի էք բռնուել սարերում, դուք հօ ուխտաւորներ էք, այդ ինչո՞ւ այդպէս:

—Ուխտաւոր ենք ի հարկէ, բայց որ էս երկիրը լիքն է հարամիներով, սար ու քար գազան դարձած մարդ են ուտում: Մի փոքրիկ երեխայ էր, երևի ձեր գիւղից, եղներ էր պահում լճի ափին, մենք հասանք հէնց այն ժամին, երբ աւազակների մի խումբ եղներն առաջ արած տանում էր, իսկ երեխան կանգնած՝ աղիօղորմ լալիս էր:

—Յետո՞յ, հարցրեց ծերունին հետաքրքրուած:

— Ի՛է յետոյ, ի՛նչ յետոյ, ի հարկէ չը թողինք, վերջացրեց խմբապետը: Գտպէն մի փոքր ժամանակ մնաց մտածկոտ, ապա գլուխն օրօրելով ասաց.

— Է՛հ, էսօր չը տարան, էգուց կը տանեն. մեր բանը գաղեղն է, նրանցը տանելն է. ի՛նչ անենք, ճակատագիր է. ինչ որ վերելից գրուած է, մենք փոխել չենք կարող. մենք տէր ու տիրական չ'ունենք, իսկ անտէր մարդ. ձեռք ծոցը, վիպը ծուռ կը լինի. մենք խեղճ ենք, շատ խեղճ, անտէրութիւնը. մեր ճակատագիրն է:

— Հն՛, իրաւունք ունիս, ծերունի, ճակատագիրը ճշմարիտ բան է, աշխարհում մէկը միւսի ճակատագիրն է. տես, այն լինը՝ ջրվէժին, ջրվէժը՝ այս ջրաղացին, բազէն՝ լորին, ցինը՝ բաղէին, մենք էլ, գէհ, մենք էլ ճակատագիր ունենք, բայց և ճակատագիր ենք ուրիշների. աշխարհում ճակատաներ կան, որոնց վրայի գիրը կ'ասես մեր ձեռքով է գրուած և մեր ձեռքով էլ կարող է ջնջուել. այսպէս, ծերունի, ճակատագրեր շատ կան աշխարհում, շատ, ի՛նչ կ'ասես...

— Ձեմ հասկանում, բարեկամ, ասածդ լաւ չէ, ճակատագիրը երկնքից է գրոււմ, գուք ի՛նչպէս կարող եք ճակատագիր լինել:

— Ի՞նչ կայ չը հասկանալու, մենք ուրիշի ճակատագիր ենք գարձեալ երկնքի հրամանով:

— Բայց ո՞ւմ ճակատագիրն էք գուք:

— Նրանք, որոնք ճակատագիր եղան մի ուրիշի:

— Իտրձեալ չեմ հասկանում:

— Ձեա հասկանում, մի մարդ կար աշխարհում, այն իմ եղբայրն էր, նա էլ էր մի օր ուխտաւոր այս կողմերում, բայց նրանից այժմ մնացել են մի քանի մատներ, մէկ էլ այս երեխան՝ նրա սրբին. Մնչօ, ցոյց սուր մատները: Մուշօն այն պատանին էր. նա քանդեց իր գգեստի կոճակները կրծքի վրայ, այնտեղից գուրս քաշեց մի փաթիթօց, բացեց ծալքերը և ծերունու առջև

դրեց մի ցուցամատ և մի բութ մատ սև ու չորացած, որոնց նայելը դժուար էր:

— Հօրս մատներն են, ասաց պատանին, նրանք սպանեցին այս կողմերում, մենք ուխտ ենք գնում իմանանալու ու Կարապետից, թէ ուր է այն ձեռքը, որ կտրեց այս մատները:

— Մենք ման ենք գալիս գտնելու նրանց, որոնց ճակատագիրը մենք ենք, շարունակեց խմբապետը: Է՛հ, ծերունի, աշխարհը մի զարմանալի բան է դարձել. երկխան դաշտում լալիս է, մի ողջ առողջ մարդուց յանկարծ մնում է միայն երկու մատ, գիշերներն աւելի խաւար են, ձմեռն աւելի ցուրտ, քամիներն աւելի ուժեղ ու աւերիչ, մրրիկները յաճախ.

— Հա, մրրիկ, մրրիկ, օֆ, օֆ:

— ... տների կտուրներին բուերը երգ են ասում, իսկ մեռելները գերեզմաններից դուրս սողալով՝ վազվզում են. մահն ու կեանքը կարծես իրար են խառնուել, էլ մարդ զանազանել չի կարողանում: Այ օրինակ, դու ինքդ փորձուած մարդ ես, այնքան չար ու բարի տեսած, կարող ես ասել, այս բոպէին կենդանի ես, թէ՛ մեռած:

Գոպէն պատասխանի փոխարէն երեխայի պէս աչքերը թարթելով՝ բերանը բաց նայում էր և լսում:

— Գու չես պատասխանում, որովհետև չես կարող, կեանքը մահից զանազանել այժմ շատ դժուար է. մենք մեր ճանապարհին այնքան մարդիկ տեսանք, որոնցից և ոչ մէկը չը կարողացաւ այս հարցին պատասխանել, ոչ ոք չը կարողացաւ կեանքը մահից զատել, այն աստիճան այդ երկուսն այժմ խառնուած են իրար. գերեզմանների վրայ տակաւին շրջողները կասես մեռածներ լինեն, մինչդեռ, գերեզմանների մէջ պառկածները դուրս են բնկնում և վազվզում: Ո՞վ է կենդանին, ո՞վ է մեռածը, ինչպէս հասկանալ, ինչպէս իմանալ: Ծանր հարց է, այնպէս չէ, մանաւանդ որ բուերն էլ այնքան վույ-վույ են անում կտուրների վրայ: Մենք էլ գերեզմանների վրայ

չըջողներ եղանք, ասացինք՝ դնանք մեծ սարերին հարցրնելու, կենդանի՛ ենք մենք, թէ՛ մեռած. այսպէս գընում ենք ու Կարապետ, մենք ուխտաւորներ ենք: Ելէք, դաւակներս, ճանապարհներս երկար է. շնորհակալ ենք, ծերուկ, ջրազացդ շէն մնայ:

Պատանին վերստին ինամբով փաթաթեց մատները, ինչպէս մի նուիրական նշխարք ծոցում՝ դրաւ, ուխտաւորները վեր կացան, շնորհակալ եղան և դուրս գալով՝ ձիերը նստեցին, առաջ սլացան:

Գոպէն կանգնած էր ջրազացի դրանը, երկար նայում էր ճամպորդներին. ապա երբ ծածկուեցին բլրներին յետևում, եկաւ, նստեց ջրազացի դրանը թմբի վրայ և խորը մտածմունքի մէջ ընկղմուեց: Այնքան տարի նա ջրազացու էր, այնքան օտարականներ, ուխտաւորներ, ճամպորդներ էր տեսել իր դրանը, խօսել էր շատերի հետ հազար ու մի բաներ, բայց ոչ ոք այսպիսի բաներ չէր ասել, ոչ ոք այնպէս չէր շփոթել նրան տանջողինակ հարցերով. «մենք էլ ճակատագիր ենք». ի՞նչ էին նշանակում այս խօսքերը, ինչու համար էին այն մատները, ի՞նչ մարդիկ էին, ինչէր ասացին սրբերի, բուերի մասին, մի դուչէ աւազակներ լինեն անիծածները, երևի, երևի... մումուում էր Գոպէն, երբ նրա առաջ կանգնեց Ասօն: Ծերունին նրան տեսնելով՝ զարմացաւ, կարծես նրա գոյութիւնն անգամ մոռացել էր ջրազացում, այն աստիճան տարածուած էր իր մտքերով, անձանօթ ուխտաւորներին գործած տպաւորութիւնն այն աստիճան շփոթել, խռովել էր նրա հոգին:

— Գոպէ ամի, հը՛, ի՞նչ կ'ասես:

Ծերունին գլուխը բարձրացրեց և կարծես առանց հասկանալու նայում էր Ասօին:

— Ի՞նչ կ'ասես, մենք կենդանի՛ ենք, թէ՛ մեռած:

Գոպէն շարունակում էր նայել, ապա գլուխը քաշքշեց՝ անպատասխան թողնելով Ասօի հարցը, յետոյ դանդաղութեամբ դուրս քաշեց չիբուխը, լցրեց մանրած թիւթիւնով, վառեց և արագ-արագ ձիւն սկսեց: Ծուխը

բարձրանում էր քուլայ-քուլայ և կարծես իր հետ տանում էր նաև Գսպէի սև մտքերը: Լուռ էին:

—Ես միշտ գիտեմ, որ բուլի ձայնը լաւ չէ, ասաց ինքն իրան Գսպէն:

—Ո՞ւմ համար լաւ չէ, մեռածներն, թէ՛ կենդանիներն:

Գսպէն դարձեալ նայեց նրան զարմացած երեխայի պէս.

—Նրանցից մի բան մնաց քեզ մտա:

Մտածելու հերթն Ասօին էր: Գսպէն վերկայաւ, ներս դնաց, ջրաղացի ստքը բարձրացրեց, իսկ Ասօն դեռ երկար ժամանակ նստած թմբի վրայ՝ նայում էր իր սաների տակից հասող ջրերին, լսում էր ջրտան ազմուկը և մտածում էր ճամպորդների և ճակատագրի մասին, ապա նրա մտքերն այլ ուղղութիւն ընդունեցին, իր սեփական կեանքը ներկայացաւ իր աչքին, յիշեց Սառային, իրան դերսող, խենթացնող Սառային, յիշեց Շողերին, այն դժբաղդ, խեղճ աղճկան, յիշեց մօրը, փոքրիկ Շուշիկին, և ինքն էլ չիմանալով՝ ինչու, սիրտը կրկին լցուեց, իրան զգաց խորապէս թշուառ, աւելի թշուառ, քան երբ և իցէ:

—Երջանիկ մարդիկ... Բացականշութիւնը ուխտաւորների մասին էր:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Կը շարունակուի)

ՇՈՒՇՈՒՑ—ԹԱԻՐԻՉ *)

(Ճանապարհորդական նկատողութիւններ)

III

Մտնում ենք Հասանօվի ձորը: Չորի սկզբում երևում է Մելիքլը թուրքաբնակ գիւղը:

—Այդ գիւղն էլ պատկանում է Ալաջիչայի Ղահրաման-խանին,—բացատրում է շարվաղարը:—Սանն ապրում է հրէն այն սպիտակ տանը, որ այստեղից երևում է դէպի Արագի կողմը: Հէնց մեզ պատահած աւազակները պատկանում են այդ խանին, որը միշտ իր մօտ ապաստան է տալիս Ռուսաց հողից փախած դաշադներին:

Երկու տարուց յետոյ, երբ կովկաս էի վերադառնում միևնոյն ճանապարհով, այդ Մելիքլը գիւղը բոլորովին աւերակ զրտայ: Նասրէդդին Շահի մահից յետոյ Ղահրաման-խանը, ինչպէս յայտնի է, ապստամբւում է, և կառավարութեան զօրքերը նըրան զսպելու նպատակով գալիս են և խանապատիան գիւղերը հրդեհում:

Հասանօվի ձորն ութ ժամուայ ճանապարհ է: Այստեղ դուք կը հանդիպէք միաժամանակ և՛ Ռազմավիրական ճանապարհի վայրենի վեհութեան և Դիլիջանի գեղանկար, մեղմ տեսարաններին: Հասանօվի մի մասը նեղ կիրճ է:

Մտնում ենք քարերի աշխարհը: Ամենը տեղ քար է, գորշ, սև քար: Ամեն քայլափոխում մռայլ ծերպեր, բուրգանման քերծեր, նեղլիկ ձորակներ, անտակ անդունդներ... Աջ և ձախ դէպի ամպեր են բարձրանում լերկ և սեպածի ժայտեր: Վերև

*) Տես Մուրճ № 1:

նայելիս մարգուզըն զնա պատուում է, աչքերը մթնում: Ճանապարհը ընկած է աջ ժայռի կրճքով, ձախ կողմը ոչնչով պաշտպանուած չէ. մի սնդուկ քայլ, և խոկոյն կը զլորուես գէպի սնդուկը: Խեղացի և այս տեսակ կածաններին վարժ ձիերը զգուշութեամբ քայլում են. երբեմն նրանց սմբակների տակից քարերի կոյտերը շառաչելով թափւում են և անյայտանում մթին ձորի մէջ:

Չորի գետակը միշտ կատաղած է: Փրփուրն երեսին նա յարձակւում է տեղ-տեղ կուտակուած քարերի վրայ և չը կարողանալով խորտակել ամրակուրծք ախոյաններին, բարձրաձայն մոնչում է և վեր-վեր բարձրանալով թափթփւում է ըսպիտակ մանր ջրվէժներով:

Երկու ժամ շարունակւում է կիրճը. յետոյ նա այնքան է նեղանում, որ հինգ ձիաւոր շարքով հազիւ կարողանան անցընել. վերևից երկնքի միայն մի նեղ շերտ է երևում: Մեր անցնելու ժամանակ կիրճը պահ մի մթնեց. — ապառաժների թագաւոր արծիւն էր, որ սաւանում էր երկնքում:

Կիրճը յանկարծակի լայնանում է և ձորի կերպարանք ըստանում: Կէսօրից երկու ժամ անց է, պէտք է կանց առնել. սակայն ձորի մէջ տեղ չը կայ գիշերելու, ստիպուած ենք բարձրանալ Մսրքեանց թուրքաբնակ գիւղը, որ գետեղուած է աջակողմեան սարի վրայ: Մի ամբողջ ժամ բարձրանում ենք ուղղաձիգ սարի լանջով. ձիերն առջևից գնում են, մենք էլ պոչից բռնել ենք, որ ներքև չը զլորուենք: Մեծ շարժարանքով մի կերպ տեղ ենք հասնում: Եւ այսպիսի ճանապարհով գիւղացիները ամեն օր երթևեկութիւն են անում...

Հիւրասէր գիւղացին մեզ պատուում է այս գիւղին յատուկ անուշահոտ մեղրով: Ծառից յետոյ գնում եմ զբօսնելու մօտակայ այգում, ուր կան խոյանման գերեզմանաքարեր: Շատ քարերի վրայ տեսայ հայերէն արձանագրութիւններ, ուրեմն այստեղ մի ժամանակ հայեր էին ապրում:

Դուրս եկայ այգուց և նստեցի ձորի գլխին մի մեծ քարի վրայ: Գիշերը վրայ է հասնում հարաւային երկրներին յատուկ արագութեամբ: Ահա շուաքը բարձրացաւ գիծացի սեպածև ժայռի վրայ, ամբողջովին ծածկեց նրան: Հեռաւոր հորիզոնում երևացող սարերն իրանց կապտադոյն շղարքը փոխարինում են սևիւ Երկնքի վրայ մէկ-մէկ սկսում են երևալ աստղերը, որոնք սկզբում պլլում են թոյլ, դալուկ լոյսով, ասես ահա քամին նրանց կը հանդոյնէ: Չորի խորքում ջրաղացի դռնից երևում է փոքրիկ կրակ: Չորս կողմս ոչ մի ձայն չէ լսում, միմիայն շղթին աննշմարելի կերպով գլխիս վրայ գործում է զողոջիւն:

թեկերով իր միասնական թռիչքները: Գիշերը հասաւ, ձորի
 դեպքին աւելի աղմկալից դարձաւ:

Հետեւալ օրը նորից իջնում ենք ձորը՝ ճանապարհը շա-
 րունակելու: Ձորի ձախակողմեն լեռները պատած են ան-
 տառներով, սակայն անխաղաղները մեծ վնասներ են հասցը-
 նում կրքեմն կուտական այդ ծմակներին: Փայտհատի կայքինը
 է խնայում նոյնիսկ ձորում բուսած ընկուզենիներն ու անջը-
 րիները (чинаръ): Ձորի վերջին կայ մի հոյակապ, սրբատաշ
 մեծ քառակուսի քարերից կառուցած կիսաւեր քարվանսարայ:
 Այսպիսի քարվանսարաներ տեսել եմ ե՛մ՝ Ջուլֆայի ճանապար-
 հին: Սրանք և Սուլթանֆրիդինի հին կամուրջը մի ժամանակի
 գործ պէտք է լինեն, որովհետեւ ո՞՞ր միատեսակ է: Այս հարա-
 շինութեան մօտ կուշ է եկել մի խղճուկ, ցեխապատ շինու-
 թիւն, կարծես, սիմբոլական նշան արդի Պարսկաստանի և ան-
 ցած-դնացած օրերի... Թէյատուն է այս. սամօլարը խուլ ան-
 կիւններն էլ է մուտք գործել: Բերում են մեզ համար թէյ, մուգ
 և շատ քաղցր, ինչպէս սովոր են պարսիկները խմելու, փոք-
 րիկ և մէջքը նեղ—«կորսէտաւոր» բաժակների մէջ:

Մեր դէմ կանգնած է ձիւնադադաթ Իլլընա սարը, որի
 լանջով ընկած է ճանապարհը: Երկու ժամուայ ընթացքում
 բարձրանում ենք սարն ի վեր: Այս տեղից, ինչպէս հաւատա-
 ցընում է չարվաղարը, կրկում է Քիրսը: Անցնում ենք կանաչա-
 պատ լանջերով, ձիւնի դօտին շատ հեռու է մեզանից: Օդն այն-
 քան թափանցիկ է, որ ձորի մէջ հոսող դեպքին ձայնը պարզ
 ականջից է հասնում: Ահա մօտակայ լեռներից փչեց թարմ և
 կենսարար մեզմ քամին, իր հեա բերելով խոտերի և ծառերի
 բուրմունքը, մարդկային բնակչութիւնից հեռու, լայն և ազատ
 տարածութեան շունչը, որ քաղցր է և թանկագին, քան քա-
 ղաքների բոլոր զուարճութիւնները: Այս կենսարար օդը զթա-
 տատ մօր ձեռքի պէս զուրկուրում է կրկուց և նեարդերդ բու-
 ժում...

Տափարակ կրկում ապրող մարդիկ հաւատացնում են, թէ
 բարձր սարեր տեսնելիս նրանք անախորժ տալաւորութիւն են
 զգում. իբր թէ սարերը ճնշում են մարդուն, իբր թէ մարդ
 զգում իր սննդութիւնը վիթխարի լեռների և տարերային աղ-
 մրկալից կրկութների առջև:

Սակայն ինձ վրայ, իմ հոգու արամադրութեան վրայ,
 ընդհակառակը, լեռները բարեբար ազդեցութիւն են անում:
 Ես հոգով բարձրանում եմ, կրք սարերի գաղաթները և ընու-
 թեան վեհութիւնն եմ տեսնում: Իմ մտածողութիւնը պարզ-

ւում է և ամբաստնուում, երբ գիտում եմ, թէ ինչպէս ժայտերը
և վաղող ջուրն իրար հետ սպաքար են մղում:

Սարից իջնում ենք և երկար գնալուց յետոյ հասնում Ազ-
բուլաղ թուրքաբնակ գիւղը: Իմ շարվազարն ազբուլաղցի է,
մեզ հրաւիրում է իր տունը:

Այս գիւղում առաջին անգամ տեսնում եմ «օղա», որը ոչ
այլ ինչ է, եթէ ոչ դոմի շարունակութիւնը, սակայն «օղայի» յա-
տակը մի արշինաչափ բարձր է դոմի յատամից և դոմից բա-
ժանուում է սլատով, որը սակայն առաստաղին չէ հասնում, այն-
պէս որ «օղայից» երևում է ամբողջ գոմը, իսկ սրա հոտերը և
տաքութիւնն ազատ մուտք ունեն «օղայի» մէջ: Օղայում «վըր-
թոջաղի» փոխարէն բուխարի է: Ազբուլաղից սկսած արդէն
փայտի սակաւութեան պատճառով ամբար են վառում:

Նոր էինք անգաւորուել օղայում, երբ մի խումբ թուրք
կանայք եկան և շար ընկան դոմում, օղայի սլատի առջև:

— Հաչիմ... անվստահ կերպով շէնջաց նրանցից մէկը:

— Բալի:

— Բարով ես եկել, Հաչիմ (իմ շարվազարի անունն է):

— Բարով կենաս, բաջի:

— Գլխիդ զուրբան, Հաչիմ, մեր մարդից ինչ լուր ունես:

Բանից երևաց, որ իմ շարվազարը և տասնումէկ ուրիշ
ազբուլաղցիներ մի քանի շաբաթ առաջ մաքսանենդ ապրանք
են տարել Շուշի: Երբ մաքսանենդները Երասխից դուրս դալիս
են լինում, սուս սահմանապահ զինուորները նկատում են և
սկսում են հրացանաձգութիւն թուրքերի վրայ, սպանում են
չորս ձի և մի մարդ վիրաւորում, չորս բևռ ապրանք տանում:
Վիրաւորուածը հարցնող կնոջ ամուսինն է լինում, սակայն
զինուորների ձեռքը չէ ընկնում, ինչպէս և միւսները:

Բացի մեզանից օղայում կան մի քանի թուրք հիւրեր:
Սկսում է երկար ու բարակ զրոյց, մինչև ընթրիքը կը բերեն:
Խօսակցութեան զլխաւոր նիւթը, ինչպէս և միւս գիւղերում,
զողութեան, դաշաղութեան կամ կրօնական հարցերի մասին է:
Շուշեցի թուրքը շատ հմուտ է կրօնական զիտութեան մէջ և
մի առանձին սիրով է բացազրում սամիկ գիւղացիներին զու-
րանի բովանդակութիւնը:

Վերջապէս ընթրիքը բերին, ինձ և մահմեդականների հա-
մար առանձին-առանձին: Մեզ հիւրասիրում են զոմչի մսից
պատրաստած «բօղբաշով»: Գոմչի միսն անհամ և ծանրամարս
գտայ, բայց թուրքերը մեծ ախորժակով են ուտում: Բոլորուել
են մի մեծ ամանի շուրջ և միասին են ուտում, լուռ և մըտա-
խոն:

Ընթրիքից յետոյ թուրքերը կատարում են իրանց նամազը: Գիւղացիները նամազի յայտնի շարժողութիւններն արագարագ են անում, կարծես, պարտականութիւնից ազատուելու համար և շուտ վերջացնում են աղօթքը: Այդպէս չէ վարում շուշեցի թուրքը, նրա շարժումները ծանր են և սահուն, աղօթքի խօսքերն արտասանում է բարձր և մի առանձին շեշտով, այնպէս որ նամազը բաւական երկար է տևում: Նամազը վերջացնելուց յետոյ շուշեցին սկսում է գիւղացիներին սովորեցնել լաւ նամազ անելը և պատուիրում է, որ այնուհետև նրանք լաւը՝ վերաբերուեն դէպի աղօթքի ծիսակատարութիւնները:

Պատկում ենք քնելու բոլորս միենայն օդայում: Իբրև պատիւ անկողինս ձգում են բուխարու մօտ: Կէս դիշերին յանկարծ դգում եմ, թէ մի ինչ-որ բան խեղդում ինձ: Ուղում եմ անդիցս բարձրանալ. ծանրացած գլուխս հազիւ եմ կարողանում շարժուել... օգ չը կայ: Գոմբ և օդան տաք պահելու համար ամեն ծակ ու ծուկ ծածկել են, նոյնիսկ բուխարու երգիկը մի խուրձ խոտ են կոխել, որ ներսը ցուրտ չը մտնի: Իսկ գոմի բաղամթիւ կենդանիների և օդայի մարդկանց ներկայութիւնը օգը փչացրել է, թթուածին չէ մնացել: Երևում էր, որ քնած թուրքերը, նոյնիսկ անասունները, նեղւում էին, որովհետև անհանդիսա շարժումներ էին գործում և ծանր շնչում: Հազիւ կարողացայ ձեռքս մեկնել և երգիկի միջից խոտը հանել... զրաի մաքուր օգը ներս մտաւ և մի քանի բոպէից յետոյ կենդանացրեց բոլորիս:

* * *

Հետեւալ օրը գուրս կիայ դիւզը պտտելու, որովհետև նախօրօք որոշուած էր մի օր Աղբուլաղում հանգստանալ: Այս դիւզից արդէն ամեն ինչ տարբերում է: Լեռները ցածր են և մերկ: Բուսականութիւնն աղքատ է. անդ-տեղ երևում են արհեստական անկած ուռնիներ և կաղամախներ (ТОПОЛЬ): Գիւղական աները կառուցուած են ամբողջովին հողի երեսի վրայ և նման չեն զարագամի, որի մի մասը գետնի տակ է լինում: Պատերը թեք են և շինուած գորշ ցեխից: Տները հիմքի մօտ լայն են, իսկ դէպի շինութեան կատարն աւելի նեղ և ծածկուած են տափակ կտուրով: Գիւղացիների հագուստն էլ է տարբերում: Կանանց շորը, որ համապատասխանում է գերիսյին, կարճ է, հազիւ է հասնում մինչև ծնկները, սրունգները մերկ են մնում, կարծես այս կանայք ցանկութիւն ունեն «դէ-կոլաէ» անել, այն էլ ներքեից:

Տրամարդիկ միշտ հագնում են կապոյտ կտորից կարած շորեր, փափախի փոխարէն դնում են մի տեսակ կլոր գլխարկ,

որ կարած է լինում կապոյտ մահուդից և շատ նմանութիւն ունի պարսկական հին սաղաւարտին: Թուրքը և պարսիկը իր օրում գտակը զլխից չէ հանում, նոյն իսկ քնած ժամանակը: Այդ վատ սովորութիւնն առաջացնում է գլխի կաշու հիւանդութիւններ: Բացի այդ մահմեդականները—ժողովրդի ասած— միշտ «գլխից խեղճ» են լինում, այսինքն՝ գլուխը հեշտութեամբ է մրսում:

Գլուխը սաք պահելու սովորութիւնը շատ հինուց է մընացել: Յոյն պատմաբան Հերոդոտը (450 թւականին Քրիստոսից առաջ) գրում է, թէ Պելուզեան դաշտում, ուր պարսիկները յաղթութիւն էին տարել եգիպտացիների վրայ, եգիպտացիների և պարսիկների ոսկորները հաւաքել էին և երկու ասանձին թմբեր կազմել, պարսիկների գանգերը քարին խփելիս, հեշտութեամբ էին փշրում, մինչդեռ եգիպտացիներինը աւելի ամուր էին: Գանգերի ամբուլթեան զանազանութիւնը Հերոդոտը հետեւալ կերպով է բացատրում. եգիպտացիները սովորութիւն ունէին մանկութիւնից գլուխ ամբել և սովբեցնում էին դիմանալ արեգակի ճառագայթներին, իսկ պարսիկները, ընդհակառակը, ծննդեան օրից սկսած գլուխները միշտ փաթաթած էին պահում:

Եւ Պարսիկները մինչև այժմ պահել են այդ սովորութիւնը: Աղբուլաղում չորս մեծ և քաղցրաճուր սղբիւր կան, որոնցից և ստացել է իր անունը: Դիմում եմ դէպի մօտակայ սղբիւրը, ուր կանայք լողացնում էին ուղիղ սղբիւրի տաշտակի մէջ գիփտերիսով մեռած մի երեխայի: Մեւ սղբիւրի մօտ մանր սղաներ և աղջիկներ հաւաքուած խաղում էին: Երբ ինձ տեսան, վախեցած իսկոյն փախան, սակայն քիչ յետոյ սիրտ առնելով հաւաքուեցան մի տեղ և հետաքրքրութեամբ սկսեցին ինձ դիտել: Իսկ երբ խօսեցի թուրքերէն, նրանք իրար երեսի նայեցին, քրքջացին և նորից սիրտ առնելով, աւելի մօտեցան՝ կուս իրար գիտում էինք:

Երեխաներից շատերը վախտ էին, մեծ փորով, կեռացած ոտերով: Աղջիկներից շատերը սիրուն էին, մեծ և սև աչքերով, սպիտակ մորթով, բայրրի մազերը «հինայով» ներկուած էին *), շատերի գէմքերը ոչ-մանկական լրջութիւն էին արտայայտում:

Երեկոյեան օդայում գիւղացիներ էին հաւաքուել ժամանակ անցկացնելու. կար և մի պարսիկ պաշտօնակայ, զեղին կու-

*) Պարսիկները հաւատացած են, թէ «հինան» յատկութիւն ունի գլխի տաքութիւնը դուրս քաշելու, կաշին ամրացնելու, մազերը կակղացնելու և նոյն-իսկ գլխացակերը դարմանելու:

ճակներով կապոյտ համազգեստը հազին, սև երկար զգակին կպցրած «չիր-խուրչուդ» նշանը: Միջին հասակի մի նիհար մարդ էր այդ, մէջքից կորացած, գալուկ դէմքով, խոշոր, մթնած աչքերով. շարժումները զանդաղ էին, հազիւ էր մի երկու խօսք ուղղում խօսակիցներին:

— «Թրիեաքի» է, — ականջիս փախաց շուշեցին, գլխով ցոյց տալով պարսիկ պաշտօնեային, — Թրիեաք (ափիոն) ծխելու սովորութիւն ունի. ծխելու ժամանակն եկել է, դրա համար է այդքան թուլացած:

Նա իրաւ, քիչ ժամանակից յետոյ պարսիկը կրակ պահանջեց, չոքեց ծնկների վրայ, զրպանից հանեց ափիոնի առվը և չիրուխը, սա սովորական չիրուխից տարբերուում է միայն գլխով: Ափիոնի չիրուխը կազմուած է երկու մասից՝ փայտէ խողովակից և կաւէ գլխից, որ փոքրիկ պուլիկի նման է, ձուր մեծութեամբ. փայտէ խողովակն ամրացրած է պուլիկի բերանում, իսկ գլխի վրայ մի փոքր ծակ է բացած: Պարսիկը բակլայի մեծութեամբ ափիոնը կակղացրեց կրակի վրայ և կպցրեց ծակի մօտ, վերջրեց ունելիքով մի մեծ վառուած ածուխ, մօտեցրեց ափիոնին, մէջքից կռացաւ և սկսեց խողովակը ծծել. նրան չէր յաջողուում, ծուխը չէր գալիս, ձեռները դողողում էին, ուստի չէր կարողանում կրակն ափիոնի մօտ պահել: Բարկութեամբ նորից կրակ պահանջեց. բերին «մաղալի» մէջ վառուած ածուխներ: Պարսիկը վերսկսեց ծխելու փորձերը, սակայն չէր յաջողուում ափիոնը վառել: Ծխելու ցանկութիւնն այնքան էր սաստկացել նրա մէջ, որ ամբողջ մարմնով դողում էր նա. կարմրած աչքերի խնձորները ասես ահա դուրս կը գան բոյներից. ուռնակները լայնացած, թուրք բերանին ծանր շունչ էր քաշում: Յանկարծ ունելիքը և չիրուխը նա պետին շքարտեց և սկսեց երկխայի պէս հեկեկալ... Նորից վերջրեց չիրուխը և ունելիքը, կրակն ափիոնին մօտեցրեց և, ս' ուրախութիւն, ցանկալի ծուխը բերանն եկաւ: Բաւականութիւնից աչքերը կիսափակեց և կծու ծխի քուլաները սկսեց բերանից և պնչերից դուրս հանել: Նա շարունակում էր ապահովութեամբ ծխել, բերանի մի կողմով պարբերաբար ծծելով չիրուխի խողովակից, իսկ միւս կողմով ափիոնի մօտ պահած կրակը փչելով, որ չը հանդչի: Թմրեցնող ծուխը մեղ վրայ էլ ազդեց, բայց այդ պարսիկի փոյթը չէր, նա դրախտի մէջ էր. կիսայինուած էր դօշակի վրայ, աչքերը փակած, կիսաբաց շրթունքները ժպտում էին, ամբողջ դէմքն անհուն բաւականութիւն էր ցոյց տալիս: Երկար ժամանակ այդ դրութեան մէջ մնաց: Վերջապէս աշխուժութեամբ նա նստեց տեղը. բոլորովին կերպարանափոխուել էր,

կարծես առաջուայ դանդաղիտ մարդը չը լինէր. աչքերը փայլում էին տենդային կրակով, դէմքը եռանդ էր արտայայտում. նա սկսեց քթի տակին մտմուռլ ինչ-որ երգ:

Գիւղացիները զգուանքով էին նայում այդ թրիեաքի պաշտօնեային, սակայն ոչնչով չէին արտայայտում իրենց զգացմունքը, և շարունակում էին անվերջ զրոյցներ:

* *

Հետեակ օրը շարունակում ենք մեր ճանապարհը: Գիւղերն այժմ յաճախակի են պատահում. Թօխումգիլ, Սումագիլ, Մէհտար, Չախմախրուլաղ, Չայքեանդ, Հիւսէյնարար, Դըզըզա թուրքաբնակ գիւղերը յաջորդում էին մէկը միւսին: Չայքեանդ գիւղից վերջանում է Դարազաղը, և սկսում է Մավախան մշալը: Այստեղ մեր շարվաղարի օգնականը, մի քսան տարեկան տղայ՝ իր վարձն առաջուց ստացած լինելով, յարմար առիթից օգուտ քաղելով թողնում է իր տիրոջը և փախչում իր գիւղը, հետը տանելով շարվաղարից պողպատ տասը կողկահանոց «զարալա» դանակը:

Վերջին գիշերն անցկացրինք Սարանդ թուրքաբնակ գիւղում: Բաղաքի մօտիկութիւնն արդէն զգացում էր. այստեղ միայն գիշերելու համար ինձնից վերցրին մի բուբլի, մինչդեռ Դարաբաղում և Դարազաղում գիւղացիները ձրի էին թողնում իրենց մօտ գիշերելու. ես վճարում էի միայն ուտելիղէնի համար, իսկ շարվաղարը իր ձիերի կերի համար: «Սարանդ» անունը յիշեցրեց մեր հին անարոյժ գիտնականներին, որոնք հաստատում էին, իբր թէ Մարանդ քաղաքի անունը դուրս է եկած երկու խօսքից, այսինքն՝ «մայր» և «անդ». իբր թէ այդ քաղաքում թաղուած է եղել Նոյի մայրը, ուստի քաղաքին սուել են Մայրանդ կամ Մարանդ անունը: Եթէ այդ ճիշտ է, ուրեմն Սարանդ գիւղի անունը բաղկացած է երկու խօսքից՝ «սար» և «անդ», սակայն այս գիւղի մօտ իսկի սար էլ չը կայ:

Սարանդից սկսած ճանապարհին յաճախ պատահում էինք բազմաթիւ անցորդների. ձի հեծած կանայք շագրաների մէջ փաթաթուած, «ուրբանդ» երեսներին քաշած, սէյիգների և գերվիշների խմբեր, ուղտերի քարվաններ խառնուել են միմեանց: Մեր մօտով անցնելիս՝ ճանապարհորդները մահմեդականի սովորութեան համաձայն նախ բարևում էին իմ ուղեկից մահմեդականներին և յետոյ ինձ:

Այստեղի լեռները բուսականութիւնից բոլորովին դուրկ են: Երևում են զոյնըզոյն հողային սարեր, կանաչ, կապոյտ, դեղին, կարմիր, ծիածանի բոլոր ներկերով: Միտս ընկաւ Շատախի մասին ասուածքը:

«Մոկայ սարեր պեռ-պեռ (մեծ) քարեր,
Շատխու կրկիր բալաջ (դոյնդոյն) սարեր»

Բարձրանում ենք Փայա սարը, որտեղից մեր աչքերի սողն յանկարծակի բացւում է Թաւրիզի տեսարանը: Տները գեռ չեն երևում այգիների միջից, քաղաքը նմանում է մի վիթխարի այգիստանի, որի ծայրը գնում է և հորիզոնում անհետանում:

Պատմական քաղաքի տեղն ինձ ձգեց պատմական խոհերի մէջ: Արդեօք ձիւտ է, որ Մեհրուժանի սպանութեան ատիթով է ծագել այս քաղաքի անունը, որ Թաւրիզ խօսքը «դա» և «վրէժ» խօսքերի ազաւաղումն է: ձիւտ է, թէ այդ էլ «Մարանդ» անուան բացազրութեան պէս է...

Յանկարծ ձիւ մի թռիչք գործեց դէպի մի կողմ և սկսեց վախեցած փնջալ: Այդ անսպասելի շարժումից հազիւհազ կարողացայ թամբի վրայ նստած մնալ, նայեցի դէպի աջ՝ ձիւ վախենալու պատճառն իմանալու... և զարմանքից ապշած մընայի: Քարերի կոյտերի միջից, հողային որջերից դուրս էին սողում դէպի մեզ ինչ-որ մարդանման արարածներ զարհուրելի կերպարանքով, կարծես նոր դուրս եկած լինէին դժոխքից: Դըրանք բորստութեամբ հիւանդացածներ են, որոնց պարսից կառավարութիւնը թոյլ չէ սալիս ապրելու քաղաքներում կամ դիւղերում, ուստի այդ թշուառները ստիպուած են լինում բանուկ ձանապարհների մօտ որջեր շինել և սղորմութեամբ ապրել: Յիշեցի Խորենացու գրածը Մեծն Ներսէսի ժամանակների մասին. «... բորստները հալածւում էին իրրի օրէնքով պիղծ համարուածներ, և ուրուկներին քշում էին, որ նոցա ախար ուրիշներին չը փոխուի. նոցա բնակարաններն անապատներն ու ամայի տեղերն էին, և ծածկոցը—քարերն ու մայրառները. նոքա ոչ ոքից միթիթարութիւն չէին դոնում իրանց թշուառութեան մէջ...»

Անցել են բազմաթիւ դարեր, և վերաբերմունքը դէպի թշուառ հիւանդները նոյնն է մնացել:

Իմ տեսած յորտանների մէջ կային տղամարդիկ և կանայք, ձերեր և երիտասարդներ: Մի քանիսնների երեսները թնթոնած էին (одутловато). ճակատի բնական խորչերն աւելի խոր ընկած են, ծալքերն աւելի հաստ, նամանաւանդ յօնքերի վերերը և յօնքամիջի մօտ: Յօնքերի մազերը թափուած են, իսկ կաշին իջել է աչքերի վրայ, այնպէս որ աչքերն իրականից փոքր են երևում. քիթը հաստացած է և լայնացած, չրթոււքները նոյնպէս հաստացած են, իսկ կղակը քառակուսի ձև ստացած: Ականջները նոյնպէս հաստացած են և բշտիկներով ծածկուած:

Այդպիսի երեսները զարմանալի նմանութիւն ունեն սափուծի խրոխտ դէմքին:

Միւսներն ընդհակառակը, զարհուրելի կերպարանք ունեն: Սրանց մարմնի կաշին չորացած է և ճարճքած, տեղ-տեղ խոցերով պատած: Կարկամած ձեռները, որոնց մատերի կէտը մինչև յօդերն ընկած են և բաց խոցեր են երևում, կառկառում են դէպի ձեզ և սղորմութիւն հայցում: Մի քանիսներն արդէն զրկուել են ստաների և ձեռների թաթիրից: Կար և մի երիտասարդ կին, որի երեսի վրայ քթի տեղ մի մեծ և խոր ծակ է բացուած, մի աչքը փոս ընկած-փակուած է, իսկ միւս սպիտակած աչքը սևեռել է մեր երեսին, կարծես, մարմարեայ հին արձանի աչք լինի: Բարեբախտաբար այդպիսի խոցաւոր հիւանդները ցաւեր չեն զգում, և երևում էր, որ բոլորովին անասուրեր են վերաբերուած դէպի իրանց վիճակը:

Ձիւները քշեցինք և հեռացանք այդ զարհուրելի տեղից: Մի քանի ժամից յետոյ արդէն մտնում ենք Թաւրիզի նեղ փողոցների լարբրինթսը:

ԲԺ. Բ. ՕՀԱՆԵԱՆ

Ա Ռ Շ Ա Լ Ո Ւ Ս Ի Ն *)

Վէպ յունաց կեանքից

Ե. ԲԵՆՍՕՆԻ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

1

Ոսկեգոյն ծովածոցի եղերքին որպէս մի անկենդան քաղաք՝ լուռ ու մունջ փռուած էր Նաւպլիան: Հարաւային այրող արեղակը իր ճառագայթները սփռել էր զլիսաւոր փողոցի վերայ, որ ձգուած էր ծովափից մինչև հրապարակը, և միայն տեղ-տեղ երևում էր կապտագոյն ստուերի մի նեղ շերտ:

Հրապարակի մի կողմում բարձրանում էր թիւրքական զօրանոցը. այդ մի երկյարկանի, շառագոյն, քարեայ, բաւական մեծ, բայց հեղձուցիչ շինութիւն էր, ճակատի կողմից երկար կամարով զարդարուած: Այստեղ անզաւորուած էին յատկապէս քաղաքը զրաւող երեք վաշտ, որոնք սկամայ նախանձում էին Պայամերզեան ամրոցում բնակուող զօրքի մնացած մասին, որովհետև ամրոցը շինուած էր դաշտավայրի մէջ տեղում, հինգհարիւր ոտնաչափ բարձրութիւն սենեցող մի բլրակի վրայ: Զօրանոցների արևմտեան մասում ապրում էին սպաները, իսկ հակառակ կողմում դաճուած էր բանաբ, որն ըստ սովորութեան լիքն էր տեղական յոյներով. որանք բանտարկուած էին այն թիւրք վաշտաւորների փողերը չը վճարելուն համար, որոնք քառասուն և յիսուն տոկոսով զրամ էին տալիս նրանց: Զօրանոցների զիմաց խանութների և սրճարանների

*) Քարգմանութիւն րուսերէնից („Историч. Вѣстн.“ 1898 г.).

չարքն ընդհանուր տեսարանին մի խաղաղ կերպարանք էր տալիս:

Հրապարակի արևելեան կողմում սկսւում էր մի նեղլիկ փողոց, որը քաղաքի ամբողջ երկարութեամբ անցնելով՝ առաջ էր գնում հին վննետիկեան ամբուլթիւնների միջով, որոնք ներքնուզու. (տունէլ) նման մի բան էին կազմում: Աջ կողմն ուղղաձիգ բարձրանում էր մի գորշ, բերդանման լեռ, որ արեղակի տակ խանձուած խոտերից զոյնզոյն էր երևում: Այս լեռան ստորտուի մօտ, քաղաքից դուրս, նոճիների և նախնիների մէջ պատուարուել էին երկու թէ երեք սպիտակ ամարանոցներ, իսկ ճանապարհը նրանց մօտից անցնելով՝ դուրս էր գալիս դէպի բաց դաշտավայրը, որտեղ մի կողմից՝ փութած էին սիմլինդրների արտերն ու խաղաղի այգիները, իսկ միւսից—ըսկսւում էր եղեգնով ծածկուած մի ճահիճ և հասնում մինչև ծովածոցի եզերքը: Գարունը շատ չորային էր, և յունիսի այս առաջին օրերին ամբողջ երկիրն արդէն դեղնած, չորացած տեսարան էր ներկայացնում:

Կէսօրուայ տապն աւելի սաստկանում էր հարաւից փըշող սիրօկիօյից (այրող քամի), որ բարակ, սպիտակ փոշով ծածկում էր անցորդներին:

Ճանապարհին, քաղաքից մի մղոնաչափ հեռու, կանգնած էր մի փոքրիկ պինետուն, նրա պատշգամբը դարգարուած էր օլէանդրներով, որոնք ամպհովանու նման մի բան էին կազմել: Մի քանի փայտեայ աթոռներ և սպերի վրայ հազիւ-հազ կանգնած մի սեղան անցորդներին հանգստանալու և զինի խըմելու էին հրաւիրում: Բայց ինչպէս երևում էր, հիւրերի թիւն այնքան էլ մեծ չէր լինում, որովհետև զինեվածառը պատի ստուերի տակ նստարանի վրայ պառկել և բերանը լայն բաց արած քնել էր: Մի մեծ, տղեղ շուն պահպանում էր նըրա քունը և յուսահատ կերպով ճանձեր որսում:

Ուղիղ գինետան զէմուղէմը երևում էր մի մաքուր սպիտակացրած տուն, որն ըստ երևոյթին աւելի մեծ յարմարութիւններ ունէր, քան յոյն շինականների սովորական տները: Նրա առաջ տարածուած էր մի շքեղ պարտէզ արծաթափայլ սօսիներով լցուած, իսկ երկու կողմից շրջապատուած էր բաց սրահով, որի փայտեայ սիւների վրայ ծաղկափթիթ վարդենիներ էին փաթաթուել: Սրահի ծայրում դրուած էր մի ցած բազմոց, որի վրայ երկու հոգի էին նստած: Նրանք երկուսն էլ լուռ էին: Դրանիցից մէկը քահանայական վերարկու ունէր հագին:

Տիրող լուռութիւնը յանկարծ խանգարեց մի կատու, որը

մլաւելով դուրս պրծաւ սրահի անկիւնից. կատուի ետեից բարձր-
րաձայն ծիծաղելով վազում էր մի երկայնամազ երիտասարդ:
Նա հագած էր մի սպիտակ քաթանէ կարճ չրջազգեստ և նոյն-
պիսի նեղ անդրաւարտիկ: Նա բորիկ էր և գլխաբաց: Բազմոցի
վրայ նստողներին տեսնելով՝ նա տոանց կանգ առնելու վա-
զեց-անցաւ մօտներից՝ բարձր դուռով:

—Կատուն ուզում էր ձուկ փախցնել: Ա՛յ, ես նրան ցոյց
կը տամ:

Նստողներից մէկը նայեց նրան և ժպտաց:

—Դու կարող ես հիւանդանալ՝ գլխաբաց արեգակի տակ
վազելով: Նստի՛ր այստեղ մեզ հետ: Դու նչ մի քաղաքավա-
րութիւն չունես, Միտոսս: Միթէ չես տեսնում հայր Ան-
դրէասին:

Միտոսը մօտեցաւ քահանային և ծունր իջաւ նրա առաջ:

—Աստուած օրհնէ քեզ, —սասց հայր Անդրէասը՝ ձեռքը
նրա գլխին դնելով:

—Դէհ, նստի՛ր, Միտոսս, և պատմի՛ր, թէ ինչ յանցանք է
դործել քո գէմ կատուն, —սասց հայրը:

Այդ խօսքերի վրայ երիտասարդի դէմքը, որ քահանայի
օրհնութեան ներգործութեան տակ լուրջ արտայայտութիւն էր
ստացել, նորից փայլեց:

—Գարչիկի կատուն մտել էր մառանը, որտեղ ես ձուկն
էի պահել, և ես հազիւ կարողացայ բռնել նրա պոչից. բայց
նա ինձ այնպէս ճանկոնց, որ ձեռքիցս բաց թողցի: Սակայն
սպասի՛ր... Ես պեռ քո ետեից կը հասնեմ և քեզ թիւրքերինման
սարսափելի կը դնքսեմ:

—Բաւական է, Միտոսս, —պատասխանեց հայրը, —ժամա-
նակ է արդէն մի կողմ թողնելու կատուների ետեից ընկնելը. չէ՞
որ դու այժմ տաննուլ տարեկան ես և բացի գրանից գիտես,
որ այսօր երեկոյեան մօրեղբայրդ գալու է:

—Նիկողայոս մօրեղբայրը:

—Այն: Գնա՛, լուանց ձեռներդ և սփոսքը պի՛ր, իսկ յե-
տոյ ձեւ խաշիր, հաց, պանիր բեր և բո՛ւլ քաղիր:

—Իսկ հայր Անդրէասն էլ պէտք է ուտէ:

—Ի հարկէ: Բայց չը մոռանաս ձաշին կօշիկներիդ հագնել:
Միտոսը մտաւ տուն:

—Կատարեալ երեխայ է, —նկատեց հայր Անդրէասը:

—Ինձ էլ այդպէս է թւում, —պատասխանեց տանտէրը. —
բայց այ կը տեսնենք, թէ Նիկողայոսն ինչ կ'ապէ: Այնուամե-
նայնիւ Միտոսն առողջ, ուժեղ տղայ է և կը կարողանայ գաղտ-
նիք պահել:

Քաննանն վեր կացաւ տեղից և մի ռխակալ հայեացք
գցելով գէպի ամրոցն՝ ասաց.

—Ո՛վ արդարադատ Աստուած, երբ պէտք է արդեօք դու-
րատ արժանւոյն հատուցանես թիւրքերին: Գթութիւն ասուած
բանը չը գիտեն նրանք, և նրանց էլ չը պէտք է ինայել: Մահ և
կորուստ Յունաստանի թշնամիներին: Թող անիծուած լինեն
նրանք:

Տասնեմէկ տարի զրանից առաջ հայր Անդրէասը հարկադր-
ուած էր Աթէնք գնալ իր նոր վախճանուած կնոջ հողարա-
ժինը վաճառելու համար, սրովհետեւ թիւրքական հարկերի շը-
նորհիւ հոգն աւելի շատ վնաս՝ քան օգուտ էր բերում: Նա իր
հետ վերջրեց նաև փոքրիկ, վեց տարեկան դստերը, որի գէմ-
քին նայելով գժուար չէր գուշակել, որ ժամանակին նա մի
աննման զեզեցիուհի է գտնալու: Վերադառնալիս՝ Աթէնքից
ոչ հեռու նրա վրայ յարձակուեց թուրքերի մի աւագակախումբ
և նրան արիւնհաչաղախ թողնելով ճանապարհի միջին խլեց
նրա դստերը, հաւանականաբար մի որևէ հարեմի վաճառելու-
նպատակով: Մի քանի ժամ խեղճ հայր Անդրէասն անզգայ պառ-
կած մնաց, իսկ երբ ուշքի եկաւ, հազիւ-հազ ետ գարձաւ Ա-
թէնք, որտեղ երկու շաբաթ իզուր որոնեց իր կորած դստերը:
Իշխանաւորները չէին ուզում անգամ լսել նրա դանդաղ թիւր-
քերի յափշտակած փողերի և դատեր մասին: Այն ժամանակնե-
րը թիւրք իշխանաւորները յոյների հետ վարոււմ էին, ինչպէս
չների հետ: Անգթութիւնը, աւարատութիւնն ու սրտիժը նը-
բանց ձեռին կառավարութեան միակ զէնքերն էին:

Այն ժամանակից սկսած մի միտք զիշեր-ցերեկ հետամուտ
էր լինում հայր Անդրէասին—վրէժ ոչ միայն նրա դստերը
յափշտակող թիւրքերից, այլ այդ զեռերի ամբողջ ցեղից: Տասնե-
մէկ տարի նա անխախտ պահպանել էր այդ միտքը և սկզբում
լոկ սպառնալի խօսքերով էր արտայայտում այն, իսկ վերջին
ժամանակ արգէն սկսեց մասնակցել ընդհանուր ապստամբու-
թեան կազմակերպութեանը, որը դազմնի, բայց հաստատուն
կերպով նախապատրաստոււմ էր հայրենասէրների յանձնաժո-
ղովի ջանքերով:

Հայր Անդրէասը բարձրահասակ, լաւ կազմուածքի տէր մի
մարդ էր և արտաքինին նայելով, նա ճիշդ որ, ինչպէս ինքը
միշտ հաւատացնում էր, գուտ յունական ծագում ունէր: Նա
ծնուած էր հարաւ-արեւմտեան Արգոլիդայում, այս հեռաւոր
լեռնոտ երկրում, որը թիւրքերին երբէք չէ յաջողուել հպատա-
կեցնել իրանց: Նրա հայրը մեռաւ սրանից հինգ տարի առաջ,

բայց երբ հայր Անդրէասն Աթէնքից առանց դատերը վերադարձաւ, ծերունին տանից արտաքսեց նրան.

— Երեխան Աստուծոյ օրհնութիւնն է, ասաց նա.— և հայրը պարտաւոր է աւելի շուտ իր կեանքը տալ, քան զըրկուել Աստուածային օրհնութիւնից: Դու անարգեցիր ինձ՝ իմ թոնիրիկս անիծուած թիւրքերին տալով: Ես այլևս չեմ ուզում քեզ տեսնել:

— Բայց ես ինչ կարող էի անել, — պատասխանեց Անդրէասը, — նրանք վեց հոգի էին, իսկ ես մենակ: Ես նրանց զիմազրեցի, որքան կարող էի, և նրանք ինձ կիսամեռ վայր դցեցին ճանապարհի վրայ:

— Ափսոս, որ չեն սպանել քեզ էլ, քո դատերն էլ:

— Ես համաձայն եմ քեզ հետ, բայց չէ որ զրա մէջ ես մեղաւոր չեմ: Միթէ երբէք չը պէտք է ներևս ինձ:

— Կը ներեմ միայն այն ժամանակ, երբ լսեմ Թէոդորայի մահուան լուրը:

— Ի՞նչպէս թէ Թէոդորայի: Ինչո՞ւ դու այժմ նրա մահն ես ուզում:

— Որովհետև նա նախատինքով կը մեծանայ և կ'ամուսնանայ մի սրեկ տնիծուած թիւրքի հետ, իսկ այդպիսի բան մեր ցեղի մէջ զեռ եւ չէ եղած: Հեռացիր և էլ երբէք չը վերադառնաս:

Հինգ տարի նրանք չը տեսնուեցան, բայց վերջապէս ծերունին զգալով, որ իւր վախճանը մօտեցել է, ուղևորուեց Նաւպլիա, որտեղ բնակութիւն էր հաստատել հայր Անդրէասը: Վերջինս հօրը տեսնելով՝ ուրախութիւնից համարեւս խելքը թոցրեց:

— Ես եկայ քեզ մօտ, որդի, — ասաց ծերունին, — որովհետև ծեր եմ և մենակ ձանձրացայ:

Օրերով ծերունին նստում էր տանը և աչքերը գէպի փոշոտ ճանապարհն ուղղած՝ Թէոդորային սպասում. բայց նա չէր երևում. և մի երեկոյեան ծերունին սենեակը վերադառնալով հանդիսաւոր կերպով ասաց.

— Ես մեռնում եմ, և այժմ ի զուր շատախօսութիւն անելու ժամանակը չէ: Երբ Թէոդորան կը վերադառնայ, ասն, որ ես նրան շատ էի սիրում և սպասում օրերով: Իսկ եթէ, Անդրէաս, քո ոչօրից բարձր կը լինի ներել նրան, գոնէ իմ սիրոյս համար ներիր, չէ որ նա շատ փոքր էր և ս'չ մի բանում յանցաւոր չէ: Դու էլ յանցաւոր չեա, այնպէս որ ես ի զուր յարձակուեցի քեզ վրայ: Բայց եթէ ես քեզ սաստիկ չը սիրէի, քեզ վրայ չէի էլ բարկանալ: Միայն յիշիր, Անդրէաս, որ եթէ

հասույցման օրը հասնելիս դու վրէժդ չը լուծես թիւրքերից, այն ժամանակ ես կը յայտնուեմ և հանգստութիւն չեմ տալ քեզ: Վրէժ, — աւելայցրեց ծերունին տեղից բարձրանալով, — վրէժ այդ բոլոր անիծուած մոլեռանդներից: Անինայ սպանիր տղամարդկանց, կանանց և երեխաներին: Մի խնայիր ոչ որի: Դու քրիստոնեայ ես, իսկ նրանք անիծուած հեթանոսներ: Վրէժ, վրէժ, վրէժ...

Նա ծանրութեամբ նստեց իր բազկաթոռին: Նրա զլուխը կախուեց, ձեռները թուլացած, ցած ընկան: Մի քանի բուպէ անցած նա մեռաւ վրէժխնդրութիւնը չըթունքներին, վրէժխնդրութիւնը սրտում:

Այն ախուր օրուանից Անդրէասն սկսեց կրկնապատիկ աւտել թիւրքերին և վրէժխնդրութեան վրայ մտածել: Նա ցանկանում էր միայն մի բան, այն է — անձամբ մասնակցել Յունաստանն անօրէն մահմեդականներից մաքրելու գործին: Բայց չը նայելով որ վրէժխնդրութեան կրակն այրում էր նրա սիրտը, այնուամենայնիւ նա զսպում էր իրան և համբերութեամբ սպասում, մինչև ընդհանուր ապստամբութեան օրը կը հասնէր: Արդէն մի տարուց աւելի էր, որ հիւսիսային Յունաստանում երկու գաղանի յանձնաժողով իրանց ծածուկ գործակալների միջոցով փողեր հաւաքելով և ամեն կերպ հայրենասիրական կրակը բորբոքելով, միասին գործում էին: Այժմ էլ երկար սպասելու կարիք չը կար. թշնամիներին չըջապատող ցանցն արագութեամբ ձգւում էր, և շուտով պէտք է հասնէր ազատութեան մեծ օրը:

Բայց դառնանք Միտոսին: Նա շտապեց կատարել հօր հրամանը — կրակ արաւ, ջուրը տաքացրեց և կողովից ութ ձու վերցնելով՝ եփելու դրաւ, իսկ ինքը գնաց բալ քաղելու:

Անցեալ տարուայ ընթացքում Կոստանդինը, Միտոսի հայրը, երիտասարդի հետ հասարակ աշխատաւորի նման մշակում էր իր հողաբաժինը. երկու տարի գրանից առաջ Արդուլ-Ահմէդ անուհով թիւրք փաշային այգտեղից անցնելիս դրաւեց Նաւալիայի կլիման, և նա իր համար մի տուն շինեց ծովածոցի եզերքին, Կոստանդինի հողի վրայ: Նա խոստացաւ մեծ գին տալ դրա համար, և Կոստանդինը համաձայնուեց զիջել իւր հողը, լաւ գիտնալով՝ որ հակառակ դէպքում փաշան գոտով կը խլէր այն: Ի հարկէ նա մինչև օրս էլ ոչ մի գրօջ չէր ստացել, և անուանի թուրքի տունը ծակում էր նրա աչքերն աւելի ևս այն պատճառով՝ որ իր հին խաղողի այգու տեղն էր շինուած:

Արդուլ-Ահմէդն Արգոսի նահանգապետն էր, և օգուտ քաղելով այն բանից, որ Նաւալիան շատ հեռու չէր իւր պաշտօ-

նաստեղից, նա իւր հարեմով ընտկութիւն հաստատեց այնտեղ: Ամառային տաք երեկոններին կարելի էր տեսնել, թէ ինչպէս այդ հարեմի կանայք նայում էին իրանց պարտէզը ծովածոցից բաժանող պատի վրայից: Ինքն Արզուլը մի հաստափոր, միջահասակ, ծոյլ և սակաւախօս թիւրք էր: Իր սլարաքը Կոստանդինին չը վճարելու պատճառը կարելի էր Վերադրել որքան որ նրա անճշտութեանը, նոյնքան էլ յոյներին ոչինչ չը վճարելու թիւրքական սովորութեան:

Կոստանդինը մի քանի անգամ յիշեցրել էր նրան իր պարտքը, բայց յետոյ ձեռ վերցրեց: Նա պատկանում էր երկրագործների այն բարձր դասակարգին, որոնք իրանք հողի սեփական տէրերն էին, և ոչ միայն յատկապէս իրենց ձեռքերով էին մշակում այն, այլև վարձկան մշակների միջոցով: Այդ տեսակ մարդիկ այն ժամանակ յունաց երկրի աղն էին համարում: Իր բոլոր հայրենակիցների նման նա աշխատասէր և խնայող էր, բայց ներկայումս իւր խաղողի այգուց զրկուելով և պարտաւորուած լինելով ահալին հարկեր վճարել, նա հարկաւոր համարեց այլևս մշակներ չը վարձել և ինքն անձամբ որդու ձեռ մշակում էր իւր հողը: Նրանք անխօս աշխատում էին իւրանց ձեռքում մնացած հողաբաժնի վրայ, նոր այդի անկեցին և խաղողը հաւաքելով գինի էին պատրաստում: Մինչև անգամ ազատ ժամանակ նրանք փողով օգնում էին հարեաններին նրանց այգիներում:

Բայց չը նայելով դրան, Կոստանդինն զգում էր իւր վիճակի փոփոխութիւնը: Փոխանակ վարձկան մշակների վրայ հսկելու և կարգադրութիւններ անելու, նա ստիպուած էր անձամբ աշխատել, այն էլ ոչ միայն իւր սեփական, այլև ուրիշների հողի վրայ. միևնոյն ժամանակ նա զգում էր իւր սովորութեան բոլոր անարդարութիւնը, որովհետև ինքը ոչ մի բանում յանցաւոր չէր: Բացի Արզուլի անբարեխիղճ վարմունքը նրան ճշնչում էին նաև մշտապէս աւելացող սուրքերն ու հարկերը: Դրանից կէս տարի առաջ նա հարկադրուած էր վաճառել իւր լաւ ձին, որովհետև թիւրքերը մի նոր հարկ էլ դրին ձիերի վրայ, և այժմ ունէր միայն մի փոքրիկ վատ ձի, մի հին տուն և մի մակոյկ: Այնուամենայնիւ նա ամեն ինչ համբերութեամբ տանում էր և մինչև անգամ իւր սառնարիւնութեամբ զարմացնում հարեաններին սրճարանում պատահելիս. մինչդեռ նրանք լինթփնթում և ցած ձայնով անիծում էին թիւրքերին, Կոստանդինը լուռ նստում և հանդարտ ժպտում էր: Մեր պատմութեան սկզբից երկու օր առաջ հարեաններից մէկն ուղղակի հարցրեց նրան.

—Լսիր, Կոստանդին, դու մեզ բոլորիցս էլ, բայց հասած աղջիկ ունեցողներին, աւելի շատ զրկանքներ ես կրել: Ինչո՞ւ դու միշտ լուռ ես և ժպտում ես: Մի՞թէ քո գործերը լաւ են գնում:

Ինչպէս երևում էր այդ հարցումն առաջուց էր պատրաստուած, որովհետեւ երկու ուրիշ յոյներ էլ մօտեցան Կոստանդինին և անհամբերութեամբ նրա պատասխանին էին սպասում:

Նա հանդարտ դուրս հանեց չիբուխը բերանից և սառնասրբութեամբ պատասխանեց.

—Ո՛չ, իմ գործերը վատ են գնում. բայց ես կարող եմ լեզուս պահել: Միայն ձեզ մի բան կ'ասեմ—Նիկողայոս Վիտալիսը երեք օրից յետոյ կը գայ:

—Է՛, դրանից ի՞նչ:

—Նիկողայոսը խորհուրդ կը տայ ձեզ ինձ նման լեզուներդ պահել, իսկ զուցէ և ուրիշ բան էլ ասէ: Է՛հ, տուն գնալու ժամանակ է: Բարի գիշեր, բարեկամներ:

Այժմ էլ, երբ հայր Անդրէասը բարձր նկուխում էր թիւրքերին, Կոստանդինն ասաց ժպտալով.

—Ներիր, հայր Անդրէաս, բայց Նիկողայոսը չէ սիրում, երբ շատախօսութիւն են անում: Դու նրան ճանաչում ես, նա ո՛չ մի աւելորդ խօսք չի ասիլ:

—Քո խօսքերը կ' ճշմարիտ են, կ' չէ, —պատասխանեց քահանան. —Նիկողայոսը բարեխիղճ և սակաւախօս մարդ է, բայց ես երգուել եմ իւրաքանչիւր օր երեք անգամ նոյովել թիւրքերին—լուսաբացին, կէսօրին և արեգակը մայր մտնելիս: Ինձ համար միևնոյն է, թէ ինչ կ'ասէ Նիկողայոսը, բայց ես սրբութեամբ պէտք է կատարեմ երգումս:

—Ահա Միտոսն ուսերը սեղմելով գալիս է, դու գոնէ նրա մօտ քեզ զսպիր: Միտոսս, ճաշը պատրաստ է:

—Ճաշը պատրաստ է, —պատասխանեց երիտասարդը—միայն ես չեմ կարող միւս կօշիկս գտնել, իսկ դու էլ թոյլ չես տալիս առանց կօշիկների ճաշել:

—Դէհ, ուրեմն փնտոիր:

—Ես ամեն տեղ նայեցի, բայց չը կայ ու չը կայ. իսկ եթէ զիտենաս, հայրիկ, թէ ինչպէս քաղցած եմ ես:

Բայց Կոստանդինը չը զիջեց:

—Ինչպէս ուզում ես, բայց առաջ կօշիկդ գտիր, յետոյ արի ճաշելու, —ասաց նա:—Դէհ, հայր Անդրէաս, գնանք:

Եւ նրանք սեղան նստեցին, իսկ խեղճ Միտոսն առանց կօշիկ և առանց ճաշի մնաց:

II

Մի ժամ յետոյ Միտտսը իւր միւս կօշիկը գտնելուց և ճաշելուց յետոյ հանդիստ քնած էր սրահում: Նախընթաց գիշերուայ մեծ մասը նա ձկնորսութեամբ էր անցկացրել, իսկ որովհետև հունձն էլ վերջացրել էր, այդ պատճառով էլ ուրիշ կարևոր գործ չ'ունէր, բայցի արեգակը այգուց դուրս գնալուց յետոյ խաղողի վազերը ջրելը, իսկ այս բանը ժամը չորսից շուտ չէր լինում: Նա քնած էր, ինչպէս հայրն ասում էր, ճիշտ շան նման, որովհետև պտուկէլ էր կծկուած, և նրա քունն այնքան թեթեւ էր, որ ամենափոքր շշուկից աչքերը բաց էր ածնում:

Միտտսը յունական սովորական տիպի մի յաղթանդամ երիտասարդ էր, գանգուր, սև մազերով, որոնք ընկած էին ուսերի վրայ, նմանապէս սև, ուղիղ յոնքերով և նոյն գոյնի խոշոր աչքերով: Նրա քիթը կարճ էր և հաստ, իսկ բերանի գեղեցիկ գծերը երևան էին հանում հոգեկան տրամադրութեան բոլոր ամենափոքր ստուերները: Նրա դէմքին ու ձևունքին բացի արեգակից, քամուց ու անձրևից, ուրիշ ոչ մի փափկացնող իւր չէր գիտած, և այդ պատճառով թուր-կարմիր գոյն ունէին նրանք, և աչքերի ու մազերի ասակ աւելի ևս մութն էր երևում: Նրա ձևունքն ու սաները, որոնցից նա կօշիկները հանել էր, զարմանալի կերպով մաքուր էին, և այս մաքրութիւնը յոյն շինականի բնորոշ յատկութիւնն է կազմում:

Երկու ժամ քնելուց յետոյ Միտտսը զարթնեց շնորհիւ այն բանի, որ արեգակը սրահի անկիւնից ճառագայթն ուղղակի նրա երեսին էր ձգել: Սկզբում նա շուռ եկաւ գէպի պատը, բայց մի րոպէ անցած վեր թռաւ և ծուլութեամբ ձգուեց: Յետոյ գնաց տան ետևի քարէ ջրհորի մօտ և գլուխն ընկզմեց թարմ ջրի մէջ: Իսկ երբ քունը բոլորովին անցաւ, Միտտսը նայեց մեծ սօսուն և գնաց աշխատելու:

Փոքրիկ առուակը, որ հոսում էր պարտիզի միջով և թափուում ծովածոցը, կէս մղոն տարածութեամբ քարէ կամուրջով էր ծածկուած, որի տակից ջուրը կարելի էր տանել գէպի չորս կողմը փորուած վազերը:

Ամենից առաջ Միտտսը վազերի շուրջը դանուած աւազաններից դուրս հանեց բոլոր հաւաքուած կեղտոտութիւնները և յետոյ բաց թողեց ջուրը, որ արագութեամբ ներս վազեց: Համոզուելով, որ ջուրն ամեն կողմ էլ տարածուել է, նա հողով

ծածկեց քարէ կամորջի անցքը, և արագափաղ առուակը նորից իւր ճանապարհը բռնեց: Վերջապէս վաղերին մօտենալով Միտսոսն սկսեց փորփրել նրանց շուրջը, որ շուրջ կարողանայ ողողել երկարասի երաշտից չորացած բոլոր արմասները:

Թէև արեգակի ճառագայթներն ուղիղ չէին ընկնում երկրի վրայ, բայց և այնպէս շատ շուտ էր, որովհետև սիրօկիօն աւելի սաստկացել էր և այրում էր, կարծես հրաբորբոք վառարանից լինէր փչում: Վաղերի մոյլ-կանաչագոյն տերևների քամու կողմը դարձած երեւները ծածկուել էին բարակ, սպիտակ քողով, որ փչում էր հունձից յետոյ մերկայած գաշտերից: Ժամանակ առ ժամանակ Միտսոսն ընդճատում էր իր գործը և ձեռքով քրքրտինքը սրբում ճակատից, իսկ յետոյ նորից կիսածայն գիւղական երգեր երգելով շարունակում էր աշխատել: Նա համարեա արդէն վերջացրել էր գործը, երբ նկատեց մօտեցող հօրը:

—Ի՞նչ է, Միտսոս, ասաց Կոստանդինը,—դու այսօր մինակ ես աշխատում: Ես գործով նաւալիւս էի գնացել: Բոլոր վաղերը լաւ ջրել ես:

—Ո՛չ, դեռ երեքը մնում են:

—Դու գնա՛, հանդատացիր, ես քո տեղը կը վերջացնեմ:

Միտսոսն ուրախութեամբ բանը վայր պցեց գետին:

—Դժուար թէ դժոխքում էլ այսպէս շոգ լինի: Խեղճ Նիկողայոս մօրեղբայրս մինչև գաշտափայրի միջով այստեղ հասնելը բոլորովին կ'այրուի:

—Նա իհարկէ՛ լուրարան կը պահանջէ, և դու պարտաւորուած կը լինես ջրհորից շուր բերելու:

—Այդ ոչինչ,—նկատեց Միտսոսը, և գետնին քսուելով սկսեց նայել, թէ ինչպէս է աշխատում հայրը:

—Է՛հ, ահա վերջացրի,—կէս ժամ անցած ասաց Կոստանդինը.—դու այս գիշեր էլ ձուկ որսալու պէտք է գնաս: Քամին ինչ-որ սաստիկ է:

—Դուցէ արեւ մայր մտնելուց յետոյ դադարի: Յամենայն դէպս ես երեկ երկու օրուայ համար բաւական ձուկ որսացի, շուրջ դրի և տարայ ստոցատուն. յուսով եմ, որ չի փչանայ:

Երանք միասին առն զնացին: Կոստանդինը տեսնելով որ դրան առաջ երեք ջորի են կանդնած, քայլերն արագացրեց:

—Երևի Նիկողայոսը եկել է,—ասաց նա,—երբէք նա իրեն սպասեցնել չէ աալիս: Դէհ, գնանք, Միտսոս:

Ամբողջ սրահն արկզներով ու կապոցներով լցուած էր, իսկ սենեակում մի ցածլիկ աթոսի վրայ նստած էր Նիկողայոսը:

—Հապա՛, Կոստանդին,—ասաց նա վեր կենալով,—աստ տեսնեմ, ինչպէս ես իսկ դու, Միտսոս, մեծանում ես ու մեծա-

նուսն Եթէ հօրդ հասակին հասնես, ես քեզ հարիւր պիտասար^{*)} կը տամ: Է՛հ, Կոստանդին, ինչպիսի անիծուած եղանակ է այսօր: Ես ուղղակի չը գիտէի, թէ քամուց ու փոշուց սւր թագնուումս Միտասոս, տեղն է արգեօք այն լողարանը, որ մենք միասին շինեցինք տախտակներից: Զորեպանները կ'օգնեն քեզ ջրով լցնել այն, իսկ եթէ փոքր ինչ ծակուած էլ է, այդ ոչինչ: Դու կատարեալ քաջ տղամարդ ես, — աւելացրեց նա՝ երիտասարդի ուսը շոյելով, — որքան կարելի է, շատ ջուր բեր ինձ համար, թոյլ տուր մի տասն բողէ լողանամ, իսկ հագնուելիս կը խօսենք քեզ հետ:

Միտասոսը դուրս գնաց սենեակից, իսկ Կոստանդինը նըրան դառնալով՝ հարցրեց.

— Հապն, ինչ կասես դու:

— Միտասոսն ընտիր տղայ է. — պատասխանեց Նիկողայոսը, — միայն կարելի է նրան հաւատ ընծայել:

— Թիւրքն էլ այդ բանի մէջ չի զղջալ:

— Է՛հ, այդ աւելորդ է: Իսկ երկչոտութեան կողմից ինչպէս է:

— Երկիւղ ասած բանը չը գիտէ ինչ է:

— Այդ իզուր: Երկիւղի զգացմունքը չը փորձած, քաջ լինել չէ կարելի: Է՛հ, մենք դեռ այդ կը տեսնենք:

Նիկողայոսն էլ Կոստանդինի նման ալբանացու տարագրով էր հագնուած. նրա հագին կար մի կարմիր, ասեղնադործած բայ բաձկոնակ, շապիկ, կարճ շրջազգեստ և նեղ, սպիտակ անդրազարտիկ, ներքեից կապած: Նա բարձրահասակ էր, նիհար, և գէմքին նայելով կարելի էր ասել, թէ քառասուն կամ յիսուն տարեկան է: Բայց խիսապէս նա վաթսուսին մօտ էր: Մաքուր ածիլուած և շատ դժգոյն լինելով, նա ըստ երեւոյթին մաքուր օդի երես չէր տեսնում, բայց նրա թարմ կաշուին նայելով՝ այդ ենթագորութիւնը չէր կարելի տեսնել: Նրա մեծ, մոյգ-մոխրագոյն աչքերը կիսով չափ ծածկուած էին խիտ սև յօնքերով: Քիթը բարակ էր, համարեա արծուային, նուրբ սունդներով, որոնք միշտ շարժուում և աղնուատոհմ նժոյգի նըման ծծում էին օդը: Նրա բարակ շրթունքները կարծես անապատականի լինէին, իսկ խիտ և երկար մազերը հազիւ երևան էին հանուած քունքերի սպիտակ ալիքները: Գլուխը հպարտ և ուղիղ կանգնած էր ուժեղ ուսերի վրայ, իսկ պարանոցը, թէպէտ քիչ երկար, բայց բոլորովին ուղիղ էր: Իր այդ բարձր հասակով և արտասովոր նիհարութեամբ նա հսկայ էր երևում:

*) Դուրուչ:

—Ես Կորնթոսից եմ գալիս և շատրան ունեմ քեզ պատմելու, — ասաց Նիկողոսյոսը: — Վերջապէս հայրենասէրների յանձնաժողովին ամբողջ Մորէան ինձ յանձնեց: Ինձ իրաւօք է արուած հարկաւոր զէպքերում գործադրել ֆոնդերը *) և նշան ապա թիւքերի զէմ պատերազմն սկսելուն: Ասան ինչպէս, այստեղ արդեօք կան այնպիսի մարզիկ, որոնց վրայ կարելի լինի յոյս գնել, թէ սրանք բոլորը ջորեպաններ ու շատախօսներ են:

— ձիշտ ես ասում — սրանք բոլորը ջորեպաններից էլ վաս են և միայն շատախօսութիւն անել գիտեն:

— Է՛հ, ոչինչ, զրանց էլ կարելի է գործի մէջ խառնել, բայց արդեօք ով կարող է առաջնորդ լինել: Այստեղ կարծեմ մի քաճանայ կար, Անդրէաս անունով: Ես կը ցանկանայի տեսնել նրան: Յիշում եմ, որ նա շատ էր խօսում, բայց այդ ոչինչ, նրան կարելի է զսպել:

— Նա երգում է տուել օրական երեք անգամ նգովի թիւքքերին և սրբութեամբ կատարում է իր երգումը:

— Է՛հ, զրանով թիւքքերին ոչինչ չի անիլ: Աւելի լաւ կ'անէր, եթէ օրհնէր նրանց, այդպիսով գոնէ կարելի կը լինէր նրանց խաբել: Բայց միեւնոյն է: Ա՛, Միտսոն, լոպարանք պատրաստ է: Ներքի, Կոստանդին, բոլորովին չեմ կարող համբերել, երբ զգում եմ, որ կեղտոտուած եմ: Միտսոն, կէս ժամ յետոյ ինձ մօտ արի և այն ժամանակ քո մասին մի որևէ բան կը պատմես ինձ:

— Բայց ես ոչինչ չ'ունեմ պատմելու:

— Այդ շատ լաւ է, նշանակում է, ամեն ինչ բարեկաջող գրութեան մէջ է: Ա՛իս, հո՛, Կոստանդին, ես գինի եմ քերել, բայց Միտսոսին հրամայիր, որ ջրհորը կախէ այն: Իրան յարգը ճանաչող մարդը տաք գինի չի խմիլ:

— Միտսոն աչքերը Նիկողոսյոսից չէր հեռացնում, երբ նա գուրս գնաց սենեակից, երիտասարդը ցած ձայնով ասաց հօրը.

— Գործի ժամանակ ձեռներս շատ կեղտոտուել են և ես վախենում եմ, թէ մի գուցէ Նիկողոսյոս մօրեղբայրը կը նկատէ այդ:

— Գուցէ և նկատեց, նա ամեն բան տեսնում է, ուրեմն նրա մօտ գնալուց առաջ ձեռներդ մաքրիր:

Միտսոսը չափազանց սիրում էր Նիկողոսյոս մօրեղբօրը, և նրա աչքում բոլոր տեսած մարդկանցից նա ամենալաւն էր: Նիկողոսյոսը շատ անգամ մեծ նաւերով ծովի վրայ ճանապարհորդութիւններ էր արել և տեսել արտասահմանի երկրները: Մի

*) Հիմնական գրամագրութիւն

անդամ, մի քանի տարի առաջ, նա ֆրանսերէն խօսեց մի խոր-
տակուած նաւի նաւաստիների հետ, որոնց վոթորիկը ավին էր
գուրս պցել, այն ինչ նրանց շրջանում այդ լեզուին ոչ որ ծա-
նօթ չէր, մինչև անգամ ե՛ր քաղաքապետը, որը նաւաստիների
անձանօթ լեզուն լսելով հաւատացնում էր, թէ գա թռչունի
լեզու է: Նիկողայոնն անգաղար խորհրդաւոր ճանապարհոր-
դութիւններ էր կատարում, որոնցից վերագրանում էր միշտ
անսպասելի կերպով, նրա ձայնը չափազանց քաղցր էր, թեկը
երկար ու ջրոտ, և նա յայտնի էր որպէս հմուտ հրացանաձիգ
և համարեա ամենագէտ: Նրան ծանօթ էին բոլոր թռչունների
ու բոյսերի անունները, իսկ երբ մի անգամ Միասոսը ծանր
հիւանդացաւ, նա մի ինչ որ անձանօթ բոյսի տերեւներ հաւա-
քեց և պատրաստեց մի զեղ, որից մանուկը միւս օրն իսկ ա-
ւողջացաւ: Բայց ամենից աւելի Միասոսին գուր էին գալիս
այն պատմութիւնները, որ անում էր Նիկողայոսը զանազան
երկրներում իր բոլոր տեսածների մասին:

Ձեռները լուանալով՝ երիտասարդը շտապեց Նիկողայոսի
սենեակը և նրան արգէն կիսանայնուած դաւաւ կեզտատ սպիտակե-
ղէնը թափուած էր յատակին, և նա ցոյց տալով այդ՝ ասաց.

— Ես գոնէ չորս օր կը մնամ այստեղ, խնդրում եմ,
Միասոս, կարգադրիր, որ այդ բոլորը լուանան: Աշխարհիս երե-
սին ամենակարևոր բանը մարբութիւնն է:

— Իսկ հայր Անդրէասն ասում է, որ ամենից կարևորն
է— սիրել Ասածուն և ատել սատանային, այսինքն թիւրքերին:

— Ի հարկէ, նրա ասածը ճշմարիտ է, բայց ես էլ չեմ
սխալուում: Դէհ, Միասոս, նստիր պատուհանի մօտ և պատմիր,
թէ ինչ էիր անում այն օրուանից, երբ մենք բաժանուեցինք:

— Հունձը վերջանալուց յետոյ ես վաղերին եմ նայում և
համարեա ամեն զիչեր գնում եմ ձուկ որսալու:

— Լուս վաղը մենք միասին կը գնանք ձկնորսութեան,
իսկ այսօր ես չառ բան ունեմ հօրդ հետ խօսելու:

— Որքան ուրախ կը լինեմ քեզ հետ մակոյկով ման գալ,
և գու ինձ նոր-նոր պատմութիւններ կ'անես:

— Բայց բոլորովին ուրիշ տեսակ: Ինձ շատ հետաքրքիր
է իմանալ, թէ նրանք քեզ ինչպէս գուր կը դան: Քանի՞ տա-
րեկան ես:

— Նոյեմբերին տասնեկներ տարիս կը լրանայ, և իմ ընչացքն
արգէն գուրս է գալիս:

— Այն, աղաւամազը երևում է: Բայց քո ինչին է պէտք
ընչացքը:

— Բոլոր աղամարդիկ էլ ընչացք ունեն:

—Իսկ դու էլ ուզում ես տղամարդ դառնալ: Յիշիր ուրեմն, որ ոչ թէ ընչաչքն է պատանուն մարդ գարձուում, այլ քաջութիւնն ու առաքինութիւնը: Քանի զեռ այս սենեակից դուրս չենք եկել, ես քեզ պէտք է ասեմ, որ եթէ մի որեէ թիւրք քեզ հարցնելու լինի իմ մասին, թէ որտեղ եմ կամ ուր եմ գընում, դու միշտ պատասխանիր — «չը գիտեմ, ես նրան մի սարի է չեմ տեսել»:

—Այն, ես այդպէս էլ կ'ասեմ միշտ:

—Իսկ եթէ դու ուրիշ կերպ պատասխանես թիւրքերին և մասնեա ինձ, այն ժամանակ ես կարող եմ կեանքից զրկուել: Խօսք տուր ինձ, որ դու երբէք այդ բանը չես անիլ:

—Խոստանում եմ:

—Իսկ եթէ սպանան սպանել քեզ:

—Է՛հ, գրանից ինչ, չէ՛ որ ես խոստացայ:

Նիկողայոսը ձեռքը երիտասարդի ուսին դրաւ և աչքերը պսպղացնելով ասաց.

—Փնօք Աստուծոյ: Ես գտայ նրան, ով որ ինձ հարկաւոր էր:

Գիշերը սիրովիօն դադարեց, ցօղ դրաւ, և հետեակ առաւօտ վատ եղանակից յետոյ ամբողջ աշխարհը ժպտադէմ արթնացաւ:

Համարեա լուսադիմից սկսած Միտսոնն անդադար սուրճ էր պատրաստում, որովհետև ամբողջ շրջակայքի անուանի յոյները Նիկողայոսի գալը լսելով՝ այցելութեան եկան, և նրանցից իւրաքանչիւրին նա պարտաւորուած մի բաժակ թիւրքական սուրճ էր առաջարկում: Սրահում նստած, ծխաքարը բերանից առանց հանելու, նա, ինչպէս երևում էր, հրահանգներ էր տալիս իւր այցելուներին:

Ամենատաղին այցելողներից մէկն էլ հայր Անդրէասն էր, որին Նիկողայոսն առանձին յարգանքով վերաբերուեց, իսկ այցելութիւնից յետոյ նրան ճանապարհ դրաւ մինչև պարտիզի ետին դռնակը, որ բացուած էր դէպի դաշտը, և Միտսոսը, որ ջրհորի մօտ բաժակներն էր լուանում, լսեց հայր Անդրէասին հրաժեշտ տալու ժամանակ նրա ասած խօսքերը.

—Որ գլխաւորն է—լսիր: Յետոյ քո խորխա ձայնը մեզ հարկաւոր է, իսկ այժմ ամեն մի աւելորդ խօսք կարող է բոլորը փչացնել: Ա՛յ, դու ոչինչ չես նկատում, այնինչ ես գիտեմ, որ մեզ ականջ են դնում: Է՛, Միտսոս, այստեղ արի:

Երիտասարդը սաստիկ կարմրած մօտեցաւ նրան:

—Դու անարդար ես վերաբերում դէպի ինձ, Նիկողայոս մօրեղբայր. ես ձեզ ականջ չէի դնում, բայց չէի կարող չը լը-

սել քո խօսքերը, քանի որ դու այդքան մօտիկ բարձր խօսում էիր, թէն թփերը ծածկում էին ինձ:

— Բաւական է, հոգիս, ես մտադիր էլ չէի գատապարտել քեզ, — պատասխանեց Նիկողայոսը. — միայն ուզում էի ցոյց տալ հայր Անդրէասին, թէ որքան անզգոյշ բան է շատախօսութիւն անելը: Դէ՛հ, այժմ դնաս բարով, հայր Անդրէաս: Ահա տար այս իմ լուսնան Աստուծուն, յաջողութեամբ այստեղ հասնելու համար:

Նիկողայոսը կատարեց իր խոստումը, և հէնց որ արեգակը մայր մտաւ, Միտասի հետ ճանապարհ ընկաւ դէպի մակոյկը: Միտասը տանում էր ջահերով լիքը մի պարկ, ձկների համար մի կողով և երկու սրածայր կարթ, իսկ Նիկողայոսը ցանցն ուսին գնում էր նրա կտից: Նրանք որոշել էին որսը կարթերով սկսել, իսկ երբ լուսինը դուրս դար, այն ժամանակ անցնել ծովածոցի միւս եզերքը, որտեղ ջուրը ծանծաղ էր, և այնտեղ ցանցը դործի դնել: Բայց Նիկողայոսը ցանցն առած՝ մակոյկը մտաւ, իսկ Միտասին թողեց կարթով մենակ աշխատելու:

Երիտասարդը հանեց իր քաթանէ անդրավարտիկն ու կօշիկները, չապիկը դօսկի շուրջն ամրացրեց, պարկը գցեց ուսին և վառած ջահը ձախ ձեռքն առնելով, իսկ կարթն — աջ՝ մինչև ծնկները մտաւ ջուրը: Նա կրակը մօտեցրեց ջրի մակերևոյթին, որ ձուկը կարողանար տեսնել այն, իսկ ունելիքը պատրաստ պահել էր, որ ձուկը երևալիս չը վրիպէր:

Սա մի այնպիսի գեղեցիկ տեսարան էր, որ Բեմբրանտը սիրով կը ձեռնկերպէր քաթանի վրայ: Լուսինը դեռևս չէր բարձրացել, բայց երկինքը պայծառ և աստղալից էր, իսկ ծովածոցի երեսին փոքրիկ կռահակներ էին խաղում, որոնք կորչում էին հակառակ ափի ստուերի մէջ: Ջահի թոյլ լոյսի տակ հազիւ կարելի էր նշմարել մակոյկի գծագրութիւնը, որտեղ Նիկողայոսը ցանցն էր պատրաստում, իսկ տիրող խաւարի մէջ լուսաւորուած երևում էին Միտասի գեռահաս կերպարանքը և նրան շրջապատող ջրի մի փոքրիկ տարածութիւն: Ժամանակ առ ժամանակ նա արագութեամբ իջեցնում էր կարթը և մի ակընթարթում գուրս հանում ծայրին մի որևէ ձուկ, որի վրայից ջուրը կաթիլ-կաթիլ թափւում էր ներքև: Ծառ քիչ անգամ էր նա վրիպում և այն ժամանակ ժպիտն երեսին գատարկ կարթը ցոյց էր տալիս Նիկողայոսին:

Անցաւ կէս ժամ. ցուրտը սաստկացաւ, և արդէն ձուկ չէր երևում ջրի մէջ, այդ պատճառով Միտասը ետ դարձաւ դէպի մակոյկը, ցատկեց նրա մէջ, առագաստը բարձրացրեց և մակոյկը լողաց ծովածոցի մոայլ մակերևոյթի վրայ: Նիկողայոսը նըստեց զեկի մօտ, իսկ Միտասը տեղաւորուեց նրանից ոչ հեռու:

—Հ՛ը, ի՛նչ է, մօրեղբւնք,—ասաց երիտասարդը,—մենք քսան ձուկ ունենք: Կարծում եմ, որ իբրև կէս ժամուայ աշխատանք քիչ չէ դա: Մակոյկն ուղղիր գէպի այն տան կողմը, որի պատուհանները փայլում են եզերքին:

—Լաւ, բայց չէ որ դա շատ հեռու է: Մի ժամից շուտ մենք չենք հասնիլ:

—Է՛հ, ոչինչ, դու քո նոր պատմութիւնները կ'անես ինձ:

—Ո՛չ, այդ պատմութիւններից ամեն մէկը շատ երկար է, և մենք աւելի լաւ է վերադարձին կը զբաղուենք զբանցով, որովհետև քամու հակառակ աւելի երկար կը տեէ ճանապարհը:

Մի ժամից աւելի լողում էին նրանք, համարեա լուսթիւնն առանց ընդհատելու: Քամին աւելի ևս սաստկացաւ, և լեռների գագաթներին Տրիպօլիսի ուղղութեամբ ժամանակ առ ժամանակ փայլում էր կայծակը: Այն տան մէջ, որ ցոյց էր տուել Միտոսը, լոյսը հանդաւ, բայց հրուանդանը, որի վրայ նա կանգնած էր, պարզ աչքի էր ընկնում մթութեան մէջ:

—Դէ՛հ, Միտոսս, այժմ ձգենք ցանցը,—ասաց Նիկողայոսը, երբ նրանք մօտեցան ափին.—կարելի է այս հրուանդանին մօտենալ:

—Այն, այնտեղ խոր է:

Մի քանի րոպէ անցած մակոյկը կանգ առաւ, և Միտոսը մի ազատածի կապեց այն, իսկ յետոյ Նիկողայոսի օգնութեամբ ցանցը դուրս քաշեց ափը, որովհետև նրանք պէտք է որսային հրուանդանի միւս կողմը, որտեղ աւելի շատ ձուկ կար: Մակոյկից դուրս գալով, Նիկողայոսը հաղաւ Կոստանդինի երկար կօշիկները, իսկ Միտոսը իր սովորութեան համեմատ իրանը հանեց: Յանցը քսանեհինգ կարգ *) երկարութիւն ունէր. Միտոսը նրա մի ծայրից բռնելով՝ առաջ գնաց ջրի միջով, իսկ երբ ցանցը բոլորովին ձգուեց, Նիկողայոսն էլ հետեւեց նրան: Կարճ միջոցում նրանք ցանցն ամրացրին հոսանքի լայնութեամբ և սկսեցին ձկան սպասել: Լուսինն արդէն բարձրացել էր, և նրա լոյսով հեշտութեամբ կարելի էր նկատել արծաթափայլ լեզուակները, որոնք մէկը միւսի հետից խճճուում էին ցանցի օղակների մէջ:

Անցաւ մէկուկէս ժամ, բայց որսն այնքան էլ չաջող չէր, և Միտոսն առաջարկեց գնալ աւելի առաջ, որտեղ մանր ձուկ շատ կար: Բայց այնտեղ շատ խոր էր, և Միտոսը բոլորովին մերկացաւ: Այսանդ նրանց բազդը բանեց կարճ միջոցում նրանք շատ ձուկ որսային:

*) Անգլիական չափ է=3 սանտափիլ:

—Այժմ հարկաւոր է շուտով փրկել զուրա զալ, — բացազան-
չեց Միտսոսը. — որովհետեւ ձուկն այնքան շատ է, որ կարող են
կտրատել օղակներն ու փախչել:

Իրաւ որ, միքանի քայլ հազիւ էին արել, երբ յանկարծ
ցանցը պատուռեց, և լուսնի լոյսի տակ ահազին բազմութեամբ
արծաթադոյն թեփուկներ փայլեցին:

—Անիծուած թիւրքեր, — բացազանչեց Միտսոսը, — բոլորն
էլ զուրա պրծան:

—Սպասիր, — պատասխանեց Նիկողայոսը, — հարկաւոր է
ցանցը ձգել, զուցէ մի քիչ մնացել է:

—Ո՛չ, — ասաց Միտսոսը. — եթէ նրանք փախչեն, բոլորը
միասին կը փախչեն:

Ճիշտ այդպէս էլ զուրս եկաւ. — ցանցի խորքում մնացել
էին միայն երկու թէ կրեք ձկնիկ, որոնց չ'արժէր վերնել:

—է՛հ, այժմ բաւական չէ՞ մօրեղբայր, — ասաց պատանին.
— մենք որսի բոլոր ամենալաւ տնդերն էլ եղանք:

Նիկողայոսը համաձայնուեց, և մինչդեռ Միտսոսը հազըն-
ւում էր, նա ցանցը ծալեց, և ապա երկուսն էլ վերադարձան
գէպի մակոյկը:

III

Մինչ այս մինչ այն քամին սաստկացաւ և ուղիղ նրանց
գէպ էր փչում, այնպէս որ հարկ եղաւ մակոյկը քամուն հակա-
ռակ տանել:

—Դէ՛հ, այժմ պատմութիւններդ սկսելու ժամանակն է,
մօրեղբայր, — ասաց Միտսոսը՝ առադատն ամբայնելով:

—Լա՛ւ, պատասխանեց Նիկողայոսը, — ևս այժմ կը պատ-
մեմ քեզ ինձ հետ պատահած ստույգ անցքը: Մինչև օրս ևս քեզ
երեսայական հէքիաթներ էի պատմում, իսկ այժմ հասակաւոր-
ներին վայել պատմութիւններ անելու ժամանակը հասել է: Այն
բոլորը, ինչ որ պատմելու եմ քեզ, պատահել է քսան տարի ա-
ռաջ, երբ զուղեռ ծնուած չէիր, իսկ ևս աւագակ էի:

—Դո՛ւ, Նիկողայոս մօրեղբայր, աւագակ, — զարմացած բա-
ցազանչեց Միտսոսը:

—Այն, ևս այն ժամանակ աւագակ էի — փախստական, օ-
րինազանց, կլեֆտ *), ինչ ուզում ևս, հաշւիր: Իմ գլուխը
գնահատուած էր, և ևս բացի լեռնային կիրճերից ուրիշ բը-

*) Այսպէս էին անուանում նոր-Յունաստանում աւագակների գլխաւոր-
ները, ընդհանրապէս զօրքերի առաջնորդները:

նակարան, ապաստան չ'ունէի: Բայց սրանից վատ կեանք էլ կայ, եթէ, օրինակ, թիւրքերի ձեռն ընկնես: Ես աւազակ դարձայ այն պիչերը, երբ իմ կինը վախճանուեց: Մենք այն ժամանակ ապրում էինք Արկադիայի Դեմիցանա գիւղում. իսկ թէ ինչպէս պատահեց կնոջս մահը, դու յետոյ կիմանաս: Աւազակ դառնալով, ես պիչեր-ցերեկ թափառում էի լեռների մէջ և թիւրքերի սպասում, որոնց որսում էի, ինչպէս վայրենի գաղանի: Երկու թէ երեք ամիս յետոյ ինձ հետ միացան ինձ նման մի քանի աքսորուածներ էլ: Այն ժամանակ մեր գործն ընդարձակուեց: Մենք բռնում էինք թիւրքերին, իսկ երբ հարուստներ էին ընկնում ձեռներս, այն ժամանակ նրանց համար մեծ վրկանք էինք վերցնում, սակայն երբէք ձեռք չէինք տալիս յոյներին և թէ յոյն և թէ թուրք կանանց:—Մենք մեր գործն յաջողութեամբ էինք առաջ տանում, և մեզանից ոչ մէկը չ'ընկաւ թիւրքերի ձեռքը. իսկ եւր մէկը-միւսը վիրաւորում էր, այն ժամանակ մենք ինքներս քրիստոնէաբար համբուրուելով նրա հետ—այն աշխարհն էինք ուղարկում, որ մահմէդականների նախատինքին չ'ենթարկուի:

Նիկողայոսը լսեց, բայց մի քանի րոպէ յետոյ շարունակեց ժպտալով.

—Երբէք ես չեմ մոռանալ, եթէ ինչպէս մենք գերի վերցըրինք Մահմէդ բէյին. սա մի հաստ, դեր, կանացի քնքոյզ դէմքով դե էր: Մեր ձեռն ընկնելով՝ նա ազադակում, զոռում էր անդադար, չը նայելով որ ես նրան ասում էի, թէ մենք նրան երկու օր միայն կը պահենք, մինչև ազգականները կամ բարեկամները յիրկանք ուղարկեն: Ես սրտանց ծիծաղում էի նրա երկիւղի վրայ և մինչև այժմ էլ այդ բանը մտաբերելիս՝ ժպտալիսս զսպել չեմ կարող: Սակայն աւազակային կեանքը միշտ էլ ուրախ է անցնում, այլ շատ անգամ ստիպուած ես լինում օրերով անհաց և անջուր մնալ: Մեծ մասամբ մենք Արկադիայի հիւսիսային կողմումն էինք թափառում. բայց մի անգամ, ամառը ես այնաղթելի ցանկութիւն զգացի հայրենիք վերադառնալ: Ընկերներս համաձայնեցին ինձ հետ գալ, և մենք ճանապարհ ընկանք դէպի Դեմիցանա: Ցանկութիւն չ'ունենալով նրանց վտանգի ենթարկել, ես մենակ մտայ գիւղ: Ճանապարհին ինձ մի քանի ծանօթ յոյներ պատահեցին, բայց ես նշաններով խնդրեցի, որ ինձ չ'մասնեն, իսկ թիւրքական տեղապահ զօրքը փոխուել էր, և զխնուորներից ոչ ոք ինձ չէր ճանաչում: Իմ տանը մօտենալով ես տեսայ, որ նրա պատուհաններն ու դռները հանուած էին, և լսեցի, որ այդ բանն արել էին թիւրքերն այն պատճառով, որ ինձ իմ բնակարանում չէին գտել:

Շէմքին նստած էր իմ ծերունի հայրը, որի տարիքն արդէն ութսունից անց էր, և անպիտակցաբար շարժում էր մի տիկնիկ, որը ժամանակով դրտերս էր պատկանում: Ես չը համբերեցի, վազեցի նրա մօտ, համբոյրներով ծածկեցի նրան և բացապանչեցի. «մի՞թէ, հայր, դու ինձ չես ճանաչիր»: Բայց նա ոչինչ չը պատասխանեց, մի տեսակ տարօրինակ կերպով նայեց ինձ և շարունակեց շարժել տիկնիկը: Ես իմ հայրենի գիւղում մնայի մի ժամի շտի և այնտեղից հեռանալուց առաջ մի երգում տուի, որն իրագործելու դու ինձ կարող ես այժմ օգնել, Միտսնս:

— Իսկ ինչո՞ւմն էր կայանում այդ երգումը, և ի՞նչպէս կարող եմ ես օգնել քեզ իրագործելու այն:

— Իր ժամանակին կ'իմանաս այդ, իսկ այժմ կը բացատրեմ քեզ, թէ ես ինչո՞ւ աւաղակ գարձայ: Դու իմ կնոջս երբէք չես տեսել, շատ պարզ է, որովհետեւ նա քո ծնունդուցդ առաջ վախճանուեց: Նա շատ լուս և շափազանց զեղեցիկ կին էր, իսկ նըրա դուստրը, Հեղինէն, եթէ կենդանի մնար, բոլորովին նրա նման կը լինէր: Բայց դժբաղդաբար Դեմիյանա եկաւ տեղապահ գործի մի նոր մեծաւոր: Այդ սպան մի շատ գուրեկան մարդ էր և մեծ ուշադրութիւն էր դարձնում ինձ վրայ, որովհետեւ ես այն ժամանակ գիւղի տանուտէրն էի: Նա շատ անգամ մեզ մօտ ձայր էր գալիս, և ես երբեմն այցելում էի նըրան, բայց Կատարինէին այդ մարդը գուր չէր գալիս, և նա շատ քիչ էր խօսում նրա հետ: Սպայի գալուց երկու շաբթից աւելի անցել էր, երբ ես հարկադրուած էի գնալ Անգրիսենա գիւղը, որտեղ ես հող ունէի և պէտք է մասնակցէի տանուտիրոջ ընտրութեանը: Բայց ճանապարհին մի ծանօթ գիւղացի պատահեց, որն ինձ ասաց, թէ ընտրութիւնը յետաձգուած է: Ես ի հարկէ վերագարձայ տուն, բայց Դեմիյանա հասայ երկկոյեան շատ ուշ: Իմ տան պատուհանները լուսաւորուած չէին, և ներս մտնելով, ո՞չ կնոջս գտայ այնտեղ, ո՞չ երկխայիս: Ես մի քիչ սպասեցի, կարծելով, թէ նա ծանօթներից մէկի մօտ կը լինի: Բայց ժամանակն անցնում էր, իսկ կինս չէր վերադառնում: Այն ժամանակ ես շրջեցի բոլոր բարեկամներին տըները, բայց ո՞չ մի տեղ չը գտայ նրան: Վերջապէս զիմեցի ըսպայի մօտ, հարցնելու համար, թէ արդեօք նա մերոնց չէ տեսել: Նրա դուռը փակած էր, բայց վերին յարկի պատուհանից լոյս էր երևում: Դրանը գետ չէի մօտեցած, երբ յանկարծ աւկանջիս մի կնոջ լայ ու կոծի ձայն զիպաւ: Սիրտս թնդաց և ես լցրի ինձանից միշտ անբաժան տարձանակա: Մի հարուածով դուռը խորտակեցի և ինձ գտայ մութ սենեակում, որտեղից տանդուխը դէպի վեր էր տանում: Ես վազեցի այն կողմը,

բայց այդ իսկ բողոքին ինձ մօտ վազեց իմ փոքրիկ Հեղինէն, որն այն ժամանակ եօթը տարեկան էր, «հայրիկ, հայրիկ» կանչելով: Դեռ նա ինձ չէր մօտեցել, երբ սանդուխի գլխին երևաց սպան և ատրճանակ արձակեց: Գնդակն ինձ չը դիպաւ, այլ սպանեց դատերս: Ես կայծհանը քաշեցի, և նա մեռած փռուեց գետնին: Այդ իսկ միջոցին կամացուկ ինձ մօտեցաւ Կատարինէն և ասաց. «Դու ուշացար... Ինձ միայն մի բանում»... նա ձեռներիցս խլեց իմ երկփող ատրճանակը. և արձակեց դէպի իր գլուխը: Ես սարսափից դեռ խելքս գլուխս չէի հաւաքել, երբ ինձ վրայ յարձակուեցին ատրճանակի ձայնից զարթնած երկու գինուոր: Ես նրանց մի կողմը հրեցի և պատուհանից դուրս թռայ: Ո՛վ ողորմած Աստուած: Ո՛վ սուրբ Աստուածածին և սուրբ Նիկողայոս, օգնեցէք ինձ կատարել երգումս...

— Ես գիտեմ քո երգումը, — բացականչեց Միտտոսը, — դու երգուել ես ջարդել մեր երկրի բոլոր թիւրքերին: Ես էլ վաղը կը գնամ և միևնոյն երգումը կը տամ: Եւ թող բոլոր սրբերն ու սատանաները օգնեն ինձ իրապօրծելու այն իսկ դու, մօրեղբայր, սովորեցրու ինձ միայն, թէ ինչ պէտք է անեմ:

— Ի հարկէ: Բայց այժմ բաւական է:

Այդ միջոցին մակոյկն անցնում էր Աբդուլ-Ահմէդի տան պարտիզի մօտով:

— Այս ինչ է: Նոր տուն, — հարցրեց Նիկողայոսը:

— Այո, սա խող Ահմէդի բնակարանն է:

— Ի՞նչ պատճառով նա միւս թիւրքերից աւելի խող է:

— Այն պատճառով, որ նա մեզանից խլեց մեր խաղողի այգին և թէպէտ խոստացաւ վճարել դրա համար, բայց մինչև օրս մի պիստոք էլ չէ տուել: Տես, մօրեղբայր, պատշգամբի վրայ երկու կին կայ:

Իրաւ, երկու կին արմունկներին թինկ շտուած կանգնել էին: Այդ բողոքին մի ինչ որ աղամարդ, երեւ ներքինի, մօտեցաւ և խփեց նրանցից մէկին:

— Ինչո՞ւ ես խփում ինձ, — արտասուախառն արտասանեց կինը:

Նիկողայոսը ցնցուեց և բացականչեց զարմացած.

— Դու լսեցիր, Միտոսս, նա յունարէն էր խօսում:

— Է՛հ, դրանից ինչ:

— Ի՞նչպէս թէ ինչ: Նա որտեղից գիտէ յունարէն:

— Այո, ճիշտ ես ասում: Զարմանալի՛ է այդ:

IV

Հետեւեալ երկու օրը Նիկողայոսը Միտսոսին դանազան վարժութիւններ էր անել սալիս: Նա իր հետ տարաւ նրանս Լեռներում, Նաւալիայի ետեր, Եպիտաւրոսի ուղղութեամբ, բազմաթիւ նապաստակներ ու եղջերուներ էին գտնուում: Երկրորդ օրուայ երեկոյեան նրանք վերադարձան տուն, բաւականաչափ որս բերելով իրենց հետ—կոստանդինի ձիու քամակից երկու եղջերու և միքանի նապաստակ էին կախուած, և Միտսոսը, որը եղջերուներից մէկին ինքն էր սպանել, աւելի շուտ քաջջում, քան թէ բերում էր նրան:

—Է՛հ, Միտսոս, ևս դո՛ւ եմ քեզանից,—ասաց Նիկողայոսը,—եթէ դու դիտես դարան մտնել և յանկարծակի յարձակուել եղջերուի վրայ, նշանակում է միենոյնը կարող ևս անել և՛ մարդու հետ, որն իսկապէս ամենայիմար կենդանին է աշխարհիս երեսին: Իսկ մարդ որսալու կամ, որ աւելի վատ է, քեզ վրայ ուրիշի յարձակում գործելու ժամանակ՝ զլխաւոր բանն է—աննկատելի կերպով մօտենալ և թագնուել: Երկու օրից յետոյ ևս կը գնամ, բայց քեզ կը թողնեմ հրացանս:

—Մի՛թէ, մօրեղբայր, —բացազանչեց Միտսոսը՝ ուրախութիւնից իրան կորցրած:

—Այո, միայն սա խաղալիք չէ, և ևս հրացանը գուարճութեան համար չեմ սալիս քեզ: Իւրաքանչիւր օր դու դրանով որսի գնա՛, բայց եղջերուի հետ վարուիր այնպէս, որպէս թէ նա մարդ է, և քեզ թող ամօթ լինի, եթէ նա երբ և իցէ խուսափէ քո հարուածից: Նմանապէս և իւրաքանչիւր գիշեր ձուկ որսա՛, միայն ո՛չ թէ բաւականութեան համար, այլ աշխատիր մակոյկ և առագաստ կառավարելու մէջ վարժեցնել ձեռքդ:

—Նաւալիայում ինձանից լաւ ո՛չ ոք չի կարող մակոյկ կառավարել, —հպարտութեամբ բացազանչեց Միտսոսը:

—Բայց չէ որ Նաւալիան մի փոքրիկ քաղաք է, իսկ դու այդ կողմից պէտք է բոլորին գերազանցես: Կա՛ւ ուսումնասիրի քամու բոլոր փոփոխութիւնները, ուշագրութիւն դարձրու, թէ օրուայ կամ գիշերուայ նր ժամանակին այդ փոփոխութիւններն աւելի յաճախ են պատահում. ուսումնասիրի՛ր նաև ծովածոցի արտաքին ափերը իրենց բոլոր խորչերով ու հրուանդաններով:

—Այդ մասին անհանգիստ մի լինիր: Ես հօրդ հետ խօսել եմ և ամեն ինչ կարգի կը դրուի: Յետոյ, երեկոները տանը մի նստի՛ր, այլ այցելի՛ր սրճարաններն ու թուղթ կամ նարդի խա-

զոն. բայց ոչ թէ քս զուարճութեան համար, այլ ականջդ սուր պահիր, չր մոռանաս այն ամենը, ինչ որ կը խօսեն քեզ մօտ թիւրքերի մասին: Երբ ես վերադառնամ, դու ինձ այն ժամանակ կ'ասես այն բարի յոյների անունները, որոնք հայրենիքի համար ամեն բանի պատրաստ կը լինեն: Իսկ զլիաւորը,—մի մոռանար, որ պէտք է ասես, թէ մի կամ երկու տարի է՝ ինձ չես տեսել:

—Միայն երանի թէ դու այդքան չ'ուշանայիր,—ծիծաղելով նկատեց Միտսոսը:

—Ո՞վ գիտէ: Դու այժմ բոլորովին հասած քաջ տղամարդ ես... Է՛հ, մենք այդ բոլորի մասին վերադառնալուցս յետոյ կը խօսենք: Ձիւ սանձն ինձ անւր: Դու, կարծեմ, շատ յոգնեցիր:

—Ո՛չ թէ յոգնեցի, այլ քաղցած եմ:

—Ես էլ քաղցած եմ, բայց սովորել եմ քաղցածութեան և յոգնածութեան: Համբերիր, դու էլ կը վարժուես դրանց: Բայց բաւական է այսօր: Շտապենք: Ժամանակ է մեզ հանգստանալու:

Հետեակ օրը Նիկողայոսը ճանապարհ ընկաւ Նաւպլիա և իր հետ վերցրեց Միտսոսին, որին հրամայել էր աւելի մաքուր հագնուել:

Նրանք ուղղակի դնացին քաղաքազլխի մօտ, որը մեծ յարգանքով ընդունեց Նիկողայոսին և կնոջը հրամայեց սուրճ բերել: Յետոյ նա հետաքրքրութեամբ նայեց Միտսոսին, և այս վերջինիս այնպէս թւաց, թէ նրանք միմեանց աչքով արին:

—Ուրեմն սա քո կորիւնն է,—հարցրեց քաղաքազլուխը, որի անունը Դիմիտրիոս էր,—ինչ է, սկսել է ատամները կըճրտացնել:

—Ի՛նչպէս չէ, նա միայն որսի է սպասում,—պատասխանեց Նիկողայոսը և աւելացրեց.—բայց գիտե՛ս ինչ, սիրելի Դիմիտրիոս, ես վաղը կը գնամ, և իմ բացակայութեան ժամանակ, խնդրում եմ, լեզուդ պահիր: Ես այստեղ, ինչ որ հարկաւոր է, արի և կը ցանկանայի, որ դուք լուռ սպասէք նշանին: Ա՛յ, Աթէնքում այդ յիմար շատախօսութիւնը շատ չարիքների պատճառ է դարձել: Այնտեղի հայրենասէրները շատ մարդիկ և փող էին հաւաքել, բայց սրան-նրան ասել են: Ի սէր Աստուծոյ, մի կնոջը դուք էլ այստեղ մի անէք: Երբ խօսելու ժամանակը գայ, ձեր բոլորի տեղ հայր Անդրէասը կը խօսէ: Որպիսի մեծ բաւականութեամբ ես իմ կեանքից հինգ տարի կը տայի, միայն թէ նրա լեզուի նման լեզու ունենայի:

—Դու սրա համար կեանքիդ հետեակ հինգ տարին կը տայիր,—նորից հարցրեց Դիմիտրիոսը ժպտալով:

—Ոչ, այդ հինգ տարին ևս կրկնային արքայութեան հինգ հազար տարիների հետ չեմ փոխիլ: Է՛, Դիմիտրիոս, հատիկ ունենա:

—Սև՞, թիւրքերի համար:

— Իհարկէ:

—Ջրաղացներն այժմ էլ պատրաստում են դրանից, — ասաց Դիմիտրիոսը, աչքի տակից Միստոսին նայելով:

Երիտասարդը ոչինչ չը հասկացաւ այդ խօսքերից, և Նիկողայոսը հարկաւոր համարեց միայն ասել.

—Դու յետոյ կ'իմանաս, թէ այդ ինչ հատիկ է, որից փառաւոր հայեր պէտք է պատրաստենք: Իսկ այժմ մոռացիր, ինչ որ լսեցիր մեզանից: Ի՞նչ է, Դիմիտրիոս, ինձ համար մարդիկ պատրաստել ես:

—Այն Հարկաւոր է այսօր նրանց քեզ մօտ ուղարկել:

—Ո՛չ, Միստոսն ինձ մինչև Նաւալիւա կ'ուղեկցէ, իսկ նըրանց դու վաղը երեկոյեան կ'ուղարկես: Նրանց համար աւելի ապահով է թիւրքական հալուստը հագնել:

Այս խօսքերից յետոյ նա վեր կացաւ:

—Ո՛ւր ես շտապում: Արաղ խմիր:

—Ոչ, չնորհակալ եմ: Դու գիտես, որ ևս չեմ խմում:

Հետևեալ օրը, արեւ մայր մտնելու ժամանակ Նիկողայոսը ճանապարհ ընկաւ, սրովհետև այն ժամանակները յոյների համար աւելի ապահով էր գիշերները ճանապարհորդել: Թիւրքերն սկսել էին կասկածել, թէ մի ինչ որ ազգային շարժում է պատրաստւում, և յաճախ լեռնային անցքերում զինուորները բռնում էին. խաղաղ ճանապարհորդներին և հարց ու փորձի ենթարկում: Իսկապէս ռամիկների մեծամասնութիւնը տեղեակ չէր գործողութեան այն նախագծին, որ կազմել էին պարազլուխները, և այդ պատճառով թիւրքերի ձեռն ընկած յոյները նրանց ոչինչ չէին կարող ասել այդ մասին. բայց թիւրքերն այդ բանը վերագրում էին նրանց յամառութեանը, և շատ անգամ գործը գնդակով կամ կախաղանով էր վերջանում: Բայց սովորաբար թիւրքերն այնքան ծոյլ և անհոգի էին, որ գիշերները քնում էին և ճանապարհների վրայ չէին հսկում, նմանապէս և՛ տեղապահ զօքերի թիւր չէին աւելացնում: Այդ պատճառով Նիկողայոսը մի այնպիսի երկիր ուղևորուելով, որտեղ առանձնապէս մեծ անբաւականութիւն էր տիրում, բարւօք համարեց ճանապարհորդել գիշերները, իսկ ցերեկները գիւղերում անցկացնել:

Նա և Միստոսը ձիերով ճանապարհ ընկան դէպի Կորնթոս: Ճանապարհը դնում էր Արգոսի միջով, բայց նրանք անցան այդ քաղաքի մօտից և դարձան դէպի աջ, գետի ուղղութեամբ: Ե-

րեկոյեան մօտաւորապէս ժամը տասին, լուսնի լոյսով նրանք տեսան Փակտիայի սպիտակ տները: Բայց այստեղ էլ նրանք թեքուեցին մեծ ճանապարհից թիւրք զօրքերի ուշադրութիւնից խոյս տալու համար: Հին Մոկէնքի պարսպների մօտից անցնելիս Նիկողայոսը ձին կանգնեցրեց և ցոյց տալով քաղաքը, ասաց Միտսոսին:

—Այստեղ, ասում են, յունաց թագաւորներ են թաղուած, և գուցէ մինչև քո մօրուքդ գուրս գալը Յունաստանում դարձեալ թագաւորներ լինեն:

Միկէնքից լեռնային մի նեղ շաւղով նրանք գուրս եկան Կորընթոսից դէպի Արգոս տանող ճանապարհը. բայց հէնց որ ոտք դրին այդ ճանապարհի վրայ, ձիերն ականջները սրեցին և դողդողացին ամբողջ մարմնով:

—Ի՞նչ պատահեց սրանց,—բացազանչեց Միտսոսը վայր դատելով:

Սաիայն նա ինքն էլ դողաց, ևրբ հարեան ծառի վրայ մի կախուած մարդու դիակ տեսաւ: Նիկողայոսի վրայ այդ տեսարանը խիստ ազդեցութիւն չը գործեց և նա հանդարտ՝ ձիուց իջնելով, դրպանից դանակը հանեց ու կտրեց այն պարանը, որից մարդը կախուած էր:

—Մենք ուշացել ենք,—ասաց նա,—սա արդէն մեռած է: Յանկարծ այդ քաջարի, սառնարիւն մարդը, որը նչ մի բանից չէր վախենում և համարձակ դիմաւորում էր ամեն տեսակ վտանգի, դառնապէս հեկեկաց:

—Դու սրան ճանաչո՞ւմ էիր, Նիկողայոս մօրեղբայր,—հարցրեց Միտսոսը մինչև սրտի խորքն զգացուած:

—Ո՛չ, բայց սա յոյն սզգից է, որին հրէշ-թիւրքերը ամեն կերպ ճնշում են և վարւում նրանց հետ, ինչպէս չների հետ: Միտսոս, ևրդուիք, որ երբէք չես մոռանալ այս տեսարանը: Նրանք այս մարդուն սպանել են լոկ այն պատճառով, որ նա յոյն է, և եթէ քեզ էլ մի որեւէ առանձնացած տեղ բռնեն, դարձեալ նոյնը կ'անեն: Դու լսել ես, թէ նրանք ինչպէս են սպանել Կազանտօնին ու նրա ևզբօրը: Նրանք վայտէ մուրձերով սարսափելի թակել են այդ խեղձերին և, որպէսզի երկար ապրեն, գլուխներին ձեռք չին տուել, բայց Գէորդը, որ մի առողջ ևրիտասարդ էր, ջարդուած ձեռներով ու ոտներով բարձր ծաղրելիս է եղել իր դահիճներին:

—Բաւական է, բաւական է: Գնանք այստեղից, Ես այլևս չեմ կարող նայել այդ զարհուրելի դիակին:

—Ո՛չ, նայիր,—չարունակեց Նիկողայոսը վայրենի կատաղութեամբ.—նայիր և երդուիք Աստուծոյ անունով, որ դու նը-

բանց հետ հաշիւդ վերջացնելիս չես խնայիլ ոչ ծերունու, ոչ կնոջ, ոչ երեխայի...

Միտոսը հնազանդուեց և արիարար կախուածին նայելով, արտասանեց սրահանջուած երգումը:

— Իսկ այժմ բունիբ սրա ոտներից, որ տանենք, թաղենք:

Բայց նախ նա մի կտոր կտրեց դժբաղդի հագասից և ուսիցը հոտոզ արիւնով նրա վրայ «վրէժ» բառը գրելուց յետոյ կապեց այն պարանին, որից քիչ առաջ կախուած էր յոյնը: Յետոյ նա Միտոսի օգնութեամբ դիակը տարաւ թփերի մէջ և, նրա վրայ մի քանի մեծ քար ձգելով, ծակեց այն: Երբ որ ամեն ինչ վերջացաւ, Նիկողայոսը բաց արաւ դընխը և հանդիսաւոր կերպով արտասանեց.

— Ողորմած Աստուած, ներիբ սրա բոլոր մեղքերը և կըրկնապատիկ պատժիբ սրան սպանողներին. Արդարադատ Աստուած, հնարաւորութիւն տուր ինձ Քո անունով անվերջ և անդադրում սպանել քրիստոնէութեան թշնամիներին:

Նրանք վերադարձան ձիերի մօտ, բայց նրանցից մէկը փախել էր և Նիկողայոսը պնդեց, որ Միտոսը նստի մնացած ձիու վրայ, որովհետև նա ստիպուած պէտք է լինէր ոտքով վերադառնալ տուն, իսկ ինքը դնաց նրա կողքով: Նրանք անխօս շարունակում էին ճանապարհը և մի ժամ յետոյ հասան Նէմէայի և Կորնթոսի ճանապարհների կտրուածքին:

— Այստեղ մենք կը բաժանուենք, — ասաց Նիկողայոսը.

ես այժմ կարող եմ անվտանգ շարունակել ճանապարհս, իսկ քեզ էլ ժամանակ է տուն վերադառնալու: Բայց տես, շտապիր — գիշերները կարճ են: Դէհ, մնաս բարով, միտդ պահիր, որ շատ բան կարող է քեզանից կախուած լինել: Ես վաղուց հետեում էի քո զարգանալուն և խոստովանում եմ, որ դու գերազանցեցիր իմ սպասածից: Ո՛չ մի բանից մի վախենար, հաւատած միայն հօրդ և ինձ, իսկ միւսներին կասկածով վերաբերուիր: Պահպանիր դու քեզ — դու հարկաւոր ես ինձ և մեր սուրբ գործին: Ես կը վերադառնամ մի կամ կէս տարի յետոյ, դուցէ՛ և՛ վաղը կամ երբէք: Եթէ ես չեմ լինիլ, այն ժամանակ հայրդ կ'ստէ, թէ ինչ պէտք է անես: Մնաս բարով, Միտոս:

Նա համբուրեց երիտասարդի թշերը և ձիու վրայ ցատկելով, առաջ արշաւեց:

Հինգ րոպէ անցած Նիկողայոսը հասաւ այն գիւղը, ուր նա հրամայել էր Դիմիտրիոսին՝ երեք մարդ ուղարկել: Նրանք յոյներ էին — մէկը ծառայ, իսկ միւս երկուսը ազգային շարժման տեղական պարագլուխները: Բոլորը թիւրքական հագուս-

տով էին, և ծառան Նիկողայոսին էլ նոյնպիսի շորերը տուաւ, որ նա շտապով հագաւ:

— Զիտ սանձը քաշիր, իսկ ես ուզով կերթամ:

Այդ իսկ միջոցին Միտսոսն արագութեամբ առաջ էր գլնում Արդոսի ճանապարհով: Նա վատ արամազրութեան մէջ էր, և սիրան անսխորթութեամբ լցւում էր, մտածելով թէ պէտք է անցնէ այն ծառի մօտից, որի վրայ տեսել էր կախուածին, բայց արիաբար իր յուզմունքը յաղթահարելով՝ նա համարձակ ոտք գրաւ նեղ շաւղի վրայ և վճռական քայլերով դիմեց դէպի զարհուրելի տեղը: Սակայն մի քիչ ժամանակ անցած, նա իր ետեից շտապ քայլերի ձայն լսեց: Միտսոսը վազեց դէպի թփերը հալածողներից թաղչելու համար և ցախերի ետեւ պահուելով սպասեց, թէ ինչ պէտք է լինի:

Մի քանի րոպէից յետոյ շաւղի վրայ երկու մարդ երևացին, և Միտսոսը ճանաչեց, որ դրանք թիւրքեր են: Նրանք մի ինչ որ բանի մասին դժ խօսում էին և կարծես մէկ խօսք անելով՝ մի թիւրք վազեց հակառակ կողմը, Միտսոսի կարծիքով իրան որոնելու նպատակով:

Տեսնելով, որ միայն մի թշնամի մնաց, Միտսոսը մտաբերեց Նիկողայոսի խօսքերը և սիսեց կամայուկ, կատուի նըման՝ սողալ դէպի թիւրքը: Բայց յանկարծ չոր ձղները խշշացին նրա ոտքերի տակ, և իսկոյն շաւղի վրայ կանգնած թիւրքը բարձր ձայնով իր ընկերոջն օգնութեան կանչեց: Լսելով որ իր ետեից վազում են, Միտսոսն սիսեց շտապով փախչել և բնազդմամբ ձեռքը դէպի դօտիլը տարաւ: Դանակը դուրս քաշելու համար, բայց որքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ իր գէնքն այնտեղ չը գտաւ: Դա շատ տարօրինակ էր, որովհետեւ նա տանից երբէք առանց դանակի դուրս չէր դալիս, բայց այժմ ժամանակ չէր այդ մասին մտածելու, այլ հարկաւոր էր ազատուելու մի միջոց գտնել:

Նա քայլերն արագացրեց, բայց ինչոր արմատների դիպչելով՝ վայր ընկաւ: Կեանքի մէջ առաջին սնդամ երկիւղը տիրեց նրան:

Հէնց այդ րոպէին թիւրքեր յարձակուեցին նրա վրայ և ձեռներն ու սնտերը կապելով՝ տարան այն ծառի մօտ, որի վրայ նա քիչ առաջ տեսել էր կախուած յոյսին:

Այնտեղ արդէն նստած էր մի երրորդ թիւրք էլ և սառնասրտութեամբ ծխում էր: Ընկերներին տեսնելով՝ նա թիւրքերէն մի ինչոր բան ասաց, որը Միտսոսը չը հասկացաւ:

Մի րոպէ յետոյ լռնող թիւրքերից մէկն ասաց յուռարէն.

— Ասան մեզ, թէ որտեղ է Նիկողայոս Վիգալիսը և մենք քեզ կ'արձակենք:

Միտոսը ոչինչ չը պատասխանեց:

— Մենք գիտենք, թէ դու նվ ես: Դու Միտոսս կոչոնէսն ես—Նաւալիսայի կոստանդինի որդին և Նիկողայոսի քեռորդին:

— Այդ ճիշտ է,—պատասխանեց Միտոսը, գլուխը բարձրբացնելով,—բայց մի տարուց աւելի է, որ ես Նիկողայոս մօրեղբօրս չեմ տեսել:

— Դատարկ բան է,—ասաց թիւրքը ծիծաղելով,—քեզ երևի նրա հետ են տեսել Նաւալիսայում: Ասան մեզ, թէ նա որտեղ է և մի բուռ պիտտը կը ստանաս:

Միտոսն էլ ծիծաղեց. բայց նրա ծիծաղն այն աստիճան անքնական էր, որ նոյն իսկ իրան է, տարօրինակ թւաց:

— Այդ սուտ է—ասաց նա—Նիկողայոս մօրեղբայրս մի տարուց աւելի է Նաւալիսայում չէ եղած: Բայց ասենք թէ ես եմ սուտ խօսում և ոչ թէ դուք: Մի՞թէ կարծում էք, թէ փողով կարող էք կաշառել ինձ: Կորէք դուք ձեր պիտտրների հետ միասին:

Եւ նա նորից քրքջաց:

— Մի բոլի է ժամանակ եմ տալիս քեզ մտածելու: Եթէ դու մեր պահանջը չը կատարես, այն ժամանակ մենք քեզ այս ծառից կը կախենք: Ես տեսնում եմ, որ մէկը վեր է առել այստեղից կախուած անպիտանին, բայց մնացած պարանը բաւական է քեզ կախելու համար:

Եւ երկուսը միասին մօտեցան երրորդ թիւրքին:

— Իսկոյն և եթ գործ չը դնենք արդեօք պարանի ծայրը—ասաց նրանցից մէկը—գուցէ նա այն ժամանակ ասէ մեզ զուտ ճշմարտութիւնը:

Բայց նստած թիւրքը լռութեամբ գլուխը շարժեց:

Միտոսն անօգնական նայում էր իր շուրջը—նա տեսաւ լուսինը, որ դանդաղ բարձրանում էր ամպերի ետևից, զգում էր արևելեան քամու շշուկը, որը շարժում էր ծառից կապած պարանը, լսում թիփի միջից դուրս թռած թռչնակի ճուռղիւնը:

Վերջապէս դահիճները մօտեցան նրան, մի օղակ շինեցին պարանի ծայրին և անցկացրին նրա վիզը:

— Դէհ, քաջ աղայ, խօսիր: Դեռ ուշ չէ,—ասաց նրանցից մէկը:

Միտոսը փակեց աչքերը և ատամները սեղմեց: Անցաւ մի վայրկեան տաժանելի սպասողութեան մէջ:

— Դէհ, քաջիր,—լսեց նա:

Միտսոսի սիրտը ճմլուեց, և նա սպասում էր, թէ պարանն իսկոյն կը ձգի իր վիզը, բայց մի մարդ գրկեց նրան և բացագանչեց:

—Միտսոս, իմ ընտիր, քաջ Միտսոս:

—Պատանին լաց արաւ աչքերը.— նրա առաջ կանգնած էր Նիկողայոսը:

—Դու այստեղ ես,—չչնջաց նա:

—Այն, ես եմ: Ներքի ինձ, Միտսոս: Ես քեզ լիովին հաւատում եմ, բայց ուրիշներին անհրաժեշտ էր քո քաջութեան ապացոյցը: Դէհ, բաւական է դողաս: Այժմ ամեն ինչ անցաւ: Այժմ մի բան խօսիր, զաւակս:

Բայց Միտսոսը գունատուած, զոզողալով նստեց գետնին:

—Մի քիչ օղի խմիր,—աւելացրեց Նիկողայոսը, ամանը նրա չրթուկներին մօտեցնելով:

Միտսոսը խմիչք երբէք չէր գործածած, և օղին նրա վրայ կենարար ազդեցութիւն գործեց: Նա շուտով կազդուրուեց և երեխայական ժպտը գէմքին հարցրեց.

—Ուրեմն ես ինձ լաւ պահեցի, Նիկողայոս մօրեղբայր:

—Ի՞նչ ասել կ'ուզէ: Քո հայրը ճշմարիտ էր ասում, թէ դու կարող ես գալտնիք պահել:

—Այդ դէպքում ես ո՛չ մի բանի վրայ չեմ ախտսում: Միայն ջաւում եմ, որ դանակս կորել է:

—Ահա նա,—պատասխանեց Նիկողայոսը ծիծաղելով,—ես հանեցի գօտկիցդ, երբ դու ձիու վրայ նիրհում էիր: Վախե՛նում էի, թէ մի գուցէ դու առանց պատճառի միւս աշխարհն ուղարկես մի խաղաղ յոյնի:

—Է՛, ժամանակ է տուն գնալու,—ասաց Միտսոսը, դանակը գօտկի ետեւ խրելով:

—Ես քեզ քիչ կ'ուզեկցեմ, իսկ յետոյ կը բաժանուենք:

Իրաւ որ մի քանի քայլ գնալուց յետոյ Նիկողայոսը կանգ առաւ և հրաժեշտ տալով՝ առաց.

—Դէհ, դնա՛, Աստուած քեզ հետ: Դու քաջի նման դուրս եկար դժուար փորձութիւնից: Ես հաւատացած էի քեզ վրայ և շատ ուրախ եմ, որ դու արգարացրիր իմ յոյսը: Յունաստանը վրէժխնդիր կը լինի իր թշնամիներից, և դու նրա վրիժառուների առաջին շարքում կը կանգնես:

Նրանք բաժանուեցին, և առաւօտեան՝ արեգակի առաջին ճառագայթները ծագելիս Միտսոսն արդէն տանն էր:

V

Ամուռը նաւալիւայում խաղաղ անցաւ, թէև երկրի միւս մասերից լուրեր էին ստացուում թիւրքերի գործած անտանելի անդթութիւնների, նորանոր ծանր հարկերի և ամեն սուսակ ճնշումների մասին: Բայց այս գաւառում՝ շնորհիւ նահանգապետի առողջ գատողութեան, թէ նոյնիսկ անհաւատարիմ չների վերաբերմամբ էլ սահմանից չը պէտք է անցնել, մինչև վրէժխորհրութեան օրը հասնի,—խաղաղութիւնը չը խանգարուեց:

Յուլիսին և օգոստոսին սաստիկ շոգ էր, բայց Դրանից խաղողը հասունանում էր, և այդ պատճառով չէր կարելի դանգատուել, մանաւանդ որ սեպտեմբերի կիսին արդէն կարելի կը լինէր քաղել, այնինչ ուրիշ տարիներ այդ ուրախառիթ դիպուածին հարկ էր լինում մինչև հոկտեմբերի կէսն սպասել:

Նիկողայոսի գնալուց յետոյ Միտոսը բողբոջին փոխուեց: Անսպասելի կերպով նա զգաց իւր հասունութիւնը,՝ դադարեց կատուների և տեից ընկնել և իւր ամբողջ ազատ ժամանակը մօրեղբօր խորհրդի համաձայն որս անելով և ծովածոցում ու նրանից գուրս մակոյկով զբօսանքներ կատարելով էր անցկացնում: Որովհետև թէ ցամաքի և թէ ջրի վրայ նա միշտ միայնակ էր լինում, այդ պատճառով նա ազատ մտածում էր այն ամենի մասին, ինչ որ լսել էր Նիկողայոսից և հարևաններից հայրենիքի զարհուրելի դրութեան վերաբերմամբ: Բայց առանձնապէս նրա վրայ մեծ ազդեցութիւն էին գործել մօրեղբօր խօսքերը, որին նա ամբողջովին հպատակուում էր:

Ինչ վերաբերում է Կոստանդինին, նա որդուն չէր խանգարում մօրեղբօր խորհուրդներին հետևելու, մանաւանդ որ Նիկողայոսը խնդրել էր նրան չը զբաղեցնել երիտասարդին ձեռքի չափազանց աշխատանքով, որը կարող էր խլել նրան հայրենիքին ծառայելու նախապատրաստութիւնից: Նա մինչև անգամ խոստացել էր հարկաւոր դէպքում մշակներ վարձելու համար փող տալ այն գումարից, որը Աթէնքի մասնաժողովը յանձնել էր նրան: Սակայն այդ ամիսների ընթացքում այդուամբիչ գործ կար, այնպէս որ ինքը Միտոսն էլ տեսնելով որ հայրն օգնականի կարօտութիւն չ'ունի, իւր ժամանակը հանդիստ անց էր կացընում որսորդութեամբ ու նաւավարութեամբ, իսկ երեկոյններն այցելում էր սրճարանը, որտեղ լսում էր խօսակցութիւնները և թուղթ կամ նարդի խաղում: Վերջին խաղի մէջ նա այնքան վարժուեց, որ առաջնակարգ խաղացող դարձաւ:

Այգեկութից փոքր ինչ առաջ մի անգամ երեկոյեան

Միտասը սովորականից շուտ և դժգոհ գէմրով վերադարձաւ առնաւ:

—Դու լսել ես, թէ թիւրքերն ինչ են մտածել այդեկութի վերաբերմամբ, —բայցադանչեց նա, մտնելով սրահը, որտեղ հայրը նստած էր:

—Ի՞նչ:

—Փոխանակ սասանորդը վճարելու, մենք այսուհետեւ հարկահաններին պէտք է այդեկութի եօթերորդ մասը վճարենք, այն էլ զինով:

—Այդ անկարելի է: Ո՞ւմնից լսեցիր:

—Հրապարակի սրճարանում բոլորն այդ մասին են խօսում: Այնտեղ բոլորը գողոցուում ու հայհոյում են, իսկ փողոցների մէջ զինուորներ են շրջում:

—Ինձ հարկաւոր է այնտեղ գնալ, —ասաց Կաստանդինը, վեր թռչելով անդից. —այ, հէնց զրանից էր վախենում Նիկողայոսը: Ի՞նչ է, դեռ հօ յոյների ու թիւրքերի մէջ կոխ չէ՞ պատահել:

—Ի՞նչպէս չէ: Եանկօն մի թիւրք զինուորի բոլոր ատամները ջարդ ու փշուր արաւ, որովհետեւ վերջինս նրան շուն առնուանեց: Նրան բանտը տարան:

—Իսկ երբ դուրս թողնեն, ևս յոյց կը սամ այդ յիմարին: Նա կարելի է իւր սովորութեան համեմատ հարբած էր: Ա՛յ քեզ յիմար... Մի՞թէ մի զինուորի ատամները ջարդելով կարելի է նոր հարկը փոխել տալ: Իսկ հայր Անդրէասն այնտեղ է:

—Ես նրան ճանապարհին պատահեցի—քաղաք էր գնում:

—Տանը կ'աց, Միտաս, ևս հայր Անդրէասին կը հասնեմ ու կը ստիպեմ նրան համոզելու. ժողովրդին, որ հանդարտուի: Նրա պերճախօսութեամբ կարելի է ամեն բան անել:

—Իսկ մի՞թէ ևս էլ չեմ կարող քեզ հետ գալ, —հարցրեց Միտասը, որովհետեւ չէր ցանկանում, որ կոխն առանց իրան լինի:

—Դու ուզում ես, որ քո կողերը ջարդեն: Համբերիր: Կոխը քեզանից չի փախչիլ, միայն թէ լաւ բանի համար լինի դա:

Կաստանդինն արագ քայլերով հեռացաւ և քաղաքի մօտ հասաւ հայր Անդրէասին:

—Հայր Անդրէաս, —ասաց նա, —հանդարտեցրո՞ւ յիմարներին, նրանք քեզ կը լսեն: Յիշում ես, թէ ինչ էր ասում քեզ Նիկողայոսը:

—Ես դրա համար էլ քաղաք եմ գնում, —պատասխանեց քահանան. —ինձ լուրեր հասան յոյների և թիւրքերի ընդհարման մասին: Նիկողայոսը ձիաւ էր ասում: Մենք պէտք է վճարենք

այն ամենը, ինչ որ կը պահանջեն մեզանից, բայց իւրաքանչիւր իզուր վճարուած գինու գոյլի փոխարէնը մենք յետոյ մի գոյլ թիւրքի արիւն կը վերցնենք:

—Կամնոյ, կամնոյ... Թիւրք զինուորներ են գալիս:

Պահապաններն սկզբում չէին կամենում նրանց քաղաք թողնել, բայց հայր Անդրէասն առանց մի բողբէ մտածելու ասաց, թէ գնում է մի մահամերձի հաղորդելու, իսկ Կոստանդինը իր ծառան է: Թիւրքերը հաւատացին և ներս թողեցին երկուսին էլ:

—Աստուած ինձ կը ներէ այս ստախօսութեան համար, — ասաց հայր Անդրէասն ամայի փողոցը մտնելով. — չէ՞ որ ես նրա սուրբ գործի յաղթանակի համար եմ սուտ խօսում:

Միասօսի գնալուց յետոյ անկարգութիւնը հետզհետէ աւելանում էր: Յիսուանի չափ յոյներ հաւաքուել էին հրապարակի վրայ, իսկ թիւրք զինուորներն ամեն կողմից վազում էին աջնտեղ: Յոյներն իրանց մօտ միայն դանակներ ունէին, իսկ թիւրքերն ասորձանակներով ու հրացաններով էին զինուած: Ժողովրդի միջից մի սպաննալի տրտունջ էր լսում, և գործն արիւնհեղութեամբ կը վերջանար, եթէ հայր Անդրէասը ժամանակին չը հասնէր:

Կոստանդինին պատուիրելով, որ ամբոխի մէջ չը մտնէ, նա սկսեց շտապով անցնել ժողովրդի շարքերի միջից՝ բարձր գոտալով:

—Թողէք ինձ, ես եկեղեցու պաշտօնեայ եմ:

Յոյները յարգանքով ետ էին քաշում նրա առաջից, և թէպէտ մի քանի թիւրք զինուորներ ուզում էին փակել նրա ճանապարհը, բայց նա մի այնպիսի հրամայական շարժումով կանդնեցրեց նրանց, որ թիւրքերը ետ-ետ քաշուեցին: Հայր Անդրէասն արդէն հասել էր ամբոխի կենտրոնին, երբ յանկարծ նրա առաջ մի յոյն և մի թիւրք կոպտաբար հայհոյեցին միմեանց, որից յետոյ յոյնը դանակով խփեց իր հակառակորդի ուսին: Սա էլ ատրճանակն արձակեց, և յոյնը մեռած փռուեց գետին:

Ամբոխը յուզուեց, և փայրենի աղաղակներ լսուեցին, բայց հայր Անդրէասը ձեռքը վեր բարձրացնելով՝ բացաւ անչեց:

—Ես հայր Անդրէասն եմ: Չէ՞ որ դուք բոլորդ էլ ինձ ճանաչում էք: Յանուն Աստուծոյ երզուեցնում եմ ձեզ: Կսեցէք, թէ ինչ եմ ասում:

Տիրեց լուռութիւն, և հայր Անդրէասը շարունակեց:

—Թող անիծուած լինի այն յոյնը, որը կը շարունակէ այս արիւնալից ընդհարումը: Ո՞վ է այստեղ աւագ սպան:

—Ես եմ,—պատասխանեց մի երիտասարդ թիւրք սպայ՝ մօտենալով քահանային.— և քեզ հրամայում եմ հեռանալ, եթէ ոչ մենք քեզ էլ կը ձերբակալենք միւս խռովարարների հետ:

—Ես չեմ գնալ, այստեղ իմ տեղն է:

—Տես, ես քեզ վերջին անգամն եմ ասում—հեռացիր:

—Ես պատրաստ եմ իբրև պատանդ մնալ, որ յոյներն այլևս կարգը չեն խանդարիլ,—հանդարտ արտասանեց հայր Անդրէասը.— դժբաղդաբար արիւնն արգէն թափուած է, բայց ես նրա համար եկայ այստեղ, որ այդ բանն այլևս չը կրկնուի: Թո՛ղ տուր ինձ մի քանի խօսք ասել նրանց, իսկ յետոյ ձերբակալիր, մինչև անգամ սպանիր ինձ, եթէ անկարգութիւնները կրկնուեն:

—Լաւ,—պատասխանեց սպան,— ես քո մասին լսել եմ և պատրաստ եմ քեզ միջոց տալ սանձահարկու ամբոխին: Ես էլ քեզ նման ամենեկին չեմ ցանկանում, որ արիւնհեղութիւնը շարունակուի:

Ամբոխը տենդային անհամբերութեամբ սպասում էր, թէ ինչով կը վերջանայ հայր Անդրէասի և թիւրք սպայի խօսակցութիւնը:

—Յիմար երեխաներ, —բացազանչեց քահանան,— ինչ էք անում դուք: Ճշմարիտ է, սուլթանը եղած հարկերի վրայ մի նորն էլ է աւելացրել, բայց միթէ ձեր դրութիւնը կը թեթեանայ, եթէ չների նման ձեզ էլ թակեն: Դուք միայն դանակներ ունէք, իսկ թիւրքերը հրացաններ: Այս մտած թշուառականը հասկացաւ այդ տարբերութիւնը, բայց արգէն ուշ է: Ի՞նչ օգուտ նրան այն փաստը, որ վերաւորեց իր հակառակօրդներին: Իսկ ձեզ բոլորիդ կը կախեն, եթէ անկարգութիւններին վերջ չը տաք: Ես, ինչպէս եկեղեցու պաշտօնեայ, զինուած չեմ, և եթէ դուք հանդարտ չը ցրուէք ձեր տները, այն ժամանակ ինձ էլ կը կախեն, որովհետև ես երաշխաւոր եղայ ձեզ համար: Դէ՛հ, գնացէք տներդ:

Ամբոխն ուշադրութեամբ լսեց քահանայի խօսքերը, և մի քանիսնեքը դանակները գօտկի կտեր խրեցին, բայց և այնպէս ոչ ոք տեղից չը շարժուեց:

—Գնացէք տներդ,—կրկնեց հայր Անդրէասը,— և եթէ ձեր մէջ գինեատուն պահող կայ, թող փակէ այն, որովհետև այսօր քրիստոնէի արիւն թափուեց:

Բայց ամբոխն առաջուայ նման կանգնած էր իր տեղում, և մինչև անգամ տրտունջի ձայն լսուեց նրա միջից: Այն ժամանակ հայր Անդրէասը բռնեց առաջին պատահած մարդուն և ասաց.

—Է՛հ, օրինակ, դու, Քրիստափոր, ինչո՞ւ չես գնում տուն: Չէ որ դու շատ մօտ ես ապրում, և քեզ կի՛նդ սպասում է տանը. աւելի լաւ է ինքդ գնայ, եթէ ոչ քեզ ուրիշները կը տանեն և այն էլ ոտներդ դէպի առաջ բռնած:

Հայր Անդրէասի խօսքերը վերջապէս ազդեցութիւն ունեցան, և ամբոխը կամաց-կամաց ցրուեց:

Երբ հրապարակում մնային միայն հայր Անդրէասն ու թիւրք զինուորները իրանց սպայի հետ, նա դարձաւ դէպի վերջինը:

—Ես քո հրամանին եմ սպասում: Արն, ինչ որ ուզում ես, մինչև բոլորովին համոզուես, որ կարող վերականգնուած է:

—Ես չէի ցանկանալ քեզ հետ անվայել կերպով վարուել, — բողբէական լուծիւնից յետոյ պատասխանեց սպան. — բայց ընդհանուր խաղաղութեան համար ևս կարծում եմ, որ չես մերժիլ մի-երկու ժամ նստել մեր օրապահական սենեակում: Եթէ թոյլ կը տաս, ևս կը հրամայեմ տանել քեզ այնտեղ:

Նա ձեռքով նշան արաւ երկու զինուորի, և նրանք տարան հայր Անդրէասին: Իսկ ինքն սպան դարձաւ մի ժամաջափ մնաց հրապարակում և երբ բոլորովին համոզուեց, որ անկարգութիւններն այլ ևս չեն կրկնուիլ, զիմեց դէպի զօրանոցները, հայր Անդրէասի մօտ:

—Ի՞նչ ևս ուզում—ծիւել, թէ խմել,—հարցրեց նա քահանային, հանելով իր սուրը և դնելով սեղանի վրայ:

—Ես ոչ ծխում եմ և ոչ խմում,—պատասխանեց հայր Անդրէասը:

Դու պէտք է որ մեզ ատելիս լինես,—ասաց սպան՝ ուշադրութեամբ նրան նայելով. —բայց եթէ քո միջամտութիւնը չը լինէր, այն ժամանակ արիւն կը թափուէր և այն էլ—բազմաթիւ յոյների արիւն: Ես կը ցանկանայի իմանալ, թէ դու ինչո՞ւ զաղարեցրիր խուղութիւնը:

—Մթթէ բաւական չէ այն պատճառը, որը ես բացատրեցի ամբոխին, — ժպտալով նկատեց հայր Անտրէասը:

—Ի հարկէ բաւական է, բայց միայն ես կարծում էի, որ դու ուրիշ պատճառ էլ ունես: Է՛, դէհ, միևնոյնն է: Ես քեզ այլևս բանտարկուած չեմ պահել, որովհետև անկարգութիւններն այսօր կրկնուելու չեն:

Հայր Անդրէասը վեր կացաւ, և նրանք հարստութեամբ միմիանց երես նայեցին: Նրանցից իւրաքանչիւրը իր ազգի հարազատ տիպն էր՝ յոյնը—համարձակ և կրքոտ, իսկ թիւրքը— համարձակ և պաղարիւն:

—Բարի գիշեր, —ասաց սպան, —գուցէ մենք երբ և իցէ

նորից պատահենք միմիանց: Ինձ կոչում են Մահմէտ-Սալիկ: Մենք իրար ոչ մի բանով պարտական չենք—դու դազարեցրիր խռովութիւնը և անախորժութիւններից ազատեցիր ինձ: Ես քեզ հսկողութեան տակ առայ, մինչև համոզուեցի, որ անկարգութիւններ այլևս չեն լինիլ: Այդ պատճառով եթէ մենք երբեք հանդիպենք, այն ժամանակ իբրև թշնամի՝ միմիանց չը պէտք է ինայցենք:

—Այդպիսի հանդիպման ժամանակ ես ոչ ոքի չեմ ինայիլ և ուրիշի կարեկցութիւնն էլ չեմ ցանկանալ, — պատասխանեց հայր Անդրէասը:

Հետեւել շարթին սկսուեց այգեկութն ու գինու պատրաստութիւնը: Միտտոն ստիպուած էր առժամանակ հրաժարուել մակոյկով զրօսանքներ անելուց, որովհետև միայն նա լաւ ծանօթ էր Կոստանդինի պինեզորժութեան բոլոր եղանակներին: Քանի որ գործը դժուար էր, Կոստանդինն իրան օգնելու համար հրաւիրեց մի քանի հարևան ջահէլ աղջիկների և Սօրդէ անունով մի աղայի, որ վերջին օրերն այցուց թռչուններ էր վճռում: Նրանք սկսեցին խաղողը քաղել, և երբ երկու մեծ կողով հասուն, հիւթալի ողիւյզներով լցուեցին, այն ժամանակ հիւթը քամելուն ձեռնարկեցին: Այդ պարտականութիւնը միայն Միտտոնը յանձն առաւ, և երբ Սպէրօն առաջարկեց օգնել նրան, նա արձամարանքով բացազանչեց.

—Մենք գինին չենք պատրաստում նրա համար, որ դու ոտներդ մէջը լուանաս: Գնա՛, խաղող քաղիր:

Իսկ ինքը Միտտոնը անզրավարաիկը մինչև ծնկները կտ ծալեց, տաք ջրի մէջ ինամքով լուացաւ ոտները և հիւթալի խաղողով լիքը չանի մէջ ցատկելով՝ սկսեց առանց յօգնելու արորել այն: Քանի մթնադոյն հիւթը շատանում էր, խաղող հաւաքողները նոր-նոր կողովներ էին դատարկում չանի մէջ: Միտտոն այսպէս աշխատեց մինչև ժամը իննը: Այն ժամանակ Կոստանդինը մօտեցաւ նրան և ասաց.

—Կարծեմ բաւական է մի տակառի համար: Բայց թէպէտ մենք գինին բաց կը թողնենք, այնուամենայնիւ դու մենակ չես կարող հասցնել: Խաղողը քո տրոբելուց շուտ են հաւաքում:

—Ես էլ յոգնեցի, — պատասխանեց Միտտոնը, ձեռքով քրքրախնքը սրբելով. — եթէ դու կարծում ես, թէ, ես մենակ չեմ կարող կատարել, ուրեմն մի աղջիկ ուղարկիր, միայն հրամայիր, որ ոտները մաքուր լուանայ:

Կոստանդինը ձիծաղեց:

Մի քանի բոպէից յետոյ Մարիամը Միտտոնին օգնութեան եկաւ: Սա մի գեղեցիկ, տասնեօթը տարեկան, խոշոր աչքե-

րով և կաթնագոյն գէմքով աղջիկ էր: Երբ նա մօտեցաւ չանին, բարձրացրեց շրջագլխատն ու իր վարդագոյն ոտները բացեց, Միտսոսը նկատեց նրանց գեղեցիկ գծագրութիւնները: Նա ձեռք մեկնեց, որ օգնէ նրան չանի մէջ ցատկելու, և նրանց աչքերը հանդիպեցին միմեանց:

—Է՛հ, այժմ մեր գործը շատ լաւ կ'երթայ—ասաց նա:

Իրաւ նրանք այնպիսի աշխոյժով սկսեցին աշխատել, որ երբ փոքր ինչ յետոյ Կոստանդինը տակառը ձեռին եկաւ, չը աըրորուած խաղողի մի հատիկ էլ չէր մնացել:

—Սցանը բաց արձ, —ասաց Կոստանդինը:

Միտսոսն ու Մարիամը վաղեցին նրա հրամանը կատարելու, բայց նրանք իսկոյն չը դտան խցանը և ձեռներով որոնելիս, պատահմամբ թէ գիտմամբ, շարունակ միմեանց էին դիպչում: Վերջապէս Մարիամը դտաւ, բայց խցանն այնպէս էր ուռել, որ մինչև անգամ Միտսոսն էլ մեծ դժուարութեամբ հանեց այն:

Միենոյն ժամանակ Կոստանդինը տակառը դրաւ անցքի մօտ, և ծիրանագոյն հիւթը հատիկներէ և վերնամաշկի հետ խառն աղմկալի կերպով սկսեց լցուել նրա մէջ: Միտսոսն ու շաղրութեամբ նայում էր թափուող հեղուկին, և հէնց որ տակառի երեք քառորդ մասը լցուեց նրանով, անցքը ծածկեց, որովհետև թթուելիս հեղուկը բարձրանում է մինչև վերեր: Յետոյ Կոստանդինն ու Սպէրօն տակառը տարան սրահը և քսութանով ծածկեցին:

Կէսօրին հասաւ ընդհանուր հանգստութեան ժամը, և բոլոր աշխատաւորները ճաշելին ջրհորի մօտ, սօսու ստուերի տակ: Նրանք իրանց հետ հաց էին բերել, քացի Մարիամից, որը հաւատացնում էր, թէ քաղցած չէ: Բայց Միտսոսը, որի մօտ նա նստած էր, նկատեց նրա յոգնած դէմքը և անխօս վեր կենալով նրա համար հաց ու սրանիր բերաւ, որոնք նորատի աղջկայ ախորժակը բաց արին, և նա մեծ բաւականութեամբ կերաւ:

Ճաշից յետոյ բոլորը պառկեցին քնելու—որը սրահում, որը ծառերի տակ: Մի ժամ անցած, Միտսոսն արթնացաւ բոլորից շուտ և գնաց միւսներին էլ արթնացնելու: Մարիամը պառկած էր հեռաւոր սօսու տակ, և նրա կարճ շրջագլխատի տակից երեւում էին ծնկներից վերև մերկ ոտները: Միտսոսը նորից նըկատեց նրանց գեղեցիկութիւնը և աւհասարակ զարմացաւ, որ մինչև այժմ նա մի այնպիսի սիրուն աղջկայ վրայ ուշադրութիւն չէր դարձրել:

Մինչդեռ երիտասարդը հիացած նայում էր Մարիամին,

սա բաց արաւ աչքերը և մերկ ոտները ծածկելով, կարմրեց։
—Աշխատելու ժամանակ է,—ասաց նա,—բայց զգուցի՛ր քնատի նման քնել եմ այստեղ։

—Օգնեմ քեզ վերկենալու,—հարցրեց Միտսոսը՝ ձեռք մեկնելով։

Բայց նա ձգուեց և առանց որևէ օգնութեան վեր թռաւ։

Գործը վերանորոգուեց և ընդհատուեց արեգակը մայր մտնելու ժամանակ միայն, որովհետև երկու տալիս էլ զինով լցուեցին, իսկ չորրորդը մինչև մութն ընկնելը չէր կարելի վերջացնել։

Միտսոսն ու Կոստանդինը միասին ընթրեցին և երիտասարդն այդ օրը սրճարան չը գնաց, այլ փռուեց սրահի յատակին՝ դժուար աշխատանքից հանգստանալու համար։

Ժամը իննին նա վեր կացաւ և ասաց յօրանջելով.

—Ես գնում եմ քնելու։ Բայց, հայրիկ, դու նկատեցիր, թէ ինչպէս գեղեցիկ է Մարիամը։ Չարմանալի է, որ մինչև այսօր ես չէի նշմարել այդ։

—Ամեն մարդ իր ժամանակին նկատում է, որ աշխարհում գեղեցիկ աղջիկ կայ,—ժպտալով պատասխանեց Կոստանդինը։ Ես էլ քո հասակիդ այդ գիտակցութեանն եկայ։

—Եւ ի՞նչ արի՛ր դու այն ժամանակ։

—Աստուծոյ ողորմութեամբ ամուսնացայ այն աղջկայ հետ, որն ինձ համար ամենից գեղեցիկ էր։

—Իմ մօր հետ։ Ես հազիւ եմ յիշում նրան։ Իսկ ես մըտաղի՛ր չեմ ամուսնանալ Մարիամի հետ, բայց և այնպէս նա շատ, շատ գեղեցիկ է։

Հետևեալ օրն այգեկութը շարունակուեց, իսկ Միտսոսն ու Մարիամը առաջուայ նման ոտներով աշխատում էին չանի մէջ. բայց այժմ Միտսոսն աչքը նորահաս աղջկանից չէր հեռացնում, պատմում էր նրան որսորդութեան ժամանակ արած քաջագործութիւնները և առհասարակ իրեն պահում էր այնպէս, ինչպէս ջահէլ արազաղը հաւի մօտ։

Որովհետև այգեկութի երրորդ օրուայ համար աղջիկներին կարիք չը կար, այդ պատճառով երկրորդ օրուայ երեկոյեան Կոստանդինը նրանց հաշիւը վերջացրեց։ Այսպիսով Միտսոսը պէտք է բաժանուէր գեղեցիկ Մարիամից և նա հրաժեշտ տալիս բալենու մօտ տարաւ նրան, ճարպկութեամբ բարձրացաւ ծառը և սկսեց նրա համար ամենահասուն պտուղներ դած թափել։ Յետոյ նա իջաւ և մինչև դռնակը ճանապարհ դնելով՝ զարմացած նկատեց, որ նա մի ինչ որ բանի վրայ ծիծաղում է։

—Մնաս ըարսիլ,—փոքրիկ Միտտոս,—ասաց նա, կարծես ծաղրելով երիտասարդին.—արի իմ հարսանիքին:

Միտտոսը ցնցուեց այդ խօսքերից, չը նայելով որ նախընթաց օրը նա հօրն ասել էր, թէ ցանկութիւն չունի Մարիամի հետ ամուսնանալու:

—Գու ամուսնանում ես իսկ ում հետ:

—Եանկօ Վլաքոսի հետ: Գոնէ նա ինձ առաջարկութիւն արաւ և ես չը մերժեցի:

—Եանկօն: Բայց չէ որ նա մի կոպիտ հրէջ է:

—Ես նրան հրէջ չեմ գտնում:

—Բայց թէպէտ նա հրէջ է,—իր սխալմունքն ուղղելու համար ասաց Միտտոսը,—ես նրան շատ եմ սիրում, նա քաջ մարդ է: Անցեալ շաբաթ Եանկօն մի թիւրքի այնպէս խփեց, որ նա երկար ժամանակ խելքի չի գալ:

—Այո, նա շատ լաւ մարդ է,—աւելացրեց Մարիամը և հեռացաւ՝ առաջուայ տարօրինակ ժպիտը դէմքին:

Այգեկութի երրորդ օրը նուիրուեց խաղողի ամենաընտիր տեսակից գինի պատրաստելուն, և այժմ Միտտոսին թւում էր, թէ ոտներով միայնակ աշխատելն աւելի ձանձրալի է, քան թէ այն ժամանակ, երբ զեղեցիկ Մարիամն էլ աշխատում էր իր կողքին: Երբ այդ ընտիր հիւթով տակառը լցուեց, այն ժամանակ սկսուեց այգեկութի ամենավերջին գործողութիւնը, որ հեթանոսական սովորութիւններն էր յիշեցնում: Միտտոսը մի մեծ աման բերաւ տանից, իսկ կոտանդինը վազերի վրայ մընացած խաղողը քաղելով՝ լցրեց նրա մէջ: Յետոյ նրանք ամանը գրին այգու մէջտեղը, որ թռչունները կտցահարեն պտուղը:

Սաղողը հաւաքելուց և գինին պատրաստելուց յետոյ Միտտոսը կարող էր հանգստանալ և սկսեց առաջուայ նման երեկոներն ու գիշերները ձուկ որսալ:

Մի անգամ արեգակը մայր մտնելու ժամանակ նա նստեց մակոյկը և ծովածոցով լողաց դէպի հակառակ ափը: Աղջամուղջը շուտով սեղի տուաւ գիշերային խաւարին, և երբ Միտտոսը իր նպատակակէտին հասաւ, դժուարութեամբ նկատեց իր դէմ բարձրացած Արզուլ-Ահմէդի տան սպիտակ պարիսպը: Այդ միջոցին քամին բոլորովին դադարել էր, և հէնց որ նա ուզում էր վեր առնել թիւն՝ ուղիղ ջրի մէջ իջած պարսպի մօտով անցնելու համար, յանկարծ լսեց մի կանացի ձայն, որ յունարէն գինեգործների ժողովրդական կրգն էր կրգում:

Միտտոսը չէր կարող երզչուհուն տեսնել, բայց նրա ախորժելի, քաղցր ձայնը մի տեսակ տարօրինակ կերպով յուզեց երիտասարդի սիրտը: Անշարժ, կարծես զմայլած, նա լսում էր

այդ երգեցողութիւնը. իսկ երբ անտեսանելի երգչուհին լուսի, նա կանգնեց իր մակոյկի ղեկի մօտ և բարձր ձայնով երգեց երգի երկրորդ տունը: Յետոյ տիրեց մի խորին լուսթիւն, և Միտսոսն սկսեց զարմացմամբ ինքն իրեն հարց սալ, թէ արդեօք ո՞վ կարող էր լինել այդ կինը, որ թիւրքական հարեմում յունարէն էր երգում: Յանկարծ նա մտաբերեց, որ Նիկողայոսի հետ մակոյկով զբօսնելիս տեսել էր, թէ ինչպէս մի չար թիւրք այդ իսկ պարսպի մօտ պատշգամբի վրայ խփեց մի կնոջ, որը բայագանչեց յունարէն՝ «ինչու ես խփում»:

Այդ մտածմունքներն այնպէս գրաւեցին Միտսոսին, որ նա բոլորովին մոռացաւ ձուկ որսալու գիտաւորութիւնը, իսկ մակոյկը, որ բազդի բերմունքին էր թողուած, կամայ-կամաց բաց ծովը դուրս եկաւ: Յանկարծ մտածմունքներից սթափուելով և տեսնելով այդ, նա ամենեկին չը վախեցաւ, այլ բարձրացած քամուց օգտուելով՝ առագաստը դրաւ, ինչպէս հարկաւոր էր, և մակոյկն արագութեամբ դարձաւ դէպի ծովածոցը: Հեռոււմ լեռների գագաթին փայլեց կայծակը, և խոշոր անձրև տեղաց, բայց Միտսոսը մտածում էր միայն, թէ ինչպէս վերագառնայ սպիտակ պարսպի մօտ կնոջից լսէ անտեսանելի կնոջ երգը:

Շուտով նա հասաւ այդ պարսպին, բայց ի հարկէ պատըշգամբի վրայ ոչ ոք չը կար, և Միտսոսն ստիպուած եղաւ այդ սարսափելի վատ եղանակին անցնել ամբողջ ծովածոցի երկայնութեամբ, որի վրայ գորշագոյն ալիքներ էին ծփում: Շատ աշխատանք կրեց նա իր մակոյկը ծովածոցի բոլոր վտանգաւոր տեղերից դէպի հօր բնակարանն ուղղելու համար և միայն գիշերը շատ ուշ դուրս եկաւ ափը, որտեղ նրան սպասում էր հայրը:

—Միտսոս, այսպիսի փոթորկալից գիշերներն ի դուր ես մակոյկով ման գալիս,—ասաց նա.—ամենավարժ ծովադնայն էլ դժուարութեամբ կարող է գիմադրել այս եղանակին:

—Ես սիրում եմ կուել քամու և ալիքների դէմ,—պատասխանեց Միտսոսը՝ գինեգործների երգը կիսածայն երգելով:

Կոստանդինը նրան հարցուփորձ չ'արաւ և տաք սուրճ խմացնելով՝ արձակեց քնելու:

Երկու օր Միտսոսն զբաղուած էր գինեգործութեան յետագայ գործողութիւններով, բայց երրորդ օրը երեկոյան Կոստանդինը դնաց Նաւալիա, իսկ երիտասարդը թռաւ մակոյկը և սլացաւ դէպի սպիտակ պարսպը, որը բոլոր ժամանակը դուրս չէր գալիս նրա զլխից: Ո՛րպիսի աննկարագրելի երջանկութեամբ փայլեց նրա գէմքը, երբ հեռուից պատըշգամբի վրայ տեսաւ մի աղջիկ: Միտսոսը համոզուած էր, որ

հէնց դո՛ւ էր այն դիւթիչ երգչուհին, որի ձայնն այնպէս գրաւելի կերպով զեռես հնչում էր նրա ականջների մէջ:

Մակոյկի զեկի մօտ նստած այդ երիտասարդին ականելով աղջիկը նոյնպէս հասկացաւ, որ նա էր գիշերային խաւարի մէջ գինեգործների երգի երկրորդ տունը երգողը: Նրանց աչքերը պատահեցին միմեանց, և արեգակի ճառագայթներով լըցուած պարզ օդի մէջ կազմեցին մի սուկէ կամուրջ՝ նրանց սրտերը միացնելու համար:

Սակայն երբ մակոյկը պարսպին մօտեցաւ, աղջիկը կախեց զլուխը, պարսպի վրայ հիւսուած վարդերից մի քանի հատ քաղեց և սկսեց կամաց պոկոտել նրանց թերթիկներն ու ցած, կիսաձայն գինեգործների երգի առաջին տունը երգել: Յետոյ երգեց երկրորդը, բայց երրորդի վրայ նա կանց առաւ, կարծես մոռացաւ խօսքերը: Միտսոսն աչքերը նրանից չը հեռացնելով՝ վերջացրեց այն: Գլուխն առանց բարձրացնելու աղջիկը նրանետից կրկնեց թողած տուները, իսկ յետոյ երկրորդ ամբողջ տունը նորից երգեց:

Արեգակն արդէն նստել էր, բայց լեռների գաղաթները զեռ լուսավառում էին արևելքում: Սակայն Միտսոսը տեսնում էր միայն սպիտակազգեստ, ոսկէ դօախկով երիտասարդ աղջկան, նրա վարդերով լի ձեռքը և մինչև աչքերը քօղով ծածկուած գէմքը:

— Դեռ երրորդ տուն էլ կայ, — ասաց նա:

Աղջիկը զլուխը բարձրացրեց, և նրա սև աչքերն ուրախ ժպտացին:

— Դու ինձ հետեակ անգամ կը սովորեցնես երրորդ տունը: Ահն՝ քեզ նուէր այս դասի համար: Իսկ այժմ հեռացիր, գալիս են:

Նա հաւաքած վարդերը ձեռք մակոյկի մէջ և հեռացաւ պարսպից:

Մօտակայքում ձայներ լսուեցին, և Միտսոսը յենուեց թփերին:

Նրա սիրտը երջանկութեամբ լցուած էր: Միտսոսն առաջին անգամ հասկացաւ, թէ ինչ բան է սէրը:

Հետեակ առաւօտ Մարիամի պսակն էր, և Միտսոսն առանց որևէ թշնամական զգացմունքի դնաց հարսանիքին: Մինչև անգամ նրան թւաց, թէ նորապսակները հիանալի զոյգ են կազմում:

Ժամը չորսին Միտսոսն արդէն պատրաստուում էր գնալ ծովափը մակոյկի մօտ, երբ հայրը կանգնեցրեց նրան՝ ասելով.

— Մենք այսօր զինին կը վերջացնենք: Օգնիր ինձ, Միտսոս:

— Ես հէնց այն է ուզում էի գնալ մակոյկով զբօսնելու, — պատասխանեց երիտասարդը. — միթէ մինչև վաղը չէ կարելի սպասել:

— Ո՛չ, մենք շուտով կը վերջացնենք: Դու գեռ ժամանակ կ'ունենաս զբօսնելու:

— Նիկողայոս մօրեղբայրը հրամայել է ինձ իւրաքանչիւր օր... — սկսեց Միտոսը, բայց հայրն ընդհատեց նրան.

— Նա քեզ հրամայել է նմանապէս լսել ինձ:

Միտոսը մի րոպէ տատանուեց, բայց յետոյ արտասանեց հնազանդութեամբ:

— Այո, հայր: Ես շատ ափսոսում եմ, բայց գնանք:

Հէնց որ գործը վերջացաւ, երիտասարդն առանց ընթրելու ցատկեց մակոյկի մէջ և սկսեց բոլոր ոյժով թիալարել:

Շուտով երևաց սպիտակ պարիսպը, և սքանչելի ձայնը նորից հնչեց մթութեան մէջ:

VI

Միտոսից բաժանուելով՝ առաւօտ կանուխ Նիկողայոսն անվնաս հասաւ Կորնթոս, բայց Պատրաս գնալու համար ստիպուած եղաւ երկու օր կայիկի *) սպասել: Պելօպօնէսում (հարաւային Յունաստան) յեղափոխութեան նախապատրաստութիւնը կենտրոնացած էր Հերման արքեպիսկոպոսի ձեռքում: Նիկողայոսի նման նա էլ շատ տանջանքներ էր կրել թիւրքերի ձեռքից և համաձայն էր յետաձգել իր վրէժխնդրութիւնը մինչև այն ժամանակ, երբ հատուցման ընդհանուր գործը բոլորովին կը հասունանար: Նրա սուրհանդակը Կորնթոսում պատանեց Նիկողայոսին և յայտնեց, թէ արքեպիսկոպոսը ցանկանում է, որքան կարելի է շուտ տեսնել նրան: Բայց Նիկողայոսը մտադիր էր ուղղակի Պատրաս գնալ և սուրհանդակին հրամայեց ասել արքեպիսկոպոսին, թէ շուտով կը գայ, միայն աւելի անվտանգ լինելու համար նախադասում է ծովային ճանապարհը: Նա լաւ գիտէր, որ թիւրքերը կասկածում են նրա վրայ իրանց դէմ դաւադրութիւն կազմելու մէջ. իսկ որովհետև նրա ապստամբութեան նախապիծն արդէն հետզհետէ իրադորդւում էր, և ինքը Մորէայի յեղափոխական յանձնաժողովի գլխաւոր ներկայացուցիչն էր, ուստի չէր ցանկանում իրան վրտանգի ենթարկել՝ անցնելով ծովածոցի այն քաղաքներից, որտեղ բերդապահ զօրքեր կային:

Սակայն երկրորդ օրը թզով բեռնաւորուած կայիկը դուրս

*) Փոքրիկ թիւրքական նաւ:

եկաւ Կորնթոսից, և նրա տախտակամածի վրայ էր նիկողայոսը, որը մթնշաղին նաւն էր մտել:

Կէս գիշերին մօտ նրանք ճանապարհ ընկան: Սկզբում մի բարակ քամի էր փչում, բայց առաւօտեան մօտ ժամը չորսին նա բոլորովին հանդարտուեց, և ծովի մակերևոյթն ապակու նը-
մանութիւն ստացաւ: Հիւսիսային կողմում առաւօտեան ար-
շալուսին երևում էր Պարնասը, իսկ ուղիղ նրա գէմուղէմը
գտնւում էր Իտալիան. հակառակ եղբրքին լեռնային գագաթ-
ների վրայ սպիտակին էին տալիս անցեալ տարուայ ձևան մը-
նայորդները, որոնք շլացուցիչ կերպով փայլիւում էին արև-
գակի առաջին ճառագայթների տակ:

Այդ ճառագայթներն սթափեցրին նիկողայոսին, և նա տե-
սաւ, որ իր մօտ կանգնած է նաւավարը:

—Բոլորովին քամի չը կայ,—ասաց նա,—և մենք ստիպուած ենք մի քանի ժամ տոնջուեղ այստեղ: Դու շնտ ես շտապում:

—Ես երբէք չեմ շտապում,—պատասխանեց նիկողայոսը՝
ծխաբարչի մէջ ծխախոտ լցնելով.—և կարիք էլ չը կայ շտապե-
լու, քանի որ կայիկն շտապեցնել չէ կարելի: Ես չեմ կարող
քամի ստեղծել, նշանակում է հարկաւոր է սպասել: Ի՞նչ է,
բեռդ ծանր է:

—Այն, և դա աւելի ծանր կը լինէր, եթէ անիծեալ դները
Կորնթոսում վեց անգամ աւելի թուղ չը խլէին:

—Ո՞վ, թիւրքերը:

—Հապա էլ ո՞վ: Նրանք հաւատացնում էին, թէ դա նա-
ւահանգստեան հարկն է: Աքանչելի նաւահանգիստ ունի Կորնթո-
սը—բարերի մի կոյտ է դիզած ջրի մէջ և հինգ աստիճան
չինած, ուրիշ ոչինչ:

—Նաւահանգստեան հարկ: Դա ինչ որ նոր բան է: Վա-
ղուց է դրուած աւղ հարկը:

—Մի ամսի չափ է, բայց ես կարծում եմ, թէ դա երկար
չի տևիլ:

—Ինչո՞ւ:

—Որովհետև չուտով կը մորթոտեն այդ խոզերին: Ես ամ-
բողջ կհանքս անց եմ կացնում ծովի վրայ և նորութիւններ շատ
քիչ եմ լսում: Բայց չէ որ դու Կորնթոսումն էիր: Միթէ չը
լսեցիր, որ այստեղ խօսում էին, թէ մի տարի էլ չի անցնիլ,
երբ յոյները կ'ազատուեն իրանց բարբարոսների ձեռքից:

Այդ խօսքերն արտասանելով՝ նաւավարը ձեռքով նշան ա-
րաւ մօտը կանգնած նաւատիին, որ հեռանայ:

—Ես չեմ սիրում այդ մասին իմ մարդկանց մօտ խօսել,
բայց քեզ ինչու չ'ասեմ: Դու Պատրասում կ'իջնես, իսկ ես կը

չարունակեմ ճանապարհս: Բացի այդ, թէպէտ դու թիւրքական հաղուստով ես, բայց թիւրք չես. նրանք կարճ ոտներ ունեն, իսկ դու երկար: Երեկ երեկոյ սրճաբանում ես լսեցի այս խօսակցութիւնը. չորս թիւրք ասում էին, թէ գիւղացիք զէնք են հաւաքում: Բացի դրանից նրանք մի ինչոր Նիկողայոս Վիզալիս անունով մարդու մասին էին խօսում, որին ուզում էին ձերբակալել, հէնց որ նա Կորնթոս կը հասնէ, որովհետեւ այդ մարդը պարագլուխներին մէկն է:

—Եւ ինչ, նրանց յաջողուել է բռնել: Իսկ ով է այդ Նիկողայոսը:

—Ես նրան չեմ ճանաչում: Ես ծնուած եմ կղզիներից մէկում և կարծում էի թէ զուցէ դու ինձ ասէիր, ինչ մարդ է նա:

—Իսկ ո՞ր կղզուց ես դու:

—Պարա կղզուց:

Նիկողայոսը պառկեց, ուշի-ուշով նայեց իր խօսակցին և հանդարտ ասաց.

—Ե՛ս եմ Նիկողայոս Վիզալիսը, այն իսկ մարդը, որին թիւրքերն այնքան ցանկութիւն ունեն բռնելու: Այժմ դու կարող ես այս երկսից մէկն անել—կամ Պարասում մատնել ինձ թիւրքերի ձեռքը, կամ օղնել ինձ միւս սուրբ գործում: Մի այսպիսի գործի ժամանակ չէ կարելի ասել, թէ ես հեռու կը մնամ: Դու պէտք է այս կամ այն կողմը բռնես: Ես քեզ վրայ վստահացայ, որովհետեւ դու մեզ կարող ես օգտակար լինել: Դու Պարայի բնակիչ ես, և հաւանական է, որ Յունաստանի եզերքը շատ լաւ ծանօթ է քեզ: Մենք բաւական մարդ ունենք ցամաքի վրայ կուսելու համար և բաւական փող, բայց մեզ հարկաւոր են նաև փոքրիկ նաւակներ թիւրքերին հալածելու համար, եթէ նրանք մտածեն ծովի վրայ փրկութիւն որոնել:

Այդ խօսքերի վրայ Նիկողայոսի աչքերը չիկացած ածուխի նման փայլեցին:

—Ես քեզանից չեմ թագցնիլ,—բացադանչեց նա բարձր,—մօտ է արշալոյսը, որը պէտք է լուսաւորէ այդ անիծեալ դեւերի կործանումը: Դու գիտես, թէ մարդկային կրքերից ո՞րն ամենից աւելի զօրեղ կերպով է տիրում սրտին: Դա ո՞չ սէրն է, և ո՞չ էլ երկիւղը, այլ վրէժխնդրութիւնը: Իսկ եթէ որ դու էլ այնքան տանջուած լինէիր, որքան ես, կը հասկանայիր, թէ ինչպէս զարհուրելի է մշտապէս միմիայն ատելի թշնամիների վրայ մտածել... Ես արիւն եմ տեսնում թէ արևածագի և թէ արևամտի մէջ. ես այժմ մարդ չեմ, այլ Աստուծոյ բազուկով առաջնորդուող մի հրեղէն սուր: Ես այն ժամանակ միայն նորից մարդ կը լինեմ, երբ այլևս ո՞չ մի թիւրք չի մնալ մեր երկրում,

և երբ այդ երկիրը ազատ ազգի բնակավայր կը դառնայ: Դէ՛հ, պատասխանիր, որի՞ կողմն ես բռնում:

Նիկողայոսը վեր կացաւ, և խօսակիցն էլ հետեւեց նրա օրինակին: Նրանց աչքերը հանդիպեցին միմիանց: Նիկողայոսի ամբողջ էութիւնը վառւում էր հայրենասիրական կրակով, որից ակամայ նաւավարն էլ վարակուեց:

—Դարձեալ մի բան ասն այդ սուրբ գործի մասին,—ասաց նա աշխոյժով.—բայց սպասիր, քամին բարձրանում է:

Նաւապետն շտապեց նաւաստիները մօտ, և շուտով լսուեց նրա բարձրաձայն հրամանը: Թէպէտ ծովը մի ջինջ հարթութիւն էր ներկայացնում, բայց հեռւում ջուրն սկսեց տատանուել, յետոյ փոքրիկ կոհակներ դոյացան, որոնք հեազհեաէ ահագին ալիքների փոխուեցին: Նաւաստիներն շտապով առաքատներն ամբարբին և կայիկն ուղիղ քամու դէմ դարձնելով թիերը ձեռք առան: Նրանք ալիքները պատասելով արագութեամբ լողացին դէպի առաջ:

Նիկողայոսն ուշադրութեամբ դիտում էր նաւաստիների բոլոր շարժումները և մեծ բաւականութեամբ նկատեց, որ նրանք շատ լաւ տեղեակ էին իրանց գործին: Նա երբէք առիթ չէր բայ թողնում իր յիշողութեան մէջ արձնադրելու այս կամ այն հանգամանքը, որը կարող էր օգտակար լինել թիւրքերի հետ հաշիւը վերջացնելու օրը: Ինչէս որ ասել էր նաւավարին, Նիկողայոսը գտնում էր, որ նաւեր ու ծովագնացներ կը հարկաւորուեն հայրենիքի ազատութեան համար: Ապստամբութիւնը պէտք սկսուէր Պիլօպօնէսում և այնտեղից տարածուէր դէպի հիւսիս: Պատրասն ու Միսալօնգին ծովի ճանապարհով մի քանի մղոն միայն հեռու էին միմիանցից, բայց որպէսզի նրանք կարողանային միմիանց օգնութիւն հասցնել, հարկաւոր էր ապահովել նրանց միջի ջրային հաղորդակցութիւնը:

Կէս ժամ անցած Նիկողայոսն ու Կանարիսը (այսպէս էր կոչւում նաւավարը) նստած էին նախաճաշի: Նիկողայոսն իր նոր բարեկամին յայտնեց ազգային շարժման բոլոր գաղտնիքը ցամաքի ու ծովի վրայ, միասին գործելու անհրաժեշտութիւնը: Նա ցանկութիւն յայտնեց, որ Կանարիսը ձեի համար շարունակէ առևտրով պարապուել, բայց միշտ պատրաստ լինի գործելու: Հէնց որ ապստամբութիւնը բռնկուի, թիւրքերը, մանաւանդ ծովափին բնակուողները հաւանականաբար ծովի վրայ փրկութիւն կ'որոնեն, բայց այդ բանը նրանց չը պէտք է թոյլ տալ, որովհետև առաջիկայ պատերազմը քաղաքագիտական բնաւորութիւն ունենալու չէ, այլ հէնց սկզբից մի անխնայ արիւնալից կոտորած պէտք է լինի: Նիկողայոսը մանրամասնաբար բացատր-

րեց այն պատերազմական գործողութիւնների նախադիւր, որոնց մի մասն էր կազմում և՛ ջրի վրայ թիւրքերի փախստեանն ճանապարհը կտրելը: Կանարիսը բորբոքուած սրտով լսում էր նրան և Աստուծոյ անուամբ երդուեց ամեն բան անել սուրբ գործի յաջողութեան համար:

Կէսօրին մօտ քամին նորից դադարեց, և կայիկն սկսեց ծուլութեամբ տատանուել հարթ մակերևոյթի վրայ: Նիկողայոսն օգտուեց այդ ժամանակից և մանրամանաբար հարց ու փորձ արաւ Կանարիսին նրա անցեալի վերաբերմամբ: Ինչպէս յայտնուեց, նա ծագում էր ծովագնացների մի բաղմանդամ ընտանիքից, որոնք սերնդից-սերունդ ամբողջ կեանքը ծովի վրայ են անցկայրել, և ծովը իրանց հինգ մատերի նման ծանօթ էր նրանց: Նիկողայոսը խոստացաւ տարուայ վերջին՝ և թէ միջոցը ներէ՝ այցելել Պատրան:

Երեք ժամ յետոյ քամին սկսուեց, և Կանարիսը հրամայեց առագաստները դնել, իսկ ինքը շարունակում էր խօսել Նիկողայոսի հետ, որ բոլորովին գերել էր նրան:

Հետևեալ առաւօտ Պատրասի Հերման եպիսկոպոսը դեռ անկողնից չէր վեր կացել, երբ սուրհանդակը ներս մտաւ և հաղորդեց, թէ Նիկողայոսը շուտով կը գայ: Բացի դրանից նա յայտնեց սրճարաններում տարածուած այն լուրերը, որոնց մասին ասում էր Կանարիսը: Եպիսկոպոսը ժպտաց և հրամայեց սուրհանդակին լուր տարածել, թէ Նիկողայոսն ընկել է թիւրքերի ձեռքն ու սպանուել:

— Թիւրքերը մեծ բաւականութեամբ կը հաւատան այն բանին, ինչ որ ցանկանում են, — աւելացրեց նա, — իսկ յոյները գիտեն, որ Նիկողայոսին այժմ ոչինչ չէ պատահել: Նա չափազանց հարկաւոր է սուրբ գործին: Մի սենեակ պատրաստիր իմ հանգուցեալ բարեկամի համար և լողաբանը մաքրիր նրա մեռած մարմինը լուանալու:

Հերմանը մաքուր, անխառն արեան սէր յոյնի գեղեցիկ տիպ էր: Նրա ընտանիքը ծագումով Դիլոս կղզուց էր, և սերընդից-սերունդ նրա անդամները ընակուել են միայն այդ կղզում: Հերմանը միջահասակ էր, բայց իր սև վեղարի շնորհիւ աւելի բարձր էր երևում: Եկեղեցական կանոնագրութեան համաձայն նա երկար մազեր էր պահում, որոնց սև գանգուերներն ընկած էին ուսերի վրայ, և նոյնպիսի սև մօրուքը ալիքանման ծածկում էր նրա կուրծքը: Թէպէտ վերջին երեք թէ չորս տարիների ընթացքում նա հռանդուն կերպով կազմակերպում էր իր հայրենակիցների ապստամբութիւնը, այնուամենայնիւ թիւրքերը չէին կասկածում, թէ նա էլ մասնակից է այդ բանին, և այս

իհարկէ շատ էր նպաստում նրա պրօպագանդայի յաջողութեանը: Չը նայելով որ Հերմանը Նիկողայոսի նման աշխարհի հետ լաւ ծանօթ չէր, այնուամենայնիւ նա զարգացած, կրթուած մարդ էր, մի կողմ թողնելով ի նրա խելքն ու ճարպիկութիւնը: Այդ պատճառով Նիկողայոսը միշտ անկիրթ գիւղացիների հետ գործ ունենալուց յետոյ մեծ հաճութեամբ էր հանդիպում նրան:

Ճաշից քիչ առաջ Հերմանի մօտ հասնելով՝ Նիկողայոսը շատ սիրալիր ընդունելութիւն գտաւ վերջինիս կողմից և սեղանն նստելով՝ ասաց.

—Ես մի շատ լաւ մարդու հետ ծանօթացայ: Դա այն նաւի նաւավարն էր, որով եկայ ես: Ուղում էի նրան քեզ մօտ բերել, բայց նա զբաղուած է նաւի բեռները զատարկելով և խոտացաւ վաղն առաւօտ մեզ մօտ գալ:

—Դու շատ ժրջան մարդ ես, Նիկողայոս բարեկամ,— պատասխանեց Հերմանը.— ես կարծում եմ, որ աշխարհիս վերայ ոչ ոք չէր մտածիլ անգամ մի կուլիտ ծովագնացի հայրենասէր դարձնել: Ափսոս, որ քահանայ չես: Բայց ինչից հասկացար, թէ նա կարող էր մեր սուրբ գործի կողմնակիցը դառնալ:

—Ես քիչ-քիչ հասայ այդ համոզմունքին: Նա շատ սառը կերպով էր խօսում Կորնթոսի նաւահանգստեան հարկի մասին, և ես այն ժամանակ վստահացայ ամեն ինչ յայտնել նրան:

—Ի՞նչ նաւահանգստեան հարկ, քանի որ գեռ նաւահանգիստ չը կայ:

—Նա այդպէս էլ ասում էր: Բայց և այնպէս, նրանից վեց հակ թուղ են վերցրել:

—Թէպէտ Աստուած հրամայում է սիրել բոլոր մարդկանց, բայց ես ատում եմ թիւրքերին և իւրաքանչիւր օր աղօթում, որ ինչքան կարելի է՝ նրանցից շատ մարդ տեղափոխուի երկնից արքայութիւնը կամ ուրիշ մի որևէ տեղ:

Նիկողայոսը ժպտաց:

—Դու իսկական քրիստոնեայ ես: Աղօթում ես ոչ թէ քո թշնամիների կործանման, այլ նրանց փրկութեան համար:

—Ես չեմ կարող թիւրքերին սիրել, թէպէտ Աստուած հրամայում է այդ, որովհետև սիրում եմ իմ հայրենիքը, իսկ այնտեղից թիւրքերի հեռանալը մեծ բարիք կը լինի: Բայց դժբանից, սաղմոսերգու սուրբ մարգարէն թէև թիւրքերին ճանաչելիս չէ եղել, ասում է՝ «Լուացից զոտս իմ յարիւն անօրինաց»:

—Որքան ինձ յայտնի է, Կորնթոսում թիւրքերն աշխատելիս են եղել ինձ բռնել,— ասաց Նիկողայոսը,— բայց ձեռներից փախցրել են: Նրանք իմ գնալուն Կորնթոսում սպասում

էին այն ժամանակ, երբ ես արդէն դուրս էի եկել այնտեղից:

— Իսկ Նաւապիւրում գործերն ինչպէս են:

— Աւելի լաւ, քան սպասում էի: Իմ երիտասարդ ազգուկանը ձիշտ այնպիսի մէկն է, որպիսին ինձ հարկաւոր էր:

— Միտոսոսի մասին ես ասում: Իսկ քանի տարեկան է նա:

— Տասնութը, բայց նա բարձրահասակ է, շատ ուժեղ, և ես կարող եմ յոյս դնել նրա վրայ:

— Տասնութը տարին դեռ քիչ է: Իսկ որեւէ մէկին հաւատ ընծայելու վերաբերմամբ զգոյշ եղի՛ր:

Իբրև պատասխան այդ նկատողութեանը՝ Նիկողայոսը պատմեց այն փորձը, որին ենթարկել էր Միտոսոսին:

— Թերևս դա ճշմարիտ է, — նկատեց Հերմանը, — և յամենայն դէպս երիտասարդն աւելի քիչ կասկած է յարուցանում, քան մի որեւէ հասակաւոր մարդ: Բայց ինչպէս կարողացար այդքան խիստ վարուել նրա հետ:

— Ճշմարիտ է, դա շատ անգութ բան էր, բայց ինձ երկաթէ մարդիկ են հարկաւոր, և ես ցանկանում էի համոզուել, թէ կարելի է արդեօք նրա վրայ յուսալ:

— Բայց նրան ինչ ես ցանկանում անել:

— Ա՛յ, հէնց դրա համար էլ ես եկել եմ քեզ մօտ: Ժամանակ է գործի լինելու: Դու գիտես, որ հայրենասէրների ժողովը ինձ ամենամեծ լիազօրութիւններ է տալիս և անսահման վարկ է բաց արել: Միտոսոսը կը շրջադայէ բոլոր դիւղերը, մանաւանդ Սպարապի շուրջը և ամեն տեղ կ'ասէ, թէ պէտք է պատրաստ լինել գործի համար: Թիւրքերն ինձ որոնում են, և ես չեմ կարող անվտանգ շրջել երկրի մէջ:

— Ի՞նչից կը հրամայես սկսել:

— Դու դեռ հարցնում ես: Իհարկէ, ես նրանց կը հրամայեմ սև հատիկ աղալ թիւրքերի համար: Այդ պէտք է շատ լինի և գաղտնի կերպով, մանաւանդ Մայնայի գիւղերում: Է՛, իսկ այստեղ դու զէնք հաւաքում ես:

— Ոչ թէ այստեղ, այլ Միզասպէլայօնի մենաստանում: Զէնքի մեծ մասը թիւրքերից է դնուած, իսկ վարդապետները սիմինգրի և եղէզների տակ թաղցրած կրում են այն: Վանահօրը մօտ օրերս թիւրք զինուորներ են պատահել և հարցրել, թէ վարդապետներն ինչու են այդքան եղէգ կտրում, իսկ նա պատասխանել է, թէ վանքի կտուրը ծածկելու համար:

— Եւ նրանք ոչինչ չեն կասկածում:

— Ո՛չ, կասկածում են, բայց չեն կարող մի բան գտնել: Ես հաճութեամբ թոյլ կը տամ նրանց խուզարկելու ամբողջ մենաստանը: Յիշում ես այնտեղի մատուռը:

— Ի հարկէ:

— Սեզանի տակ վարդապետները յատակի մի սալաքարը հանել և ծակ են բաց արել զէպի ներքնայարկը, իսկ նրա դուռը քարով ծածկել և այնպէս սպիտակացրել են, որ պատի մէջ ոչինչ չէ երևում: Անցեալ շաբաթ այնտեղ գնացել էր Տրիպօլիսի նոր նահանգապետը, Մահմէդ-Սալիկը: Թէպէտ չը նայելով նրա երիտասարդ հասակին՝ այդ մարդը շատ կասկածաւոր է երևում, բայց նա զննել է ամբողջ մենաստանը և ոչինչ չէ գտել:

— Այդ լաւ է: Բայց քանի հրացան ունէք դուք:

— Մօտաւորապէս հազար, և երկու անգամ աւելի սուր: Մի ամսից յետոյ մեզ մօտ ամեն ինչ պատրաստ կը լինի: Մեզ սպէկւայօնն աւելի լաւ կենտրոն է, քան Պատրասը, որովհետև նա աւելի մօտ է Տրիպօլիսին: Այնտեղից պէտք է սկսել կռիւր:

— Ո՞վ զիտէ: Երբ ամեն ինչ պատրաստ լինի, այն ժամանակ որտեղ որ յարմար է, կը սկսենք: Ես լաւ կը համարէի, որ առաջին հարուածը կալամատում էիամ Նաւալիայում տրուէր: Մենք չէ՞ որ ոչ թէ միջազգային իրաւունքի կանոններին համաձայն պատերազմ ենք ցանկանում, այլ մի արիւնալից կոտորած:

— Արիւնալից կոտորածը քրիստոնէի գործ չէ: Մէկ մտածիր կանանց և երեխաների մասին...

— Ի՞նչ ինչ թիւրք կանայքն ու երեխաները, — բացազանչչեց նիկողայոսը վեր ցատկելով և սաստիկ յուզուած ետ ուսուած անկողով սենեակի մէջ. — ես մի ժամանակ խնայում էի նրանց, բայց արդեօք թիւրքերը խնայեցին կնոջս ու դստերս: Եթէ Աստուած արդարադատ է, նա ուրեմն կ'օգնէ ինձ նոյնպիսի ցաւակցութիւն ցոյց տալ նրանց, որպիսին իրանք ցոյց տուին ինձ:

Հերմանը ոչինչ չը պատասխանեց և կարծատև լուծութիւնից յետոյ ասաց.

— Էլի գինի ուզում ես: Եթէ չէ, գնանք պատշգամբը: Տաք երեկոյ է: Ես կարծում եմ, որ դու ճշմարիտ ես ասում, և յիշուաւի, աւելի լաւ է թիւրքերին առաջին հարուածը մի որևէ հարաւային տեղում տալ, որովհետև նրանք այն ժամանակ կը շտապեն Տրիպօլիսում, իրանց այս ամենազօրեղ ամբոցում փրկութիւն գտնել: Ես ստաջ կարծում էի, թէ աւելի յարմար էր դործը կենտրոնում սկսել, բայց այժմ տեսնում եմ, որ քո նախապիծը շատ գործնական է: Դուրս գնանք մաքուր օդը, նիկողայոս:

Հերմանի տունը գտնուում էր քաղաքի սահմանի մօտ, բարձր բլրի վրայ, և նրա պատշգամբից երևում էին ներքեւ տարա-

ծուած ամբողջի լոյսը, լուսնի արծաթագոյն ճառագայթներով լցուած ջրի հարթ տարածութիւնը և հակառակ ափը, որտեղ հեռուում սեին էր տալիս Միսալօնդին:

Մի մանուկ ըստ թիւրքականի եփած սուրճ և երկու ծը-
խաքարչ բերաւ նրանց: Նիկողայոսն ու Հերմանը սկսեցին ծխել
և երկար ժամանակ լուռ էին:

—Կրկնում եմ,—ասաց Նիկողայոսը՝ լուռութիւնը խանդա-
րելով,—որ երբ հատուցման օրը հասնէ, ինձանից ոչ ոքի գը-
թութիւն չի լինիլ:

—Իսկ ես,—պատասխանեց Հերմանը,—չեմ մասնակցիլ
անպաշտպանների ոչ մի կոտորածին: Ի հարկէ, հարկաւոր է
արիւն թափել, առանց դրան չի լինիլ, բայց բացի ինձանից,
դահիճներ շատ կան: Կուի ժամանակ ոչ ոքի մի խնայիր, Նի-
կողայոս, բայց երբ գործը կը վերջանայ, այն ժամանակ թնոյ որ
թիւրքերն իրանց ընտանիքներով խաղաղ հեռանան մեր երկրից:

Նրանք նորից լռեցին, բայց քիչ յետոյ Հերմանը դարձեալ
արտասանեց ժպտալով.

—Այնուամենայնիւ կեցցեն թիւրքերը: Նրանք կարծում
են, թէ դու մեռել ես: Ես մեր տղային հրամայեցի լուր տա-
րածել, թէ քեզ Կորնթոսում սպանել են: Թնոյ նրանք հաւատան
այդ անհիմն լուրին: Այսօր Մահմէդ-Ահմէդն այստեղ էր և իր
ցաւակցութիւնն էր յայտնում քո մահուան մասին, թէպէտ նրա
աչքերը հակառակն էին ցոյց տալիս: Այստեղ քեզ բոլորը ճա-
նաչում են:

—Ո՛չ: Ո՛չ ոք: Այդ ինձ ձեռնառու է: Բայց դու վազն ի՞նչ
ես մտադիր անել:

—Ի՞նչ որ ուզում ես: Մենք լաւ կ'անէինք, եթէ միասին Մե-
զասպէլայօն գնայինք: Եթէ քամին լաջողակ լինի, մի օրում կը
հասնենք: Ես արդէն քեզ ասացի, որ վարդապետները մի շատ
հետաքրքիր ներքնայարկ ունեն, և աւելորդ չի լինիլ, որ դու
տեսնես այն:

Նիկողայոսը ժպտաց:

—Որքան շատ մարդ տեսնէ, այնքան լաւ է,—պատասխա-
նեց նա.—բայց ժամանակ է իմ յետագայ գործողութիւնների
նախադիժը յայտնելու քեզ: Ես մտադիր եմ նոյեմբերին Նա-
պլիա գնալ, իսկ մինչև այդ ժամանակ կը դնամ Մայնա իմ հօրեղ-
բօրորդու Պետրոս Մաւրոմիխալիի մօտ իմանալու համար, թէ
արդեօք նա իր ամբողջ տոհմով պատրաստ է միանալու ընդ-
հանուր ապստամբութեանը: Յետոյ ինձ դարձեալ հարկաւոր է
տեսնել Կանարիսին. նա շատ հմտութեամբ էր կառավարում իր

նաւը, թէպէտ ես համոզուած եմ, որ Միտսոսը կը գերազանցէ նրանից: Որքան էլ զարհուրելի թւայ քեզ, բայց և այնպէս ես կարծում եմ, որ անհրաժեշտ է, այրել թիւրքաց նաւերը: Մենք չենք կարող թոյլ տալ, որ թիւրքերն անարգել զէնք և սազմամթերք ստանան ծովով: Քանի որ մենք թիւրքերի հետ մեր հաշիւը վերջացնելու օրից շուտ չենք տեսնիլ միմեանց, ուստի և ուշադրութեամբ լսիր, ես քեզ կը ծանօթացնեմ իմ բոլոր նախագծերի հետ:

Եւ մի ամբողջ ժամ Նիկողայոսը ետանդով պատմում էր իր զիտաւորութիւնները Հերմանին, որն ուշադրութեամբ լսում էր և թէպէտ երբեմն հակաճառում, բայց մեծ մասամբ զովում էր նրան: Նիկողայոսի խօսքերից յայտնուեց, որ Հիւսիսային Յունաստանի հայրենասէրների ժողովը անսահման լիազօրութիւն էր տուել նրան գործելու իր անունով մինչև այն ժամանակ, երբ նա ինքն ստիպուած կը լինի իր պաշտօնական ներկայացուցիչն ուղարկել, որովհետև եթէ թիւրքերն այժմ լսէին ապստամբութեան բոլոր նախապատրաստութիւնների մասին, գործը չէր յաջողուի: Յետոյ Նիկողայոսը մանրամասնաբար բացատրեց հայրենասիրական շարժումը զիւղացիների մէջ տարածելու անհրաժեշտութիւնը, որովհետև այդ վերջիններն ապստամբութեան հիմքը պէտք է կազմէին:

Վերջացնելով իր պատմութիւնը, Նիկողայոսը մի ուշադիր հայեացք գցեց Հերմանի վրայ: Նրանց տչքերը պատահեցին միմեանց և միմեանս փայլ արձակեցին:

VII

Կանաքիսը երեկոյեան գէմ վերջացրեց իր գործը և առաջարկեց Նիկողայոսին ու Հերմանին հետեւեալ օրն արչալուսին Օստիցա տանել, որը մի փոքրիկ ձկնորսական գիւղ էր և չորս մղոն հեռու էր այն կերճից, որի վրայ բարձրանում էր Մազասպէլայօնը. նրանք այնտեղ կարող էին ջորիներ ձուր բերել և մինչև երեկոյ հասնել վանքը:

Նրանք սիրով յոժարուեցին և բարեյաջող քամու չնորհիւ չորս ժամում հասան Օստիցա, որտեղ Հերմանը Նիկողայոսի հետ, որին իբրև իր ազգականն էր ներկայացնում, ուղղակի գնաց թիւրք նահանգապետի մօտ: Նրանք երեքով սուրճ խրմեցին և խօսակցութեան ժամանակ բոլորը միաբերան անհեթեթ համարեցին յոյների տաղիկայ ապստամբութեան մասին տարածուած լուրը, նմանապէս և ուրախութիւն յայտնեցին, որ Նիկողայոսն սղանուած է Կորնթոսում. հոյակոպտոսի ստելով Փետրուար, 1903.

նա մի անհանգիստ մարդ էր և չէր հասկանում, թէ որքան բարանչելի բան է խաղաղ կեանքը. իսկ նրա ազդականն աւելացրեց, թէ Նիկողայոսը մշտապէս խոտովութիւններ էր յարուցանում արձարաններում:

Տեսնելով որ խօսակիցներն այդպիսի խոճեմ գատողութիւններ են տալիս, նաճանդապետը, Սայիդ-աղան, հրամայեց յարգել նրանց խնդիրը—ճանապարհը շարունակելու համար երկու ջորի տալու վերաբերմամբ: Նրանցից բաժանուելուց առաջ Սայիդ-աղան հաղորդեց, թէ Դիակոպտոնում, Օստիցայից երեք մղոն հեռու, մօտ օրերս անկարգութիւններ են տեղի ունեցել, որի ժամանակ սպանուած է թիւրք հարկածանը:

—Ա՛խ, այդ բմբոստ ժողովուրդը...—նկատեց Հերմանը.—բայց ի՞նչն է եղել այդ զէպքի պատճառը:

—Մի գատարկ բան, —պատասխանեց Սայիդ-աղան.— թիւրքը յոյնի ձեռքից խլել էր կինը, որի համար նա նրան բողանել է: Թէպէտ և յոյնը փախել է, բայց նրան կը բռնեն և կը պատժեն: Իմ կարծիքով այդ բոլորը գատարկ բաներ են: Եթէ մենք թիւրքերս սիրում ենք այս երկրին, և օրէնքը մեզ թողաւորում է շատ կին ունենալ, նշանակում է բոլորն էլ պէտք է հնազանդուեն մեզ:

—Յայտնի բան է, —պատասխանեց Նիկողայոսը.— Աստուծոն հաճելի չէ, որ բոլոր մարդիկ հաստար լինեն:

—Ես շատ ուրախ եմ, որ գուր յոյների սպասամբութիւնն անկարելի էր համարում—յա մեծ յիմարութիւն կը լինէր նրանց կողմից: Բայց, ճշմարիտ, չը գիտեմ ինչն, միայն այդ ապրատամբութեան մտտին հեազհեաէ աւելի շատ լուրեր են տարածուած: Ա՛յ, մօտ օրերս ստում էին, թէ Մեկասպէլչայօնում վարդապետները զէնքի պահեստ ունեն, և իմ բնկերս, Մաճմէլ-Սալիկը, որ մի շատ դարձունեայ երիտասարդ է և նոր նըշանակուած է Տրիպոլիսի նաճանդապետ, այնտեղ խոզարկեց, բայց ի հարկէ ոչինչ չը գտաւ:

Հերմանն ուրախ-ուրախ ծիծաղեց.

—Մենք Աստուծոյ սպասաւորներս խաղաղ մարդիկ ենք, —արտասանեց նա:—Բայց մեր ջորիները երկի պատրաստ են, և ժամանակ է մեզ գնալու: Շնորհակալ եմ ձերը գերագանցութիւնեց ձեր սիրալիր վերաբերութեան համար:

Մի քանի րոպէ անցած նրանք արդէն դնում էին գլուխ խոշոր, անհաւասար քարերով սալայատակած փողոցով: Բոլոր բնակիչներն այգեկութով էին զբաղուած, և աներում ոչ որ չէր մնացել բացի շներից, որոնք բարձր ձայնով հաջում էին ճանապարհորդների և երիտասարդ ջորեպանների վրայ:

Արեգակն արդէն մայր մտնելու վրայ էր, ևրբ նրանք դուրս եկան մեծ ճանապարհը, որ հովտի խորքից գէպի վանքն էր տանում: Նրանց առաջնից գնում էր ջորիների մի շարք, որոնց մօտով քայլում էին երկու վարդապետ. նրանք մօտեցան եպիսկոպոսին՝ նրա օրհնութիւնն ստանալու:

—Դուք եղէգ էք տանում,—հարցրեց նա.—որտեղից էք բերում և ինչու համար:

—Կարվրատայից —պատասխանեց վարդապետներից մէկը.—սենք վեց ջորի ենք բեռնաւորել եղէգով, որ մեզ հարկաւոր է վանքի կտուրը ծածկելու համար:

Երիտասարդ վարդապետը ժպտաց:

—Նորոգութեան կարօտ շատ բաներ կան, հայր,—արտասանեց նա, մենք էլ պատրաստութիւններ ենք տեսնում դրա համար:

Նիկողայոսը խփեց ջորուն:

—Իսկ սե հատիկ ունէք,—հարցրեց նա,—լաւ սե հատիկ թիւրքերի համար:

—Ես չեմ հասկանում,—պատասխանեց վարդապետը, զըլուխը թափահարելով:

—Նախ պէտք է կտուրը նորոգել,—ժպտալով նկատեց Հերմանը,—իսկ յետոյ սե հատիկի ժամանակն էլ կը գայ: Դէհ, զաւակս,—աւելացրեց նա, դառնալով գէպի երիտասարդ վարդապետը,—չուտով վանքը գնն և ասն վանահօրը, որ ես իմ հօրեղբոր սրբու հետ շուտով նրա մօտ կը լինեմ: Մենք երկուօր կը մնանք այնտեղ, որովհետեւ ես ուզում եմ գննել ձեր կրտսերի նորոգութիւնը, որպէսզի ամեն ինչ ի փառս Աստուծոյ լաւ շինուած լինի:

Կէս ժամ յետոյ, միջնադին, ճանապարհորդները վանքին մօտեցան: Միմեանց մօտ շարուած նեղ, փոքրիկ պատուհաններում լոյս էր երևում, իսկ գէպի աջ, մեծ դրան մէջ փայլելով էին լապտերներ. դա ապացոյց էր, որ միաբանները պատրաստութիւն էին տեսել դիմաւորելու իրանց իշխանաւորին: Իրաւ, դրան մօտ, պատշգամբի վրայ վարդապետները երիտասարդ նորընծաներն առաջներին, շարուած էին: Իսկ կամարի տակ կանգնած էր վանահայրը, որ մի գեղեցկադէմ, բարձրահասակ, երկար ալեխառն մօրուքով ծերունի էր: Նա օգնեց եպիսկոպոսին իջնելու ջորուց և ծռնկ չորելով՝ նրա օրհնութիւնն ստաւ: Հերմանը կանգ առաւ մենաստանի շէնքին և գառնալով գէպի միաբանութիւնը, բարձր ձայնով ասաց.

—Թող Աստուծոյ օրհնութիւնը լինի այս մենաստանի և

նրա մէջ բնակւողները, նմանապէս և այն սուրբ գործի վրայ, որին նրանք ծառայում են:

Վանահայրը Նիկողայոսին տեսնելով, որին վաղուց ճանաչում էր, ցնցուեց, կարծես մի ուրուական երևաց նրա աչքին: — Իսկ մենք լսեցինք, թէ դու մեռել ես, — ասաց նա:

— Ես չատ ուրախ եմ, որ դու այդ լսել ես, — պատասխանեց Նիկողայոսը ժպտալով. — և խնդրում եմ քեզ, լուր մի տարածիր, թէ կենդանի եմ:

Նրանք երեքով մտան վանահօր խուցը և երբ միայնակ մնացին, Հերմանն ասաց:

— Ես տեսնում եմ, որ կտուրի նորոգութիւնը լու է առաջ դնում: Մենք ճանապարհին միքանի բեռնաւորուած ջութիների պատահեցինք: Նիկողայոսը ցանկանում էր անձամբ համոզուել, թէ ինչ էր անում այստեղ: Նա մեր... ինչպէս ասեմ... կարգադրւրիչն է, իսկ մենք մշակները: Նա մեզ կ'ատէ, թէ երբ պէտք է գործը վերջացնել: Է՛հ, այժմ գնանք եկեղեցի և գոհութիւն տանք ձեր մենաստանի հիմնադիր ս. Ղուկասին և ս. Աստուածամօրը մեր անխորձ տեղ հասնելուն համար: Այդ է Աստուծոյ բոլոր ճշմարիտ ծառաների պարտականութիւնը:

Վանահայրն առաջ բնկաւ և եկեղեցու բրնձիկ ծանր դուռը բանալով, թոյլ տուաւ Հերմանին ներս մտնելու: Արքեպիսկոպոսը մօտեցաւ սեղանին և ծունկ չարեց Աստուածամօր պատկերի առաջ, որ ըստ աւանդութեան Ղուկաս աւետարանչի ձեռքով էր նկարուած, և գոհաբանական աղօթք կարդաց իր և Նիկողայոսի համար: Յետոյ նրանք վերադարձան վանահօր խուցը և կրկին անդամ դնացին եկեղեցի:

Այս անգամ վանահայրը դուռը փակեց իւր ետևից, որովհետև միաբաններից քչերին էր յայտնի ներքնայարկի գաղտնիքը: Նա լապտերը վառեց, որովհետև եկեղեցում մութն էր, և միայն տեղ-տեղ կանթեղներ էին փայլելում: Դիմելով դէպի եկեղեցու արևելեան անկիւնը, նա բարձրացաւ սեղանը և այնտեղից քլունկը դուրս բերելով, յատակից մի քառանկիւնի սալ հանեց, որի տակ մի մարդ անցնելու համար բաւական մեծ բացուածք կար: Մի փայտէ սանդուխ տանում էր, դէպի ներքև, և նրանք մէկը միւսի ետևից ցած իջան: Ներքնայարկը քառասուն սանաչափ երկայնութիւն և քսան սանաչափ լայնութիւն ունէր, և լապտերի լոյսի տակ բոլոր պատերը պսպղում էին պողպատի փայլով: Հերմանի վերջին այցելութիւնից յետոյ պատերից կախուած հրացանների թիւր բաւական մեծացել էր, և առաջին հայեացքից Նիկողայոսին այնպէս թւաց, թէ դրանք հազար հինգհարիւրից պակաս չեն լինիլ: Նրա աչքերը փայլատակեցին, և լապ-

տերը բարձր բռնած, նա սկսեց շատով զննել բոլոր պատերը:

—Է՛, դուք բաւական հաւարել էք,—ասաց նա,—միայն այժմ այս եղէգը կը սկսէ կերակուր պահանջել, և հարկաւոր է մեծ քանակութեամբ սն հատիկ ազալ:

—Արդէն,—հարցրեց վանահայրը:

—Արդէն: Այժմ օգոստոս ամիսն է, իսկ զարնանք կըսկըստի հունձը, արիւնալից հունձը: Ո՞րակն պէտք է տեղաւորես այս քաղցած կոկորդներէ կերակուրը:

—Այստեղ բաւական տեղ կայ, բայց սն հատիկ չէ կարելի պահել: Առանց լապտերի այստեղ դայ չի լինիլ, և, Աստուած ազատէ, կարող է մի փորձանք պատահել: Աւելի լաւ է, Նիկողայոս, վազն առաւօտ զնանք և նայենք ամբողջ մենաստանը: Է՛հ, այժմ դու գո՛հ ես:

—Ինձ համար միշտ ամեն բան քիչ է երևում: Եթէ որ նայն իսկ երկնքի բոլոր հրեշտակներն էլ հրեղէն սրերով ցած իջնէին կերկրի վրայ, դարձեալ ինձ քիչ կը թւային: Բայց բաւական է գատարկարանութիւն սնենք: Քանի՛ մարդ կարող ես դուրս հանել:

—Հինգ հարիւր հողի մի բոպէի մէջ և երկու հազար—այնքան ժամանակուայ, որքան որ կը հարկաւորուի այստեղից մինչև Կալամատա հասնելու համար:

—Ա՛յ, այդ լաւ է: Դէհ, լսիր ինձ: Մենք դուցէ սինչև հանդիսաւոր բոպէն այլ ես չենք տեսնուիլ: Չորս ամիս յետոյ, բայց օրը նշանակել չէ կարելի, կը սկսուի փառաւոր գործը, և դու պատրաստ եղիր, ասնն բանում հնազանդութիւն արքեպիսկոպոսին, ինչպէս ինձ: Մենք նրա հետ միասին ենք գործում: Որ գլխաւորն է, հայր, տես, որ այդ փառահեղ օրը ոչ ոք իր մասին չը մտածէ: Ում էլ որ բաժին ընկնի փառքն ու պատիւը, միենոյնն է—միայն թէ Յունաստանն ազատ լինի: Եթէ դու, օրինակ, հայր, պատիւ ու հարստութիւն ես ցանկանում, ես քեզ կը տամ այն ամենը, ինչ որ կարող է ինձ բաժին ընկնել: Ներքի, որ այսպէս եմ խօսում, բայց մեր գործը կարող է վընասուել անձնական ետասիրութիւնից, և ես դրանից աւելի երկիրը ունեմ, քան թէ տասն սուլթանից: Ինձ յանձնուած է վարել Մորէայի գործը, և ես իմ կեանքն ու ամեն բան, ինչ որ ունեմ, նուիրել եմ այդ սուրբ գործին: Ինձ հետ միասին գործում են արքեպիսկոպոսը, մայնեցի Պետրոս Մաւրոմիխային և ուրիշները: Երդուում եմ, որ Աստուծոյ օգնութեամբ աղնաւար կը կատարեմ իմ պարտականութիւնը և ինձ համար ոչ մի բանի աչք չեմ ունենալ: Մենք միասին կը կազմենք գործողութիւնների նախադիժը, բայց երբ ժամանակը գայ իրադրծելու,

այն ժամանակ եւ կը հրաժարուեմ ատջնորդ լինելուց եւ մի հասարակ զինուորի տեղ կը գրաւեմ: Կրկնում եմ, քանի զեռ կոիւն սկսուած չէ, միասին կը խորհենք եւ կը պատրաստուենք, բայց հէնց որ որսորդ թնդայ, բոլորը պէտք է մի մարդու հրնազանդուեն: Մեր յաջողութիւնն շտապելուց եւ միաբանութիւնից է կախուած, իսկ գրան առանց սրտա ու պատշաճ հնազանդութեան չէ կարելի հասնել:

—Բայց մենք ինչպէս իմանանք քս կարգադրութիւնը, թէ երբ պէտք է սկսել զործը,—հարցրեց վանահայրը.—արդեօք լաւ չի լինիլ, որ եթէ դու այստեղ չը լինես, եւ ինքնազուրկ գործեմ:

—Ո՛չ, հազար անգամ ո՛չ,—պատասխանեց Նիկողայոսը,—այն ամեն բանից, ինչ որ տեսնում եմ այստեղ Մեղասպէլայօնում եւ Պատրասում, պէտք է ենթադրել, որ առաջին հարուածն ու առաջին յաջողութիւնը այստեղ է լինելու: Թէ յետոյ պատերազմն ինչպէս կը զնայ,—միմիայն Աստուծոն է յայտնի, բայց յամենայն դէպս եւ անպայման հնազանդութիւն եմ պահանջում: Դու ինձանից լուր կը ստանաս, եւ հնազանդութիւնը ուրիշ ոչինչ:

—Բայց ինչպէս իմանամ, թէ լուրը քեզանից է:

—Շատ հասարակ կերպով երբեիցէ, մի ամարային տաք օր կամ ձմրան ցուրտ գիշեր քեզ մօտ կը մտնէ մի վարդապետ եւ կ'ասէ՝ «վանահայր, քեզ մի մարդ կամ մի մանուկ եւ կամ նոյն իսկ մի աղջիկ ուղում է տեսնել»: Դուրս գնան ուղարկուած մարդու մօտ, եւ նա քեզ կ'ասէ. «ինձ յանձնարարուած է հարցընել, թէ դու հատիկ ունես այն մարդկանց համար, որոնք կարօտութիւն ունեն գրան...» Իսկ դու պատասխանիր. «քեզ հարկաւոր է ս՞ե հատիկ եւ ո՞ւմ համար—քաղցածներն թէ թիւրքերն»: Այն ժամանակ ուղարկուած մարդը կ'ասէ. «սե հատիկ ուղարկիր թիւրքերի մօտ Կարամատա կամ Կալաւրիտա կամ ուրիշ մի սրեէ տեղ, եւ թող երկու հարիւր կամ հինգ հարիւր կամ հազար մարդ տանեն այդ»: Գուցէ դու ուրիշ կարգադրութիւններ էլ ստանաս, բայց միշտ միևնոյն ձևով, եւ եթէ սրբութեամբ կատարես գրանք, այն ժամանակ Աստուած քեզ համար տեղ կը պատրաստէ երկնքում իր հաճելիների մէջ:

—Ճշմարիտ եւ ասում, Նիկողայոս,—պատասխանեց վանահայրը,—եւ երբեքում եմ ս. Աստուածամօր անունով, որ կուրօրէն կը հնազանդուեմ քեզ: Դէհ, վերե բարձրանանք:

Նրանք նորից եկեղեցի մտան, սանդուխով իջան ներքին յարկը, որտեղից մի մաքուր սպիտակացրած նախասենեակ տանում էր դէպի գրադարանն ու վանահօր խուցը: Ծանապար-

հին Նիկողայոսը իր ձեռնափայտով թրխկթրխկացնում էր պատերը:

—Այստեղ կարծես պատն աւելի բարակ է, քան թէ միւս աւելերում,—ժպտալով ասաց նա և կանգ առնելով, ուշադրութեամբ նայեց վանահօրը,—սակայն Մահմէտ-Սալիկն այնքան խորամանկ է, որ ուշադրութիւն չէ դարձրել մի այսպիսի դատարկ բանի վրայ:

—Փնտր Ասաուծոյ, որ մեր թշնամիներն այդքան խելօք են,—նկատեց Հերմանը, որ գնում էր Նիկողայոսի հետ:

Վանահօր խուցը վերադառնալով, Նիկողայոսն սկսեց ծրխել և ասաց, որ եթէ վանահայրը թոյլ կը տայ, կը պառկէ քրնելու, որովհետև հեռակալ առաւօտ պէտք է վաղ վերկենար և չարունակէր ճանապարհը:

—Իսկ ուր ես գնալու:

—Գէպի հարաւ: Ես պէտք է այցելեմ Մեօխիայի շատ սեղերը և տեսնեմ իմ ազգական Պետրո-Բէյին: Նա յանձն է առել ոտքի կանդնեցնել Մայնայի դաւառը: Մենք պէտք է աշխատենք, որ դործի սկիզբը որոտի նման թնդիւն արձակէ, իսկ յետոյ ամեն ինչ լաւ կը գնայ:

Իրաւ, հեռակալ օրը դեռ առաւօտեան ժամերգութեան դանդաղները նոր էին սկսել զօղանջիլ, երբ Նիկողայոսը վերկացաւ անկողնից: Նա ուղղակի եկեղեցի գնաց, իսկ ժամերգութիւնից յետոյ վանահօր և Հերմանի հետ դուրս եկաւ պատըշգամբը: Վարդապետները հետուից նայում էին նրանց, դրանց մէջ արգէն լուր էր տարածուել, թէ սով է Նիկողայոսը և ինչու համար է եկել նա այս խաղաղ մենաստանը: Կուշտ խօսելուց և սուրճ խմելուց յետոյ Նիկողայոսն սկսեց հրաժեշտ տալ:

—Օրհնիր ինձ, հայր,—ասաց նա վանահօրը,—մենք գուցէ մինչև դործի սկիզբը տեսնուենք, գուցէ և ոչ: Յամենայն դէպս սենք միեկնոյն դաշտի մշակներ ենք, թէպէտ այդ դաշտը մեծ է, և դու հարկադրուած կը լինես հիւսիսային մասում աշխատել, իսկ ես գուցէ հարաւային:

VIII

Նոյեմբերը վերջանում էր զրոտարեր անձրևներով և կատաղի քամիներով: Փայտօրիկների երամները լցուել էին Նաւալիաջի չրջակայ դաշտավայրը: Հեռում Իլիաա լեռան գաղաթների վրայ ձիւն էր երևում, իսկ մատախուղն ու անձրևը անթափանցելի մշուշի նման պատել էին չրջակայքը:

Միտասան անդադար նզովում էր վառ եղանակը, որ թոյլ

չէր տալիս նրան մակոյկով լողալ ծովածոցի վրայ: Իսկ եթէ նա երբեմն համբերութիւնից դուրս էր դալիս և նստում մակոյկ, վերջիվերջոյ թրջուած, առանց իր նպատակին հասնելու վերագոռնում էր տուն: Վերջին ժամանակները կոստանդինը զարմանում էր որչու վարմունքի վրայ, բայց ենթադրում էր, որ նոյն իսկ իրան՝ երիտասարդին անհասկանալի ֆիզիքական զարգացումն էր զրա պատճառը և ամեն ինչ Աստուծոյ կամքին թողնելով, հարց ու փորձ չէր անում նրան, որովհետեւ գիտէր, որ նա ծածկամիտ լինելով ոչինչ չէր ասիլ: Բայց և նոյնպէս նրան միտիթարում էր այն միտքը, թէ Միտասն ամեն կողմով էլ զարգանում էր, և թէ Նիկիզայոսը, որի մասին ոչ մի ակեղեկութիւն չը կար, վերագոռնալուց յետոյ նրան արդէն չափահաս դանելով՝ շատ գոհ կը լինէր:

Բայց հայրը չը գիտէր, թէ ինչ է կատարուում Միտասի հոգու մէջ: Նրա ծանօթութիւնը Զիւլէյմայի—հարուստ թիւրքի հարեմի երիտասարդ յոյն աղջկայ հետ շարունակուում էր նոյնպիսի տարօրինակ կերպով, ինչպէս որ սկսուել էր: Իւրաքանչիւր դիչեր նա մակոյկով մօտենում էր սպիտակ պարսպին և ամբողջ ժամերով խօսում նրա հետ մինչև այն ըոպէն, երբ Զիւլէյման հարեմի մի ուրիշ աղջկայ կամ ծառաների մօտենալը նկատելով, ձեռքով նշան էր անում, որ հեռանայ:

Այդպէս շարունակուեց մինչև մի երեկոյ, մինչև վառ և զանակի սկիզբը, երբ Միտասը իր հետ վեր առաւ և մի պարանէ սանդուխ: Զիւլէյման խոտապեղ էր սովորականից ուշ դուրս գալ պատշգամբը, բայց իջնել մակոյկը և շրջել ծովածոցի վրայ:

Այդ երեկոն, կամ աւելի լաւ է ասել դիչերը՝ յաւիտեան անմոռանալի մնաց նրանց երկսի համար էլ: Զը նախելով որ Զիւլէյման երկիւղ էր կրում, թէ մի գուցէ նկատեն իրան, այնուամենայնիւ շատ ուրախ էր, որ գոնէ երկու ժամ կարող է ազատ լինել: Միտասի խնդրուածքի համաձայն նա ուրախութեամբ վերցրեց քօղը երեսից և երևան հանեց դէմքի սքանչելի գծադրութիւնները: Յետոյ նա պատմեց, թէ ինչպէս շատ տարիներ դրանից առաջ իրան փախցրել էին թիւրքերը, և թէ ինչպէս իր մանկութիւնից միայն յիշում էր այն, որ հայրը սի բարձրահասակ և սև հագուստով մարդ էր: Զիւլէյման շատ քաղցր, բայց դժուարութեամբ էր խօսում յունարէն և Միտասի հետ վարուում էր, ճիշտ ինչպէս մի մանուկի հետ, թէպէտ ինքը մի տալով փոքր էր նրանից: Առհասարակ նրա համար այդ զբօսանքը երեխայական մի զուարճութիւն էր, իսկ Միտասին թւում էր, թէ ինքը եօթներորդ երկնքումն է:

Վերադառնալիս երիտասարդն սկսեց հարցնել նրա դժբաղդ կեանքի մասին, բայց Զիւլէյման պատասխանում էր, որ շատ գոհ էր իր գրութիւնից, թէպէտ ծերունի Արզուլ-Ահմէզը մի կատարեալ խող էր. բայց նա հանգիստ կեանք էր վարում, ոչինչ չէր անում, լաւ ուտում էր, և միայն մերթ-մերթ Արզուլը բարկանում էր, իսկ ներքինին հարուածներ էր տալիս նրան: Բայցի դրանից Արզուլի հարեմում ինչպէս ուրիշ հարեներում, կեանքն այնքան էլ խիստ չէր: Արզուլը շատ ծեր էր և կանանցից միայն մէկի հետ էր ապրում: Ինչ վերաբերում է Զիւլէյմային, նա իսկապէս հարեմին չէր պատկանում, այլ Արզուլի գլխաւոր կնոջ սիրելի աղախինն էր: Բնդհանրապէս նրա ապրուստը վատ չէր, և եթէ որ Միտստը ժամանակ առ ժամանակ նրան զրօններու տանէր, նա բոլորովին երջանիկ կը լինէր, մանաւանդ որ երիտասարդը դուր էր դալիս նրան: Վատ եղանակին չ'արժէր դուրս գալ, որովհետեւ հարեմն այդ ժամանակ փակուած է լինում, և Զիւլէյման չէ կարող դուրս գալ պարտէզը:

Այս սրանչիլի դրօսանքից յետոյ վրայ հասաւ վատ եղանակը, որ տեսց կրկու շաբաթ: Այդ տիուր ժամանակը Միտստն անհամբերութեամբ սպասում էր, թէ երբ պէտք է եղանակն այնքան բացուի, որ կարելի լինի մակոյկը մանել: Այդ պատճառով հէնց որ բնութիւնը մի քիչ սկսեց ժպտալ, նա ճաշից յետոյ որոշեց բազըը փորձել և մակոյկով ուղեւորուել զէպի սպիտակ պարիսպը: Բայց այժմ նա նախ և առաջ իր արտաքինի մասին սկսեց հողալ: Նա ամաչում էր իր հին կարկատած շորերը հագնել, այլ հագաւ լաւ հագուստը, խնամքով մազերը սանրեց, մինչև ծնկները կապեց սանդալները և ֆէսը դէպի մի կողմ ծռեց:

Արդէն ժամը ինն և կէսն էր, երբ նա ճանապարհ ընկաւ, իսկ լուսինը բարձրացաւ. երկնքի երեսին: Մօտաւորապէս մի ժամում հազիւ կարողացաւ հասնել սպիտակ պարսպին: Հեռուից տեսնելով աղջկան՝ Միտստն զգաց, որ սիրան սկսեց սաստկութեամբ բարախել, և նա լարեց ուշադրութիւնը, որպէսզի չուտով համոզուի, թէ դա իրօք իր սիրած էակն է: Ճիշտ որ մի ինչ որ սպիտակ բան էր երևում պարսպի վրայ, և նա շտապով մակոյկն առաջ տարաւ. զէպի քարէ պատուանդանը:

Միևնոյն րոպէին մի ուրախ ձայն հնչեց.

— Ես համոզուած էի, որ դու կը դաս, որովհետեւ այսօր առաջին աստղայից դիչերն է: Մեր տանը բոլորը քնած են: Ես ականջ էի դնում Մահմէդի դրան առաջ և այն ժամանակ միայն հեռացայ, երբ նրա բարձր խոսիւոյրը լսեցի:

Միտտոսը ոչինչ չը պատասխանեց, վեր թաւ մակոյկի մէջ
և պարանէ սանդուխը հմտութեամբ գցեց պարսպի վրայ:

—Այն, ևս եկայ այստեղ, հէնց որ հնարաւորութիւն եղաւ
զարու, —ասաց նա, —իսկ այս բոլոր ժամանակը անիծում էի
անձրեր. մեղս քեզ, Աստուած:

—Ի՞նչ զուգուած ևս դու այսօր, —նկատեց Ձիւլէյման, ու-
շաղրութեամբ նայելով նրան: —Միթէ յոյները միշտ իրանց ա-
սենալաւ հագուստով ևն ձուկ որսում:

Միտտոսը ժպտաց և շատ զոհ մնալով այն բանից, որ
զուգուել էր, պատասխանեց.

—Մենք այդ մասին մակոյկի մէջ կը խօսենք: Յիմ իջիր
երբ նա անլտանդ մակոյկն իջաւ, Միտտոսը հարցրեց.

—Ո՞ւր գնանք այսօր:

—Դէպի ծովը, ազատ ծովը, հեռու այս անիծեալ տե-
ղից, —բացազանչեց Ձիւլէյման ծիծաղելով, —բայց սրտեղ նրս-
տեմ:

Միտտոսը ուռկանի միջից հանեց սանից վերցրած բարձր
և դրաւ նաւարթում դրած նստարանի վրայ:

—Ահն տեսնում ևս, —շարունակեց նա. —ես յիշեցի, որ
անցեալ անգամ իմ ուռկանի վրայ նստելով՝ դու ասացիր, թէ նը-
րանից ձկան հոտ է փչում, այդ պատճառով էլ քեզ համար իմ
բարձը վեր առայ: Այժմ դու թագուհու պէս կը նստես:

Ձիւլէյման անխօս նստեց, իսկ Միտտոսը թիերով մի քա-
նի շարժում գործեց պարսպից հեռանալու համար և յետոյ ստա-
գաստը բարձրացրեց: Մակոյկն արագութեամբ լողաց դէպի ծո-
վածոցի անցքը:

—Ի՞նչ է, վերջացրի՞ր գործդ, —հարցրեց Ձիւլէյման:

—Այն: Այժմ մենք կարող ենք զբօսնել, որքան կամենաս:

—Դէհ, ուրեմն նստի՛ր մօտս, —պատասխանեց երիտասարդ
աղջիկը:

Մի քանի բոպէ նրանք լուռ մնացին: Ձիւլէյման ուրախ
ժպտում էր, իսկ Միտտոսը լուրջ, ուշի-ուշով նայում էր նրան:
Վերջապէս Ձիւլէյման գրպանից մի փոքրիկ արկղ հանեց և բաց
արաւ այն:

—Ես քեզ համար քաղցրեղէն կմ բերել, —ասաց նա վեր-
ջապէս, —սա ու ահա թ-լոխ ու մի է: Ես չը գիտեմ, թէ ինչպէս
է կոչուում սա ձեղանում, Յունաստանում: Դու քաղցրը սի-
րում ևս:

Նա մասներով մի կտոր կտրեց այդ մածուցիկ, քաղցրա-
հոտ անուշեղէնից և անմեղ ժպտար երեսին ինչպէս իր ընկե-
րոջը հիւրասիրող մի երեխայ՝ սուաւ նրան:

—Ի՞նչ է, դուր է գալիս քեզ,—հարցրեց նա.—երեկ երեկոյ այս արկղը Աբղուլը սուսու ինձ, բայց ես խոստովանուում եմ, վախեցայ նրա չափազանց սիրալիր վարմունքից: Չէ՞ որ քեզ ասել եմ, թէ ես հարեմին չեմ պատկանում:

Միտասը կարմրեց. նրա համար անտանելի էր այն միտքը, որ ձերունի թիւրքը կարող էր նուէրներ առ Ձուլէյվային:

—Ինչո՞ւ ես լուս, Միտաս,—չարունակեց երիտասարդ աղջիկը,—պատմիր ինձ, թէ ի՞նչ էիր անում դու այս բոլոր ժամանակը: Իսկ ես ոչինչ չէի անում, ոչինչ: Ճշմարիտ, ես երբէք այդքան ձանձրացած չեմ եղել:

Միտասը շտապով նայեց նրան:

—Իսկ այժմ չես ձանձրանում,—հարցրեց նա.—գու սիրում ես զրօսանքը ինձ հետ:

—Ի հարկէ,—պատասխանեց նա,—եթէ ոչ ես քեզ մօտ չէի գալ: Ես քեզ կարօտել էի, և այդ շատ տարօրինակ է, որովհետեւ առաջ ոչ ոքի չէի կարօտում: Տանը ոչ մէկին չեմ սիրում, իսկ մի քանիսին ատում եմ:

—Խոստացիր, որ ինձ երբէք չես ասիլ,—ասաց Միտասը նրա ձեռքից բռնելով:

—Այդ դժուար է խոստանալ,—պատասխանեց նա ծիծաղելով.—«երբէքը» խօսքերից ամենաւեժն է, մինչև անգամ «միշտ»-ից էլ մեծ է, բայց դժուար թէ ես քեզ երբևիցէ ատեմ: Դու ինձ մի անգամից դուր եկար, նոյն իսկ քեզ տեսնելուցս էլ առաջ, այսինքն երբ մթութեան մէջ լսեցի միայն քո ձայնը: Բայց սեր պարսպիտակ կրղելը շատ անզգոյշ բան էր, որովհետեւ եթէ Աբղուլը լսէր այդ, առանց երկար մտածելու կը հրամայէր գնդակահար անել քեզ: Ա՛յ, եթէ ես ես չը լինէի և քո երգելուդ մասին ասէի նրան, այն ժամանակ դու այլ ես չէիր երգիլ:

—Բայց դու այդ չ'արիր, որովհետեւ դու գու ես,—պատասխանեց Միտասը,—և եթէ դու դու չը լինէիր, ես չէի էլ երգիլ:

—Դատարկ բաներ ես խօսում: Բայց անձ Ձուլէյվան:

—Ո՞վ է այդ Ձուլէյվան:

—Դա մի կին է և նայում է, որ մեր տեսակցութիւնները ոչ ոք չը նկատէ: Նա պառաւ է, թէպէտ Աբղուլի տարիքին չի գալ, և քեզանից վարձատրութիւն է սպասում: Գիտես, նա պայման է դրել, որ մեր իւրաքանչիւր տեսակցութեան փոխարէն դու համբուրես նրան: Նա արդէն հաշուում է, թէ մենք չորս անգամ ենք տեսնուել, բայց իմ կարծիքով սա երրորդն է միայն: Ե՞րբ պետք է նրա պարտքը վճարես:

Միտասոր վեր ցատկեց տեղեց:

—Ինչիս է հարկաւոր Զուլէջկան, —բացազանչեց նա գայ-
բացած:

Երիտասարդ աղջիկն ուշի-ուշով նայեց նրան:

—Ինչո՞ւ ես բարկանում, Միտասո՞ս, —ասաց նա, —բարկա-
նալու ոչինչ չը կայ: Զուլէջկան ասում է, որ դու շատ գեղե-
ցիկ ես, ուրեմն ինչո՞ւ ես դայրանում:

—Թողնենք Զուլէջկային, —պատասխանեց Միտասոր. —ա-
ւելի լաւ է՝ դու քո մասին մի բան ասու: Ես չափազանց սիրում
եմ լսել քո ձայնը: Եւ ձեռքդ ինձ աուր: Այսպիսի սպիտակ և
կոկիկ ձեռք ես երբէք չեմ տեսել:

Զիւլէջման ծիծաղեց:

—Դատարկ բան է: Բայց այդպէս պինդ մի սեղմիր ձեռ-
ներս, ցաւում ենք Ի՞նչ ասեմ իմ մասին: Ծջմարիտ՝ չը դիտեմ:
Այս օրերս ինձ հետ ոչինչ չէ պատահել: Զուլէջկան...

—Նրա մասին մի խօսիր:

—Ես չեմ էլ ուզում նրա մասին խօսել: Բայց տես, Միա-
սոս, որքան հեռացել ենք մենք: Նաւալիան մեր հտեր մնաց:
Վերադառնանք:

—Ո՛չ, գետ վաղ է:

—Ժամանակ է, ժամանակ: Դեռ մի ամբողջ ժամ էլ կը
հարկաւորուի վերադառնալու համար: Խնդրում եմ, Միտասո՞ս,
եւ դնանք:

—Միտասոր ոչինչ չը պատասխանեց և բողբաջափ լու-
թիւնից յետոյ հարցրեց ցած ձայնով.

—Ասո՞ս, որ չես ուզում վերադառնալ:

—Ի հարկէ, չեմ ուզում: Ես կը ցանկանայի յաւիտեանս
քեզ հետ, միմիայն քեզ հետ լինել:

Միտասոր վեր թռաւ:

—Լաւ, —ասաց նա, —այժմ մենք կը վերադառնանք:

Նա առադաստը դարձրեց, և երբ մակոյկն սկսեց արագու-
թեամբ դէպի ետ լողալ, Միտասոսն առաջուայ նման նստեց Զիւ-
լէջմայի կողքին:

—Այժմ լաւ եղանակ կը լինի, —ասաց նա, —իսկ դու
միշտ կը գոս ինձ մօտ: Ձէ՛ որ ասացիր, թէ այս գրօսանքները
քեզ դուր են գալիս:

—Այո՛, սրանք ինձ շատ են դուր գալիս, բայց հարկաւոր
չէ շուտ-շուտ կրկնել, —պատասխանեց երիտասարդ աղջիկը,
կպչելով նրան. —դու խրատքանչիւր օր կարող ես մօտենալ պա-
րըսպին, և ես քեզ կ'ասեմ, թէ արդեօք կարելի՞ է դնալ գրօսնե-
լու: Իսկ հետևեալ անդամ, Միտասո՞ս, հետդ վեր առ և՛ ձկնորսա-

կան գործիքներդ: Ես ուզում եմ նայել, թէ ինչպէս ես ձուկ որսում:

—Ստաման տանէ ձուկը: Ես աւելի լաւ եմ համարում խօսել քեզ հետ:

—Որքան ծիծաղելի է: Իսկ ես շատ եմ ցանկանում տեսնել, թէ ինչպէս ես ձուկ որսում. սակայն ե այնպէս այդ բանը չի խանդարիլ ե՛ մեր խօսակցութեանը: Բայց դու թոյլ կը տաս ինձ օգնելու քեզ:

—Դու չես էլ կարող լի ուռկանը վարել, —ասաց նա՝ նորից ձեռքը բռնելով. — դու չը գիտես, թէ որքան ծանր է այդ:

—Իսկ որքան ձուկ կը լինի լի ուռկանի մէջ:

—Իւրաքանչիւր մատիգ—չիւնական ե զեռ մի հարիւր էլ աւելորդ, —ասաց Միտտոսը ծիծաղելով. — ես մի անգամ ցանցի պարանով մատս մինչև ոսկորը կտրեցի:

Նա բարձրացրեց մեծ, սևացած ձեռքը, և Զիւլէյման իր փոքրիկ մատով շօշափեց նրա ցուցական մատի սպին:

—Որքան զարհուրելի է, —բացագանչեց նա, — շատ արիւն գնաց:

—Կէս դոյլ:

Այդ ժամանակ քամին զովացաւ, և Զիւլէյման իր թիկնոցի մէջ փաթաթուելով, առաջուանից աւելի պինդ կալաւ Միտտոսին:

—Դու մրսում ես, —հարցրեց երիտասարդը:

—Ո՛չ, եթէ դու հանդարտ նստես: Ուզում ես էլի մի կրտոր սահաթ-լոխոմի:

—Այն, միայն ինքդ դիր բերանս:

Տասն բողէ յետոյ նրանք կանգ առան սպիտակ պարսպի մօտ, և Զիւլէյման մի սան արդէն պարանէ՛ ամուղուխի վրայ դրած՝ զլուխը թեքեց և համբուրեց Միտտոսի ճակատը:

—Բարի գիշեր, սիրելի՛ Միտտոս, —չչնջաց նա և բարկացած աւելացրեց, — չը համբուրես Զուլէյկային, նա գարշելի պատաւ է:

Եւ առանց պատասխանի սպասելու նա սանդուխով վեր բարձրացաւ և անհետացաւ մթութեան մէջ:

Միտտոսը երկար ժամանակ անչարժ նստած էր մակոյկի մէջ, արիւնը հոսեց զէպի նրա քունքերը: Նա զգաց, որ ինքն այլևս երեխայ չէ, և անսովասելի կերպով իր մէջ գլուխ է բարձրացրել բորբոքում կրքերով մի մարդ: Վերջապէս նա ըսթափուեց և երջանկութեան ժպիտն երեւին զիմեց զէպի առևն:

Սակայն այս զրօսանքը Զիւլէյմային էժան չը նստեց: Պարտիզում ներքինին բռնեց նրան, և թէպէտ նա աշխատում էր հաւատացնել, թէ զլխացափ պատճառով էր դուրս եկել

պարտէզ, և Զուլէյկան էլ ոչինչ չ'ասաց, իսկ Միտսոսինն ո՛չ որ չէր անսել, այնուամենայնիւ մի լաւ ծեծ կերաւ և որոշեց այլևս գննէ մի առժամանակ հրաժարուել գլխացաւից: Այդպիսով երկու շաբաթ շարունակ նա դուրս չէր գալիս պատշգամբը: Բայց սիրահարուածներն բարեբաղդ ասողն չնորհիւ ծերունին ներքինն մի անգամ հարբեց, և Արզուլն իսկոյն արտաքսեց նրան: Զիւլէյկան սկսեց ուշադրութեամբ հետամուտ լինել նրա յաջորդի սովորութիւններին և գոհութեամբ նկատեց, որ նա վաղ պառկում էր և պինդ քնում: Այդ պատճառով որոշեց նորոգել մակոյկով գրօսնելը և 1821 թ. յունուարի 1-ին դուրս եկաւ պատշգամբը:

Բայց նա էլ Միտսոսի նման այդ ժամանակի ընթացքում բուրրովին փոխուել էր, վերջին գրօսանքից և համբոյրից յետոյ նա զգում էր, որ մի ինչոր առանձին զգացմունք է տածում դէպի երիտասարդը և հասկանում էր, որ նա էլ դէպի ինքը միևնոյնն է զգում:

Պայմանաւորուած ժամանակից կէս ժամ առաջ դուրս գալով պատշգամբ, Զիւլէյկան անհամբերութեամբ սպասում էր նրան և մինչև անգամ լաց եղաւ, մտածելով որ նա կարող է և՛ չը գալ: Ո՛չ, նա պէտք է գայ, Զիւլէյկան առանց նրան չէ կարող ապրել: Ի՞նչ նշանակութիւն ունէր նրա համար երկու շաբաթ ապարդիւն այստեղ դալը, չէ որ պէտք է հասկանար, որ դուրս չէ գալիս լսկ այն պատճառով, որ չէր կարող: Վերջապէս մթութեան մէջ սպիտակ առադասուն երևաց, և մակոյկը կանդ ստաւ. պարսպի մօտ:

—Այդ դու ես, Միտսոս,—բացագանչեց նա ցած ձայնով, և այդ իսկ բոպէին երիտասարդը պարանը գցեց դէպի պատըշգամբը, իսկ յետոյ ինքն էլ կանգնեց նրա կողքին:

Նրանք անխօս իջան մակոյկը, բայց հէնց որ Զիւլէյկան նստեց ետին նստարանի վրայ, Միտսոսը մօտեցաւ նրան և ասաց կամացուկ.

—Դու, Զիւլէյկա, անցեալ անգամ համբուրեցիր ինձ, կարո՞ղ եմ արդեօք այժմ ետ տալ քեզ այդ համբոյրը:

—Այո՛, —պատասխանեց նա, և սիրտն ուրախութեամբ լըցուեց:

Միտսոսն էլ ցանկանում էր նրա ձակատը համբուրել, բայց նրանք այժմ արդէն երեխաներ չէին, — և սիրահարների շրթունքներն առաջին անգամ պատահեցին միմիանց...

Այս անգամ մակոյկը ո՛չ թէ դէպի ծովը սլացաւ, այլ ծովածոցի այն կողմը, որտեղ Միտսոսը մի ժամանակ ձուկ էր որսում Նիկողայոսի հետ: Նա իր հետ վերցրել էր ուռկանը, սը-

բաժայր կարթն ու ջահերը: Կէս ժամ անցած նրանք կանոց առան ափի մօտ, և Միտսոսը Զիւլէյմային ձեռները վրայ առած տարաւ աւազի վրայ և եղէգներից նրա համար մի յարմար բուն պատրաստելով, ինքը մտաւ ջուրը և սկսեց ձուկ որսալ:

Զիւլէյման հետաքրքրութեամբ նայում էր նրա բոլոր շարժումներին և ջահի շողջողուն լոյսով լուսաւորուած գեղեցիկ կերպարանքին: Որսն յաջողակ էր, և իւրաքանչիւր անգամ, երբ Միտսոսը նրան մի որևէ մնծ ձուկ էր ցոյց տալիս, երիտասարդ աղջիկն ուրախ ծիծաղում էր: Ծուռով նա այնպէս յափշտակուեց այս իր համար նոր տեսարանով, որ թողեց իր բունը և Միտսոսից աչքը չը հեռացնելով՝ սկսեց շտապ-շտապ կա ու առաջ անել աւազոտ ափի վրայ:

Վերջապէս Միտսոսը բաւականաչափ ձուկ առած իր հետ՝ մօտեցաւ Զիւլէյմային, որն սկսեց հետաքրքրութեամբ դիտել որսը: Յետոյ նա զրպանից թիւրքական ծխախոտ հանեց, լցրեց ծխաքարչը և վառեց: Այդ ծխախոտը նա բերել էր հարեմից, որտեղ բացի նրանից բոլոր կանայք ծխում էին:

Գիշերը շատ յաջողակ էր սիրահարների համար, օդը թարմ էր և սքանչելի. լուսինը թաղնուեց լեռների ետևը, և միայն աստղերն էին փայլիլում անամպ երկնքի երեսին: Աւազի մէջ տնկած ջահը հանդարտ վառուում էր: Սիրահարները գրկախառնուած նստել էին, և ջերմ, կարօտագին համբոյրը չէր հեռանում նրանց շրթունքներից:

Որքան ժամանակ էր անցել այս երկնային երջանկութեան մէջ, իրանք էլ չը գիտէին, բայց յանկարծ ափից, բարձր և ղէգների ետևից Միտսոսը ջորու ծանր սանաձայներ լսեց: Երիտասարդի սիրտը թնդաց, և նա մի տեսակ բնազդական երկիւղով սկսեց ականջ դնել: Մի քանի րոպէ ճանապարհի վրայ մի ձիաւորի կերպարանք երևաց: Ուղիղ Միտսոսի դէմուդէմը, որ պահուած էր եղէգների մէջ, նա կանդ առաւ, կայծաքարով կըրակ հանեց, վառեց ծխաքարչը և ճանապարհը շարունակեց:

Միտսոսը ճանաչեց, որ դա Նիկողայոսն էր: Նրա գէմքը գունատուեց, և բիւրերը լայնացան, կարծես նա մի ուրուական տեսաւ:

—Այդ ո՞վ է, —կամայուկ հարցրեց Զիւլէյման, քնքշութեամբ նրա ձեռը բռնելով. —նա մեզ չը տեսաւ:

—Իս ի՞մ մօրեղբայրն է, —խուլ ձայնով պատասխանեց Միտսոսը. —Ի հարկէ, նա մեզ չը տեսաւ: Բայց ես վախենում եմ, թէ մի գուցէ իմ ետևից է եկել:

—Քո ետևից: Այդ ի՞նչ է նշանակում:

—Ես պէտք է գնամ: Բայց, վկայ է Աստուած, քեզ չեմ

կարող թողնել: Ես չը գիտեմ, թէ ինչ է մտադիր անել, միայն նա ինձ կը տանէ, և դուցէ մենք այլևս չը տեսնուենք: Ո՛չ, ո՛չ, ես չեմ կարող, չեմ կարող:

—Այդպէս մի խօսիր, Միտսնս, դու սիրտս կտոր-կտոր ես անում,—բայագանչեց վախեցած Զիւլէյման արտասուք թափելով:

—Ներիր ինձ, գեղեցկուհի,—քնքշութեամբ պատասխանեց Միտսոսը, աչխատելով հանգստացնել նրան:—Ս,մեն ըան լաւ կը գնայ, և ես կը վերագառնամ, այո՛, անպատճառ կը վերագառնամ: Սակայն ես խօսք եմ տուել օգնել նրան իր գործի մէջ և պարտաւոր եմ պահել խոստումս:

—Իսկ մի՞թէ դու ինձ չես կարող ասել, թէ այդ ինչ գործ է:

—Չեմ կարող: Մի բան միայն կարող եմ ասել քեզ, բայց դու խօսք տուր, որ ոչ ոքի չես ասիլ: Ասում են՝ որ շուտով յոյները կ'ապստամբուեն և կը վռնդեն թիւրքերին: Քանի որ դու էլ ինձանից պակաս չես ատում թիւրքերին, ուստի ուրախ կը լինես, որ այդ բանն իրագործուի: Գուցէ և Աբդուլի տան վըրայ էլ յարձակում գործեն, բայց դու մի վախենար, քո կեանքն անվտանգ կը լինի, և թէ ասես, թէ յոյն ես: Ազաչիւր Աստծուն և ս. Աստուածամօրը, Զիւլէյմա, որ շուտով կատարուի այդպէս ժամանակ մենք ամբողջովին միմիանց կը պատկանենք...

—Ա՛յ թէ ինչո՞ւ համար ես գնում:

—Ո՛չ, իմ գնալու նպատակը բոլորովին ուրիշ է,—ասաց Միտսոսը, Նիկողայոսին տուած խոստումը մտաբերելով:—Ներիր ինձ, Զիւլէյմա, որ այդպէս վախեցրի քեզ: Դատարկ բան է դա, որքան կարելի է շուտ-չուտ դուրս արի պատշգամբը: Եթէ ես գնամ էլ, երկար չի տևիլ, և հէնց որ վերագառնամ, իսկոյն քո պատշգամբի տակ կը լինեմ:

Զիւլէյման հանգստացաւ, երկու ձեռով բռնեց նրա գըլուխը, մօտեցրեց և համոյրներով ծածկեց այն:

—Ես հէնց որ միջոց գտնեմ, դուրս կը գամ պատշգամբը, որովհետեւ դու ամեն բանից թանգ ես ինձ համար: Դէհ, այժմ տար ինձ դէպի մակոյկը, քնքզ իմ: Ժամանակ է տուն վերագառնալու:

Միտսոսը ձեռների վրայ առաւ նրան, իսկ Զիւլէյման թեւերը փաթաթեց նրա վզովը: Բայց երիտասարդն այժմ էլ նոյն երջանկութիւնը չէր զգում. նրանից անջատուելու միտքը խորտակում էր սիրտը: Ինչո՞ւ արդեօք իր անձն ու երջանկութիւնը նա պէտք է զոհէր հայրենիքի համար, քանի որ այդ հայրենիքն ուրիշ այնքան ընտիր ծառաներ ունէր... Ի՞նչ էին նրա համար փառքն ու սլափուր, երբ նրանց սիրոյ գնով պէտք է ստանար...

Այսպիսի մտածմունքներին յուզուած նա հասաւ մակոյկին, չքնաղ աղջկան զրաւ նստարանի վրայ և դէպի տուն տարաւ նրան: Բայց մինչդեռ նա վրդովւում էր, Զիւլէյման մակոյկի մէջ կիսով չափ պառկած՝ գլուխը դրել էր նրա կրծքին, և բոլորովին հանգստացած՝ ուղիղ նրա աչքերի մէջ էր նայում:

Մակոյկից դուրս գալով նա լուռ գրկեց Միտոսին, և նըրանց շրթունքները մի անգամ էլ երկար միացան: Յետոյ երիտասարդ աղջիկը վաղեց դէպի տուն, իսկ Միտոսը վերադարձաւ հօր մօտ:

Չը նայելով որ բաւական ուշ էր, Կոստանդինն ու Նիկողայոսը նստած՝ մի ինչոր բանի մասին սաք-տաք խօսում էին:

—Ա՛, այդ դ՞ու ևս, Միտոսս,—բացաղանջեց Նիկողայոսը՝ երիտասարդին տեսնելով.—ժամը հասել է, դու պէտք է իսկոյն ձանապարհ ընկնես:

Միտոսը լուռ նայեց մօրեղբորը և հաստատուն ձայնով ասաց.

—Ես պատրաստ եմ: Ո՞ւր պէտք է գնալ:

(Կը շարունակուի)

Թարգմ. Յ. ԱՐՍԵՍՁԵԱՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹԸ

I .

Առիւծ Մըհերը՝ զարմով գիւցազուն՝
Քառասուն տարի իշխում էր Սասուն,
Իշխում էր ահեղ ու նըրա օրով
Հաւքն էլ չէր անցնում Սասմայ սարերով:
Սասմայ սարերից շատ ու շատ հեռու
Թընդում էր նըրա հրոչակն ահարկու,
Խօսում էր իր փառքն, արարքն անվեհեր,—
Հազար բերան էր, մի Առիւծ Մըհեր:

II

Երբ մանուկ էր նա, գեռ տասը տարում,
Մի դե լուս ընկաւ Սասմայ աշխարհում,
Ճամբէքը փակեց, կրտրեց անցուգարձ,
Սասմայ քաղաքը սով ընկաւ յանկարծ:
Մըհերը մի օր հարցըրեց, ասաւ.
— Ինչո՞ւ մեր հացը էսպէս թանկացաւ,
Ինչո՞ւ գիւղերից ցորեն չեն բերում,
Ինչո՞ւ են մարդիկ փակւել աներում:
— Մի դե է, ասին, լոյս ընկել ճամբում,
Ով անց է կենում, բըռնում է լափում,
Մարդիկ էլ փակւած՝ քաղաքից, գիւղից

էլ գուրս չեն գալի նըրա երկիւղից:
 —Մի գեն ինչ է՝ որ խըղճացնի էսքան,
 Ասաւ զարմանքով էն մանուկ հըսկան
 Ու ելաւ գնաց: Գընաց անհեթեթ
 Մի կըռիւ մըտաւ գաժան գեի հեա,
 Բըռնեց հըրէշին, պատուեց մէջտեղից,
 Երկիրն ազատեց սովից, երկիւղից,
 Իրեն անուճն էլ էն օրից ՚ի վեր
 Մընաց ու մընաց միշտ Առիւծ-Մըհեր:

III

Էսպէս, ահաւոր առիւծի նըման,
 Սասմայ սարերում նըստած էր իշխան
 Քառասուն տարի: Քառասուն տարում
 «Ախ» չէր քաշել նա գեռ իրեն օրում,
 Բայց հիմի, երբոր եկաւ ծերացաւ,
 Էն անահ սիրտը ներս սողաց մի ցաւ:
 Սկըսեց մըտածել Առիւծ Մըհերը.
 —Հասել են կեանքիս աշնան օրերը,
 Շուտով սե հողին ես կ'երթամ գերի,
 Կանցնի ծուխի պէս փառքը Մըհերի,
 Կանցնեն ե՛ւ անուն, ե՛ւ սարսափ, ե՛ւ ահ,
 Իմ անտէր ու որը աշխարքի վըրայ
 Ոտի կը կանգնեն հազար քաջ ու գե...
 Մի ժառանգ չունիմ, իմ անցման ետե
 Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...»
 Ու միտք էր անում հըսկան ծերունի:

IV

Մի օր էլ էն գորշ յօեքերը կիտած
 Երբ միտք էր անում, վերելից յանկարծ
 Մի լոյս հըրեղէն յայտնըեց քաջին,
 Ոսները ամպրտ կանգնեց առաջին:

—Ողջոյն քեզ, ասաւ մըռայլ հըսկային.
 Ին ձայնը հասաւ Աստուծոյ գահին,
 Ու շուտով ետ քեզ մի զաւակ կը տայ.
 Բայց լաւ իմանաս, լեռների արքայ,
 Որ օրը որ ձեզ ժառանգ է սըւել,
 Էն օր կը մեռնէք քո կլինն էլ, դու էլ»
 —Իր կամքը լինի, ասաւ Մըհերը.
 Մենք մահիկնն ենք միշտ ու մահը մերը,
 Բայց որ աշխարքում ժառանգ ունենանք,
 Մենք էլ նըրանով անմեռ կը մընանք»
 Հըրեշտակն այստեղ ցոլացաւ նորից,
 Ու էս երջանիկ աւետման օրից
 Երբ իննը ամիս, իննը ժամն անցաւ,
 Առիւծ Մըհերը զաւակ ունեցաւ:
 Դաւիթ անւանեց իրեն կօրիւնին,
 Կանչեց իր եղբայր Չէնով Օհանին,
 Երկիրն ու որդին աւանդեց նըրան,
 Ու կլինն էլ, ինքն էլ նոյն օրը մեռան:

V

Էս դարում Մըսըր՝ անյաղթ ու հըզօր
 Մըսրա-Մելիքն էր նըստած թագաւոր:
 Երբօր իմացաւ՝ էլ Մըհեր չըկայ,
 Վերկացաւ կըռւով Սասունի վըրայ:
 Չէնով-Օհանը ահից սարսափած,
 Թըշնամու առաջն ելաւ գըլխաբաց,
 Աղաչանք արաւ, ընկաւ ոտները:
 —Դնւ եղիր, ասաւ, մեր գըլխի աէրը,
 Ու քո չըւարում քանի որ մենք կանք,
 Ին ծառան լինենք, քո խտրը միշտ տանք,
 Միայն թէ մեր երկիր քարուքանդ չանեա
 Ու քաղցրը աչքով մեզ մըտիկ անեա:
 —Չէ, ասաւ Մելիք. քո ամբողջ ազգով
 Արի, սնց կացիր իմ թըրի տակով,

Որ էզուց-էլօր ինչ էլ որ անեմ,
 Ոչ մի սասունցի թուր չ'առնի իմ դէմ:
 Ու գընաց Օհան, բորբոբովանդակ
 Սասունը բերաւ, քաշեց թըրի տակ,
 Մենակ Դաւիթը, ինչ արին-չ'արին,
 Մօտ չ'եկաւ Մըսրա-Մեղիքի թըրին:
 Եկան, քաշեցին թէ զօռով տանեն,
 Թափ տըւաւ, մարդկանց գըցեց գէս ու գէն,
 Որ գըցեց, մտալ մի քարի առաւ,
 Որ առաւ, քարից կրակ գուրս թըռաւ:
 — Պէտք է ըստանեմ էս փոքրիկ ծուռին,
 Ասաւ թագաւորն իրին մեծերին:
 Թագաւոր, ասին, դու էսքան հըզօր,
 Թըրիդ տակին է ողջ Սասունն էսօր,
 Ի՞նչ պէտք է անի քեզ մի երեխայ,
 Թէկուզ իր տեղով հէնց կըրակ դառնայ:
 — Դ՞նը գիտէք, ասաւ Մըսրայ թագաւոր,
 Բայց թէ իմ գըլխին փորձանք գայ մի օր,
 Էս օրը վըկայ,
 Սըրանից կըգայ:

VI

Էս որ պատահեց, մեր Դաւիթ հըսկան
 Մի մանուկ էր գեռ երեք տարեկան.
 Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
 Որ նըրա համար թէ մարդ, թէ մըժեղ:
 Մի օր հաւաքեց քաղքի երեխանց,
 — Տըղերք ջան, եկէք ծնու հեծնենք, ասաց:
 Տարաւ, մի բարդի կըռացրեց հողին,
 Երեխանց շարքով նըստեցրեց ճիւղին:
 Հէնց որ նըստեցին, բաց թողեց ծառը.
 Ահագին թափով փախաւ կատարը,
 Ու, ինչ հա կը տաս, ամեն մի տըղայ
 Թըռաւ մի փողօց, մի կտեր վըրայ,

Դիպաւ մի պատի, ընկաւ մի քարի,
 էսօր ես մեռել, թէ անցեալ տարի...
 Ինքը ծափ տըւաւ, թաւալեց հողում:
 Դըլոր էր գալի, խընդում, ծիծաղում,
 Իբրև թէ՛ տեսէք՝ ի՞նչ հանաք արաւ:
 Ամբողջ քաղաքը սըգատուն դառաւ.
 Երեխանց տէրերն եկան, կիտեցին,
 Լացով ու կոծով,
 Դառը կըսկիծով
 Ձէնով Օհանի դուռը կըտրեցին:
 —Տճ, Ձէնով Օհան, մենք էսքան տարւան
 Աղուհացակեր ընկեր-հարևան,
 Դու մեր երեխէք հէ՛ս ես կստորում,
 Մեր տունը քանդում, մեր ծուխը կըսարում:
 Թէ կուզես, ախպէր, թողնենք սեղ ու տուն,
 Մասմայ քաղաքից կորչենք դադարդուն,
 Թէ չէ՛ վեր կ'առնի Ասուած էս բանը...
 — Ի՞նչ անեմ, ախպէր, տաւ Օհանը:
 — Ի՞նչ պէտք է անես, կարգիր մի բանի,
 Դընայ, քեզ համար աշխատանք անի.
 Թէ չէ՛ բերել ես պարապ նըստեցրել,
 Պահել, պահպանել, վիզը հաստացրել,
 Գաղան ես շինել ու գըցել աշխարհ...
 — Ի՞նչ անեմ, ասաւ Օհանը անճար.
 Ի՞նչ գործ ունիմ ես, ի՞նչ գործի գընեմ.
 Բերէք ձեր ապրանք իր առաջն անեմ,
 Հանդ զըրկեմ ծէգից մինչև իրիկուն,
 Էլ ոչ մարդ տեսնի, ոչ քաղաք ու տուն»:
 Ու մարդիկ հաւան կացան էս բանին,
 Ապրանքը բերին, տըւին Օհանին:

Գընաց Օհանը ու Դաւթի ոտի
 Մի զոյգ ոտնաման բերաւ երկաթի,

Երկաթի մի կտու հարիւր լըգրական,
Ու շինեց Սասմայ քաղքի նախրապան:

VII

Արեւը բացւեց աշխարքի վըրայ,
Յընձուղը զարկեց Սասմայ սարերին,
Սարերը ելաւ Դաւիթը ահա
Իրեն երկաթի մահակը ձեռին:
— «Հէյ հէյ, գողեր ու դաղաններ,
Ջարդե՛մ, քըշե՛մ սարերն ի վեր»:
Որ կանչեց, նըրա ձէնից ահաւոր
Դըլրորդ-գըմբդըմբոցն ընկաւ սարուձոր,
Ու էն ամպրոպի ձէնը հէնց առած՝
Վայրի գազաններ ելան զարհուրած,
Իրենց սըջերից, բըներից փախան,
Քարէքար ընկան, գաղարգիւն եղան:
Դաւիթն էլ ընկաւ նըրանց ետեից,
Որին մի սարից, որին մի ձորից—
Դայլ, ինձ, աւիւժ, արջ, վագըր բըռնեց,
Հաւաքեց, բերաւ իր նախրին խառնեց,
Իրիկան քըշեց սըջ Սասմայ քաղաք:
Ունոց, մըռընչիւն, աղմուկ, աղաղակ...
Քաղքըցիք յանկարծ մին էլ ի՛նչ տեսան.—
Փոշին ամպի պէս բարձրանում է վեր,
Ու քաղքի վըրայ անհամար գազան
Դալիս են հըրէս բացած երախներ:
Սըրտաճաք եղած,
Դործները թողած,
Փախան, լըցւեցին տուն, ժամ ու խանութ,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ:
Եկաւ Դաւիթը, կանգնեց մէյդանում:
— Վահ, էս մարդիկը ի՛նչ վաղ են քընում:
Հէյ կովատէր, հէյ գոմշատէր,
Ելէք, շուտով բացէք դըռներ,

Ով մինն ունէր, տասն եւ բերել,
 Ով տասն ունէր—քրտանն արել...
 Շուտով ելէք, եկէք, տարէք,
 Ձեր եղն ու կով գոմերն արէք»:

Տեսաւ՝ չեն գալի, գուռ չեն բաց անում,
 Ինքն էլ մեկնրւեց քաղքի մէյդանում,
 Գրլուխը դրաւ մի քարի, մընաց,
 Ու մուշ-մուշ քրնեց մինչև լուսաբաց:
 Լուսին իշխաններ ելան միասին,
 Գընացին Ձէնով Օհանին ասին.
 —Աման, քեզ մատաղ, այ Օհան ախպէր,
 Մեր ապրանքն ու մալ թող մընան անտէր,
 Էլ ոչ կով կ'ուզենք, ոչ գոմէշ ու եզ,
 Միայն թէ սրբանից աղատ արա մեզ,
 Թէ չէ՝ էս քաղքին փորձանք կը բերի,
 Գայլերոց կ'անի, կը տայ կ'աւերի»:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Գը շարունակուի)

ՀՈԳՈՒՍ ՀԱՄԱՐ

(Թիրրբահայ հարուստներու կեանքէն)

Ա.

Եղեռնին յաջորդող երկրորդ կիրակին է:

Ժամուն զանգակները կը զօղանջեն մեռելական հանգիստաւորութեամբ մը, ծանր ու դանդաղ: Հայոց թաղին օրերէ ի վեր առնայցած փողոցներէն առաջին անդամն ըլլալով մեծ բազմութիւն մը կ'անցնի, ուրուականներու պէս անաղմուկ ու անչչուկ և հոյակապ եկեղեցին տաղաւար օրերու խոնու մը կը լեցուի: Պատարագի կիսուն՝ մեր ծերունի վարդապետը քարոզի կը կենայ:

— Հայ ժողովուրդ, մեռնողները մեռան ազատեցան, Աստուած անոնց հոգուն պիտի ողորմի, մնացողներուն վիճակն է զժուար: Գիւղերէն քանի մը հազար խեղճեր քաղաք թափած են, անօթի, մերկ, անպատսպար. քաղաքին մէջ ալ գործ ու վաստակ դադրած է, խեղճութիւնը ամեն կողմ բռնած: Չմեռը վրայ կը հասնի, մեր սև բախտէն՝ այս տարի ամեն տարուընէ աւելի խիստ: Չքաւորներուն օգնելու համար յանձնաժողով մը կազմած ենք, որ տնէ տուն շրջելով հանդանակութիւն պիտի ընէ. բայց օգնութեան պէտքը անմիջական է, այս օրեր արդէն քանի մը սովամահներու դիակը բերին գերեզմանոց, այդ պատճառով հիմա անմիջապէս պիտի պիտի պտրտեցնենք մէջերնիդ: Գրիստոնէական գթութիւնն ու եղբայրսիրութիւնը այս օրերուն համար են մանաւանդ: Տուէք, օգնեցէք, պատառ մը հաց ունեցողը թող իր անօթի զրկեցին հետ

բաժնէ, երկու ձեռք հազուսա ունեցողը մէկով ալ իր գրայիին մերկութիւնը ծածկէ: Թշուառութիւնը մեծ է, մեր կարողութենէն շատ վեր, բայց ինչ ընենք. Աստուծմէ դատ օգնական չ'ունինք, զիրար պահենք պահպանենք, մինչև որ Աստուծոյ այցելութիւնը հասնի...

Ա' չը կրցաւ շարունակել, հեկեկանքը խեղդեց իր ծերուկ ձայնը: Դիմաշէն՝ կանանց վերնատունէն՝ արգէն փրթած էր լացը, և վայրկենապէս բոլոր սրտերը կը փղձկէին, ու ամբողջ եկեղեցին կ'ուլար մեռելի տան մը պէս: Խեղձերը, անլաց ու անմտունչ թաղեր էին իրենց ինկած սիրելիները, բայց հիմա՝ անհուն վիշտերնին քովքովի բերած՝ արդարութեան Աստուծուն սեղանին առջև՝ աչքերնուս մէջ ժահրացած արցունքը կը պոթկար...

Պատարագի աւանդումէն ետքը պնակներու բովանդակութիւնը հաշուեցինք: Պղինձ, արծաթ, ոսկի գրամներ, կանացի հասարակ զարդեղէններէն սկսած մինչև թանկագին գոհարեղէններ՝ իրարու վրայ զիգուած սրտաշարժ կոյտ մը կը կազմէին:

Ամբողջ արդիւնքը 1500 ոսկի գնահատուեցաւ:

Բ

Կարօտելոց նպաստամատոյց յանձնաժողովին զիս ալ անդամ ընտրած էին:

Նոյն կիրակի օրը, կէսօրէն ետքը՝ առաջնորդարանի մէջ վարդապետին նախագահութեանը տակ նիստ գումարած, հանգանակութեան ժապաւինեալ տետրակը և գիմումներու յցանկը պատրաստելու զբաղած էինք, երբ գուռը զարնուելով, մէկը ներս մտաւ:

Կին մըն էր: Կանխահաս պառաւութենէ ընկճուած, չոր ու նիհար կազմուածքով, աղքատիկ հագուած, միջավար կին մը, որ երկչոտ քայլերով մօտեցաւ ու վարդապետին աջը առաւ: Առջի բերան ամենքս ալ հաւատացած էինք, որ նպաստ խնդրելու եկած էր, սակայն մեր այս կասկածը ընդհանուր ապշութեան տեղի աւաւաւ, երբ կինը իր ոսկրուս մասներով քուրջի քանի մը հանգոյցներ քակեց և մէջէն հինգ ոսկի հանելով՝ վախվրթելով մը հայրսուրբին առջև սեղանին վրայ դրաւ:

— Ի՞նչ է սա, զուակս, — հարցուց վարդապետը շուարած:

— Հայր սուրբ, ծառայ եմ կարգիդ — պատասխանեց կինը դողդոջ ձայնով մը — ես այրի կին մըն եմ, տուներու մէջ լուացք կ'ընեմ: Ակոյալէս կտրելով քիչ մը ստակ կ'աւելցնէի, որ Երուսաղէմ երթամ, Բրիտոսի գերեզմանը համբուրեմ, սուրբ

յոյսը տեսնում: Բայց որ աղլը հիմա սև օրի մէջ է, ունեցած չունեցածս բերի որ խեղճերուն բաժանէք: Ես, փառք Աստու, դեռ աշխատելու կարողութիւն ունիմ, մէկ գլուխ կին եմ, ինչպէս ըլլայ կ'ապրեմ: Կ'աղաչեմ հայր սուրբ, քիչս շատի տեղ ընդունեցէք:

Հայր սուրբը փորձեց խօսիլ, բայց ձայնը չելաւ, ձեռքով նշան ըրաւ կնոջ, որ մօտեցաւ ու առջնը չոքեց, և ծերունին ջուխտ ձեռքերը անոր վրայ տարածած՝ սրտագին պահպանելիչ մը կարգաց:

Գ.

Մեր յանձնաժողովը յաջորդ ասուտս իսկ սկսաւ իր պըտոյտը: Ամենէն առաջ Գօճամանեան Նազարէթ էֆէնդին գուռը ափ առինք: Էֆէնդին մեր քաղաքին էն մեծ վաճառականը և էն ազդեցիկ հայն էր, ուստի իր մեծապատիւ անունն ալ մեր ցանկին առաջին տողը կը գրաւէր:

Սպասաւոր մը գուռը բացաւ և մեզ առաջնորդեց արևելեան շքեղութեամբ կահաւորուած մեծ հիւրասենեակը: Քանի մը վայրկեան յետոյ ներս մտաւ էֆէնդին և ետեէն ալ կինը իր պզտիկ աղուն հետ: Նազարէթ էֆէնդին յիսունի մօտեցած, միջահասակ, գիրուկ, ճաղատ գլխով մարդ մըն է. հայ վաճառականի սովորական տիպ մը, որ նկարագրուելու արժանի ասանձայատկութիւն մը չունի: Իսկ տիկինը նիհար, դժգոյն, ախուր նայուածքով, բայց շատ համակրելի կին մը:

Քաղաքավարութեան պահանջած պայմանագրական բանաձևերու փոխանակութենէն ետքը, փողոցին մէջ մօքէս պատրաստած մուտքի ճառովս մեր այցելութեան նպատակը պարզեցի և ընկերներէս մէկն ալ անմիջապէս հանդանակութեան տոմարը ներկայացուց:

Գօճամանեան էֆէնդին խոր հառաչ մը արձակեց, տոմարը առաւ, քիչ մը պրպտեց ու ըսաւ.

—Ձեր նպատակին ըսելիք չկայ, շատ գովելի է, բայց ինչ օգուտ, ինչ օգուտ... Ինչպէս գեղացիին առածը կ'ըսէ՝ ջաղացը ջուրը տարաւ, մենք ջախջախը կը փնտուենք: Ո՞ր մէկուն տանք, որ մէկուն հասնինք, ալ լմնցանք, լմնցանք...

—Էֆէնդի, անշուշտ աղէտը անելի է—պատասխանեցի ես—և մեր կարողութենէն շատ վեր դայն արմատապէս դարմանել, սակայն միւս կողմէ՝ չենք կրնար ձեռքերնիս ծալած նստել ու մարդոց ճանձկրու պէս կոտորուիլը դիտել:

—Ուզենք չուզենք պիտի կոտորուին, ուզենք չուզենք...

Ի՞նչ կրնանք ընել, բան մըն ալ չենք կրնար ընել. չսո՛ւ բան կրնայինք ընել բայց ալ ո՛ւչ է, բանը բանէն անցաւ: Քսան տարի է կը պոռայինք, կը կանչէինք, կը հասկնայք, քսան տարի, թէ ատ զէվզէկուծիւններուն, ատ թեթևաօրիկուծիւններուն վերջը ազետալի կըլլայ. սակայն չկրցանք խօսք հասկցնել: Մարգարէութիւննիս կատարուեցաւ. անոնք որ խեղճ ժողովուրդին արիւնը մտան, ան մեզի «հին գլուխ», «թրքասէր» և այլն և այլն ըսող ազգասէրները, հիմա անոնք թո՛ղ երթան ճար մը խորհին որ մարդիկ ճանճի պէս չը կոտորուեն... Ա՛խ,—աւելցուց էֆէնդին, կրկին հառաչելով և լուսնափայլ դուրսը շողացընելով—ա՛խ, աչքերնի՛ն կուրնայ, աչքերնի՛ն...

—Նազարէթ էֆէնդի—պատասխանեցի ևս—հիմա անօգուտ է անցեալի մասին խօսիլ, ներկան անչափ ախուր է, որ ամեն բան մոռցընել կուտայ մեզի:

—Ի՞նչ, մոռցընել մի՞ կուտայ, այս անգամ ալ մոռնանք, այս անգամ ալ խելքերնիս գլուխնիս չգայ—պոռայ էֆէնդին, տեղէն վեր ցատկելով—Աստուած մարդու բախտը աննկէ առաջ խելքը կ'առնէ ըսեր են նէ շիտակ է. անխելքութեան երեսէն աս օրին հասանք և դեռ չենք ուզեր խելքերնիս գլուխնիս ժողովել, ձեռքովնիս մեր գերեզմանը կը փորենք: Դեռ անցած օրն էր որ հազիւ կրցանք կառավարութեան բարկութիւնը քիչ մը իջեցնել, թուղթ ստորապրելով թէ խռովարարները իրենց արժանի պատիժը գտան և հիմա վեհափառ սուլթանին շնորհիւ անգորրութիւնն ու խաղաղութիւնը կատարեալ է: Մեր վարդապետ ըլլալիք՝ հեռու կարգէն՝ ցնդածն ալ հեռա էր, իսկ երեկ նորէն ամեն բան մոռցած, ելաւ արեւոյցիկը դուրս տուաւ. բարկութենէս քիչ մնաց վրան պոռայի ժամուն մէջ: Այ խօսքերը եթէ կառավարութեան ականջը հասնին՝ և չըլլար որ չը հասնին, ինչ պիտի մտածէ, ըսէք կաղաչեմ, չը պիտի ըսէ պարզապէս թէ ասոնք մեծով պղտիկով դեռ նոյն խելքին կը ծառայեն, դեռ չեն խրատուած...

—Բայց, Նազարէթ էֆէնդի, ինչ ըսաւ որ խեղճ վարդապետը:

—Ի՞նչ ըսաւ, հոն չէիք, չը լսեցիք, ինչ ըսել է, «մեռնողները մեռան ազատեցան, Աստուած մնացողներուն ողորմի, շուտով Աստուծոյ այցելութիւնը հասնի», կառավարութիւնը ապուշ չէ, ազ խօսքերուն միտքը ինձմէ քեզմէ լաւ կը հասկանայ և դեռ ան տեսակ հետեւութիւններ կը հանէ, որ խելքէ մտքէ չի անցնիր: Հիմա խոշորացոյցով կը գիտեն մեզ, խոշորացոյցով կը պիտի հասկնանք ասիկա:

Ես ալ չկրցայ պատասխանել, հին գրծուած ուխտերս

մեծ ու սղտիկ բոլոր երգումներով հանդերձ վայրկենաբար գրլ-խուս մէջ խուժեցին, և ես ստիպուեցայ էֆէնդին թողնելով ասոնց գէմ ճակատել:

Սակայն մեր պահեստի խօսողը անմիջապէս օդնութեան հասաւ իր թարմ ընդունով, միւսներն ալ հետզհետէ մէջ մասն, և ահա մեր դիմումը կնճոտա վիճարանութեան մը փոխուեցաւ: Վիճարանութիւն մը, որուն ինչով վերջանալիքը շատ գիւրին, լայց երբ վերջանալիքը անկարելի էր նախատեսել:

Բոլորովին անակընկալ օդնութիւն մը բարեբաղդաբար փրկեց մեզ: Տիկին Գօճամանեան, որ մինչև այդ ատեն՝ լսիկ նստած մտիկ կընէր, յանկարծ ամուսինին դարձաւ յուզուած.

—Մեղաց, դեռ պիտի քաջջնս. մարդիկը բաներնին գործերնին ձգած քու խրատներդ մտիկ ընելու չեն եկեր, բան մը պիտի տաս, տներ, չպիտի տաս, պարապ տեղը գլուխնին ինչու կը ցաւցնես:

—Հազար անգամ ըսած եմ որ դուն իմին գործերուս չըխառնուիս—մուտայ էֆէնդին, քովընտի խոժոռ ակնարկ մը նետելով կնոջը երեսին: Բայց և այնպէս խօսքն ալ կարճ կապեց և ոտքի ելնելով հանդիսաւոր կեպով մը ըսաւ.

—Իմ կարծիքովս աս հանգանակութիւնն ալ խոհեմութիւն չէ, կառավարութեան կասկածը կրնայ հրաւիրել, ես՝ թէև վաղուց ուխտ ըրած եմ աս ազգին գործերուն չը խառնուել՝ բայց նորէն չկրցայ համբերել և անցած օրը վարդապետին պատուիրեցի որ հիմակուհիմա յետաձգէ հանգանակութիւնը, մինչև որ կառավարութեան բարկութիւնը քիչ մը անցնի, սակայն աս անգամ ալ խօսքս մտիկ ընող չեղաւ: Ինչ որ է. հիմա որպէսզի չխօսուի թէ նազարէթը ստակ տալէ կը փախչի, և քանի որ ելած մինչև տունս եկած էք, չեմ ուզեր ձեզ պարապ ճամբել: Մինակ թէ տեսարակին մէջ անունս չը գրուի, ո՞վ գիտէ ինչ կըլլայ, ինչ չըլլար:

Եւ քսակը հանելով աւելցուց.

—Արդէն երեկ ժամուն մէջ ոսկի մը ձգեցի պնակը, անկէ դատ մեր տիկինն ալ իր 20 ոսկինոց սպարանջանն է ձգեր, այնպէս որ...

—Տէր Աստուած, դեռ պիտի խօսիս ազոր վրայ, քեզի ինչ, ես իմ ապարս նջանս եմ տուեր.—ընդհատեց տիկինը աւելի գրգռուած:

—Ինձի ինչ, հա, անանկ է ես, հօրդ տունէն բերի 20 ոսկինոց սպարանջանը...

—Հա, հարկաւ հօրս տունէն բերի—պատասխանից տիկինը ու բարկացած դուրս ելաւ:

Նազարէթ էֆէնդին քսակը ձեռքը, գլուխը երերցնելէն, պահ մի կնոջը ետեէն նայելէ ետքը, հանեց երկու ոսկի դրաւ սեղանին վրայ ու շարունակեց.

— Ասկէ աւելին չեմ կրնար տալ, աս ոչ սուաջին անգամն է և ոչ ալ վերջինս: Մինակ թէ՛ ինչպէս ըսի՝ չեմ ուզեր որ տեսարակին մէջ անուսա ըլլայ. իմ ձեռքովս ալ չեմ ուզեր գրբել, դուք գրեցէք քրիստոնեայ ոմն 2 ոսկի, կամ աւելի ճիշտը 23 ոսկի, երէկուան մէկ ոսկին ու տիկնոջս ապարանջանն ալ մէկտեղ հաշուելով:

— Փնոք քեզ Աստուած, վերջապէս դուրս ելանք, չնորհակալութիւն յայտնելով, չնորհակալութիւն մը, զոր ինք թերես նուէրին համար կարծեց, մինչդեռ անտանելի քարոզէն ազատեւնուս համար էր:

Կարծեմ մոռցայ յիշելու թէ էֆէնդինն ութ տարեկան պղզաբիկ որդին, որ մօրը հետ ներս եկած էր, սկիզբէն մինչև վերջը հետեցեալ մեր խօսակցութեան, ուշադրութիւն գրաւող հետաքրքրութեամբ մը: Իսկ երբ մենք սանդուղներէն վար կ'իջնէինք, ինք թռչունի պէս վար թռաւ մեր կողքէն և սան դուռը բանալով սպասեց:

Դուրս ելնելու միջոցին—պարոն Տիգրան—ըսաւ մեզմէ մէկուն և առանց խօսք մը աւելցնելու, պղտիկ քսակ մը երկընցուց:

— Աս ինչ է, Արամ—հարցուց պարոն Տիգրանը:

— Ան տղոց սուր—պատասխանեց փոքրիկը անմեղ շքփոթումով մը:

Քսակին ամբողջ պարունակութիւնը հինգ հատ արծաթէ նոր կտրուած փալիլուն քառսուն փարանոցներ էին:

— Ո՞ր տղոց—հարցուցի ես, պղտիկ դունչը բռնելով:

— Ան տղոց, որ կըսէիք թէ հայր մայր չունին, հայրերնին մայրերնին թիւրքերը մեռցուցին, իմ հայրիկս չմեռցուցին, նորէն կուտայ ինձի, բայց անոնք ալ հայրիկ չունին որ տայ. անանկ չէ...

Ուղեղս սանջող խուժանը մէկէնիմէկ հալածական դուրս փախաւ գլխէս, և ամենքս ալ գրկեցինք փոքրիկը ու համբուրեցինք:

Դրան առջև կեցած, դեռ կը նայէր մեր ետեէն, կարծես չէր ուզեր ներս երթալ, այլ մեզի հետ դալ կ'ուզէր, աչքով տեսնելու այն տղաքը, որ ալ ոչ հայր ունէին, ոչ մայր... երբ վերէն՝ պատուհանէն՝ հօրը ձայնը թնդաց.

— Ծ'օ Արամ, ներս եկուր, կը մըսիս:

Գ

Նազարէթ էֆէնդիէն ետքը, կարգը Մելքոն աղա Լու-
լուեանին էր: Ամբողջ քաղաքին մէջ կզական տիպ մը, որ ամեն
բանով արժանի է ընթերցողներուս մօտէն ներկայացուելու
պատուին:

Ապահով եմ որ այս ինքնօրինակ ազգայինը օր մը մեր
քաղաքը այցելէք, պիտի ուզէք անպատճառ անձամբ ալ տես-
նել զինք: Ուստի ձեզ աւելորդ զժուարութիւններու չմատնե-
լու համար, նախ և առաջ պիտի պատուիրեմ, որ չըլլայ թէ
Մելքոն աղա Լուլուեան անունով վնասէք զինք: Աս, լոկ պաշ-
տօնական և քաղաքավարական յորջորջում մըն է, զոր շատերը
չեն իսկ հասկնար, այլ պէտք է տալ այն անունը, որով ան
հանրածանօթ է: Պարզապէս—Լուլոնց Մելքոն:

Սակայն այս քիչ մը արհամարհական և շատերու համար
թերևս ծիծաղաշարժ անուանակոչութիւնը, աննշան կազմուած-
քով և մարմնական պահասութիւններով, ճզճիմ արարած մը
թնոջ չպատկերացնէ ձեր առջև: Ընդհակառակը. Լուլոնց Մել-
քոնը անշքան պատկառելի է իր արտաքինով, որ եթէ օրին
մէկը դիպուածով դիմացնիդ ելնէր, կարգաթող կամ ծպտուած
կայիսկոպոս մը պիտի կասկածէիք զինք:

Գլուխ մը, անշափ խոշոր, որ ամեն ուսերու գործ չէ կը-
րել. համապատասխան հաստութեամբ վիզ մը, կարծես Քրիս-
տոսի լուծ կրելու համար ստեղծուած. լայնանիստ թիկունք
մը, գրեթէ քառակուսի. փոր մը, որ շարժուն վիճակի մէջ իւ-
զով լցուած տիկի մը պէս կը հարուի: Իր սահմանները հետըզ-
հետէ ընդարձակող, լայնարաց ճակատ մը, այտերը գեղնագոյն՝
բայց լեցուն. աչքերը՝ թէև քիչ մը անգոյն ու անկենդան՝ բայց
խոշոր խոշոր. մեծ ակնոցին տակ թամբի ձև առած պարարտ
քիթ մը. բարակ, շէկ բեխեր. բերանը՝ կարծես սակաւ գործա-
ծութենէն՝ կծկծուած. իսկ կոլոր, մասւտ, երկյարկանի կզակը
միշտ մօրուքի սաղմերով սկսած: Ափսոս սակայն, որ մտեղէն
այս հոյակապ շէնքը իր բնական գեղեցկութենէն շատ բան կը
կորսընցնէ՝ զինք ծածկող պատեանին անշքութեանը երեսէն:
Հասարակ կտորէ լայն շարվար մը և մինչև ծունկերը իջնող,
կասկածելի գոյնով, մեծ վերարկու մը միայն կը կազմեն հա-
ղուստին արտաքին ամբողջութիւնը: Գլուխը կը ծածկէ ֆէս
մը, որ տարուան չորս եղանակներուն հետ գոյն կը փոխէ, իսկ
ոտքերը կը պատասպարեն այն տեսակ կօշիկներ, որոնցմէ՝ իր
ամբողջ կեանքին մէջ՝ առատուելն 10 զոյգ կարենալ մաշելու

համար, Լուլոնց Մեղքոնը ջրհեղեղէն առաջ՝ Մաթուաղաներու դարուն՝ պէտք է ծնած ըլլար, ան առեն ալ կարծեմ կօշիկի պէտք չպիտի ունենար: Եթէ կայ բան մը, որ անհասկանալի հակադրութիւն մը կը պոռայ այս շատ համեստ արդուզարդին քով, ան ալ Լուլոնց Մեղքոնին ակնոցն է... ոսկի ակնոցր:

Ձէ, պարապ տեղը գլուխնիդ մի տանջէք. այդպէս անցողակի կերպով չէք կրնար լուծել այս հանելուկը: Ես, որ ձեզմէ շատ աւելի կը հետաքրքրուէի ու կը տանջուէի այս հոգեբանական առեղծուածով, եթէ տարի շարունակ, գրեթէ ամբողջ արամադրելի ժամանակս, գերմանացի պրօֆէսորի մը համբերութեամբ՝ ասոր լուծումին վատնելէ ետքը, վերջիվերջոյ յոյսս կորելով, ելայ 500 դրուչի մրցանակ մը հաստատեցի այս նըպատակին համար: Մրցանակը բարեբաղդաբար ես շահեցայ վերջերս, բոլորովին գիպուածով: Ահա թէ ինչպէս:

Օրին մէկը, հեռաւոր գիւղէ մը քաղաք կը վերադառնայի ձիով, երբ իրումը մը հայ գիւղացիներու հանդիպեցայ. որոնք քաղաքին մէջ առուտունին վերջացուցած՝ գիւղերնին կը վերադառնային, իրենց պարապ էչերուն հեծած: Այս հեծելադուռնին էն առջևէն կը յառաջէր՝ մեծիակ սև իշու մը վրայ աշտանակած՝ տարէց գիւղացի մը, որ գաւազանին ծայրը խոտի տրցակ մը կապած, տակի անասունին աչքերուն առջև երկրնցուցած էր: Անմիջապէս ուշադրութիւնս գրաւեց այս նորօրինակ գործիքը, և երբ մօտեցանք, ձիս կեցուցի ու մեկնութիւն խնդրեցի գիւղացիէն:

— Չհասկցար, հա, աղա ջան—պատասխանեց գիւղացին հպարտ ծիծաղով մը—և գաւազանը ուսը դնելով էչը կեցուց— հա, հա, հա, չհասկցար հէ, հէլպէթ չես հասկնար, քաղքըցի չենք, ամա մենք ալ մեզի կէօրէ խելք ունինք: Սաղ իրեք տարի խելք եմ մաշեցուցեր ասոր համար, աս որ չըլլի որ ան, անիրաւը փէտի պէս եղած տեղը կը կենայ: Հա, տես:

Եւ սխաւ գաւազանին հակառակ ծայրովը կենդանիին վիզը խթել և սրունքներովը կողերը հարուածել ուժգնօրէն: Սակայն անասունը՝ փիլիսոփայի մը մտախոհութեամբ՝ անշարժ կեցած, հորիզոնը կը դիտէր: Յետոյ մողական գաւազանին դարձեալ նախկին դիրքը սուաւ, և ահա չորքոտանի փիլիսոփան մէկէնիմէկ սթափեցաւ, զսինչ մը արձակեց ու տըռչիկ տալով՝ Պեղասոսի պէս արշաւասոյր յառաջ սլացաւ ամբողջ խումբին ծիծաղներուն առջևէն:

Ի՞նչ յեղակարծ, հանձարեղ գործողութիւն էր, որ այդ վայրկեանին ուղեղիս մէջ կատարուեցաւ՝ ես ինքս ալ չեմ գիտեր: Միայն այսչափ գիտեմ որ՝

—Ահնայր, ակնայր.

Պտօթկաց յանկարձ բերնէս:

Սիկիլիացի փիլիսոփային էւրիկա էն աւելի խանդավառ աղաղակ մը, զոր խեղճ գիւղացին սխալ հասկնալով, իր հրեղէն աւանակը կրկին կեցուց պահ մը ու սրտաց հեռուէն.

—Ո՞ր Ակօնցը, աղան, որ Ակօնցը, իմա է, իմա, Աստուած վկայ իմա է. իրեք տարի է անիրաւին դարտ ու ըսլան կը քաշեմ:

Ու անմիջապէս իր գաւազանին ամբողջ մողական ուժը գործածելով, փախաւ քառարչաւ:

Կը խոտտովանիւմ այս մեծ գիւտիս առիթ տուող զիպուածը շատ վայելուչ չէ, բայց ինչ կրնամ ընել, երբ իրողութիւնը աս է: Ասկէ զատ, գիտական հետազոտութեան պահանջները կարելի չէ միշտ հաշտեցնել գեղեցկագիտութեան պայմաններուն հետ: Նիւթէս շեղելու վախ չըլլար, կրնայի անմիջապէս կարգ մը օրինակներ շարել ցունելու համար, որ շատ մը մեծ ու աշխարհ յեղաշրջող գիւտեր, ասկէ աւելի պակաս վայելուչ ու պակաս լուրջ զիպուածներու սրբատական ենք: Ասով մէկակող քաւլիցի ինծի, նմանութեան սեէ կըր մը փնտակ լուլնայ Մելքոնին և գիւղացիին անարդ աշխատաւորին միջև: Միմիայն գաւազանին ու ակնոցին միջև է որ հանդիպութիւն մը կը գտնեմ, և գիւտս ալ հող է անա: Եթէ օր մը Լաւոնց Մելքոնը անձամբ տեսնելու վայելքին արժանանանք, վատահ եմ դուք ալ պիտի վաւերացնէք իմ այս գիւտս: Խեղճ մարդը՝ հակառակ իր մարմնին դժուար տեղափոխելութեանը՝ ամբողջ օրը սարի վերայ է, կ'անցնի, կը գառնայ, առանց աջ ու ձախ նայելու, աչքերը միշտ իր ակնոցին ոսկի շրջանակներուն սևեռած:

Սովորաբար պատի տակերը և ամայի փողոցները կը նախընտրէ իր երթևեկին համար, որովհետև առանձնութիւն սիրող մարդ մըն է և ամբողջ քաղաքին մէջ ոչ մէկ մտերիմ բարեկամ ունի: Ազգային կեանքէն ու գործերէն ալ հեռու կ'ստորի, միայն կիրակիէ կիրակի ժամուն մէջ կը տեսնուի, զրան մօտ՝ կօշիկ հանելու սեղը՝ անկիւն մը կ'ծկաւած և հայր մերը երգուելուն պէս կ'անհետանայ: Թաղական կամ հողաբարձու ընտրուելու փառասիրութիւնն իսկ մինչև այսօր չէ կրցած մուտք գործել այս մարդուն մէջ:

Մեր քաղաքին էն հարուստ հայն է. մինչև անգամ Նազարէթ էֆէնտիէն ալ հարուստ, և ինչպէս կը խօսուի՝ առնուազն երկու անգամ հարուստ: Այս մեծ հարստութիւնը զխաւորաբար հայրն է զիզեր այնպիսի գործով մը, զոր ինչպէս կը պատմեն, լուսահողին ըսարեգործութիւն կը կոչէ եզեր: Դրամ

փոխ կ'ուտայ եղեր նեղութեան մէջ եղողներու և կը գրաւէ այն բոլոր սպերախտներուն կալուածները, որոնք իրենց առած դրամը ժամանակին չէին վերագարձներ: Որդին ալ՝ թէև մեր ծերերը կը պնդեն որ հօրը կէս յաջողութիւնն իսկ չ'ունի՝ բայց արդէն պատրաստ ժառանգած ըլլալով բարեկործական այս ձեռնարկութիւնը, հօրորդիական հարազատութեամբ ու ժրջանօրէն կը շարունակէ զայն: Եւ ահա ամեն բարեկործութեանց վարձահատոյցն Աստուած, ինչպէս հօրը, այնպէս ալ որդիին՝ վարձքը սալու համար, առանց անոր իր քովիկը ժամանելուն սպասելու, այս կանխիկ աշխարհին մէջ իսկ լիուլի կը վարձատրէ զինք ու հարստութիւնը ահագին համեմատութիւններով կ'աճի ու կ'աճի: Եթէ կայ բան մը, որ հասարակաց կարծիքին քիչ մը անհասկանալի ու անարդար կը թուեցնէ Աստուծոյ այս շապլութիւնը Լուլոնց Մեքքոնին նկատմամբ, ան ալ սա մտածումն է՝ թէ—ինչ պիտի ընէ այդչափ հարստութիւնը: Որովհետև Մեքքոնը աշխարհ մտած չէ և մտնելուն յոյս ալ չը կայ, քանի զեռ չեն փոփոխուած այն օրէնքները, որոնք Ադամէն սկսած մինչև այսօր պարտաւորիչ են բոլոր այդ աշխարհը մտնողներուն համար: Այն անբաւանալի պատճառով, որ բնութիւնը խեղճ մարդուն մարմինը ձօնազարդելու իր արտասովոր եռանդին մէջ, մտահան ըրած է... մէկ կէտր: Է՛հ, ի՞նչ ընէ—ամեն դեղեցիկութիւն մէկտեղ չը լլար—ըսեր են: Եւ անդաւակ ու անժառանգ այս մարդը, իր ամբողջ ոյժն ու ուշը հայրական ժառանգութիւնը աճեցնելու սեւեռամտածումին նուիրուած, բնաւ ուշագրութիւն չի դարձներ իր հաճոյքին ու հանգիստին: Չը նայելով որ պալատանման տուներու սեփականատէր, ինք միշտ իր հօրենական հին ու անշուք տանը մէջ կ'ապրի, ոմանց կարծիքով՝ օջախին բախար չը փախցնելու համար, թէև հանրութիւնը ժլատ հաշիւներու մէջ կը փնտռէ ագոր ալ պատճառը: Իր անձին ու ներքին կեանքին մասին հազար տեսակ մանրավէպեր կը շրջին բերնէբերան, ժլատ առելի, ծիծաղելի և միևնոյն ժամանակ խորհրդաւոր արարածի մը խառնուրդ ախլը ստեղծելով իրմէն: Ամեն տարի լուր մը կը տարածուի յանկարծ թէ՛ Լուլոնց Մեքքոնը փակուած ու կնքուած խոշոր ծրարի մը մէջ, գաղանօրէն իր կտակը յանձնած է Նազարէթ էֆէնտիին, իր մահէն ետքը բանալու և գործադրելու պայմանով: Եւ ահա ամբողջ ժողովուրդը անհամբար կտակին բացուելուն կը սպասէ, սակայն Լուլոնց Մեքքոնի տարին նոր լուր մը կը ձայնձնուի թէ՛ կտակը փոխեր է: Աւելցուցեր, թէ՛ պակասեցուցեր: Այդ մասին որչափ մարդիկ, այնչափ կարծիք:

Այս ներկայացումէն յետոյ, ընթերցողներս թերևս հարցը-

նեն թէ՛ ինչ խելքով մեր հանդանակութեան ցանկին երկրորդ տեղը բաղմնեցուցած էինք այսպիսի մարդու մը անունը: Իրաւոր, եթէ հասարակաց կարծիքին նայէինք, ազգային թուզթի ու թանաքի աննպատակ վատնում մը պիտի ըլլար, այդ անյուսադրելի անունին առհասարակ ուէ տողի մը վրայ արձանագրութիւնը: Իսկ ընկերներս թէև այդ աստիճան յոռետես չէին, բայց դարձեալ իրենց փորձառութեամբ խորհուրդ կուտային վերջին երեսը մայրնել, եթէ տեղ աւելանար: Սակայն ես, որ այսօրուան ուսումնասիրութիւններս զեռ չէի կատարած Մելքոնի մասին, բոլորովին տարբեր կը մտածէի:

Այդ մարդը՝ իր մասին շրջող բոլոր աննպատակ զրոյցներուն հակառակ՝ չողոքօրթ, շաղակրատ, հասարակ տեսակէն վաշխատու մը չէր ներկայանար իմ աչքիս: Իր լոխի, մնջիկ, առանձնասէր բնաւորութիւնը, սարօրինակ զարաուզութիւն մը, զոր կրցած էր իր արհեստին հետ հաշտեցնել՝ իր խոշոր զանգուածին մէջ կորսուած բարութեան խորհրդաւոր խորշ մը կասկածել կուտար ինծի: Այս կասկածիս աւելի ուժ կուտային ամեն տարի նորուզող կտակին պատմութիւնը և մանաւանդ նախընթաց օրինակ մը, որ զեռ չէր մոռցուած: Մելքոնին լուսահոգի հայրն ալ, ինչպէս յիշեցի, պակաս բամբասուած ու առելի մէկը չէր եղած, բայց այդ միևնոյն մարդը Հայաստանի մեծ սովին ասկէն, յանկարծ 1000 ոսկիի նուիրատուութեամբ մը ամենքը աղչեցուցած և զրեթէ ազգային բարերարի մը լուսապսակովը մնում էր: Արդ՝ ինչ իրաւունք ունէինք չուսալու, որ որդին՝ միւս յատկութիւններուն հետ՝ այդպիսի անակընկալի մը ընդունակութիւնն ալ կրնար ժառանգած ըլլալ հօրմէն. մանաւանդ որ ներկայ կայութիւնը անհամեմատ աւելի ցնցող էր, քան մեծ սովը: Հասարակաց կարծիքը շատ արդար չէր թւէր ինծի, բայց և այնպէս մինչև իսկ այդ կարծիքին մէջ յոյսի նշոյլ մը կար, բարեկործական խոշոր կտակի մը ակրնկալութիւնը: Գալով բամբասանքներուն, եթէ այդչափ բարակը փնտռէինք, քանի՛ հողի կրնայինք ջոկել մեր միւս հարուստներէն, որ արդար վաստակով հարստացած ըլլային ու իրաւունք ունենային Մելքոնին վրայ քար նետելու... Ու նոյն իսկ հասարակութեան այս ծայրայեղօրէն խիստ վերաբերումն էր թերևս, որ մարդը խրաչեցուցած ու մեկուսացուցած էր: Հաւաքելով, գիզելով ինչ պիտի ընէր վերջի վերջոյ, քանի որ իրմէ զատ մէկը չ'ունէր: Չէ որ ինքն ալ մարդ էր վերջապէս, հարկաւ կը մտածէր այս անխուսափելի հարցի մասին. ընդունելով նոյն իսկ որ սիրտ չ'ունէր, բայց և այնպէս խելք ունենալուն վրայ ոչ ոք չը կասկածէր: Մէկ խօսքով, չեմ գիտեր ինչ անբացա-

տրրելի նախագագայում մը կը վստահացնէր զիս թէ՛ այդ մարդէն բան մը պիտի ելնէ այս անգամ և մեծ բան մը: Այս մասին 90% յոյս ունէի, իմ մտածումս էր միայն այդ մեծ քանին յարմար ծրագիր մը գտնել և առ ալ գտած էի արդէն, մեծ որբանոց—արհեստանոց մը:

Ահա այս խորհրդածութիւններու և այս խոշոր ակրնկալութեան կոթնելով էր որ Լուլունց Մելքոնին անունը մեր հանգանակութեան ցանկին մինչև երկրորդ սողը կրցայ հանել: Նախ այն մտածումով որ այս անսովոր պատիւը, անարգուած ու ստորնացուած արժանապատուութիւնը պիտի զգուէր ու բարձրացնէր և երկրորդ՝ ևս ինքս կը հասնէի զործը ժամ մը առաջ գլուխ հանելու անհամբերութիւնէս:

Ե

Նորակառոյց երկյարկանի, գեղեցիկ, մեծ շէնք մը, ընդարձակ պարտէզ-բակով մը շրջապատուած: Արտաքին հոյաշէն զբրան երկու փեղկերը կոնակի վրայ բացուած են մուտք տալու համար ժողովուրդի հոսանքին, որ զեռ կը շարունակուի: Ներս մտնողներու առաջին նայուածքը կը զրուէ ներքին զրան ճակատին, դալար ոստերով զրասանցուած, սպիտակ մարմարի վրայ ոսկեզօծ տառերով հետեեալ արձանագրութիւնը.

Հաստատութիւնս այս կառուցաւ յամի Տեառն 1897 եւ տոմարական թուականին հայոց ՌՉԽԾ — ՌՉԽՂ, յառաջնորդութեան Տ. Մերսիսի բարեջան ծայրագոյն վարդապետի Տարօնեցոյ եւ եւ արդար արդեամբք եւ ծախիւք բարեժառանգ եւ բարեսէր Աղա Մելքոնի Լուլուեան, յանուն որոյ եւ կոչեցաւ Որբանոց-Արհեստանոց Լուլուեան:

Կարգալ գիացողները այս յուշատախտակին հանդէպ կը կենան պահ մը և գլխու ոգևոր օրօրումներով կը կարգան գայն, ներքողական բացազանչութիւններ փոխանակելով իրենց քովիններուն հետ: Դիտելու արժանի են մանաւանդ ձերերը. նախ յամրը ակնարկ մը կը վերցնեն տախտակին, կարծես սեղը նշան ընելու համար՝ և ապա ծանրաշարժ արարողութեամբ մը ակնոցնին հանելով քթերնուն կը գնեն ու սանուազն քստորդ ժամ մը ակնապիշ կը մնան, կարծես իւրաքանչիւր տառի վերայէն կ'անցնին աչքովնին, ճիշդ այն երկիւղած դժուարութեամբ, որով նարեկի նոր գլուխ մը պիտի կարգային: Իսկ անայբուրենները իրենց տգիտութեան վրայ ողբալու ժամանակ

չեն ունենար, անմիջապէս կը բոլորուին քանի մը հաճոյակատար հայրենակիցներու շուրջը, որոնք ինքնաբերաբար ինքզինքնին ասոնց տրամադրութեան տակ դրած են և միևնոյն ժամանակ առիթէն կ'օգտուին, զրարարի կասկածելի հմտութիւննին հրապարակ փակելով իրենց ունկնդիրները ապշեցնելու։ Հանդիսաւոր չեշտով մը կը կարգան արձանադրութիւնը, աշխարհաբարի կը թարգմանեն, մեկնութիւններ կուտան, բացատրութիւններ կ'աւելցնեն իրենց կողմէն, այնպիսի կարևոր ձևերով, որ կարծես հեթական նորագիւտ բեւեռագիր մը լուծէին։

Իրան սոռչի խոնուած այս ամբողջ բաղմութիւնը հետզհետէ ներս կ'ուզողուի։ Բայց վերջին խումբերը ալ չեն կրնար յառաջ շարժիլ։ Ներքնագաւիթը արդէն լեցուած է, հոս ալ ամեն ոք կը ջանայ արմուռնկով ճամպայ բանալ դէպի ներս, սակայն իզուր։ Փողանցքին մէջ բաղմութիւնը անթափանցելի պարիսպ մը երկարած է, մինչև դիմացի մեծ սրահը, որու լայնաբաց դռնէն երկի ու ճառի ձայներ դուրս կը խուժեն փոփոխակի։ Շատերը արդէն ներս անցնելէ յուսահատ՝ ետ կը դառնան, գէթ չէնքին միւս մասերը պտրտելու։

Սրահին մէջ ասեղ ձգելու տեղ չը կայ. բոլոր աթոռները դրաւուած են, իսկ ետի շարքերը՝ ոտքի մասներուն վրայ կոխելով՝ կարծես իրարու ուս կուղեն բարձրանալ, բան մը տեսնելու համար։ Ներքնակողմը մեծ, կլորակ սեղանի մը շուրջը կիսաբոլորակ մը կը կազմեն ազգային վարչական մարմիններու անդամները, իրենց մէջտեղը ունենալով ծերունազարդ վարդապետը։ Իրմացը՝ զպրոցական փայլուն նստարաններու վրայ շարուած են 7—15 տարեկան 50 աղայք, նոր համազգեստներու մէջ ժպտուն, իսկ երկու կողմը ասեղ բռնած են ազգային վարժարաններու երկսեռ աշակերտները, իրենց ուսուցիչներուն հետ։

Նորաչէն հաստատութեան բացման հանդէսն է։ Հանդիսաւոր պատարագէն յետոյ, զոր առաջնորդը մատուց յատկապէս հաստատութեան բարերարին ծնողներուն հողուն համար, հողհանդիստ կատարուեցաւ անոնց զերեզմանին վրայ, և ապա ամբողջ բաղմութիւնը դէպի նոր շէնքը ուղղուեցաւ։

Տնօրհնէքէն ետքը, վարդապետը բնաբան առնելով Յիսուսի խօսքը՝ «Ամէն, ասեմ՝ ձեզ, որովհետեւ արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք», յուզուած ու յուզիչ չեշտերով բացառեց բարեգործութեան հանդերձակ կեանքի մէջ զանեկիք վարձատրութիւնը և անոր վսեմ ու անխառն հաճոյքները նոյն իսկ այս աշխարհիս վրայ. վեր հանեց բարձր սուսքինութիւնները օրուան բարերարին, որ հազարաւոր սոկիներու ծախքով այս հոյակապ շէնքը կանգած էր և հարուստ

կտակով մը անոր զոյութիւնը մշանջննապէս ապահոված. յայտնեց որ թէև նոր հաստատութիւնը առ այժմ 50 որբեր միայն ունի, բայց շէնքը կրնար 150 հոգի պատասպարել, ու այդ թիւը չուտով պիտի լրացուէր. և խօսքը կնքեց սրտազին առատ մաղթանքներով, մեծ բարերարին ու անոր դաստակերտին համար:

Յետոյ յաջորդաբար խօսեցան քաղաքական ժողովի, թաղական և ուսումնական խորհուրդներու ատենապետները: Ազգային վարժարանի աշակերտներէն մէկ քանին արձակ և ոտանաւոր ուղերձներ կարդացին: Աշակերտական երգեցիկ խումբը մէջընդմէջ կ'երգէր, արտասանութիւններ կ'ըլլային, և մինչև իսկ վարախքնին կապել չը դիտցող մանկապարտէզի անուշ, թլուստ պզտիկներ իրենց մեներգներով ու արամախօսութիւններով հանդէսի փայլին կը նպաստէին:

Իսկ ժողովուրդը՝ աննկարագրելի խանդավառութենէն կարծես մոլեգնած՝ իւրաքանչիւր ճառ կամ ուղերձ որոտրնդոտ ծավահարուսթիւններով ու զոռ ազաղակներով կը վաւերացնէր: «Կեցցէ՛ բարերարը, կեցցէ՛ աղա Մեղքոնը, կեցցէ՛, կեցցէ՛» երկարածիւզ բացազանչութիւնը պարբերաբար շէնքը կը ցնցէ ու ամբողջ թաղին մէջ կ'արձագանգէ:

Իսկ օրուան հերոսը... մեծ բարերարը... անուներու պատահական նմանութիւն մը լսկ, թէ... բայց չէ, չէ, կասկած չըկայ, սա մեծազիր լուսանկարին նայեցէք, որ ոսկեզօծ շրջանակի մէջ՝ դիմացի պատը կը զարդարէ, սնն է, սնն է, ճիշդ ու ճիշդ մեր Լուլոնց Մեղքոնը: Բայց ինք ուր է, չըլլայ թէ... կըտակը բացուած ըլլայ վերջապէս... Հոս է, հոս, անս, հոն, վարդապետին աջ կողմը: Մեծ բազկաթոռի մը վրայ կծկտած, իր մարմինն պատկառելի զանգուածը ամիտիւելու, պզտիկնալու անկարելի ճիւղին մէջ է կարծես:

Խեղճ առանձնասէր, համեստ մարդը, շուարած այս արտասովոր ցոյցերուն առջև, որոնց միակ առարկան ինք է: Ձեռքերը կուրծքին, գլուխը վայրահակ, ոչխարային խոշոր, բարի աչքերովը հազիւ երբեմն գազաազոզի անկարկ մը կը սպըրդեցնէ դիմացը շարուած տղոց վրայ: Բայց զէմքը հոգեկան անպարտզիր երանութեան մը ակներև ճառագայթումովը կը ցուլայ: Մինչև իսկ արտաքինն ալ անհաւատալի այրակերպութեան մը ենթարկուած է: Մեծ վերարկուն ու շալվարը գերձակի խանութէն նոր կ'ըլլու ըլլալու խրոխտ երևոյթը ունին. ֆէսին ձկն ու գոյնը բոլորովին աարբեր են, և սովորաբար ածելիի կարօտ. երեսը այսօր յղկուած մարմարի պէս կը փայլի: Բոլոր աչքերը իրեն ուղղուած են, ամեն շարքերու մէջ փափսոսք մը ու երբեմն լսելի բացազանչութիւններ կը թռչտին իր հաս-

ցէին: Բոլոր ատելութիւնները, բոլոր արհամարհանքները, բարեգործութեան այդ մէկ հարուածովը փշրուած էին և տեղի տուած ճիշդ այն զգացումին, զոր երկար ատեն ատուած ու հալածուած սուրբի մը տեսքը պիտի արթնցընէր, զարձի եկող հալածիչներու սրտին մէջ: Հիմա, ամենէն աւելի բամբասած էին զինք. ոչ ոք մտքէն կ'անցընէր թէ մարդն է որ փոխուած է, ոչ. այլ ընդհակառակը ամենքն ալ այն զգացումը կը խանդաղատէր թէ՛ ան միշտ այսպէս բարի եղած է, միշտ այսպէս հեզ, և միայն իրենք են որ չէին կրցած ճանչնալ ու անարդար դատաստանով դատած էին խեղճ, անխօսուկ, բարեսիրտ մարդը: Ու հիմա արդար քառութեան և հանդիսաւոր հատուցումի օրն է—կեցցէ, կեցցէ Աղա Մելքոն, կեցցէ բարերարը:

Հապա ես: Է՛հ մի հարցնէք. զրեթէ օրուան երկրորդ հերոսն եմ: Հանդէսին տօնապետութիւնը ստանձնած, կ'անցնիմ, կը դատնամ, հրամաններ կ'արձակեմ, կարգազրուածիւններ կընեմ, հպարտ, ուրախ, ոգևոր: Չէ՞ որ ես էի հասարակաց կարծիքին կողմէ տգիտաբար ազդանոց նետուած այս խոշոր մարդարիտը երևան հանողը...

Խեղճ բարերարը վերջապէս կը ստիպուի ոտքի ելնել, համբ հանդիսաւորի դերին մէջ չմնալու համար: Սակայն հազիւ սելի ձայնով մը քանի մը խօսք միայն կը կարենայ թոթովել.

—Սիրելի հայրենակիցներս, չնորհակալ եմ, շատ չնորհակալ եմ. Աստուած մեզմէ դեռ շատերը աս ուրախութեան արժանացնէ:

Բայց այս անպաճոյճ, կցկտուր խօսքերը բոլոր ճառերէն աւելի տպաւորութիւն կը գործեն, և բազմութիւն բուռն ծափահարութիւններէ ընդարմացած՝ միաբերան ամէն-ներով կը ձայնակցի իրեն:

Այս միջոցին համազգեստաւոր 50 տղայքը խմբովին երգ մը կ'երգեն բարերարին ձօնուած, ապա տեղերնէն կ'եղնեն և կարգով կը մօտենան ու իրենց «բարերար-հայրիկ»ին ձեռքը կը համարուրեն: Աղա Մելքոն Լուլուեսնը, հակառակ իր ամբողջ ամօթխած ճիպին՝ չի կրնար իր արցունքը զսպել, խոշոր տղու հեկեկանքով կուլայ ու մէկիկ-մէկիկ կը դրկէ իր նոր զաւակները, որոնք նոյնպէս կը փռձկին: Աստուած զինք ամուսնական երջանկութիւնէն զրկեց, բայց ահա այսօր 50 որդի մէկէն կը պարգևէ: Բայց չէ, միայն ուրախութեան արտայայտութիւն չէ այդ արցունքը, որ տղայութեան շրջանը անցընելէն իվեր թերեւս առաջին անգամն ըլլալով իր գիրուկ այտերը կը թրջէ: Իր հեկեկանքին մէջ ցաւազին չեչտ մըն ալ կայ, դառն մորմուքը, որ այսչափ ուշ կը թևակոխէր հոգեկան այս անձառ երանու-

Թեան աշխարհը, մինչդեռ անոր բանալիները վաղուց ի վեր իր գրպանին մէջ կը ժանկոտէին:

Վարդապետը, կրկին քանի մը խօսքով և պահպանիչով հանդէսը կը փակէ ու իր քովիներուն հետ բարերարը կ'առաջնորդէ զէպի առաջնորդարան, ուր թաղական խորհուրդի կողմէ հացկերօյթ մը պատրաստուած է անոր իպատիւ: Սակայն հանգիստակները գիւրաւ ճամբայ չեն տար. իրար հրելով, հրմըտարկելով ամենքն ալ յառաջ անցնիլ կ'ուզեն, մօտէն տեսնելու այն մարդը, զոր ասիէ առաջ հազար անգամ տեսած էին զըզուանքով ու ծաղրանքով: Տարեցները ձեռքը կը թօթուեն, քանի մը խօսք ուղղելով, մէկ քանին նոյն իսկ կը համբուրուին հետը, մինչև անգամ քանի մը մայրեր իրենց պզտիկները դրկած կը մօտենան որ ձեռքը համբուրել տան...

Այս տեսարանին առջև ակամայ խորհրդածութիւն մը պաշարեց զըզուան:

Եթէ կեանքի կրկէսին մէջ ըտլոր մարդիկ՝ առանց բացառութեան՝ միմիայն իրենց անձնական ուժով ու արժանիքներով մրցելու հարկադրուած ըլլային, մեր անմահ բարերարներէն քանի քանիներ անձանօթ ու անյիշատակ կորսուած պիտի ըլլային հասարակ մահկանացուներու այն անփառունակ զանգուածին մէջ, զոր ժամանակի հոսանքը անդուլ կը քշէ կը տանի յաւիտենական մոռացութեան անդունդը... Եւ այս տեսակէն դեռ սրչափ մարդիկ կան մեր մէջ, որոնք՝ նորածինները բաշխող ժամկոչ-աղբօր և կամ կոյր բախտին սոսկ մէկ քմահաճոյքին չնորհիւ, այսօր ի վիճակի են առանց քրտինքի, առանց զրկանքի, առանց նեղութեան, լոկ ձեռքի մէկ շարժումով, իրենց անունները քանդակել տալու ազգային երախտազիտութեան սպառաժին վրայ, ինչն անուններուն քով, որոնց տէրերը ախանի ճիգերով, զրկանքի կեանքով ու հոգեմաշ տառապանքներով միայն կրցած են հոն արձանագրուիլ: Որչափ կան այս պիտիներ, որոնք սակայն չեն մտածեր, չեն ուզեր...

—Ո՞ր է՞...

Ականջիս թմբուկը թակող այս անդնդային խուլ ձայնը յանկարծ այնպէս մը ցնցեց զիս, որ ամբողջ գեղեցիկ պատկերը վայրկենապէս աչքէս անհետանալով, փոխարէնը Լուսնից Մեկընին խարխուլ տան գուռը ցցուեցաւ առջևս...

Նազարէթ էֆէնդիին տունէն ելնելէ ետքը, երևակայութիւնս՝ պզտիկ Արամին զէտքէն թռիչք առած՝ սկսած էր յոյսի ոլորտներուն մէջ թևապարել, հետեալաբար չէի նկատած որ արդէն Մեկընին տունը հասած էինք, ու ընկերներս գուռը կը զարնէին:

9

—Կարծես թէ Մելքոնին ձայնն էր, չէ՞—հարցուցի ընկերներուս, խելքս զուլխս ժողկելով:

—Հարցնելու պէտք կ'ար—պատասխանեց անոնցմէ մէկը, հանդոնակութեան տոմարը անութէն հանելով—ուրիշ սրճերանն է ինկեր այդ տեսակ ձայն հանել:

Տունն էր ուրեմն Հրճուանքի կտիկ մը անցաւ մարմնէս, սիրտս սկսաւ արտփել, շուտով պիտի վճռուէր, քիչ առաջուան տեսիլքս անմիտ ցնորք մըն էր լոկ, թէ իրականութեան նախապուշակ մրտապատկեր մը:

Այդ միջոցին դրան վերև պատուհանի նըմանող պզտիկ դռնակ մը բացուեցաւ, և նշմարուեցաւ գէմք մը, որուն արտաբաժներու սր դասին պատկանիլը չկրցանք որոշել, որովհետև դռնակը վայրկենաբար կրկին փակուեցաւ: Հինգ բոպէի չափ սպասեցինք, յուսալով որ այս լրտեսումէն յետոյ բացումը չըպիտի ուշանար, սակայն իզուր: Քանի մը ուժգին բախում, երկրորդ հինգ բոպէ մըն ալ սպասում, կրկին քանի մը ջղաձր-դային բախում և վերջապէս ոտքի ձայն լսուեցաւ դրան ետև, ու ցանկալի մուտքը բացաւ մէկը, որ քիչ առաջ վերևի ծակէն մեզ լրտեսողը ըլլալ կը թւէր:

Գիւղացիի տարազով, նիհար, երկայնահասակ երիտասարդ մըն էր: Կարմիր մազերով, երեսը գեղնադոյն բիծերով արատաւոր, քիթը՝ կարծես ճակատն ի վեր մազլցելու խօշ ճիղով մը՝ վեր պրկուած, սուեղերուն ամբողջ գաղտնիքը կը ցուցադրէր: Պզտոր-կաւրյտ աչքերէն մէկը կիսով չափ փակ էր, և գէմքը ընդհանրապէս քունէն նոր արթնցածի տպաւորութիւնը կը դործէր:

—Ազան տունը չէ՞—ըսաւ տարօրինակ արարածը, առանց մեր հարցումին սպասելու և դրան փեղկը բռնած, ոտքերովը այնպիսի անհանդիստ շարժումներ կ'ընէր, որ կարծես թէ գունդը վայրկեան մը առաջ փակելու անհամբերութենէն կը պարէր:

—Ի՞նչպէս թէ տունը չէ՞—գոչեցինք գրեթէ ամենքս միաբերան:

—Տունը չէ. քիչ մը առաջ դուրս ելաւ: Պահ մը իրարու երես նայեցանք ապշած:

—Հապա ս'ըր է՞—հարցուցի ևս, կասկածոտ նայուածք մը կախելով մարդուկին երեսն ի վար, որ ըստ երևոյթին՝ Լուլոնց Մելքոնին սպառաւորը ըլլալու պատիւը ունէր:

—Չեմ գիտեր, ըսաւ որ այսօր շատ ուշ կուգամ, կարելի

է հէջ չդամ՝ ըսաւ.—պատասխանեց գիւղացին և մասներով ըսկսաւ զրան բանալիի ծակին հետ խաղալ:

Առջի բերան կարծեր էի թէ աչքին մէկը կոյր է, սակայն սխալս շուտ նկատեցի, որովհետև քիչ մը ետքը փակ աչքը մէկէնիմէկ բացուեցաւ և փոխարէնը ամեջապէս միւսը փակուեցաւ: Կ'երևնայ թէ խնայողութեան համար աչքերը հերթով կը բանցընէր:

Ընկերներս ճարահատ, ետ դառնալու հակամէտ էին բայց ես առանց խնդիրը խորհրդակցութեան զննելու.—վնաս չունի, մենք կըսպասենք, կարելի է քիչ մը ետքը կուզայ—ըսի և կիսաբաց դուռը սպասաւորին ձեռքէն հրելով ներս մտայ, ընկերներս ալ առանց առարկութեան հետեցան ինձի:

Սպասաւորը այս անսպասելի որոշումս լսելուն պէս այնպիսի տաղնապով մը ներս քշեց, որ եթէ ուրիշ կասկած չ'ուներնայինք՝ պիտի կարծէինք թէ մեզ զողի տեղ զննելով տանիք կը վազէր, հաւար կանչելու: Բայց երբ խարխուլ սանդուղքներէն զգուշութեամբ, կամաց կամաց բարձրանալով վեր ելանք, ան կրկին մեզ զիմաւորեց, բաւական հանդարտած զէմքով, և մտցուց սենեակ մը, որ կ'երևնայ թէ իր աղային դահլիճն էր:

Գրեթէ քառակուսի, բաւական մեծ սենեակ մը, երեք պատուհանով, որոնցմէ երկուքը ետեի փողոցը կը նայէին, իսկ միւսը բակին վրայ: Պատերը անյիշատակ ժամանակներէ ի վեր ծեփիչի գոյութիւնը մոռցած կ'երևնային: Կահակարասիքի ամբողջութիւնը կը կազմէին հասարակ, զուսթափ կապերս մը, որ հակառակ իր բռնի առածուցութեան՝ չկրնալով յատակը ամբողջովին ծածկել, տակի խտիրին մէկ մասը մերկ ձգած էր: Դիմացի պատին երկայնքին արևելեան բաղնոց մը բարձերով, կողմնական պատերու տակ քանի մը հինումին աթոռներ, իսկ սենեակին մէջտեղը կլորակ մեծ սեղան մը, որու վրայ սիգարետով լեցուն կերակուրի պնակ մը և քանի մը մսխրամաններ ամայութիւնը պարտըկելու կ'աշխատէին:

Ընկերներս բաղնոցին վրայ շարուեցան, իսկ ես աթոռ մը առնելով բակին վրայ նայող պատուհանին առջև տեղ բռնեցի, ուրկէ կարելի էր զուրսի զրան վրայ հսկել:

Քաղաքավարի սպասաւորը՝ մեզի սիգարէտ հրամցընելէ ետքը՝ կրկին անհետացաւ:

—Է՛հ, ինչ խելքով ներս մտար—հարցուցին ինձի ընկերներս:

—Հապա ինչ կ'ուզէիք որ ընէինք, ետ դառնայինք:

—Անշուշտ աւելի լաւ էր ետ դառնայինք—ըսաւ Տիգրասը.—ուրիշ անգամ կրնայինք կրկին գալ:

—Ի՞նչպէս թէ ուրիշ անգամ, այս հաշուով յիսուն անգամ ալ գալու ըլլանք, աղան տունը չպիտի գտնենք. դուք ինձի ան ըսէք, երբ որ գուռը զարկիք, ո՞վ է պոսացողը տանտիրոջ ձայնը չէր:

—Տարակոյս չկայ որ Միլքոնին ձայնն էր—պատասխանեց մեր գանձապահը—անպիտանը անպատճառ ներսը պահուրտած է:

—Թող պահուրտի, ես հիմա զինք մէջտեղ կը հանեմ—ըսի ինքնավստահ չեչտով մը:

—Ի՞նչպէս կը հանես:

—Ինչպէս, շատ պարզ կերպով. հիմա պատրուակ մը բըռնելով ամբողջ տունը կը շրջեմ, դուք ալ հոս տան դրան վրայ կը հսկէք որ չըլլայ թէ գաղտագողի դուրս փախչի, և ուր որ է երևան կ'եկնէ:

—Բայց ատ քաղաքավարութեան հակառակ է—դիտել տուաւ մեր քաղաքավար ատենագլխիը:

—Կեցցե՛ս զո՛ւ, ինչ ալ աղէկ գտար քաղաքավարութիւնդ ծախելու տեղը, հապա որ քաղաքավարութեան համաձայն է տունը ըլլալ և այցելուները խարել...

—Եւ ան ալ այսչափ ապուշ կերպով—աւելցուց մեր գանձապահը, որ ինձմէ պակաս զրդուած չէր երևնար:

—Չդէ, աղբոր, ձդէ իսէր Աստուծոյ, ևլ գործերնուս երթանք—սկսան յորդորել միւսները—գետինն անցնի ինքն ալ, իր տակիք ստակն ալ. մենք արդէն առաջուց ըսինք քեզի որ այդ խողէն մագ մը անգամ չի փրթիր:

—Ձէ, անկարելի է, աս զոնէն դուրս չեմ ելներ, մինչև որ չխայտառակեմ անպիտանը—եղաւ իմ վերջնական վճիռս:

Ընկերներս չորս կողմէ վրաս թափած դեռ կը ջանային համոզել զիս, երբ բարեբաղդաբար սպասաւորը կրկին ներս մտնելով վիճաբանութիւնը ընդհատեցաւ:

Սուրճ կը բերէր: Իսկ այսչափ շուտ սուրճ բերելը «վայրկեան մը առաջ կորսուեցէք զնացէք»ի պատկերաւոր թարգմանութիւնն է մեր կողմը:

Սուրճէն ումպ մը սոռի, խմուելիք նեկտար չէր. բանի մը չնմանող համը կը մտանէր որ արդէն քանի մը անգամ եփուած պաղած և վերջին անգամ կրկին տաքցուած էր իպատիւ սեզի: Ընկերներս համը ճաշակելէ յետոյ իրենց բաժակները ետ տուին, իսկ ես իմ պատուհանին մէջ գրի և սրգարէտ մը վաւելով՝ անքաղաքավար ծրագրիս գործադրութիւնը յառաջաբանելու նպատակով քաղաքավարի խօսակցութիւն մը սկսայ ըստ սպասաւորին հետ, որ սուճի ափսէն լոճնած բաժակիս կըսպասէր:

—Աղբոր, անունդ ինչ է:

—Ղուևկիրանոս է, բայց ինչից կ'ըսեն—պատասխանեց զիւղացին, չնորհալի ժպիտ մը փորձելով:

—Այս սուրճը դո՛ւն ես եփեր, ինչից աղբար:

—Հրամանք ես, աղս ջան:

—Կեցցես, այսպէս սուրճ կտանքիս մէջ գեռ չէի խմեր:

Ղուևկիրանոսը այս compliment-էս շողոքորթուելով, ըսկտաւ իր ուրախութիւնը կենդանի կերպով արտայայտել. սաղի պէս մէյմը մէկ ստքին վրայ կը կենար, մէյմը միւս ստքին, ամեն անգամին ալ համապատասխան կողմի աչքը խփելով:

—Է՛, աղադ քեզի ամսական ի՛նչ կուտայ:

—Ամսական չեմ առներ, լուսահողի հայրս ժամանակին աղային հօրմէն ստակ էր փոխ առեր, չէր կրցեր տալ, պարտքը երթալով շատցեր էր, աղան մեր տունն ու հողը պիտի ծախէր, բայց մայրս ու աղբարներս շատ աղաչեցին, շատ լացին, աղան խղճաց չծախեց. շատ լաւ մարդ է, Աստուած գործը յաջողէ: Հիմա տարուէ տարի ցորեն կուտանք պարտքի տեղ, տոկոսի տեղ ալ աղային ծառայութիւն կ'ընենք. ձմեռը մեծ աղբարս կուգայ կը ծառայէ մինչև ցանքի ստեղծ, դարնան ալ ես մինչև կալուկասի վերջանալը: Բայց անցածները մեր գեղացի Դուրսունին մանչը կալին մէջ դանակով դարկեր է աղբօրս, աղբօր համար չկրցաւ դալ աս ձմեռ, ամիս մըն է պատկած է: Մեր աղան շատ քրիստոնեայ ողորմած մարդ է, շատ, շատ—կրկնեց ինչոն պարզամիտ հիացումի անկեղծ շեշտով մը—ուրիշը ըլլար, ունեցած շունեցածնիս ծախեր էր, բայց աղան չծախեց, մեղքըցաւ մեզի. Աստուած երկար կեանք տայ մեր աղային:

—Ամէն—պատասխանեցի ես, գլուխս շարժելով:

—Ա:իսոս որ աս տարի զիւղ չկրցայ երթալ—աւելցուց Ղուևկիրանոսը—ձմեռները գեղին ժամը տիրացութիւն կ'ընեմ:

Արդէն առաջին հարցումիս պատասխանէն հասկցած էի որ գիմացինս հասարակ զիւղացի մը չէր, քանի որ իր անունին ստուգարանութեանն իսկ հմուտ էր, սակայն իր այս անմեղ փառասիրութիւնը անուշաղիբ չլծողներու համար, բացաղանչեցի.

—Ի՛նչ կ'ըսես. ուրեմն կարգցո՞ղ ես:

—Հրամանք ես, եօնճալուցի Համբարձում վարժապետին քով եմ կարգցեր—պատասխանեց տիրացու ինչոն, յանկարծ երկու աչքերը մէկէն բանալով և այնպիսի հստատ ձեով մը, որ կարծես թէ աշխարհահ սչակ պրօֆէսօրի մը անունը կուտար:

Նկատեցի որ Համբարձում վարժապետին աշակերտը վրտանգաւոր անորժակ մը ցոյց կուտար իր ուսանողական սխաղործութիւնները պատմելու, ուստի՝ խօսքը իմ բուն նպատա-

կիս չըջելու համար՝ անմիջապէս սարքի կէայ, սուրճի բաժակը ավսէին մէջ դրի և հարցուցի.

—Տիրացու Խնկօ, աղադ մինակ մարդ է, սա տհազին տունը ի՞նչ կընէ:

—Ի՞նչ ընէ—պատասխանեց Խնկօն, որուն տիրացու տխուր մեծ փոխարինութիւն մը եղաւ իր ինքնակենսագրութիւնը չկարենալ շարունակելուն համար—պապուն օջախն է, չի ուղեր ձգել:

—Եթէ չի ուղեր ձգել, դո՞նէ թող նորոգել սոյ, սա ի՞նչ է, աւերակ է դարձեր:

—Շատ ստակ կ'երթայ, ազն ջան, շատ ստակ, 100 տարուան տուն է:

—Հարիւր տարուան, ուրեմն կատարեալ հնութիւն է. լաւ որ ըսիր, ես հնութիւններով շատ կը հետաքրքրուիմ, երթանք մէջմը չէնքին բոլոր մասերը ցոյց տուր տեսնեմ:

—Բան չկայ տեսնելու, ազն ջան, հէջ բան չկայ,—ըսաւ Խնկօն չփոթած և տան տարիքը յայտնելուն շարաշար յղջայցած—աւերակ է, ամենէն նոր սենեակը սա է:

—Վնաս չունի, ես կուզեմ տեսնել:

Խեղճ տիրացուն վայրկեան մը շուար մնալէ յետոյ, յանկարծ—հիմն կուզամ—ըսաւ ու սենեակէն դուրս վազեց այնպիսի շտապով մը, որ դրան արջև սուրճի բաժակներէն մէկ քանին ավսէէն վար ցատկելով ջարդու փշուր եղան:

Ի՞նչկերներս, որ մեծ զուարճութեամբ ականջ կը դնէին մեր խօսակցութեան, այս տեսարանին առջև ընդհանուր քրքիջ մը արձակեցին, բայց միևնոյն ժամանակ կարեկցութիւններն շարժուեցաւ, և կրկին սկսան յորդորել զիս որ հրաժարիմ անզութ զիտաւորութենէս: Իմ սիրտս ալ պակաս չէր շարժած անմեղ տիրացուին գծնդակ դերին վրայ, բայց բարկութիւնս աւելի մեծ էր:

—Դուք մի խառնուիք, քաղաքավարի տեղերնիդ նստեցէք, միայն թէ չմոռնար դուրսի դրան վրայ հսկել:

Եւ առանց Խնկօյի վերադարձին սպասելու ճամբայ ելայ... մեր ապագայ բարերարին գիւտը ընկու:

Հիւրասենեակէն դէպի տան ներքին կողմը տանող ճամբան շատ ապահով չէր երևնար: Յած, նեղ, ծուռումուռ փողանք մը, որու ծայրը մթութեան մէջ կը կորսուէր, առիքը տեղ տեղ կասկածելի կերպով փոր տուած էր, և պատերուն վրայ կախարդական խաղերու ձևով ճիւղաւորուած ճեղքերը կարծես մօտալուտ ազդաի մը սպառնալիքը կը խմբադրէին: Վարանումի մէջ էի, երբ մութին մէջ բանի մը խլրախլը նշմարե-

ցի ու յանկարծ մէկը ցատկեց առջիս... փառք Աստուծոյ, սատանայ չէր, ընդհակառակը, Սուրբ... Դունկիանոսն էր:

—Կը տեսնաս, աղանջան, պտրտելու տեղ չէ, ամբողջ աւերակ է—ըսաւ, իր եկած կողմը ցոյց տալով:

—Աւելի լաւ, արդէն ես ալ աւերակներու սիրահար եմ—պատասխանեցի տիրացուին կռնակը ձեռնելով:

Վտանգաւոր կիրճը անցնելով ողջ առողջ տան ներքնակողմը թափանցելէ ետքը, ալ առանց շատ վստահելու Խնկոյի կիկերոնութեանը վրայ, ձեռքովս կը բանայի հանդիպած բոլոր դռները և ոստիկաններուն իսկ նախանձը շարժելիք աչալըջութեամբ մը կը խուզարկէի ամեն ծակուծուկ: Սենեակներէն մէկ քանիի մէջ կտրտած անպէտք կահկարասիներ թափուած էին, մեծամասնութիւնը բոլորովին դատարկ էր, միակ բնակիչները սարգերն էին, որոնք պատերն ու առաստաղները անխռով ցանցած, բարդաւած դաղթականութիւններ հիմնած էին: Խնկոյին հարցուցի թէ աղան ինչ վարձ կ'առնէր ասոնցմէ, բայց որոշ տեղեկութիւն մը չկրցաւ տալ: Վերջապէս հասանք պզտիկ սենեակ մը, զոր միւսներու հետ համեմատելով՝ բաւական չքեղ կահաւորուած կարելի էր համարել:

Յատակը հասարակ խօսիրով մը ծածկուած, մէկ անկիւնը կապերտի մը վրայ անկողին մը փռուած էր, քովը պզտիկ աղտոտ սնտուկ մը, որու վրայ աշտանակ մը և կաշեկազմ հին նարեկ մը դրուած էին: Դիմացի անկիւնը փայտէ կոպիտ նըստարան մը և պատերէն մէկուն վրայ ալ պահարանի մը դռնակը կ'երևնար:

—Աղային սենեակն է—ըսաւ .Խնկոն և անկողնի սնարին վերև կախուած պատկեր մը վար առնելով, թեովը վրայի փոշին սըրբեց ու ձեռքս տուաւ: Փայտէ շրջանակի մէջ անցուած, հին, զեղնած լուսանկար մըն էր, վրայի պզտոր ապակիին տակէն հազիւ կը նշմարուէին խոշոր տղամարդ մը և կարճահասակ կին մը, երկուքն ալ տեղական տարազով, փայտէ արձաններու պէս քովքովի կանգնած:

—Ո՞վ են ասոնք, տիրացու:

—Մեր աղային հայրն ու մայրը—պատասխանեց տիրացուն երկիւղածութեամբ:

Ուրիշ առթիւ անշուշտ աւելի ուշադրութեամբ կը գլխալի Լուլոնց Մեղքոնին այդ զոյգ հեղինակները, սակայն հիման մեր փնդրածը իրենց գլուխ-գործոցն էր, ուստի չուա մը Խնկոյին վերագրածուցի լուսանկարը—Աստուած հոգինին լուսաւորէ—մըմնջելով և սկսայ սենեակը աչքէ անցընել: Անկողինը պարապ էր, իսկ սնդուկին կամ սրտի պզտիկ պահարանին մէջ հաւքի-

լիք բան չէր վնդործած: Կարծես արդէն սկսած էի հաւատալ, որ իսկապէս աղան տունը չէր, երբ ննջասնեակին զիմացը փոքրիկ դուռ մը նշմարելով, քայլերս հոն ուղղեցի բնագլաբար: Խնկօն, որ մինչև այդ ատեն համակերպական հանդարտութեամբ մը կընկերանար ինձի, երբեմն ատաջ անցնելով, երբեմն, ետ մնալով քայլերուս այս վերջին ուղղութիւնը նկատելուն կարծես խելքը զլլտէն թռաւ: Յանկարծ մէկ ոստումով առջես անցաւ, երեսը ինձի դարձնելով թեկը պարզեց և ողորմուկ ձայնով մը ճչեց:

—Հոգ բան չկայ, ազա ջան, հոգ բան չկայ... իրք է... բան է.....

Այս չփոթութիւնը սարսամ հախազգացումս որոշ կասկածի փոխեց, և քայլերս աւելի արագեցի, իսկ Խնկօն առանց զիրքը փոխելու ետետ կ'երթար, մինչև որ դուռը հասանք... Ընդհատ, խղզուկ շնչառութեան մը նմանող մշմշոյ մը կը լսուէր ներսէն: Արդէն ձեռքս երկնցուցած էի, երբ ախրացուն կռնակը զբան տուաւ, թեկը ինձի ցցեց, մէկ ոտքը վեր վերցուց և յուսահատ աղաղակ մը արձակեց... վայրկեան մը կարծես լեզուն կապուեցաւ, բայց անմիջապէս գերադոյն ճիղ մը ընելով կրցաւ շարունակել:

—Հոս բան չկայ, հոս... չէ, Աստուած վկայ բան չկայ...

Տարակոյս չկար, գտած էի. բայց այդ պահուն հաւատարիմ ծառան կէս սպառնական, կէս պաղատական՝ այնպիսի սրտառուչ զիրք մը առած էր, որ անմիջապէս զգացի թէ իր գիակին վրայ կոխելով միայն կարելի պիտի ըլլար խորհրդաւոր դռնէն ներս անցնել: Ձեռքս քաշեցի ու ետ դարձայ, մանաւանդ որ սնպիտանը այն տեսակ հաստատութիւն մը ապաստանած էր, որ ուռնաբարեկութիւնը միջազգային օրէնքով նուիրագործուած է:

Երբ կրկին հիւրասնեակը մտայ, կարօտելոց նպաստամատոց յանձնաժողովին անդամները ծիծաղելով տեղերնէն ցատկեցին:

—Հն, ինչ եղաւ:

—Ոչինչ, ելէք երթանք:

Սոժոռ դէմքով տրուած այս լակոնական պատասխանին վրայ զարմացած իրարու երես նայեցան, և անձայն վար իջանք: Խնկօն ուղտի քայլերով վազեց դուռը բացաւ. դէմքը իր նախկին անուշութիւնը առած էր վերստին, միայն թէ աչքերը հիմա աւելի ստեպ կը փոխէին իրենց հերթը, և ժպիտ մը վեր քաշած էր բերնին մէկ անկիւնը:

—Տիրացու, ինձի նայէ—ըսի դուրս կ'նկու միջոցին—երբ

աղագ տուն գայ, մեր կողմէն յաատուի բարի ըրէ և ըսէ որ մեզի սպասէ, ժամ մը ետքը նորէն պիտի գանք:—Բայց յանկարծ միտքս ինկաւ սուրճի բաժակներուն մեծ աղէտը, որու պատճառը ևս եղած էի, և որու երեսէն խեղճ տիրացուին ծառայութիւնը կրնար տարի մըն ալ երկարիլ, ուստի իսկոյն երկու հաս հինգ զրուշնոց հանելով զրօյանէս՝ աւելցուցի—ան առ և սուրճի կտորած բաժակներուն տեղ նորերը գնէ, որ աղագ էր բարկանայ վրայ:

Տիրացուն սկիզբը մերժելու շարժում մը ըրաւ, բայց շուտ մը առաւ զրամը և շնորհակալ բարեով մը պատասխանեց.

—Գլխուս վրայ, ազն ջան:

Արդէն ճաշի ժամանակ էր: Փողոցին մէջ ընկերներուս հետախուզութեանս արգիւնքը հազարդելէ յետոյ՝ ըսի.

—Դուք գնացէք ճաշեցէք, միայն հանդանակութեան տոմարը ինձի տուէք:

—Ի՞նչ պիտի ընես—հարցուցին ապշած:

—Ի՞նչ պիտի ընեմ, փողոցին մէջ պիտի սպասեմ մինչև խայտառակին օձիքը ձեռք անցնեմ:

—Հասցա եթէ տունէն դուրս չե՛նէ:

—Շան պէս կ'ե՛նէ. չը լսեցիք ինչ պատուիրեցի սպասաւորին, զիտմամբ ըսի ժամ մը յետոյ նորէն պիտի գանք, սր փախէն տունէն դուրս փախչի:

Այս անգամ առարկութիւն չըրին, տոմարը յանձնեցին ու գնացին, կէսօրէն ետքը հանգանակութիւնը շարունակելու համար առաջնորդարան ժամագրութիւն տալով:

Է

Տունէն քիչ մը հեռու, զիմացի կողմը գտնուող պզտիկ փողոցի մը անկիւնը դարանակալ կըսպասէի, հանգանակութեան տոմարը ձեռքս, աչքս շեշտակի զրան վրայ սեկած: Ծիչդ այն որսորդին պէս, սրու հալածած աղուէսը՝ բռնուելու վրայ՝ յանկարծ անմատչելի ծակ մը կը փախչի ու ինք՝ հրացանը ձեռքը՝ ծակին առջև կը յամառի կատաղած:

Խուլ զայրոյթ մը ջիզերս կը կրծէր: Որքանոց-արհեստանոցի սպանիական գզեակը՝ շինուելուն պէս ալ վայրկեանական խորտակումով մը՝ վար իջած էր, բայց յոյսս դեռ ոչ բոլորովին փարատած: Անարամաբանական, անարդարանալի կոյր հաւատք մը դեռ կը շարունակէր այն ակրնկալութեան տակ սլանել միտքս թէ՛ կրբ այդ մարդուն հետ երես երեսի գամ, խօսիմ, նկարա-

զըրեմ, բացատրեմ, պիտի կրնամ համոզել զինք և գէթ նշանակելի դուժար մը փրցնել: Մտքիս մէջ անգամ մըն ալ սկսայ վերարտադրել այն ճառը, զոր յատկապէս այս դիմումին համար պատրաստած և արդէն քանի մը անգամ մշակած էի: Այս անգամ բորբոքուած տրամադրութիւնս ամբողջական վերյարդարում մը առն տուաւ, մեղմ, թոյլ մասերը կուեց, պրկեց և տեղ տեղ այնպիսի սրտաշարժ դիմառնութիւններ աւելցուց սրտակոտոր զոհերու և տառապող թշուառներու բերնէն, որ ոչնորութեանս մէջ՝ իբր թէ արդէն մարդուն աջըը բլլայի՝ լսելի ձայնով արտասանել սկսայ, բարեբաղդաբար փողոցին մէջ անցուցարձ չը կար, թէ չէ...

Բայց անհ գուռը բացուեցաւ... Ինք է: Հնարքս իր նպատակին հասած էր, ժամացոյցս նայեցայ, քսան բողբոջէն աւելի չէի սպասած: Կամացուկ մը զլուխը դուրս հանելով՝ գողի պէս՝ փողոցին երկու կողմը լրտեսելէ ետքը, գուռը քաշեց և հապճեպ քայլերով՝ ըստ իր սովորութեան՝ պատի տակէն թաւայիլ սկսաւ: Իմ կողմն կուգար: Անմիջապէս թարստոցէս գուռս ցատկեցի և հանդարտօրէն՝ կարծես զինք նշմարած չըլլայի՝ առջևը ելայ:

Ձիս տեսնելուն պէս յանկարծ ցնցուեցաւ, ետ ու ստաջ քանի մը շփոթ շարժումներ րբաւ, բայց շուտ մը ինքզինք ժողվեց և խորին մեծարանքով մը բարեկց զիս:

—Բարեւ, Մեղքոն աղա, քիչ մը ստաջ նպաստամատոցյ յանձնաժողովի միւս ընկերներուն հետ Ձեզի եկած էինք, սակայն զժբաղդաբար պատիւ չունեցանք Ձեզ տեսնելու:

—Այն—պատասխանեց Մեղքոն աղան, ձեռքերը շփելով և աչքերը վեախն խոնարհած—քիչ մը դորձ ունէի, գուք նոր գացեր էիք, ես տուն եկայ. մտնչը լուր տուաւ:

—Կը ցաւիմ որ քիչ մըն ալ չենք սպասած. հիմա կրնանք պզտիկ տեսակցութիւն մը ունենալ, շատ չի տեկր, քանի մը բողբոջ գործ է:

—Կ'աղաչեմ, հրամայեք:

Գրպանէն բանալի մը հանելով՝ գուռը բացաւ, և միասին առն մտանք:

Մեզի ծանօթ հիւրասենեակին մէջ զիս բազմոցին վրայ հիւրասիրելէ և սիրարէտ մը հրամցնելէ ետքը, տանտէրը Խընկոյի ձայն տուաւ, որ սուրճ բերէ: Սուրճի անուճը լսելուն պէս ստամբաս գող ելաւ, և անմիջապէս ինդրեցի որ աւելորդ նեղութիւն չկրեն, պատրաստելով թէ արդէն քիչ մը ստաջ խմած էինք, և թէ բժշկական պատուէր ունէի սուրճ շատ չգործածելու:

Մեղքոն աղան ալ ստանց այդ իննյրին վրայ, ծանրանալով՝

աթոռ մը առնելով սեղանին ծայրը նստաւ, և ետ կրցայ անմիջապէս գործի սկսիլ:

Չգացումիս ու պերճախօսութեանս ամբողջ թափովը յիշեցուցի այն սոսկալի հարուածը, որ մեր գլխուն իջած էր, նրկարագրեցի անոր ամբողջ աճուկի հետեանքը. քանի մը օրուան մէջ սերունդներու աշխատութեան արդիւնքը ոչնչացած, բազմաթիւ շէն գիւղեր մոխրակոյտերու վերածուած, ընրաւ որ ժիր ու կարիճ դատականներ անվաստակ ու հացի կարօտ, հազարաւոր այրիացած մայրեր ու սրբացած մանուկներ անոք անօգնական: Բացատրեցի մարդու և հայու՝ մեր նուիրական պարտքը շուտախցթ օգնութեան ձեռք կարկանդակու այս թշուառներուն, մանաւանդ այն փոքրիկ անմեղ, դժբաղդ հրեշտակներուն, որոնք զիշերները զիրար գրկած՝ սալայատակներուն վրայ կը պառկէին, իրենց մայրերու ուրուականներուն հետ գտնանցելով և ջերեկը փոքոցի շուններուն հետ կը մրցէին սնունդի թափթըփուքներու համար: Ծանրացայ կրկնակի պարտականութեան վրայ այն բազաւորներուն, որոնք անձնապէս զերծ մնացած էին հարուածէն, որոնք գեւ առատ միջոցներ ունէին ապրելու, վայելելու և պէտք է որ ուրիշներն ալ գէթ սովէն փրկէին: Ենչտեցի մասնաւորապէս այն մեծ գերը, զոր ինք առանձնապէս կրնար այս պահուս կատարել խոշոր նպատակով մը թէ այս աշխարհի վրայ անթառամ յիշատակ և թէ հանդերձեալին մէջ յախանական կըջանկութիւն ապահովելով: Յոյց տուի թէ ինչ անքաւելի մեղք, ինչ սարսափելի սճրագործութիւն պիտի ըլլար անտարբերութիւնը այս միջոցին, երբ մինչև իսկ աննշան զոհողութիւններով մարդկային կեանքեր կարելի է փրկել ամեն վայրկեան: Եւ վերջապէս բարոյական այս բոլոր նկատումները մէկդի թողնելով, խնդիրը զուտ նիւթական շահու առտակէտով քննեցի: Չէ որ աշխարհը անցաւոր էր, իսկ ինք անդաւակ ու անժառանգ. մինչև հիմա ով կրցած էր հոս գիզած հարստութեանէն հետք քան մը տանիլ անդի աշխարհը զերեզմանի գեանտղիով. փոխադրութեան միակ և չափազանց շահաւոր միջոցը կը մնար զարձեալ բարեգործութիւնը, որ ընդապագայի սովորսով վճարելի փոխանակագիրներ կուտար երկնային զրամատան վրայ:

Սօսած միջոցիս Լուլոնց Մեղրոնին գէմքը կը զխալի ուշադիր, խօսքերուս տպաւորութիւնը նախադուշակելու համար: Ձեռքերը կուրծքին կապած, գլուխը կախ, կարճես աւետարանի տակ բռնած ըլլար՝ անշարժ նստած էր, լուս աղթսղի մը խովմունքով: Երբ խօսքս աւարակցի, սոսի ելայ և հանդանակութեան տամարը բանալով՝ սեղանին վրայ՝ առջևը դրի:

—Աստուած Ինք ողորմի, մարգոց ողորմութենէն ինչ կ'երնէ:

Այս մրմունջը միայն կրցայ լսել բերնէն: Առանց երեսս նայելու, մեծ վերարկուին մէկ կոճակը քակեց, տակէն արոյրէ դիվիթ-դալէմ*) մը դուրս ելաւ, գրչամանէն գրիչ մը հանեց, դիվիթ-դալէմը սեղանին վրայ դրաւ, թանաքամանին բերանը բացաւ, գրիչը քանի մը անգամ թաթխելով լաւ մը սողորեց և վերջապէս ատմարը առջևը քաշելով, դեղադրութեան վարժութիւն ընող աշակերտի մը խնամքով սկսաւ գրել:

Այս սովորական, աննշան մանրամասնութիւնները այդ պահուն այնպիսի խորհրդաւորութիւն մը առած էին աչքիս առջև, որ կարծես ճակատագիրս դուշակող վնասի մը արարողութիւնները ըլլային: Իսկ երբ գրիչը շարժիլ սկսաւ, ուժգին տըրտիւսմ մը առաւ սիրտս, չունչս բռնուեցաւ և ականջներս գըրչածայրի ճղոցին լարուած՝ կարծես ճիգ կը թափէին աչքերէս առաջ դուշակելու անոր աւրուած կաուցէն դժուարութեամբ ծորող՝ հաղարտոր թշուառներու համար գրելիք ճակատագրական՝ թւանշաններու Ու ճղոցը գազրելուն պէս ատմարին վրայ յարձակեցայ:

...Մէյմը ատմարին կը նայիմ, մէյմը գրողին երեսը... գլուխըս սկսաւ պտոյտ դալ, աչքերուս վրայ մթութիւն մը իջաւ, դիւահարի պէս պատահանին առջև վաղեցի, ատմարը լոյսին բռնելու... չէ, աչքերս չէին խաբեր գիս, մազաղաթային նօսարագըրով մը դրոշմուած էր՝

—Հոգոս համար մէկ արծաթ մէճիտ:

ԱՌԱՆՁԱՐ

15 փետրուարի 1963 թ.

*) Դիվիթ-դալէմ—մասնաւորապէս դօտիլի մէջ կրելու համար մետաղէ շինուած, կրկար փողով թանաքաման-գրչաման մը:

ԸՆԹԵՐՅՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ԳԱՆՈՒՆԵՐՈՒՄ

Անցեալ տարուայ (№ 11) մեր մի յօդուածում մենք ցոյց տուինք, թէ ինչ վիճակի մէջ է ընթերցանութեան գործը Ասոր-պատականի մայրաքաղաք՝ Թաւրիզում և առաջ բերուած ֆակտերից և թւերից տեսնանք, որ ժողովրդի համար ընթերցանութիւնը դեռ պահանջ չէ դարձել: Դորանից յետոյ դժուար չէ գուշակել, թէ ինչ պէտք է ներկայացնեն գաւառներն այդ կողմից: Բովանդակ Ատրպատականում—չը հաշուած Թաւրիզը —միմիայն մի քանի գրադարան-ընթերցարան կայ, իսկ գրանցից էլ միայն մի երկուօր կանոնաւոր և բարելաւ վիճակի մէջ: Առաջ բերենք փաստեր:

Սկսենք Սալմաստից, որը այս կողմից՝ համեմատած միւս գաւառների հետ՝ աւելի բախտաւոր է: Այնտեղ կայ չորս գրադարան-ընթերցարան, որոնք գտնուած են Ղալասար, Հաֆթվան, Հին-քաղաք և Մահլամ գիւղերում *):

Ղալասար գիւղի «Արծրունեան» գրադարան-ընթերցարանը հիմնուած է 1899 թւի ապրիլին, Ղալասարի երիտասարդութեան նախաձեռնութեամբ: «Արծրունի» գրադարան-ընթերցարանը ունի երեք կարգի անդամներ—սովորական, մշտական և պատուաւոր: Սովորական անդամներ համարուած են նրանք, որոնք տարեկան միանուագ վճարում են 10 զրան անդամավճար: Մշտական անդամներ նրանք են, որոնք միանուագ վճարում են 10 թուման (18 ռ.), իսկ պատուաւոր անդամներ համարուած են նրանք, որոնք գրադարան-ընթերցարանին մի օրե է բարոյական և նիւթական

*) Ինչպէս Սալմաստի, նոյնպէս է և Խոյի, Ուրմիի, Մարաղայի, Արզարիլի և Մուսուրարի ներկայ ընթերցանութեան գործի մասին տեղեկութիւններ եմ ստացել զբաղարանների վարչութիւններից և ղեկավարներից: Պարտք եմ զգում հրապարակով շնորհակալութիւններս յայտնել նրանց: Ե. Ք.

նշանաւոր աջակցութիւն ցոյց կը տան: Ընդհանուր ժողովն է ընտրում պատուաւոր անդամ:

Ղալասարի «Արծրունի» գրադարան-ընթերցարանը այժմ ունի 2 պատուաւոր, 2 մշտական և 10 էլ սովորական անդամներ: Բացի այս երեք կարգ անդամներից, ընդունւում են նաև ամսական բաժանորդ-անդամներ, որոնք ամսական մէկ զուան (20 կ.) վճարելով, օգտոււմ են գրադարան-ընթերցարանից նոյն իրաւունքներով, ինչ վայելում են մշտական և սովորական անդամները: Ընթերցարանի մուտքի վճարն է 1 շահի (1 կոպ.), այս վճարից ազատ են սովորական, մշտական և պատուաւոր անդամները:

Այս գրադարան-ընթերցարանից ոչ միայն իրաւունք ունեն օգտուելու ղալասարցիները, այլ և շրջակայ գիւղերը, միայն այն պայմաններով որ թողնեն գրադարանապետի մօտ մշտական 5 զուանի գրաւական, կամ ղալասարցիներից մէկնումէկին և րաշխաւոր ներկայացնեն:

Գրադարան-ընթերցարանի համար մի հիմնական գրամալը-լուխ ստեղծելու նպատակով իննայւում է տարեկան ընդհանուր եկամուտի 50/0-ը:

«Արծրունի» գրադարան-ընթերցարանը այժմ շատ աղքատ է (300 կտոր գիրք), այնպէս որ հնարաւորութիւն չունի աւելի լայն չափերով տարածել ընթերցանութիւնը: Ժողովուրդը կարգում է ամեն տեսակի գրքեր, բայց զլիաւորապէս վիպական գրուածքները:

Այս գրադարան-ընթերցարանում ստացւում է «Մշակ», «Մուրճ», «Անահիտ», «Պատանի», «Շարժում» և այլն, և բոլորը ուղարկւում են ձրխաբար: Իսկ ընթերցասիրութիւն առաջ բերելու համար գրքերի այդ խղճուկ քանակութիւնը, մութացկանութեամբ թերթ ստանալը անբաւարար են, անհրաժեշտ է աւելի ու աւելի ճոխացնել, բայց այդ բանը վեր է «Արծրունի» գրադարան-ընթերցարանի ոյժից, պէտք է զգացուում նաև կողմընակի օգնութեան:

Սալմաստի Հաֆթվան գիւղի գրադարան-ընթերցարանը կարելի է համարել ամենահինը. հիմնուած է 1886 թ.ի մարտի 16-ին: Այդպան տարիների ընթացքում մի քանի անգամ փակուել, էլի բացուել է: Այս գրադարան-ընթերցարանի հիմնադիրը և կազմակերպողը եղել է հանգուցել Վարդան Գօլօշեանը, որի ժամանակ այդ ձեռնարկութիւնը աւելի ծաղկած էր և աւելի լայն ծրագիրներ ու լայն նպատակներ ունէր: Այդ ձեռնարկութիւնը կոչւում էր «Սալմաստի գրասիրաց ընկերութիւն» և նպատակն էր ընթերցանութիւնը տարածելուց զատ նաև

գրագիտութիւն սովորեցնել, նպաստել Սալմաստի հայազգաբընակութեան մտաւոր և բարոյական զորոգացմանը, իր կարողութեան համեմատ տալ ժողովրդական դասախօսութիւններ թէ իր շրջանում և թէ ուրիշ գիւղերում: Հաֆթվանը Սալմաստի ամենահայաշատ գիւղն է, ունի մօտ 500 սուռն, այնինչ Ղալասարը ունի միայն 100 սուռն, դեռ գաղթականներն էլ հաշւած:

Հաֆթվանի գրադարան-ընթերցարանն էլ որ ունի այժմ մօտ 700 կտոր գիրք, ունի նոյն երեք կարգի անդամները, թւով 30: Վեց ամսուայ ընթացքում, յունիսից սկսած մինչև նոյեմբեր, կարդացուել է 500 գիրք: Այստեղ էլ գերակշռող ակզը բռնում է բլլեարիստիկան: Այս գրադարանը ստանում է «Մշակ», «Մուրճ» և արտասահմանեան երկու թերթ: Այստեղ էլ ընդունուել է խնայողական բաժինը. ընկերութեան հասոյթների կէսը տրւում է % -ով ընկերութեան անունով, և այդ պահեստի գրամից կարելի է ծախսել միայն ընդհանուր ժողովի որոշմամբ: Լուծուելու գէպքում այս հիմնարկութեան բոլոր գնչքը և գրամը պէտք է յանձնել Հաֆթվանի ազգային ուսումնարանին:

Հին-քաղաքի «Գ. Ջանչեան» գրադարան-ընթերցարանը թէև նոր է հիմնուել, 1901 թւին, այ. Մ. Փիրանեանի նախաձեռնութեամբ, բայց կարճ միջոցում ձեռք բերաւ 700 կտոր գիրք զանազան լեզուներով (մեծադոյն մասը ի հարկէ հայերէն է), և 19 անդամ. տարեկան միջին թւով կարդացուում է 300 կտոր գիրք, ստացուում է Կովկասի թերթերից միայն «Մշակ» և արտասահմանեան մի երկու թերթ, որ միանգամայն անբաւարար է:

Գալով Մաճլումի գրադարանին, պէտք է ցաւելով ասել, որ միմիայն անունով գոյութիւն ունի, թէև երկար տարիներ է, ինչ հաստատուել է: Գրքերը թէև շատ քիչ են, բայց գրանք բոլորովին մատնուած են անգործածութեան և թափթփուած փոշու մէջ, ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում: Այս գրադարանը հիմնել են տեղական երիտասարդները և մաճլամցի մի խումբ պանդուխտներ, ունի մօտ 800 բուքլի, որ գումարել են այդ պանդուխտները, և այժմ այդ գումարը գտնուում է Ռուսաստանում մի քանի պանդուխտների մօտ: Պէտք է մտածել իր նըպատակին ծառայեցնելու այդ գումարը:

Դեռ 1894 թւին ֆայաջուկում հիմնուում է «Բաֆֆի» գրադարանական ընկերութիւնը, բայց միայն երկու տարի է շարունակուում: Թէև 1897 և 1899 թւականներին փորձեր եղել են նորից կազմակերպելու, բայց ազարգիւն են անցնում, այդ էլ շնորհիւ այն բանի, որ ֆայաջուկը զուրկ է ղեկավար ոյժն-

րից և երիտասարդներից, որոնք չափ աննշան բացառութեամբ գտնուում են օտարութեան մէջ, գիւղում մնացել են ծերունիներ, կանաչք երեխաներ...

Ահա բովանդակ Սալմաստի, Ատրպատականի այդ ընդարձակ և հայաչափ դաւառի գրագրարան-ընթերցարանների վիճակը: Այդ խղճուկ պատկերը աւելի կատարեալ կը դառնայ, եթէ ասենք, որ մասնաւոր գրագրարաններ գրեթէ չը կան, պարբերական հրատարակութիւններ՝ հողմնակի անձինք չափ քիչ են ըստանում. ամբողջ Սալմաստում՝ չը հաշւած գրագրարանները՝ ստացւում է միմիայն 8—10 օրինակ «Մշակ», 1—2 օրինակ «Նոր-Դար», 1—2 օրինակ «Մուրճ», և ոչ մի «Աղբիւր» և «Տարազ», իսկ արտասահմանեան թերթեր գրեթէ չեն ստացւում: Ահա մօտ 10,000 բնակիչ ունեցող հայ ազգաբնակչութեան ընթերցանութեան գործը:

Այժմ անցնենք Ուրմիի գաւառին: Ուրմի ընդարձակ գաւառում, ուր կայ մօտ 4500 բնակիչ, միմիայն մի գրադարան-ընթերցարան կայ, այն էլ հիմնուել է 1901 թւականին: Այդ գրագրարան ընթերցարանը, որ կոչւում է «Ուրմիի «Ջանչեան» ընթ. ընկերութեան գրագրարան», ունի 300—400 գրքեր և ըստանում է հետեւեալ պարբերական հրատարակութիւնները.— «Մուրճ», «Բաղմալէպ», «Գեղունի», «Մշակ», «Նոր-Դար» և մի երկու արտասահմանեան թերթեր: «Գ. Ջանչեան» գրագրարան-ընթերցարանը գտնուում է Ուրմի քաղաքում, գիւղերում ոչինչ չը կայ, նոյն այդ վիճակն է և Ուրմիին մօտիկ գտնուած Բարանդուզ գաւառամասում, չը կայ ոչ մի գրագրարան: Գրագրարանից դուրս չափ քչերն են պարբերական հրատարակութիւններ ստանում: Այս գրագրարանը ունի միմիայն 20—25 ընթերցողներ, ոչ աւելի: Ահա գառն իրականութիւնը, մօտ 5500 բնակիչը, Ուրմիի հետ հաշւած նաև Բարանդուզը, ունեն միմիայն մէկ գրադարան:

Ուրմի գաւառը, գրա հետ և Բարանդուզը գտնէ մի զբոսգարան ունեն, բայց ուրիշ տեղերում այդ էլ չը կայ: Ընդարձակ Ղարաղաղը, որ փառաւոր անցեալ և այժմ մօտ 6,000 հայ բնակիչ ունի, չունի եւ ոչ մի գրադարան: Այնտեղ չէ ստացւում և ոչ մի պարբերական հրատարակութիւն:

Մակուի իսնութեան մէջ էլ չը կայ ոչ մի գրագրարան: Էլ լինէ ասենք իսպառ մոռացուած պարսկական Գիւրգոստան, Սուլբուզ, Սուլբուզ-Բուլբուզ գաւառամասերի հայերի մասին...

Շատ աւելի միլիթարական է ընթերցանութեան գործը Մարաղայում, որ սահմանակից է այդ գաւառներին: Դեռ անցեալում Մարաղան ունեցել է «Կրթական» ընկերութիւն և իր

գրադարան-ընթերցարանի միջոցով տարածում էր ընթերցանութիւն, բայց յետոյ վազուում է այդ գրադարանը: Մի քանի ընթերցասէր անձնաւորութիւններ զգալով այդ պակասը և այգպիսի մի հաստատութեան անհրաժեշտութիւնը, պ. Մ. Բաղդասարեանի նախաձեռնութեամբ 1902 թ. ապրիլին կազմակերպւում է գրադարան-ընթերցարան, և որովհետև հէնց այդ ժամանակներումն էր, որ մեռաւ Ալ. Երիցեանը, յարգելով նրա յիշատակը, անուանում են գրադարանը «Ալ. Երիցեան»:

Նորակառոյց «Ալ. Երիցեան» գրադարան-ընթերցարանի վարչութեանն է յանձնւում «Կրթական» ընկերութեան 405 կրտոր դիրքը, և անմիջապէս սկսում են գործը: Առաջ է տարւում ընթերցանութեան գործը մեծ եռանդով, լի հաւատով: Վարչութիւնը դիմում է նաև այս և այն անձնաւորութեան և ինչպէս նրանց աջակցութիւնը. նոյնպէս և տիկին Ս. Երիցեանին ևն զմում, որից ստանում են Ալ. Երիցեանի աշխատութիւններից 25 կտոր:

Այժմ Մարաղայի «Ալ. Երիցեան» գրադարան-ընթերցարանը ունի 514 կտոր դիրք. ստանում է հետեւեալ պարբերական հրատարակութիւնները.—ամսագիրներ՝ «Մուրճ», «Ռանասէր» և «Գեղունի», օրաթերթեր՝ «Մշակ» և «Նոր-Դար»: Այս գրադարան-ընթերցարանը առաջին կիսաշրջանում, այսինքն ապրիլից մինչև սեպտեմբեր, ունեցել է 24 անդամ. գրադարան-ընթերցարանը բաց է լինում շաբաթը չորս անգամ:

Շնորհիւ գործի գլուխ անցած եռանդուն գործիչների՝ զրքերը կարգացւում են մեծ հետաքրքրութեամբ, և ընթերցանութեան ողին աւելի ու աւելի, զգալի կերպով ծաւալւում և տարածւում է ժողովրդի մէջ: «Ալ. Երիցեան» գրադարան-ընթերցարանը մի մեծ բարիք է ոչ միայն Մարաղայի հայերի համար, այլ և շրջակայ գաւառակների և գիւղերի:

Նւ իսկապէս. «Ալ. Երիցեան» գրադարան-ընթերցարանի վարչութիւնը նպատակ է դրել ընթերցանութիւն տարածել նաև Սօուչ-բուլաղ, Միանդաբ գաւառամասերում. անշուշտ ժամանակի ընթացքում իր ծրագրի մէջ կը մտնէ և Սուլչուղը: Նա չէ բաւականանալու միայն ընթերցանութիւնով, այլ և մտադիր է գրագիտութիւն տարածել:

Խոյ գաւառն էլ գրեթէ նոյն պատկերն է ներկայացնում ընթերցանութեան կողմից, ինչ Ղարաղաղը, Սօուչ-Բուլաղ և այլն: Գիւղերում գոյութիւն չունի գրադարան-ընթերցարան, չը կայ մտաւոր շարժում, ժողովրդի անտարբերութիւնը հասնում է անասնական աստիճանի. նա նիւթապաշտ է, տղէտ և իչայած: Ամբողջ գաւառում, ուր կայ 1900 ընակիչ, որոնք

ապրում են 7 գիւղերում, միմիայն մի գրադարան-ընթերցարան գոյութիւն ունի, որ գտնուում է քաղաքում, այն էլ 1902 թւականին հիմնւած: Խոյի «Ս. Նաղարեան» գրադարան-ընթերցարանը, որ կազմակերպուել է ուսուցչի և տեղացի մի երկու երիտասարդների ջանքերով, ունի այժմ շատ աննշան քանակութեամբ գրքեր և սակաւաթիւ յաճախորդներ:

Արգաթիլ քաղաքը և Մուժումբար գիւղն էլ կարելի է Մարազայի շարքում հաշուել: Մուժումբարը, որ Թաւրիզից դէպի հիւսիս է ընկնում և 6 ժամուայ ճանապարհ է, զուտ հայաբնակ է և ունի 120 տուն: Այնտեղի «Հայկազեան» գրադարան-ընթերցարանը, որը դեռ նոր է կազմուած, ունի 299 կտոր գիրք, որից 160 կտորը մանկական գրուածքներ են և վէպեր, իսկ մնացած 139 կտորը ընդհանուր ընթերցանութեան գրքեր, օրինակ պիէսները, ամսագրեր, գիտական, ատողջապահական գրքեր և այլն: Իսկ Արգաթիլի գրադարան-ընթերցանը, որը մօտ 10 տարի է, ինչ հիմնուել է, թէև անցեալում, երբ երիտասարդ գործակատարներ կային, շատ ծաղկած վիճակի մէջ է եղել, մանաւանդ ընթերցարանը, բայց այժմ միանգամայն աննախանձելի և անմխիթար դրութեան մէջ է, չկան ղեկավար սյփերը, գործը մնացել է համարեա թէ երեսի վրայ, չը կան առանձին նուիրուած ղեկավար և հոյ տանող: Արգաթիլի գրադարան-ընթերցարանը այժմ ունի մօտ 300 չափ գրքեր, մեծագոյն մասը վիսպական և մանկական, բոլորն էլ հայերէն, ստացուում է «Մըշակ», «Տարագ» և երբեմն «Նոր-Դար»:

Յօդուածս վերջացնելով, ես դիմում եմ մեր նուիրատուներին, խմբագրութիւններնս, հայ հեղինակներին և թարգմանիչներին, խնդրում, որ չը զլանան օգնութեան հասնել այս կորած, մոլորուած ժողովրդին. թող շտապեն ուղարկել իրանց թերթերից, հեղինակութիւններից և թարգմանութիւններից *), որով ահադին ծնողայութիւն կատարած կը լինեն մեր ժողովրդի մտաւոր առաջադիմութեան գործում: Ինքը հայ՝ գաւառական ժողովուրդը ազքատ է, թշուաւ է, հարստահարուած և անկարող է իր սյփերով հոգալ մի կարիք, որի կարեորութիւնը դեռ չէ հասկանում:

ԵՐ. ՅՐԱՆԳԵԱՆՑ

*) Գրադարան-ընթերցարանների հասցէները, կարծում եմ՝ պարզ են, գնիլ գաւառը, գիւղը և գրադարանի անունը: Կարող են ուղարկել նաև իմ հասցէով, որ անմիջապէս կ'աշխատեմ հասցնել ուր հարկն է, մանաւանդ Մուժումբար գիւղը, ուր չը կայ փոստ, պէտք է այդպէս անել: Իմ հասցէն է՝ Тавризь (Персія) Лилава, учителю Ерванду Франгянцъ.

Ե Ր Ա Ձ*)

Լ Օ Ր Գ Բ Ա Յ Ր Օ Ն Ի

I

Երկու էութիւն ունի մեր կեանքը.
Եւ քունն էլ ունի սեպհական աշխարհ.
Մի սահման է նա այն բաների մէջ,
Որոնց թիւր կերպով մենք անուանում ենք
կեանք և մահ: Քունն էլ իր աշխարհն ունի,
—Մի մեծ պետութիւն խօլ և իրական.
Եւ երազները իրանց ընթացքում
Ունեն շունչ և վիշտ, և տանջանք, և լաց,
Եւ ուրախութեան զգացողութիւն:
Նըրանք թողնում են մի կերպ ծանրութիւն
Նոյն իսկ արթնութեան մտքերի վերայ.
Նըրանք բառնում են յաճախ ծանրութիւն

*) «Նրազը» Լօրդ Բայրօնի այն գրուածներից մէկն է, որի մէջ նա գրել է իր հոգին. եւ, ինչպէս թովմաս Մուր բանաստեղծը նկատել է, «Բայրօնը պէտք է շատ աղի արտասուք թափած լինի այդ տողերը գրելիս»: Մուրը այսպէս է գնահատում այդ գրուածքը.—«Ամենատխուր եւ նկարչական պատմուածքը պանդխտական կեանքի, որ երբեւիցէ մի մարդու գրչից եւ սրտից բխած է»: Եւ իրաւ, երազը մի ինքնակենսագրութիւն է. բացի մի քանի գեղարուեստական պարագաներից, որոնցով հեղինակը հարկ է համարել իր գրուածքը՝ զարդարել նորան աւելի բանաստեղծական ձեւ տալու համար, պատմուածքի մնացած մասը իրական կեանքից, իր կեանքից է առնուած: Կրակոտ Բայրօնը 16 տարեկան

Նաև արթնութիան մեր վաստակներից.
 Նըրանք բաժնու՞մ են մեր էութիւնը.
 Դառնում են իրօք մի մաս մեր անձի
 Եւ ժամանակի. նըրանք դալիս են
 Ձերթ մունետիկներ յաւիտենութեան.
 Նըրաքն անցնում են իբր ուրուականներ
 Անցեալ դարերի, նըրանք խօսում են
 Որպէս Սիբիլներ. զօրութիւն ունեն,
 —Մնդի և վշտի բռնակալութիւն.
 Մեզ դարձընում են այն, ինչ որ չէինք,
 Այլ ինչ ուզում են. և ցընցում են մեզ
 Անցած բաների մըտապատկերով
 Եւ անհետացած ուրուականների
 Արհաւիրքներով:—Այդպէս չ'են նըրանք:
 —Չ'է թէ անցեալը ստուեր է միայն.
 —Ի՞նչ են երազներն.—մըտքի ստեղծումներ:
 Միաբը կարող է գոյութիւն էլ տալ,
 Եւ իր յօրինած մոլորակները
 Կարող է լցնել արարածներով
 Աւելի չքնաղ, քան երբ և իցէ

ասակում սիրահարուած էր իր դրացուհի ու հեռաւոր ազգական Մարիս Աննա Չափրթին: Առաջին տեսարանը, որ նկարագրուած է քերթուածի մէջ, տեղի է ունեցել մի ամառ երեկոյ, 1803-ին, մի բլրակի վրայ որ իսկապէս կոչուում է եղել «Պատկուած բլուր», ոչ հեռու այն զդեակից, ուր ապրում էր յիշեալ օրիորդը: Բայրօնը նկատում է արդէն, որ իր «կուզինք» նրան չէ սիրում, եւ թէ նրա հառաչները ուրիշին են նուիրուած: Երրորդ հատուածը նկարագրում է Աննէպի զդեակի դահլիճի մէջ տեղի ունեցած իսկական մի տեսարան: Սիրահարուած պատանին ուզում է իր սրտի գանգատը գրաւոր կերպով յայտնել օրիորդին, բայց չէ համարձակուում. եւ երբ օրիորդը ներս է գալիս դահլիճը, լուրջ եւ ժպտադէմ, սիրահարը նորան մնաս-բարով է ասում, ինքն էլ աւերես ժպտալով, բայց սրտանց լալով: Չորրորդ հատուածը փոխ է առնուած Բայրօնի մի քան բորբուքներէն Սրեւելքում, հետեւեալ հատուածը կրեւակայական է. Բայրօնը կամեցել է բանաստեղծական բովանդակութիւն տալ իր գրուածին, նկարագրելով իր սիրած կնոջը որպէս մայր մի գեղեցիկ ընտանիքի, բայց ներքնապէս դժբաղդ, եւ տանջուած. որից յետոյ Բայրօնը շատ ճշտութեամբ նկարագրել է իր սեպհական ամուսնութեան օրը, առաւօտը քնից զարթնելով՝ տեսել է որ իր հարսանեկան զգեստները պատրաստել են իր համար, թէ ի՞նչպէս խորասուզուած ամենատխուր խորհրդածութիւնների մէջ՝ գնացել եւ ժամերով մենակ զթօսնել է դաշտերում, մինչեւ որ եկել

Կեանք են ունեցել. շունչ ապ ձեռքի,
 Որոնք աւելի կարող են ապրել,
 Քան որ և իցէ կենդանի մարմին:
 Ես կամենում եմ յիշել մի տեսիլ,
 Որ երազած եմ գուցէ քրնի մէջ.
 Քանզի, ըստ ինքեան, մի մըտածութիւն՝
 Քրնի մի խոկում՝ ամբողջ տարիներ
 Կարող է գրկել, և երկար մի կեանք
 Ամփոփել միայն մի կարճ ժամի մէջ:

II

Տեսայ երկու անձ՝ ծաղիկ հասակում՝
 Կանոնած մի սիրուն բլրակի վերայ.
 Կանաչ էր բլուրը և մեղմ գառիվայր,
 Որպէս թէ լինէր վերջին հրուանդան
 Իր նրմանների մի երկար շարքի.
 Միայն ծով չը կար նորա ստորոտում.
 Բայց կար շատ չըքեղ մի դաշտանրկար,
 Եւ անատունների, արտերի ծըփանք.

և նորան կանչել են արարողութեան համար. ատում է. «ծունկ չոքցի,
 քահանայի թելադրած բառերը կրկնցի, բայց մի ամոլ քողարկում էր
 աչքերս, և մտքերս ուրիշ տեղ էին, և միայն այն ժամանակ ուշքի ե-
 կայ, և տեսայ որ ամուսնացած եմ, երբ հանդիսականներն սկսեցին ինձ
 շնորհաւորել:»

Եթերորդ հատուածի մէջ Բայրօնը նկարագրում է իր պաշտելի էա-
 կի հոգեկան հիւանդութիւնը. և իսկապէս, նա մեռաւ 1832-ին խելագա-
 րութեան մէջ. և վերջապէս՝ ութերորդում նա նկարագրում է իր հոգին,
 իր տանջուած, յուսահատ, մռայլ հոգին. աւելի տխուր բան չէ կարելի
 երեւակայել. մարդ սարսափով և վշտով համակում է՝ տեսնելով այդ իս-
 կապէս դժբաղդ, իսկապէս վիրաւոր հոգին, որ ատում է մարդկութիւնը և
 որից ատուած է:

Գրուածքը այնքան տխուր է, որ մարդ հազիւ թէ միջոց է գտնում
 նորա բանաստեղծական կողմը քննելու. ընթերցողը ինքն էլ յուզում է
 այն զգացումից, որ դալարել է Բայրօնի սիրտը: Նորա կեանքի այս պա-
 տահարը այնքան խորին տպաւորութիւն է թողել իր հոգու վրայ, որ տա-
 րիներ յետոյ՝ անդիմադրելի կերպով մղուել է իր սեպհական սրտի այս
 վէրքը հասարակաց աչքի առաջ դնել, առանց ուշադրութիւն դարձնելու
 ոչ իր և ոչ ուրիշների անձնապատուութեան:

Կային և տեղ-տեղ զբրուած տրնակներ,
 Ծուխն օձապըտոյտ վեր էր բարձրանում
 Գեղջուկ հիւղերից, բլրի գագաթին
 Ծառերը պըսակ էին բոլորած
 Ոչ թէ բընութեան քըմահածոյքով,
 Այլ մարդու ձեռքով: Այն երկու հողին,
 Կոյսն ու պատանին, լուռ նայում էին
 Մէկն՝ այն բոլորին, որ կար ներքեում
 Հրաշագեղ իր պէս, իսկ միւսը՝ կոյսին.
 Եւ երիտասարդ էին երկուսն էլ,
 Բայց մէկը միայն զեղեցիկագէմ էր.
 Եւ երիտասարդ էին երկուսն էլ,
 Սակայն ոչ նըման իրանց տարիքով.
 Որպէս զեղանի լուսինն անուշիկ,
 Որ հօրիզօնի եզերքն է հասել,
 Կոյսն էլ հասել էր կընութեան շէմքին.
 Պատանին նուազ ամառ էր տեսել,
 Բայց վաղահաս էր սիրան իր տարիքից,
 Եւ նորա աչքին՝ ամբողջ աշխարհում
 Մի միակ դէմք կար, միակ սիրելի,
 Որ այս բոպէիս ժպտում էր նորան.
 Նա այնքան երկար դիտել էր այդ դէմքն,
 Որ նրա հոգու մէջ տպաւորուել էր
 Եւ այնուհետև անջնջելի էր:
 Առանց այն կոյսին չնչել չ'էր կարող,
 Նա էր իր կեանքը, նա էր իր ձայնը.
 Չ'էր խօսում նրա հետ, այլ սարսըռում էր
 Նրբա մէկ բառից, նա էր իր լոյսը,
 —Նըրա աչքին էր հետևում աչքը,
 Եւ նորանով էր տեսնում. և այդ՝
 Գունաւորում էր ամեն առարկայ:
 Չ'էր ապրում այլիս սեպհական կեանքով,
 Այլ միայն նրա մէջ. նա էր ովկիանն
 Իր մըտածութեանց զետերի առաջ,
 Ուր որ ամեն բան գտնում էր վախճան:
 Նրա միակ շնչախից, միակ հըպումից
 Իր արիւնն առաջ ու յետ էր յորդում.
 Թ'ըչերը՝ անզուսպ փոթորկի նման
 Գոյն էին փոխում. և սիրան անդէտ էր,
 Թ'է ինչից էր այս իր հոպեւլարքը:
 Բայց կոյսն անմասն էր այդ զգայութեանց,

Նրա համար չ'էին իր հառաջները.
 Մի եղբայր էր նա, ոչինչ աւելի.
 Եւ այդ շատ բան էր. քանզի այն կոյսը
 եղբայր չ'էր տեսել, այլ մանկութիւնից՝
 Նըրան էր կանչել եղբայր անունով.
 Իսկ ինքը մի հին և ազնիւ տոհմի
 Միակ ժառանգն էր: Մի անուն էր այդ
 Որ հաճելի էր այն պատանեակին,
 Բայց և անախորժ.— և ինչո՞ւ արդեօք.
 Եկաւ ժամանակ, երբ նա հասկացաւ.
 Թէ ինչո՞ւ,— երբ կոյսն ուրիշին սիրեց.
 Հէնց այժմ ուրիշին սիրում էր արդէն.
 Եւ այն բըլուրի գաղաթին կանգնած՝
 Նայում էր հեռուն, տեսնելու համար
 Թէ սիրականի նժոյգն էլ արդեօք
 Նոյնչափ կրակոտ էր, որչափ իր սիրտը:

III

Մի փոփոխութիւն եկաւ երազիս
 Պատկերի վրայ.— մի հին դղեակ էր.
 Եւ զըրան առաջ մի նժոյգ պատրաստ.
 Ներսը, հնադարեան մեծ դահլիճի մէջ
 Կար նոյն պատանին, որ տեսած էի,
 Մենակ, գունաթափ, քայլում էր յուզումս.
 Յետոյ գնաց նստեց, առաւ դըրիչը
 Եւ դըրեց բռներ, որ չը հասկացայ.
 Ապա գլուխն առաւ իր ձեռների մէջ
 Եւ ամբողջ մարմնով նա այնպէս ցնցուեց,
 Որ կարծես տենդից բըռնուեց յանկարծ:
 Ապա վեր կացաւ, և ստամներով
 Եւ դողդոջ ձեռքով պատուեց գըրածը,
 Բայց նըրա աչքից արտասուք չ'եկաւ.
 Յետոյ ինքն իրան հանգըստացնելով
 Մի կերպ լըջութիւն տուաւ ճակատին.
 Եւ մինչ խորհում էր, նորից երևաց
 Նըրա պաշտելին. նա լուրջ էր, հանդարտ,
 Մինչև իսկ ժըպիտ կար երեսի վրայ.
 Եւ սակայն դիտէր պատանու սէրը.
 — Գիտէր... (քանզի մարդ չուտ է ըզզում այդ)
 Որ իր պատկերը մըռայլ է ձըգկւ

Նրբա սրտի մէջ. տեսնում էր՝ ինչպէս
 Նա տառապում է. բայց դեռ բոլորը
 Չէր տեսնում: Տրդան վեր կացաւ, և պաղ,
 Բայց քնքուշ կերպով բռնեց նրբա ձեռք.
 Մի բոպէ գրծուեց նրբա գէմքի վրայ
 Անբացատրելի խոհերի մի նկար,
 Բայց իսկոյն անցաւ՝ ինչպէս եկել էր.
 Ձեռք բաց թողեց, և դանդաղ քայլով
 Հեռացաւ. սակայն՝ մնաս բարև չէր այդ.
 Եւ երբ զատուեցին՝ դեռ ժպտում էին:
 Տրդան դուրս եկաւ հին ապարանի
 Ծանրակուռ զրոնից, ձին հեծաւ, զընաց
 Եւ այն տան շէմքին մէկ էլ չ'երևաց:

IV

Մի փոփոխութիւն եկաւ երազիս
 Պատկերի վերայ. նոյն պատանեակը
 Զարգացել էր այժմ, տըզամարդ գարձել.
 Տաք կլիմաների անապատի մէջ
 Նա ըստեղծել էր իրան հայրենիք.
 Եւ նրբա հոգին ըմպում էր այնտեղ
 Վառ արեգակի ճառագայթները.
 Նրա շուրջը կային թուխ, օտար գէմքեր.
 Եւ ինքն էլ չէր այն, ինչ որ եղել էր.
 Նա թափառում էր անվերջ, ծովից ծով,
 Յամաքից ցամաք: Անթիւ պատկերներ
 Ալիքների պէս գրոհ էին տալիս
 Դէպի ինձ. իսկ նա՝ կար ամենի՝ մէջ.
 Վերջին պատկերում ես տեսայ նրբան,
 Այն ինչ հանդում էր միջօրեան տօթից
 Քանդուած սիւների բեկորների մէջ,
 Թափուած պատերի հովանու ներքև,
 Որոնք աւելի էին զիմացել,
 Քան թէ անուճը կառուցողների:
 Քընած էր. իր շուրջն արածում էին
 Բազմաթիւ ուղտեր. աղբիւրի ափին
 Աղնիւ նրժոյզներ կային պարանած.
 Երկար հաղուստով մի մարդ հսկում էր,
 Մինչ նրնջում էին ցեղակիցները.
 Եւ նրբանց վերև կար կապոյտ երկին

Այնպէս ջինջ, անամպ, անբիծ, գեղեցիկ,
Որ Աստուած միայն տեսանելի էր:

V

Մի փոփոխութիւն եկաւ երազիս
Պատկերի վերայ: Սիրուած տիկինը
Ամուսնացել էր հիմա մէկի հետ,
Որ աւելի ջերմ չ'էր սիրում նըրան.
Եւ նա իր տան մէջ, իր հայրենիքում
(Մըղոններ հեռու պանդըխտի տընից)
Ապրում էր, պատած իր մանուկներով,
Տղայք, աղջիկներ չքնաղ գէմքերով.
Բայց տես, երեսին կայ վշտի մի թոյր,
Ներքին մաքառման այն թուխպը ճընչող՝
Եւ աչքն անհանդիստ ցած է խոնարհուում,
Կարծես թարթիչքը ծանրացած լինեն
Անհեղ արցունքից:—Ի՞նչ է այդ վիշտը.
Չ'է թէ հասել է սրտի փափաղին.
Եւ նա, որ նըրան այնքան սիրել էր,
Ներկայ չ'է, որ իր մեղսալից իղձով,
Չար յոյսով և կամ անզուսպ տխրութեամբ
Պղտորէ անբիծ նըրա մտքերը:
Ո՞ւրկից է ուրեմն այդ սրտի ցաւը.
Նա ոչ պանդըխտին սիրած էր երբէք,
Ոչ առիթ տըւած, որ այդպէս կարծէ.
Չ'էր կարող ուրեմն դա պատճառ լինել
Այն սըրտմաշուկին, որ այժմ կրծում էր,
Ուտում նրա հողին,—անցեալի ուրճն:

VI

Մի փոփոխութիւն եկաւ երազիս
Պատկերի վերայ: Թափառականը
Վերադարձել էր: Ես տեսայ նըրան՝
Կանգնած սրբազան խորանի առաջ.
Եւ նըրա կողքին մի հարս նազելի.
Սիրուն էր կոյսը, բայց չ'էր այդ գէմքը
Լուսատու այն աստղն իր պատանութեան.
Եւ մինչ կանգնած էր խորանի առաջ՝
Նըրա ճակատին երևաց կրկին

Միևնոյն պատկերն. և նոյն սարսուռը,
 Ինչ որ հին սրահի առանձնութեան մէջ
 Յնցեց իր կուրծքը. այժմ էլ, մի բոլոյ՝
 Անբացասարելի խոհերի մի նկար
 Գրծագրուեցաւ նրա գէմքի վրայ,
 Եւ յետոյ անցաւ, ինչպէս եկել էր:
 Եւ այժմ կանգնած հանգիստ և խաղաղ՝
 Արտասանում է սրբազան ուխտը.
 Բայց իր խօսքերը ինքը չէ լսում.
 Ամեն բան շուրջը պըտոյա է գալիս.
 Չ'է տեսնում այլ ես, ինչ որ կայ, ոչ էլ՝
 Ինչ պէտք է լինէր.— այլ հին զգեակը,
 Նախկին դահլիճը, ծանօթ սենեակներն,
 Տեղն, օրը, ժամը, արևն ու ստուերը,²
 Ամեն, ամեն ինչ, որ յարակից էր
 Այն տեղին, ժամին, և այն էակին,
 Որ իր զժբազդի ճակատագիրն էր,
 Բոլորն էլ եկան, և արձանացան
 Լոյսի և իր մէջ: Ի՞նչ գործ ունէին
 Դրբանք այդ ժամին այդպիսի տեղում:

VII

Մի փոփոխութիւն եկաւ երազիս
 Պատկերի վերայ: Սիրեցեալ կինը...
 Օ՛հ, նա փոխուած էր հոգեկան ցաւից:
 Միաքը թրուել էր իր բնակարանից.
 Եւ այն աչքերը... չունէին այլ ես
 Իրանց սեպհական պայծասութիւնը.
 Դա մի հայեացք էր ոչ—աշխարհային.
 Նա դարձել էր այժմ կարծեա թաղուհին
 Մի Ֆանտազիական թագաւորութեան.
 Նրբա խոհերը չ'էին՝ եթէ ոչ
 Սնկապ բաների մի յարակցութիւն:
 Չեւր, էակներ, անշօշափելի,
 Այլոց աչքերին անտեսանելի,
 Ընտանի էին նրբա տեսութեան:
 Եւ սյս է, ինչ որ մարդիկ կոչում են
 Խեղացնորութիւն. սակայն, խելօքներն
 Ունեն աւելի խորունկ խենթութիւն.
 Մեղամաղձութեան հայեացքը՝ բնածին

Մի պատուհաս է.—Ընչ է արդեօք այն.
 —Նա ճշմարտութեան հեռադիտակն է,
 Որ մերկացնում է հեռաւորութիւնն
 Իր ֆանտազիայից և մօտ է բերում
 Մեր աչքին՝ կեանքը՝ իր մերկութեան մէջ,
 Դարձնելով սառն իրականութիւնն
 Դեռ էլ աւելի իրական և դառն:

VIII

Մի փոփոխութիւն եկաւ երազիս
 Պատկերի վերայ: Թափառականը
 Այժմ մենակ էր, ինչպէս անցեալում.
 Այն էակները, որոնցով երբեմն
 Շրջապատուած էր, չը կային այլ ևս,
 Եւ կամ նըրա դէմ պայքարում էին:
 Նա նշաւակն էր ամեն անէծքի
 Եւ չուսուցեան. նա պաշարուած էր
 Ոխակալութեամբ և ստեղծութեամբ.
 Լեզի էր խառնած ամեն բանի մէջ,
 Ինչ նըրա առաջ սպասարկում էր,
 Մինչև որ նրման Պոնտեան արքային՝
 Նա էլ թոյներից առնում էր սընունդ.
 Նըրանք չ'ունէին այլևս զօրութիւն,
 Այլև մի տեսակ կազդուրիչ էին.
 Ապրում էր նրանով, ինչ մահ է այլոց,
 Լեռներն էին այժմ իր բարեկամներն.
 Աստղերի հետ էր ասուլիս անում,
 Եւ տիեզերքի կենդանի Ոգու.
 Եւ նըրանք նըրան բացատրում էին
 Իրանց խորհուրդը. և նըրա համար՝
 Լայն բաց էր արած գիշերի գիւրքը,
 Եւ խոր անգընդից եկող ձայները
 Նրան յայտնում էին մի հրաշք ու գազանիք:
 Թող այդպէս լինի:

IX

Երազս անցել էր, չը փոխուեց այլևս:
 Շատ զարմանալի մի երազ էր այն,
 Որ երկու անբազդ արարածների

Դասն ճակատայիրն այնպէս զրծագրեց,
Փրկի՞նչ համաձայն իրականութեան,
Մէկը՝ յանցելով խելացնորութեան,
Եւ երկուսն էլ զո՞ն տարարազրութեան:

Քարդմ. անդլ. Յ. ՄԱՍԵՂԵԱՆ

Քէնթոն 1894.

ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ

VII

Որնէ երկրի քաղաքակրթութեան աստիճանը շատ չափեր ունի, սիրելիս, բայց ըստ իս լուսագոյն չափը պոստային կանոնաւոր հաղորդակցութիւնն է: Այն բոլորից յետոյ, ինչ եւ առիթ ունեցայ քեզ գրելու Շվէյցարիայի և մասնաւորապէս այս երկրրի գիւղական կարգերի մասին, կարծում եմ, այլ եւ քեզ չեմ զարմացնի, եթէ ասեմ, որ պոստային կազմակերպութիւնն այստեղ օրինակելի է: Ո՛չ միայն շվէյցարական քաղաքներում, այլ հեռաւոր գիւղերում պոստային գործն այնպէս է զրուած, որ նա կարող է եւրոպական շատ քաղաքակիրթ երկրների համար օրինակելի համարուել: Երջիր Շվէյցարիայում որքան կամենաս, անցիր գէպի Ժիւրա լեռնաշղթան, դարձիր գէպի Ալպերը, ներս թաղաւիր խուլ լեռների ձորերում, ապրիր թէկուզ հովիտների մենաւոր խուղերում (chalet), գնն ամենահեռաւոր գիւղերը, լեռնային լճերի ափերում թափառիր օրերով, օտար լինես, թէ տեղացի, այդ միևնույն է, եթէ դու կամենաս, քո նամակները քեզ կը հեռուն քայլ առ քայլ ամեն տեղ: Այս հանդամները ինձ, արեւելքի կարգերի դառնութիւնը ճաշակածիս՝ այնպէս է դրաւում այստեղ, որ ես մի առանձին հաճույք եմ զգում այստեղի հեռաւոր գիւղերում ստանալ հայրենիքիցս եկած նամակները, որոնք շատ անգամ ամբողջապէս ծածկուած են լինում զբրուած և ջնջուած հասցէներով, իսկական նշան, թէ նամակը շատ է թափառել, թէ բազմաթիւ թղթատարներ ձեռքէ ձեռք են անցրել՝ դանելու տիրոջը, որը թափառում է շվէյցարական լեռներում ու գիւղերում:

Գիւղական պոստը Շվէյցարիայում, դա բոլոր օտարականների, տուրիստների հիացմունքի առարկան է եղել: Ապրտակ

խճուղին գալարուում է կանաչ լեռնալանջի վրայով, իջնում է գէպի ձորակը, կորչում է խուլ անտառների մէջ, յայտնուում է լեռան կատարին, կրկին ծածկւում է ձորերի մէջ, և այդ ճանապարհով անցնում է երկձի կառքը հնչիւն զանգակներով: Նրա վրայ մի մարդ է նստած, մի հատիկ մարգ՝ կառապանը, կառուուկէ գլխարկը գլխին և կապոյտ մահուդէ բլուզով, եթէ զով է, և սպիտակ քաթանէ չապկով, եթէ ամառ է. ահա գիւղական պոստը բերող կառքը: Նա չըջապատուած չէ ձիաւոր պահակներով, նայն իսկ մի հատիկ մարդը վրան ուրիշ զէնք չ'ունի, բացի իր ձեռքի մարակից, բայց այդ նրա փոյթը չէ, ճանապարհները բոլորովին ապահով են անգամ ուշ գիշերով, վատ եղանակներին: Փոքրիկ զանգակների ձայնը հնչւում է լեռների և անտառների լուսիկան մէջ, տարածւում է հեռու ու հեռու, այգրանը բոլորովին բաւական է, որ ամենքն իմանան, թէ այդ մենաւոր կառքով անցնում է Շվէյցարիայի պատիւը, փոքրիկ Դաշնակցութեան մեծ հովանու տակ դա մի սրբութիւն է, և նրան գիտչելը ոճիրներից մեծագոյնն է: Եթէ հեռուից պոստի հովանին նրա զանգակների ձայնն է, մօտիկից էլ Դաշնակցութեան նշանը, այն փոքրիկ անշուք, կարմիր խաչն է, որ փայլում է կառքի կողքին սրուէս նուիրական կնիք դրուած անհատների գաղանխի, կապոյտների մէջ գանուող նամակների և այլ ծանրոցների վրայ:

Օրուայ սրտչ ժամերին այդ փոքրիկ սիրուն կառքը այն կարճահասակ ու չիկահեր մարդու հետ անցնում է մեծ ճանապարհով, կանոց է անում մի քանի բողէ այս կամ այն գիւղում, տալիս է ինչոր կապոյտներ, ընդունում է նորերը և կրկին շարժւում է առաջ: Մի պահ ընդհատուած զանգակների ձայնը կրկին հնչւում է, և պոստային կառքը Դաշնակցութեան խաչի հովանու տակ գնում է գէպի այլ լեռներ, գէպի այլ գիւղեր: Նա գալիս է մեծ քաղաքներից գիւղական աղղաբնակութեանը պատմելու, թէ ինչ է կատարւում հեռաւոր անկիւններում, ինչ են մտածում, գործում մարդիկ օտար աշխարհներում, ինչ է անցնում զանում շվէյցարական այլ կանտոններում, այլ գիւղերում, այլ լեռներում: Եւ մի անհրաժեշտ պահանջ է շվէյցարական գիւղացու համար իմանալ այս բոլորը, ահա թէ ինչու այնքան սիրելի է նրա համար կառքը իր զանգի քաղցր հնչուններով, այնպէս ցանկալի հիւր է ամեն անգ ն' այն կառապանը, աշխարհի բանբերը: Այն գիւղում, ուր ևս սուրբում եմ, սիրելիս, օրական երեք անգամ պոստ է ստացւում կանոնաւոր կերպով, օրական երեք անգամ պոստային ցրիչը, մի նիհար, երկարահասակ աղջիկ թղթերով լեցուն կաշուէ

պարկը կախած ուսից՝ հանդարտ անցնում է զիւղի փողոցներով, մտնում է աները, բաժանում է լրտղերին ու նամակները, ապա դուրս է գալիս զիւղից և գնում է գէպի հետաւոր խրճիթները. գաշտերում իմ սովորական զրօսանքների ժամանակ ես յաճախ եմ հանդիպում այդ թղթատար աղջկան. թեթեաքայլ և լուրջ, իր կատարած զեզեցիկ զերի բոլոր գիտակցութեամբ նա անցնում է գաշտերով մեն մենակ, ծածկւում է այս ձորակում, այն բլրի ետեր, այս անտառակում, ուր մի հատիկ, մենաւոր խրճիթ կայ, որ ստանալու մի բան ունի: Նայում եմ այդ աղջկան, և պատկառանքով է լցում սիրտս գէպի այդ նիհար, փխրուն արարածը, որ ներկայանում է իմ աչքին որպէս քաղաքակրթութեան կենդանի խորհրդանշան: Կառուէ այն փոքրիկ պարկը, թղթերի այն կոյտը, զա ամբողջ աշխարհի մարդկութեան միտքն ու հոգին: Համամարդկային մեծ բնատնիքի ցան ու ցրիւ անդամների մէջ այդ փոքրիկ աղջիկը ինձ ներկայանում է որպէս մի զիւթական օղակ, որ այս հետաւոր ձորերում, լեռներում, անտառներում ապրողներին կապում է այնքան աշխարհների, այնքան ավելերի, այնքան ծանօթների և անծանօթների հետ: Այսպէս է միշտ, սիրելիս, աշխարհի բազմը անօրինող հզօր ֆակտորների կողքին շատ անգամ մի թոյլ, մի փոքրիկ արարած հրաշքներ է գործում լութեան ու անյայտութեան մէջ. այս փոքրիկ աղջիկը, որ վազվզում է գաշտերում խորհրդաւոր կապոցն ուսին, բառ իս մի այնպիսի երևոյթ է, որի բացատրութիւնը կ'ընդգրկէր քաղաքակրթութեան ամբողջութիւնը:

Եւ զա շատ հասկանալի է, սիրելիս, որպէսզի մի երկրում նրա զիւղական ազդաբնակութեան մէջ անգամ պոստը դառնայ անխուսափելի անհրաժեշտութիւն, որպէսզի հնարաւոր դառնայ, որ մի այսպիսի աղջիկ մենակ ու անպաշտպան, ծրարները շալակած վազվզի լեռներում, հարկաւոր է ոչ թէ տարիների՝ այլ դարերի քաղաքակրթութիւն անցած լինել: Ահա թէ ինչու ասում եմ, որ այդ երևոյթի բացատրութիւնը քաղաքակրթութեան ամբողջ պատմութիւնն է:

Իմ առաջին այցելութիւնը շվեյցարական զիւղական պոստատանը ես երբէք չեմ մոռանայ: Քիչ անգամ քաղաքակրթական այնպիսի հետաքրքիր, այնքան խոշոր երևոյթ, որպէս պոստն է, կարող է այն աստիճան զեղջուկ, պարզ բնասիրութիւն բստանայ, ինչպէս այդ պատահել է Շվեյցարիայում: Բոլոր այն նոր պաշտօնական ձևականութիւնները, որոնք խորթ են օրէնքների ողուն, և արդիւնք սոսկ տառակերութեան, որոնք սակայն այնպէս խեղդում են ամեն մի կենդանի դործ՝ անվերջ, անօգուտ արդիւնքներ յարուցանելով կեանքի յառաջադիմող հո-

սանքի դէմ, այստեղ ջնջուած են իսպառ, և մնացել է ինքը
գործը, նրա իրական պաշտամունքը հասարակական բարիքի և
քաղաքակրթութեան համար:

Ասածիս իբրև անհերքելի ասպացոյց ևս կը նկարագրեմ
տեսածս պոստատունը գիւղում: Փոքրիկ երեխան ինձ ցոյց է
տալիս մի սովորական տուն, ինչպէս շինուած են շվէյցարական
գիւղական տները: Արտաքուստ ոչինչ չը կայ, որ վկայէ, թէ
առաջդ մի հասարակական հաստատութիւն է, բացի պատին
կպցրած կապոյտ պոստարկղից:

Բայ բակում մի փոքրիկ քարէ աւազան կայ, ուր ջուրը
թափուած է մի ծորակից: Աւազանի մօտ արեկող արած թաւա-
լում է մի սիրուն կատու: Նրանից քիչ հեռու մի տարիքաւոր
ու յոգնած տեղքով կին լուացք է անում:

Ես մօտենում եմ և կանգ առնում մտածելով վարանոտ:

—Պարոնը երևի պոստատունն է հարցնում, ասում է
լուացք անող կինը ինձ նայելով:

—Այո, տիկին, բարի եղէք, խնդրեմ ինձ ցոյց տար:

—Համեցէք, հետևեցէք ինձ:

Բարի կինը թողնում է լուացքը, ձեռներն շտապով սըր-
բում է գոգնոցով և առաջ անցնում: Ես հետևում եմ, ներս ենք
մտնում մի փոքրիկ նրբանցք, այնտեղ լալիս է մի փոքրիկ և-
րեխայ. իմ ուղեկցուհին նրան հանգստացնում է և ձեռքից
բռնած գնում՝ ինձ պատուիրելով սպասել. մի վայրկեան յետոյ
եւ առջևի պատի վրայ բացում է փոքրիկ դռնակը, և ևս նա-
յում եմ, պոստատունն է, և լուացարար կինը պոստի կառավա-
րիչն է:

Նայում եմ, մի հատիկ փոքրիկ սենեակ է, մի սեղան, վը-
րան մարկաններ, ծրարներ, թղթեր, նրա առաջ մի տաբուրետ,
որի հետ խաղում է նոյն երեխան, մերթ ընդ մերթ նայելով
մօրը, որ ընդունում է իմ նամակը: Մօտիկ չէնքից, որ մի դոմ
է, լսում է կովի բառաչը, կինը մի վայրկեան կանգ է առնում և
կանչում է մէկին, և ինքը դուրս գնում. մի դուռ է բացում
խորքում, յայտնում է մի ջահիլ աղջիկ, նա իր բանը գիտէ,
անխօս մօտենում է սեղանին, շարունակում է մօր սկսածը:

Զրբընդ, զրբընդ... զբսում կանգ է առնում պոստային
կառքը, աղջիկին աճառարելով դուրս է դալիս ընդ առաջ. կառավանը,
որ միևնոյն ժամանակ պոստային պաշտօնեան է, բարձրաձայն և
ուրախ չեչուով բարևում է աղջկան, առողջութիւնն է հարցնում,
մի քանի կօմպլիմենտներ ասում, երկուսով էլ բացսիրտ ծիծա-
ղում են:

Ապա հանդարտութեամբ կատարում է կապոցների փո-

խանակութիւնը, կառքը հեռանում է դէպի ուրիշ գիւղեր, իսկ աղջիկը սկսում է բանալ նոր կապոցները և կարգաւորել: Ես հետևում եմ այդ տեսարանին մի այնպիսի բայ հետաքրքրութեամբ և ուշադրութեամբ, որ քիչ է մնում զարմանք շարժի: Եւ ճշմարիտ՝ ես զարմայած եմ այս բոլորի վրայ, իսկ նրանք զարմանում են երևի իմ զարմանքի վրայ:

Սակայն պէտք է կարծել, թէ գիւղական բոլոր պոստատըներն այս աստիճան անչուփ են, աւելի չուտ սա մի բացուածութիւն է, գուցէ և ժամանակաւոր. եթէ ես նկարագրեցի այն, միայն կարգերի գեղջուկ պարզութիւնը ցոյց տալու համար էր և ոչ եթէ շէնքի մասին զաղափար տալու: Ընդհակառակը ամենալաւ շէնքերը շվէյցարական թէ քաղաքներում և թէ գիւղերում պոստատներն են և կրթական հաստատութիւնները: Գիւղերում իւրաքանչիւր զարոյցական մեծ ու չքեղ շէնքի մի մասը յատկացւում է պոստին: Այսպիսով գիւղական ուսուցիչը և պոստային միակ պաշտօնեան մի գրաւիչ զուգադիպութեամբ աշխատում են միեւնոյն շինութեան մէջ, միեւնոյն յարկի տակ, որպէս թէ զոյգ ամուլներ միեւնոյն քաղաքակրթական մեծ գործի:

Ուշադրաւ մի երևոյթ ես գիւղերում պոստային պաշտօնէութիւնն ասես մի որևէ ընտանիքի սեփականութիւն լինի: Եթէ ընտանիքի տէրը կարգուած պաշտօնեայ է, ապա միւս անդամները նոյն պաշտօնի նեղութիւնները նրա հետ կիսում են հաւասար չափով, նրա պարտքը կատարում են փոխառփոխ: Երբեմն պոստատանը կարելի է տեսնել մի աղամարդ սպիտակ կտաւէ շապկով, մի ժամ յետոյ ձեռք կ'ընդունի նրա կինը, յետոյ տղան, վերջիվերջոյ նաև աղջիկը, նայելով թէ ո՞վ է ազատ և ո՞վ է զբաղուած: Եւ այս բոլորը կատարւում է ամենաբնական եղանակով, ոչ որի համար սա տարօրինակ չէ, ոչ որ այս համագումանքը օրէնքի դէմ չէ համարում, աստակերութիւնն այնտեղ անձանօթ է:

Շատ անգամ էլ պոստ ստացողը, կարգադրողը հայրը կամ մայրն է լինում, իսկ ցրիչը, հետաւոր խրճիթների և ձորերի նամակատարը նրանց փոքրիկ տղան կամ աղջիկն է: Ահա թէ ինչու պոստային գործն՝ ինչպէս ստացի իւրաքանչիւր գիւղում դառնում է մի հատ ընտանիքի սեփականութիւն:

Եւ զարմանալին այն է, որ այս աստիճան նահապետական, պարզ կարգերի մէջ, ուր մեծաւորի հսկողութիւն ու խրատութիւն չը կայ, ուր ահաւոր վերաքննիչը մրբիկ պէս չէ գալիս անցնում, այնուամենայնիւ ոչ մի անկարգութիւն, ոչ մի զեղծում, ոչ մի անկանոնութիւն ընդհանուր գործավարութեան մէջ: Ոչ որ առիթ չի ունենայ բողոքելու, թէ իր նամակը կորաւ, թէ

լրադիրը ժամանակին չը հասաւ, ոչ սը ստիպուած չի լինի գընայ պոստից իր լրադիրը կամ համակն ստանալու: Շոյ թէ ցուրտ, անձրև թէ պարզ եղանակներին միևնոյն ցրիչը որոշ ժամերին իր կապուցը չպահած՝ անցնում է գունէ գուռ, ձորից ձոր՝ պաշտից պաշտ, իր պարտը կատարելու: Փոքրիկ Դաշնակցութեան անխել պաշտօնեաներ, որոնք խաւարի ու լուսթեան մէջ հաւատարիմ իրանց երկրի մեծ աւանդութիւններին, ամենախորք գործի մէջ անգամ իրանց հայրենիքի վատքին են ծառայում անխարդախ ու շիտակ ընթացքով:

Չը մտանում աւելացնել, սը պոստի հետ միասին իւրաքանչիւր գիւղում հնարաւոր է նաև հեռագիր ստանալ: Իսկապէս շատ անգամ բուն հեռագրատուն չը կայ, բայց գիւղը միացած է մօտակայ երկաթուղային կայարանի հետ հեռախօսով, հեռագիրն ստացւում այց կայարանում և այնտեղից հեռախօսով յայտնուում է գիւղական պոստին, և ահա հեռագիրը պատրաստ է: Այս սխաւմով համարեա իւրաքանչիւր գիւղից կարելի է հեռագրել աշխարհի սը ծայրը կամենար: Այսպէս է միայն փոքրիկ, աննշան գիւղերում, բայց մեծ գիւղերը ուղղակի հեռագրալարով են միացած մեծ կենտրոնների հետ:

Նամակիս սկզբում ես ասացի, սը ըստ իս քաղաքակրթութեան լուսագոյն չափը պոստային կանոնաւոր հաղորդակցութիւնն է սրեկ երկրում: Դրա ամենապայլուն ապացոյցը գարձեալ Շվէյցարիան է: Եթէ, այս երկրի գիւղական ազգաբնակչութիւնը օրական երեք անգամ պոստ է ստանում, այց այն սլարդ պատճառով է, սը նա կարիք ունի, սը նրա համար դա գարձեղ է կենսական պահանջ:

Չրի և պարտադիր տարրական ուսումը Շվէյցարիայի գիւղական ազգաբնակչութեան մտաւոր աստիճանն արդէն այնքան է բարձրացրել, և ճաշակն այնպէս զարգացրել է, սը քաղաքակրթութեամբ մարդուն յատուկ մի շարք մտաւոր պահանջներ՝ ինչպէս օրինակ ընթերցանութիւնն է՝ և նրան անբաժան լայն հետաքրքրութիւնը օտար աշխարհների կեանքով, նրա համար գարձել են կենսական խնդիրներ: Մի կողմ թողնելով ընդհանրապէս գործնական կեանքին վերաբերեալ անհրաժեշտ թղթակցութիւնները՝ շվէյցարական գիւղացին նաև լրագրի այնպիսի պահանջ ունի, սը ամենօրեայ պոստը գարձել է նրա համար անխուստիկի:

Երեկ պոստատուն մտայ իմանալու համար, թէ քանի թերթ է ստացւում այս փոքրիկ գիւղում, ուր հաղիւ 20—30 ընտանիք են սպրում: Եւ լինչ, կարող ես երեակացել իմ գարմանքը, երբ պոստային պաշտօնեան ամենասովորական եղանա-

կով ինձ հաղորդեց, որ Պիղուում ստացւում են 52 օրինակ գանազան թերթեր և ամսագրեր: Ուրիշ խօսքով ասն չը կայ, որ մի՛ երբևէն նաև երկու թերթ չը ստանայ: Ես ճանաչում եմ զբրանցից մի քանիսը: Ամենից տարածուածը, մասնաւորապէս Վօ կանտօնում, Լօզանում հրատարակուող «Feuille d'avis»-ն է, մի սովորական յայտարարութեան թերթ, ինչպէս այդ ցոյց է տալիս վերնապիւրը, բայց այնքան բազմակողմանի բովանդակութեամբ, որ բոլորովին բաւական է մի գիւղակի՞ն ազգաբնակութեան հետաքրքրութեանը բաւականութիւն տալու: Ես ամեն օր ունի քաղաքական հեռագրեր աշխարհի բոլոր ծայրերից, քաղաքական լուրեր, քաղուածքներ օտար թերթերից, շվեյցարական ներքին, անտեսական, հասարակական, քաղաքական կեանքին վերաբերեալ յօդուածներ ու լուրեր, կառավարչական հաղորդագրութիւններ, երկրի օրէնսդրութեան վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ, թեթիւ ընթեռնելի վէպիկներ և բազմաթիւ ու բազմատեսակ յայտարարութիւններ: Ի պատիւ Շվեյցարիայի պէտք է ասել, որ այսպիսի թերթերի տուած բարոյական-մտաւոր անունքն էլ խիստ առողջ է, և շվեյցարական մամուլը ժողովրդի սիրալ և միտքը չէ թունաւորում, հասարակական քաղաքական խնդիրների վերաբերմամբ թիրփմացութիւններ չէ տարածում, չէ ստում, չէ խաբում: Ահա թէ ինչու շվեյցարական գիւղացին ճշտիւ գիտէ ան ամենը, ինչ կատարւում է թէ իր երկրում և թէ իր երկրից դուրս աշխարհի բոլոր ծայրերում, և զիտէ մանրամասնաբար, ապրում է ոչ միայն իր հայրենիքի, այլև համամարդկային հայրենիքի մեծ կեանքով, մեծ ցաւերով ու ուրախութիւններով: Ես երբէք չեմ կարող մոռանալ մի դէպք, որին ականատես եղայ շվեյցարական գիւղում, և որ խորապէս յուզեց ինձ: Ամրան սկզբին հեռաւոր գիւղում յարմար պանսիօն փնտուելով՝ կանգ առայ մի գիւղացու տան առաջ: Տանտիկինը, որից տեղեկութիւններ էի խնդրում, հետաքրքրուեց իմ ազգութեամբ, ևս մի փոքր շփոթուած մնացի՝ հաստատ համոզուած, որ այս գեղջկուհին այս խուլ լեռներում հայ անունը լսած չը պիտի լինի, և հետևապէս հարկաւոր է երկար բարակ բացատրել, թէ ինչ ասել է հայ. սա մի հանդամանք էր, որ շատ էլ չէր շոյում իմ ազգային հպարտութիւնը:

— Հայ եմ, ասացի վարսնտա եղանակով:

— Ի՞նչ էք ասում, հայ էք, հա՛, խեղճ հայեր, զժբնազ ժողովուրդ, սուլթանը ձեզ ինչպէս կտտրեց, ախ, Տէր Աստուած, դու ինչու թոյլ ասիր, խեղճ հայեր... և բարի կինը սկսեց հեկեկալ և աչքերը սրբել զօգնացով: Պարզուեց, որ նա հայոց հար-

յի վերջին տարիների ամբողջ պատմութիւնը գիտէ իր փոքրիկ թերթից, որ կարգում է երեկոները իր երեխաների հետ, և ինչ ասել կ'ուզի, փոքրիկ երեխաներն էլ գիտեն շատ բան այն քրքրատունեայ դժբաղդ ժողովրդի մասին, որին թիւրքերը կոտորում են հետաւոր արեւելքում: Այս երեսյթը մենակ Վօ կանտոնում չէ, այլ ամբողջ Շվեյցարիայում նոյնն է, ամենքը կարդացել են, ամենքը գիտեն, և նրանց շիտակ, մարտւր մամուլը ոչինչ չէ թաղցրել, ոչինչ չէ կեղծել: Թիւրքական սակիներն այստեղ ոչինչ չէին կարող անել, սրանց բարոյական մարքուլթիւնը մի ժայս է, որի վրայ կը խորտակուի զայթակղութեան ամեն մի նողկալի փորձ: Ակամայ միտս ընկաւ Ֆրանսիական Le petit journal-ը, որը նոյնպէս մի շատ տարածուած պատկերազարդ թերթ է ամբողջ Ֆրանսիայում: Հայկական սարսափների ժամանակ այս թերթի «աղնիւ» խմբապիւրներն իրանց ընթերցողներին ուղարկեցին պատկերներ, որոնք ցոյց էին տալիս, թէ ինչպէս հայերը աւերում են թիւրքական մզկիթները և կոտորում են «խեղճ» թիւրքերին: Ապականուած մամուլի վարիչները աշխարհի մեծագոյն սճրագործներն են:

Յ'գրութիւն!

Ընկերդ՝ ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

ՀԱՅ ԿՆՈՋ ՁՍՅՆԸ *)

II

Շատերը աշխատում են հաստատել, թէ կնոջ ոչ—անկախ անանասական գրութիւնը մեծ օգուտ է բերում մայրութեանը, որովհետեւ այդ գրութեան մէջ կինը աւելի մասնազիտօրէն է վերաբերում գէպի իր կոչումը: Բայց դա սխալ կարծիք է, մայրութիւնը զրանից ոչ մի օգուտ չէ ստանում: Նոյն իսկ չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, թէ այդպիսի գրութիւնը ընդհակառակը վնասում է մայրութեանը, սրովհետեւ մեծ մասամբ զրա հետեանքներն են վաղաժամ ծնունդները և երեխաների մահուան թւի աստիճանաբար մեծանալը:

Կար ժամանակ, երբ կինը գնահատուում էր իր երեխաների քանակով, քանի շատ երեխաներ ունենար կինը, այնքան բարձր էին գնահատում նրան: Բայց երբ զարգացաւ արդիւնադործութիւնը, և գծուարացան կեանքի պայմանները, հայրը այլևս չէր ուրախանում իր երեխաների թւով: Այդ պատճառով ազքտա զասակարգի մէջ ասաջ է եկել սակաւաթիւ երեխաներ ունենալու հակում: Բայց հարուստ կանայք էլ յետ չեն մնում այդ հակումից:

Չունենալով ոչ մի աշխատանք, շատ անգամ նոյն իսկ անային ոչ մի զբաղմունք, հարուստ կանայք ձգտում են զոնէ արտաքին գեղեցիկութեամբ փայլել: Իսկ ճշմարիտ մայր լինել և միևնոյն ժամանակ արտաքին փայլը, գեղեցիկութիւնը չը կորցընել, դա զրեթէ անկարելի բան է: Հէնց զրա համար էլ նրբանք շատ անգամ աշխատում են ամուսնութեան բնական հետեանքից—մայր լինելուց խոյս տալ: Սակայն այդ միևնոյն շար-

*) Տես Մուրճ № 1:

ժողովները չեն, որ ստիպում են ազքատ դասակարգի կանանց էլ խոյս առնել երեխայ բերելուց: Ո՛չ, այստեղ մեծ դեր է խաղում չքաւորութիւնը—հացի խնդիրը:

Ի հարկէ՛ թէ հարուստ և թէ չքաւոր ընտանիքներում այդ բանը տեղի չէր ունենայ, եթէ մայրերը կանգնած լինէին իրանց կոչման բարձրութեան վրայ, եթէ ունենային ցանկալի կրթութիւնը, եթէ հասկանային մայրութեան վեհութիւնն ու մեծ պատասխանատուութիւնը:

Ո՛րքան բարեքններ կարող են հասցնել մարդկութեանը կրթուած մայրերը...

Ինչպէս բոլորին յայտնի է, երեխաներն աւելի մօտ են են լինում իրանց մօրը, քան հօրը: Շատ երեխի մարդիկ մինչև իրանց կեանքի վերջը մեծ պատկասանքով ու սիրով են յիշել իրանց մօր անունը:

Պատերազմի դաշտում մեռնող զինուորը յիշում է իր մօրը, ցանկանում է նրան տեսնել: Անառակ որդին իր մօր մօտ է վերադառնում, նրա զգուանքին է ապաւինում: Մայրը իր զաւակների համար մի տեսակ փարոս է թշուառութեան և տըխրութեան ծովում: Նա է երեխաներին սկզբնական կրթութիւն տուողը: Ինչ որ գիտէ, ինչ որ զգում է—այդ բոլորը նա տալիս է իր զաւակներին, ուստի չը պիտի զարմանալ, որ մեր ամենաքնքշ ու ամենախոր զգացմունքները «մայր» խօսքի շուրջն են պատուում:

Հին ժամանակներում երեխաների ամբողջ դաստիարակութիւնը ընկնում էր ծնողների, մասնաւորապէս մօր վրայ: Իսկ այժմ այդպէս չէ. երեխաների դաստիարակութիւնը սկզբում մօր ձեռքին է, իսկ յետոյ անցնում է դպրոցներին, հասարակութեանը:

Հին ժամանակներում մայրութիւնը կատարում էր որպէս մի բնազդ, որպէս սեռական յարաբերութեան մի բնական հետեանք. իսկ ներկայումս զրա վրայ աւելացել է նաև դիտակցութիւնը, զարգացած խելքը:

Կենդանական ոչ մի տեսակի ժողովները այնքան հողատարութիւն և երկարատե դաստիարակութիւն չեն պահանջում, որքան մարդկային ժողովները: Ո՞վ պէտք է լինի այդ հողաբաշտը, այդ պահանջը լրացնողը. ի հարկէ՛ մայրը: Ո՛րքան մեծ է նրա դերը: Համեմատենք մօրից զրկուած երեխային մայր ունեցողի հետ: Համեմատենք երկու երեխաների, որոնցից մէկը միայն մօր հողատարութեան տակ է, իսկ միւսը—ժառանգի ու դաստիարակների և այն ժամանակ կը հասկանանք այն մեծ ոյժը, այն մեծ ազդեցութիւնը, որի անունն է «մայրու-

թիւնն: Լաւ մայրերը կարող են աշխարհ շինել, իսկ վատերը՝ քանդել:

Արժանի են արդեօք համակրութեան այն մայրերը, որոնք իրանց հանդստութեան ու զուարճութիւնների պատճառով ուրիշի խնամքին են յանձնում հարազատ զաւակներին կամ թողնում են թափառել փոզոցներում, հրապարակներում առանց խնամքի ու հսկողութեան: Երբ մենք պատահում ենք մի շատ առողջ և բարոյապէս մաքուր օրիորդի կամ երիտասարդի, այդ բանը իսկոյն և եթ վերագրում ենք հողատար մօր ջանքերին ու դաստիարակութեանը: Իսկ ո՞վ է մեծացնում այն հազարաւոր ստոր, կեղտոտ, փչացած էակներին, որնք կատարեալ չարիք են դառնում հասարակութեան համար:

Երբ մենք խօսում ենք յայտնի մարդկանց մասին, իսկոյն յիշում ենք նրանց մայրերին: Իսկ ո՞վ է ծնում ու սնուցանում բազմաթիւ ոճրագործներին, գողերին, աւազակներին: Ի հարկէ մայրերը, դարձեալ մայրերը:

Ինչպէս էլ քննելու լինենք հարցը, կը տեսնենք, որ մայրական կոչումը շատ մեծ դեր է խաղում հասարակական կեանքում:

Բնութիւնը կին արարածին տուել է մի մեծ արտօնութիւն՝ մարդկութեան համար նոր անդամներ ծնելու և մեծացրնելու արտօնութիւնը: Իսկ հասարակութիւնը այդ բանը գիտենալով հանգերձ՝ նրա գործունէութեան առաջ պատնէշներ է բարձրացրել, նրան զրկել է ազատութիւնից, անկախ դրութիւնից, նրան թոյլ չէ տալիս բարձր գիտութեան հետեւելու, իր ոյժերը կատարելագործելու: Ո՛րքան վնասակար է այդպիսի վերաբերմունքը, սրբան ամօխալի:

Մեր մայրերը տղէտ են, չեն հասկանում իրանց կոչման բարձրութիւնը. իսկ ո՞վ է մեղաւոր, ո՞վ է նրան այդ գրութեան մէջ դնողը: Ի հարկէ՝ այն հասարակութիւնը, որն իր աւանդական սովորութեամբ ստիպում է կնոջը դուրս չը գալ ընտանեկան շրջանից, միշտ տղամարդու հպատակն ու ստրուկը մնալ և չը հետեւել գիտութեան ու հասարակական կեանքի հոսանքին:

Կինն իր բազմակողմանի գործունէութեամբ սլիտի մասնակցէ սօյիալական կեանքին, որպէս զի հասկանայ նրա լաւ ու վատ կողմերը, նրա ընթացիկ պահանջները և այդ բոլորի համեմատ սերունդ պատրաստէ, երեխաներ կրթէ ու մեծացնէ:

Այն, իւրաքանչիւր կին դեռ մինչև մայր դառնալը սլիտի լաւ ճանաչէ կեանքը և հասկանայ իր բարձր կոչումը: Իսկ մեզանում բոլորովին հակառակն է տեղի ունենում: Մեր օրիորդները կրթում են այնպիսի պայմաններում, այնպիսի ուղղութեամբ, որ բոլորովին անհնութիւն չ'ունի մայրական պարտա-

կանութիւններէ հետ նրանք պատրաստուում են, դաստիարակուում են միայն նրա համար, որ զրաւեն հակառակ սեռին, բաւարարութիւն տան նրանց պահանջներին: Արտաքին գեղեցկութիւնը, զարդն ու զարդարանքը նրանց աւելի է զբաղեցրնում, քան ներքին գեղեցկութիւնը, քան հոյու և սրտի գաստիարակութիւնը:

Նրանք շատ բան են կարգում, շատ բան են սովորում, իսկ մայրութեան մասին—ոչինչ: Մայրական պարտականութիւնների հետ նրանք ծանօթանում են միայն այն ժամանակ, երբ մայր են դառնում, այսինք երբ երեխայ են ծնում: Այս զբոլութիւնը կարելի է համեմատել այն տղամարդկանց զբոլութեան հետ, որոնք իրանց ձեռքն են առել ամբողջ ազգի պաշտպանութիւնը, բայց ոչ մի ղէնք չունեն դրա համար: Ի՞նչ կը լինէր այդ ազգի վիճակը, եթէ նրա զինուորները մինչև պատերազմի դաշտ դուրս գալը ոչ մի գաղտնիար չունենային պատերազմի կամ զինուորական ծառայութեան մասին:

Կանանց կրթութեան ծրագրի մէջ չէ մտնում «մայրութեան» առարկան: Մինչև իսկ ամօթ է համարւում աղջկան ծանօթացնել մայրական ապագայ սուրբ պարտականութիւնների հետ: Լուսթեամբ թոյլատրւում է, որ այդ բանը կատարուի այսպէս կոչուած՝ «մայրական սուրբ բնազդով»: Իսկ կեղծ քաղաքավարութիւն, արտաքին փայլ, հաճոյախօսութիւն ու կօկեւտութիւն—զրանք թոյլատրելի են: Չէ որ այդ միջոցներով կինը կարող է զրաւել տղամարկանց, ուրեմն էլ ինչո՞ւ ուրիշ բաների մասին մտածել: Այսպիսով հասարակութիւնը ստիպում է, որ կինը միայն իւր բնազդի միջոցով հասկանայ մայրական սուրբ պարտականութիւնները: Մայրական բնազդը շատ բարձր և սուրբ զգացմունք է, բայց միայն այն չափով, ինչ չափով բնութեան ամեն մի օրէնք: Զարգացման ստոր աստիճանի վրայ կանգնած վայրենիների և կենդանիների համար բնազդը շատ մեծ գեր է խաղում, իսկ քաղաքակիրթ հասարակութեան համար միթէ ամօթ չէ, որ ստիպում է կնոջը կանգնել այդ միևնոյն աստիճանի վրայ և միմիայն բնազդի թեղադրութեամբ կատարել իր պարտականութիւնները:

Կինը մինչև այժմ զրկուած է եղել ազատութիւնից ու լայն գործունէութիւնից, որը զարգացնում է մարդու միտքը, ուժեղացնում է կամքը և կատարելագործում է ընդունակութիւնները: Նա շատ յետ է մնացել տղամարդուց: Ահա այսպիսով ծնող մարդկութիւնը մեծանում և կրթւում է ազէտ ու անխորձ մայրերի ձեռքով:

Բայց ամեն մի մայր՝ լինի նա տղէտ կամ գիտուն, իր

սրտում թագցրած է լինում մի խոր զղացմունք, որի անունն է «մայրական սէր»:

Մայրական սէր—դա մի անսահման ոյժ է, բայց այդ ոյժը պահանջում է զեկավար, ուղղութիւն տուող: Միայն սէրը երեխային օգուտ չէ կարող բերել, իսկ եթէ այդ սէրը միացած է գիտութեան ու ազատութեան հետ, այն ժամանակ կարող է հրաշքներ գործել:

Կին-մայրը բնազդաբար ցանկութիւն է զգում կրճրով կերակրելու իր երեխային: Շատ մայրեր այդ բանից էլ զրկուած են՝ հիւանդութեան կամ մի այլ պատճառով: Այդ միևնոյն բռնազգը ստիպում է նրան սիրել իր զուակներին, իսկ ուրիշ... Ուրիշ ոչինչ: Երբ հարկաւոր է այդ զուակին, այդ գեռափրթիթ էակին կրթել, կատարեալ մարդ դարձնել, այն ժամանակ անդօր է բնազդը: Այդ տեղ անհրաժեշտ է գիտութիւն ու նախապատրաստութիւն, սրնցից զուրկ է մեր կանանց ամենամեծ մասը... Դրանց համար մայրական պարտականութիւնները կարծես վերջանում են «ծիժ տալով»: Երեխային ծծից կարեց—տրեմն մայրական ամենազիւաւոր պարտականութիւնից ազատուեց: Բայց չէ՞ որ կենդանիներն էլ այդպէս են վարուած: Մթթէ մարդը այդ միևնոյն աստիճանի վրայ է կանգնած:

Երբ տղամարդը ուզում է մի օրեւէ արհեստով պարասել, սկզբում նա սովորում է այդ արհեստը: Հակառակ դէպքում նա պարաս կը մնայ, հասարակութիւնը նրան գործ չի հաւատայ: Իսկ մայրութիւնը... Մթթէ հասարակ արհեստից էլ ստոր է, որ հասարակութիւնը նրա համար ոչ մի նախապատրաստութիւն չէ պահանջում մայրերից:

Երեխաների մահացութեան թւի շատութիւնը, նրանց վատասողչութիւնն ու ֆիզիքական—մտաւոր անբաւարար զարգացումը ցոյց են տալիս, որ մեր մայրերը կանոնաւ չեն իրանց կրչման բարձրութեան վրայ:

Գուցէ աստղեր լինեն, թէ այդ բանում մեղաւորը իրանք կանայք են: Ինչու չեն հասկանում իրանց կրչումը, ինչու չեն կատարում իրանց պարտականութիւնները... Այն, կանայք էլ են մեղաւոր, բայց ամենամեծ մեղքը տղամարդկանց—ամբողջ հասարակութեան վրայ է բնկնում, որովհետեւ նրանք են այդ գրութիւնը ստեղծողը, նրանք են կանանց ազատութիւնը ճշնշողը, նրանց իրաւունքները սահմանափակողը:

Մեր ընտանեկան կեանքը կարօտ է բարեփոխութեան, կարօտ է գիտութեան լոյսի, բայց մենք նրան չըջապատել ենք անթափանցելի դողով, որպէսզի օտարի աչքը ներս չը թափանցէ: «Տունը մարդու ամբոյն է», ասում է ժողովրդական ա-

ոսածը, իսկ այդ տան տէրը—տղամարդը ամեն կերպ խոյս է տալիս փոփոխութիւններէ:

Մեր մէջ մի տեսակ համոզմունք է կազմուել, թէ մեր ընտանեկան կեանքը շատ լաւ վիճակի մէջ է, թէ նրա գլխաւոր հիմքը կրնն է եղել և պիտի լինի, ուստի կանանց գրութեան փոփոխումը կարող է քանդել այդ տան «օջախը», կարող է աւերել ընտանեկան երջանկութիւնը:

Այդ երեւոյթի գլխաւոր պատճառն այն է, որ մենք արդէն վարժուել ենք հին կարգերին. իսկ երբ մարդ գոհ է դուրսիցն ունեցող պայմաններից, այն ժամանակ շատ դժուար է նրան համոզել, թէ նրանք վնասակար են, թէ նրանցից աւելի լաւերը կան: Նոյն իսկ դժգոհ մարդը աւելի շուտ այդ վատ պայմանները անհատական հանդամանքների կը վերագրէ, քան թէ ընդհանուր չարիքի: Շատերը նոյն իսկ չէին էլ ցանկանայ չարիք պատճառող պայմանները փոխել, վախկնայով թէ մի գուցէ նորերը հնարից էլ վատթար լինեն:

Ահա այդ հանդամանքները շատ մեծ դեր են խաղում կանանց հարցում: Դրանց ազդեցութեան տակ մենք չենք ուզում հին կարգերը փոխել, նորերը հաստատել, բայց ամենից առաջ մենք աչքի առաջ պիտի ունենանք հետեւեալ տարրական ճշմարտութիւնները:

Մենք ծնում ենք ոչ միայն ապրելու, այլ և զարգանալու, առաջադիմելու համար: Սովորական կենդանիների և նրման այն մարդիկ, որոնք կարծում են, թէ միայն գոյութիւն պահպանելով և սերունդ առաջացնելով կատարած կը լինեն իրանց մարդկային պարտականութիւնները: Բայց մարդիկ բարձր են կենդանիներից, նրանց կեանքի նպատակն էլ բարձր պիտի լինի, նրանք միշտ պիտի առաջադիմեն:

Առաջադիմութիւն ասելով պէտք է հասկանայ այն ամենը, ինչ որ նպատակ է մարդկային երջանկութեանը թէ անհատական և թէ հասարակական տեսակէտից:

Արդեօք համապատասխանում է մեր ընտանեկան կեանքը իշխեալ պահանջներին: Ո՛չ, նա իր ցանցերով ճնշել է կնոջ ազատութիւնը, զրկել է նրան անտեսական անկախ գրութիւնից: Նա ոչնչով չէ աջակցում կնոջ առաջադիմութեանն ու երջանկութեանը: Ուրեմն անհրաժեշտ է բարեփոխութիւն մտցնել՝ կանանց համար անտեսական անկախ գրութիւն ստեղծելով:

Այդպիսի գրութիւնը անշուշտ բարեփոխութիւն կը մտցնէ ընտանեկան յարաբերութիւնների մէջ. բայց այդ փոփոխութիւնը օգտակար կը լինի, նա չի փոխի ամուսնական յարաբե-
Փետրուար, 1903.

բութիւնները, բացի այն, որ կինն այլևս ամուսնուց անտեսու-
կան կախում չի ունենայ:

Ասողներ կան, թէ կինը չէ կարող լաւ մայր լինել, եթէ անտեսական անկախութեան ձգտի, եթէ ամուսնանալուց յետոյ էլ ուղենայ իր սեփական աշխատանքով նիւթական բարիքներ ձեռք բերել: Բայց դա միանգամայն սխալ է: Միթէ կինը իր ամբողջ ժամանակը զործադրում է մայրական պարտականութիւնների համար: Ի հարկէ՞ ոչ: Ուրեմն ի՞նչ վնաս, եթէ նա ազատ ժամանակը գրազուի գեղարուեստով, գրականութեամբ, արդիւնադործութեամբ՝ մի խօսքով մի այնպիսի գործով, որը կարող է նիւթական որոշ ապահովութիւն տալ և արդամարդու իշխանութիւնից ազատել:

Չը մտանանք, որ կան մայրեր, որոնք ուղղակի անկարող են իրանց վրայ վերցնել երեխաների հողատարութիւնն ու դաստիարակութիւնը: Դրա գլխաւոր պատճառները երկու են:

Առաջինը՝ ամեն մի մայր բնութիւնից չունի այն բոլոր բնյունակութիւնները և ոյժը, որոնք անհրաժեշտ են երեխաներին լաւ խնամելու և մեծացնելու համար:

Երկրորդ՝ ամեն մի մայր չէ ունենում իր գաւախներին դաստիարակելու համար անհրաժեշտ գիտութիւնը: Ահա այդ հանգամանքներում մանկական պարտէզները կարող են օգնութեան համնել:

Այգպիսիների համար փրկարար միջոց են մանկական պարտէզները, որոնք զգալի չափով թեթեւացնում են մայրական պարտականութիւնները: Այդ հիմնարկութիւնների նպատակն է՝ յանկալի ուղղութիւն տալ երեխաների բնական հակումներին:

Երեխային այդ բանը երբէք չի վնասի, մայրն էլ ոչինչ չի կորցնի: Ի՞նչ վնաս, եթէ երեխան օրուայ մի մասը անցկացնէ հմուտ ձեռքի հսկողութեան տակ: Ի հարկէ մօր կուրծքը և նրա գգուանքները դարձեալ կը կատարեն իրանց դերը: Իսկ գրանց հետ միասին երեխան օրուայ մի մասը կ'անցկացնէ լուսաւոր ու մեծ սենեակներում, կը խաղայ խոտերի ու ծաղիկների մէջ, կը մեծանայ բնութեան գրկում, բանիմաց դաստիարակների ղեկավարութեամբ: Նա մենակ չի լինի, նրա հետ կը լինեն նաև նրա հասակակից ընկերները: Բոլորին էլ յայտնի է, որ երեխաները սիրում են միայն իրանց հասակակիցների հետ խաղալ, որովհետև միայն այդպիսիների մէջ կարող է հաստատութիւն թափաւ որել: Իսկ բնատանիքի մէջ երեխան չէ կարող այդ անսակ ընկերներ ունենալ:

Մանկական պարտէզից յետոյ մօր հետ անցկացրած ժամերը ասենաւրջանիկ, ասենաքաղցր ժամերը կը լինեն երեխայի

համար: Օրերն այդ տեսակ կանոնաւոր անցկացնելը երեխայի հոգու մէջ կը գրօջմէ հաւասարութեան և ընդհանուր շահերի գիտակցութիւնը և կը հեռացնէ ամեն մի ևսական զգացմունք, որը զարգանում է, երբ նա միակ երեխան է ընտանիքի մէջ, կամ երբ նրան ճնշում են մեծ եղբայրներն ու քոյրերը:

Ամիսիկելով մեր վերեւ ասածները՝ կը դանք այն եզրակացութեան, որ մայրերը կարող են հրաշքներ գործել, ահագին բարիքներ հասցնել մարդկութեանը, եթէ կանգնած լինեն իրանց կոջման բարձրութեան վրայ, եթէ ունենան գիտութիւն ու անտեսական անկախութիւն:

III

Հին դարերից սկսած երկու սեռի մէջ բաժանուած աշխատանքի բնական հետեանքը այն է եղել, որ կնոջը բաժին է ընկել տնային գործունէութիւնը—անտեսութիւնը, իսկ տղամարդուն՝ ամբողջ աշխարհը: Այդպիսով մայրական բարդ պարտականութիւններից յետոյ կնոջ կեանքում մեծ նշանակութիւն ունի տնտեսութիւնը: Մենք տեսանք, որ կանայք հասարակական աննպատակ պայմանների չնորհիւ չեն նախապատրաստուում մայրութեան համար: Այժմ քննենք և տեսնենք, թէ արդեօք ներանք նախապատրաստուում են իրանց միւս գլխաւոր պարտականութեան համար:

Մենդառութեան նիւթերը մինչև մարդու բերանը հասնելը՝ շատ անգամ փոխարինութեան սխտեմի չնորհիւ երկար ճանապարհորդութիւններ են կատարում, երկրից-երկիր են անցնում: Այդ նիւթերի վերջնական ընտրութիւնն ու մշակումը կնոջ պարտականութիւնն է կազմում: Կինն է նրանցից կերակուր պատրաստողը:

Եթէ այդպէս է, եթէ ուտելիք պատրաստելը միայն կնոջ սեփականութիւնն է կազմում, ապա ուրեմն պէտք է սպասել, որ նա՝ այդպէս ասած՝ խոհարարական գիտութիւնը լաւ սովորած կը լինի: Սակայն իրականութեան մէջ այդպիսի բան չը կայ: Կանանցից շատերը զազափար անդամ չ'ունեն ուտելիքի մթերքների լաւ ու վատ յատկութիւնների մասին: Նրանց շատ հեշտութեամբ խաբում են ծախողները՝ լաւի տեղ վատը տալով: Եթէ ամեն մի անտեսուհի ունենար մասնագիտական հասկացողութիւն, անշուշտ նա կը նկատէր ու կը հասկանար այն բոլոր խարդախութիւնները, որ կատարում են խանութպանները՝ կաթի, սնորհի, մրգեղէնների, մսի և այլ նիւթերի վերաբեր-

մամբ: Դրանք այնպիսի խարդախութիւններ են, որոնք երբեմն մեծաւեժ վնասներ են հասցնում մարդկային առողջութեանը:

Խոնարարութիւնն էլ մի այնպիսի արհեստ է, որ պահանջում է որոշ գիտութիւն և նախապատրաստութիւն:

Ճիշտ է, կինը աշխատում է ամեն մէջ, կերակուր է պատրաստում, բայց այդ բոլորը նա անում է իր «թագաւորի», իր ամուսնու ճաշակին ու պահանջներին բաւարարութիւն տալու համար: Այդպիսով տղամարդը աւելի երես է առնում, աւելի ազատութիւն է տալիս իր քմահաճոյքներին: Իսկ կինը... նա պէտք է միշտ խոնարհուի և համբերատար լինի, միշտ պիտի հպատակուի տղամարդու կամքին: Չէ՛ որ նրանից է ստանում իր սպրուստի միջոցները, ուրեմն դրա փոխարէն ստիպուած է ստրկական գրութեան մէջ մնալ: Այդպէս են ներկայ կարգերը, այդպէս է նրան հրամայում հասարակութիւնը:

Երբ կինը մի որևէ խոնարարական գալրոց է յաճախում, նա այդ անում է միայն այն նպատակով, որ սովորէ թանկագին կերակուրներ պատրաստել, որպէսզի դուր գայ իր մերձաւորին: Բայց այդ դեռ բաւական չէ: Նա պիտի աշխատէ սովորել այնպիսի բաներ, որոնք կը նպաստեն նրա ընտանիքի առողջութեանը: Օրինակ՝ մթերքների սրակը, անդառութեան ատօմանը և այլն: Առողջ հոգին առողջ մարմնի մէջ կը լինի. իսկ մարմնի առողջութիւնը կախուած է լաւ սնունդից: Ուրեմն զբոսանքից կարելի է եզրակացնել, թէ մարդկութեան համար սրբան մեծ նշանակութիւն ունի կերակուր—անուշոք պատրաստելու հարցը:

Ամենանպատակաշարմարն այն կը լինի, որ խոնարարական արհեստը յանձնենք յատուկ մասնագէտներին: Հարկաւոր չէ, որ ամեն կին անպատճառ զբաղուի դրանով: Եթէ նա ընդունակ չէ, նախապատրաստուած չէ—թող իր ոյժերը գործադրէ այլ ասպարէզում, որտեղ որ աւելի օգտակար կարող է լինել: Բայց դրա համար անհրաժեշտ է քանդել նրաստրկութեան շղթաները, անհրաժեշտ է ազատութիւն ու իրաւունքների հաւասարութիւն տալ:

—Կինը կերակուր չը պատրաստէ !? անշուշտ կը բացազանջն շատերը: Ապա էլ ինչո՞ւ է հարկաւոր նա, եթէ այդ էլ չ'անէ...

Այն, մինչև այժմ նա միայն կերակուր պատրաստելով է ցոյց տուել իր անակասական արժէքը, որովհետև գործելու ուրիշ ասպարէզ չի ունեցել: Տուէք նրան ազատութիւն և այն ժամանակ կը համոզուիք, որ կանայք տղամարդկանցից ոչ պակաս օգտակար կարող են լինել գիտութեան ու հասարակական գործունէութեան բոլոր ասպարէզներում:

Եւ միթէ քիչ փաստեր կան այդ ճշմարտութիւնն ազա-
յոցանելու համար: Թերթեցէք պատմութիւնը և դուք կը տես-
նէք, թէ քանի-քանի կանայք փառքի պատկերներ են ստացել ի-
րանց քաջութեան, հայրենասիրութեան, անձնազոհութեան և
այլ բարձր յատկութիւնների համար: Միթէ կանայք չէին Յու-
զիթը, Եսթերը, Սանդուխտը, Շուշանիկը, Օրլէանի կոյսը և ու-
րիշ շատերը, որոնց անունները գովասանքով են յիշած պատ-
մութեան մէջ: Սահայն թողէք պատմութիւնը և մտէք այժմեան
քաղաքակիրթ երկիրները՝ Ամերիկա, Եւրոպա և այն ժամանակ
դուք կը տեսնէք, թէ որքան բազմաթիւ կանայք արդէն դոր-
ծում են գիտութեան, գրականութեան, գեղարուեստի և այլ
ասպարէզներում: Միթէ փոքր է շնորհալի գերասանուհիների,
երգչուհիների, կին գրողների, նկարչուհիների և այլ կին գոր-
ծիչների թիւը:

Այդ բոլոր փաստերը յոյց են տալիս, որ կանայք բացի
մայր ու խոհարարուհի լինելուց՝ կարող են նաև ուրիշ ա--
պարէզներում օգտակար լինել: Բայց՝ ի հարկէ՝ այդ օգտակա-
րութիւնը տեսնելու համար անհրաժեշտ է փոփոխութիւն մացը-
նել մեր կեանքի մէջ՝ սկսելով ընտանեկան շրջանից: Ի՞նչո՞ւ
օրինակներին:

Եթէ քաղաքներից մէկում չլինենք մի մեծ ու յարմար տուն
ստանձին-ստանձին բնակարաններով և ընդհանուր խոհանո-
ցով, որը բոլոր ընտանիքներին ճաշ կը մատակարարէ իրանց
սենեակներում, այդ տան մէջ կարգ ու մարքութիւն պահպանե-
լու համար ամեն մի ընտանիք կարիք չի ունենայ իր սեփական
ճառագոյններն ունենալու, այլ կը լինեն ընդհանուր ճառաներ
բոլորի համար էլ: Այդպիսի բնակարանների օգուտն այն կը լի-
նէր, որ հնարաւոր կը գտնար ամեն սեռակալ յարմարութիւններ
ունենալու էջման դնով: Տան կից կը լինէր երեխաների համար
ձմերպային ու ատարային այգիներ, ցերեկուայ մանկանոց հմտ
գեղավարների հսկողութեան տակ: Ամեն մի դորձ կը կատա-
տարուէր հմուտ մասնագէտների ձեռքով և ի հարկէ աւելի լաւ,
քան թէ այժմեան պայմաններում:

Ինչպէս արդէն ասացինք, ամեն մարդ կարող է պահանջել,
որ ճաշը իր բնակարանը բերեն, բայց՝ ի հարկէ՝ ամենից յար-
մարն է ընդհանուր սեղանատանը ճաշել: Եթէ ընտանիքները
կարող են առանց անախորժութիւնների միասին լողանալ, թա-
տրոն ու եկեղեցի յաճախել, երաժշտութիւն լսել, խնչու չը
պիտի կարողանան միասին ճաշել:

Շատերը կարող են առարկիլ, թէ զբանով կարող է ընտա-
նիքի կապը քայքայուել: Բայց միթէ ծիծաղելի չէ այդպիսի ա-

աարկութիւնը: Միթէ միասին ճաշելով պիտի ընտանիքի անդամները իրար հետ կապուեն, իրար սիրեն...:

Այդպիսի բնակարանները չափազանց օգտակար կարող են լինել մանաւանդ կանանց համար, որովհետև աշխատանքի խելացի բաժանումը նրանց հնարաւորութիւն կը տայ աւելի քիչ աշխատել, բայց աւելի շատ օգուտ տալ, աւելի հմտութեամբ կատարել յանձնարարուած գործը:

Ներկայումս քսան ընտանիքներում ամենաքիչը քսան կին աշխատում է ճաշ պատրաստելու համար և՛ չը նայելով զբան, զարձեալ անբաւարար է կատարում այդ գործը, մինչդեռ վերևում յիշուած տան մէջ այդ միևնոյն աշխատանքը կարող են կատարել 4—5 հոգի և աւելի հմուտ կերպով: Այդպիսով անհագին խնայողութիւն է ստացւում:

Տնային պարապմունքներից ազատ մնացած կանայք էլ կարող են գործել ուրիշ ասպարէզներում՝ իրանց զիտութեան և ընդունակութիւնների համեմատ:

Բայց կան կարծողներ, թէ մինչև այժմ կնոջ ձեռքում է եղել տնտեսութիւնը՝ կերակուր պատրաստելն ու տան մաքրութեան վրայ հսկելը, սրանից յետոյ էլ այդպէս պիտի շարունակուի:

Ձարմանալի է, որ ամենից քիչ զբաււոյթիւն ունեցող այս աշխատանքը միմիայն կնոջ պարտականութիւնն է համարուում: Ուրեմն կինը, որ համարւում է գեղեցիկ ու քնքոյշ արարած, սիրելի ամուսին, յարգելի մայր, շարունակ պիտի կատարէ խոհարարուհու և աղախնի պաշտօնը: Միթէ անբնական չէ դա:

Այո, անբնական է, ուստի և անհրաժեշտ է տալ կանանց ազատութիւն ու տնտեսական անկախութիւն, որպէսզի նրանք էլ ազամարդկանց նման իրանց ընդունակութիւնների ու ցանկութեան համեմատ ընտրեն այս կամ այն մասնագիտութիւնը և կանոնաւոր կերպով նախապատրաստուեն զբա համար:

Հին ժամանակներում մարդիկ բաւականանում էին գլխաւորապէս ընտանեկան յարաբերութիւններով, բայց երբ հետզհետէ առաջ եկան նորանոր պահանջներ, երբ հաղորդակցութեան չնորհիւ հեշտացաւ առևտուրը և զարգացաւ արդիւնագործութիւնը, այն ժամանակ փոխուեցին նոյնպէս անհատական յարաբերութիւնները, և գոյութիւն ստացաւ «հասարակութիւնն» ու հասարակական յարաբերութիւնները:

Շատ ժամանակ չէ, ինչ կանայք որպէս անհատներ մասնակցում են այդ հասարակական յարաբերութիւններին, որ մեր

քաղաքակրթութեան էական սլայմանն է կազմում: Դա ոչ թէ բառականութիւն է կամ զուարճալիք, այլ մի անհրաժեշտութիւն:

Կանանց համար էլ՝ որպէս անհատներ՝ պատահել տղամարդկանց կամ կանանց հետ՝ անկախ ընտանեկան յարաբերութիւններից—ներկայումս պահանջ է դառել նա՝ որպէս հասարակական պահանջ՝ որոչ չափով ստանում է իր բաւարարութիւնը, բայց նրա կանոնաւոր զարգացմանը արդիւր կն հանդիսանում մի շարք ընտանեկան ու հասարակական սովորութիւններ, որոնց պատճառները պէտք է որոնել անտեսական-սեռական յարաբերութիւնների մէջ:

Տղամարդկանցից շատերը զանազան պատճառներով ստիպուած են լինում երկար ժամանակով կամ մշտապէս հետու ապրել իրանց աղջկաններից. իսկ սեփական ընտանիք կազմելու համար նրանք ոչ միջոց կն ունենում և ոչ էլ մտածում են: Կանայք էլ հեղինակէ սկսում են առանձին ապրել և մի որոշ ժամանակ անհատական կեանք վարել:

Չանազան կրօնները, հիւրանոցները և կահաւորած սեւեռակներն են այդ դասակարգի մարդկանց ազատտարանը: Նրանք անկարող լինելով սեփական յարկ կազմել, որ կապուած է մի շարք դժուարութիւնների հետ, ստիպուած են լինում տանել այդ տեսակ հիմնարկութիւնների ատոջապահական ու բարոյական աննպաստ պայմանները:

Մենք պէտք է հիմնենք ամուսնութիւնից բոլորովին անկախ մարդկային ընտելարաններ, որտեղ կը կարողանային այդ տեսակ մարդիկ ազատ ու ապահով կեանք վարել: Այդ բանը միայն այն ժամանակ զլուխ կը դար, եթէ կանայք էլ անտեսապէս անկախ դրութիւն ունենային, եթէ նրանց վզին չը փաթաթէին միմիայն խոհանոցային ու անային աշխատանքները: Այդպիսի պայմաններում ամուսինները կարող էին ամուսնանալ, երբ որ ցանկանային, առանց ճնշելու մէկի կամ միւսի անտեսական դրութիւնը:

Եթէ կանայք համոզուած լինեն, որ իրանց երջանկութիւնը և խողազ կեանքը ապահովուած կը լինի նաև չ'ամուսնանալու դէպքում, այն ժամանակ նրանք կը զգան սեփական ոյժերի գիտակցութիւն, չեն ստորացնի իրանց արժանապատուութիւնը, այսինքն կ'ունենան այնպիսի յասկութիւններ, որոնք անհրաժեշտ են ամեն մի մարդ-արարածի առաջադիմութեան համար:

Մենք բոլորովին անտեղի կերպով վախենում ենք, թէ ներկայ ընտանեկան կեանքի բարեփոխութիւնը շատերին հնարաւորութիւն կը տալ ընդ միշտ ամուսնի մնալու: Ո՛չ, դա սրբալի կարծիք է: Այդ բարեփոխութիւնը կը մաքրէ ամուսնու-

Թիւնը փողոցային—վաճառականական ստոր հաշիւներից և կը դնէ մի այնպիսի հիւրքի վրայ, որպիսին է անկաշառ ու անարատ սէրը, որը չէ ճանաչում ոչ մի հաշիւ բացի դադափարական ընկերակցութիւնից:

Ներկայ ընտանեկան—սնտեսական պայմաններում մեր ամենօրեայ յարաբերութիւնները մեր ազգականների կամ ծանօթների հետ շատ սահմանափակ են և կրում են նեղ ընտանեկան բնաւորութիւն: Միթէ կարելի է պահանջել, որ ընտանիքի բոլոր անդամները յարգեն միևնոյն ծանօթին կամ հիւրին, կամ ընդհակառակը—ծանօթը, հիւրը—բոլոր անդամներին: Ի հարկէ՝ ոչ: Բայց սրբանձն անախորժութիւններ են առաջանում այդպիսի պահանջներից:

Ընտանեկան ներկայ կեանքի պայմանները փոփոխելով, այսինքն սեռական հիւրքը հասարակականի վերածելով, կարելի է առաջ բերել լայն անհատական ինքնուրոյնութիւն:

Մենք հաշտ աչքով ենք նայում, երբ ազամարդիկ այցելում են կուրներ և ուրիշ ժողովատեղիներ, նոյն իսկ գովարանում ենք այդպիսիներին, անուանելով ընկերասէր մարդիկ: Բայց ինչո՞ւ ենք զատափետում այն կանանց, որոնք նայնպիսի ձգտում են ցոյց տալիս, այսինքն ուզում են ընտանեկան յարկից դուրս էլ ժամանակ անցկացնել, ընկերութիւն ունենալ: Միթէ կիներն էլ մարդ չէ մարդկային պահանջներով ու ձգտումներով:

Շատերը աշխատում են երեխաներին էլ «տանը պահել», որպէս զի տունը աւելի գրաւիչ դարձնեն, հետևելով հին նահապետական իդէալին՝ թէ ամբողջ աշխարհը ընտանիքների հաւաքածու է, ուրիշ ոչինչ: Բայց դրանք մոռանում են, թէ անհատներն են, որ կազմում են ընտանիք, հասարակութիւն ու ամբողջ մարդկութիւն, ուրեմն ամենից շատ անհատական ազատութեանը պիտի նպաստել:

Ամեն մի անհատ կարիք է զգում ունենալու իր նմանները. երեխաները մի առանձին հակում են զգում դէպի երեխաները, երիտասարդները—դէպի երիտասարդները, ծերերը—դէպի ծերերը և այլն: Ինչպէս որ անհատը կարիք է զգում սենակութեան, որը նա գտնում է իր «յարկի» տակ, նոյնպէս էլ նա կարիք է զգում մի այնպիսի տեղի, որտեղ կարողանար, գտնել իր նրմաններին, իր դադափարակիցներին: Ուրիշ խօսքով ասած՝ իւրաքանչիւր անհատ հասարակական լայն յարաբերութիւնների պահանջ է զգում:

Տղամարդը ունի հնարաւորութիւն այդ պահանջին բաւարարութիւն տալու, իսկ կինը—ոչ: Հասարակութիւնը նրան ըս-

ախարհում է փակուած մնալ ընտանեկան յարկի տակ, իր մերձաւորներին չըջանում: Ճիշտ է, կանայք էլ կատարում են զանազան այցելութիւններ, հաւաքում են միասին, պատում են իրար, հիւրասիրում են քաղցրաւնիքով ու զանազան կերակուրներով, բայց նրանց մէջ չը կայ սերտ կապ, հաստատուն ծանօթութիւն: Չեւեռութիւնն ու կեղծ քաղաքավարութիւնն է այդտեղ գլխաւոր դեր խաղացողը: Բարեբախտաբար աւելի քիչ ձեւակնութիւն կայ տղամարդկանց յարաբերութիւնների մէջ, որովհետեւ նրանք աշխատութեան ժամանակ էլ չփութում են իրար հետ, որովհետեւ նրանց յարաբերութիւնների կապը աւելի բնական է, աւելի պինդ:

Կանանց մէջ էլ կարող է առաջ գալ այդպիսի յարաբերութիւն, եթէ նրանք դուրս դան իրանց փակուած վիճակից, եթէ ամբողջ ընտանեկան կեանքը բարեփոխութեան ենթարկուի:

Երկու սեռի երիտասարդներին թոյլատրում է որոշ չափով ազատ յարաբերութիւն, բայց բացառապէս սեռական հիմքի վրայ դրուած: Ամեն մի կրթուած երիտասարդ կամ օրիորդ անշուշտ անբաւական կը լինի իրերի այդ տեսակ դրութիւնից: Նրանք կ'ուզենային պահպանել իրանց մէջ բնական յարաբերութիւն, սակայն չեն կարողանում դիմանալ հասարակական ճնշմանը:

Երիտասարդների ու օրիորդների կեղծիքը բացւում է մասնաւոր ամուսնական հարցը վճռելուց յետոյ:

Երբ հարսնացուի ընտրութիւնը կատարուած է, էլ ինչո՞ւ ուշադրութիւն դարձնել միւս օրիորդների վրայ, կամ թէ չէ փեսայի ընտրութիւնից յետոյ էլ ինչո՞ւ ընդունել միւս երիտասարդների սիրալիութիւնները:

Պարզ է ուրեմն, որ երիտասարդների ու օրիորդների արտաքին-ժամանակաւոր մտերմութիւնը միայն ամուսնանալու միջոց է: Ոչ ոք չէ կարող ենթադրել, որ կինը ամուսնանալուց յետոյ էլ ջերմ ցանկութիւն կ'ունենայ տեսնուել, բարեկամական յարաբերութիւններ ունենալ ուրիշ տղամարդկանց հետ, կամ տղամարդը-կանանց հետ:

Հասարակութեան «բարձր» կոչուած խաւերում ամուսնութիւնից յետոյ որոշ չափով թոյլատրում է երկու սեռի մէջ ազատ հասարակական յարաբերութիւն, սակայն այստեղ էլ ձեւակնութիւնն է մեծ դեր խաղում:

Շատ անգամ պատահում է, որ ամուսնութիւնից առաջ գոյութիւն ունեցող մտերմութիւնը անհետանում է մարդու և կնոջ մէջ, չորհիւ ընտանեկան-սնտեսական յարաբերութիւններին: Նրանք այնքան խորն են թաղում նիւթական հաշիւնե-

րի մէջ, որ ժամանակ չեն ունենում առաջուայ նման մտերիմ լինել: Այս բոլորը խանդարում են ազամարդու և կնոջ աւելի բարձր և մարտը յարարերութիւնը:

Տղամարդը համոզուած է, որ իր յաջողութիւնը կանանց չըջանում կախում ունի իր քսակից-փողից, և նա ահազին ծախսեր է անում կնոջ քմահաճոյքները կատարելու համար: Այդ բոլորի գլխաւոր պատճառը կնոջ ոչ անկախ տնտեսական դրութիւնն է: Ուրեմն վերջ գնելով այդ դրութեանը, կարելի է նաև այդ շարիքը վերացնել:

Շնորհիւ զանազան մասնագիտական պարագմունքների՝ կնոջ մէջ կրսկէէ զարգանալ անհատականութիւնը, որը և կը թեթեաղնէ կնոջ ու ազամարդու տնտեսական-սեռական յարաբերութիւնը—ճշուումը:

IV

Ուշի ուշով նայենք մեր շուրջը և այն ժամանակ կր տեսնենք, որ ցանկալի աշխատանքն արդէն սկսուել է:

Ազատել ամբողջ մարդկութեան կէսը—իգական սեռը անբընական կերպով առաջացած պայմաններից, տալ նրան միջոց զարգացնելու իր ոյժերը, ստեղծել նոր պայմաններ, որոնք կը փոխէին մարդկային յարաբերութիւնները, կը զարգացնէին հասարակութեան ամբողջ կազմը—ահա սա է այն մեծ աշխատանքի նշանաբանը, ահա դրան է ձգտում կանանց շարժումը:

Այդ շարժումը սկսուած է քաղաքակիրթ երկրներում և մեծ արդիւնքներ է տալիս: Մեղանում էլ նշմարում են նրա նշոյլները, հարկաւոր է միայն զարգացնել նրանց և զարկ տալ ցանկալի հոսանքին:

1870 թ. Միացեալ-Նահանգներում միայն 412 նկարիչ ու քանդակագործ կանայք կային, իսկ այժմ—19,810: Կին-փաստաբանների թիւը միայն 5-էր, իսկ այժմ—308: Պետական ծառայութեան մէջ դործող օրիորդների թիւը 415-էր, իսկ այժմ—15,000:

Անդլիայում և Վալլէտում ծառայող կանանց թիւը եղել է *).

	1861 թ.	1891 թ.	
Գրասենեակներում	408	17,859	կին.
Քաղաքացիական պաշտօններում	1931	8,546	—
Լուսանկարչուհիներ	168	2,469	—
Տպարաններում	419	4527	—

*) «Handbuch der Frauenbevegung» s. 267—268.

Դեղատներում	388	1,340	—
Գրավաճառանոցներում	952	2,240	—

Ի հարկէ այդ բոլորը դեռ իրաւունք չեն տալիս պնդելու, թէ կանաչը դերազանցում են տղամարդկանց, կամ նրանց հետ հաւասարուել են: Կարելի է միայն այսքանն ասել, որ ժամանակակից կիներ շատ բաներում տարբերում է հին ժամանակուայ կնոջից:

Ներկայումս կրթուած կիներ բացի «կանացիութիւնից», բացի ֆիզիկական դեղեցկութիւնից, ունի նաև անհատական որոշ ձգտումներ: Նա այլ ևս չէ բաւականանում միայն «ապրելով», նա ուզում է նաև «գործել»:

Դարաւոր ստրկութիւնը դրել է իր գրոշմը կանանց վերայ, նրանց անչարժութիւնը, փակուած կեանքը և ուրիշից ազրուստի սիջոյ ստանալու տենչը կաշկանդել են նրանց ոյժերը, ամուր պատնէշ են բարձրացրել ազատ գործունէութեան առաջ: Բայց քաղաքակիրթ երկրներում տնտեսական ու բարոյական պահանջները վերջապէս քանդեցին այդ պատնէշը և գործելաշխատել ստիպեցին կնոջ:

Շատերն աշխատում են միմիայն կարիքից դրդուած, շատերին էլ, ի հարկէ, միայն կարիքը չէ, որ ստիպում է գործունէութեան ասպարէզը մտնել, այլ գիտակցութիւնը, անկախ գրութիւն ստեղծելու ցանկութիւնը:

Միթէ քիչ կան այնպիսի օրիորդներ ու տիկիներ, որոնք միշտ ձգտում են դէպի անտեսական անկախութիւն, որոնք զըզուանքով են վերաբերում հօրից կամ ամուսնուց փող խնդրելուն:

Առաջ կիներ շատ մեծ դեր էր կատարում տանը իբրև աշխատուոր, բայց մեքենաների զարգացումը, որի հետևանքն էր տնային արդիւնագործութեան ոչնչացումը, ժամանակաւորապէս զրկեց նրան տնտեսական գործոն լինելուց: Սակայն այդպիսի գրութիւնը երկար չը տևեց: Կիներ մեքենաների յետևից մտաւ գործարանները և նորից կապուեց տնտեսական կեանքի հետ:

Այժմ շատ դժուար է ցոյց տալ մի այնպիսի արդիւնաբերական ճիւղ, որի մէջ կիներ մասնակցութիւն չունենար: Բանւորունէի-կանանց թիւը հասնում է Միացեալ Նահանգներում 3 միլլիոնի: Անգլիայում բանւորների թիւը եղել է *):

	Տղամարդ	Կին:
1871 թ. 11,593,466, որից	8,270,186	և 3,323,270
1881 11,187,564	7,783,646	3,403,918
1891 12,898,484	8,883,254	4,016,230

*) «Die Frau» s. 205.

Միայն Լճնդանի գործարաններում ներկայումս աշխատում են մօտ 140,000 բանուորակներ:

Առաջ ընտանիքի կին անդամները շատ սերտ կերպով էին կապուած միմիանց հետ. նրանք հաւարտով էին միասին, կարում էին, աշխատում էին, զրուցում էին, շատ անգամ էլ նըրանցից մեծը գիւք էր կարգում՝ իսկ ջահէլները լսում ու աշխատում էին:

Իսկ այժմ շատ գծուար է գտնել մի այնպիսի զբաղմունք կամ մի այնպիսի ընթերցանութիւն, որ կարողանար բոլոր անգամներին էլ բաւականութիւն պատճառել:

Միևնոյն ընտանիքի անդամները չունեն այն սերտ-նեղ յարաբերութիւնը, ինչ որ տուաջ: Այժմ հասարակութիւնը ազգում է առեն մի անհատի վրայ, և ամեն մէկն էլ ուզում է ազատ կերպով իր պահանջներին բաւարարութիւն տալ: Այգպիսով զարգանում է անհատական ազատութիւնն ու ինքնուրոյնութիւնը:

Կանանց մէջ այս փոփոխութիւնն աւելի նկատելի է, որովհետև նրանք աւելի շատ են ենթարկուած ընտանեկան նեղ կեանքի ազդեցութեանը:

Շատ կանայք, ցանկանում են ոչ միայն սեփական փող ունենալ, այլ և սեփական աշխատանք: Բայց կտն մարդիկ, որոնք հակառակ են կանանց ինքնուրոյն աշխատանքին, որոնք ասում են, թէ կանայք չը պէտք է մրցեն տղամարդկանց հետ, չը պէտք է մարտեն նիւթական կեանքի ուժեղ հոսանքի դէմ:

Այգպիսիները մտնում են, որ աշխատանքը միայն սպորտսի միջոց չէ: Մտնում են, որ աշխատանքը ազնւացնում է մարդուս և զարգացնում է մարմինն ու հողին: Երբ կիներ չփուում է իրական կեանքի հետ, երբ ձեռք է բերում սեփական աշխատանք, այն ժամանակ նա «սեռական էակից» դառնում է իսկական մարդ:

Շատերն էլ աշխատում են համոզել, թէ կիներ իր վրայ վերցնելով մարդկային ընդհանուր պարտականութիւնների մի մասը, կը կորցնէ իր զբաղմունքը, իր կանայցիութիւնը:

Ի հարկէ, եթէ կարելի լինէր հաստատել, որ աշխատող կանանց դէմքը ծածկուում է մօրուքով, որ նրանց կազմուածքն ու սակորները կերպարանափոխուում են, որ նրանք սկսում են բասով (կոկորդով) խօսել և այլն, այն ժամանակ տեղիք կը լինէր երկիւղ կրելու: Բայց փաստերը ցոյց են տալիս, որ կիներ աշխատութեան մէջ էլ միևնոյն կիներն է մտում: Տարբերութիւնը միայն այն է, որ վերջինս աւելի փորձուած, աւելի խելացի է

դառնում և իր աշխատանքի շնորհիւ տնտեսական անկախութիւն է ձեռք բերում:

Կանանց հետաքրքրութիւնը դէպի հասարակական շահերը սկզբում ծաղրով ընդունուեց. իսկ այժմ այդպէս չէ քաղաքակիրթ երկրներում: Օրինակ, Ամերիկայում դժուար է գտնել մի կին, որ չը մասնակցէ մի որեւէ հասարակական գործում:

Կանանց ձգտումը՝ կազմակերպել ընկերութիւններ, այս դարի հասարակական ամենանշանաւոր երևոյթներից մէկը պիտի համարել:

Նրանց հիմնած արդիւնագործական, կրթական, կրօնական, ազգասիրական և այլ կազմակերպութիւնները ներկայանում են անհրաժեշտ տարր, մի գործիչ ոյժ հասարակական գործունէութեան համար:

Այդ կազմակերպութիւնների մեծութեան մասին գաղափար կազմելու համար բաւական է աչքի առաջ ունենալ հետևեալ պերճախօս փաստերը.

Գերմանուհիների „Der Bund deutscher Frauenvereine» անունով*) դաշնակցութիւնն ունի 137 մասնաճիւղեր և 70,000 անդամներ: Նրա նպատակն է՝ միացնել այն բոլոր ընկերութիւնները, որոնք այս կամ այն ձևով աշխատում են բարձրացնել կանանց վիճակը՝ տնտեսական, բարոյական, իրաւաբանական և հասարակական բոլոր ասպարէզներում: Չափազանց զգալի, չափազանց ակնբեր են այդ հսկայական կազմակերպութեան բարիքները գերմանացի կանանց համար: Նոյնանման խոշոր կազմակերպութիւններ կան նաև ուրիշ քաղաքակիրթ երկրներում՝ Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Դանիայում և այլն: Իսկ մեզանում դեռ բազմաթիւ ասոզներ կան, թէ կինը միայն ընտանիքի բաժինն է, թէ նա չը պիտի մասնակցէ հասարակական գործունէութեանը, չը պիտի ձգտէ դէպի անկախ աշխատանք:

Բայց չէ որ կանայք ծնւում են, որպէս հասարակութեան անդամներ և ապրում են այդ միեկնոյն հասարակութեան մէջ: Ուրեմն ինչո՞ւ հեռու պիտի մնան նրա կեանքից, նրա պահանջներից ու գործերից: Չէ որ կանայք էլ մարդ արտաբաններ են, ուրեմն ինչո՞ւ չը պէտք է աշխատեն իրանց զրութիւնը բարւոյքել, իրանց համար անկախ դրութիւն ստեղծել:

Կար ժամանակ, երբ կանանց համար մատչելի միակ հիմնարկութիւնը կուսանոցն էր: Կրօնական կազմակերպութիւ-

*) Helene Lange und Gertrud Bäumer: «Nandbuch der Frauenbewegung» I Teil s. 147.

նը միակ աղաստարանն էր ամուսնական կեանքից փախչող կանանց համար: Նրանք այնտեղ սովորում էին աշխատել ընդհանուրի համար, օգնել մերձաւորին, աղքատին, զգուկ անտէր որբին, ձեռք մեկնել ընկածին, մխիթարել թշուառին և այլն և այլն:

Ներկայումս էլ գոյութիւն ունեն կուսանոցներ, բայց նրանց կշտին գոյութիւն են ստացել նաև կանայցի ուրիշ կազմակերպութիւններ՝ աւելի կենսունակ, աւելի գործունէայ ու արդիւնաւէտ:

Այժմ քաղաքակիրթ երկիրներում կանանց առաջ բաց են եթէ ոչ բոլոր, գոնէ շատ ասպարէզներ:

Իբրև ասպարջց վերցնենք Գերմանիան *) և այդտեղ աղամարդկանց հետ համահաւասար չափով ու իրաւունքով գործում են նաև կանայք աղքատախնամ և որբախնամ ընկերութիւնների մէջ: Այսպէս օրինակ 1902 թ. սկզբում որբերի խնամող կանանց թիւը հասնում էր.

Բերլինում	488-ի
Հանովերում	80-ի
Մանհայմում	75-ի
Կոլմարում	47-ի
Բօննում	80-ի
Բրեմենում	48-ի և այլն:

Տնտեսական պայմանները հետզհետէ բազմացնում են աշխատանք որոնող մարդկանց թիւը: Կանայք էլ զգալի տոկոս են կազմում այդ թւի մէջ: Ահա հէնց այդ պատճառով նրանք սեփական ջանքերով հիմնել են բազմաթիւ ընկերութիւններ, որոնց նպատակն է՝ օգնութեան հասնել անգործներին:

Այդ ընկերութիւնների օգտակարութեան մասին գաղափար կազմելու համար բաւական է յիշել այն փաստը, որ միայն Բերլինի ընկերութիւնը 1900 թ. ընթացքում 3593 կանանց համար գործ-պաշտօն է գտել: Խոյնքան մեծ է եղել այդ օգնութիւնը նաև միւս քաղաքներում:

Կանանց գործունէութիւնը աւելի մեծ է կրթական ասպարէզում: Տարէցտարի աւելանում է վարժուհիների թիւը, բազմանում են կրթական գործին նպաստող կանանց ընկերութիւնները: Անցեալ 1901 թ. այդպիսի ընկերութիւնների թիւը հասնում էր 57-ի:

Չափազանց ուժեղ հոսանք են սկսել բանուորուհիները: Դրանք ամեն կերպ աշխատում են յետ չը մնալ իրանց բախ-

*) Elise Lüders: «Stand der deutschen Frauenbewegung im Beginn des Jahres 1902».

տակիրցներից-բանուորներից, ուստի և օրէջօր բազմացնում են կազմակերպութիւնների թիւը, հաւատացած լինելով որ միայն հաւաքական ոյժերով կարելի է պաշտպանել ընդհանուր շահերը և համեմել ցանկալի հետեանքի: Կազմակերպուած բանուորուհիների թիւը հասնում էր.

1898	թ. 13,481-ի
1899	19,280-ի
1900	22,844-ի

Բանառային կեանքն էլ չէ վրիպել կանանց աչքից: Նրանք ուղեցել են այդ ասպարէզում էլ գցել իրանց լուսման, ուստի և եռանդուն ջանքերով ձեռք են բերել մի քանի իրաւունքներ: Ներկայումս գերմանական բանտերից շատերում կան բանտապետի օգնականուհիներ, բանառային վերակացուհիներ և այլ կին ծառայողներ:

Բացի այդ բոլորից՝ Գերմանիայի բազմաթիւ քաղաքներում կանաչքհիմնել են յատուկ ընկերութիւններ, որոնց նպատակն է՝ մաքառել անբարոյականութեան-պտունկութեան գէմ, օգնութիւն ու պաշտպանութիւն ցոյց տալով բախտից հարածուած, նիւթական կարիքների տակ ճնշուած կանանց:

Վերջին ժամանակներս բարձրագոյն կրթութիւնն էլ առանձնապէս զբաւում է գերմանացի կանանց: Նրանց առաջ միանգամայն բաց են տարրական ու միջնակարգ դպրոցները, բայց այդքանը բաւական չըհամարելով, նրանք ուղում են բարձրագոյն դպրոցներում էլ ազատ մուտք ունենալ տղամարդկանց հետ համահաւասար: Թէև դեռ շատ տեղերում խէթ աչքով են նայում այդ ձգտման վրայ, թէև դեռ շատ դպրոցների դռներ փակ են կանանց առաջ, բայց այնուամենայնիւ գերմանացի ուսանողուհիների քանակը այժմ բաւական մեծ թիւ է կազմում: Այսպէս օրինակ միայն համալսարանական ուսանողուհիների թիւը եղել է 1902 տարեշրջանում.

Բերլինում	611
Բօննում	105
Հալլէում	89
Բրեսլաւում	76
Լայպցիգում	73
Փրայբերգում	53
Վիւրցբուրգում	41
Կեօնիգսբուրգում	38
Սարաբուրգում	33
Հայդելբերգում	33
Գեօթինգենում	32

Միւնիսննում	29
Կեօբնում	19
Հեսսենում	18
Բօստոկում	7
Մարբուրգում	6
Էրլանգինում	4
Գրայֆսվալդում	2
Տիւրինգենում	2

Ընդամենը 1270 ուսանողուհի:

Բացի գրանից եղել են ուսանողուհիներ նաև մի քանի մասնագիտական բարձրագոյն դպրոցներում:

Այդ բոլորի վրայ աւելացնենք և այն փաստը, որ բազմաթիւ գերմանուհիներ շնորհալի կերպով գործում են գեղարուեստի, գրականութեան ու գիտութեան ասպարէզներում, այն ժամանակ պատկերը կը լրանայ: Որքան խրատական փաստեր է պարունակում այդ պատկերը հայ կանանցս համար...

V

Հասարակութեան աչքում կնոջ բարոյականութիւնը նրա գոյութեան, նրա «լինել-չը լինելու» հիմքն է համարուում: Վայ այն կնոջը, որի բարոյականութիւնն արատաւորուած է: Բայց ինչից է կախուած բարոյականութիւնը: Միթէ նա մի այնպիսի բարեմասնութիւն է, որի վրայ ազդում է գերբնական ոյժը: Ո՛չ: Եթէ ուշի-ուշով քննելու լինենք մեզ շրջապատող կեանքը, այն ժամանակ կը տեսնենք, որ բարոյականութեան հիմքն էլ տընտեսական պայմաններն են: Այս կամ այն անհատի, այս կամ այն ժողովրդի վարմունքը միշտ կախուած է նրա կենցաղից, նրա գոյութեան պայմաններից:

Որսորդական-ուսղմական շրջանում ամենալաւ զինւորն ու որսորդը միևնոյն ժամանակ ամենալաւ մարդն էր համարուում, որովհետև այդ հմտութիւնից էր կախուած մարդու կենցաղավարութիւնը:

Երկրագործական շրջանում համբերութիւնն ու աշխատասիրութիւնն էր բարձր դնահատուում, որովհետև միայն այդ յատկութիւնների շնորհիւ երկրագործը կարող էր սերմանել ու հնձել:

Իսկ երբ առաջ եկան վաճառականութիւնն ու արհեստները, երբ տնտեսական կեանքը հետզհետէ զարգանալով հասաւ ներկայ բարձր աստիճանին, այն ժամանակ բարոյականութեան

վրայ ունեցած հայեցակէտն էլ փոխուեց: Բարոյականութեան մասնիկներն էլ բազմացան ու բարդացան:

Ուրեմն թէ անհատական և թէ հասարակական բարոյակա- նութեան ղեկավարը շրջապատող պայմաններն են: Փոխեցէք այդ պայմանները—կը փոխուի նաև բարոյականութիւնը: Կա- նայք շատ անգամ անբարոյականութեան դիրքն են ընկնում— պոռնիկ են դառնում: Բայց փոխեցէք նրանց դաստիարակու- թիւնն ու շրջապատող սօցիալական պայմանները, տուէք տըն- տեսական անկախութիւն, և այն ժամանակ այլևս պոռնկութիւն չի լինի:

Կինը—կուսխնձոր է, կինը—չարիքների աղբիւր է, կինը թոյլ արարած է, ասում են շատերը. և այդ կարծիքը երբեմն ճիշտ է դուրս գալիս: Բայց ո՞վ է մեղաւորը: Ինքը—կինը: Ո՛չ: Տիրող անտեսական սեռական կարգերն են այդ ամենի բուն պատճառը:

Մենք կնոջ մէջ խեղդել ենք առաջադիմութեան ու զար- գացման համար անհրաժեշտ ձգտումները և դրա փոխարէն նրա սրտում դրել ենք կեղծիք ու շողորթութեան սերմեր: Մե- ղաւոր է դրանում կինը: Ո՛չ:

Մենք մեր կարգերով, մեր դաստիարակութեան սխտե- մով տղամարդուն դարձրել ենք անվախ, համաբձակ, ազատ, հաստատակամ, իսկ կնոջը—վախկոտ, կասկածոտ, ստրուկ ու թուլակամ: Այդ բանում մեղաւոր է կինը: Ո՛չ:

Մենք գովասանքի ու յանդիմանութեան, պարզի ու պատժի օրէնքների ու սովորութիւնների միջոցով տղամարդու մէջ զարդացրել ենք հասարակական մի շարք օգտակար յատ- կութիւններ, իսկ կնոջ մէջ ընդհակառակը—ճնշել ենք: Այդ բո- լորից յետոյ իրաւունք սենենք մեղադրելու կնոջը, թէ նա յետ է մնացել տղամարդուց, թէ շատ բաներում տարբերում է նը- րանից: Ի հարկէ ո՛չ:

Մենք ամեն կերպ ճնշել ենք կնոջ ազատութիւնը, խեղ- դել ենք նրա ինքնուրոյնութիւնը, բայց միևնոյն ժամանակ գանգատում ենք, թէ նա տղամարդու հետ հաւասար չափով չէ կարող գործել, ցանկալի արդիւնքի չէ կարող հասնել: Մի՞թէ անտրամաբանօրէն չէ դա:

Երբ մէկը ծառայ է մանում մէկ ուրիշի մօտ--նա որոշ չա- փով կորչնում է իր ինքնուրոյնութիւնը, որովհետև իր կամքն ու ժամանակը կարող է գործածել միայն տիրոջ կամքի թե- լադրութեամբ: Այդպիսի պայմաններում որոշ չափով թուլանում է նրա կամքը, սահմանափակում է ազատ մտածողութիւնը: Ուրիշ խօսքով ասած՝ նրա մէջ զարգանում են սարկական հակումները:

Այդ միևնույնը կարելի է ասել նաև կանանց վերաբերմամբ, միայն աւելի խիստ չափով: Նրանք այդպիսի ստրկական պայմաններում են եղել ոչ թէ ամիսների ու տարիների, այլ ամբողջ դարերի ընթացքում: Կանայք միշտ տղամարդկանց իշխանութեան տակ են եղել, նրանց սահմանած օրէնքներին ու կարգերին են հպատակուել, նրանց պահանջների ու քմահաճոյքների թելադրութեամբ են շարժուել, որովհետև այդպէս են ստիպել տնտեսական—սեռական յարաբերութիւնները:

Այն, կինը մի քանի խնդիրներում յետ է մնացել տղամարդուց, բայց այդտեղ մեղաւորը տնտեսական պայմաններն են: Դրէք տղամարդուն էլ միևնույն պայմանների մէջ,—և հետևանքը նոյնը կը լինի:

Վերևում մենք տեսանք, թէ կինը որքան մեծ դեր կարող է խաղալ իրրի մայր, իրրի հասարակութեան ու ընտանիքի անդամ, եթէ նա ունենայ իրաւունքներ:

Սակայն այդ իրաւունքները ձեռք բերելու համար նա ամենից առաջ տնտեսական անկախութեան պիտի ձգտէ, տնտեսական պայմանները փոխել պիտի աշխատէ: Այդ է պահանջում բնական օրէնքը, այդ է անհրաժեշտ երկու սեռերի ներդաշնակ երջանկութեան համար:

Կանայք, եթէ ուզում էք ջախջախել ձեր դարաւոր ստրկութեան շղթան, եթէ ուզում էք կանոնել ձեր կոչման բարձրութեան վրայ՝ լինել ազատ մարդ ու ազնիւ մայր—աշխատեցէք, սովորեցէք սեփական քրտինքով ապրուստ ձեռք բերել:

Աշխատեցէք, որովհետև միայն աշխատանքն է ազնուացնում մարդու մարմինն ու հոգին, միայն նա է ձեր փրկութեան, ձեր ազատութեան ու բարօրութեան խակական հիւնքը:

Աշխատեցէք:

ՀՅՅՈՑ ԵԿԵՂԵՏՈՒ ԺԽԵԿԸՆ ԿԸՆՈՆԵՓՐՈՒԹԵԸՆ ՆԸԽԵԳԻԺԸ

(Քրնական դիտողութիւններ)

Էջմիածնի «Արարատ» ամսագրի անցեալ տարուայ մարտ-
ապրիլ ամիսների տետրում հրատարակուած էր հայոց եկեղե-
ցու ծխական կանոնադրութեան նախագիծը հետեւեալ մակա-
ղբրութեամբ. «Տամբ թոյլ տպագրել իբր ծրագիր վասն նը-
կատողութեան. Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց» *):

Որքան յիշում ենք, դա առաջին դէպքն է, որ էջմիածինը
այդպիսի խնդիրներում առանձին նշանակութիւն է տալիս մա-
մուլի քննադատութեան: Երանի այդ եզանակով հրատարակուէին
ժողովրդի համար կազմուած զանազան «կանոն»-ները, որոնք
կղերական նեղ շրջանի գործ լինելով, երբէք չեն անցել հասա-
րակայ կարծիքի քննութեան բովից և այդ պատճառով մնա-
ցել են կեանքի համար անպէտք, միակողմանի և անկատար
նիւթ: Մենք կը ցանկայինք, որ Մայր Աթոռը իր կեանքի քիչ
թէ շատ նշանաւոր պարագաներում միշտ այդ սկզբունքին հե-
տեւէր և չը մոռանար, որ ներկայ քաղաքակիրթ կեանքի հսկայ
գործօններն են մամուլը և հասարակայ կարծիքը, որի դատա-
վըճով առաջ խոնարհուում է ժամանակակից մարդկութիւնը...

Ծխական խնդրաւարութեան ուրուագիծը կազմուած է
էջմիածնում հայրապետական կոնգակի համաձայն գումարուած
յանձնաժողովի ձեւով, որ բաղկացած է էջմիածնի միաբան-
ներից և ձեմարանի ուսուցիչներից. կոնգակը գրուած է 1901

* Ելդ կանոնադրութիւնը ամբողջապէս արտատպուած էր «Մուրճի» 1902
թ. № 6-ում, եր. 175—191.

Թւի զեկտեմբերի 3-ին և արուած է յանձնաժողովի անունով հետեւեալ պատուէրով.—մշակել մի նախագիծ, որ լինէր «ըստ կարելոյն անթերի եւ ասենայնիւ հաւատարիմ նախնաւանդ կարգաց եւ կանոնաց ս. եկեղեցւոյն մերոյ», և պէտք է նրկատել, որ յանձնաժողովը բարեխղճութեամբ կատարել է այդ պատասխանատու դործը: Յանձնաժողովին իբրև նիւթ ծառայել են հետեւեալ ազբիւրները—պետական օրէնքները, թիւրքահայոց ազգային սահմանադրութիւնը, հայոց եկեղեցական կանոնները, կաթողիկոսական կոնդակները և այլն:

Թէպէտ Ռուսաստանում հայոց եկեղեցու կանոնադրութիւնը (Положение объ управленіи дѣлами Армяно-Григор. церкви) հրատարակուած է 1836 թւին և այդ ժամանակից օրինաւոր ոյժ է ստացել, բայց և այնպէս նրա այն մասը, որ վերաբերում է մեր եկեղեցական ծուխի իրաւունքներին, լիովին երբէք չէ գործադրուել. դա առաջ է եկել հետեւեալ պատճառներից: Ծխական համայնքը հողերը իշխանութեան կողմից չէ ճանաչուել իբրև որոշ լիազօրութիւններով օժտուած իրաւասու մարմին. նրա իրաւունքները յատկացրուած են եղել երեսփոխական պաշտօնին, և երեսփոխը de facto բռնելով ծուխի տեղը, գործում էր և տակաւին գործում է ոչ իբրև ծուխի ներկայացուցիչ և լիազօր հաւատարմատար, ինչպէս դա պահանջուում է օրէնքով, այլ բոլորովին անկախ այն համայնքից, որը նրան ընտրել է երեսփոխական պաշտօնավարութեան համար: Ծուխի զոյութեան մասին մեզանում յիշում են երեք տարին մի անգամ, երբ հարկաւոր է օրէնքով եկեղեցու երեսփոխ ընտրել. բայց անտարակոյս այդ իրաւունքն էլ կը լւլէին ժողովրդից, եթէ օրէնքը հաստատուէր չը պահանջէր երեսփոխի ընտրութիւնը կատարել ծխական ժողովի միջոցով... Երեսփոխը իր անկախ գիրքը պահպանելու և եկեղեցական գործի տէր և տընօրէն լինելու համար միշտ գիմել է հետեւեալ քաղաքականութեան.—ժխտելով ծուխի իրաւունքը, նա ճանաչել է քաղաքում կոնսիստորիայի, իսկ գաւառում գործակալի իշխանութիւնը և նրանց հետ, պէտք է ասել, միշտ սրտաչարժ համերաշխութեամբ է գործել...

Այդ անկանոն ընթացքի շնորհիւ երեսփոխը տարիներ ընթացքում դառել է մի ատենական պաշտօնեայ և ոչ ծուխի հաւատարմատար, մի պաշտօնեայ, որ հնազանդութեամբ կատարել է իր ճանաչած իշխանութեան բոլոր պահանջները, երբեմն նոյն իսկ անկանոն և ապօրինի եղանակներով. ճիշտն ասած, դա միակ նպատակայարմար միջոցն էր ժողովրդին չեզոքացնելու և հեռացնելու ծխական գործերից, որի արտուր հե-

տեանքները յաջորդաբար երեսցին ամեն սեղ, ուր միայն տիրում էր այդ կարգը *):

Ո՞վ պէտք է անէր այդ անկանոն գործողութիւնների առաջը, եթէ ոչ հոգևոր իշխանութիւնը, որին օրէնքով պատկանում է հսկողութեան իրաւունքը. և ինչո՞ւ նա լուրեայն վաւերացնում էր երեսփոխական զանցառութիւնները. պատճառը պարզ է. ծխական համայնքի իրաւասութիւնը վերականգնելով, կոնսիստորիան պէտք է կորցնէր երեսփոխների աջքում իր արհեստական կերպով ստեղծած զերիշխանութիւնը, իսկ այն ժամանակ ծխական գործերի կառավարութիւնը կ'անցնէր համայնքի ձեռքը, և երեսփոխը կը մնար օրինական սահմանների մէջ իբրև սոսկ համայնքի ներկայացուցիչ. ուստի ամեն անգամ, երբ այս կամ այն ծխական համայնքը բողոք է յարուցանում կոնսիստորիայի բռնած ուղղութեան դէմ և պնդում է իր իրաւունքների վրայ, հոգևոր ատեանը ջերմ պաշտպան է հանդիսանում իրերի այդ անկանոն գրութեան:

Պէտք է և այն աւելացնել, որ ընդհանրապէս մեր ժողովուրդը տակաւին չառ մտքով գաղափար ունի իր իրաւասութեան մասին եկեղեցական-հասարակական գործերի վերաբերմամբ. տաանտակ տարիների ընթացքում նա միշտ տեսել է երեսփոխին իբրև տէր և կառավարիչ եկեղեցական ստացուածքի, իսկ կոնսիստորիան նրա առաջ հանդիսացել է իբրև երեսփոխի միակ և անմիջական իշխանութիւնը, այդ պատճառով ժողովրդի մէջ կազմուել է այն համոզմունքը, որ նա ոչ մի իրաւունք չ'ունի այդ ասպարիզի վրայ, բացի... երեսփոխ ընտրելու արտօնութիւնից. իսկ թէ ի՞նչ է ծուխը իբրև իրաւասու մարմին, ի՞նչ լիազօրութիւններով է նա օժտուած օրէնքով, ի՞նչ է երեսփոխական պաշտօնը, և ի՞նչպէս է որոշում պետական օրէնքը փոխադարձ յարաբերութիւնները ծուխի երեսփոխի և հոգևոր ատեանի մէջ, այդ խնդիրների մասին ժողովուրդը en masse բոլորովին տեղեկութիւն չ'ունի և օրէնքին անձանօթ լինելով, բնականաբար բոլոր իր տեսածը, թէկուզ դա լինէր օրէնքի ակներև խախտում, համարում է օրինաւոր և վաւերական:

Ահա այդ աննպատ պայմանների շնորհիւ հայոց եկեղեցական ծուխը, իբրև ինքնագործունէութեան համար մի պատրաստ ոյժ, կորցրեց իր բոլոր նշանակութիւնը, իսկ եկեղեցու

*) Կան երեսփոխների մէջ իբրև բացառութիւն և՛ պատկառելի անձինք, որոնք իրանց անբիծ և օրինասահման պաշտօնավարութեան շնորհիւ վայելում են ժողովրդի սէրը և յարգանքը, բայց նրանց մասին չէ մեր խօսքը:

համայնական գործերը ընկան բացառապէս հոգևոր տարրի ազդեցութեան տակ, որ ունեցաւ հետեւեալ տխուր հետեանքները.

ա. Ընկաւ եկեղեցական կարգապահութիւնը և բարեգարգութիւնը, որի փոխարէն մեր եկեղեցիներում տիրեց խաօսական խառն գրութիւն, սոգէտ և խաւար ոյժի տիրապետութիւնը ամեն սեղ ժողովրդի մէջ յուսահատութիւն ձգեց:

բ. Եկեղեցական երգեցողութիւնը հասաւ այն գրութեան, որ տարրական ներդաշնակութեան հակապատկեր է ներկայացնում. միայն վերջին ժամանակ մի քանի տեղ, այն էլ ժողովրդի ձեռներէցութեամբ և օժանդակութեամբ կանոնաւոր երգեցիկ խմբեր կազմուեցին. իսկ ընդհանրապէս երգեցողութեան հին տիրացուական սիստեմը տակաւին անխախտ տիրում է մեր եկեղեցիներում:

գ. Քահանայական դասի մտաւոր և բարոյական ցինզը զընալով աւելի և աւելի ընկնում է: Մի քանի տարի առաջ այդ երևոյթի դէմ մամուլի յարուցած բողոքը մերկայրեց մի շարք քստմնելի փաստեր:

դ. Քահանայական դասի նիւթական սննապահովութիւնը չնորհիւ սոգէտ եկեղեցական սպասաւորների բազմանալուն՝ բատեղձեց մի նոր դասակարգ—քահանայական պրոլետարիատ,— որի ծագման և զարգացման պատճառները սղտք է որոնել բացառապէս հոգևոր իշխանութեան բռնած հակաժողովրդական ուղղութեան մէջ:

ե. Եկեղեցական մնդուկը կնթարկուեցաւ երեսփոխանների կողմից կանոնաւոր մաքրագարգութեան, հայոց եկեղեցին տարիների ընթացքում հարիւր հազարներ կորցրեց. զրեթէ ամեն տեղ, ուր տիրում էր երեսփոխանների ինքնագլուխ տիրապետութիւնը, բացուեցան երեսփոխական անհարազատութեան խայտառակ պատմութիւններ...

զ. Ընկաւ եկեղեցական քարոզչութիւնը, որի տեղը բռնեց սոգէտ քահանաների անհամ և անչնորհք բարբանջանքները մեծ պասի ժամանակ:

է. Եկեղեցական դիւան և թանգարան չը լինելու պատճառով շատ եկեղեցիներից անհետացան նշանաւոր գրչագրեր, հին եկեղեցական գրքեր և այլ թանկագին իրեր:

ը. Եկեղեցական—համայնական բարեգործութիւնը, որ պետական օրէնքով թոյլատրուած է, ոչ մի կազմակերպութիւն չը ստացաւ.—բայց սրբան մեծ բարերարութիւն կը լինէր իւրաքանչիւր ծուխի չքաւոր անդամների համար աղքատախնամ հոգաբարձութեան գոյութիւնը, եթէ մեր հոգևոր կառավարու-

թիւնը պատշաճուոր դիմումներ անէր այդ կարևոր գործը զը-
լուխ բերելու համար:

Եկեղեցական—համայնական գործի քայքայման այդ անմը-
խիթար պատկերը վերջին ժամանակ ժողովրդի մէջ մեծ արը-
տունջ առաջագրեց:

Ծուխի և հոգևոր հաստատութիւնների մէջ ծագեցին պաշ-
տօնական գրադրութիւնները, որոնց մէջ համայնքը, շեշտելով
ծուխի կզգիացած լինելու պատճառները, առաջարկում է վերջ
գնել ներկայ յուսահատական գրութեան և վերականգնել ծու-
խի՝ օրէնքով նստատեսած իրաւունքները: Եթէ այդ կարևոր
խնդրի լուծումը մնար միայն մեր հոգևորականութեան, ան-
շուշտ ամեն բան կը վերջանար «մտածենք—տեսենք»—ով,
քննաթափախ վանականների այդ երևելի նշանաբանով, բայց բա-
րեբաղբաբար գործը յանձնուեց էջմիածնի ինտելլիգէնտ ոյժե-
րից բազկացած մի յանձնաժողովի քննութեան, որի կազմած
կանոնադրութիւնը, ինչպէս վերև յիշեցինք, մի լուրջ և բազ-
մակողմանի աշխատութիւն է ներկայացնում. նրա զլխաւոր և
ամենամեծ արժանաւորութիւնը այն է, որ կանոնադրութեան
մէջ բացի մի քանի սեղերից անարաս և անթերի պահպա-
նուել է հայոց եկեղեցու ժողովրդական ոգին, ծխական ինք-
նավարութեան շնորհուած է լայն իրաւունք, որով և սահման է
դրուած հոգևոր տարրի անվերջ կամայականութեան, այդ կող-
մից գովելի անաշատութիւն է յոյց տուել յանձնաժողովը, որի
անդամների մէջ կային և հոգևոր անձինք, վերապահելով ծխա-
կան համայնքի իրաւունքին այն, ինչ որ մինչև այժմ կախումն
ունէր հոգևոր իշխանութեան բարեհայեցողութիւնից. այսպէս,
օրինակ, համաձայն կանոնադրութեան 19 յօդուածի՝ ծխական
ժողովի իրաւասութեան պիտի պատկանեն հետևեալ գործերը.

ա. Քահանայացուների և եկեղեցական սպասաւորների
ընտրութիւնը, ծխաբաժանութիւնը, քարոզիչներ հրաւիրելը:

բ. Ծխական համայնքի տնտեսականի ընդհանուր կառա-
վարութիւնը և տնօրինութիւնը. երեսփոխ, հաշուետեաներ և
հաշուետեաների փոխանորդներ ընտրելը և պաշտօնից հեռացնե-
լը. նրանց գործունէութեան քննութիւնը, վերահսկողութիւնը և
հաշուառութիւնը. յանցաւորութեան դէպքում նրանց քրէական
և քաղաքացիական դատի ենթարկելը յատուկ հաւատարմատա-
րի ձևերով:

գ. Եկեղեցու կամ աղօթատան բարեզարգութեան մասին

հոգացողութիւն (անօթների մատակարարութիւն, երգեցիկ խումբ կազմակերպել և պահելը և այլն):

դ. Քահանաների և եկեղեցական այլ պաշտօնեաների տընտեսական ապահովութեան խնդիրը:

ե. Ծխական սուրբեր և պարտականութիւններ սահմանելը:

զ. Ծխական համայնքի ընտանիքների երկու սեռի մանուկների կրօնական դաստիարակման վրայ հսկողութիւն և հոգացողութիւն: Եկեղեցում կամ նրա գաւթում սովորյնել կարգալզրել, աղօթքներ, փոխասացութիւն, ժամերգութիւն, սուրբ գրքի և մասնաւորապէս սուրբ աւետարանի ընթերցանութիւն եկեղեցական պաշտօնեաների ձեռքով կամ նրանց հսկողութեան տակ:

է. Ծխական համայնքի բարեգործական գործունէութեան ընդհանուր տնօրինութիւնը. նոյն եկեղեցուն կամ աղօթատան պատկանող աստուածահաճոյ հաստատութիւնների պահպանութիւնը, վերահսկողութիւնը և դրանց կառավարող յատուկ հոգաբարձուների ընտրութիւնը:

ը. Հարկ եղած դէպքերում ծխական համայնքի շահերը պաշտպանելը պետական դատարաններում՝ քրէական և քաղաքացիական դատեր վարելով երեւփոխի կամ մի յատուկ հաւատարմատարի ձեռքով:

թ. Վկայութիւն և կարծիք յայտնել եկեղեցական զանազան հաստատութիւններում քննուող և վճռող այն գործերի և խնդիրների մասին, որոնք վերաբերում են ծխական համայնքին կամ նոյն համայնքի աշխարհական և հոգևորական անդամներին:

ժ. Հարկաւոր դէպքերում հոգաբարձական յանձնաժողովներ ընտրելը՝ շինութիւններ, նորոգութիւններ և ծխական ժողովից յանձնարարուած այլ գործողութիւններ կատարելու համար:

ժա. Ծխական համայնքի բոլոր գործերի վերաբերմամբ անհրաժեշտ և հարկաւոր կարգադրութիւններ սահմանելը:

ժբ. Պատգամաւորներ, ներկայացուցիչներ և նրանց փոխանորդներ ընտրելը ծխական համայնքի կողմից ուրիշ պատգամաւորական (օր. թեմական) ժողովների և այլ զանազան եկեղեցական գործառնութեանց մասնակցելու համար:

Այն, նշանաւոր է այդ կանոնադրութիւնը իր մէջ պարունակուած առողջ սկզբունքներով, իսկ նրա իւրաքանչիւր յօդուածը մտածուած, կշռուած tesis-ի տպաւորութիւն է թողնում:

Այդ ընդհանուր տեսութիւնից յետոյ հարկ ենք համարում մի քանի նկատողութիւններ անել կանոնադրութեան մասնաւոր թերութիւնների մասին, քանի որ նա իբրև նախազիծ՝ այդ նպատակով է հրատարակուած էջմիածնի պաշտօնական օրգանում: Կանոնադրութիւնը կազմուած է յօդուածական կարգով և բաղկացած է 100 յօդուածից, որոնք շօշափում են ծուխի իրաւասութեան շրջանը և նրա գործունէութեան այլ և այլ մոմենտները: Մեր կարծիքով՝ կանոնադրութեան գործածութիւնը զիւրացնելու համար հարկաւոր էր և՛ հատուածական կարգը ընդունել, բաժանելով ամբողջ կանոնադրութիւնը մի քանի վըլուխների կամ հատուածների որոշ վերնագրերով (օր. ծուխի կազմակերպութիւնը, ծխական ժողովի իրաւասութիւնը, հոգևոր պաշտօնականների ընտրութիւնը, երեսփոխի գործաւարութիւնը և այլն). այդ կարգը այն յարմարութիւնն ունի, որ առանց պտարութեան և ժամանակի կորուստի կարելի է զբտնել իւրաքանչիւր յօդուածը, բաւական է միայն իմանալ, թէ նա իր բովանդակութեամբ որ հատուածին է վերաբերւում. այդ սխտեմով կազմուած է և հայոց եկեղեցու ПОМОЖЕНІЕ-ն:

Իսկ գալով կանոնադրութեան էական մասին, կարևոր ենք համարում շեշտել հետեւեալ յօդուածների թերի և պակասաւոր կողմերը.

67 յօդ. Ծխական ժողովը իրաւունք ունի իր որոշմամբ տարեկան ծախս անել զիւղերում՝ յիսուն (50) բուրլուց ոչ աւելի, իսկ քաղաքներում երեք հարիւր բուրլուց (300) ոչ աւելի: Մինչև այս գումարներն եղած ծախսի մասին հաղորդում է կոնսիստորիային՝ մերձաւոր հողևոր իշխանութեան ձեռքով ի գիտութիւն: Իսկ այս գումարներից վեր ծախսերի համար ծխական ժողովը պիտի ինզըէ բարձրագոյն հողևոր իշխանութեան թոյլտուութիւնը:

Այս յօդուածը հակառակ է ծուխի ինքնաւարութեան ըսկըդրոււնքին. մենք մի քիչ առաջ նկատել էինք, որ էջմիածնում մշակուած կանոնադրութեան նպատակն է ծխական համայնքին տալ լայն ինքնաւարութիւնը, որ սրբագործուած է մեր հին եկեղեցական կանոններով և պետական օրէնքով վաւերացուած. անշուշտ դա միակ միջոցն էր փրկելու ծուխը հողևոր դասի կամայականութիւնից և անտեղի միջամտութիւնից. այն ինչ վարոյիչեալ կանոնով ծուխի աղատ գործունէութիւնը կաշկանդոււմ է, իսկ ծխական գործերում կարող է կրկին հաստատուել քմահաճոյքի իշխանութիւնը, այս անգամ արդէն օրէնքի զօրութեամբ: Պարզենք մեր միտքը հետեւեալ օրինակով. դիցուք՝ ծխական համայնքը կանոնադրութեան 19-րդ յօդուածի 3 կէտի համաձայն որոշում է իր եկեղեցու համար կանոնաւոր երգեսիկ խումբ կազմել, հրաւիրելով այդ նպատակի համար երաժշտու-

թիւնից տեղեակ մի հմուտ խմբապետ 600 բուբլի ուճկով, իր վճիռը գործադրելու համար ծուխը 67-րդ յօդուածի համաձայն նախապէս պարտաւոր է գիմել բարձրագոյն հոգևոր իշխանութեան, խնդրելով նրանից որոշած ծախսի թոյլտուութիւնը: Ահա այստեղ երկու հարց է ծագում. 1) որքան ժամանակ է տրւում էջմիածնի հոգևոր իշխանութեան՝ ծխական ժողովի վճիռները քննելու և անօրինելու համար, և 2) կարո՞ղ է այդ իշխանութիւնը առանց պատշաճաւոր պատճառաբանութեան մերժել ծուխի որոշումը, հիմնուելով միայն իր բարեհայեցողութեան վրայ, որ կամայականութեան կից հասկացողութիւն է. այդ հարցերը կարեւոր նշանակութիւն են ստանում, եթէ նկատի առնենք մեր ատենական գործաւարութեան անդրջնեղեղեան եղանակը. ում յայտնի չէ, որ էջմիածնում երբեմն ամենակարեւոր գործերը տարիներով մնում են անկատար, իսկ մասնաւոր խնդիրներին և գրաւոր գիմումներին ընթացք տալու համար շատ անգամ անհրաժեշտ է լինում անձամբ դնալ էջմիածին և այնտեղ մնալով, հազար ու մի տեսակ բարոյական և նիւթական զոհողութիւնների դնով սպասել վախճանական տընօրինութեան...

Կարելի է հաւատալ, որ այդ վիճակին չեն ենթարկուի ծխական ժողովի որոշումները, և արդեօք համայնքի կենսական խնդիրները ամիսներով կամ տարիներով չեն մնայ առկախ, առանց իրադորման...

Վերջապէս ո՞վ կարող է մեզ հաւաստիացնել, որ ծուխի որոշումները ազատ կը լինեն կամայականութեան ազդեցութիւնից, քանի որ վերոյիշեալ կանոնով կղերի հայեցողութիւնից է կախուած հաստատել կամ չը հաստատել համայնքի որոշումները: Արդ՝ եթէ ծուխի որոշած 600 բ. ծախսը երգեցիկ խմբի կազմակերպութեան համար հոգևոր իշխանութիւնը համարէ անվաւեր, գտնելով այդ նպատակի համար նշանակուած գումարը չսովազանց մեծ, ինչ է մնում ծուխին անել, եթէ ոչ բոլորովին հրաժարուել եկեղեցական երգեցողութիւնը կանոնաւորելու մտքից, քանի որ պակաս գումարով անհնարին է մի երգեցիկ խումբ իր խմբապետով պահել: Կամ վերցնենք մի այլ օրինակ. ծխական համայնքը նախանձախնդիր հանդիսանալով իր հոգևոր պաշտօնեաների բարեկեցութեան, հիմնուելով կանոնադրութեան 63-րդ յօդ. 1 կէտի վրայ, վճուում է քահանաների հասոյթը յատկացնել եկեղեցուն, իսկ նրանց նիւթական վիճակը ապահովել եկեղեցական արդիւնքից՝ նշանակելով իւրաքանչիւր քահանային 1500 բ. տարեկան ուճիկ. ծուխի վճիռը նոյն կարգով ուղարկում է էջմիածնի հոգևոր իշխանութեան հաս-

տաատութեան. այնուհետև անցնում է ով գիտէ որքան ժամանակ, երբ ստացւում է պաշտօնական թայտութիւն միայն, զիցուք, 600 բուրլի տարեկան ոտճիկ սահմանելու համար: Ուրեմն այս դէպքում եւ ծխական համայնքի բաղձանքը տեսնել իր հողեր պաշտօնեաներին ապահով վիճակի մէջ՝ մնում է անկատար. վերոյիշեալ օրինակները իրականութեան և կարելիութեան սահմանից դուրս նմուշներ չեն. ո՞ւմ յայտնի չէ, որ հայ հողերականութիւնը միշտ թշնամաբար է վերաբերուել ծխական համայնքի իրաւասութեան և որտեղ կարողացել է, զգալի հարուածներ է տուել ժողովրդի ձեռներէցութեան հասարակօգուտ գործերում. ուստի այն իրաւունքը, որ կանոնադրութեամբ տրւում է հողեր իշխանութեան, կարող է ծառայել նրան իբրև գէնք ծուխի ինքնավարութեան դէմ և այն ժամանակ ծուխի գործունէութիւնը անշուշտ կը դապարտուի ամլութեան, չը նայելով կանոնադրութեան բարի ձգտումներին, որոնք սակայն, իբրև լոկ desiderata, հետու կը մնան կեանքի իրականութիւնից. այդ վիճակի մէջ էջմիածնի կանոնադրութիւնը կը յիշեցնէ Միտհատ փաշայի սահմանադրութիւնը, որ հրուշակաւոր թիւրք քաղաքագէտը կազմել էր իր հայրենիքի բարօրութեան համար, և որն այժմ գոյութիւն ունի... միայն թրդթի վրայ:

Այստեղ հարկ ենք համարում շեշտել նկատողութեան արժանի մի հակասութիւն, որ ծագում է վերոյիշեալ կանոնը պետական օրէնքի հետ բաղդատելուց. և իբրք՝ համեմատեցէք 67-րդ յօդուածը հայոց եկեղեցու положение-ի հետ, ուր նախատեսուած է ծուխի իրաւասութեան շրջանը և դուք անշուշտ կը նրկատէք շօշափելի տարբերութիւն. մինչդեռ պետական օրէնքով (1229-րդ յօդ. XI հատ. I մաս. հրատ. 1886 թ.) հայոց եկեղեցական համայնքը ծխական գործերում որոշ անկախութիւն և ինքնուրոյնութիւն է վայելում, վճուելով ամենակարևոր խնդիրներ, տալով երեսփոխին՝ իբրև իր ներկայացուցիչին՝ լիազօրութեան հաւատարմագիր և գործելով իբրև տէր և տնօրէն եկեղեցական ստացուածքի,—67-րդ յօդուածի զօրութեամբ նա միանգամայն զրկւում է անկախութիւնից և ընկնում է հողեր ատեանի խնամակալութեան տակ. այլ խօսքերով, պետական օրէնքով նուիրագործած իրաւունքը էջմիածնի յանձնաժողովը բարւոք է համարել ծուխից խլել, նշանակելով նրա վրայ օրէնքով չը նախատեսած մշտական խնամակալութիւն յանձին հողեր իշխանութեան: Ինչո՞ւ յանկացել են սահմանափակել ծուխի իրաւունքը, և կոյ արդեօք չէրա մէջ որևէ տրամաբանութիւն, զբժուար է հասկանալ: Յամենայն դէպս ծխական համայնքը իր

գործունէութեամբ ոչ մի առիթ չէ առել այդպիսի թերահաւատութեան, եթէ դա է նրա իրաւունքի սահմանափակման պատճառը. ընդհակառակն՝ իր գործերում նա միշտ եղել է օրինականութեան հետեոզ և բողոքել է զեղծումների դէմ, որոնք մեծ մասամբ ծագել են, դա էլ պէտք է նկատի առնել, հոգևոր ատեանների անհոգութեան և երեսփոխների անհարազատութեան շնորհիւ:

Գիտակցարար գործող ծուխը միշտ հրապարակ է հանել այն, ինչ որ տարիներով ծածկուած է եղել հասարակութեան աչքից և իր դատապարտութեան կնիքը առանց վարանելու դրել է յանցաւորների ճակատին. որքան հոգևոր տարրը այդ դէպքում դանդաղիտ, ծոյլ և անհոգ է գտնուել, այնքան ծուխը, իբրև կենդանի հասարակական խումբ, նուիրուած ժողովըրդական շահերի անկաշառ ծառայութեան, միշտ եղել է արթուն և գործունէայ: Վերջին տարիների երեսփոխական կողմաւորները առաջ են եկել միայն շնորհիւ կոնսիստորիանների հակաժողովրդական քաղաքականութեան, որից շահուել են միայն երեսփոխները և թերևս նրանց հովանաւորողները. Իսկ այդ կողմաւորների մերկացման պատիւը ում է պատկանում, եթէ ոչ նոյն ծուխին: Եւ այդպէս ամեն տեղ և ամեն ժամանակ հոգևոր տարրի միջամտութիւնը ոչ մի օգուտ չէ բերել հասարակական գործին, այլ ընդհակառակն նրա քայքայման պատճառ է հանդիսացել. դիտեցէք ձեր շուրջը և դուք կը տեսնէք այդ տխուր իրականութեան անժխտելի փաստեր: Հոգևոր կառավարութիւնից կախումն ունեցող մեր բոլոր կրթական, վարչական, կալուածական և զուտ եկեղեցական գործերի այսօրուայ անմխիթար վիճակը չէ՞ որ պարտական է միայն հոգևոր տարրի մտաւոր անշարժութեան և բարոյական սնանկութեան, որոնց հասցրած անթիւ վեասները, աւանդ, ժողովուրդը տակաւին լաւ չէ ըմբռնում: Սրդ՝ եթէ 67-րդ յօդ. մտնէ անփոփոխ նոր կանոնադրութեան մէջ, ծխական համայնքը այդ օրէնքը ընդունելու օրից կը կորցնէ իր անկախութիւնը, որ նա վայելում է օրէնքով, և այն ժամանակ իր նշանաւոր ձեռնարկութիւնների մէջ հոգևոր իշխանութեան կողմից միշտ խոչընդոտների կը հանդիպի. բայց որ ծխական համայնքը կը համաձայնի ընդունել այդ կանոնը և զրկուել իր արտօնեալ դիրքից, որ ժողովուրդը կը ցանկայ ինքնաջօժար կերպով կղերի լծի տակ մտնել և միշտ զգալ իր վրայ քմահաճոյքի ոյժը և սիրապետութիւնը: Այդ հարցի պատասխանը ժամանակը կ'որոշէ*):

*) Ելեքստնդրօպօլի մայր Էկեղեցու ծխական համայնքը երկու ամիս ա-

ծուխը — հաւարական իրաւասու մարմին է, որի որոշումները կարօտ չեն վերաքննութեան և հաստատութեան հոգևոր իշխանութեան կողմից, քանի որ համայնքը ծխական գործերին ծանօթ լինելով աւելի ձեռնհաս է դատել, որոշել և տնօրինել, քան կեանքից և ժողովրդից կարուած 3—4 կրօնաւորների ժողովը:

Ուստի՝ եթէ ծուխը իր տարեկան քիւշէի սահմանից դուրս չը գալով՝ գործադրում է եկեղեցապատկան գումարը՝ ինչ չափով էլ որ լինի՝ ծխական ժողովով որոշուած պէտքերի համար, նա գործում է անկախ և իր իրաւունքի սահմանում. այդ դէպքում հոգևոր իշխանութիւնը, որին պատկանում է միայն հսկողութեան իրաւունքը, միջամտելու իրաւունք չունի. այդպիսի միջամտութեան առիթ տալ կարող է միայն կատարուած կամ կատարուելիք զեղծումը եւ ապօրինութիւնը:

Ամփոփելով մեր խօսքը 67-րդ յօդուածի մասին՝ մենք գալիս ենք հետեւեալ եզրակացութեան.

ա. Էջմիածնի ծխական կանոնադրութեան 67-րդ յօդուածով ծուխի իրաւունքը սահմանափակուած է՝ հակառակ պետական օրէնքի, որով ծխական համայնքին տրուած է կատարեալ լիազօրութիւն իր իրաւասութեան վերապահուած խնդիրներում կայացնել որոշումներ առանց դիմելու բարձրագոյն հոգևոր իշխանութեան թղլուութեան:

բ. Այդ կանոնով հայ կղերի առաջ բացուած է կամայականութեան և անձնական հաճոյքի նոր ասպարէզ, որի հետեւեալը կը լինի այն, որ հայոց եկեղեցական ծուխի գործունէութիւնը հոգևոր տարրի քայքայիչ ազդեցութեան տակ կը կորցնէ իր խորհուրդը և նշանակութիւնը:

կ. Ոչ մի՝ գիտակցօրէն գործող ծխական համայնք չի համաձայնիլ ընդունել այդ կանոնը՝ ի գործադրութիւն և զրկուել իրան պատկանած և օրէնքով սրբազորած իրաւունքից, քանի որ այդ սահմանափակումը չէ բղխում որևէ իմաստալից շարժառիթից, այլ առաջ է գալիս անհիմն ձգտումից ամեն ինչ ենթարկել հոգևոր տարրի ազդեցութեան և խնամակալութեան:

Այդ հիման վրայ մենք առաջարկում ենք 67-րդ յօդուածը բոլորովին ջնջել կանոնադրութիւնից, իսկ նրա հետ կապ ունեցող 71-րդ յօդուածին տալ հետեւեալ ձևակերպութիւնը. «Իւրա-

ռաջ դիմել էք Վեհ. հայրապետին, խնդրելով շուտափոյթ և անփոփոխ մտցնել այդ կանոնադրութիւնը. շատ հաւանական է, որ համայնքը ուշի-ուշով չէ քննել այդ կանոնադրութիւնը և չէ նախատեսել 67 յօդուածի գործադրութեան բացասական հետեանքները:

քանչիւր տարուայ սկզբում երեսփոխը կազմում է տարեկան ելումուտքի նախահաշիւ, որ ներկայացնում է ծխական ժողովի քննութեան և հաստատութեան, ապա այդ նախահաշիւ տպագրուած օրինակը ուղարկում է թեմական իշխանութեան 'ի տեղեկութիւն»:

«Տարուայ վերջը երեսփոխը պատրաստում է իր տարեկան տեղեկագիրը, որը հաշեւտեաների կազմած գեկուղման հետ ներկայացուում է նոյն կարգով ծխական ժողովի հայեցողութեան. այդ լիակատար տեղեկագիրը տպագրուելուց յետոյ ուղարկում է մի մի օրինակ Էջմիածնի սինօղին, վիճակային կոնսիստորիային կամ հոգեօր կառավարութեան և Էջմիածնի պաշտօնական թերթին»:

Մենք մի քիչ երկար կանգ առինք 67-րդ յօդուածի վրայ, աչքի առաջ ունենալով նրա մէջ պարունակուած ծխական ինքնավարութեան հակադիր սկզբունքը. այդ կանոնը անփոփոխ մնալով կանոնադրութեան մէջ՝ կարող է անշուշտ 'ի չիք դարձնել համայնքի զօրծունէութիւնը, որ թէ կանոնադրութեան և թէ նրա մշակման վրայ աշխատած յանձնաժողովի նսրասակից զուրս է:

Բայի 67-րդ յօդուածից կան կանոնադրութեան մէջ նաև մի քանի ուրիշ յօդուածներ, որոնք կարօտ են նոյնպէս մասնաւոր փոփոխութիւնների, բայց նրանց մասին մեր անւերջը նրկատողութիւնները կարճ պիտի լինեն:

53 յօդ. Ծխական ժողովը փակուելուց առաջ քարտուղարը կարգում է իր կազմած արձանագրութիւնը, որի մէջ յաջորդական կարգով արձանագրուած են լինում ժողովի բոլոր անցքերը և վճիռները: Մանրամասնօրէն արձանագրուում են՝ նախագահի կողմից կարգի հրաւիրման, ձայնից զրկելու և ժողովից հեռացնելու դէպքերը: Արձանագրութիւնը կարգալուց յետոյ՝ ուղղում են սրբապրդած սխալները, և ապա բոլոր ժողովականներն ստորագրում են նոյն այդ ժողովում:

Դա անհնարին է կատարել. փորձը ցոյց է տալիս, որ քարտուղարը հազիւ կարողանում է ժողովի նիստին պատրաստել միայն արձանագրութեան սեղիբը, որին վերջնական և կատարարեալ ձև տալու համար հարկաւոր է ժամանակ և ողու անդորրութիւն. շատ անգամ ժողովներին արժարձուում են բարդ և վիճելի խնդիրներ, երբ անհրաժեշտ է լինում ծխականների արած զիտողութիւնները բառ կարելուցն ճիշտ արձանագրել. արդ՝ ինչպէս կարող է քարտուղարը միևնոյն ժամանակ և լարուած ուշադրութեամբ լսել և իր լսածը հապ-ճէպ զրի անցընել և ապա պրածին կանոնաւոր արձանագրութեան ձև տալ նոյն նիստին ստորագրելու համար. այդ բաւորը միաժամանակ

կատարելու համար քարտուղարը պէտք է ունենայ արտաքոյ կարգի փորձառութիւն և լինի տեղեակ ստենօգրաֆիայից, որ մեղանում հազագիւտ երևոյթ է. ամեն տեղ ընդունուած է յաջորդ նիստին կարգալ և ստորագրել նախընթաց ժողովի արձանագրութիւնը, այսպէս է լինում և մեր ներկայ ծխական ժողովներում, ուստի մենք կ'առաջարկէինք 53 յօդուածին հետեւեալ բանաձևը տալ. «ծխական ժողովի արձանագրութիւնը, ուր յաջորդական կարգով գրուած են ժողովի բոլոր անցքերը և որոշումները, քարտուղարը կարգում է հետեւեալ նիստին. այդ արձանագրութիւնը նախընթաց ժողովին ներկայ եղող բոլոր անդամները ստորագրում են», հետևապէս, 53 յօդուածի հետեւեալ պարբերութիւնը. «մանրամասնօրէն արձանագրում են նախագահի կողմից կարգի հրաւիրման, ձայնից զրկելու և ժողովից հեռացնելու դէպքերը»... մեր առաջարկած բանաձևից յետոյ կարելի է բոլորովին բաց թողնել՝ իբրև pleonasm:

84 յօդ. Հաշտեանները պարտաւոր են անընդհատ հետեւել երեսփոխի գործաւարութեան, իւրաքանչիւր ամսուայ վերջը ստուգել հաշիւները և մատենները և վաւերացնել իրանց ստորագրութեամբ, իսկ իւրաքանչիւր տարուայ վերջը ծխական ժողովին հանդամանօրէն զեկուցում ներկայացնել իրանց հաշտեանութեան և երեսփոխի գործաւարութեան և հաշիւների մասին:

Այդ կանոնով հաշտեաններին տրուած է մի տեսակ ուստիկանական իշխանութիւն «անընդհատ հետեւել երեսփոխի գործաւարութեան, որի մասին տարուայ վերջը հանդամանօրէն զեկուցում ներկայացնել ժողովին»: Մեզ թւում է, որ հսկողութիւն, նուաստացուցիչ է այդ երեսփոխական պրեստիժի համար. չը պէտք է մոռանալ, որ երեսփոխը օրէնքով ծուխի ընարեալն է և նրա լիազօր հաւատարմատարը. ուստի այդպիսի հսկողութեան տակ դնել ժողովրդի պաշտօնեային՝ չէ՛ նշանակում արդեօք կասկածի ենթարկել նրա հաւատարմութեան վարկը, որ անպայման ենթադրում է իւրաքանչիւր երեսփոխի մէջ, մինչև հակառակը չէ ապացուցուած. բոլոր երեսփոխները, հօ, այդ կողմից կասկածելի անձինք չեն, կան նրանց մէջ պատուական և առաքինի մարդիկ, որոնց համար 84 յօդուածով սահմանուած հաշտեանների իշխանութիւնը կարող է համարուել վիրաւորիչ... Հաշտեանների պարտականութիւնն է միայն երեսփոխական հաշտեանները ստուգել և նկատուած թերութիւնները մասին ժողովին զեկուցանել, դրանով սպառում է նրանց իրաւունքը և լիազօրութիւնը, իսկ երեսփոխի գործաւարութեան վրայ հսկելը ծուխին է վերապահուած ի պաշտօնէ և ոչ հաշտեաններին. դա աչքի առաջ ունենալով, մենք նպատակայարմար ենք գտնում 84-րդ յօդուածը այսպէս արձանագրել.

«հաշւետեաները պարտաւոր են երկու ամիսը մի անգամ ստուգել երեսփոխի հաշւետեանները և վաւերացնել իրանց ստորագրութեամբ. նկատուած թերութիւնները իսկ արտակարգ դէպքերի մասին նրանք պարտաւոր են անմիջապէս ղեկուցանել ժողովին. տարուայ վերջը հաշւետեանները երեսփոխական տեղեկագրի հետ ներկայացնում են ծխական ժողովին և՛ իրանց ղեկուցումը»:

58 յօդ. Երեսփոխի, հաշւետեաների և հաշւետեանների փոխանորդների ընտրութիւնը և հեռացումը հաղորդում է ի հաստատութիւն և ի գիտութիւն կոնսիստորիային:

— Կոնսիստորիան, եթէ գտնէ, որ ընտրուածը համապատասխան չէ կանոններումս նշանակուած որևէ օրինական պահանջի, առաւելն երկու ամսուայ ընթացքում յայտնում է այդ մասին ծխական ժողովին: Երկու ամսուայ ընթացքում կոնսիստորիայից պատասխան չը ստացուելու դէպքում՝ ծխական ժողովի վճիռն անմիջապէս գործադրում է, և ընտրուածները ստանձնում են իրանց պաշտօնները:

— Երկու ամիսը հաշւում է ընտրութեան օրից:

Այդ յօդուածը պէտք է վերաբերուի միայն երեսփոխի ընտրութեան և հաստատութեան կարգին—(տես 1227 յօդ. XI Ը. I մաս. պետ. օր.):

Իսկ գալով հաշւետեաններին, նրանք ընտրուում են ծխական ժողովից և կարօտ չեն կոնսիստորիայի հաստատութեան:

Երեսփոխի հաստատութեան համար նշանակուած 2 ամիսը՝ մեր կարծիքով շատ է. որքան երկար է տևում այդ միջանկեալ ժամանակը, այնքան ծուխի ընթացիկ գործերը աւելի խառնաշփոթ կերպարանք են ստանում. ուստի 58-րդ յօդուածը նպատակայարմար էր այսպէս խմբադրել. «Երեսփոխի ընտրութիւնը և հեռացումը հաղորդում է ի հաստատութիւն և ի գիտութիւն վիճակային կոնսիստորիայի. վերջինը եթէ գտնէ, որ ընտրուածը համապատասխան չէ կանոններումս նախատեսուած օրինական պահանջին, մի ամսուայ ընթացքում յայտնում է այդ մասին ծխական ժողովին»:

Մի ամիսը հաշւում է ծուխի ընտրութեան արձանագրութիւնը կոնսիստորիայում ստացուելու օրից»:

55 յօդ. Ծխական ժողովի բողոքաւոր վճիռների արձանագրութեանց պատճէնները՝ ժողովի օրից առաւելն մի շարաթուայ ընթացքում նախագահը պարտաւոր է ողարկել մերձաւոր հողեր իշխանութեան միջոցով թեմական իշխանութեան և Թեմական իշխանութեան վճռի կամ բացատրութեան դէմ հարկ եղած դէպքում կարելի է բողոքել հողեր բարձրագոյն իշխանութեան:

Այդ յօդուածի տակ հարկ է աւելացնել հետեւեալ ծանօթութիւնը. «Թեմական և բարձրագոյն հողեր իշխանութեան տրւում է առաւելն մի ամիս ժամանակ քննելու նրանց հա-

յեցողութեան ներկայացրած բողոքները: Եթէ այդ ժամանակը անցնելուց յետոյ հողերը իշխանութիւնը որեւէ անօրինութիւն չ'անէ, բողոքը համարուում է թողնուած առանց հետեանքի»:

Ժամանակի որոշելը միակ օրինաւոր ղէնքն է, որով միայն կարելի է մաքառել մեր հողեր հաստատութիւններում տիրող կարգերի դէմ:

56 յօդ. Այն անբողոք վճիռները, որոնք վերաբերում են ծխական ժողովի իրաւասութեան պատկանող գործերին, անմիջապէս զործադրում են, բացի յատկապէս յիշուածներից:

Ուրեմն բողոքաւոր վճիռները, թէկուզ կայացած լինեն ժողովի նիստին ներկայ եղող իրաւասուների ձայների վերակրչուող բազմութեամբ, չը պէտք է անմիջապէս զործադրուեն, մինչև հողերը իշխանութիւնը չը բարեհաճէ քննել իր հայեցողութեան ներկայացրած բողոքը. դա հակառակ է նոյն կանոնադրութեան 52-րդ յօդուածին, որի համաձայն այն վճիռը կայացած և վաւերական է համարւում, որ ստացել է իր օգտին ժողովականների քուէների կէսից աւելին. որտեղ տեսնուած բան է, որ մի իրաւասուի կամ ձայնաւորի արձանագրուած բողոքը կարողանայ կանգնեցնել ընդհանուր համաձայնութեամբ կայացած վճիռը. ընդունելով 56-րդ յօդուածի պահանջը, մենք ենթարկում ենք վտանդի ծխական գործերի կանոնաւոր ընթացքը, որովհետև միշտ կը գտնուեն մարդիկ, որոնք օգտուելով իրանց իրաւունքից՝ անձնական հաշիւների աղղկեցութեան տակ՝ կ'աշխատեն այդպիսի բողոքներով ծուխի առաջ յարուցանել մի շարք խոչընդոտներ:

Ծխական համայնքի գործերը չեն քննուում աստիճանական կամ ինստանցիական կարգով, անցնելով մէկ հաստատութիւնից միւսը, ինչպէս դա ընդունուած է դատաստանական վէճերի նկատմամբ. ծուխի վճիռը, եթէ նա կայացած է օրինաւոր կարգով, անմիջապէս զործադրուում է առանց սպասելու, թէ ինչ վախճան կ'ունենայ բողոքարկու անձանց գանդատը. զբանով մենք չենք ուզում ասել, որ հողերը իշխանութիւնը բռնաւ իրաւունք չ'ունի որոշ ղէպքերում քննութեան առնել ծուխի վճիռները. եթէ ծխական գործերի մէջ նկատուած են ակներև անկանոնութիւններ, հողերը իշխանութիւնը արգէն իսկ 'ի պաշտօնէ, առանց որևէ բողոքի, իրաւունք ունի միջամտել և նկատուած ղեղձումները առաջն առնել, կամ սուրճ բողոքի առիթով նա կարող է պարզել 'ի դիտութիւն ծխական համայնքի այս կամ այն վիճելի կէտը. դա այլ հարց է:

Բայց կայացած վճիռը, եթէ նա է «ձայն բաղմայ», պէտք է կատարուի առանց ուշադրութեան առնելու նրա ղէմ տուած

բողոքը. ուստի մենք առաջարկում ենք 56-րդ յօդուածը իբրև անգործադրելի կանոն բոլորովին բաց թողնել կանոնադրութիւնից:

50 յօդ. Եթէ որեւէ պաշտօնի համար ընտրուելու են մի քանի անձինք, և ընտրութիւնը կատարուած է թերթիկներով, իւրաքանչիւր ժողովական իրաւունք ունի իր ընտրողական թերթիկի վրայ՝ փոխանակ տարբեր մարդկանց անուններ գրելու՝ գրել միևնոյն մարդու անունը այնքան անգամ, որքան հոգի են ընտրուելու Քուէարկուողը համարում է ստացած այնքան ձայն, որքան անգամ որ նրա անունը կրկնուած է թերթիկներում:

Այդ կանոնով մի թեկնածուի անունը կրկնուելով մի քանի անգամ իւրաքանչիւր թերթիկի վրայ՝ կարող է ունենալ իր օգտին քուէների գերակշիւ մեծամասնութիւն 'ի լիսսա մնացած թեկնածուների, որի հետևանքը կը լինի այն, որ մէկը կ'ընտրուի, իսկ մնացածները կը ստանան ձայների փոքրամասնութիւն. ուստի այդ դէպքում հարկ կը լինի մի քանի անգամ քուէարկութեան ենթարկել ընտրելի թեկնածուների անունները, մինչև բոլորը չը ստանան քուէների օրինաւոր մեծամասնութիւն. ընտրութեան այդ ձևը աննպատակայարմար է և կարող է ժամանակի կորստի հետ թիւրիմացութիւնների առիթ տալ. մեր կարծիքով ընտրութեան եղանակի որոշումը հարկ է թողնել ժողովի հայեցողութեան, որի համար միանգամայն բաւական է նախընթաց 49-րդ յօդուածում նախատեսուած հրահանգը, իսկ 50-րդ յօդուածը համարել կանոնադրութիւնից ջնջուած:

24 յօդ. Ծխական ժողովը առաջին անգամ կանոնաւոր է համարում և նիստը բացում է, եթէ ներկայ եղող ծխական իրաւասունների թիւը նոյն եկեղեցու կամ աղօթատան իրաւասունների (տարեցուցակում արձանագրուածների. տես յօդ. 89) ընդհանուր թւի կէսից աւելի է կամ եթէ ներկայ եղող ծխական իրաւասունների թիւը հասնում է սոնուագն հարիւրի (100):

Այդ թիւը չափազանց մեծ է, եթէ ի նկատի առնենք, որ մեր ծխական ժողովներին միջին թւով 40—50 հոգուց աւել չեն հաւաքւում, ուստի վերոյիշեալ յօդուածի նօրմայով ծխական ժողովների առաջին նիստերը զրեթէ երբէք չը պիտի կարողանան կայանալ. իսկ այդ երևոյթը կրկնուելով ամեն անգամ՝ կարող է պարտաճանաչ իրաւասունների համար մի վհատեցուցիչ ձևականութիւն դառնալ, որ անշուշտ ցանկալի չէ: Մեր կարծիքով առաջին նիստի կանոնաւորութեան պայմանաշափը կարելի է որոշել ծխական իրաւասունների ընդհանուր թւի ոչ նուազ՝ քան մի հինգերորդ ($\frac{1}{5}$) մասով. այդ չափով, որքան մեզ յայտնի է, ղեկավարւում են մինչև այժմ մեր ծխական ժողովները, բայց և այնպէս շատ անգամ ժողովի առաջին նիստերը

չեն կայանում ներկայ եղող իրաւասունների սակաւութեան պատճառով:

26 յօդ. Եկրորդ ժողովը կանոնաւոր է համարում և նիստը բացում է, եթէ ներկայ եղող ծխական իրաւասունների թիւը նոյն եկեղեցու կամ աղօթատան իրաւասունների ընդհանուր թւի մի հինգերորդ ($\frac{1}{5}$) մասից պակաս չէ, կամ եթէ ներկայ եղող իրաւասունների թիւը հասնում է առնուազն յիսունի (50):

Երկրորդ ժողովը կանոնաւոր է համարում և նիստը բացւում է ներկայ եղող իրաւասունների մասնակցութեամբ, որքան էլ սակաւ լինի վերջինների թիւը, դա ընդհանուր կանոն է, որով ղեկավարւում են հասարակական հաստատութիւնները և մասնաւորապէս մեր այժմեան ծխական ժողովները. հարկաւոր է այդ կարգը թողնել անփոփոխ և՛ սպազայում, քանի որ հասարակական զործը առաջ տանելու դա միակ փորձուած միջոցն է, հակառակ դէպքում կարող են անյաղթելի գժուարութիւններ ծագել 26 յօդուածի համաձայն կանոնաւոր ժողովներ կազմելու ժամանակ: Մենք երկիւղ ենք կրում, որ դրանից կարող է վնասուել, իսկ բացառիկ դէպքերում նոյն իսկ կանգ առնել ծխական ժողովի զործունէութիւնը, եթէ աչքի առաջ ունենանք, որ երեսփոխը առանց ժողովի վճռահատութեան չէ կարող ինքնապաշտօն կարգաւորել ծուխի քիչ թէ չատ նշանաւոր գործերը:

27 յօդ. Եթէ երկրորդ անգամ հրաւիրուած ժողովը ներկայ եղող իրաւասունների թւի սակաւութեան պատճառով չը կայանայ, հոգևոր իշխանութեան պարտականութիւնն է, եթէ միայն կան կարևոր և անյետաձգելի հարցեր, իր նախաձեռնութեամբ և իր ձեռքում եղած բոլոր միջոցներով ծխական իրաւասուններին ժողովի գումարել, իսկ անյաջողութեան դէպքում հոգևոր իշխանութիւնը դիմում է թեմական իշխանութեան՝ խնդրելով սնորհութիւն:

Այդպիսի ծայրայեղ միջոցներ ձեռք առնելու կարիք չի լինի, եթէ ընդունուի հետևեալ բանաձևը, որ կը փոխարինէ 24, 26 և այս վերջին 27 յօդուածները. «ծխական ժողովը առաջին անգամ կանոնաւոր է համարւում, և նիստը բացւում է, եթէ ներկայ եղող ծխական իրաւասունների թիւը նոյն եկեղեցու կամ աղօթատան իրաւասունների ընդհանուր թւի մի հինգերորդ ($\frac{1}{5}$) մասից աւել է» (24 յօդ.). Ճանօթ. «ծխական իրաւասունների ընդհանրութիւնը համարւում է 89 յօդուածում տուած հրահանգի համաձայն»:

— «Երկրորդ ժողովը վերջնական է, և նիստը բացւում է ներկայ եղող իրաւասունների մասնակցութեամբ, որքան էլ սակաւ լինի վերջինների թիւը» (26 յօդ.):

13 յօդ. Ծխական ժողովը սկսում է պատշաճաւոր աղօթքով, որ ասում է ներկայ հոգևորականներից աւագագոյնը, իսկ եթէ հոգևորական չը կայ՝ ժողովի նախագահը:

Դա հնութեան մի փոքրիկ բեկորն է, որ էջմիածնի յանձնաժողովը կամեցել է մտցնել նոր կանոնադրութեան մէջ. սակայն վերջինի ամբողջութիւնը բնաւ չէր խանդարուի այդ յօդուածի բացակայութիւնից: Թողնենք աղօթելը եկեղեցականներին Աստուծոյ տաճարում և չը շփոթենք հասարակական ժողովի պարապմունքը կրօնական արարողութեան հետ. մեզ թըւում է, որ վերոյիշեալ կանոնը մի խորհրդագլուրկ և անտեղի ձևականութիւն է, որ ներկայ կեանքի պայմաններին հազիւ թէ մեզանում կարող է պատուաստուել:

Ահա կանոնադրութեան մէջ մեր նկատած պակասաւոր. և թերի կէտերը, որոնք՝ թոյլ ենք տալիս մեզ կարծելու, ուշադրութեան կ'առնուեն էջմիածնի յանձնաժողովի կողմից: Ծխական կանոնադրութեան վրայ մենք նայում ենք լի յուսով և ակընկալութիւններով. հաւաստի ենք, որ նրա միջոցով բարեյաջող պայմաններում պիտի ցանկալի լուծումն ստանան այն հասարակական հրատապ ինչդիրները, որոնց մասին շատ է գրուել մեր լրագիրներում:

Այսքան տարիներ անցնելուց յետոյ հայ կղերը վերջապէս հասկացաւ, որ ժամանակ է անտարբեր դիրքից դուրս դալ և ժողովրդին, իբրև միակ կենսունակ տարրին, հաւատալ և յանձնել եկեղեցական-հասարակական զործերի կառավարութիւնը: Մենք ողջունում ենք էջմիածնի արած այդ խելացի քայլը, որից պիտի սկիզբն առնէ ժողովրդական ինքնագործունէութեան տարեշրջանը և ցանկանում ենք կանոնադրութեամբ խոստացուած բարենորոգումները շուտով իրականացած տեսնել կիանքի մէջ:

Բայց դրա համար հարկաւոր է նախ՝ ծխական կանոնադրութեան նախագծի մէջ մտցնել վերոյիշեալ փոփոխութիւնները և ապա՝ որպէսզի այդ կանոնադրութիւնը ստանայ մնայուն և պարտաւորեցուցիչ օրէնքի զօրութիւն, ներկայացնել վերջինը օրինական կարգով մարմնաւոր իշխանութեան հաստատութեան, իբրև յաւելուած 1836 թւի կայսերական հրովարտակով հաստատուած հայոց եկեղեցու կանոնադրութեան:

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՀՂ. Ալիշանի յիշատակին. «ԶԳԱՑՄՈՂՆՁ». խմբագրեց Գրիգ. Բալասան. 96
եր., Վենետիկ., Ս. Ղազար., 1902. Թ.

«Զղացմունքը» մի փոքրիկ ժողովածու է, որի մէջ տը-
պուած են մի քանի չնորհալի, բայց արդէն վաղուց տպուած
բանաստեղծութիւններ և բաւական մեծ թւով նոր, բայց
վերին աստիճանի անգրագէտ ոտանաւորներ (բացառութիւն են
կազմում Արտաշէս Ղարիբեանցի ոտանաւորները):

«Զղացմունքի» պառնասականները մեծ մասամբ պատկա-
նում են այն տիպի «բանաստեղծներին», որոնք ոտ ոտի և յանկ
յանկի յարմարեցնելու համար պատրաստ են զոհել ամեն ինչ,
և՛ տրամաբանական, և՛ տաղաչափական, և՛ քերականական կա-
նոններ:

Արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ նրանք
այդ անում են մեծ մասամբ անպիտակցաբար, անձանօթ լինե-
լով այդ կանոններին:

Բերենք մի քանի նմուշներ, սկսելով ժողովածուի «խմբա-
դիր» պ. Բալասանի «Որբը իր մօր գերեզմանի առաջ» ոտա-
նաւորից.

«Սովրեցրել ես սիրել անբիծ,
Խօսել, խնդալ, չարն ու բարին.
Ծունկ աղօթել անմահ Տէրին
Հողիս պահած սրտիդ խորը՝
«Չոտ ու ցաւից» իմ մասները
Տարացրել ես քո ձեռքերում,
Եւ մարտիր՝ քո ծնկներում...
.

«Օտար մարդիկ, արև, լուսին,

Դուսն է փակուում իմ երեսին:
Ոյժից ընկած իմ խեղճ ձևուներ
Բաղխել փորձում բաղլի գուններ,
Բայց կատակներ վայրենի, բիրտ
Ասեղի սէս ցցում են սիրտ»:

Ահա մի հատուած պարոն «խմբադրի» մի ուրիշ ստանա-
ւորից («Մայր—գաղափար»):

«Ո՛հ, այդ ժամին քեզ եմ յիշում,
Ո՛վ—գաղափար հանճարի,
Դու էլ նոյնպէս ծնունդ ես առնում
Մտաւորական աշխարհի
Ինչպէս մանուկն կերպարանքով
Գոյանում է արգանդում,
Դու էլ մտքի պատկերներով
Կեանք ուզեղին աւանդում»:

Երկու օրինակ էլ բերենք ժողովածուի աշխատակիցների
ստանաւորներից.

«Մեզի զեփուռը կը շնկշնկայ
Շոյում, սլլում է ծովը»:

(Մ. Միսաբեանց)

«Բնութիւնը Ոգիներու Տաճար մ'է,
Անոր մարին խօլ ճայթքումները դողող,
Իր հոգին ալ կղարթ մը միայն՝ կեանքի քօղ.
Բոլոր կեանքը կարծես չորթէ Աստուծմէ»:

(Միհրան Թապազեան)

Այսպիսի ստանաւորներով է լցուած Վենետիկի Ս. Ղա-
զարի տպարանում տպուած և Ղեւոնդ Ալիշանի յիշատա-
կին նուիրուած ժողովածուն:

Այդ բաւական չէ: Ժողովածուն տպուած է անթիւ և ան-
տանելի վրիպակներով:

Այդ էլ բաւական չէ: Վենետիկի Մխիթարեանների պաշաօ-
նական թերթը, «Բազմավէպը» ռէկլամ է անում յօդուտ պ. Բա-
լասեանի:

Ինչ որ անյայտ «Համակրողներ» Մխիթարեանների թերթի
միջոցով հրաւէր են կարգում հայ հասարակութեան «մի հա-
մեստ զումար ժողովել» «մեր գիւցազներպու բանաստեղծ Գրի-
գոր Բալասեանին առաւելագէս խրախուսելու և նրա գրական
երկերի հրատարակութեան միջոց տալու համար»:

Այդ ռէկլամիստ համակրողները, սրոնք առանց քաշուելու պ.

Գրիգոր Բալասանին «Մորճի» մշտական աշխատակից են անուանում, յայտարարում են, թէ «բացի այդ աշխատութիւններից (նրանք թւում են պ. Բալասանի անտիպ աշխատութիւնները) յարգելի բանաստեղծը այս տարուանից (1902 թ.) հիւք է գրել հայ գրականութեան մէջ առաջին անգամ լոյս տեսնող մի գուտ բանաստեղծական—գեղարուեստական հանդէսի՝ «Ձգայմունք» անունով: «Ձգայմունքը»՝ միշտ Հ. Ղ. Ալիշանի խնկելի սիշատակին նուիրուած՝ լոյս կը տեսնէ արտասահմանում շարունակաբար, տարեկան երկու գիրք, ինչպէս «Արարք»:

Այն «Ձգայմունքը», որի մասին մենք վերը խօսեցինք, մի նմուշ է այդ «Հայ գրականութեան մէջ առաջին անգամ լոյս տեսնող» հանդէսի համար կամ՝ ինչպէս ինքը պ. Գրիգոր Բալասանին է յայտարարում «Մշակում», առձեռն «Ձգայմունք» է:

Ինչպէս տեսնում էք, պ. Գրիգոր Բալասանը զգացմունքի առետուր է սկսել распивочно и на вынось.

Եթէ «Համակրողների» հրաւերը յաջողութիւն գանի, մենք անշուշտ շուտով կունենանք նաև զրպանի «Ձգայմունք»:

Տ. Յ.

Ըմմանուէլ քահ. Նազարեանց. «ՈՏԱՆԱՌՈՐՆԵՐ» (երեխաների համար). 71 եր. գ. 50 կ. Մոսկուա 1903 թ.

Կան մանկական գրքեր, կան և երեխայական գրքեր: Էմ. քահ. Նազարեանցի գիրքը վերջին տեսակին է պատկանում:

Ամեն մի երեխայ կարող է գրել այնպիսի ստանաւորներ, ինչպէս Էմ. քահ. Նազարեանցը:

Ես սիրում եմ պարզ լուսնեակ՝

Վառ լապտերը բոլորակ.

Լուսին—գիշեր միշտ ամառ

Ցերեկ է ողջ մեր աշխարհ»:

(«Սիրած-չսիրած բաներ»)

«Ապրիլին մեզ մեծ Աւետում,

Մայիս՝ երկինք վեր Համբարձում»:

(«Որ ամսին ինչ տօն ունենք»):

«Գալիս է շուտ Տէր (!) ընդ առաջ,

Տան բակերում խոտ ենք գիզում,

Վառած մոմեր աւնում քաջ—քաջ

Եկեղեցուց տուն ենք տանում»:

(«Մեր մեծ տօները»):

«Մեր Հայր, որ էն բարձրունն ես,
Մենք սրտեղ,
Դու սրտեղ ես,
Ինչ որ ուզենք, խնդրենք քեզ,
Դու ամեն բան հասցրու մեզ»:
(«Իմ աղօթքը»):

«Առողջ ազուս՝ լի է անտառ,
Գոռող առիւծ փչրեց մացառ»:
(«Ռ» ունեցող բառեր»):

«Եւ մեր լէսն, այդ դիժ աղայ,
Երբ որ մարդիկ սաստիկ ցրտում
Զրբիսկում էին սառցի վըրայ՝
«Օխայ» ասէր և ծիծաղում»:
(«Փոքրիկ աղջիկ»):

Էմ. քահ. Նաղարեանցի ամբողջ գիրքը (բայցի «Մեծ մօր օրհնանքը» ոտանաւորից) մի կուրեօզ է: Արժանատուաբար հայրը կարծէք միջին դարերում ապրելիս լինի: Քերականութիւնը, տիեզերագրութիւնը, օրացոյցը, տօնացոյցը, թւարանութիւնը ուզում է ոտանաւորով սովորեցնել երեխաներին:

Եւ ինչէր է սովորեցնում,—այն, որ լուսինը՝ բոլորակ է, աստղերը՝ մանր կայծեր, կամ այն, որ եթէ մի երեխայ չար լինի ու ուրիշներին նեղացնի, նրան մարդիկ կարող են զժակել, ինչպէս հարկն է»:

Իսկ եթէ տէր-հայրը պատահմամբ լուբան է ասում, այնպիսի ձևով է ասում, որ ասածը ոչ մի ազդեցութիւն չէ կարող ունենալ ընթերցող երեխայի վրայ:

Տէր-հայրը ուզում է երեխային հասկացնել իր պարտքը և դրում է ի միջի այլոց.

«Հիմա, ինչ որ մենք տալիս ենք
Խեղճի, որբի՝ մսխալներով,
Այն է, ինչ որ մենք խլել ենք
Այն թոյլերից՝ տաս փութերով»:

Պէտք է ենթադրել, որ այդ գրելիս՝ տէր-հայրը մի բան զգացել է և ուզել է զգացնել տալ ընթերցողին, բայց նայեցէք նոյն երեսի ներքեր և կը սեանէք այսպիսի մի ծանօթութիւն.

«Փութը ունի 40 ֆունտ, ֆունտը ունի 32 լօտ. լօտը՝ 3 մսխալ (զալամանիկ, ЗОЛОТНИКЪ)»:

Պարզ է, որ տէր-հօր գրքում չը կայ և ոչ մի մսխալ զգացմունք: Իսկ ինչ կարելի է անել երեխաների հետ առանց զգացմունքի, այն էլ միջնադարեան զաղափարներով և անշնորհք ոտանաւորներով:

Տիգրան Ամիրճանեան. «ՈՒՍԵԱԼ ՊԱՆՈՒՆԻՍԾ». (Վանեցոյ կեանքից). ամփոփեց Խ. Տէր-Յովհաննիսեանց. 40 էր. գինն է 15 կ. Թիֆլիս 1903 թ.

Տիգրան Ամիրճանեանի «Ուսեալ պանդուխտը» սղբերգութիւնն է: Ողբերգութեան նիւթը պանդուխտի վիճակն ու զգացմունքներն են:

Պ. Տէր-Յովհաննիսեանը աւելորդ է համարել ամբողջապէս տպել կամ արտատպել այդ սղբերգութիւնը (ինձ յայտնի չէ—տպուած է եղել արդեօք այդ սղբերգութիւնը Երբեիցէ, թէ ոչ), այլ «ամփոփել է», այսինքն բերել է միմիայն մի քանի հատուածներ, իսկ մնացած մասերը պատմել է իր խօսքերով, արձակ ոճով:

Որքան կարելի է դատել մէջ բերուած հատուածներից, պ. Տէր-Յովհաննիսեանը զուր է «ամփոփել» հեղինակի զրածր:

Ընթերցողին ցոյց տալու համար, թէ որքան զգացմունք է պարունակում և որքան ճաշակով է գրուած պ. Ամիրճանեանի ստանաւորը, մենք առաջ կը բերենք միայն մի երկտող, որ արժէ պ. Գրիգոր Բալասանի ամբողջ առձեռն, զբաղանի և լիակատար «Զգացմունքների»:

«Թող, անպէր, թող՝ որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի,

Թող իմ աչք՝ կիկացող պզտոր-պզտոր աղալիւր էլնի»:

S. Յ.

Յարութիւն Եսայեան. «ԳՐԱՅԻ ՍՏՐՈՒՆԵՐ». (պատկեր) 15 էր., գինն է 5 կոպ., Թիֆլիս, 1903 թ.

Պ. Եսայեանի «պատկերի» նիւթը հեռաբրբրական է:

Ամենքին յայտնի է, թէ ինչ գեր են խաղում զբրացները մեր հասարակութեան սնապաշտ խաւերում:

Պ. Եսայեան գիտել է երեւոյթը, նկատել է մի քանի հեռաբրբրական պէր և, ուղեկով հարուածել չարիքը գեղարուեստական գրուածքի ձևով, շարադրել է իր «պատկերը»:

Սակայն գեղարուեստօրէն գրելու շնորհքը ամենքին չէ տուած:

Այն, ինչ որ իր աչքով տեսել է, պ. Եսայեանը մեզ պատմում է գրադէտ ոճով, և մեզ համար այդ հեռաբրբրական է: Իսկ այն, ինչ որ պ. Եսայեանն աւելացրել է իր տեսածի վրայ կամ փոփոխել է իր տեսածում իր երևակայութեան միջոցով, ուրիշ խօսքով այն, ինչ որ պէտք է գեղարուեստական երկ գարձնէր պ. Եսայեանի զրուածքը, դուրս է եկել վերին աստի-

ճանի միամիտ, և զրա շնորհիւ ամբողջ «պատկերը» աշակերտական գրուածքի սովորութիւնն է դործում:

Որ յուսահատ բողբոս մի բժիշկ, որ համալսարանից միամիայն արհեստի հնարներ է սովորել և զարգացմամբ ամենինն չէ տարբերում սովորական «գալլարներէց», կարող է զիմել զբրայցի օգնութեան, — այդ, դիցուք, հնարաւոր է: Բայց որ զբրբայր կարողանայ բժշկից փող կորզել, հաւատացնելով նրան, թէ պէտք է Չինաստանից դեղ բերել տայ, այնպէս որ ամենաքիչը մի ամիս կը քաշի, բայց եթէ նա (բժիշկը) մի քիչ աւելի փող տայ, կը շտապեցնէ, և դեղը Չինաստանից Թիֆլիս մի չաբաթում բերել կը տայ, — զրան հաւատալու համար պէտք է աւելի միամիտ լինել, քան էմ. քահ. Նազարեանցի զբրի ընթերցողները:

Տ. Յ.

Ruchard Hermann: «Anatolische Landwirtschaft» Leipzig. 144 s. 1900
Իրիարդ Հերման. «Անատոլիայի գիւղատնտեսութիւնը». 144 եր.

Հեղինակը վեց տարի շարունակ վերատեսչի պաշտօնն է վարել Թիւրքական «գիւղատնտեսութեան, հանքերի և անտառների նախարարութեան» մէջ, մի շարք ճանապարհորդութիւններ է կատարել երկրի խորքում և ապա կազմել է իր աշխատութիւնը, որի նպատակն է պատկերացնել Անատոլիայի գիւղատնտեսութեան ներկայ վիճակը:

Անատոլիան հին ժամանակներում յայտնի էր իբրև բարեբեր մի երկիր, իբրև «գիւղատնտեսական մի մեծ շտեմարան»: Իսկ այժմ այնտեղ հողատիրական պայմաններն այնքան անտանելի են, հարկերն այնքան ծանր, վարչական ճնշումն այնքան սանձարձակ և կուլտուրան այնքան յետամնաց, որ գիւղատնտեսութիւնը երբէք զարգանալ չէ կարող, թէև նա տեղական ազգաբնակչութեան զլխաւոր պարագմունքն է կազմում:

Այդպիսով հետզհետէ աղքատանում է ժողովուրդը և աւելի ու աւելի վատ վիճակի մէջ ընկնում:

Համառօտակի նկարագրում է Անատոլիայի տեղագրութիւնը, կլիման, բուսականութիւնը, կենդանիները, ազգաբնակչութիւնը (թիւրքեր, հայեր, յոյներ, չլքեզներ, քիւրդեր, լազեր և այլն), — երկրագործութեան պէս-պէս ձևերը, բանջարանոցային բոյսերը, պտղատու ծառերը, հացահատիկները, ընտանի կենդանիները և այլն: Միայն թռուցիկ կերպով մի քանի խօսք է ասում երկրագործութեան հետ կապուած հարկերի մասին և վերջը հրաւէր է կարգում գերմանացիներին գաղթել Անա-

տուրիա, օգտուել բարեբաստիկ պայմաններից և շահագործել այդ լայնարձակ երկիրը:

Իսկ տեղական ազգաբնակչութիւնը...

Ե. ԹՈՓՉԵԱ.

Wilhelm von Pressel: «Les chemines de fer en Turquie d'Asie» avec une carte. Zurich. 1902. Վ. Ֆօն Պրեսսել. «Ասիական Թիւրքիայի երկաթուղիները». — Ցիւրիխ. 1902 թ. 90 էրես, մի քարտէզով:

Ամբողջ Թիւրքիան ծածկել երկաթուղիներէ ցանցով և այդպիսով զարկ տալ նրա վաճառականութեանն ու արդիւնագործութեանը, բարձրացնել նրա տնտեսական վիճակը, շահագործել նրա անթիւ-անհամար բնական հարստութիւնները, մի լայնարձակ վաճառանոց բաց անել միջազգային կապիտալիզմի համար—հաս մի շարք հրատապ հարցեր, որոնք վերջին ժամանակներս առանձնապէս ուշադրաւ ու հետաքրքրաշարժ են դարձել:

Եւ իսկապէս, այսպէս ասած երկաթուղային հարցը զբաղեցրել է և ղեռ զբաղեցնում է ոչ միայն Թիւրք կառավարութեանն ու գործիչներին, այլև եւրոպական զիպլոմատիային ու կապիտալիստներին: Անվերջ խօսում են ու զրում այդ մասին, կազմում են պէս-պէս ծրագրներ ու նախագծեր, բայց այնուամենայնիւ հարցն իր վերջնական լուծումը չէ ստանում, և գործն առաջ է գնում միայն կրիայի քայլերով՝ եււաւաւ, եււաւաւ:

Նոր ժամանակի ծնունդ է այդ իրողութիւնը, վերջին տարիների արդիւնք է այդ երևոյթը: Նա գոյութիւն է ստացել հէնց այն օրից, երբ առաջին անգամ (1856 թ.) հարց է բարձրացել Թիւրքիայումն էլ երկաթուղի շինել: Կառավարութիւնը ուղեցել է գէթ մասամբ բաւարարութիւն տալ հասունացած պահանջին, բայց երբէք ինքնուրոյն շնորհք ու հնարաւորութիւն չէ ունեցել: Նա միշտ կարիք է զգացել Եւրոպայի օգնութեանն ու ղեկավարութեանը: Նա միշտ եղել է մի անփորձ երեխայ, որը ցանկանում է քայլել, բայց միայն իր խնամակալուհու ցուցմունքով ու հսկողութեամբ: Եւրոպական կապիտալիստներն են եղել խնամակալուհու դերը կատարողը:

Եւ սրբան բազմաթիւ են եղել նրանք, սրբան զօրեղ է եղել նրանց մրցումը: Իւրաքանչիւրն ուղեցել է իր ձեռքը զրցել այդ համեղ պատառը, իսկ խղճուկ երեխան շատ անգամ մոլորուել է և չէ իմացել, որի գիրկն ընկնի, որի խնամատարութիւնն ընդունի: Միջամտել են շահախնդրուած պետութիւնները, սկսուել է զիպլոմատիկական բանակցութիւն, որը և ա-

ւելի գանդաղեցրել է առանց այն էլ «եաւաշ-եաւաշ» ընթացող գործը:

Ահա այդ բոլորից յետոյ միանգամայն զարմանալի չէ, որ Թիւրքիան ներկայումս մի ողորմելի պատկեր է ներկայացնում երկաթուղիների քանակի տեսակէտից: Թիւրքական առաջին երկաթուղին՝ Չմիււնիա—Այդին, շինուել է 1856 թւականին անգլիացիների ձեռքով: Դրանից յետոյ զրեթէ իւրաքանչիւր տարի կազմուել են նոր-նոր ծրագրներ, տեղի են ունեցել պէս պէս առաջարկութիւններ, իսկ հետեանքը... շատ աննշան, շատ խղճուկ է կելլ նա: 1856 թ. մինչև օրս, ուրեմն 46 երկար ու ձիգ տարիների ընթացքում ամբողջ Թիւրքիայում շինուել է ընդամենը 4402 կիլոմետր երկաթուղի, որից 1889 կիլոմետրը եւրոպական Թիւրքիայում, այն է*):

1 Արևելեան երկաթուղի	1159	կիլոմետր.
2 Սալօնիկ—Մօնաստիր	219	—
3 Սալօնիկ—Կ. Պօլիս	511	—

Ընդամենը 1889 կիլոմետր:

Իսկ մնացած 2513 կիլոմետրը Ասիայում, այն է՝

1 Չմիււնիա—Այդին	516	կիլոմետր
2 Չմիււնիա—Կասսաբա	522	—
3 Անատոլիայի երկաթուղի	1023	—
4 Մերսին—Ադանա	67	—
5 Մուղանիա—Բրուսսա	41	—
6 Բէյրութ—Դամասկոս—Հօրան	258	—
7 Նաֆֆա—Երուսաղէմ	86	—

Ընդամենը 2513 կիլոմետր:

Այդ տասը զծերից միայն երկուսն են իրաւ թիւրք կառավարութեան ձեռքով շինուել, այն է՝ Արևելեան երկաթուղին և Մուղանիա—Բրուսսա զիծը: Բոլոր մնացածը՝ այսինքն 3202 կիլոմետրը շինուել են եւրոպացիների դրամազլիւով:

Պարզ է, որ դա չափազանց փոքր քանակ է Թիւրքիայի նման մի մեծածաւալ պետութեան համար: Նրա ամբողջ տարածութիւնը հասնում է 2,888,400 քառակուսի կիլոմետրի, իսկ երկաթուղիները... Միայն 4402 կիլոմետր: Ո՛րպիսի ողորմելի դրութիւն, այն, ողորմելի, եթէ մանաւանդ համեմատելու լի-

*) Տես «Kürschners Jahrbuch 1902»

նենք եւրոպական երկրների հետ: Այսպէս, իւրաքանչիւր 100 քառ. կիլոմետր տարածութեան վրայ կայ *).

Բելգիայում	20	կիլոմետր երկաթուղի
Անգլիայում	11	—
Գերմանիայում	9	—
Ֆրանսիայում	8	—
Իտալիայում	5 $\frac{1}{2}$	—
Իսկ Թիւրքիայում	1 $\frac{1}{7}$	—

Այդ թւերն այնքան պերճախօս են, որ կարծում ենք՝ աւելորդ է նրանց վրայ կանգ առնելը: Նկատենք միայն այսքանը, որ Թիւրքիայում հազորդակցութեան յարմար միջոցների բացակայութիւնը կազմում է մէկը այն զլխաւոր պատճառներէ, որոնք առաջացրել են երկրի ներկայ դժոխային վիճակը՝ սնտեսական անվերջ տագնապ, ազգաբնակչութեան անտանելի ճնշում ու հալածանք, կոտորած ու աւերածութիւն:

Այդ դրութիւնից կարծում են Թիւրքիան դուրս կը գայ երկաթուղիներ շինելով, և անուում են առաջարկութիւններ, որոնք բոլորն էլ անզի են ունենում գրեթէ միևնոյն ձևակերպութեամբ, միևնոյն սխտեմով: Կառավարութիւնը աալիս է կօնցեսսիա այս այն կամ ընկերութեան անունով, խոստանում է գրամական որոշ ապահովութիւն իւրաքանչիւր կիլոմետր երկաթուղու համար, և ապա ընկերութիւնը ձեռնարկում է գործը:

Սակայն կան կարծողներ, որ այդ սխտեմը միանգամայն վնասակար է ոչ միայն Թիւրք կառավարութեան, այլ և նրա ազգաբնակչութեան համար: Ահա այդ կարծիքի ամենանշանաւոր ներկայացուցիչն ու ջերմ պաշտպանն է համարւում գրքոյ-կիս հեղինակը—ինժեներ Պրեսսելը:

Նրա աշխատութիւնն արժանի է ասանճնայատուկ ուշադրութեան, որովհետև պ. Պրեսսել միանգամայն հեղինակաւոր է իր շօշափած խնդիրներում, միանգամայն ծանօթ է հարցի էութեան հետ: Նա մի քանի տասնեակ տարիներ, իբրև հմուտ մասնագէտ, գործել է այդ ասպարիզում. մի քանի անգամ ճանապարհորդել է Թիւրքիայում, տեղն ու տեղն ուսումնասիրել է երկրի աշխարհագրական, ջրաբաշխական, երկրաբանական, սնտեսական ու սօցիալական պայմանները. նա կազմել է մի շարք նախագծեր Թիւրքիայի երկաթուղիների համար:

Իր այս գրքում նա մասնանիչ է անում, թէ՛ սրբան հզօր նշանակութիւն ունեն երկաթուղիները Թիւրքիայի վերածնութեան ու վերակենդանութեան համար, թէ՛ սրբան բարձրացը-

*) Տես Vital Guinet: «La Turquie d'Asie» tom I.

նել կարող են նրա ազգաբնակչության թվաքանակի մասին ընդհանուր տեղեկությունները ու բարձրագույնագույնը, ապա հակիրճ կերպով պատկերացնում է այդ ընդհանուր երկրի բազմազան հարստություններն ու բնական յարմարությունները, տալիս է արդէն գոյություն ունեցող երկրաբանական պատմությունը, այդ բոլորի հետ զուգահեռաբար արծարծելով իր կարծիքն ու նախագիծը:

Ինչպէս յայտնի է, չափազանց շատ է դրուել Թիւրքիայի երկրաբանական մասին, մասնաւանդ վերջին տարիների ընթացքում, երբ գերմանական կառավարությունը յանձնուեց Բաղդադի գծի կոնցեսիան: Ամենից շատ գերմանացիներն էին չահախնդրուած այդ հարցում, ուստի և ամենից առատ նիւթ գերմանական գրականությունը մատակարարեց: Իբրև ապացոյց բաւական է յիշել Դերնբերգի, Կանենբերգի, Նաումանի, Բորբախի, Գոլց ֓աշարի, Գերցերի, Շնայդերի աշխատությունները, որոնցից մի քանիսի մասին արդէն առիթ ենք ունեցել խօսելու:

Այդ հեղինակների պաշտպանած զլիաւոր սկզբունքն այն է եղել, թէ ժամանակ է Թիւրքիայի բնական հարստությունները չահաղործելու, թէ եւրոպացիները պիտի լինեն դրա նախաձեռնողն ու իրագործողը՝ գերմանացիների ղեկավարութեամբ, թէ Թիւրք կառավարությունը մեծ խելացիութիւն արած կը լինի, եթէ միշտ հետեւէ Եւրոպայի խորհուրդներին ու դիւրութիւններ տայ նրա կապիտալիստներին կայլն կայլն:

Իսկ այստեղ պ. Պրեսսել բոլորովին հակառակն է պնդում, աշխատելով ապացուցանել, թէ Թիւրքիայի համար միանգամայն կորստաբեր է մասնակի կոնցեսիաների և կիլոմետրային ապահովութեան սխտեմը, թէ կառավարությունն ամեն կերպ պիտի աշխատէ իր ձեռքում կենտրոնացնել ամբողջ գործը: Նրա կարծիքով կիլոմետրային ապահովութեամբ չինուող երկրաբանները միայն մի նոր բեռ են դառնում Թիւրքիայի խղճուկ անտեսութեան վրայ, մի նոր ճնշող ոյժ են կազմում ազգաբնակչության համար: Մինչև 1899 թւականը Թիւրքիան վճարել է իբրև կիլոմետրային ապահովություն 95,262,100 ֆրանկ (տես 59—59 եր.), նրա 74 սանջաղներից 28-ը՝ ամենամարդաշատ ու արդիւնաբեր սանջաղները մի տեսակ գրաւական են այդ գումարները կանոնաւորապէս վճարելու համար: Ո՛ր պիտի մեծ զոհաբերութիւն: Իսկ արդիւնքը—շատ ու շատ անընչա՛ն: Ուրեմն անհրաժեշտ է օր առաջ սխալ ընթացքը փոխել և աննպատակաբար սխտեմը վերացնել:

Պ. Պրեսսելի կարծիքով (եր. 51) «Ներկայումս իշխող վահափառ սուլթանը եռանդուն ու անդուլ ջանքերով ձգտում է

աստիճանաբար բարձրացնել իր կայսրութեան վերածնութիւնը... Երկար ժամանակ ժողովուրդը խարխափում էր ազիտութեան խաւարում, իսկ այժմ բոլոր մեծ ու փոքրիկ գիւղերում բացուած ձրի դպրոցների շնորհիւ չափազանց սակաւաթիւ են անդրագէտ երիտասարդներն ու ազջիկները... (sic) Զօրքը դարձել է սուլթանի մշտական ու արթուն հոգացողութեան առարկայ... Միևնոյն ժամանակ հասկանալով, որ միայն հազորդակցութեան հեշտ, արագ և էփան միջոցները կարող են վերակենդանացնել երկրի նախկին բարօրութիւնն ու փառահեղութիւնը, սուլթանը սրտով աշխատում է շատացնել երկաթուղիները... Նա մուտք է բայց արել օտար կապիտալիստների առաջ և նրանց բաշխում է մասնակի կօնցեսսիաներ ու կիլոմետրային ապահովութիւն: Սակայն կօնցեսսիաների սիստեմը զանդադեցնում է երկաթուղային ամբողջ ցանցի արագ ու կանոնաւոր շինութիւնը, խանգարում է նրա բարեկարգութեանը, տնտեսութեանը, պարզութեանն ու շահագործման միաւորութեանը...»

Ահա այդ շարիքը վերացնելու համար պ. Պրեսսել առաջարկում է իր սիստեմը: Նրա կարծիքով ամբողջ ձեռնարկութիւնը պէտք է կենտրոնացնել Թիւրք կառավարութեան և մի ընկերութեան ձեռքում հետեւեալ ձևով.

1. Ընկերութիւնը պիտի հոգայ անհրաժեշտ դրամագլուխը և ապա սկսէ գործը, նախապէս պայմանաւորուելով կառավարութեան հետ ձեռնարկութեան չափի և դնի վերաբերմամբ:

2. Ծախսուած գումարը հանգցնելու համար նա պիտի չահագործէ պատրաստի ցանցը՝ առաջուց որոշած կապալավարձով:

3. Ծախսերի գումարը հանգցնելուց և պահեստի մի դրամադուխ կազմելուց յետոյ օգուտը պէտք է հաւասար չափով բաժանել կառավարութեան ու ընկերութեան մէջ:

4. Այդ ցանցի նախագիծը այնպէս պէտք է կազմել, որ կարելի լինի որոշ ժամանակում նրա երկարութիւնը հասցնել մի քանի տասնեակ հազարաւոր կիլոմետրի: Նա պէտք է միացնէ Թիւրքիայի մայրաքաղաքը նրա բոլոր գլխաւոր գաւառների հետ մինչև պարսկական ծոցը: Բացի դրանից նա պէտք է կապէ ներքին գաւառները միմեանց հետ և ծովային նաւահանգիստների հետ:

5. Այդ ընկերութիւնը պէտք է շինէ հարկաւոր տեղերում նոր նաւահանգիստներ, նաւարաններ (docks), շտեմարաններ և ուրիշ հիմնարկութիւններ, որոնք կարող են այս կամ այն ձևով նպաստել Թիւրքիայի տնտեսական բարեկարգութեանը:

6. Ամբողջ ձեռնարկութիւնը պէտք է իրադրծել երեք ժա-

մանակաշջաններում՝ իւրաքանչիւրը 8—10 տարի տևողականութեամբ: Առաջին ժամանակաշրջանում անհրաժեշտ է շինել զըլխաւոր զիծը Բօսֆօրից մինչև Պարսից ծոցը—2700 կիլօմետր երկարութեամբ, ապա դրա ճիւղաւորութիւնները, որոնք կը միացնեն ներքին գաւառները Սամսոն, Հերակլէ և Սուէզիէն նաւահանգիստների հետ—ընդամենը 1800 կիլօմետր երկարութեամբ: Բայի այդ բոլորից պէտք է բարեկարգել յիշեալ երեք նաւահանգիստները, շինել նրանց մօտ շտեմարաններ, նաւարաններ և այլն: Հետեւալ երկու ժամանակաշջաններում պէտք է շարունակել այդ հսկայական ձեռնարկութիւնը:

Գարով զլխաւոր գծի ուղղութեանը, պ. Պրեսսել զեռ շարունակում է պաշտպանել այսպէս ասած՝ հիւսիսային ուղեգիծը, այսինքն Պօլիս, Մերսիվան, Սիւազ, Դիարբեքիր, Բաղդադ և Բասրա, թէև թիւրք կառավարութիւնը վաղուց արդէն հաստատել է զերմանական կօնցեստիան հարաւային գծի վերաբերմամբ:

Ինչպէս տեսնում ենք, բաւական ինքնատիպ, հեռանկատ ու նպատակայարմար է պ. Պրեսսելի առաջարկած սխտեմն ու նախադիծը: Եւ գրքի ամբողջ բովանդակութիւնը գալիս է փաստաբանելու, հիմնաւորելու ու պաշտպանելու այդ առաջարկը: Բայց իրազործելի է նա ներկայ պայմաններում: Կարծում ենք նչ: Յարգելի հեղինակը իր բաղմակողմանի աշխատութեան մէջ մոռացել է շօշախել մի կարևոր հանգամանք: Նա մոռացել է, որ թիւրք կառավարութիւնը միանգամայն անընդունակ է մի որևէ տևողական ու սխտեմատիկ գործի համար. նրա վարչական ղեկը յանձնուած է պատահականութիւնների հոսանքին, որից կախուած է երկաթուղիների հարցը: Պարզ է, որ մի այդպիսի հսկայական ծրագիր երբէք չէ կարող իրագործուել պատահականութիւնների քմահաճոյքով: Ուրեմն պ. Պրեսսելի նախադիծը մինչև վերջը կը մնայ իբրև նախագիծ, իբրև «ձայն բարբառայ յանապատի»:

Կարծում ենք՝ նրա իրազործմանը չեն օգնի նոյն իսկ այն շտալ գովասանքները, որ հեղինակը ուղղել է Սուլթան Համիդի հասցէին...

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Մանգանէզ արդիւնաբերողների և արտահանողների V համաժողովը

Ներկայ տարուայ յունուարի 7-ին Քութայիսի քաղաքային թատրոնում բացուեց մանգանէզ արդիւնաբերողների և արտահանողների V համաժողովը: Համաժողովը տեւեց ամբողջ 24 օր. ժողովին մասնակցում էին մօտ 300 հոգի, ներկայ էին նաև Փոթի և Գութայիս քաղաքների, երկրագործական և ֆինանսների մինիստրութիւնների և մամուլի ներկայացուցիչներ:

Համաժողովի անդամները բաժանուել էին երկու կուսակցութեան: Մի կուսակցութեան պարագլուխն էր Էմերիկ Իսկ միւսինը Ջոզանովիչ, որը միևնոյն ժամանակ նախագահ էր համաժողովի խորհրդի: Չափազանց ազմուկներ ծագեցին խորհրդի հաշուառութեան և վերաստուգող յանձնաժողովի գեկուցման ժամանակ՝ խորհրդի գործած մի քանի զանցառութիւնների պատճառով:

Համաժողովին նախագահող ինժեներ Յեյալինի առաջարկութեամբ խնդիրներն սկսուեցին քննուել ոչ հերթական կարգով, այլ սկզբում այն հարցերը, սրտեք չեն պահանջում քուէարկութիւն: Նախ գեկուցուեց Չիատուր գիւղը գիւղաքաղաք վերափոխելու հարցը: Այս հարցը քննուել էր դեռ XIII-րդ համաժողովում և յանձնուել էր համաժողովի խորհրդին խնդրել պետութիւնից Չիատուր գիւղը փոխել գիւղաքաղաքի, պարզ հասարակական ինքնավարութեամբ, պատճառ բերելով, որ Չիատուրի բնակչութիւնը քանի գնում աւելանում է, և գիւղը քաղաքի բնաստուութիւն է ստանում. բայց զրանից Չիատուրը լինելով կենտրոն մի այդպիսի մեծ արդիւնաբերութեան, չունի պետական որոշ ֆետուար, 1903.

հաստատութիւններ, ուր արդիւնաբերողները իրանց կարիքները համար դիմեն. տեղական հարցերի համար նրանք ստիպուած են դիմել Քութայիս կամ Փոթի քաղաքների հաստատութիւններին, որ խլում է նրանցից թէ՛ ժամանակ, թէ՛ ծախսեր և առհասարակ առաջ է բերում շատ անյարմարութիւններ: Համաժողովում ներկայ գտնուող նահանգական վարչութեան ներկայացուցիչ Ն. Պրինց յայտնեց ժողովին, որ այդ հարցի լուծման համար հարկաւոր է տեղական բնակչութեան համաձայնութիւնը. իսկ տեղական բնակչութիւնը—գիւղացիները կրէք չեն համաձայնի գիւղը գիւղաքաղաքի փոխել, քանի որ նոր ծախսեր կ'աւելանան նրանց վրայ: Ուստի բնական է, որ տեղական գիւղացիին այդ խնդրի համար չի դիմի պետութեան: Այդ խնդրի լուծման միակ ելքն է՝ խնդրել պետութիւնից, որ այժմ Չիատուրի երկաթուղու կայարանը իր բնակչութիւնով համարի իբրև նոր բնակատեղի և վերածէ գիւղաքաղաքի, տալով նրան պարզ հասարակական ինքնավարութիւն: Ժողովը համաձայնուեց Պ. Պրինցի առաջարկած այս ձևին և յանձնեց այն խնդիրը խորհրդին:

Երկրորդ հարցի վերաբերեալ՝ հիմնել Չիատուրում հաշտարար դատարան, ժողովի նախագահը յայտնեց, որ արդէն այս հարցը պետութեան կողմից սկզբունքով ընդունուած է գրական կերպով:

Ապա կարգով քննուեցին մնացած հարցերը:

Չիատուրի մանգանէզի արդիւնաբերութեան կենտրոնը մինչև այժմ չ'ունի պետական գանձարան փողեր պահ տալու, ստանալու, փոխադրելու և այլ կարիքների համար: Երրորդ համաժողովը յանձնել էր խորհրդին դիմել պետութեան նաև այս կարևոր խնդրի մասին. ժողովում պարզուեց, որ զանազան պատճառներով Չիատուրում գանձարան հիմնելը անհնար է, ուստի ժողովը վճռեց խնդրել կառավարութիւնից՝ Չիատուրի պոստային բաժանմունքին կից բանալ փող փոխադրող բաժանմունք:

Անցնելով մանգանէզ լուացող գործարան բանալու հարցին՝ ժողովի անդամներից շատերը առաջարկեցին, որ կարգացուեն առանձին--առանձին ղեկուցումներ այն հարցերի մասին, որոնք պարունակում են իրանց մէջ ֆինանսական և տեխնիկական հարցեր: Այդ ղեկուցումները պատրաստելու համար ընտրուեցին առանձին յանձնաժողովներ, որ կարճ ժամանակամիջոցում մշակեն ղեկուցումները և առաջարկեն համաժողովի քննութեան: Երկայ մանգանէզի արդիւնաբերութիւնը ունի տեխնիկական մեծ պակասութիւններ, որ պատճառ է նրա թոյլ զարգանալուն: Մանգանէզը արտահանուած

է հողոս, քարախուան, ոչ մաքուր ձևով, դրա առաջն աննելու համար մի քանի անգամ հարց էր բարձրացել Չիատուրի Կվիրիլ գետի հովտում հիմնել մանդանէզ լուացող գործարան, նախ հանքը լուանալ և ապա փոխանակ ներկայ ծանրակշիւ աւելորդ մասերով արտահանուող մանդանէզի արտահանել բոլորովին զտուած մանդանէզ: Այս հարցի վերաբերեալ յետնային ինժեներ Չերնոսիի կարգաց մի զեկուցում, որի հաշից երևաց, որ իւրաքանչիւր տարի հանքի մէջ եղած աւելորդ հողի և քարերի համար մանդանէզ արտահանողներ ստիպուած են երկաթուղու վարչութեան վճարել ճանապարհի սակագին մօտ 630,000 ռուբլի աւելի, իսկ եթէ նրանք հիմնեն լուացող գործարան, նախ այդ փողը կը մնայ, որ կարելի է գործադրել գործարանի վրայ, և երկրորդ, որ մանդանէզի որակութիւնը կը լուանայ: Նրա առաջարկած ծրագրով մի այգպիսի գործարանի հիմնելը պահանջում է 1,534,000 ռուբլի աւելի, իսկ եթէ նրանք հիմնեն լուացող գործարան, նախ՝ այդ փողը կը մնայ, որ կարելի է գործադրել գործարանի վրայ, և երկրորդ՝ որ մանդանէզի որակը կը լուանայ: Նրա առաջարկած ծրագրով մի այգպիսի գործարան հիմնելը պահանջում է 1,534,000 ռ., և որովհետև համաժողովը չունի միջոցներ, ուստի նա առաջարկեց զիմն ֆինանսների մինիստրութեան և ինչորև թոյլտուութիւն մանդանէզի պուլից հաւաքուող $\frac{1}{2}$ կուպէկները յատկացնել այդ գործարանին. ժողովը սկզբունքով ընդունելով գործարան ունենալու հիմնական հարցը՝ վճուեց առանձին յանձնաժողովի յանձնել քննելու այդ և զեկուցանելու միւս համաժողովին:

Համաժողովի զանազան կարիքների համար Չիատուրից արտահանուող մանդանէզի իւրաքանչիւր պուլից $\frac{1}{2}$ կուպէկ վերցընելու հարցը մինիստրութեան առաջարկութեան համաձայն մնաց անփոփոխ:

Համաժողովի զանազան հիմնարկութիւնների համար հողեր ձեռք բերելու իրաւունքը թողնուեց խորհրդի հայեցողութեան:

Չիատուրում արհեստաւորաց դպրոց բանալու հարցը ժողովը վճուեց զրական կերպով: Դպրոցը բացուելու է միջնակարգ դպրոցի ծրագրով և աւելի ծառայելու է մանդանէզ արդիւնաբերողների կարիքներին: Մանրամասն ծրագիր մշակելու համար ժողովը ընտրեց առանձին յանձնաժողով, որ նիւթեր հաւաքէ և իր եզրակացութիւնը հաղորդէ միւս համաժողովին:

Երկար վիճաբանութիւնների առարկայ դարձաւ Չիատուրի մանդանէզի շրջանի երկրաբանական քարտէզի կարևորութիւնը: Թէև այժմ այդ քարտէզը գոյութիւնի ունի, բայց նա չատ պա-

կասաւոր է ե գրանով չէ կարելի որոշել մանգանէզի զանազան շերտերի ուղղութիւնը, քանակութիւնը և այլն: Ինժեներ Սապից-կու հաշուով քարտէզ կազմելու համար պահանջուած է 13,000 բուրլի: Չընայելով ժողովականների մի մասի բողոքին, որ ցանկալի չէ ունենալ մի այդպիսի քարտէզ, մեծամասնութեամբ գրական կերպով վճռուեց հարցը:

Չիատուրի հանքերից մինչև կայարան տանող զանազան ճանապարհների վրայով անց ու դարձ են անում օրական հազարաւոր բեռնակիր անասուններ. եթէ այժմ այդ անասունների մէջ երևայ ժանտախտ կամ ուրիշ տարախոխիկ հիւանդութիւններ, խոխոյն ստիպուած կը լինեն արգելել այդ անասունների երթիկութիւնը, գործը կը դադարէ, և մանգանէզ արդիւնաբերողները չ'ունենանալով մանգանէզ տեղափոխելու ուրիշ միջոցներ, պէտք է նստեն ձեռները ծալած, և արդիւնաբերութիւնը պէտք է կրէ ահագին վնասներ: Անասնաբայժ Լանդի՛ ժողովում կարգացած զեկուցումից երևաց, որ մինչև այժմ չը կայ ոչ մի անասնաբուժական կազմակերպուած սանիտարական հսկողութիւն: Բժիշկ Լանդը նկարագրելով այն վնասները, որ կարող են մի օր կրել հանր արտահանողները անասնաբուժական հսկողութիւն չ'ունենալուց, առաջարկեց շուտով Չիատուրում հիմնել անասնաբուժարան, հրաւիրել բժիշկներ, երկու ֆելդշեր և երկու ձիաւոր պահապաններ. բայց գրանից՝ նա առաջարկեց Չիատուրում հիմնել կանոնաւոր սպանդանոց: Ժողովը սկզբունքով ընդունեց այս կարևոր հարցը:

Մանգանէզը մինչև Փոթի նաւահաղիսաբը տեղափոխելու համար ներկայ հանդամաքներում գոյութիւն ունեն մեծ գծուարութիւններ: Ի միջի այսոց պէտք է սանել, որ մանգանէզի տեղափոխութիւնը ներկայումս կատարուած է այսպէս. հանքերից ձիաներով կամ սայլերով բերում և զարսում են Չիատուրի երկաթուղու կայարանի պլատֆորմների վրայ, ապա երկաթուղով տանում են մինչև Թիֆլիս-Փոթի երկաթուղու գծի Շարապան կայարանը և այնտեղ հանքը Չիատուրի նեղ գծային վագոններից տեղափոխում են լայն գծային վագոնները և բերում Փոթի նաւահանգստի մօտ թափում: Նաւահանգրստում եթէ նաւերը պատրաստ են, տանում յանձնում են նաւին, իսկ եթէ ոչ, թափում են դետնի վրայ և երբ կարիք է լինում, նորից բարձում տանում են նաւերի մօտ և տեղափոխում: Այս ամեն մի գործողութեան, ամեն մի տեղափոխութեան համար առաջ են գալիս նոր ծախսեր, և իսկապէս նրանք են պատճառը, որ Չիատուրի մանգանէզի գինը աւելի թանկ է նստում, (մօտ 21 կոպ.) քան Բրազիլիայինը (մօտ 14 կոպէկ), միայն տե-

զափոխութիւնը երկաթուղու կայարանից մինչև նաւահանուցիստ Բրազիլիայինը նստում է 3,93, իսկ Չիատուրինը 9,77, կողէկ, և եթէ այդ տարբերութիւնը (6 կողէկ) չը լինէր, այն ժամանակ Չիատուրի մանգանէզը աւելի էժան նստելով՝ չուկայից դուրս կը քշէր Բրազիլիայի մանգանէզը:

Էմերիկի զեկուցումից երևայ, որ Փոթի կայարանից մինչև նաւահանգիստը տեղափոխելու առանձին վճար է վերցնում. յետոյ, եթէ վազոնները 3 օրից աւելի բեռնաւորուած կանգնեն, արգիւտաբերողները մանգանէզ իւրաքանչիւր օր վճարելու են 3 բուլի տուգանք, եթէ մինչև անգամ փոթորիկ լինի, և հնար չը լինի նաւ բարձելու: Չիատուրի գծից Շարապանի գիծը տեղափոխելու վճարը շատ է համարում պ. Էմերիկ և դրա համար առաջարկում է խնդրել երկաթուղու վարչութիւնից՝ 50,000 բ. գիշել համաժողովին: Անցնելով տեխնիկական մասին՝ պ. Էմերիկ իր զեկուցման մէջ նկատեց, որ 1) բանուորները ներկայումս մօտակայ հանքերից մինչև կայարանը հանքը տեղափոխելիս սախուած են 3—4 վերստ վազոնների յետից վազել, որ նրանց շատ յոգնեցնում է: 2) Երկաթուղին հանքերի ոլոր մուր ճանապարհներով անցնում է մութ անդերից, որտեղ չը կայ ոչ մի արհեստական լուսաւորութիւն. իսկ այդ ճանապարհի վրայով օրական հազարաւոր բանուորներ, բեռնակիր անասուններ անցուկարձ են անում, որոնք մթութեան պատճառով չը նկատելով երկաթուղու գնացքը՝ կարող են ընկնել գնացքի տակը: 3) Կարևոր է, որ մանգանէզ տեղափոխող վազոնները ծածկուած լինեն: 4) Շատ անգամ Շարապան կայարանում հանքը տեղափոխելիս՝ վազոններ չը լինելու պատճառով հանքը երկար մնում է այդ կայարանում և սպասում հերթի. դրա համար նա առաջարկում է Չիատուրի գծի իւրաքանչիւր վազոնի զէմ Շարապանի գծի վրայ ունենալ 3 վազոն, նմանապէս խընդրել երկաթուղու վարչութիւնից աւելացնել Փոթի վազոնների թիւը: 5) Կարևոր է լուսաւորութիւն նաւահանուցիստում և կայարանի մօտ հանքը գիշերը բարձելու համար: 6) Հանքը նաւը տեղափոխելու համար ձեռքի աշխատանքը փոխարինել մեքենական աշխատանքի: 7) Հանքատէրերի հերթական վազոններ բաժանող կօմիտետի նախագահ լինի անկախ երկաթուղու վարչութիւնից: 8) Որոշել վազոններ բաժանող կօմիտետի դրութիւնը: 9) Եղած պլատֆորմները շատ անբաւարար դրութեան մէջ են, և նրանց քանակութիւնը քիչ է: 10) Խնդրել երկաթուղու վարչութիւնից Չիատուրի կայարանում հիմնել երկաթուղու տոմսակներ ստանալու բաժանմունք:

Համարեանոցն հարցերից մի քանիսը արծարծուեց այ. Կա-
կարածէի և Մովսէսաշվիլիի կողմից, միայն վերջինս աւելացրեց,
որ 1) մանդանէզ արգիւնաբերողները աշխատում են ամեն կող-
մից հանքը թրջուելուց ազատել, իսկ երկաթուղու վարչութիւնը
մանդանէզը տանում թափում է այնպիսի տեղեր, որ ճահիճ է,
2) որ Շարապան կայարանից մինչև Փոթի շատ անդամ հանքի
կշիռը պակասում է, որի պէմ միջոցներ պէտք է ձեռք առնել:

Համաժողովը աչքի առաջ ունենալով նրա ղեկուցման
բոլոր կէտերի արդարացի և կարևոր լինելը, վճուեց ընդունել և
յանձնեց խորհրդին դիմել ուր հարկն է, իսկ Էմբրիկին յայտնեց
առանձին չնորհակալութիւն:

Այս հարցերից յետոյ ժողովը գրազուեց վերաստուղող յանձ-
նաժողովի ղեկուցումով, որից երևաց, որ ճանապարհների ղը-
րութիւն անբաւարար է, և մանաւանդ անմիջիժար զրութեան
մէջ է բանուորների հիւանդանոցը: Կային և ուրիշ զանցառու-
թիւններ: Հիւանդանոցում վարակիչ հիւանդութիւններով բըւ-
նուածները միւս հիւանդներին կից շինութեան մէջ են, հիւան-
դանոցը կեղտոտ է, հիւանդանոցի ընդունարանը և ղեղատու-
նը գանուււ են խարխուլ շինութեան մէջ, ցուրտ է և այլն: Մեծ
աղմուկ առաջ բերաւ մանաւանդ բաղնիքի շինութեան վրայ
ծախսուած մեծ գումարը: Այս բոլոր մեղադրութիւննե-
րից յետոյ ժողովը այնուամենայնիւ ձայների մեծամասնութեամբ
վճուեց ընդունել խորհրդի հաշիւը...

Աչքի առաջ ունենալով արտահանութեան մեծանալը և
վազոնների քչութիւնը, նախկին համաժողովների վճռով հիմ-
նուած է հերթական վազոնները բաժանող մի կօմիտետ: Կօմի-
տետը վազոններ բաժանելիս մեծ կախում ունի երկաթուղու
վարչութիւնից: Ինչպէս երևաց ժողովի ղեկուցումներից, երկա-
թուղու վարչութիւնը այդ կօմիտետին այնքան մեծ նշանակու-
թիւն չէ տալիս կարևոր դէպքերում, այնպէս որ կօմիտետի
զրութիւնը անորոշ է: Երկաթուղու վարչութեան ներկայացու-
ցիչ Սօլովիսով կարգաց այդ կօմիտետի իրաւունքները որոշող
մի կանոնադրութիւն: Ժողովը ընդունեց այդ կանոնները՝ աւե-
լացնելով, որ վազոններ և պլատֆօրմներ յատկացնուեն այն բոլոր
անձերին, որոնք լուծնային վարչութիւնից մանդանէզ մշակելու
իրաւունք ունեն:

Ներկայումս Եւրոպական շուկաներում Չիաստուրի մանդա-
նէզի ամենամեծ մրցակիցն է Բրազիլիայի մանդանէզը: Բրա-
զիլիայի մանդանէզի զրութիւնը, արգիւնաբերութեան և արտա-
հանութեան ձեռ ուսումնասիրելու և համեմատելու համար խոր-
հուրդը Բրազիլիա ուղարկեց մի ինժեներ, որ տեղն ու տեղը

ուսումնասիրել, և զեկույցանէ համաժողովին: Այդ ինժեները զեւսեալն չէ վերադարձել Բրազիլիայից: Իր մանրամասն ուսումնասիրութիւնը խոստացել է ներկայացնել յետոյ, իսկ այժմ ի գիտութիւն ժողովին ուղարկել էր մի քանի նամակներ Բրազիլիայի մանդանէզի արզիւնաբերութեան վերաբերեալ: Ժողովում կարգացած նրա նամակներից երեաց, 1) որ Չիատուրի մանդանէզը նրա ասելով աւելի հարուստ է, քան Բրազիլիայինը, 2) որ Բրազիլիայում մանդանէզի ստատիստիկական բիւրօ չը կայ, 3) հանքերը պատկանում են մի քանի ակցիօներական ընկերութիւններին, 4) ամեն մի հանքի մօտ կայ շինած բանուորների բնակարաններ, 5) մանդանէզի դուրս բերելը աւելի թանկ է նստում, քան Չիատուրում, 6) մանդանէզի հանքից մինչև երկաթուղու կայարան տեղափոխուելը աւելի վատ պայմաններում է գտնուում, 7) Բրազիլիայի մանդանէզի արզիւնաբերութիւնը կամաց կամաց աւելի պակասում է: Ժողովը բաւական չը համարելով այս թեթև ակնարկները, վճռեց այս հարցը յետաձգել մինչև միւս համաժողովը, երբ կը ստացուի նրա մանրամասն ուսումնասիրութիւնը:

Կովկասի մանդանէզի արտահանութիւնը մեծացնելու ամենամեծ նպատակը պայմաններից մէկն լինելու է երկաթուղով տեղափոխելու սակազինը: Հանքը տեղափոխելու համար ամեն մի պուղից երկաթուղու վարչութիւնը մանդանէզի արտահանութեան յաջող տարիներում վերցնում էր 10 կուպէկ, 1886 թւականից այդ տարիքը այնքան ճնշեց արզիւնաբերողներին, որ բազմաթիւ դիմումներից յետոյ ֆինանսների մինիստրութիւնը իջեցրեց 10 կուպէկից մինչև 7-ը: Երկաթուղու վարչութիւնը վաղուց արգէն այդ կուպէկներով հանել է Չիատուրի ամբողջ գծի շինութեան ծախսը, բայց էլի շարունակում է վերցնել պուղից 7 կուպէկ. ներկայ պայմաններում, երբ մանդանէզի գինը ընկած է, և Բրազիլիայի մանդանէզը շտրճիւ միայն իր տեղափոխութեան էժան տարիքին առաջ է գնում, Չիատուրի մանդանէզը կարող է մատնուել թշուառ դրութեան: Արտահանողները գիմել են տարիքը պակասեցնելու համար, բայց նրանց գիմումը մնացել է «ձայն բարբառոյ լանապատի»: Ժողովը՝ նիւթ չինելով նորից չայդ հարցը, լսեց Էսերիկի ընդարձակ զեկուցումը տարիքի վերաբերեալ Տնտեսական այս նեղ պայմաններում տարիքի բարձրութիւնից մանր մանդանէզ արզիւնաբերողները սկսել են իրար հետ մրցել, որի հետևանքը լինելու է շատ արտուր: Մանդանէզի գինն ընկնում է տարիքի բարձրութեան շտրճիւ, և այժմ մանդանէզը միայն վրաս կարող է տալ այդպիսի պայմաններում. Ամերիկան և Անգլիան ի-

բանց կարևոր մագանէզը ստանում են Բրազիլիայից Լժան նրատելու պատճառով: Նոյպէս ուժեղ մրցող է հանդիսանում հարաւային Ռուսաստանի՝ Նիկոպոլի մանդանէզը: Էմերիկ հնարաւոր էր համարում ինդրել մինիստրութիւնից՝ այժմեան 7 կոպէկից տարիֆը իջեցնել մինչև իսկ $\frac{1}{45}$ կոպէկի: Ժողովը վճուեց դիմել ուր հարկն է:

Չիատուրի բանուորների այժմեան դրութիւնը շատ աննախանձելի է: Հանրերը մեծ մասամբ գտնւում են մանր արդիւնաբերողների ձեռքում, որոնք իրանք միջոցներ չունենալով, հնարաւորութիւն չունեն լաւացնելու բանուորների կեանքի պայմանները:

Չէղլէիձէ քահանան համաժողովի ուշադրութիւնը դարձրեց Չիատուրի բնակչութեան մտաւոր լուսաւորութեան վրայ և առաջարկեց համաժողովի հաշւով բանալ եկեղեցական ծխական դպրոցներ: Չիատուրի բնակչութիւնը ազրատացել է մանդանէզ արդիւնաբերողների շտրհիւ, քանի որ նրա հողերը այժմ ամեն տեղ փորփրած անպէտքացրած է, և նա ինքը՝ ժողովուրդը միջոցներ չունի ուսումնարաններ պահելու: Ուսումնարաններ բանալը համաժողովի պարտականութիւնն է, որովհետև մանդանէզ արդիւնաբերողներն են եղել նրանց հողից կտրելու պատճառը: Այս հարցը համաժողովը վճուեց յանձնել բանուորների համար կազմած յանձնաժողովին և լսել նրա եզրակացութիւնը:

Բարձրագոյն և միջին լեռնային դպրոցներում ուսանողներ պահելու հարցը վճուեց դրականապէս: Աշակերտները բարձրագոյն դպրոց ուղարկելիս՝ ժողովը վճուեց առաջնորդուել վկայականներով: Նպաստ ստացողների թիւը որոշուեց 10, որից 6-ը միջին, իսկ 4 բարձրագոյն լեռնային դպրոցներում, առանձին պայմաններով: Ուղարկուելու են միայն մանդանէզ արդիւնաբերողների և նրանց մօտիկ ազգականների որդիքը:

Իշխան Նիժերաձէ անբաւարար համարելով բանուորների կեանքի ներկայ սպահովութեան գործը, աչքի առաջ ունենալով բանուորներին 2 տարուայ սպահովելու փորձը, առաջարկեց թողնել մասնաւոր ընկերութիւնների մօտ բանուորների ապահովացնելը և հիմնել բանուորն երի փոխադարձ ապահովութեան ընկերութիւն: Դրա համար առաջարկեց այն փողը, որ այժմ արւում է բանուորների ապահովացման համար, զաղարկեցնել և իբրև ֆոնդ դնել մի քանի տարի բանկում, և երբ այդպիսով կը հաւաքուի մի գումար, այն ժամանակ սկսել գործունէութիւն, իսկ առայժմ դժբաղդ դէպքերում տալ միայն նըպաստ:

Ժողովը այս խնդրի վերաբերմամբ ընտրեց մի յանձնաժո-

զով 4 հոգուց բազկացած՝ ուսումնասիրելու և զեկուցանելու միւս ժողովին:

Ժողովը անբաւարար գտնելով համաժողով գումարելու կանոնադրութեան մի քանի կէտերը, մշակեց և փոփոխութեան ենթարկեց նրանց: Նոյնպէս փոփոխութեան ենթարկեց խորհրդի և վերաստուգող յանձնաժողովի իրաւունքները:

Մինչև այժմ Չիատուրը միայն հում նիւթ է արտահանում ևւրոպական շուկաները, և այնտեղից արդէն մենք ստանում ենք այդ նիւթը մշակուած ֆերոմանդանի ձևով: Լեոնային զեպարտամենար իր կողմից առաջարկել էր ժողովի քննութեան ենթարկել հէնց Չիատուրում ֆերոմանդան ստանալու հարց: Չիատուրը ունենալով մանդանէզի մեծ պաշար, կարելի է հէնց նոյն տեղում հարկ հանքը և արտահանել արդէն իբրև պատրաստի նիւթ: Այս հանդամանքը կրկնակի կը բարձրացնէր Չիատուրի նշանակութիւնը, և նա աշխարհիս ամենամեծ գործարաններից մէկը կը լինէր, իբրև ֆերոմանդան արտահանող:

Ժողովականներից Էմերիկ մի քնդարձակ զեկուցում կարգաց, ցոյց տալով թէ ինչքան մեծ նշանակութիւն ունի մանդանէզի արդիւնաբերութեան ձեւփոխումը հէնց Չիատուրում: Իրա համար կարևոր է նրա հաշւով 1,200,000 բուբլի գործարան շինելու համար: Իսկ որպէս զի սխալների մէջ չ'ընկնեն մանդանէզ արդիւնաբերողները, նա առաջարկեց յատկացնել 5000 ր. նախնական փորձերի համար: Ֆերոմանդանի գործը կարող է առաջ գնալ, մանաւանդ որ Թիվարչելի քարածուխը այնքան հեռու չէ:

Ժողովը վճռեց առանձին կօմիտետի ձևերով ծախսել նախնական փորձերի համար 5000 բուբլի:

Քուլթայիսի նահանգում լեոնային դպրոց բանալու և շտէյդերների դասակարգ կազմակերպելու հարցը յանձնուեց ստանձին մասնաժողովի:

Չիատուրի մանդանէզը վերլուծութեան համար մինչև այժմը դիմում են մասնաւոր լաբօրատօրիաների կամ ուղարկում են Նւրոպա: Այն ինչ մեծ կարիք կայ ունենալու սեփական լաբօրատօրիա: Խորհրդի նախագահ Չզաննիչ ժողովին զեկուցեց, որ Քուլթայիս քաղաքը ուզում է իր համար բանալ մի լաբօրատօրիա, որի համար հրաւիրել է Նօլօրօսիյակի համալսարանի պրօֆեսսօր Պետրիաշվիլին, որը համաձայնել է գալ և ստանձնել լաբօրատօրիայի կառավարչի պաշտօնը: Նրա հաշւով ծախս պահանջուում է 25,000 բուբլի. մանդանէզ արդիւնաբերողների համար ձեռնառու է միանալ Քուլթայիսի քաղաքային վարչութեան հետ և միասին բանալ այդ լաբօրատօրիան. նա

յայտնեց, որ քաղաքային վարչութիւնը համաձայն է միանալ Ունենալով այդպիսի լաբորատորիա, կարելի է յուսալ որ եւրոպացիք կը բաւականան այդ լաբորատորիայի անալիզներով և չեն պահանջի եւրոպական լաբորատորիաներում կատարուող անալիզներ, որ իւրաքանչիւր գէպրում նստում է 80 բուրջի ժողովը սկզբունքով ընդունեց միանալ Քութայիսի քաղաքային վարչութեան հետ:

Բոլոր հարցերը առանձին-առանձին քննելուց յետոյ՝ այդ հարցերի մեծ մասը յանձնուեց առանձին յանձնաժողովների, և ապա ժողովը զբաղուեց նախահաշուով:

Ծախսերի ընդհանուր գումարը հասնում է 237,820 բուրջու: Խորհրդի նախագահ վերընտրուեց Զդանովիչը:

ՅՈՎ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

«Բագիներ և ազուաներ» Սոււմբաթօվի.—«Ռուզան» Մուրացանի.—«Գնոյ պայխարը» Հօլովերդի.—«Համիք» Չեխպիրի.—Բեմական և իսկական Համիքը.—Տիկին Սիրանոյ և Համիք:

Իրանց բենեֆիսի համար Տ. Վարդուհի և պ. Մամիկոնեան ընտրել էին «Բագէներ և ազուաներ» Սոււմբաթօվի, որի ներկայացումը տեղի ունեցաւ անցեալ յունուարի 27-ին: Թատերական այս երկը գեղարուեստական աչքի ընկնող մի գործ չէ և ինքնուրոյնութիւնից զուրկ է:

Գործող անձերը կարծես զանազան պիեսներից դուրս պրծել և զիպուածով այստեղ են ընկել. նրանց զիտելիս մարդ հէնց սկզբում զգում է իրան այնպէս, որ կարծես իր առաջ ներկայացնում են մօտաւորապէս ծանօթ դէմքեր, որոնց մի տեղ պատահել է, բայց լաւ չէ յիշում թէ ուր: Եւ ցաւալին այն է, որ միտքն աշխատում է աւելի շուտ որոշել թէ ուր և թէ երբ է տեսել այս իրար յետևից յայտնուող դէմքերը, քան թէ հետևել իսկական խողին: Կարկատած պիեսներին յատուկ երևոյթ: Եւ եթէ «Բագէներ և ազուաներ»-ը ներկայացուելու համար մի աչքի ընկնող առաւելութիւն ունի, դա նրա բեմականութիւնն է. երևում է, որ հեղինակը որպէս արտիստ՝ լաւ գիտէ, թէ ինչ ահագին նշանակութիւն ունի որևէ պիեսի բեմականութիւնը հասարակութեան վրայ ազդեցութիւն գործելու համար, մանաւանդ երբ թատերական գործը գեղարուեստի կողմից խիստ թոյլ է:

Էֆֆէկտ գործող տեսարանները խիստ բազմաթիւ են. և՛ կուրացած ու դռնէ-դուռ ընկած մայր, որի զաւակը անարդար տեղը դատապարտուում է մի չը գործած յանցանքի համար, և՛ կանացի ինտրիգ կրքոտ սիրոյ տեսարաններով, և՛ զղջումն՝ յան-

ցանքի մեծութիւնից սարսափած և այլն Հեաաբբբբ, թէն ոչ բարոյապէս ցնցող տեսարանները յաջորդում են իրար և լարուած են պահում հանդիսականների ուշադրութիւնը սկզբից մինչև վերջը: Այսքանը սակայն միանդամայն անբաւարար է գեղարուեստական, հոգեբանական խակական պահանջներին:

Փետրուարի 2-ին ներկայացրած «Բուզանի» մասին ասելիք չ'ունենք, այդ պատմական պիեսի մասին առանց այդ էլ բաւական ասուել խօսուել է: Աւելացնենք միայն, որ այս անգամ ներկայացման մասնակցում էին հայ թատրոնական խմբի առաջնակարգ ոյժերը. խաղը լաւ անցուցաւ Թատրոնը ի էր, և հեղինակը բազմաթիւ անգամ բեմ կանչուեց:

Գերմանացի Հօխվելդ մի անհամ թատերական գործ է գրել, «Կնոջ պայքարը», այդ նրա իբաւունքն է, ամեն մարդ ազատ է յիմար բաներ գրել, բայց տիկին Սիրանոյշ մի խոշոր սիւալ գործեց այդ անշնորհք երկը ընտրելով իր բենեֆիսին, որ տեղի ունեցաւ փետրուարի 6-ին: Ընտրւում է, վերնադիրը չափազանց հնչուն է—«Կնոջ պայքարը», գարեբով տառապած, իրաւազուրկ, ճնշուած այդ թոյլ արարածի պայքարը՝ կեանքի փրչերի միջից մի ճանապարհ հարթելու ինքնուրոյն պատուաւոր կացութեան համար: Ի՞նչ աւելի գեղեցիկ, ի՞նչ աւելի գրաւիչ գաղափար բեմից, գեղարուեստի տաճարից քարոզելու համար:

Եւ հէնց այստեղ պէտք է փնտրել տիկին Սիրանոյշի ընտրութեան բուն պատճառը, այն է բացադրում նրա հոգեբանութիւնը, երբ նա որոշում էր «Կնոջ պայքարը» գնել իր բենեֆիսին: Ափսոս սակայն, որ վերնադիրը չափազանց խաբուսիկ է, հասարակութիւնը հիասթափուեց կատարելապէս, այդ անկասկած է, ուրախ կը լինէինք հմանալ, որ տիկինն էլ այդ անհամ, անշնորհք գրուածքը իր բեպերտուարից գուրս է պցել:

«Կնոջ պայքարը» թատերական գործ չէ, այլ հրապարակախօսական և այն խիստ փծուն, չարլօն ոճով գրուած յօդուածների մի անշնորհք ժողովածու: Իրար յեակից գուրս են գալիս բեմ գերակատարները և ճառում, ճառում կնոջ արհամարհուած իբաւունքների մասին, այն էլ այնպիսի հողի վրայ, որ շատ քիչ առընչութիւն ունի մեր գրականութեան, մեր կեանքի հետ: Լակ չէ լինում, ձանձրոյթը հողի է հանում, և ներկայացումը վերջ չ'ունի:

Չը նայելով, պիեսի անձանօթութեան, հասարակութիւնն

այնուամենայնիւ մեծ թւով լցրել էր թատրոնը իր յարգանքը յայտնելու համակրելի և տաղանդաւոր տ. Սիրանոյշին, որին մի թանկագին ընծայ մատուցեց և վերջում էլ մի ուղղերձ, որ կարգացի բեմից մի փոքրիկ աղջիկ:

Ամբողջ թատրոնական գրականութեան մէջ չր կայ մի տիպ, որի բացատրութիւնն այնքան զբաղեցրած լինի արտիստներին և առնառարակ զեղարուեստագէտներին, որքան Համլէտ: Շէքսպիր իր տիտանեան հանճարով այդ տիպի մէջ դրել է մի բան, որ այնքան մօտ, այնպէս ընտանի է թւում մարդկային մաքին, հոյուն, և որ սակայն իր մանրամասնութիւնների մէջ մնում է անբմբռնելի և խուսափում է, ինչպէս յաւիտենական, իղէալական ճշմարտութիւնը: Համլէտի հոգեբանական բարդ հիւսուսածքը համարեա մի անդունդ է, ուր թաղւում ու խրճճւում են շատ անդամ նոյն իսկ խոշոր տաղանդներ:

Այդ տիպի սահմաններն ինչպէս մի հրաշալի օլերսոյթ տարբեր աչքերին երևում են տարբեր տարածութեան վրայ, և կարծէք ոչ որի վճակուած չէ այդ խուսափող երևոյթը մի հանկայքով ամբողջապէս ընդգրկել և պահել: Մի հմուտ արուեստագէտ վերարտադրում և տալիս է ապագայ սերունդին այն տարբերութիւնը, կամ համարեա այն, որ Մօլիերն է մտածել, երևակայել, ստեղծել: Հանդիսականները գոհ են: ասենք զրտնում են, որ այդ այդպէս է, որ Տարտիւֆն ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որ բեմի վրայ իսկ և իսկ Մօլիերի ցանկացած Տարտիւֆն է: Բայց նոյնը չէ կարելի ասել Համլէտի մասին, հոգեբանական անալիզը, որքան և խորը ու հմուտ տարուի, այնուամենայնիւ Դանիայի արքայազնի էութեան յետին խորհերը կ'ասես չէ թափանցում, Շէքսպիր ստեղծելով այդ տիպը կարծես կամեցել է ցոյց տալ աշխարհին, թէ մարդկային հոգին մի անդունդ է անհասանելի խորխորատներով: Ահա թէ ինչու Տարտիւֆը մէկ հատ է, թէ Մօլիերի, թէ արտիստների և թէ կեանքի համար, մինչդեռ Համլէտը մէկ է Շէքսպիրի համար, բայց բազմաթիւ է բեմերի վրայ: Իրաքանչիւր մեծ արտիստ ասեղծում է Համլէտից մի տիպ, որ իրանն է, իր տենպերամենտի, տաղանդի ոյժի, մտաւոր հասկացողութեան արտադրութիւն:

Տ. Սիրանոյշ, որպէս շատերից մէկը, փետրուարի 10-ին փորձեց տալ մեզ իր Համլէտը: Եւ նա կարելի է ասել յաջողութիւն ունեցաւ, նա ներկայացրեց մի Համլէտ, որ իրանն է՝ տ. Սիրանոյշին: Թաղի ընթացքում համակրելի արտիստուհի և բազմաթիւ անհրաքելի ապացոյցներ տուեց իր իսկական տաղանդին,

հոգեբանական անալիզի իր անուղյաման կարողութեան և վերին աստիճանի բարեխղճութեան դէպի իր յանձն առած իսկապէս ծանր դերը: Եւ այնուամենայնիւ ասենազլխաւորը՝ իլլիւզիան, որ ամեն մի ներկայացման ամենաանհրաժեշտ պայմանն է և տպաւորութեան հիմունքը, ծայրէ ի ծայր բացակայ մնաց: Այս ցաւալի հանգամանքը սակայն, տիկնոջ սաղանդի թերութեանը վերադրելի չէ, այլ իր սեռին: Ինչքան և սսելու լինեն, թէ Համլէտի բնաւորութեան մէջ կանայի քնքշութեան գծեր կան, որ նա քնքոյշ և իրան յատուկ մեղմութիւն, քաղցրութիւն ունի, այնուամենայնիւ դանիական արքայազնը մի տղամարդ է, իսկ կանացիութիւնը երբէք չը պիտի կարողանայ տղամարդութիւնը մարմնացնել և այնպիսի իլլիւզիա առաջ բերել, որ դեղարուեստական հաճոյքը չը փչանայ: Դա մօտաւորապէս նոյնը կը լինէր, եթէ մի քնքոյշ կազմուածքով տղամարդ կամենար կատարել «կամեւիազարդ տիկնոջ» դերը:

Եթէ ամփոփենք մեր ստացած տպաւորութիւնը պիտի, ասենք, որ տիկին Սիրանոյշ իր Համլէտով ցոյց տուեց իր տաղանդի ոյժը և բազմակողմանիութիւնը, մտածել, գիտել տուեց առանց զգացմունքների վրայ ազդելու, առանց յուզելու:

Սիրանոյշ—Համլէտը հետաքրքիր է, բայց երկու անգամ տեսնելը անկարելի է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գիւղատնտեսական արդիւնագործութեան կարիքների հարցը.—Առանձին Խորհրդակցութիւն եւ նահանգական ու զարառական կոմիտէներ.—Կարծիք յայտնելու ազատութիւն.—Գիւղատնտեսութեան յետաւնացութեան հիմնական պատճառները.—Գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքները Անդրկովկասում.—Գ. պ. Տարասլեովի եւ Գոգիչայլիլիի զեկուցումները.—Գովկասեան թժշկական Ընկերութեան կարծիքը տեղական ինքնաշարժութեան անհրաժեշտութեան մասին.—Մոֆի եւ Բենարտսութեան ազատութիւնն եւ Վելիլիօ.—Փետրուարի 19 իրելու Ռուսաստանի համաժողովրդական սով.—Նոր դասաստանական կարգերի երեսնհինգամեակը Գովկասում եւ սպասելիք դասաստանական բեֆորմներ Անդրկովկասում.—Անդիժանի երկրաշարժի հետեւանները:

Մի սարի անցաւ այն օրից, երբ Բարձրագոյն հրամանով Պետերբուրգում հաստատուեց Ռուսաստանի գիւղատնտեսական արդիւնագործութեան կարիքների քննութեան համար Առանձին Խորհրդակցութիւն ֆինանսների մինիստրի նախագահութեամբ: Այդ Խորհրդակցութեան բացի երկրագործութեան ու ներքին գործերի մինիստրներից մասնակցում են Կայսրից նշանակուած տասնեկին անձինք. պետական խորհրդի տասը անդամ, պետական քարտուղարը, մինիստրների կոմիտետի գործերի կառավարիչը, ֆինանսների, երկրագործութեան և ներքին գործոց մինիստրների օգնականները և Մոսկուայի Գիւղատնտեսական Ընկերութեան նախագահը:

Առանձին Խորհրդակցութիւնը հէնց իր գործունէութեան սկզբից թոյլտուութիւն ստացաւ բանալու բոլոր նահանգներում և զեմստովային գաւառներում նահանգական և գաւառական կոմիտէներ, որոնց քննութեան և եզրակացութեան առաջարկեց իր մշակած ծրագրի 27 հարցեր: Նշանաւորը այն է, որ Առանձին Խորհրդակցութեան նախագահը շրջաբերականով յայտարարեց այդ կոմիտէներին, թէ կատարեալ ազատութիւն է տրւում այդ

ժողովներում քննուելիք հարցերի մասին անկախ հայեացքներ յայտնելու և ցայց տալու այն կարիքները, որոնց գոհացումը «տեղական մարզկանց» կարծիքով կարևոր է՝ համարուում:

Քննադատութեան այդ ազատութիւնով և «տեղային մարզկանց» ու վարչութեան սերտ շփումով միայն կարող են իրազործուել ներքին դործոց մինխտորի այդ մինխտորութեան հարիւրամեակի առիթով ասած ճառի այն խօսքերը, որնցով նա հրաւիրում էր «երկրի բոլոր ստեղծագործող հողեկան սյժերի» մասնակցութիւնը՝ երկրագործ Ռուսաստանի գիւղական ազգաբնակչութեան անմխիթար կացութիւնը բարուգրելու համար:

Մի ամբողջ տարի լայնածաւալ Ռուսաստանի զանազան անկիւններում կենդանի հետաքրքրութեամբ քննում էին ժողովրդական աշխատանքի այդ ամենանշանաւոր ճիւղի արդիւնաւորութիւնը բարձրացնելու բարբ և յուրջ հարցերը: Եւ ուսանելին այն է, որ զարմանալի միակերպութեամբ ամեն սեղ ժողովրդի ցաւերը լաւ ճանաչող գործիչներն ու հիմնարկութիւնները մասնանիչ էին անում միևնոյն հիմնական և ընդհանուր պակասութիւնները, այն է՝ գիւղական ազգաբնակչութեան ծայրայեղ անկուլտուրականութիւնը, իրաւունքների անհաւասարութիւնը գիւղական և միւս գասակարգերի մէջ, տեղային ինքնավարութիւնների չափազանց սահմանափակումները կամ կատարեալ բացակայութիւնը, ինդուստրիայի չափազանց հովանաւորումը ի վնաս սպառող մասսայի և հարկերի ծանրաբեռնումը չքաւոր գասակարգերի վրայ: Լոյս, օրինականութիւն և անհատական նախաձեռնութեան ազատութիւն են հարկաւոր, որպէսզի սպէտ, աղքատ և խնդրատուրից զուրկ մասսան դուրս գայ իր այժմեան դրութիւնից:

Տեղական մարզկանց կարծիքներն իմանալու այդ խելացի սխտեմը մի նոր երևոյթ էր մանաւանդ Անդրկովկասում: Պէտք է երևակայել մեր գիւղացիների զարմանքը, երբ, օրինակ, Երևանեան նահանգապետ կոմս Տիգլանեանը բանալով գիւղատիրնտեսական կարիքները քննող կոմիտեի նիստը, ուր հրաւիրուած էին նաև 20 գիւղական ներկայացուցիչներ, շեշտեց իր ճառի մէջ, որ ցանկալի է լսել քննուող հարցերի մասին «գուտ ճշմարտութիւն» և ամեն մէկը սղատ է առանց քաշուելու յայտնել իր գիտեցածը:

Առանձին Խորհրդակցութեան բռնած համակրելի ընթացք կենդանութիւն տուեց և կովի. Գիւղատնտեսական Ընկերութեան, որի մէջ, ինչպէս անցեալ անգամ էլ յիշատակեցինք, արծարծուեցին մի շարք յուրջ հասարակական-տեղային խընդիրներ: Այդ ընկերութեան մէջ վերջերումս կարգացուած գե-

կուցումներից առանձին ուշադրություն արժանի են երկուսը՝ պ. պ. Տարատընօլի և Գօզիչայշվիլի գեկուցումները: Պ. Տարատընօլը, որ ինքը մասնադէտ գիւղատնտես է և լաւ ճանաչում է Անդրկովկասը, շատ մոայլ գոյներով նկարագրեց մեր գիւղատնտեսութեան վիճակը:

«Անդրկովկասեան գիւղատնտեսութիւնը, ասաց պարոնը, չը նայած երկրի բնական պայմանների չափազանց պէսպիսութեան ու ճոխութեան, գոնէ մինչև այժմ քարչում է ամենաողորմելի գոյութիւն. ունենալով հարաւային կենսատու արև, բարեբեր հող, հնարաւորութիւն բնւայնելու ամեն տեսակի արժեքաւոր բերքեր, ինչպէս օրինակ՝ խազող, բամբակ, բրինձ, թէյ, ձիթենի, ծխախոտ, նարինջ, պատրաստելու շվէյցարական պանիր, ամեն տեսակի և թանկագին մրգեր, ինչպէս՝ գեղձ, ծիրան, խնձոր, տանձ, սալոր, ֆնդըղ, փխսաա և այլն, այն էլ արհեստական ոռոգութեամբ և հնարաւորութիւն ունենալով տարին 9 կամ 10, իսկ երբեմն նաև 12 ամիս տափարակներում աշխատանք կատարելու, — անդրկովկասեան գիւղատնտեսութիւնը, շատ քիչ բացառութեամբ, առանց չափազանցութեան կարելի է ասել, հազիւ ծայրը ծայրին է հասցնում, իսկ սակաւահող գիւղացիները՝ այսինքն ազգաբնակչութեան մասսան հազիւ է պահպանում իր թշուառ գոյութիւնը, և մեծ մասամբ տարէցտարի աւելացնում է իր չը վճարած տուրքի քանակը»:

«Բանը նրանումն է, ասում է պ. Տարատընօլը, որ Անդրկովկասի ամբողջ գիւղատնտեսութիւնը համարեա բացառապէս դանուում է աղքատ ու սղէտ գիւղացիների ձեռքում: Իսկ կալուածատէրերը սովորաբար ստանալով հունձի իրանց մասը, բնաւ չեն խառնուում տնտեսութեան մէջ և դրանում ոչ մի ներդրական գեր չեն կատարում: Տեղային ինքնավարութիւն կամ ղեմսավօ էլ չ'ունենք, ուստի վերջ ի վերջոյ դուրս է գալիս, որ մեր գիւղատնտեսութեան՝ մանաւանդ գիւղացիական արնտեսութեան շահերի մասին համարեա չը կայ հողացող, թէև զանազան հողատարներ բոա երևոյթին մեր գիւղատնտեսութիւնը շատ ունի, սակայն մի սրևէ ազեաի ժամանակ, ինչպէս օրինակ մորելի երեւոլու, տաւարի ժանտախտի, անբերբրութեան, կերի պակասութեան, համաճարակի, նոյնիսկ մշտական հիւանդութիւնների, ինչպէս մալեարիայի գէպրերում, ոչ միայն չը կայ մէկը, որ օգնի գիւղացուն, այլև մինչև անդամ այդ բոլոր ազեաների մասին յաճախ անկարելի է բնաւ ոչ խօսել, ոչ էլ գրել» *):

*) Տես „Кавк. Селс. Хоз.“ № № 470, 471.

Բայց միայն գիւղատնտեսները չեն, որոնք վերլուծելով ժողովրդի կեանքի անմխիթար երևոյթները, դալիս են կանգ առնում տեղական ինքնավարութեան անհրաժեշտութեան վերայ, նոյնը ստիպուած է ասել և գաւաաներում գործող բժիշկը, մնչպէս առիթ են ունեցել կարգալու մեր ընթերցողները. սակայն այդ անհատական հայեացքներից աւելի հեղինակաւոր է Կովկասեան Բժշկական ընկերութեան կարծիքը: Անդրկովկասի գիւղական ազգաբնակչութեան մէջ առողջապահական գործը հիմնաւորապէս բարուարելու համար այդ ընկերութիւնն էլ անհրաժեշտ է համարում միջնորդել, որ Անդրկովկասի բոլոր նահանգներում մտցնուեն զեմատվային հիմնարկութիւններ, և բժշկական մասը ստանայ մեզանում այնպիսի կազմակերպութիւն, ինչպիսին գոյութիւն ունի ներքին, զեմատվային նահանգներում...

Միւս զեկուցումը, որ փետրուարի 11-ին կարգացուցց Գիւղատնտեսական Ընկերութեան մէջ, ինչպէս վերը յիշեցինք, պատկանում է պ. Գօղիչայշվիլին և վերաբերում է «Անդրկովկասի գիւղացիների սակաւահողութեան» հարցին: Գօղիչայշվիլին վիճակագրական տեղեկութիւններով ապացուցեց, որ Անդրկովկասում ժողովուրդը աւելի խիտ է բնակուած, քան Եւրոպական Ռուսաստանում. մեզանում մի քառակուսի վերստի վրայ ընկնում է 25,2 բնակիչ, իսկ այնտեղ 14,5 բնակիչ: Նացոյց տուեց, որ Եւրոպական Ռուսաստանում գիւղական դասակարգը ընդհանուր առմամբ շատ աւելի է ապահովուած հողով, քան անդրկովկասինը: Սակաւահողութիւնը աւելի ծանր է մեր գիւղացիների համար, որովհետեւ մեր քաղաքները անասապէս այնքան զարգացած չեն, որ զբաղմունք տան, տեղաւորեն գիւղերում ազգաբնակչութեան աւելացած մասը: Զեկուցանողը ցոյց էր տալիս, որ մեր երկրում մօտ 3 միլլիօն գետնատին ազատ արքունական հող կայ, որ կարելի էր բաժանել մեր հողազուրկ գիւղացիներին, պետական վարկ բաց թողնելով դրանց անասական ծախքերի համար:

Ահա այսպէս հանգիստ կերպով մեզանում ևս «տեղային ոյժերը» քննում են հասարակական և պետական ահադին նշանակութիւն ունեցող հարցեր, և այդ ժողովներին նախազանոզ պաշտօնական դիրք ունեցող անձինք ոչ մի պախարակելի բան չեն դանում այդ զեկուցումների ընթերցումի և կարծիքների փոխանակութեան մէջ, որովհետեւ բոլորին էլ սգեորում է իմանալու «զուտ ճշմարտութիւնը»:

Բոլորովին այլ կերպարանք կը ստանային այդ քննութիւնները, եթէ պ. պ. Վ. Վելիչկօ և Ը.-ից կախուած լինէր այդ-

պիսի դեկուցումները բնթերցումը կամ քննութիւնը: Այդ կողմից շատ բնորոշ էր այն, ինչ նորերս պատահեց Պետերբուրգում և մեծ ազդուէի հանեց բոլոր թերթերում: Կովկասից այնքան անոխառունակ կերպով հեռացած Վելիչկօն իրան համախոհ Նիկօլայ Լնդելդարցի և Սուվօրինի նման «խսկական պատրիօսները» հեռ Պետերբուրգում հիմնեց «Ռուսական ժողովարան», ուր հաւարւում էին զրանք իրանց ուղղութեան մէջ կատարելագործուելու նպատակով: Այդ «ուղղութիւնը» պահանջում է նոյն պետութեան մէջ ապրող ոչ-ռուս ազգութիւնների միանալու: Վելիչկօն դեռ Թիֆլիսում առանձին ակործակով ծամում էր հայերի միւսը, «Ռուսական ժողովարանում» էլ՝ իբրև Կովկասը «լաւ ճանաչող» մարդ՝ նա իր սեպուհ պարաքն է համարում անսեղեակ սուսներին ծանօթացնել մեզ հեռ: Վելիչկօն և հարկէ իրաւունք ունի իր սեփական՝ թէև մոլար կարծիքն ունենալու մեր մասին, բայց երբ նա բազմաթիւ անձանց մէջ համ միակողմանի, անհիմն, սուս սեղեկութիւն է ուզում ստրածել մի ազգի մասին, համ էլ արգելում է, որ իր ունկնդիրները լսեն և՛ ընդդիմախօսութիւններ, այն ժամանակ նա նմանում է այնպիսի ակոյեանի, որը պատի յետում թագնուած միայն ցեխ չարտել դիտէ: Դա ոչ միայն ասպետական վարմունք չէ, այլ և վայրենի բռնութիւն է: Եւ վատ չէր լինի, որ այդ «հրապարակախօսները» իրանց «Ռուսական ժողովարանում» կարգային անդլիայի Ջօն Սաիւարտ Միլլի տրակտատը «Մտքի և քննադատութեան ազատութեան մասին», որ ռուսերէն էլ է թարգմանուած: Այդ շատ աւելի օգտակար կը լինէր, քան թաթարա-բիւղանդական կամ quasi ռուսական հագուստների ձևեր փնտրելը: Գուցէ Միլլը կարդալուց յետոյ զրանք համոզուէին, որ ոչ միայն հայ Լազարեօր և Վերմիշեօր, այլև ռուս Միխայլօր և վրայի Կախին կատարեալ իրաւունք ունէին պահանջելու, որ յարգուի *audiatur et altera pars* սկզբունքը, իրաւունք ունէին բազմքելու Վելիչկօյի բռնութեան դէմ:

Վելիչկօնների, Սուվօրինների և Գրինգուսանների ատած Անդրլիայի զաւակ Ջօն Սաիւարտ Միլլը ասում է. «Եթէ ամբողջ մարդկային սերունդը՝ բացի մի անհատից՝ լինի որոշ կարծիքի, իսկ այդ անհատը լինի հակառակ կարծիքի, այդ դէպքում անզամ ամբողջ մարդկութիւնը աւելի իրաւունք չ'ունի լուցնելու այդ մի անհատին, քան այդ մի անհատը լուցնելու ամբողջ մարդկութեան, եթէ միայն՝ ի հարկէ՝ անհատը այդ անելու հրնարաւորութիւն ունենար... Եթէ կարծիքը ուղիղ է, սուս արգելել այն արտայայտել՝ նշանակում է արդելք գնել մարդկանց առաջ իմանալու ճշմարտութիւնը և դուրս դալու մոլորութիւ-

նից, իսկ եթէ կարծիքը ուղիղ չէ, այդ դէպքում արդելք գնել նրա ազատ արտայայտութեան՝ նշանակում է միջոց չը տալ մարդկանց ճշմարտութիւնը աւելի պարզ ըմբռնելու և աւելի խորը համոզուելու նրա մէջ,—ինչպէս այդ սովորաբար լինում է իբրև հետեանք ճշմարտութեան և մոլորութեան ամեն մի ընդհարումի... Առարկան լիովին ճանաչելու միակ միջոցը կայանում է նրանում, որ ուշադրութեամբ լսեն այն բոլորը, ինչ որ կարող է ասուել նրա մասին ամեն տեսակ կարծիքներ ունեցող մարդկանց կողմից»:

Հետեաբար, վելիչիօները թող ինչ ուզում են՝ ասեն հըրապարակապէս, բայց և թող ուրիշներին էլ չ'արգելեն իրանց հանցակէտերը և իմացածները պարզելու նոյն ունկնդիրների առաջ, որոնց պարզամտութիւնը ցանկանում են թունաւորել, ապականել ստութիւններով: Գուցէ վելիչիօնները կարծում են, թէ դեռ գոյութիւն ունի Ռուսաստանում ճորտութիւն գէթ այլազգիների նկատմամբ... Բայց նա լաւ գիտէ, որ ճորտութիւնը ոչ միայն վերացուած է, այլ և ճորտերի ազատութեան օրը, փետրուարի 19-ը, ուսաց սինօզի կարգադրութեամբ այսուհետև դառնում է իւրաքանչիւր տարի համաժողովրդական տօնակատարութեան հանդիսաւոր մի օր: Այդ փետրուարի 19 անմտաց է Ռուսաստանի բոլոր սզդութիւնների համար և կապուած է Ալեքսանդր II-ի համակրելի անուան հետ երեք նշանաւոր անցքերով. ճորտերի ազատութիւնը, Բուլղարիայի ազատութիւնը (Սան-Ստեֆանօյի դաշնագիր, 1878) և Կովկասում նոր դատաստանական կարգերի ներմուծումը կատարուել են այդ օրը: Երեսուներեկ հինգ տարի վայելելով այդ դատաստանական կարգերը՝ Կովկասը դեռ ևս չ'ունի զրանց պսակը,— երդուեալ դատաւորների հաստատութիւնը (juri): Սակայն լրբազրական տեղեկութիւններին նայած՝ Պետական Սորհրդի մէջ ծրագրուում է երդուեալ դատաւորների հաստատութիւնը լրիւ մտցնել միայն Հիւսիսային-Կովկասում, իսկ Անդրկովկասում զրա փոխարէն հիմնուելու է ատեան՝ բաղկացած 3 երդուեալ դատաւորներից, ազգաբնակչութեան ընտրութեամբ, և երեք նշանակովի թագաւորական դատաւորներից:

— Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

24 փետրուարի

Առ 1 փետրուարի պաշտօնական տեղեկութիւնների հիման վրայ պարզուել է, որ Անդրիժանի գաւառում և Անդրիժան

քաղաքում երկրաչարժից սպանուածների թիւը 4,358 հոգի է. սպանուած են 6000 զլուխ անասուններ 300 հազար ր. արժողութեամբ, կործանուած են 30,112 տուն 9¹/₂ միլիօն ր. արժողութեամբ, շարժական կապք է կորցրուած 600 հազարի: Մարդեկանի դաւառում սպանուած մարդկանց թիւն է 285, անասուններինը՝ 518 զլուխ 26 հազար ր. արժողութեամբ, կործանուած տների թիւն է 3 հազար 400 հազար ր. արժողութեամբ, շարժական կապք է կորցրուած 4 հազարի: Երկրի շարժը, և ստորերկրեայ ցնցումները դեռ շարունակուում են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուս-աւստրո-ունգարական ծրագիրը Մակեդոնիայի բեգորներէ մասին.—
Բուլղարիայի բռնած դիրքը.—Միւս մեծ պետութիւններէ վերաբերմունքը.—
Բուլղար ժողովրդի եւ մակեդոնացի յեղափոխականներէ սրամադրութիւնը.—
Թիւրքիայի սպառնազինումը.—Եւրոպական հասարակութեան համեմատական ակ-
տարբերութիւնը.—Քաղաքական ձառեր արեւելեան հարցի մասին եւրոպեացի եւ
Պարսիզում.—Անգլիայի այժմեան դիրքը.—Սուլթանի օրօրները Օրմանեան
պատերազմին.—Ռուսաստանի ազդեցութեան անումը Պարսկաստանում.—Թիւրք-
մեկեայի դաշնագրի III-րդ յօդ. փոփոխութիւնը.—Կառավարական հարցադա-
րութիւն մակեդոնական հարցի մասին:—Զմիւռնացի վաճառական Պելեօզեա-
նի սպանութեան գործը.—Վիլիկիայի կարողիկոսի պատրաստութիւնները Սիւ-
զնայում.—Արփիարեանիս սպանելու փորձը:

Գարունը մօտենում է, և Բալկանեան թերակղզում պատ-
րաստում են խորհրդաւոր անցքեր, որոնք մեծ փոփոխութիւն-
ներ պիտի առաջացնեն Եւրոպական Թիւրքիայում: Սուլթանը
քսան և հինգ տարի ձգձգելով Բերլինի դաշնադրի պահանջների
գործադրութիւնը և մակեդոնացիներին հասցնելով ծայրայեղ
յուսահատութեան, վերջապէս մի քանի օրուայ ընթացքում շու-
տափայտ ընդունեց ուս և աւստրո-ունգարական կառավարու-
թիւնների մշակած ծրագիրը, որի հետ ընթերցողը կարող է
ծանօթանալ ներքեում բերած կառավարչական հաղորդադրու-
թիւնից: Մակեդոնական հարցով ամենից շատ շահադրողում
բուլղարական կառավարութիւնը, հնազանդուելով սուսայ կայ-
սեր առաջադրութեան՝ փակեց մակեդոնական կոմիտեաները և
աւելացրեց հսկողութիւնը սահմանադրի վրայ, որպէսզի յեղա-
փոխական խմբերը ազատ մուտք չը գործեն բռնիկուելու պատ-
րաստ Մակեդոնիայի մէջ: Սակայն, ինչպէս երևում է, բուլղար
ժողովուրդը, էլ չենք ասում յեղափոխական կոմիտեաները, չեն
հաւատում Թիւրքիայի անկեղծութեան և զոհ չեն առաջար-

կուած բեֆորմներով, որոնք իրազործուելու աւելի քիչ կրաչ-խաւորութիւն են պարունակում իրանց մէջ, քան Բերլինի դաշնագրի 23-րդ յօդուածն էր տրամադրում: Եւ կարծես աւելի ամրացնելու համար բուլղար ժողովրդի և մակեդոնացիների թերահաւատութիւնը, Պօլսում ղիչեր ու ցերեկ բոլոր ղինարաններում ռազմամթերքներ են պատրաստում, «բարենորոգուող» վիլայէթների մէջ կենտրոնացնում են թիւրքաց հետեակ, թնդանօթածիր և հեծեակ զօրքեր, որոնց թիւը այժմ հասնում է 90 հազար հոգու: Միևնոյն ժամանակ ուսաց կառավարութիւնը բացորոշ կերպով յայտնում է, որ նա «չի զոհի իր որդիների արևան ոչ մի կաթիլ, ոչ ուս ժողովրդի ունեցածի ամենափոքր մասն անդամ *), եթէ սլաւոնական տէրութիւնները յեղափոխական միջոցներով փորձեն փոխել Բալկանեան թերակղզու ներկայ կազմը»: Նոյն մտքով արտայայտուեց և Աւստրո-Ունգարիան, յայտնելով որ եթէ յեղափոխական փորձեր անեն Մակեդոնիայում, ոչ ոք մեծ պետութիւններից չի արգելի Թիւրքիային գործադրել ճնշման միջոցներ: Այդ խօսքերից արդէն կարելի է տեսնել, որ բոլոր մեծ պետութիւնները հաւանութիւն են տալիս ուսաւստրիական քաղաքականութեան մակեդոնական հարցում: Փոքր-Ասիայի քրիստոնեաների զբոսորդութիւնը թեթևացնելու մասին առայժմ բոլորովին խօսք էլ չէ լինում: Այն յուրը, թէ անղլիական զեսպանը Իլդըզ-Քեօչլում առաջադրութիւն արեց բեֆորմները տարածելու մասին փոքր-ասիական վիլայէթների վրայ՝ հերքում է, լրացրական տեղեկութիւններին նայած, անղլիական կողմից: Պօլսից տարուած մի հեռագիր յայտնում է, որ «Օրմանեան պատրիարքը շատ անգամ զարձնում էր Իլդըզ-Քեօչլի ուշադրութիւնը զործերի գրութեան վրայ փոքր-ասիական վիլայէթներում, և նրան հաղորդուեց, թէ Բ. Գուրը հրամայել է հաւասար իրաւունքներ ունեցողներ համարել հայերին և խուսափել նրանց վերաբերմամբ անարգարութիւններից»: Որ դա ոչինչ նշանակութիւն ունեցող խօսքեր են, այդ պարզ է. միթէ Խատտի-Հիւմայիւնում կէս դար առաջ նոյնը աւելի որոշ կերպով չէր ձևակերպուած, այնուամենայնիւ հարկ եղաւ, որ Ռուսիան իր զաւակների արիւնով Սան-Ստեփանօյի դաշնագիրը կնքէ. հարկ եղաւ, որ մեծ պետութիւնները 1895 թւին ասիական վիլայէթների քրիստոնեաների իրաւունքները ապահովելու համար առանձին մեծօրանդում ներկայացնեն: Եւ ո՞ւմ չէ յայտնի, որ

*) „Россія не пожертвуетъ ни единой каплей крови своихъ сыновей, ни самой малѣйшей долей достоянiя русскаго народа“.

այդ մեմօրանդումը սուլթանի կողմից ստորագրուելով անդամ առանց որևէ զործադրութեան մնաց և միայն տաջացրեց 300 հազար մարդկանց ստեղծի մի կոտորած...

Անգլիան, որ եօթ տարի առաջ ստաջնակարգ զեր էր ուզում կատարել թիւրքական Արևելքում, այժմ իր նեղ հաշիւներով է զրազուած Արարիայում: Բաղխուրի կառավարութիւնը սկզբում փորձեց Ռուսաստանի դէմ միւս մեծ պետութիւնների դժգոհութիւնը յարուցանել՝ Դարդանէլեան նեղուցով սուսական իրրե թէ ռազմանաւերի ազատ անցուղարձի պատճառով, բայց երբ նաև Վենեցուէլեան արշաւանքի իր զինակից Գերմանիան զգոյշ վաճառականի նման իմաց տուեց, որ «իր քաղաքականութեան սփերայից դուրս է» այդ հարցը, լուց և՛ «նենդամիտ» Ալբիօնը ու մի կողմ քաշուեց:

Այդպիսով եւրոպական մեծ պետութիւնների փոխադարձ անվստահութեան շնորհիւ համարձակ քայլեր անել մտկեզոնական հարցում ոչ մի զիսկումսա չէ խիզախում:

Ի՞նչ է անում եւրոպական հասարակական կարծիքը: Ընդհանուր առմամբ բաւական մեղամաղձ անտարբերութիւն է նրկատում, եթէ չը հաշուենք մի քանի վեհանձն զործիչների ջանքերը զարթեցնելու հասարակական խիզճը:

Այդ կողմից առանձին ուշագրութեան արժանի էր Բերլինում աշխարհահռչակ Գէորգ Բրանդէսի կարգացած դասախօսութիւնը թիւրքահայերի տառապանքների մասին: Տաղանդաւոր հոետորը մի քանի անկեղծ արտասուք քամեց նոյն խի սառնարիւն գերմանացիների աչքերից, թէև նրա խօսքերից վերաւորուեցին մի քանի չօլինիստ սրտեր: «Առանց Գերմանիայի բարեկամութեան Թիւրքիան հնարաւորութիւն չէր ունենայ կատարել այն բոլոր հրէշաւոր ոճերները, որ նա դործեց Թիւրքաշայաստանում,—ասաց Բրանդէսը: Այդ յայտնութիւնը կարող է դուր չը գալ գերման չօլինիստներին, աւելացրեց նա, սակայն սասածս ճշմարտութիւն է: 1896 թւականի օգոստոսին, երբ թիւրքական մոլեռանդութեան զոհ էին լինում Պօլսում հազարաւոր հայեր, Գերմանիան Թիւրքիայի հետ բնծանների փոխանակութիւն էր անում... Ի նշան բարեկամութեան! Այդ բանը յիշելիս իւրաքանչիւր գերմանացի, որ թանգ է համարում իր հայրենիքի պատիւը, պէտք է ամօթից այրուի»:

Աւելի մեծ ծաւալ ունեցաւ Պարիզում կազմուած հակաթիւրքական միաինգը դէտուրնէլ զը կոնստանի նախաձեռնութեամբ Château d'Eau թատրոնում 4 հազար մարդկանց մասնակցութեամբ: Յանուն արդարութեան և մարդասիրութեան՝ Փրանսիայի քաղաքական բոլոր կուսակցութիւնների ներկայա-

յու ցիչները հաւաքուած էին Հայաստանի և Մակեդոնիայի բեֆորմների անհրաժեշտութիւնը արծարծելու: Այդտեղ ամբիոնից խօսում էին դէտուրնէլ, Դրնի-Կօչէն, Պրեսանսէ, Ժօրես, Լեյրուա-Բօլիօ այնպիսի պաթոսով, որ դիտէ գործադրել ֆրանսիացի հոկտորը միայն: «Ֆրանսիայի իրաւունքն է բարձրացնել իր ձայնը, առայ Ժօրես, Ֆրանսիայի պարտքն է ծեծել միւս ազգերի դոները, նա պէտք է զարթեցնէ քնած խղճերը... Բալկաններում արեան հոտ է փչում... Մենք չենք ուղում թիւրք ժողովրդի քաղաքական ոչնչացումը: Մենք միայն ցանկանում ենք, որ սուլթանը տայ իր բոլոր հպատակներին ազատութիւն, սեփականութեան և պատւի ամենատարրական երաշխաւորութիւն»:

Եւ ժողովը միաձայն վճիռ կայացրեց դիմել կառավարութեան, որ այդ վերջինը եռանդով պաշտպանէ նեղուածներին և դարձադրել տայ Բերլինի դաշնագրի 23-րդ և 61-րդ յօդուածները, համաձայն 1895 թւականի մեմօրանդումին:

Այդպէս ևն մտածում իղէալիստները, որոնց խորհուրդները և խրախուսները դժուար թէ տաքացնեն դիպլօմատիական պաղարեւոտթիւնը: Դեյլաստէն, ֆրանսիական հանրապետութեան արտաքին գործերի ղեկավարը, պէտք է համակերպուի արեւելեան հարցում դաշնակից Ռուսաստանի քաղաքականութեան:

Այդպէս ահա իրերի դրութիւնը արեւելեան հարցի լուծման մէջ առաջնակարգ դեր է տուել Ռուսաստանին: Եւ Անդլիան կորցնում է իր ազդեցութիւնը ոչ միայն թիւրքիայում, այլև հարաւային Պարսկաստանում, ուր օրէցօր զօրեղանում է սուսական հմայքը: Ռուսական նաւերը նպաստ ստանալով կառավարութիւնից՝ արդէն յաճախ երևում են Պարսից Ծոցում, որի նաւահանդիստներում հիմնել ևն սուսաց հիւպատոսարաններ, առևտրական ֆիրմաներ: Պետերբուրգում հիմնուում է սուս-պարսկական բանկ, որ պէտք է բաժանմունքներ ունենայ Մոսկուայում, թիֆլիսում, Բազում, Երեւանում, Թաւրիզում և Թեհրանում: Օրէցօր զարգացող առևտրական կապը Ռուսաստանի և Պարսկաստանի մէջ անհրաժեշտ դարձրեց նաև փոփոխել թիւրք-մէնչայի դաշնագրի III-րդ յօդուածը նոր դաշնագրով, որ զօրութեան մէջ է մտնում այս փետրուարի մէկից: Մինչև այժմ մաքս էր վերցնուում 5% ապրանքի արժէքից (ad valorem), մի բան, որ շատ անորոշ է և տեղիք էր տալիս բազմաթիւ զեղծումների և դժուարացնում էր առևտրականներին: Մինչև այժմ Պարսկաստանում մաքսը կապալով էր արւում մասնաւոր մարդկանց, երկրի մէջ ներմուծուած ապրանքների ճանապարհին զանազան տեսակ հարկեր էին պահանջուում, ապրանքները պահելու

ապահովութիւններ չը կային և այլն: Այժմ այդ դաշնադիրը կանոնաւորում է բոլոր թերութիւնները, պարտաւորեցնում է պարսից կառավարութեան վերացնել ապօրինի հարկերը, ապահովել ապրանքների պահեստները և ճիշտ մաքսեր նշանակել ըստ կըշտի բոլոր ապրանքների համար: Այն էլ պէտք է ասել, որ շատ ապրանքներ պէտք է ներմուծուին այդ երկիրն առանց մաքսի, և միւս ապրանքների համար շատ աննշան մաքս է որոշուած:

Պարզ է, որ աւելի ևս սերտ է դառնում Պարսկաստանի կապը Ռուսաստանի հետ, և աւելի է զօրեղանում նրա սնտեսական կախումը իր հզօր հարեանից:

Լ. Ս.

ԿԱՌԱՎԱՐՉՍԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Փետրուար 12-ից.

Անցեալ տարուայ նոյեմբերի 26-ին հրատարակուած կառավարչական հաղորդագրութիւնից արդէն յայտնի են այն որոշումները, որ Ռուսաստանը կայացրել էր Բալկանեան թերակղզու վրայ ծագած խռովութիւնների սկզբից՝ կամենալով առաջն առնել այն բարդութիւններ, որոնք կարող էին ծագել երօպական թիւրքիայում: Անընդհատ հետեւելով Ռուսաստանին հաւատակից ազգութիւնների քաղաքական կեանքին՝ Կայսերական կառավարութիւնը՝ ժամանակին իր դործակալների միջոցով ծանօթացած լինելով գործերի իսկական դրութեան հետ, չէր դադարում Բ. Դրան ամենալուրջ ուշադրութիւնը դարձնելու Սօլունի, Կոսսովի և Մօնաստիրի վիլայէթների քրիստոնէական ազգաբնակչութեան կենցաղը բարւոքելու անյետաձգելի անհրաժեշտութեան վրայ: Անցեալ տարուայ հոկտեմբեր ամսին Եալտա հրաւիրուած Կ. Պօլսի ռուսական դեսպանին յանձնարարուեց մշակել մի ծրագիր ամենակարեւոր բարուորումների վերաբերմամբ և ցոյց տալ Բ. Դրանը, որ անհրաժեշտ հարկ է իրագործել այդ ծրագիրը ամենակարճ ժամանակամիջոցում, որպէս զի արմատախիլ լինեն նրա հպատակների մէջ ծագած դժգոհութեան պատճառները: Նոյն մտքով մի ծանուցում արուեց սուլթանի կողմից՝ Թագաւոր Կայսրին ողջունելու համար Լիվադիա ուղարկուած թիւրքական արտակարգ դեսպան Թուրխան-փաշային: Օսմանեան կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնեց հետեւելու այդ բարեկամական խորհրդին: Սակայն սուլթանի իրազէն, որ հրատարակուեց 1902 թւականի նոյեմբեր ամսին, թիւրքիայի երօպական նահանգների մէջ բարենորոգումներ մտցնելու վերաբերմամբ՝ բաւարար գրաւական չ'եղաւ քրիստոնէայ ազգաբնակչութեան դրութիւնը ցանկալի կերպով բարւոքելու համար, ուստի և չը հասաւ իր նպատակին—ընդհանուր խաղաղացման: Միւս կողմից՝ չը նայելով բալկանեան պետութիւններին տուած բարեկամական խորհուրդներին՝ յեղափոխական կոմիտեաների գործունէութիւնը շարունակուած էր կորստաբեր ազդեցութիւն գործել, զրգուելով ազգաբնակչութիւնը ապշտամբել օրինական իշխանութեան դէմ: Ուշադրութեան աննւալով իրերի դրութեան այս չափազանց յուզուած վիճակը՝ Թագաւոր Կայսրը բարեհաճեց Բարձրագոյն հրամայել արտաքին

գործերի մինիստրին՝ անցեալ տարուայ ղեկավարների սկզբում
 այցելել Սերբիայի և Բուլղարիայի մայրաքաղաքները՝ հաղորդե-
 լու թէ Ալէքսանդր Թապաւորին և թէ իշխան Ֆերզինանդին Նո-
 րին Մեծութեան Օղոստափառ անունից հետեւալը.—Ռուսաստա-
 նը, ի վաղուց հետէ ամենանոստրու մասնակցութիւն ունենա-
 լով Թիւրքիայի քրիստոնեայ ազգութիւնների վիճակի մէջ, իր
 բոլոր ջանքերը այժմ ուղղում է դէպի այն, որ համոզէ օսմա-
 նեան կառավարութեանը չուտով բարենորոգումներ մտցնելու
 երօպական երեք վիլայէթներում։ Այդ նպատակին աջողութեամբ
 հասնելու համար անպայման հարկաւոր է, որ սլաւօնական
 պետութիւնները, ձեռք առնելով իրանցից կախուած միջոցները
 խաղաղութիւնը պահպանելու համար Բալկանեան թերակղզում,
 մաքառէին վտանգաւոր խռովութիւնների և յեղափոխական դի-
 տաւորութիւնների դէմ։ Միայն այս պայմաններում նրանք կա-
 րող են հաստատուն յոյս ունենալ Ռուսաստանի հզոր պաշտպա-
 նութեանը Սերբիական թագաւորը և բուլղարական իշխանը,
 իբրև պատասխան Բարձրագոյն անունից նրանց տուած խոր-
 հուրդների՝ շտապեցին կոմս Լամզգորֆին հաւատացնել, որ նը-
 րանց կառավարութիւնները հետեւելով Ռուսաց Կայսրի բարե-
 աչակամ խորհուրդներին, հոյս կը տանեն զաղաքեցնելու յեղա-
 փոխական կոմիտեաների և ընկերութիւնների գործունէութիւնը
 և կը սպասեն Ռուսաստանի ձեռնարկած ազդեցման գործի հե-
 տեանքներին յօլուտ Թիւրքիայի քրիստոնեայ ազգութիւնների։
 Այդ խոստումները կատարուեցին, և Կայսերական կառավարու-
 թիւնը չը յապաղեց յատնելու իր լիովին հաւանութիւնը բուլ-
 ղարական կառավարութեան՝ վերջին ժամանակ նրա ձեռք ա-
 ուած միջոցների առիթով յեղափոխական կոմիտեաների դէմ։
 Բուլղարիա և Սերբիա այցելելուց յետոյ, կոմս Լամզգորֆ Բար-
 ձրագոյն հաճութեամբ ուղևորուեց Վիէննա, որտեղ երկու հա-
 րեան և բարեկամ պետութիւնների արտաքին գործերի մինիս-
 տրներին մէջ տեղի ունեցան, 1897 թւի պայմանադրութեան
 զօրութեամբ, առանձին խորհրդակցութիւններ, որոնք վերջա-
 ցան այն դիւսաւոր սկզբունքների մշակմամբ, որոնք պէտք է
 հիմք ծառայեն բարեկարգումների համար թիւրքական երեք վի-
 լայէթներում։ Այս ձևով պայմանաւորուած ընդհանուր ծրագիրը
 անցեալ յունուարի սկզբում հաղորդուեց Կ. Պօլսի ռուսական և
 աւստրօ-ունգարական ղեկավարներին, որոնց յանձնարարում էր
 տեղական պայմանները քննադատելուց յետոյ մշակել կազմու-
 ած ծրագրի հիման վրայ աւելի մանրամասն նախագիծ այն
 միջոցների, որոնք պէտք է ծառայեն Սօլունի, Կոսսովի և Մօ-
 նաստիրի նահանգների ազգաբնակչութեան կենցաղը բարելա-

ւելլու գործին: Զինովիկի և Կալիչէի միջոցով պատրաստուած նախագիծը արժանացաւ երկու կառավարութիւններէ հաւանութեան և փետրուարի 4-ին հաղորդուեց 1878 թւականին Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին և միևնոյն ժամանակ խնդրուեց նրանցից համապատասխան աջակցութիւն ցոյց տալ Ռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի պահանջներին Կ. Պօլսում, եթէ նրանք համակրանքով վերաբերուեն ևնթագրուած բարենորոգումներին: Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան և Անգլիան յայտնեցին լիուրի պատրաստակամութիւն պաշտպանելու առաջ Բ. Դրան նախագիծը: Այնուհետև ռուսաց և աւստրո-ունգարական դեսպաններին յանձնուեց երկու կառավարութիւններէ կողմից ներկայացնել սուլթանին վերոյիշեալ բարենորոգումներէ ծրագիրը, որոնք ընդհանուր առմամբ իրանց մէջ պարունակուած են հետեւեալը.—Ապահովելու համար այն ինչորի աջողութիւնը, որ սուլթանի իրադէի զօրութեամբ զբւոյժ է զլիսաւոր տեսչի վրայ, այդ անձը նշանակուած է նախօրօք որոշուած ժամանակամիջոցով և չէ կարող հեռացուել պաշտօնից մինչև այդ ժամանակամիջոցի լրանալը, առանց նախապէս յարաբերութիւններէ մէջ մտնելու պետութիւններէ հետ: Գլխաւոր տեսչին հնարաւորութիւն է արւում կարևոր դէպքում զիմել օսմանեան զօրքերի աջակցութեան բոլոր երեք վիլայէթներում առանց պարտաւորուելու ամեն մի դէպքում զիմելու կենտրոնական կառավարութեան: Ոստիկանութիւնը և ժանդարմերիան վերակազմելու գործին մասնակցելու համար կը հրաւիրուեն օտարերկրեայ մասնագէտներ: Օսմանեան կառավարութիւնը պէտք է հոգ տանէ, որ ոստիկանութեան և ժանդարմերիայի մէջ ծառայող մահմեդականներէ և քրիստոնեաների թիւը համապատասխան լինի երկու կրօններին պատկանող ազգաբնակչութեան քանակութեան: Գիւղական ոստիկանները պէտք է ընտրուեն քրիստոնեաներից այն զիւղերում, որտեղ ազգաբնակչութեան մեծամասնութիւնը կազմում են քրիստոնեաներ: Որովհետև այն բռնութիւններն և ճնշումները որ մի քանի ալբանացի շարագործներ յաճախ գործ են գնում քրիստոնեայ ազգաբնակչութեան վերաբերմամբ, ինչպէս նաև նրանց ապօրինի գործողութիւններէ և ոճիրներէ անպատիժ մնալը կազմում են խռովութիւնների ամենագլխաւոր պատճառներից մէկը, ուստի օսմանեան կառավարութիւնը պարտաւորուած է միջոցներ գտնել դադարեցնելու իրերի այդ վիճակը: Ի նկատի առնելով, որ երեք վիլայէթներում տեղի ունեցած խռովութիւնների պատճառով նրանց մէջ տեղի են ունեցել բազմաթիւ ձերբակալութիւններ, օսմանեան կառավարութիւնը պարտա-

ւորում է՝ սովորական կարգին վերադառնալը շտապեցնելու համարներումն շնորհել քաղաքական գործերի համար բոլոր մեղադրւողներին և դատաւարտուածներին, ինչպէս նաև բոլոր գաղթականներին: Տեղական հիմնարկութիւնների գործունէութիւնը ապահովելու համար իւրաքանչիւր վիլայէթում կը կազմուի եկամուտների և ծախքերի առանձին բււջէ: Նահանգական հարկերից ստացուած եկամուտները, օսմանեան բանկի վերահսկողութեան տակ, ամենից առաջ պէտք է ծառայեն տեղական կարիքների բաւարարացմանը, սրա մէջ հաշուելով քաղաքացիական և զինուորական հիմնարկութիւնների պահպանութիւնը: Տասանորդի հարկի հաւաքման կարգը կը փոխուի: Ընդհանուր կապալների կարգը վերացւում է: Օսմանեան կառավարութիւնը, զնահատելով իրան արուած առաջարկութիւնների նշանակութիւնը, ընդունեց յիշուած նախագիծը և տուաւ թիւրքաց տեղական վարչութիւններին դրական հրաման իսկոյն ձեռնամուխ լինել մտադրուած բէֆօրմների իրագործման: Վերոյիշեալ միջոցները, որոնք բնականաբար կարող են ընդարձակուել ապագայում, չէ կարելի չը համարել բաւարար՝ կատարելագոյն ապահովելու համար երեք վիլայէթների քրիստոնեայ ազգաբնակիւթեան կենցաղի էական բարուորումները: Սրա հետ միասին մտադրութիւն կայ մի քանի տեղերում կազմակերպել Կ. Պօլսի դեսպանների ղեկավարութեամբ հիւպատոսական արթիւն հսկողութիւն՝ պայմանաւորուած բէֆօրմների գործադրութեան վրայ: Հաղորդելով ռուսաց ներկայացուցիչներին և գործակալներին, որոնք գտնուում են Բալկանեան թերակղզւում, Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակիւթեան դրութիւնը բարելաւելու նպատակով ձեռք առնուած միջոցների և նրանց այժմեան հետևանքների մասին, Կայսերական կառավարութիւնը անհրաժեշտ համարեց մի անգամ ևս կրկնել նրանց՝ բալկանեան ազգութիւններին ընդարձակօրէն ծանօթացնելու համար՝ այն հիմնական սկզբունքները, որոնցով նա այս դէպքում առաջնորդւում է: Ռուսաստանի անթիւ գոհերի դնով քաղաքական անկախ կեանքի՝ վերակոչուած Կայսերական կառավարութեան մշտական հոգացողութեան վրայ բալկանեան պետութիւնները կարող են վստահօրէն յոյս դնել ունեցած իրանց իսկական կարիքների մասին և Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակիւթեան հոգեոր և կենսական շահերի մասին ունեցած հզօր պաշտպանութեան վրայ: Սակայն սրա հետ միասին նրանք չը պէտք է աչքից բաց թողնեն այն, որ Ռուսաստանը չի գոհի իր որդիների արեան ոչ մի կաթիլը և ոչ նոյն իսկ ուս ժողովրդի ստացուածքի ամենափոքր մասը, եթէ սլաւօնական պետութիւնները հակառակ, նախօրօք

նրանց տուած խոհեմ խորհուրդների՝ կը վճռեն աշխատել փոխելու Բաղկանեան թերակղզու վրայ ներկայումս գոյութիւն ունեցող կարգը յեղափոխական և բռնի միջոցներով:

ՄԱՏԹԷՈՍ ՊԱԼԵՕԶԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Իզմիրի վերաքննիչ ատենի պատժական ճիւղը յունուար 20-ի երկուշաբթի օրը իր վճիռը տուաւ այն ոճրագործներուն մասին, որոնք անցեալ սեպտեմբեր ամսոյ մէջ ուրբաթ առտու մը բէլօլլէրի հարուածով սպանեցին Իզմիրի պատուաւոր վաճառականներէն Մատթէոս էֆ. Պալեօզեանը: Մարգասպանն էր Պարսկաստանի Կէրասիպատ գիւղէն Պետրոս Աղիզօֆ, որուն խոստովանութիւններուն վրայ՝ իբրև մեղսակից հետզհետէ ձերբակալուեցան Հաւի, ասոր կինը Ազնիւ, ասոնց ընկերներէն Մարգար և Մինաս:

Քննութենէն պարզուեց որ ամբաստանեալներէն Պետրոս Աղիզօֆ կանխամտածութեամբ գործած է ոճիրը, ինչ որ հաստատուած է թէ խոստովանութեամբ, թէ համոզիչ ապացոյցներով և թէ վկաներու յայտարարութիւններով. իսկ Հայկ այս կարգի չարագործութիւններու մէջ հարկ եղած օժանդակութիւնները գործնականապէս և անձամբ պատրաստած է, ինչ որ հաստատուած է թէ գատավարութեան ընթացքէն, և թէ իր խոստովանութիւններէն: Հեռեապէս երկուքն ալ եղեռնագործ ճանչցուած են: Գալով Հայկի կնոջ՝ Ազնիւի, և Մարգարի ու Մինասի, անոնց մեղսակցութիւնը հաստատուած չըլլալով, անպարտ արձակուած են:

—Ս. Պատրիարքը յունուարին 30-ին հեռագիր ուղղելով Կիլիկիոյ կաթողիկոսին, ծանոյց թէ Պատրիարքարանի աշխարհական հրաւիրական Յարութեան էֆ. Գարամաննան ճամբայ է ելած Երուսաղէմ երթալու, իբ հեռ տանելով Սահակ կաթողիկոսի պաշտօնը վաւերացնող սուլթանի բէրաթը, ինչպէս նաև Ն. Սմենապատուութեան շնորհուած Ա. կարգի Մէջհզիէ պատուանշանը:

—Պօլսի թերթերին զրում են Երուսաղէմից, թէ Սահակ կաթողիկոսը պատրաստուած է մեկնել Երուսաղէմից ուղղակի Սիս, ուր այց մաքով հեռագիր է ուղղուած կաթող. սեղապան Կիրակոս եպիսկոպոսին, ինչպէս նաև մի ուրիշ հեռագիր Աղանայի առաջ. փոխանորդին, և սպասուած են Աղանայից զալիք հրաւիրակները:

—Նոյն թերթերը հաղորդում են, որ Աղանայի խառն ժողովը քուէներէ մեծամասնութեամբ ընտրել է երկու եկեղեցական ու հինգ աշխարհական հրաւիրակներ, որոնք Երուսաղէմ պիտի ուղևորուեն, Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոսին իր ակտոր առաջնորդելու:

—Վենետիկից հեռագրում են «Berl. Tagblatt» լրագրին. «Վենետիկում ապրող հայ հրապարակախօս Արփիարեանի (Հական) կեանքի գէմ գիշերով տեղի ունեցաւ սպանութեան փորձ: Երա վրայ երեք անգամ ատրճանակ արձակուեց: Ննխադրում են, որ սպանութեան փորձի աստարթաղաքական է: Յանցաւորները ձերբակալուած չեն»:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Revue des deux mondes

(Զարուհանկութիւն)

Յունուար 15.—«Այժմ երբ խաղաղութիւնը վերահաստատուած է, Մօրիսը հաղորդում է Պանայօտախին մեր դիմացի հայի կտորած սպանութեան փորձի մասին նախընթաց օրը:

—Լաւ, ասում է Պանայօտախին հանդարտութեամբ և շօշափելով իր զօտին.—գնամ նրան սպանեմ, այնպէս չէ:

—Այդ չ'անես, բայց աշխատիր իմանալ, թէ նա ի՞նչ ունի իմ դէմ:

Բոլոր հացադործները կոտորուել են, ու հաց չը կայ, պէպք է հաց թխել: Խոհարարը, ես, Լիւսին քշտում ենք մեր թևերը և սկսում ենք հունցել. մէջք է կտրուում:

Պանայօտախին յետ և զայլս. նա կատաղի տեսք ունի և գնում է խօսելու ամուսնու հետ: Դուրս է գալիս, որ հայը ամեն ինչ խոստովանել է. նա մտածել է, որ եթէ հիւպատոսն սպանուի, կը կարծուի թէ թխրքերն են սպանել, այն ժամանակ Փրանսիան կ'ուղարկէ իր բանակը նրա մահուան վրէժն առնելու և ազատելու հայերին: Պանայօտախին սկզբում հային խեղդել է կամեցել, բայց՝ վերջինս ծնկներէ վրայ ընկած՝ նրան աղերսել է:

—Ահա. յետոյ, ի՞նչ է հրամայում պարոն հիւպատոսը:

Փետրուար, 1903.

—Ես ասում եմ, իմ բարեկամ, որ հարկաւոր չէ ոչինչ յայտնել, այլապէս եթէ իմացուի, նրան ողջողջ կ'այրեն...

—Նա արժանի է.

—... Բայց այդ դէպքում ամբողջ իբր թէ իր վրէժն առնելու համար կը կոտորի բոլոր մնացած հայերին: Ոչ, այնտեղ յաւ չէ, էլ այսուհետև ես տերըսի վրայ չեմ բարձրանայ, պրծաւ գնաց:

Երեկոյ.—Ամուսինս խիստ վիճաբանութեան է բռնուած լուսաւորչական քահանաների հետ, որնք չեն կամենում ներկայ լինել իրանց մեռելներէ թաղմանը, որոնց համար փորուած են տհազին վիհեր, որովհետև այդ քահանաներն ամուսնացած են, ուստի չեն կամենում իրանց զաւակներին որբ լինելու վտանգին ենթարկել. բացի սըրանից նրանք թաղման վարձ են պահանջում...

Նոյեմբեր 14.—Առաւօտեան ժամի 9-ին հրացանաձգութիւնը վերսկսում է: Մեր դուռը բաց է, պահապանները բախում են հրացանները թողած տան առաջ. յանկարծ վրայ է հասնում ունացող մի խումբ:

Ես հազիւ ժամանակ եմ գտնում երեխան ձգել անկողնի վրայ, վերցնել հրացանս և ազադակ բարձրացնելով կրակել: Իսկոյն զինուորները դուրս են գալիս, կարողանում են վերցնել իրանց հրացանները, որ քիչ էր մնացել իւր-

լուէին, մինչդեռ Մօրիսը և Կավաքը պարպում են իրանց հրացաններն անընդհատ: Այս անգամ մի քանի հոգի ընկնում են, ընկերները նրանց տանում են արիւնշաշաղախ: Նրանք հեռանում են սարսափով բռնուած և աղաղակեով, «մի՛ զնացէք, հիւստոսարան, այնտեղից կրակ է տեղում»:

Նուառտն անցնում է լարուած դըրուլթեամբ: Սպանութիւն և թալան ամեն կողմ, որ կատարում է ոչ զօրքը, այլ շըջակայքի լեռնականները: Գետակի ափերը ծածկուած են շփակներով: Մի քանի տեղերում մարդասպանները զնդախաղ են սաղքել գլուխներով, որ ձգում են իրար: Փամի 11-ին ամեն ինչ դադարում է:

Մեր թաղը շարունակում է յարձակումից ազատ մնալ: Բաւական թըրով հայեր հանգստացած՝ մնացին իրանց տներում

Նոյեմբեր 15.—Ճշտում է, որ ամեն ինչ դադարել է: Վերջին հայերը դուրս են դալիս եկեղեցուց, և նրանց պահապան Մահմեդը վերադառնում է մեկ մօտ:

Ամբողջ քաղաքում տարածուած է դիակի գարշահոտութիւն. սախլուած ենք լուսամտուտները փակել:

Ինձ հաղորդում են, թէ քոյերը կը կամենային ինձ տեսնել. ես զնում եմ երկու կավանների ուղեկցութեամբ:

Ճանապարհին ոչ մի դիակ չը կայ, բայց ամեն տեղ արիւն, որ մարդու օտերին է կպչում, ուղեղի մնացորդներ, գլխի մաղեր: Ամեն կողմ անբլուած, կողոպտուած տներ:

Պանայօտտին ինձ ցոյց է տալիս այն տեղը, ուր ամսի 12-ին, երբ ինքը անցնում էր, մի թիւրք յանկարծ նրան կանչել է՝ «դէպի աջ թեքուիր»: Նա հնազանդուել է, և մի զնդակ անցել է՝ քերելով նրա ականջը: Նրա ջանքերն իզուր են անցել իմանալու համար, թի՛ ո՞վ է հրացան արձակողը: Ճանապարհի վրայ Պանայօտտին տեսել է, թէ ինչպէս մոլթոտում են 7—8 հայ ոչխարները պէս, և նրանք

պաշտպանութեան մի փորձ անգամ չեն անում: Եւ սակայն բոլորն էլ լաւ տրդամարդներ:

Ես հասնում եմ քոյերին, որոնք ինձ համբուում են լալով: Տեղեկութիւններ եմ հարցնում, բայց նրանք ոչինչ չը գիտեն: Նրանք փակուած են եղել իրանց տանը, որ մի բակի մէջ է, և մնացել են այնպէս՝ աղօթելով իրանց մօտ սպաստանած երեխաների հետ:

.
Հիւստոսարանում մեր հիւրերը դեռ խիստ սարսափի մէջ են: Մենք երեսուն և եօթ մարդ ունենք կերակրելու:

Գիրակէ 17.—Ի՛նչ սուկալի բան է, արիւնը դեռ շարունակում է հոսել. երեկ 44 հայեր են սպանուել առանց աղմուկի:

Մահմեդական շէյխերը եկել են մեզ հարևան հայերի մօտ իմանալու համար, թէ նրանք բաւարար պաշար ունեն: Ես սաստիկ զղացուած էի այս հոգացողութիւնից, բայց Մօրիսն ինձ ասում է, թէ նրանք մեր պատճառով են անում բարեմտութեան այս ցոյցը. թիւրքերը վախենում են եւրոպայի վրէժխնդրութիւնից:

Եւ արդարև մի քանի նշանաւոր մահմեդականներ գալիս են հիւստոսարան և խնդրում են ունկնդրութիւն: Ընդունելուց առաջ Մօրիսը պահանջում է, որ նրանք յայտեն իրանց անունները, սպաւ նրանց երկար սպասել է տալիս փողոցում, մինչև որ հաստատ իմանայ, թէ ջարդերին մասնակից չի եղել Միայն այն ժամանակ նա նրանց ընդունում է, բայց սղմում է մէկի ձեռքը, մեր հարևան ինժեների, որ հայեր է աղատել:—Այս անձնուիրութիւնը, ասում է Մօրիս, նրան թանկ կը նստացնի ամբոխը:

Փրանսերէն լուսող մի թիւրք պատմում է մի շատ գարշելի բան: Դուրս է գալիս, որ միսսիօնարները ապաստան են տալիս 150 հայի, որոնք և սպասում են նրանց շտեմարանների պաշարը: Այն ժամանակ այս փախստական հայերից մի քանիսը, որոնց տները գտնուած են հէնց մօտիկ տե-

ղերում, յայտնում են, թէ իրանք ունեն ձէթ, գինի, ալիւր, այծեր և ոչխարներ:

—Գնացէք ուրեմն բերելու այդ պաշարը, ասում են հայերը:

—Ո՛չ, մեզ կը սպանեն:

—Որ այդպէս է, մենք կ'երթանք:

Եւ ահա օդտուելով խաւարից՝ հայրերը անցնում են մենաստանի պատից և բազմաթիւ որոնումներից յետոյ վերադառնում են առատ պաշարով: Ամենքն էլ սկսում են ուտել: Երբ հացկերոյթը վերջանում է, հայերը հաշիւ են ներկայացնում, կրկնապատկելով ուտելիքներին գները: Խիզ կրօնաւորները բաւականաչափ դրամ չ'ունենլաով, մի հայ յանձն է առնում նրանց պարտք տալ՝ ինչ ասել կ'ուզի՝ խիստ մեծ տոկոսով: Չը պէտք է մոռանալ նոյնպէս, որ այս պաշարը և այս դրամը ազատուել են միմիայն շընորհիւ մենաստանի մերձաւորութեան: Յաջորդ օրը, դուրս գալիս, հայերը անամօթարար տանում են իրանց հետ բոլորն, ինչ մնում էր գնուած տպրանքից, և հայրերը մնում են ամենախրդճալի դրութեան մէջ:

Այն ժամանակ միքանի թիւրքեր վրդովուած հայերի ընչաքաղցութիւնից, պաշար են բերում մենաստանը. այսպէս Հաջի Լուֆթին, որ մի ֆանատիկոս է, սակայն տալիս է մի ամբողջ սայլ հաց: Մօրիսի հարց ու փորձով հաստատուում է, որ այս փաստը կատարուել է. նոյնիսկ սա բոլորը չէ, պէտք է աւելացնել, որ հայերը այնուամենայնիւ բոլոր հայերին ուղեկցել են մինչև նրանց տները:

Նոյեմբեր 19.—Ցրտերը վրայ են հասնում, սպանութիւնները սակաւանում են, երեկ միմիայն 16 հայ են սպանել:

Բեդիֆներից մէկը պատմել է մեր Սայիսին, որ Գուրունի վրայ յարձակուող քիւրդերը խեղապէս ծպտուած զինուորներ են եղել:—Ես Գիտեմ, ասել է նա, որովհետեւ ես էլ էի նրանց հետ:

Այստեղ մահմեդականները սաստիկ

վախենում են վրէժինդրութիւնից: Ժամանակ առ ժամանակ լուր է տարածւում, թէ ոռւսաց Գովկասեան գնդերը անցել են սահմանը:

—Տիկին, ասում է ինձ լէյտենանտը, այդ դէպքում մենք անկարող կը լինենք ձեզ պաշտպանել: Բոլոր քրիստոնեաները, կ' դուք, կ' նոյն իսկ ձեր սիրուն փոքրիկը սրի կ'անցնուեն:

Ես աշխատում եմ լսել այդ խաղաղութեամբ. Մօրիսն էլ հաւատացնում է, թէ ոռուսները չեն շարժուի:

Նոյեմբեր 23.—Բժիշկն էլ չէ կասկածում, որ վալին իր գլուխը գնահատել է: Բայց որովհետեւ ամեն կողմից նրան կանչում են վիրաւորներին խնամելու համար, նա մեզ խնդրում է թոյլ տալ իրան դուրս գալ, դա միակ փոքր ի շատէ քաջ հայն է, որ ես տեսել եմ *):

—Այո, կարող էք դուրս գալ, պատասխանում է Մօրիսը, բայց Պանայօտտիի հետ: Դարեզինը բռնում է Մօրիսի ձեռքը և համբուրում է այն:

Սերաստիայում մենք հաշուում ենք 1500 սպանուած, 300 մեծ և 400 փոքրը խանութները ամբողջապէս աւերուած: Կենդանի մնացածների թշուառութիւնը մարդու սիրտ է քամում:

Երբեմն շներ են անցնում փողոցով՝ բերաններին մարդու մարմնի կտորտանք. նրանք դաշտերում հողի տակից դուրս են քաշել դիակները: Համարեա բոլոր գոհերը տղամարդիկ են, բայց մի քանի ջահիլ աղջիկներ փախցրել և ծախել են:

Ինձ խիստ գրադեցնում է Դարեզիների վիրաւորների վիճակը. ես քիչ-քիչ ամբողջապէս նրան տուի իմ փոքրիկ դեղատոնը:

Բժիշկը դեռ յոյս ունի նրանց ապատել, չը նայելով որ մեծամասնու-

*) Աէյթունում և Վանի կողմերում հայերը (սրանք Գովկասեան ծագում ունեն) պաշտպանուեցին արիարար:

Ծան. Փր. թերթի.

Թիւնը ամենասոսկալի դրութեան մէջ է, բայց նա ասում է, որ ոչ ոք իր հայրենակիցները պէս դիմացկուն չէ*):

Նոյեմբեր 25.—Այս գիշեր էլ կոտորել են... Մենք ուզում ենք դուրս գալ գրօսնել ցոյց տալու համար, որ էլ անհանդատութիւն չ'ունենք: Մօրիսն այդպէս է ցանկանում: Նա կարծում է, թէ մենք պարտական ենք օրինակ ցոյց տալ: Ես հնազանդուում եմ: Եթէ մենակ լինէի. բնաւ փոյթս չէր, բայց փոքրիկ

*) Հայի արտակարգ կենսունակութեան մասին Ֆրանսիական ղեկավարատան մի պաշտօնեայ պատմում էր հետեանալը, որ տեղի է ունեցել Գոստանդնուպօլսի մեծ կոտորածի ժամանակ (օգոստ. 1896).

Երեք օր շարունակ կոտորում էին: Յետոյ ոստիկանութիւնը սկսում է դիակները սայլերով տեղափոխել գերեզմանատները: Միմիայն ձիւղիլի գերեզմանատունը ներս մտաւ վաթսունից աւելի սայլեր. ուզում էին դուռը փակել, երբ Ֆրանսիական... հինգ քոյրեր ներկայացան և լինդրելով՝ ներս մտան: Նրանց առաջ թափուած էին երեք հազար դիակներ դարհուրելի կերպով պղծուած և մեծաւ մասամբ մերկ: Նրանք քաջութիւն ունեցան մէկիկ-մէկիկ մօտենալ նրանց, շօշափել նրանց սիրտը, կուսնալ նրանց շրթունքները վրայ՝ իմանալու համար, թէ չը կ'սյ արդեօք կենդանութեան մի նշոյց:

Երեկոյեան դէմ, մօտ եօթ ժամուայ աշխատանքից յետոյ դիակները կոյտերի սակից նրանք յաջողեցրին դուրս քաշել երեք մարմիններ, որոնք դեռ կենդանութեան նշաններ էին ցոյց տալիս: Վերցրին և տալան այդ դիակները, որոնցից մէկը՝ մի տղայ՝ ներկայացնում էր մի արիւնոտ դանդուած, որ դեռ տաք էր:

Եւ ի՛նչ, այս երեք դժբաղդները ապրեցին, և սակայն սրանցից սակաւ վերաուրուածի դանգը բացուած էր, և սուրինի եօթ հարուած էր ստացել կրծքին...

Ծան. Ֆր. Թերթի:

ունեմ... Այս առաւօտ փողոցում ինձ կանգնեցրին մի քանի հայեր և ասացին համարձակօրէն, թէ իրանք լսել են, որ անգլիական զօրքերը շուտով ափ դուրս կը գան: Սրանց համար Անգլիան եւրոպական միակ հզօր և քաջ ազգն է: Եւ այսպէս խօսում են այն մարդիկ, որոնք ապաստանել էին մեզ մօտ!

Գաղին յայտարարել է, որ մահմէդականները մարգարէի օրէնքը ռոտակոխ են արել՝ կոտորած և թալան կատարելով: Յանցաւորներին նա անուանում է «բեաֆիր». նրան պատասխանում են նոյն հայհոյանքով:

Նոյեմբեր 26 —Բանը վերսկսում է: Ոմանք դռներից կախել են խոշոր ցուցանակներ—«Այս տունը պատկանում է մահմէդականի». սա խիստ նշանակալից է:

—Անգլիական զօրքը լաւ կ'անէր, եթէ շտապէր! ասում է Մօրիսը. իսկ մինչև այդ, ես գնում եմ Վալիին երկու խօսք ասելու, երկու խօսք, որոնք նոյնքան արժէք կ'ունենան, որքան կարմիր ժակեանները

Նոյեմբեր 20.—Վալիի տան առջևի հրատարակումով դիվիզիայի զենեքալի տնից երկու քայլ միայն հեռու օրը ցերեկով երեք հայ են սպանել: Ոչ ոք բանտարկուած չէ:

Նոյեմբեր 30.—Վերջապէս մենք ոտացանք Ֆրանսիական թերթեր, ջարդերի նկարագիրներով լի: Ահա թէ ինչ են գրել Սերաստիայի մասին.

«Հայ ապստամբները նենգաբար յարձակուեցին համիդիէները վրայ, բայց յաղթուեցին»: Այս է բոլորը...

Գեկտեմբեր 2.—Կեսարիայում, ասում են, ջարդը սոսկալի է եղել:

Գեկտեմբեր 3. — Պաշտօնապէս կանչուում է փողոցներում, որ այսուհետև ով սպանէ կամ կողոպտէ, կախաղան կը բարձրանայ:

Գեկտեմբեր 4.—Ասում են, որ եւրոպական էսկադրան՝ անգլիական նաւատորմի ղեկավարող ունենալով, պէտք է շուտով գրաւէ Գոստանդնու-

պօլիսը: Թիւրքերը զայրացած՝ տարօրինակ ձևով են մեզ նայում:

Ես չեմ համարձակուում դուրս գալ, բոլորովին հիւանդ եմ, Մօրիսն էլ ուժասպառ է:

Դեկտեմբեր 5. — Հայերը հրաւիրուելով յայտնել իրանց նիւթական կորուստի քանակութիւնը, ցոյց են տալիս 26 միլիօն. Մօլիսն այդ թիւը գտնում է չափազանց:

Ամերիկական և Ֆրանսիական երկու դպրոցները վերաբացուեցին: Այսօր ոչ մի մանուկ չը կայ:

Մօրիսը վերադարձնել է տալիս շատ կողոպտուած իրեր:

Ամենքը, նոյնիսկ երրօրացիք հատուցնում են, որ Գարունում մարդասպանների տաջնորդը մի ուրացող հայ քահանայ է եղել:

Դեկտեմբեր 8. — Երեկ մի թիւրք, որ շատ էր կողոպտել և խիստ քարժրածայն էր խօսում, բանտ նետուեց շղթայակալ. այնտեղ նա շարունակում էր անուանել Չարդի գլխաւորներին: Այս առաւօտ նրան մեռած դրտան բանտում:

Դեկտեմբերի 19. —

. 67 սանտիմետր ձիւն կայ, և 140 ցուրտ:

Վալին վախենում է, կամ յոյս ունի, որ հրդեհ կը լինի:

Դեկտեմբեր 25. — Ի՞նչ տխուր ծընունդ! փորձեցին մեզ թունաւորել. սա անշուշտ թիւրքերին վաճառուած մեր հայ ծառաներից մէկի գործն է: Թէ յաջողեցնեն մեզանից ազատուել, ջարդերը կարող են վերսկսուել, որովհետև միայն մենք ենք խանգարում...

Անշուշտ մեր սուրճի մէջ թոյն կար, տուինք շանը, նա էլ սկսեց փրսխել և դողալ. բայց ինչպէս ենթարկել անալիզի. բոլոր դեղագործներն սպանուած են:

Ո՞վ է յանցագործը, անկարելի է իմանալ: Մենք դուրս ենք անում մեր երկու հայ ծառաներին և նրանց փոխարէն վերցնում ենք թիւրքեր: Պէտք է ասել, որ թիւրքն ունի իր թերու-

թիւնները, բայց նա չի դաւաճանի:

Յունուար 15. — Այժմ համարեա հաստատ է, որ ջարդերը վերջացան: Բայց սովն է սկսուում: Ամենաշնչին պաշարեղէնի դինը բարձրացել է անասելի չափով: Մեր տնտեսութիւնն իսպառ կը քայքայուի, եթէ այսպէս շարունակուի: Երեք հայերը, սրնցից մէկը Գարեգինն է, մեզ մօտ են: Վերջինս իրան կօրած է համարում և շարունակ լալիս է: Բարեբաղդաբար իր կիներն ու երեխան գտնուում են Սամսունում:

.

Յունուար 28. — Մեծ հրդեհ. 24-ին, երեկոյեան ժամի 10-ին մենք նոր պառկել էինք, երբ փողոցում աղմուկ բարձրացաւ: Միթէ վերսկսուում է: Մենք ցած ենք թռչում անկողնից շտապով և վազում ենք դէպի լուսամուտը և նկատում ենք կարմրագոյն փայլ աջ կողմի փողոցի անկիւնում: Հրդեհ է և անշուշտ մի թիւրքի տան:

.

— Այս շատ կասկածելի է, հրդեհ թիւրքի տանը! ասում է Մօրիսը և հագնուում շտապով:

Պանայօտալին գալիս և յայտնում է, որ այրուում է մի թիւրքի փայտաշէն տնակը, որ գտնուում է բժիշկ Գարեգինի և մի թիւրք ինժեների տների մէջ: Պարզ է որ կամեցել են այսպիսով այրել երկու ատելի տներ, թիւրքի տունը, որովհետև նա միակ մահմեդականն էր, որ դէմ էր ջարդերին, և Գարեգինի տունը, որովհետև կատաղել են, որ նա իրանց ձեռքը չ'անցաւ:

Մօրիսը գնաց կավասների հետ. սամբուր նայում է խնդութեամբ և չէ օգնում կրակը մարելու:

.

Վերջապէս ժամի 6 1/2-ին առաւօտեան հրդեհը դադարում է, բայց ինժեների տունն իսպառ այրուած է: Ամուսինս իմացել է, որ նախորդ օրը թիւրքի փայտէ տնակը դատարկած են եղել:

Պարզ է, որ հրդեհը պատրաստուած էր: Վալին գալիս է շնորհակալութիւն

յայտնելու իմ ամուսնուն և մեզ շնորհատրելու:

Ձանձրալի են ինժեների կանայքը: Գարեգինը նրանց առաջարկում է իր բանը, նրանք պատասխանում են մեղկութեամբ, «Մենք այստեղ էլ լաւ ենք»: Այնուամենայնիւ յաջորդ օրը նրանց ճանապարհ է դնում: Այժմ հարկաւոր կը լինի տունն օգափսիսել, որովհետև ջրի հետ խռոված այս մարդկանց հոտը շուտ չէ վերջանում:

Մարտ 11.—Մօրիսն ամեն շաբաթ վալիից պահանջում է պահակներ Գարեգինին Սամսուն հասցնելու համար. վալին մերժում էր շարունակ. այս անգամ դեսպանատունը մէջ ընկաւ, և ահա պահակների մի խումբ մեր դըրանը կանգնած: Գարեգինն իրան ապահով չէ դգում, եթէ կոնսուլը կամ իր կինը սպանուեն պահակների ձեռքով, նրանք հրացանի կը բռնուեն, բայց մի հայ, նա այնքան քիչ բան արժէ! զավտիաները կը սաքբեն մի պատմութիւն, և բանը կ'անցնի:

Ուտի Մօրիսը զնում է վալիին ասելու, որ պ. Գամբօնը Ֆիրման է հա-

նել տուել, որ եթէ Գարեգինը կենդանի չը հասնի Սամսուն, վալին կ'աքսորուի Իէմէն:

Գարեգինը կենդանի Սամսուն կը հասնի: «Թ'լւրքերի հետ միայն համարձակութեամբ բան կարելի է անել», ասում է Մօրիսը:

Յուլիս 17.—Ժանապարհի: Ահա վերջապէս մենք վերադարձի ճանապարհին ենք:

Որսլիսի փոփոխութիւն. չը նայելով լաւ եղանակին, մեր անցած երկրները որքան թշուառ են: Գողդատուած խանութները փակ են, վաճառականութիւնն սպանուած երկար ժամանակով, որովհետև այս կողմերում ոչ միայն հայերին են կոտորել, այլև յոյներին և հրէաներին, մի խօսքով բոլոր հարուստներին:

Ո՛հ, ի՛նչ հաճոյքով եմ տեսնում ծովը:

Յուլիս 25.—«Գոստանդնուպօլիս»: ԷՄԻՆ ԳԱՐԼԻՃ

ՄԻՋԵՆՈՐԴ ԴՍՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ. *)

1902 թ. նոյեմբերի 2, 10, 12, 16, 19, 20, 28, և 29-ին և դեկտեմբերի 1, 8, 9, 10, 19 ու 22-ին, միջնորդ գառաւորներ Արշակ Պարոնեանց, Ֆեոդոր Բիկով, Աստուածատուր Վաչեան, Արնօլբ Ֆէյլլ և Ստանալիսլաւ Վճնսօվիչ՝ Բապուխ նօտար Անդոզերսկու ձեռքով 1902 թ. հոկտեմբերի 23-ին վաւերացրուած № 5364 միջնորդական պայմանագրի սահմաններում և վիճույ կողմերի ներկայացրած գրաւոր ու բերանացի բացատրութիւններ, վկաների ցուցմունքների և առեւտրական գրքերի բովանդակած փաստերի հիման վրայ յննելով Բապուխ ասաջին գիլգիւայի վաճառական Նիկիտա Շահգիդանեանի և Երզուկալ հաւատարմասար Փարեգին Ենդիբարեանի փոխադարձ քաղաքացիական պահանջները, որոնք ծաղիկ ևն Ենդիբարեանի՝ Շահգիդանեանի գործերի կառավարիչ լինելուց, և նրանց մէջ տեղի ունեցած տարաձայնութիւնները բարոյական տեսակէտից, եկան հետեւեալ եզրակացութեան.

Շահգիդանեանը գրաւոր կերպով հետեւեալ պահանջներն էր յայտնել միջնորդ գառարանին. 1) Ենդիբարեանը 1901 թ.ին, իբրև կառավարիչ, պէտք է ստանար 9080 ռուբլի, մինչդեռ ինքնագլուխ ցուցակագրել և ստացել է 13,000 ռ.: Այդ գծգոհութեան գէտ՝ այն տարկութիւնը բերուեց, թէ աւելորդ 3,000 ռ. ստացուել է տիկին Չ. Շահգիդանեանի թոյլաւութեամբ և Նիկիտա Շահգիդանեանի գիտութեամբ: Թէպէտև այդ հանդամանքը կարող էր յայտնի լինել Շահգիդանեանին, քանի, որ սոճիկը գրւում էր մատեանների և պահանջողական ամբարների մէջ, բայց ի նկատի ունենալով, որ չը հաստատուեց, թէ տիկին Չ.

*) Խմբագրութիւնս ի պատասխան պ. Գ. Ենդիբարեանի կողմից «Մուրճի» անցեալ № ում գետեղուած նամակին տպում է այս վճիռը:

Շահգիրդանեանը համաձայնութիւն է ատել ոտճիկը սուկացնելուն, և այն, որ պէտք էր գրաւոր կերպով փոխել Ենգիրարեանի կառավարչութեան համար ստացած ոտճիկն վերաբերեալ գրաւոր պայմանները, միջնորդ դատաբանը արդարացի է համարում բաւարարութիւն տալ Շահգիրդանեանի այդ պահանջին:

2) Ենգիրարեանը իր ոտճիկը մատնան է գցել սկսած 1898 թ. յունիսի 1-ից, մինչդեռ նա սկսել է կառավարել 1898 թ. յունիսի 20-ից: Գործի հանգամանքները ցոյց տուին՝ մի կողմից, որ Ենգիրարեանը իսկապէս սկսել է կառավարել 1898 թ. յունիսի 20-ին, իսկ միւս կողմից, որ այդ 1250 ուսուցիչն Ենգիրարեանը ստացել է Շահգիրդանեանից մուշակներով ուրիշ գումարների հետ՝ առաջին տարուայ վերջում կազմուած հաշվեկշիռի համաձայն, այնպէս որ Շահգիրդանեանը կարող էր իմացած լինել, թէ Ենգիրարեանը ուրիշ գումարների հետ այդ գումարն էլ է ստացել: Բայց որովհետեւ Շահգիրդանեանի այդ հանգամանքին տեղեակ լինելը միմիայն հնարաւոր է համարուում և ոչ թէ անպայման ապացուցուած, ուստի միջնորդ դատարանը գտնում է, որ պէտք է բաւարարութիւն տրուի նաև այդ պահանջին:

3) Ենգիրարեանը Շահգիրդանեանի զրամարկիցի վճարել է 4000 ռուբլի „Бакинское Общество русской нефти“ ընկերութեան բաժնետոմսերի (ակցիա) համար, որ սակայն զնել է իր անուանով: Ենգիրարեանը առարկում է, թէ Շահգիրդանեանի համաձայնութեամբ, հաշիւները մաքրելուց յետոյ պէտք է վճարուէր, թէ ում պէտք է պատկանէին գնուած արժեթղթերը, ինչպէս նաև ստացուած շահաբաժնի (գլխիկէնտի) մի մասը ցուցակագրուած են Շահգիրդանեանի առևտրական մատենանում: Հաւանական համարելով այդ բացատրութիւնների կանոնաւորութիւնը, բայց ի նկատի ունենալով, որ այդ արժեթղթերը անուանական են և մինչև այժմ էլ Ենգիրարեանի անուանով են ու նրամօտ են գտնուում, միջնորդ դատարանը արդարացի է համարում պահանջել Ենգիրարեանից այդ ակցիաների արժէքը:

4) Այն 300 ուսուցիչն, որ Ենգիրարեանը իբր պարտք վերցրել է Շահգիրդանեանի զրամարկիցի 1902 թ. յունուարին, նա պէտք է վերադարձնէ Շահգիրդանեանին:

5) 1899 թ. մարտի 30-ի № 797 օրդերով Ենգիրարեանը գրել է նախ Դոլուխանեանին „ВЪ ВОЗВРАТЪ“ 1700 ուսուցիչ, իսկ յետոյ, ինչպէս երևում է Ենգիրարեանի մակագրութիւնից, Դոլուխանեանի միջոցով Ենգիրարեանին ВЪ ВОЗВРАТЪ: Ի նրկատի առնելով, որ օրդերի սկզբնական խմբագրութեան չնորհիւ այդ գումարը մատնանում զրուած է ի հաշիւ Դոլուխանեանի:

կանի, այդ գումարը կարող էր սխալմամբ չը մտնել Ենգիրբարեանի հաշի մէջ, ուստի միջնորդ դատարանը արդարացի է գտնուած պահանջել Ենգիրբարեանից յօգուտ Շահգիդանեանի այդ 1700 ռուբլին, իբր մի գումար, որ Ենգիրբարեանը ստացել է, բայց չէ մայրել իր անձնական հաշի մէջ:

6) Այն 200 ռուբլին, որ Ենգիրբարեանը իբր պարտք տուել է Բարխուդարեանին, դատարանը արդարացի է համարում գրցել Ենգիրբարեանի հաշի մէջ:

և 7) Վերոյիշեալ գումարների օրինական (տարեկան 6) տոկոս՝ ստացման օրից մինչև վճարման օրը: Այդ պահանջին դատարանի վճռով պէտք է բաւարարութիւն տրուի:

Շահգիդանեանի մնացած պահանջների վերաբերմամբ միջնորդ դատարանը եկաւ հետեւեալ եզրակացութեան.

1) Բենեւսօնի հետ կապած պայմանագրին վերաբերեալ պահանջը.

1888 թւին Շահգիդանեանը քաղաքից կապալով վերցրել էր մի հողաբաժին՝ քառակուսի սաժէնը 50 կոպէկով, 12 տարով, կրկին 12 տարով վերանորոգելու իրաւունքով, բայց այնքան վճարով, որքան նշանակած կը լինի կողքի հողաբաժինների համար: 1896 թւին Ենգիրբարեանը այդ հողաբաժինը տալիս է Բենեւսօնին 12 տարով, սաժէնը 50 կոպէկով, այն պայմանով, որ Շահգիդանեանը պարտաւոր է քաղաքից կապալով վերցընել այդ հողաբաժինը նոր ժամանակամիջոցով, առաջին պայմանաժամի լրանալուց յետոյ, 1900 թւին, քաղաքը քառակուսի սաժէնին պահանջեց 5 ռուբլի կապալադրամ, որով Շահգիդանեանը տարեկան վճաս կրեց 9000 ռուբլի, որ Բենեւսօնի հետ կապած պայմանագրի ամբողջ ժամանակամիջոցի ընթացքում կ'անէր 72,000 ռուբլի: Ենգիրբարեանը այդ հաշիւը մաքրել է՝ վճարելով Շահգիդանեանի կողմից Բենեւսօնին 25,000 ռուբլի: Շահգիդանեանը պահանջում էր այդ գումարը Ենգիրբարեանից: Սակայն միջնորդ դատարանը անհնար գտաւ բաւարարութիւն տալ այդ պահանջին, որովհետև Ենգիրբարեանը ներկայացրեց Շահգիդանեանի տուած ստորագրութիւնը, որ գրուած է 1898 թւին, երբ Ենգիրբարեանը նորից ծառայութեան էր մտնում Շահգիդանեանի մօտ, և որի մէջ Շահգիդանեանը կանոնաւոր է ճանաչում Ենգիրբարեանի բոլոր արածները 1895—97 թ. կառավարութեան ընթացքում:

2) Այն պահանջը, որ վերաբերում է «Սամուր» ընկերութեան բաժնետոմսերի դնմանը ի հաշիւ Շահգիդանեանի յանուն Ենգիրբարեանի.

Թէպէտև դատարանը դանում է, որ «Սամուր» ընկերու-

թեան բաժնետոմսերի գնումը վնասարեք է եղել թէ բստար-
 փէքի և թէ այն պատճառով, որ այդ բաժնետոմսերի գինը և
 «Սամուր» ընկերութեան պարտքերը վճարուած էին այն ժամա-
 նակ, երբ Շահգիդանեանը ինքը փողի չափազանց կարիք ունէր
 և մեծ սոկոսներ էր վճարում իր պարտքերի համար, այնուա-
 մենայնիւ դատարանը չէ կարող այդ պահանջը բաւարարու-
 թեան արժանի համարել, որովհետև դատարանի կարծիքով այդ
 գնման պատասխանատուութիւնը չէ կարելի ենգիբարեանի վը-
 րայ գցել, քանի որ չէ ապացուցուած նրա (այդ գնման) ան-
 պայման վնասակարութիւնը Շահգիդանեանի համար:

3) Շահգիդանեանը պահանջում է, որ Ենգիբարեանը հա-
 չիւ ներկայացնէ:

Թէպէտև միջնորդ դատարանը գտնում է, որ Ենգիբարեա-
 նը իր ամբողջ ծառայութեան ընթացքում ոչ մի անգամ հաչիւ
 չէ ներկայացրել և նոյն իսկ իր ծառայութեան պայմանագրով
 լրանալիս հրաժարուել է հաչիւ ներկայացնելուց, այնուառե-
 նայնիւ դատարանը գտնում է, որ չէ կարելի Ենգիբարեանին
 պարտաւորեցնել հաչիւ ներկայացնել թէ այն պատճառով, որ
 մատենաները քսոսային դրութեան մէջ են և անկարելի է հա-
 չիւ կազմել, և թէ այն պատճառով, որ միջնորդական պայմա-
 նագրի համաձայն ներկայ միջնորդ դատարանի վճռով վերջա-
 նում են վճռող կողմերի բոլոր փոխադարձ հաչիւները:

4) Այն պահանջը, թէ Ենգիբարեանը պարտաւոր է վերա-
 դարձնել Այվաղօլից Շահգիդանեանին յանձնելու համար ստա-
 ցած 1,000 ռուբլին, արժանի չէ բաւարարութեան, որովհետև
 բաւական հիմք չը կայ ենթադրելու, թէ Շահգիդանեանը ի-
 մանալով, ինչպէս այդ ապացուցուեց դատի ժամանակ, որ Են-
 գիբարեանը ստացել է այդ փողերը, երկու տարուայ ընթաց-
 քում չէ պահանջել նրանից այդ գումարը:

5) Եարամիչեանի հետ կապած պայմանին վերաբերեալ
 պահանջը արժանի չէ բաւարարութեան, որովհետև չէ ապա-
 ցուցուած, թէ այդ պայմանը վնասարեք էր Շահգիդանեանի
 համար:

6) Շահգիդանեանի այն պահանջի նկատմամբ, որ վերաբե-
 րում է այն հարցին, թէ Ենգիբարեանը՝ Շահգիդանեանի կամ-
 քի հակառակ՝ պայման է կապել Դօլուխանեանի հետ, միջնորդ
 դատարանը ի նկատի առնելով, որ պայմանը ստորագրուած է
 Շահգիդանեան ամուսինների ձեռքով, և որ ոչնչով չէ ապացու-
 ցուած, թէ Ենգիբարեանը նրանց ճիշտ չէ հաղորդել պայմա-
 նագրի բովանդակութիւնը, — գտնում է, որ չէ կարելի բաւա-
 րարութիւն տալ այդ պահանջին:

7) Այն հանդամանքը, որ Ենդիբարեանը գանդատ չէ տուել աւելորդ պետական տուրք վերցնելու դէմ, միջնորդ դատարանը չէ կարող դրա համար մեղադրել Ենդիբարեանին, հնարաւորութիւն չ'ունենալով պարզելու այն հարցը, թէ արդեօք կանոնաւոր կերպով է որոշել տուրքը արքունական պալատը, ուստի և միջնորդ դատարանը բաւարարութեան արժանի չէ համարում Շահգիդանեանի այն պահանջը, որ վերաբերում է իր օրուտից վճարած տոկոսային տուրքին:

8) Շահգիդանեանի այն պահանջը, որ վերաբերում է այն տոկոսներին, որ Ենդիբարեանը աւելացնում էր իր անժամանակ ստացած ոռճկի վրայ, դատարանը արժանի չէ գտնում բաւարարութեան, որովհետև արչարութիւնը պահանջում է, որ չափազանց ուշ ստացուող ոռճկի վրայ աւելացուեն տոկոսներ, մանաւանդ որ այս դէպքում աւելացրած տոկոսը չափաւոր է (եօթ):

9) Շահգիդանեանի մնացած պահանջները միջնորդ դատարանը քննութեան չէ ենթարկում, որովհետև Շահգիդանեանը հրաժարուեց այդ պահանջներից:

Ենդիբարեանի քաղաքացիական պահանջներից, իբր ապացուցուած՝ բաւարարութեան արժանի են հետևեալները.

ա. 5,000 ռուբլի, որ դեռ չէ վճարուած նրան ի հաշիւ 1902 թ. լունուար ամսի ոռճկի, և այդ դումարի օրինական տոկոսները 1902 թ. փետրուարի 1-ից մինչև վճարման օրը:

բ. 4,000 ռ. մնաս, որ Ենդիբարեանը կրել է այն վերաւորանքի շնորհիւ, որ Շահգիդանեանը նրան հասցրեց 1902 թ. փետրուարի 6-ին և որը, միջնորդ դատարանի կարծիքով Ենդիբարեանին զրկեց իր սովորական գործով զբաղուելու հնարաւորութիւնից 10 ամսուայ ընթացքում:

Վերոյիշեալ նկատումներով և հաշուելով վճուղների փոխադարձ քաղաքացիական պահանջները, միջնորդ դատարանը որոշեց պահանջել Գարեգին Ենդիբարեանից յօգուտ Նիկիտա Շահգիդանեանի 6,643 ռ. 50 կ., իսկ որովհետև Ենդիբարեանը այդ պահանջի դէմ ներկայացրեց Շահգիդանեանի՝ 1901 թ. նոյեմբերի 20-ի թւակիր պարտամուրհակը, որով Շահգիդանեանը պէտք է տալ նրան 5,000 ռուբլի զբամազը իսկ և 275 ռ. տոկոս, ուստի վերջնական հաշուով պէտք է Ենդիբարեանից յօգուտ Շահգիդանեանի պահանջել ընդամենը 1368 ռ. 50 կ. օրինական (տարեկան 6) տոկոսներով այստարուայ դեկտեմբերի 22-ից մինչև վճարման օրը:

Գալով միջնորդ դատարանին ենթակայ բարոյական հարցերին, դատարանը եկաւ այն եզրակացութեան.

1) Որ Գարեգին Ենգիբարեանը այն երեք և կէս տարուայ ընթացքում, երբ նա կառավարում էր Շահյիզանեանի գործերը, իր պարտականութիւնների կատարման մէջ ցոյց է տուել ծայրայեղ անհոգութիւն, այն է՝ անսիրտ կերպով է վարել առևտրական մատենաները և պարբերական հաշիւներ չէ տուել իր կառավարչութեանը յանձնուած գործերի վերաբերմամբ. բայց նրա վարմունքների մէջ միջնորդ-դատարանը չը նկատեց զոգութեան մի նշան:

2) Որ 1902 թ. փետրուարի 6-ին Բագուի ժողովարանում Շահյիզանեանի կողմից Ենգիբարեանին հասցրած ծանր վիրաւորանքը արժանի է պարսաւանքի և ըստ էութեան անարդար է, բայց այդ վիրաւորանքին առիթ էին տուել՝ այն հանգամանքը, որ Ենգիբարեանը հրաժարոււմ էր հաշիւ տալուց, և միւս կողմից մի քանի փաստեր Ենգիբարեանի կառավարչական գործունէութիւնից, որոնք նոր էին յայտնի դարձել Շահյիզանեանին, և որոնք հիմք էին տուել Շահյիզանեանին, որ անկարող էր բազմակողմանի կերպով քննել այդ փաստերը, կարծելու, թէ Ենգիբարեանը ի շարն է գործ դրել իր զիրքը:

3) Որ Ենգիբարեանի պաշտօնաթողութիւնը, փետրուարի 6-ի դէպքը և Ենգիբարեանի ու Շահյիզանեանի մէջ եղած բոլոր անձնական տարաձայնութիւնները ծագել են բացառապէս գործնական յարաբերութիւնների պատճառով, առանց կողմնակի անձանց որևէ մասնակցութեան:

4) Որ այս վճռի կայանալովը՝ ընդմիջա վերջացած են համարոււմ այն բոլոր երկուստեք պահանջները, որոնք ծագել էին Շահյիզանեանի և Ենգիբարեանի մէջ՝ Ենգիբարեանի կառավարչութեան առիթով:

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍ. պ. Գ. Շահումեան.—Ձեր նուիրած 10 բուբլով ամսագիրս կ'ուղարկուի Կարճուան գիւղի հասարակութեան:

ԱՐՄԵԱՆՍԿ. պ. Ի. Մազլումեան.—Ստացանք ի յիշատակ Յովսէփ Գաբախեանցի երեսուն բուբլի եւ նուիրատուների ցանկութեան համածայն ուղարկում ենք ամսագիրս Սարղղամիշ, Ջահրի եւ Կիպրոս:

ԲԱԳՈՒ. պ. Ա. Ռուբէնի.—Ձեր յօդուածը լոյս կը տեսնի հետեւեալ համարում:

ԹԻՖԼԻՍ. պ. Սա. Լ.—Նիւթի շատութեան պատճառով «Յաւելուածի» շարունակութիւնը մ'նաց հետեւեալ №-ին:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Անցեալ համարում

երես	տող	տպուած է	պէտք է լինի
65	36	մարդագետիներ	մարդաբիւտներ
200	21	աւագ	աւանդ

Այս համարում

7	15	կողմը	կազմը
31	29	գետնից	գետնից
131	7	ազգայինը օր մը	ազգայինը իմ նկարագրութեամբս ճանաչէ յետոյ, եթէ երբէք օր մը լինում
169	7	չինում	լինում

ՅՍ.ՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„Մ Ձ Ա Կ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(31-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ 1903 ԹԻԱԿԱՆԻՆ

«Մշակը» հրատարակուելու է նոյն պրօգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր քաջի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնեւմէկ և տասն ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը՝ 1 ռուբլի:

Արտասահմանեան ըաժանորդագրութիւն. Ա. մ. երկալայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն), իսկ Բագում—ն. Գաւթեանի մօտ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրուելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս պէտք է գիմել հետեւեալ հասցէով. ТИФ-ЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններն ընդունուում են բոլոր լեզուներով:

Ապառիկ ըաժանորդագրութիւն չէ ընդունում:

„Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ“^Ի

1903 տարւոյ

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ.—«Բաղմավէս»-ը օրէ օր կը ձգտի ըլլալ զուտ ժողովրդական-գրական թերթ մը. իր նպատակն է ազգային գրականութիւնը ժողովրդականացնել:

Պարսկահայք և Ռուսահայք կրնան գիմնել մեր Ռուսաստանի գործակալներուն.

ԹԻՖԼԻՍ.—M. Kaloust Kaloustian TIFLIS

ՌՈՍՏՈՎ.—M- Michel de Roman Timindjian ROSTOFF

(Sur le Don)

ՊԱԳՈՒ.—M. Grégoire Ter-Ovanessian BAKOU

Մեր հասցէն է „Pazmavéb“ (St.-Lazare) VENISE (Italie)

ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Ս. Ռ. զղակի մեզ գիմնուլ բաժանորդները

Բաժնեգինը Կանխիկ պէտք են վճարել. հակառակ պարագային չեն կրնար թերթս ստանալ:

Բ.—Ոչ ապահովագրեալ թերթ մը բաժանորդը չ'ստանալուն՝ կրկին յընլու պարտական չենք:

Գ.—Ապահովեալ թերթը պարտական ենք անպատճառ բաժանորդին հասցնել:

„Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի“^{ԵՆ}

1903

Ձատկէն առջ կը հրատարակենք «Գեղունին» միևնոյն ծաւալով և փոխանակ ճի, 10 թերթ միասին կազմուած և հիանալի կողքով: Խմբագրութիւնս և տպարանի վարչութիւնն այս տարուան «Գեղունին» գերազանցապէս չքեզ նախանձեղի ընելու համար ասն ճիգ սկսած են թափել: Թերթը ճիշտ պայմանաժամուն լոյս կը տեսնէ: Յօդուածները և պատկերները զուտ ազգային են. «Գեղունին» պիտի ծառայէ գրական և գեղարուեստական թանկագին յիշատակարան մը մնալու:

«Գեղունի»էն գոյացած մարտը հասցիքին կէսը՝ դարձեալ ազգային սրբերու և ազգայններու կը յատկացնենք:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Բազմավէպ (առանձին) Գեղունի (առանձին)

Ոչ ապահովագրեալ 10 ֆր. 12 ֆր.

Ապահովագրեալ 13 »

Բազմավէպ Գեղունի միասին

Ոչ ապահովագրեալ 15 ֆր.

Ապահովագրեալ 18 ֆր.

Открыта подписка на 1903 годъ

на общественн.-литературную и политическую газету

“Б А Қ У,”

съ обширнымъ нефтянымъ отдѣломъ.

Съ пересылкой: на годъ 8 р. 50 к., 11 м. 7 р. 50 к., 10 м. 7 р., 9 м. 6 р. 50 к., 8 м. 6 р., 7 м. 5 р. 50 к., 5 м. 4 р. 50 к., 4 м. 4 р., 3 м. 3 р., 2 м. 2 р. 50 к., 1 м. 1 р. 50 к.

За границу: на годъ 15 р., на полгода 8 р.

Подписываться можно на всѣ сроки, на иначе какъ съ перваго числа каждаго мѣсяца.

За перемѣну адреса просятъ высылать 5 семикопѣечныхъ марокъ.

Допускается разсрочка подписныхъ денегъ на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится не менѣе 4 р. 50 к., а затѣмъ 15 февраля и 15 марта по 2 рубля.

Допускается разсрочка и на болѣе льготныхъ условіяхъ, но по соглашенію съ конторой редакціи.

Годовые подписчики на 1903 годъ въ 1902 г. получаютъ газету бесплатно со дня подписки.

Подписка принимается въ г. Баку, въ конторѣ редакціи (Парапетъ, домъ Степановой).

Редакторъ-издатель А. Н. Лавровъ.

Открыта подписка на 1903 годъ

НА ЕЖЕДНЕВНУЮ (не исключая понедѣльниковъ) ГАЗЕТУ политической и общественной жизни и литературы

„Бакинскія Извѣстія“.

Подписная цѣна: съ доставкою въ Баку и пересылкою въ другіе города на годъ—7 р., на 6 мѣсяцевъ—4 р., на 3 мѣсяца—2 р. и на 1 мѣсяцъ—1 руб. Подписчики на 1903 г. получаютъ газету въ 1902 г. со дня подписки бесплатно.

Такса за объявленія: За строку петита или мѣсто занимаемое ею впереди текста—10 к., а позади текста—7 к. Многократныя объявленія по соглашенію.

Редакція и контора: Баку, пассажъ Шагиданова.

Факсимильнаго цыфирнаго шрифта не имѣетъ

В. ПЕТЕРБУРГЪ

Знаменитѣйшій 4. Численнѣйшій

յումները.—Կովկասեան Բժշկական Բնկերութեան կարծիքը տեղական ինքնավարութեան անհրաժեշտութեան մասին.—Մարի եւ քննադատութեան ազատութիւն եւ Վելիչկօ.—Փետրուարի 19 իբրեւ Ռուսաստանի համաժողովրդական տօն.—Կոր դատաստանական կարգերի երեսնամիլիարդանոց կովկասում եւ սփասելիք դատաստանական բեֆօրմներ Անդրկովկասում.—Անդիժանի երկրաշարժի հետեւանքները, Լ. Սարգսեան . . . 245

15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ռուս-աւստրօ-ունդարական ծրագիրը Մակեդոնիայի բեֆօրմների մասին.—Բուլղարիայի բնած դիրքը.—Միւս մեծ պետութիւնների վերաբերմունքը.—Բուլղար ժողովրդի եւ մակեդոնացի յեղափոխականների տրամադրութիւնը.—Թիւրքիայի սպառազինումը.—Եւրոպական հասարակութեան համեմատական անտարբերութիւնը.—Քաղաքական նախք արեւելեան հարցի մասին Բերլինում եւ Պարիզում.—Անգլիայի այժմեան դիրքը.—Սուլթանի օրօրները Օրմանեան պատրիարքին.—Ռուսաստանի ազդեցութեան աճումը Պարսկաստանում.—Թիւրքմէնչայի զաշնադրի III-րդ յօդ. փոփոխութիւնը, Լ. Ս.—Կատալարչական հաղորդագրութիւն մակեդոնական հարցի մասին.—Զմիւռնեցի վանատական Պալեօզեան իսպանութեան դորձը.—Կլիկիայի կամոզիկոսի պատրաստութիւնները Միս գնալու.—Արփիարեանին սպանելու փորձը: 248

16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 259

17. ՄԻՋՆՈՐԴ ԳԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ 265

18. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ 271

19. ՎՐԻՊԱԿՆԵՐ —

20. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից զբիւ պարզ մանաւանդ թիւերը, յատուկ անուններն ու օտար բռնութիւնը, և թերթի միայն մի երեսի վրայ:
2. Զննդունուած յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները շին վերագարձնուած Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախար:
3. Գրուածքների վարձատրութեան շափը որոշում է խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերադառնում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուսթիս» համարը չստացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել անդական պոստային գրասենեակի հուստագիրը (УДОСТОВЕРЕНІЕ), որ ամսագրի համարը չէ յանձնուած գանգատաւորին:

Բ Ա Յ Ո Ւ Ա Մ Է 1903

Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Ո Ւ Ի Ր Ճ

Գ Ր Ա Վ Ա Ն, Հ Ա Ս Ս Ր Ս Վ Ա Վ Ա Ն Ե Ի Գ Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(նոր շրջան, III-րդ տարի)

Խմբագրութեան անդամների եւ աշխատակիցների նոյն կազմով:

1903 թւականին «Մուրճում» տպուկում է ի միջի այլոց Ա. Ահարոնեանի մի նոր սեւ զէպ՝ «ՄԲԲԿԻ ՍՈՒԲԲԸ», շարունակուելու է Լէօի «ՀԱՅՈՅ ԳՐԱՎԱՆՈՒԹԻԻՆԸ», թարգմանուելու են Ա. Ըօլլէսի «ՀՐԱՇԱՆԻ ԳՍԸ» և Զօլայի վերջին՝ «ՃԸՆՄԱՐՏՈՒԹԻԻՆ» զէպը:

Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր Ի Ն Ը՝

Ռուսաստանում տարեկան 10 րուբ. Արսաստանում 12 րուբ.
» կէս տարին 6 » » 7 »
» 1 ամսուան 1 » » 1 » 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է բաժանորդ գրուել.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձափճափճեան փողոց, տ. № 16):

Կայսերեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „МУРЧЪ“.

Արսաստանից՝ Tiflis, Rédaction de la revue „MOURTCH“.

Բացի այդ, «Մուրճին» կարելի է գրուել նաև՝

Թիֆլիսում—«Գուտենբերգ» գրափճառանցում:

Ծանօթութիւն. Ռուսաստանի բաժանորդներից նրանք, որոնք դժուարանում են տարեկան բաժանորդագինը (10 ռ.) վճարել միանուագ՝ կարող են տալ մ ա ս - մ ա ս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.:

Ոչ-Թիֆլիսի բաժանորդները հասցէն փոխելու համար պէտք է ուղարկեն 40 կոպ.:

Չեռագրիները և նամակները պէտք է ուղղել խմբագրութեան, ԼեհՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով:

ՆՈՐ ԵՐԶՈՆ

III ՏՈՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№. 3

Մ Ա Ր Տ

1903



ԹԻՖԼԻՍ

Արագասիայ Մե. Մարտիրոսանցի

Գուշինեան փողոց № 12.

1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 3

	Երև.
1. ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ, ղեկ Ա. Ահարոնեանի	5
2. ԲԱՆՍՍՏԵՂԾՈՒԹԻՒՒՆՆԵՐ Ա. Իսահակեանի և Դ. Դեմիրճեանի	25
3. ԱՐՇԱՂՈՒՍԻՆ, ղեկ յունաց կեանքից, Ե. Բենսոնի, թարգ. Յ. Արարաջեանի.	27
4. ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՒԻԹԸ, Յովհ. Թումանեանի.	92
5. ՄԻՍՍԻՕՆԱՐՆԵՐԸ ԹԱՒՐԻՉՈՒՄ, Ե. Փ.	104
6. ԳԱՆԳԱՏ, էսիւզ Նիկ. Աւետեանի.	107
7. ՀԵՇԵՇԱՆՔՆԵՐԻ ԵՐԳԻՉԸ, կրիտիկ. էս. Ալ. Ռուբէնիի	112
8. ՇՎԷՅՅՍԱՐԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրբաթ-Հաբունի	137
9. ԱԼԲԱՆԻՍՅՈՒՄ, ճանապ. Ժօրժ-Գօլլիսի, թարգ. Ա.	147
10. ՌՈՒՍԱՅ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՄԿԱՍՏԱՆՈՒՄ, յօդ. Ե. Փրանգեանի	164
11. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— 1) Ա. Զօլանեան՝ «Նահապետ Բուչակի զիւանք», Լ.— 2) Հ. Երեմեան, «Տուրկիւն».— 3) Մ. Մարիկեանց, «Մարտի ալքօմը».— 4) Գ. Ե. «Անգործ կանայք», Աշխէն.— 5) Յար. Թումանեան, «Հազարանբրու».— 6) «Ախուրեան», օրացոյց.— 7) Է. Թեոփ, «Վարժապետը».— 8) Լ. Տօլստոյ, «Ատոմնն, թէ Կամոնային».— 9) Dr. Antonius, «Վարդապետ», Թարգմ. Մ. Բ.— 8. Ե. 10) „Памятная книжка“ Эрив. губ. на 1902 г. Ա.—ԴՕ.	172
12. ՆՈՐ ՍՏՍՅՈՒԱԾ ԳՐԳԵՐ	188
13. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ, Նաւթարդիւնագործների XVII-րդ համաժողովը Բաղում, Յովհ. Կարապետեանի.	189
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Բարձրագոյն հրոխարտակ. — Կառավարչական Սենատին տրուած Բարձրագոյն հրամանը.— Հոգաբարձիւն զիւղատնտեսական կարիքների և զիւղական դասակարգի մասին.— «Տեղային առանձնախտկութիւններ».— Ա. Սահակեանի զեկուցումը՝ Անգրքկովիասում զեմստիային հիմնարկութիւններ մտցնելու անհրաժեշտութեան մասին.— Գիւղական դասակարգի դրութիւնը մեզանում.— Տեղական մամուլի զերբ բարենորոգումների հարցում.— Մի իրողութիւն, որի վրայ ուշադրութիւն դարձրեց „Баку“ թերթը.— Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու կալուածների գործի քննութիւնը.—	

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№ 3

Մ Ա Ր Տ

1903

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ ՄՆ. Մարտիրոսեանցի.

Գուգիկեան գողոց № 12.

1903

Дозволено цензурою. Тифлисъ, 28 марта 1903 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 3

	Երես
1. ՄԲԲԿԻ ՍՈՒՐԲԸ, վէպ Ա. Ահարոնեանի	5
2. ԲԱՆՍՍԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Ա. Իսահակեանի և Դ. Դեմիրջեանի	25
3. ԱՐՇԱՂՈՒՍԻՆ, վէպ յունաց կեանքից, Ե. Բենսոնի, Թարգ. Յ. Արարաջեանի	27
4. ՍՍՍՈՒՆՅԻ ԴԱԻԹԸ, Յովհ. Թումանեանի	92
5. ՄԻՍՍԻՕՆԱՐՆԵՐԸ ԹԱԻՐԻՉՈՒՄ, Ե. Փ.	104
6. ԳԱՆԳԱՏ, էպիւդ Նիկ. Աւետեանի	107
7. ՀԵՆԵԾԱՆՔՆԵՐԻ ԵՐԳԻՉԸ, կրիտիկ. էտ. Ալ. Ռուբէնի	112
8. ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրբաթ-Հարունի	137
9. ԱԼԲԱՆԻԱՅՈՒՄ, ճանապ. Ժօրժ-Գօլիսի, Թարգ. Ա.	147
10. ՌՈՒՍԱՅ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍՎԱՍՏԱՆՈՒՄ, յօդ. Ե. Փրանգեանի	164
11. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— 1) Ա. Զօպանեան՝ «Նահապետ Գուշակի դիւանը», Լ.— 2) Հ. Երեմեան, «Տուրկին».— 3) Մ. Մարիկեանց, «Մարօի ալբոմը».— 4) Գ. Ե. «Անգործ կանայք», Աշխէն.— 5) Յար. Թումանեան, «Հաղարանբլուր».— 6) «Ախուրեան», օրացոյց.— 7) Է. Թևոի, «Վարժապետը».— 8) Լ. Տօլստոյ, «Աստժնն, թէ Մամոնային».— 9) Dr. Antonius, «Վարդապետ», Թարգմ. Մ. Բ.— 8. Յ. 10) „Памятная книжка“ Эрив. губ. на 1902 г. Ա.—ԴՕ.	172
12. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԳԵՐ	188
13. ՏԵՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ, Նաև Թարգիւնագործների XVII-րդ համագողովը բազում, Յովհ. Կարապետեանի.	189
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Բարձրագոյն հրովարտակ.— Կառավարչական Սենատին տրուած Բարձրագոյն հրամանը.— Հողատարուծիւն զիւղատնտեսական կարիքների եւ զիւղական դասակարգի մասին.— «Տեղային առանձնաշատկուծիւններ».— Ա. Սահակեանի զեկուցումը՝ Անդրկովկասում զեմստային հիմնարկուծիւններ մտցնելու անհրաժեշտութեան մասին.— Գիւղական դասակարգի դրուծիւնը մեզանում.— Տեղական մամուլի զերը բարենորոգումների հարցում.— Մի իրողուծիւն, որի վրայ ուշադրուծիւն դարձրեց „Баку“ Թերթը.— Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու կալուածների վործի քննուծիւնը.—	

Գօղօլի յուշարձանի բացումը Թիֆլիսում.— Կ Սուխօփօ-կօբըլին.— Կ Ե. Մարկօլ.— Կ Գ. Բարդէ.— Սեւ-ծովեան երկամուղու ուղղութիւնը.— Վրաց դրամատիկական ընկերութեան մրցանակը.— «Кавказъ» լրագրի պաշտօնական հաղորդագրութիւնները.— «Аргонавтъ»-ի դադարումը.— Խուզարկեանի կտակած գումարով ապաստարան. *Լ. Ս.* 193

15. ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Ազրարային ընթրումներ Երևան-գիայում.— Աշխատանքի ներկայացուցիչ կուսակցութեան մի յաղթանակը պարլամենտական ընտրութիւններում.— Աւտրօ-Ունգարական համայնութիւնը. — «Прав. Вѣстн.» հաղորդագրութիւնները Մակեդոնիայում եւ Ալբանիայում պատահած դ՛պքերի մասին.— Մինիստրական կրիզիս Բուլղարիայում — Բ. Սարաֆօվի պատասխանը «Zeit» թերթի խմբագրութեան. — «Daily Chronicle» Միացեալ-Տահանդների գիմումի մասին.— Կիլիկիայի նորընտիր կաթողիկոսը Ազանայում.— Բողոքական կօլլժ Տարսժումում.— Լուսաւորչական լեհացիներ.— Հայկական ցուցահանդէսը Բերլինում. *Լ. Ս.* 208

16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 221

17. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 227

18. ՅԱԻԵԼՈՒԱԾ, Ա. Ըօլլէսի՝ Հրաչալի դար, Թարգմ. Սա. Լիսիցեանի. 33—64

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից զբւլ պարզ, մանաւանդ թւերը, յատուկ անոճներն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:
2. 2՛ընդունուած յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնուում: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:
3. Գրուածքների վարձատրութեան շափը որոշում է խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուշի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեանն անհրաժեշտ է կցել տեղական պոստային զբոսենեակի հաւաստագիրը (уДОСТОВѣреніе), որ ամսագրի համարը չէ յանձնուած գանդատուորին:

ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ *)

IX

Այն օրն ամբողջ Գապէն ու Ասօն մի հատ բառ չը փոխանակեցին իրար հետ. Գապէն ջրաղացի թմբի վրայ մնաց, իսկ Ասօն ջրաղացի յետևում ուռիների տակ թափառում էր: Օտարական ուխտաւորների խօսակցութիւնը նրա ամբողջ էութիւնը ցնցել, տակն ու վրայ էր արել, ճակատագիր, կեանք, մահ, ուխտ, սուրբ այլևս մի վայրկեան նրա գլխից չէին հեռանում: Եւ առաջին անգամ ավիաներից յետոյ այդ բոլորի հետ նաև իր սեփական կեանքը բոլոր մանրամասնութեամբ գալիս անցընում էր իր աչքի առաջից: Ասօն փորձուում էր այդ կեանքի մութ խորշերը և զարմանում էր, որ այդ ինքնաքննութիւնը միայն այժմ է կատարում: Ինչքան մութ բան կար, որ հարկաւոր էր պարզել:

Կեանքը մահից էլ զանազանել չի լինում, մտածում էր Ասօն.— և ճշմարիտ, կենդանի եմ ես, թէ՛ մեռած. ախր կենդանութիւնը մի բանի նման պիտի լինի, մի բանի հարկաւոր պիտի գայ, ես ո՛ւմն եմ հարկաւոր, սա ի՞նչ կեանք է, ինչո՞ւ եմ թափառում դաշտերում, ի՞նչ ունիմ այս ջրաղացում, ինչո՞ւ չեմ աշխատում այլևս, ի՞նչ պատահեց ինձ հետ, որ չար սատանան մտաւ ինձ...

*) Տէս Մուրճ № 2.

Սառան, Շիրինենց Սառան գեղեցիկ է, շատ գեղեցիկ, բայց ինձ ինչ, նա այնուամենայնիւ Շիրինենց հարսն է, խաչ ու աւետարանով պատկուած. չէ՞ որ շատ-շատերը գեղեցիկ ձի, եզներ սենին, ում ինչ, ո՞վ կը տայ ուրիշին այդ բոլորը: Եւ Շողերը, խեղճ աղջիկ, երկու անգամ սե՛... չէ, մեղք է, գէշ բան է, գեղեցիկին եմ սիրում, միշտ գեղեցիկը վնդբեցի, և այժմ ի՞նչ եմ անում, Տէր Աստուած, գէշ բան եմ գործում, մեղք եմ անում, մեռելի սասուերի պէս թափառում եմ, սար ու ձոր ման եմ ածում իմ ձանձրալի, անպէտք գոյութիւնը: Ի՞նչ անեմ, ի՞նչ, ո՞ր ջուրն ընկնեմ, երբ սիրում եմ. օ, անիծուած սիրտ, ո՞վ գրեց քո մէջ այդ անիրաւ բոցը, որ այրում, վաթոթում է ինձ, սիրտ, սիրտ, մոխիր գառնաս դու: Ո՞ւր գնալ, ի՞նչ անել, ի՞նչպէս տղատուել այս բոցերից. ծովը նետուեմ, Մրրկի սրբի ստքից վա՞ր դուրուեմ, թէ՞... Նա յիշեց մօրը, խեղճ կին... սրբանտանջուեց, այսքան գարգ միայն մի կնոջ սրտին, միայն նրա համար, որ նա մայր է, քնքոյշ, սիրող, բարի մայր. քիչ կան գարգտաներ, քիչ կան լացողներ. «Երեխան գառնատում լալիս է, բուերը կտուրներին վաւ-վաւ են կանչում, մեռելները գերեզմաններից դուրս են ստգում», այսքանը բաւական չէ: Նա, այն խեղճ պատան ինչո՞ւ լայ, գէշ բան է, գէշ բան. սիրտ, սիրտ, մոխիր գառնաս դու:

Ասօն նստեց, գլուխը ձեռների մէջ առաւ և գառն-գառն հեկեկաց. նա լալիս էր երկար-երկար, արցունքները թափւում էին, հեծկլտանքը բարձրանում, ապամի վայրկեան խաղաղում, լուում էր, յետոյ նորէն կուրծքը քանդւում էր, հեկեկոցը սաստկանում, և արցունքները հոսում էին: Նրա յաղթ թիկունքը, նրա առնացի ուսերը ցնցւում էին խորին հեծկլտանքների հետ, և նա ձեռներով արորում էր կուրծքը՝ կարծես ներսի կրակը մարելու համար:

«Վաւ-վաւ, վաւ-վաւ, վաւ-վաւ»... վերստին լսուեց բուի շարագուշակ վայրնը. Ասօն ախամայ ցնցուեց, նա

յիշեց ուխտաւորի խօսքերը՝ «բուերը վու-վու են ա-նում կտուրների վրայ, մենք գնում ենք սրբերին հար-ցընելու, կենդանի ենք, թէ՞ մեռած»։ Եւ գնացին, գը-նացին, մրմնջում էին նրա շրթունքները. ախ, հազար ե-րանի ձեզ, որ կարող էք գնալ, որ հաւատում էք և այն այնպէս խորը, որ մահ աչք առած, անցնում էք հա-րամիների, մարգասապաների միջով, փաթաթուել էք ձեր հաւատին և գնում էք... Ես ուր գնամ, ո՞ր սրբի ստքը, և ո՞րը կարող է ինձ մի ծառ անել, եբք ինքս հաստաա գիտեմ, որ մեռած եմ, մեռած... Երեխան գաշտում լալիս է, ես մեռած եմ. բուերը վու-վու են անում, ես մեռած եմ. մեռելները գիշերները մոնչում են, ես մե-ռած եմ, սրանք բոլորը իմ թաղման երգն են ստում, լալիս են, որ ես մեռած եմ։ Ապա նա յիշեց Գոպէի սարսափելի պատմութիւնը, յիշեց այն աղճկայ գիւղը, նա մի փոքր մնաց մտածման մէջ, Գոպէի հօր և իր հօր վարմունքի մէջ նա նմանութիւն գտաւ, այն տարբերու-թեամբ միայն, որ նրա հայրը կենդանութեան ժամա-նակ է որդուն դժբաղդացրել, իսկ իր հայրը մահէց յե-տայ, չէ՞ որ ինքը հօր վերջին կամքը կատարեց. սիրաւ հօր ուխտ հարցնել կարող էր, ինչո՞ւ յիմարացաւ, ինչո՞ւ արեց այդ. նրան ասացին, Օ, ամենքը, ամենքը, որ հօր վերջին կամքը չը կատարողը իր ամբողջ կեանքում ինչ գործ բռնի, խէր տանել չի կարող, և նա գործեց սք-խալը։ Տէր Աստուած, բայց միթէ այդ յանցանքն այն-քան ծանր է, որ ամեն բան այնպէս վերջանայ, ինչպէս Գոպէի հետ, մտածում էր նա սարսափով. — միթէ Շողերն էլ... Նա ձեռքով մի անհանգիստ շարժում արեց՝ ասես անախօրժ միտքը հեռացնելու համար ու լռեց, սարի կանգնեց։ Ուռիներն օրօրում էին նրա դլխի վրայ, հառ-հառ գեղնած տերևները մի վայրկեան դողդողում, փրու-վուում էին օդի մէջ, ապա վայր էին ընկնում ու ծած-կում ճանապարհը. Աստուած հանգարտութեամբ ու վշտով քայլում էր այդ տերևների վրայ և մտածում էր սե բա-ներ։ Այժմ նա յիշեց այն զոյգ տերևները, որ մի օր նա

իր և Շողերի բաղդը որոշելու համար առաւ և զցեց գետի մէջ. տերևները պտոյտ-պտոյտ արին ու բաժանուեցին. նա կրկին կուացաւ, վերցրեց երկու բարակ, դեղնած տերևներ, գցեց ջրի երեսին, նայեց, և նրանք փախան իւարից զանազան կողմեր...

Երբ նա յետ եկաւ ջրաղաց, ճաշ էր արդէն. կամացուկ ներս մտաւ և մնաց քարացած: Գսպէն նստած էր պատի տակ՝ ցորենով լի մի շուալի վրայ, աչքերը յառել էր չախչակին և անշարժացել ինչպէս մեռել: Ալիւրի ճերմակ փոշին հաստ շերտով նստել էր նրա ծեր գլխի ու միրուքի վրայ, բեռնաւորել էր յօնքերն ու արտևանունքները, իսպառ պատել էր զգետները. երևում էր, որ նա վաղուց է այդտեղ նստած առանց մի թեթեւ շարժում անելու: Ասօն նայում էր, և նրան թւում էր, թէ իր առաջ մի խորհրդաւոր արարած է նստած, մի ոգի, որ ջրերից դուրս դալով՝ դիտում է, թէ ինչ է կատարում իրանից վեր, այս աղմկալի ջրաղացում: Ասօն կամացուկ մտտեցաւ, ձեռքը նրա ուսին դրեց:

— Գսպէ ամի, այ Գսպէ ամի:

Ծերունին իր ալրոտ թերթերունքները դէպի նա դարձրեց, նայում էր և կարծես ոչինչ չէր հասկանում:

— Հիւսնդ ես:

— Ձէ, մեռած եմ, նրանք ասացին:

Ասօն մնաց մտածմունքի մէջ. իրանց երկսի հողեկան վիճակների մէջ սոսկալի նմանութիւն կար: Լուռ քաշուեց մի կողմ, նստեց քիչ հեռու և ծերունու պէս աչքերը յառեց չախչակին: Եւ քարը դառնում էր հս գառնում ալիւրը փչելով իր չորս կողմը, ջրտան մէջ, ներքեում ջրերը վերից վար գահավիժուելով՝ փչրում էին ոռնալով ու հեծեծալով, բուն շարունակում էր դրսում վույ-վույ անել, իսկ նրանք նստած էին ալիւրով ճերմակած, ինչպէս մարմարէ երկու արձաններ, նստած էին կարծես մի գերագոյն հսկումն կատարելու համար: Լուռ էին. ժամեր անցան:

Յանկարծ դրսում մի սայլ ճռնչաց, մի ձայն կանչում էր.

— Գսպէ ամի, այ Գսպէ ամի:

Գսպէն ցնցուեց, աչքերը թարթեց, շուրջը նայեց կարծես իմանալու համար, թէ ուր է ինքը, ինչ ձայն է լուում:

— Գսպէ ամի, ուր ես, չե՞ս լուում:

Ծերունին այս անգամ սուրբի կանգնեց, կամացուկ ստաճացաւ դէպի դուռը և դուրս եկաւ. Շիրինենց Պետոն էր, իր եղբոր հետ ցորեն էր բերել աղալու:

— Բարի երեկոյ. վա՛հ, տնայէն, ինչո՞ւ ձայն չես տալիս, մեռայ կանչելով, ասացի՝ մի բան է պատահել հարևորին:

— Բարի եկար. չէ, որդի, ծերութիւնը հանաք չի անում, քարերի գուգուոցն էլ մի կողմից չէր թողնում լսեմ, ինչ անեմ, բարով դու էլ ծերանաս:

— Ծերանալու ժամանակ կ'ունենամ, Գսպէ ամի, դու այն ասա, որ էսօր ամբարն աւելի ենք, հաւերին էլ կուտ չը թողինք. էլած չէլածը հաւաքել, քո գուռն եմ բերել. դէ գարուն է, գիտես էլի, ցորեն չի ճարուում. նորի հօտ ենք առել, կալ ու կուտը հեռու չէ: Էս մէկ անգամին էլ մեզ եօլա տար, մինչև տեսնենք՝ Աստուած ինչ է հասցնում: Հաց շատ ունէինք էէ, ամա հարսանիքս հացի մէջքը կտարեց, դէ մի դեղ կերաւ, հաց կը դիմանայ:

Գսպէն անշարժ կանգնած՝ նայում էր, թէ ինչպէս Պետոն ջուալները ցած է բերում եղբոր հետ:

— Ա՛հ, ինչ ես քար կտրել մնացել, ասես ուրախ չես, որ ցորեն եմ բերել, մի մօտեցիր, տնայէն, ձեռքդ զցիր, քօմնո՞գ արա, ջուալները ցած բերենք սայլից. հարից ընկե՛լ ես, ինչ է:

— Հա, իրաւ ասացիր, Պետօ, իսպառ հալից ընկած եմ: Ծերութիւնը, դէ ինչ ասեմ, ծերութեան տէրը մեռնի. էլ ոյժ չի մնացել, ասաց ծերունին, մօտեցաւ ջուալներին և միևնոյն ժամանակ գաղտագողի հայեացք էր

դքսւմ ջրաղացի դռանը: Նա անհանգիստ էր, այս փոյր-
կեանին նրան զբաղեցնողը Պետօի և Ասօի հանդիպելն
էր, որից նա ոչինչ բարի բան չէր սպասում: Ասօն յան-
գուզն էր ու կատաղի, այդ նա լաւ գիտէր:

—Ի՞նչ կայ, ի՞նչ չը կայ դիւզում, Պետօ, հարցրեց
ծերունին՝ մի բան ասած լինելու համար:

—Է՛հ, ի՞նչ ասեմ, Գոպէ ամի, պատասխանեց Պե-
տօն՝ ջուպները ցած բերելով, շատ էլ լաւ բան չը կայ.
երեկ գեղի երեք կողմում երեք հաւ օրը ցերեկով ար-
լորի պէս կանչել են, սա խսկի լաւ բան չէ: Անցեալ օրը
աւազակները քչսւմ էին գաշտից Յովէի եղները, ս. Կա-
րապետի ուխտաւորներ են վրայ հասել, խլել են, յեա
տուել, լաւ մարդիկ են եղել, Աստուած իբանց ուխտը
կատարի, բայց արի տես, որ նրանց գնդակից մէկը վի-
րաւորուել է, վայ թէ մեռնի, մէջտեղ մենք փրասուենք.
արդէն էս քանի օրը քրդերի «բրսազ»-ի*) ձէնը մեզ
հասաւ, Աստուած վերջը բարի անի:

—Հո՛, էդ լաւ չէ, որ նրանք «բրսազ» են անում:

—Էդ էլ մի կողմ մնայ, ամենից հետաքրքրիւր դեռ
չը գիտես, Ապրօն է եկել:

—Սուրբ Կարապետի վարձուք:

—Հա, բայց իմանաս ի՞նչ հալի, իսպառ գժուել է
տնաքանդը, օյին բան է, սուին դցել է մի երկար կը-
տաւ, պատանս է, ասում է, աշխարհը վերջանալու վը-
րայ է, ասում է, ամենքդ էլ պատան առէք ու զե-
րեզման փորեցէք: Ամեն շաբաթ իրիկուն գնում է գե-
րեզմանսցը ու մի տեղ փորում է փորում, ասում է՝ գե-
րեզման եմ շինում. գիշերներն էլ մի էնպիսի բան է
անում, որ ամենքին զարզանդ է բռնում, տնաքանդը

*) Քրդերը խիստ քինախնդիր ժողովուրդ են: Երբ նրանք
սպաննում են մէկին, սովորաբար ասում են՝ «բրսազ», որ նշա-
նակում է՝ «սպասիր». այս սպանալիքից յետոյ նրանք սովորաբար
անպատճառ վրէժխնդիր են լինում, թէկուզ զէպքից յետոյ սա-
րիներ անցած լինեն. ս՛հա եթէ ինչու «քրդի բրսազ» նշանա-
կում է անխուսափելի վրէժխնդրութիւն:

կանգնում է գեղամէջը և քանի ձէն ունի՝ գտում է՝ «գուլնւմ, գուլնւմ»... Հները սոնսում են նրա հետ, ու մի վառ բան է դուրս գալիս: Մեր պատաներին էլ, հօ գիտես, բան է հարկաւոր, սոսաւօտից իրիկուն թափուած են տիրացու Գրիգորի գուռը, էլ գիր բանալ, էլ թուղթ գրել տալ, գեղը տակն ու վրայ է եղել:

Պետօի պատմածները Գուգէն այս անգամ լսեց ծայրայեղ ուշադրութեամբ. իր ջրադացում վերջին ժամանակ կատարուած գէտքերը, բուլի կանչելը, ուխտաւորների յայտնուելը նա կապում էր գիւղում՝ պատահածների հետ: Ծերունին մտազբաղ՝ մատներով խոսնում էր իր երկար միրուքը, կարծես պատրաստուած էր մի բան ասելու, երբ նրա ուշադրութիւնը դարձաւ գէտի ջրադացի գուռը, ուր այդ վայրկենին յայտնուեց Ասօն և գիտում էր նորեկներին:

—Տօ, կնտեղ էլի մարդ ես ունեցել, շարունակեց Պետօն.— ո՞վ է... վա՛, Ասօն է, բնրի իրիկուն, Ասօ, ինչ լաւ էլաւ, չը լինի թէ եկել ես հարսանիքիդ ալիւրն աղալու, էդ լաւ է, ես եկել եմ հարսանիքիս պակսեցըրածն աղալու, դու էլ հարսանիքի համար, էդ հօ միւկնայնն է, բաղարջ կը թխենք, գիշերը լաւ կանցնի: Այ տղա, դու սայլը քշի, գնա՛, դարձաւ նա եղբօրը, երբ բոլոր ջուարները ցած բերին ու տեղաւորեցին:

—Ձուրն առաա է, փառը լաւ է դառնում. Գուգէ ամի, էէ, դու սնն առա, նօբաթ կնոյ, թէ՛ չէ:

—Կայ, կայ, սրգի, քեզ համար նօբաթ միշտ կը լինի:

—Հապա Ասօի ցորե՞նը...

—Ասօն ցորեն չի բերել, եկել էր ժամնալու՝ նօբաթ կնոյ, թէ՛ չէ, պահեցի մօտս էսօր, մենակ եմ էէ՛, մենակութիւնը եաման բան է, սիրտս շատ է նեղում. գիտե՛ս, սրգի, քանի ծերանում եմ, էնքան մենակութիւնն ինձ տանջում է, առաջ, ջահիլ ժամանակներս էսպէս չէր, չախալն ու քարը ինձ ընկերներ էին, հիմայ էլ չեմ կարողանում մենակ մնալ, մարդի, ընկերի,

խօսակցի կարօտ եմ քաշում, կ'ասես թէ գիշերներն է շատ են երկարացել, խաւարը շատ է խտացել, էլ լաւ չի իմ չորս կողմը:

—Ասօ, հը', ի՛նչ կ'ասես, հարսանիքդ երբ ենք ուտում, ասաց Պետօն:

Պատասխանի փոխարէն Ասօն նայեց նրան երկար-երկար: Պետօն զարմանալով նկատեց, որ այդ հայեացքը սովորական չէ, որ նրա աչքերի մէջ մի սոսկալի թու-նոտ բան կայ, արտայայտութիւնը կատաղի է. նկատեց այդ և ինքն էլ չ'իմանալով թէ ինչու, սարսուեց, գլուխը քաշ գցեց, մինչդեռ Ասօն շարունակում էր նայել, կարծես ճաշակելով իր պատճառած անհանդստութեան հա-ճոյքը: Բնազգը Պետօին լաւ բան չէր ասում, բայց նա յիշեց, որ գիւղում ամենքը Ասօին գիժ են համարում, և նրա այդ սոսկալի հայեացքը փորձեց բացատրել նրա խենթութեամբ:

Լուռ էին: Գսպէն գիտում էր այդ յամր տեսարա-նը, նա զգում էր, որ իր ջրաղացում գէշ բան է պատ-րաստում, զգում էր, որ Պետօն առանց իմանալու կանգնած է մի կատաղի թշնամու հանդէպ. երկու ե-րիտասարդները հակառակորդներ էին, մէկը գիտակցա-կան և ահաւոր իր հաղիւ զսպուած կրքով, և միւսը ան-գիտակից ու անհանգիստ ընդհանուր լուծեան տակ թագնուած խորհրդաւորութեամբ: Էլ խօսել չէր լինում: Ասօի հայեացքը ամեն բան փչացրեց: Գսպէն աւելի փորձուած էր. նա դարձաւ Պետօին:

—Հարսանիքը մի կ'ոզմ թող, Պետօ, վեր կաց, ցո-րենդ ածենք աղալու:

—Հն, լաւ ես ասում, պատասխանեց Պետօն՝ ուրա-խացած այս միջամտութեամբ. —խօսքով ընկայ, մուացայ:

Նրանք վեր կացան, մի շուալ գատարկեցին քարի վրայ կախուած տախտակէ ամանի մէջ, որի վարի փոք-րիկ անցքից ցորենն սկսեց մազուել քարի մէջ, որ գառ-նալով փշում էր չորս կողմը սպիտակ ալիւրը: Գսպէն ու Պե-տօն կանգնած նայում էին այդ տեսարանին:

—Լաւ է ազում, ասաց Պետօն:

—Հն, լաւ է ազում, վրայ բերեց Գապէն. —երկու օր առաջ սրել եմ, առաջին սուրն արդէն անցել է, քարն էլ աւազ չի տայ:

Չախչախը չխկչխկում էր, քարը դառնում էր, ալիքը դուրս թափւում, և նրանք շարունակում էին դեռ երկար կանգնած մնալ միեւնոյն տեղում. երբ մէկ էլ յետ նայեցին, Ասօին իր տեղում չը գտան, նա դուրս էր գնացել. Գապէն անհանդիսա կերպով շուրջը նայեց. Պետօն դարձաւ նրան.

—Գապէ ամի, ինչ է պատահել Մուրադի տղին, գիւղում լաւ բան չեն ասում:

—Է՛հ, որդի, ինչ ասեմ, չար աչքի տէրը մեռնի, ասում են՝ աչքով են տուեր:

—Հն, ասում են՝ չար աչք է. գիտե՞ս, հէնց դիչեր ցերեկ սար ու ձոր է թափառում, ձեռքը գործից պաղել է խապաւ, մեղք, մեղք ջիւանին, նշանածն էլ սեւաւորել է, մէրն էլ մեռաւ սրբերի շեւքը մաշելով. էէ, Գապէ ամի, ո՞վ կարող է իմանալ Աստծու բանը, մարդու գործը որ մի անգամ ձախ դնաց, էլ ուղղել չի լինի: Մուրադի օջաղի աստղը մի անգամից կ'ասես թեքուեց, էն մէկ տղան հնպէս էլաւ, էս էլ... ինչ ասեմ, մարդ բան չի հասկանում. տեսնո՞ր՝ ինչպէս նայեց ինձ. մարդ վախենում է հէրօրհնածի աչքերին նայել:

—Հո, լաւ չի, լաւ չի, կրկնեց Գապէն՝ գլուխն օրօրելով. —տեսնես՝ էլի ո՞ւր գնաց. գիտե՞ս ինչ կայ, Պետօ, նրա հարսանիքի մասին դու շատ մի խօսիր, չարանում է, երբ պսակուելու անուն ես տալիս:

—Դէ տնաչէն, ինչ իմանամ, ասացի՛ շահիլ է, մի քիչ սիրտն ուրախացնեմ:

—Գնամ տեսնեմ՝ էլի ո՞ւր գնաց, ասաց Գապէն և դուրս գալով կանչեց.

—Ասօ. Ասօ:

Չայն չը կար:

—Ասօ, այ Ասօ:

Գարձեալ ձայն չը կար:

—Էլի գնաց, մումնաց վշտացած ծերունին, ջրաղացի չորս կողմը պտոյտ աշեց, պրպտեց: Մեր աչքերով ուշի ուշով նայեց և յուսահատ յեա եկաւ, իր տեղում նստեց:

Ասօն չը կար:

X

Ջրաղացից դուրս գալով Ասօն ոււխների տակից նախ գանգաղ, ապա աւելի և աւելի արագ քայլում էր առտի երկարութեամբ: Նա կարծեա փախչում էր ջրաղացից: Պետօի գալուց առաջ իր միայնութեան խոհերը նրա հոգում մի մեղմութիւն էին առաջ բերել, որ եթէ էլի մի փոքր ածէր, կարող էր նրա համար փրկարար լինել: Ուխտաւորների խօսակցութիւնը, նրանց պատմածները բուժիչ բալզամի պէս իջան նրա սրտի վէրքերի վրայ, և մի փոքր սփոփեցին. Ասօն այնուհետև իր գիւղից, իր շրջապատից դուրս սկսեց աւելի հեռուն նայել, աւելի հեռուն մտածել և զգալ: Սառայի չքնաց պատկերը եթէ նրա աչքից խօսառ չանյայտացաւ, գոնէ այնքան հեռացաւ, որ հազիւ երևում էր մշուշի միջից, Ասօն աւելի հանգստութեամբ էր գիտում այդ միգապատ պատկերը և նոյն իսկ աշխատում էր խօսառ դուրս վանել իր դլխից: Եւ նա ծրագրեր էր կազմում իր ապագայի մասին, երբ յանկարծ, անսպասելի կերպով ջրաղացում լոյս ընկաւ Սառայի բազգաւոր ամուսինը՝ Պետօն, և դրանով ամեն բան տակն ու վրայ եղաւ: Ասօի անգիտակից ախոյեանի այսպէս յանկարծակի յայտնուելը նրա տակաւին լաւ չը դոցուած վէրքը բաց արեց բոլոր լայնութեամբ ու խորութեամբ: Պետօն կարծեա դիտմամբ եկել էր այս մենաւոր անկիւնը Ասօի առաջը փռելու իր երջանկութիւնը, առանց գիտակցելու, որ թիթեռնիկի պէս ինքը խաղում է բոցերի հետ: Եւ արգարե, խանդոտութիւնն ինչպէս մի շղթայազերծ կա-

տալի զազան Ասօի մխացող հողում զլուխ բարձրացը-
րեց, և աւերածի, չարութեան անյաղթելի տենչը նրա
սիրտը բռնեց և վարձրեց մի բորբորուած խարոյկէ նա
մի անզուսպ պահանջ զգաց այդ ժամին անպատճառ մի
անսովոր բան անել, որից տուժողը Պետօն լինի, մի բան
քանդել, մի բան շարդել, մնասել, տրորել ի հաշիւ Պե-
տօն: Եւ նա վազում էր՝ բուննցքները սղմած, հեւղով,
աչքերը խաւարի մէջ կատաղաբար լայն բացած, փախ-
չում էր առանց իմանալու, թէ ինչ է անելու, բայց
հաստատ վճռած մի բան անել, մի չար, մի վատ բան:
Կարելի էր կարծել, թէ նա փախչում է մէկի ձեռքից,
կամ հայածում է մէկին խաւարի մէջ, իր խելագար ըն-
թացքի մէջ նա մի քանի անգամ վայր ընկաւ երեսի վը-
րայ, կրկին վերկացաւ անէծքի մոմոտցով, մի վայրկեան
կանգ առաւ, լսեց իր անունը հեռուից, մի բան ասաց
ատամների արանքից և կրկին վազեց: Նա փախչում էր
ջրագացից, նրա ազմուկից, չախչակի ձայնից, նա ուզում
էր կորուել այդ բողբօղից՝ միայնութեան և խաւարի մէջ
մի անտեսելի բան մտածելու, մի սարսափելի բան որո-
շելու համար: Վազում էր, դլխում ազմուկ ու մտքերի
ժխոր, զայրոյթով կրծոտում էր շրթունքները՝ կարծես
պտտածելու համար մի չար բան մտածելու իր անկարո-
ղութիւնը:

Ահա նա հասաւ սաւաղին ու կանգ առաւ. ջրերն
ազմուկով ցած էին թափւում ու գնում գէպի հեռուն,
գէպի խաւար հարթութիւնը: Ասօն նայում էր, և յան-
կարձ կուացաւ, երկու ձեռներով կախուեց և ջրերի
թումբը պահող երկու ցից դուրս քաշեց ու յետ փախաւ.
յանցաւորի պէս: Նրա յետևից սաւաղը լայնանում էր
կամաց կամաց, ջրերն ազմուկով կրծում էին թումբը և
աւելի ու աւելի լայն հոսանքներով տարւում գէպի
դաշտավայրը, իսկ Ասօն յետ էր փախչում գէպի ջրա-
ղաց: Պետօն արդէն քնել էր, իսկ Դսպէն նստած՝ ըս-
պասում էր:

— Եկնոր, որդի, որքան կանչեցի. ո՞ր դնացիր, տնայէն,

գուրսը մութ է, ժամը չար, լսու չէ շատ հեռանալ ջր-
բաղաջից:

—Հեռու չէի, ձայնդ էլ լսեցի, ո՞ւր պիտի գնայի,
ման էի գալիս ջրաղացի յետևում:

Ասօն նստեց ջրաղացի անկիւնում, մերթ նայում
էր քարին, մերթ Պետօին, վերջինս ասես բոլորովին մո-
ռացել էր նրան և զբաղուած էր իր գործով. նա մերթ
լնդ մերթ վեր էր կենում, մօտենում քարին, ալիւրը
հաւաքում, կուռիկով լցնում ջուալը, ապա կրկին ցո-
րենն աւելացնում քարի վրայ կախուած տախտակէ ա-
մանի—գեօլչազի մէջ, իսկ քարը դառնում էր թափով,
և չախչախը ցատկորտում էր չխչխկացնելով: Շատ դիչեր
անցաւ, Գապէն կամաց կամաց ննջեց իր նստած տե-
ղում չախչախի ներդաշնակութեան տակ, Պետօն էլ հո-
գաց ինչ որ պէտք էր, նոյնպէս նիրձեց. Ասօն մնաց ան-
քուն, անչարժ միւննոյն տեղում: Նա մտածում էր, և
շնտ, շնտ բան ունէր մտածելու: Ահա մի քանի օր է,
որ նա ապրում է արագութեամբ, գիպուածներ են յա-
ջորդում իրար, որոնք ասես ճակատագրական ուժով գա-
լիս են աղմկելու նրա առանց այն էլ սարսափելի գո-
յալթիւնը: Այն ուխտաւորները... այս Պետօն... Իե՛ռ այս
առաւօտ նա մտածում էր գլուխ առնել կորչել այս
կողմերից և ուխտաւորների պէս գնալ սրբերին հարցը-
նելու՝ կենդանի է ինքը, թէ՛ մեռած, մտածում էր
որևէ կերպով վերջ տալ իր անտանելի կայութեանը: Այս
առաւօտ նա խորապէս զգաց, որ իր անձնական գար-
բից աւելի խոշորը կայ, աւելի լայն ու խորը, քան ամե-
նամեծ ծովը, զգաց և մտածում էր այդ ծովի մէջ նե-
տուել, և յանկարծ... Պետօն, որ կարծես չար սատա-
նայի պէս եկաւ, իր նոր ճանապարհի վրայ ցցուեց: Ախր
նրտեղից և ինչո՞ւ լոյս ընկաւ սա. Ասօն նրան այժմ ա-
տում է իր հոգու բոլոր զօրութեամբ և միաժամանակ
իր զգացմունքը գտնում է ամօթալի, իր հոգու խոր-
քում կարմրում է. ինչ մեղաւոր է Պետօն, որ Սառան՝
նրա կենը գեղեցիկ է. ինչ մեղաւոր է այս քնող

մարդը, որ Ասօի սիրտը կպել է նրա օրինաւոր կնոջը: Ասօն լաւ գիտէ, որ իր արածը վատ բան է, որ Պետօն բնաւ մեղք չունի, բայց գիտէ ե՛րբ, որ ինքն ատու՛մ է նրան մինչև այն աստիճան, որ քիչ է մնում վերկենայ, նրա կօկորդը սղմի կատաղաբար ու խեղդի: Քիչ առաջ սրեւէ ձեռով իր զայրոյթն ու ատելութիւնն արտայայտած լինելու համար նա քանդեց սաւաղը, որ ջրերը հօսեն, գնան, ջրաղացը կանգ առնի, և Պետօիալիւրը չաղացուի, բայց այժմ ամաչում է իր արածի համար, այն աստիճան տղայամիտ, այն աստիճան խղճուկ է թւում նրան իր արածը:—Ալիւրը չաղացուի», մրմնջաց նա, և կծու ժպտը ցաւագիօրէն ծռմուկեց նրա շրթունքները:

Ասօն կրկին նայեց քնած Պետօին, որ այժմ հակառակի պէս սկսեց խիստ անախտով կերպով խռոացնել. նա էլ աւելի զայրացաւ, նրան թւաց, որ ոչ ոք աշխարհում այդպէս չի խռոացնում, որ միայն Պետօն է ընդունակ այդպիսի զգուելի ձայներ հանել, այտերը փուքսի պէս ուռցնել, շրթունքները վերև ներքև անել և քթով խոզի պէս փնչացնել: Այդ բոլորը վատ, շատ վատ, նոյնիսկ գարշելի թւաց Ասօին. Գոպէն էլ էր խռոացնում, նոյն իսկ բարձրաձայն, ուժգին, բայց նա այնպէս զգուելի չէր թւում, այս Պետօն ուրիշ բան էր, Ասօն նայում էր և կատաղում, ինքնիրան զայրանում էր, որ նայեց, բայց մի վայրկեան յետոյ նորէն նայում էր:

—Մեղայ Բեզ, Աստուած, նահլմթ քեզ, չն՛ր սատանայ, ասաց նա կամացուկ, նկատելով որ իր զայրոյթն ընդունում է շատ վտանգաւոր կերպարանք, և իր գրկխից սոսկալի մտքեր են անցնում: Մի վայրկեան նա այնպէս էր տարուած՝ իր ատելի ախոյեանի դէմքը, բարձր ու ցածր անող կուրծքը գիտելով, որ անգիտակցաբար վիզը ձգուել էր առաջ, ձեռքերի մասները բացուխուփ էին անում ջլաձգաբար, ինչպէս որսը նկատող արծիւր, որ պատրաստում է իր ճիրանները: Ա՛խ, թէ այս խոզի պէս փնչացնող մարդը յանկարծ

չքանար, Սառան ազատ կը լինէր, մնացածը հեշտ էր, այնուհետեւ ինչ ուզում է՝ թող լինի:

Եւ ինչ, դժուար է ազատուել այս ստեղի արարածից. բաւական է վեր կենալ, երկու ձեռքով սղմել կոկորդը, մի քանի րոպէ պահել: Այն, խեղդել, խեղդել, մտածում էր նա ծնկների վրայ ընկած ու հեւելով. և այն բեխերը, որ բարձր ու ցածր են անում անդադար, ինչ վատ են, ինչ զարշնի: Պետօն վատ մարդ է, վատ մարդ, մտածում էր նա, բայց թէ ինչու, այդ որոշակի ասել չէր կարողանում, դիտէր միայն, որ նա վատ մարդ է և եթէ աշխարհից չքանայ, իր համար շատ լաւ կը լինի: Եւ նա նայում էր բորբոքուած, կատաղի աչքերով, հեռւմ էր անընդհատ, սրտի զարկի ձայնը լսում էր, վզի երակները լցուել, բարձրացել էին, ամբողջ մարմնով դողդոջում էր և որսին մարդ մտած կատուի պէս աւելի ու աւելի ձգւում էր դէպի քնած Պետօն, ատամներն իրար սղմած ու սպառնալի:

Յանկարծ չախշակի ձայնը կտրուեց, նա էլ չէր ցատկըսում, քարը կանգ առաւ, ջրազացը լռեց, և նոյն վայրկենին Գոպէն ու Պետօն զարթնեցին:

— Ի՞նչ պատահեց, բացազանչիցին նրանք միամտմանակ աչքերը տրորելով:

— Զուրը կտրուեց, քարը կանգ առաւ, պատասխանեց Ասօն սաստիկ յուզուած և դողալով յանցանքի մէջ բռնուածի պէս:

— Հո՛ւ, հո՛ւ, ջուրը կտրուեց, երևի սաւաղն է, ինչ օրով էի պնդացրել, էլի քանդուեց, տրտնջաց Գոպէն մտազբաղ:

— Դու հանգիստ մնա՛, Գոպէ ամի, պատասխանեց Պետօն ոտքի կանգնելով. — Էս ու Ասօն կ'երթանք հողալու: Վերկաց, Ասօ՛, քանի ուշ չէ, շարունակեց Պետօն. գնանք, թէ չէ յետոյ շատ դժուար կը լինի առաջը փակել: Պետօն շտապով դուրս թռաւ:

Ասօն շարունակում էր նստած մնալ միլենոյն տե-

զու՛մ՝ անհանգստութեան, հոգեկան ներքին խռովու-
թեան նշաններ ցոյց տալով:

—Ասօ, այ Ասօ, լսուեց Պետօի ձայնը ջրաղացի յե-
տեից. — շուտ արի, տնաշէն, սաւաղը տարաւ, տարաւ բո-
լորը:

—Ասօ, սրգի, հիւանդ հօ շէս, ես երթամ, եթէ
այդպէս է, տասց Գսպէն, ուշագրութեամբ նրան նայե-
լով: Պատասխանի փոխարէն Ասօն արագութեամբ սաքի
կանդնեց ու դուրս թաւաւ Երկու ախոյեանները կորան
խաւարի մէջ. ճանապարհն անցնում էր ուռինների տա-
կով, հեռուից լսում էր սաւաղի ջրերի ձայնը, իսկ ջը-
րաղացի առուն դատարկում էր արագութեամբ: Այս
անգամ խաւարի մէջ ծառերին դիպչելով, թմբերին
ընդհարուելով՝ նրանք վազում էին հեիհե, Պետօն առ-
ւաճից և Ասօն նրա յետեից, առանց խօսելու, առանց
ազմուկի: Մի քանի անգամ մթութեան մէջ նրանք դի-
պան իրար, վայր ընկան, ապա վերկացան և կրկին վա-
զեցին: Ահա վերջապէս սաւաղը, առուի բարձր թմբի
մը խոշոր մասը քանդուում էր աշագրութեամբ, և գէպի
վար, գէպի գաշտավայրը շառաչիւնով իջնող ջրերի կո-
հակները աւերած էին առաջ բերում ամեն վայրկեան:
Երկու երիտասարդները կանգնած՝ նայում էին շուարած,
չիմանալով ինչ ձեռնարկել:

—Ի՞նչ անել, հարցրեց Պետօն մտազբալ և քրտո-
նաթոր ճակատը սրբելով:

—Չը գիտեմ, պատասխանեց Ասօն առանց մտա-
ծելու:

—Թէ ծառի ճիւղեր լինէին, հեշտ կը լինէր փակել:

—Հո՛ւ, բայց ինչո՞վ ճիւղեր կտորենք:

—Ասօ, յետ վաղիր շուտով, Գսպէն մի բան կ'ունե-
նայ, սո՛ւ և բեր, մինչև ես այստեղից այնտեղից մի
քանի քարեր հաւաքեմ:

—Ի՞նչ կարող է ունենալ:

—Ի՞նչ, ո՞վ գիտէ, ջրաղացի տէր է, տնաշէն, ու-
րագ, կացին...

— Կացի՛ն... կրկնեց Ասօն վարանոտ ձևով, կացի՛ն...

— Հապա, կացին, շուտ վազիր, քո հօրն օղորմի:

— Սուր է:

— Տօ, ի՛նչ հարց ու փորձի ժամանակ է, տնաչէն, վազիր, չնս տեսնում, որ էլ առուի մէջ ջուր չը մնաց:

— Գնամ բերեմ, հա՛ն... լաւ ես ասում, գնամ, հա, գնամ:

Եւ Ասօն յանկարծական վճռականութեամբ կորաւ ծառերի տակ իշխոյ թանձր խաւարի մէջ, միայն մի առժամանակ դես լաւում էր նրա շտապ օտնաձայնը, որ նոյնպէս շուտով խլացաւ: Զրազացում Գազէն դարմացաւ, տեսնելով մինչև որ աստիճան Ասօն գունատ է ու յուզուած, և երբ վերջինս կացինը խլեց ու դուրս թռաւ, մի յանկարծական միտք ձերուհունը քարացրեց: Քիչ յետոյ Ասօն դարձեալ սուտազի վրայ էր՝ փայլուն գործիքը ձեռքին:

— Բերիր, Ասօ:

— Հա, բերի... սուր է... ահա՛...

— Դէ ճիւղեր կտորիր, իսկ ես քարեր կը հաւաքեմ:

Ասօն հնազանդուեց լռութեամբ: Նրա տեսնող և ուժեղ հարուածների տակ իսկոյն ընկան մի քանի մատաղ ծառեր, որ նա արագութեամբ մասամբ կորատեց, յետոյ կացինը գօտին խրեց և ճիւղերի խուրձերը քաշ տուեց, ջրին մօտեցրեց: Պետօն մտաւշուրը՝ թմբերին յենուած, ընկերը տալիս էր նրան ճիւղերի խուրձեր, և նա տեղաւորում էր օտներով ու քարեր դցում վրան: Գործը լաւ էր ընթանում, միայն Ասօն խիստ տարօրինակ էր, նա երբեմն անշարժ կանգնած էր մնում, երբ ընկերը քար կամ ճիւղ էր ուղում, երբեմն առանց ուշք դարձնելու՝ խուրձը կռացած Պետօի գլխին էր դցում:

— Ի՞նչ ես անում, Ասօ:

— Ե՛ս... ճշմարիտ, լաւ չ'եղաւ... այ, կացինը խրել եմ գօտիս... գիտե՛ս ինչպէս սուր էր... մի հարուածով, հա, մի հարուածով... քեզ չեմ տեսնում, աչքերիս ա-

ուսմ չի մթնում, այլ մութ է, շատ մութն է, այնպէս չէ... Պետօ, դու լաւ տեսնում ես...

— Ճիւղեր տուր, քննր տուր, կրկնում էր Պետօն անընդհատ, բայց իրօք խիստ զարմացած էր ընկերոջ վարձուների տարօրինակութեան վրայ: Ասօն կրկին դործի էր կենում, ժամից աւել էր, որ նրանք աշխատում էին. ջրերի առաջը փակուած էր արդէն, Պետօն թմբի վրայ կուացած՝ վերջին քարերն էր տեղաւորում, խի Ասօն նրա գլխավերեւը կանգնած՝ հեռուում էր նրա աշխատանքին: Եթէ Պետօն այդ փայրկենին զլուխը բարձրացնէր և կարողանար խուարի մէջ տեսնել, նա կը սոսկար Ասօի գէմբից, կը նկատէր, թէ ինչպէս նա գողգողում է ամբողջ մտքմտով, ինչպէս պինդ սղմել է ձեռքի մէջ կայնի կոթը: Պետօն շարունակում էր անտարբերութեամբ աշխատել, Ասօն մի քանի անգամ յետ քաշուեց, առաջ եկաւ, կրկին յետ գնաց, էլի եկաւ իր նախկին տեղը, մի քանի անգամ գօտկից գուրս քաշեց կայնի, էլի շտապով տեղաւորեց: Բայց նշաններից երևում էր, որ նա մի վճռական և առնուգդելի բան անելու վրայ է. մէկ էլ յանկարծ նա առաջ անցաւ դէպի Պետօի գլխավերեւը, թափով գուրս քաշեց գօտկից կայնի, երկու ձեռքով բարձրացրեց օդի մէջ, ճօճեց և ահագին թափով լընջընում էր Պետօի գլխին, երբ մի ձեռք խուարի մէջ ուժեղ կերպով ըռնեց նրա գաստակը... Գոպէն էր, որ հէնց նոյն վայրկենին վրայ հասաւ: Ասօի ձեռքերը քաշ ընկան թուրացածի պէս, նա հեռում էր, դէմքը կատաղի ու այլանդակ:

— Վերջացրիք, հասն, ատաց Գոպէն առհարկի սառնարխնութեամբ, էդ լաւ է, զօրանաք, մենակ ինչ օր պէտք է քաշէի: Չեմ էլ հասկանում, թէ ինչպէս է պատահել, որ թումբը քանդուել է, յիցերը նոր էին, հաստատուն. հը, ինչ կ'ատես, Ասօ:

Ասօն առանց պատասխանի դցեց կայնի և վախաւ կորաւ խուարի մէջ:

—Եկ՛սր, Գոպէ ամի, ասաց Պետօն՝ գլուխը բարձր-
բացնելով. — հն, պրծանք, զոռ աշխատանք էր, հոգիներս
հանեց, էնպէս չէ՞, Ասօ:

—Ասօն գնաց ջրաղաց:

—Ի՞նչ շուտ, տարօրինակ է. գիտես ինչ, Գոպէ ամի,
չարունակեց Պետօն, երբ նրանք ճանապարհ ընկան.
—Ես վախենում եմ, որ Ասօին մի վատ բան պատահի,
նա կատարեալ գիժ է, ինչ անում է, գժի պէս է անում.
Երկու անգամ քիչ մնաց ճիւղերով ինձ ջրի մէջ
գլորէր. խօսելիս էլ ձայնը գողգողում էր, շունչը բռնում,
հեռում էր. ուղիղն ասած՝ գիշեր ժամանակ մութ
տեղում լաւ չէ Ասօի պէս ընկեր ունենալ, տնաչէնը
ընկնաւորի նման է, իստակ ընկնաւոր:

—Հն, տարօրինակ է, ասաց Գոպէն մտազբաղ ու
լռեց, պարզ էր, որ նրան սաստիկ տանջում էր մի միտք,
նա շճածի պէս էր, չէ՞ որ նա հազիւ փրկեց Պետօին,
մի վայրկեան ուշ հասնէր, Ասօն նրա գլուխը կացնով
ջախջախած կը լինէր: — Տէ՛ր Աստուած, մտածում էր
ծերունին, ինչ էր լինելու, ինչո՞ւ էր ուղում նա ոճը-
բագործ գառնալ:

—Գիտես, չարունակեց Պետօն, նրան չարք է պատահել,
հն, անպատճառ չարքի բան է, ես վախենում էի
գլուխս բարձրացնել և նրան նայել, սարսափելի էր,
հեռոցը լսում էի, կ'ասես գեւերը խեղդում էին, լաւ որ
եկար:

—Հն, լաւ որ եկայ... սիրտս ասաց՝ մէկ վերկաց,
գնն, տես՝ տղերքն ինչ են անում, և վերկացայ, շօշա-
փելով, խարխափելով եկայ, մութ տեղը աչքերս լաւ չին
տեսնում, գէ քանի՛ տարեկան եմ, հն, բայց էլի լաւ
որ եկայ, փնռք Քեղ, Աստուած, լաւ որ եկայ...

Հասան ջրաղացին, Ասօն չը կար:

—Էլի չը կայ, ասաց Պետօն:

—Հա չը կայ, տեսնես՝ ո՞ւր գնաց:

—Աստուած ազատէ չարքից:

—Թո՛ղ Աստուած ազատէ:

Նրանք ներս մտան և անկարող էին լսել հեռաւոր ծառերի տակից լսուող հեծկլտանքները. Ասօն երեսի վրայ ընկած, կուրծքը չանգուում էր ու հեծեծում: Իր մըտադրած, անյաջող սծիրը այժմ սոսկումով բռնել էր նրան, նա դողում էր նոյնիսկ իր չիրագործուած յանցանքի մեծութիւնից, սիրտն այրում էր, և նա լուռ խաւարի մէջ մեն մենակ լալիս էր, լալիս էր իր անկումը, իր ամօթը, անիծում էր այն անմիտ, անհեթեթ ոճրբի միտքը:

— Ասօ, Ասօ:

Գոպէն էր, ջրաղացում համբերել չը կարողացաւ, դուրս եկաւ, և այս ու այն կողմն ընկած՝ փնդրում էր Ասօին, կանչում էր բարձրաձայն. բայց նա լուռ էր:

— Ասօ:

Գոպէն առաջացաւ՝ մթութեան մէջ խարխափելով և աննկատելի կերպով Ասօի գլխավերևը կանգնեց:

— Ասօ, ինչո՞ւ ես այստեղ, որդի:

— Հեռո՞ւ, հեռո՞ւ ինձանից, ամի Գոպէ, ես ոճրագործ եմ, ես մարդասպան եմ:

— Թո՞ղ այդ, որդի, վեր կաց ջրաղացը գնանք, դուրսը խոնաւ է:

— Օ՞, ես քո շեմքը կը պղծեմ, ինչ էի անում և ինչո՞ւ. տո՛ւր ինձ մի դանակ, Գոպէ ամի. թո՞ղ, որ կուրծքս պատռեմ և այս անիծուած սիրտս դուրս հանեմ, շներին դցեմ: Վառեց, վառեց ինձ, ես մեռնում եմ:

Ասօն թաւալւում էր գետնին, գալարւում էր վերաւոր օձի պէս:

Գոպէն կռացաւ, հօր պէս գրկեց, բարձրացրեց նւրան ու մեղմութեամբ խօսում էր հետը՝ հանգստացընելու համար. ի զո՞ւր:

— Ես ոճրագործ եմ, կրկնում էր Ասօն. — լոյսի առաջ քեզ նայել, նրան տեսնել չեմ կարող, թո՞ղ ինձ, ամի, չարն իմ ոտքին կապուած է: Եւ նա դուրս ընկաւ ծերունու ձեռքից ու հեռացաւ շտապով:

— Ասօ, Ասօ:

—Ես ոճրագործ եմ, հեռու ինձանից...

Գողեն կանգնած՝ նայում էր խաւարի մէջ երկար-
երկար, ապա աչքերը սրբեց ու յետ դարձաւ ջրաղաց:

Ա. Ա. ՀԱՐՈՆԵԱՆ

(Յը շարունակուի)

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

*
* #

Ես ձեզ ասում եմ,—կը դայ Ոգու սով,
Եւ դճւք կը քաղցէք ճոխ սեղանի մօտ.
Կընկնէք մուրալու յափրած սրկօրով
Հըրեղէն խօսքի, վեհ խօսքի կարօտ:

Լրբենի ծաղրով արհամարհեցիք
Ոգու վառ զեզմունք—միտք ու երազանք,
Նիւթի տաճարում արբած պարեցիք՝
Մտուացած անմահ անհունի տենչանք.

Դճւք, որ հեղնեցիք այժն ստեղծադարձ,
Չեր նիւթի հանդէպ կը դայ Ոգու սով.
Եւ մուրացիլի պէս փշրանքի համար
Ծարաւ ու նօթի կ'անցնէք ծովէ ծով...

Ա. ԻՍՍ.ՀԱԿԵԱՆ

* *
*

Ախ, իմ անուշ ծաղիկները
Գարունքի հեռ գնացին,
Ախ, իմ անուշ ծաղիկները
Գարունքի հեռ գնացին:

Նրանց հեռքից այսուհետև
Ել ոչ մի «անի» չի հասնի,
Եւ ինչ ծաղիկ նոր գարունքին
Տրտում աչքը կը շոյի:

Կ'ասես բոլոր ուրախութիւն
Նրանք սրտէս քաղեցին,
Կ'ասես բոլոր ուրախութիւն
Հետներն առան գնացին:

Դ. ԴԵՄԻՐՉԵԱՆ

Ա Ր Շ Ա Լ Ո Ւ Ս Ի Ն *)

Վէպ յունաց կեանքից

Ե. ԲԵՆՍՕՆԻ

ՄԱՍԵ ԵՐԿՐՈՐԿ

I

Օգոստոս ամսից սկսած Նիկիոլայոսը չրջեց Պելոպոնէսի բոլոր կողմերը, և ամեն տեղ զրկարաց ընդունում էին նրան, որպէս յունական շարժման բոլորից ընդունուած առաջնորդներից մէկին: Թիւրքերը, սրոնք վաղուց արգէն կասկածում էին նրա վրայ և գիտէին, որ ապստամբութիւն է պատրաստուում, իրանց սովորական անհոգութիւնից ոչ մի միջոց ձեռք չէին առնում մէկի կամ միւսի գէմ և յոյս ունէին, թէ նրա մահուան լուրը կը չիջնցնէ երկրին տիրող յեղափոխական կրակը: Բայց յոյները, ինչպէս Հերմանը ձշտօրէն նկատել էր, գիտէին, որ ճիկողայոսն այն մարդկանցից չէր, սրոնք մեռնում են», և նրա մահուան լուրը տարածուելուն նպաստող թիւրքերի խորամանկութիւնը իրանց իսկ գէմ դարձաւ: Դա միջոց տուաւ Նիկիոլայոսին աւելի ազատ կերպով չրջել այս ու այն կողմ, և հոկտեմբերին Կորնթոս գնալով, նա անձամբ մի փոքրիկ փայտէ խաչի վրայ գրեց իր անունն ու հետեւեալ մակագրութիւնը. «Հնչեացի ձայն փողոյ, և մեռեալք յարիցեն»: Մթնշաղին նա գնաց տունաց գերեզմանատունը և այդ նշանաւոր յուշարձանը ցցեց մի թարմ չիրմի վրայ: Երբ այդ բանն իմացուեց, յոյները ծիծաղում էին, իսկ թիւրքերը չը հասկացան այդ յեղնութեան բուն ի-

*) Տես «Մուրճ» № 2.

մասամբ: Սակայն նրանք չէին համարձակուում խանդարել յունաց գերեզմանատան անդրբութիւնը, որովհետեւ մեռելներին նրանք յարգանքով էին վերաբերում, մինչդեռ կենդանի մարդկանց մի գրոշի արժէք էլ չէին տալիս, և այդ պատճառով մի տարու չափ այդ տարօրինակ խաչը մնաց կենդանի մարդու շիրմի վրայ:

Դեկտեմբերն ու յունուարի կէսը Նիկողայոսն անցկացրեց իր ազգականների մէջ, Սպարապէցի գէպի հարստ և այնտեղից վախաւ Նաւալիա, երբ իմացաւ, որ իր Մահում լինելը յայտնուել է թիւրքերին, և Տրիպոլիսի նահանգապետ Մահմէդ-Սալիկին այդ գաւառի յոյն բէշից, Պետրոս Մարտիրոսից, որն աւելի յայտնի էր Պետրօ-բէշ անունով, պահանջում էր, որ Նիկողայոսն, իբրև հին աւագակ, իրան յանձնուի: Պետրօ-բէշը Հերմանի նման մեծ դիրք ունէր, և թիւրքերն բոս երեոյթին չէին կասկածում, թէ նրանք ազգային շարժման գլուխն էին կանգնած:

Իհարկէ, մի այգալիտի թուղթ ստանալով, նա սկսեց Նիկողայոսի հետ խորհրդակցել, թէ ինչ անեն: Նիկողայոսը կենթադրում էր, թէ հարկաւոր է Մահմէդ-Սալիկին պաշտօնապէս յայտնել իր մահն ու թաղումը Կորնթոսի գերեզմանատանը, որտեղ շիրմի վրայ խաչ կայ: Բայց Պետրօ-բէշն ուրիշ կարծիքի էր: Նրա ասելով, քանի դեռ թիւրքերը չէին կասկածում, թէ կնքը մասնակից է շարժմանը, մեծ օգուտ կարող էր տալ ապստամբութեան դործին և կարծում էր, որ աւելի լաւ է Նիկողայոսը մի այնպիսի անդ հեռանայ, որտեղ նրան չեն որոնիլ, իսկ ինքը կ'սկսէ պաշտօնապէս որոնել նրան՝ ցոյց տալու համար իր անձնութեանը գէպի թիւրք կառավարութիւնը: Չէ որ Նաւալիայում Նիկողայոսը մի փեռայ ունէր, և դժուար էր դրանից աւելի յարմար ապաստան գտնել, որովհետեւ առհասարակ մարդիկ, և մանաւանդ թիւրքերը, երբէք իրանց քթերի տակ խուզարկութիւն չեն անում: Բայց նրանց մի անձնաորութիւն էր հարկաւոր, որի վրայ կարելի լինէր յոյս դնել՝ միտեանց մէջ մշտական յարաբերութիւն պահպանելու: Համարձակուելով Նաւալիայում ապրող իր քնորդու մասին, և Պետրօ-բէշը խորհուրդ տուաւ նրան իսկոյն ճանապարհ ընկնել Նաւալիա, իսկ քնորդուն ուղարկել Մայնա, որտեղ նա շատ օգտակար կարող էր լինել:

Նիկողայոսը համաձայնուեց, և Պետրօ-բէշն իսկոյն մի շատ սիրալիր նամակ գրեց Մահմէդ-Սալիկին, որի մէջ յայտնելով, որ իր տունը միկնոյնն է թէ Մահմէդ-Սալիկի տունն է, և ինքը պատիւ է համարում կատարել նրա հրամանները, նա հաղորդեց, թէ լուրեր կն չըջում, որ վերջին ժամանակները Նիկողա-

յոսր Մայնունն է կրած: Մակայն, աւելացրեց նա, որովհետեւ միւս կողմից ասում էին, թէ Նիկողայոսը մօտ օրերս թաղուած է Կորնթոսում, ուստի հաւանական է, որ այդ լուրերը սուս են: յամենայն դէպս քսան յրտես կ'ուղարկի բոլոր կողմերը, որոնք, իհարէ, կը բռնեն այդ գովտային շանք, եթէ կենդանի է, և Տրիպօլիս կը բերեն:

Պետրո-բէյը Մաւրոմիխալիների այն բազմանդամ և զօրեղ տոհմի զլուինն էր, որն աղային աստատուութեան ծուծն էր կազմում: Թէպէտ հոգով յոյն, նա Մայնի շրջանի նահանգապետն էր և այդ պաշտօնն այն պատճառով էր ստացել սուլթանից, որ Մաւրոմիխալիների տոհմը վերջին երեք թիւրք նահանգապետներին թոյլ չէր տուել մի ամսից աւելի մնալ իրանց պաշտօնում: Նրա հարազատ եղբայրներն ու հօրեղբորորդիները շրջակայ գիւղական հասարակութիւնների տանուաւէրներն ու կալուածատէրերն էին. Նիկողայոսի բնաանեքի նման նրանց արեւնն էլ երբեք թիւրքականի հետ չէր խառնուած, և որովհետեւ Նիկողայոսը նրանց աղջկանն էր, ուստի և նրանք ջերմ կերպով հաղորդակից էին նրա գծրազբուլեանը և վրէժխնդրութեան ծարաւին: Այդ պատճառով երբ Պետրո-բէյը կանչեց իր փեսայ Դիմիարիոսին և Մահմէդ-Մալիկի նամակը բերող երեք զեսպանների մօտ յայտնեց, թէ իրանց անիծեալ ազգական Նիկողայոս Վիդալիսին թիւրքերը որոնում են, Դիմիարիոսը եր ահանջներին չը հաւատաց, իսկ թիւրքերը ապշեցին, թէպէտ նրանց շատ հաճելի թւացին այդ խօսքերը: Մի ժամ անցած նրանք աւելի մեծ բաւականութեամբ ական, թէ ինչպէս քսան ձիււոր սուրհանդակներ արշաւեցին դէպի հարաւ, հրաման ստանալով, ինչ էլ որ լինի, գտնել Նիկողայոսին: Միևնոյն երեկոյն նրանք ինքները վերադարձան Տրիպօլիս՝ իրանց հետ ամենիով և՛ Պետրո-բէյի պատասխանը, որը հրամուշտաւ լիս՝ կուշտ խմացրել էր նրանց:

Թիւրքերի գնալուց յետոյ Պետրո-բէյը Նիկողայոսի հետ ընթրեց: Որոշուեց, որ այդ իսկ գիշերը նա դուրս գայ Պանիցայից, որպէսզի հետեւեալ առաւօտ Գինախա հասնի:

— Ցաւում եմ, բարեկրնմ, — ասաց Պետրո-բէյը, — որ չեմ կարող ինքս ուղեկցել քեզ կամ մեր աղջկաններից մէկին ուղարկել քեզ հետ, որովհետեւ դա անխոհեմութիւն կը լինի:

— Ինձ ո՛չ որ հարկաւոր չէ, — պատասխանեց Նիկողայոսը, — երկու կամ երեք օրում ես նաւալիս կը հասնեմ և իսկոյն քեզ մօտ կ'ուղարկեմ Միտոսին: Դու կարող ես լիովին հաւատ ընծայել նրան: Կարծեմ, պատմել եմ քեզ, թէ ինչպիսի փորձի ենթարկեցինք նրան:

—Այն նա մեզ շատ օգտակար կը լինի, որովհետև ժամանակ է ջրաղացները դործի դնել, իսկ մի այգալիսի տղայ ազատ, առանց կասկած զարթեցնելու կարող է շրջել ամբողջ երկրի մէջ: Դէհ, թանկազին ազգական, ես խախտում եմ սովորութիւնս և խմում քո կենաց ու վրէժխնդրութեանդ շուտափոյթ իրադործման համար:

Նրանք բաժակներն իրար խփեցին, գատարկեցին և նորից լցրին գինով:

—Ես չեմ մոռանալ կրածս զրկանքները, թիւրքերն էլ ինձ չեն մոռանալ,—ասաց Նիկողայոսը,—հատիկն արդէն հասկ է գցում, և հունձը շատ առատ կը լինի: Քս կենացը, ազգականն, և այն անձնաւորութեան յիշատակի համար, որին մենք երկուսս էլ չենք մոռանում:

Լուսթիւն տիրեց, որովհետև Պետրօ-բէյը գիտէր, որ նա իր կնոջ մասին էր ասում:

Երբ նրանք սուրճ խմեցին, Նիկողայոսի ձին բերին դրան առաջ: Պետրօ-բէյի հետ նա գնաց մինչև գիւղի ծայրը, և այստեղ նրանք բաժանուեցին:

—Ես երեւի մինչև փառաւոր խնջոյքը քեզ չեմ տեսնիլ,— առաց Նիկողայոսը.—այն ժամանակ մենք լաւ կը կշտանանք: Մնաս բարև՝, ազգական:

Նրանք համբուրուեցին, և Նիկողայոսը ճանապարհ ընկաւ:

Մի շարժից յետոյ Պանիցա հասաւ Միտոսը, որն անվրտանդ անցել էր Տիրպոլիսից ու Սպարապից: Նիկողայոսի ասածին համաձայն Տրիպոլիսում նա իջևանեց մի յունական հիւրանոցում և լսողութիւնը սրեց, որի շնորհիւ քիչ-շատ բան իմացաւ: Պատահաբար նա հանդիպեց Պետրօ-բէյի մօտ ուղարկուած թիւրք զեսպաններից մէկին, որը պատմեց, թէ Մահմէդ-Սայիկը շատ գոհ էր մնացել Պետրօ-բէյի նամակից և որպէս յուսալի մարդու, նրան էր յանձնել Նիկողայոսի ամբողջ դործը: Բացի դրանից նրա ականջին հասաւ, որ ուրիմասնէրի *) և եպիսկոպոսների ժողովը, որ սովորաբար ապրելին էր կայանում, մարտին պէտք է լինի, նմանապէս և այն, որ քաղաքի պարսպներն շտապով ամրացնում են:

Երկրորդ գիշերը Միտոսն Սպարտայում անցկացրեց, երրորդը—ծովափնեայ Մարաինիղի քաղաքում, իսկ չորրորդ օրուայ կէսօրին նա մօտեցաւ Պանիցային: Նրա ձին յոյնել էր, և երիտասարդը վայր ցատկելով, սանձից բռնած քաշեց սարից դէպի վերև, որտեղ տեղաւորուած էր գիւղը:

*) Աւագ արքեպիսկոպոսների:

Այդ միջոցին Պետրո-բէյը հասած էր սրճարանի առաջ և գեղեցկագէմ երիտասարդին տեսնելով, ու շի-ուչով նայեց նրան:

—Այս նա է, — ասաց Պետրո-բէյը, զառնալով զէպի իր մօտ հասած երիտասարդը. — Նիկողայոսը սխալուած չէ իր ըն-արբութեամբ:

Եւ նրանք գնացին Միտսոսի կտից, որը նրանց տեսնե-լով՝ կանգ առաւ:

—Ո՞րտեղ է ապրում Պետրոս Մաւրումիսալին, — հարցը-րեց նա:

—Ի՞նչ պէտք է անես նրան, — պատասխանեց Պետրո-բէյը: Միտսոսը սառն կերպով նայեց իրան անձանօթ այդ մար-դուն և ուսերը թոթուեց:

—Գիտես, բարեկամ, — ասաց նա, — ես ինձ համար առան-ձին գործ ունեմ, դու քեզ համար: Եթէ ինձ ասես, թէ Պե-տրոս Մաւրումիսալին որտեղ է մնում, ես չնորհակալ կը լինեմ, իսկ եթէ չէ, ուրիշից կը հարցնեմ այդ:

Պետրո-բէյը ծիծաղեց:

—Դու, ի հարկէ, Միտսոսն ես, — ասաց նա. — ուրախ սըր-տով ողջունում եմ քեզ, թանկագին ազգական:

—Շատ ցաւում եմ, որ քեզ հետ այդպէս կապիտ վարուեցի. բայց չէ որ ես չէի կարող հասկանալ, թէ դու ո՞վ ես, — բացա-ղանչեց Միտսոսը: — Ես Նաւպիայից եմ գալիս: Նիկողայոս՝ մօր-կորայրս անվնաս մեզ մօտ հասաւ:

—Այդ լաւ է, և լաւ է նոյնպէս, որ դու էլ առողջ ու անվը-նաս այստեղ հասար: Սա իմ Նանի որդին է և քո ազգականը: Նանի, բռնիք սրա ձին:

—Շնորհակալ եմ, — պատասխանեց Միտսոսը, երկմտօրէն Նանիին նայելով. — սակայն ես ինքս ձիս գտմը կը տանեմ, դուք միայն յոյց տուէք տեղը: Հայրս հրամայել է երբէք ո՛չ ոքի ձիս չը հաւատալ: Դրա համար Տրիպօլիսում ինձ վրայ ծիծաղում էին:

—Միթէ: Ես երբէք այդ բանի համար չէի ծիծաղիլ քեզ վրայ, — նկատեց Պետրո-բէյը. — իսկ դու ծաղրողների հետ ինչ-պէս վարուեցիր:

—Մէկին գետնին տապալեցի, իսկ միւսներն այլեւ չէին ծիծաղում:

—Մի վախենար, տուր ձիդ Նանիին, զաւակս:

Միտսոսը հնազանդուեց, և նրանք ներս մտան տուն, որ-տեղ արդէն սեղանը պատրաստուած էր: Պետրո-բէյի համար ճաշն ամենակարևոր բաներից մէկն էր, և նա երիտասարդներին սը-րահում թողնելով, գնաց խոհանոց նայելու, որ խոհարարը կո-ձին չը փչացնէ:

—Պէտք է միշտ ինքս նայեմ,—բացատրեց նա վերադառնալիս.—կարող են երևակայել, անցեալ տնդամին այդ յիմար խոհարարը կոծին սխտորով լցրել էր—Ինչ սարսափելի բան...

Եանին ծիծաղեց, իսկ Պետրո-բէյն աւելացրեց.

—Հն, սրգիս էլ լնւ. է,—նա կարաւր փայտմորիկից ջուկել չէ կարող և զինին զեռ չը վերջացրած՝ սխտում է ծխել: Դէհ, տղերք, նստեցէք: Մենք յետոյ շատ կը խօսենք: Է՛յ, յիմար մորեխ, բեր,—գոչեց նա՝ խոհանոցի դուռը բանալով:

Ճաշի փամանակ Պետրո-բէյը շատ քիչ էր խօսում, հետևելով այն օրէնքին, թէ խօսակցութիւնն անորժակը փչացնում է: Նա կամայ էր ուտում, իւրարտնչիւր կտոր համտես անելով, իսկ երբ կոծին բերին, նա լուրջ, հոգատար գէմք ընդունեց, կարծես վախենում էր, թէ մի գուցէ կաշին չը զրծղրծայ:

—Ոչինչ,—ասաց նա ծամելով,—կաշին լաւ է զրծղրծում, թէպէտ աւելի լաւ էլ կարելի էր պատրաստել:

Միտասն արտասովոր անորժակիցց տուաւ և զբանով Եանիի հաւանութեանն արժանացաւ:

—Դու լաւ մարդ ես, սրովհետեւ լաւ ես ուտում,—ասաց նա:

Ճաշից յետոյ նրանք երեքով նստեցին սրահում:

—Քս Նիկողայոս մօրեղբայրն ասաց,—արտասանեց Պետրո-բէյը,—որ ես կարող եմ կուրօրէն հաւատալ քեզ, և ես-բազմաթիւ այնպիսի բաներ ունեմ քեզ հազարդելու, որ եթէ զու այն թիւ բքերին յայտնես, իմ և ուրիշ շատերի կորստեան պատճառ կը դառնաս:

—Դրանց թւում ե՛ իմ, չը մոռանաս այս,—աւելացրեց Եանին, ծղօտեաց գօշակի վրայ ձգուելով:

Բայց Միտասը ոչինչ չը պատասխանեց, այլ միայն ուշիուելով նայեց Պետրո-բէյին, որը շարունակեց.

—Այլևս երկար չենք կարող համբերել զե-թիւրքերի լծի տակ—նրանք կ'անհետանան զարնանային ձեան նման: Դու և Եանին պարտաւոր էք զիւզից-գիւղ չըջնել և մի քանի բան հազարդել յայտնի անձնաւորութիւններին: Ձեր առաջին ճանապարհորդութիւնը, որը վաղը կը սկսուի, կը տե՛ կրկու շաբաթ, և զուք այդ միջոցին վառ կը կերակրուէք, բայց զուցէ, այդ ձեզ համար միևնոյն է: Գործը վերջացնելուց յետոյ, զուք կը վերադառնաք: Միտոգ պահիր, Միտաս, որ զուք երկուսով պէտք է անէք այն, ինչ որ մեզանից ոչ ոք ընդունակ չէ անելու, որովհետեւ երկու տղայ նարինջներով բեռնաւորած ջորիներով ամեն տեղ կարող են մուտք գործել: Առաջին անգամ Եանին կ'ուղեկցէ քեզ, որովհետեւ տեղադրութիւնը նրան լաւ ծանօթ է,

բայց յետոյ իւրաքանչիւրը ձեզանից առանձին յանձնարարութիւն կը ստանայ: Դուք կը մտնէք ձեզ մասնացոյց եղած անձրնաւորութիւններէ տները և կը հարցնէք. «Հատիկ աղում էք գուք»: Ձեզ կը պատասխանեն. «Քաղցածներէ համար, թէ թիւրքերի»: Այն ժամանակ կ'աւէք. «Ան հատիկ թիւրքերի համար, եթէ դեռ չէք սկսել, ուրեմն սկսեցէք և եռանդուն կերպով»:

—Իսկ ինչ է նշանակում այդ,—հարցրեց Միտսոսը:

Պետրո-Ռէյը ժպտաց, դատկի ետեից դուրս հանեց վառօղանը, ձեռքի վրայ մի քիչ վառօղ աւառ և օդի մէջ շող տալով՝ ասաց.

—Արանչելի սև հատիկ է թիւրքերի համար:

—Ա՛յ, այժմ հասկանում եմ,—աչքերը փայլեցնելով ասաց Միտսոսը:

—Առաջին անգամ այդ բառական կը լինի: Եանին քեզ հետ կը գայ, և զու ոչ մի դժուարութեան չես հանդիպիլ: Յետոյ դու արդէն միայնակ կը ճանապարհորդես, ի միջի այլոց կ'այցցելես Նաւպլիա, որտեղ կը տեսնես Նիկողայոսին, իսկ Եանին կը գնայ Տրիպօլիս:

—Սադանան տանէր այդ Տրիպօլիսը,—բացազանչեց Եանին:

—Իսկ ինչու համար ես ուղարկում եմ Եանին Տրիպօլիս,—հարցրեց Միտսոսը:

—Գուցէ զործն առանց զբան էլ գլուխ գայ. իսկ եթէ նա գնաց Տրիպօլիս, այնտեղ իբրև պատանոց կը մնայ ցոյց տալու համար, որ ես հաւատարիմ եմ թիւրքիային: Աչքերդ այդպէս մի չօր, Միտսոս, նրան չեն սպանիլ, որովհետև ես նրա վերադառնալուց յետոյ միայն կը սկսեմ վատ վերաբերուել նրանց: Բայց, ճշմարիտ, ես մինչև անգամ ցաւում եմ, որ նրա տեղ չեմ կարող գնալ.—Մահմէդ-Սալիկը մի հրաշալի խոհարար ունի: Յամենայն դէպս Եանիի Տրիպօլիս դնալը կախուած է այն բանից, թէ արդեօք թիւրքերը կը կասկածեն ինձ վրայ, թէ ոչ բայց տես, Միտսոս, այդ մասին ոչ սքի մի խօսք անգամ չ'ասես: Առհասարակ իմ և Նիկողայոսի վերաբերմամբ ոչ մի հարցի մի պատասխանիր: Յիշիր նոյնպէս, որ քո յանձնարարութիւնն աւարտելուց յետոյ գիւղում չը մնաս գիշերելու, այլ անտառներում քնիր. գիշերները ճանապարհորդիր, ցերեկները մտիր գիւղ, որպէս մի հասարակ չինական, վերջապէս միշտ պատրաստ եղիր թագչելու զօրեղ թշնամուց և կուելու քեզ հաւասարների հետ: Ես կարծում եմ, որ դու լաւ կը համարէիր կուել բոլորի հետ, բայց դա անխոհեմութիւն է: Առհասարակ նախ և աստ՛ջ աշխատիր խոյս տալ ամեն տեսակ թշնամուց և

ծայրայեղ զէպրում միայն կուիր: Գործի համար անհամեմատ օգտաւէտ է, եթէ քո ճանապարհորդութիւնները խաղաղ անցնեն:

—Իսկ ես լաւ կոխն աւելի դերպղաս եմ համարում,— ժպտալով ասաց Միտոսը:

—Ես դրանում համոզուած եմ, նկատեց Եանին,—բայց չեմ հասկա՛ում, հայր, թէ դու ինչնու կուի եւ փախուստ տալու մասին ես խօսում. չէ՞ որ դու մեզ բարեկամ մարդկանց մօտ ես ուղարկում, և մեր գործը կը լինի միայն յայտնել նրանց քո յանձնարարութիւնն ու յետոյ ճանապարհը շարունակել:

—Տայ Աստուած, որ ամեն ինչ խաղաղ անցնի,—պատասխանեց Պետրօ-բէյը.—բայց չէ՞ որ մարդիկ, որոնց մենք բարեկամ ենք համարում, կարող են դաւաճան դուրս գալ: Սակայն բաւական է: Ես պէտք է Դիմիտրիոսի մօտ գնամ, իսկ դու, Եանի, Միտոսին ծանօթացրո՛ւ. մեր միւս ազգականների հետ: Երեկոցեան մենք գեռ էլի կը խօսենք:

Առանձին մնալով, երիտասարդները շուտով մտերմացան: Եանին գեղեցկադէմ, կազմուածքով բարձրահասակ յոյն էր: Նրբա շարժումները զարմանալի կերպով արագ ու ճարպիկ էին, իսկ ուրախ, բարեօրոտ ժպտը շարունակ խաղում էր նրա դէմքի վրայ:

—Ես չատ ուրախ եմ, որ մենք միասին պէտք է ճանապարհորդենք,—ասաց Միտոսը, մինչդեռ Եանին իրան և հիւրի համար ծխաքարչ էր պատրաստում:

—Ես էլ նմանապէս: Միասին դորձելն ու որսանելն աւելի հաճելի է, քան թէ մենակ. տհաճութիւնները երկու անգամ պակաս, իսկ բաւականութիւնները նոյն չափով աւելի կը թւան: Փորձիր այս ծխախոտը: Սա թիւրքական է և մերիսից չափազանց լաւը: Հայրս չէ ծխում, և երբ թիւրքերը նրան ծխախոտ են ուղարկում նուէր, ինձ է բաժին ընկնում: Թիւրքական ծրխախոտ դու երբէք չես ծխել:

—Ծխել եմ մօտ օրերս,—պատասխանեց Միտոսը և կարմրեց, մտաբերելով, թէ նւմնից էր ստացել այդ ծխախոտը,—և դա ինձ շատ դուր եկաւ: Բայց դու աւելի մանրամասնօրէն պատմիր ինձ մեր առաջիկայ ճանապարհորդութեան մասին:

—Մենք աղքատ զիւղացու շորեր հագած ճանապարհ կ'ընկնենք պառաւ ջորիներով, բայց հայրս մեզ մեզ մի-մի երկփողանի հրացան կը տայ, իսկ ջորիները նարնջով կը բեռնաւորէ: Գնանք տան միւս կողմը,—այնտեղից երևում է այն միջնավայրը, որով մենք գնալու ենք մեր ճանապարհորդութեան առաջին օրը:

Պանիցան պատասպարուած էր Տայգէտի զառիվայրերի վրայ, որի գազաթներին լերկ ապառաժներ էին երևում: Տասնև-վեց մզոն գէպի հիւսիս բարձրանում էր նրանցից ամենաբարձրը—ձիւնապառ Իլիաս լեռը: Պանիցայից մի նեղ շաւիղ ուր-մուրը գնում էր հինգ կամ վեց մզոն տարածութեամբ գառիվայ-րի եզերքով մինչև Կալիվիա գիւղը, որտեղ Յանիի ասելով, նը-րանք առաջին անգամ պէտք է դադար առնէին: Յետոյ շաւիղը կարում էր կիրճը և միւս կողմից իջնում գէպի ծովը: Մի ամ-բողջ օր կը հարկաւորուէր Պլացա հասնելու համար, որտեղ պէտք է գիշերէին:

—Դու կը տեսնես, Միտսոն, թէ ինչպիսի փառաւոր զը-սանք կը լինի դա,—բացադանչեց Յանին այս բոլոր բայա-տորութիւններէն յետոյ:

Բայց Միտսոն ակամայ յիշեց Նապլիան և հառաչեց, թէպէտ և Պետրօ-բէյը խոստացել էր, որ նա չուտով այնտեղ կը վերադառնայ:

Առհասարակ նա շատ դոճ էր, որ իր ճանապարհը միայ-նակ չէր շարունակելու, այլ իրան հասակակից մի երիտասարդի հետ, այնպէս որ միջոց չի ունենալ ամբողջովին անձնատուր լինելու գեղեցիկ աղջկանից անջատուելու. ախուր մտածմունք-ներին: Առաջին օրը, երբ նա միայնակ էր ճանապարհորդում, այդ մտածմունքներն այնպէս էին ճնշում նրան, որ շատ ան-դամ ուզում էր վերադառնալ: Միայն այն միտքը, թէ ինքը ոչ միայն մի սիրահարուած երիտասարդ էր, այլ և հայրենիքի անձնուէր գտաւոր, արգելում էր նրան: Իսկ այժմ, երբ պատ-րաստուում էր շարունակել ճանապարհը մի հաճելի ընկերոջ հետ, նա արդէն կեանքի վրայ այնպէս ախուր հայեացքով չէր նա-յում: Իրաւ, երբ հետեւեալ առաւօտ Միտսոն ու Յանին դուրս եկան Պանիցայից, առաջինը թեթեացած սրտով և անկեղծ ու-րախութեամբ գինեկործնների երգն էր շուացնում:

II

Առաւօտը թարմ էր և պարզ: Գիշերը քիչ ցուրտ էր ա-րել, և օդը չափազանց ախորժելի էր: Միտսոն ու Յանին գիւ-ղական կոպիտ շորերով կամայ-կամաց գնում էին նարինջնե-րով բեռնաւորուած ջորիների հետից, որոնք գժուարութեամբ էին քայլերը փոխում: Այդ պատճառով երեք ժամուայ մէջ նը-րանք հազիւ կարողացան առաջին գիւղը հասնել, որտեղ պէտք է Պետրօ-բէյի յանձնարարութիւնը հազարգէին: Յանին արդէն

մի քանի անգամ եղել էր այստեղ և ուղղակի գիմեց զէպի ջը-
րազացի մօտ շինուած մի տուն:

Նրանք բաղնային փակ դուռը, և սկզբում մի շան կատա-
ղի հաջոց լսուեց, իսկ յետոյ փողոցը նայող պատշգամբի վրայ
երևաց մի կին և հարցրեց, թէ ինչ են ուզում:

—Մենք Գէորգի-Գրեգորիի մօտ ենք եկել,—պատասխա-
նեց Եանին.—միթէ ինձ չես ճանաչու:

Կինը մի փայտի կտորով խփեց շանը, որը տնայ և յե-
տոյ կարեց հաջոցը:

—Դու Եանի Մարտիրոսալին ես,—հարցրեց նա:

—Իհարկէ:

Նա տուն մտաւ, իսկ մի բոսիկ յետոյ գալիս՝ լսուեցին
նրա սանաձայնները, և դուռը բացուեց: Շունը նախկին կատաղի
հաջոցով յարձակուեց Միաստի վրայ, բայց սա մտրակը թա-
փահարեց, և շունն իսկոյն անհետացաւ:

—Ներս մախր, Եանի,—ասաց կինը,—ինչո՞ւ ես եկել:

—Պետրօ-բէյի քսամուսնուն մի յանձնարարութիւն ունեմ:

—Իսկ այս ինչ հսկայ է,—հարցրեց Գրեգորիի կինը, Միու-
ստին մասնացոյց անելով.—դու սրան տանում ես տճնավա-
ճառին ցոյց սալու համար:

Եանին ծիծաղեց:

—Ո՛չ, սա իմ ազգականն է: Բայց մենք շտապում ենք
Ասան, թէ սրտեղ կարող ենք դանել Գէորգիին:

—Նա ջրազացունն է: Բայց այնտեղից տուն եկէք մի-մի
բաժակ գինի խմելու:

Լեռնային առուակը, որը շարժում էր ջրազացի անիւը,
հոտում էր մի նեղ, քարեայ ճանաղարհով, իսկ ջրիտղի միջով
գնում էր զէպի ջրազացի ներքը: Միաստն ու Եանին մօտեցան
ջրազացի դրանը, բայց նա փակ էր և բացուեց միայն այն ժա-
մանակ, երբ Եանին բարձրաձայն տուաւ իր անունը:

—Ի՞նչ ես ուզում, Եանի Մարտիրոսալի,—հարցրեց մի
մարդ ներսից:

—Ուզում եմ հարցնել քեզ, թէ հատիկ ազում ես:

—Քաղցածներն համար, թէ թիւրքերի:

—Ան հատիկ, թիւրքերի համար:

Դուռը բացուեց, և շեմքում երևաց մի սիխառն ծերունի,
ինձուտ զէմքով և կախ ընկած յծնքերի տակից կաակածոտու-
թեամբ նայող աչքերով: Միաստին տեսնելով, նա ուզում էր
խփել դուռը, բայց Եանին թոյլ չը տուաւ:

—Այս ո՞վ է,—հարցրեց ծերունին:

—Իմ ազգականն է, պատասխանեց Եանին.—Պետրօ-բէյի

կողմից սա էլ է ուղարկուած քեզ մօտ սև հատիկի դործով: Մի վախենար, եթէ մեզ բռնեն, ոչ մէկս էլ կախաղանից չենք ազատուիլ:

Ծերունին խփոյն հանգստացաւ և դուռը լայն բաց անելով, սիրալիր կերպով ասաց.

—Ներս մտէք երկուսդ էլ:

Ջրաղացի ներսը իլացնող աղմուկէր արիւում, բայց Գէորդին անխոր կանգնեցրեց, և երկանքները լսեցին:

—Դու հարցրիր, թէ ես արդեօք թիւրքերի համար սև հատիկ աղում եմ,—ասաց ծերունին, ուշադրութեամբ Եանիի աչքերի մէջ նայելով,—այդ է միայն իմ դործը առաւօտից մինչև կէս գիշեր: Ես պատերազմի մարդ չեմ, թնդ քո ազգականի նման հսկաները կուեն, բայց չէ որ կռիւն առանց ինձ նման մարդկանց չէ կարող զլուխ գալ: Միայն դու, Եանի, կանանց այդ մասին ոչինչ չ'ստես, թէ չէ նրանք ինձ հանդիստ չեն թողնիր: Ահա տես,—աւելացրեց նա,—թէ սրքան լաւ, սև հատիկ են պատրաստել:

Երկանքները նորից պտտեցին, և նրանց տակից մի սև փոշի սկսեց թափուել տակառի մէջ:

—Սա ամուխ է,—բացատրեց նա,—իսկ անձ և ծծումբն ու բորակը: Գիշերը ես զրանք խառնում եմ, և իւրաքանչիւր հատիկը մի թիւրք կ'ուղարկէ այն աշխարհը:

Միտստան ու Եանին շտապով հրաժեշտ տուին նրան և ջրաղացից դուրս գալով, իրանց ետևից լսեցին զբան փականքի զրխկոցը:

Կալիփիլայից նրանք իրանց ճանապարհը շարունակեցին դէպի լեառը, իսկ նրա արևմտեան լանջով մինչև Կալամատիան ծովածոցի եզրքին տարածուած դաշտավայրը: Արևմտին նրանք հասան Պլայց և, որպէս զի ցոյց տան, թէ իրանք հասարակ նարնջավաճառներ են, կանոց առան շուկայում ու սկսեցին իրանց ապրանքն առաջարկել: Յետոյ նրանք դնացին մի փոքրիկ հիւրանոց գիշերելու, և նրա այցելուների հարցերին Միտստը պատասխանում էր, թէ Սպարտայից նարինջներ են տանում և վերագոռնում են տուն, Յիմուլա: Այս բանը հարցնողներին շատ հաւանական էր թւում, և այդ պատճառով նրանք ոչ մի կասկած չը զարթեցրին:

Հետեակ օրը երիտասարդները ճանապարհը շարունակեցին եզրքի երկայնութեամբ և կէսօրին կանոց առան Պրասափոնում, որտեղ հարկաւոր էր Պետրօ-բէյի երկրորդ յանձնարարութիւնը կատարել: Նրանց դժուար չէր իրանց հարկաւոր մարդուն գտնել, քանի որ նա գիւղական հասարակութեան Մարտ, 1903:

տանուտէրն էր: Եանին ջորիների հետ ճանապարհի վրայ մնաց, իսկ Միտտոսը գնաց ցոյց տրուած այգին, որտեղ անցորդների ասելով, գտնուում էր Զարաւէնոսը: Շուտով երիտասարդը դրտաւ նրան վաղերի մէջ աշխատելիս և ուղղակի հարցրեց.

— Դու Զարաւէնոսն ես:

Այդու տէրը լուս թափահարեց գլուխը և կասկածանքով նայեց եկողին:

— Դու հատիկ ազո՞ւմ ես:

— Այո, — պատասխանեց նա, երկչոտութեամբ չորս կողմը նայելով, — բայց ինչպիսի հատիկի մասին ես ասում — քաղցածներին, թէ թիւրքերի համար:

— Թիւրքերի համար:

— Փնօք քեզ, Աստուած: Միթէ ժամը հասել է: Ասա ինձ, ո՞վ ուղարկեց քեզ: Նիկողայոսը: Ես նրան լաւ եմ ճանաչում:

— Նիկողայոսն ո՞վ է, — պատասխանեց Միտտոսը, Պետրօքէյի խորհուրդը մտաբերելով: — Ինձ յանձնարարուած է քեզ ասել, որ եթէ չես սկսել հատիկ ազալ, ուրեմն սկսիր և այն էլ չուտով: Ուրիշ ոչինչ:

Դու երևի Միտտոսն ես, — ասաց Զարաւէնոսը, ուշադիր հայեացք դրելով նրա վրայ, — Նիկողայոսն ասում էր ինձ, որ քեզ կ'ուղարկէ մեզ մօտ: Անկեղծ եղիր դէպի ինձ. ես քեզ հաւատացնում եմ, որ Նիկողայոսն իմ ամենալաւ բարեկամն է, և ես շատ կը ցանկայի իմանալ, թէ որտեղ է նա, և գործերն աջող են գնում:

— Ես չը գիտեմ, թէ դու ում մասին ես խօսում, — պատասխանեց Միտտոսը՝ գլուխը շարժելով, թէպէտ շատ ցանկանում էր հանդատացնել այդ բարի մարդուն Նիկողայոսի ասպահով վիճակի վերաբերմամբ:

Վեց օրուայ ընթացքում երիտասարդ բարեկամները ճանապարհորդում էին՝ ուղևորուելով դէպի հիւսիս երբեմն եղերքի երկայնութեամբ, երբեմն Տայգեաի լանջի վրայ բարձրանալով, որտեղ փոքրիկ մենաւար դիւղեր էին բոյն գրել: Մեծ մասամբ նրանք գիշերով էին գնում, իսկ կէսօրին մօտ մտնում էին գիւղ, գտնում իրանց հարկաւոր մարդուն, Պետրօքէյի յանձնարարութիւնը հաղորդում նրան և շարունակում ճանապարհը: Համարեա միշտ հրացայտ աչքերով էին ընդունում նրանց և ուրախութեամբ պատասխանում հաղորդած համբաւին, բայց երբեմն էլ, առանձնապէս թիւրքերին մօտիկ տեղերում, նրանք սառն ընդունելութիւն էին գտնում, իսկ մի ծերունի նրանց խօսքերը լսելով, թափահարեց գլուխը և ասաց, թէ ոչինչ չէ հասկանում: Ի հարկէ այդպիսի տեղերում նրանք մտաբերում էին

Պետրո-բէյի խորհուրդը, և որքան կարելի էր, չուտով հեռանում:

Եօթներորդ օրը նրանք հասան Կալամատա և երկու օր մնացին ազգեզ, որովհետև բացի այն, որ Պետրո-բէյի յանձնարարութիւնը պէտք է հազարդէին երեք անուանի յոյները, նրանք պարտաւոր էին նաև տեղեկութիւններ հաւաքել բերդապահ զինուորների ոյժի վերաբերմամբ և ստուգել, թէ ճիշտ են արդեօք քաղաքի պարիսպների վերանորոգութեան մասին տարածուած լուրերը: Այդտեղից նրանք մակոյլով հասան Յիմովի նաւահանդիսարը, որտեղից Մայնի վրայով Պանիցա պէտք է վերադառնային:

Երիտասարդներն արդէն տասներկու օր ճանապարհին էին, և Եանին տխուր սրտով մտածում էր, թէ այս հաճելի ճանապարհորդութեանը չորս օր է մնում միայն: Նա երբէք այնպիսի ուրախ օրեր չէր անցկացրած, որպիսին անցկացրեց Միասոսի ընկերակցութեամբ, որի հետ կապուեց բոլոր սրտով: Իր կողմից Միտասոսն էլ փոխադարձաբար յարգում էր նրան և մինչև անգամ իր սիրոյ պատմութիւնն արաւ. նոր ընկերին, որից յետոյ Եանիի աչքում նա կառարեալ հերոսի նշանակութիւն ստացաւ:

Տասներեքերորդ օրը, կէսօրից յետոյ, նրանք մօտենում էին Նիմփիա գիւղին, երբ յանկարծ մի թիւրք հեծեալ զինուոր հասաւ նրանց: Նա հարցրեց, թէ ինչ մարդիկ են և ուր են զընում, իսկ Եանին, որը թիւրքերին ատելով ատում էր, կոպտաբար պատասխանեց.

—Քեզ ինչ, խնդ:

Զինուորը ոչինչ չը պատասխանեց և շտապով դիմեց դէպի այն գիւղը, ուր որ գնում էին երիտասարդ բարեկամները: Հասնելով այնտեղ, նա կանգ առաւ ջրաղացի առաջ և դուռը բաղխեց:

—Կրինաս,—ասաց նա դուռը բաց անող մարդուն,—ես ճանապարհին հասայ մի տղայի ետևից, որին երևի Կոտում էի տեսել, իսկ երկու օր առաջ Ակիայում. նրա հետ մի ուրիշն էլ կայ: Գուցէ այդ ազան քեզ մի օրեէ տեղեկութիւն է բերում:

—Բայց եթէ նրանք երկու հոգի են, մենք էլ նրանցից պակաս չենք,—պատասխանեց բաւականին վախկոտ Կրինասը:

—Յիմար բան է, մենք միայն մէկին ներս կը թողնենք. նա երեխայ է. մենք հեշտութեամբ նրա հախից կը գանք: Բացի դրանից գիւղը մարդ ուղարկելու ժամանակ չէ, և այնտեղ էլ, ասենք, բոլորը յոյներից—յոյն են: Մանուկը շուտով կ'երևայ: Միտք պահիր, որ հարկաւոր չէ նրան սպանել. թնդ նա առաջ բոլոր ճշմարտութիւնը խոստովանուի:

—Եթէ նա Մաւրոմիխալիների տոհմից է, մենք ոչինչ չենք հմանալ:

—Կը տեսնենք: Ես դրան ետևը կը կանգնեմ, և հէնց որ ներս մտնէ, կը բռնեմ նրան, իսկ դու յետոյ դուռը վրայ խփիր. միւսը թող դուրսը մնայ:

Երիտասարդ բարեկամները շատ լաւ արին, որ շտապով հեռացան պիղաղիացի մի անձնաւորութեան մօտից, որի մօտ Պետրո-բէյն ուղարկել էր նրանց: Թիւրքերն ամեն տեղ լրտեսներ ունէին, որոնց յանձնարարուած էր հայրենասէրների դեր խաղալ և տեղեկացնել իշխանութեանն այն ամենը, ինչ որ կը լսեն: Միտոսի և Եանիի հեռանալուց մի օր յետոյ Պիղաղիայից դէպի հարաւ ճանապարհ ընկաւ այդպիսի մի լրտես: Յիմովում նա հարցրեց, թէ այնտեղ արդեօք երիտասարդներ եկած են և բացասական պատասխան ստանալով, որովհետև նրանք կամալաթիայում էին, ամեն ինչ հաղորդեց տեղական թիւրք իշխանաւորին և շարունակեց իր ճանապարհը: Նիմփիայում նա այցելեց Կրինասին, որը նոյնպէս կաշառուած էր թիւրքերից, և հրամայեց նրան այդ խորհրդաւոր այցելուներէից որքան կարելի էր շատ տեղեկութիւններ դուրս քաշել մի կերպ: Յետոյ նա մակոյիով ուղևորուեց Հիտիա, ուր երիտասարդներն ամենևին մտադրութիւն չ'ունէին գնալու:

Յիմովի թիւրք իշխանաւորը մահմեդականին յատուկ անտարբերութեամբ վերաբերուեց գործին և բաւականացաւ միայն նրանով, որ բերդապահ զօրքի զինուորներին յայտարարեց, թէ պարզև կը տայ այն մարդուն, ով որ կասկածելի երիտասարդներին կամ նրանցից մէկին ներկայայնէ իրան: Զինուորներից մէկը զանկացաւ խոստացած փողերն ստանալ և սկսեց որոնել: Հէնց դա էր որ Նիմփիայի ճանապարհին հասաւ երիտասարդներին և նրանց զալստեան մասին յայտնեց Կրինասին, որը հայրենասէր էր համարուում, բայց իսկապէս մատնիչ էր, և թէպէտ վառօդ պատրաստուում էր, սակայն թիւրքերի համար:

Այդպիսով Միտոսի և Եանիի համար թակարդ էր պատրաստուած և նրանք առանց որևէ կասկած տանելու մօտեցան Շրաղացին, բայց այստեղ զինուորի ձին տեսնելով, Եանին ճանաչեց նրան: Երիտասարդներն իսկոյն հասկացան, որ թակարդն են ընկել, բայց վճռեցին փախուստ չը տալ, այլ համարձակ կռիւ մտնել, որովհետև Կրինասին դաւաճանութեան մէջ չէին կասկածում և իրանց թշնամի համարում էին միայն զինուորին: Յամենայն դէպս նրանք պէտք է կատարէին իրանց պարտականութիւնը և Պետրո-բէյի յանձնարարութիւնը հաղորդէին Կրինասին:

Այդ պատճառով Եանին մօտեցաւ ջրաղացի դրանը և բաղ-
խեց, իսկ Միտսոսը պահուեց տան անկիւնի ետերը:

—Ո՞վ է,—լսուեց մի ձայն ներսից:

—Ով ուզում է, լինի: Դու հատիկ աղնւմ ես:

—Քաղցածներքի, թէ թիւրքերի համար:

—Թիւրքերի համար:

Դնուր բացուեց, և Եանին ներս մտաւ, բայց Կրինասը չը
կարողացաւ փակել այն, և Միտսոսը ներս ընկաւ ջրաղացը:

Ձինուորն ու Կրինասն արգէն կուռւմ էին Եանիի հետ:
Նրանց վրայ յարձակուելով, Միտսոսը Կրինասին մի կողմ քա-
չեց, և նրանք սկսեցին ծեծկուել: Միտսոսն աւելի բարձրահա-
սակ ու լիքն էր, իսկ Կրինասը ջլտաւ: Վերջապէս երիտասարդը
ոսկորների ճոճոց լսեց, և այդ իսկ բոլորէին Կրինասի աջ ձեռ-
քը կախ ընկաւ դէպի դօտիկը: Նա, իհարկէ, դանկանում էր
զանալի կամ ատրճանակի օգնութեան դիմել: Միտսոսը հաւա-
քեց իր բոլոր ոյժերը, վեր բարձրացրեց հակառակորդին և յա-
տակին խփեց, բայց հարուածի ոյժից ինքն էլ փռուեց նրա
վրայ: Լսուեց մի զարհուրելի հառաչանք, յետոյ լուծիւն տի-
րեց: Կրինասի գլուխն ընկաւ երկանքների տակ, որոնք շարժ-
ման մէջ էին և ընկոյզի նման ջարդուփչուր արին այն: Միտ-
սոսը ժամանակ չունէր իր յաղթութեան վրայ ուրախանալու:
Նա շտապով վեր թռաւ և վազեց Եանիի մօտ, որին զինուորը
յատակին էր ձգել: Այդ իսկ բոլորէին նա քաչեց իր ատրճանա-
կը, բայց Միտսոսն էլ միևնոյնն արաւ և միանգամից երկու
ատրճանակ որոտացին: Ձինուորի զնգակը միտուեց պատի մէջ,
իսկ յոյնինը չը վրիպեց: Թիւրքը երեսն ի վայր փռուեց գետ-
նին: Գնդակը ծակել էր նրա գլուխը:

Միտսոսը վերցրեց Եանիին, բայց նա անզգայ էր և մա-
զերը խանձուած. երիտասարդը վազեց դուրս, ջուր բերաւ և
թրջեց նրա գլուխը:

Շուտով Եանին բաց արաւ աչքերը և սկսեց ապուշի նը-
ման շուրջը նայել: Յետոյ նա ժպտաց և արտասանեց.

—Ստանաներ:

Նա քիչ բարձրացաւ և նայեց թիւրքի դիակին.

—Ես յիշում եմ միայն,—չարունակեց Եանին,—որ ընկայ,
և գլուխս մի ինչոր բանի դիպաւ: Դու լաւ արիր, որ սպանե-
ցիր նրան. իսկ միւսն ուր է:

Երիտասարդը գծուարութեամբ վեր բարձրացաւ, և նրա
աչքերը սարսափած կանգ առան երկանքների վրայ, որոնցից
արիւն էր հոսում:

—Նա ինքն այնտեղ ընկաւ,—ասաց Միտսոսը,—Գնանք այստեղից, ես կ'օգնեմ քեզ:

Նրանք դուրս եկան դաւիթը և վախեցած սկսեցին շորս կողմը նայել, բայց ոչ ոք չէր երևում:

—Եանի,—ասաց Միտսոսը,—Ինչ անենք այժմ: Ափսոս որ Նիկողայոս մօրեղբայրս մեզ հետ չէ: Կարծես ոչ ոք ատրճանակների ձայնը չը լսեց, և մեզ հարկաւոր է վախճել: Բայց դիակներն ինչ անենք:

—Ստանաններ,—բացազանչեց Եանին, որ դեռ ևս կանոնաւոր կերպով չէր սթափուել:

—Նրանք արդէն դժոգքումն են: Չ'արժէ նրանց մասին մտածել: Բայց մենք ինչ անենք:

—Կնայ, ես հնարք գտայ,—բացազանչեց Եանին, աչքերը պսպղացնելով.—այնտեղ վառօդ կայ. ջրաղացը օդը ցնդեցնենք, այն ժամանակ մեզ վրայ կասկած չի ընկնիլ: Գնանք շուտով:

Նրանք վերադարձան ջրաղացը, անիւը կանգնեցրին, և Միտսոսը երկանքների տակից դուրս քաշեց զլիսատուած դիակը, իսկ Եանին սկսեց վառօդը որոնել:

—Տես,—վերջապէս բացազանչեց նա.—ահ՜ա մի ամբողջ տակառ: Ես տանը շատ ժայռեր եմ պայթեցրել և վառօդի շաւիղ պատրաստել դիտեմ: Գնա՛ ջորիների մօտ և զինուորի ձիու հետ տար նրանց հարեան անտառը, իսկ ես ամեն ինչ կը պատրաստեմ:

Իրաւ, նրանք երկուսով դիակները դրին տակառի վրայ, որի մէջ Եանին մի ծակ բացաւ, և մինչդեռ Միտսոսը դաւիթը դնաց, նա յատակի վրայ՝ տակառից մինչև դրան տակը՝ վառօդից մի շաւիղ շինեց: Երբ ամեն ինչ պատրաստ էր, Միտսոսը վերադարձաւ և ասաց.

—Դէհ, այժմ դու ջորիների և ձիու մօտ գնա: Ես քեզանից արագ եմ վազում, մանաւանդ այժմ, և աւելի լաւ է, որ ես այրեմ վառօդը:

Նա այդպէս էլ արաւ փակ դրան տակից և սկսեց վազել դէպի անտառը, որտեղ Եանին զինուորի ձիուց ցած էր առել թիւրքական թամբն ու սանձը:

Մի քանի բոպէ յետոյ մի զարհուրելի պայթիւն լսուեց: Վառօդը իր գործն արաւ:

Միտսոսը Եանին նստեցրեց ձիու վրայ, ինքը նստեց ջորուն, ձեռին առաւ միւսի սանձը, և նրանք արշաւեցին:

III

Բաւական ժամանակ նրանք լուռ առաջ էին դնում: Եանին բռնել էր ձիու պարանոցը, սրովհետեւ նրա գլուխը պտոյտ էր գալիս, իսկ Միտասը եռանդով բռնում էր ջորիներին, որ ետ չը մնան: Վերջապէս կէս ժամ յետոյ Եանին սանձը քաշեց:

— Կամայ դնանք, — ասաց նա, — վտանդն արդէն անցաւ: Մենք այժմ մեր կողմերում ենք, և ոչ ոք չը տեսաւ, որ ջրադայունն ենք եղել, բացի իմ հօրեղբորորդի Քրիստոսեցի, բայց տւելի շուտ նրա լեզուն կը պոկին, քան թէ կը ստիպեն խօսել: Սակայն խօսելն էլ աւելորդ է: Ջրադայն օդն է ցնդել: Ուրիշ ոչինչ:

Միտասը կանգ առաւ, դած թուա ջորուց և փոռեց զեանին, երկու բողբ պառկած մնաց, յետոյ վեր կացաւ, մի ումպ գինի խմեց և սկսեց Կրինասի գլխին անհամար հայհոյական խօսքեր թափել, որոնցով շատ հարուստ է յունական լեզուն: Այս բանը սաստիկ զարմացրեց Եանին:

— Դու լսեցիր, թէ անիծուած Կրինասի գլուխն ինչպէս ընկողջի նման չիկաց, — շարունակեց Միտասը. — նա մտադիր էր իր վառօդի շտորիւ հարստանալ, բայց ինքը նրա գոհը եղաւ: Ո՛չ, Եանի, դա այնպէս ծիծաղելի է, որ ես մինչև տակզ դատաստանը պէտք է ծիծաղեմ:

Եւ նա սկսեց իստերիկաբար քրքջալ:

Եանին երբէք իստերիկա կոչուած հիւանդութիւնը տեսած չէր, բայց հասկացաւ, որ դա վնասակար է ատոզլութեան համար, և հարկաւոր է իսկոյն վերջ տալ դրան:

— Միտաս, — բացազանչեց նա բարկացած, — յիմարութիւն մի անիր: Բաւական է ծիծաղես, դադարիր իսկոյն:

Միտասը նայեց նրան, ինչպէս մի երեխայ, որին յանդիմանում են մեծերը, և յանկարծ բնորոշեց իր քրքջոցը: Մի քանի բողբ նա լուռ կանգնած էր և կռանալով խոտ էր պոկոտում:

— Բայց փառաւոր օր է այսօր, — խօսեց նա վերջապէս, — այսպիսի արկածները գինու նման արբեցնում են ինձ: Բայց այժմ ես ինձ թեթիւ եմ զգում: Լաւ բան է հայհոյելն ու քրքջալը: Բայց ես ինչո՞ւ համար էի ծիծաղում: Նիկողայոս մօրեղբայրս շատ անգամ ասում էր, թէ երբեմն մարդիկ առաջին սպանութիւնից յետոյ խելքերը թոցնում են, իսկ ես ծիծաղում եմ, հա՛, հա՛, հա՛...

Եւ նա նորից սկսեց քրքջալ:

— Ո՛չ, հարկաւոր չէ, Միտաս, — բացազանչեց Եանին եր-

կիւղ կրելով, թէ չը լինի իրօք նա խելքը թոցրել է, —ի սէր Աստուծոյ, դադարիր: Քո ծիծաղն այնպէս վարձուբերի է...

Միտտոսը ճիգ թափեց և ընդհատեց ծիծաղը:

—Ա՛յ, կեցցես, — արտասանեց Եանին, ձիուց ցատկելով և նստելով գեանին. — գինի խմիր ու պառկիր և կի՛թ կարող ես, քնիր:

Միտտոսը հնազանդուեց և գլուխը Եանիի ծնկներին դընելով, ձգուեց իր ամբողջ երկարութեամբ: Մի բոպէ յետոյ նա արդէն քնած էր: Եանին շատ անյարմար էր նստած, բայց տեղից չէր շարժուում, որ Միտտոսը չը վարթնէ: Միտտոսի վարձուէքը շատ տարօրինակ էր թւում նրան. կուլի ժամանակ նա խոհեմարար, սառնարիւնութեամբ և եռանդուն կերպով էր գործում, և նրա դէմքին փայլում էր հերոսութիւնը, բայց յետոյ մի թոյլ երեխայ դարձաւ:

Երկար նա որպէս մի սիրող քոյր հսկում էր քնած Միտտոսի վրայ, և այս վերջինը վարթնեց միայն այն ժամանակ, երբ արեգակն արդէն սկսել էր թեքուել դէպի արևմուտք:

—Ո՛րպիսի անասունն եմ ես, — բացադանչեց նա ձգուելով, — ես քնել եմ, իսկ դու մեծ դժուարութեամբ բռնել ես գլուխս: Ինչու ծնկներիդ վրայից վայր չը ձգեցիր այն: Բայց ժամանակ է ճանապարհ ընկնելու: Իսկ դու քեզ ինչպէս ես ըզգում:

—Ոչինչ, ամեն ինչ անցել է: Աւելի լաւ է դու ձին հեծիր, Միտտոս:

—Դատարկ բան է:

Եւ նախկին կարգով նրանք շարունակեցին իրանց ճանապարհը դէպի հարևան Կալաւրիս գիւղ: Որովհետև սա Մաւրոմիխալիների տոհմի ամբողջներից մէկն էր, ուստի նրանք համոզուած էին, որ սիրալիր ընդունելութիւն կը գտնեն, բայց գիտէին, որ այնտեղ պահապան զինուորներ կան և այդ պատճառով զգուշութեան համար մի պտոյտ գործեցին և հիւսիսային կողմից մտան գիւղը:

Կալաւրիսում թիւրքերը լաւ կեանք չունէին, և այնտեղի բնակիչներն ուղղակի յայտնել էին նրանց, որ ո՛չ մի գործի մէջ չը խառնուեն: Եթէ կառավարութիւնը ցանկանում էր նրանց մօտ զինուորներ դնել, այդ միևնոյն էր նրանց համար, բայց զինուորները պարտաւոր էին հանդարտ պահել իրանց, թանկ գնով պաշար դնել և ձեռք չը տալ կանանց: Քանի որ թիւրքերն այս պայմանները կատարում էին, նրանք հանդիստ էին թողնում, միայն երբեմն տօն օրերին յոյները հարբելով վատ խօսքեր էին ձգում նրանց: Այն ժամանակ նրանք լաւ էին համա-

րում զօրանոցներից դուրս չը գալ, որովհետև զանազան տհաճութիւններ կարող էին պատահել:

Յաջողութեամբ գիւղը մտնելով, Միտսոսն ու Յանին ուղևորուեցին դէպի սրճարանը: Շեմքից դու ներս չէին մտել, երբ նրանց ընդատաջ վազեց մի բարձրահասակ, ահագին մօրուքով մարդ:

Դա Պետրո-լէյի եղբայրն էր, Յանին գիտէր, որ նրան ամեն ինչ կարելի էր անկեղծօրէն ասել: Իրաւ, նրանք պատմեցին ջրաղացում իրանց պատահած արկածները, և բարձրահասակ մարդը գլուխը քաջալիրարար շարժելով՝ մեծ հետաքրքրութեամբ լսեց նրանց: Վերջապէս Յանից լսելով Միտսոսի իստերիկական հիւանդութեան մասին, նա յօնքերը կիտեց և ստիպեց կէս շիշ գինի մի անդամից խմել:

— Է՛հ, — ասաց նա, երբ երիտասարդները վերջացրին իրանց պատմութիւնը. — այսօր մի փառաւոր օր է մեր տոհմի համար: Դու էլ մերն ես, — աւելացրեց նա, Միտսոսին դառնալով, — և երգւում եմ մեր ցեղն ստեղծող Աստուծոյ և թիւրքերին ծնող սատանայի անունով, որ դու մեր պարծանքն ես: Շուտով մերոնցից մի տանն հողի կը հաւարուեն այստեղ, և եթէ փողոցներում թիւրքերը պատահեն նրանց, կախաղանների համար պործ կը բացուի:

Շուտով կացիոս Մաւրոմիխալիի խօսքերն արդարացան, և նրա ազգականները մէկը միւսի ետեից սկսեցին հաւաքուել: Նրանք լսել էին, որ մի ինչ որ առանձին բան է պատահել, և հարկ եղաւ Միտսոսի ու Յանիի պատմութիւնը կրկնել ամեն մէկին: Բոլորը հրճուանքի մէջ էին, և ընդհանուր բաւականութիւնը լրիւ լինելու համար մնում էր միմիայն կոխ սկսել թիւրքերի հետ: Բայց բարեբաղդաբար նրանք այս երեկոյ զօրանոցներից դուրս չէին դալիս, և մինչև անդամ ուշադրութիւն չը դարձրին մի քանի երիտասարդ յոյների վրայ, որոնք անարդական ազդակներով սկսեցին կոտորատել զօրանոցների ապակիները, և կացիոսի եռանդուն միջամտութեան շնորհիւ միայն կարելի եղաւ ցրել նրանց:

Հետեւալ առաւօտ Նիմփիայից տեղեկութիւններ ստացուեցին, որոնք կատարելապէս հաստատում էին երիտասարդ բարեկամների պատմութիւնը: Դուրս եկաւ, որ ջրաղացն օգն էր ցնդուած, և նրանից ոչ մի հետք չէր մնացել, իսկ կրինասի գոյութեան մասին վկայում էր նրա փշրուած գանգը: Բայց ինչպէս երևում էր, պայթիւնի ժամանակ նրա մօտ մի ինչ որ մարդ էլ էր եղել, որովհետև զետնի վրայ քառասուն ատամ էր գրտնուած, իսկ այդքան ատամ կրինոսը երբէք չէր կարող ունենալ:

Կացիոսը իր բազմաթիւ ազգականների հետ գիւղից մի ժողնաչափ հեռու ուղեկցեց հիւրերին: Միտստին բոլորը փառաբանում էին, որպէս երկու թշնամի սպանող մի հերոսի, և Եանին ամենին չէր նախանձում նրան, այլ շատ ուրախ էր, որ բացի իրանից ուրիշներն էլ, մանաւանդ երիտասարդները, Միտստին հերոս էին համարում և ոգևորում նրանով, և երբ Կացիոսը գիւղի հասակաւոր բնակիչներին հետ վերադարձաւ տուն, երիտասարդներն աւելի երկար ուղեկցեցին իրանց նոր ընկերներին: Վերջապէս կէսօրին ժող նրանք հրաժեշտ տուին, և երիտասարդ բարեկամները, որոնք արդէն աւարտել էին իրանց արուած յանձնարարութիւնները, ճանապարհ ընկան դէպի տուն:

Նրանք այժմ գնում էին ծովկորով և չէին շտապում: Բայց և այնպէս արեամտին հասան Մաւրոմատի, որը բոյն էր գրել Տայդեատի արևմտեան լանջի վրայ: Լեռնագոտու գաղաթները ծածկուած էին ձիւնով, որը շրայուցիչ կերպով պսպղում էր արեգակի վարդագոյն ճառագայթների տակ: Բայց ներքեւ, դաշնոտը բուրում էր: Երիտասարդների սրտերի և աչքերի մէջ ևս դարուն էր տիրում, այն դարնան տալայրում, ձմրան հետք չէր երևում, և ամեն ինչից դարնան հոտը բուրում էր: Երիտասարդների սրտերի և աչքերի մէջ ևս դարուն էր տիրում, այն դարնան փայլը, որը շուտով բռնակալութեան ցուրտ, մուսլ ձրմբան փոխարէն ապատութեան պերճ ծաղիկներ պէտք է բերէր:

IV

Երիտասարդները կէսօրին հասան Պանիցա, և նրանց դիմաւորեց Պետրո-բէյը, որը նրանց արկածներն ու կրկնասի մահը լսելով՝ չափազանց ուրախացաւ:

—Ես շատ ցաւում եմ,—ասաց նա, մինչև վերջը լսելով նրանց պատմութիւնը.—բայց աչքի առաջ ունենալով թիւրքերի մէջ ձեր դարթեցրած կասկածները, դուք պէտք է բաժանուէք միմիանցից: Դու, Եանի, կը գնաս Տրիպոլիս, իսկ Միտսոսը—Նաւպլիս:

—Օ՛, որքան դու բաղդաւոր ես,—ցած ձայնով արտասանեց Եանին, որին յայտնի էր իր ընկերոջ վէպը.—եթէ միայն Չուլէյման քեզ չէ մոռացել: Իսկ ես, հայր,—աւելացրեց նա բարձրաձայն,—իրը պէտք է ճանապարհ ընկնեմ դէպի թիւրքական որջը:

—Երկու կամ երեք օրից: Դու այստեղից կարող ես Միտսոսի հետ դուրս գալ:

—Բայց որքան ժամանակ պէտք է այնտեղ մնամ:

—Յուսով եմ, որ քիչ կը մնաս, դուցէ մի ամսի չափ։ Բայց դու չես զղջալ այդտեղ դնալուդ համար։ Քեզ արքայավայել կ'ընդունեն, որովհետև թիւրքերը չեն կամենում մեր սոհմի հետ թշնամանալ։ Միտսուր կ'ուզեկցէ քեզ մինչև Տրիպոլիս և երկու օր կը մնայ այնտեղ քեզ հետ իրբի ծառայ, որպէսպի տեղեկանայ, թէ նահանգապետի տանը քեզ սրտեղ կը տեղաւորեն, և երբ ժամանակը հասնէ, սրտեղից պէտք է ազատել քեզ։

—Իսկ ես ինչ պէտք է անեմ Եանիից բաժանուելուց յետոյ,—հարցրեց Միտսուր։

—Վերադարձիր Նաւայիս և ինձանից մի նամակ տար Նիկողայոսին, բայց այնտեղ դու երկար չես մնալ և մի նոր ճանապարհորդութիւն կը սկսես դէպի հիւսիս, Հերմանի մօտ։ Է՛հ, այդ մասին Նիկողայոսը մանրամասնաբար կ'ասէ քեզ։

Այս խօսակցութիւնից երեք օր յետոյ երիտասարդներն ուղևորուեցին Տրիպոլիս։ Եանին հաղել էր ամենալու հաղուստը և նստած էր մի գեղեցիկ մոխրագոյն ձի, իսկ նրա ետևից ջորի հեծած, ծառայի չորերով գնում էր Միտսուր։ Նա իր ետևից քաշում էր և մի ուրիշ ջորի, ճանապարհորդական իրեղէններով բեռնաւորած. չորս օր տևեց նրանց ճանապարհորդութիւնը, որովհետև նրանք չէին շտապում և երբ վերջապէս հասան Տրիպոլիս, Եանին գիմեց ուղղակի նահանգապետի տունը, իսկ Միտսուրին թողեց հրապարակում ձիու և ջորիներին մօտ։

Տունը գտնուում էր հրապարակի մի կողմում և արտաքուստ ներկայացնում էր մի մերկ, պատուհանների տեղ մի քանի երկաթէ վանդակներով սպիտակ պարիսպ։ Միտսուր նրանցից մէկում նկատեց հաստ քողով ծածկուած մի կանաչի դէմք և հասկացաւ, որ հարեմն այդտեղ է գտնուում։ Տան միակ մուտքը մի դուռն էր, որի ետեւ երևում էր պարտէզը։ Եանին դուռը դեռ չէր բաղխել, երբ նա բացուեց, և յետոյ դռնապանը փակեց նորից։ Մի քանի րոպէ անցած՝ դուռը դարձեալ բացուեց և մի թիւրք ծառայ մօտենալով Միտսուրին, օդնեց նրան ներս տանելու իրեղէնները, բայց որովհետև շատ չէր, երիտասարդն ինքը ներս տարաւ. այդ իսկ միջոցին դռնապանը, որ ասեղնագործած բաձկոն և սկէ երիզներով կարմիր անդրավարտիք ունէր հազին, իր երկար ձեռնափայտին յենուեց և դաշոյնի արծաթեայ կոթի հետ լիսաղալով, արհամարհանքով նայում էր նրան։ Դրան ետևը, տան ներսը, գտնուում էր դռնապանի փոքրիկ սենեակը, իսկ ձախ կողմը ձգուած էր չինութեան մի մասը, որը դէպի հրապարակն է դուրս գալիս, և պատուհանները նոյնպէս պաշտպանուած էին երկաթէ վանդակներով։ Դռնից սկսւում էր մի նեղ ճանապարհ, որը երկու կող-

մից չըջապատուած էր պարտիզի բաժանմունքներով, և Միտտոսը դռնապանի ցուցմամբ այդ շինութեան երկայնութեամբ անցաւ դէպի մի ուրիշ շինութիւն, որը բարձրանում էր առաջինի ծայրում:

Այս շինութիւնը երկյարկանի էր, մի պատշգամբով, ուր կարելի էր բարձրանալ դրսի սանդուխով, որի վրայ չորս դուռ էր բացուում: Միտտոսը բաղխեց դրանցից առաջինը, և մի երիտասարդ թիւրք բացաւ այն. նա իրեղէնները ձեռքին բռնած այս յոյնին տեսնելով, մի բանալի հանեց և բաց արաւ երկու սենեակ. նրա ասելով դրանք յատկացրուած էին Միտտոսի տիրոջ համար, և նա կարող էր քնել վերջին սենեակում, եթէ պարոնը թոյլ տար: Որովհետեւ Նանին դեռ չէր երևում, ուստի Միտտոսն արձակեց իրեղէնները և անհամբերութեամբ սկսեց նրան սպասել:

Վերջապէս Նանին եկաւ դռնապանի առաջնորդութեամբ և այս վերջինի հեռանալուց յետոյ բացազանչեց:

—Ա՛յ քեզ դէ: Մեծ թակարգն ենք ընկել: Նս այստեղ իբրև բանտարկուած պէտք է մնամ և չեմ կարող ո՛չ մի տեղ հեռանալ: Ինձ այստեղ կը կերակրեն և թոյլ կը տան քնել ու զբօսնել այս փոքրիկ պարտիզում, բայց ոտս դռնից դուրս զնել— երբէք:

Միտտոսը շուացրեց:

—Լա՛ւ է, որ ես քեզ հետ եկայ: Երեւի հարեան սենեակում ապրող երիտասարդ թիւրքը քո պահապանն է: Նս դիշերը կը մնամ այստեղ և դրսից ամեն ինչ կը զննեմ: Այժմ հարկաւոր է գնալ ու տեսնել, թէ որտեղ են տեղաւորել ձին ու ջորիները:

Միտտոսը մի ժամ կորաւ:

—Լաւ չէ, բայց աւելի վատ կարող էր լինել,—ասաց նա վերադառնալով.—հրապարակը դուրս գալ կարելի է միմիայն դռնով: Դռնից դէպի աջ դռնուում է հրապարակի անկիւնի տունը, իսկ յետոյ ձգուում է սեների մի շարք, որոնք նայում են դէպի հրապարակից սկսուող փողոցը: Չափ կողմից տան ետին երկար պատը գնում է դէպի մի ուրիշ փողոց, որը նոյնպէս հրապարակից է սկսուում: Բայց Մահմէդի բնակարանի հարեան տունը շինուած է մի փոքրիկ պարսողով չըջապատուած պարտիզի մէջ, որի վրայ մագլցելը դժուար չէ: Հէնց այդ պարսպից հեշտութեամբ կարելի է բարձրանալ տան այս մասի կտուրը: Իսկ այնտեղից հարկաւոր է միայն ցատկել դէպի պատշգամբը քեզ մօտ դաչու համար: Իսկ այն ճանապարհով, որտեղից ես

եկայ, կարող են երկու հոգի անցնել: Նշանակում է յուսահատուելու ոչինչ չը կայ:

—Հեչա է ասելը,—տիրութեամբ պատասխանեց Եանին.— իսկ ես այստեղ հնդկահաւի նման մի ամբողջ ամիս պէտք է նստեմ, ման գամ պարտիզում և վշտից նարինջներ ծծեմ: Էլ ինչ ասել կ'ուզէ, ուրախ կեանք է: Իմ ետևից դալիս՝ դու կը տեսնես ինձ մի հաստափոր, փքուած թիւրք դարձած, որը չարունակ ծալապատիկ նստած, բացի ծխելն ուրիշ գործ չ'ունի:

—Մի վախենար,—ուրախ պատասխանեց Միտսոսը,—դու լեռներում չուտով կը կազդուրուես:

—Բայց դու չես մտածում,—ասաց Եանին, մատով թիւրքի հարեան սենեակը ցոյց տալով,—որ այս քաջ երիտասարդը կաուրից ցած թռչելիս, կարող է քեզ նկատել, դարան մտնել և բռնել:

—Ի հարկէ, եթէ քո պատուհանը դէպի փողոցը նայէր, այն ժամանակ ես կարող էի քեզ նշան տալ, իսկ այժմ ինքս պէտք է մտնեմ այստեղ: Բայց մի վախենար, ես ամեն ինչ կարգի կը դնեմ:

Միտսոսն երկու օր մնաց Տրիպօլիտում և երբ նա զնաց, Եանիի աչքում իր ապագան այնպէս տխուր չէր երևում, ինչպէս առաջին բողբոջին: Ինչքան էլ որ թիւրքերը կասկածում լինէին Մաւրոմիլիայի տոհմի թշնամական տրամադրութեան վերայ, այնուամենայնիւ չէին ցանկանում նրանց բարկութիւնն իրանց վրայ հրաւիրել: այդ պատճառով Եանիի բոլոր ցանկութիւնները, բացի տանից գուրս գալուց միայն, ուրով կատարում էին: Իւր վերջնական ազատուելու վերաբերմամբ նա կասկած չ'ունէր: Միտսոսը մի անգամ էլ քննեց հարեան պատը և տեսաւ, որ պարանի օդնութեամբ փախուստը ամենահեշտ բանն է: Այն ամբողջ շինութեան մէջ, որտեղ Եանիի սենեակներն էին, ապրում էր միայն երիտասարդ թիւրքը, նրա պահապանը, և գտնուում էին խոհանոցները, ուր գիշերը ոչ ոք չէր գնում:

—Իսկ ինչ վերաբերում է թիւրքին, մենք նրա հախից կը գանք և կոկորդը կը փակենք,—ասաց Եանին.—բայց մինչև այն ժամանակ ես ինձ օրինակելի կերպով կը պահեմ, այնպէս որ ամենափոքր կասկած անգամ չեմ դարթեցնիլ:

Երբորդ օրը, արևածագից առաջ, մթնշաղիւն Միտսոսը, բոլորովին պատրաստ ճանապարհ ընկնելու, ներս մտաւ Եանիի սենեակը: Եանին Մահմէդ-Սալիկին ասել էր, թէ ծառան հարկաւոր է հօրը և այդ պատճառով պէտք է գնայ, իսկ Մահմէդը նրան մի թիւրք ծառայ էր առաջարկել, որից՝ իհարկէ՝ Եանին հրաժարուել էր:

—Օ՛, Միտսնս,—ասաց Եանին՝ հրաժեշտ տալով իր ընկերին,—որքան կարելի է շուտ վերադարձիր։ Ես չափ կր կարօտեմ քեզ։ Ես չափազանց սիրում եմ քեզ, և որքան լաւ էինք ապրում մենք միմիանց հետ։

—Այն, Եանի,—պատասխանեց Միտսսը, համբուրելով նրան.—հէնց որ հնարաւոր եղաւ, ես կը գամ քո ետեից և մինչև անգամ Զիւլէյման էլ արգելք չի կարող դառնալ զրան։

—Հնա, դու Զիւլէյմա ունես,—ասաց Եանին խոր հառաչելով,—իսկ իմ միակ սիրելին դու ես։ Գնաս բարեւ, մի մոտանար ինձ և չուտով վերադարձիր։

Միտսսը երգուեց, որ ո՛չ տղամարդ, ո՛չ կինարմատ, ո՛չ երեխայ, ո՛չ հարստութիւն և ո՛չ փառք չեն արգելիլ նրան հնարաւոր եղած գէպում վերադառնալ։

Յետոյ նա կիսատրտում, կէս ուրախ՝ գնաց ձին թամբելու։ Ճշմարիտ է, նա բաժանուում էր ընկերից, բայց զրա փոխարէն նրան սպասում էր Զիւլէյմայի տեսակցութիւնը։

Ամբողջ օրն անդադար գնում էր նա և զիջերը լուսնի լուսով տեսաւ իր առաջ փռուած նաւալիայի ծովածոցը։ Գիշերով Արզոսի միջից չ'անցնելու համար՝ նա ընտրեց աւելի երկար ճանապարհը և երբ հասաւ այն աւազառ ափին, որտեղ Զիւլէյմայի հետ ձուկն էր որսում, նրա սիրտն սկսեց ուրախ բարախել։ Ապա շտապով անցաւ իրան ծանօթ սպիտակ պարսպի մօտով և վերջապէս կանգ առաւ հօր տան առաջ։ Պատշգամբում քնած շունը հաջելով յարձակուեց նրա վրայ, բայց երբ Միտսսին ճանաչեց, սկսեց քծնել։

Մի րոպէ յետոյ դուռը բացուեց, և հնչեց Նիկողայոսի ծանօթ ձայնը.

—Այդ գո՛ւ ես, Միտսնս։

—Այն,—պատասխանեց երիտասարդը,—ես վերադարձայ։ Որքան էլ Նիկողայոսը ցանկութիւն ունէր իմանալու Միտսսի ուղևորութեան արդիւնքը, այնուամենայնիւ հարցուփորձ չ'արաւ նրան և թող տուաւ քնել մինչև հետեւալ օրուայ ժամը իննը։ Նիկողայոսի աչքում ո՛չ մի բան այնքան գին չ'ունէր, մինչև անգամ ուտելն ու խմելը, որքան քնելն ու լողանալը։ Այդ նա շտա կարեոր էր համարում, ուստի երբ Միտսսն արթնացաւ, իր առաջ պատրաստի գտաւ լողարանը։ Սակայն Նիկողայոսն անձամբ սուրճ ու ձուկ էլ եփեց, որովհետև կուստանդինի գործերը վառ էին գնում, և նա ստիպուած էր առանց ծառայի մնալ։

Ոյժերն ամբապնդելով, Միտսսը պատմեց իր բոլոր արկածները մինչև Եանիից անջատուելը։ Նիկողայոսը լուս լսեց

նրան, և երբ նա վերջացրեց, մի քանի խօսք միայն ասաց, բայց այդ խօսքերը ուրախութեամբ լցրին Միտսոսի սիրտը:

— Դու գրանից լաւ վարուել չէիր կարող, Միտսոս, և ես գոհ եմ քեզանից: Տնւր Պետրօ-բէյի նամակը:

Եւ նա բարձր ձայնով կարգաց այդ նամակը:

«Միրելի եղբայր, այս թուղթը քեզ Միտսոսը կը յանձնէ, և ես չեմ կարող նրանից լաւ սուրհանդակ ցանկանալ: Նա քեզ կը պատմէ այն ամենը, ինչ որ արել է և ես նրա պատմութիւնը կարող էի առանց որեւէ յոգնութիւն զգալու հարիւր անշամ լսել: Խեղճ Եանիքն փակուած նստել է Տրիպօլիսում և որովհետեւ նա այնտեղ պէտք է մնայ մինչև մեր գործողութիւնների սկիզբը, ուստի մտածիր նրա մասին, Նիկողայոս, և մի յապաղիր: Մարտի սկզբին նշանակուած է եպիսկոպոսների ժողովը. հարկաւոր է Միտսոսին Հերմանի մօտ ուղարկել: Ահն քեզ և մի նորութիւն: Իտոմի վարդապետները հայրենիքի կողմն են անցել, նշանակում է հարաւային մասում գործող ձեռքերի կարօտութիւն չենք ունենալ, ուստի Մեղասպէլայօճի միաբանները կարող են իրանց տեղը մնալ և մեզ հետ միաժամանակ ապաստարուել Կալամատայում: Այն ժամանակ հիւսիսից մինչև հարաւ մի այնպիսի խառնակութիւն կ'ընկնի, որ չուն թիւրքերը ստիպուած կը լինին Տրիպօլիսում փրկութիւն որոնել: Հիւսիսային և հարաւային մասերում գործը միաժամանակ սկսելու համար պահանջում է մի որեւէ ազգանշան, ամենից լաւ է գիշերը կրակները վառել: Օ՛, իմ բարեկամ, հետու չէ մեր հանդիսաւոր օրը և անիծեալները կ'ողբան Կալամատայից մինչև Պատրաս: Երդուում եմ Աստուծոյ անուշով, որ յիսուն զոյգ փայտմորիկ կը տայի, թէպէտ այս տարի գրանից շատ քիչ կայ, որպէսզի գոնէ մի աչքով տեսնէի, թէ ինչպէս քո քրոջորդին Կրինասին ջրաղացի երկանքի տակ է գցել, իսկ իմ Եանիքն իր հասակին անհամեմատ խորամանկութիւն ցոյց տուեր: Մնացեալները քեզ Միտսոսը կը պատմէ: Հէնց որ հնարաւորութիւն կը գտնես, այցելիր մեզ: Թող Տիրամայրը և ս. Նիկողայոսը օրհնեն քեզ:

Պետրոս Մաւրոմիխալի:

Դիւական նաւերի մասին ասա Միտսոսին: Յետոյ ժամանակ չի լինիլ»:

Նամակը կարդալուց յետոյ Նիկողայոսը դարձաւ Միտսոսին և ասաց.

— Դէհ, այժմ ասա ինձ, թէ ինչ ես մատղիբ անելու ապագայում, միայն նախ ծխիր և լաւ մտածիր:

Միտտոսը հնազանդուեց և մի քանի բողոքներով պատասխանեց.

—Ամենից առաջ ես կ'ուզեցորուեմ Պատրաս, ախ, չէ, առաջ կ'այցելեմ Մեղասպելայօն, կ'ասեմ, որ նրանց գործունէութիւնն անհրաժեշտ է հիւսիսային կողմում և ոչ թէ հարաւային և նրանց հետ կը պայմանաւորուեմ այն ազգանշանների վերաբերմամբ, որոնց օգնութեամբ մենք կարողանանք Տայգետի վրայով Կալամատայից և Պանիցայից յարարելութիւն սկսել նրանց հետ: Յետոյ արգէն ես կ'ուզեցորուեմ Պատրաս քո յանձնարարութիւնը Հերմանին հաղորդելու. և նախազուշայնելու. նրան, որ չը գնայ Տրիպոլիս եպիսկոպոսների ժողովին, որովհետև դա մի թակարդ է թիւրքերի կողմից: Վերջապէս ես պէտք է մի ինչ որ գործ կատարեմ զուսկան նաւերի վերաբերմամբ, որոնց մասին զաղափար է ունեւմ ե' ազատեմ Նանիին: Բայց նախ կարծեմ զու Պետրօ-բէշի մօտ կը գնաս:

—Դու շատ սուր միտք ունես,—պատասխանեց Նիկողայոսը,—թէպէտ ամենայն հաւանականութեամբ՝ Նանիի չափ խորամանկ չես: Ներկայ բողոքիս ամենակարևորն է՝ մի պատրուակ գտնել, որպէսզի Հերմանն ու միւս եպիսկոպոսները կարողանան հրաժարուել Տրիպոլիս ժողովուելու. համար Մանիկ-Սալիկի արած հրաւերից:

Միտտոսը մտածմունքի մէջ ընկաւ:

—Հա, նրանք չեն կարող գնալ այնտեղ և յետոյ Նանիի նման ազատուել թշնամու աւազականոցից,—հարցրեց նա յանկարծ:

—Է՛հ, Միտտոս, դու ուզակի յիմար ես,—պատասխանեց Նիկողայոսը, պլուխը շարժելով,—դու ուզում ես, որ յիսուն ծերունի իրանց վեղարներով քարէ պարսպից մազլցելով անցնեն, ինչ է:

—Նանին էլ ինձ շատ անգամ ասում էր, թէ յիմար եմ,—ասաց Միտտոսը ծիծաղելով.—երևի ճշմարիտ է այդ:

—Խոհեմ եղիր: Բանն այն է, որ նրանց համար աւելի լաւ է վճռականապէս հրաժարուել, կամ առերես ցոյց տալ, թէ ընդունում են հրաւերը: Առաջինն ուղղակի անկարելի է, նշանակում է հարկաւոր է կոմեդիա խաղալ:

—Եթէ նրանք չը պէտք է Տրիպոլիս գնան,—նկատեց Միտտոսը,—ուրեմն մի որևէ բան պէտք է որ արգելի ինի նրանց ճանապարհին:

—Բայց ինչը:

—Ա՛յ, հէնց այդ կանգ առնելու պատճառը չեմ կարող գտնել: Ո՛հ, որքան դժբաղդ եմ, որ այսպէս յիմար եմ ծնուել:

—Ապասիր, մօրեղբայր, — բացազանչեց Միտսոսը, տեղից ցատկելով:—Այ թէ ինչ մտածեցի: Երևակայենք, թէ Տրիպօլիսում Հերմանին կարեկցող մի թիւրք կայ և նա մի նամակ կը գրէ նրան, որով կը նախազգուշացնէ Տրիպօլիս չը գնալ: Դու հասկանում ես: Հերմանը բարձրաձայն կը կարգայ այն նամակը սրբազան հայրերի մօտ, մի թուղթ կ'ուղարկէ Տրիպօլիս և երաշխաւորութիւն կը պահանջէ ապահովութեան համար, իսկ իրան ուղեկցող եպիսկոպոսներին զանազան կ'ողմեր կարծակէ: Ծուտով, Նիկողայոս մօրեղբայր, մի թիւրքի անունով գըրեցէք այդ նամակը:

Նիկողայոսը զարմացած նայեց Միտսոսին:

—Ի բերանոյ մանկանց քարոզեսցի արդարութիւն, — բացազանչեց նա. — օ, Միտսոս, որպիսի լուսափայլ գաղափար է այդ: Ապա մէկ էլ կրկնիր:

—Այն, գա. շատ պարզ է, — պատասխանեց Միտսոսը, Նիկողայոսի գովասանքից կարմրելով. — ևս կ'ուղիորուեմ Պատրաս, որտեղ արդէն հաւանականաբար Տրիպօլիսից հրաւերն ստացած կը լինեն: Ես Հերմանին կը տամ քս հրահանգները, և եպիսկոպոսները Պատրասում հաւաքուելով ճանապարհ կ'ընկնեն, իսկ երկրորդ օրը ճանապարհին Հերմանը, մի նամակ կը ստանայ տրիպօլիսեցի մի թիւրքից, որին իբր թէ նա ժամանակով բարերարութիւն է արել: «Չը գնալ այստեղ, — ասուած կը լինի նամակում, — առանց երաշխաւորութիւն ստանալու ձեր ապահովութեան համար, որովհետեւ թիւրքերն ուխտագրուծ են»: Յետոյ Հերմանը մի սուրհանդակ կ'ուղարկէ Տրիպօլիս ապահովութեան երաշխաւորութիւն պահանջելու համար, իսկ մինչև այդ կ'արձակէ եպիսկոպոսներին: Բայց նախ քան թիւրքերի նոր ժողով հրաւիրելը և պահանջուած երաշխաւորութիւնը տալը, Պետրօ-բէյի ասածին պէս արդէն մեր խնջոյքի ժամանակը կը հասնէ:

—Սակայն դու յիմար չես, — արտասանեց Նիկողայոսը բողբոջական լուծիւնից յետոյ. — յիմարը ևս ինքս եմ, որ կասկածում էի քս խելքի վրայ:

Միտսոսը ծիծաղեց:

—Ի՞նչ է, իմ ծրագիրը պիտանի է, — հարցրեց նա:

—Ի՞նչ ասել կ'ուզէ:

Նիկողայոսը քանի մտածում էր, այնքան աւելի դբանչելի էր թւում նրան Միտսոսի ծրագիրը: Դա շատ պարզ էր և ըստ երևոյթին ոչ մի թոյլ կողմ չ'ունէր:

Երկրորդ խնդիրն այն էր, որ պէտք էր Միդասպէլայօնի մենաստանին իմացնել, թէ նրա մարգիկն ու զէնքը կը հարկա-

ւորուենն ոչ թէ հարաւային կողմում, ինչպէս ասել էր Նիկողայոսը, այլ հիւսիսային, և համաձայնութիւն կայացնել նրանց հետ այն ազդանշանների վերաբերմամբ, որոնց օգնութեամբ կարելի լինէր մի կամ երկու ժամուայ ընթացքում յարաբերութիւն սկսել Պիլօզօնէսի մի ծայրից մինչև միւսը: Ի հարկէ, նշան տալու ամենալաւ եղանակը դիշերը վառուած խարոյկներն էին, որ մանաւանդ շատ յարմար էր բարձրագագաթ լեռներով ծածկուած Պիլօզօնէսի համար: Տայգետը Մեղասպէլայօճի հետ միացնելու համար բաւական էր երեք հատ այգալիսի փարոս, իսկ Մեղասպէլայօճը Պատրասի հետ—երկու:

Այդպիսով Մեղասպէլայօճում հարկաւոր էր երկու յանձնարարութիւն կատարել, բայց գրանցից առաջինն առանց Միտսոսի էլ կարող էր զլուխ գալ, քանի որ Նիկողայոսը նրանց նախազգուշացրել էր, թէ իրանից լուր կը բերէ մի ազամարդ, կին կամ երեխայ, որը կը հարցնէ նրանց թիւքերի համար պատրաստուող սև հատիկի մասին, թէպէտ այդ յանձնարարութիւնը հարկաւոր էր շուտ հաղորդել իսկ ինչ վերաբերում է ազդանշաններ տալու բանակցութիւններին, այդ պարտաւոր էր Միտսոսն անձամբ առաջ տանել, որն այդ առթիւ նախ պէտք է Պատրաստի տեսակցէր Հերմանի հետ: Բացի գրանցից Նիկողայոսը ցանկանում էր, որ նա զուտ առաջ այցելէր Կորնթոս, իսկ յետոյ արդէն ուղևորուէր Պատրաս ու Մեղասպէլայօճ և այգալիցի վերադառնար ոչ թէ Նաւալիս, այլ Պանիցա, որտեղ այդ միջոցին կը լինէր և ինքը՝ Նիկողայոսը:

—Բայց ում ուղարկենք Մեղասպէլայօճն առաջին լուրը հաղորդելու, — հարցրեց Միտսոսը:

—Մենք այնտեղ ումն ենք մօտ ճանաչում, — ասաց Նիկողայոսը Կոստանդինին դառնալով. — ան, հն, մի թէ երկու ամիս սրանից առաջ Եանկօ Վլաքոսը իր կնոջ Մարիամի հետ այն կողմերը գնաց:

—Մարիամը, — բացագանչեց Միտսոսը, — նա սքանչելի կին է, բայց Վլաքոսը ոչ մի բանի պէտք չի գալ. նա մի յիմար ջորի է:

—Իսկ որտեղ է բնակուում նա, — հարցրեց Նիկողայոսը:

—Գուրաջում, Նեմէից մի օրուայ ճանապարհ հեռու:

—Գուրաջում: Այնտեղ լաւ մարդիկ շատ կան: Գու, Միտսոս, պէտք է գնաս այնտեղ, գիշերիք Եանկօի մօտ և կարգապահիք յանձնարարութիւնը վաճախն հաղորդելու գործը, իսկ յետոյ արդէն ծովով շարունակիր ճանապարհդ գէպի Կորնթոս: Եթէ հարկաւոր լինի, վճարիք ձիու և չորս օր գործից ետ մը-

նալու համար: Ես քեզ նամակներ կը տամ Հերմանին ու վանուհորը յանձնելու: Է՛հ, ուրիշ ոչինչ:

—Ո՛չ, զեռ զիւական նաւերի և Եանիին ազատելու զործերը մնում են:

—Դիւական նաւերի մասին Պանիցայում կը խօսեմ քեզ հետ: Ե՞րբ կարող ես ճանապարհ ընկնել:

Միտտոսը մտաբերեց սպիտակ պարիսպը, և նրա սիրտը սաստիկ բարախեց:

—Վազը, —պատասխանեց նա, —մի օր գոնէ ձին պէտք է հանգստանայ:

Նիկողայոսը վեր կացաւ սեղանի մօտից և սկսեց հառաձայնով անել սենեակի մէջ:

—Ես կը զանկայի, —ասաց նա վերջապէս, կանգ առնելով Միտտոսի հանդէպ, —որ Եանին հարկաւոր եղածից մի բոպէ աւելի չը մնար թիւրբերի մօտ: Այդ մի համարձակ քայլ է Պետրօբէյի կողմից, բայց երիտասարդի համար կարող է վտանգաւոր լինել:

Միտտոսը մտածումնքի մէջ ընկաւ: Մի ծանր կռիւ էր կատարում նրա մէջ: Որքան ժամանակ փափագում էր տեսնուել Զիւլէյմայի հետ, բայց միւս կողմից նա երդուել էր, թէ ոչ ոք, ոչ ազամարդ, ոչ կինարմատ, և ոչ երեխայ չեն կարող արգելել նրան զնալ Եանիին ազատելու:

—Նիկողայոս մօրեղբայր, —ասաց նա վերջապէս, —եթէ ես այսօր ճանապարհ ընկնեմ, Եանին մի օր առաջ կ'ազատուի:

—Ի հարկէ, —պատասխանեց Նիկողայոսը, ուշադրութեամբ նրան նայելով:

—Ես այսօր կը գնամ, —վճռական կերպով ասաց Միտտոսը: Մինչև Եանիէս մի օրուայ ճանապարհ է միայն: Մօրեղբայր, գրիւր նամակները:

—Սակայն միևնոյն բանն է, եթէ դու վաղն էլ գնաս, —նկատեց Նիկողայոսը, տեսնելով որ մի ինչ որ պատճառով Միտտոսն ուզում է զիշերը տանը մնալ:

—Ո՛չ, ոչ, —բացազանչեց երիտասարդը, —դու ասացիր, որ եթէ ես այսօր գնամ, Եանին մի օր առաջ կ'ազատուի: Բաւական է: Ես կը գնամ:

Նիկողայոսը զարմացած նայեց քրոջորդուն, առանց հասկանալու նրա յափշտակութեան պատճառը:

—Լաւ, —պատասխանեց նա, —ես իսկոյն կը գրեմ նամակները: Դու ճշմարիտ ես ասում, որքան շուտ ազատուի Եանին, այնքան լաւ:

Միտտոսը շուտ կեաւ դէպի պատուհանը, և արտասուքի եր-

կու խոշոր կաթիլներ գլորուեցին նրա աչքերից: Ոչ որ չը գիտէր, թէ որպիսի ծանր գոհ բերաւ նա:

Նիկողայոսը տեսաւ, որ գործը լաւ չէ, բայց քանի որ Միասոսը սչինչ չէր ցանկանում բացատրել, ուստի հանդիստ թողեց նրան և ձեռն ուսին գնելով՝ ասաց.

—Կեցցեն, Միասոս. նամակները կէս ժամից յետոյ պատրաստ կը լինեն: Դու կը ճաշես և ճանապարհ կ'ընկնես: Մինչև գիշեր կը հասնես Նեմէա:

Եւ ճաշից յետոյ երիտասարդը նորից ճանապարհ ընկաւ: Բայց նրա սիրտը ցաւալի կերպով տրորւում էր: Այժմ նա այլևս չուտով վերադառնալու յոյս չ'ուներ: Նիկողայոսի ասելով, նա պէտք է վերադառնար ոչ թէ Նաւպլիա, այլ Պանիցա, որտեղ մինչև այն ժամանակ, երբ կարելի կը լինի Նանիին ազատել Տրիպոլիսի գերութիւնից, նրա համար գործ կը ճարուէր: Երբ ամեն ինչ պատրաստ լինի, փարսաները կը վատուեն ամբողջ Պելոպոնէսում, և հիւսիսային ու հարաւային մասերում միանգամից ապստամբութիւնը կը բռնկուի: Այդպիսի ընդհանուր շարժմանը երկու պատճառ կար: Յունաց ոյժերը բաւականաչափ կազմակերպուած չէին, որ վստահանային յարձակուել Տրիպոլիսի վրայ, որը շատ սաստիկ ամրացրուած էր և ոչ միայն բազմաթիւ բերդապահ զօրքեր ուներ, այլև ջրի բաւականաչափ պաշար: Ընդհակառակը, Կալամատան աւելի քիչ էր պաշտպանուած, ջրի պաշար չ'ուներ, և նրա զօրքերի թիւը մեծ չէր: Բացի դրանից, նա մի ծովափնեայ քաղաք էր, և տիրելով նրա անպաշտպան նաւահանդատին, որը միջնաբերդից հեռու չէր գտնուում, յոյները կարող էին թիւրքերին հարկադրել Տրիպոլիս փախչելու: Հիւսիսային մասի ապստամբութիւնն էլ միևնոյն հետեանքը պէտք է ունենար, Տրիպոլիսը Պելոպոնէսի ամենահարկու ամրոցն էր, և մանաւանդ՝ ինչպէս յոյս ուներ Նիկողայոսը, յոյների կազմակերպութիւնը կարող էր այնպէս զարգանալ, որ պաշարէր ամրոցը—թիւրքերի այն ժամանակուայ միակ ապաստանը: Այնտեղ մի վճռական ճակատամարտ կը լինէր, որը կ'ազատէր ամբողջ Պելոպոնէսը: Իսկ մինչև այդ ժամանակ մըտադրութիւն կար այդ կողմը կարելի միւս երկրից կղզիներում կազմակերպուող նաւատորմի և հրձիգ նաւերի օգնութեամբ, որոնք պէտք է ոչնչացնէին նաւահանգիստները մտնող և այնտեղից դուրս եկող թիւրքական նաւերը: Գործնականապէս չորս նաւ միայն կար—Կորնթոսում, Պատրասում, Նաւպլիայում և Կալամատայում: Առաջին երկուսը հիւսիսային մասի պարագլուխների հողացողութեան առարկան էին, իսկ Կալամատան ու

Նաւայիլան Նիկողայոսի և Պետրօ-բէյի կարգադրութեան տակ էին դանւում:

Իր ճանապարհորդութեան առաջին պիչերը Միտոսը Նեմէայում անցկացրեց և հետեւալ ամբողջ օրը թափառում էր ներքեի մեծ դաշտավայրում, ուր շատ լճեր կան: Այնտեղ միշտ դարնան հոտ էր բուրում. ծագիկներն իրանց անուշահոտութեամբ լցնում էին օդը, և մեղուները խումբ-խումբ թռչկոտում նրանց շուրջը: Արեգակի ճառագայթներն ուրախ խաղում էին ասուակների թափանցիկ մակերևոյթի վրայ: Կէսօրին Միտոսի ձին հրճուանքով արածում էր հիւթալի խոտը: Սակայն գարունը ոչ մի ազդեցութիւն չէր գործում երիտասարդի սրտի վրայ. նա առաջ էր գնում տխուր, յօնքերը կիտած, և նրա հերոսական արկածներով լի կեանքը, որի համար նա զոհել էր իր երջանկութիւնը, նրա աչքում նշանակութիւնը կորցրել էր: Նիթէ նա իմանար, թէ մի ծանր տանջանքներով լի մահուտազնազ է սպասում իրան, գուցէ ձիւս գլուխը չըջէր և հրաժարուէր իրան տրուած անհնարին յանձնարարութիւնը կատարելուց: Սակայն, բարեբաղդաբար նա զիտէր միայն այն, ինչ որ պէտք է անէր երկու շաբաթուան ընթացքում և այդ բանը պարտաւոր էր կատարել՝ Նիկողայոսին տուած խօսքը, Եանիին տուած երդումը և պարտականութեան զիտակցութիւնն աչքի առաջ ունենալով:

Երկրորդ օրը արեգակը մայր մտնելուց առաջ սարի լանջին խաղողի այգիների մէջ նա նկատեց Գուրան: Գիւղի հակառակ կողմում բարձրանում էին մի լեռնաշղթայի ձիւնապատ գագաթները, որոնց վրայ խաղում էին արեգակի ճառագայթները: Եանիօյի տունը դանւում էր գիւղի ծայրում, և Մարիամը չափազանց ուրախ, սիրալիր ժպիտն երեսին պիմաւորեց Միտոսին: Եանիօն գաշան աշխատանքի էր գնացել, և երիտասարդներն սկսեցին ազատ պատմել միմեանց այն, ինչ որ պատահել էր իրարից բաժանուելուց յետոյ:

— Եանիօն լաւ ամուսին է, — ասում էր Մարիամը, — և շատ էլ լաւ ոտճիկ է ստանում: Նա սրտիկ ուղած ձիւոց ուժեղ է և երկու մշակի չափ է աշխատում: Ես էլ ուժեղ եմ, և երբ նա մինչև ժամը տասը տուն չէ վերադառնում, շատ անգամ ինքս եմ գնում պինետունը նրա ետևից և հրելով տուն բերում: Բայց դու, Միտոս, ինչո՞ւ ես եկել այտուղ:

— Նիկողայոսի գործով: Եանիօն մեզ մի մեծ ծառայութիւն կարող է անել: Ես այդ բանը Նիկողայոսի թոյլտուութեամբ կարող եմ ասել քեզ, Մարիամ: Նա պէտք է մի փոքրիկ սեզեկու-

Թիւն տանէ վանքը: Սրա համար չորս օրուայ վարձ կը ստանայ
և բարի գործ կատարած կը լինի:

—Թիւրքերի գէմ:

—Ի հարկէ:

Մարիամը գլուխը շարժեց:

—Յանկօն լու մարդ է,—պատասխանեց նա,—բայց մի-
այն կերակրի և զինու մասին է մտածում, ուրիշ ոչինչ գո-
յութիւն չ'ունի նրա համար: Սակայն նա չուտով կը վերադառ-
նայ, և դու կը խօսես հետը: Որքան ուրախ եմ քեզ տեսնելով,
Միտասոս Յիշում ես, ինչպէս միասին խաղող էինք արտրուս
աշնանը: Նրանից յետոյ դու աւելի ևս մեծացել: Գու Յանկօյից
երկու անգամ բարձր ես, միայն նա այնպէ՛ս հաստ է:

Մարիամն ահնեքի բաւականութեամբ նայում էր նրան և
մի ինչ որ զգայուն տրամադրութեան մէջ էր: Միտասոսն տես-
նելով՝ նա մտաբերեց Նաւալիան և այն օրերը, երբ ինքը տաս-
նեօթ տարին գեռ նոր էր անցկացրել և հպարտանում էր նրա-
նով, որ ո՛չ միայն հարսնացու էր, այլ և Միտասոսի եթէ ո՛չ լի-
ակատար սիրոյ, գոնէ նրա հեռամտութեան առարկան: Նա մի
ժամանակ մինչև անգամ երկմտութեան մէջ էր, թէ չը մերժէ
արդեօք Յանկօյին այս գեղեցկադէմ երիտասարդի համար. բայց
խոհեմութիւնը յաղթող հանդիսացաւ, և նա իր ընտրութեամբ
չատ երջանիկ էր: Այնուամենայնիւ նրան տեսնելով՝ երիտա-
սարդ կնոջ սիրար լցուեց կէս-ուրախ, կէս-վշտաղին զգացմուն-
քով, մանաւանդ որ նրա հերոսական արկածները և Մաւրոմի-
խալիներէ նշանաւոր սոհմի կողմից որդեգրուելը Միտասոսին ա-
ւելի ևս դրաւիչ էին դարձնում նրա աչքում: Այդպիսով երբ
Յանկօյի ծանր քայլերի ձայնը լսուեց, Մարիամն ավտոսայ, թէ
նա ինչո՞ւ այդպէս շուտ վերադարձաւ տուն:

Իրաւ, Յանկօյի հաստ, լիբը կերպարանքը, նրա կարմիր,
փայլուն գէմքը և փոքրիկ, իւզտ աչքերը Միտասոսի արեակէզ
այտերի և պայծառ, շողշողուն բիբերի կատարեալ հակապատ-
կերն էին ներկայացնում: Նա շատ ուրախացաւ Միտասոսի գա-
լուն և խնդրեց, որ ընթրիքից յետոյ սկսէ խօսել գործերի մասին:

Իր ոյժերը կերակրով և զինով ամրապնդելուց յետոյ Յան-
կօն յայտնի անհանգստութեամբ լսեց Միտասոսի առաջարկու-
թիւնը:

—Նու ես քեզ ձիւ համար չորս օրուայ վարձ կը տամ,—
աւելացրեց երիտասարդը բացատրելով այն գործը, որի համար
եկել էր Գուբա:

Յանկօն մի քանի բուպէ լուռ մնաց, իսկ յետոյ հրամայեց
կնոջը մի առան էլ գինի բերել: Նա յատկապէս վախենում էր

կնոջ սուր լեզուից և կամենում էր առանց նրան խօսել Միտտոսի հետ, բայց Մարիամը հասկացաւ ամուսնու զիտաւորութիւնը և զինին ձեռին չուտով վերագարձաւ:

—Ա՛յ, տեսնում ես,—ասում էր Եանկօն, երբ նա նորից մտաւ սենեակը. ևս բազմաթիւ դաշտային զորքեր ունեւմ և խոստովանւում եմ, չէի ցանկալ խառնուել ձեր գործի մէջ, իսկ ինչ վերաբերում է ձիու չորս օրուայ վարձին, դա կարող է իմ ծախքերը ծածկել, բայց աշխատութեանս համար ինչ պէտք է ստանամ:

Միտտոսը յօնքերը կիտեց:

—Դու չես ուզում, ուրեմն ինձ էլ արդելք մի գառնար,—ասաց նա վերկենալով.—հարկաւոր է մի ուրիշին գտնել:

—Ամաչիր, Եանկօ, —բացադանչեց Մարիամը, —դու սէ թէ իմ ամուսինը, այլ մի ջորի ես: Միմիայն կողէկների վրայ ես մտածում և վախենում ես մի երկու օր նուիրել այն գործին, որով Միտտոսն ամիսներով է պարապում: Միթէ դու այստեղ պէտք է ուտես—խմես, մինչդեռ ուրիշներն իրանց անձներն զո՞ րեքում հայրենիքի համար: Եթէ ես տղամարդ լինէի, չէի ամուսնանալ քեզ նման մի վախկոտ աղջկան:

Եւ նա մի արհամարհական հայեացք պցեց Եանկօյի վրայ, յետոյ վեր կացաւ, մօտեցաւ Միտտոսին և երկու բաժակ զինի լցնելով՝

—Քո և բոլոր քաջերի կենացը,—ասաց նա երիտասարդի հետ բաժակները չըխկացնելով.—իսկ դու, —աւելացրեց նա նոսխկին արհամարհանքով գառնալով ամուսնուն,—դու մինչև անգամ չես էլ ուզում խմել այն մարգկանց կենացը, որոնք անհամեմատ լաւ են քեզանից: Ես արդէն վաճաքի ճանապարհին կը լինէի, եթէ Աստուած ինձ տղամարդ ստեղծէր, և Միտտոսը մի այգպիսի յանձնարարութիւն անէր:

—Դու, Մարիամ, —բացադանչեց Միտտոսը:

—Այն, և ես դրա համար մի դրօշ էլ չէի պահանջիլ, բայց այդ՝ մի մոմ ես կը վառէի Աստուածամօր պատկերի առաջ իբրև չնորհակալութիւն այն բանի համար, որ ինձ յաջողուեց ծառայել սուրբ գործին:

—Բայց ինչն է արդելում քեզ այդ անել, Մարիամ,—ասաց Միտտոսը, Նիկողայոսի խօսքերը մտաբերելով.—դու ամեն մի տղամարդուց էլ լաւ կը կատարես յանձնարարութիւնը: Վաճաքում հարցրո՞ւ վանահօր ուր լինելը և Նիկողայոսի նամակը յանձնիր նրան:

—Յիմարութիւն է այդ, Մարիամ,—ասաց Եանկօն,—դա կնոջ գործ չէ:

—Դուրս տուր, ինքզ զնս մատանից զինի բերելու, —պատասխանեց նա անկեղծ սպասարթեամբ, —իսկ ես կը կատարեմ այն, ինչ որ դու վախենում ես անել: Ես վաղն իսկ լուսաբացին ճանապարհ կ'ընկնեմ, Միտսնս:

Իսկապէս Եանկօն շատ դո՛հ էր: Եթէ մի ուրիշ հայրենասէր կատարէր այն, ինչ որ նրա համար էր սրտշուած, նրա սրտովը չէր լինիլ, իսկ այժմ ամեն ինչ լաւ վախճան ունեցաւ. նա տանը մնաց, և միևնոյն ժամանակ ոչ որ չի իմանալ, թէ ինքը մերժել է: Խեղճ Եանկօն երկչոտ բնաւորութիւն ունէր, և խաղաղ, կուշտ կեանքը նրա երևակայութեան միակ առարկան էր: Փառաւոր քաջագործութիւնները և համարձակ արկածները ոչ մի զին չ'ունէին նրա աչքում: Մինչև անդամ և հարեցութեան մէջ նա չափաւորութեան սկզբունքին էր հետևում և երբէք սահմանից չէր անցնում: Նրա կեանքի օրէնքը — չափաւորութիւնն էր, որը բանաստեղծները ոսկէ են անուանում, թէպէտ և յայտնի չէ, թէ ինչն է, քանի որ բոլոր որոճող կենդանիները միևնոյն սկզբունքով են առաջնորդուում: Նա երկու դեղեցիկ յատկութիւն ունէր — աշխատասիրութիւն և անձնօրութիւն դէպի իր նշանաւոր կիներ, իսկ հերոսական սղին բացակայում էր նրա մէջ:

Միտսոսը հետեւալ օրը երեկոյեան ուշ հասաւ. Կորնթոս և տեղեկացաւ, որ մի կամ երկու ժամից յետոյ կայրին ուղեորուելու է Պատրաս: Նա հաղիւ միայն կարողացաւ Նիկողայոսի յանձնարարութիւնը հաղորդել քաղաքապետին, ճաչել և նաւապետի հետ համաձայնութիւն կայացնել իրան և իր ձիուն Պատրաս տեղափոխելու զնի վերաբերմամբ: Գիշերը քամին յաճախ փոխում էր, բայց հետեւալ օրը փչեց յաջողակ քամի, և նա Պատրասի ափը դուրս եկաւ ճիշտ այն ժամանակ, երբ Մարիամը ջորուն նստած՝ մօտենում էր վանքին:

Մենաստանի դրան մօտնա տեսաւ միաբանների մի խումբ, որոնք առուակի առաջ նստած՝ ձիում էին: Նրանցից մէկը, որ մի արևխառն ծերուկ էր, մօտեցաւ նրան և ասաց աշխոյժով.

—Թող Աստուած օրհնէ քեզ: Ինչու ես չ'որհ բերել մեզ մօտ:

—Ինձ հարկաւոր է վանահօրը տեսնել, —պատասխանեց նա:

—Դու նրա հետ ես խօսում:

—Դուք հատիկ ունէք, հայր սուրբ:

Նրա ձայնը պարզ էր և անդրդուելի: Բոլոր վարդապետները չնչերն իրանց քաշած՝ շրջապատեցին նրան:

—Քաղցածներն, թէ թիւրքերի համար, —հարցրեց վանահայրը:

—Սե հատիկ թիւքերի համար Շատ հատիկ պատրաստեցէք, որ սով չը լինի, և թող 1500 մարդ տանեն այն, ուր որ հարկաւոր է, հէնց որ նշանը արուի, որին այժմ էլ երկար սպասելու հարկ չի լինիլ նրանց հետո գնալ հարկաւոր չէ, այդ մարդիկ այստեղ կալամասայում կը հարկաւորուեն:

Այս ասելով նա թերուեց զէպի վանահայրը և ցած ձայնով ասելադրեց.

—Ինձ յանձնարարուած է նահ մի ինչ որ բան հաղորդել քեզ, բայց ես բառացի կերպով մտադել եմ այն խօսքերը, թէպէտ նիկողայոսի քրոջորդի Միտտոսը բացատրեց ինձ նրանց իմաստը:

—Աստ, ինչպէս որ յիշում ես,—ժպտալով պատասխանեց վանահայրը:

—Եթէ դու հրացանները զէպի հարաւ ես ուղարկել, այդ զէպրում վերադարձրուէ Գործն այնպէս չէ լինելու, ինչպէս որ նիկողայոսը ենթադրում էր: Ձեր բոլոր զէնքն ու բոլոր մարդիկ այստեղ կը հարկաւորուեն:

—Լաւ, բայց ինչ նշան պէտք է լինի:

—Ես չը գիտեմ, բայց մի քանի օրից Միտտոսը Պատրասից կը գայ այստեղ: Դու առաջին իսկ հայեացքից կը ճանաչես նրան. նա բարձրահասակ է ինչպէս մի աշտարակ, նրա զէմքը փայլում է ինչպէս արեգակը, և նրա վրայ նայելիս՝ մարդու սիրտ ուրախութեամբ լցում է: Նա ամեն ինչ գիտէ և կը բացատրէ քեզ:

—Ես կը սպասեմ Միտտոսին: Իսկ դու կը մնաս մեզ մօտ գիշերելու. մենք քեզ համար պատուաւոր հիւրերի սենեակը կը պատրաստենք. այստեղ մի ժամանակ արքայազուտտրն է սպրելիս եղել:

—Ես պէտք է վերադառնամ,—պատասխանեց Մարիամը,— և չեմ կարող ոչ մի բոլոր կորցնել:

—Դու չես ուզում մեր հիւրասիրութիւնը վայելել: Այդ լաւ չէ: Բացի դրանից դու զաւագիր ես և պէտք է զգուշանաս: Ի՞նչ կը պատասխանես, եթէ քեզ հարցնելու լինեն նախկին օթեանն այսպէս շուտ վերադառնալուդ պատճառը: Իսկ վաղը կը պատմես, թէ մենաստանում նորընծայ եզրօրդ մօտ էիր, և թէ միաբանութիւնը սիրալիր կերպով ընդունեց քեզ: Ուրիշ ճար չը կայ, մենք ստիպուած ենք սուտ խօսել, դրա պատասխանատուութիւնը թիւքերի վրայ կ'ընկնի: Ջորից տուր ծառային, նա հոգ կը տանէ:

Այսպիսով զէպը պատահեց Մարիամին ծառայելու հայրենիքին, և նա կատարեց իր պարտականութիւնը, իսկ յետոյ վերադարձաւ զէպի իր գիւղական համեստ կեանքը: Գուրան ա-

մենեին չէր մասնակցում նախապատրաստուող մեծ դէպքին: Այս գիւղը գտնուում էր վանական հողի վրայ և թիւրքերի կողմից ոչ մի հալածանքի չէր ենթարկուում: Բայց ապստամբութեան լուրն այս հեռուոր անկիւնը հասնելով՝ արձագանք գրտաւ Մարիամի սրտում և նրա ձանձրալի, միակերպ կեանքը լուսաորուեց այն զիտակցութեամբ, թէ ինքն էլ դո՛ւն է մի բոսքէ ձեռք դրաւ ընդհանուր սուրբ գործի վրայ:

Միտոսը Պատրաստում հեշտութեամբ կատարեց ներկողայութի յանձնարարութիւնը: Հերմանը հիացաւ նրա հազորդած գործողութեան ծրագիրը լսելով և շատ զարմացաւ, որ թիւրքի կեղծ նամակի գործը երիտասարդի հնարագիտութիւնն էր. նրա դովասանքը չողորթեց Միտոսին: Փարոսների հարցի լուծումն աւելի ժամանակ էր պահանջում, որովհետև Միտոսը ճանապարհին պէտք է համաձայնութիւն կայացնէր այն անձնաւորութիւնների հետ, որոնք համաձայն էին միաժամանակ աչքի ընկնող տեղերում փարոսներ վառել: Բայց Հերմանը քաջ ծանօթ էր ամբողջ երկրի հետ և լաւ խորհուրդներ տուաւ պատանուն փարոսների համար տեղեր որոշելու վերաբերմամբ, որովհետև, ինչպէս բոլորովին արգարացի կերպով ասում էր նա, եթէ փարոսներն այնպիսի բարձրութիւնների վրայ վառուէին, որտեղից նրանք չը պէտք է երևային ցաշտավայրերի բնակիչներին, այն ժամանակ զրանից ոչինչ գուրս չէր գալ:

Երկար խորհրդածութիւններից յետոյ որոշուեց, որ Միտոսը մարտի 10-ից շուտ չէր կարող Պանիցա հասնել, իսկ յետոյ, մինչև Եանիին Տրիպոլիսից ազատելու համար լինելը, շատ գործ կ'ունենար կատարելու: Այդ պատճառով փարոսները մարտի 20-ից շուտ չ'էին կարող վառուել, բայց այդ օրից նրան տուողները պարտաւոր էին իւրաքանչիւր երեկոյ իրանց տեղերում լինել: Պատրասի և Միգասպէլայօնի մէջ փարոսների տեղի վերաբերմամբ ամենախոշոր գփուարութիւն անգամ չը կար: Լեռնաշղթայի բարձր տեղերում զրուած երկու փարոս կարող էին ամեն կողմ լուր տարածել, վիճելի էր միայն Տայգետի ու Հէլմոսի միջև գրուելիք փարոսի հարցը: Հերմանը ենթադրում էր, որ ամենից լաւ է տեղաւորել Լիկայօնի աչքի ընկնող կենտրոնում, մի հին սաճարի աւերակների վրայ, Անդրիսէնայից չորս մղոն հեռու, որտեղ մի քահանայ կար, որն իհարկէ՛ կը համաձայնուէր վառել փարոսը:

Հետևեալ օրը Միտոսը հրաժեշտ տուաւ Հերմանին և քառասունութը ժամից յետոյ հասնելով Միգասպէլայօն, այնտեղ լսեց, որ Մարիամն անվնաս այցելել էր մենաստանը:

—Կեցցէ՛ նա,—հիացմամբ ասաց վանահայրը:

Փարոսների գործը շատով վերջացաւ, և վանահայրը Միտասի հետ բարձացաւ մենաստանի մօտ ձգուած լեռնաշղթայի դազաթը, սրտեղից հաւատարապէս երևում էին այն բոլոր կէտերը, ուր մտադիր էին շինել Հէլմոսի ու Պատրասի փարոսները: Այդ տեղը շատ լաւ էր սրտչուած, և վանահայրը խոստացաւ, որ մարտի 20-ից իւրաքանչիւր երեկոյ այդտեղ կը հսկէ սուրբ գործին անձնուէր մի վարդապետ, և հէնց որ Հէլմոսի փարոսը բոցավասուի, նա կը մտնէ և իրր:

V

Լէօնդարի գիւղից, որը կիսաշրջանի ձևով ընկած էր Հէլմոսի ստորտի մօտ, և սրտեղ պէտք է շինուէր փարոսների չրգթայի երկրորդ օգակը, անկարելի էր Անդրիսէնան տեսնել, իսկ Լիկայօնն ուղիղ, սրտչակի կերպով բարձրանում էր նրա վրայ: Միտասը յոյս ունէր, թէ տաճարի աւերակները դէպի արևմուտք ձգուած փոքրիկ բարձրութիւնների վրայ էին դանուած: Հետեւալ օրը արշալուսին նա ուղևորուեց Անդրիսէնա, ուր հասաւ երկրորդ օրը: Այն երկրները, որի միջով գնում էր նա, ամայի ու մերկ էին, և թիւրքերը ոչ մի կասկած չ'ունենալով, թէ այս հեռուոր անկիւնում իրանց դէմ դաւադրութիւն կարող է լինել, ճանապարհին չէին անհանգստանցում Միտասին: Նա շատ սիրալիր ընդունելութիւն գտաւ քահանայի տանը, որի անունով Հերմանը նրան նամակ էր տուել, և ճաշից յետոյ նրանք ձիով ճանապարհ ընկան դէպի տաճարի աւերակների վերեր բարձրացած լեռները ստուգելու համար, թէ այդտեղից երևում են արդեօք Տայկետը՝ հարաւային կողմում և Հէլմոսը՝ հիւսիսային: Քահանայի ասելով անցեալ տարի այնտեղ եկել էր մի բարձրահասակ անգլիացի, որը նկատել էր աւերակները և ասել, թէ այդտեղ Ապոլլոնի տաճարն է եղել, որ նախնի յոյները Բասսէ էին անուանում:

—Սակայն այս տեղն ինձ դուր չէ գալիս,—տելացրեց հայր Զերվասը:

Մի ժամից յետոյ երկնքի երեսին փետրալից ամպեր երևացին, և քանի բարձրանում էին, այնքան աւելի մատախուզի չերտը պատում էր նրանց: Այս բանը լաւ հետեանք չէր խոստանում նրանց ճանապարհորդութեանը, բայց Զերվասի խօսքերին նայելով, չ'արժէր վերադառնալ, սրովհետև այդ մէջը կարող էր մի ակնթարթում ցրուել, եթէ միայն քամի բարձրանար: Այնուամենայնիւ թանձր չերտը քանի գնում, մուշլ տեսք էր ընդունում, յետոյ նա բոլորովին ծածկեց արեգակը, և նրանք տա-

սր քայլ հետու ոչինչ չէին տեսնում: Վերջապէս լերան դառի-
վայրի վրայ նրանք ինչ որ ահագին ստուերներ նկատեցին, և
մատախուղի միջից հետզհետէ սկսեցին սիւներ երևալ: Այդ
աւերակներն էին:

Այդ միջոցին Միտսոսը իր յոգնած ձիուն հեշտութիւն տա-
լու համար վայր թառ և սկսեց քաշել սանձից: Այդ պատճա-
ռով նա ետ մնաց իր ընկերից և զատիվայր չաւորով յամբարայլ
առաջ էր գնում նրա ետևից: Յանկարծ մատախուղի շերտի տա-
կից ինչ որ սրտաձնիկ աղաղակներ լսուեցին: Միտսոսը սար-
սափեց սնապաշտ երկիւղից և վազելով հասաւ հայր Չերվա-
սին: Արեգակը զուրս նայեց մատախուղի միջից, և սաստիկ քա-
մուց, որի շաչիւնն այնպէս վախեցրեց Միտսոսին, սպիտակ ամ-
պերն արագութեամբ գրուեցին: Երբ Վիտսոսը հասաւ այն
բլրակին, որի վրայ գտնւում էր տաճարը, արեգակն արգէն
գուարթ փայլում էր կապոյտ երկնակամարի վրայ: Նրա ոտնե-
րի տակ սիւնուած էին նկարագեղ հովիտները, իսկ հետում
ղէպի հարաւ երևում էր Կալամատայի դաշտավայրը՝ շրջապա-
տուած կապոյտ ծովով:

Երիտասարդը դարձնայմամբ նայում էր գորշագոյն սիւնե-
րին, որոնք կարծես աւելի շուտ լեռներից էին բուսել, քան թէ
մարդկափոճ ձևոների արդիւնք էին: Բայց քահանան շտապեցը-
րեց նրան՝ ասելով.

—Ես այդպէս էլ սպասում էի: Քամին ցրեց ամպերը,
բայց նրանք դարձեալ կարող են վերագառնայ: Մեզ հարկաւոր
է շուտով լերան դադաթիւն հասնել:

Միտսոսը ձին թողեց սիւների մօտ և լեռնային աստի-
ճաններով տաճարից երկու հարիւր ոտնաչափ վերև բարձրա-
ցաւ: Հիւսիսային կողմում բարձրանում էր Հէլմոսը, և նրա հա-
րաւարեկեան թիւն Լէօնգարիի վրայ որոշում էր մի ժայռ,
որը կարծես գիտմամբ շինուած լինէր փարոսի համար: Դառ-
նայով զէպի հարաւ, Միտսոսը տեսաւ մինչև երկինք համբար-
ձած Տայգետը, որ մօտաւորապէս տասներկու աչքի ընկնող
կէտեր էր ներկայացնում:

—Այժմ ամեն ինչ պարզ երևում է,—ասաց հայր Չերվա-
սը, որ մի շատ զրուշ մարդ էր,—բայց ես, այ թէ ինչ կ'ա-
նեմ: Դու չէ՞ որ զէպի հարաւ ես գնում և երկու օրից յետոյ
Կալամատայում կը լինես, իսկ երբորդ օրը կը զիչերես Սպար-
տայի ուղղութեամբ: Տայգետը կտրող լեռնային անցքի մի որևէ
գիւղում: Այդ երեկոյ արեգակը մայր մտնելուց յետոյ ես այս-
տեղ մի երկու ժամ խարոյկ կը վառեմ, և այն ժամանակ քեզ
յարմար կը լինի Տայգետի վրայ փարոսի տեղը որոշել: Տես, իմ

խօսքերը նորից կատարուեցին, բայց, փառք Աստուծոյ, քամին մեզ օգնեց անկլու այն, ինչ որ հարկաւոր էր:

Նա դեռ այս խօսքերը չէր աւարտել, երբ հովիտներից սկսեցին սպիտակ ամպերը բարձրանալ: Միտոսը վազելով իջաւ դէպի սիւնազարդ տաճարը: Ձին հանդարտ արածում էր հիւթալի խոտը, և երիտասարդը մի քանի րոպէ հիացած դիտում էր գեղեցկութեան և երիտասարդութեան աստուծոյ, առողջութեան, արեգակի լոյսի այս սրբավայրը:

Մօտենալով նրան, քահանան ներս մտաւ տաճարը և խաչակնքեց: Չարմացած Միտոսի հարցին, թէ ինչ է նշանակում այդ, նա պատասխանեց.

—Շրջակայ ընակիչները պատմում են, թէ այստեղ սատանայ է բնակուում: Ես չը գիտեմ, թէ հաւատամ արդեօք դրան, թէ ոչ, և այդ պատճառով զգուշութեան համար խաչակնքում եմ: Բայց շտապե՛ք ներքև, այստեղ լաւ չէ մթութեան մէջ մնալ:

Թէպէտ մառախուղը նորից պատեց լեռնային դառնվայրը, բայց դա այն աստիճան թանձր չէր, ինչպէս առաջ, և արեգակի ճառագայթները թափանցում էին նրա միջից: Հեռանալով տաճարից, Միտոսը ետ դարձաւ, որպէսզի մի վերջին հայեացք էլ գցէ նրա վրայ, մի ինչ որ տարօրինակ լոյս նկատեց աւերուած տաճարի դռնից. դա հաւանականաբար աիրող մառախուղի միջից փայլելող արեգակի շողքն էր:

—Նայիր,—ասաց նա՝ քահանային դառնալով,—կարծես տաճարը ներսից լուսաւորուած է:

Հայր Չերվասը ձիւռեց ցած թռչելով՝ սկսեց խաչակնքել և աղօթքներ կարգալ:

Միտոսը նայեց նրա ահաբեկուած, գունատ դէմքին: Այդ միջոցին նրան սարսափեցնող լոյսը չբացաւ, և քահանան նորից ձիւռ վրայ ցատկելով, բացազանչեց.

—Շուտ, շուտ, այստեղ չը պէտք է մնալ:

Եւ նա շտապով առաջ արշաւեց:

Միտոսը հետեց նրան: Նրա սիրտն էլ հանգիստ չէր: Երիտասարդի յիշողութեան մէջ յարութիւն առան մանուկ հասակում լսած պատմութիւնները վիթխարի կերպարանքների, որոնք իբր թէ բնակուում էին Ակրօպօլիսի հին տաճարների շուրջը, և Եգինէի լեռներում լսուող անբնական ձայների մասին:

—Ո՛հ,—խօսեց Չերվասը, երբ Անդրիսէնայի մեծ ձանապարհի մօտ Միտոսը հասաւ նրան. —Աստուած ինձ ծանր փորձութեան մէջ պցեց: Դէմէարիսը ձիւռ էր ասում, թէ այդ տաճարի մէջ գեղեցիկ պատանու դէմքով սատանայ է տեսեր:

— Եւ նա սրբեց իր ճակատին դուրս տուած սառն քրտնքի կաթիլները:

— Բայց ախր ինչ տեսար դու, — հարցրեց Միտասըր: — Ես նկատեցի միայն, որ դռնից արեգակի ճառագայթ չէր ներս ընկել:

— Այո, այո, — պատասխանեց Զերվասը, — ես խոտացել եմ Հերմանին փարոսը վառել և կը հսկեմ գագաթի վրայ, այն ինչ լուսափայլ պատանին գուցէ ինձ սպասէ ներքեր: Ո՛չ, մի ուրիշ ճանապարհ կ'ընտրեմ և հարեան հովտից կը բարձրանամ լեռները:

— Բայց ինչ է տեսել Դէմէտրիսը:

— Մի գործնանային երեկոյ մեր գիւղացի Դէմէտրիսը ոչխարներ է արածեցնում սաճարի մօտերում, լերան զառիվայրի վրայ: Գիշերը վրայ է հասնում, և նա վճռում է մինչև առաւօտ սաճարում մնալ, որը ներսից երկու մասի է բաժանուած: Դըրանցից մէկը մէջ Դէմէտրիսը ներս է անում ոչխարները, իսկ միւսում վառած խարոյկի մօտ անդաւորում ինքը: Ընթրելուց յետոյ նա պառկում և ուզում է քնել, բայց աչքերը չեն փակուած, և նա սկսում է ծիւղել: Մի բան նրան վրդովեցնում և անհանգստացնում է: Տաճարում օդը ծանր և մի ինչոր տարօրինակ անուշահոտութեամբ լցուած է լինում: Դէմէտրիսը վեր է կենում և դուրս գալիս: Այնտեղ նա նորից պառկում է սաճարի դրան առաջ և դարձեալ աշխատում քնել: Բայց յանկարծ նրան թւում է, թէ սաճարից ուրախ երգերի ձայներ են զալլու, նա նայում և տեսնում է, որ դռնից լոյսի մի ճառագայթ է ընկել այնտեղ, ինչպէս որ մենք հէնց նոր տեսանք: Մի բոլոյ յետոյ սանաճայներ են լուում, և ոչխարներն անարելուած չդուրս են վազում դռնից և ցրում գանազան կողմեր: Դէմէտրիսը վազում է նրանց կանգնացնելու, բայց սաճարի դրան մէջ երևում է մի լուսափայլ կերպարանք — մի գեղեցիկ երիտասարդ, նազելի, ինչպէս մի լեռնային այծիկ, նրա գէմքը փայլում է երկնային չքնաղութեամբ: Երիտասարդի մի ուսից կախուած է լինում ոսկէ նետերով կապարճը, ձախ ձեռքում ոսկէ աղեզն է բռնած ունենում, սաները ոսկէ սանդաղներով, գլխին մի դափնէ պսակ: Նա բոլորովին մերկ է լինում, ինչպէս մայրսեան լուսնկայ գիշերը և նրա նման լոյս է արձակում: Ձախ ձեռք երկու մատը նա դնում է ոչխարներից մէկի գլխին, որն անշարժ, առանց որևէ երկիւղ արտայայտելու՝ կանգնում է նրա դէմ: Տաճարում վառուած կրակը աղօտ կերպով փայլելում է աիրող ճաճանչափայլ լոյսի մէջ, ինչպէս ճրագը արեգակի ճառագայթների դրմացը: Հետզհետէ ոչխարները հաւաքւում են

նրա շուրջը և հմայուածի նուան դիտուում այդ արտասովոր տեսիլը: Վերջապէս հեթանոսների այս աստուածը, թէ ուղղակի սատանան, — աւելացրեց քահանան, ջերմեռանդօրէն խաչակնքելով, — բարձրացնում է աչքերը և ասում. «դու իմ սրբավայրը ոչխարների փարախ ևս դարձել, ինչպէս չես երկնչում ինձանից»: Դէմէտրիսը ծունկ է իջեցնում և պատասխանում. «Ես չը վիտէի, թէ այս տաճարը քոնն է, տէր»: — «Իբրև պատիժ, ևս վեր եմ առնում այս ոչխարը, — արտասանում է լուսաճաճանչ երիտասարդը և ձեռով խփում ոչխարին, որը կամաց խոնարհւում է նրա ոտների առաջ. — չառ ժամանակ էր արդէն, որ ես մարդ չէի տեսած, բայց նրանք առաջուանից աւելի տգեղացել են: Սակայն ևս քեզ կ'ասեմ, որ դու արձութիւնը լաւ է ինքնազուժութիւնից, և գեղեցկութիւնը բարձր է իմաստութիւնից կամ Աստուծոյ սիրուց: Նայիր ինձ և դու կը համոզուես, որ իմ խօսքերը ճշմարիտ են»:

Նա մեկնում է ձեռքը, բայց Դէմէտրիսն իսկոյն հասկանում է, որ այդ գեղեցկագէտ երիտասարդը չար ոգի է, և յուսահատ խաչակնքում է օդի մէջ: Այդ բոպէին աչքերը սեւանում են, և նա անդգայ փուռում է գեանին, իսկ երբ սթափուում է, տեսնում է, որ ինքը պտոկած է տաճարի քարէ յատակին, իսկ մօտն ընկած է սատկած ոչխարը: Մնացած հօտը հանդարտ չըջապատած է լինում տաճարի մուտքը: Լոյսն արդէն բացուած է լինում, և արեգակը բարձրանում է արևելքում: Այս բանը պատահել է տասը տարի սրանից առաջ, բայց Դէմէտրիսը մինչև այժմ էլ սարսափով է յիշում այն շարագուշակ գիշերը: Ես մինչև այսօր կարծում էի, թէ դա հասարակ հէքիաթ է, բայց այժմ տաճարի դրան լոյսը տեսնելով՝ սկսում եմ հաւատալ նրա խօսքերին: Սակայն եթէ Աստուած պահպանել է Դէմէտրիսին, ուրեմն ինձ էլ կը պահպանէ, երբ ես գնամ, փարոսը վառելու: Չէ որ դա սուրբ գործ է և Աստուծն հաճելի:

Միտասուր չը վիտէր, թէ ինչպէս վերաբերուէր քահանայի պատմութեանը Ի հարկէ՝ այն փաստը, թէ Դէմէտրիսի մօտ գիշի էր եղած, մասամբ կարող էր մեկնել այդ տեսիլը, բայց նա էլ ինչպէս յոյն, հակում ունէր դէպի անապաշտութիւնը:

— Այդ բոլորը շատ տարօրինակ է, — ասաց նա, — բայց դու, հայր Զերվաս, հօ չես հրաժարուում մեզ օգնելուց:

— Ո՛չ, ես ամեն ինչ սրբութեամբ կը կատարեմ: Ես գիտեմ, որ այն ժամանակ Աստուած երևա չի դարձնիլ ինձանից:

VI

Մարտի կիսին Միտոսը նորից լեռնային անանցանելի զա-
ռիվայրներով բարձրանում էր դէպի Պանիցա: Արդէն երկու
ժամ էր, որ գիշերն ընկել էր. երկինքը պարզ էր, և թէպէս
լուսինը թագնուած էր Տայգետի արծաթափայլ գագաթի ետեւ,
այնուամենայնիւ աստղերը պայծառ փայլում էին: Լեռնային
թարմ օդը չնչելով, երիտասարդը մեծ բառականութեամբ ըզ-
րում էր, որ յաջողութեամբ կատարել է այն, ինչ որ յանձնարա-
րուած էր իրան: Երեք օր զրանից առաջ նա նկատել էր, թէ
ինչպէս Բասսէի փարոսը յանկարծ լուսաւորել էր իր ամբողջ
չրջակայքը և մի մեծ աստղի նման փայլում էր հեռում, իսկ
այն ժամանակից սկսած նա անդադար զնում էր գիշեր-ցերեկ,
և այս ճանապարհորդութիւնը բոլորովին ուժասպառ էր արել
նրա խեղձ ձիուն: Վերջապէս հասնելով Պետրո-բէյի տանը՝ նա
յուրը բաղնից, բայց նրա ձայնին իր բարձր հաջոցով պատաս-
խանեց Օսմանը:

—Օսման, Օսման, ձայնդ կտրիր,—կանչեց Միտոսը.—ինձ
նչ որ չէ լուսւմ:

Վերջապէս տան ներսից ոսնաձայներ լսուեցին, և Պետրո-
բէյը գուռը բանալով հարցրեց.

—Ո՞վ է:

—Ես եմ, Միտոսը:

Մի րոպէ յետոյ նա Պետրո-բէյի գրկումն էր:

—Շատ ուրախ եմ քեզ տեսնելով, Միտոսս,—ասաց նա,
որքան շուտ վերադարձար: Մենք քեզ վազն էինք սպասում:

—Այն, այն, ևս շտապեցի, բայց այժմ ինձ հետ մի խօսէք,
—պատասխանեց երիտասարդը,— այլ ուտելու մի բան տուէք,
ևս ձմեռուայ նապաստակի նման քաղցած եմ, իսկ ձիս սարսա-
փելի յոգնած է:

—Գնա սենեակը, այնտեղ ընթրիքը պատրաստ է: Այնտեղ
է նաև նիկողայոսը, իսկ ես քո ձիու մասին կը հոգամ:

—Ո՞չ, քեզ անվայել է ծառայել ինձ նման մի երկխայի:

—Դատարկ բան է, գնա: Միայն ևս ու նիկողայոսը բոլոր
ձուկը կերել ենք, քեզ մի փայտմորիկ է մնում:

Այդ խօսքերն ասելով նա ձին քաշեց գաւթիթ: Բանն
այն էր, որ նա նիկողայոսից լսել էր Եանիին ազատելու
վերաբերմամբ Միտոսի սուած երգման և այդ երգումը շատ
շուտով իրագործելու համար նրա արած անձնագոհութեան մա-
սին, այդ պատճառով ցանկանում էր ինքն էլ մի ծառայութիւն

մատուցանել որդու հաւատարիմ ընկերին: Թէ ինչու՞ն էր կայս-
նում Միտսոսի դոհարերութիւնը, Պետրո-բէյն ու Նիկողայոսը
չը գիտէին, բայց ենթադրում էին, թէ երեք Միտսոսը սիրա-
հարուած է և չ'ուզեց անձնուել իր սիրելու հետ, թէպէտ նը-
րանք ո՛չ մի կերպ չը կարողացան իմանալ, թէ ո՞վ կարող էր
լինել նրա սիրածը:

Իր քաղցը յազեցնելուց և ծխելուց յետոյ Միտսոսը երկու
բարեկամներին պատմեց այն ամենը, ինչ որ արել էր, իսկ յե-
տոյ հարցրեց.

— Է՛հ, իսկ ձեզանո՞ւմ ինչ նորութիւն կայ:

— Լաւ բաներ չառ կան, իսկ վատ—քիչ,—պատասխանեց
Պետրո-բէյը,—սկսեմ վերջինից: Նիկողայոսը վախենում է, թէ
չուտով Տրիպօլիսում կ'իմանան նրա այստեղ լինելը, իսկ այդ
բանը բոլորովին ցանկալի չէ: Չորս օր սրանից առաջ նա պատահել
է երկու թիւրք զինուորի և կարծում է, թէ ճանաչել են իրան:
Նրանք գնալիս են եղել դէպի Տրիպօլիս: Ես չէի ցանկանալ,
որ ինձ հրամայէին նորից որոնել նրան: Մեր ազգականներն
ատանց այն էլ շատ գործ ունեն, քսան մարդ ուղարկել նրան
որոնելու համար—անյարմար բան կը լինէր:

— Իմ մասին չ'արժէ խօսել,—նկատեց Նիկողայոսը,—բայց
ինձ անհանգստացնում է Եանիի դրութիւնը: Մինչև այժմ նա
բոլորովին ազատով վիճակի մէջ է, բայց գործը վատ ընթացք
կը ստանայ, եթէ օրինակ ինձ ու քեզ Տրիպօլիս հրաւիրեն:

— Մահմէդ-Սալիկը չի համարձակուիլ այդպիսի բան ա-
նել,—պատասխանեց Պետրո-բէյը ծիծաղելով.— Եանիի մա-
սին էլ մի անհանգստանար: Նա միայն պարարտանում է, ուրիշ
ոչինչ: Չէ որ թիւրքերն օրական հինգ անգամ ուտում են նը-
րանք պատճառ չ'ունեն ինձ վրայ կոտորածելու, բայց ամենավատ
բանը, որ կարող է պատահել, այն է, որ քեզ ձերբակալելու հա-
մար կարող են այստեղ զինուորներ ուղարկել:

— Ես Եանիին շատ եմ սիրում և երգուել եմ ազատել նը-
րան,—ասաց Միտսոսը յօրանջելով,—բայց ես սաստիկ քնել եմ
ուզում: Իսկ երբ պէտք է գնամ նրա ետևից:

— Յոյս ունեմ, որ մի շաբթից յետոյ, իսկ քանի այստեղ
ես, ես քեզ կը ծանօթացնեմ զիւական նաւերի հետ,—ասաց
Նիկողայոսը.— դէ՛հ, այժմ մտի՛ր անկողինդ:

— Օ՛, որպիսի երջանկութիւն է ճանապարհից յետոյ ան-
կողին մտնել:

— Է՛հ, լաւ ընթրիքն էլ աւելորդ չի լինիլ.—նկատեց Պե-
տրո-բէյը ժպտալով:

Հետևեալ երկու օրը Միտսոսն զբաղուեց հրձիգ նաւերի

ուսումնասիրութեամբ: Նիկողայոսի հետ նա արշալոյսին գնում էր անտառ, և այնտեղ նրանք մնում էին մինչև արևմուտք: Բայց երկրորդ օրը սուսն զիրագառնալիս նրանք զբան առաջ մի թիւրք հեծեալ զինուոր տեսան: Սա բռնած էր նաև ուրիշ երկու ձիու սանձեր:

—Սյց լաւ չէ,—ասաց Նիկողայոսը, Միտսոսի հետ ես ցատկելով դէպի սառեքրը,—ես այդպէս էլ կարծում էի: Դէհ, գնա սուսն, Միտսոս, իմացիր, թէ ինչ են անում և եկ ինձ ասելու: Ես քեզ կը սպասեմ ջրաղացի ետեր:

Եւ նա շաապով անհետացաւ մթութեան մէջ:

Միտսոսը մտտեցաւ տանը, բայց զինուորը կանգնացրեց նրան:

—Եսասկ,—ասաց նա, որ նշանակում է՝ «չէ կարելի գնալ»:

—Ձէ կարելի, ինչ ես ասում,—ուրախ պատասխանեց երիտասարդը.—բայց ինչու համար ես չեմ կարող տեսնել իմ ազգականին:

—Եսասկ,—կրկնեց թիւրքը և գօտկի ետևից դուրս քաշեց ասրճանակը:

Միտսոսը մտածմունքի մէջ ընկաւ: Նա մեծ բաւականութեամբ կռիւ կը սկսէր թիւրքի հետ, որովհետև Եանիին պատահած արկածից յետոյ համոզուել էր, որ թիւրքերը վարժ չեն զէնք բանեցնելու մէջ, բայց գետեր, որ տանը երկու թիւրք էլ կան, և խոհեմութեամբ ետ նահանջեց, ասելով.

—Կը գնամ տուն: Բայց ինչպէս ես կարծում, յիմարադրլուխ, հօրս տան առաջ քեզ նման մի յիմար էլ չի լինիլ:

Չինուորը ոչինչ չը պատասխանեց, բայց երևոյթին նա չէր ցանկանում վէճ բանալ հզօր Մարտիխալի տոնոյ հետ: Միտսոսը զանդաղ քայլերով հեռացաւ փողոցի միջով, բայց չըջելով անկիւնը, բոլոր ոյժով վազեց դէպի ջրաղացը, որտեղ Նիկողայոսն էր սպասում նրան:

—Ի՞նչ անենք,—ասաց նա ցած ձայնով,—Պետրօ-բէյի մօտ թիւրք զինուորներ կան, ինձ տուն չեն թողնուէ: Ո՞հ, մօրեղբայր, Եանիին վատ կը լինի: Ի՞նչ անենք:

—Լաւ չէ: Նստիր, Միտսոս, մտածենք:

Անցաւ հինգ րոպէ, և Նիկողայոսն առաջինն ընդհատեց լուծիւնը:

—Ես գիտեմ, թէ ինչ է պատահել,—ասաց նա.—այդ մարդիկը եկել են Մահմէդ-Սալիկի կողմից Պետրօ-բէյին ձերբակալելու: Նա նրանց ձեռքումն է, որովհետև եթէ չը հնազանդուի, կարող են Եանիից վրէժխնդիր լինել: Ահա թէ մենք ինչ պէտք է անենք. հարկաւոր է որքան կարելի է շուտ ազատել Եանիին:

Տրիպոլիսից, իսկ Պետրո-բէյին ճանապարհից, որովհետև նրան հաւանականաբար կը տանեն Մահմէդ-Սալիկի մօտ: Բայց ինչպէս անենք: Ազն, Միտսնս, մի կէք մտածիր այս դժուար գրութիւնից զուրս գալու: Բացի զրանից հարկաւոր է Մաւրոմիխալի բոլոր ազգականներին նախազուշայնել պատահածի մասին և այն, թէ Պետրո-բէյին չէ կարելի ազատել, քանի զեռ Եանին Տրիպոլուսն է, որովհետև զրա համար նա կարող է կեանքից զրկուել: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ես ուղղակի անձնատուր կը լինեմ թիւրքերի ձեռքը:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետև երկու հոգուն աւելի հեշտ է փախչել, քան թէ մէկին, և մեզ երկսիս ձերբակալելով, թիւրքերը չեն շտապիլ գէպի Տրիպոլիս: Հակառակ դէպքում նրանք կը կարծեն, թէ ես կը գնամ Եանին ազատելու: Այն, զա գեղեցիկ միտք է, բայց զրա յաջողութեան համար բոլոր ազգականները պէտք է չը չարժուեն տեղերից:

— Ուրեմն ես կը շտապեմ Եանին ազատելու:

— Որքան կարելի է շուտ: Ո՞րտեղ է ձիդ:

— Պետրո-բէյի տանն է:

— Ուրեմն գնա Դիմիտրիոսի մօտ և վեր առ նրա ձին ու ճանապարհ բնկիր, ոչ մի բայէ կորցնել հարկաւոր չէ: Սպասիր. իսկ որտեղ պէտք է թաղնուէք Եանիի հետ նրա ազատուելուց յետոյ: Դուք Տրիպոլիսից պէտք է փախչէք գիշերը և լեռների վրայով դիմէք ուղղակի գէպի Արկադիայի վերին դաշտավայրը, որտեղ Միգալոպոլիսն է: Այնտեղից անցկացէք Տայգետը և գնացէք մինչև Պոդոլիդօ, որտեղից զու նայում էիր Բասսէի փարոսին: Մենք այնտեղ կը սպասենք ձեզ: Այժմ ես կը շրջեմ ամբողջ գիւղը և կը յայտնեմ պատահածն ու կ'ասեմ, որ նրանք Տայգետում միանան մեզ հետ, իսկ յետոյ անձնատուր կը լինեմ թիւրքերի ձեռքը: Դէհ, գնա, Միտսնս և յիշիր, որ Եանիի բաղը քո ձեռքումն է:

— Նրանք բաժանուեցին: Նիկողայոսը նախազուշայրեց ազգականներին և սուրհանգակներ ուղարկեց բոլոր շրջակայ գիւղերը յայտնելու գումարման տեղը և ասելու, թէ կոխը կալամատայի պաշարումից կը սկսուի: Վերջացնելով այց՝ նա գիմեց գէպի Պետրո-բէյի տունը:

— Եասակ, — արտասանեց զինուորը՝ տեսնելով նրան:

— Դու չը գիտես, թէ ում հետ ես խօսում, — հպարտութեամբ ապաց Նիկողայոսը. — ես Նիկողայոս Վիգալիան եմ, որի մասին երևի լսած կը լինես:

Զինուորն ատրճանակն ուղղեց դէպի նա և բարձրաձայն գոչեց.

—Տեղիցդ չը շարժուես, եթէ ոչ՝ կը խփեմ: Է՛ր, այստեղ արիք,—աւելացրեց նա,—ես բռնեցի Նիկողայոս Վիդալիսին:

Նիկողայոսը չ'ուզեց ընդդիմութիւն ցոյց տալ և գնդակահար լինել, ուստի դիրքը չը փոխեց, իսկ տանից դուրս վազեց աւագ զինուորը:

—Դուք իրաւունք ունէ՞ք այսպէս վարուելու,—հարցրեց Նիկողայոսը,—եթէ ոչ՝ կը տուժէք այս կամայականութեան համար:

—Մենք այս բանն անում ենք Տրիպօլիսի նահանգապետի հրամանով, նա հրամայել է մեզ ձերբակալել քեզ և Պետրօբէյի ու Տրիպօլիս տանել:

Բոլոր ժամանակ նրանք թիւրքերէն էին խօսում, բայց այստեղ յանկարծ Նիկողայոսը հարցրեց յունարէն:

—Ինչո՞ւ եմ ձերբակալուած ես:

—Յունարէն չեմ հասկանում,—պատասխանեց զինուորը:

—«Ն. փառք Աստուծոյ»,—մտածեց Նիկողայոսն ու իր հարցը կրկնեց թիւրքերէն:

—Սուլթանի ծայրագոյն իշխանութեան և Տրիպօլիսի նրա ներկայացուցիչ Մահմէդ-Սալիկի դէմ դաւադրութիւն կազմելու համար:

Նիկողայոսը ծիծաղեց:

—Դա լուրջ բան է: Կարող ենք տունը մտնել, և եթէ ես ձեր գերին եմ, ուրեմն անձ առէք ատրճանակս ու դանակս... Բայց ես ձեզ խորհուրդ եմ տալիս դալ իմ ետեից, ապա թէ ոչ եթէ Պետրօբէյի ազգականները լսեն, թէ դործն ինչու՞նն է, ձեզ համար լաւ չի լինել: Ինձ վրայ բարդուած ամբաստանութիւնը սուտ է, բայց ես չէի ցանկանալ, որ ձեր և ազգականներիս արիւնը թափուէր:

Զինուորները լսեցին նրան և ներս քաշեցին ձիերը:

Նիկողայոսի ձայնը լսելով՝ Պետրօբէյն ուրախացաւ: Այդ ի հարկէ՛ նշանակում էր, որ նա մի միջոց էր գտել այս դրժուար կացութիւնից դուրս գալու և Յանիին ազատելու համար: Նա հարցական կերպով նայեց Նիկողայոսին և յետոյ ժրպտաց: Պետրօբէյը հասկացաւ, որ ամեն ինչ յաջողակ է, և Միտսոն ուղևորուել է Յանիին ազատելու:

Նիկողայոսը նստեց և շարունակում էր զրոյց անել զինուորիներին հետ:

—Այս թիւրքիմայութիւնը բաւական պարզ է,—ասաց նա,

—բայց ես շատ ուրախ եմ նորին գերազանցութեանը տեսնել Տրիպոլսում, ուր ես մինչև այժմ չեմ կարողացել գնալ:

—Նորին գերազանցութիւնը նոյնպէս ուրախութեամբ կ'ընդունէ ձեզ, — ասաց զինուորներէի մէկը ժպտալով. — ձեզ յայտնի է, որ անցեալ շաբթու մարդ էր ուղարկել ձեր ևտից, բայց Պետրօ-բէյը պատասխանել էր, թէ դուք անյայտացել էք, և թէ ինքը սրտնում է իր՝ անիծեալ ազգականին:

—Մեր մէջ մի փոքրիկ կոխ էր ծագել, բայց մենք վաղուց արդէն հաշտուել ենք, այնպէս չէ, Պետրօ-բէյ, — ասաց Նիկողայոսը և աւելացրեց յունարէն. — փառք Աստուծոյ, սրանք ոչ մի յունարէն խօսք չեն հասկանում:

Պետրօ-բէյը գլուխը թափահարեց:

—Մենք վաղն ատաւօտ շատ կանուխ ճանապարհ կ'ընկնենք, — ասաց նա. — իսկ այժմ ընթրելու ժամանակ է: Խնդրում եմ ձեզ նստել այժմ: Ներքեցէք վատ հիւրասիրութեանս համար, մենք չը դիտէինք, թէ բազմ կ'ունենանք ձեզ նման հիւրերի այցելութեանն արժանանալ:

Այս խօսքերի վրայ նա ծափ տուաւ, և ծառան ներս մտաւ սենեակը. սա Եանիին հասակակից մի պատանի էր, որին որք մնալուց յետոյ Պետրօ-բէյը իր մօտ էր վերցրել: Կոստանդինը թէ ծառայ էր և թէ Եանիի ընկերը, սրին նա չափազանց սիրում էր:

—Ընթրիք բեր, — ասաց Պետրօ-բէյը յունարէն, — ականջդ սուր պահիր:

Պատանին ընթրիք բերաւ, և թիւրքերն սկսեցին սիրով ուտել-խմել: Շարունակ յոյների մէջ շրջելով, նրանք վարժուել էին զինուն և մեծ բաւականութեամբ վրայ պրծան: Նիկողայոսը թիւրքերէն քիչ էր խօսում և այն պատրուակով, թէ Պետրօ-բէյն այդ լեզուին այնքան ծանօթ չէ, նա յունարէն էր խօսում, իսկ Նիկողայոսը թարգմանում էր նրա խօսքերը: Այսպիսով նրանք կարող էին թիւրքերի մօտ առանց որևէ կասկած զարթեցնելու հաղորդել միմեանց, ինչ որ կամենային:

Նիկողայոսը հաղորդեց Պետրօ-բէյին, թէ Միտոսը զընացել է արդէն Եանիին փախչելու գործով: Նրանք պէտք է ճանապարհ ընկնէին հետևեալ ատաւօտ. իսկ սրովհետև Միտոսը նրանցից տասներկու ժամ առաջ էր դնացել, ուստի հարկաւոր էր առաջին իջնանած տեղում բազդերը փորձել: Այդ բանն աւելի ևս յարմար էր նրանով, որ նրանք դեռ իրանց ազգականների մէջ էին գտնուում, և հարկաւոր եղած դէպքում այս վերջինները կարող էին օգնել նրանց փախչելու: Նիկողայոսը մի շատ հասարակ ծրագիր առաջարկեց, որը նրան արդէն մի ան-

զամ բոլորովին յաջողուել էր: Պատանի Կոստանդինը ծառաների հետ պէտք է ուզեկցէր նրանց առաջին իջևանում ճաշ պատրաստելու համար և այնտեղ, մինչդեռ թիւրքերն իրանց քաղցն ու ծարաւը յազեցնելով զբաղուած կը լինէին, նա պարտաւոր էր մի սրիէ պատրուակով հեռանալ, կտրատել թիւրքերի թամբերի կապերն ու տուն վերադառնալ: Մի քանի բոպէ սպասելուց յետոյ Պետրո-բէյն ու Նիկողայոսը կը ցատկէին իրանց ձիերի վրայ և կ'անհետանային ապշած թիւրքերի աչքից, սրմնք հնարաւորութիւն չէին ունենալ հետամուտ լինելու նրանց:

Թիւրքերի ուշադրութիւնը չը գրաւելու համար Նիկողայոսն այս բոլորը Պետրո-բէյին ու Կոստանդինին յայտնեց զատարկ նախադասութիւնների հետ խառն, և համոզուելու համար, թէ արդեօք ծառան հասկացաւ, Պետրո-բէյն ասաց.

— Եթէ հասկացար, Կոստանդին, ինձ համար մի բաժակ ջուր բեր, իսկ եթէ ոչ, Նիկողայոսին գինի տուր:

Կոստանդինն իսկոյն տանտիրոջ բաժակը ջրով լցրեց և և դուրս գնաց սենեակից:

Վերջայնելով այդ, Նիկողայոսն սկսեց զինուորների հետ խօսել: Նա ցանկութիւն յայտնեց, որ հետեւալ առաւօտ որքան կարելի է շուտ ճանապարհ բնկնեն, որովհետև վախենում էր, թէ Մաւրոմիտալի ազգականները տեսնելով, որ Պետրո-բէյին տանում են, կը յարձակուեն նրանց վրայ, իսկ միւս կողմից ցանկանում էր չուտով տեսնել Մահմէդ-Սալիկին և պարզել թիւրքիմացութիւնը: Նրանք համաձայնուեցին և ասացին, որ եթէ Պետրո-բէյն ու Նիկողայոսը իրանց հետ զէնք չեն վերցնել, այն ժամանակ բոլորը տուրխտների նման կը գնան, մանաւանդ որ նրանց լաւ վարմունքի համար երաշխաւոր է Տրիպոլիում իբրև պատանց նստած Նանին:

Թէպէտ հետեւալ առաւօտ նրանք այնքան էլ վաղ դուրս չ'եկան գիւղից, բայց Նիկողայոսի խորհրդով բոլոր բնակիչները թաղնուել էին, այնուամենայնիւ իրանց պահուած սեղերից նրանք ժպտադէմ նայում էին այդ հանդիսաւոր գնացքին, նախապէս ուրախանալով Նիկողայոսի յաջող ռազմադիտութեան վրայ, որի նախազիծը նախընթաց օրը հիացրել էր բոլորին: Առաջից գնում էր զինուորներից մէկը, նրա ետևից կամաց-կամաց ընթանում էին Նիկողայոսն ու Պետրո-բէյը, միւս զինուորները կողքերին, իսկ բոլորից յետոյ պաշարը ձեռքին հետևում էր Կոստանդինը: Նիկողայոսն անզաղար խօսում էր և իր հետաքրքիր զրոյցներով զբաղեցնում թիւրքերին. այսպիսով գործն արանչելի կերպով առաջ էր գնում:

Երեք ժամ յետոյ նրանք հասան մի նկարագեղ, ստուերա-

չատ ծառաստանի, որտեղով մի արագավազ ստուակ էր հասում: Պետրո-բէյն առաջարկեց կանց անել այդտեղ ճաշելու: Թիւրքերը հաճութեամբ իրանց համաձայնութիւնը յայննեցին, և Կոստանդինն շտապով ամեն ինչ պատրաստեց այնպէս, ինչպէս որ իրան պատուիրուած էր: Ընչի վերջին նա հեռացաւ ծառերի տակը և արագութեամբ կատարելով թիւրքերի թամբերի վերաբերմամբ իրան արուած յանձնարարութիւնը, իսկոյն հեռացաւ:

Նրկար ուսում-խմում էին մեր ճանապարհորդները, մինչև վերջապէս Նիկողայոսը նկատեց, որ արեգակն արդէն ցած է իջել, ուստի և եթէ ցանկանում էին դիչերը Տրիպոլիս հասնել, ժամանակ է ճանապարհ ընկնելու: Զինուորները համաձայնեցին, բայց ահամայ, որովհետև նրանք հարկաւոր եղածից աւելի էին խմելու Նիկողայոսն ու Պետրո-բէյը նրանց ետեից դիմեցին դէպի ձիերը: Այդ միջոցին գրանցից ստալինը ուրախութեամբ նկատեց, որ Կոստանդինը քանդակ էր նաև զինուորների հրացանների կայծակաքարերը:

— Դէ՛հ, չնւա,— բացառանչեց նա դաժնալով իր ընկերէն:

Նրանք շտապով ցատկեցին ձիերի վրայ և արշաւեցին դէպի անտառը, որ ձգւում էր մինչև Տայգետի ստորոտը: Նրանց ետեից զարմացական բացառանչութիւններ հնչուեցին, և փախչողները լսեցին, թէ ինչպէս զինուորների հրացաններից գուրս թռան նրանց կայծակաքարերը:

Դրան հետեւեց մի ծիծաղելի տեսարան: Նրկաւ զինուոր թռան ձիերի վրայ, բայց մի քանի քայլ անելով, իրանց թամբերի հետ պտրուեցին դեպի, իսկ կրորդը ոտքը ասպանդակի մէջ դնելով, կանգնած մնաց իր անթամբ ձիու առաջ:

Կէս ժամից աւելի դործ գրուեց թամբերը կարգի բերելու վրայ և այն էլ միայն երկուսը կարելի եղաւ շինել: Նրանց տէրերը ձի նստեցին և արշաւեցին— մէկը փախչողների ետեից, իսկ միւսը դէպի Տրիպոլիս: Բայց երրորդն սկսեց սպրով գնալ, մի ձևքը թամբն առած, իսկ միւսով բռնած ձիու սանձը:

Փախչողների ետեից գնացող թիւրքը շուտով գիւղ հասաւ, ուր ժողովուած էր Մաւրոմիխալիների քաջ առնմը, որը գնդակների շաշկնով զինուորեց թիւրքին: Նա կանց առաւ և մի հայկացի պեղեց ամբոխի վրայ, բայց այդ արդէն բաւական էր Նիկողայոսին ու Պետրո-բէյին այնտեղ տեսնելու համար. սրանք հեռուից քաղաքավարութեամբ բարևում էին նրան: Զինուորը ետ դարձրեց ձիու պուխը և շտապով արշաւեց:

VII

Պանիցայից մինչև Հիփիոս երկու օրուայ կամ երեք գիշերուայ ճանապարհ էր, հաշուելով օրը 12 ժամ, իսկ գիշերը ութը, բայց Միտոսսը երեկոյեան ժամը 10-ին դուրս գալով, իր ճանապարհորդութեան նպատակակէտին հասաւ քսան ժամուայ մէջ, այսինքն երկրորդ օրուայ արեածագին: Իսկ նոյն օրուայ արեամին նա գտնուում էր մի լեռնային անցքում, այն դաշտավայրի վերևը, որտեղ Տրիպոլիսն էր. նա հաշուում էր արեածագից երկու ժամ առաջ հասնել այդ քաղաքը, որպէսզի մինչև բնակիչների արթնանալը բաւական ժամանակ ունենար Եանիի հետ յախչելու համար: Ձիուց վայր զատկելով, նա թողեց, որ մի քիչ հանգստանայ, իսկ ինքը երկիւղ կրելով, թէ մի գուցէ յոգնածութիւնից քնի, չը նստեց, այլ սև հացի մի կըտոր կրծելով և Հիփիոսից վերայրած թթուած գինին քիչ-քիչ խմելով կամաց-կամաց ետ ու առաջ էր անում: Վերջացնելով իր աղքատիկ ճաշը, նա սկսեց ծխել, որովհետև ծխախոտի ծուխը ամենայաւ միջոցն է քնի դէմ:

Վերջապէս երբ ձին բաւական հանգստացաւ, նա ճանապարհ ընկաւ: Գիշերը մութն էր, և ձին մի քանի քայլ անելով սայթաքեց ու ընկաւ քարերի կոյտի վրայ, իր հետ տապալելով և Միտոսին: Նրա ոչ մի տեղը չը վնասուեց, և շտապով վեր թռաւ, սակայն խեղճ ձին մի շատ խոր վէրք էր ստացել:

—Ո՛վ սուրբ կոյս,—բացագանչեց Միտոսը յուսահատուած,—բնչ անեմ այժմ:

Մինչև արեածագը դեռ չորս ժամ կար, բայց Տրիպոլիս հասնելու համար հարկաւոր էր երկու ժամ, իսկ այժմ արիւնհաղախ և վիրաւորուած ձիով անկարելի է այդ անելը: Հարկն ստիպում էր ոտքով գնալ, չը նայելով յօգնածութեանն ու քնահատութեանը: Բայց որ գլխաւորն է, նրա համար մեծ ցաւ էր թողնել իր ձին երկար տանջանքներից յետոյ սատկելու այս ամայի տեղում: Ուստի նա որոշեց իսկոյն վերջ տալ նրա կեանքին և ատրճանակը հանելով՝ գնդակահար արաւ նրան: Երբ խեղճ կենդանին ձգուեց գետնին, Միտոսն արտասուքն աչքերին ոտքով ճանապարհ ընկաւ դէպի Տրիպոլիս:

Ինչպէս էր անցնում ժամանակը, նա չէր զգում, այլ անդիտակցաբար, առանց կանգ առնելու գնում էր առաջ: Միայն ժամանակ առ ժամանակ նա մի անտանելի ցաւ էր զգում ծընկների վրայ սուր քարին ընկնելուց և յիշում իր խեղճ ձին: Վերջապէս նա անապասելի կերպով աչքերը լախ բաց արաւ: Ա-

րեկերում երկինքը վարդի պոյն էր ստացել, և միքանի բոսպէ անցած՝ հարաւային երկրներին յատուկ արագութեամբ լեռների կատարին երևաց արեգակը՝ իր ճառագայթները սիւնելով Տրիպոլսի վրայ, որը դեռ մի մզոն հեռու էր նրանից:

Միտոսը քարացաւ: Նա ուշացել էր: Յերեկը նա չէր կարող նահանգապետի տունը մտնել, իսկ երեկոյեան Պանիցայից զինուորները կը գային:

— Եանի, Եանի... — բացապանչեց նա հեկեկալով և ձեռները ծնկներին խփելով:

Նա փռուեց գետնին, որը փայլիլում էր գիշերուայ ջրօսից: Նրա մէջ դեռ այնքան պիտակցութիւն կար, որ թաթերի վրայ սողաց մինչև ճանապարհի երկու կողմը բուսած թփերը և մանկական խորունկ քնով քնեց այնտեղ:

Կէսօրն արդէն վաղուց անցել էր, երբ նա բաց արաւ աչքերը: Քունն ամբասնդել էր նրա ոյժերը, և նա իրան ֆիզիքապէս ու բարոյապէս բոլորովին թարմ էր զգում: Երիտասարդը նստեց և սկսեց իր գրութեան վրայ մտածել: Թէպէտ զինուորները պէտք է լուսով Տրիպոլիս հասնէին, բայց և ինքն էլ անպատճառ պարտաւոր էր գնալ այնտեղ, և հէնց որ զինուորները երևային, փորձ փորձէր մի ուրիշ ճանապարհով ձեռք գցել Եանիին: Նա վեր կացաւ, շտապով մտաւ քաղաք, մի ինչ որ հիւրանոցում ճաշեց և յետոյ հեռուից դիտելով նահանգապետի տունը՝ վերադարձաւ դէպի գլխաւոր ճանապարհը և սկսեց զինուորներին սպասել: Բայց ժամերն անցնում էին իրար ետևից, իսկ նրանք դեռ չէին երևում: Վերջապէս մութն ընկաւ, և Միտոսն ուրախ սրտով չունչ քաշեց:

Նա շտապով դարձաւ դէպի քաղաքային հրապարակը, որտեղ անկիւններում արդէն ձէթի լապտերներն էին փայլիլում: Այն փողոցներում, որի վրայ գտնւում էր Եանիին բանտարկած տան հարևան պարիսպը, մի սրճարան կար, և Միտոսն ստիպուած էր սպասել, մինչև կը փակէին այն: Այն ժամանակ նա եռանդուն կերպով սկսեց իր գործը: Յաճ պարսպի վրայ մալլցելն ու այնտեղից նահանգապետի տան կտուրը բարձրանալը գծուար բան չէր, բայց կտրի վրայով ստիպուած եղաւ սողալ, որ պահապանների ուշադրութիւնը իր վրայ չը դարձնէ: Նա արդէն հասել էր կտրի այն տեղին, որի տակ նրա կարծիքով ընկած էր Եանիի սենեակը, և կամենում էր իջնել պատըզամբը, երբ յանկարծ մի ինչ որ բան շարժուեց նրա տակ: Բարակ կտուրը, որ մինչև տախտակները կղմինդրներով էր պատած, ճայթեց նրա ծանրութեան տակ, և Միտոսը ջարդու-

փշուր եղած կղմինդրների հետ գլորուեց մի սենեակ, որը բարեբաղդաբար, ինչպէս յայտնուեց, Եանիի բանտն էր:

—Այդ դու ես, Միտասս,—հնչեց ծանօթ ձայնը,—կտրիր շուտով պարանը:

Եանիի թևերը կապուած էին մէջքին, և Միտասսը զօակից դանակը հանելով՝ պարանը կտրեց: Բայց այդ իսկ րոպէին դուռը բացուեց և բանտապահը երեսց չեմքին: Միտասսը յարձուկուեց նրա վրայ և տապալից զետնին, իսկ Եանին մի հաստ վզնոցով նրա բերանը կապեց:

—Պարանը տուր,—ասաց Միտասսը և շտապով կապեց իր զոհի ոտներն ու ձեռները:

—Իսկոյն դանապանն էլ կը գայ,—ասաց Եանին,—դու որ փակիր:

Աւելի ապահով լինելու համար նրանք դրան և պատուհանի ետևը գէմ դրին սենեակի մէջ եղած բոլոր կարասիները: Յետոյ Միտասսը բարձրացաւ սեղանի վրայ և կտրի ծակից դուրս եկաւ. այնտեղ նա պառիկեց փորի վրայ և ձեռները մեկնելով՝ Եանիին էլ քաշեց:

—Ե՛ս ճշմարիտ էի ասում,—ասաց նա ցած ձայնով.—դու շատ հաստացել ու այնպէս ծանրացել ես:

Կտրից դժուար չէր իջնել գէպի պարիսպը, իսկ այնտեղից էլ փողոցը, որ այժմ բոլորովին բամբակ էր: Բայց անփրաս քաղաքի դռներին հասնելով՝ սարսափահար նկատեցին, որ նրանք փակ են, և այնտեղ պահապան է կանգնած:

Այս դժուարութիւնից էլ նրանց Եանիի խորամանկութիւնը և Միտասսի ոյժն ազատեց:

—Գիտես ինչ,—չնշմաց առաջինը.—նա քեզ քաղաքից ուշ վերադարձող վաճառականի տեղ ընդունելով՝ դուռը կը բանայ: Դու բանիր նրա կոկորդից և հրիբ գոնից դուրս, իսկ ես դրան բանալին կը հանեմ և կը դամ ձեր ետևից:

Միտասսը չը հասկացաւ, թէ Եանին ինչնու համար ուզէր է վերջնէր բանալին, բայց հնազանդուեց:

Նա մօտեցաւ պահապանին և շնորհեց բաց անել դուռը, իսկ Եանին թաղնուեց մի տան ետև:

—Բազարից ես դալիս,—հարցրեց պահապանը:

—Այն և գնում եմ տուն, Տանա,—պատասխանեց Միտասսը՝ հարկան գիւղի անունը տալով:

Պահապանը բանալին հանեց և բաց արաւ դուռը, իսկ Միտասսն այդ իսկ րոպէին ընկեց նրան և սպառնալով սպանել, եթէ ձայն հանէ, պարսպից դուրս քաշեց: Իր կոկորդը երիտասարդի զօրեղ ձեռների մէջ զգալով՝ թիւրքը ոչ մի ձայն

չարձակեց: Այդ միջոցին Եանին փականքից հանեց բանալին
և շտապեց նրանց ետևից:

— Հետո պցիր գրան, — ասաց նա, վազելով ընկերի մօտ:
Միտտան իսկոյն դէպի ճանապարհը շարտեց թիւրքին, որը
բարեբաղդաբար մի շատ կարճահասակ մարդ էր:

Մինչդեռ թիւրքը պառկած՝ մարդաբէին էր օգնութեան
կանչում, Եանին փակեց դռները և բանալին պցեց թիւրքի մէջ:

Երիտասարդները յաղթական կերպով նայեցին միմիանց և
բարձրաձայն ծիծաղեցին: Իրաւ, տեսարանը շատ ծիծաղաշարժ
էր: Բայց ժամանակ կորցնելն անկարելի էր:

— Գնանք, Եանի, — բացադանչեց Միտտոսը. — մեզ այստեղ
մնալ չէ կարելի: Նախ գնանք ճանապարհով և քայլներս շտա-
պեցնենք: Մենք դեռ ժամանակ կ'ունենանք խօսելու:

Երկու ժամ նրանք շտապով առաջ էին գնում, յաճախ
մինչև անդամ վազում էին, թէպէտ իսկապէս մի ամիս փա-
կուած մնալուց՝ Եանին բուռական հաստացել էր: Վերջապէս
նրանք հասան Տրիպօլիսը Մեզալօպօլիսի բաժանող լեռների մէջ
դանուող նեղ հովտի ծայրին շինուած մի փոքրիկ հիւրանոցի, որը
Միտտոսի հօր ընկերներէից մէկին էր պատկանում: Նրա պա-
սուհաններէից լոյս էր երևում, երկու ընկերները դուռը բաղ-
լսեցին:

Հիւրանոցի տէրը, որի անունն Անատաս էր, ուրախու-
թեամբ ընդունեց Միտտոսին, որը պատմեց նրան իրանց փա-
խուստը և խնդրեց, որ եթէ Տրիպօլիսի թիւրքեր գան, ասէ
նրանց, թէ փախուսականները Մեզալօպօլիսի ճանապարհով գը-
նային:

— Մենք այնտեղ չենք գնում, — աւելացրեց Եանին, — նր-
բանց սուտ ճանապարհ յոյց տալով՝ ժամանակ կը վաստակենք:

Այդ բանը շատ զուարճալի երևաց Անատասին, և նա ու-
րախ-ուրախ ծիծաղեց: Բայց հասկանալով որ չէր կարելի ոչ
մի բոպէ կորցնել, նա շտապով հաց ու միս գրաւ սեղանին:

Ոտքի վրայ իրանց քաղցը յաղեցնելով և ոյժերն աւրա-
պընդելով՝ ընկերներն առաջ վազեցին դառիվայր շաւղով, որը
տանում էր դէպի Տայկուտ: Ամբողջ գիշերը ոչ մի բոպէ կանգ
չ'առան նրանք և արևածագին արդէն Տայկուտի ստորոտի մօտ էին:

Թէպէտ մինչև տեսակցութեան տեղը դեռ մի օրուայ ճա-
նապարհ էլ ունէին կտրելու, բայց և այնպէս Եանին ասաց,
որ այլևս ոյժ չ'ունի մի քայլ անդամ անելու: Նրա աչքերը
քնահաստութիւնի խիւռում, և ստները քաշուում էին: Միտտոսը
պէտք է հաշտուէր կարիքի հետ և յայտնեց, որ ամբողջ օրը կը

պառկեն թփերի մէջ, իսկ գիշերը կը շարունակեն իրանց ճանապարհը:

—Շատ գեղեցիկ,—պատասխանեց Եանին,—նախ թիցլ տուր ինձ քնելու, յետոյ կը խօսենք, որքան կամենաս:

Նա փուռեց գեանին և մի բռնաբերեց յետոյ արդէն քնած էր:

Միտսոսն էլ շուտով հետևեց նրա օրինակին, բայց առաջ ինքը զարթնեց: Արեգակի դիրքին նայելով՝ կրկում էր, որ կէսօրը նոր էր անցել, և նա Եանինն չը զարթեցնելու համար կամացուկ վեր կենալով՝ դնաց ջուր գտնելու: Ո՛չ այնքան հեռու գտնուեց մի առուակ: Երբ Միտսոսը վերադարձաւ, Եանինն արդէն վեր էր կացել: Նրանք կերան Անաստասի տուած հացն ու միսը, իսկ յետոյ Եանինն ասաց, թէ ժամանակ է խօսելու:

—Միտսոս, դու սկսիր և պատմիր ինձ այն բոլորը, ինչ որ պատահել է քեզ,—աւելացրեց նա:

—Առաջին գիշերը,—պատասխանեց Միտսոսը,—ես ուղղակի ճանապարհ ընկալ գէպի Նաւալիա և այնտեղ հասայ կէսգիշերին մօտ, իսկ հետևեալ օրը դուրս եկայ այնտեղից:

—Հետևեալ ծրը,—բացադանչեց Եանինն,—այդպէս ևս սիրում ուրեմն Ձիւլէյմայինն է՞, ինչպէս է նա:

—Այդ իմ գործն է,—ասաց Միտսոսը՝ յօնքերը կիտելով.—աւելի լաւ է ուրիշ բանի մասին խօսենք: Հետևեալ օրը...

—Դու չը տեսնո՞ր Ձիւլէյմայինն,—ընդհատեց նրան Եանինն:

—Չը տեսայ:

—Ինչո՞ւ չը սպասեցիր մինչև գիշեր և մտկայիով նրա մօտ չը գնացիր:

—Որովհետև Նիկողայոսն ինձ ուղարկեց գործով:

Եանինն ուշի-ուշով նայեց ընկերին և ձեռքը գնելով նրա ուսի վրայ՝ սիրալիւր կերպով ասաց.

—Սիրելի՛, սիրելի՛ Միտսոս, բոլորը հասկանում եմ: Դու հետևեալ օրը ճանապարհ ես ընկել ոչ թէ Նիկողայոսի հրամանով, այլ որքան կարելի էր ինձ շուտ ազատելու համար տուածդ երդման զօրութեամբ: Բայց ես վախենում եմ, որ դու ինձ ատելիս լինես:

—Դատարկ բան է, Եանի—ժպտալով պատասխանեց Միտսոսը:

—Երդումն անկարելի է չը պահել, և բացի դրանից՝ ինչ կը լինէր իմ դրութիւնը, եթէ ես ուշ հասնէի Տրիպօլիս, իսկ չէ որ հազու վրայ հասայ: Ի՞նչ կը տեսնէի ես Տրիպօլիսում, եթէ ոչ թէ երեկ, այլ այսօր գիշեր հասնէի այնտեղ:

—Ես քեզ յետոյ կ'ասեմ այդ: Իսկ այժմ շարունակիր պատմութիւնդ:

Միտոսը պատմեց իր արկածները մինչև զինուորների ձեռից փախչելը:

—Դրա վերջը մենք Նիկողայոս մօրեղբորիցս կամ քո հօրից կ'իմանանք, երբ Տայգետում կը տեսնուենք նրանց հետ,— աւելացրեց նա.— դէհ, այժմ հերթը քոնն է, պատմիր:

—Իմ պատմութիւնը երկար չէ, և, փառք Աստուծոյ—ըսկսեց Եանին,—մի թէ երկու շաբաթ ես խմում, ուտում և քնում էի: Այդ բոլոր ժամանակը երկու անգամ տեսայ Մահմէդ-Սայիկին. նա շատ քաղցրութեամբ հարցնում էր, թէ լաւ է արդեօք դրութիւնս, մի որևէ բանի կարօտութիւն զգում եմ: Ինձ հարկաւոր էր միայն ազատութիւն, մէկ էլ ցանկանում էի քեզ հետ տեսնուել, իսկ որովհետև նա չէր կարող ինձ ոչ առաջինը տալ և ոչ երկրորդը, ուստի պատասխանում էի, թէ ոչինչ կարօտութիւն չեմ զգում:

Յետոյ մի շաբթի չափ սկսեց շուտ-շուտ այցելել ինձ, հարցնում էր հօրս և ազգականներիս մասին, նմանապէս և այն, թէ Պանիցայում եղև է արդեօք Նիկողայոսը: Ես ի հարկէ՝ պատասխանում էի, թէ իմ ազգականները լաւ, խաղաղասէր մարդիկ են, հանգիստ աշխատում են դաշտում և գոհութիւն տալիս Աստուծոն, որ իրանց տէրերը—թիւրքերը այնպէս բարի են և արդարամիտ դէպի իրանք. իսկ Նիկողայոսի մասին ասացի, թէ նրան փոքր հասակումս եմ տեսել միայն: Այդպէս անցնում էր ժամանակը, երբ յանկարծ սրանից հինգ օր առաջ ինձ մօտ եկաւ Մահմէդը և խորամանկ, դաժան դէմքով ասաց.

—Ուրեմն դու ասում ես, թէ քո ազգականները լաւ, խաղաղասէր մարդիկ են և գոհութիւն են տալիս Աստուծոն, որ բարի, արդարամիտ տէրեր ունեն: Իսկ ի՞նչ է, Եանի, դու էլ նս գովում նրանց այդ բանի համար:

Ես ոչինչ չը պատասխանեցի, որովհետև կարծում էի, թէ նա պատասխանի էլ չի սպասիլ, բայց Մահմէդը զայրացաւ և աչքերը փայլեցնելով՝ բացազանչեց.

—Պատասխանիր, թէ չէ կը հրամայեմ քերթել քո կաշին, չուն: Դուք բոլոր յոյներից չներ էք, թէպէտ զեղեցիկ չներ: Բայց չներին պէտք է կապած պահել: Գոհութիւն տուր Աստուծուն, որ քո տէրը բարի մարդ է և առանց ընդդիմանալու թոյլ տուր կապել ձեռներդ:

—Ինչո՞ւ,—հարցրի ես:

—Սոհեմ եղիր, եթէ ոչ կ'իրագործեմ սպառնալիքս,—գոչեց նա:

Ոչինչ չէր կարելի անել: Հարկադրուեցի ենթարկուել այդ ստորութեանը:

—Ա՛յ, այդպէս լաւ է,—ասաց Մահմէդը հանդստացած, երբ ձեռներս կապած տեսաւ.—մենք շուտով կը սովորեցնենք քեզ ազգականներիդ նման հնազանդ լինելու Դու շուտով կը տեսնես քո հօրը և Նիկողայոսինս ևս մարդ կո՛ւ ուղարկել նրանց ետևից: Եթէ նրանք գան այստեղ, այն ժամանակ լաւ, թէպէտ իսկապէս ինձ համար միևնոյնն է, ես չեմ վախենում հաչող շներից: Բայց եթէ նրանց այստեղ չը բերեն, այն ժամանակ հարկ կը լինի մտածել, թէ ինչ պէտք է անել քեզ: Ես այդ բանը դեռ ես չեմ որոշել,—ասաց նա՝ ուշադրութեամբ աչքերին մէջ նայելով,—կարելի էր կախել քեզ, բայց դու չափազանց գեղեցիկ սղայ ես, և ես աւելի կը ցանկանայի, որ դու ինձ ծառայէիր, օրինակ՝ վարդաջուր մատուցանէիր: Ես քեզ կապոյտ, արծաթով ստեղծագործած անթիւնոց, կարմիր անդրափարտիք և դեղին կօշիկներ կը հագցնէի. բայց թոյլ չէի տալ քեզ ո՛չ դանակ և ո՛չ ատրճանակ պահելու. դօտկիւղ ետեր: Չը նայելով որ դեռ ջահիլ ես, այնուամենայնիւ քեզ այդ բաները չէ կարելի հաստատել, որովհետև կարող ես մի որեէ շար բան անել: Կարելի է և ներքինի գարձնել քեզ: Յամենայն դէպս դու իմ ծառան կը դառնաս, և ես քեզ համար բարի տէր կը լինեմ»:

Եանիի ձայնը կտրուեց, և նա լռեց սաստիկ յուզուած, բայց մի րոպէ յետոյ շարունակեց.

—Եւ ես պարտաւորուած էի լուռ լսել այս ամենը, ես, ազատ յոյնս, որ միշտ թքել կո՞մ թիւրքերի վրայ: Բայց ես յիշում էի քո երդումը, Միտոսնս, և գիտէի, որ դու ինձ կ'ազատես, ահա, թէ ինչն էի լուռ: Մահմէդը շարունակուած էր արդէն իւրաքանչիւր օր այցելել ինձ և միշտ կրկնում էր.

—Ժամանակը մօտենում է, եանիս՝ նրանք շուտով կը գան այստեղ:

Իսկ երեկ առաւօտ նա ասաց.

—Նրանք այսօր այստեղ կը լինեն:

—Իսկ ես այն ժամանակ մտածեցի. «Նշանակում է այսօր երեկոյ ես այստեղ չեմ լինիլ. Միտոսնս ինձ կ'ազատէ մինչև երեկոյ»: Այդպէս էլ եղաւ: Ուրիշ ոչինչ չ'ունեմ պատմելու: Դու ինձ ազատեցիր, և ես կեանքովս ու պատուովս քեզ կո՞մ պարտական,—աւելացրեց նա՝ ձեռները Միտոսոսին մեկնելով.—քեզ այնպէս սաստիկ կո՞մ սիրում, որ երախտագիտութեան զգացմունքն այնքան էլ չէ ծանրանում սրտիս վրայ, բայց և այնպէս կը ցանկանայի քեզ համար զոհել աջ ձեռքս, կամ աջ աչքս»:

Միտոսը բռնեց Եանիի ձեռները և յոյների սովորութեան համեմատ մի նոր երգում տուաւ:

—Թող ինձ համար ջուրն արտասուք զառնայ և հացը աղ, եթէ քեզ օգնութեան չը հասնեմ այն ժամանակ, երբ դու կարօտութիւն ունենաս, և չը սիրեմ նրան, որին դու սիրում ես, կամ չ'ատեմ նրան, որին ատում ես:

Արեգակն արդէն թեքում էր դէպի արևմտեան լեռները, երբ նրանք կրկին ճանապարհ ընկան: Ո՛չ մէկը և ո՛չ միւսը երբէք այս կողմերում չէին եղած, բայց նրանք յոյս ունէին մի շաւիղ գտնել, որը Արկաղիայի զաշտավայրերից դէպի Լանգարդայի անցքի հարևան գիւղերից մէկը տանէր նրանց:

Քանի նրանք դէպի լեռներն էին բարձրանում, այնքան աւելի օդը թարմանում էր, և երիտասարդներն առոյգ և ուրախ էին քայլերը փոխում: Մինչև անգամ Միտսոսը ցաւ չէր զգում երկար ժամանակ Ջիւլէյմայից բաժանուած լինելուն համար, որովհետև դրա չնորհիւ նա իր ընկերին ազատեց:

Կէսգիշերին մօտ նրանք կանգ առան հանգստանալու: Լուսնի արծաթադոյն լոյսի տակ նրանց զլինների վերեր վայլում էին լեռների ձիւնապատ զապաթները, և Միտսոսը յիշելով՝ որ փարոսը նոյն իսկ ձևան դժի տակ էր գտնւում, որոշեց, որ այլևս հարկաւոր չէ վերի բարձրանալ:

Ոյժերը հաւաքելով, նրանք դարձան դէպի աջ և անընդհատ առաջ էին դնում, մինչև լեռների ետեից երևացին ծագող արեգակի առաջին ճառագայթները:

—Արդէն ցերեկ է, —ասաց Եանին, —նշանակում է մօտ ենք մեր նպատակին:

—Այո, —պատասխանեց Միտսոսը, —հէնց այս է փարոսի տեղը: Բայց այն ո՞վ է:

Եւ նա ցոյց տուաւ մի բարձրահասակ մարդու, որը նրանց ընդառաջ էր վազում:

—Նիկողայոս մօրեղբայրս է այդ, —ուրախութեամբ բացագանչեց Միտսոսը, —ապա, ցոյց տանք նրան, որ մենք էլ կարող ենք վազել:

Երկու բոպէից յետոյ նրանք երկուսն էլ Նիկողայոսի զըրկումն էին:

VIII

Յունաց բանակը, որը տեղաւորուած էր Տայգետի այս անմատչելի լանջի վրայ, լեռնապագաթին հիւսուած թռչունի բոյնի էր նմանում: Նա գտնւում էր ձիւնահալքից յորդացած մի լեռնային առուակի երկու կողմերում, որը զառիվայր խոռոչի միջով արագ հոսում էր դէպի Կալամատայի զաշտավայրը:

Նրանից հինգհարիւր քայլ հեռու, առանձնացած քարէ փոքրիկ հրապարակի վրայ, որը գլխաւոր լեռնաշղթայից մի նեղ կիրճով էր բաժանուած, բարձրանում էր փարոսը: Այդ տեղը Նիկողայոսն էր ընտրել, և նրա ընտրութիւնը շատ յաջող էր, որովհետեւ բանակը թագնուած էր լեռների մէջ և պաշտպանուած հիւսիսային քամուց. փարոսը կարող էր ծառայել իբրև զինուորական գլխաւոր վարչութեան մի շատ մօտիկ դիտարան: Նրա ներքերը, հիւսիսային կողմում, սփռուած էր Արկադիայի դաշտավայրը, որի միջով քիչ առաջ անցնում էին Միտոսն ու Եանին. արևմտեան կողմում, որոշակի երևում էին Մեսսէնայի հովիտը իր գլխաւոր կենտրոնի՝ Կալամատայի հետ, իսկ հարաւում Մեսսէնայի և Սպարտայի մէջ Տայգետի լայնութեամբ գալարուած էր Լանգարդի լեռնային անցքը:

Բանակը շրջապատուած էր ցախերից շինուած ամուր ցանկապատով, իսկ ներսից նա բազկանում էր փայտէ ձողերի վրայ ամրացրուած փոքրիկ խուղերից, որոնք հիւսուած էին սոճիների ճղներից և ծածկուած կղէզով: Կենտրոնում, առուակի մօտ կանգնած էր Պետրո-բէյի և Նիկողայոսի տնակը: Սա ոչնչով չէր տարբերուում միւսներից, միայն կտրին ծածանում էր սպիտակ և կապոյտ գոյներով մի դրօշակ, որի վերայ նկարուած էր յունական խաչը՝ թիւրքաց կիսալուսինը պատուանդանի տակ: Քիչ հեռու, մի քանի ծառերի տակ երևում էր մի աւելի ևս հիմնաւոր շինութիւն, տախտակներով և թաղիքով ծածկուած. գա վառօդի, գործիքների և զէնքերի պահեստն էր:

Բանակի մէջ մեղունների փեթակի նման մեծ կենդանութիւն էր տիրում. այնտեղ շտապով դատարկւում էր Կալիվիայից և Յիմովայից հէնց նոր ստացուած վառօդի կարաւանը: Պետրո-բէյն անձամբ նայում էր, թէ ինչպէս են վառօդը կրում պահեստները: Ամեն կողմ երևում էին խարոյկներ, որոնց վրայ առաւօտեան հացկերոյթի համար սուրճ էին եփում, իսկ հեռւում պսպղում էին այն երիտասարդների կացիւնները, որոնք սոճիներ էին կտրատում բանակի զանազան պէտքերը հոգալու համար: Վերջին երկու գիշերուայ ընթացքում շրջակայ գիւղերից բաւականաչափ հայրենասէրներ էին եկել զէնքերով, պաշարով և մինչև անգամ ոչխարների ու այծերի հօտերով, որոնք արածում էին ներքեր, մի ձորակի մէջ: Բանակում արդէն կրկու հարիւր մարդ կար, բայց երեք օրից յետոյ Պետրո-բէյը յոյս ունէր այդ թիւը հասցնել մինչև ութ հարիւրի: Ո՛չ այնքան հեռու, լեռան լանջերի վրայ տեղաւորուած էին դարձեալ երեք բանակ, այնպէս որ սպառազինուած մարդկանց ընդհանուր թի-

ւը, որոնք առաջին իսկ հարկաւոր եղած գէպքում կարող էին Տայգետից իջնել գէպի Կալամատա, հասնում էր մինչև երեք հազարի: Նրանք բոլորը Լակօնիայի, Արգօլիգայի և հարաւային Արկադիայի բնակիչներ էին, իսկ Մեսսէնի մարդաշատ հովտից սպասուում էր դարձեալ երկու հազար հոգի: Հիւսիսային Յունաստանի հայրենասէրները նոյնպէս պէտք է սպասամբէին Աքայում, հէնց որ փարոսների լոյսը երևար:

Բանակի մէջ խիստ կարգապահութիւն և կազմակերպութիւն էր տիրում: Երիտասարդների մի որոշ թիւ տեղաւորուած էր լերան գագաթին, հրաման ունենալով տեղեկութիւն տալ չրջակայքում նկատուող իւրաքանչիւր շարժման մասին և ուժով արգելել Մեսսէնայից գէպի Սպարտա գնացող ամեն մի թիւրքի, որովհետև երկիւղ էին կրում, թէ հայրենասէրների հաւաքման մասին կարող էին լուր տանել Տրիպօլիս Իսկապէս նրանք ոչ թէ վախենում էին, թէ կարող էին տեղեկութիւն տալ բանակին կազմակերպուելու մասին, որոնք ճանապարհի կողմից չէին երևում, այլ որովհետև չրջակայ գիւղերի բնակիչների նշանաւոր մասն իրանց ջորիներով ու հօտերով դուրս էին եկել. սակայն այս հանգամանքն էլ չէր կարող կասկած զարթեցնել, քանի որ սովորաբար ապրիլ ամսին գիւղացիները առժամանակ գնում էին լեռները ոչխարներն ու այծերը արածեցնելու հարուստ արօտատեղիներում և ամուխ պատրաստելու: Յամենայն դէպս Պետրօ-բէյի, Նիկողայոսի և Եանիի փախուստը կարող էր թիւրքերին զանազան ենթադրութիւններ անելու տեղիք տալ, ուստի շատ կարևոր էր, որ Եալամատայից ոչ մի տեղեկութիւն չը հասցնէին Տրիպօլիս, թէ վտանգ է սպառնում այդ քաղաքին, որը վերջին չաբաթների ընթացքում թիւրքերն սկսել էին շտապով ամրացնել, յանկանալով թիւրք ընտանիքների համար մի յուսալի սպաստարան դարձնել, և թէ յոյներն սպասամբեն:

Բանակի բոլոր մարդիկ, գէնքերը, ջորիները, ձիերն ու անասունները Պետրօ-բէյի հրամանի տակ էին գանւում: Որովհետև նա Մաւրոմիխալիների բաղմաթիւ սոհմի գլուխն էր, որի անդամներից էր գլխաւորապէս կազմուած բանակը գրաւող զօրաբաժինը, ուստի Նիկողայոսը օգտուէտ համարեց նրան յանձնել բարձրագոյն իշխանութիւնը, իսկ ինքը, ինչպէս որ ասել էր վանահօրը, լիովին բաւականացաւ հայրենիքին ծառայելու պատուով: Պետրօ-բէյն ի չարը գործ չը դրաւ իր ազգականի այս ազնիւ արարքը և այն պայմանով միայն համաձայնուեց կատարել Նիկողայոսի յանկութիւնը, որ առանց վերջնիս խորհրդի ոչինչ չի անիլ, և որ Նիկողայոսը միշտ պարտաւոր պէտք է Մարտ, 1903.

լինի ընդունել առաջնորդութիւնը, եթէ զօրքն այդ բանը ցանկանայ: Բացի դրանից նրան յանձնարարուեց հսկել պահապաններին և այն լրահանների վրայ, որոնց միջոցով բանակները յարաբերութիւն ունէին միմիանց հետ: Փարոսի պահապանները փոխելով, Նիկողայոսը երիտասարդների հետ գիմեց Պետրօբէյի մօտ: Նա զբաղուած էր ջորիների բեռներն ստանալով, բայց երբ սրբուն տեսաւ, վաղեց գէպի նա:

— Փնօք Առտուծոյ, — բացապանչեց նա, — որ դու ազատուեցիր, բայց մենք վաղուց արգէն սպասում էինք ձեզ, ինչու ուշացաք: Օ՛, Միտանս, սրբան շնորհակալ եմ քեզանից օգնութեանդ համար: Այժմ Նիկողայոսի հետ գնացէ՛ք իմ բնակարանը: Հէնց որ գործս վերջացնեմ, ես էլ կը գամ, և մենք միասին կը նախաձայնենք:

Վատօղի ցած բերելը և տեղաւորելը Պետրօբէյի կարծիքով մեծ զգուշութիւն էր պահանջուած: Գա ստացուած էր կողովներով, որոնք կապուած էին ջորիների երկու կողմերը և վերեւից ծածկուած սծուխով կամ ուրիշ որեւէ զիւղական բերքով: Այդ կողովները խնամքով տարուած էին մթերանոցը, իսկ այնտեղ վառօղը լցուած էր փոքրիկ շէրի մէջ, որոնք սովորական պատրոնտաչի մեծութիւն ունէին: Այգպիսի ութ հարիւր չիչ պատրաստուեցին, իւրաքանչիւր զինուորի համար մի հատ, իսկ դրանք լցնելուց յետոյ մնացած վառօղը պէտք է պահպանուէր փայտէ թեթեւ արկղների մէջ, որոնք ջորիներով տանելու համար կողովներից աւելի յարմար էին:

Ամբողջ օրը բանակն էին գալիս կամաւորների նորանոր խմբեր 8 կամ 10 հոգուց բաղկացած, և լուրեր էին ստացուած միւս բանակներից, թէ այնտեղ էլ սլօերն արագութեամբ աւելանում են: Ուրիշների թւում հայրենասէրների հետ միացան Նաւալիայից և Արգոսեան գաշտավայրից եկած յիսուն հոգի, որոնց մէջ էին հայր Անդրէասն ու Կոստանգինը: Միաստը ազիւտանաւ նշանակուեց Նիկողայոսի մօտ և այդ պատճառով Մաւրոմիսալիների բանակում մնաց, բայց սովորաբար մարդկանց որեւէ պաշտօն տալիս՝ հետևում էին աշխարհագրական պայմաններին, սրովհետև Պետրօբէյը փորձով գիտէր, որ միմիանց մօտիկ մարդիկ միասին աւելի քաջութեամբ են կրուում: Իւրաքանչիւր բանակ կազմակերպուած էր Մաւրոմիսալիների բանակի ձևով, և նրանց առաջնորդները յօժարակամ հպատակուած էին Պետրօբէյի բարձր իշխանութեանը, որովհետև մինչև այժմ դեռ չէին սկսուել այն տարածայնութիւնները, որոնք յետոյ այնքան յիստ հասցրին հայրենասէրներին: Բացի

դրանից հետևելու յիշխան Ալեքսանդր Իսախան-տիի փախուստից յետոյ խստապէս հրամայել էր, որ հարաւային մասում գործերի կառավարութիւնը յանձնուի տեղական առաջնորդներից մէկին, ընդ նմին ուղղակի մատնացոյց էր եղել Պետրո-բէյի կամ Նիկողայոսի վրայ:

Անցաւ մի շաբաթ, բանակները լցուեցին մարզկանոցով: Պետրո-բէյն անհամբերութեամբ սպասում էր բոլոր նախապատրաստութիւնների աւարտմանը: Ձեռք առնուած նախազգուշութիւնների և բարեյաջող գիպուածի չնորհիւ գեւ ոչ մի ընդհարում տեղի չէր ունեցել թիւրքերի հետ, և ըստ երևոյթիւն կալամատան ոչինչ չէր կասկածուած: Երկու օր առաջ տեղեկութիւն եկաւ, թէ երկու թիւրքական զինուորական նաւերն ուղարկուած այդ քաղաքը պաշտպանելու և նրա թիւրք բնակիչներին սղաակելու համար, եթէ յոյներն ապստամբուեն, բայց չը նայելով որ առաւօտից մինչև երեկոյ փարոսից հըսկում էին ծովածոցի վրայ, այդ նաւերի հետքն էլ չէր երևում:

Վերջապէս ապրիլի 2-ի կէսօրին փարոսից մի տեղեկարեր եկաւ բանակը և յայտնեց, թէ տասներկու հոգուց բաղկացած թիւրքերի մի փոքրիկ զօրախումբ ջորիների կարաւանով բարձրանում էր կալամատայի լեռնային անցքից:

— Կանգնեցնել նրանց, — կարգադրեց Պետրո-բէյը և քսան մարդ ուղարկեց փարոսը պահպանողներին օգնութեան, մի տասներկու հոգու էլ հրամայեց պատրաստ լինել առաջին իսկ հարկաւոր եղած դէպքում դարձեալ նոյն տեղը զնալու համար:

Քիչ ժամանակ անցաւ, և հրայանաձգութիւն լսուեց, իսկ յետոյ կէս ժամ անցած լուր եկաւ, թէ Պետրո-բէյի հրամանը կատարուած է, թիւրքերը ետ են մղուած:

Պետրո-բէյը վեր թռաւ սեղանի մօտից, որի վրայ ձաշում էր Նիկողայոսի հետ և աչքերը փայլեցնելով, բարձր ձայնով բացապանչեց.

— Վերջապէս հասաւ հնձի բոսկէն:

Ոչ մի վայրկեան չը կորցնելով, նա իսկոյն իր ագիւտանտ Եանիին ուղարկեց յայտնելու, որ արեղակի մայր մասնելուց մի ժամ յետոյ ամբողջ զօրքը սկստք է ճանապարհ ընկնի դէպի կալամատաւ: Ամեն կողմ եռանդուն նախապատրաստութիւններ սկսուեցին, սակայն չը նայելով ընդհանուր սղևորութեանը, ոչ մի տեղ կարգն ու խիստ գիւսիպլիւնան չը խանդարուեցին: Ամեն բան կատարուած էր արագ, բայց ճիշտ ու կանոնաւոր

*) Մի ընկերութիւն, որ կազմուեց 1814 թ. Վիեննայում և նպատակ ունէր ազատել Յունաստանը թիւրքական լծից:

կերպով. ժամը չորսին բալոր պատրաստութիւնները վերջացած, և ջորիներն իրեղէններով ու գործիքներով բեռնաւորուած էին:

Միևնոյն ժամանակ մի քանի յատկապէս ուղարկուած մարդիկ մի կոյտ փայտ բարձրացրին լերան գագաթը խարոյկի համար, որն իբրև աղբանշան պէտք էր ծառայէր ոչ միայն Բասսէի փարոսի համար, այլ և Մեսսէնի զաշտավայրի գիւղերում գտնուած հայրենատէրներէ: Միտասսին յանձնուեց վառելու այս փարոսը, որը, հէնց որ մութն ընկնէր, ամբողջ Յունաստանում պէտք է տարածէր աղատութեան հրեղէն խօսքը, իսկ յետոյնա պէտք է միանար այն զօրագնդերին, որոնք ամեն կողմից կը դիմեն դէպի Կալամատա:

Ժամը օ-ին սկսուեց ընդհանուր շարժումը, և Միտասս բանակոււմ մենակ մնալով, ազատ ընթրեց և յետոյ սկսեց սպասել այն դիշերուան, երբ պէտք է վերածնէր Յունաստանը: Օրը սաստիկ չոգ էր ու ծանր, և երիտասարդը կարաւանի հետ ուղարկած լինելով իր բրդեայ տաք վերարկուն, որն ստացել էր 'Նիկողայոսից'՝ Տրիպոլիսից փախչելու ժամանակ այնտեղ թողածի փոխարէն, հագել էր մի քաթանէ շապիկ, նոյնպիսի անգորավարտիք և ալբանական բաճկոն: Օգը հանդարտ էր, բայց Տայգետի գագաթներից կամայ առաջ էին լողում ամպերը: Թէպէտ արեգակը մայր մանելիս նրանք ծածկեցին ամբողջ տարածութիւնը մինչև Իտոմ, բայց վերև երկինքը մաքուր էր, և փարոսի գլուխը որոշակի երևում էր շրջապատող ազօտ լոյսի մէջ: Մութն ընկնելուց շատ առաջ Միտասսը ճանապարհ ընկաւ դէպի փարոսը և այնտեղ մի մեծ խարոյկ չինեց փայտից, ցախից և չոր մամուռից: Հագիւ էր վերջացրել նա իր գործը և արդէն պատրաստոււմ էր ցած իջնել միտած ածուխներ բերելու, որոնք շուտով կը վառէին խարոյկը, երբ անձրեն սկսեց կաթկաթել: Նրիտասարդն շտապով ծածկեց պատրաստած խարոյկը սոճու տերեւներով և վայր վազեց, բայց անձրեւ սաստկանում էր, և սաստիկ փոթորիկ բարձրացաւ: Այնուամենայնիւ նա իր զլխարկի մէջ հաւաքեց մի բուռ չիկացած ածուխ և վերանը տանելով, նրանց վրայ մի նոր կոյտ ածուխ լցրեց:

Վրայ հասաւ դիշերը,—մութ, անձրեային դիշերը, Միտասսի դրութիւնը կրիտիկական էր: Ամենայն հաւանականութեամբ խարոյկն այնպէս թրջուած կը լինէր, որ անկարելի կը լինէր վառել: Սակայն այստեղ երիտասարդը մտաբերեց, որ Պետրո-բէյը մի աման սպիրտ էր թողել իրան: Բայց նա դեռ չէր գտել այդ, երբ մօտակայքում մի ինչ որ մարդու ոտնաձայներ լսեց, որ վեր էր բարձրանում լեռնային շաւղով:

Ո՞վ կարող էր լինել այդ: Դժուար թէ դա մի որևէ և-

տայած յոյն լինէր կամ Պետրո-բէյի կողմից ուղարկուած սուր-հանդակ և կամ մոլորուած զիւզացի. աւելի շուտ մի որեւէ թիւրք էր մտել բանակը. և Միտսսար վրանից զուրս գալով, սկսեց չորս կողմը նայել: Համարեա այդ իսկ բողոքէին մթու-թեան մէջ փայլեց մի հրեղէն լեզու, և գնդակը նրա գլխի վը-րայից անցնելով՝ մեխուեց վրանի ձողերից մէկի մէջ:

—Ո՞վ է գալիս,—բացայանջեց Միտսսար իր հրացանի կայծահանը բարձրացնելով. բայց պատասխանի փոխարէն ան-ծանօթը երկրորդ անգամ հրացան արձակեց:

Երիտասարդը թագնուեց վրանի անկիւնում և սկսեց սպա-սել, որ աներևոյթ թշնամին մօտենայ: Բայց քայլերն սկսեցին հեռանալ, և Միտսսոն ընկաւ անծանօթի ետևից, որն ըստ երե-ւոյթին մի թիւրք էր և կարող էր լուր տանել Սպարտա՝ կա-ամատայի վրայ՝ ապստամբուած յոյների յարձակման մասին:

Երեք բողոք անցած՝ Միտսսար հասաւ իր թշնամուն: Վեր-ջինս կանգ առաւ և հրացան արձակեց նրա վրայ, բայց գնդա-կը վրիպեց. ապարդիւն էր նաև նրա երկրորդ հարուածը ատրը-ճանակով: Նա մի անգամ էլ նշան դրաւ հրացանով, և երիտա-սարդը տեսնելով, որ իրան անխուսափելի մահ է սպառնում, յուսահատութիւնից բոլոր սյծով իր արձանակը զցեց զէպի նրա երեսը: Թշնամին արիւնաշաղախ օրօրուեց, իսկ Միտսսար յարձակուեց նրա վրայ, խից ձեռից հրացանը և կոթով մի մահացու հարուած իջկցրեց գլխին: Թիւրքը փուռեց զեանին, և երիտասարդը իր ձեռների և հազուստի վրայ մի ինչ որ խոնաւ, փափուկ բան զղաց: Նա կանգ առաւ համոզուելու համար, թէ իրօք սպանել է թիւրքին, իսկ յետոյ վազեց զէպի փարոսը:

Այժմ միայն նա նկատեց, որ թիւ վրայ մի վէրք կար, ու-րից արիւն էր հոսում: Նա շապկից մի կտոր քաթան կտրեց, կապեց վէրքը և ածուխներն ու սպիրտը վերցնելով՝ շարունակեց ճանապարհը զէպի փարոսը: Ինչպէս որ սպասում էր, խա-րոյկը բոլորովին թրջուել էր, և անկարելի էր վառել այն: Ի հարկէ՝ սպիրտի և ածուխների օգնութեամբ, որոնք զեռ վառուում էին նրա գլխարկի մէջ, կարելի էր պահպանել կրա-կը, բայց նախ հարկաւոր էր այդ կրակն ունենալ. իսկ այդ ան-կարելի էր, որովհետև չորս կողմն ամեն ինչ ջուր էր կարուել անձրևից:

Յանկարծ մի լուսաւոր միտք ծագեց Միտսսարի գլխում— նա հանեց իր շապիկը, որը չոր էր մնացել, նրա մէջ փաթա-թեց ածուխները և բոլոր թափով սկսեց փչել: Վերջապէս մի փոքրիկ կրակ երևաց. Միտսսար նրա վրայ սպիրտ լցրեց, և կը-րակը շապիկը լափելով, սկսեց զուարթ փլփլալ: Այն ժամա-

նակ երիտասարդը խարոյկի մէջտեղը կոխեց այն, որտեղ դեռ քիչ չոր էր, և վերեւից սկսեց սպիրտ անել: Հետզհետէ փայտերն այրուեցին, և Միտասը խարոյկի միջից հանած չոր փայտի կրտորներով ու սպիրտով աշխատում էր պահպանել կրակը: Վերջապէս ամբողջ խարոյկը մի բոցափայլ կոյտ գարձաւ, որն այլ ևս անկարող էր հանդիմանել արդէն հեռագհետէ նուազող անձրերը:

Այն ժամանակ Միտասը միջքին ցուրտ զզաց, որովհետև անձրերը թրջում էր նրա մերկ մարմինը, իսկ կուրծքն այրում էր կրակից, որի գէժ նա սչ մի նախազգուշութիւն ձեռք չէր առել: Այն մեծ գործի գաղտփարը, որը նա կատարում էր, Յունաստանի ազատութեան միտքը, որը նախագուշակում էր այս փարոսի լոյսը, մինչև այժմ թոյլ չէր տուել նրան իր սեփական անձի մասին մտածելու: Այժմ նա ցատկեց խարոյկից, և նրա աչքերը յանկարծ կանգ առան հորիզոնի վրայ:

Այն ինչ էր: Հորիզոնի վրայ մի ինչ որ անոգին ատող էր փայլում: Մ'չ, դա ասող չէր կարող լինել: Դա շատ ցած էր դանուում, և լոյսը կարմրագոյն էր: Բացի այդ՝ նրա կողք սկին էր ապրիս սարը: Ըստ երևոյթին դա Բասսէի փարոսի լոյսն էր, որ իբրև պատասխան պատգում էր այնտեղ:

Միտասը վերագարձաւ բանակը, գաւառը սպանած թիրբը զինուորի գիակը և վերջրեց նրա ատրճանակն ու հրացանը: Ապա դիակը ծածկեց սոճու տերեւներով վայրենի գազաններից պաշտպանելու համար և խաշակներով, ինչպէս որ միշտ անում է յոյնը ննջեցեալ տեսնելիս, վաղեց սարից դէպի վար՝ իր զօրայնդի ետեւից:

Յոյները չէին շտապում, որովհետև կամենում էին կալամատային մօտենալ լուսարացից մի ժամ առաջ: Այդ պատճառով Միտասը չուտով հասաւ նրանց Տայգետի ստորոտում հանդստանալիս: Պետրո-բէյին վառուած խարոյկի մօտ գանկելով, երիտասարդն ուզում էր պատմել, ինչ որ արել էր, բայց նա ժպտալով ձեռքը թափահարեց և շարունակեց խօսել Նիկոգայոսի և հայր Անդրէասի հետ:

—Ուրեմն լսում ես, հայր Անդրէաս,—ասում էր նա.— քաղաքն, ինչ էլ լինի, ուղար է անել, բայց որքան քիչ մարդ կորցնենք, այնքան լաւ: Ես թշնամու զինաթոյնն աւելի լաւ եմ համարում, քան նրանց յարձակումով յազթելը, բայց առանց որևէ պայմանի: Բոլոր թիրբերը... Հասկանում ես:

—Հասկանում եմ,—պատասխանեց հայր Անդրէասը:

—Լուսինը կը լափէ նրանց իր ճառագայթներով, շարունակեց Պետրո-բէյը.— իսկ այժմ, հ. Անդրէաս, գնա, հանդստացիր: Դէ՛հ, Միտաս, մենք տեսնք, որ զու վառեցիր խարոյկը,

բայց թէ այս անձրեկն ինչպէս արիւր այդ, ևս, ճշմարիտ,
չեմ հասկանում: Պատմիր տեսնեմ:

Մխտոսն անխօս բայ արաւ իր բաձկոնակը և մերկ
կուրծքը զոյց տուաւ:

—Շապիկը երբեմն չառ օգտակար է,—ասաց նա և ման-
րաման պատմեց բոլոր պատահածք:

—Այս աղայի վրայ աստուածային օրհնութիւն կայ,—չըն-
ջայց ցած ձայնով Պետրօ-բէյը, երբ նա վերջացրեց իր պատ-
մութիւնը, և զարմացած նայեց նրան:

Թարգմ. Յ. ԱՐԱՅԱՋԵԱՆ

(Գը շարունակուի)

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԹԸ *)

(Դիցազնական վէպ)

VIII

Ելաւ, Դաւթի մօտ գընաց Օհանը:
— Հըր, Դաւթ, ասաւ, ո՞նց է քո բանը:
— Հօրեղբայր, ասաւ, շատ է գըժար բան.
Կեռ-կեռ պողաւոր մալերը որ կան՝
Խելօք են, ամա էն անպող մալեր
Ցրուեցին, փախան ողջ սարերն ի վեր.
Էնքան վազեցի, որ ելաւ հօգիս,
Էլ իսկի տըրեխ չը մնաց հագիս:
Նայեց Օհանը, որ Դաւթի հագին
Ոտնաման չի էլ մընացել կարգին,
Մահակն էլ մաշուել, կէս տեղն է հասել,
Մի օրուայ միջում էնքան է վազել:
— Դաւթ ջան, ասաւ, էդ շատ է գըժար.
Նետ-աղեղ եմ ես շինել քեզ համար,
Նետ-աղեղըդ սոռ, գընո՛ւ, որս արա,
Ման արի ազատ սարերի վըրայ:
— Ա՛խ, հօրեղբայր, ի՞նչ լաւ է հո՛,
Ազատ չըրջել սարի վըրայ,

*) Տես Մուրճ № 2.

Պայծառ օգուժ,

Թարմ արօտում:

Լէն ու արձակ ապրել, շընչել,

Վազել, որսալ, խաղեր կանչել

Սարի լանջին,

Ամպի միջին:

Խընդալով առաւ աղեղն Օհանից,

Հեռացաւ քաղքից, քաղքի սահմանից

Ու դարձաւ որսկանն Գնաց, մի կորկում

Լոր էր ըսպանում, ճընճողուկ էր զարկում,

Մըթանը գընում իրեն հօր ծանօթ

Աղքատ, անորգի մի ծեր կընկայ մօտ,

Կըրակի կողքին

Երկնի, ահագին

Մեկնըւում,

Գընում:

Մի օր էլ՝ երբ որ իր որսից դարձաւ,

Պառաւր վըրէն սաստիկ բարկացաւ.

—Վայ, Դաւիթ, ասաւ, մահըս տանի՛ քեզ,

Դու պէտք է էն հօր զաւակը լինես.

Ձեռից ու ստից ընկած մի ծեր կին,

Ես եմ ու էն արտն Աստրծու տակին.

Ընչի՛ ես գընում ապիում, տըրտում,

Իմ ամբողջ տարուան ապրուստը կըտրում:

Թէ որսկան ես դու, նետ-աղեղըդ առ,

Ծըծմակայ գըլխից մինչև Սեղանսար

Քու հէրը ձեռին մի աշխարհ ունէր,

Որսով մէջը լի որսի սար ունէր,

Եղնիկ կայ էնտեղ, այժեամ ու պախրայ,

Կարող ես—գընա՛, էնտեղ որս արա՛:

—Ի՞նչ ես, այ պառաւ, էլ ինձ անիծում,

Ես ջահիլ եմ դեռ, ես նոր եմ լըսում.

Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի՛:

—Գընա՛, հօրեղբայրդ —Օհանը կ'ասի:

IX

Հօրեղբօր շեմքում միւս օրը ծէքին
 Դաւիթը կանգնեց՝ ազկը ձեռքին.
 —Հօրեղբայր Օհան, բնջի շես տակ,
 Իմ հէրը սրսի սար է տնեցել,
 Այծեամ կայ էնտեղ, եղջերու, կըխտար.
 Վեր կաց, հօրեղբայր, տօր ինձ որսասար:
 —Վայ, կանչեց Օհան, էղ քու խօսքը չէր.
 Էդ ով քեզ տտաւ, լեզուն պապանձուէր...
 Էն սարը, սրգի, գընաց մեր ձեռից,
 Էն սարի սրան էլ գընաց էն սարից,
 Էլ չը կան այծեամ, եղջերու, կըխտար:
 Քանի լուսեղէն քու հէրը գեռ կար,
 Է՛յ գիտի, օրեր, ան, ո՛ր էք կորել,
 Ես շատ եմ էնտեղ սրսի միտ կերել...
 Քու հէրը մեռաւ, Աստուած խրոսովեց,
 Մըսրայ թագաւոր զօրքեր ժողովեց,
 Եկաւ, մեր երկիր քարուքանդ արաւ,
 Էն սարի սրան էլ թալանեց, տարաւ,
 Եղնիկը գընաց, եղջերուն գընաց...
 Մեր գիրն էլ հալբաթ էսպէս էր գըրուած...
 Անցել է, սրգի, քու բանին գընա,
 Մըսրայ թագաւոր ձէնդ կ'իմանայ...
 —Մըսրայ թագաւոր ինձ ինչ կ'անի որ...
 Ես ինչ եմ հարցնում Մըսրայ թագաւոր.
 Մըսրայ թագաւոր թող Մըսրը կենայ,
 Իմ հօր սարերում ինչ գործ ունի նա:
 Վեր կաց, հօրեղբայր, նետ-ազեղըդ ան,
 Կապարճըդ կապիր, գընանք որսասար:
 Ելաւ Օհանը ճարը կըտըրուած.
 Գընացին տեսան՝ էլ ինչ որսասար. —
 Անտառը ջարդած, պարիսպն աւերած,
 Բուրգերը արած գետնին հաւասար...

X

Գիշերը հասաւ, մընացին էնտեղ:
 Ձէնով Օհանն էր, իր նեան ու աղեկ
 Դըրաւ գըլխի տակ, հանդիսա խոբրմիաց.
 Դաւիթը մընաց միտքի ծովն ընկած:
 Մին էլ նըկատեց, որ մութը հեւուււմ
 Մի թէ՛ժ, փայլիրլուն կըրակ է վաուււմ:
 Էն լուսը բընած՝
 Վերկացաւ, գընաց,
 Գընաց ու գընաց, բարձրացաւ մի սար,
 Բարձրացաւ, տեսաւ մի մեծ մարմար քար
 Կիսից պատըուււմ,
 Ու միջից՝ վաուււմ
 Բըխում է լուսը պնդ, քուլա-քուլա,
 Բարձրանում, իջնում ետ քարի վըրայ:
 Վար իջաւ Դաւիթ էնտեղից կըրկին,
 Վար իջաւ, կանչեց ձէնով Օհանին:
 —Ե՛լ, հօրեղբայր, քանի՛ քընես,
 Ե՛լ, էն պայծառ լուսը մի տես:
 Լուս է իջել բարձրը սարին,
 Բարձրը սարին, մարմար քարին,
 Ե՛լ, հօրեղբայր, անուշ քընից,
 Էն ի՛նչ լուս է բըխում քարից:
 Ելաւ, խաչ քաշեց Օհանն երեսին.
 —Ե՛յ, որդի, ասաւ, մեռնիմ իր լուսին,
 Էն մեր Մարութայ սարն է զօրաւոր:
 Էն լուսի տեղը կանգնած էր մի օր
 Սասմոյ ապուէն, Սասմոյ պահապան
 Մեր սուրբ Տիրամօր վանքը Չարխափան:
 Մըշտական, երբ որ կըու էր գընում,
 Էնտեղ էր քու հէրն իր ալօթքն անոււմ:
 Քու հէրը մեռաւ, Աստուած խըռովեց,
 Մըսրայ թագաւոր զօրքեր ժողովեց,

Մեր վանքն էլ եկաւ քանդեց էն սարում,
 Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում:
 Դաւիթն Օհանից էս որ իմացաւ,
 Խաչ հանեց դէմքին.— հօրեղբայր, ասաւ,
 Անուշ հօրեղբայր, աշխարքի վրայ
 Հէր չունիմ, դու ինձ հէրութիւն արա:
 Էլ չեմ իջնիլ ես Մարութայ սարից,
 Մինչև չը շինեմ էն վանքը նորից:
 Քեզանից կ'ուզեմ հինգհարիւր վարպետ,
 Հինգհազար բանուոր մըշակ նըրանց հետ,
 Որ գան, էս շաբաթ կանգնեն ու բանեն,
 Առաջուան կարգով մեր վանքը շինեն:
 Գընաց Օհանը ու բերաւ իր հետ
 Հինգհազար բանուոր, հինգհարիւր վարպետ:
 Վարպետ ու բանուոր եկան, կանգնեցին,
 Ձըրը՛խկ հա թըրը՛խկ, նորից շինեցին,
 Առաջուան կարգով, փառքով փառաւոր
 Բարձր Մարութայ վանքը ճիրամօր:
 Յրուած միաբանք ետ նորից եկան,
 Նորից թընդացին աղօթք, շարական.
 Ու երբ շէն արաւ հօր վանքը նորից,
 Վար իջաւ Դաւիթ Մարութայ սարից:

XI

Համբաւը տարան Մըսրայ Մելիքին.
 — Հապս չես ասիլ՝ Դաւիթը կըրկին
 Հօր վանքը շինել, իշխան է դառել,
 Դու օխտը տարուան խարջը չես առել:
 Մելիք զայրացաւ.
 — Գընացէք, ասաւ,
 Բադին, Կոզբադին,
 Միւդին, Չարխադին,
 Սասմայ քար ու հող տակն ու վեր արէք,
 Իմ օխտը, տարուան խարաջը բերէք.

Քառսուն կոյս աղջիկ բերէք արմաղան,
 Քառուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
 Քառսունն էլ երկար, որ ուղտեր բառնան,
 Իմ տանն ու դըռան զարաւաչ դառնան:

Ու Կողբադին առաւ զօրքեր:

—Գըլխիս վըրայ, ասաւ, իմ տէր.

Գընամ հիմի քանդեմ Սասուն,
 Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
 Քառսուն բեռնով դեղին օսկի,
 Տեղը ջընջեմ Հայոց ազգի:
 Ասաւ, Մըսրայ աղջիկ ու կին
 Պար բըռնեցին ու երգեցին.

—Մեր Կողբադին գընաց Սասուն՝

Կանայք բերի քառսուն-քառսուն,
 Քառսուն բեռնով օսկի բերի,
 Մեր ճակատին շարան շարի,
 Կարմիր կովեր բերի կըթան,
 Գարնան շինենք եղ ու չորթան.

Ջան Կողբադին, քաջ Կողբադին
 Սասմայ Դաւթին զարկեց գետին...»

Ու Կողբադին փըքուած, ուռած,

—Շնորհակալ եմ, քոյրեր,—գոռաց,—

Մինչև գալըս դեռ համբերէք,
 է՛ն ժամանակ պիտի պարէք...

XII

Էսպէս երգով,

Զօռով, զօրքով

Գոռ Կողբադին մըտաւ Սասուն.

Օհան լըսեց, կապուեց լեզուն:

Աղ ու հացով,

Լաց ու թացով

Առաջն ելաւ,

Խընդիրք արաւ.

—Ինչ որ կուզես, սու, տան, աման,
 Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
 Դառը դադած դեղին սակին,
 Միայն թէ գթան մեր խեղճ աղջին,
 Մի կոտորիր, մի տար մահու.
 Վերև՝ Աստուած, ներքևը՝ դու...
 Ասաւ, բերին շարան-շարան
 Վարդ աղջիկներ, կանայք Սասման.
 Ու Կողբադին կանգնեց, շոկեց,
 Մարագն արաւ, դուռը փակեց,
 Քառսուն կոյս աղջիկ սիրո՞ւն, արմաղան,
 Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
 Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
 Մըսրայ Մելիքի զարաւաչ գառնան.
 Դէզ-դէզ կիտեց դեղին սակին.
 Սև սուգ կալաւ Հայոց ազգին:

XIII

Հէյ, ո՞ւր ես, Դաւիթ, Սասմայ պահապան,
 Քարը պատուրի, գնդս արի մէյդան:
 Քանգած հօր վանքը որ շինեց նորից,
 Վար իջաւ Դաւիթ Մարութայ սարից՝
 Ժանգոտած, անկոթ մի շեղբիկ գըտաւ,
 Գընաց, պառաւի շաղղամը մտաւ:
 Պառաւն էր, եկաւ՝ անէծք, աղաղակ.
 —Վնյ, խելո՞ւ Դաւիթ, շաղղամի տեղակ
 Գու կրակ ուտես, ցաւ ուտես, ասաւ,
 Քու աչքն աշխարքում մենակ ի՞նձ տեսաւ:
 Կորեկըս արիք գետնին հաւասար,
 Էս էր մընացել ձըմեռուան պաշար,
 Էս էլ կըտրում ես:
 Էլ ո՞նց ապրեմ ես:
 Թէ կըտրի՞ճ ես դու, աղեղդ սու, գնան,
 Քու հօր աշխարքին տիրութիւն արան,

Քու հօր գանձը կեր,
 Թողել ես անտէր,
 Մըսրայ թագաւոր զըրկել է՝ տանի:
 —էլ ինչ ես վրէժս բարկանում, նանի,
 էդ ինչ ես ասում, ես չեմ հասկանում:
 Մըսրայ թագաւոր մեր ինչն է տանում.
 —Մըսրայ թագաւոր մեր ինչն է տանում...
 Մըսրայ թագաւոր քու աչքն է հանում,
 Դանդալօջ Դաւիթ. զըրկել է հըրէն,
 Եկել են Սասմայ քաղաքի վըրէն
 Բադին, Կողբադին,
 Սիւզին, Չարխադին,
 Թալան են տալի բովանդակ Սասում,
 Քառսուն բեռ ոսկի խարաջ են ուզում,
 Քառսուն կոյս աղջիկ սիրուն — արմազան,
 Քառսուն կարճ կընիկ, որ երկանք ազան,
 Քառսուն էլ երկար, որ ուրտեր բառնան,
 Մըսրայ Մելիքին զարաւաչ գառնան:
 —Ի՞նչ ես, մյ պառաւ, էլ ինձ անիծում.
 Դու ինձ է՛ն ասա, ո՞րտեղ են ուզում:
 —Ո՞րտեղ են ուզում... մահըս տանի քեզ,
 Դո՛ւ պէտք է է՛ն հօր զաւակը լինես...
 Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում,
 Ոսկին Կողբադին ձեր տանն է չափում,
 Աղջիկներ փըլեկ մարագն են լցրած:
 Դաւիթն էր. լսեց, վերկացաւ, գընաց:
 Տեսաւ, Կողբադին իրենց տան միջին
 Չափում է ոսկին թեղած առաջին,
 Սիւզին, Չարխադին պարկերն են բռնել,
 Չէնով Օհանն էլ շըլինքը ծըռել,
 Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:
 Տեսաւ, աչքերը արնով լըցուեցին:
 —Վերկաց, Կողբադին, հեռու կանգնիր դու,
 Իմ հօր ոսկին է, ես եմ չափելու:
 —է՛յ ձէնով Օհան, ասաւ Կողբադին,

Դէնը կորցըրու էս խելառ գեադինս
 էս ասելն էր հէնց.
 Դաւիթն էր. հանդարտ թևիցը բըռնեց,
 Դէնը շրպըրտեց, ասես թէ մի հաւ,
 Ու ինքը չոքեց, չափը կործ արաւ,
 Մի քանի ոսկի ածաւ ետեին,
 Հարթիչը առաւ,
 Քըսեց ու էն էլ ողջ թափեց գեաինս.
 —էս մէկ, Կողբադինս.

Խընդաց ու գատարկ շուռ տուաւ պարկում,
 Չափած ոսկին է իբրև գատարկումս
 Կողբադինս ասաւ.—էյ Չէնով Օհան,
 Կը տաս, տուր խարջը էս օխտը տարւան,
 Թէ չէ՛ կը գընամ, արևրս վըկայ,
 Մըսրայ Մելիքին կը պատմեմ, կը գայ,
 Չեր Սասմայ երկիր քարուքանդ կ'անի,
 Տեղը կը վարի, բօստան կը ցանի:
 Դաւիթ բարկացաւ, կօտը շրպըրտեց,
 Տուաւ Կողբադնի գըլուխը շարդեց:
 —Կորէք, գընացէք, ասաւ, մեր հողից,
 Թէ չէ՛ որ հիմի վերկացայ տեղից,
 Չեր մնծ կըտօրը ականջը կ'անեմ,
 Չեր հողն ու մոխիրն երկինք կը հանեմ,
 Ո՛ւմ էք դուք եկել տալիս ոտի տակ,
 Մեռած էք կարծում դուք մեզ, թէ չուպք...
 Ու ելան, թափած ոսկին թողեցին,
 Սասմայ աշխարքից փախան, գընացին
 Բադին, Կողբադին,
 Սիւդին, Չարխադին:

XIV

—Վայ-վայ, հօրեղբայր, ինչ ասեմ ես քեզ.
 Մենք ունինք էստեղ գեղին ոսկու դէզ,
 Դու անում ես ինձ քաղքի նախրապան,

Դու թողել ես ինձ օտարի դըռան...
 —Հօրեղբայրն ասաւ.—նյ խենթ, խելագար,
 Ոսկին պահել եմ Մելիքի համար,
 Որ քաղցըր լինի աչքը մեզ վըրայ,
 Ձը աուիր, հիմի որ զօրք առնի, գայ,
 Մասմայ քար ու հող հեղեղի, տանի,
 Ո՞վ դէմը կ'երթայ, ո՞վ կըռիւ կ'անի:
 —Դու կնոց, հօրեղբայր, թնո գայ, ես կ'երթամ,
 Կ'երթամ ես նըրան պատասխան կըտամ:
 Ու մութ մարագի դըռանը զարկեց,
 Փակած աղջիկներ հանեց, արձակեց.
 —Դընացէք, ասաւ, ազատ ապրեցէք,
 Սասունցի Դաւթին արև խնդրեցէք:

XV

Էսպէս ջարդուած, արիւնլուայ
 Փախան, ընկան հողը Մըսրայ
 Բաղին, Կողբադին,
 Սիւդին, Չարխադին:
 Մըսրայ կանայք հեռուից տեսան,
 Հեռուից տեսան, ուրախացան
 Ու ծափ տուին կըտերներին.
 —Եկան-եկան, բերին-բերին...
 Հէնց մօտեցան, նըկատեցին,
 Ծափ ու խընդում ընդհատեցին,
 Քըրքըջացին
 Ու կանչեցին.
 —Էյ Կողբադին մեծաբերան,
 Էդ որտեղից լերան-լերան,
 Լերան-լերան կը գաս փախած,
 Հասա գըլուխըդ կիսից ճըղած:
 Էն գձը չասիր՝ գընամ Սասուն,
 Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
 Քառսուն բեռնով ոսկի հանեմ,

Հայոց երկիր աւեր անեմ:
 Ու Կողբագին խիստ բարկացաւ.
 —Սնւս կացէք դուք, լըրբեր, ասաւ.
 Ձեր մարդիկն էք տեսել դուք դեռ,
 Դուք չէք տեսել Սասմայ ծըռեր.
 Սասմայ ծըռեր լերան-լերան,
 Նետեր ունին մի-մի գերան.
 Սասմայ երկիր քար ու կապան,
 Դըժար սարեր, ձոր ու ծաղան:
 Նրանց խոտեր ինչպէս կեռ թուր,
 Զօրք ջարդեցին երեք հարիւր:
 Ասաւ ու էլ չառաւ դագար,
 Վըռազ-վըռազ, գըլխապատառ
 Վազեց իրեն թագաւորին:
 Խընդաց թագաւորն իր աթոռին:
 —Ապրիս, ապրիս, քնջ Կողբագին.
 Արժէ՞ կախեմ ես քու ճըտին
 Մեր զուգըռնի մեծ նշանը,
 Պարգև քու մեծ յաղթութեանը:
 Ո՞ւր են, հապճ առաջըս բեր
 Սասմայ սոկին ու պղծիկներ:
 Ասաւ Մեղիքն, ու Կողբագին
 Կըլուխ տուաւ մինչև գետին.
 —Ապրած կենաս, մեծ թագաւոր,
 Զօռով փախայ ես ձիաւոր,
 Ո՞նց բերէի Սասմայ սոկին:
 Մի խենթ ծընուեց Հայոց ազգին,
 Ոչ ահ գիտի, ոչ տէր ու մեծ,
 Կըլուխս էսպէս տուաւ, ջարդեց.
 Չեմ տալ, ասաւ, իմ հօր սոկին,
 Չեմ տալ կանայքն իմ Հայ ազգին,
 Սասմայ երկիր ձեզ տեղ չը կայ:
 Քու թագաւոր, ասաւ, թո՛ղ գայ,
 Թո՛ղ գայ, ինձ հետ կըռիւ անի,
 Թէ՛ զոչալ է, զօռով տանի:

Կատաղեց, փրփրեց Մըսրայ թագաւոր:
 — Կանչեցէք, ասաւ, իմ զօրքը բոլոր.
 Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
 Հազար հազար մարդ անբեղ, անմօրուք,
 Հազար հազար մարդ բեղը նոր ծըլած,
 Հազար հազար մարդ նոր թախտից ելած,
 Հազար հազար մարդ թուխ միրուքաւոր,
 Հազար հազար մարդ սիստակ ալեօր,
 Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն,
 Հազար հազար մարդ, որ թըմբուկ զարկեն.
 Կանչեցէք, թնղ գան, հագնեն զէնք-զըրահ,
 Կըռիւ տի գընամ ես Դաւթի վըրայ,
 Սասունն աւերեմ,
 Հեղեղեմ, բերեմ:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)

ՄԻՍՍԻՑՆԱՐՆԵՐԸ ԹԱԻՐԻԶՈՒՄ

Կաթոլիկ և բողոքական միսսիօնարները գործում են նաև հայերի մէջ Թաւրիզում, Թեհրանում, Սպահանում: Մենք կանց կ'առնենք զրանց գործունէութեան մասին Թաւրիզում, որ մեզ աւելի ծանօթ է: Բողոքականներն սկսել են իրանց պրօպագանդան Թաւրիզի հայերի մէջ դեռ 1873 թւականից, իսկ կաթոլիկները միայն անցեալ տարուանից:

Բողոքականները Թաւրիզում ունեն թէ տղայոց և թէ օրիորդաց դպրոց: Բողոքականները թէև 1873-ին են սկսել իրանց գործունէութիւնը, բայց դպրոց հիմնել են ուշ, 1877 թււին: Այդ տարին բացուել է միայն օրիորդաց դպրոցը, իսկ 1880 թւին բացուել է և տղայոց դպրոցը: Լիլաւա թաղում, ունեն մի մեծ և ընդարձակ պարտէզ, ուր շինուած է տղայոց դպրոցը. կան գիշերօթիկ աշակերտների համար սենեակներ, կան և ուրիշ սենեակներ, ուր ապրում է դպրոցի տնօրէնը: Օրիորդաց դպրոցը գտնուում է Ղալա թաղում, իրանց սեփական շէնքում:

Այդ ուսումնարաններից տղայոցը ունի 8, օրիորդացը 6 տարուայ դասընթաց. զրանցից զատ ունեն և մանկապարտէզ, ուր սովորում են 5—6—7 տարեկան երեխաներ:

Շատ տարօրինակ է սրանց դասաւուութիւնը:

Առաւօտեան դասերի *) սկզբում լինում է երկար ժամերգութիւն, երգում են մի հոգևոր երգ, ապա ուսուցիչներից մէկը կարդում է աւետարանից մի գլուխ, մանրամասն բա-

*) Պարսկաստանում դասերի մի մասը լինում է առաւօտեան, միւս մասն էլ ճաշից յետոյ, այսպէս են և Լիլաւայի և Ղալայի դպրոցներում—3 գասը առաւօտեան, իսկ 2-ը ճաշից յետոյ:

ցատրում է աշակերտներին, զրան հետևում է մի աղօթք, և յետոյ աշակերտները խմբովին աւետարանից մի կտոր անդիր տառւմ են ու նոր զբուռ գասարանները: Այդ տեղում է $\frac{1}{2}$ ժամ:

Ասացի, որ տղայոց դպրոցը ունի 8 տարուայ դասընթաց, իսկ օրիորդաց դպրոցը՝ 6, այն ինչ՝ տղայոցը ունի 4 ուսուցիչ, իսկ օրիորդաց դպրոցը՝ երեք (մէկը ուսուցչուհի). բացի այդ՝ չը կան և դասարաններ. ահա գրա համար իւրաքանչիւր սենեակում նստում են երկու դասարանի աշակերտներ. մի դասարանցիներին տրւում է որեէ զբաղմունք, ընդհանրապէս գրաւոր, կամ դասեր են սերտում, իսկ միւսների հետ պարապում է ուսուցիչը:

Այդ դպրոցներում աշակերտները և աշակերտուհիները ձըրիավարք են մեծ մասով: Տրւում են ոմանց նաև հագուստ և դասական պիտոյք: Վերջերս սկսել են սովորողներից նաև շատ չնչին թոշակ ստանալ: Այժմ տղայոց դպրոցը ունի մօտ 100 աշակերտ, իսկ օրիորդաց դպրոցը մօտ 5 աշակերտուհի:

Բողոքականները ահա 29 տարի է, ինչ սկսել են իրանց պրօպագանդան Թաւրիզում, բայց նրանց դեռ չէ աջողուել հայ բողոքական ընտանիք ունենալ: Եթէ կան էլ, այն էլ ընտանիքի մէկ, շատ-շատ երկու անդամն են, իսկ համոզուած են զըրանք, այդ դեռ հարց է: Որ աջողութիւն չ'ունեն հայերի մէջ, այդ խոստովանուում են հէնց իրանք միասիծնարները: Եւ ինչպէս պատմում են, դեռ չէ պատահել, որ ակղացի հայ բողոքականը մեռնելիս չը կանչէ հայ քահանայ և մեղայ չը դայ:

Թուրքերի և պարսիկների մէջ բողոքական միասիծնարները բնաւ աջողութիւն չ'ունեն: Թուրքերը, մանաւանդ գրանց հոգևորականները հակակրօթեամբ, նոյն իսկ ատելութեամբ են վերաբերում դէպի բողոքականները: Առհասարակ նրանք շատ քչերի կողմից են համակրանք վայելում և դործում են շնորհիւ իրանց զբամական ասպանութեան:

Անցնենք կաթոլիկ միասիծնարների դործունէութեան:

Մօտ երկու տարի է, որ կաթոլիկ լազարիստ միսսիան բացել է Թաւրիզում դպրոց և սկսել իր պրօպագանդան:

Կաթոլիկ միասիծնարները Թաւրիզում առ այժմ դործում են միմիայն դպրոցի միջոցով:

Աշակերտների թիւը մօտ 60 հոգի է: Ընդհանրապէս տեղացիները հակակրում են կաթոլիկներին, մանաւանդ այդ աւելի նկատելի է Թաւրիզում, բայց իրանց զաւակներին ուղարկում են նրանց դպրոցը՝ շահագիտական տեսակէտից առաջնորդուելով. նրանք կը սովորեն մի լեզու և առևտրի մէջ կը գոր-

ծաղրեն, գլուխ կը պահեն դոյութեան կուռում: Այսպէս են մը-տածում և դատում ծնողները: Ճիշտ է, սովորում են մի լեզու, և կարող են գլուխ պահել կեանքի մէջ, բայց ինչ դնով են այդ ձեռք բերում, ինչ են կորցնում դրա դիմաց: Ահա այդ աչքի առաջ չեն ունենում կաթողիկէների դպրոցում սովորող աշակերտների ծնողները:

Կաթողիկէները ունեն նաև դիչերօթիկ աշակերտներ, դա-ւառացիներ, թւով 10—15: Այդ աշակերտները շաբաթներով, ամիսներով փակուած են մնում դպրոցում: Գիչերօթիկների երթևեկութիւնն է դպրոցից եկեղեցի, եկեղեցուց դպրոց, մէկ էլ տարեկան մի երկու անգամ, այն էլ զատկական տօներին, թոյլատրւում է նրանց դուրս գալ, այցելել բարեկամներին, մի քիչ անցկացնել նրանց մօտ: Հէնց դրանով պէտք է բացատրել այն, որ կաթողիկ միսսիօնարները թոյլ չեն տալիս ցանկացող-ներին և հետաքրքրուողներին ներկայ դառնուել դասատուութեա-նը, մանրամասն ծանօթանալ դպրոցի հետ, ինչպէս այդ պա-տահեց և ինձ հետ:—Կը տեսնենք դիրեկտորին և կը խօսենք այդ մասին, տեսնենք կարելի է, թէ՛ չէ. ևս ձեզ կը յայտնեմ, պա-տասխանեց ինձ և ընկերոջս աւագ ուսուցիչը:

Հեռանալիս անմիջապէս իմացանք, որ դիրեկտորը Ուր-միայումն է, այս մէկ. երկրորդ՝ այդ միսսիօնարը այնքան իրա-ւունք ունէր, որ կարող էր այդ հարցը վճռել, և երրորդ՝ մին-չև այժմ դեռ պատասխան չեմ ստացել:

Գ Ա Ն Գ Ա Տ

(Էտիդ)

Իմ ընկեր Արմենակը հիւանդ էր. թորախա ունէր: Արիւնաքամ, թուրացած՝ նա պառկած էր անկողնում ու մաքառում էր մահուան դէմ: Թորախաը խեղդում էր նրան, նա մեռնում էր:

Սենեակը ցուրտ էր, օդը խեղդուկ, ճնշող: Մոմի փոքրիկ կտորը մեղմութեամբ այրւում էր և իր թույլ, երերուն ու վշտալոյսը թափում սեղանի, դռքերի, երկու աթոռի վրայ... Իսկ դուրսը դիչերային թանձր խաւարի մէջ իր մոլեգին ցուրտ երզըն էր սուլում ցաւազար աշունը: Քամին ազմկւում ու զոռում էր, թւում էր, թէ նա պատուելով մութ երկնքի կուրծքը՝ դուրս էր թռչում ինչ որ անտակ, ցուրտ անդունդներից ու թափահարելով իր սև թևերը՝ սլանում էր, գահավիժում ցած, զարնում սալայատակի քարերին, տան պատերին, թևերը կտրատելով ու վիրաւոր գազանի նման մռնչում էր, օդը լըցնում խուլ, սառցնող հառաչանքներով: Նա մորմոքւում էր, զանգատւում, ապա լռում ու խաղաղւում. և միայն անձրևի կաթիլները ձեծում ու ձեծում էին պատուհանի ապակին, կարծես ասում լինէին.—ցուրտ է... ցուրտ...

Ընկերս հանդիստ էր, նա քնած էր: Ես նստած էի անկողնի մօտ ու մտածում էի: Տխուր ու սև էին մտքերս: Երբեմն մարդ այնպիսի տրամադրութիւն է ունենում, որ ամենասովորական բաները խորթ, անսովոր, անժանօթ են թըւում: Այդպէս էի տրամադրւած և՛ ետ: Ես մտածում էի.—ընկերս մեռնում է... ուրեմն շատ մարդիկ, որոնց ես ճանաչում եմ, որոնց հետ ես միշտ խօսում եմ, ամենքը պէտք է մեռնեն: Եւ նրանք, որոնք այժմ անցնում են փողոցով ու անհող եր-

գում են, որոնց կա չեմ տեսնում, որոնց չեմ ճանաչում—նրանք էլ կը մեռնեն... և էլ պէտք է սեռնեմ...

Ու սիրաս սեղմում էր... և չէի կարողանում հաշտուել այդ մտքի հետ: Ես ապրում եմ, չնչում, սիրում եմ ու առում, և կը գայ ժամանակ, երբ ևս չեմ սիրի, չեմ սափ, չեմ ապրի... և ևս արդէն տեսնում էի անշունչ դիակս, տեսնում էի ինչպէս այն դազաղն են դնում, ապա ծածկում... Ու ինձ թւում էր, որ երբ սկսեն դազաղս մեխել, ևս կը կենդանանամ մահի սարսափից...

Ես պէտք է մեռնեմ...

Այս խօսքերը թափանցում էին սիրտ և կրծում ու ուտում նրան, ու կրծքիս տակ ինչ-որ այրող, մրմնջացող դատարկութիւն էի զգում, դատարկութիւն, որ բանտարկեալի շղթաներից էլ ծանր ու մաշող է:

Իսկ հարիան սենեակում անհանգիստ լալիս էր երեխան... Նա նոր է աշխարհ մտել, նա դեռ չէ զգում, որ ապրում է, բայց ի՛ նա կը մեռնի: Ուրեմն մենք մենակ չենք ծնւում, մեզ հետ ծնւում է ի՛ մեր մահը: Եւ նա—այդ դաժան, անողորմ մահը միշտ հետևում է մեզ, երբ մենք ժպտում ենք, տխրում, ծիծաղում, լալիս ենք, արթուն, քնած: Նա միշտ մեր մէջ է նստած, ամեն մէկն ունի իր մահը: Եւ մահը այն չէ, երբ մեր մարմինը սառչում է, դիակ գտնում, սչ, մենք ամեն մի վայրկեան մեռնում ենք: Մեր սրտի ամեն մի բաբախումը, մեր ամեն մի շարժումը, ամեն մի շունչը, հայեացքը, դա մահուան շունչն է, նրա շարժումը, նրա հայեացքն է:

Ուրեմն մենք չենք ապրում, այլ միայն մեռնում ենք, մեռնում ու միայն... մեռնում...

Իրական է միայն մահը: Նա է միայն ապրում... Իր անտեսանելի խեղդող ցանցի մէջ նա բռնած ունի ամբողջ աշխարհը, մարդկութիւնը, տիեզերքը:

Իսկ մենք պէտք է մեռնենք...

Ու այն, որ մահը անխուսափելի է, ծանրացել էր հողուս վրայ, ճնշում էր այն... Ուղեկս կարծես ուզում էր գուրս թռչել դանդիցս... Ես ուզում էի չը հաւատայ, ուզում է փախչել այդ մտքերից... բայց չէի կարողանում... Բնկերոջս գունատ, անարիւն դէմքը նայում էր ինձ... Եւ գու՛ պէտք է մեռնես... ամենքը պէտք է մեռնեն: Իսկ գուրսը զիջերը իր ցուրտ ու սև երգն էր երգում, անձրիը ծեծում ու ծեծում էր պատուհանի ապակիները, սենեակում դողում էր մոմի բոցը...

Դազաղի նման տխուր էր կիսամութ, կիսամերկ սենեակը...

Ես մօտեցայ պատուհանին: Նա դողում էր քամու ուժգին հարուածներէ: Մտի փողոցում սպռուող լապտերը թափում էր իր գեղին լոյսը ապակիների վրայ, ապակիները գեղնին էին տալիս:

Ապա նստեցի աթոռի վրայ, վերաբիւռն վրաս գցեցի... Անցաւ մի քանի րոպէ, ևս նիրհում էի. շատ էի յոգնել անքուն գիշերներից, ջղերս թուլացել էին...

Մի ամբողջ ժամ ընկերոջս գունատ գէմքը հետեւում էր ինձ. ականջիս հասնում էր փողոցի խուլ աղմուկը, երեխայի լացը, լսում էի ինչ որ վալսի լացող, հալուող, մեռնող ու կրկին կենդանացող մեղամաղձոտ հնչիւնները: Ու շուրջս սկսեցին պտտուել ինչ որ անձանօթ կանայք սպիտակ թափանցիկ ըզգեսաներով: Նրանք պտտուում էին, ծիծաղում, ժպտում, դրկում էին իրար, համբուրում... Նրանք յոգնել էին, քրտնել, ծանր չնչում էի՝, բայց չէին դադարում պարելուց ու շարունակում էին ժպտել, ծիծաղել: Եւ գունատ գէմքն էլ լուս ու մուկ թափառում էր ամբողջ վրայ: Յանկարծ նա պատռելով օդը՝ զըլտուեց ցած ու սև արիւն թքելով՝ բղաւեց. — «ամենքը պէտք է մեռնեն...» և ցուրտ էին փչում այդ խօսքերը. — «ամենքը դողում էին ու պատասխանում. — «ցուրտ է, ցուրտ...»

Ու կարմիր այտերը գունատուեցին, ծիծաղը դադարեց, ամենքը կծկում էին, կուչ գալիս: Վալսի վերջին հնչիւնը դողաց օդի մէջ, հալուեց ու մարեց: Ու շուրջս մթնեց. սպիտակ զրկեսաները խառնուեցին խաւարին ու անհետացան սենեակի մութ անկիւնում: Եւ միայն գունատ գէմքը դեռ սպիտակին էր տալիս խաւարի մէջ, ու հնչում էր նրա ահաւոր ձայնը — «ամենքը պէտք է մեռնեն... և անգամ մութը դողում ու սառչում էր նրա ձայնից...

Ապա ամեն բան խառնուեց իրար, և՛ գունատ գէմքը, և՛ փողոցի աղմուկը, և՛ երեխայի լացը, և ևս ընկղմուեցի ինչ որ անչօջափելի, փափուկ, սև անդունդի մէջ... Ու ամեն բան լուկ... Նիկոզոս... Նիկոզոս... Ես աչքերս բաց արի: Ընկերս էր: Նա թոյլ ոսկրոտ ձեռներով գրկել էր բարձր ու ինձ էր նայում...

«Գիտես, Նիկոզոս, ես պէտք է մեռնեմ... Սիրտս այրում է... այտուղ... ցնւում է», ասաց նա՝ սեղմելով կուրծքը՝ նրա չրթունքները դողում էին, խոր ընկած աչքերում ինչ որ անհանգստութիւն կար, խիտ, գանդուր մազերը թափթփուել էին բարձր, սպիտակ ճակատին:

Ես սկսեցի մխիթարել, որ նա կ'ստողջանայ, որ գեռ ապրելու է, խնդրում էի, որ չը խօսէ, բփշկին արդելել է... Նա չէր պատասխանում, ու միայն ժպտում էր նրա գունատ, ա-

նարին գէմքը. չրթունքները սեղմուեցին, ու խոր ընկած պղղտոր աչքերը աւելի մթնեցին:

Անցաւ մի քանի վայրկեան, նա շարունակեց...

«Դու կարծում ես, Նիկոզոս... որ... ես վախենում եմ... մահից... Ապրելուց չէի... վախենում... ինչու պէտք է վախենում մահից...»

Նրա ձայնը թոյլ էր, խուպոտ, ամեն մի խօսքին նա դողում էր ամբողջ մարմնով: Ապա կարծես ինչ որ կտրուեց նրա մէջ, նա գլորուեց բարձի վրայ ու սկսեց հազել. չոր ու չարագուշակ էր հնչում նրա հազը մերկ, դատարկ, ցուրտ սենեակում. դա դաժան թորքախտի մահուան երգն էր, անոյժ օրգանիզմի վերջին հասաչանքները. նա դողում էր ամբողջ մարմրնով...

«Ես պէտք է խօսեմ... շարունակեց նա,—ես երբէք չեմ... գանգատուել... հիւանդ եմ.—մեռնում եմ... չեմ գան... դատուում... Կեանքից պէտք է գանգատ... Իմ կեանքը ցուրտ էր... թորքախտը չէ սպանում ինձ... կեանքի ցուրտը...» Հազը խեղդեց նրան, նա լսեց Լուս էր սենեակը:

Ես կանգնած էի շուարած, չը գիտէի՝ ինչ անեմ, նա չէր ուզում լսել. ծանր շնչելով՝ նա յենուեց մի ձեռքով բարձին, միւսը սեղմեց կրծքին...

Նիկոզոս, ես... աղքատ էի... սիրում էի անկախութիւնը... ես... ուզում էի... կեանքը չը խնայեց ինձ... որովհետ...

Ձայնը չէր հնազանդւում նրան... միայն շարժում էին չրթունքները: Նա ինձ էր նայում: Անոյժ, փշրուած սրտի գանգատ էր արտայայտում նրա անարիւն, անկենդան գէմքը: Նրա անլոյս աչքերում ինչ որ թոյլ կրակ էր փայլում.—նա թուլացաւ, ընկաւ ու պառկեց մէջքի վրայ: Նա լալիս էր լուս ու մունջ... ես մօտեցայ, խնդրում էի, որ լռէ: Յանկարծ նա ցընդուեց ամբողջ մարմնով... Փորձեց նստել, չը կարողացաւ: «Նիկոզոս... մեռնում եմ... Մայրիկս... մայրիկս... դուքս թուաւ նրա հիւանդ կրծքից մի թոյլ, խուպոտ, ցաւոտ ձիջ:

Նա ուշաթափուեց. արիւնը թափւում էր բերանից:

Ես կանչեցի աղախնին, խնդրեցի, որ մնայ սենեակում, ինքս բժիշկ բերելու վազեցի: Երբ վերադարձայ, բաց արի դուռը, սենեակը մութն էր, մոմը այրուել էր, հանգել: Աղախինը հեռացել էր սենեակից՝ վախենալով մենակ մնալ մեռնողի հետ: Ես իսկոյն լուցկի վառեցի, մոմի մի կտոր դտայ ու լուսաւորեցի սենեակը: Բժիշկն սկսեց քննել... «Վախճանուել է», ասաց նա մի րոպէ լուրթիւնից յետոյ...

Ընկերս անշունչ ընկած էր անկողնում. նրա փոս ընկած,

գունատ այտին արցունքի մի կաթիլ էր գողում... դա նրա
դառն, գողգոջուն զանգատն էր... չրթունքներն արիւնոտ էին...

Իսկ դուրսը դիչերային ցրտի մէջ իր սև երգն էր երգում
ցաւագար աշունը և թափելով սառը արցունքները ապակինե-
րի վրայ՝ ծեծում ու ծեծում էր նրանց, կարծես ասում լինէր.
«Ի՛ դու պէտք է մեռնես... ամենքը պէտք է մեռնեն...»

Սենեակն աւելի տխուր, աւելի ջուրտ էր...

ՆԻԿ. ԱԻԵՏԵԱՆ.

ՀԵԾԵԾԱՆՔՆԵՐԻ ԵՐԳԻՉԸ

Պ Ե Տ Ր Ո Ս Դ Ո Ի Ր Ե Ա Ն

(Կրիտիկական էտիլդ)

Я раньше началъ, кончу ранѣ,
Мой умъ не много совершить;
Въ душѣ моей, какъ въ океанѣ,
Надеждъ разбитыхъ грузъ лежитъ.

М. Лермонтовъ.

I

Մեր նոր գրականութեան պատմութեան ընթացքում գր-
ժուար կարելի է գտնել այնպիսի բանաստեղծներ, որոնց ա-
ռանձնապէս զրազեցրած լինեն լիրիկական խոհեր ու զգացմունք-
ներ. մեր ազգային, հասարակական կեանքը իր ամբողջ կոլորի-
տով դրել է իր անխախտ կնիքը մեր բանաստեղծութեան վրայ.
այլ կերպ չէր կարող լինել. ճիշտ է, լիրիկական կտորներ շատ
կան մեր բանաստեղծութեան՝ մանաւանդ նորագոյն շրջանում,
բայց գրանք ընդհանրապէս այնքան թոյլ են, որ անկարող են
տեղ գրաւել գրականութեան պատմութեան մէջ: Իբրև զուտ
սուբիեկտիւ և սուաջնակարգ բանաստեղծ պիտի մատնանի: ա-
նենք վաղամեռ պատանի Պ. Դուրեանին, որի պօէզիայի խո-
րաթախիծ կոլորիտը վաղուց իր վրայ է գարծրել հայ և մա-
սամբ օտար գրական աշխարհի ուշադրութիւնը:

Մեռնել 21 տարեկանը չը լրացած և ձեռք բերել մի գը-
րականութեան մէջ սուաջնակարգ բանաստեղծի դավնի, այդ
շատ քչերին է վիճակուում: Վաղամեռիկ բանաստեղծները ճակա-
տագրի բաղդաւոր, բայց և ապաբաղդ գոհերն են: Մի ցաւա-
գար նօսա հնչւում է նրանց ստեղծագործութիւնների մի

ծայրից մինչև միւսը, նրանց սրտից հնչուող հեծեծանքի ձայները ընթերցողին սուզում են վշտոտ խոհերի և ցաւոտ հարցերի մէջ, հեծեծանք սև օրերի, տենչանքների, մտորումների, վարանումների, բուռն ձգտումների, նախատեսուած մահուան ուրուականի դիմաց. մարդու կորովի անհատականութիւնն է այդ, որը ինքը իր մէջ և իր հետ տանջւում է, հալւում, ապրելու տենչանքով սպասում է չուտափոյթ մահուան և կամ երբեմն էլ մահուան ծարաւով, կեանքից զրուած, գերեզման է փափագում, կարծես այնտեղ հանգիստ վայելելու, տանջուած հոգուն յագուրդ տալու.

Խորշ մը կար, որ զիս չէր ծաղէր,—

Այն՝ լուռ փոսն էր գերեզմանիս...

Դուրեանն այդ տեսակի բանաստեղծներից է, միայն շատ շուտ հոգ մտած, բայց մատաղ հոգով շատ տանջուած, շատ զգացած, և երբ նրա միաքը նոր սկսում էր զարգանալ, մտորումների աշխարհը մտնել, թռքախոտ օրգանիզմը բողբոջեց, և 21 տարին չը բոլորած՝ նա աչքերը յաւիտեան փակեց, մէկը ամենահամակրելի հոգիներից, բանաստեղծական աչքի զարնող տաղանդներից, որոնց նմանը երբեիցէ արտադրել է մեր իրականութիւնը:

Բայց ո՞վ է Դուրեանը:

Դուրեանը 1851 թ.ի մայիսի 20-ին Պօլսի մի աղքատ ընտանիքում ծնուած, աննպաստ հանգամանքներում և չըջալայրում ապրած ու չնչած և 1872 թ. յունուարի 21-ին մեռած մի սրբամիտ, քնքոյչ և չափազանց զգայուն հոգի է, այն հոգիներից, որոնք աչքի են ընկնում իրանց բարութեամբ, աղնըւութեամբ, հրեշտակային անմեղութեամբ և երկխոյական պարզութեամբ: Նա հասարակ կրթութիւն ստացաւ, չքաւորութեան, կարօտի բեռան տակ անժամանակ ճնշուեց ու տանջուեց, նրա կայտառութիւնը տեղի տուաւ մաշող մելանխօլիային, երեսի վարդը մահուան դալիութեան. և մի տարի թռքախտի ճիրաններում հիւժուելով, քսան և մէկ տարին չը բոլորած, տենչանքների կրակը կրծքում՝ մեռաւ. ահա՛ նրա ամբողջ կեանքը:

Դուրեանի գրական գործունէութիւնը բաղկացած է թատերական, նամակադրական և տաղաչափական գործերից. ոչ թատերերգութիւնը և ոչ նամականին չը կարողացան տարածել նրա հոշակը, իսկական արտադրութիւն լինել նրա բնատուր տաղանդին. Դուրեանը Դուրեան է լոկ իր քնարերգութեամբ, դրանց մէջն է նրա հոգին, նրա ոյժը:

Շատ չեն այդ ոտանաւորները, ընդամենը 36 հատ, բայց սրբան ոյժ կայ դրանց մէջ, սրբան աննման ևն այդ սակաւաթիւ մրմունջները, որոնք պոկուած բանաստեղծի սրտի ամե-

նախոր անկիւններից՝ երևան են եկել անօրինակ ջերմութեամբ և բնականութեամբ. սչ մի լար, որ այդ տղայի մորմոքուող հոգին երևան չը հանէ. անհատականութեան, ինքնամիտի մարդու, տանջուած էակի վշտի, մտորումների, անդունդի մէջ քնքոյշ շեշտահարութեամբ որսացող արձագանքներ են զբանք, վիշտ ու մտորումներս Ամենից առաջ Դուրեանը հեծեծանքների երգիչ է՝ բովանտիզմի ամբողջ հրապոյրով, որի իսկական ներկայացուցիչն է նա մեզանում. Դուրեանի ժամանակն ու շրջավայրն էլ բովանտիզմի ժամանակ ու շրջավայր էր Պօլսահայ կիսնքում, որը յեղեղուում էր նմանողական և թարգմանական բովանտիկական երկերով, որոնք մինչև այժմ էլ հնուպուրում են թիւրքահայ գրագէտներին: Դուրեանը սուբիեկտիւ երգիչ էր, բանաստեղծի բարձր կարողութեամբ. նրա հոգին ամբողջապէս բովանտիկ հոգի էր, հանդամանքներն աւելի ևս նպաստեցին Դուրեանի պօէզիայի բովանտիկական բնաւորութիւն ստանալուն:

Սէր, ահա նրա տիրապետող նօտան. բնութիւն, վիշտ, որը իր մէջ է պարունակում տանջանքի, մահուան, բողոքի ու մտորման հնչիւները, ահա նրա միւս մօտիւնները, բոլորն էլ կսկիծ, հեծեծանք, որի մէջ ամիտփուում է ամբողջ Դուրեանը. զբանք բովանտիզմի էական թեմաներն են, որոնք առաւել կամ պակաս չափով երևան են եկել նրա գործերում:

Երկար չ'ապրեց Դուրեանը և երկար էլ չէր կաթող գրել. երեսունուվեց հատ ոտանաւորներից 7-ը պատկանում են 67—70-թ. թ., վեցի թւականները յայտնի չեն. նրանցից «Կը սիրեմ զքեզ»-ը վարիանտն է՝ «Իցիւ թէ»-ի՝ աւելի ուժեղ արտայայտութեամբ, և կը թւի թէ նոյն տարին՝ 1867 թ. գրած, կամ աւելի ճիշտ ասած՝ արտայայտութիւնը փոխած է. երկրորդը՝ «Մնաս բարեալ»-ը վարիանտն է «Սիրեցի քեզ»-ի, աւելի մեծ փոփոխութեամբ, և կարծում եմ, տեկատի տարին է գրել՝ 1869 թ. «Առ Կոյսն» մի թոյլ ոտանաւոր է, սկզբնական տարիների գործ, իսկ «Ահա սրանայ», «Հայուհին» և «Երեկոյեան Բալն...» յետագայ, թերևս 1871 թ. գրած լինի. գոնէ այդ եզրակացութեան են հասցնում լիզուն, արամազրութիւնը, հիւսուածքը. բայց զբանք այնքան էլ նշանաւոր բաներ չեն. յիշատակենք, որ «Աշնան դժգոյն...» ոտանաւորը վարիանտն է «Պէտք է մտնիլ» ոտանաւորին, աննշան փոփոխութեամբ, «Սիրել» ու «Դըրժել» ոտանաւորներն ևս նմանութիւններից զուրկ չեն:

Ոտանաւորների մեծագոյն մասը 71 թ. են պատկանում, որի ընթացքում արտադրել է երգիչը իր ամենալաւ գործերը, որոնք նրա փառքն են կազմում, իսկ մինչև այդ թւականը գրածները համեմատաբար թոյլ են, որոց նիւթը գլխաւորապէս,

ինչպէս և միւս գործերինը, սէրն ու վիշտն է: Համարձակ կարելի է ասել, որ գրել է միայն մի տարի՝ 1871 թ., քսանամեայ հասակում, մահուան վախն ու կակիծը կրծքում. ահա թէ ինչ պէտք է միշտ աչքի առաջ ունենանք Դուրեանին զնահատելու համար: Դուրեանը չը կարողացաւ և չէր էլ կարող ձեռք բերել ոչ լայն կրթութիւն և ոչ բազմակողմանի զարգացում. աննպաստ միջավայրը, նիւթական կարիքը նրա կորովի հոգին իրանց մագիլների մէջ խեղդեցին: Դուրեանը ազէտ չէր, բայց հասուն ու զարգացած էլ չէր, աւելի հասուն էր նա իր զգացմունքներով, քան մտքերով ու գաղափարներով. նա շատ չ'ապրեց, և դրա հետևանքն էր, թէպէտ զգացմունքով, դառնութեամբ խոր տողեր շարագրելը, շնորհիւ իր հիւժող հիւանդութեան, շուտափոյթ մահուան և անբարեպատեհ հանգամանքներին:

II

Դուրեանը մի կրակ էր, որ այրուեց՝ երբեմն միալով, երբեմն բողբոջուելով ու ճարձատելով և արագութեամբ հանգաւ. ահա հէնց այդ կարճատև կրակն է, որ երևան է եկել, կրակ, որ խոր անհատական լինելով հանդերձ՝ միաժամանակ և սօցիալական է. ահա թէ ինչու Դուրեանի գրական ֆիզիօնոմիան այնքան խոշոր է երևում. հեծեծանքները, ցանկութիւնները անորոշ, աննպատակ ցաւեր ու բացազանչութիւններ չեն, որոնք միանգամայն անարժէք են, որտեղ և՛ լինեն, այլ բղխում են խոր զգացմունքից և երևան են գալիս իրանց պատճառներով և առիթներով, և մեր առաջ ներկայանում է ոչ թէ Դուրեանը, այլ մարդ-արարածը, որը տանջւում է սիրոյ կարօտից, տենչանքների չ'իրականանալուց, հոգու փոթորիկների թափի ներքոյ հալուելով՝ զգում է մօտալուտ մահը, որը նրա կրծքից երբեմն մոնչոց է հանում, երբեմն լայց, երբեմն կասկածներ ապագայ կեանքի վերաբերմամբ: Նրա նուրբ ու խոր լիրիզմը, մելանխօլիայի երբեմն մօայլ, երբեմն քնքոյշ ու ցնորոզ տրամադրութիւնը յիշեցնում է իտալացի պետսիմիստ քնարահար Լէօպարդիի մօայլ, երազող, նոյնքան և փափուկ ու տանջուած հոգին, երբեմն էլ Նիկօլայուս Լենատին, Շելլին և Պէշկիթաշլեանին:

Նա երգեց սէր և սրբան իղէալական ու յափշտակիչ, կընոջ այդ ամենամեծ երկրպագուներից մէկը նրան հրեշտակային կերպարանք տուաւ, գաղափարականացրեց և այդ շրութեան մէջ նրան հաւատաց ու սիրեց. ամեն մի զեղեցկութիւն նրանով չափեց:

Վարդը զարնայնի
 Թէ կուսին տիպար
 Այտերուն չ'ըլար,
 Ո՞վ յարգէր զանի:
 Թէ չը նմանէր
 Կապոյտն և թերաց
 Կուսին աչերաց,
 Երկինք ո՞վ նայէր:

Կոյսը նրա աչքում այնքան սիրուն և անբիծ է, որ յան-
 ձին նրա Դուրեանը մարդ-արարածն է ճանաչում.

Թէ կոյսը չ'ըլար
 Սիրուն ու անբիծ,
 ԶԱստուածն այն երկնից
 Մարդ ուր կը կարգար:

Դուրեանը սիրոյ երգով սկսեց իր բանաստեղծութիւննե-
 րը. ինչպէս սկզբում, նոյնպէս և մինչև վերջը նա կարծիքը
 չը փոխեց կնոջ մասին, նրան մի աստուածային էակ երևակա-
 յեց, յափշտակուեց նրա աչքերով, այտերով, գիմագծերով, հո-
 գու սիրունութեամբ և սրափ անբիծութեամբ, պատկերացրեց
 նրան բոմանտիզմի ամբողջ բոյրով և հրապոյրով, պաշտեց և
 սիրեց մի խելագար սիրով. կոյսը ըստ Դուրեանի հրեշտակ է,
 որը

Եթէ նայի,
 Կ'ըսես. — «Հի՛մա կըմարի»:
 Եթէ ժըպտի,
 Կ'ըսես. — «Ո՛հ, հի՛մա կ'անցնի»:
 Եթէ շարժի,
 Կ'ըսես. — «Հի՛մա կը թռչի»:
 Եթէ շիկնի,
 Կ'ըսես. — «Հի՛մա կը բռնկի»:
 Եթէ խօսի,
 Կ'ըսես. — «Հի՛մա կը հատնի»:
 Իսկ թէ մեռնի,
 Կ'ըսես. — «Հի՛մա կը ծնի»:

Եթէ Դուրեան փոխադարձ սիրով սիրած և կնոջ հետ մօտ
 շփում ունեցած լինէր, անշուշտ ճաշակած կը լինէր նրա հո-
 գեկան շատ դրական ու բացասական կողմերը, որոնք իրանց
 զօրեղ ազդեցութիւնը արած կը լինէին նրա վրայ. բայց
 նրա գործերից երևում է, որ նա գժուար թէ փոխա-
 դարձ սէր տածած լինէր զէպի մէկը, գժուար թէ սիրոյ չըր-
 ջաններում ելուած լինէր. թերևս սիրում էր մէկին, ինչ-

պէս կարծում են ոմանք, բայց ինձ թւում է, որ այդ սէրը փոխադարձ չէ եղել, գուցէ և ոչ մէկին միշտ սիրած չը լինի, այլ զրաւուած, յափշտակուած լինի այս և այն օրիորդով և ժամանակաւորապէս սրա և նրա կարօտով այրուած, առանց նրանց իմանալու. շատ ոտանուորներ պարզ ցոյց են տալիս, թէ որքան նա յափշտակուած էր պատահածով (օր. «Թրքուհին», «Հայուհին»). և Դուրեանի նման նրբազգաց հոգու նկատմամբ այդ զարմանալի չէ: Բայց այսպէս թէ այնպէս, որ ամենագըլ-խաւորն է, նա հեւուից սիրողի, կարօտից մաշուողի տպաւորու-թիւն է անուամ, չը նայած որ նրա ոտանուորներում համբոյր-ների, գրծուսիւերի, սիրահարութիւնների մասին խօսք շատ է պատահում, որոնց հակառակ ապացոյցներն էլ չեն պակասում:

Ձերմ համբոյրովր դեռ չ'այրած
Սա ցուրտ ճակատս՝ դալկահար
Հանդիցունել հողէ բարձին,
Ո՛հ, չէ այնչափ ցաւ ինձ համար:

Կինը ըստ Դուրեանի մի արարած է, որ «ժպտէ, գեղէ, հուրէ շողեալ է», որի «բոյլ մը նայուածքը», «փունջ մը ժպի-տը», «քուրա մը խօսքը» գիւթում է բանաստեղծի սիրտը, որը փափագում է լինել իր սիրածի ձեռքի տակ հեացող ր թե-թե պատկեր լինել «նէրա հոգւոյն խորն հիացող»: Թէ որքան անկեղծ, ջերմ և զրաւիչ է նրա սէրն ու կարօտը, երևում է հետեւեալ սողերից.

Ես ուզեցի պաշտել ըզնէ,
Սիրել ժպիտքն՝ փրթիթք անհուն,
Սիրել աստղերն սեւ աչերուն,
Եւ այն խոկումն, որ մըծագնէ,
Պայծառ ճակատն՝ այն ամպըն է,
Որ կը շպարէ դէմքը լուսնոյն:

Դուրեանի համար կինը եթերային արարած է, չքնաղ տեսիլ, որ բանաստեղծին երևում է նրա մենութեան բոլոր բոպէ-ներում, երբեմն թաւուաքի մէջ արտասուելիս, նրա հետ տերևնե-րից է խօսում, երբեմն «ալիներէն կը ժպտի», երբեմն, երբ ժայռ ու սար է փախչում ջախջախելու իր սիրտն ու քնարը, «հովին մէջէն միշտ կը մնջէ՝ թէ բնաւ նրան սիրած չէ», և յուսահատ, կարօտակէզ բանաստեղծը միայն մի վայր դիտէ, որից վա-խենալուց հձծում է ու տրանջում, բայց երբեմն էլ դառն ու խոր շեշտով նրա կարօտն է երգում, այնտեղ է գտնում իր յուզուող հոգու, իր խանձուած սրտի միակ հանգիստը.

Գրկեմ սրտովս այդ ցուրտ հող,
Կ'ալ չը դիպչիմ քեզի թող,

Կոյս ս'է նաև զերեզման...

Կոյ խորունկ սիրտ մ'անոր նման...

Այդքան մորմոքիչ սիրով կարող է սիրել մի պատանի և այն էլ Դուրեանի նման զգացմունքների թելերից և սիրոյ լարերից հիւսուած արարածը. այդ շեշտով, այդ խանդոսութեամբ նա երգում էր 18 տարեկան հասակում: Դուրեանի «Սև-սև»ը, «Հծծիւնք»ը, «Սիրել»ը, «Դրժել»ը, «Սիրեցի քեզ»ը, «Նէրա հետ»ը, որոնք բոլորն էլ՝ բացի «Սիրեցի քեզ»ից 1871 թ. գործեր են, նրա էրօտիկական ամենազեղեցիկ կտորներն են, որոնց հայ քնարերգութեան առաջնակարգ ստանաւորների հետ կարելի է դասել, իսկ իբրև սիրերգներ՝ անզուգական տեղ են զբաւում: Ինչպիսի կարօտով բանաստեղծը յիշում է անցեալ օրերը, որոնք իբրև օաղիս նրա մեղմող կեանքի դառն անապատում ոսկեզօծել են նրա սև օրերը. այդպիսի ժամերում բանաստեղծին դիւթել է սէրը, հրեշտակ աղջիկը, որը, աւանդ, մեռնելով, լցրել է նրա հոգին թախծով և յաւէտ գոցել նրա առջև այս աշխարհը.

Ունէի ես իմ սիրուհին,

Որոյ թէպէտ աչքն էին սեւ,

Սակայն սրզալ չը զիտէին...

Հրեշտակ մ'էր նէ, հրեշտակ անթեւ:

Սեւ երազ մը օր մը դողողջ

Մըզեց զիս սեւ փոսի մ'առջին,

Ուր քար կըտրած՝ սիրտ ի թընդոջ՝

Գազաղի մ'աչքս յառած էին:

Աւա՛ղ, ներս վարդըն ու աստղերն

Լուռ պիտի տար կուլ այն սեւ փոս.

Ցուրտ համբոյր մը առի նակտէն,

Ներս վերջին ձօնն էր, փսոսու:

Ես լսեցի յայնժամ, թի թի,

Սեւ սեւ հողեր կոշտ թնդեցին,

Տըխուր քոշքին վըրայ փայտի...

Գըժոխք մ'անէ՛ծք այն սեւ օրին:

Այն ջուրտ հողերն յիմ դատարկ սիրտ

Լցուցին՝ փոսն զոցելնուն հետ,

Եւ այս աշխարհն ալ անժրպիտ

Գոցեցին իմ առջեւ յաւէ՛ր...

Անցեալ օրերի օաղիսների յափշտակիչ ու մելամաղձիկ յուշերը ճշտութեամբ պատկերացնում են բանաստեղծի կսկծող սիրտը: Զգացմունքի խորութիւնը և անկեղծութիւնը այնքան նրբութեամբ շեշտահարուած է, որ մորմոքում է ընթերցողին, համակում է նրան բանաստեղծի ցաւով: Այդպիսի մղկտոցով ու

հեկեկանքով անբաղդ սէրը երգել մեր մէջ միայն Դուրեանն է կարողացել, որի իւրաքանչիւր խօսքը սրտից պոկուած հեծեծանք է, որը այրելով ու թունաւորելով է մաշում բանաստեղծին:

Որքան ցաւոտ է և արտայայտութեամբ ուժեղ հետեւայ կատրը.

Շրջազդեստիղ խշրտուքն յար
կը փսփսայ դեռ ականջիս,
Հեծկլտալով իջնէ հոգիս
Արտօսարալից անդունդ մ'ի վար...

Դուրեանն իբրև սիրերգակ այն բոմանտիկներից է, որոնք սիրոյ վրայ նայում են շատ իղէալական հայեացքով. երբէք չէ նկատուում, որ նա որեւէ կրքոտ նիւթական սիրոյ ակնարկ անէ, որքան և նրա սիրոյ ազբիւրը կնոջ արտաքինը լինի. ինչպէս ամբողջ հոգին, նոյնպէս և սէրը անբիծ է, մաքուր, իղէալական. մեր մէջ ոչ մի բանաստեղծ կնոջ այնքան չէ բարձրացրել, այնքան ազնիւ, կարօտակէզ ու ցնորոզ սէր չէ ցածել զէպի նա, որքան Դուրեանը. այդ կողմից նա յիշեցնում է մեր մէջ Պէշիկթաշլեանին. իբրև սիրերգակ նա կարօտի սիրոյ երգիչ է. և երբևէն սէրն այն աստիճան է յափշտակում նրան, որ առջևը աշխարհս սկանում է, ամեն բան գոցւում լոկ անբաղդ սիրոյ համար:

Թէև կինը իր սիրով այդքան այրում էր Դուրեանին և կեանքը ծանր դարձնում, բայց և այնպէս այդ գրութիւնը և հէնց այդ ցաւոտ սէրը, որքան զերեզմանը, նոյնքան և կեանքն է նըրա համար զեղեցկացնում. այդ հոգերանական է. այրուող, տենչող մարդը փափաղում է ըղձերի իրագործում և ապա մահ, իսկ բաւականութիւնը աւելի է հրապուրում նրան. իսկ երբ անյոյս տենչանքը ծայրայեղ յուսահատութեան է հասցնում, զերեզմանի բաւականութիւնը՝ կամ աւելի ճիշտ՝ հանդիստը այն ժամանակ միայն գիւթում է մարդուն:

III

Դուրեանի անհատական վշտի երգերը մենութեան մէջ արձակած հեծեծանքներ են. այն խոր թախիծը, որ նրա բանաստեղծական հոգում էր բուն գրել, արտայայտուեց մեր քնարերգութեան ամենից կակձալի տաղերի մէջ. «Սև-սև»ը, «Լճակ»ը, «Ինչ կ'ըսեն»ը, «Տրտունջք»ը, «Հեծեծանք»ը, «Իմ ցաւը», «Իմ մահը», որոնք Դուրեանի ամենագեղեցիկ կտորներիցն են և նոյնիսկ զլուխ գործողները, ինչ զբաւանութեան մէջ էլ լինեն, ուշազըրութեան կ'արժանանան, այնքան նրբութեամբ և հզօր է ար-

տայայտուած կորովի հողին. այդ երգերում աւելի որոշ է ցոլացել մեր երգչի հիւանդոտ հողին, առաջացած շատ վշտոտ և նորագոյաց սրտի գողացող լարերից, որոնք որոշ տրամագրութիւն, անսովոր մաղձութիւնը, խոր ու նուրբ թախիժ են տալիս նրա տաղերին և քնքշացնում ֆանտազիայի հրապուրիչ սլացրը:

Չբաւոր ընտանիքի զաւակ, զառն օրեր քաչած, ամաչկոտ, սիրտը ցանկաւթիւններով լի նա յուսախաբուեց կեանքի շեմքում, առանձնացաւ և մենութեան մէջ իր վշտերը լացեց և հառաչներ արձակեց... ծագրեցին, արհամարհեցին նրա ընարը, ուշադրութիւն չը դարձրին նրա վրայ, անցորդը նրա զգոյն զէմքը, գալուէ ճակատը նկատելով՝ «կը մեռնի» բացադանչեց. և մենակ զգաց այդ մարդն իրան, սրտի վիշտը լճակին յայտնեց, յուսահատութեամբ նրան դիմեց՝ նրա մէջ իր հողեկանը տեսնելով.

Մեկամաղծոտ լճակ իմ,
Քեզ հետ ըլլանք մտերիմ,
Սիրեմք բեզի պէս ես ալ
Գրաւիլ, լսել ու խոկալ:
Որքան ունիս դու ալի,
Ճակատս այնքան խոկ ունի,
Ո՛րքան ունիս դու փրփուր,
Սիրոս այնքան խոց ունի բիւր:
Այլ եթէ գողդ ալ թափին
Բոյլքն աստեղաց երկրնքին,
Նրմանիլ չես կըրնար դուն
Հոգւոյս՝ որ է բոց անհո՛ւն:
Շատերը զիս մերժեցին,
«Քընար մ'ունի սոսկ» — ըսին.
Մին՝ «դողդոջ է, պոյն չ'ունի»,
Միւսն ալ ըսաւ. — «կը մեռնի՛»:

Բայց ոչ ոք այդ գարկութեան պատճառը չ'ուզեց իմանալ, նրա մխիտը իր սրտի մէջ մնաց, կրակը ծածկուած հողու մթթութեան մէջ բորբոքուեց, նրան այրելու, անչնչացնելու և ոչ հոչակը սարածելու համար, իսկ նրա ըզձերի մոխիրը... յիշատակները միայն ինքն իմացաւ.

Ոչ ոք ըսաւ. — «Հէ՛ք տըղայ,
Արդեօք ինչն է կը մըխայ,
Թերեւս ըլլայ գեղանի,
Թէ որ սիրեմ, չը մեռնի»:
Ոչ ոք ըսաւ. — «Սա տըղին
Պատուէնք սիրտը տըրտմագին,

Նայինք՝ ինչե՛ր գրուած կան...»
 — Հոն հրդեհ կայ, ոչ մատան:
 Հոն կայ մոխի՛ր... յիշատակ...
 Ալեակըղ յուզի՛ն թող, լճակ.
 Ձի բու խորքիղ մէջ անձկաւ
 Յուսահատ մ'ը նայեցաւ...

Ընդհանուր շարժումի մարդիկ, որոնք ծանծաղամտութեամբ ամեն բան արտաբնից են դատում և ինքնագոծ ընթանում կեանքի սովորական ճամբայով, չէին կարող նկատել և հասկանալ ծովի ստորերկրեայ արեկոծութեան իմաստը. այդ էր պատճառը, որ Դուրեանին անկրակ, լճակի պէս մեռած հողի էին առնանում. ինչ հակադրութիւնս

Ինձի կ'ըսեն. — «Կրրակոտ չես,
 լճակի մը պէս ես մեռած,
 Գալիահար՝ դէմքդ ու հայեցում»:

Բանաստեղծը վշտացած պատասխանում է՝
 «Ո՛հ, յատակն են իմ փրփուրներ»:

Այդպիսի յուստիաբ բողբոջներում, երբ մարդու համար կեանքը կորցնում է իր բոլոր հրապոյրը, դադարում են ամեն տեսակ ակընկալութիւններ, մահը ժպտում է թունտա քաղցրութեամբ և զերեզմանի հանդիսը ամեն բանից պիւրիկեր է թըլում, որտեղ երազում է որոնել «լարպեր, թրթում, թսիչ ու աստղեր...», այդ դառն ժամերում նա յիշում է անցեալի քաղցր, բայց կարճատև կրազները, որոնք եղան լոկ «մեղմոզ օսպիս նրա կեանքի գառն անապատում».

Երբեմն հողիս աստղի մը բոց
 Եւ թիթեռնի մ'ունէր թեւեր,
 Վերջալուսի նման ամպոց
 Երազներ, հո՛ւր ճակատս վառէր:
 Հազիւ քանի մ'օրերն կեանքիս
 Ոսկեզօծեց իմ քախտը վատ,
 Որոնք եղան լոկ ովասիս
 Մեղմոզ՝ կեանքիս դառն անապատ,

Իսկ՝

Արդ սառուցներ դառն արտօսրի
 Կը քարանան կուճքիս ներքեւ,
 Եւ բարդք ամպոց սեւաթորմի
 Կ'ուզեն խնդրել սիրտս ու արեւ:

Այս թախծոտ մեղօղիաներում, որոնց այնքան յուզիչ եղանակով և ինքնատիպ կերպով արտայայտել է պատանի երզնի տաղանդը, գրաւիչ նրբութեամբ հնչում է տանջուած սրտի ամ-

բողջ կլնէջր: Բայց այց տանջանքը, որ նրան խեղդում էր և երբեմն զգուհցնում կեանքից, գեռ բառի բուն իմաստով Դուրեանին պեսսիմիստ չէ գործնում. նա այնքան պեսսիմիստ է, որքան և օպտիմիստ, թէև գառնութիւնից երբեմն կեանքը կորցընում է նրա համար իր ամբողջ գեղեցկութիւնը և գերեզման է տնչում, բայց և այնպէս կեանքը իր քաղցրութիւններով միաժամանակ միշտ շոյում էր նրա սիրտը. նա մահուան ճիրաններում և աննպատակ պայմաններում քայքայուող, բայց կեանքի սիրով վառուած մի մարդ էր, ցանկանում էր սպրել, գործել, սիրել, իր տաղանդը կատարելագործել, և երբ գառնութիւնը կլանում էր նրան և թոքախտը հիւժում, նա տեսնում էր իր յոյսերի և սիրոյ հեշտանքից զուրկ կեանքի խորատկումը, անն այդ բոսէին նրա սիրտը թոյնով լցւում էր, և մահուան սև ուրուականը հրապուրում նրան. այդ վայրկեանում արդէն նա պեսսիմիստ է. այնպէս որ ոչ մարդաստեղութիւնը, ոչ սօցիալական հոգսերը, ոչ փիլիսոփայական մտորումները եղան նրա պեսսիմիզմի գրգող պատճառները, այլ անձնական կեանքը, ցնորող, ձգտող մարդու խորատկուած յոյսերը, անյաջող սէրը. իբրև պեսսիմիստ նա ծրանցից չէ, որոնք թոյն ու կրակ են թափում կեանքի վրայ, ինչպէս Բայրօնը, և ոչ էլ նրբանցից, որոնց մասլ հոգիները քաղաքակրթութեան բարիքները և մարդկութեան ապագայ երջանկութիւնը ցնորք ու ծագր են համարում Լէօպարդիի նման, թէև վերջինիս հոգու մէջ երբեմն շողում էր կեանքի արևը. Դուբեանի պեսսիմիզմը ցաւոտ է, բայց ոչ դաժան ու մոլեգին:

Երբ յուսահատութիւնը—«գերեզմանի այդ սև կաթը» ծրծուեց պատանի երգչի ամբողջ հոգու մէջ, Ֆիդիկական ու բարոյական տանջանքները հիւժեցին ու քամեցին նրա ամբողջ գոյութիւնը և հասցրին մահուան դուռը, նա հնչեցրեց իր կրծու բողբոջը, որ ինքը «տրտունջը» անուանեց. այդ լոկ բողբոջը չէ, լոկ տրտունջ չէ, այդտեղ երևան է գալիս ապրելու, գործելու ծարաւով պապակող հոգու ամբողջ կրակը, մտորող, քննող մարի առաջին թոթով նշոյլը կծու երգիծանքի շանթող սլաքով: Մտորումների հետ խառն յուսահատութեան այդ ճրոխնը արտայայտուած է զրացմունքի հզօր թափով, որը Դուրեանի գլուխ գործոյը և մեր քնարերգութեան ամենաբնախոր գործերից մէկն է. նրա մահուան անկողնի հրաժեշտի շունչն է այդ, որը ինչպիսի գառն հեծեմանքով է արտայտուած, ինչպիսի գեղեցիկ պատկերներով, ոճի ինչպիսի ուժով.

Է՛, մընաք բարով, Աստուած և արև,

Որ կը պըլալաք իմ հողոյս վերև...

Ասող մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից,
 Ասողինն ինչ են որ, եթէ ոչ ամբիծ
 Եւ թշուառ ոգւոց անէծք ողբազին,
 Որք թըռին այրիլ ճակատն երկնքին.
 Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՛ւ արմատ՝
 Յաւելուն զէնքերն ու զարդերն հրրատ...

Սրամիտ ու պատկերաւոր արտայայտութեամբ, կձու, բո-
 զորսոյ խօսքերից յետոյ կարծես բանաստեղծը ուշքի է դալիս,
 հանդարտում է փոքր ինչ և սրամատութեամբ ներողամտութիւն
 հայցում:

Այլ, ո՛հ, ինչ կ'ըսեմ... շանթահարէ զիս,
 Աստուած, խոկն հսկայ փշրէ՛ հիւլէիս,
 Որ մպրհի ձգտիլ, սուզիլ խորն երկնի,
 Ելնել աստղերու սանդուխքն անալի...

Ի՛նչո՞ք ընրոյչ եղանակով մեղմացրած բարկութեան ու բո-
 զորի շէշար միեւնոյն աստիճանի վրայ անկարող է մնալ. բա-
 նաստեղծի վրիթրած հոգին յուզւում է նչ յանկարծակի, այլ ո-
 րոշ աստիճանակարգութեամբ և այս անգամ մեղմ, բայց դառն
 պահանջողութեամբ և կասկածամտութեամբ շշնջում է:

Ողջո՛յն քեզ, Աստուած դողդոջ էակին,
 Շողին, փրթիթին, ալույն ու վանկին,
 Դու, որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս
 Ելլիցիր, թրթռումս շրթանց, թոխն հոգւոյս,
 Ամպ տըւիր աչացս, հեւք տըւիր սրբտիս,
 Ըտի՛ր՝ մահուան դուռն ինձ պիտի մպտիս,
 Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,
 Կեանք մ'անհուն շողի, բոյրի, աղօթքի:

Կասկածող, քննող և յուսախաբութեան շեմքը թեակո-
 խած միտքը արագացնում է իր թոխէքը, յուզումը աւելանում է
 մինչ այն աստիճան, որ որստացող սպառնալիքի է փոխւում:

Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
 Հոս մառախուղի մէջ համր անշրշունչ,
 Այժմէն թող, որ շանթ մ'ըլլամ դալկահար,
 Պըլլուիմ անուանդ, մունչիմ անդադար,
 Թող անէծք մ'ըլլամ ու կողո խրքիմ,
 Թող յորջորջեմ քեզ «Աստուած ոխերիմ»:

Ինչպէս ծալի կոհակները արեկոծուած ժամանակ կատաղի
 յորձանքով ափերին դարկելուց յետոյ կարծես վաստակած յեռ
 են նահանջում, ջրերի խորք սուզւում, նոյնպէս և դայրոյթը
 երբ ծայրայեղութեան է հասնում, շուտ թէ ուշ, նայած մար-
 դու տեմպերամենտին, կամ յանկարծակի կամ յամառ աստիճա-

նականութեամբ թուլանում է և հողնած, ուժաթափ մարդուն կամ դուրեկան հանդիսա կամ գառն մորմեք պատճառում, և վերջին գէսըրում դուք լսում էք վշտաբեկ մարդու գառն կսկիծը, որը սովորական մարդկանց մէջ տարզ եղանակով, իսկ Գուրեհանի նման մեկանխօրհայի ամպով ծածկուած բանաստեղծի մէջ հնչում է մեղօղիական հեծեծանքով.

Ո՛հ, կը դողդոջե՛մ, դժգոյն եմ, դժգո՛յն,
Փրփրփրի ներսը դժոխքի մ'հանդոյն...
Հասնչ մ'եմ հեծող նոցերու մէջ սեւ,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...

Փոքր ինչ հանդարտուած հողին գարձեալ ժայթքում է, մահուան երկիւղը և ապրելու տենչը իրար են բազխուում, և դաննացած սիրտը լարում է իր վերջին ճիգը մի անդամ ևս որոտալու, բայց կարճ.

Ո՛հ, կա՛յծ տէք ինձ, կա՛յծ տըւէք, ապրե՛մ...
Ինչ, երայէ վերջ դրկել զուրտ շիրի՛մ...

Մահուան մահճում պտուկած մարդու յուսահատութեան ճիչն է այդ, որից յետոյ թուլացած՝ սրտածմլիկ եղանակով իր սև ճակատագիրն է ողբում, որի իւրաքանչիւր խօսքը դաննութեան մրուրով է գրուած.

Այս ճակատագիր ի՛նչ սեւ է, Աստուանձ,
Արդեօք դամբանի մրուրով է գրծուած...

Նրա յուսահատ ձայնը պազատանքի է փոխուում.

Ո՛հ, տէ՛ք հողոյս կրակի մի կաթիլ,
Սիրե՛լ կ'ուզեմ դեռ, 'ւ ապրիլ ու ապրիլ...
Երկնքի աստղե՛ր, հողոյս մէջ ընկէք,
Կայծ տէ՛ք, կեանք՝ ձեր սիրահարին հէք:

Ինչպէս խեղդուողը բռնում է ամեն մի շիւղից, ամեն մի քարից, նոյնիսկ ալիքի ծփաղող գծերից, նոյնպէս և Գուրեհանի մեռնող հողին բողբոջից, ողբից, պազատանքից խոնջացած, ինքն իր մէջ ամփոփուելով մրմնջում է, գրանով իրան անդորրութիւն տալով.

Փարունն ո՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար,
Ո՛չ երկնի շողերն ժրպիտ մ'ինձ չեն տար.
Գիշերն միշտ դազադս, տատղերը ջահեր,
Լուսինն յար կու լայ, խուզարկէ վրճեր:

Արտի ծփանքը աւելի ևս խաղաղուում է, զգացմունքի թափը գանավիժուած ջրի նման հանդարտուելով անդորր հոսել է սկսում, սճը սրօղայիկանում է, կարճէք բանաստեղծը միջանկեալ խորհրդածութիւն է անում.

Կ'ըլան մարդիկ, որ լացող մը չ'ունին,

Անոր համար նա դրաւ այդ լուսին.

Եւ մահամբժն ալ կ'ուզէ՛ր կրկու բան—

Նախ կեանքը, վերջը լացող մ'իր վրան:

Հանգստութեան բուռէն էլ սիրտը դեռ մխիտում է, դեռ կակծում է. և այդպիսի հոգիների այդպիսի բորբոքումից յետոյ դժուար թէ հանգստութիւն լինի, եթէ զսպում հոգու կապերը բոլորովին չ'արձակուեն, եթէ արցունքը, այդ դառն, բայց ամբիջ հեղուկը չը բլխէ իր ակունքներից. «պէտք է արտասուեմ—ասում է Բայրժօնը—եթէ ոչ սիրտըս կը պայթի վշտից. տրամութեան կախով է սրնուս, անքուն և անձայն հեծծել է երկար ժամանակ». և զսաման ու տանջանքի գրութիւնից յետոյ բանաստեղծը հեկեկում է կերկերու ող ձայնով.

Ի գո՛ւր գրեցին աստղերն ինձի «սէր».

Եւ ի գո՛ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել»,

Ի գո՛ւր սիւղեր «սէր» ինձ ներշնչեցին,

Եւ փս նորատի ցուցուց ջինջ ալին,

Ի գո՛ւր թաւուտքներ լրոնցին իմ շուրջ,

Գտղանասահ տերեւ չ'առին երբէք շունչ,

Որ չը խտովեն... երայրքս վրսեմ

Թոյլ տրեին, որ միշտ ըզնէ՛ր երազեմ,

Եւ 'ի գո՛ւր ծաղկունք, փրթիթներ գարնան՝

Միշտ խնկարկեցին խոկմանցս խորան...
 Ո՛հ, նորա ամենքը զիս ծաղրեր են...

Որքան գեղեցիկ ու ցնորական է այս մելոդիան, որ վրտակի կարկաչի ձայնով հասում է կարծես անգորբութեան մէջ. բայց տխուր յուշերը դարձեալ յուզում են երգչին, նա իրան ծագրուած, վիրաւորուած է զգում.

Ո՛հ, նորա ամենքը զիս ծաղրեր են...

Դրանից յետոյ նա զգում. կարծես ինքն իրան մխիթարելու համար արձակում է իր մտտուղ մտքի իր տեսակում միակ, սրամիտ, կծու սլաքը, որը իր մէջ յռեատես մարդու դառն հայեացքն է պարունակում, որով և վերջանում է այդ բորբոք հոգու փոթորիկը.

Աստուծոյ ծաղրն է՛ աշխարհն ալ արդէն...

Դուրեանի կասկածող միտքը աշխարհը Աստուծոյ ծաղրն է համարում. և կը հարցնէ՛ր՝ «միթէ՛ աշխարհը Աստուծոյ ծաղրն է», այդ ոչ այնքան փիլիսոփայի, որքան վշտացած, զոււած բանաստեղծի խայթող սարկաղմն է. այդ միայն աշխարհից ծաղրուած մարդու փոխադարձ ծաղրն է՝ նոյն աշխարհի դէմ, թուաւորուած հոգու մաղձն է՝ կծու երգիծանքով արտայայտած:

Դուրեանն ընկերական սիրոյն նուիրեց իր ամենագեղեցիկ

գործերից մէկը, որի զգացմունքի անկեղծութիւնը, բուն, ծայրայեղ սիրուց բղիճած հեծեմանքը մեռած ընկերոջ յիշատակին շատ չեն պատահում նոյն իսկ եւրոպական առաջնակարգ բանաստեղծների գործերում. որքան բուռն, որքան ջերմ էր այդ երկու աղաների սիրահարութիւնը, որ ծագել էր զգայուն սրտերի, հողիների, կրած ցաւոտ օրերի միանմանութիւնից, որից առաջացած մտերմութիւնը նրանց իրարու մէջ ամբիօրեց.

Մենք զերթ երկու զրժոյն բոցեր
 Իրարու մէջ կ'այրէինք սոսկ:

Եւ քանի քաղցր, մեղամաղձիկ երաժշտութեամբ հնչեցնում է նա իր գորովալի յիշողութիւնները.

Ո՛հ, կը յիշես, Չամլընայի
 Սարը նստած լուռ մխայինք,
 Ուր շուք տային մեզի նոճիք՝
 Սեւ հովանոցը վրշտահարի:
 Մեր հողիքը նոճիներու
 Թուխ թիթեռներ էին արբուում,
 Սե՛ւ ծրծէինք, սո՛ւզ անհատնում,
 Նայէինք միշտ երկրէս հեռու:

Կարօտով և յուսահատական մրմունջով զիմում է մեռած, բայց անմոռանալի ընկերոջ.

Երջանիկ ես հող, թէ՛ թշուառ,
 Չուարթնոյ թեւով լուր մ'իմ զրկէ,
 Ա՛հ, այս աշխարհս միշտ տաղտո՛ւկ է...
 Յաւերու մեծ մայր մ'է աշխարհ:

Վերջին երկտողը, որը բանաստեղծի յուստես հողին և վիրաւոր սիրտն է երևան հանում, միաժամանակ և միակ աչքի ընկնող սօցիալական մօտիւն է: Յետապայ, վերջին երկու տան մէջ բանաստեղծը իր վիշաք և աշխարհից զգուանքը աւելի ուժեղ շեշտելով, նորից զիմում է ընկերոջը՝ հարցնելով. եթէ այդտեղ «ծառի մը շուք կայ, և նորա տակ մէկ վտակ, եթէ անապակ սէր և աղատ օդ կայ, ես կը թօթուեմ այս ազտատ ձորձն հողւոյս՝ կեանքս և սղաւոր հող կը հապնեմ»: Բանաստեղծը, որ զգուած և վշտացած միայն սիրում էր գեղերել ազատ օդում, ծառի շուքներում և վտակների եղրներից, սրտեղ կարող էր մենակ խորհել և տանջուել ազատ, ինքն իր հետ և իր մէջ, — համաշխարհային վտախ այն հղօր հողիներից չէ, որոնց համար թափառելը դառնում է կենսական պահանջ չորհիւ հողեկան անսրբինակ մերկին, որոնք ոչ մի սեղ հանդիստ չը գտնե-

լով՝ շարունակ շրջում են, այստեղ չէ՝ միւս տեղը երազելով
զանեկ կեանքի քաղցրութիւնները: Իբրև լոկ անհատական վրչ-
տի քնարահար՝ նա եւ թափառում է, բայց բնութեան ծոցում,
Պօլսի գեղածիծաղ երկնքի տակ, մենութեան մէջ, բնութեան
գեղեցկութիւնների հետ խօսելով, երազում է զանեկ կակձող
սրտին անդորրութիւն: Իբրև բնդհանուր սղով պիտիմիստ՝ նա
եւ հանդատութեան վերջին և իսկական կայանը գերեզ-
մանն է ճանաչում և ինքնաատիւ եղանակով գերադասում
է գերեզմանի «չուսքը, վտակը, օղը», քան կեանքի. այդ
ընկերական սէրը ջերմութեան կողմից որոշ նմանութիւն ունի
Շելլիի սիրոյն, որ սածում էր գէպի իր բնկերը. «Ես քեզ ինչ-
պէս ցնորք, ինչպէս երազ սիրում եմ», ասում է անգլիացի բա-
նաստեղծը ընկերոջն ուղղած մի ստանաւորում. իսկ Լէօպար-
զին նոյնքան անկեղծ սէր էր սածում գէպի իր ընկեր Զօրդա-
նին և մի տեղ նոյն իսկ ասում է, որ եթէ կեանքը գրաււիչ կողմեր
ունի, գրանցից մէկը ընկերն է: Գեղարուեստական տեսակէտից
էլ այդ ստանաւորը ընտիր է և օրինակելի:

Այն իղձերը, որոնք պատանի երգչին այրում էին, աւելի
որոշ և ուժեղ շեշտուած են «Իմ ցաւը» ստանաւորի մէջ.

Սուրբ տենչերով լոկ ծարաւած՝
Յամար զըտնել աղբերքն յամար,
Յամբել ծաղիկ հատակի մէջ,
Ո՛հ, չէ այնչափ ցաւ ինձ համար:
Դեռ չը դրկած էակ փունջ մը
ժպտէ, զեղէ, հուրէ շաղկալ՝
Գրբիկ սա ցուրտ հողակոյտը,
Ո՛հ, չէ այնչափ ցաւ ինձ համար:

Եւ ոչ քաղցր երազներով չ'անդորրած, մրրկահար գլուխը,
հողէ վերմակի տակ ննջելը և հիւղի մրուր օդ ծծելը ցաւ է նը-
րա համար, որը միայն մի ցաւ ունի.

Հէր մարդկութեան մէկ ոստը դօս՝

Չ'օղնած անոր՝ մեռնի՛լ աննշան,
Ո՛հ, այս է սոսկ ցաւ ինձ համար:

Նրա փառատենչ, փառվառն հոգին ձգտում էր անմահու-
թեան դափնին ստացած գերեզման իջնել, և այդ է պատճառը,
որ նա գիտակցելով իր ձիրքը՝ այնքան վշտանում էր և վախե-
նում, թէ կարող է աննշան մեռնել և կասկածանքով երազում
էր իր անմահութիւնը. եթէ գերեզման զննուց և

Ե՛թ յարդարեն իմ հողակոյտ,

Եւ հեծեծմամբ ու սղալէն

Իմ սիրելիքը բամբուլին,
 Գիտցէք, որ միշտ կենդանի եմ:
 Իսկ աննշան եթէ մընայ
 Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
 Եւ յիշատակս ալ թառամի,
 Ո՛հ, այն ատեն ես կը մտնեմ:

IV

Թէև Դուրեանը բնութեան սիրահար էր և նայնիսկ գերեզմանը նախադասում էր, եթէ այնտեղ սիրոյ հետ միաժամանակ «ծառի մը չտք», վտակ և աղատ օդ կը լինի, բայց և այնպէս բնութեան տեսարաններին շատ քիչ տեղ է շնորհել. և խկապէս դժուար թէ նա կարողանար իբրև նկարիչ վրձինի նուրբ և զգոյշ շարժումներով մեր առաջ բնութեան հրաշալիքները պատկերացնել. նրա անհանդիստ հոգու խոցերը այնքան սուր էին մրմնջացնում նրան, որ չէր կարող օրհեկախ հանգստութեամբ մի նկարիչ լինել. նրա կակիծը թոյլ չը տուաւ նրան այդպէս լինել. խոցի սուր սլաքը սախլում էր նրան հեծեծալ, միայն երգեր «Ես որ աշխարհի վրայ միայն երգերը շատ սիրեցի, կուզեմ, որ իմ վերջին շունչն ալ երգ մը ըլլայ»:

Եթէ երբևէն Դուրեանն իր ձեռքում վրձին է բռնում և աչքը բնութեան է դարձնում հիանալու նրա հրաշալիքներով և վերարտադրելու, բողբոջական արայութեամբ ճանկում է այդ փարթամ շտեմարանից գեղեցիկ գոյներ, փոքրիկ տեսարաններ՝ լոկ իր հոգու գառնութիւնը աւելի ուժեղ և պատկերասրտացայտելու, քնարի թրթիւր աւելի զրպուն և յափշտակիչ դարձնելու համար. նրա վրձինը, թէպէտ քնքոյշ, աշխոյժ, բայց արագ է թռչում, և ստեղծած գեղեցիկ պատկերները ոչ թէ վարպետի նուրբ ճաշակի, խոհուն մտածողութեան կատարեալ ստեղծագործութիւններ են, այլ սրամիտ, զիտող բանաստեղծի պատահական յաջողութեամբ վերարտադրած տեսարաններ, որ հիացմունք առաջացնելուց շուտ զգացմունք է դարձնում. եթէ Դուրեանն ամբողջական պատկերներ ունի վրձինի շեշտակի հարուածով, թանձր գոյներով և գեղեցիկ ներգաշնակութեամբ, հետեւեալներն են.

Շաղի, շողի ժամք էին,
 Վարդից հրդեհ կար յերկինն՝
 Փոխան ամպոց հուր հիւսքի,
 Տեղա՛ր մարդրիտ եւ ոսկի:

Թէպէտ այս քառատողը այն երաժշտութիւնը չ'ունի, ինչ

որ Դուրեանի այլ զեզեցիկ գործերը, բայց աչքի է ընկնում գոյների ներգաշնակութեամբ և պատկերների կենդանութեամբ, մակկիրների զեզարուեստական և նորատիպ ներգաշնակութիւն ունի հետեւեալ պատկերը, ուր բանաստեղծը բուսական զգայուն եղանակով վերջալուսի մարելը և աստղադարձ գիշերուայ մուտքն է ներկայացնում:

Հուր հորիզոնն մարեցաւ,
Երկինքն աստղեր փթծեցան:

Երկու կարճ, կարուկ տողերի մէջ ինչպիսի բանարձակ աշխարհ է երևում:

Դուրեանն իր հոգու համաձայն աւելի սիրով երգեց ընտ-թիւնը, քան նկարեց ամեն բանի մէջ նա սուրբեկաբու էր ի ընտ-նութեան տեսարանները նա իր զգացմունքի այլքի միջով, սրբ-տի պրիզմայով է անցկացնում:

Ես ուզեցի սիրել զեփիւռ,
Որ երկնքէն թռչի բեկբեկ,
Նա չը սիրեր խոցել երբէք
Հոգի մ'որոյ դադոնիքն է բոյք,
Գիտէ շոյել երազներ թւր,
Երկնի բոյրն յուշ կ'աձէ առ հէք:

Կամ այլ կտոր:

Ես ուզեցի լոկ ու մենակ
Սրբտակցել ջինջ վրտակին հետ,
Յիշատակի չ'ունի նա հետ,
Սիրտ մ'որոյ մինչ սուզիմ յատակ,
Գրտնեմ զիս հոն զըժգոյն, յատակ,
Գաղտնիք մ'ունի այն անթիւ վէտ:

Սրանք թէև փոքր են, աներաժշտական և նոյն իսկ բովան-դակութեան կողմից թոյլ, բայց ամենայայտնի կատրոններն են, ուր Դուրեանը բնութիւնն է երգում, թէև ոչ ամբողջ բնութիւնը, այլ նրա մասնաւոր երևոյթները:

V

Գրաբար լեզուն չէր կարող Դուրեանի անկեղծ վշտի բը-նական թարգման հանդիսանալ, բանաստեղծը հետու էր ամեն մի արուեստականութիւնից, ուստի նա երգեց աշխարհաբար, և իբրև այդ տեսակի երգիչ՝ առաջիններից մէկն էր արեւմտեան հայոց գրականութեան մէջ, իսկ իբրև մարուք աշխարհաբարով գրող՝ առաջինը, այդ Դուրեանի ամենամեծ առաւելութիւննե-րից և նրա պօէզիայի անկեղծութեան ու բնականութեան մեծ

գրաւականներից մէկն է. չենք մոռանում, որ նրա լեզուի վըրայ որոշ չափով ազդել են Ալիշանը և մանաւանդ Պեշիկթաշլեանը. բայց երբ մեր աշխարհաբարը դեռ անկերպարան վիճակի մէջ էր, մանաւանդ քնարերգութեան համար, պատանի սաղանդը կարողացաւ գրել մարութ և ճոխ աշխարհարարով, կտրուկ, սեղմ ու բովանդակալից ոճով, որի երաժշտականութիւնը մեյրօգիկ երեւոյնքով երբեմն սիւզի նման խաղաղ սեքաղցր և երբեմն էլ յուզուած ծովի կոհակների ներդաշնակ՝ բայց բուռն խաղերով շոյում է մարդու լսելիքը.

Ո՛հ, կը յիշնս, Չամլըճայի
Սարը նստած լուռ միայինք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սեւ հովանոցք վշտահարի:

Կամ՝

Է՛յ, մընաք քարով, Աստուած եւ արե՛ւ,
Որ կը սրլալաք իմ հոգւոյս վերեւ...

Դուրեանն ունի թանձր գոյներ, մանաւանդ երբ կոյսի գեղեցկութիւնն է նկարագրում. մանիչակին զիմելով հարցնում է. ի՞նչու գլխիկոր ու սղաւոր ես.

Մի՞թէ դու կնյս մը տեսար,
Որուն աչաց քով կապոյտ՝
Բզբեզ գըտար այնչափ մուճ,
Որ կը սրգաս սեւահար:
Ե՞թէ դու ալ վարդին պէս,
Ունենայիր դոյզն բոսոր,
Կը շիկնէիր, ինչպէս որ
Շիկնեցաւ այն փարզը վէս,
Երբ տեսաւ օր մը ներա
Վարդերն անթիւ այտերու:

Շուշանն անգամ կը դժգունէր նրա ձեռների սպիտակութիւնը տեսնելով, երկինքն անգամ ամպոտեցաւ, «Երբ որ կ'ընէր նէ աղօթք՝ վերն յառած աչքն ու հոգին»: Նկատելի է, որ նկարագիրը ու գունագեղութիւնը միանգամայն արևելեան է, շատերի համար թէև անգուրեկան, բայց վառ:

Մեր բանաստեղծը ոչ միայն կարողանում է գոյները թանձր-րացնել, այլ և կորով, խոր այտայայտութիւն տալ նրանց.

Այս ճակատագիր ի՛նչ սեւ է, Աստուա՛ծ,
Արդեօք դամբանի մրուրով է գծուած...

Իսկ աստղերը, որոնց բանաստեղծները սիրում են «Աստուծոյ աչքեր» անուանել, Դուրեանը որքան ինքնօրինակ, նոյն-

քան գեղեցիկ ու զգայուն եղանակով, նկատեցէք, ինչպէս է արտայայտում.

Աստղերն ինչ են որ, եթէ ոչ անբիծ
Եւ թըշուառ ողոց անէծք ողբագին,
Որք թրոին այրել նակատն երկնքին:

Դուրեանի միանգամայն նոր ու գեղեցիկ մակդիրները, գեղարուեստական համեմատութիւնները, նրբերանգները այնքան ինքնատիպ են, բնորոշ ու գեղեցիկ, սրունց նրբութիւնը պատիւ կարող է բերել առաջնակարգ գրիչ վարպետներին իսկ: Արշալոյսի ծագումը նմանեցնում է «վարդից հրգեհ»ի, ծաղկոտ թաւուաքի մէջ ընկողմուած կոյսի հետքը նմանեցնում է «ամրան սիւզ»ի.

Կը հեւայիր դու դժգոյն,
Ամրան սիւզի մը հանդոյն:

Կոյսի բուռն նայուածքը, շրթերին յանկարծակի փթթող ժպիտը, սաք խօսքը, սրպիսի գեղեցիկ մակդիրներով, ներդաշնակ ու սեղմ շարադասութեամբ է բնորոշում.

Բոյլ մը նայուածք, փունջ մը ժըպիտ,
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ:

Աչնանային գիշերը դժուար թէ աւելի պատկերաւոր արտայայտել կարելի լինի.

Գժգոյն գիշեր մ'էր քաղցրաբոյր աշնային:

Մահամբձ աղջկան «վերջալուսի աղջիկը» է անուանում, փոխանակ տխուր նայուածքի՝ «մըթին նայուածքը» է ասում, աղջկայ վառվուռն երեսն ու աչքերը՝ «ճառագայթի ու վարդի փթթումներ» պատկերով է բնորոշում, իսկ իր անցեալ օրերի հոգու բոցն ու թրթիւր զօրեղ ու վառ եղանակով այսպէս է արտայայտում.

Երբեմն հոգիս աստղի մը բոց
Եւ թիթեռի ս'ունէր թեւեր:

Գագաղի մէջ դրած սիրած աղջկայ ճակատը համբուրելը ինչպիսի կակիծով և գեղարուեստականութեամբ է բնորոշում.

Յուրտ համբոյր մը առի նակտէն.
Ներս վերջին ձօնն էր, ափսո՛ս:

Իսկ նրա դագաղի վրայ հող ածելը այնքան բանաստեղծական կորովով ու պատկերաւորութեամբ է արտայայտում, որ շատ քիչ գրիչների կը յաջողուի.

Եւ լրտեցի յայնժամ՝ թի թի,
Սեւ սեւ հողեր կոշտ թնդեցին,
Տխուր քօշքին վրայ փայտի...

Վառ երևակայութիւն, սրամտութիւն, ոճի ոլորուն շեշ-

տեր են հարկաւոր խօսքին այդ օրինակ վայլ և ուժ տալու համար: Նոճիներու այդ սիրահար երգիչը, որը բնորոշ ու նուրբ կերպով իր և ընկերոջ սիրտը նոճիներու թիթեաների է նմանեցնում, թախծալի ժամերը և երեակայութեան ու մտորման բոպէները վառ ու կենդանի եղանակով հետեւեալ ձևով է ներկայացնում.

Մեր հոգիքը նոճիներու

Թուխ Թիթեաներ էին տրտում,

Սեւ ծրծէինք, սո՛ւզ անմասնում,

Նայէինք միշտ երկր,ս հետու:

Որքան զգայուն, բովանդակալից է յետագայ պատկերը.

Գերեզմանոցին ցուրտ ծառեր

Կը փրփսան մեռելոց հետ:

Բանաստեղծի զգայուն հոգին տարբերում է գերեզմանոցի ծառերը այլ ծառերից. նրանք ցուրտ են, ինչպէս ցուրտ է իւրանց հովանու տակ նիւրհաձ բնակչութիւնը, և չըշխւը «իւրսփրսոց» է. պատկերը հիացնում է իր հոգեբանական նրբութեամբ ու խորհրդաւորութեամբ, և այդ ոչ այնքան ճարտարութեամբ, որքան ընատուր ձաչակով ու նրբամտութեամբ օժտուած երգիչը, որ

«Հառաչ մ'էր հեծող նոճերու մէջ սեւ»:

Մահուան զանգի ձայնը նա շարլօնական մակդիրներով չէ բնորոշում, այլ որորուն ու կարծ եղանակով, կրկնակի ու խոր չեչտերով կորով ու գոյն է տալիս երևոյթին.

Եթէ հընչէ տըխուր կոչնակ,

Թրթռուն ծիծաղն մահու զփխն:

Առարկաները ներկայացնում է կենդանի, բայց ամփոփ եղանակով. ահա ինչպէս է պատկերացնում քահանային.

Եթէ մարդիկ այն մահերգակ,

Որք սեւ ունին ու խոժոռ դէմ:

Գուրեհան գիտէ գեղեցիկ բառեր դարբնել, օր. «մենաձև», «մահերգակ». նա գիտէ մակդիրները աւելի նրբացնել, օր. «մեղմիկ», «հանդարտիկ». նա ստեղծող հոգի էր և ինքնուրոյն կերտող: Փաստերից երևում է, թէ որքան օրիգինալ, ճոխ, պատկերաւոր է նրա լեզուն, զրջի ինչպիսի անկախ և արտայայտիչ մաներներ տնէր այդ պատանին. ոչ ոք մեր լեզուն իր գոյներով ու հնչյուններով միաժամանակ այդքան նրբութեամբ և կանոնաւոր գործ չէ անել, որքան նա, նրա նման մեր մէջ ոչ ոք մակդիրները այնքան բնորոշ, տեղին չէ զրկել: Գուրեհանի ուճի զգայնութիւնը մեր մէջ անզուգական է. և ամենայն հաւանականութեամբ նրանից պիտի դուրս գար մի հմուտ և օրինակելի ստիլ-

լիստ, եթէ մահը նրան անժամանակ չիրիմ չը քաշէր: Ճիշտ է՝
պատահում են երբեմն անհամ ու անդոյն համեմատութիւններ և՛

Վարդը չ'ունի քու լանջդ ամբիժ լուսափթիթ...

Չ'ունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ:

Կամ՝

Ինչն ապշած են, լրճակ,

Ու չեն խայտար քու ալեակը:

Նրա համեմատութիւնների մի քանի անհամութիւնները
չատ անդամ չափազանց վառ լինելուց են առաջանում:

Երկինքն աստղեր զերթ «սիրոյ վերք» ցոլային:

Պատահում են նաև սովորական մակդիրներ, և չէր էլ կա-
րող Դուրեանն ամեն դէպքում ստեղծող լինել:

Երեկոյ է, բոցավառ է հորիզոն:

Թէև չափազանց վառ, բայց միանգամայն անբովանդակ է
յեռակալ գեղազենտական, փքուն համեմատութիւնը:

Թօշնեցայ զիրկն ևս իբրև

չամբոյր մ'անհուն զալկահար:

Անմիտ բացատրութիւն է՝

Քեզ սիրելու համար հարկ լոկ գոլ շիրիմ:

Պատահում են նաև բառերի աւելորդ կրկնութիւններ, ոճի
խրթնութիւն, պատկերների միանմանութիւն, գոյների աւե-
լորդ թանձրութիւն:

Ինչո՞ւ այդ անյաջողութիւնները, որոնք քիչ են և անվար-
պետ դրչի արդիւնք, կորչում են գեղեցկութիւնների մէջ և չեն
նսեմացնում Դուրեանի գեղարուեստական ոճի արժէքը:

Որքան գեղեցիկ է Դուրեանի ներվային ոճը, նոյնքան և
թոյլ է տաղաչափութիւնը. տաղաչափական նորութիւններ չէ
մտցրել Դուրեանը, բայց եղածին էլ կանոնաւոր չէ հետեւել. այդ
կողմից եթէ կարելի է նորութիւն համարել՝ «Առ կոյս» ոտա-
նաւորն է, Դուրեանի ամենաթոյլ արտագրութիւնը և իր նո-
րութեամբ միանգամայն երեխայական. շատ դէպքերում յան-
դեր նայնիսկ չը կան և ոչ հատածներ (ցէղուրա), չափերի ներ-
դաշնակութիւնը պակասում է, նա միանգամայն ազատութիւն է
տուել հոգու գեղման թափին, գեղեցկութիւնն աւելի բառերի
ու ոճերի մէջ է սրանել, որոնք անմիջական թարգման են նրա
ներբերի, քան չափերի, որոնք միայն գեղարուեստական ար-
տարին են տալիս, ներդաշնակութիւն առաջացնելով շարայարու-
թեան մէջ. լեզուական տեսակէտից էլ նրա զործերը անմշակ են
և սխալներով լի. այդ, ինչպէս երևում է փաստերից, գլխաւորու-
պէս վերագրելու է նրա ոտանաւորների և մնացած գործերի
տգէա սրբագրողին:

Մեր բանաստեղծի ոչ հասակը, ոչ կրթութիւնը ու գար-
 պացումը չը նպաստեցին հասարակութեան միտքն ու հոգին կրթ-
 թող, սնող քնարերգութիւն արտադրելու. երբեմն նմանու-
 թիւններ դանելով Դուրեանի և Եւրոպական բանաստեղծների
 մէջ, մենք միանգամայն հեռու ենք մեր փոքրիկ բանաստեղծին
 համեմատելու աշխարհահռչակ բանաստեղծների հետ և ոչ մի
 կերպով էլ չենք կարող պնդել, թէ Դուրեանն իր հասունութեան
 շրջանում կարող կը լինէր արաադրել Եւրոպական այդ հան-
 ճարների գործերին դէմ մօտ նմանութիւն ունեցող քերթուածք-
 ներ՝ նրանց տաղանդի ուժով: Դուրեանն ընդունակ, սրամիտ
 մարդ էր, միանգամայն բանաստեղծական ընաւորութիւն, իս-
 կական քնարերգակի ձիրքով, բայց դժուարանում եւս ասել, թէ
 որ աստիճան խոշոր էին այդ մարդու մտաւոր կարողութիւն-
 ները, քանի որ վերջինս է, որ միջուկ է տալիս բանաստեղծա-
 կան խանդին և երգչին մեծութեան գրօշմ պարգևում. իսկ նրա
 թողած փշրանքները դեռ մեզ որսչ, հաստատուն բան ասել չեն
 կարող, թէ և շատ հաւանական ենթադրութիւնների հիմք են
 ծառայում: Նա չունի որոշ փիլիսոփայական, հասարակական և
 քաղաքական աշխարհայեացք, խոր մտքեր, պիսիսիստ տրա-
 մադրութիւնն էլ զուտ անձնական վշտի արգասիք է, նրա հո-
 գին դեռ լայն ընդգրկումներ չունէր և չէր էլ կարող այդ հասա-
 կում շատ բան կրեան հանել՝ կեանքի չեմքում յուստիարուելով
 ու մեռնելով, միայն կարողացաւ իր դառն յոյզերի կուսական
 պօէզիայով զգացմունքներ փափկացնել, խոր զգալու արամադը-
 րել, հոգեկան նուրբ էմօցիաների աշխարհը մօցնել ընթերցո-
 ղին. այդ է նրա պօէզիայի սօցիալական արժէքը, և այդ մի պատա-
 նու. նկատմամբ մեծ ծառայութիւն է. իր զգացմունքի ուժով և
 դրա անկեղծ ու նոյնքան կորովի արտայայտութեամբ, համակը-
 րելի, բայց թոթով մտորումներով, ճոխ լեզուով, ինքնատիպ և
 գեղարուեստական ոճով նա կարողացաւ մեր մէջ առաջնա-
 կարգ բանաստեղծի հռչակ վաստակել. թէ և նրա հեծեմանքները
 շատ ելեկշներ չ'ունեն, բայց Դուրեանի կարօտակէզ սիրոյ և
 անձնական կսկծի մուղան ինքնուրոյն է և մեր քնարերգութեան
 մէջ անզուգական. և այդ կոկոն պօէզիայի, հեծեմանքներով լի
 էլէգիաների պատանի ստեղծագործողը իր դալուկ ու խորչումած
 ճակատով, թախծալի հայեացքով իրաւունք ունի կանդնելու
 մեր յայտնի բանաստեղծների շարքում՝ իսկական երգչի դափ-
 նին ձեռին:

Ա.Լ.ՔՍԱՆԴԻ ՌՈՒԲԷՆԻ

ՇՎԷՑՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ *)

VIII

Համայնքը, սիրելիս, խորհուրդ ունի միայն այն ժամանակ, երբ նրա կեանքում իրագործւում են փոխադարձ օժանդակութեան, զործակցութեան անհրաժեշտ սկզբունքները: Եթէ համայնքի մէջ էլ մարդիկ տնտեսապէս պիտի ապրեն իրանց ուրոյն անհատական կեանքով, այն ժամանակ զիւրը կորցնում է իր խորհուրդը և դառնում է մարդկանց մի աւելորդ համախրմբուն: Մեզանում էլ կայ համայնական կեանք իր բնորոշ արտայայտութիւններով, որ «հարեանութիւն» է կոչւում. բայց ամեն ինչ այնտեղ այն աստիճան պրիմիտիւ է, այնպէս քարացած միկնոյն տեղում, որ արժէ մի քանի նմուշ բերել չլէյցարական զիւղական կեանքից՝ ցոյց տալու համար, թէ ինչո՞վ և ինչպէս պիտի արտայայտուի կօլլեկտիւ գործունէութիւնը: Այդ նպատակով ես այս անգամ ընտրում եմ երկու հաստատութիւն, զիւղական կաթնատունը և փուռը, որոնք երկուսն էլ ահագին նշանակութիւն ունեն զիւղական ազդաբնակութեան համար, և որոնց հոտն անգամ չը կայ մեր կողմերում:

Շվէյցարական որեէ զիւղի մօտենալիս՝ ճանապարհի վրայ կարելի է տեսնել մի փոքրիկ տնակ: Հեռուից կարելի է կարծել, թէ դա մի անբնակ տուն է, երեսի վրայ զցուած, որովհետեւ գուռը միշտ փակ է, իսկ շուրջը ոչ ոք չէ երևում: Սակայն ամեն առաւօտ և երեկոյ այդ տնակի շուրջն սկսւում է մի առանձին կեանք ու կենդանութիւն: Գուռը բացւում է, ներսում մարդիկ են երևում, և միւս կողմից բազմաթիւ զիւղական սայլակներ են մօտենում, կանգ առնում այդ շէկքի առաջ, վար բե-

*) Տես «Մուրճ» № 2.

րում բերը և հեռանում: Սայրակները բողորն էլ բարձուած են թիթեղեայ մեծ ու փոքր ամաններով, քաշում է մի եղ, մի կող կամ մի ձի, իսկ վարիչն է մի աղջիկ կամ մի փոքրիկ տղայ: Ահա այդ փոքրիկ տնակն է կաթնատուներ կամ ինչպէս իրանք են ասում laiterie-ն, սայրակներն ամեն ասուլոտ թիթեղեայ ամաններով կաթ են բերում այնտեղ և վերադառնում:

Ի՞նչպէս է կազմակերպուած այդ հեռաբրքի բոլորը:

Յայտնի է, որ չվէյցարական գիւղացու գլխաւոր պարտումունքը խաչնարածութիւնն է, և արտահանելու ամենայայտնի աղբանքը՝ իւղն ու պանիրը: Սրանց վրայ է հաստատուած չվէյցարական գիւղական աղգարնակութեան ամբողջ տնտեսութիւնը: Արտահանուած իւղ ու պանրի փոխարէն չվէյցարային կարողանում է ստանալ օտար երկրներից հաց և այլ անհրաժեշտ պիտոյքներ: Հետեապէս կաթը նրա համար ամեն ինչ է, և պարզ է, որ նա ստիպուած է առանձին ուշք դարձնել իր ապրուստի այս աղբիւրի վրայ և կանոնաւորել նրա վաճառքը: Այստեղից է ծագում առել հասարակական կաթնատների գաղափարը:

Իւրաքանչիւր տարի համախմբուած գիւղացիները հրապարակական աճուրդի են հանում կաթի գինը մի տարուայ ընթացքում: Գինը նշանակուած է 12—15 սանտիմ իւրաքանչիւր լիտրին: Գիւղացիներից նա՝ որի վրայ մնում է աճուրդը, յանձն է ստնում ընդունել սահմանած գնով կաթի բոլոր այն քանակութիւնը, որ գիւղը կարող է արտադրել մի տարուայ ընթացքում: Իսկ գինը իր կողմից յանձն է առնում ստացուած բուլոր կաթը միմիայն կապալառուին տալ և ուրիշ ոչ ոքիս կապալառուն իրաւունք է ստանում նաև ձրիապէս օգտուել այն հասարակական շէնրից, որի մասին գրեցի քիչ առաջ: Եւ այնուհետև ամբողջ տարուայ ընթացքում իւրաքանչիւր գիւղացի իր կովիից ստացած կաթը իր սայրակով տանում է և յանձնում կապալառուին և նրանից վերցնում ստացապիւր: Տարուայ վերջում հաշիւները կարգի են դրւում, և ամեն մէկն ստանում է իր տուած կաթի գինը, մի կլորիկ գումար:

Կապալառուն կատարեալ տէր է կաթնատուներ բերում կաթի և նա է, որ պատրաստում է կարագ, իւղ և չվէյցարական զանազան տեսակի պանիրներ, այդ ձեւանարկութիւնից առաջացած օգուտը կամ վնասը հաւասարապէս նրան են պատկանում:

Ինչպէս տեսնում ես, սիրելիս, կաթնատները շատ պարզ են և ըստ երևոյթին առանձին աչքի ընկնող երևոյթ չեն հանդիսանում: Իսկ երբ մարդ մօտիկից է նայում հարցին, այն

ժամանակ լավներև է դառնում այս հաստատութիւնների բոլոր օգտակարութիւնը: Նախ՝ ով ծանօթ է գիւղական կեանքին, նա անչուշտ լաւ գիտէ, թէ որքան կարևոր, կենսական նիւթեր փշանում են, կամ չնչին դնով վաճառում վաշխատուների՝ արտահանութեան գփուարութիւնների պատճառով: Ի՞նչ անի, ի՞նչ պէս հաւարի գիւղացին իր կաթը, եթէ հնար չ'ունենայ անմիջապէս կաթնատուն տանել և գրամի վերածել:

Այս գէտըրում նա չէ էլ շահագործւում, որովհետև անհասները չեն՝ որ սահմանել են կաթի գինը, այլ ամբողջ համայնքը, որի իւրաքանչիւր անդամը համարեա հաստար չափով շահագործուած է այդ հարցում, վերաբերւում է գիտակցօրէն, հասկանում է իր արածի գրական և բացասական կողմերը: Ոչ ոք չէ շահագործւում, մասնաւոր անհատների ունեցած կաթը սպասուում է թթուելու, թափուելու վտանգից, և միևնոյն ժամանակ համայնքի մի անդամ՝ կապալառուն որոշ չափով շահւում է. ստում եմ «որոշ չափով», որովհետև համայնքը երբեք թոյլ չի տայ, որ նա՝ այդ կապալառուն կամ կապալառուները դառնան ազրուկներ և ծծեն ժողովրդի կենսական բոլոր հիւթերը:

Այս առթիւ ի՞նչպէս չը յիշեմ մեր երկրի «բամբակ առնողներին և բամբակի փող բաժանողներին»: Դա մի գործ է, որ ամբողջապէս հաստատուած է նենգութեան, խարէութեան, կեղծիքի, անամօթ ստի վրայ: Ո՞վ է սահմանում բամբակի գինը, անչուշտ անհատներ, որոնք իբր թէ յարմարւում են շուկայի դներին՝ քաղաղասնտեսութեան յայտնի օրէնքների համաձայն, բայց իրօք իրանց քէֆին աւելացնում կամ պակսեցնում են: Իսկ թէ ինչեր են կատարւում այն հասարակական կշիռքի մօտ, ուր խեղճ գիւղացին տանում է իր քրտնքի արգիւնքը, այդ արգէն դու ինձանից լաւ գիտեա:

Ի՞նչ վերաբերում է «բամբակի փող բաժանողներին», որոնք այնպէս չարաչար կերպով օգտւում են գիւղացու նեղ վիճակից՝ «ջրի գնի» առնելով նրա ստանալիք բամբակը, դրանք սիպեր են, որոնք երբ էլ դատարան քաշ տաս, վաղաժամ չի լինի: Գարնանը՝ երբ գիւղացին նոր սերմ է գցել, նրան առաջարկում են վաճառել իր աշնան ստանալիքը: Գիւղացին շատ լաւ իմանալով՝ որ կողոպտւում է, ընդունում է առաջարկուած պայմանները, որովհետև հարկ պէտք է վճարել, պարտք պէտք է տալ, երկխոսներին հաց պէտք է հայթհայթել: Եւ միայն բամբակը չէ՝ որի արգիւնքից այսպիսով զրկւում է, նրա քրտնքի բոլոր պտուղները խլւում են ամենաանխիղճ ձեով, որովհետ ինքը տղետ է և անտէր-անպաշտպան:

Շվէյցարիայում, սիրելիս, իւրաքանչիւր գիւղացի դրուած է իր համայնքի պաշտպանութեան ներքոյ, նրան ոչ կողոպտել և ոչ խաբել կարելի է: Մեզանում իւրաքանչիւր գիւղացի պարազիտների, անամօթ խաբեբաների համար մի պատրաստի որս է, արդարացնելով՝ «դառն դադես, դատարկ նստես» յայտնի առածը, մի անէծք՝ որ ամբողջ դարեր ծանրանում է մեր դժբաղդ ժողովրդի ճակատին:

Կաթնասաներից բացի երկրորդ հետաքրքիր հաստատութիւնը գիւղում հասարակական փուռն է: Շվէյցարական գիւղացին իր տանը հաց չէ թխում, ամեն մի գիւղում կայ մէկ երկու փուռ, որտեղից կարելի է կամ ամենօրեայ հացը դնել շատ բարեխիղճ գնով, կամ սեփական ալիւրը յանձնել թխելու որոշ վարձով: Այսպիսով նախ՝ ահագին խնայողութիւն է արւում վառելիքի մէջ, և երկրորդ՝ տանտիկիները ազատուած են հաց թխելու հետ կապուած բազմաթիւ գժուարութիւններից:

Ինչքան խելացի, ինչքան օգտակար բան կը լինէր, եթէ կարելի լինէր հասարակական փուռեր հաստատել նաև մեր գիւղերում, և առհասարակ ազատել մեր զեղջիւռհիներին թոնիրներում հաց թխելու սպանիչ սովորութիւնից:

Շվէյցարական գիւղի նկարագրութիւնը տալով՝ անհեթեթութիւն կը լինի սպասել կամ պահանջել, որ մեր երկրի գիւղերը վերակազմուեն ըստ շվէյցարականի: Այսպիսի հետևանքի հասել է Շվէյցարիան միմիայն չնորհիւ այն հանգամանքի, որ ամբողջ դարերի քաղաքակրթութիւն ունի իր թիկունքին: Առհասարակ քաղաքակրթութիւնը յանկարծակի չէ բսնում սունկի պէս: Իմ ցանկութիւնն է միայն չեչտել որոշ առաջնորդող սկզբունքների վրայ, որոնց իբրև հիմունք ընդունելով՝ հնարաւոր է մեր երկրի ներկայ կարգերում և պայմաններում մի համեմատական բարիք առաջ բերել: Նայում եմ շուրջս այստեղ, դիտում եմ, ապա մտաբերում եմ մեր երկրի գիւղական կեանքը ու նրկատում եմ, որ մի չարք բաներ կարելի է իրադրծել և՛ մեղանում:

Նամակիս սկզբում ես խօսեցի գիւղական կաթնասաների և փուռերի մասին, թնյլ տուր ինձ այժմ մի քանի խօսք էլ ասել աշխատանքի բաժանման և առհասարակ պարասպմունքների մասնաւորացման մասին, որ կեանքի յառաջադիմութեան համար այնքան անհրաժեշտ ֆակտոր է հանդիսացել ամբողջ պատմութեան ընթացքում:

Ուրիշ անգամ ես քեզ առիթ եմ ունեցել զրելու սիրելիս, որ շվէյցարական ընութիւնը ազքաս է. աւելացնեմ, որ մարդն այստեղ կարողանում է գլուխ թափել անդուլ, յամառ աշխատանքով: Սակայն աշխատանքը, որքան և նա մեծ լինի, անկա-

րող պիտի լինէր այստեղ թէկուզ համեմատական բարեկեցութիւն առաջ բերել, եթէ զրուած չը լինէր խելացի հիմունքների վրայ և եթէ չը տարուէր այնպիսի եզանակով, որ համապատասխանում է այս երկրի կլիմայական, հողային և մի շարք այլ առաջնակարգ նշանակութիւն ունեցող պայմաններին: Աշխատանքի ծանրութիւնը կամ մեծութիւնը անպատճառ յարաբերական չէ նրա արդիւնքին. դրան ապացոյց՝ մեր գիւղացիների աշխատանքը, որ հաւասար է ծանրագոյն տառապանքի և որ չէ կարողանում նրանց համար թէկուզ համեմատական բարեկեցութիւն ստեղծել: Շվէյցարական ազգաւ ընտելեան մէջ գիւղացին աւելի բարեկեցիկ է, քան մեր հարուստ ընտելեան մէջ մեր գիւղացին: Ինչո՞ւ: Սա մի երևոյթ է, որի պատճառները կարծում եմ՝ չատ հետաքրքիր կը լինեն և՛ քեզ համար, ուստի թնյլ տուր ինձ այսօր համառօտակի ծանրանալ այս հարցի վրայ:

Նախ ասեմ, որ այս երկրի հողագործութեան համար վաղուց անցել է՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ մշակութեան տարածական շրջանը (culture extensive), երբ գիւղացին կարող էր ցանկը՝ որքան կամենայ՝ հողերի առատութեան պատճառով, և վրայ է հասել ինտենսիւ շրջանը (culture intensive), երբ նա ստիպուած է միևնոյն կտոր հողի վրայ թափել իր ջանքը ստանալու համար գարձեալ այնքան, որքան նախընթաց՝ հողի առատութեան շրջանում: Շվէյցարիայի քաղաքակրթութիւնը բազմաթիւ միջոցներ է սուսել շվէյցարացուն ինտենսիւ կուլտուրայի համար: Կատարելագործուած մեքենաներ, քիմիական պարարտացում, սերմերի, անասունների ընտրութիւն, բնական չարիքների դէմ կուսուտ հազար ու մի գորավիզ հնարներ, այս բոլորն ունի Շվէյցարիան և դեռ ամենայն օր էլ գիտութիւնը գալիս է իր նորանոր յայտնութիւններով ասելու արդիւնաւէտ աշխատանքի դազանիքը: Եւ ինչ որ ասում են նորագոյն արուեստն ու գիտութիւնը, այն անմիջապէս ոչ միայն յայտնի է դառնում այս երկրի գիւղացուն, այլ և լայն կերպով շրջում է նրա արամաշրութեան ասի, որից նա կարող է օգտուել՝ ինչպէս և որքան կամենայ:

Ճշմարիտ է՝ մեղանում հողի սակաւութիւնը գեո այն չափերը չէ ընդունել, ինչ որ եւրոպական երկրներում, բայց սնուրանալի է, որ մեր գիւղացին արդէն տառապում է անտեսական այդ անխուսափելի ցաւից, որ նրա համար էլ հասել է ինտենսիւ կուլտուրայի շրջանը, բայց դրա հետ միասին նա ոչ մի յարմարութիւն, ոչ մի պարարտութիւն չ'ունի նոր և աւելի ծանր պայմաններում վարելու հողի մշակութիւնը: Տղէս,

խեղճ, անձանօթ քաղաքակրթութեան բարեքններին, զիտութեան մատակարարած պայքարի զօրեղ միջոցներին, նա միայն ախ է քաշում այն «երանելի» լաւ ժամանակների մասին, երբ ինքը կարող էր տաս տասնհինգ կտոր հողերից կէսը ցանել և կէսը թողնել շիւթի»-հանդստանալու՝ յաջորդ տարին ցանելու համար:

Բնութիւնը խորթ մայր չէ և ոչ մի ժողովրդի համար, նրա ծոցը հարուստ է կենսատու հիւթով, միայն թէ այն դուրս քաշել, նրանից օգտուել է հարկաւոր: Որքան բնական են «երանելի» ժամանակները մի երկրի համար, նոյնքան էլ բնական պիտի լինեն և՛ այսպէս կոչուած «չար» ժամանակները՝ հողի առատութեան և սակաւութեան տեսակէտից: Ընդհակառակը՝ արտասուելի պիտի համարուի այն երկիրը, ուր հողը շարունակ առատ է, և մարդը երբէք պայքարի, մտածելու, ուրիշ խօսքով՝ յառաջադիմելու պահանջը չէ զգուս:

Հողի սակաւութիւնը ամենարուսն կերպով զգացուած է հէնց այն երկրներում, որոնք քաղաքակրթական բարձր շրջանում են դանդաղում:

Անխուսափելի է այս էվօլյուցիայի մէջ, որով ընթանում է հողի մշակութիւնն, ինչպէս և ամեն ինչ տիեզերքի մէջ. զրգաբազ է այն ժողովուրդը, որ յետ է մնում ժամանակից, որ պայքարի պէտք ունի՝ առանց միջոցներ ունենալու, աշխատանքի պէտք ունի՝ առանց կռանդի և արտասուելի լքումի մէջ վշտում է ու գանգատում:

Ահա մի պատճառ, սիրելիս, թէ ինչու մեր գիւղացին խեղճ է, աղքատ, տառապած: Այդ պատճառը եթէ ձեռկերպենք, ամփոփենք, պիտի ասենք մօտաւորապէս հետեւեալը. հողի սակաւութիւնը մեզանում իրապէս վրայ է հասել, պէտք է սկսուի մշակութեան ինտենսիւ, զօրեղացրած շրջանը, բայց մեր երկրում դրա համար անհրաժեշտ պայմանները պակասում են: Նոր ժամանակի, նոր հանդամանքների մէջ մեր գիւղացին շարունակում է իր բուտինան: Հետեանք՝ տնտեսական քայքայումն: Այս չէ բոլորը:

Պատմութեան նախնական շրջանի մարդու և ժամանակակից մարդու, ինչպէս և պրիմիտիւ հասարակութեան և քաղաքակիրթ հասարակութեան մէջ խոչոր տարբերութիւններից մէկը, եթէ ոչ խոչորագոյնը՝ աշխատանքի բաժանումն է զիտութեան, արուեստների և առհասարակ անհատական և հասարակական կեանքի բոլոր շրջաններում և մասնաւորապէս արդիւնաբերութեան զանազան ձևերի մէջ: Քաղաքակիրթ կեանքին յատուկ այդ մասնաւորացումը, որ յառաջադիմութեան խոչոր գործօն է հանդիսացել, կատարուել է և՛ հողի մշակութեան

մէջ: Շվէյցարիայում՝ օրինակ՝ բուսնում է ցորեն, դարի, հաճար, տեղ-տեղ խաղող, բազմաթիւ պողատու ծառեր, բայց այստեղ գիւղացին այդ բոյսերի մշակութեամբ ամենեին չէ պարապում կամ շատ քիչ: Նա իր հողերի մեծամասնութիւնը յատկացրել է արօտատեղերի, որ փոխանակ ցանկում՝ թողնում է, որ իր եղներն ու կովերն արածեն, կամ հնձում է՝ նրանց ձմեռային պաշարը պատրաստելու: Այսպիսով նա չունի հացարոյցեր, բայց դրանց փոխարէն առատ խոտ ունի իր անասունների համար:

Փաստն ըստ երևոյթին տարօրինակ է, փոխանակ իր և իր զաւակների պարէնի մասին մտածելու՝ շվէյցարացին ամենից առաջ հողում է իր անասունների մասին: Մեր գիւղացին լսելով այս՝ անշուշտ կը դարմանայ և նա հասկանալ անգամ չի կարողանալ, որ ցորեն արտադրելու ընդունակ հողը մարդիկ կամաւ դարձնեն արօտատեղի: Բացատրութիւնը շատ պարզ է: Շվէյցարացին իր հողի տուած արդիւնքի տեսակէտից արեւ է հետեւալ հասկանալի հաշիւը. հացահատիկի այն քանակութիւնը, որ նա կարող է ստանալ իր տափից, նա համեմատել է այն օգտի հետ, որ նոյն տափը կը տար, եթէ մնար իրրի արօտատեղի և ծառայէր սննդելու իր անասուններին: Այս պարզ համեմատութիւնը նրան համոզել է, որ երկրորդն աւելի ձեռնաու է, որ իր լաւ կերակրուած կովերը այնքան կաթ ու հորթ և եղներն այնքան միս կը տան, որ նրանով կարելի կը լինի պէտք եղած հացահատիկներ գնել և մի բան էլ յետ պցել:

Հացահատիկներ ձարելու գծուարութիւնից նա չէ սարսափում, որովհետեւ յարաբերութեան հեշտութիւնը թէ՛ իր երկրի զանազան մասերի և թէ՛ օտար երկրների հետ՝ նրան լայն հնարաւորութիւն են տալիս իր կարագն ու սրանիբը փոխանակելու օտարի ցորենի հետ և այսպիսով շատ աւելի արդիւնք ըստանալ, քան այն, որ նա կարող էր ստանալ իր հողերի այլ ձևի շահագործութիւնից:

Այս բոլորը գրելով՝ իմ նպատակը չէ բնաւ ասել, թէ մեր գիւղացին էլ լաւ կ'անի, եթէ իր վարելահողերը վերածէ արօտատեղերի և միայն անասնապահութեամբ պարապէ. այն, ինչ հնարաւոր է եղել լեռնային Շվէյցարիայում, չէ կարող անպատճառ հնարաւոր լինել և՛ մեր բնութեան մէջ: Ես ուզում եմ միայն ցոյց տալ, թէ ինչ հայեացքով պէտք է առաջնորդուել հողի մշակութեան մէջ, որ բոլորովին անհրաժեշտ չէ և նոյնիսկ վնասակար է անպատճառ ամեն բերք ցանել: Ի հարկէ՝ հաճելի է, երբ մարդ կարող է վստահ լինել, թէ իր ընտանիքի պէտքերի համար ամեն մի բերք ստանալու է իր գաշտերից, բայց զստովորաբար իրագործելի չէ, և եթէ գիւղացին անպատճառ ու-

զուժ է այդ բանին հասնել, նա գործում է ի վնաս իր սեփական անտեսութեան, որովհետև նա ստիպուած է այսպէս աւսած՝ բռնանալ իր հողի կարողութեան, առանձնայատկութեան վրայ, խեղաթիւրել նրա բնական արտադրող, ստեղծագործող էներգիան: Դու լաւ գիտես, սիրելիս, որ մեր իւրաքանչիւր գիւղացի շատ անգամ մի տարում ցանում է ցորեն, գարի, կորեկ, բանջարեղէն, բամբակ, կնճիթ և յաճախ այնպիսի հողերի մէջ, որոնք բոլորովին համապատասխան չեն: Սա մշակութեան պրիմիտիւ սիստեմն է: Արդիւնարեւութեան այն մասնաւորացումը, որ այնպէս բեղմնաւոր է դարձնում աշխատանքը, ծանօթ չէ ամենեւին մեր ժողովրդին, ամեն բան կատարում է վայր ի վերջ, համարեա անհասկանալի կապրիզով: Ահա երկրորդ պատճառը մեր գիւղացիների խեղճ անտեսութեան:

Ասացի, որ ինտենսիւ մշակութիւնը հնարաւոր է դառնում Շվէյցարիայում՝ չնորհիւ գիտութեան և արուեստի մատակարարած նորագոյն միջոցների: Շատ հետու կր տանէր մեզ այդ միջոցների մանրամասն նկարագիրը տալ, մանաւանդ որ ես այդ անկարող եմ անել, որովհետև մասնագէտ չեմ, առեմ սակայն, որ զբանց մէջ առաջնակարգ տեղ է բռնում հողի պարտացումը:

Սրա մասին մի քանի խօսք:

Կայ քիմիական պարարտացում, զրա մասին ես չեմ խօսի, որովհետև անօգուտ է նկարագրել այն, ինչ միանգամայն անկարելի է իրագործել մեր երկրի ներկայ պայմաններում: Գառնանք միւս ձևի պարարտացնելուն, որ ծանօթ է նաև մեր երկրում, այսինքն աղբով, մոխրով և այլ նիւթերով: Շվէյցարացին իր անասունների ամբողջ աղբը զարնանը սայլերով շրջում է իր հողերում, լինի նա արա կամ արօտատեղի:

Երբ ես նկարագրում էի այս երկրի գիւղերի մաքրութիւնը, երեի ինքզ թեզ հարցրիւ. «ապա ի՞նչ են լինում այդ երկրի կուճարկները, ուր է հաւաքում շվէյցարացին իր անասունների աղբը»: Սրանք էլ իրանց կուճարկներն ունեն, սիրելիս, միայն բոլորովին տարբեր ձևի և տարբեր պայմաններում: Քեզ դրել եմ արդէն, որ սրանք իրանց անասունների տակ փռում են չոր խոտ, որ խառնւում է աղբի հետ: Գոմից գուրս հանելով աղբի և խոտի այդ շաղախը՝ անից հետու, սոբից հետու մի անկիւնում կուտակում են հողի դէպի պէս, վրան ջուր են բաց թողնում, որ փթի Գարնանը, ինչպէս ասացի, այդ ամբողջ կոչող տեղափոխում են և սխալում գաշտելում: Եւ այդպէս ամենայն տարի: Ո՛չ մի տարի չէ մնում առանց պարարտանալու, ո՛չ մի տարի չէ մնում պարապ՝ կամ ինչպէս մեզանում ասում են՝ «խամ»:

Արգիւնքը բնականապէս կրկնակի է լինում. թէ հացահատիկ է ցանուած, աշխատանքը վարձատրուում է, իսկ թէ խոտատուղի է, հնձուում է երկը անդամ և դեռ աշնանն էլ, երբ անասուններին դուրս են թողնում գոմերից, ծառայում է որպէս լաւ արօտատուղի 1—2 ամիս շարունակ:

Գիտեմ, դու իսկոյն կ'ասես. «Ընչպէս կարող է մեր գիւղացին անասունների աղբը իր արտերը պարարտացնելուն ծառայեցնել, երբ դա նրա համարեա միակ վառելիքն է: Շվէյցարացին վառելու համար անտառներ ունի, իսկ մեր գիւղացին միմիայն աթար, որ ստանում է անասունների աղբից: Ի՞նչ անի?»

Այդ ճշմարիտ է, սիրելիս, բայց դարձեալ մի բան հնարաւոր է անել եթէ ոչ ամբողջ աղբը, դէթ նրա մեծադոյն մասը արտերի պարարտացնելուն ծառայեցնելու համար: Այստեղ ևս ստիպուած եմ սկսել մի քիչ հեռուից, սկսել մեր պատմական թոնրից: Իմ կարծիքով թոնիրը մեր գիւղացու տնտեսութեան համար մի չարիք է, որ ծանրացել է մեր երկրի վրայ դարերից ի վեր, և դեռ յայտնի չէ, թէ երբ պէտք է ազատուենք նրանից:

Թոնիրները մեծաւ մասամբ խոնաւ են, երբեմն նրանց յատուկում ջուր է հաւարուում, և խոնաւ դեմնի մէջ փորուած այդ վիհը տաքացնել է հարկաւոր մինչև այն աստիճան, որ հաց թխել հնարաւոր դառնայ, որ խմորը նրա կողերին կպչի: Եւ որքան աւելորդ վառելիք է մաշուում այդ իր տեսակի մօլօխին կշտացնելու համար: Ի՞նչ անել, վերացնել տուն տաքացնելու այդ սխտեմը: Բայց ընչպէս հաց թխել, տաքացնել բնակարանը: Հնչ, արեւելեան լաւաչը. կարծուում է, որ եթէ հաց գիւղացին դժուարամարս լաւաչ չ'ուտի, չէ կարող ապրել: Նախ և առաջ հէնց այդ լաւաչից պիտի ազատուել և ընդունել փոսն հացը, որ տարածուած է ամբողջ աշխարհում, և որ շատ աւելի տանելի է ստամոքսի համար, քան լաւաչը: Հաւատացած եղիր, սիրելիս, փոխելով մեր հացի ձեւը՝ ահագին յեղափոխութիւն առաջ կը բերուի գիւղացու ամբողջ տնտեսութեան մէջ: Լաւաչից ազատուելով կարիք չի լինի թոնիրները վառել շարունակ տարուայ չորս եղանակներին, այսպիսով կը տնտեսուի աթարը, այսինքն անասունների աղբը և կարելի կը լինի հողերի պարարտացնելուն ծառայեցնել:

Չը պէտք է մոռանալ, որ մեր գիւղերում իւրաքանչիւր տուն իր առանձին թոնիրն ունի, և իւրաքանչիւր թոնիր ամեն օր վառուում է ամբողջ տարին շարունակ: Ընդունենք, որ ձմեռը պէտք է վառել խրճիթը տաքացնելու համար, բայց տարուայ միւս եղանակներին բոլորովին հարկաւոր չի լինի վառել, եթէ վերացուի հաց թխելու և յատկապէս լաւաչ թխելու սխտեմը:

Շատ անգամ մի փոքրիկ փոփոխութիւնը մարդկանց արուստի եղանակի, նոյնիսկ ճաշակի, զգեստի ձևի մէջ առաջ է բերում այնպիսի նշանաւոր բարոյական, ֆիզիկական և տնտեսական հետեանքներ, որոնց մասին կանխաւ մտածելն անդամ գծուար էր: Համարձակ կարելի է ասել, որ մեր երկրի լաւաշ հացի և առհասարակ թոնիրները վերացումը մի այդպիսի յեղափոխիչ նշանակութիւն կ'ունենայ գիւղացու կեանքի համար:

Տարբարազաբար արեւելքը դանդաղ է և նորութեան հանդէպ վախիտ, իսկ գործի մարդիկ, սրտացաւ հողացողներ պակասում են:

Դարձեալ հաւատանք, սիրելիս, որ ժամանակը, աւերող և վերաշինող ժամանակը այնուամենայնիւ վերջ ի վերջոյ քանդելու է այն սպրիսալը, որի մէջ խեղդում է մեր գիւղական կեանքը, և որ թոնիրն ու լաւաշն էլ կ'երթան այն ճանապարհով, որով գնացել են հին կեանքի այնքան նշաններ:

Տ' գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

Ա.Լ.ԲԱՆԻԱՅՈՒՄ *)

Բարբարոսութեան մի սպշեցուցիչ անկիւն կայ հէնց Եւրոպայի մէջ: Այստեղ ոչ ճանապարհ և ոչ կամուրջ, ձիով դնալու համար պէտք է վնայրեկ սանատեղեր, զետակից անցնելու համար պէտք է ջուրը մանել. այս անկիւնում կարելի է սուրել միայն զէնքը ձեռին՝ մշտական կուփ մէջ: Ամեն մարդ իր ձեռքով է տեսնում իր դատը, և ոչ ոք ուրիշ օրէնք չ'ունի, բայցի աւանդաբար հասած սովորութիւններից: Կառավարութիւն չը կայ, այլ միայն մի հեռաւոր վեհապետ՝ quasi լեդենդական, որը վճարում է իր իշխանութիւնը ճանաչելու համար, բայց երբէք հրահրանքութիւն չէ պահանջում: Ժողովուրդը խօսում է մի լեզուով, որը գրեկ չը գիտէ, որովհետև ոչ այլ-բէն ունի և ոչ քերականութիւն: Նա ճանաչում է երկու-երեք կրօն—մահմեդական, օրթօգօրս և կաթոլիկ, որ նա դաւանում է, և խառնում իրար հաւասար անտարբերութեամբ: «Ո՛չ Աստուած, ոչ տէր» —այս գեղիղը ոչ մի ժողովրդի այնպէս չէ պատշաճում, ինչ-

*) Այս վերնագրի տակ Revue de Paris ամսագրի այս տարուայ մարտի № 1 տողգրուած է Ժօրժ-Փօլիսի հետաքրքրական յօդուածը: Ճանապարհորդական թուցիկ նկարագիր է այս, որ տալիս ենք «Մուրճի» ընթերցողներին թեթև կրճատմանով, որ սակայն բաւարար լոյս է սփռում արանացիների բարբերի վրայ, որոնցից որքան տուժում են երոպական Թիւրքիայի քրիստոնեաները: Մակեդոնական հարցի ներկայ ետուն շրջանում ամբողջ աշխարհի մամուլի մէջ շատ է խօսում Ալբանիայի և առհասարակ արանացիների մասին: Յայտնի է՝ որ սրանց յանդգնութիւնը այնտեղ հասաւ, որ ոչ միայն զէմ էին Մակեդոնիայում որևէ բեֆօրմի, այլ և Յ ամիս շարունակ ընդդիմադրութիւն էին ցոյց տալիս Միտրօպիցում սուսաց հիւլաւոս Բչերբինայի հաստատուելուն, որին վերջերս փորձեցին նոյնիսկ սպանել:

պէս սրանց: Այս ազգը, հիւսիսային արբանացիներն են, և այդ անկիւնը՝ Բարձր-Ալբանիան:

* * *

1902 թ. մայիսի վերջին մենք երեք եւրոպացիներ մեկնեցինք Իւսկուբից, որ թիւրքական վերջին քաղաքն է Մակեդոնիայում:

Չար-Դաղի ճանապարհով հետևում էինք մի խաղաղասէր ժանդարմի: Մի վաճառական իր ջորին քշում էր իմ ձիու կողքից: Սա մի սալօնիկցի հրէայ էր, մի խղճալի արարած: Նա խօսում էր ցած ձայնով՝ վախենալով արձագանք հանել արահետի երկու կողմերի ժայռերի մէջ:

—Ափսոս անցած լաւ ժամանակները, ասում էր նա, Սալօնիկի մեր առևտրական խոշոր տները արդիւնաւէտ գործ էին տեսնում Ալբանիայում: Ապրանքները մտնում էին ամեն տեղ, թէ Ալբանիա և թէ Մակեդոնիա՝ դաշտով կամ լեռներով, թէ՛ արբանական Դիբրան, և թէ՛ յունական Սերեսը: Հրէայ և վալաք վաճառականները գիշեր ցերեկ ձիու վրայ թափառում էին առանց իրանց կեանքը վտանգի ենթարկելու: Այն ժամանակները առանց լուրջ պատճառի սպանութիւններ չէին լինում, և երբէք մարդ չէր սպանւում առանց իմանալու՝ թէ ինչի համար: Ալբանական վանդետտան կիրառւում էր կանոնաւորապէս, ինչպէս ուրիշ երկրներում արդարադատութիւնը: Աւաղակութիւնը ընդունուած սովորութիւնների կարգն էր անցած: Վաճառականը իր քաղցր վարմունքով կարողանում էր հեռացնել գնդակը և դանակի հարուածը: Նա ենթակայ էր միմիայն իր կապոցից զրկուելու վտանգին: Այժմ ամեն բան փոխուած է: Աւաղակութիւնն այնպիսի կարևորութիւն է ստացել և այն աստիճան անկանոն էկատարւում, որ էլ ոչ մի վաճառականութիւն գիմանալ չէ կարող սուլթան Աբդուլ-Համիդն այս երկիրն ապականեց, նա արբանացիներին փաղաքշում է, հրաւիրում է որպէս իր անձնական թիկնապահներ և վերակացուներ իր կալուածների, սիրով ժանդարմ է չինում և բարձր պաշտօններ տալիս կամ սանձարձակ բաց թողնում Հին-Սերբիայի և Մակեդոնիայի վրայ: Ահա թէ ինչու արբանացիք այժմ գոյութեան երկու միջոց են ճանաչում, առաջին՝ զինուած գոզութիւն, եթէ սովորական մահկանացուներ են և երկրորդ՝ կեղեքումն, երբ դառնում են պաշտօնակց: Վաճառականը կանոնեցնելով իր ջորին մի թմբի վրայ՝ մեկնեց ձեռքը դէպի ահազին և անձոռնի սարը:

—Իմ հայրը՝ շարունակեց նա, ոտի տակ է տուել բոլոր այս կողմերը, Իւսկուբից մինչև Դիբրա, երեսուն տարի շարու-

նակ նա բոլոր ցեղերի բէստան *) էր վայելում: Նա իր ջորու վրայ տանում էր սպիտակ գլխարկների մի կողիկցիա քառակուսի կամ բոլորակ, տափակ կամ երկար: Եւ մի ցեղից միւս ցեղն անցնելիս՝ չարունակ փոխում էր իր գլխարկը, որովհետեւ լաւ ընդունուելու համար նա պարտաւոր էր իր յաճախորդների պէս զրուխը ծածկել: Եւ այսպիսով նա ամեն տեղ բէստանում էր:

Մինչդեռ ես այժմ հաղիւ համարձակում եմ մինչև Կալկանդիկեն՝ գնալ և դեռ էլի ինձ ասահով չեմ զգում:

— Այս ալբանացիք՝ ինչպէս երևում է՝ խիստ վատացել են, հարցրի ես:

— Է՛հ, պարսն, նրանք միշտ էլ չար են եղել, դուքն իմ ուղեկիցը, բայց իսկոյն ձայնը ցածրացրեց և կարծես փոշմանեց անկեղծութեան այդ չափազանցութեան համար: Նրանք առաջ էլ չար էին, բայց քանի որ չէին վարակուել թիւրքական նենդաւորութեամբ, խօսքի և պատւի տէր մարդիկ էին, գոնէ կարելի էր լաւ ընծաներով սրտերը չահել: Այժմ նրանք միայն դիտեն խարիչ և սպանել: Դիրբայի ալբանացիք սպանում են կողոպտելու համար, դիակօլօցիք սպանում են ֆանատիկոսութիւնից, իպեկիք՝ հաճոյքի համար, պրիզրենդցիք՝ երբ բէֆերը տեղը չէ, կալկանդեկները՝ իրանց շինած հրացանները փորձելու համար: Ալբանիայում բոլոր ալբանացիք սպանում են ցոյց տալու համար, որ իրանք իրանց տանն են, և որպէսզի օտարներն ընդունեն, որ նրանք իրաւունք ունեն սպրեկտու իրանց ուղած ձեռի: Եւ Ալբանիայից դուրս, ամբողջ Մակեդոնիայում ալբանացիք սպանում են, որովհետեւ նրանք սովորութիւն չունեն ձնուել օտարների մօտ, և սուլթանը նրանց վճարում է այս աշխատանքի համար:

* *

Իւսկիւբից ուղղակի Հին-Սերբիա գնալու համար պէտք է կտրել Չար-Դաղը Կասանիկի կիրճով, որ զուրս է դալիս երկաթուղու վրայ:

Բայց ալբանական իսկական ճանապարհը բարձրանում է գէտի Վարդարը՝ անցնելով Չար-Դաղի հարաւային փեշերով մինչև Կալկանդիկեն՝ քաղաքը, որտեղից Չարի բարձրութիւններով ալբանացիք իջնում են Հին-Սերբիայի տաաջին քաղաքը, Պրիզրենդ: Մենք բռնում ենք այս երկրորդ ուղին:

Երեք քառորդ ժամ հետո Իւսկիւբից, Կալկանդիկենի ճանապարհի վրայ հասնում ենք ալբանական երկրի սահմանին: Այս

*) Խաղաղութեան, հաշտութեան պայմանախօսքը:

սահմանն իբր խորհրդանշան ունի մի քանդուած կամուրջի սեան մնացորդը: Լեպենացը՝ միջմարտս գետակ, երեք տարի առաջ քանդել է կամրջի կամարը, Թիւրքերն ի հարկէ՝ այն չին շինի երբէք, որովհետև նրանք ոչինչ չեն ձեռնարկում եւրոպական Թիւրքիայում, լաւ խմանալով՝ որ այնտեղ իրանց աշխատանքը մնալու է ուրիշներին: Միւս կողմից՝ եթէ շինեն էլ, ալբանացիք կը քանդեն այն կամուրջները, որոնք կապում են սուլթանի կայսրութիւնը իրանցի հետ: Պէտք է անցնենք ջրով: Քիչ հեռու մի շատ մեծ և սիրուն մէջիդ զծագրում է երկնքի տակ իր մինարէն և զմբէթը: Քսան քայլից սա էլ մէջիդ չէ, այլ մի աւերակ, երկար խոտերը փաթաթուել են զմբէթին, մինարէի վրայ արագիլի մի բոյն է տնկուած: Ալբանացիք արհամարհում են աղօթքի այս տունը, որովհետև թիւրքերն են շինել:

Աւելի հեռու, արահետի եզրին քառասուն ձիաւորներ ցած են իջել ձիերից մի փոքրիկ սրճատան առաջ: Թիւրք նահանգապետն է ուղարկել այս ժանդարմներին բռնելու զիւզացիներին, երբ նրանք կը վերագառնան Իւսկիւբից քսակները լի, նրանցից ապրանքները վրայ գրուած հարկը չորթելու համար:

Ժանդարմների այս խմբի մէջ զուր է թիւրքեր որոնել՝ փոքրիկ աչքերի արանքում գտնուող իրանց փոքրիկ, կոլորքիթով, զուրս ցցուած այտերով, մեծ և երկար իրանով՝ խիստ կարճ ոտների վրայ: Այստեղ բոլորը կատաղիներ են, ոսկրոտ ու ջլտո, դիշակեր թոջնի գլխով՝ երկար պարանոցի վրայ: Քիթը կոճ մանդաղաձև բեխերի արանքում, յօնքերի ծայրերը բեխերի պէս ցլցուած, փայլուն ու խոր աչքեր, մեծ, ցցուած ականջներ, դայլային հրաշալի ատամներ, բոլոր այս ժանդարմները ալբանացիներ են: Մինչև իսկ Ալբանիայի չեմքին թիւրքք այժմ միայն ալբանացի կարող է ուղարկել ոստիկանական զործերի համար:

Վեց ժամուայ ճանապարհից յետոյ երևում է Կալիանդելինը հարթութեան մէջ, Չար լեռնաշղթայի հանդէպ: Քաղաքի կէսը փակուած է մի կիրճի մէջ: Կալիանդելինը ունի հրաշալի խնձորենիներ, բայց նա էլ աւելի յայտնի է իր հրացաններով: Սա մի զինարան է, ուր ալբանացիք հաստատել են զէնքի մեծ արդիւնազործութիւն: Կալիանդելինն այսպիսով մատակարարում է սուլթանի սեղանին խնձոր և իւրաքանչիւր ալբանացուն զէնք: Սմեն տարի սուլթանը Ստամբուլից հրաման է՝ ուղարկում փակել այդ գաղանի զինազործարանները, բայց աւելի շուտ խնձորենիները կը դադարեն պտուղ տալ, քան թէ այդ հրամանը կ'իրագործուի:

Քաղաքի հանդէպ՝ մէկը միւսից հեռու, բէյերը, որոնք այս երկրի բարօններն են, կալաններ ունեն, որ նրանց զգիակնե-

րբն են: Կալանքառանկիւնի, իւրաքանչիւր անկիւնում մի աշտարակ, և ամբողջ շէնքն ունի մի հատ երկաթէ դուռ: Պարբսպի ներսում պարտիզով շրջապատուած երեք բնակարան կայ, մէկը տղամարդկանց մէկը կանանց և երրորդը հիւրերի համար: Իսկ մի կողմում էլ ախոռն է և յարդանոցը: Այստեղ ամեն ինչ կայ պաշարման զիմադրելու համար: Վտանդի ժամանակ բէյը փակուում է իր բնտանիքի, կլիենաների և հօտերի հետ: Այս պարիսպների չորս աշտարակների և իր երկաթէ դրան յետևում նա կարող է զիմանալ մի քանի տարի:

Այս կալանքը ամբուլթիւններ են Կալիանդեղենի հարաւում Մակեդոնիայի ճանապարհի դէմ և ամեն մի յարձակման առաջը կարող են առնել: Կալանքի յետևում քաղաքը կըծկուած է կիրճի մուտքի առաջ, որտեղից բաց է մնում նահանգի ճանապարհը դէպի լեռները: Քաղաքի յետևում լեռնային այս ճանապարհը պաշտպանելու համար մի բէյ շինել էր մի փամանակ բարձր զիրքերի վրայ մի ահուկի բերդ, որ այժմ աւերակների մի կոյտ է միայն. բէյերը սիրով այն կը վերաշինէին: Եթէ պէտք լինէր: Առայժմ նրանք պաշտպանողական վիճակի մէջ չեն գրուած, սուլթանը նրանց նեղելու մտադրութիւն չ'ունի, նա նրանց է թողել քաղաքը և զաշտալայը՝ պարտք դնելով վրաները պահպանել յետների գուռը և Հին-Սերբիայի ճանապարհը: Այս բէյերի գլխաւորը կարող է չահագործել Վարզար գետի բոլոր վերին աւազանը:

Կալիանդեղենի այս մեծ բէյը, որ մի նշանաւոր անձնաւորութիւն է, կոչուում է Մհամմէդ: Սուլթանը նրան ուղարկել է Սիրիայի Հալեպ քաղաքը առաջնակարգ կարևորութիւն ունեցող պատճառներով: Համեստաբար, բայց հպարտութեամբ են տալիս Մհամմէդի վաստակները նրա թշնամու, հակառակորդի, նրա աքսորի հեղինակի անուանը, և դա ինքը՝ Ֆրանց-Յովսէփ կայսրն է: Նրանք հաւատացած են, որ աշխարհն այնքան մեծ չէր, որ կարողանար պարտիկել Բարձր-Վարդարի զըլխաւորին և կայսր-թագաւորին: Անհրաժեշտ էր, որ մէկը կամ միւսը ոչնչանայ: Աւելի զօրեղը յաղթանակեց: Պարտութիւն կրողը տուժում է. չէ որ այս է պատերազմի օրէնքը: Մհամմէդի պատմութիւնը հետաքրքիր է. ահա մանրամասնութիւնները:—

* * *

Կալիանդեղենում աւազակի արհեստը լաւ արհեստ է: Ալբանացիք այդ բանում խիստ առաջադիմում են: Կալիանդեղենը սլաւոնների հին Տեաէօլօն է, որի բնակիչների երեք քառորդը մի քսան տարի առաջ բուլղարներ, սերբեր և վալախներ էին: Մարտ, 1903.

Այժմ շատ քիչ բան է մնում այս քրիստոնեայ ժողովրդից, որին հարածել են ալբանացիք: Այս անկիւնում ալբանացիներին բընակեցրել է Արդիւլ-Համիդը: Սուլթանը նրանց է թողնում ճանապարհները. իսկ երբ մարդ հսկում է ճանապարհների վրայ, նա իրաւունք ունի և՛ հարկ վերցնել անցորդներին: Ամեն տարի մակեդոնացի բուլղարներն ու սերբերը Դիրբայում Վարդար գետի ընթացքով մեծ թւով իջնում են Իւսկիւլ՝ երկաթուղով Սօֆիա և Յիլիպլուզուլ դնալու համար, որ նրանք աշխատում են լաւ եղանակներին: Ալբանացիք, որ նըրանց տեսնում են դարնանը ցած իջնելիս, սպասում են նրանց վերադարձին աչնանը: Խեղճ բուլղարները այն ժամանակ զուր են աշխատում հազար ու մի խորամանկութեամբ փախցնել իրանց փոքրիկ անտեսութիւնը. Կալկանդէնի ալբանացիք վարպետ մարդիկ են, և նրանցից ոչինչ չէ խուսափում: Սև Դրենի այս ճանապարհը մի մահաբեր անկիւն է. ոուսական մի հիւպատոս երեք տարի առաջ կարողացաւ Դիրբա բարձրանալ հարիւր յիսուն ձիաւորներով չըջապատուած:

Պինդոսից մինչև Չարդազ ալբանացիներին տիրելով Մհամմէդը հարստացել էր: Նա ունէր մինչև երեք հազար հրացան և ութ ժամում կարող էր ընկնել Իւսկիւլի վրայ, որը նա պահում էր իր ձեռքի տակ. Մակեդոնիայի, Հին-Սերբիայի և Ալբանիայի երեք քառորդի բանալին իր ձեռքումն էր: Մհամմէդն այսպիսով ունէր այստեղ մի իսկական թագաւորութիւն: Բայց ինչպէս ամեն ալբանացի, լեռնային այս թագաւոր իր առնական արտաքինի տակ ծածկում էր երիտալական ճաշակ սիրուն համազգեստների համար և մի բուրժուական տենչ տրտղոսների, աստիճանների և սարկական պատիւների համար: Այս ալբանացիք, որ այնպէս քիչ են կապուած իսլամին, երբ իրանց մուսուլման են առում, և այնպէս քիչ հաւատարիմ բըրիստոնէութեան, երբ իրանց քրիստոնեայ են համարում, սարեակներ չէ պէս վազում են դէպի այն ամենը՝ ինչ փայլում է: Կատաղի կամ ըմբոստ՝ կառավարութեան դէմ, անտարբեր թէ անպատկառ որեւէ աստծու կամ հայրենիքի պաղափարի հանդէպ, նրանք ընկնում են էկստազի մէջ ամենափոքր զինուորական տեսնելիս: Մի ուսաղիր, մի ոսկէ դրամ, որ փայլում է, քաշում է նրանց դէպի թակարդը, և սուլթանը որպէս լաւ որսորդ՝ զիտէ այս միամիտներին սառչի վրայ քաշել: Առանց այս ինտսիմիտի ալբանացի բոլոր Մհամմէդները վազուց կը վնէին Մակեդոնիայի տէրերը, ինչպէս մի փամանակ Մէհմէդ-Ալին Եգիպտոսի տէր դարձաւ:

Արդիւլ-Համիդը, որին մեր Մհամմէդն սկսել էր անհան-

զըստացնել, առաջարկեց փաշայի տիտղոս, յետոյ նրան տուեց ժանդարմերիայի մէջ մի բարձր աստիճան: Ժանդարմի համազգեստով աւազակը թիւրքական օրէնքների տրամադրութեան տակ զրեց իր հին փորձառութիւնը: Նրան յանձնարարուեց հակել Սալօնիկի վիլայէթի ապահովութեան վրայ, որը շատ հեռու չէ իր իշխանութիւնից: Ճանապարհներ փակելու արհեստին լաւ ծանօթ Մհամմէդը կարողացաւ աւազակների բոլոր խորամանկութիւններն ի գերե հանել: Յետոյ որպէս լաւ պաշտօնեայ, որ հոգում է իր առաջ գնալու մասին և իր ծննդավայրին մօտ լինելու համար, նա կամայ թէ ահամայ իրան նըշանակել ատեց Իւսկիւրի ժանդարմերիայի շեֆ: Այն ժամանակ այս մարդը, որ իր ձեռին ունէր Բարձր-Վարդարը, բոլոր արջանացիներին և միևնոյն ժամանակ սուլթանի ժանդարմներին, դարձաւ անսահման իշխանութեան տէր: Մակեդոնիայի մի երբորդը նրա օրէնքից դուրս ուրիշ օրէնք չէր ճանաչում: Պօլսում միայն արձանագրում էին նրա կամքը: Մհամմէդ փաշան կարգում և արձակում էր պաշտօնեաներին, և երբ Իւսկիւրի որեէ նահանգապետ դադարում էր իրան դուր գալուց, նա տալիս էր նրան տասն օր երկրից հեռանալու համար:

Համբերութեամբ, առանց զարոյթի Աբդիւլ-Համիդը և Իլդիզ-Քէօսկի նըբամիտ նենգաւորները շարունակելով խոնարհուել Մհամմէդի կամքի առաջ՝ սպասում էին այն ժամին, երբ խիստ ձգուած լարը կը կտրուի: Մի գեղեցիկ օր Մհամմէդը նրանց հասուն թւաց աքսորի համար, և հոշակաւոր ժանդարմը կանչուեց Պօլիս: Նա եկաւ: Նրան չըանշաններ տուին, անուանեցին գնեւերալ, ոսկով ծածկեցին և յայտարարեցին զոհ մեծ պետութիւնների դաւադրութեան: Նրան հասկացրին, որ ամբողջ Եւրոպան միացած՝ զլուխ ունենալով Ֆրանց-Յովսէփ կայսրը, պահանջում է կամ նրա զուրկ կամ աքսորը: Եւ Եւրոպացիների վրէժխնդրութիւնից ազատելու համար է, այսպէս ստացին, որ նրան պատիւներով ուղարկում են Սիրիայի Հալեպ քաղաքը: Մհամմէդ փաշան մեկնեց առանց բողբոջելու, նկատելով՝ որ կայսրը, որի զոհն էր կարծում իրան, արժանի հակառակորդ է:

* *

Կալիանդեղևնի հանդէպ մենք հիւր ենք ըէկտալի գերվիշներին: Քաղաքից մի կիլոմետր հեռու, ծաղկապատ գերեզմանատան յետուս, անտառապատ լեռների ստորոտումն է, ուր բարի գէրվիշները ծածկում են հաստատուն պարիսպների յետուս իրանց ծառաստանները, արտերը և այգիները: Սկզբից դժուար է կարծել, թէ սրանք պատկանում են մի մուրացիկ կարգի: Արտաքուստ նրանց թեքքէ-ները (վանք) նմա-

նում են պատնէշներով շրջապատուած բանակատեղի: Պատերի կողերին լայն բացուած խորշեր, կատարներին ստամուտոր բացուածք. դրան վրայ մի քանի աշտարակներ, որոնք միացած են փայտէ կամուրջով պոսյտի ճանապարհի համար: Դրան չեմքին, երբ հիւրը դալիս է ապաստան խնդրելու, խոնարհուում են սպիտակազգեստ կրօնաւորները, որոնց զլիւի փաթոյթը ձէսի համաձայն տասներկու ծալք ունի:

Պարիսպների ներսում հարիւրի չափ խնձորենիներ մեկնում էին իրանց ծաղկած ճիւղերը արևի վերջին ճառագայթներին: Չորս կողմում սպիտակ շաւիղներ և փոքրիկ, բարակ առուակներ, որոնք հոսում են մուգ կանաչի միջով: Այս ծառաստանի շուրջը մի փոքրիկ ագարակ, մի փոքրիկ մէշիդ, փոքրիկ քէօակներ կոտր և սակեղօձ անկիւններով, արևելքի մի Տրիանօն, որ փռուած էր վարդերի առատութեան մէջ: Ահմէդ-Ալին, եղբայրութեան շէյխը, գէրվիշների ըաքան մեզ ընդունելու համար թողեց իր առջևի ամանը երակով լի, որ նա ուտում էր, և առաջնորդեց իր հիւրերին այն քէօակը, որ նայում է ամբողջ շինութեանը: Սոխակները, թիւրքերի այնքան սիրած «քիւլքիւլները» սկսեցին երգել. լուսատիկները թռչկառում էին խնձորենիների տակ: Բաքան ինձ ասում է. «Դու այստեղ կը գտնես ալբանական խաղաղութիւնը»:

Հաջի-Բէկտաշ Խօրասանին՝ այս կարգի հիմնադիրը՝ ապրում էր XIV-րդ դարում Օրխանի պալատում: Նա բարի էր նրանց համար, ում սիրում էր և անողորմ դէպի թշնամիները: Նա օրհնեց առաջին ենիչերիներին, և իր աշակերտները չորս դար շարունակ ձևի համար ենիչերիական գնդի անգամներ էին համարւում: Ալբանացի ենիչերիները իրանց երկիրը բերին սուրբ մարգու անունը: Մուսուլման ալբանացիների կէսը դարձաւ բէկտաշ: Հերձուածի կրօնաւորները այժմ միայն մի քանի գերվիշներ են իրանց թեքքէներում, մինչդեռ հետևողները գտնւում են ամեն տեղ:

Անօգուտ է կարծել, թէ ալբանացիների կրօնական խիստ թոյլ զգայմունքը ամբանում է այս կապով, միայն ալբանացին իրան աւելի լաւ «խլամ» է կարծում, երբ նա «բէկտաշ է ուղում լինել սուրբ Բէկտաշի ձեռքի տակ», ինչպէս ուրիշները (կաթօլիկները) ս. Ֆրանցիսկոսի: Սատանան սրանով ոչինչ չէ կորցնում, սա մի նախապաշարմունք է աւելացրած միւս նախապաշարմունքների վրայ, որոնք կազմում են ալբանական կրօնը: Շնորհիւ բէկտաշիզմի՝ քաջ մարդիկ, որոնք չափելուով են լեռները հրացանն ուսերին, ահից դուռնատուում են մի նա-

պատակ տեսնելիս, ինչպէս մի ժամանակ ինքը՝ Հաջի-Բէկտաշ Խօրասանին:

Ես ճաշակեցի բարայի մօտ «ալբանական խաղաղութիւնը», իմանալով թէ ինչ գնով է այն գնուած: Այս մի քանի օրավար բուրալից ու խաղախ հողաբաժնի համար քանի ճանապարհներ են արիւնով ցօղուած, որքան ճիչեր, որքան կռիւներ մի արօտատեղի սահմանին, որքան ասեղութիւն! Ահմէդ Ալի-բաբան եր թեքքէի խորքերում ձեռքի մէջ պահում է ինտրիզաների թելերը: Իր երկիւղած շունչը բորբոքում է ասեղութիւնները և մղում է աալիս կուռզներին: Սակայն այստեղ՝ խաղաղութեան զրկում նա չնչում է վարդերի անուշահոտութիւնը և քաղում է ելակները:

*
*
*

Կալիանդեղենից գէտի Պրիզըրենդ Չարդ-Ղաղի կիրճերով տաներկու ժամ պէտք է գնալ հեիհե:

Մի դափթիէ, որ ասնում էր մի գող Պրիզըրենդից Կալիանդեղեն, իր բանտարկիալի հետ սպանուել է Չարի կիրճերում: Լեանականները ժանդարմ չեն սիրում և ասում են գողերին: Երկու գիակն էլ կողոպտուած էին. տարել էին նրանց գօտիները, շորերը և կօշիկները. մեռելից գողանալը ըստ ալբանական օրէնքի գողութիւն չէ համարում, ահա թէ ինչու եթէ մէկի ունեցածը գրաւում է այբանացուն, սպանութիւնը դատում է նրա ասաջին պարտքը:

Վիչալը՝ թառած լերան կատարին՝ երկու անգունցի վրայ, նայում է երկու կողմից մինչև կիրճի խորքերը, ուր ամեն ինչ պիտի կատարուի իր աչքի առաջ: Առանց միտարէի ու պարակչների, առանց անասունների, չունենալով նայն իսկ կաղամբի մի փոքրիկ մարդ, առանց հաճարի մի հասիկի, թագցնելով իր կանանց, որ ընական է, ծածկելով նաև իր երեխաներին, սա մի ամբարտաւան գիւղ է, աւազակների մի որջ: Պրիզըրենդի և Կալիանդեղենի ջորեպանները, Վարդարի ձիաւոր փայտափաճառները, Կուցօփալախի հովիւները, որոնք ամառը թափառում են բարձր արօտատեղերում, նրան վճարում են ճանապարհի հարկ:

*
*
*

Պրիզըրենդը կարող էր լինել մի օպերետային հանրապետութիւն, եթէ ալբանական խումբը այնտեղ գրամաներ չը խաղար: Ամբողջ Եւրոպական-Թիւրքիայում սրանից սիրուն և սրանից ուրախ ոչինչ չը կայ:

Պրիզըրենդում մի ալբանայի՝ Բամիզ-բէյը՝ մի օր իրան յայտարարել է քաղաքատետ: Ոչ ոք նրան չէ նշանակել, բայց և

ոչ ոք նրա այդ իրաւունքը չէ ժխտել: Քաղաքային խորհրդի ընտրուած անդամները զիւանի լաւ տեղը լուսամուտի առաջ թողել են նրան՝ հարկ կղած հաճոյախօսութիւններով, ապա հեռացել են դահլիճից: Բամիզի խումբը սարսափելի էր. նրա հանդէպ Սիցիլիայի մափիան բարեգործական մի ընկերութիւն կարող էր համարուել: Տաս տարուց ի վեր նա կառավարում է քաղաքը օրինաւոր միջոցներով, որ ձեռք էր առել ապօրինաբար: Երբ հարկատուները ըմբոստութեան կամ վատ տրամադրութեան փոքրիկ նշան են ցոյց տալիս, նա սպառնում է կանչելու շրջակայ ցեղերը: Նրա զլխաւոր կապերը օտորոզութեան հետ է, զարհուրելի մարդիկ, որոնք Պրիզըրենդից մի քանի ժամ հեռու զրաւած ունեն սպիտակ Դրենի կողմից լեռնային մի գոգ, որի միակ մուտքը խիստ նեղ մի կիրճ է:

Հատ-հատ կամ խմբերով օտորոզութեան կամ Պրիզըրենդ. քաղաքապետի բարձր հովանաւորութեան տակ, որի կլիենտներն են, նրանք թալանում են կրպակները և կողոպտում քաղաքացիներին: Այս շահագործութիւնը միշտ առանց դժուարութիւնների չէ անցնում, Կաբաչ ցեղը նրանց դէմ կատաղի մրցութիւն է վարում: Անցեալ տարի հազար կաբաչներ զբաւեւ էին մի թաղը, մի քանի շաբաթ պէսք էր նրանց կերակրել և կատարել բոլոր քմահաճոյքները: Քաղաքացիք ստիպուած կղան արդարադատութիւն խնդրել Պօլսում. բայց սուլթանը միջամտեց կաբաչներին իրաւունք ստու համար: Կաբաչների պետն էր Ռուսաէմ-բէյը, որին նրանք ընտանեբար Ռուսաէմ էին կոչում: Տէր հարթավայրին, ինչպէս Բամիզը քաղաքին, մի գեղեցիկ օր նա յայտարարել էր, թէ ձեռք և տասանորդների տէրը: Այն ժամանակից նա տասանորդ էր հաւաքում առանց մի պիտատր պետական արկղը զցելու: Նա իւրացնում էր բոլորը: Եւ նա յոյս ունէր այսպէս շարունակել երկար: Նա լաւ չէր ճանաչում Թիւրքիան: Առհասարակ թիւրքական կառավարութիւնը թոյլ է տալիս, որ իրան կողոպտեն, բայց պաշտօնեաները, որոնք կայսրութեան մէջ գողութիւնից բացի ուրիշ գեր չունեն, աւելի սակաւ համբերողութեամբ են տանում գողութեան մրցութիւնը: Պաշտօնական հարկահանները՝ հալածուած Ռուսաէմից, բարձր տեղերում ունէին պաշտպան գողակիցներ: Իլդիզի և Բարձրագոյն-Դրան մարդիկ այս պաշտպանները զրկուած իրանց բաժին տասանորդից՝ ազալակ բարձրացրին: Եւ սուլթանը թոյլ տուեց ձերբակալել Ռուսաէմ կաբաչին, երբ նա մի օր մեռակ կը դայ Պրիզըրենդի շուկան: Ռուստօն բռնուեց և ուղարկուեց Պօլիս:

Կաբաչները զէնքը ձեռներին վազվզեցին Պրիզըրենդի թաղերում:

—Տուէք մեզ մեր բէյին, ոտնում էին նրանք, յետ տուէք, թէ չէ մենք կրակ կը տանք քաղաքը:

—Ձեր տեղերը դարձէք և դուք կ'ուսենաք ձեր բէյը, պատասխանում էր մի թեսերիֆը:

—Ուրիշներին ասացէք Ստամբուլի ստերը! Ի՞նչ էք արել դուք Ռուստօին:

—Ռուստօն գնացել է ուխտ, երկու երեք ամսից յետոյ կը վերադառնայ Մեքքայից հաջի:

—Այդ էլ սուտ է! Ռուստօի համար զրօշ չ'արժեն Մեքքան և զլիւի կանոջ վաթթոցը: Ալբանական սպիտակ գլխարկը միայն կը ծածկէ իր ճակատը մինչև կեանքի վերջը: Կրակը պատրաստ է, և դու շուտով կը մեռնես, ասա, ո՞ւր է Ռուստօն:

—Նա Ստամբուլումն է: Մեր տէրը—և թո՛ղ Աստուած պահպանէ նրան—մեր տէրը իր սնուպա ըարութեամբ նրան տեղ է տուել իր դահի առաջ թիւզէնքչիների մէջ (թիկնապահ):

Թիկնապահ բառը լսելիս՝ խմբի ազազակները դադարում են: Ռուստօն թիւզէնքչի! որպիսի պատիւ կաբաչների համար: Սուլթանի անձնական պահակախմբի մէջ ընկնելու համար հարկաւոր է ամբողջ կենքը կողոպուտներով պարագել անտաններում, կամ աղնական լինել՝ չնորհիւ ճանապարհ վաղող մի քանի սերունդ նախնիների աւազակութեան: Սուլթանի պատույ պահակախումբը թիւրքական աւազակութեան աւկաղեմիան է. Ռուստօն թիւզէնքչի! Սա շատ լաւ է!:

Օտարողորհների և կաբաչների մերձաւորութիւնը բնականապէս խռովում է Պրիզըրենդի օրերը, ևս առաւել նրա դիւշերները: Արեւի մայր մանկուց յետոյ խոհեմ մարգիկ աներից դուրս չեն գալիս: Մենք էլ չենք ելխում դրօսանքի դուրս գալ, թէև շապկա-աղամներ ենք, այսինքն կերպական գլխարկով մարդիկ: Ութ տարուց ի վեր Պրիզըրենդը սերբիական սեմինարիայի ուսուցչի կակուղ թաղիքէ գլխարկից բացի չէ տեսել և ո՛չ մի շապկա-աղամ: Մեր երեք գլխարկները տեսնելուն պէս բացականչեցին. «Ահա մեծ պետութիւնների ուղարկած մի յանձնաժողով!»

Պրիզըրենդն ապրում է այն մշտական համոզմունքով—հիւսիսային և հարաւային Ալբանիան էլ նրա հետ—որ ամբողջ եւրոպայի համար ալբանացիների կռիւները միջազգային քաղաքականութեան հանդոյցն են կազմում:

—Սրանք երեխաներ են! ասում է մեզ ուսուց փոխ-հիւպատոսը, որ առանց պաշտօնական գլխարկի երբէք դուրս չի

դալիս.—օգտուեցէ՛ք նրանց ֆանտազիայից, այլապէս երբ նկատեն իրանց սխալը, ձեզ կը հալածեն ձեր գլխարկներ ի հետ մէկ տեղ:

* * *

Մեքանի օր առաջ Պրիզըրենդ եկաւ մի նոր ոստիկանապետ: Խեղճ մարդ. իր նախորդն ստիպուած էր հեռանալ զիչերով, կտոր նստել գաշտում և վախճել ինչպէս զող. մի ուրիշը նրանից առաջ քաղաքից դուրս էր եկել իր զինուած ստարազրեալներ իր կու շղթայի միջից, որոնք գէպի գետին էին ուղղել իրանց հրայանների փողերը, որ Ալբանիայում նշանակում է աքսոր: Այստեղ ուղարկուած բոլոր ոստիկանապետները մեկնում են երեք ամսից յետոյ. մէկը միւսի յետևից նրանք հասնում են երկաթուղով Վերիզովիչ կայարանը: Եւ եթէ զիպուածով սրանցից մէկը սովորական ժամանակից աւելի է մընում, սուլթանը նրան յետ է կանչում, կարծելով՝ որ ոչ որ առանց իր տիրոջը գաւաճանելու չէ կարող Պրիզըրենդի ավանայիներին դուր գալ:

Դրութիւնն աւելի ծանրացել է այն ժամանակից, երբ Բամիդ-բէյը Բամիդ-փաշա գարձած՝ ինտրիգներ է սարքում Ելլըդ-Քէօսիում թիւվէնքչիների միջոցով և խռովում է քաղաքն ու երկիրը կռիւներով և հազար ու մի «արեան» բաներով, իրական կամ մտածածին: «Արիւնը» առաջնակարգ տեղ է ընտում ալբանական գործերում: Կան «արեան բարեկամներ», «արեան կղբայրներ», «արեան խռովութիւն», մէկը «արեան պահանջ ունի» միւսից, կամ «արիւն է պարտ» իր թշնամիներին, կամ նրանք են իրան արնապարտ: Յեղից՝ ցեղ, մարդից՝ մարդ մի մըշտական արեան կռիւ է (ժիակ) կամ արեան խաղաղութիւն (բեսսա). արիւնը ալբանական օրէնքի (ազէթ) սկիզբը և վախճանն է և միակն է, որ ճանաչուած է Դրենի ամբողջ աւագանում: Մի գողացուած ոչխարի, երկու հովիւների աննշան կռուի համար շատ անգամ ցեղերը կռւել են տաս տարի շարունակ: Քանի դեռ վերջին սպանուածի վրէժն ստնուած չէ, իր ցեղի և ազգականների պատւի վրայ բիծ կայ, հէնց որ վրէժինըրութիւնը յազեցաւ, պատւի բիծը անցնում է հակառակ բանակի վրայ, և այն սրբելու համար գարձեալ արիւն է հարկաւոր: Այսպէս կը շարունակուէր անվերջ, թէ հնարած չը լինէին բէսսան, որ Աստուծոյ կամ աւելի ճիշտ՝ սուլթանի դադարն է:

Ալբանիայում այն ժամանակից, երբ Աբդուլ-Համիդը սկըսեց իր թիւվէնքչիները վերցնել Գեքարիայի այս մեծ երկխաներից, նրա ամբողջ քաղաքականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հսկել ժիակների (արեան կռիւ) վրայ և միջամտել բեսսայի ժամանակ:

Սուլթանը լաւ է գնահատում այս պրետորիաներին, որոնք մի հարիւր պիստորի կամ մի ժապաւէնի համար գիտեն սպանել և սպանուել: Բայց նա գիտէ նոյնպէս, թէ որքան անյարմար է իր յարկի տակ առնել այս լեռնակամներին, որոնք բերում են հեռներն իրանց վրէժխնդրութիւնները և արեան հաշիւների խիստ պահանջները: Իր տանը խաղաղութիւն ունենալու համար նա աշխատում է հաշտեցնել իրար դէմ դուրս եկած լեռնակամներին: Ալբանացիք ընդունում են Աբդիւլ-Համիդի միջամտութիւնը, ինչպէս կ'ընդունէին Փրանց-Յովսէփի կամ Նիկոլայ Ա-րդ կայսրներինը, առանց զարմանքի և առանց իրանց երախտապարտ զգալու: Նրանք հաւատացած են, թէ իրանց կռիւներով խռովում են ամբողջ աշխարհը, ուստի բնական են գտնում, որ ժամանակ առ ժամանակ մարզկութիւնը հանդիստ պահանջէ և որ աշխարհի տէրերից մէկը նրանց լինողէ, որ թողնեն թոյլ պետութիւններին մի փոքր հանդիստ շունչ քաշել:

Պոլսից ուղարկուած «արեան յանձնաժողովը» զալիս է Պրիզրբենդ, Իպեկ կամ Դիակովօ: Բամիդ-փաշան միշտ գործի մէջ է: Հետո՛ւ Սաամբուլում հաւատացած են, որ ամբողջ ըսպիտակ Դրենը նրա ճնշող ազդեցութեան տակ է: Եւ ոստիկանապետը միայն Բամիդ-փաշայի միջոցով է բերել տալիս զանազան ցեղերին հասնելիք արեան գինը, որ Աբդիւլ-Համիդը վճարում է: Բայց Բամիդը պահում է բոլոր փողը իր քաղաքապետութեան ներքնատանը, եթէ ոստիկանապետը ձայն հանց, Բամիդը նրան արստրում է: Բամիդը աւելին է անում. նա արհեստական ձևով առաջ է բերում ցեղային վրէժխնդրութիւններ կռիւներով, սպանութիւններով և միջամտութիւններով: Դերակատարները—օստրոզուբները, կաբաշները և ուրիշները նրա հետ բաժանում են արգիւնքը: Բամիդը հզօր է: Սակայն նրա իշխանութիւնը կարծես զիւմում է դէպի անկում, որովհետեւ կամաց-կամաց Պրիզրբենդի համբերութիւնը համնում է: Կալմուսը է «կարգի բարեկամների» մի կուսակցութիւն, որ ըսպառնում է կանչել ջուսանցիներին՝ ամենքին կոտորելու և ամեն ինչ աւերելու համար, եթէ կաբաշներն ու օստրոզուբները շարունակեն կոտորածն ու աւերածը: Այս նոր «պոլիտիկաները» վճռել են իրանց բողոքը անմիջապէս սուլթանի գահի առաջ դնել: Նրանք ուղարկել են մի հեռադիր ուղղակի սուլթան Աբդիւլ-Համիդին: Տասնհինգ օր անցնում է առանց պատասխանի, նրանք հեռադրում են երկրորդ, երրորդ, յետոյ չորրորդ անգամ: Ոչ մի պատասխան չը ստանալով՝ նրանք ընտրում են քսանհչորս պատգամաւոր իրանց մեծաւեճներից, որոնք

ներկայացնում են քաղաքի քսանհորս թաղերը: Ընտրուածները գնում, տեղաւորում են հեռագրատանը: Նրանք նախ բերել են տալիս իրանց նարդիլէները, յետոյ կերակուրը, վերջապէս անկողինները: Այժմ նրանք այնտեղ են պտուկում, որպէսզի պատասխանը շուտ ստանան: Այսպէս նրանք կարծում են անմիջական յարաբերութեան մէջ լինել աշխարհի տիրոջ հետ: Իրանց միամտութեան մէջ նրանք անկարող են իմանալ, որ Իսկիւրում նահանգապետը բռնում է բոյոր նրանց հեռագրերը: Այս օրինակիլի պաշտօնեան ինքն է ամեն օր իր կողմից հեռագիր կազմում և ուղարկում սուլթանին, նրան ասելու համար, որ իր բարեկամս հովանաւորութեան տակ այդ վիլայէթի բնակիչները հրացմունք են յայտնում իրանց վիճակի համար: Սակայն լսում է, որ սուլթանը Պրիզրբենդ է ուղարկում մի նոր ստալիկանապետ: Սա հասնում է: Նրան գիտաւորում են անհամբեր հարցերով: Նա չը գիտէ էլ, թէ բանն ինչուֆն է և կարծում է, թէ իրան գիտամար ուղարկել են գծերի մէջ որպէս պատիժ: Նրանց հետ վարում է քաղցրութեամբ, ներողութիւն խնդրում, բայց ի դուր, չորս կողմից գումում են, թէ նա ձեռնում է անգէտ, և սպասում են փակել շուկան: Ալքանական օրէք քաղաղաքում շուկան փակել, խանութների գոները գոցել նշանակում է կառավարութեան դէմ դուրս գալ: Մեր հասնելու նախընթաց օրը պրիզրբենդցիք որոշել էին փակել շուկան: Միայն ի յարգանս մեր գլխարկների, Եւրոպայի ներկայացուցիչներին է, որ այսօր շուկան մնում է բաց:

*
*
*

Ես ուղեցի ձի վարձել, գնալ Իպեկ և Դիախօլօ, բայց ձի չը ճարուեց. մէկը «կանաչի էր ընկած», միւսի սպան էր վիրաւորուած: «Կանոք վերջրէք», ասաց ինձ գնդապետը: Բայց ճանապարհ չը կայ, հազիւ մի շաւիղ: Գնդապետը չէ ուղում, որ ևս գնամ սպիտակ Դրենո Բամիդ-փաշան չէ կամենում, որ ևս այցելեմ իր ցեղերին: Պրիզրբենդցիք չեն ցանկանում, որ ևս շարունակեմ մնալ իրանց հանրապետութեան մէջ: Իսկիւրի նահանգապետը և Բարձրագոյն Դուռը վճուել են իմ առաջ ճանապարհը փակել: Այս չըկամութիւնը իր հիմունքները՝ համարեա իր մեղմացուցիչ պատճառներն՝ ունի:

Չը կարողանալով այցելել Իպեկը և Դիախօլօն, մենք մնում ենք Պրիզրբենդ այնքան ժամանակ, որքան ալքանական փանտազիան կը ցանկանայ տանել մեր ներկայութիւնը:

Պրիզրբենդի մի թաղում հազար սերբ տուն կայ Չար լիւրան կողքին կպած: Իւրաքանչիւր սերբ ընտանիք ալքանացի մի տէր ունի, որ նրան հովանաւորում է՝ փոխարէն տուրքերի,

կօռ ու բէգեառի, սովորական ընծաների, տասանորդի, գողութեան, սոսնց հաշուելու կալուածատիրական իրաւունքը, որ մնում է որպէս այստեղի սօցիալական դաշնագրութեան (contract social) յօդուածներից մէկը: Այսպէս մի քանի տարի առաջ Իսսակ-բէյը ուղարկում է իր որդուն՝ Պաւլիչ անունով մի սերբի մօտ նրան ասելու. «Իմ հայրը տեսել է քո կնոջը և հաւանել. այժմ ուղում է նրան, ուղարկիր»: Միևնոյն ժամանակ երիտասարդը ասնում է սերբի աղջկան, ուստի աւելացնում է. «աղջիկդ էլ կ'ուղարկես ինձ համար»: Քսանեչորս ժամ յետոյ Իսսակը հրամայում է ասել. «Դու չ'ուղարկեցիր քո կնոջը, լաւ! այժմ փոխարէնը կ'ուղարկես հինգհարիւր ֆրանկ և քո աղջիկը իմ որդու համար»: Սերբը իր ազգականներից պարտք վերցնելով հինգհարիւր ֆրանկ՝ տալիս է, իսկ աղջկան թողնում է մի քահանայի մօտ: Երիտասարդ ալբանացին զալիս է և չը դանելով աղջկան՝ վերցնում է կնոջը: Ապա բէյը խլում է սերբի արտերը, տանում է կահկարասին, պահանջում է ահողին փրկանք, և վերջապէս Պաւլիչը ստանում է ուրբի մի այնպիսի հարուած, որ մեռնում է: Իսսակ-բէյը Պաւլիչի պատրոնն էր:

Սերբերը Պրիզրերենդում ունեն նպիսկոպոս և մի օրթօգօքս սեմինարիա:

Ռուսական փոխ-հիւպատոսը պաշտպանում է նրանց. աւստրիական մի պաշտօնեայ պաշտպանում է կաթոլիկ ալբանացիներին, սակայն աւստրիական ազնեւը ոստիկանապետին արած իր մի պաշտօնական այցելութեան ժամանակ քիչ էր մնացել սպանուէր պահապանի ձեռքով: Սերբերն էլ թուլածորթ չեն և ի հարկին իրանք իրանց պաշտպանել զիտեն: Երիտարիցայի ափին մի քանի ամսից ի վեր ամեն օր կարելի է տեսնել մի պառաւ մահմէդական կին, որ ազոաւի ազաղակներ է արձակում՝ վտիտ ձեռները շարժելով, որովհետև նրա որդուն սպանել է մի սերբ: Այսսերբը ջահիլ էր և սիրուն, իսկ սպանուած մահմէդականը Ստամբուլից բերել էր զարչելի սովորութիւններ. նրանց մէջ մի անգամ մի խանութում կախ սկըսուեց դանակով. մահմէդականը սպանուեց: Երկու ամիս շարունակ ոստիկանութիւնը և սպանուածի ազգականները իզուր փնդրեցին մարդասպանին. նա կարողացաւ փախչել դաշտերը. իսկ պառաւը շարունակում է վրէժնորութիւն ազաղակել:

Պրիզրերենդի շրջանը՝ այս Հին-Սերբիան Հայաստանի հետ աշխարհի ամենազժբազգ երկիրն է: Ալբանացիք իրանց լիսներից իջնելով՝ կայսերական իշխանութիւնից իրաւունք են ըստացել ապրել ի հաշիւ սերբ զիւղացիների և ոչնչացնել ամեն

ինչ: Ուզում են ջնջել այս ցեղը (սերբիական), որ կարող է օրինաւոր ճանաչել Ալէքսանդր Թագաւորի (Սերբիայի), Աւստրիայի և Մօնտենեգրոյ իրաւունքները: Պրիզրէնցի շուրջը ալքանական օրէնքը ամենակարող է: Քրիստոնեաները՝ որպէս նշան ստրկութեան՝ պարտական են իրանց մաղերը կտրել: Նրանք իրաւունք չունեն ձիով մտնել որեւէ քաղաք և ոչ էլ ձիու վրայ մնալ, երբ դաշտում պատահում են որեւէ մուսուլմանի: Ամեն տեղ նրանց գերեզմանատների պատերը հողին հաւասարեցրուած են. քրիստոնեաները այդպիսի արտասուելի կեանքից յետոյ էլ իրաւունք չունեն մի խաղաղ անկիւն ունենալու:

Միարօվիցայում Հիստա Բօլժեւտինացը յայտարարում է, թէ ինքը սպանելու է ոռւսաց հիւպատոսին, հէնց որ վերջինս համարձակուի պաշտօնն ստանձնել: Անցեալ տարի նոյն Հիստան երեք հարիւր մարդու գլուխ անցած՝ մի օր յարձակում է Կօլչաին գիւղի վրայ, կողոպտում է և փրկանքի ենթարկում: Նահանգապետը նրան բարեկամական նկատողութիւններ է անում. Հիստան պահանջում է փաշայի տիտղոս, որ շտապում են խոստանալ նրան: Իր որդին 1902 թւի յունիսի 4-ին ստիպում է հարթավայրի քրիստոնեաներին խնդրել սուլթանից իր ոչխարների տուրքի որոշ զիջում: Սուլթանը՝ ինչպէս և սպասելի էր՝ մերժում է. այն ժամանակ ալբանացին պատժում է քաղաքը՝ արգելելով նրա ելքն ու մուտքը: Քաղաքը սովից տանջուեց՝ ինչպէս պաշարուած:

Սպանութիւններ, անսանդումներ, արիւնահեղ արշաւանքներ, ահա Հին-Սերբիայի ամենօրեայ քրօնիկը: Թիւրքական իշխանութիւնը օժանդակում է այդ բոյորին: Մի խեղճ սերբ աղջիկ հարիւր յիսուն օրից ի վեր բանտումն է այն պատճառով, որ նա դիմադրել էր մի բէյի, որը փախցրել էր այդ աղջկան հէնց վերջինիս հարսանիքի ժամանակ: Իր աղատութիւնն ու իր նշանածը վերստանալու համար նա միայն մի հնար ունի— զիջել բէյին: Քեաղիմ աւաղակը՝ ահա երկու սարի է՝ ինչ սպրում է որպէս պարազիտ ի հաշիւ երեք գիւղերի, որոնց նա սարսափի տակ է պահում և փրկանքի ենթարկում: Գիւղացիները բողբոջեցին, թիւրք նահանգապետն ուղարկեց ժանդարմներ, Քեաղիմը նրանց հրաւիրեց մի օրգիայի, որ կազմուեց քրիստոնեաների զինով, պաշարեղէնով և կանանցով:

Միարօվիցայում երկու եղբայրներ, երկուսն էլ ոստիկանական սպայ, մտնում են մի քրիստոնէի տուն, ուր կատարում է հարսանիք. նրանք անարձանակներով սպանում են այնքան մարդ, որքան կարող են և բռնաբարում են կանանց. սա այս

Երկրում հանար է՛ Այսպէս է մի հասիկ օրուայ քրօնիկը՝
Խիւղքերը վճռել են այս գաշտում ջնջել քրիստոնէայ ազգա-
բնակա թիւնը...

ԺՕՐԺ—ԳՕԼԻՄ

(Թարգմ. Ա. Ա.)

ՌՈՒՍՏՅԱՆ ԱՉԳԵՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏԿԱՍՏԱՆՈՒՄ

I

Նոր չէ, որ Ռուսաստանը ուշադրութիւն է դարձնում Պարսկաստանի վրայ. դեռ դարեր առաջ նա ձգտել է տեղ բռնել այդ երկրի մէջ, նուաճումներ անել և զօրեղացնել իր դիրքը թէ քաղաքական և թէ տնտեսական տեսակէտներէր: Նոյն այդ ձգտումը շարունակուում է և աժմ՝ աւելի ուժեղ և որոշակի կերպով: Բայց սնցեալում նուաճումները կատարուում էին զէնքի միջոցով, իսկ այժմ խաղաղ ճանապարհով:

Ռուսաստանը սկսեց աւանձին ուշադրութիւն դարձնել Պարսկաստանի վրայ մանաւանդ վերջին տասն տարում և այդքան կարճ ժամանակամիջոցում շատ աչքի ընկնող աջողութիւններ ունեցաւ և ապագայի փառաւոր հեռանկարից ոգևորուած՝ այժմ աւելի ու աւելի ձգտում է զիրք գրաւել: Հիւսիսային Պարսկաստանը, այսինքն Ատրպատականի ընդարձակ նահանգը, ուր առաջ ազդեցիկ հեղինակութիւն վայելող Անպլիան էր, այժմ դանում է համարեա բացարձակապէս Ռուսաստանի ազդեցութեան տակ:

Հիւսիսային Պարսկաստանում նա իր դիրքը ապահովելով՝ այժմ ձգտում է իր ոյժը տարածել ամբողջ Պարսկաստանում, առևտրական նուաճումներ անել Իրանի ամբողջ երկրում: Այդ նպատակին հասնելու համար նա մի կողմից աշխատում է բարեկամական յարաբերութիւն պահպանել իր հարևանի հետ, ուրախութեամբ խոչոր գումարներով պարսք է տալիս նրան և այլն: Իր այդ հեռատես քաղաքականութեան արդիւնքը արդէն տեսնում է Ռուսիան: Պարսկաստանը չը կարողացաւ 1903 թ. փետրուարի 1-ին (ն. տ.) վճարել սահմանուած գումարը՝ Ռուսիայից իր արած փոխառութեան 1/6-ը հանդցնելու համար, ուս-

տի ուսաց կառավարութիւնը կարգադրել է, որ սրանից յետոյ մաքսատաների հասոյթները, որոնք բայառապէս զրուում են Պարսկաստանի պարսքի տոկոսը ծածկելու համար, ստանան Պարսկաստանի ուսաց բանկը կամ նրա բաժանմունքները, իսկ ուր բանկ չը կայ, կը ստանան յատուկ այդ նպատակով այնտեղ նշանակուած գործակալները:

Այս մի քանի տարուայ ընթացքում Ռուսաստանը այնպիսի հիմարկութիւններ հիմնեց Պարսկաստանում և այնպիսի ձեռնարկութիւններ սկսեց, որոնք գալիս են աւելի ու աւելի առետրական յարաբերութիւնները կանոնաւորելու և սերտ կապեր հաստատելու երկու երկրների մէջ: Այդ հիմնարկութիւններն ու ձեռնարկութիւններն են՝ ուսական փոխատու բանկը, ուսաց ապահով. և ճանապարհ-հազորդակց. ընկերութիւնը, «Նադեժդա» ընկերութիւնը, խճուղի շինելը և այլն:

Ռուսաց բանկ հիմնուեց Թաւրիզում 1901 թւին, որը կազմում է ուսաց պետական բանկի մի ճիւղը: Ռուսական բանկը ամեն կերպ աշխատում է արտօնութիւններ ու գիրութիւններ տալ թէ թուրք և թէ հայ վաճառականներին, նամանաւանդ նրանց, որոնք ուսական ապրանք են ներմուծում:

Ռուսական բանկը ձգտում է վերացնել նաև մի արգելք, դա կուրսի փոփոխական գրութիւնն է: Բանկը ձգտում է հաւասարեցնել ուսական բուրջին պարսկական 5 դանին. հէնց այդ նպատակով Պետերբուրգի պետական դրամատանը կտրուում են պարսկական 5 դանանոց արծաթ դրամներ, որի քաշը 61 դօլիայով ծանր է ուսական բուրջուց: Այս նոր կտրուած դրամից Թաւրիզի ուսական բանկը ստացաւ 60,000 թուման, և վաղուց մտել է շրջանառութեան մէջ: Եթէ բանկը կարողանայ հասնել իր նպատակին, կը ստեղծուի վաճառականների համար մի շատ նպաստաւոր դրութիւն, և զրանով զգալի կերպով զարկ կը տրուի ուսական ապրանքների աւելի լայն չափերով տարածուելուն. մի խօսքով ուս-պարսկական առետրի համար շօշափելի դիւրութիւն կը ստեղծուի:

Մեծ զարկ են տալիս ուսական ապրանքների տարածուելուն մանաւանդ «Надежда», «Росс. страх. транс». ընկերութիւնները, որոնք ձգտում են ամեն դիւրութիւններ տալ վաճառականներին. վերադիր վճարով ընդունում են ապրանքներ Ռուսաստան ուղարկելու և կամ ստանալու արտասահմանից: Այս երկու ընկերութիւններն էլ մեծ քանակութեամբ շաքար են վաճառում Հիւսիսային Պարսկաստանում:

«Надежда» ընկերութիւնը, ինչպէս և միւս ընկերութիւ-

նր, զլիաւորապէս գործում է Ատրպատականում, մասնաւորապէս ամբողջ Պարսկաստանում: Ատրպատականի զրէթէ բոլոր կենտրոնական քաղաքներում այժմ «Надежда»-ն բաժամունքներ ունի, ինչպէս Թաւրիզ, Արզարիլ, Ուրմի, Մարաղա և Սօուզ-Բուլազ: Իսկ Պարսկաստանի միւս մասերից միայն Խօրասանում ունի ազենտ, մօտ օրերս բացուելու է նաև Թեհրանում առանձին բաժանմունք: «Надежда»-ն այս մի տարի է, ինչ սկսել է իր գործունէութիւնը Պարսկաստանում, բայց այդքան կարճ ժամանակամիջոցում շատ արագ կերպով տարածուեց, և մեծ շահներ կան, որ շատ մօտիկ ապագայում յայտնի զարկ կը տայ ուսական արդէցութեանը, և ուսական ապրանքները ահալին քանակութեամբ կը ներմուծուեն Պարսկաստան, զլիաւորապէս Հիւսիսային Պարսկաստան, կը սիրեն այդ մասի առևտրական շուկաները և միակ տէրը կը լինեն, առանց որևէ մրցակցի:

Ռուսաստանը աշխատում է նուաճել իր ապրանքներով ամբողջ Պարսկաստանի առևտրական աշխարհը՝ չը բաւականանալով միայն Ատրպատականի նահանգով: Այժմ նոյնիսկ մի քանի խոշոր առևտրական ֆիրմաներ, օր. Морозовъ, յատկապէս մարդիկ են ուղարկում Պարսկաստան՝ ժողովրդի պէտքերը և ճաշակը ուսումնասիրելու համար: Մի քանի ամիս առաջ մի մանուֆակտուրային ընկերութեան ներկայացուցիչ էր եկել Թաւրիզ և երկար խորհրդակցել էր պարսիկ վաճառականների հետ, իսկ երկու ամիս առաջ եկել էր «Поповъ»-ի խոշոր ֆիրմայի ներկայացուցիչը՝ ուսական թէյը այս երկրում տարածեհամար: «Надежда»-ն յանձն է առել տեղափոխութեան ամեն տեսակ զիրութիւններ տալ պարսիկ վաճառականներին, եթէ նրանք վերը յիշած ֆիրմաների հետ պայմանաւորուեն:

Հէնց այժմ ուսական մի քանի ապրանքներ, օրինակ նաւթը, շաքարը, չիթեղէնը, ահապին նուաճումներ են անում Պարսկաստանի, մանաւանդ Ատրպատականի շուկաներում:

Իսկ Ռուս-Պարսկական առևտրական նոր դաշնագիրը, որ հաստատուեց փետրուարին, գալիս է էլ աւելի զօրեղացնելու ուսաց ազգեցութիւնը Իրանի երկրում:

Այժմ մեր ձեռքի տակ ունենք տպագրուած նոր տարիֆների մի ամբողջ շարք շատ մանրամասն և որոշակի, որ արդէն գործադրութեան մէջ է մտել: Ռուս-պարսկական նոր դաշնագրով շատ բան է փոխուել մաքսի վերաբերմամբ, չափերի և աստիճանների իջնելը և բարձրանալը շատ է զգալի: Աւ մի բան, որ շատ ակնյայտնի է և աչքի է ընկնում հէնց սկզբից, այդ այն է, որ զրէթէ ամեն ինչ փոխուել է յօգուտ Ռուսաստանի:

Այն ապրանքները, որոնցից մեծ քանակութեամբ ներմուծ-

ւում էին եւրոպական միւս պետութիւններից, օրինակ մետաքսէ գործուածքներ, թանգազին քարեր, ոսկէ և ուրիշ տեսակի ժամացոյցներ, թէյ, մահուղեղէններ և այլն, դրանց մարսերի չափերը սարսափելի աստիճանի են հասել, որ երբէք ձեռնտու չէ դրանց առետրով դարդուել Պարսկաստանում: Թէյի մաքսը, որից ահագին քանակութիւնով ներմուծւում էր ուրիշ երկրներից, որ առաջ 50% էր, այժմ բարձրացել է 50—750%-ի (սպիտակ և սև թէյ): Այն ինչ նաւթը, չաքարը և այլն, որոնք բացառապէս ներմուծւում են Ռուսաստանից, դրանց մաքսը աւելի իջել է: Նաւթի մաքսը, որ առաջ 50% էր, այժմ 30% է, չաքարը առաջ 50% էր, այժմ 31/3%: Կօնեակ, լիքեօր, վիսկի, գլխարկներ *) և այլն, որոնք շատ աննշան բացառութեամբ գալիս են Արևմտեան եւրոպայից, դրանց համար վերցնում են ահագին մաքս, այն ինչ դարեջուր, ածուխ, ամեն տեսակի ալիւրներ, ձկնեղէն, բամբակէ գործուածքներ, կենդանիներ, (ձի, էջ, ոչխար և այլն), կաւէ թրձուած և չը թրձուած ամանեղէններ, որ բաւականին արտահանում է Ռուսաստանը, ներմուծւում են Պարսկաստան առանց մաքսի:

Այդպէս ուրեմն ներմուծման դէպքում ամեն կողմից շահը Ռուսաստանի կողմն է. նոյն բանը կայ և շատնկատելի է Պարսկաստանից արտահանուած ապրանքների վերաբերմամբ: Յայտնի է, որ Պարսկաստանը մեծ քանակութեամբ հում նիւթեր է արտահանում, ինչպէս սարգա իր բոլոր տեսակներով, նուշ, մասամբ բամբակ, և բացառապէս Ռուսաստան, կամ Ռուսաստանի միջոցով ուրիշ երկրներ: Այդ մրդեղէնների մաքսը թէև մի փոքր բարձրացել է, բայց այդ երբէք չէ խանդարելու աւելի մեծ քանակութեամբ արտահանելուն, որովհետև Պարսկաստանը դրանցից այլևս մաքս չէ վերցնելու: Առաջ ինչ չափով Պարսկաստանը վերցնում էր, համարեա նոյնքան այժմ աւելացել է ուսաց մաքսի վրայ: Արտահանողների և վաճառականների համար գրեթէ նոյն չափն է մնացել:

Այն ինչ կան ապրանքներ, օրինակ՝ գորգ, շալ և այլն, որոնք շատ անհրամեշտ են Ռուսաստանին, արտահանուում են գրեթէ առանց մաքսի:

Ահա այսպէս ամեն ինչ փոփոխուել է յօդուտ Ռուսաստանի: Չը մոռանանք ասել, որ այդ նոր դաշնագրի 8-րդ յօդուածով իբրև չափ որոշուում է Թաւրիզի բաթմանը, որ ունի 640 պարսից մսխալ կամ ուսական 7,27 գր. 9-րդ յօդուածով որոշուում է, որ քաշը լինելու է brutto: 4-րդ յօդուածով ոչնչա-

*) 5 Ղոսն, կօնեակ, վիսկի բաթմանը 12 ղոսն, գլխարկ 15%:

նում են ռահդարին, ալաֆխանան, զափանը և ուրիշ տեղական հարկերը *): Այս տեղական տուրքերը վերանալով Պարսկաստանի համար՝ ի հարկէ՝ ֆինանսական տեսակէտից մի աստիճան վնաս է, բայց մեծ չափով նոյաստում է վաճառականութեան տարածման և տալիս է մի շարք յարմարութիւններ:

Ինչպէս տեսնում էք, սուս-պարսկական այս նոր դաշնադրով լայն և ընդարձակ ասպարէզ է բացւում Իրանի երկրում սուսական ապրանքների համար և թարէց տարի աւելի ու աւելի կ'ընդլայնուեն և ահալին նուաճումներ կ'անեն: Միակ արգելքը, որ մեծ չափով խանգարում է աւելի տարածուելուն և կանոնաւոր յարաբերութիւններին, դա շնորհքով ճանապարհների կատարեալ բացակայութիւնն է: Հաղորդակցութեան միջոցները դեռ հնագարեան վիճակի մէջ են, ձգւում են ձորերի, առուների միջով, հանգամանք, որը խանգարում է կանոնաւոր երթևեկութեան և առետրի հաղորդակցութեան զարգանալուն: Այս հանգամանքը լուրջ կերպով զբաղեցնում է սուսաց կառավարութեան, և եռանդուն կերպով աշխատում են վերացնել այդ արգելքը:

Ռուսաստանի ձեռք բերած այս բոլոր արածութիւնները և յաջողութիւնները Պարսկաստանում գրաւեց հարեան ուրիշ տէրութիւնների, մանաւանդ Անգլիայի ուշադրութիւնը, որոնք նոյնպէս շահեր ունեն այս երկրում:

II

Հիւսիսային Պարսկաստանի գլխաւոր քաղաքում, Թաւրիզում կան հիւպատոսներ եւրոպական շատ աւրութիւններից. բայց զրանցից ամենաազդեցիկը անդայման սուսաց հիպատոսն է: Ռուսաց կոնսուլատը առանձին գիւրք և հեղինակութիւն է վայելում Ասորգաստականի նահանգում: Կոնսուլատի վրայ թուրքերը նայում են որպէս մի ամենաուժեղ և կարող հիմնարկութեան վրայ: Ռուսաց կոնսուլատի հեղինակութիւնը աւելի բարձրացաւ և աւելի սկսեց տարածուել, ուժեղանալ նրա ազդեցութիւնը նամանաւանդ 1897 թւի գարնանը Թաւրիզում տեղի ունեցած ամբոխային ցոյցից յետոյ: Թուրք խառնիճազանձ խուժանը զրգուում մի գէպքից՝ յարձակուում է հայաբը-

*) Արտասահմանսն ապրանքը Պարսկաստան մտնելիս՝ սահմանում բացի նշանակուած մաքսը ստանալուց, այդ ապրանքը Պարսկաստանի իւրաքանչիւր քաղաքից անցնելիս առնում էին որոշ տուրք, որ կոչւում էր «սահ-դարի»: Ատփանն է մրգեղէնները կշռելու տուրք, ալաֆխանան՝ փայտի տուրք:

նակ թաղերի վրայ և սկսում է կողոպտել, թալանել: Հայերը պատասխան են գտնում ուսաց կոնսուլատում: Ռուսաց կոնսուլ Պետրովի կարգադրութեամբ ուսաց զօրքը պէտք է մըտնէր Թաւրիզ քրիստոնեաներին պաշտպանելու համար, բայց խաղաղում է ամբար, դադարում է թալանը, և, ինչպէս պատմում են, ուսաց զօրքը յետ է դառնում Արաքսի ափից: Բարբ կողոպտուած հայ ընտանիքները ուսաց կոնսուլի կարգադրութեամբ մանրամասն ցուցակով ներկայացնում են իրանց կրած վնասները, և պ. Պետրովը առանց որևէ զիջումի առնում է այդ պարսից կառավարութիւնից և յանձնում հայերին: Այս դէպքը մեծ սարսափ է տարածել ընդ ժողովրդի վրայ և հեղուկութեամբ չէ մոռացւում:

Մի տեսակ երկիւղածութեամբ է նայում թուրք ամբարը ուսաց կողակին, նրա մէջ ինչ որ գերբնական ուժ է ընդունում, մանաւանդ շատ ազդում է կողակի մեծ և բրդոտ զլեարկը. ով կողակի նման է հագնւում, նրան թուրքը կողակ է ընդունում:

Թէև առհասարակ օտարահպատակի գոյքը և կեանքը ապահով է Պարսկաստանում, բայց ուսահպատակինը ուրիշ է: Նա միանգամայն ազատ է այս երկրում, ազատ կողոպուաներից, հարստահարութիւններից, ազատ յարձակումներից. նրա մազին անգամ ոչ որ չէ յանդգնում դիպչել: Իսկ եթէ մի բան է պատահում ուսահպատակին, թէկուզ շատ աննշան վնաս է կրում նա, խիստ պատժի է ենթարկւում չարագործը պարսից կառավարութեան կողմից՝ ի հարկէ՝ ուսաց կոնսուլատի պահանջի համաձայն. եթէ նրան ճանապարհորդելիս կողոպտում են աւազակները, նոյն տեղի, կամ մօտիկ տեղերի (ուր կատարուել է այդ) ժողովուրդ տուժում է կրկնապատիկը, և սպառախիլը: Ուր էլ կողոպտուած լինի ուսահպատակը, թէկուզ Ասրպատականի մի խուլ և հեռաւոր անկիւնում, եթէ իմացուեց, առնում է կոնսուլատը դեռ վնասից աւելի: Քանիքանի նման դէպքեր են պատահել: Իսկ եթէ թուրքը յանդգնում է ձեռք բարձրացնել մի ուսահպատակի վրայ, վնայ նրան, տուժում է նա շատ խիստ կերպով: Հէնց անցեալ օրը երկու թուրքերի ծեծեցին, որովհետև զրանք մի ուսահպատակի վրայ ձեռք էին բարձրացել, և ձեռում են այնտեղ, ուր կատարուած է լինում դէպքը:

Հէնց այս հանգամանքն է, որ շատ հայեր, մանաւանդ թուրքեր ձգտում են, մեծզուամարներով պրամ են ծախսում, որպէսզի աջողեցնեն ուսահպատակութիւն ընդունել: Շատ շատերի նախանձն է զրգոում ուսահպատակ լինելը:

Առհասարակ Պարսկաստանի կեանքի բոլոր երևոյթների մէջ աչքի է զարնում Ռուսաստանի զօրեղ ազդեցութիւնը: Յըրանսերէն լեզուն առաջ տիրապետող օտար լեզուն էր հէնց նոյնիսկ Ատրպատականում, Թաւրիզում, այժմ համարեա թէ տեղի է տուել ուսաց լեզուին: Հետզհետէ ուսաց լեզուն մի անհրաժեշտ տարր է դառնում Ատրպատականի կեանքի շատ երևոյթներում, մանաւանդ այս փոխադրական ընկերութիւնների, ուսաց բանկերի հիմնուելուց յետոյ:

Թաւրիզի թէ «Արամեան» և թէ «Հայկազեան-Թամարեան» դպրոցներում ուսաց լեզուն համարում է սրբէս առաջնակարգ առարկայ. վերջին դպրոցում սովորեցնում են նոյնիսկ աշակերտութիւններին: Ռուսաց լեզուն կայ նաև բողոքականների ուսումնարանում: Բացի դրանցից՝ թուրքաց «Քեամար» և «Աղմանեան» դպրոցներում ուրիշ լեզուների չարքում կայ և ուսաց լեզուն. այս մի տարի է, ինչ բացուել է և մի մասնաւոր դպրոց, ուր անցնում են բացառապէս ուսաց լեզու, որի աշակերտները՝ ի հարկէ՝ թուրքեր են: Գաւառական մի քանի դպրոցներում էլ ուսաց լեզուն պարտադիր է դարձել: Ինչպէս լուծում ենք, մտադրութիւն կայ բանալ Թաւրիզում ուսաց մի դպրոց բէպլական դպրոցների ծրագրով... և սրպէս թէ Ն. Բ. Թագաժողովը խոստացել է իր բարոյական և նիւթական աջակցութիւնը այդ հիմնուելիք դպրոցին:

Եւ այս բոլորը ուսաց լեզուի անհրաժեշտութիւն կազմող յայտնի փաստեր են: Շնորհիւ այդ դպրոցների, նոյնպէս և այն յաճախակի յարաբերութիւնների, որ պարսկաստանցիները ունեն Ռուսաստանի հետ, երբեմն թէ Թաւրիզում և թէ ուրիշ տեղերում լուծում են ուսերէն աղաւաղում խօսքեր, ինչպէս օրինակ՝ փառի սուղա, ըզըրասլի, քուծա փայրօզ, փաշօլ և այլն: Գործածութեան մէջ են՝ սամովար, տարեկա, եամձչիկ, ցէպօչկա, խոգեային, կնուտ, տրօյկա, սապօզ, պօլսապօժկա, չօթք, վօղկա և այլն:

Խմորեղէնի վաճառող (կանդիտեր) խանութների թիւը Թաւրիզում արագ կերպով աճում է, նման բոլորովին ուսականներին, և բանը այն է, որ խանութպանները ուսահայի հետ աշխատում են անպատճառ ուսերէն խօսել, որոնք ի հարկէ՝ եղել են Ռուսաստան: Թաւրիզում և թէ տեսնէք փոքր ի շատէ կանոնաւոր և մաքուր խանութ, իմացէք, որ նրա տէրը անշուշտ եղել է Ռուսաստան:

Շատ քիչ վաճառականներ կը լինեն, որ տարին մէկ կամ մի քանի անգամ Կովկաս և Ռուսաստան չը գնան. նրանք միշտ էլ տարաբերութիւն ունեն Ռուսաստանի հետ: Ոչ միայն վաճառա-

կանները, այլ ևս հասարակ, ուսուցողական ժողովրդին էլ ևն ծանօթ կովկասը և Ռուսաստանը: Նա ատրպատականցու միակ պանդղատավայրն է: Տարեկան մոտաւորապէս 30,000 հողի պանդղատում են զլիաւորապէս Բագու, Շուշի, Թիֆլիս, Բաթում, Փոթի, Վլադիկաւկազ, Ռոստով Դոնի վրայ, Հաշտարխան և այլն:

Ահա ինչպիսի կապեր կան Ռուսաստանի և արևելքի այս երկրի մէջ: Բացի այդ, շատ պարզ նկատելի է և՛ այս, որ Ատրպատականի հայերը ուսուսականին նման շատ անուններ ունեն, օրինակ՝ Սօնիա, Օլգա, Մանիս, Անիւտա, Իվան, Դիմիտրիյ և այլն:

Մեր յօդուածից պարզուեց, թէ ինչպիսի շանսեր կան ապագայում Ռուսաստանի քաղաքական և առևտրական շահերը ընդարձակուելու վերաբերմամբ. իսկ երբ երկաթուղին կը միացնէ երկու հարևան պետութիւնները, զարմանալի չի լինիլ, եթէ Ատրպատականը զառնայ Երևանեան նահանգի շարունակութիւնը...

Ե. ՖՐԱՆԳԵԱՆՑ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՆԱՀԱՊԵՏ ԶՈՒՉԱԿԻ ԴՈՒՍՆԸ», Փնական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Արշակ Զօպանեան. Պարիզ, 1902; տպարան «Անահիտ»:

Այս հրատարակութիւնը գալիս է հաստատելու արդէն յայտնի իրողութիւնը: Դա այն է, որ մեր հին գրականութիւնը ժողովրդական չէր: Մենք խօսում ենք այն գրականութեան մասին, որի համարեա միակ տէրը հոգևորականութիւնն էր: Այդ գրականութիւնը հոգևոր էր, եկեղեցական. նա գրաբար էր, մատչելի միայն եկեղեցական դասին և սակաւթիւ ընտրեալներին, որոնք կարողանում էին սովորել այդ լեզուն: Կար ժողովրդի ահագին բազմութիւնը, բայց նա հեռու էր այդ պաշտօնական գրականութենից, նա ունէր իր առանձին լեզուն, իր առանձին գրականութիւնը: Լեզուն աշխարհաբարն էր, իսկ գրականութիւնը երկնային գործերից չէր նիւթ աւնում, այլ զուտ աշխարհային գործերից: Եկեղեցու գրականութիւնը հրեշտակներից ու սրբերից էր խօսում, ժողովրդինը՝ սէր, զինի, վարդ, լայ ու հառաչանք էր պարունակում: Նահապետ Քուչակը մեր ժողովրդական երգիչներից մէկն է և որ շատ հետաքրքրական է՝ բաւական հին երգիչներից: Ենթադրում են, որ նա ապրում էր տասնեվեցերորդ դարի սկզբում: Շատ թոյլ պատճառաւորումով մի ենթադրութիւն է դա: Միակ փոքր ի շատ է գրական փաստը այն է, որ Նահապետի երգերից մէկը, ինչպէս վերկայում է մի վարդապետ, արտագրուած է եղել նոյն դարի վերջերում: Մեր հին գրողների և գործիչների ճակատագիրը այսպէս է: Եթէ մենք չը գիտենք հաստատ, թէ ով է եղել Նզիչէն, Եղնիկը, ինչ զարմանալի բան պիտի լինի, եթէ չիմանանք, թէ ով է եղել մի ժողովրդական աշուղ: Նահապետ Քուչակը մինչև այժմ շատ քիչ էր յայտնի իր երգերով: Այժմ պ. Զօպա-

նեան հրատարակում է նրա անունով յայտնի բոլոր երգերը և զրանով միջոց է տալիս, որ նա իր պատշաճաւոր սեղը բոնէ մեր հին երգիչների շարքում:

Պ. Չօպանեանի հրատարակութիւնը մի հետաքրքրական գօղումնաւ է մեր գրականութեան պատմութեան համար: Նահապետը երկնային ձայն ունեցող երգիչներից է, մի բոլորովին ինքնուրոյն գէմը: Միայն բանաստեղծական շնորհքը չէ Նահապետի երգերին առանձին հետաքրքրութիւն հաղորդում. լեզուն, երգերի չափը կատարեալ անակնկալութիւններ են մեզ համար:

Քուչակը բազմաթիւ սիրային երգեր ունի. խրատական և այլարանական երգերն էլ բաւական մեծ թիւ են կազմում, կան և ութ հատ պանդխտական երգեր: Սակայն երգեր ասելով՝ չը պէտք է մեծ-մեծ բաներ հասկանանք: Նահապետի երգերը մեծ մասամբ կազմուած են չորս տողերից և շատ հազւագիւտ դէպքերում են հասնում ութ տողի: Դրանք՝ եթէ կարելի է այսպէս ասել, աւելի ասացուածքների են նման: Այդ փոքրիկ ոտանաւորների մէջ շատերը կան, որոնք գողտրիկ են ու զեղեցիկ: Չը մտանանք, որ երգիչը ժողովրդի մարդ է, տալիս է պատկերներ, որոնք ներելի են ռամկական հասկացողութիւններին շրջանում. «եարի» ծծերը, ծոցը, դունչը—սրանք սովորական են այդ երգերի մէջ: Բայց կան և զեղեցիկ բանաստեղծական արտայայտութիւններ, որոնք պատիւ են բերում մեր ժողովրդական երգչի զբայմունքին և ճաշակին: Ահա դրանցից մէկը.

Սէրն երբ ի յաշխարհս եկաւ, եկաւ իմ սիրտս թառեցաւ,
 Հապա իմ սրտէս ի դուրս՝ յերկրէ յերկիր թափառեցաւ,
 Եկաւ ի դուրսս ելաւ, և յըզեղս ելաւ թառեցաւ,
 Սչիցս արտասունք ուղեց նա, արիւն ի վար վաթեցաւ:

Կամ թէ՛

Ես ձագ ծիծեռնիկ պիտէի, գօրն ըզքո տուն մտնուի,
 Ան բարձր մօյտան շարտախո՞ ես ի հոն բուն մը շինէի,
 Ոնց որ մութն մթանայր, ցածնայի ծոցդ մտնուի,
 Ոնց որ լոյսն լուսանայր, բարձրանայի բունս մտնուի.
 Ես ապրչմէ խուշախ, գօրն զքո միջաց գիրկ ածէի,
 Կամ քաղցըր նըռան գինի, գօրն ըզքո փարչըդ պիտէի.
 Առսիր ու բերնիդ դընիր, ցածնայի դունչըդ պագնէի:

Թողնենք սէրը, որ երգւում է աշխարհի սկզբից անթիւ ու անհամար վարիացիաներով: Վեւիլի հետաքրքրական ևն հասարակական տեսակէտից խրատական բանաստեղծութիւնները, որոնց մէջ ժողովրդի աշխարհայեցողութիւններն են երևում: Այն իս-

ւար, դժբաղդ, արիւնոտ դարերում ինչ հաւատ ու գաւանու-
թիւններ ունէր հայ ժողովուրդը: Մեր պաշտօնական գրականու-
թիւնը շատ քիչ նիւթ է ապիս, նրա մէջ չը կայ ժողովուրդ:
Մնում է, որ ժողովրդական Նահապետները պատմեն մեզ: Այս
տեսակէտից էլ շատ ուսանելի են Քուչակի երգերը: Մենք տես-
նում ենք նրա մէջ ստրուկ ժողովրդի փիլիսոփայութեան նը-
մուշներ: Ահա նա ասում է.

Գուցն՝ որ յագիզ կենաս որ ամէն մարդ գրեզ սիրէ,
Գուն հողուն նման կեցիր որ ամեն մարդ ըզրեզ կոխէ:

Բայց միևնոյն ժամանակ այդ ժողովրդի մէջ կայ իր զե-
ղեցկութեամբ և իմաստով յուզել այսպիսի միտք էլ.

Գանթեղիկ մտիկ արա, ջուրն ու ձէթն ու հուրն ի լման.
Գանթեղն է մտաց նման, ջուրն ուսման, ձէթն՝ զիտութեան,
Քանի զմիտքդ սուրբ ունիս, դու սիրով ջանս ուսման.
Հսգիզ է պայծառ գունով, որ լոյս տայ քեզ մթութեան:

Սրտատուչ են և՛ զարիբական երգերը. սրանք էլ ժողովրդ-
դական զգացմունք են. մի ժողովուրդ, որ դարերով հալուել ու
մաշուել է զարիբութեան ձեռքին, ի հարկէ՝ պիտի իմանայ և
այն ողբալը: Հայ ժողովուրդը լաւ գիտէ արտայայտել իր այդ
ցաւը, որ կրում է սրտի մէջ դարերից ի վեր, բայց որի հետ
հաշուել դեռ չէ կարողացել:

Նահապետ Քուչակի երգերը մեծ հետաքրքրութիւն են
ներկայացնում և լեզուագիտական տեսակէտից: Մեր ժողովրդ-
դական երգիչներից շատ քչերին է աջողուել այնպիսի համե-
մատաբար մաքուր աշխարհաբար գործածել, ինչպիսին ունի
Նահապետը: Դա XVI-XVII դարերի աշխարհաբարն է, և մեր
լեզուագէտ բանասէրները կարող են շատ հետաքրքրական նիւ-
թեր գտնել նրա մէջ ուսումնասիրութիւնների համար: Մեզ
անձամբ շատ ուսանելի թւայ այն, որ Նահապետի աշխարհա-
բարի մէջ խառնուած են այժմեան արեւմտեան և արեւելեան բար-
բառները. մենք մինչև անգամ հանդիպեցինք «ից»-ով վերջացող
բայառական հոլով:

Երկու խօսք էլ սլ. Չօպանեանի քննական ուսումնասիրու-
թեան մասին: Մենք միանգամայն համաձայն ենք պարոնի հետ,
որ չը պէտք է ոււցնել, արհեստական կերպով մեծացնել մեր
ազգը: Այո, ճիշտ է, հայ ազգը մեծ ազգերից չէ, նա չէ տուել
հանճարներ, նա ճնշուած է եղել երկաթէ լծի տակ, և պա-
հանջիկ նրանից աւելին, քան ինչ նա տուել է իր թշուառ
պատմութեան ընթացքում, հազիւ թէ կարելի լինի: Այդպէս էլ
պէտք է վերաբերուենք մեզ: Բայց մի կողմից խստովանելով

մեր փոքրութիւնը, մեր համեստութիւնը, մեր ստրկական կացութեան դառնութիւնը, միւս կողմից պիտի այնքան քաջութիւն էլ ունենանք, որ խոստովանենք, թէ դարաւոր ստրկութիւնը շատ է թունաւորել մեր արիւնը, շատ է այլանդակել մեր մարդկային կերպարանքը: Պ. Չօպանեանը չէ հաւանում այն հայերին, որոնք իրանց ազգի պակասութիւններն են դատաւիտում: Նա ասում է. «Տարօրինակ տկարութիւն մ'ունինք մեր ցեղին թերութիւնները յօժարակամ խոշորցնելու, ընդհանրացնելու, մեր ազգը մարդկութեան մըտըրը նկատելու, մէկ խօսքով՝ սովորական բան մըն է մեզի համար Հայ ըլլալնէս ամէնալը, և ատի բայէ ի բայ ըսելով՝ քաջութեան, անկեղծութեան, ճշմարտասիրութեան փայլուն ապացոյց մը տուած ըլլալ կը կարծենք»: Որ կան այդպիսի հայեր, — այդ շատ ճիշտ է. բայց ճիշտ է և այն, որ այդպիսիները հեռանում են իրանց ազգութիւնից, մոռանում, ուրանում են նրան: Բայց երբ պ. Չօպանեանն իր այդ ասածները հաստատելու համար անմիջապէս դիմում է օրինակի և յիշում է Բաֆֆին, այդտեղ մենք ասում ենք. «Ոչ, մենք համաձայն չենք»: Բաֆֆին, Նաղարեանցը, Նալբանդեանցը, Ստեփան Ոսկանը, Արծրունին խօսել են մեր ազգային արատների մասին, բայց խօսել են իբրև բարեկամ, ցաւակից, իբրև իրանց ազգի բարոյական դորութեան ջերմապէս հաւատացող: Նրանք միշտ կարողացել են հասկանալ, որ հայ ժողովուրդը ունի իր մէջ շատ դրական յատկութիւններ, որոնց պէտք է դարձացնել, առաջ քաշել. նրանք հաւատում էին մեր վերածրնութեան:

Պ. Չօպանեանն իբրև օրինակ յիշատակում է այս, որ Բաֆֆին «կրցած է բողբի» մը նմանցնել հայ ժողովուրդը: Բայց դա շատ անաջող օրինակ է: Բաֆֆիի «Դաւիթ-բէկի» մէջ հերոսներից մէկը նմանեցնում է հայ ազգի քաղաքական ճակատագիրը մի պոռնիկ կնոջ. «Հազարաւոր տարիներ անցկացրեց նա երբեմն յոյնի, երբեմն պարսկի և երբեմն հոռվմայեցու գիրկն ընկնելով: Մինչև անգամ անապատի սև արաբը իր հաստ չըրթունքով շօշափեց նրա երեսը: Մինչև անգամ Թուրանի տափակաքիթ, դեղնակաշի մօնդօլը դարերով պառկեց նրա հետ»: Բայց հերոսը իսկոյն էլի աւերացնում է. «Այնուամենայնիւ ևս դարձեալ սիրում եմ այդ թեթեամիտ, վաւաչոտ կնոջը, որ դարերի ընթացքում իր անբարոյական կեանքով մաշուել, տրորուել, բրբրուել է և միայն իր վաղեմի դեղեցկութեան կմախքն է պահպանել: Սիրում եմ այդ կմախքը: Սիրում եմ այդ թունաւորութեամբ, հազարաւոր հիւանդութիւններով վարակուած մարմինը»: Եւ յետոյ բացատրում է, որ այդ սէրը չափազանց բա-

րի ցանկութիւններից է բղխում, այդ սէրը կամենում է հանել պոռնիկին ցեխերից և նրան օրինաւոր, պատւաւոր կեանքի սովորեցնել: Բանաստեղծական ձևով արտայայտուած այս հայրենասիրութիւնը միթէ նշանակում է «մեր ազգի մարդկութեան մրուրը նկատել»: Երբէք:

Պ. Չօպանեանը հիացած է Նահապետ Քուչակի երգերի վրայ և չափազանցութիւնների է դիմում: Այն, զեզեցիկ կտորներ կան այդ երգերի մէջ, Քուչակը այսուհետև նոյնպէս սիրելի կը լինի մեզ համար, ինչպէս Սայաթ-Նովան, բայց մենք հետո ևնր Սայաթ-Նովայով էլ, Նահապետ Քուչակով էլ այդ աստիճան յափշտակուելուց: Նրանք պարծանք դառնալու չափ խոշոր չեն: Ուրիշ բան է, եթէ մեր անցեալից մնացած լինի վրայ «Ընձենաւորի» նման մի բան: Չը մոռանանք, որ քրդերն անգամ ունեն «Սարէ-Սիփանէ»ի պէս մի բանաստեղծական դոհար...

1.

Հ. Ս. Երեմեան. «ՏՈՒՐԿԻՆ» տպագէտ. պատկերապոյզ, 82 էր. դ. 2,50 ֆրանկ (1 լուրի). Վենետիկ, 1903 թ.:

«Տուրկինի» հեղինակը իր մանրավէպի նիւթը վերցրել է հայոց պատմութեան հին շրջանից:

Երուանդ Բ. Թագաւորի պալատականների մէջ կար մի քսու մարդ Տուր անուհով: Նա Երուանդի սիրելին էր և ամենամտերիմը ամբողջ արքունիքում, բայց նրա բոլոր գազանիքները հաղորդում էր Արտաշեսի խորհրդատու Սմբատ սպարապետին: Երուանդը իմանում է այդ և սպանում է Տուրին: Տուրի կինը, Տուրկինը, վճռում է հանել իր ամուսնու վրէժը: Նա ծպտեալ կերպարանքով հեռանում է իր զղեակից և իմանալով որ իր ամուսնու մահուան պատճառը եղել է Բագարանի գանձապետ քուրմը, հրապարակաւ սուրը մխում է նրա կուրծքը այն ժամանակ, երբ Թագաւորը և ժողովուրդը հանդիսաւոր թափօրով Բագարանի կուռքերը փոխադրում են Արտաշատ:

Մանրավէպը գրուած է կեղծ կլասիկական ոճով, սակայն տեղ-տեղ հեղինակը տալիս է ընթերցողին կենդանի պատկերներ մեր հին անցեալից, օրինակ՝ տկալաստով (տկերի վրայ սարքած լաստով) նաւարկութիւնը Արաքսի վրայով, աղքատների խումբը Բագարանի տաճարի առաջ, վնուկի գուշակութիւնը Տուրկինի համար:

Ձեռն տեսակէտից վէպիկի թոյլ կողմը խօսակցութիւններն են, բոլորն էլ անբնական, վերց-ուռոյց կամ քաղցր-մեղք, բա-

ցի ազգատաների զրոյցներից, որոնց միջոցով հեղինակը շատ լաւ բնորոշում է Բագարանի բուրմերին, այժմեան քուրմերի նախատիպարներին:

Ինչ վերաբերում է բովանդակութեանը, մեզ վերին աստիճանի անյաջող է թւում վէպիկի գաղափարը:

Ոխակալութիւնը, արիւնավրէժը ինքն ըստ ինքեան վայրենի և բասմենլի բան է և միմիայն բացառիկ զէպքերում կարող է համարուել թոյլատրելի, ես աւելի պարտադիր, մինչև անդամեթ է դատելու լինենք ոչ թէ մի հոգևորականի, այլ նոյնիսկ աշխարհականի տեսակէտից:

Ինչո՞վ ուրեմն բացատրել, որ մի հոգևորական, ինչպէս է հ. Ս. Երեմեանը, իր ոգևորութեան առիթ և նիւթ է ընտրել Տուրի պէս մի քսու մարդու մահուան համար կատարուած վրէժխնդրութիւնը:

Մեզ համար այդ անհասկանալի է մնում, ինչպէս անհասկանալի է առհասարակ այդ ամբողջ «ազգավէպի» արիւնսարբուտունը:

«Ներողամիտ, ոչխարամիտ և աննկարագիր թագաւորներուն օրով է, որ Հայաստանի լոյսը խաւարեցաւ», ասում է Տուրիինը:

Միթէ այդ չարիքը կարելի է դարմանել մարգակերական բնազգներ զարթեցնելով և զարգացնելով ընթերցողի մէջ: Չեմ կարծում:

Համակրելի հերոսը կարող է ստիպուած լինել արիւն թափել, կարող է նոյնիսկ իր սրբազան պարտականութիւնը համարել այդ, բայց նա չէ կարող արիւնարբու լինել:

Մեզ թւում է, հէնց նոյն ազգային անցեալում հ. Երեմեանը կարող էր աւելի լաւ, աւելի համակրելի նիւթ գտնել իր գաղափարը լուսաբանելու համար, և թէ նրա գաղափարը գաղափարն է եղել դատաւիտել մեր ազգի կնասութիւնը և մեղկութիւնը:

Տ. Յ.

Միջիջ Մարիկեանց, «ՄԵՐՈՒ ԱԼԹՄԸ». բանաստեղծութիւններ. հրատարակութիւն Աւետիս Տէր-Սարգսեանցի. 40 էր. դ. 20 կ. Թիֆլիս, 1903 թ.:

Պ. Մկրտիչ Մարիկեանցը շատ փափկասիրտ բանաստեղծ է: Նա չէ կարող անսնել, թէ ինչպէս «մի զեռուն կարիճ՝ անզօր թևերով պտոյտ է դալիս իր լամպարի լոյսի շուրջը», և չը խանդաղատուելու Իսկ երբ նա խանդաղատում է, բնականօրէն վերցնում է գրիչը և բանաստեղծութիւն է գրում:

«Տես ինչպէս է նա երերում, տանջում,
Կարծես համբուրում է քո հոտը վանդակ,
Ախ գիտեմ, գիտեմ միայն մի վայրկեան,
Եւ նա պիտ աջուրի. քեզ համար կատակ»:

Սակայն պ. Մարիկեանը բանաստեղծ է և ուրեմն տրամա-
գրութիւնների գերի: Երբեմն նա սաստիկ խտտախրտ է դառ-
նում: Վերցրէք օրինակ՝ նրա այն ոտանաւորը, որ նուիրուած
է օր. Մար... Մար...-ին:

Տեսէք որքան անդուծ է այդ զէսքում պ. Մարիկեանցը.

«Ես ուզում եմ յարուցանել
Մի կօլիզիայ*) .քո սրտում,
Որ ինձ նման ակուր դու էլ,
Ախ-վախ քաշես այս երկրում...
.....

Բայց և այնպէս երկնքի տակ
Ես չեմ կարող չունչ քաշել,
Մինչ չաանեմ վեհ յազթանակ,
Մինչ մի կեանք չդառնայնեմ»:

Բացի այդ հատուածներից՝ ընթերցողը կարող է գաղա-
փար կազմել պ. Մարիկեանցի տաղանդի մասին նաև այն գիւ-
տով, որ նա արել է հայկական տաղաչափութեան մէջ:

Այնտեղ, որտեղ ոտը պակասում է, պ. Մարիկեանցը ա-
ռանց այլեայլութեան դնում է «նա» գերանունը:

Ահա օրինակ.

«Անքուն, յողնած, իբր պահապան,
Քեզ կհսկեմ ողջ գիշեր,
Որ չար դեր մարդանման,
Մա .քո վզով չխարուեր»:

Դուք կարող էք նկատել, որ այդտեղ բայի ժամանակները
անկանոն են գործ դրուած, բայց այդ բծախնդրութիւն կը լինի
ձեր կողմից:

Եթէ ես ուզէի բծախնդիր լինել, կը նկատէի, որ պ. Մա-
րիկեանցը չէ հասկանում կօլիզիա բառի նշանակութիւնը, ա-
ռաջ կը բերէի նրա ոտանաւորներից անթիւ քերականական
սխալներ և անմիտ դարձուածքներ, ինչպէս օրինակ՝ «ցող վար-
դի նման արցունքի շիթեր», «տաք սիրտս փափուկ», «երգ ցա-
ւատանջ լի կսկիծ», «հաւատում եմ, որ չուտով, դեռ վաղ»,
«մի կոյս արցունքից եփուած», «մեղմացիր կապանքներ» և այլն

*) Այդտեղ պ. բանաստեղծը մոռացել է ծանօթութիւն դրել—տես բա-
ւարան Միխէլսօնի:

կային, բայց ինչ նշանակութիւն ունի այդ բոլորը, քանի որ հարցը հայ բանաստեղծի մտայն է, իսկ մեզ վաղուց յայտնի է, որ մեր բանաստեղծներից տասից իննի համար՝ ինչպէս ուսմանընդհատում են՝ ոչ մի օրէնք չէ գրուած:

Տ. Յ.

Գ. Ե. «ԱՆԳՈՐԾ ԿԱՆԱՅՔ». «ԱԶԽԵՆ». 68 հր. դ. 10 կ. Քաղու, 1903 թ.

«Աշխէն»ը մի վէպիկ է պօլսահայերի կեանքից: Վէպիկի հերոսուհին «անգործ կանանցից» մէկն է: Ի բնէ նա լաւ յատկութիւններով է օժտուած, բայց կեանքի պայմանները և զբոսաւորապէս անգործութիւնը անբարոյականացնում են նրան և խորտակում նրա բազդը և նոյնիսկ կեանքը:

Իսկապէս ասած, այն ենթադրութիւնը, թէ անգործութիւնըն է եղել Աշխէնի անբարոյականացման գլխաւոր պատճառը, մենք անում ենք՝ հիմնուելով վէպիկի «Անգործ կանայք» ընդհանուր վերնադրի վրայ: Ինչ վերաբերում է վէպիկի բովանդակութեանը, նա այնքան հակասական կէտեր է պարունակում իր մէջ, որ ընթերցանութիւնից յետոյ չէ որոշուում այն հարցը, թէ ինչ է ուղում ասել հեղինակը իր գրուածքով: Վէպիկի հերոսուհու, Աշխէնի պատկերը վերարտադրուած է անորոշ և խառն կերպով, այնպէս՝ ինչպէս դուրս են գալիս լուսանկարները, երբ մարդ շարժւում է լուսանկարուելու բողբոջ: Գոնէ իմ երևակայութեան մէջ շարժւում և խառնում են օրիորդ Աշխէնի համակերպի գծերը, երբ ես կարդում եմ, որ նա մեռել է «աններելի մի հիւանդութիւնից»:

Բաւական էր, որ Դիւման իր հերոսուհուն մեռցնէր ոչ թէ թորախտից, այլ «աններելի մի հիւանդութիւնից», որպէսզի «կամեղիազարդ աիկինը» կորցնէր իր ամբողջ հրապոյրը և նոյնիսկ իմաստը:

Վէպիկի միւս տիպերն էլ դժգոյն են և անորոշ:

Վէպիկը գրուած է կոկ ու կանոնաւոր լեզուով: Ճիշտ է, պատահում են երբեմն այսպիսի նախադասութիւններ՝ «Այս հագած, շորերը մի քանի բառեր սովորած և ունեցած համբաւիս մասին մի մտածիլ լաւատեսի նման», բայց այդ պէտք է վերագրել սրբադրողի անհոգութեանը:

Տ. Յ.

Յարուքիւն Թումանեանց. «ՀԱԶԱՐԱՆ-ԲԼԻՌԻԼ», Ֆէէրիա. Երեք արարուածով և չորս պատկերով. (արտատպուած «Լուսախից»), 71 հր. գ. 30 կ. Թիֆլիս, 1902 թ.

Պ. Յարութիւն Թումանեանցի «Ֆէէրայի» գործողութիւնը կատարուած է «Վանայ ծովակի շրջակայքում հեթանոսական դարերում»:

«Ֆէէրայի» բովանդակութիւնը մի կատարեալ «հարիսա» է ժողովրդական հէքիաթներէց և հին բնեռագիրներէ մէջ պատանող անուաններէց:

Մաննայի թագաւորը ուզում է մի ճաշխարհիկ պալատ կառուցանել: Երկու անգամ նա արդէն չինել ու քանդել է պալատը, որովհետեւ, ինչպէս ողին ասում է նրան.

«Աշխարհիս վերայ ամեն կատարեալ

Ու լիակատար կատարելութիւն

Կարօտ է դարձեալ կատարելութեան»:

Երրորդ անգամն էլ պալատը պէտք է աւերուի, որովհետեւ, չը նայելով ամբողջ շքեղութեանը, նրան պակասում է դարձեալ մի բան, սակայն այս անգամ ողին խղճում է Մաննայի թագաւորին և յայտնում է դազանիքը.

«Նոր չէնքիդ համար պակաս է միայն

Հազարան-բլբուլ անդին թռչունը...»

Մաննա թագաւորի կրտսեր որդին, Սուրէնը, յանձն է առնում դնալ բերել Հազարան-բլբուլը: Նա խիզախ է և անվեհեր: Նրա մեծ եղբայրները, Հրանտ և Պարէտ, ծիծաղում են նրա վրայ: Բայց ստիպուած նրանք էլ են հեռանում պալատից իբր թէ Հազարան-բլբուլը բերելու համար: Սուրէնը յաղթելով անթիւ արդելքների և կեանքը վտանգի ենթարկելով, վերջ ի վերջոյ յաջողեցնում է տիրանալ Հազարան-բլբուլին: Սակայն ճանապարհին եղբայրները բռնում են նրան, պցում են մի հորի մէջ և բլբուլը առած գալիս են պալատը ու հաւատացնում բոլորին, թէ իրանք են բռնել բերել Հազարան-բլբուլը: Բայց Սուրէնին հորից ազատում է մի պառաւ կին: Սուրէնը ծպտած կերպով, դիմակաւոր (?), իբր մի բանաստեղծ, գալիս է պալատը հէնց այն ժամանակ, երբ հանդէս է կատարում ի պատիւ նրա մեծ եղբայրների, և բանում է գազտնիքը, վիպասանութեան ձևով պատմելով եղելութիւնը: Յանցաւորները մնում են ամօթահար և մահուան պատժից ազատուած են միմիայն Սուրէնի խնդիրքի և ոգու միջնորդութեան շնորհիւ, իսկ Սուրէնը ի հարկէ փառաւորում է:

Ֆէլերիան գրուած է ստանաւորով, որի դրական արժէքը
չափելու համար բաւական են հետեւեալ օրինակները.

«Օ՛, Պարնիս, Հալլիա, Տիասպաս,
Արքային երկար կեանք ու օր տաս.
Յարածամ թող լինի նա յաղթող,
Որ սփռէ թշնամուն ահ ու դող.
Արամազդ, Անահիտ ու Յանէ,
Արքայի զաւակաց դու պահէ...»

(42 կր.)

«Խնդրեց, աղերսեց, որ թողնենք ահեղ
Ու մեր յանդուզն մտադրութիւնը...»

(52 կր.)

«Երկու չարանենգ եղբայրները վատ
Անտառի խորքում նստան յուսահատ...»

(60 կր.)

Տ. Յ.

«ԱՌՈՒՐԵԱՆ». Հայ կանոնց օրացոյց-հանդէս. 1903 թ. Առաջին տարի. խմբագրեց
Տիկին Նուարդ Ափիմեան. 122 եր. գ. 50 կ. Ալեքսանդրօպօլ:

«Ախուրեանը» սովորական համառօտ օրացոյց է, որին իբր
յաւելուած կցուած է մի փոքրիկ ֆէմինիստական ժողովածու,
ֆէմինիստական բառի ընդարձակ նշանակութեամբ:

Ժողովածուն սկսուած է մի վերին աստիճանի անդրագէտ
յօդուածով, որ՝ պէտք է յուսալ՝ խմբագրական յօդուած չէ, թէև
անստորագիր է: Յօդուածը կրում է «Մօր նշանակութիւնը»
վերնագիրը և պարունակում է ի միջի այլոց այսպիսի մի պար-
բերութիւն (բերում ենք ամբողջը՝ վերջակէտից վերջակէտ) —
«Այն ընտանիքի մայրը, որի աչքի առաջն է իւր պարտաւորու-
թիւնների իգէպը, որովհետև նա գիտէ, որ այս տաղակալի մօ-
ղայիկից պէտք է զեղեցիկ տեսարան դուրս դայ»:

Արդարութիւնը պահանջում է ասել, որ այդ յօդուածը
միակ անդրագէտն է ամբողջ ժողովածուի մէջ, որ ընդհանրա-
պէս կազմուած է յաջող կերպով:

Ընթերցողներին ժողովածուի բովանդակութեան մասին
զազափար տալու համար բերում ենք յօդուածների ցանկը.

1) «Կնոջ դերը». Մառի. 2) «Դաստիարակութիւն իգական
սեռի». Մառի. 3) «Երեխաների ստախօսութիւնը» (Բեռնէի ման-
կավարժական նամակներից). 4) «Յղի կնոջ և ծննդկանի կեն-
ցաղավարութիւնը». կին բժիշկ Վ. Ա. Վօլկէնշտէյն. 5) «Ինչ-
պէս պէտք է խնամել նորածնին» (քաղուածք ЖУКЪ-ից և Car.

net de Bébé-ից. Ա. Բուզուղեան-Նազարեան. 6) «Թնչպէս պէտք է կերակրել ծծկեր մանուկներին». թարգմ. տիկին Ս. Բարայեան. 7) «Մի փոքրիկ յիշողութիւն» (խուլ ու համրների զպրօցը Վիէնայի Դեօբլինգ արուարձանում). տիկին Տիրուհի Կոստանեանց. 8) «Սրբուհի մայրապետ Գալֆայեան» (կենսագրութիւնը և պատկերը). 9) «Տիկին Սրբուհի Տիւսաբ» (կենսագրութ. և պատկերը): 10) «Տիկին Զապէլ Տօնէլեան (Սիպիլ)» (կենս. և պատկերը). 11) «Ղազարոս Աղայեանց» (կենսագրական և զըննագատական ակնարկ և պատկերը). Մ. Յար. 12) «Թոքախտաւոր հօր կտակը իւր էմմա դստեր». («Հիւանդ սէր»—Մանուկացա). 13) «Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւններ. 14) «Մանկական օրինակելի գրադարան». (քաղուածք պ. Յ. Տէր-Միրսաբեանի «Դեռահասաների ազատ ընթերցանութիւնը» գրքից): Կանանց օրացոյցի բովանդակութիւնը կարող էր ի հարկէ աւելի հարուստ լինել, բայց չը պէտք է մոռանալ, որ այս առաջին փորձն է:

Փողովրդական գրադարան. Էդմօն Թեռի. «ՎԱՐԺԱՊԵՏԸ». Փրանս. թարգմ. Լևոն Մ.-Ար. 20 էր. գ. 5 կ. Թիֆլիս, 1902 թ.:

Էդմօն Թեռի մեզ պատմում է մի միջնադէպք ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակից, մի պատկեր յաղթական գերմանացիների վայրագութիւնից, ֆրանսիացի զիւղական ուսուցչի մի սխրագործութիւն:

Մի տարի, միմիայն մի տարի, Ֆրանսիայում տեղի ունեցան այնպիսի դէպքեր, որոնց նմանը ամեն օր կատարւում է Թիւրքիայում, և այդ մի տարուայ դէպքերը ստեղծեցին մանրավէպերի մի ամբողջ գրականութիւն:

Այդ մանրավէպերիցն է և Էդմօն Թեռիի գրուածքը, որ պ. Լևոն Մելիք-Աղամեան թարգմանել է ֆրանսերէնից:

Թարգմանութիւնը շատ յաջող է:

Տ. Յ.

Կոմս Լեւ Տօլստօյ. «ԱՍՏՅՈՒՆ ԹԷ՞ ՄԱՄՕՆԱՅԻՆ». թարգմ. Յով. Ստեփանեան. 18 էր. գ. 3 կող. Բագու. 1903 թ.:

Լե Տօլստօյի,—կարծեմ նա չէ ուզում, որ կոմս տիտղոսը կցուի իր անուան հետ,—«Աստծուն թէ մամօնային» գրքոյկը մի ողբերուած քարոզ է գինու, օղիի և առհասարակ ողելից խումիչքների գործածութեան դէմ:

Լև Տօլստօյը պախարակում է ոչ միայն հարբեցողութիւնը, ոչ միայն թէկուզ երբեմնակի զինովանալը, այլ և ողելից բմպելիքների ամենաշափաւոր գործածութիւնը:

Տօլստօյը միակ մարդը չէ, որ կուում է զինու գործածութեան դէմ: Ժուժկալութեան քարոզը մի ամբողջ հասարակական հոսանք է: Տօլստօյի զբքոյիլը, ինչպէս և բժշ. Վահան Արժրունու «Մի խմիր» զբքոյիլը, այդ ընդհանուր հոսանքի արտայայտութիւններն են:

Բժիշկները վիճում են: Ոմանք պնդում են, թէ ողելից բմպելիքները վնասակար են նոյնիսկ ամենափոքր չափով գործածելիս, միւսները ընդհակառակը՝ այն կարծիքն են յայտում, թէ այդ խմիչքները չափաւոր գործածութեամբ ոչ միայն անվնաս են, այլ և օգտակար:

Տօլստօյը բժիշկ չէ, բայց համաձայն է այն բժիշկների հետ, որոնք պնդում են, թէ ողելից բմպելիքները թոյն են պարունակում և ուրեմն վնասակար են, ինչ չափով էլ գործ ածուեն:

Թարգմանութեան մէջ պատահում են ռուսարանութիւններ, օրինակ «զիմաւորել տօներին» (встрѣчать праздники), և այնպիսի անհասկանալի անկանոնութիւն, ինչպէս՝ «տարածութիւնները բանուած է», «հիւանդութիւնները յատաճանում է»: Ասում ենք անհասկանալի, որովհետեւ թարգմանութեան ոճը ընդհանրապէս զրազէս է:

S. Յ.

Dr. Antonius «ՎԱՐԴԱՊԵՏ». Լեհաստանի հայերի պատմութեան վերջին երեսը. թարգմ. Մ. Բարխուդարեան. 47 էր. դ. 20 կ. Բագու 1903 թ.:

Ինչպէս յայտնի է, Հայաստանում շարունակ տեղի ունեցող սարսափներից փախած հայերի մի մասը դաղթեց Լեհաստան և այնտեղ 17-րդ դարում կաթօլիկութիւն ընդունելով՝ ձուլուեց լեհերի հետ:

Այդ կրօնափոխութիւնը մեր պատմութեան ամենաախուր և միանգամայն ամենահետաքրքրական էջերից մէկն է:

Dr. Antonius-ի «Nowe Opowiadania Historyczna» զբքում մի հատուած կայ «Wartabied» վերնագրով, որի մէջ պատմուած է մի միջնագէտ այդ կրօնափոխութեան պատմութիւնից: Այդ հատուածի ռուսերէն թարգմանութիւնը տպուել է «Научное Обозрѣніе» ամսագրի 1901 թ. №№ 6 և 7-ում: Ռուս թարգմանիչը, Ս. Պիօրովսկի, կցել է իր թարգմանութեանը մի յաճարտ, 1903.

ուջարան: Պ. Մկր. Բարխուդարեանը սուսերէնից թարգմանել է և՛ այդ յառաջարանը, և՛ «Վարդապետ» հատուածը:

Գրքոյկի բովանդակութիւնը ընդհանրապէս շատ հետաքրքրական է, բայց սոռանձնապէս հետաքրքրական է կոյս Սեֆերովիչի տիպը, որ կարող է լաւ նիւթ աւել մի գեղեցիկ պատմական վէպի կամ դրամայի համար:

Սեֆերովիչ կոյսը իր խելքի և երկաթէ բնաւորութեան շնորհիւ կարողանում է մեն-մենակ մարտնել այնպիսի ահուկի հակառակորդների դէմ, ինչպէս են եզուխաները, որոնց համար միշտ աչքի փուշ է եղել հայ եկեղեցու ինքնուրոյնութիւնը և հայերի հաւատարմութիւնը իրանց ազգային եկեղեցուն:

S. B.

Памятная книжка Эриванской губернии на 1902 годъ. Հրատ. Երևանի նահանգական ստատիստ. կոմիտ.

Հրատարակութիւնը մի ամփոփ զազափար է տալիս Երևանեան նահանգի մասին:

Երևանեան նահանգը՝ ինչպէս յայտնի է՝ անցաւ ռուսաց ձեռքը 1828 թ. համաձայն Թիւրքմէնչայի դաշնագրի: Կազմուելով Նախիջևանի և Երևանի խանութիւններից՝ նա սկզբում կոչուեց Հայկական նահանգ: Այս մասը ուսումնասիրութեան ենթարկուել է առաջին անգամ 1829 թ. Շուլչնի ձեռքով Պասկևիչի կարգադրութեամբ: Այս ուսումնասիրութեան արդիւնքն էր «Историческій памятникъ состоянія Армянской области въ эпоху присоединенія ея къ Россіи», որը այժմ շատ հազազիւտ մի աշխատութիւն է դարձել: 1856 թ. Հայկական նահանգը սնուանուեց Երևանեան նահանգ, ինչ անունով որ նա կոչուում է մինչև այժմ:

Աւելի քան 476 երեսներից բաղկացած այս հրատարակութեան առաջին մասը (100 երես) բռնում է ռուսաց, հայոց և հռովմէական օրացոյցները և զանազան հիմնարկութիւնների ու պաշտօնական անձերի ցուցակը, որոնք շատ քիչ առնչութիւն ունեն հրատարակութեան բուն նպատակի հետ:

Երկրորդ մասից միայն սկսւում են վիճակագրական տեղեկութիւնները, որոնցից երևում է, որ Երևանեան նահանգը բաղկացած է եօթ, այն է՝ Երևանի, Ալէքսանդրօպօլի, Նախիջևանի, Շարուր-Դարալագեազի, Նոր-Բայազէթի, Սուրմալուի և Էջմիածնի զաւոններից իրանց 25 գաւառամասերով, 110 գիւղական հասարակութիւններով և 1334 զիւղերով: 1886 թ. վիճակագրութեամբ նահանգի բնակիչների թիւը եղել է արական

սեռից 365,746 և իրական սեռից 311,708, ընդամենը 677,454, այն ինչ՝ 1897 թ. միօրեայ ընդհանուր վիճակագրութեամբ նըրանց թիւը հասել է արական սեռից 429,689, իրական սեռից 375,068, ընդամենը 804,756, ասել է՝ 11 տարուայ ընթացքում աղյուրնակութիւնը աճել է 18⁰/₀-ով աւելի:

Այս մասում մի առանձին ցուցակ տալիս է նահանգի ուսողման պատկերը: Իւրաքանչիւր ջրաբաշխական շրջան իր ակունքներով ու գետերով և նրանց շրջանում գտնուող գիւղերի ցուցակներով առաջ են բերուած մէկիկ-մէկիկ, որից նկատելի է, որ նահանգում հաշոււմ է 16 ուսողման շրջաններ իրանց ջրուղիաներով (միրաբ-դայբէկի), որոնք ձգուած են զլիւսաորապէս զաշտային մասերում, այն է՝ Երևանի, Շարուր-Գարալազեաղի, Էջմիածնի և Նախիջևանի գաւառներում:

Գրքի երրորդ մասում ամբողջ 100 երեսների վրայ առաջ է բերուած 1300-ից աւելի գիւղերի մանրամասն ցուցակն իրանց շրջաններով և գտառարածիւններով առանձին-առանձին:

Այս մասը այնքան հետաքրքրութիւն է ներկայացնում, որ իւրաքանչիւր ժողովրդի կեանքով հետաքրքրուող անձ մեծ բաւականութեամբ թերթում է այն անվերջ ցանկը, որտեղ իւրաքանչիւր գիւղի անուան զիմաց առանձին սիւնեակներում առաջ են բերուած ծխերի թիւը, գիւղական այլեայլ ծախքերի, ջրուղիաների և ջրբաժանների, ուսումնարանների պահպանութեան և վերջապէս ճանապարհների ու առուների ծախքերի չափը: Բերուած են նոյնպէս իւրաքանչիւր գիւղի ունեցած հողերի, նրանց բերած եկամտի, ինչպէս և՛ հարկերի քանակը 1900 թ. ընթացքում:

Այսպէս օրինակ՝ ամբողջ նահանգում հաշոււմ է 1,280,094 գեսետտին հող 9,080,222 ռուբլի նկամտով, որից վերցնոււմ են պետական հարկ 570,395 ռուբլի, տեղական ազմինխտրացիայի պահպանութեան համար 400,599 ռ. և տեղական ծախքեր 290,824 ռ., ընդամենը 1,261,818 ռ.:

Այս մասում առաջ է բերուած 1900 թ. իւրաքանչիւր բերքի համար պարապեցրած տարածութիւնը, բերքի քանակը և արժէքը ջուկ-ջուկ, որը ցոյց է տալիս, թէ ինչ բերք ինչ չափով է զարգացած եղել և իր բունած տարածութեամբ ու արժէքով որքան չահաւէտ ժողովրդի համար:

Ահա այդ ցանկը.

	ցանուած է եղիլ դեսևատին	բերք է ստացուի четверть (6 փութ)	արժէքը	
			բ.	կ.
Ցորեն	166,154	1,785,724	12,462, 00	
Գարի	58,586	505,834	1,748,000	
Բրինձ	8,737	2,308,072	2,886,000	
Կարտոֆիլ	4,252	30,032	96,000	
Բամբակ	15,257	382,035	3,606,000	
Խաղող	10,298	2,047,211	1,024,000	
Պտուղներ	2,868	104,707	209,000	
Խոտ		11,620,000	2,888,000	

24,919,000

Եթէ այս բերքերի եկամտի վրայ սուկուցնենք նաև մի քանի այլ ազրիւրներից ստացուած եկամուտը, այն է՝

Անասնապահութիւնից	1,157,000
Քեոնակրութիւնից	452,000
Գործարանական արդիւնքներից	1,337,000
Չեռագործ արհեստներից	399,000

3,345,000

Բոլորը միասին կը լինի 28,264,000: Նշանակում է Երևան նահանգի 1900 թւի բերքը վերածելով զրամի՝ հաւասար է եղել 28,264,000, որը եթէ բաժանենք բնակիչներին՝ այն է՝ 804,756 հոգու վրայ, կը ստանանք 35 բ. 10 կ. իւրաքանչիւր հոգու համար, դեռ չը հաշւած վճարելիք հարկերը և նահանգում եղող 1,157,000 կենդանիների ուտեստը:

Այս մասում առաջ է բերուած նաև եկեղեցիների և մշակիթների ցանկը ամբողջ նահանգում, որից երևում է, որ ուսաներն ունեն 26 եկեղեցի, 2 աղօթատուն, հայերը 470 եկեղեցի, 28 վանքեր, իսկ թուրքերը 310 մզկիթներ: Ընդամենը 836 աղօթատեղիներ:

Չորրորդ բաժինը, որը կազմում է զրքի 2/5 մասը, նուիրուած է ամբողջովին նահանգի ֆեղիկական տեղագրական նրկարագրութեան—սահմանների, լիւսների, հարթութիւնների, գետերի, լճերի, հանքերի, հանքային ազրիւրների և այլն: Մեծ տեղ են գրաւում նաև արօտատեղիները իրանց զրաւիչ և հմայող տեսարաններով, հողագործութեան ճիւղերով, մշակութեան ձևերով և այժմ գործածական գործիքների յիշատակութեամբ, այգեգործութեան, պինեգործութեան, բրնձի մշակութեան, և վերջապէս բամբակագործութեան նուիրուած երեսները: Այժմ բամբակագործութիւնը՝ ինչպէս երեսւմ է՝ Երևանի նահանգում

գոյութիւն է ունեցել շատ հին ժամանակներէց: Այսպէս՝ ուսները 1827 թւին անրելով Երևանին՝ դասն մասնաւոր հողատէրերի մօտ և Հուսէին-խան Սարգարի ամբարներու՝ որպէս սասնորդ հարկ՝ բաւական քանակութեամբ բամբակ, բայց չընորհիւ մշակման ընկած գրութեան՝ այդ բերքը չէր արտահանուում մեծ չափով մինչև 1884 թիւը՝ երբ մեզմտում մուտք գործեցին Ռուսաստանի յայտնի ֆիրմաներ՝ իրանց հետ բերելով ամերիկական տեսակի սերմը, որից յետոյ բամբակագործութիւնը արագ կերպով առաջ գնաց՝ այժմ կազմելով արտահանութեան առաջին ճիւղը, արտադրելով կէս միլլիօն պուղից աւելի բամբակ:

Բացի այդ եթէ ի նկատի առնենք միշտք տեղեկութիւններ գորգագործութեան կրթական գործի և այգեգործական ու բանջարաբուծութեան, մասին մասնաւորապէս մի երկու մասերում, կը տեսնենք, որ գրքի այս մասը իր բազմակողմանի և ընդարձակ տեղեկութիւններով մի ամփոփ գաղափար է տալիս մեր նահանգի մասին:

Գրքի հինգերորդ մասը նուիրուած է նահանգում զբաղուած սեպածն արձանագրութիւններին և պատմական հնութիւններին՝ վերջրած Մ. Վ. Նիկոլսկու «Клинообразныя надииси Закавказья» աշխատութիւնից: Այս մասում բաւականին մանրամասն առաջ են բերուած Դաշբուաունի և Արմաւիրի չրջաններում եզոզ արձանագրութիւնները, որոնցից առաջինը ընկած է Սուրմալուի, իսկ երկրորդը էջմիածնի գաւառներում:

Այստեղ պատմական հնութիւններից ի միջի այլոց յիշուած են էջմիածինն ու Խորվիրապը որպէս ամենահին սըրբաւայրեր, որոնք գոյութիւն ունեն Գրիգոր Լուսաւորչի օրերից:

Գրքի վերջում կցուած է Երևանեան նահանգի էանօգրաֆիական բաւականին լաւ կազմուած քարտէզը:

Այս հրատարակութեան կարեօրութիւնը ի նկատի առած՝ շատ ցանկալի էր հրատարակուած տեսնել նաև միւս երկու մասերը, որոնք նուիրուելու են յատկապէս ժողովրդի նիստ ու կացին, համայնական կարգերին, սովորութիւններին ու հաւատալիքներին, մի խօսքով նրա ամբողջ կենցաղին:

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Prêtre Michel Tamarati. Histoire du Catholicisme en Georgie, avec les documents justificatifs du XIII au XX siècle, Թիֆլիս, 1902 թ. զինն է 2 ր.:
- 2) Հաչիւ Նոր-Նախիջ. Հայագրի աղքատաց եկեղեցական հոգաբարձութեան 1896—1901 տարեչրջ. զարձուհեութեան:
- 3) Հայ ժողովրդական հէրիաթներ. Տիգր. Նաւասարդեանցի ժողովածու., IX-րդ դիրք, Թիֆլիս, 1903 թ., զինն է 50 կող.:
- 4) Էդմոն Թեոփ. Վարժապետը, Թարգմ. Լ. Մ. Ա., Թիֆլիս, 1902 թ., զինն է 5 կող.:
- 5) Էմինեան. Ազգապրական ժողովածու., հրատարակութեամբ Լազ. ճեմ. արեկ. լեզ., հատոր դ. ժողովրդական հէրիաթ, հաւաքեց Ս. Հայկունի, Մոսկուա—Վաղարշապատ, 1902 թ., զինն է 1 ր. 25 կող.:
- 6) Месропъ-Теръ-Мовсесіянъ. Исторія перевода Библии на армянскій языкъ, С. Петербургъ, 1902 г., цѣна 3 руб.
- 7) Dr. Antonius I. Վարդապետ, լեհաստանի հայերի պատմութեան վերջին երեսը, Թարգմ. Մ. Բարխուդարեան, Բագու, 1903 թ., զինն է 20 կող.:
- 8) Յ. աւ. քահ. Մարտիրոսեան. Հայոց եկեղեցու համառ. պատմ. գասադիրք, Թիֆլիս, 1903 թ., զինն է 35 կ.:
- 9) Բ. Խալաթեանց. Հայոց ժողովրդական զիւցազնական վէպ, Վիեննա, 1903 թ., զինն է 1 ֆր.:
- 10) Բ. Խալաթեան. Մի կարծիք հայ նախարարութեանց ծագման մասին, Պարիզ, 1902 թ.:
- 11) Քաջրերունի. Հայկական սովորութիւններ, արտատպ. Ազգապրական Հանդ. Թիֆլիս, 1903 թ.:
- 12) D-r: Akop Johannissian. Die Ueberführung der sek. sym. Brobmenzoylhydazide in Derivate des Furo (bb')diazols und Thio (bb')diazols, Heidelberg, 1902.
- 13) Agop Manandian. Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz. Marburg, 1903.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Նախարդիւնագործների XVII-րդ համաժողովը Բազում:

Նախարդիւնագործների համաժողովի մասին խօսելուց առաջ փորձենք մի պատմական հայեացք գցել նախարդիւնարեութեան վրայ:

Նախքը իբրև վառելանիւթ և իբրև բժշկական միջոց՝ մարդկութեանը վաղուց յայտնի էր: Դեռ Դանիէլ մարգարէի ժամանակում Աստուածաշնչի ԳՆ ԿԿ. 46-րդ համարում յիշուած է. «...դ՛նոցն բորբոքելոյ Նախիւ և ձիւթով»: Յունական և հռոմէական պատմագիրներից Ստրաբոն, Ապիանոս և ուրիշները թւում են այս ժամանակուայ նախի գուրս զալու տեղերը.— Զելանդիայում, Ճապոնիայում, Սումատրա, Ճաւա, Բոննէօ կղզիներում, Գալիցիայում, Վենդրիայում, Իտալիայում: Կովկասի նախքը, որ կենտրոնացած է զլիւսաւորապէս Ասլերոնեան թերակղզում, յայտնի էր դեռ հին դարերում: Բազուի չրջակայքը հռչակուած էր իր անշէջ կրակներով: Աշխարհի զանազան կողմերից Բազու էին գալիս բազմաթիւ ուխտաւորներ՝ սրբազան կրակին երկրպագելու, և այդ կրակապաշտների տաճարների մնացորդները մինչև այժմ կանգուն կան Բազուի մօտ՝ Սուրախանում:

Այդ անշէջ կրակների գոյութիւնը արդէն ցոյց է տալիս, որ Բազուի նախքը յայտնի էր շատ հին ժամանակներից:

X-րդ դարի պատմիչ արաբ Մասուդին իր ճանապարհորդութեան մէջ նկարագրելով Բազու քաղաքի և նրա չրջակայքի հրաշալիքները, այն է անշէջ կրակները և նախքը, այն ժամանակուայ Բազու քաղաքը յիշում է «Սաւաթաւ» անունով (ևրիի նախի առատութեան պատճառով): Բազուի նախի առատութեան մասին յիշում է նաև XIII-րդ դարի ճանապարհորդ

Մարկո-Պօլօն, որը ասում է. «այնտեղ կան մի տեսակ հորեր իւզով լիքը, որոնցից իւզը հանում բառնում են ուղտերի վրայ և տանում: Այդ իւզը գործադրում են ոչ թէ ուտելիղէնի հետ, այլ իբրև դեղ մարդկանց և անասունների համար, նաև լուսաւորութեան համար»: Իբրև վառելանիւթ՝ Բագուի նաւթի մասին յիշում է մեր պատմագիր Կիրակոս Գանձակեցին, որը ասում է, թէ «Չաքարէ Սպասալարը Արդաբիլ քաղաքը առնելու համար հրամայեց նաւթ սրսկել և վառել»:

Վերջին ժամանակներում Բագուի հին նաւթահորերից մէկում գտնուած մի քարի վրայի արձանագրութիւնից երևում է, որ XVI-րդ դարից զուցէ և առաջ նաւթը արգիւնաբերութեան աղբիւր էր դարձած: Այդ քարի վրայ գրուած է, որ այդ «հորը ընծայուած է Ալլահ-եարըմի որդի Մուհամմէդ Նուրային հիշրայի 1003 թ., այսինքն մեր թւականով 1594 թ.:

Իսկ XVIII-րդ դարի ճանապարհորդների վկայութիւններից երևում է, որ նաւթը սկսել էր գեր խաղաղ տեղական արգիւնաբերութիւնների շարքում. այսպէս XVIII-րդ դարի կիսի ճանապարհորդ Գեմելինը նկարագրելով Բագուի նաւթի հորերը և նրանց քանակութիւնը, ասում է՝ որ «այստեղի հայերի վկայութիւնով Բագուի խանը նաւթից ստանում է տարեկան 40,000 այժմեան ուսական րուբլու արդիւնք: Մի քանի առատ հորեր քարերով ծածկուած են, կաւով ծեփուած և կնքուած, ոչ ոք իրաւունք չունի այդ հորերից օգտուելու, բացի խանից: Մի բաթման նաւթը (8 ֆունտ) ծախուում է 30 կոպէկով: Մեծ մասամբ տանում են Պարսկաստան և գործ են ածում զանազան հիւանդութիւնների դէմ և վառելու համար: Բագու են գալիս Պարսկաստանից և այլ տեղերից նաւթով բժշկուելու»:

Բագուի նաւթը արդէն այնքան յայտնի էր դարձել, որ երբ ուսաները Բագուն առան, Պետրոսը Մեծը մեծ ուշադրութիւն դարձրեց նաւթի արգիւնաբերութեան վրայ և հրատարակեց մինչև անգամ նաւթից օգտուելու իրաւունքների մասին առանձին կանոններ: Բայց որովհետև ուսաց առաջին տիրապետութիւնից յետոյ Բագուն նորից անցաւ պարսից ձեռքը, ուստի մինչև ուսաց վերջնական նուաճումը՝ այն է 1813 թ. Բագուի նաւթի արգիւնքից օգտուած էին պարսից խաները:

1813 թ. երբ Բագուն միացուեց ուսաց պետութեան, նաւթահորերը դարձան արքունի սեփականութիւն: Սկզբից ուսաց պետութիւնը ոչ մի ուշք չէր դարձնում նաւթի վրայ, և նաւթը ազատ էր հարկից, միայն 1820 թ. սկսած տէրութիւնը սկսեց կապալով տալ մասնաւոր մարդկանց նաւթահորերը մըշակելու համար: Արքունի զանձարանը տարեկան ստանում էր

մօտ 100,000 բուբլի արդիւնք: 1825 թ., ուսաց աէրութիւնը նորից սկսեց լինը մշակել, բայց մեաս կրելով՝ սկսեց կապարով սալ:

1813 թ. սկսած մինչև 1873 թ., այսինքն 60 տարուայ ընթացքում, Բագուի նաւթը առևտրական աշխարհում չնչին գեր էր խաղում. նախ՝ չը կային նաւթ անգափսիկու և կանոնաւոր հազորդակցութեան միջոցներ, երկըրորդ՝ չը կար որոշ հասկացողութիւն այդ նոր արգիւնաբերութեան մասին, և երրորդ՝ արգիւնաբերութիւնը մենաշնորհ էր գարձած, և չը կար մասնաւոր անձերի մրցութիւնս նաւթը մըշակում էր պրիմիաիւ ձևով հասարակ հորերից, հետևաբար հետևանքը չնչին էր, և տարեկան արգիւնաբերութիւնը հասնում էր 200—300 հազար պուգի: Բայց երբ պետութիւնը 1873 թ. ոչնչացրեց մենաշնորհի սխտեմը և թոյլ տուաւ մասնաւոր անձանց մշակելու, այն ժամանակ առաջ եկաւ սաստիկ մրցութիւն մասնաւոր անձերի մէջ, որը և ստեղծեց նաւթի արգիւնաբերութեան և արտահանութեան կատարելագործում միջոցներ: 1874 թ., այսինքն մենաշնորհը ոչնչացնելու հէնց առաջին տարին նաւթի արգիւնաբերութեան քանակութիւնը հասաւ 31½ միլլիօնի, իսկ այնուհետև հսկայական քայլերով առաջ գնաց. այսպէս 1900 թւին հասաւ 600 միլլիօնի, 1901 թւին 671 միլլիօնի, իսկ 1902 թ. 705, 912, 959 պուգի:

1902 թ. հոկտեմբերի 2-ին Բագում բացուած նաւթագործների XVII համաժողովում քննուած հարցերից հետաքրքրութեան արժանի են հետևեալները.

1. Գործարանային հրդեհաշէջների կազմակերպութեան գործը: Նաւթը իբրև վառելանիւթ՝ յաճախ ենթարկում է հրդեհներին, և այժմեան կազմակերպուած հրդեհաշէջների թիւը շատ անգամ մեծ հրդեհներին չէ բաւականանում. այս հարցը աւելի լայն քննելու և միջոցների մասին մտածելու համար նախկին համաժողովը յանձնել էր մի առանձին յանձնաժողովի քննելու և իր եզրակացութիւնը գեկուցանելու. համաժողովին: Յանձնաժողովը եկել էր այն եզրակացութեան, որ հրդեհների ժամանակ իւրաքանչիւր նաւթարգիւնաբերող պարտական է հրդեհի տեղը ուղարկել որոշ քանակութեամբ օգնական բանուորներ: Համաժողովը ընդունելով ժողովի այս առաջարկած սխտեմը՝ բնարեց մի յանձնաժողով իւրաքանչիւր գործարանաւորսջ կողմից ուղարկուելիք բանուորների թիւը որոշելու, միևնոյն ժամանակ այն յանձնաժողովին յանձնեց խորհրդակցել կայսերական տեխնիկական Բագուի բաժանմունքի ընկերու-

թեան հետ և ներկայացնել մի նախահաշիւ մշտական հրդեհաշէջների մեծ և կատարելագործուած խումբ ունենալու:

2. Համաժողովը ընդունեց առանձին ընտրուած յանձնաժողովի ղեկուցումը՝ նաւթի ընդհանուր պահեստներ ունենալու հարցի մասին:

3. Հարց էր բարձրացրուած՝ բանուորներին նախքան դործի մէջ ընդունելը ենթարկել բժշկական քննութեան, այսինքն արդեօք նրանց առողջութիւնը կը համապատասխանէ՞ կատարելիք դործին:

4. Բազում բարձրագոյն լեռնային զպրոց բանալու հարցը վճուեց գրականապէս և յանձնուեց օ հոգու՝ Սորճրզի հետ մշակելու ծրագիրը և ղեկուցանելու միւս համաժողովին. իսկ լեռնային ուսումնարանի չինութեան հարցը ժողովը բացասեց:

ՅՈՎ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն հրովարտակ.—Կառավարչական Սենատին տուած Բարձրագոյն հր-
րամանը.—Հոգատարութիւն գիւղատնտեսական կարիքներէ եւ գիւղական դա-
սակարգի մասին.—«Տեղային առանձնայայտութիւններ».—Ա. Սահակեանի զե-
կուցումը Անդրկովկասում զեմսովային հիմնարկութիւններ մտցնելու անհրա-
ժեշտութեան մասին.—Քիւղական դասակարգի դրութիւնը մեզանում.—Տեղա-
կան մամուլի դերը բարեկրօնումների հարցում.—Մի իրողութիւն, որի վը-
րայ ուշադրութիւն դարձրեց «Եսկը» թերթը.—Ախալցխայի ս. Փրկիչ եկեղե-
ցու կայուածների գործի ֆենութիւնը.—Դոգոյի յուշարձանի բացումը Քիֆլի-
սում.—† Սուխոյօ-Կորքիին.—† Ե. Մարկով.—† Գ. Բաղդե.—Մեւ-ծովեան եր-
կարողու ուղղութիւնը.—Վրաց դրամասիկական ընկերութեան մրցանակը.—
„Кавказ“ յրագրի պաշտօնական հաղորդագրութիւնը.—„Аргonautы“-ի դա-
րարումը.—Խուզադեանի կսակած գումարով ապաստան:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք Նիկօլայ Երկրորդ
Կայսր եւ Ինքնակալ Համայն Ռուսաստանի, Թագաւոր
Լեհաստանի, Մեծ Իշխան Փինլանդիայի եւ այլն եւ այլն
եւ այլն, յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հը-
պատակներին. Աստուծոյ նախախնամութեան հաճու-
թեամբ նախահայրերի դահը բարձրանալով՝ Մենք սըր-
բազան ուխտ արինք Ամենաբարձրեալի եւ Մեր խղճի ա-
ռաջ սրբութեամբ պահպանել Ռուս Տէրութեան դարա-
ւոր սիւները եւ նուիրել Մեր կեանքը սիրեցեալ Հայրե-
նիքի ծառայութեանը: Աչալուրջ հող տանելով մեր հը-
պատակների մասին՝ Մենք ընդունեցինք ժողովրդական
բարօրութիւնը իրագործելու ուղիները Մեր Ինքնակալ

Նախորդների և ամենից առաջ Մեր անմուաց Ծնողի արժանայիշատակ գործերի իմաստով: Ամենակարող Աստուծուն հաճելի էր Իր անքննելի անօրինութեամբ ընդհատել վաղաժամ մահով Մեր սիրեցեալ Ծնողի կայսերական աշխատութիւնները և դրանով դնել Մեզ վրայ սրբազան պարտականութիւն լրացնելու Նրա սկսած գործը, ամբացնելու կարգը և արդարութիւնը Ռուսաց Աշխարհում համապատասխան ժողովրդական կեանքի առաջ եկող պահանջներին: Ի մեծ վիշա Մեր՝ խառնակութիւնը, որ սերմանուած է մասամբ պետական կարգին թշնամի դիտաւորութիւններով, մասամբ էլ՝ ուսաց կեանքին խորթ սկզբունքներով յափշտակուելով, խոչընդոտ է դառնում ժողովրդական բարօրութիւնը բարուօրելու ընդհանուր գործին: Այդ խառնակութիւնը յուզելով մտքերը՝ շեղում է նրանց արդիւնարար աշխատութիւնից և յաճախ կորստի է մատնում Մեր սրտին սիրելի և իրանց ծնողներին ու հայրենիքին անհրաժեշտ մատաղ ոյժերը: Պահանջելով Մեր կամքի թէ բարձր և թէ ստորին կատարողներից հաստատուն կերպով դիմադրել ժողովրդական կեանքի կանոնաւոր ընթացքի ամեն խախտմանը և յուսալով, որ ամենքը և իւրաքանչիւրը աղնւաբար կը կատարեն իրանց ծառայական պարտքը, Մենք անյողգողգ վճռականութեամբ անյապաղ դժայցում տալու պետական հասունացած կարիքներին՝ բարուօր համարեցինք, որ հաւատի գործերի հետ շփուող իշխանութիւնները անշեղ պահպանեն կրօնական համբերողութեան աւանդները, սրտնք զձագրուած են Ռուսաց պետութեան հիմնական օրէնքների մէջ, սրտնք ակնածաութեամբ ընդունելով ուղղափառ եկեղեցին նախամեծար և աիրող, թոյլ են տալիս այլափառ և այլակրօն դաւանութիւններին պատկանող Մեր բոլոր հպատակներին ազատ կերպով դաւանել իրանց հաւատը և կատարել նրա պաշտամունքը, շարունակել կեանքի մէջ եռանդով անցկայնելու այն միջոցները, սրտնք ուզուած են դիւպական ուղղափառ հոգևորականութեան կարուածա-

կան գրութիւնը բարուօրելուն, ուժեղացնելով հողևորականների արդիւնաւէտ մասնակցութիւնը իրանց հօտի հողևոր և հասարակական կեանքի մէջ. ժողովրդական տնտեսութիւնը ամրացնելուն՝ վերաբերեալ առաջիկայ խնդիրներին համապատասխան առաջ տանել պետական կրիգիտային հիմնարկութիւնների գործունէութիւնը, մանաւանդ ազնւական և գիւղական կալուածական բանկերի, որպէսզի աւելի ուժեղ կերպով ամրապնդուի և զարգանայ ռուսաց գիւղական կեանքի հիմնական սիւնների բարօրութիւնը—հոգատէր ազնւականութեան և գիւղացիների. գիւղական օրէնսդրութեան վերաքննութեան վերաբերեալ Մեր դժագրուած աշխատանքները, երբ նրանք Մեր մատնացոյց արած կարգով կ'իրագործուեն, որպէսզի այնուհետև նրանք մշակուեն և համաձայնեցնուեն տեղական առանձնայատկութիւններին, պէտք է յանձնուեն նահանգական խորհրդակցութիւններին, մերձաւոր մասնակցութեամբ արժանաւորագոյն գործիչների, որոնք վայելում են հասարակական վստահութիւն. այս աշխատանքների հիմքում դնել գիւղական կալուածատիրութեան համայնական կարգի անձեռընմխելիութիւնը, որոնքով միեւնոյն ժամանակ միջոցներ գիւրացնելու առանձին գիւղացիների համար համայնքից դուրս գալը, ընդունել անյապազմիջոցներ վերացնելու գիւղացիներին ճնշող փոխադարձ պատասխանատւութիւնը. վերակազմել նահանգական և գաւառական վարչութիւնները, որպէսզի զեմստվային կեանքի բազմատեսակ կարիքներին անմիջապէս բաւարարութիւն տալու միջոցները ուժեղացնուեն տեղական գործողների աշխատանքներով, զեկաւարուելով ուժեղ և օրինաճանաչ իշխանութիւնից, որ խիստ պատասխանատու կը լինի Մեր առաջ. տեղական կենցաղի բարուօրման նպատակը դնել հասարակական կառավարութեան մերձեցումը ծրխական հագաբարձութիւնների գործունէութեան հետ ուղղափառ եկեղեցիներում այն տեղերում, ուր այդ հնարաւոր կը գատուի Կոչելով Մեր բոլոր հաւատարիմ հը-

պատակներին նպաստել Մեզ հաստատելու ընտանիքի, դպրոցի և հասարակական կեանքի մէջ բարոյական սկզբունքներ, որոնց միջոցով Ինքնակալ Իշխանութեան հովանու տակ կարող են միայն զարգանալ ժողովրդական բարօրութիւնը և իւրաքանչիւրի վստահութիւնը դէպի իր իրաւունքների ամբողջութիւնը, Մենք հրամայում ենք Մեր մինիստրներին և առանձին մասի գլխաւոր կառավարիչներին, որոնց վարչութեանը վերաբերում է այս, ներկայացնել Մեզ խորհրդածութիւններ Մեր նախագրծումների կատարման կարգի մասին: Տէր Ամենակալը թող առաքէ օրհնութիւն Մեր Արքայական աշխատանքի վրայ և թող օգնէ նա Մեզ՝ հայրենիքի բոլոր հաւատարիմ սրբիկների սերտ միութեամբ կատարելու Մեր խորհուրդները՝ կատարելագործելու պետական կարգը՝ հաստատելով տեղական կեանքի ամուր կազմ, իբրև գլխաւոր պայման Մեր Տէրութեան բարգաւաճման՝ հաւատի, օրհնքի և իշխանութեան ամուր հիմքերի վրայ:— Տրուած է Ս. Պետերբուրգում փետրուարի 26-րդ օրը, Քրիստոսի ծննդեան 1903 թւին, Մեր Թագաւորութեան իններորդ տարուաւ Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրուած է՝ ՆԻԿՈՂԱՅ:

Պետերբուրգից մարտի 20-ին Ռուսական Գործակալութեան հետագիրը. «Հրատարակուած է Բարձրագոյն հրովարտակ կառավարիչ սենատին: «Մշտական հողացողութիւն ունենալով Մեր ժողովրդի բարօրութեան մասին և գնալով Մեր Թագակիր նախնիների շաւիղներով, Մենք չէինք թողնում հողը՝ զիւղացիների վիճակը բարելաւելու՝ թեթեւացնելով նրանց վրայ ընկած հարկերի ծանրութիւնը: Այս նպատակով՝ համաձայն Մեր տուած ցուցումներին՝ 1896 և 1899 թւերին մշակուեցին և հաստատուեցին մի շարք միջոցներ, որոնց նպատակն էր թեթեւացնել գիւղական բնակիչների ամենածանր տուրքերի՝ հողաբաժինների գնման պարտքի հատուցումը՝ թոյլ տալով այս պարտքի չը վճարուած մասը յետաձգել և վերայետաձգել: Արա հետ միասին ձեռնարկուեց բարեփոխել այն կարգը, որ վերաբերում էր ժողովրդից սահմանաւոր (ОКЛАДНОЙ) հարկերը հաւաքելուն: Այս կանոնը հնուց ի վեր հիմնուած էր գիւղացիների

փոխադարձ պատասխանատուութեան վրայ տուրքերի վճարման վերաբերմամբ. բայց արդէն Մեր Օգոստոսիան Պապը, Ալէքսանդր II Կայսրը ձեռնարկեց այս սկզբունքը չափաւորելով՝ փոխադարձ պատասխանատուութիւնից դուրս հանելով սակաւ բնակչութեամբ գիւղերը: Ազատարար Թագաւորի կտակը իրաւործելով՝ Մենք 1899 թւի յունիսի 23-ի օրէնսդրութեամբ, որ գիւղային հասարակութիւնների նազելի հողերից սահմանաւոր տուրքերը ժողովելու կարգին է վերաբերում, նորից կրճատեցինք փոխադարձ պատասխանատուութեան ներգործութիւնը. սրա հետ միասին Մենք նոյն ժամանակ հրամայեցինք ֆինանսների մինիստրին՝ քննութեան աննկ փոխադարձ պատասխանատուութիւնը բոլորովին սնչչացնելու հարցը՝ սահմանաւոր տուրքերի վճարման մէջ: Ներկայումս ֆինանսների մինիստրից այս առարկայի մասին ենթադրութիւններ ստացուելուց և Պետական Խորհրդում քննուելուց յետոյ Մենք բարուոք համարեցինք համաձայն ներկայ թւականի փետրուարի 26-ին Մեր տուած հրովարտաւում արտայայտուած Մեր կամքին՝ վերացնել այն օրէնքները, որոնցով սահմանուած է տուրքերը վճարած գիւղացիների պատասխանատուութիւնը չը վճարածների համար, և դործադրութեան համար հաստատել նոր կանոններ, որ ամեն մէկը վճարէ իրանից պահանջուող սահմանաւոր տուրքերը: Այս պատճառով և հաստատ համոզուած լինելով, որ նոր օրէնքով գիւղացիներին շնորհուած թեթեւութիւնները կը նպաստեն աւելի ևս պահպանելու նրանց բարօրութիւնը՝ հրամայում ենք—այն տեղերում, ուր մտցրուած է 1899 թւի յունիսի 23-ին Բարձրագոյն հաստատուած օրէնսդրութիւնը, որ վերաբերում է գիւղային հասարակութիւնների նազելի հողերից սահմանաւոր տուրքերը ժողովելուն, վերացնել գիւղացիների փոխադարձ պատասխանատուութիւնը՝ սահմանաւոր պետական, հողային և համայնական հարկերը ժողովելիս՝ այն հիւքերի վրայ, որոնք Մեզանից այսօր հաստատուած են և Պետական Խորհրդից սահմանուած:

Վերջին տասը-քսան տարիների ընթացքում ուսական արդիւնագործութիւնը գտնելով կառավարութեան կողմից չափազանց հովանաւորումս, հաճեց վիթխարի թափով զլաս երկրների գիւղատնտեսական արդիւնաբերութեան ընդհանրապէս և գիւղական սպառող մասսայի բարօրութեան մասնաւորապէս: Գիւղատնտեսութեան և գիւղացիների վատթարացած դրութիւնը իր վրայ դարձրեց Բարձրագոյն իշխանութեան առանձին ուշադրութիւնը:

Ինչպէս դիտեն մեր ընթերցողները, անցեալ տարի Թագաւոր Կայսրը բարեհաճել էր նշանակել Առանձին Խորհրդակցութիւն գիւղատնտեսական կարիքների քննութեան համար: Մենք արդէն որոշ գաղափար առել ենք մեր ընթերցողներին՝ հարցերը պարզելու այն նոր ուղղութեան մասին, որ բարերար հետեանքներ պէտք է ունենայ իրերի ճշմարիտ գրութիւնը իմանալու համար:

Դէպի գիւղատնտեսութիւնը և գիւղական դասակարգը ցոյց առած Բարձրագոյն հոգատարութիւնը մեծ ուժով արտայայտուեց և՛ փետրուարի 26-ին հրատարակուած Բարձրագոյն հրովարտակի մէջ, որին յաջորդեց մարտի 20-ին կառավարչական Սենատին արուած Բարձրագոյն հրամանը: Այդ երկու նշանաւոր պետական կարգադրութիւնները առաջ են բերուած այս տեսութեան սկզբում:

Բարձրագոյն հրովարտակում նախագծած բեֆօրիսները և Սենատին արուած Բարձրագոյն հրամանը երկրի գիւղական դասակարգի դրութեան մէջ՝ ահագին փոփոխութիւններ պէտք է մտցնեն: Եւ եթէ ի նկատի ունենանք Բարձրագոյն հրովարտակում յիշուած թէ նահանգային ու գաւառական կառավարչութեան մէջ լինելիք բարենորոգումները ապակենսօրոնացման ուղղութեամբ և թէ օրէնսդրութեան վերաքննութեան աշխատանքների մէջ նաև տեղական գործիչների մասնակցութիւնը, ինչպէս և տեղային առանձնայատկութիւնների վրայ շեշտած Բարձրագոյն խօսքերը—պէտք է մեր ներկան համարենք մի նշանաւոր պատմական մօմենտ, երբ նոր ձևակերպութիւն են ստանալու ազգաբնակչութեան ահագին մեծամասնութեան կեանքի հիմքերը խորապէս շօշափող օրէնսդրական վերանորոգումները:

Յիշուած «տեղային առանձնայատկութիւններով» Ռուսաստանի մէջ ամենից շատ հարուստ է մեր Անդրկովկասը: Քանի որ խօսքը գիւղական դասակարգի մասին է, պատեհ ժամանակ է նկատել, որ մեր գիւղացիները մինչև այժմ էլ զանաւում են իրաւական մի քանի տյնպիսի յարաբերութիւնների մէջ, որոնք վաղուց վերացուած են Սերտովական Ռուսաստանում: Հէնց, օրինակի համար, վերջերք կալուածատէրերի հողերի վրայ ապրող գիւղացիների գրութիւնը. մինչդեռ ներքին նահանգներում կառավարութեան օգնութեամբ գիւղացիները կարողացան կալուածատէրերից յետ գնել իրանց հողաբաժինները, մեղանուժ բէգերը, խաները, իշխանները և այլն շարունակում են վայելիլ գիւղացիների մշակած հողաբաժինների վերաբերմամբ նախկին ոռւս կալուածատէրերի արտօնութիւնները: Այդ մասին տեղական մամուլը բազմիցս խօսել է, առիթ ենք ունեցել

նոյն այս էջերում գիտողութիւնները անել և մենք *), սակայն այն ժամանակ յարմար վայրկեանը չէր հասել, որ իշխանութիւնը ի նկատի առնէր մեր այդ տեղային առանձնայատկութիւնները: Այժմ երբ բարձրագոյն իշխանութեան ուշադրութիւնը ըզրադուած է գիւղատնտեսութեան և գիւղական գասակարգին վերաբերեալ հարցերով,—անշուշտ այլ հետեանքներ կ'ունենան իրերի գրութիւնը պարզաբանող բազմակողմանի հետազօտութիւնները և զեկուցումները:

Մենք արդէն տեսնք, թէ ինչ լրջութեամբ կ'ովհասեան Գիւղ. Ընկերութեան մէջ քննում էին երկրի գիւղատնտեսութեան բարեօրման հետ սերտ կապուած դանազան հարցեր: Այդ ընկերութեան մէջ կատարուած մի շարք զեկուցումներին աւելացաւ և պ. Ս. Սահակեանի զեկուցումը՝ Անդրկովկասում զեմստովային հիմնարկութիւններ մտցնելու անհրաժեշտութեան մասին: Ճիշտ է, այդ հարցը նոր չէր դնում մեզմոնում, ուրիշ ընկերութիւններ ևս, ինչպէս և մամուլը **), տարիներ շարունակ արծարծել են այդ կարևոր հարցը: Սակայն այժմ, երբ Առանձին Արհրգակցութիւնը ինքը եր գիմումներով հնարասրութիւն է ապրիս տեղային հիմնարկութիւններին ազատ արտայայտելու իրանց կարծիքները և յանկութիւնները, հասկանալի է՝ որ ուրոյն նշանակութիւն է ստանում Ընկերութեան միաձայն հաւանութեանը գտած մի լուրջ, փաստալի զեկուցում, ինչպիսին էր պ. Սահակեանի կարդացածը:

«Միայն երկրի հետ օրդանապէս կապուած, իրանց միջավայրի բոլոր կարիքները անմիջապէս ճանաչող անձինք երկրի տնտեսութիւնը հրապարակապէս և ազատ քննելու պայմանում, ընդունակ են պնել գիւղատնտեսական արդիւնաբերութեան զարգացումը պատշաճ բարձրութեան վրայ,—ասաց զեկուցողը: Միայն զեմստովոն կարող է միացնել յանուն երկրի ընդհանուր բարօրութեան բոլոր գասակարգերը և ազդութիւնները, միայն նա կարող է յարուցել նախաձեռնութեան ոլին, բանալ ինտելլիգենտ ոյժերի համար պործունէութեան լայն ասպարէզ: Գիւղատնտեսական արդիւնաբերութիւնը իր բազմատեսակ կարիքներով չի սեղմում բիւրօհրատիական կառավարման նեղ շրջանակներում, և ամեն մի վարչական սիստեմ անզօր է ժողովրդական տնտեսութիւնը բարձրացնելու գործում, երբ այդ

*) Տես «Մուրճ» 1901 թ., № 3.

**) Ի միջի այլոց տես նաև «Մշակ» (1899 թ., № 184) «Մեր իրականութիւնը» յօդուածի եզրակացութիւնները:

վարչութիւնը իր մէջ միացնում է երկու բարդ և իրար օտար ֆունկցիաներ» **):

Ժողովին նախագահող Ն. Ա. Սուլտան-Կրքմ-Գիրէյը իրան յատուկ տակտով և լայն հանդուրժականութեամբ ղեկավարում էր վիճարանութիւնները և լսում թեր ու գէժ կարծիքները. բոլոր առարկութիւնները, որ անոււժ են և կարող են անոււժ, քննութեան ենթարկուեցին և ջրուեցին անհերքելի փաստերով, ուստի ժողովը միաձայն որոշեց ընդունել այդ ղեկուցումը և, մի քանի կէտեր լրացնելով, առաջարկել ուր հարկն է: Պէտք է յուսալ, որ նոյն եռանդով ու լրջութեամբ ընկերութիւնը կը վերաբերուի և՛ Անդրկովկասի գիւղացիների բազմաթիւ առանձնայատուկ ջաւերին և բաց չի թողնի պատեհ առիթը բազմակողմանի ղեկուցումներ նուիրելու նոր հերթական հարցերի մասին:

Տեղական առանձնայատուկութիւնները անշուշտ կարող են երևան հանել նաև տեղական լեզուներով հրատարակուող թերթերը, որոնց շուտով աւելանալու է և թրքական «Շարքի Ռուս» լրագիրը: Բայց չի կարելի մասնանիչ չ'անել մի ցաւալի իրողութեան վրայ, այդ այն է, որ ուսաց լեզուով լոյս տեսնող տեղական թերթերը քիչ են հետեւում տեղական լեզուներով հրատարակուող թերթերին: Յանկալի է, որ աւելի սխտեմատիկ և սերտ կապ հաստատուէր տեղական բոլոր լեզուներով լոյս տեսնող թերթերի մէջ, այն ժամանակ աւելի լիակատար արտայայտութիւն կը գտնեն մեր կեանքի բազմաթիւ ջաւերը, այն ժամանակ տեղական ուսաց լեզուով լոյս տեսնող հրատարակութիւնների միջնորդութեամբ ընդհանուր ուսաց մամուլը աւելի լիակատար և ճիշտ կերպով կը ճանաչի մեր երկիրը, մեր պահանջները և մեր ջաւերը: Ինչո՞ւ մայրաքաղաքների մամուլը իր սրտին մօտ չը պէտք է վերցնի նաև Անդրկովկասի խուլ անկիւններում կատարուած նշանաւոր դէպքերը. միայն թէ հարկաւոր, է որ այդ դէպքերի մասին ճշգրիտ տեղեկութիւններ հասնեն նրանց: Մեր այդ ասածը հաստատոււմ է, օրինակ, Չանգեղուրի մի խուլ անկիւնում պատահած դէպքով, որ նկարագրուելով «Баку» *) լրագրում՝ ապա քննութեան առարկայ դարձաւ և՛ «Новости»-ի մէջ, գուցէ նաև այլ թերթերում, որոնք չեն անցել մեր ձեռքը:

«Люди въ снѣгу» (մարդիկ ձկնի մէջ) յօդուածում նկարագրուած էր Յաւ գիւղի բնակիչների պիսին հասած մի ջաւ:

*) «Кавк. Сельск. Хоз». № 475.

*) № № 48, 51.

Բանից դուրս է գալիս, որ 314 մարդուց բազկացած մի ամբողջ զուգ իր մեծ ու փոքրով և իր անային անասուններով ամբողջ այս ձմեռ անց է կացրել օարերի անտառներում, բաց երկնքի տակ, սառնամանիքի ու բուքի մատնուած, ձիւնի մէջ, վայրի դազանների նման, որովհետեւ մի թիւրիմացութեան շնորհիւ դանձարանի տեղական պաշտօնեաները կողպել են և կնքել նրանց տների դռները: 12 տարի առաջ այդ ցաւեցիք աղբում էին Քիւրդիքենդ և Գերջանան գիւղերում, ձմեռը իջնում էին Իշ գետի ափերի մօտ Մէլքը-Մամէղլսանով բէգի հողերը: 1900 թը-ւակնինն վնասուելով սեղաւից՝ դրանք մտածում են թողնել իրանց քանդուած Քիւրդիքենդ ու Գերջանան գիւղերը և ընդ միշտ ամառ-ձմեռ հաստատուել յիշած բէգի հողերի վրայ: Բէգը համաձայնում է, գիւղացիները ծախում են Քիւրդիքենդում և Գերջանանում իրանց տուն-տեղը և գաղթում ու հաստատում իրբանց այժմեան Յաւ գիւղում, որ 12 տարի շարունակ նրանց ձմերանոյն է եղել: Գիւղացիները չեն իմանում, որ այդ հողը վէճի մէջ է գանձարանի հետ: Դատարանը 1901 թ. վէճը վըճուում է գանձարանի օգտին: Եթէ գիւղացիները այնքան աղէտ և իրաւաբանական կոզմից այնքան անօգնական չը լինէին, ի հարկէ՛ կը գառնային արքունական գիւղացիներ կամ, մինչև այդ հարցը լուծելը, իրանց մշակած հողերի կապալառուներ կը մընային: Սակայն այդ միամիտները, իրաւաբանական ձևերին անտեղեակ լինելով, չը կարողացան ժամանակին ոչ այս և ոչ այն սնել: Գանձարանը առաջարկեց դրանց հեռանալ և յանձնել իրանց հողերը երկու անտառապահների, որոնք գանձարանի կապալառուներն էին գտել: Գիւղացիները զիմեցին երկրպարծութեան մենիստրին խնդրքով և միամտաբար կարծում էին, թէ այսօր-վաղը կը լուծուի հարցը, ուստի ժամանակաւորապէս մօտիկ սարերում տեղաւորուել սպասում էին: Վրայ հասաւ ձրմեռը, զրտից հիւանդանում էին և մեռնում թէ մարդիկ և թէ անասունները: Անցաւ և ձմեռը... Գիւղացիներից մէկը «НОВОСТИ» թերթի խմբագրատան պատմել է այդ դժբաղդ գէտքի մանրամասնութիւնները և աւերացրել. «Վրայ է համում մարդկանց համար մեծ տօնը, իսկ մեկ համար դեռ պաս է և կոծ: Բոլորը, նոյնիսկ տաժանակիր աշխատանքների մատնուած յանցաւորներն, ապաստան ունեն, միայն մենք ենք զուրկ դրանից»:

Բնականաբար եթէ նոյն դժբաղդութիւնը պատահէր մի ունեւոր և զատաստանական ծակ ու ծուկերին հմուտ անհատի, նա կը գտնէր մեղանում շատ երեկելի փաստաբաններ իր դատը պաշտպանելու կամ պահանջուած ձևով զիմուսներ անելու հա-

մար: Բանը փոխուում է, երբ տուժող կողմը մի տղէտ, միամիտ և աղքատ գիւղական համայնք է լինում:

Քանի որ դատաստանական վէճի մասին էր խօսքը, ի դէպ է այստեղ յիշատակել նաև մարտի 24-ին դատաստանական պալատում նշանակուած Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու ընդարձակ կալուածների գործի քննութեան մասին: Ինչպէս յայտնի է, համաձայն 1898 թ. մարտի 26-ին Բարձրագոյն հրամանի՝ Կովկասեան ուսումնարանական շրջանի վարչութիւնը գրաւել էր յիշեալ կալուածները, որոնց արժողութիւնը գնահատուում է մօտ 400 հազար ռուբլի: Թիֆլիսի նահանգական դատարանը քննելով գործը՝ ճանաչել էր հայոց եկեղեցու սեփականութեան իրաւունքը: Սակայն ուսումնարանական շրջանի հոգաբարձուն գործը անց էր կայցրել դատաստանական պալատը, ուր և պէտք է քննուէր այն: Ինչպէս հաղորդում է «Մշակը», «Թիֆլիսի դատաստանական պալատի նիստում նախագահը յայտնեց, որ ժողովրդական լուսաւորութեան միմիաստ Զննչերից ստացուել է հեռագիր, որով պ. մինիստրը խնդրում է պալատից յետաձգել Ախալցխայի սուրբ Փրկիչ եկեղեցու կալուածների գործի քննութիւնը, որովհետև Պետերբուրգից գալու է մինիստրութեան իւրիսկօնատւար՝ ուսումնարանական վարչութեան շահերը պալատում պաշտպանելու համար: Երգուեալ հաւատարմատար Ս. Մելիք-Սղամեան յայտնեց պալատին, որ ուսումնարանական վարչութիւնը ժամանակին ստացած լինելով պալատի ծանուցագիրը գործի քննութեան մասին, բաւական ժամանակամիջոց ունէր իր շահերի պաշտպանութիւնը յանձնելու ու որ ցանկանար, իսկ եթէ այդ ժամանակն էլ բաւական չը համարուի, նա համաձայն է գործի քննութիւնը յետաձգելու, ոչ աւելի քան մի ամիս ժամանակով: Պալատը որոշեց գործի քննութիւնը յետաձգել մինչև մայիսի 2-ը»:

Մարտի 19-ին Թիֆլիսի Ալէքսանդրեան այգում բացուեց Գօգօլի յուշարձանը, որ կանգնեցրել է քաղաքային վարչութիւնը: Այդ հանգիսին ներկայ գտնուելով՝ մենք մտածում էնք, թէ արդեօք կարո՞ղ էր «Ревизоръ»-ի հանճարեղ հեղինակը երևակայել, որ գալու է մի օր, երբ իր արձանի մօտով անցնելու են ասիացի համբարները, պատկառանքով խոնարհելով նրա գրչի՝ ոյժի առաջ իրանց միջնադարեան խորհրդաւոր գրօշակները: Ինչպէս ամեն բան փոխուում է լուսնի տակ, մի ժամանակ պէտք է Նիկողայոս Լ-ի հզօր կամքը ստիպէր թոյլ տալ բեմի վրայ ներկայացնելու մեծ կրդիծարանի անմահ ստեղծագործութիւնը, իսկ այժմ այդ գրուածքը մատաղ սերնդի միտքը

կրթող և հողին դատտիրարակող կլասսիկ գրուածք է համարուում... Այդպէս ահա անցողական են կեղծիքի և երկիրւղի ստեղծած արդեւորները...

Անկասկած շատ աւելի փոքր էր ներկայումս, Յրանսիայում, 84 տարեկան հասակում վախճանուած Սուխովո-Կօրբլինի տաղանդը, որ արտայայտուեց նրա մի հատիկ նշանաւոր բեմական գրուածքի՝ «Կրեչինսկու հարսանիք»-ի մէջ: Ճիշտ է, Սուխովո-Կօրբլինը ունի նաև «Գործ», «Ճարեկիինի մահը» անունով պիէսներ, սակայն նրա ամբողջ հոշակը հիմնուած է «Свадьба Кречинскаго» կոմեդիայի վրայ, որը 50 տարի շարունակ ներկայացնուելով բեմի վրայ՝ չի կորցնում իր թարմութիւնը, որովհետև Բասովիւեի և Կրիչինսկու տիպերը նկարագրուած են զօգօլեան հումորով և կենդանութեամբ:

Այլ տիպի գրող էր մօտ 62 տարեկում վախճանուած Ե. Մարկօվը, որ շատ բազմակողմանի գործունէութիւն էր ունեցել. մասնագիտութեամբ բնագէտ Եւգենիյ Մարկօվը նախ գործում էր մանկավարժական ասպարիզում իբրև ուսուցիչ, տեսուչ, վերատեսուչ, սակայն 1870 թւականից նա թողնում է մանկավարժութիւնը և նուիրում զրականութեան: Այդտեղ նա կանգ չէ տնուում որոշ ճիւղի վրայ, այլ տալիս է և բելլետրիստիկական, և քննադատական, և հրատարակախօսական գրուածքներ, սիրում է ճանապարհորդել և նկարագրել իր տեսածները: Ի միջի այլոց նա լաւ յայտնի է կովկասցիներին, որովհետև մի քանի անգամ ճանապարհորդել է մեր երկրում, ունի Կովկասի և Հայաստանի մասին տպած հետաքրքրական աշխատութիւններ: Այդ գրուածքներով ոուս ժողովուրդը կարող է ծանօթանալ մեր երկրի հետ, նոյնիսկ սիրել մեզ:

Կովկասի բնագատմական ուսումնասիրութեան զարկ տուողը այդ կամ մի ուրիշ ոուս բնագէտ չէր, այլ Պրուսիայում ծնուած և միջին կրթութիւն ստացած մի գերմանացի, որ իր եռանդով և տոկունութեամբ կարողացաւ գիտութեան մեծ ծառայութիւն մատուցանել: Մեր խօսքը մարտի 2-ին թիֆլիսում վախճանուած Գուստավ Բազդէի մասին է, որ 1863 թւականից սկսած իրան նուիրել էր Կովկասի ֆիլօրայի և ֆաունայի ուսումնասիրութեան: Այդ նշանաւոր գերմանացու շնորհիւ, է որ Կովկասը ունի իր միակ մուղէժը, որ իր բոլոր պակասութիւններով հանդերձ կարող է նպաստել մեր երկրի բնագատմական և ազգագրական առանձնայատկութիւնների ուսումնասիրութեան:

Լ. Ս.

Լրագրները հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում Սև-ծովեան երկաթուղու շինութեան հարցի մասին. Փինանանի-րի մինիստրութեան մէջ կազմուած առանձին մասնաժողովը երկաթուղային գործերի ղեկարամահնտի կառավարիչ Յիդ-լեր Ֆօն-Շաֆ-Հաուզենի նախագահութեամբ քննեց և վճռեց Սև-ծովեան երկաթուղու շինութեան հարցը: Երկաթուղային այդ նոր գիծը, որի շինութիւնը յանձն է առնում Վլադիկավ-կազի երկաթուղու ընկերութիւնը, կը միացնէ այդ գիծը Ան-զըրիսովկասեան երկաթուղու հետ: Սկսուելով Նօիօ-Սենակի կայարանից՝ նա կ'անցնէ գէպի Սուխում, որ գտնուում է Սև-ծո-վի ափին և այս կէտից շարունակ կը գնայ Սև-ծովի ափով մինչև Տուապսէ: Ապա նոր գիծը կ'ընդունէ հիւսիս-արևելեան ուղղութիւն և Կուբանի վտակներից մէկի հովտով կը հասնէ Վլադիկավկազեան երկաթուղու Արմաւիր կայարանը: Սև-ծովեան ապագայ երկաթուղին անցնելով այս ուղղութեամբ՝ իր հարաւային մասում կը նպաստէ ուսսական Բիվերայի և ուսսական Նիցցայի՝ Սօչիի ծաղկելուն, իսկ հիւսիսային մասում նա կը կենդանացնէ հարաւային Ռուսաստանի աւենարարները չրջաններից մէկը:

Վրաց գրամատիկական ընկերութեան կօմիտեար 300, 200 և 100 բուբլու մրցանակներ է նշանակել վրացերէն լեզուով գրուած գրամատիկական ինքնուրոյն լաւագոյն գրուածքների համար: Բացի սրանից՝ կօմիտեար սրտէլ է 50% յատկացնել մըր-ցանակ ստացած գրուածքների հեղինակներին այն ներկայացում-ների ընդհանուր մուտքից, երբ կը խաղացուեն նրանց պիւսակ-երը: Գրուածքները պէտք է ներկայացուեն կօմիտեարին մինչև այս տարուայ սեպտեմբերի 30-ը:

«Кавказъ» լրագրում սպուած են հետևեալ կառավարչական հաղորդագրութիւնները. «Բաթում քաղաքում մարտի 9-ին առաւօտեան, բանուորների մի մեծ խումբ հաւաքուեց կայարա-նում գնաքքի ուղևորուելու ժամանակ, որպէս զի ճանապարհ գնէ դատաստանի ենթարկուած բանուորներին պաշտպանող փաստաբաններին: Երբ գնաքքը շարժուեց, ամբոխը կարմիր դրօշակ պարզելով՝ «ուռայի» աղաղակներով սկսեց գնալ գնաք-քի ետևից երկաթուղային գծի վրայով:

Գծբախտ գէպերից խոյս տալու համար՝ մեքենավարը կանգնեցրեց գնաքքը, որ ապա շարունակեց ճանապարհը մի քանի բոպէից յետոյ, երբ ամբոխը հեռացաւ գծի վրայից:

Կայարանից ամբոխը պարզելով էլի մի քանի դրօշակներ

հակահառավարչական մակադրութիւններով սկսեց առաջ գրնայ Մարիինսկի սյրօսպէկտով, որանդ մի քանի անգամ ատրրճանակ արձակեց ատանց որևէ մեաս պատճառելու, «Черноморский Вѣстникъ» լրագրի խմբագրութեան, պ. Էրնի և ամերիկական հիւպատոսի ընակարանների պատուհանի ապակիները ջարդեց:

Դրանից յետոյ ամբոխը տեսնելով մօտեցող զօրախումբը՝ ցրուեց:

«Բազու քաղաքում, այս մարտ ամսի 2-ին կէսօրուայ ժամի 12-ին Մարիինսկի սյարաէզի մօտ սկսեց հաւաքուել ժողովըրդի բազմութիւն, որը ազազակներով ուղևորուեց դէպի պարապետ՝ ճանապարհին մեծ քանակութեամբ հակահառավարչական բովանդակութիւն ունեցող պրօկլամացիաներ ցրելով. նոյնպիսի պրօկլամացիաներ գուրս էին զցուում մի քանի աների պատուհաններէց: Ամբոխի մի մասը աջողուեց ցրել ոստիկանութեան միջոցով և կօզակների օգնութեամբ, իսկ մի մասը հասաւ Մարիինսկի սյարաէզին և միացաւ այնտեղ գտնուող ցուցարարների հետ: Այստեղ բացի ազազակներից և պրօկլամացիաներ ցրելուց՝ ամբոխը քարեր էր նետում ոստիկանների և կօզակների վրայ, ապա հալածուելով նրանցից՝ շարժուեց Մարիինսկի փողոցով դէպի Պետրօվսկի հրապարակը: Մարիինսկի փողոցում ամբոխի մէջ մի բոպէ երևաց կարմիր դրօշակ:

Ամբոխի մի ուրիշ խումբ կրասնօփօզսիայեա և Մերկուրիեակայեա փողոցների անկիւնից ուղևորուեց դէպի Սօլդատսկի Բազարը: Սակայն այնտեղ գտնուող կօզակների հարիւրեակի հրամանաատարի ձեռք առած միջոցներով աջողուեց ցրել այդ ամբոխը. այդ ժամանակ մի քանի անձինք ներս քշուեցին Ծովագնացների ուսումնարանի գաւիթը և այնտեղ ձերբակալուեցին: Ամբոխից ցցուած մի քար թեթև կերպով վերաւորեց կօզակներից մէկի գլուխը: Բազուի նահանգապետի բացակայութեան պատճառով նրա պաշտօնը վարող Բազուի փոխնահանգապետ Լիլէն զիմեց դէպի ամբոխը և հանդիպելով նրա մի մասին Բարեատինսկայեա փողոցում, առաջարկեց նրան ցրուել, որև կատարուեց: Այդ ժամանակ Մարիինսկի փողոցի վրայ երևաց մի այլ ամբոխ: Շտապելով նրա մօտ՝ փոխնահանգապետ Լիլէն լսեց զնդակահարութեան երկու հարուածի ձայն, որ դալիս էր Պետրօվսկի հրապարակի կողմից: Դուրս գալով կտրքից՝ փոխնահանգապետը ուղևորուեց յիշուած հրապարակը և սկսեց համոզել ամբոխին, որ պազարեցնէ անկարգութիւնները:

Այդ ժամանակ փոխ-նահանգապետ Լիլէի թեթև վերքեր ստացաւ զլխին և ձեռքին:

Երբ բժիշկները մտաւայ մասնաւոր աներից մէկում կապեցին նրա վերքերը, Լիլէն նորից շարունակեց պտակ կառքով քաղաքի մէջ և կարգադրութիւններ անել անկարգութիւնները զազարեցնելու վերաբերմամբ:

Ժամի 2-ին կէսօրից յետոյ ամեն ինչ հանդատացաւ:

Նոյն օրը ժամի 5-ին երեկոյեան Բալախանիում ամբուխը՝ բաղկացած մօտ 2000 մարդուց, հաւաքուեց Վօլչինսկի նաւթահանքի մօտ, սկսեց աղաղակել, աղմուկ բարձրացնել, բայց ոստիկանապետը համոզեց նրան ցրուել և երեկոյեան եօթնութորդ ժամին ամեն ինչ հանդատացաւ:

Բազու քաղաքում անկարգութիւնների ժամանակ ձերբակալուեցին 21 հոգի, որոնցից 18-ը փոխ-նահանգապետի կարգադրութեամբ պետական պաշտպանութեան օրէնքների հիման վրայ ենթարկուեցին բանտարկութեան Բազուի բանտում, իսկ երեքը՝ երկու բէալիստ և Միքայէլեան քաղաքային ուսումնարանի մի աշակերտ՝ յանձնուեցին ուսումնարանական վարչութեան ձեռքը»:

«КАВКАЗЪ» լրագրում կարգում ենք. «Կիրակի, փետրուարի 23-ին, առաւօտեան ժամի 10-ից, մեծ բաղմութեամբ ժողովուրդ (զլիաւորապէս զործարանական և անդրկովկասեան երկաթուղու բանուորներ) սկսեց հաւաքուել Գօլօվինսկի պրօսպէկտի՝ զինուորական մայր եկեղեցու մօտ և մերձակայ փողոցների վրայ: Հաւաքուողներից շատերը ձեռներին ունէին հաստ և ծանրը հունի փայտեր: Թիֆլիսի քաղաքային ոստիկանութեան անընդհատ առաջարկութիւնների պատճառով՝ ցրուելու և կանգ չ'առնելու փողոցներում, այդ անձինք, որոնք յամառութեամբ ձգտում էին կանգնել մի տեղում, չը կարողացան խմբեր կազմել քաղաքի գլխաւոր փողոցներում: Այսուամենայնիւ ցերեկուայ 12 ժամին մօտ 60—70 հոգի կամենալով անպատճառ անկարգութիւններ անել և նկատելով կալուածատէր Փալաւանդովի բաւական բազմամարդ յուղարկաւորութիւնը, որ Պաշկինեան փողոցից ծռուեց դէպի Միջին փողոց, թափուեցին այդ փողոցը Տէր-Ասատուրօվի քարվանսարայի միջով և չըջապատելով յուղարկաւորութեան գնացքը՝ «ուռա» աղաղակելով՝ կոխ և անկարգութիւններ սկսեցին անել: Յոյց անողներից մէկը 4 անգամ ափռճանակ արձակեց, իսկ մնացածները սկսեցին ձեռք անխափր փողոցում զանուող բոլոր անձերին: Երկու օֆիցեր, որոնք իբրև ծանօթ մասնակցում էին Փալաւանդովի յուղարկա-

ւորութեան, մի շարք վէրքեր ստացան, զլիւարապէս զլուխներին, իսկ նրանցից մէկը վերաւորուեց գնդակով, որ և մնաց վերաբերուի մէջ: Մերձակայ բուժարանում վէրքերը կապելուց յետոյ՝ վերաւորուածները ուղարկուեցին զինուորական հիւանդանոցը բժշկուելու: Բարեբախտաբար երևաց, որ այդ օֆիցերների վէրքերը վտանդ չեն սպառնում նրանց կեանքին: Նոյն տեղում դստուող ոստիկանների մի խումբ կողակների օդնութեամբ մի քանի բուլետում ցրեց ցոյց անողներին: Ատրճանակ արձակողը, չը նայելով իր համախոհների փորձերին աղատելու նրան ոստիկանների ձեռքից՝ ձերբակալուեց անկարգութեան միւս նախաձեռնողների հետ միասին: Չերբակալուած ցոյց անողների ընդհանուր թւից 24 հոգի, անկախ այն պատասխանատուութիւնից, որին պէտք է ենթարկուեն նրանցից մի քանիսր հասցրած վէրքերի պատճառով, կովկասեան կառավարչապետի հրատարակած պարտադիր կանոնների հիման վրայ, — հասարակական կարգը խանգարելու նպատակով ժողովներ կազմելու և ոստիկանութեան պահանջը չը կատարելու համար, — ենթարկուած են Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ իրանց յանցանքի աստիճանին համեմատ բանտարկութեան, սկսած մի շարքից մինչև 3 ամիս: Ոստիկանութեան պաշտօնեաներից, նոյնպէս և ցոյց անողներից ոչ ոք լուրջ միասնեք չը ստացաւ:

«Аргонавтъ» լրագրի խմբագրութիւնը յայտնում, է թէ «որովհետև Ռ. Ա. Յովհաննիսեան չէ հաստատուած ժամանակաւոր խմբագրի պաշտօնի մէջ, ուստի «Аргонавтъ» շաբաթաթերթը հրատարակութիւնը ժամանակաւորապէս դադարեցնուած է մինչև նոր խմբագրի հաստատութիւնը: «Аргонавтъ»-ի բաժանորդները բաւարարութիւն կը ստանան հրատարակութիւնը վերսկսելուց յետոյ, իսկ բաժանորդներից այն անձինք, որոնք չեն ցանկանալ սպասել լրագրի լոյս տեսնելուն՝ կարող են անդորրապիբը ներկայացնելուց յետոյ յետ ստանալ վճարած դրամը ստորագրութեան հաշուով:

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ստացել է արդէն կովկասեան կառավարչութիւնից կարեւոր թոյլտուութիւնը բանալու որը փոքրահասակ աղջիկների ապաստարան ինդադեանի կտակած գումարով: Ապաստարանը, որի պահպանութեան նախահաշիւը կ'որոշուի այս մարտ ամսի 23-ին տեղի ունենալիք ընկերութեան ընդհանուր ժողովում, հաւանականաբար կը բացուի այս տարուայ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և սկզբում իր մէջ կը պատսպարէ 20—30 որբ աղջիկների:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եզրուային ռեֆորմներ Իրանդիայում.—Սշխուսակի ներկայացուցիչ կուսակցութեան մի յաղթանակը պարսակեական ընտրութիւններում.—Աւստրո-Ռուսական համաձայնութիւնը.—„Прав, Вѣстн.“ հաղորդագրութիւնները Մակեդոնիայում եւ Արանիայում պատահած դէպքերի մասին.—Միկիստական կրիզիս Բուլղարիայում.—Բ. Սարաֆովի պատասխանը «Zeit» քերթի խմբագրութեան.—«Daily Chronicle» Միացեալ-Նահանգներէ դիմումի մասին.—Կիլիկիայի նորընտիր կաթողիկոսը Եզանայում.—Բողոքական կոյրժ Տարսուում.—Լուսաւորական յեղացիներ.—Հայկական ցուցանակեալներ Բերլինում:

Ինչքան և յոռեան լինի մարդ, բայց գիտելով Լուսաւորական ազգերի կեանքը որոշ, փոքր ի շատ: Երկար ժամանակամիջոցում, ահա՛ այս բացականչում է. «Այնուամենայնիւ այդ կեանքը շարժում է դէպի առաջ և միայն Արեւելքն է թմրած, անշարժ, յետադիմող»: Եւ զարմանալի էլ չէ այդ շարժումը, տեսե՛ք սրբան Լուսնի, տոկոնութիւն և անձնութիւն և անձնութիւն և անձնութիւն Արեւմուտքի զաւակները դրած նպատակին հասնելու համար: Եւ սրբան իսկն ասած փոխուել են բաբբերը, չը նայած գեռես տիրող կազմակերպութեամ մարդասպանութիւններին կամ պատերազմներին:

Ասորեստանի թագաւորները, իրանց փառքը դարերից դար անմահացնելու համար, պարծանքով արձանագրում էին կոտորած մարդկանց, բռնաբարուած կանանց, աւերուած գիւղերի և քաղաքների ահալին թւերը, իսկ այժմ միտար Ձեմէրլէնը, չը նայած որ յաղթող հանգիստացաւ. Հարաւային Աֆրիկայում, կարծես, ուղում է արդարանալ աշխարհի առաջ և շեշտում է Անգլիայի ցոյց տուած ներողամտութիւնը դէպի երկուսայ թշնամիները, աշխատում է որ մարդկութիւնը իմանայ թէ Անգլիան անցիշաշար է, նա յանձն է անում միլլիոններ տալ—վերականգնեցնելու համար երկուսայ թշնամու աւերուած

տները ու տնտեսութիւնը, ներուճն հտորհել բոլոր քաղաքական յանցաւորներին...

Չը նայած այն փառաւոր տրիումֆներին, որոնց արժանացաւ Չեմբերլէնը, Հարուային-Սֆրիկայում կատարած իր ճանապարհորդութիւնից հայրենիք վերադառնալիս, նա, — երևի նրա հետ նաև այժմեան պահպանողական կառավարութիւնը, — կարծես յուսախաբուել է արիւնալի ճնշումների վրայ հիմնուած քաղաքականութեան խելացի կողմերի մէջ և իրլանդացիների նկատմամբ գողծելու տակտիկան հիմնովին փոխուում է. աշխատում են դնալ Մեծ Ծերունու, Գլադստոնի շաւղով: Նոյն այն պահպանողականները, և Գլադստոնից բաժանուած Չեմբերլէնը իր համախոհ ունիծնիստների հետ, որոնք մի քանի ժամանակ առաջ Իրլանդիայի նկատմամբ չէին ուղում խաղաղ և հաշտ միջոցների դիմել և հաւատացած էին բեպրեստալիանների փրկարար զօրութեան մէջ, այժմ առաջարկում են իրլանդացիներին այն, ինչի համար նրանց հարիւր մարի տանջում էին: Անդլիան ընդունում է ազրարային բեֆօրմների մի այնպիսի ծրագիր որ Իրլանդիայի վաղուցուայ ակնչանքն էր: Եւ բաւական էր մի այդպիսի արդար քայլ երեկուայ ճնշողի կողմից, որ անհետանայ դարաւոր քէնն ու սխը իրլանդացիների ազնիւ սրտերից: Քաղաքական յանցաւորները Իրլանդիայում արձակուած են, ուրախութեան ոգին սկսել է սաւառնել չարատանջ ու ամայացած այդ Կանաչ կղզու վրայ. խաղաղութեան և հաշտութեան ճանապարհով Անդլիան այժմ անու. է այն, ինչ որ անդօր էին կատարել բանտը, հալածանքը, տանջանքը...

Այդ հողատիրական նշանաւոր բեֆօրմների օրինակիծը հիմնուած է մի քանի ամիս առաջ Իրլանդիայի մայրաքաղաք Դուբլինում ֆերսերների և լէնդլօրդերի ներկայացուցիչների ժողովում մշակուած համաձայնութեան վրայ: Իրլանդական գործերի մինիստր Ուիլիամ Էմիլ Բլեյքը ազրարային բեֆօրմների մասին Իրլանդիայում արդէն կարգացուել է անդլիական պարլամենտում և ընդհանրապէս լաւ տղաւորութիւն է թողել թէ իրլանդական պարագլուխների և թէ ազատական կուսակցութեան վրայ: Այդ օրինադծով իրլանդացի ֆերմերները կամ հողի կապալաւորները, որ նոյնն է թէ հողի մշակողները, կառավարութեան օժանդակութեամբ յետ են դնելու կալուածատէրերից կամ ընդլօրդերից իրանց հողաբաժինները և գտնաւորւ են կատարելապէս սեպհականատէրեր: Այլ խօսքերով, Իրլանդիայում կատարուելու է այն, ինչ որ Ալէքսանդր II-ը ճորտերի աղա-

տուժիւնից յետոյ արաւ ուսւ գիւղացիների նկատմամբ *): Եւ կառավարութեան այդ նպատար հաւասար է մի միլլիարդ բուրլու... Իսկ ինչ նստեց Անդլիային նրա պատերազմը բօէրների գէմ. վերջը քանի տասնեակ միլլիոններ ստիպուած եղաւ նա տալ յաղթուած թշնամուն: Անկասկած այդ միլլիոնները որ այժմ տրւում են Փերմերներին, տարիների ընթացքում վերադարձնուելու են դանձարանին, կորած չեն: Եւ զրա փոխարէն իրլանդական երկիւղից ընդ միշտ ազատուելը ինչ անդնահատելի բարիք է: Անդլիայի համար!

Ի հարկէ ազրարային բեֆօրիսներից յետոյ իրլանդացիների՝ ինքնավարութեան (հօմբուլ) և կաթօլիկ համալսարանի պահանջները կը կատարուեն շուտով, մանուսանգ որ Անգլիայի մէջ օրէցօր աճում է և զօրեղանում մի կուսակցութիւն որ չի ճանաչում անարդարութիւն: Մեր խօսքը ազատականների մասին չէ, որոնք վերջերում մի քանի տեղ աջողացքերին ընտրել իրանց կուսակցութեան մարդկանց: Այդ յաղթութիւններից շատ աւելի նշանաւորն էր՝ աշխատանքի ներկայացուցիչ կուսակցութեան պարագլուխներից մէկի, Կրուկսի, ընտրութիւնը. նա ստացաւ 8,687 ձայն, մինչդեռ նրա հակառակորդ պահպանողականը 5,458 ձայն...

Այս ընտրութիւնը մի նշանաւոր պատմական երևոյթ է. դա նշանակում է որ անգլիական պարլամենտի մէջ, հին պահպանողական, ազատական և իրլանդական կուսակցութիւնների կողքին, ծլում է ազատական կուսակցութեան ամենաձախկողմեան ճիւղաւորութեան բողոքը, որին պատկանում է ապագան...

Հաշտութեան ոգին սկսել է տիրապետել նաև սուսորիական պարլամենտի պարագմունքներում. չեխներն և գերմանացիները երկարատե ու սուր պայքարից և աղմկալի օբստրուկցիաներից յետոյ և կել են այն եզրակացութեան որ «օբստրուկցիան պարլամենտարիզմի բացասումն է» և չի հասցնում նպատակին: Եւ մինիստր-նախագահ Կեօրքէրը, ճարտիկ լարախաղացի նման, դիտէ հաւասարակշռութիւն պահպանել. նրան աջողուեց ունդարտական մինիստր-նախագահ Կօլօման Սելլիի հետ համաձայնութեան յանդէլ: Անցեալ տարուայ մեր մի տեսութեան մէջ (№ 11) մենք աւելի հանդամանօրէն բացատրեցինք այդ երկմաս պետութեան համաձայնութեան կամ «առւարակալի» մասին, որ իւրօրքանչիւր 10 տարին մի անգամ պէտք է նորոգուի, ստանալով վիէննայի և Բուդապէստի աղգային ժողովների հաւանութիւնը:

*) Համեմատիւր այդ հարցի մասին մեր Արտաքին Տես. 1901 թ., № 3-ում:

Ինչպէս յայտնի է, 1897 թ.ականից զեսը այդ համաձայնութիւնը չեն կարողացել կայացնել: Այժմ բոլոր հանգամանքներէց երևում է որ վերջապէս աջողուելու է երկրադորձական Ունգարիայի և արգինագործական Աւստրիայի անտեսական յարարութեւթիւններէ մէջ որոշ համաձայնութիւն ստեղծել: Այդ բանին յայտնի չափով նպատակց է հարկէ Գերմանիայիում մարսային նոր սաբիֆներէ ընդունուելը: Ունգարական կաշուածատէրերը և աւստրիական գործարանատէրերը դո՛հ են երևում այդ առաջընտախի հիման վրայ առաջ գալիք մարսային տարիֆներէ յաւելումներէց, թէև, ինչպէս դժուար չէ եզրակացնել թէ a priori և թէ աւստրիական բանուորական կուսակցութեան ներկայացուցիչ պատգամաւորներէ ճաներից բայխարատում (օր. Դ-ը-էլին-րերդի) — Աւստրիայի աշխատող դասակարգը այնքան էլ դո՛հ չէ լինելու համաձայնութեան պայմաններէց:

Այժմ եթէ մեր ուշադրութիւնը Աւստրո-Ունգարիայից դարձնենք Բալկանիան թերակղզու վրայ կը տեսնենք որ այդանկ խաղաղութիւնը և հաշտութիւնը ոչ միայն հեռու են վերականգնուելուց, այլ և հրդեհի նշաններ են երևում, արեան վրտակներ են հոսում... Սակայն աւելի պերճախօս են ներկայ հանգամանքներում բոլոր թերթերում տպուած վերջին պաշտօնական հաղորդագրութիւնները որ առաջ ենք բերում այստեղ:

— „Правительственный Вѣстникъ“ — ում մարտի 18-ին տպագրուած է Բիւտոլիի ուսաց հիւղատասի ղեկուցումից հետեւալ քաղուածքները. — Հիւղատասութիւնը պաշտօնապէս հաղորդեց տեղական քրիստոնեաներին, որ Կախերական կառավարութիւնը խստիւ գատապարտում է կօմիտեաների դորձունէութեան ձեր նոյնպիսի յայտարարութիւն արուած է և կօմիտեաների անդամներին, որոնց առաջարկուեց զաղարեցնել գատապարտելի դորձունէութիւնը և չը խանդաբել պետութիւնների առաջարկած բարենորոգումները իրականացնելուն: Շարժման ղեկավարները մեծ դժգոհութեամբ ընդունեցին այդ յայտարարութիւնը, որովհետեւ նրանք բաւարար չեն համարում բարենորոգումները և ցանկանում են ինքնավարութիւն մտցնել երեք վիլայէթներում: Մօտ օրերս կօմիտեաները մի լիազօր ուղարկեցին հիւղատասարանին յայտնելու, թէ զրանք անհնարին են համարում արձակել հրոսակախմբերը, մինչև որ բարենորոգումները չ'իրականանան և նպատակայարմար դառնան: Կօմիտեաների ղեկավարները աշխատում են չը տարածել սուլթանի շնորհած ներման լուրը և տեղեկութիւններ Բ. Դրան ընդունած այն միջոցների մասին, որոնց նպատակն է քրիստոնեաների վիճակը բարուղբել:

Հրոսակախմբերի գործունէութիւնը չէ գաղարել. նրանց և թիւրքական զօրքերի մէջ յաճախ տեղի են ունենում արխունահեղ ընդհարումներ: Շատ անգամ զօրքերին օգնում են բաշիրօղուկները, սակայն թիւրքերը խաղաղ բնակիչներին վրայ բռնութիւն չեն դործ գնում: Վերջին ժամանակներս շատ յաճախ քաղաքական սպանութիւններ են կատարւում, որոնց գլխաւոր զոհերն են սերբ ուսուցիչներն ու քահանաները, որոնք համոզում են համագիւղացիներին չը միանալ հրոսակախմբերի հետ: Վերջին ժամանակներս կոմիտեաների գործունէութիւնը զգալի չափով ուժեղացել է: Այդ փաստը նկատուեց հէնց այն ժամանակ, երբ Բիտօլի եկաւ բուլղարական վաճառականական գործակալութեան կառավարիչ. նրա գալուստը տարածեց Բուլղարիայի համար աննպաստ այն լուրը, թէ իշխանութիւնը մասնակից է կոմիտեաների գործունէութեանը:

Թիւրք կառավարութիւնը շարունակում է եռանդուն կերպով իրականացնել պետութիւնների առաջարկած բարենորոգումները: Ներման հետ միասին Սալօնիկի վիլայէթի ֆինանսների ակտչին հրամայուած է կազմել մակեդոնական երեք վիլայէթների բիւջէտի նախագիծը: Երկիրը խաղաղացնելու համար մեծ օգնութիւն է ցոյց տալիս Բիտօլի գեներալ-նահանգապետ Ալի-Քիզա-փաշան:

—Ուսկիբի ուսաց հիւպատոսի հեռագիրը մարտի 14-ին, «Կոստօլի վիլայէթում սաստկանում է խռոնակութիւնը. Կօնչանում և Իչտիբում կան շատ խմբեր, որոնց անդամների թիւը հասնում է 100-ի և աւելի՝ ուսուցիչներից և քաղաքացիներից բաղկացած: Մտադրութիւն կայ օգը ցնդեցնել Իչտիբի զօրանոցները և ընդհանատել երկաթուղային ու հեռագրական հաղորդակցութիւնը: Բուլղարիայից սպասում են շատ սպաներ: Մահուան սպանալիքով ստիպում են գիւղացիներին՝ օգնել հրոսակախմբերին, ղէնք և փող տալ, պաշարեղէն պատրաստել և ղէնք ընդունել: Կոմիտեաները խնամքով ծածկում են ժողովրդից հիւպատոսարանի այն յայտարարութիւնը, թէ Կոյսերական կառավարութիւնը հաւանութիւն չէ տալիս կոմիտեաների գործունէութեանը: Նրանք մինչև անգամ աշխատում են համոզել տեղացիներին, թէ ամեն ինչ կատարւում է Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Մարտի 11-ին Սօփոյարցի գիւղից մի պատգամաւորութիւն եկաւ հիւպատոսարան և խնդրեց յայտնել, թէ արդեօք ճիշտ է, որ շարժումը Ռուսաստանի հրամանով է սկսուել: Այդ պատգամաւորութիւնը ասաց, որ ժողովուրդը թէն չէ համակրում կոմիտեաների գործունէութիւնը, բայց պատրաստ է զնալ, ուր որ կը հրամայէ Ռուսաստանը:

ինչորում են միայն կանանց ու երեխաներին ապաստարան տալ։ Այդ փաստը ակներև ապացոյց է, որ ներկայ շարժումը արհեստական է։ զրույթնանը սուր կերպարանք տալու համար կոմիտեաները թիւբքերին սարսափելի բռնութիւնների և նիթարկում։

Կոմիտեաները ամեն կերպ աշխատում են զարթեցնել թիւբքերի ընդհանուր թշնամութիւնը և գրգել նրանց կոտորելու ամբողջ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը»։

— Մարտի 22 հրատարակուած է հետևեալ կառավարչական հազորագրութիւնը։ «Հէնց որ Կ. Պօլսում տեղեկութիւն ըստացուեց արևառանների յանդուգն յորձակման մասին Միարօվիցայի վրայ, Կ. Պօլսի ուսսաց դեսպանը չը յապաղեց մեծ վիզիրի ուշազրութիւնը դարձնել՝ արևառաններին խաղաղ յորդորներով հնազանդութեան բերելու Բ. Դրան արած ջանքերի փորձով սպառնացուած անաջողութիւնը և ապստամբներին պատժելու ու քրիստոնեայ ազգաբնակչութեան ազահովութիւնը և րաշխաւորելու համար անյապաղ եռանդուն միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտութիւնը։ Ֆէրիզ-փաշան շտապեց հաւատացնել Ձինօվիեին, որ թիւբքայ կառավարութիւնը գլխակցելով եր վրայ գրած պարտաւորութիւնը՝ կը դորձադրէ իր արամազրութեան ասկ դանուած բոլոր միջոցները յուզմունքին վերջ տալու և հանդատութիւնը վերականգնելու համար։ Այդ միջոցին Կ. Պօլսում հեռագիր ստացուեց, որ տեղեկացնում էր արևառատական նոր ֆանատիկոսութեան մասին, որին զօժ գործաւ Միարօվիցայի ուսսաց հիւսպատոսը։ Իսկոյն և եթ՝ այդ վշտալի տեղեկութիւնը ստանալուց յետոյ՝ սուլթանը հեռագրով յանձնարարեց Պետերբուրգի օսմանեան ներկայացուցչին յայտնել Կայսերական կառավարութեանը խորին ցաւակցութիւն Շչերբինայի կեանքի դէմ արած փորձի առիթով և միաժամանակ ուղարկեց Ձինօվիեի մօտ մեծ-վիզիրին, որը վիայեց Արզուլ-Համիդի խորին վիշտը նոյն առիթով և հաւատացրեց, որ արգէն բոլոր միջոցները ձեռք ևն առնուած այդ գործի խիստ քննութեան և արևառատական շարժումը անյապաղ դադարեցնելու համար։ Սուլթանի անունից ստացուած հաւաստիացումները անուեցան ի տեղեկութիւն Կայսերական կառավարութեան կողմից, և յանձնարարուեց Ձինօվիեին ստիպողական առաջադրութիւններ անել Միարօվիցում չփոթ առաջացնող և ուսսաց հիւսպատոսի կեանքի դէմ փորձ անող յանցաւորներին խիստ պատժելու համար անյապաղ բոլոր միջոցներ ձեռք առնելու նպատակով, միևնոյն ժամանակ Միարօվիցա ուղարկուեց Ռսկիւբի հիւսպատոս Մաչկով։ Ներկայումս Շչերբինային բժշկում ևն երեք

վէլայթները ընդհանուր-տեսուէջ Խիլմի-փաշայի ուղարկած դի-
վիդայի գններաւ-բժիշկ Յակոբ և Բելզրադի բժիշկ Սուբբոսին,
որը դնացել է նրա մօտ սերբիական թաղաւորի հրամանով,
բացի գրանից սուլթանի անձնական ցանկութեամբ Միտ-
րովիցա է ուղարկուած Կ. Պօլսի լաւագոյն վիրարոյց
Կամբօր-օղլին: Վիրաւորուածի գրութիւնը բժիշկների ա-
սելով թէպէտ և շատ յուրջ է, վտանգ չէ սպառնում նրա
կեանքին: Ստացուող տեղեկութիւնների համաձայն՝ Բ. Դու-
որ յիրաւի աշխատում է սահման գնելու արնաուտների կա-
մայականութիւններին, և յուղմունքների տեղը արդէն ուղար-
կուած է թիւրքաց զօրքերի նշանաւոր քանակութիւն, զլիսաւո-
րապէս Փոքր Ասիայից»:

—Սօլունի ուսս հիւպատոսի գեղուցումներից. «Ան-
ցեալ աշնան տեղի ունեցած անկարգութիւններին յաջոր-
դեց լուս, բայց եռանդուն գործունէութեան շրջան յեղափոխա-
կան կօմիտեաների, որոնց բոլոր ջանքերը առաջուայ նման
ուղղուած են՝ ազգաբնակութիւնը ամբողջապէս ապստամբեցը-
նելու նպատակին: Դրդելով քրիստոնեաներին դէպի ակնյայտ-
նի անհաւասար կռիւ՝ կօմիտեաները յոյս ունեն առաջացնել
Եւրոպայի կողմից միջամտութիւն իրանց օգտին: Շատ յու-
զուած տրամադրութեան մէջ են թէ տեղացի մահմեդականնե-
րը և թէ քրիստոնեաները: Նախատեսելով կարելի բարդութիւն-
ներ՝ իշխանութիւնները զբաղուած են ճանապարհներ ու զօ-
րանոցներ շինելով: Հրոսակախմբերի թիւը օրէցօր աւելանում
է. ամբողջ շրջանում ոչ մի գիւղ չը կայ, որտեղ բոյն պրած
չը լինի ապստամբների մի խմբակ, որին թաղցնում են տեղա-
ցի քրիստոնեաները մասամբ ակամայ և մասամբ կամաւ:
Կօմիտեաները տենդային շտապով պատրաստում են ամեն
ինչ, որ հարկաւոր է ապստամբութեան համար, երիտա-
սարգ քրիստոնեաներ ևն ժողովում իրանց խմբերի համար,
պատրաստում են կօշիկ, ղպեսա, զանազան մթերքներ և վիրակա-
պութեան պարագաներ: Ինչ վերաբերում է ապստամբութեան
ծրագրին՝ զլիսաւոր կէտը նրանում կազմում է հրոսակախմբերի
լեռները քաշուելը, ազգաբնակութիւնը նոյն տեղերը քշելը և
պարտիզանական խմբերով յարձակուելը թիւրքական զօրքերի
վրայ: Խմբակների ընդհարումները թիւրքական զօրքերի հետ
վերջին ժամանակներս զգալի չափերով յարձականում են: Դժուար
է յուսալ, որ յեղափոխական ազիտացիան, որ այսքան տարի-
ների ընթացքում խոր արմատներ է գցել՝ ինքն իրան զաղա-
րէր խաղաղ ճանապարհով, թէպէտև հիմք չը կայ ընդհանուր
ապստամբութիւն սպասելու. բայց չը պէտք է աչքաթող անել,

որ հնարաւոր են միաժամանակ խոռվութիւններ երեք վիլայէթների զանազան կէտերում»:

— Հեռագիր Միտրովիցի ուսական հիւպատոսից. «Ալբանացիները վիչետօրն քաղաքի մօտ ժողովուրդով պահանջեցին հեռացնել քրիստոնեայ զապտիաներին: Համաձայնութիւն չը ստանալով՝ նրանք մարտի 16-ին մտան վիչետօրն և իրանց պահապանների հսկողութեան տակ քրիստոնեայ զապտիաներին ուղարկեցին Պրիշտինա: Մարտի 17-ին նրանք պաշարեցին, բայց թիւրքական զօրքերի բացած կրակից յետ մղուեցին և զբուռեցին: 100 մարդուց աւելի սպանուածներ ու վիրաւորուածներ կան: Ալբանացիների նոր բազմութիւններ հաւաքուում են Իպեկից և Մնի-Բաղարից»:

— Հեռագիր Ռուսիւբի ուսական հիւպատոսից. «Միտրովիցայի մեր հիւպատոսը վիրաւորուած է մարտի 18-ին և բեկոյեան 5¹/₂ ժամին: Տանից դուրս գալով զաւազի և ձիաւոր պահակների ուղեկցութեամբ՝ պ. Շչերբինսան պատանեց ալբանացի զինուոր Իբրահիմին, որ ձևացնելով, իբր թէ ողջունում է նրան՝ արձակեց նրա վրայ Մաուզէրի հրացան, գնդակը դիպաւ պ. Շչերբինայի ձախ կողքին և ծակելով դուրս եկաւ: Այնուհետև Իբրահիմը հրացան պարպեց զաւազի վրայ և ինքն էլ վիրաւորուեց հիւպատոսին ուղեկցող զինուորներից: Իբրահիմը ասում է, թէ այն պատճառով հրացան արձակեց ուսաց հիւպատոսի վրայ, որ կամենում էր իր վիրաւորուած ազգականի վրէժն առնել: Միտրովիցի զինուորական բերդապահ Սայիդ-բէյը՝ բժիշկների ուղեկցութեամբ անմիջապէս այնտեղ հասաւ և պ. Շչերբինային փոխադրեց հիւպատոսարան: Ընդհանուր վերահսկող Խիլմի-փաշան և գեներալ ադիւտանտ Նասիր-փաշան անմիջապէս հեռադրով ցաւակցութիւն յայտնեցին: Այնուհետև Խիլմի-փաշայի կարգադրութեամբ՝ վիլայիթէի ամենահմուտ վերաբոյժը յատուկ գնացքով գնաց Միտրովիցա: Բժիշկների ասելով Շչերբինայի կեանքին վտանգ չէ սպառնում»:

Այդ պայմաններում զարմանալի չէ որ շատ փափուկ է Բուլղարիայի մինիստրութեան դրութիւնը: Ահաղին պատմական պատասխանատուութիւն մի կողմից, միւս կողմից իրար հակասող պահանջներ մեծ պետութիւնների և բուն ժողովրդի ու մակիզմական արբւնակիցների: Հէնց սկզբից ծագում էր զինուորական մինիստրի գեներալ Պապրիկովի և մինիստր-նախագահ զօրգօր Դանեօփի հայեացքների մէջ տարբերութիւն, որի հետևանքն էր գեներալ Պապրիկովի հրաժարականը: Ոչ ոք չէր ու-

ղում ստանձնել զինուորական մինիստրի պաշտօնը ներկայ հակասական պահանջների ժամանակ: Եւ ահա մարտի 14-ին ազգային ժողովում Դանեօվը պաշտօնապէս հաղորդում է որ ամբողջ մինիստրութիւնը հրաժարական է տալիս...

Երկրի այդ զրութեան աւելացրէք նաև Վիէննայի „Zeit“ լրագրում Բօրիս Սարաֆօվի, Մակեդոնական կոմիտեաի այդ պարաղլիի, պատասխանը յիշեալ թերթի խմբագրութեան:

«Արդեօք պարտաւոր չեն մակեդոնացիները այժմ հրաժարուել իրանց յեղափոխական գործունէութիւնից, ի նկատի ունենալով որ Եւրոպան պաշտպան է դուրս եկել նրանց գործին» հարցրել են Սարաֆօվից:

Այդ դիմումին Ատաֆօվը պատասխանել է:

«Մենք պէտք է մեզ մատնիչներ համարէինք, եթէ զէնքը աւելի առաջ վայր դնէինք, քան տեսնէինք թէ ինչ օգուտ կը բերի մեզ եւրոպական միջամտութիւնը: Մենք չատ փաստեր ունենք թերահաւատութեամբ վերաբերուելու համար զէպի եւրոպական միջամտութիւնը. իւրաքանչիւր անգամ, երբ Եւրոպան աշխատել է զիսլոմատիական ճանապարհով բորուորել թիւրքիայում քրիստոնեաների վիճակը, այդ միջամտութեան հետևանքը եղել են միայն քրիստոնեաների նորանոր կոտորածներ և ոչ բեֆօրմներ: Հայերի հետ պատահած օրինակը դեռ թարմ է մեր յիշողութեան մէջ:

«Մենք կարող ենք յուսալ մեր հայրենիքում տանելի կացութիւն վեյելիլու միայն այն ժամանակ, երբ այնտեղ կը տեսնենք մի քանի եւրոպական զօրագնդեր»: Ապա նա յայտնում է, որ մակեդոնացիները այլ բեֆօրմներ չեն խնդրում, քան այն, որ երաշխաւորում էին նրանց համար Բերլինի դաշնագրով:

«Թիւրքիան,—ասում է Սարաֆօվ,—չի տալիս մեզ այդ բեֆօրմները առանց Եւրոպայի զինուած միջամտութեան: Ահա ինչու մենք պատրաստուում ենք մեր իբաւոււնքները պաշտպանելու. միայն եւրոպական զինուորների ձեռքը կը համաձայնուենք յանձնել մեր զէնքը»:

Այդ մօտալուտ հրդեհին, ինչպէս երևում է, մտադիր է մասնակցել և Անգրատլանդեան մեծ հանրապետութիւնը, Միացեալ-Նահանգները: Պօլսից «Daily Chronicle»-ի թղթակիցը ի միջի այլոց հաղորդում է, թէ Հ. Ա. Միացեալ-Նահանգների ղեկավարն Լէլչման երկու ամսուայ ընթացքում իղուր աշխատում է սուլթանի մօտ ունկնդրութիւն ստանալ, որպէսզի յանձնի սուլթանին Հ. Ա. Մ. Ն. նախագահի ձեռագիր դիմումը, որի մէջ առաջ են բերուած ամերիկական պահանջները Ասիական թիւրքիայում գտնուող միսիօնարական դպրոցների և եկեղեցիների

մասին... Եթէ սուլթանը յայտնէ այսուհետեւ էլ շատ հաւանա-
կան է, որ թիւրքական ջրերը ուղարկուեն ամերիկական զրա-
հակիրները, ինչպէս այդ եղաւ երկու տարի առաջ...

Լ. Ս.

26 մարտի.

—Կ. Պօլսի հայոց թերթերը հաղորդում են, որ Կիլիկիայիոյ
նորրնափր կաթողիկոսը մարտի 5-ին հասել է Ադանա մեծ չորդ.
թիւրքաց կառավարութեան կողմից Սահակ սրբազանին արտա-
կարգ պատիւները են յոյ՛ց արուել:

Բերլինից խմբագրութիւնս ստացաւ հետևեալ դրութիւնը.

Պատիւ ունինք Ձեզ խոնարհաբար տեղեկացնելու, որ մենք
գիտաւորութիւն ունինք 1903 թ. աշնանը Բերլինում մի Հայ-
կական Յուցահանդէս կազմելու:

Մեր ձեռնարկութեան նպատակը որեւէ քաղաքական հի-
մունքից միանգամայն զուրկ է: Մենք կամինք Գերմանիոյ մայ-
րաքաղաքում հայ ազգի անցեալ և ներկայ կուլտուրան, նորա
նիւթական և հողերը արդասեաց ընդհանուր պատկերը գերմա-
նական հասարակութեանն ներկայացնել: Մեր ցանկութիւնն է՝
զրգել գերմանական գիտութիւնն աւելի մեծ աջողութեամբ,
քան մինչև այժմ, ուսումնասիրել հայ լեզուն և պատմութիւնն
և աւելի պարզ պատկերացնել մեզ հայ ազգութիւնն: Ձեր ազ-
գութեանն խաղաղ կերպով ծառայել՝ այսինքն՝ Հայաստանի և
Հայերի մասին լոկ ճշմարտութիւն հանդէս դնել՝ մեր միակ
ցանկութիւնն է: Թէ Ձեր ազգը մի խաղաղ, հոգևորապէս զար-
գացած և վերին աստիճանի կուլտուրայի ընդունակ ժողովուրդ
է՝ յօղուտ դորա գերմանացի և եւրոպական հասարակութեան
առջև համոզեցուցիչ ապացոյցներ են բերելու նորա աշխատան-
քի պատուհները և նորա հողերը կեանքի արդասիքը, հայ պատ-
մութեան սկզբից մինչև մեր ներկան:

Յուցահանդիսի ծրագիրը հետևեալ բաժանմունքներից կը
բաղկանայ՝

I. Երկրի բերքը.

ա) Հանրեր և մետաղներ. բ) Նափտայ. գ) Բամբակ. դ)
Բուրդ. ե) Մետաքս. զ) Գինի և այլ խմիչք. է) Չոր միրգ. ը)
Կաթնային սնտեսութիւն. թ) Ձկնեղէն:

II Արուեստ եւ ծեռագործ.

ա) Գեղակար. բ) Ոստայնանկութիւն (կապերաներ և այլն).
գ) Ոսկերչութիւն:

III. Հին եւ նոր հայկական գեղարուեստ.

ա) Ճարտարապետութիւն և արձանագրութիւն. բ) Մոզաիկ. գ) Նկարչութիւն:

IV. Ազգագրութիւն.

ա) Ժողովրդի կեանքը, գործունէութիւնն, բնակարանն. բ) Ձգեստը. գ) Հոգևոր կեանքը՝ հեքեաթներ, վէպեր, երգեր և այլն:

V. Հայ հնութիւններ.

ա) Դրամներ. բ) Կնիքներ և այլն:

VI. Գրականութիւն եւ մամուլ: VII. Հայկական թատրոն (քեմի վրայ):

Դիտաւորութիւն կայ Յուդահանդիսի ժամանակ մի շարք դասախօսութիւններ Հայերի մասին կարգալու, որի համար հրատարակու ենք յայտնի գիտնականներ և ուսումնասէր ճանապարհորդներ. մեր ձեռնարկութիւնն ստուար հասարակութեան համար հետաքրքրական պէտք է անենք լուսաւոր պատկերներ և լուսանկարներ ցոյց տալով: Յոյս ունինք, Մեծապատիւ Պարոն, որ Դուք պատրաստ կը լինիք մեր այս ձեռնարկութեանն օգնելու և թէ մենք Ձեր օժանդակութեան շնորհիւ մեր ծրագիրը իրագործել կը կարողանանք:

Դրամը փոխադրելու է՝ Berlin, Deutsche Bank (Behrenstrasse), Herrn Dr. P. Rohrbach und Cand. B. Chalatianz.

Իսկ նամականի և այլն՝ Cand. B. Chalatianz und Dr. F. Finck, Berlin. Kantstrasse, 94.

Հայ թերթերում պարբերաբար հաշիւ ենք ներկայացնելու: Ի նուէր կ'ընդունուին մեր ծրագրում յիշուած բոլոր առարկաները:

Խորին յարգանք

Կօմիտէ

- | | |
|--|---|
| Դր. Փ. Անդրէաս
Իրանագէտ: | Պրօֆ. Կ. Գեւրջներ
Աեստագէտ: |
| Դր. Լեպսիուս
Deutsche Orient-Missionի Դիրեկտոր: | Դր. Ռ. Լեօվենֆելդ
Schiller-Թատրոնի Դիրեկտոր: |
| Պրօֆ. Ռ. Պիշել
Սանսկրիտագէտ: | Պրօֆ. Բ. Բեօրիգէր
Ազգագրական Ընկ. նախագահ. |
| Պրօֆ. Նդ. Մայեր
Պատմաբան: | Դր. Մ. Փինկ.
Լեզուագէտ և հայագէտ: |
| Նախագահ՝ | Քարտուղար՝ |
| Դր. Պ. Բօրբախ | Բ. Խալաթեանց |

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ՊՕԼՍԻ ԹԵՐԹԵՐԻՅ

—Կիլիկիայի Տարսոն քաղաքի Սէն-Պօլ կօլէժը Մր. Քրիսթի անուն անխոնջ ամերիկացի միսսիօնարին անձնուիրութեամբը հիմնուած է Տարսոնի մէջ Ս. Պօղոսի կօլէժը. որ դեր մը ունեցաւ Կիլիկիոյ ուսումնակարօտ միջավայրին մէջ և իր աստիճանական վերելակութեամբը այսօր գրեթէ հայ հաստատութեան մը հանդամանքը գրաւած է, պարունակելով իր ծոցին մէջ աւելի քան 200 ուսանողներ, որոնցմէ 135 հատը գիշերօթիկ և մնացեալը ցերեկեայ ու ձիավարժ. $\frac{3}{4}$ մասը մեր ուշիմ պատանիները կը կազմեն այդ աչքառու թիւին: Պատիւը մեծ է մեզ արձանադրել աստանօր թէ՛ վարժարանին տնօրէնութիւնը երբէք չ'ուզեր արդելք ըլլալ ուսանողներու տոհմային կրթութեան, և առ այս ապացոյց է անշուշտ հայ լեզուին տրուած բացառիկ կարևորութիւնը: Գրիգոր Գալստեան և Հայկ Տապանեան էֆէնդիները հայ լեզուի և զպրութեան համար պաշտօնի կոչուած են:

Մր. Քրիսթի, իբրև ազդեցիկ մարդ, կրցած է իր վարժարանին պիւտճէն ապահովել այն տեսակ մշտակայ և պատահական բարերարներու նիւթական աջակցութեամբը, որոնցմէ անթիւ դաւակներ ունենալու բախտը Մ. Նահանգաց վերապահուած է դարձեալ: Սոյն հաստատութեան այսօրուան անձեռնմխելի պահեստի գումարը կը բարձրանայ մինչև 22,000 անգլ. ոսկիի, տարեկան ծախքերուն պիւտճէն ըլլալով մօտաւորապէս 1,600—1,800 օսմ. ոսկի:

Կօլէժը ունի 11—12 մշտակայ դասատուներ: Մր. Քրիսթի, հիմնադիր-տնօրէն, փիլիսոփայութեան դասերը կ'աւանդէ, Միս Պրբու՛րը մաթեմատիկ և անգլ. գրականութիւն: Պարտ է աստ յիշատակել սոյն անխոնջ օրիորդին այն բացառիկ ջանքերը, որով կարևոր բաժին մը կ'ունենայ միշտ նպաստի գործին

մէջ եւ, ըլլալով ամերիկեան նախագատաւորին քոյրը և ձայն ու հեղինակութիւն ունեցող օրիորդ մը Մ. Նահանգաց մէջ: Մր. Իււէր ֆրանսերէն դասեր կ'աւանդէ, Տր. Թումայեան՝ բրնական գիտութիւններ, վեր. Ս. Մերթոնեան՝ անգլ. լեզու, Ս. էֆ. Քիւբէլեան՝ օսմ. և ընդհ. պատմ., Ա. էֆ. Սընըզճեան, Գ. էֆ. Գալստեան, Հայկ էֆ. Տապանեան՝ հայերէն, Թէվախարիտէս՝ յունարէն, Մր. Ժորժ՝ նուագախմբի վարիչ և կոմպոզիտէօր: Վարժարանին չրջանն է 10 տարի, և ընթացաւարտները կրնան զիւրաւ ընդունուիլ ամերիկեան վարժարանաց մէջ:

—Ժամանակին ծանուցուեցաւ թէ Ս. Հայրապետը, ընդունելով Հոռմէական Եկեղեցիէն բաժնուելով ուրոյն Եկեղեցի կազմող կարգ մը լեհացիներու զիմումը, արածներ է Ամերիկայի Առաջնորդ Սարաճեան եպիսկոպոսը որ անոնց ներկայացուցած քահանայացուները ձեռնադրէ, և միանգամայն վաճառած էր ունենալ այդ լեհացիներու դաւանութեան մասին կարևոր տեղեկութիւններ: Լեհացիները իբր մէկ ամիս առաջ ժողով գումարելով, սրոչիւր են պատասխանել Ս. Հայրապետին պահանջներուն, և իրանց գումարման մէջ արուած սրոչումը հանրազրութեամբ զրկած են Սարաճեան եպիսկոպոսի: Այդ հանրազրութիւնը ստորագրած են լեհացի բոլոր եկեղեցականները և ժողովին զիւանը, և զայն ամերիկեան կառավարութեան հաստատել տուած են: Այդ հանրազրութեամբ կը խոստանան. Ս. Քանի որ ձեռնազրութիւն պիտի առնեն Ն. Ս. Օծութենէն, և անոր անունը յիշել իրենց եկեղեցիներուն մէջ՝ իբր հոգևոր պետ իրենց եկեղեցւոյ Բ. Ասկէ վերջը եպիսկոպոսական ձեռնազրութիւնները միշտ Ս. Էջմիածին, Կաթողիկոսներուն կատարել տալ: Գ. Իրենց եկեղեցական առանձին կազմակերպութիւնը պահելով հանդերձ, կրօնական խնդիրներու մէջ Կաթողիկոսներու իրաւասութեան ներքեւ մնալ: Սարաճեան եպիսկոպոս այդ գիրը արդէն զրկած է էջմիածին:

ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Русская мысль», փետրուար.—«Միջազգային լեզու».—Քանի զարգանում է անտեսական կեանքը, և ուժեղանում է գանազան ազգերի և երկրների մրցումը, այնքան ակններև է դառնում համաշխարհային լեզուի անհրաժեշտութիւնը: Այդպիսի լեզուն կարող է որոշ դիւրութիւններ ստեղծել միջազգային յարաբերութիւնների մէջ, կարող է նպաստել համամարդկային մերձեցման, գարկ տալ կուլտուրայի զարգացմանը՝ հեշտութեամբ տարածելով նոր գաղափարները, գիտութեան ու գրականութեան զանազան արտադրութիւնները:

Նոր չէ այդ հարցը՝ նրանով զբաղուել են շատ գիտնականներ, նրա մասին զրուած են շատ յօդուածներ ու զրքեր: Այդ աշխատութիւնների շարքում առաջին անգամ մեծ ուշադրութիւն գրաւեց Ֆրանսիացի հեղինակ Գեղօզի յօդուածը, որ լոյս տեսաւ «Annales des sciences politiques» ամսագրի 1899 թ. յուլիսի համարում՝ «Langues de l'Etat et langues nationales» խորագրի տակ:

Պ. Գեղօզ քննելով ժամանակակից միջազգային յարաբերութիւնները և կուլտուրական կեանքը, գալիս է այն եզրակացութեան, որ իւրաքանչիւր զիտնականի այժմ անհրաժեշտ է իմանալ երեք «համաշխարհային» լեզուներ՝

Ֆրանսերէն, անգլիերէն և ղերմաներէն և թերևս ռուսերէն, որովհետև հետըզհետէ անելանում են ռուսերէն լեզուով զրուած զիտական աշխատութիւնները Ասիայի վերաբերմամբ: Ուրեմն նրա առաջարկութիւնն է՝ գարկ տալ այդ լեզուներին ուսումնասիրութեանը և զբրտնով դիւրացնել համաշխարհային յարաբերութիւնները: Մի առաջարկութիւն, որը արդէն իրագործում է որոշ սահմաններում:

Բայց այդ միջոցը այնքան դժուար է, այնքան լայն, որ երբէք չի կարողանալ ցանկալի նպատակին հասնել, ուստի յայտնի լեզուաբան Օրէալ անցեալ տարի «Revue de Paris»-ի էջերում առաջարկեց սահմանափակել լեզուների թիւը և զրանով հեշտացնել «համաշխարհային լեզու» ստեղծելու հարցը:

«Ֆրանսիայի, Անգլիայի և Միացեալ Նահանգերի մէջ, ասում է նա, հարկաւոր է կապել ոչ թէ քաղաքական կամ վաճառականական, այլ լեզուաբանական դաշնադրութիւն: Այդ դաշնադրութեան հիման վրայ Ֆրանսերէն և անգլիերէն լեզուները պարտադիր պէտք է դառնան այդ երեք պետութիւնների բոլոր դպրոցներում, այսինքն ոչ միայն համալսարաններում ու միջնակարգ դպրոցներում, այլ և մեծ քաղաքների տարրական դպրոցներում: Այդ միջոցը իր դրական հետե-

ւանքը կ'ունենար. 180 միլիոնից բաղկացած այդ ազգերի զործածական լեզուները իշխող ազդեցութիւն կը ստանային ամբողջ աշխարհում...»

Պարզ է, որ այդպիսի առաջարկութիւնները չէին կարող համակրութիւն գտնել գերմանացիների կողմից: Գուրսթոդնել զերմանական լեզուն—դա կը նշանակէ վերաւորել նրանց ազգային արժանապատուութիւնը, հարուած հասցընել պետութեան փայփայած «Weltpolitik»-ին: Ահա հէնց այդ պատճառով զերմանացի հեղինակներից ոմանք (օրինակ. U. Diels «Das Problem der Weltsprache»—«Deutsche Revue»-ի մէջ) աւելի զերազաս են համարում զուրկ մնալ համաշխարհային քաղաքակրթութեան պատուներէ, քան թէ դաւաճանել ազգասիրութեան դադափարին՝ յետին տեղը տալով մայրենի լեզուին:

Նոյն հարցի մասին զրեւ են նաև անգլիացիներն ու իտալացիները և ի հարկէ՛ զբանցից իւրարանշիւրն աշխատել է ցոյց տալ, թէ էլ մայրենի լեզուն է զերազասելին ու նպատակաշարժարք: Ահա այդպիսով առաջ է եկել ազգային մրցում՝ լեզուաբանական հսկի վրայ:

Այդ մրցման առաջն ստնելու համար ուրիշ գիտնականներ (պրօֆ. Բերման, պրօֆ. Գուտիւրա և այլն) առաջարկում են մի կողմ թողնել այս կամ այն լեզուի գերակշռութեան հարցը և ըստեղծել մի ընդհանուր լեզու, որը չի ճնշիլ ազգային լեզուները, ձեռք չի մեկնիլ նրանց ինքնուրոյնութեանն ու զարգացմանը, այլ յարմարեցրած կը լինի միմիայն գիտութեան ու միջազգային յարաբերութիւնների համար:

Այսպէս թէ այնպէս «համաշխարհային լեզուի» հարցը դարձել է ուշադրութեանն ու հետաքրքրութեանն առարկայ և ստեղծել է մի ամբողջ զբաղանութիւն:

Վ. Լեսեզիլ «P. M.»-ի ներկայ համարում «Международный языкъ культурныхъ сношении» յօդուածով քննութեան է աւնում այդ զբաղանու-

թիւնը, համեմատում է զանազան առաջարկութիւններ ու ծրագրերն և դուրս բերում հետևեալ եզրակացութիւնը:—

Նոր ձևով միջազգային լեզու րստեղծելու միտքը ծագեց անցեալ 1900 թ. Պարիզի ցուցահանդեսի ժամանակ: Այդ միտքը մեծ հաւանութիւն գտաւ համաժողովների և գիտական ընկերութիւնների կողմից, որոնք և ընտրեցին մի «մասնաժողով օժանդակիչ միջազգային լեզու ընդունելու համար» (Delegation pour l'adoption d'une langue auxiliaire internationale):—Այդ մասնաժողովը հրատարակեց մի կոչ՝ պրօֆ. Գուտիւրայի յօդուածի հետ միասին, որով յայտնում էր բոլորին, թէ նոր—միջազգային լեզուն չէ գիպշելու ազգային լեզուներին, այլ ծառայելու է միայն միջազգային յարաբերութիւնների համար:

Այդ մասնաժողովի կարծիքով միջազգային լեզուն պէտք է ստեղծուի արհեստական ձևով, ճիշտ այն ծրագրով, ինչպէս որ առաջարկում է պրօֆ. Գուտիւրան: Իբրև հիմք պէտք է ծառայեն եւրոպական այժմեան լեզուները: Այդ նոր լեզուի բառաբանը կազմելու համար նախ պէտք է հաւաքել գիտական ու տեխնիկական այն բառերը, որոնք ընդհանուր են բոլոր լեզուների համար, օրինակ՝ ատօմ, սկսիօստ, զաղ, թեմա, մեխանիկա, ֆիզիկա, տելիգրաֆ, բուֆետ, թատրոն, անանաս, շօխօլադ և այլն և այլն: Դրանց վրայ պէտք է աւելացնել այն բառերը, որոնք ընդհանուր են ֆրանսերէնի, գերմաներէնի և անգլիերէնի համար, այն է՝ elephant, famille, flamme, perle, person և այլն: Բացի զբանից՝ պէտք է օգտուել միառեսակ արմատներ ունեցող բառերից: Այդ բոլորից յետոյ կարելի է աւելացնել պակասած բառերը, ընտրելով ամենակարճները և հեշտահնչիւնները:

Այդպիսի խնամքով և զգուշութեամբ կազմած լեզուն ընդհանուր առմամբ հասկանալի կը լինի զբեթէ բոլոր ազգերի համար: Ի հարկէ ժամանակի ըն-

Թացքում կարելի է այդ միջազգային լեզուն աւելի մշակել ու կատարելագործել:

«Անկասկած, ասում է պ. Լեսեվիչ իր յօդուածի վերջում, մըջազգային լեզուի հարցը այսպիսի նոր հիմունքի վրայ դնելը և գիտական ընկերութիւնների ու յայտնի մասնագէտների անջակցութիւնը տալու են դրական հետեւանք, և գործնականապէս շահուելու է հարցը...»

«Миръ Божій», փետրուար.

«Ռուսաց պատմութիւնը սօցիոլոգիական տեսակետից: Առաջ քաշել անցեալը, քննել նրա պէտքէս երևոյթները, գտնել դրանց պատճառներն ու հետևանքները, այդպիսով բացատրել քաղաքական ու սօցիալական դանազան հոսանքներ, ընորոշել դրանց կապակցութիւնը և դրանցից որոշ եզրակացութիւններ ու բացատրութիւններ դուրս բերել նաև ներկայի վերաբերմամբ—ահա ս՛մ է պատմութեան նպատակը ընդհանուր առմամբ: Բայց այդ նպատակին կարելի է ձգտել կամ սահմանափակ շրջանակով—պատմելով պատմական դէպքերը ժամանակագրական կարգով, ինչպէս այդ անում է՝ օրինակ՝ ռուս պատմագիր Իօվայսկին, կամ դրա հետ միասին քննելով նաև հիմքը, բոլոր սօցիալական-քաղաքական դէպքերի բուն պատճառներն ու փոխադարձ ազդեցութիւնը, ինչպէս այդ անում են այսպէս ասած՝ սօցիոլոգ պատմագիրները, օրինակ՝ Դանկէ, Լամպրեխա, Գարէև, Վինոգրադով կայն:

Իսկապէս պատմութիւնը ի նկատի է առնում կատարուած որոշ փաստեր, որոշ դէպքեր—ուրիշ իօսքով ասած՝ կօնկրետ առարկաներ, հետևապէս նա կօնկրետ գիտութիւն է: Սակայն այդ կօնկրետ փաստերը երբէք համապատասխան լուսաբանութիւն չեն կարող ստանալ առանց վերացական մտածողութեան, ուրեմն միևնոյն ժամանակ պատմութիւնը և՛ վերացական գիտութիւն է, ճիշտ այնպէս, ինչպէս և հոգեբանութիւնն ու կենսաբանութիւնը: Հոգեբանութիւնը քննում է առհասարակ

ըակ հոգեկան կեանքը իրրև մի ամբողջութիւն, բայց այդ ամբողջութիւնը պարզելու համար նա որոշ փորձեր է կատարում կօնկրետ առարկաների—կենդանիների վրայ, ուրեմն հոգեբանութիւնը միևնոյն ժամանակ և՛ կօնկրէտ և՛ վերացական գիտութիւն է: Այդ միևնոյնը կարելի է ասել կենսաբանութեան մասին, որովհետև նա մի տեսակ վերացական հետևանք է, եզրակացութիւն է՝ կօնկրետ գիտութիւններից՝ բուսաբանութիւնից ու կենդանաբանութիւնից դուրս բերուած: Այդպէս ուրեմն կօնկրետն ու վերացականը իրար հետ լծորդելով միայն պատմութիւնը կարող է հասնել իր բուն նպատակին:

Հէնց դա է պատճառը, որ վերջին ժամանակներս առանձին ջանքեր են գործ դրում, որպէս զի պատմութիւնը հիմնուած կամ աւելի ճիշտն ասած՝ միշտ շողկապուած լինի սօցիոլոգիայի հետ:

Ռուսաց զրականութեան մէջ այդ ուղղութեամբ աշխատութիւններից առանձնապէս նշանաւոր է պրօֆ. Մելիկովի «Очерки въ исторіи русскоѣ культуры» խորագրով ուսումնասիրութիւնը, որ լոյս տեսաւ մասմաս նախ «Миръ Божій»-ի էջերում և ապա առանձին գրքերով:

Այդ միևնոյն ամսագիրը իր ներկայ համարից սկսել է տպագրել նոյն ուղղութեան մի երկրորդ ուսումնասիրութիւն՝ «Обзоръ русской исторіи съ социологической точки зрѣнія» (ռուսաց պատմութեան տեսութիւնը սօցիալօգիական տեսակէտից) վերնագրով, որ պատկանում է պրօֆ. Բօժկովի գրչին:

«Ռուս ժողովրդի պատմութիւնը սօցիոլոգիական տեսակէտից ուսումնասիրելու հետևանքն այն պէտք է լինի, ասում է հեղինակը իր առաջարկի վերջում, որ մենք կ'իմանանք մեր հայրենիքի անցեալն ու ներկան և կը հասկանանք նրա վարձացման հիմնական կանոնները: Եթէ դա ցնորք չէ, այլ իրականութիւն, եթէ երևակայու-

Թեան կամ սխալի արդիւնք չէ, այլ ճշմարտութիւն, այն ժամանակ մենք պէտք է կարողանանք գտնէ մասնակի կերպով, քիչ որոշ ձևով նախազուշակել և՛ Ռուսաստանի ապագան...»

Ուրեմն հեղինակին պատահին է քըննել ռուսաց անցեալ ու ներկայ պատմական-սօցիալական կեանքը և դրա հիման վրայ բնորոշել նրա ապագայ վիճակը:

Նա իր աշխատութիւնն սկսում է II-րդ դարից: Մենք նորից կը վերագառնանք այդ հետաքրքրաշարժ աշխատութեանը, երբ նա վերջանայ:

«Ծեցեղի գեւեցիսն եւ դեմոկրատիան Փրանսիայում».—Այդ վերնագրերի տակ Ե. Գեղենն աշխատում է բնորոշել գրականութեան ու գեղարուեստի գործիչների անտեսական-սօցիալական վիճակը Փրանսիայում. նա յիշում է մի շարք փաստեր, որոնք ցոյց են տալիս, թէ որ փրանսարուածներ է ստացել Փրանսիական ինտելիգենցիան XIX-րդ դարի ընթացքում, և գալիս է այն եզրակացութեան, որ այդ հարուածները առաջ են բերել որոշ հիասթափումն, սրից և տուժել է թէ գրականութիւնը և թէ գեղարուեստը:

«Գեղարուեստագէտի վերաբերմունքը դէպի հասարակութիւնը, ասում է նա, նոյնն է, ինչ որ արդիւնագործողի և սպասողի յարաբերութիւնը: Նկարիչը նկարում է մի պատկեր, նրա մէջ դնում է իր ամբողջ հոգին, մեծ դժուարութեամբ սալօնն է մտցնում. բայց դատարկարան ու պճնազարդ ամբոխը անտարբերութեամբ անցնում է այդ պատկերի մօտից և կանգ է առնում մի որևէ արևմտահեղ անտարանի կամ մերկանդամ գեղեցկուհու պատկերի առաջ: Եւ հիասթափուած նկարիչը մտածում է. «արժէ՞ արդեօք տաղանդ ունենայ, երբ մարդիկ գրաւում են անշընորհք արտաւերութիւններով»:

Հեղինակը դրամա է գրում, աշխատում է նրա մէջ լուծել փիլիսոփա-

յական ու հասարակական «անիծում» հարցերը, բայց հասարակութիւնը ձանձրանում է և թատրոնն չէ յաճախում: Այն ինչ ամենայնամար պիտեք, որտեղ կանայք են դուրս գալիս, խուռն բազմութիւն է հաւաքում թատրոնական դահլիճը: «Ահա թէ ինչով է դուարձանում ժողովուրդը», մտածում է տարաբաղդ դրամատուրգը և հիասթափում, վշտանում...

Փրանսիայի պատմական կեանքն էլ XIX-րդ դարի ընթացքում շատ պատճառներ է տուել քաղաքական յոռետեսութեան համար: Այդ յոռետեսութիւնը առանձնապէս սաստկացել է 1848 թ. արևմտահեղ կատակերգութիւնից» յետոյ, երբ ժողովուրդը փորձեց իր ձեռքն առնել իր վիճակը, բայց կատարեալ ֆիասկօ կրեց... այդ ժամանակ կազմակերպուեց Տենի սառը սկեպտիցիզմը, այդ ժամանակ Բենանը նշմարեց դեմօկրատիայի յատկանիշները, որ և յետոյ պատկերացրեց Կալիբրանի անձնաւորութեան մէջ... 1870—71 թ. աղէտը մի նոր հարուած հասցրեց ռամկավարական սկզբունքին և զբանով աւելի սաստկացրեց հասարակական մտքի տատանումները: Այդպիսի փոխուր տպաւորութիւններէ ազդեցութեան տակ կրթուած սերունդը զրկուեց որոշ հիմունքից-համոզմունքից: Փլօրերներէ, Գօնկորներէ տեղը բռնեցին Բուրժէ, Այրուօ, Բարրես և այլն: Դրանք իրանց սկեպտիցիզմը հասցրին այն աստիճանի, որ սկսեցին բացասել զիտութիւնը, և նրանցից մի քանիսն ընկան միստիցիզմի մէջ, մի քանիսը հաւատացին, թէ կաթոլիկութիւնը փրկարար հեղինակութիւն ունի, իսկ միւսներն էլ ուժեղ գագածունը որոնելով՝ սկսեցին շարժել ազգայնութեան բուլթ սուրբ...»

Բայց դա ինտելիգենցիայի առաջաւոր մասն էր, այն ևս ոչ ամբողջը: Բացի դրանից՝ Փրանսիայում կայ ինտելիգենտ այժմերի մի մեծ բանակ, որ ինտելիգենտ պրօլետարիատ կարող է կոչուել: Գ. Գեղենը երկար կանգ է

առնում այդ բանակի վրայ, որպէս-
զից ցայց տայ, թէ որքան շարքաշ վե-
ճակ է կրում նա, թէ սրբան զըր-
կանքներն է ենթարկում...

«Ամերիկական սինդիկատները».—
Տնտեսական մրցումը միշտ սիրում է
լսողը ոյժեր, միշտ դրանց է տալիս
վերջնական յաղթանակը: Ահա հէնց
դա է պատճառը, որ Ամերիկայում
այնպիսի արագութեամբ աճում են
սինդիկատները: 1897 թ. այդտեղ մի-
այն 63 սինդիկատ կար, իսկ 1900 թ.
այդ թիւը հասաւ 185-ի: Միացած ոյ-
ժերով գործելու ձգտումը մի տեսակ
համաճարակ է դարձել, որից վարա-
կուել են ոչ միայն խոշոր, այլ և մանր
կապիտալիստները: Չառ տեղերում
սինդիկատներ են կազմել նոյն իսկ
մանրավաճառները, մսագործները, ալը-
րագործները, անասնապահները և այն
և այլն: Մի իօքքով Հիւսիսային Ամե-
րիկայում սինդիկատները աճում են
ճիշտ այնպէս, ինչպէս սունկը անձը-
րեկից յետոյ:

Սակայն այդ երևոյթը ցանկալի չէ
կարող համարուել ժողովրդի մեծա-
մասնութեան համար, որովհետև դրա
չնորհու զգալի շահով թանգանում են
սպորուստի ամենամանհրաժեշտ պի-
տոյքները:

Հասարակական կարծիքը բողո-
քում է այդ հոսանքի դէմ, և մամուլը
արձաղանք է տալիս այդ բողոքին:
Պայքարը սուր կերպարանք է ստա-
ցել մանաւանդ Հասարակապետութեան
նախագահ Բուզեվիլի ճառից յե-
տոյ, որով նա պաշտպանեց սինդի-
կատների հակառակորդներին:

Սակայն հասարակութեան մի որոշ
մասը դէմ չէ սինդիկատներին, կամ
ինչպէս ասում է Փրանսիական «La
Revue» տմազիբը՝ «միլիարդների
թագաւորներին», որովհետև դրանց
շարքում գտնուում են այնպիսի ա-
նուանի բարերարներ, ինչպէս օրինակ
Պարնելլին. բացի դրանից՝ նրանց մի
սեսակ հաճոյք է պատճառում այն
հանգամանքը, որ այդ «թագաւորներին»

մեծ մասը ժողովրդի ստորին խաւե-
րից են բարձրացել:

Որպէսզի ընթերցողը զսնէ մտա-
ւոր գաղափար կազմէ այդ սինդիկատ-
ների մեծութեան մասին, յիշենք օրի-
նակներ. ութը յայտնի միլիարդատէրեր
միացել են, որպէս զի իրանց ձեռքը
զցեն Միացեալ Նահանգների բոլոր
երկաթուղիները, և դա գրեթէ իրա-
կանացած է: Մի ուրիշ սինդիկատ
սեփականացրել է պողպատի ամբողջ
արդիւնագործութիւնը, երրորդ սին-
դիկատը—ամբողջ նաւազնացութիւնը
ովկիանոսների վրայ կայն կայն:

Ուշադրութեան արժանի է այն
հանգամանքը, որ Ամերիկայի տնտե-
սական կեանքում արդէն նկատելի է
դարձել հետեւալ ընտրոշ երևոյթը.
քանի կենտրոնանում-գորեղանում են
կապիտալիստների ոյժերը, նոյնքան
աճում է նրանց հակաոյժը—սօցիա-
լիզմը: Հէնց այդ պատճառով էլ ո-
մանք սինդիկատների աճումը մի
ցանկալի երևոյթ են համարում, ո-
րովհետև նա ուժեղ զարկ կը տայ սօ-
ցիալիզմին և դրանով կը շտապիցնէ
Պարլ Մարկսի նախատեսած տնտե-
սական ընդհարումը, որից յետոյ թա-
գաւորելու է սօցիալիզմը...

«Անգլիացիներէ բարխերը».—Լէդի
Գ. Բամսդենը «Nineteenth Century»-
ում գետեղել է մի յօդուած, որով աշ-
խատում է ցոյց տալ, թէ անգլիացի-
ների բարքերը զգալի կերպով վտա-
ցել են: Չը նայելով արտաքին փայլին
ու զրաւչութեանը՝ անգլիական հասար-
ակութեան կեանքը ներսից փշացած
է ու կոպիտ: Հեղինակի կարծիքով
անգլիական բարքերը առանձնապէս
վտաացել են վերջին 30 տարիների
ընթացքում, երբ ոսկու երկրպագու-
թիւնը անլի ու սելի մեծ ծաւալ
ընդունեց, երբ հաբստանալու ձըգ-
տումը նսեմացրից ազնուութիւնն ու
անհատական արժանիքները...

Սակայն ուրիշ հեղինակներ քըն-
նելով նոյն հարցը՝ գալիս են այն եզ-
րակացութեան, որ փշացել են ոչ թէ

բոլոր անդիացիները, այլ միայն մի
որոշ դասակարգ՝ փոզային արիստո-
կրատիան, այսպէս ասած՝ զաւուա-
կան ազնւականութիւնը՝ «County
gentlemen»: Իսկ զրա հիմնական
պատճառը եղել է կապիտալիզմի ա-

րագ վարզացումը և նրանց սեփակա-
նութիւն կազմող հողերի սակաւ ար-
գինարեւրութիւնը — երկրագործական
կրիզիսի պատճառով:

Ե. Թ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԲՈՂՁ 1902 Թ. „ՄՈՒՐՃ“

ԱՐԺԷ 8 ԲՈՒՐԼԻ,

Ճանապարհածախսով 9 ռ.

Ն Ո Յ Ն

ԹԻԱԿԱՆԻ „ՄՈՒՐՃԻ“

դատ-դատ համարների գինն է (բացի № 4) 50 կոպ.,
ճանապարհածախսով՝ 65 կոպ.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՌՈՂՋԱՊԱՅԻԿ ԹԵՐԹ“

Երկշաբաթեայ պատկերազարդ հանդէսի

1903-4 ԹԻԱԿԱՆԻ ՀՆՄԱՐ

Իբրև յաւելուած, բաժանորդները կը ստանան ձրիապէս
4-ից մինչև 6 պատկերազարդ գրքոյկներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ Է 2 ռ. 50 կ. (ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ—10 Ֆրանկ)

Կարելի է վճարել եւ մաս-մաս, սկզբում 1 ռ. 50 կ. յունուարին—1 ռ.:
Հրատարակութիւնը սկսուելու է սեպտեմբերին: Տարին սեպ-
տեմբերից-սեպտեմբեր է:

Աշխատակցելու են շատ հայ բժիշկներ թէ Ռուսաստանի և թէ
Թիւրքիայի ու Պարսկաստանի:

Բաժանորդագրութեան համար թէ Թիֆլիսի մէջ և թէ գաւառնե-
րից պէտք է դիմել կամ թերթիս իմրապրատունը (Сергиевская
ул. д. № 12), կամ «Գրուտեմբերգ» գրավաճառանոցը (Книжная
торговля „Гуттенберг“):

Բազում կարելի է գրուել «Պրոմէթէուս» գրավաճ. (Товарище-
ство „Прометеус“), Պարսկաստանում դիմել Դ-ր Փաշայեանին
(Թաւրիզ):

Մեր հասցէն Тифлисъ, Редакция „Арогджапайкъ Тергъ.“
Արտասահմանից. Tiflis. Redaction „Arogdjapahik Tert“.

ԽՄԲ. ՀՐ. ԲԺ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ:

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴՍԳՐՈՒԹԻՒՆ

„Մ Չ Ա Կ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(31-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ 1903 ԹԻԱԿԱՆԻՆ

«Մշակը» հրատարակուելու է նոյն պրոգրամով և նոյն ուղղութեամբ

Ամեն օր ըսցի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը. «Մշակի» տարեկան գինը 10 ուրբլի է, տասնևմէկ և տասն ամսուանը՝ 9 ու., ինն և ութ ամսուանը՝ 8 ու., եօթն ամսուանը՝ 7 ու., վեց ամսուանը՝ 6 ու., հինգ ամսուանը՝ 5 ու., չորս ամսուանը՝ 4 ու., երեք ամսուանը՝ 3 ու., երկու ամսուանը՝ 2 ու. և մի ամսուանը՝ 1 ուրբլի:

Արտասահմանեան բաժանորդագրութիւն. Ա. մ. ե. ր. ի. կ. ա. յ. ի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար. Ե. ւ. ր. օ. պ. ա. յ. ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ուրբլի:

«Մշակին» դրուել կարելի է Խմբագրատանը (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն), իսկ Բազում—ն. Դաւթեանի մօտ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրուելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФ-ЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններն ընդունուած են բոլոր լեզուներով:

Ապտիկ բաժանորդագրութիւն չէ ընդունուած:

1903

ԲԱՅՈՒԱՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ա Ր Տ Է Մ Ի Ս

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՈՇԳՐԻ

Օ Ր Գ Ա Ն Ք Ս Ա Ն Ե Ր Ո Ր Գ. Դ Ա Ր Ո Ւ Հ Ա Յ Կ Ա Ն Ա Ն Ց
(Բ. ՏԱՐԻ)

Բաժանորդագրութեան պայմաններն են՝

Եզրագոսի համար տարեկան բաժանորդագրինն է դահ. ողջ.	40
Վեցամսեայ » » » » .	25
Արտասահմանի համար տարեկան բաժանորդագրինն է ֆր. .	12
Պարսկաստանի համար » » » » . .	8
Ռուսաստանի համար » » » » . .	5

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉՐԸՆԴՈՒՆՈՒԻՐ

Դիմել

Rédaction de la Revue des Femmes Arméniennes

«ARTÉMIS»

Boite Postale, 548 Alexandrie (Egypte)

Հոյս տեսաւ

„ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ“

ժողովածու հանդուցեալ բժիշկ

ԳԷՈՐԳ ԱԽՎԵՐԴԵԱՆԻ

Հրատարակութեամբ օր. ՄԱՆԷ ԱԽՎԵՐԴԵԱՆԻ

Խմբագրութեամբ «Ազգագրական Հանդիսի»:

Շքեղ տպագրութեամբ, 550 մեծադիր րեկտանգուլ:

Գինն է առանց ճանապարհածախսի 1 ր. 50 կ.

Դիմել Եր. Լալայեանցին, Тифлисъ, Саперная, № 5.

Հանդուցեալ բժիշկ Ախվերդեանի դուստր՝ օր. Մանէ Ախվերդեանը «Հայ Աշուղների» հրատարակութիւնն ամբողջապէս նուիրել է «Ազգագրական Հանդիսի» խմբագրութեանը, իսկ բժշկականութեան վերաբերեալ իր հօր հարուստ մատենադարանը նուիրել է Կովկասեան Բժշկական ընկերութեանը:

Լոյս տեսաւ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ

Ստերէոօպիական պատկերների ժողովածուի
Ա. մասը, 50 պատկերներից բաղկացած
Լուսադրիչ Ա. ՎՐՈՅՐ

Պատրաստուած է երկու տեսակ. 1) ամենաընտիր պրոտալ-
րինի թղթի վրայ և զեղեցիկ տուփի մէջ ամփոփուած՝ զինը
15 րուբլի. 2) Ալբիմինի թղթի վրայ, առանց տուփի՝ զինը 12 ր.:
Գնել կամ տեսնել ցանկացողները թող դիմեն՝ Թիֆլիս-
սում «Գուտտենբերգ» զրավաճառանոցը. Բաղուս Ա. Յա-
րութիւնեանի գրավաճառանոցը: Այս հասցէին պէտք է գրեն
նաև պատկերների նմուշները ստանալ ցանկացողները՝ Ա. Վրոյ-
բին յանձնելի, ներփակելով 3 հատ 7 կ. մարկա: Արտասահմա-
նից ևս այս հասցէին դիմել՝ առանց մարկաների:

Բացուած է բաժանորդագրութիւն

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ի

ՄԼԾ դիրքով մօտ 350 էջ

Ձքեղ թղթի վրայ, հեղինակի պատկերով և

Փառակազմ 10 ր.

Լաւ. թղթի վրայ. 3 ր.

Բաժանորդագրութիւնը կը փակուի յունիսին, և զրբերը կը սը-
պուեն բաժանորդների թւով:

Թիֆլիսում դիմել—Իշխանուհի Մ. Թումանեանցին (Барятин., 8)
և Փ. Վարդաղարեանին (Вельямин., 24)

Բազում ինժեներ Միխիթար Տէր-Անդրէասեանին (Т-во Андра-
НИКЪ) և Արամ Նազարէթեանին (К-ра Шагиданова):

Ժամանակաւոր պատասխանատու-խմբագիր՝

Յ. ՍՊԵՆՊԵՐԵԱՆ

Հրատարակիչ՝ Գ. Կրասիլնիկեան

Գողօլի յուշարձանի բացումը Թիֆլիսում.— Կ' Սուխօվօ-
Կորբլին.— Կ' Ե. Մարկով.— Կ' Գ. Բաղդէ.— Սեւ-ծովեան
երկամուզու ուղղութիւնը.— Վրաց դրամատիկական ըն-
կերութեան մրցանակը.— «Кавказъ» լրագրի պաշ-
տօնական հաղորդագրութիւնները.— «Аргонавтъ»-ի
դադարումը.— Խուզարկեանի կտակած գումարով սպաս-
տարան. Լ. Ս. 193

15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Ագրարային բեֆօրմներ Իրլան-
դիայում.— Աշխատանքի ներկայացուցիչ կառուցութեան
մի յաղթանակը արարամենտական ընտրութիւններում.—
Աւստրօ-Ուենգարական համաձայնութիւնը.— «Прав.
Вѣстн.» հաղորդագրութիւնները Մակեդոնիայում եւ
Ալբանիայում պատահած դէպքերի մասին.— Մինիս-
տրական կրիզիս Բուլղարիայում —Բ. Սարաֆօփի պա-
տասխանը «Zeit» թերթի խմբագրութեան.— «Daily
Chronicle» Միացեալ-Նահանգների դիմումի մասին.—
Կիլիկիայի նորընտիր կաթողիկոսը Ադանայում.— Յողո-
քական կօլլէժ Տարսժնում.— Լուսաւորչական լինացի-
ներ.— Հայկական ցուցահանդէսը Բերլինում. Լ. Ս. 208

16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 221

17. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 227

18. ՅԱԻԵԼՈՒՄԾ, Ա. Ըօլլէսի՝ Հրաչայի դար, թարգմ.
Ստ. Լիսիցեանի. 33—64

ԽՄՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից դրել պարզ,
մանաւանդ թիւերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի
երեսի վրայ:
2. 2^րընդունուած յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս,
իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնուած: Չնոտ-
զիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:
3. Իրուածքների վարձատրութեան շափը սրօշում է խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերադարձնում ուղարկուած յօդուածները փո-
փոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուշի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է խմբագրութեան
տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեանն ան-
հրաժեշտ է կցել տեղական պոստային դրասենեակի հաւաստագիրը (удостовер-
нение), որ ամսագրի համարը չէ յանձնուած գանգատաւորին:

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

(նոր շրջան, III-րդ տարի)

Խմբագրութեան անդամների եւ աշխատակիցների նոյն կազմով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ՝

Ռուսաստանում տարեկան 10 րուբ. Արսաստանում 12 րուբ.

»	կէս տարին 6	»	»	7	»
»	1 ամսուան 1	»	»	1	» 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է բաժանորդ գրուել.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձափճափաճեան փողոց, տ. № 16):

Կայսրաբեան այլ տեղերից պէտք է գրիմել՝ Тифлисе, въ редакцію журнала „МУРՃ“.

Արսաստանում՝ Tiflis, Rédaction de la revue „MOURTCH“.

Բացի այդ, «Մուրճին» կարելի է գրուել նաև՝

Թիֆլիսում—«Գուտենբերգ» գրափաճատանոցում:

Ծանօթութիւն. Ռուսաստանի բաժանորդներից նրանք, որոնք դժուարա-
նում են տարեկան բաժանորդադիմել (10 ռ.) վճարել միանուագ՝ կարող են տալ
մ ա ս - մ ա ս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.:

Ոչ-Թիֆլիսի բաժանորդները հասցէն փոխելու համար պէտք է ուղար-
կեն 40 կոպ.:

Ձեռագիրները և նամակները պէտք է ուղղել խմբագրու-
թեան, ՂԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով:

ՆՈՐ ԵՐԶԱՆ

ԻՒՒ ՏԱՐԻ

ՄՈՒՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.ՄՍԱ.ԳԻՐ

№. 4

Ա. Պ Ր Ի Լ

1903



ԹԻՖԼԻՍ

Արագաստիպ Մն. Մարտիրոսեանցի

Պուշկինեան փողոց № 12.

1903

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 4

	Երև.
1. ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ, վէպ Ա. Ահարոնեանի	5
2. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Ալ. Ժատուրեանի	27
3. ԱՐՇԱՆՈՒՍԻՆ (վերջ), վէպ յունաց հեանքից, Ե. Բենսոնի, թարգ. Յ. Արաբաջեանի	29
4. ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՒԻԹԸ, Յովհ. Թումանեանի	123
5. ՄԱԿՑԻ, ճանապ. նկարագր. Նժդեհի	132
6. ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻՉՈՒՄ, Նիկիտինի, թարգմ. Ալ. Ծատուրեանի	150
7. ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԴՈՒԻՆԵՅ, Մ. Շտոխի	156
8. ՍԱՌԻՆԵՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՕՏ, Ճամբորդի	164
9. ՊՐՈՒՍՍԱԿԱՆ ԱՆՀԱՄԲԵՐՈՂՈՒԹԻՒՆ, QUIDAM-ի	173
10. ԲԱԳՈՒԻ Հ. ՄԱՐԴԱՍ. ԸՆԿ. ԳՈՐԾՈՒՆ. 1902 Թ. Ե.-ի	183
11. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Ս. Շահաղի, «Մի քանի խօսք իմ ընթերց.».—2) Լ.-Ման. «Օտարումեան մէջ».—3) Ս. Հովսեփեան, «Վշտահար սրտից».—4) Չ. Ջերոմ, «Նոր ցնորք». Տ. Յ.—5) „Весь Кавказъ“.—6) Բժ. Բուդուզիան «Բուն եւ երազ».—7) G. Brandes, „Armenien und Europa“. Ե. Թ.—8) А. Хатисовъ, „Общ. борьба съ туберк.“ 9) А. Хатисовъ, „Какъ осущ. идею постр. санат. для туб. на Кавк.“.—10) Վ. Օրլովսկի, «Ստամբուխ կատարը».—12) Բժ. Տ.-Իսահակեան, «Տրախտմա».—ըժ. Գ. Սարգ.	187
12. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԲԵՐ	200
13. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՅ, Անտեանելի ճառագայթների մասին, Լ. Ս.	201
14. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ, 1) Ռուսաստանի ֆինանսական քաղաքականութիւնը.—2) Բ. մաքսային նոր սակազինը.	206
15. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ, Ընկերակցական ձեռնարկութիւններ Երևանի նահանգում, Ա.-Դ.Ո	214
16. ՆԵՐՔԻՆ, ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մոլորեցնող մամուլի վտանգաւոր դերը.— Ռուս նացիոնալիստ-անտիսեմիտները.—Քիշինեւի հրէական ջարդը.—Նացիոնալիստ—անտիսեմիտ ամենատարածուած ոռուսաց թերթի կաշառակերութիւնը.— „Новое Время“-ի աջողութիւնը.— „Русская Мысль“ ամսագրի վաճառման հարցը եւ նրա իսկա-	

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№ 4

Ա Պ Ր Ի Լ

1903



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ Մ. Մարտիրոսեանցի:

Պուշկինեան փողոց № 12.

1903

Дозволено цензурою. Тифлисъ, 30 апрѣля 1903 г.

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 4

	Երև.
1. ՄԲԲԿԻ ՍՈՒԲԲԸ, վէպ Ա. Ահարոնեանի	5
2. ԲԱՆՍՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Ալ. Ժատուրեանի	27
3. ԱՐՇԱՒՈՒՍԻՆ (վերջ), վէպ յունաց կեանքից, Ե. Բեն- սոնի, Թարգ. Յ. Աբաբաջեանի	29
4. ՍՍՍՈՒՆՑԻ ԴՍԻԹԸ, Յովհ. Թումանեանի	123
5. ՄԱԿՈՒ, ճանապ. նկարազր. Նժդեհի	132
6. ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻՉՈՒՄ, Նիկիտինի, Թարգմ. Ալ. Ժատուրեանի	150
7. ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԴՈՒՆԻՅ, Մ. Շտտի	156
8. ԱՍՈՐԻՆԵՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՕՏ, Ճամբորդի	164
9. ՊՐՈՒՍՍԱԿԱՆ ԱՆՀԱՄԲԵՐՈՂՈՒԹԻՒՆ, QUIDAM-ի	173
10. ԲԱԳՈՒԻ Հ. ՄԱՐԴԱՍ. ԸՆԿ. ԳՈՐԾՈՒՆ. 1902 թ. Ե.-ի	183
11. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— 1) Ս. Շահազիզ, «Մի քանի խօսք իմ ընթերց.».— 2) Լ.-Ման. «Օտարութեան մէջ».— 3) Ա. Հակվերդեան, «Վշտահար սրտից».— 4) Զ. Զերուս, «Նոր ցնորք». Տ. Յ.— 5) „Весь Кавказъ“.— 6) Բժ. Բուզուզեան «Բուն եւ երազ».— 7) G. Brandes, „Armenien und Europa“. Ե. Թ.— 8) A. Хатисовъ, „Общ. борьба съ туберк.“ 9) A. Хатисовъ, „Какъ осущ. идею постр. санат. для туб. на Кавк.“.— 10) Վ. Օրլովսկի, «Ստամբուլի կատարը».— 11) Բժ. Տ.-Իսահակեան, «Տրախում».— Ըժ. Գ. Սարգ.	187
12. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ	200
13. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՅ, Անտեսանելի ճառագայթների մասին, Լ. Ս.	201
14. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ, 1) Ռուսաստանի ֆինանսական քաղաքականութիւնը.— 2) Ռ. մաքսային նոր սակա- զիւնը.	206
15. ԳՍԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ, Ընկերակցական ձեռնարկութիւններ Երևանի նահանգում, Ա.-ԳՕ	214
16. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Մոլորեցնող մամուլի փոսնդաւոր զերը.— Ռուս նացիոնալիստ-անտիսեմիտները.— Քիշի- նելի հրէական ջարդը.— Նացիոնալիստ—անտիսեմիտ ամենատարածուած ռուսաց թերթի կաշառակերութիւնը. — „Новое Время“-ի աշրդութիւնը.— „Русская Мысль“ ամսագրի վաճառման հարցը եւ նրա իսկա-	

կան խմբադրի դրուժիւնը.—Թուրքերէն լեզուով լոյս տեսնող «Շարքը Ռուս» թերթը.—Կրօնական եւ մտաւոր կապ.—Միջնակարգ դպրոցների մասին որոշում.—Նոր լեզուների գործնական պարապմունքներ միջնակարգ ուսումնարաններում.— «Кавказъ»-ը Սոչիի դէպքի մասին.— «Прав. Вѣст.»-ը Պետ.իգ.բժ. ինստ. յուլյուներների մասին.— Պ. պ. Ա. Մանթաշեանի եւ Մ. Արամեանի դրամական նուէրները — «Правит. Вѣст.»-ը Քիշինեւի անկարգութիւնների մասին.— Բարձրագոյն հրամաններ.— Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ.— Պաշտօնից հեռացրուած քաղաքագուլիս.— Նախկին ոստիկանապետ Շաֆրովի գատապարտումը 218

17. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մակեդոնական հարցի ընդարձակումը.—Շահագրգռուած կողմերի երկդիմի վերաբերմունքը.—Աւստրո-Ռենդարիայի ձգտումները.—Մակեդոնացիների որոշումը.—Ղինամիտային պայթումների Սոլունում.—Մեծ պետութիւնների կողմից նաւատորմիղներ ուղակիքը Սոլուն.—Կիլիկիայի նորընտիր կաթողիկոսի ժամանումը Սիս.—Պոստով դրամ փոխադրելու համաձայնութիւնն Ռուսաստանի եւ Բուլղարիայի մէջ 235

18. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 240

19. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ 246

20. ՎՐԻՊԱԿՆԵՐ, ՊՏՏԱՍԽԱՆՆԵՐ 247

21. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 249

22. ՅԱՒԵՂՈՒԱԾ, Ա. Ըօլլէսի՝ Հրաչալի դար, Թարգմ. Ստ. Լիսիցեանի 65—80

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից զրել պարզ, մանաւանդ թեւերը, յատուկ անուններն ու օտար բառերը, ե թերթի միայն մի երեսի վրայ:
2. 2-րնդունուած մեծ յօդուածները պահուած են խմբագրասանը 6 ամիս: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնուում:
3. Գրուածքների վարձատրութեան շափը որոշում է խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուշէի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ռուսերէն գրուած ազգով (заявление) մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Եյդ տեղեկութեանն անհրաժեշտ է կցել տեղական պոստային գրասենեակի հուաստագիրը (удостоверение), որ ամսագրի համարը չէ յանձնուած գանգատաւորին:
6. Խմբագրութեանը վանազան հարցումներով զիմուղ անձինք պէտք է ատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային ըլանկ:

ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ*)

XI

Օրեր էին անցնում օրերի վրայ, աշխատանքի ժամանակ էր, հարեւաններն շտապ-շտապ հաւաքում էին իրանց դաշտային բարիքը: Նունուֆարը տեսնում էր այդ բոլորը ցաւով, տեսնում էր, թէ ինչպէս իր գործը մնում է, աշխատող ձեռներ չը կան, իսկ Ասօն էլ տուն չի գալիս, ասես իսկապէս մտաւցած՝ թէ տուն ու օջաղ, մայր ու քոյր ունի: Նունուֆարն իր փոքրիկ Շուշիկի հետ անում էր, ինչ կարող էր, ամբողջ ցերեկը շարձարւում էր դաշտերում, իսկ երեկոները ախուր ու ջարդուած սրտով յետ էր գալիս տուն, նստում բակի դըրան տուած՝ աչքերը յառած մթութեան մէջ դէպի հեռուն, նայում էր և սպասում, թէ երբ կը յայտնուի Ասօն: Բայց որդին չը կար ու չը կար, և մայրը լալիս էր իսաւարի մէջ, լալիս էր իր խեղճութիւնն ու անտէրութիւնը, իր օջաղի սրբութիւնը: Եւ չորս կողմում՝ տսում էին՝ պատրաստում է մի սոսկալի բան, մի անորոշ, մութ սարսափ, որ կարծես բարձրացել էր հեռու-հեռու, և շարժում, գալիս էր քայլ առ քայլ, և ասում էին որ այդ սարսափը կը հասնի Ա... գիւղին՝ ուշնանը: Ապրօն զուր չէր ճշում՝ «զուլճւմ, զուլճւմ»...

*) Տես Մուրճ № 3.

Եւ մարդիկ շտապում էին...

Եւ Նունուֆարը մենակ էր ու անտէր. ինչ պիտի անէր, երբ հասնէր սարսափը. ո՞ւմ դիմէր, ո՞վ նրան կը պաշտպանէր:

Սե էր պատել նաև Գիւլնազենց տունը: Լճի վրայ նաւակի մէջ իր աղջկայ ծայրայեղ վիշտը տեսնելուց յետոյ Նաւօն էլ աւելի մուսլուել էր. նրա յօնքերի արանքում մի զոյգ խորը կնճիռներ էին կազմուել, որ էլ չէին հեռանում ճակատից, ինչպէս աշնանային ամպերը երկընքից: Ըստ երևոյթին նա իր դորձը շարունակում էր առաջուայ պէս, ամեն առաւօտ վեր էր կենում, ուռկանը շալակում, շարժում էր դէպի լիճը և երեկայեան վերադառնում, բայց օր-առօր աւելի և աւելի լռակեաց էր դառնում, և իր աշխատանքն էլ առաջուայ պէս արդիւնաւէտ չէր: Մի զարհուրելի քէն էր բուն դրել նրա սրտում դէպի շատ բան աշխարհում, դէպի ամեն մի երջանկութիւն և մանաւանդ՝ դէպի այն ջրաղացը, ուր ապրում էին Գոպէն ու Սսօն, նրա համար երկու հաւասարապէս ատելի արարածներ: Նրա ատելութիւնը դէպի Գոպէն հին էր, շատ հին. մի գաղտնիք կար երկու ծերունիների մէջ, որ ծածուկ էր ամբողջ աշխարհից: Նաւօն էլ շատ տարիներ առաջ սիրում էր այն աղջկան, որի մահուան պատճառ եղաւ Գոպէի հայրը, և նրանք ախոյեաններ էին: Վրիժառու և կատաղի Նաւօն իր հակառակորդին վիրաւորելու համար ամուսնացաւ Գոպէի երկրորդ նշանածի, Գիւլնազի հետ: Այսպիսով նրանք երկու անգամ պատահեցին իրար կեանքի ճանապարհին և երկու անգամին էլ բաժանուեցին անհաշտ թշնամիներ:

Ամուսնանալուց յետոյ Նաւօն նկատեց Գիւլնազի կողմից խիստ սառն վերաբերմունք դէպի իրան, նա այդ վերադարեց իր կնոջ տակաւին վառ սիրուն դէպի Գոպէն, և իր ատելութիւնը դադարեցնակէտին հասաւ թէ՛ դէպի մէկը և թէ՛ դէպի միւսը: Իր կատաղութեան մէջ նա տարիներ շարունակ ձեծում, տան-

ջուճ էր Գիւլնաղին, և միայն Շողերի ծնունդը մեղմեց նրան և երկու ամուսինների մէջ կապ հաստատեց: Նաւօն այնուհետև ամբողջ աշխարհը կետրոնացրեց միայն Շողերի մէջ, աշխատում, տքնում, ապրում էր միայն նրա համար: Լուռ էր, սակաւախօս, արտաքուստ սառն ու մռայլ, իր ծնողական սէրը չէր արտայայտում երբէք, բայց նա իրօք պաշտում էր Շողերին: Եւ այժմ տեսներով թէ ինչպէս օր-աւուր մաշում է իր աղջիկը, նա կիսում էր յօնքերը, և Գսպէի ջրաղացի դռնից անցընելիս՝ սլմում էր բռունցքները և մրթմրթում էր անէճքի խօսքեր և՛ Գսպէին, և՛ Ասօին: Հին ատելութիւնը քնած դագանի պէս զարթնում և կամաց-կամաց գլուխ էր բարձրացնում, նաւօն սպառնում էր այն մենաւոր ջրաղացին և նրա բնակիչներին:

Շողերը հիւժւում էր օր-աւուր, նրա լիքը, կարմիր այտերը դատարկում էին ու գունատում, լուռ ու արձանացած նա ժամերով մնում էր միեւնոյն տեղում նստած, հայեացքը մի կէտի սևեռած: Ասօի և Շողերի շուրջը պտտում էին լուրեր, սրտնք ալիքների պէս բարձրանում էին և մօտ էին խեղդելու վշտահար, յուսահատ աղջկան: Հաղար ու մի բաներ էին փափրսում մէկը մյուսից վատ: Հաստատն այն է, հաւատացնում էին ամենքը, որ Ասօն խաղաւ թողել է Շողերին, որովհետև նա իր մեծ եղբօր նշանածին չի ուզում առնել, բայց հօրը խօսք է ատել և դարդից խենթացել է: Ասում էին նոյնպէս, որ Շիրինենց Պետօն նրան խաղաւ խենթ է տեսել Գսպէի ջրաղացում:

Ինչ էլ լինէր, Գիւլնաղն ու Նունուֆարը մայրեր էին և անգագար ճար ու հնար էին վնդրում: Իրանց զաւակների բախտաւորութիւնը յետ բերելու: Թէև սրբերը չ'օգնեցին, բայց և այնպէս նրանցից սլ մի նոր սրբի անուն էր յիշում, վաղէվազ գնում էր միւսին յայտնելու, և յաջորդ օրը նրանք ճանապարհ էին ընկնում դէպի նոր ուխտատեղին նոր զոհերով, հին ազօթքներով ու խնդրեւածքով: Եւ այսպէս օրեր ու շաբաթներ:

Եւ մըրիկը պատրաստուում էր կամաց-կամաց, հե-
ռաւոր սարսափը բարձրանում, գալիս էր, ինչպէս սև
ազուանների երամը, որ ուշ աշնանը դաշտից դաշտ է
տեղափոխուում վհատեցուցիչ ամայութեան մէջ: Ասում
էին, որ Մըրիկ սուրբը կրկին յայտնուելու է իր խաչքա-
րի վրայ, որպէսզի սարսափը երկրի վրայից անցնի ա-
ռանց աւերածի: Ծանր ժամանակներ էին, ծանր օրեր:

Եւ Ապրօն չարունակում էր գիշերները ոռնալ.

«Ձուլճւմ, զուլճւմ...»

XII

Այն երեկոյ նախիրն եկաւ ու փոշու ամպերով գիւղը
պատեց. հոտերը բառաչելով ցած լիճան լեռներից, հըն-
ձուորները գերանդիններն ուսերին տուն յետ դարձան:
Նունուֆարն էլ Շողերի ձեռքից բռնած՝ մի խուրճ խոտ
չալակին՝ դաշտից տուն եկաւ: Մայր ու աղջիկ անասուն-
ները տեղաւորելուց յետոյ իրանց սովորութեան համե-
մատ նստեցին և սպասում էին: Թէև վաղուց էին դա-
դարել յուսալուց, բայց էլի սպասում էին, սվ գիտէ,
յանկարծ Ասօն խելքի դայ, տուն վերագառնայ,
յանկարծ չարքից աղատուի: Գուռը ճռուալով բացուեց,
մայր ու աղջիկ շփոթուած նայեցին, ներս մտնողը Գիւլ-
նագն էր:

— Ասօն էլի չը կոյ:

— Ձը կայ, քոռանամ ես, պատասխանեց Նունու-
ֆարը:

— Թո՛ղ որ ես քոռանամ, Նունուֆար-խաթուն, մի-
նուճար աղջիկս երկու անգամ է սև կապում, իմ ո՞ր
մեղքի համար: Ձի ապրի, քուրիկ, չի ապրի, ահաւոր
դատաստանին պարտական կը մնայ Ասօն: Էդ ի՞նչ ա-
րեց, ի՞նչ հողը տուեց մեր գլխին: Ա՛խ, ջրատար Շողեր,
չի ապրի ջրատարը. անցեալ օրը տեսել է...

— Ո՞ւմը:

— Ասօին, ո՞ւմը. տեսել է լճի ափին. ես քեզ չէի

ասում, դէ ինչ ասէի, դուրդ չէր դայ, հիմայ տեսնում եմ, որ պահելով բան չի դուրս դայ, լաւն էն է՝ ասեմ: տեսել է Ասօին ջրի ափին, ինչեր են խօսել, ես ինչ իմանամ, մրայն էն օրուանից ոչ գիշերը քուն ունի խեղճ երեխաս, ոչ ցերեկը հանգիստ, լալիս է, լալիս է, արուն-արցունք է քամում, մահից է խօսում անդադար: Կերթամ, ասում է, ինձ սարից ցած կը դլորեմ, որ աղատուեմ, իմ սօքն, ասում է, բէխէր է, ում հետ կապուեմ, մի շար բան կը պատահի, էն մէկ ախպերն էնպէս էլաւ, էս մէկն էլ էսպէս, հալբաթ մի բան կայ, հալբաթ ճակատիս է դրուած: Լաւն էն է, ասում է, մի տեղ թաղեմ սեւոր դլուխ ու պրծնեմ: Ինչէր է ասում, նունուֆար-խաթուն, ան, որ լսես, քար ընի, չի գիմանայ, սիրտս քամում, աղիքներս գալարում են ջրպարիս մամուռից, մեռնում եմ, էլ քուն չունիմ, ու երազներ, շար ու բարի երազներ գիշերը հանգիստ չեն տալիս ինձ: Իմանաս անն եմ տեսել էս գիշեր:

— Ո՞ւմը, Գիւլնազ:

— Էն սարի սրբին, Մրրկի սրբին, մեռնիմ իր զօրութեանը:

— Մեռնիմ իր զօրութեանը:

— Երազիս եկաւ ծերունի ճգնաւորը, մեծ միրուքով, փառահեղ գէմքով, լալիս էր, լալիս էր անաւեր սուրբը, նունուֆար-խաթուն, ասում էր, ամենքն ինձ մոռացել են, իմ արիւնոտ խաչքարին ոչ ոք ուխտ չի գալիս, բայց իմ զօրութիւնն, ասում էր, աշխարհով է Գուր էլ էք մոռացել, մեծ ու փոքր սուրբ ու խաչքար չը մնաց, գնացիք տեսաք, մատաղ տարաք, մէկ ես եմ մոռացուել, լսւ, թող օրիշները ձեր ուխտը կատարեն:

— Հն, իրաւ է, նրան մոռացել ենք:

— Չայրացած էր, նունուֆար, ինչպէս էր զայրացած, աչքերը չուց վրաս, դլուխն օրօրեց, երկար միրուքը թափ աուեց, վախիցս դողացի, զարզանգը բռնեց ինձ, ու վեր թուայ, երազ էր: Քրտնքի մէջ կորած էի:

Գնանք, Նունուֆար-խաթուն, գնանք սարի խաչքարի ստքը:

Նունուֆարը լսում էր լուռ ու մտախոհ: Նա կամ մի ծանր մտքով էր զբաղուած, կամ հաւատը խախտուել էր գէպի սրբերը:

—Նունուֆար-խաթուն, շարունակեց Գիւլնազը, մենք ծնկաչոք սողալով, չանդռելով կը բարձրանանք մինչև խաչքարը, մինչև Մրրկի սուրբը. նա, որ երկինք ու գետին իրար խառնուած ժամանակ գիտէ փրկել աշխարհը, նա միայն կարող է ազատել Ասօին շարից, ցաւից:

—Հա, հն, շարից, ցաւից:

—Մրրկի սուրբը, Մրրկի սուրբը, Նունուֆար-խաթուն, շատ է հզօր, շատ է զթաճ, նրա դուռը ոչ ոք չի գնում, նրան մատաղ ոչ ոք չի անում, բայց էլի Մրրկի, փսթօրկի ժամանակ՝ ասում են՝ նա է հաննում ամենիս, մեռնիմ նրա սուրբ զօրութեանը:

—Հա, հզօր է, մեռնիմ նրա սուրբ զօրութեանը, կրկնեց Նունուֆարը մեքենայաբար:

—Մրրկի սուրբը, Մրրկի սուրբը, Նունուֆար-խաթուն, շատ է հզօր, նա հազար ցաւի ճար ու գեղ ունի, նա հազար դարգի դարմանը գիտէ, նա ողջ երկինքը կապ կապել գիտէ, նա սև-սև ամպերն է հալածում վերից, խիստ քամիների ակերը փակում, նա հազար դարգի ճար-դարման ունի, հազար սրտերի ախտանք ունի, ինքըն էր ասում, սղորմած սուրբը, մեռնիմ նրա սուրբ զօրութեանը:

Պառաւները կրկին խաչակնքեցին:

—Գնանք, գնանք նրա ստքը:

Նունուֆարը լուռ էր և ծունկը գրկած՝ մեղմիւ օրօրում էր:

—Ինչո՞ւ չես խօսում, քուրիկ:

—Էհ, ի՞նչ ասեմ, կրակն էնքան մեծ է, որ էլ ջուր չենք հասցնի. —Նունուֆարը հեկեկաց և աչքերը սըրբեց. —սրբերն էլ ի՞նչ անեն:

Գիւլնաղը շփոթուած նայում էր, Նունուֆարը նոր բան գիտէր:

—Նունուֆար-խաթուն, էս օրուայ լացդ...

—Թո՛ղ դուչմանս էս արցունքը չը թափի:

—Ի՞նչ ասաց տիրացուն:

—Տիրացուն... ասաց կմկմալով Նունուֆարը.—տիրացուն տանը չէր, չը տեսայ, է՛հ, ի՛նչ տեսնեմ:

—Ի՞նչպէս թէ ի՛նչ տեսնեմ, սուրբը՝ չէ, տիրացուն՝ չէ, բա էլ ի՛նչը, ո՛վ, ո՛ւր գնանք, ո՛ւմ գիմենք:

—Ոչ ոքի, ամեն բան պրծաւ, էլ ճար, փրկութիւն չը կայ:

—Ի՞նչ ես ասում, քուրիկ, բա տիրացուի գրքերը, աղօթքը, փշատի ծառը...

—Բոլորը զուր է, քանի որ նրանց մօտիկ, շատ մօտիկ մի պիղծ, մի անաստուած գործ է կատարուել:

—Ի՞նչ ես ասում, ս՛յ քուրիկ, երկիւնքը, հոգիւ մուռայե՛լ ես:

—Ոչ երկիւնքն եմ մոռացել և ոչ հոգիս, բայց տիրացուի գրքերին մօտիկ մի էնպէս բան է կատարուել, որ ասել վախենում եմ, բայց չասել, ծածկել էլ չեմ կարող, Գիւլնա՛ղ. էս գազանիքը ցեց գառած՝ կրծում է իմ ներսը, սաղսափելի բան է:

—Ի՞նչ է, Նունուֆար, անողորմ, հոգիս հանեցիր, սիրտս կտրեցիր, դէ, զորկ սպանիր մի հետ, էլ ի՛նչ ես մանր-մանր մտրթոտում:

—Ախր ասել չի լինում, ինձ թաղես, շարունակեց Նունուֆարը փսփալով.—պատերից էլ եմ ամաչում:

—Խեղդուում եմ, անողորմ...

Երկու կանայք երես երեսի հանդէպ իրար աչքերի մէջ էին նայում ու հետո էին յուզմունքով, հետո էին և սպասում:

—Նունուֆար...

—Տո՛ւնդ քանդուի, Գիւլնա՛ղ, Ասօն Շողերին թողնում է, նրա սիրտը կպել է Շիրինենց թաղա հարսին՝

Սառային, թառլան Սառային, հէնց տիրացուի գրքերի մօտ:

—Վնյ, ճչաց Գիւլնազը և երեսը ձեռների մէջ առաւ: Նա երկար մնաց այդպէս և մեղմիւ հեծկտում էր:

—Գոնէ չիմանան, իտալիը չիմանայ, Տէր Աստուած, մրմնջում էր Նունուֆարն ինքն իրան:

Գիւլնազը գլուխը բարձրացրեց, գաղարեց լալուց, սաքի կանգնեց, ձգուեց իր բոլոր հասակով ու գոչեց սպառնալի.

—«Թալիը չիմանայ... չէ, ես պիտի ճչամ աշխարհօվը մէկ, քանի ձայն ունիմ, քանի սյժ ունիմ, քանի շունչ ունիմ, այ, կը բարձրանամ էն սարի գլուխը և կը կանչեմ՝ «հարեաններ, ժողովուրդ, գեղացիք, Մուրադի Ասօն անամօթ, անպատիւ, անողորմ մարդ է, նա սիրում է ուրիշի կնկան, նա թողնում է իր նշանածը»: Կասեմ, որ նրա սաքը պիղծ է, նրա կոխած տեղը անիծուած, թող մարդիկ երես գարձեն, երբ նա անցընում է, կամ մատով ցոյց տան հեռուից, ինչպէս մի գեւ, մի չար ոգի: Կասեմ, կ'սոռնամ, կը ճչամ զիւզովը մէկ, սարերով, ձորերով մէկ, թող ամենքն իմանան, ամենքը...»

—Սնւս, սնւս, Գիւլնազ, Ասածուց վախեցիր:

—Էլ ոչ վախ ունիմ, ոչ ամօթ, Նունուֆար, քո տըղան երկուսն էլ խլեց, իմ ո՞ր մեղքի համար, կը հարցընեմ աշխարհին, թող դատ ու դատաստան անեն... Բայց Շողերս, օօ, հողն իմ գլխին, ինչէր եմ ասում, թէ յանկարծ նա էլ իմանայ. չէ, չէ, պապանձուիք, լեզու, չորացէք, շրթունքներ, Նունուֆար, ես կը լուեմ, թող ոչ որ չիմանայ, ոչ որ, միայն Շողերից էլ ծածուկ մնայ, թէ չէ... անի, ինչ կ'անի, եթէ յանկարծ իմանայ, Աստուած, Գու ողորմաս, ես մեղաւոր ու անարժան եմ, Գու կնխեղծ երեխայիս ինայես: Լնւս, լնւս, Նունուֆար, էնպէս չէ:

—Հն, հն, Գիւլնազ. լնւս, մինչև տեսներ՝ Աստուած ինչ դուռ է բաց անում:

Երկու կանայք այնուհետև զեռ երկար վշվշումէին ու արցունք թափում, զեռ երկար խնդրում էին իրար փոխադարձաբար գողտնի պահել բոլոր խօսածները և չէին նկատում Շուշիկի բացակայութիւնը, որ վազուց գուրս էր եկել գնացել: Գիւլնազը չորս կողմը նայեց, դունատուեց ու ճչաց.

— Շուշիկը, ո՞ւր է Շուշիկը:

— Շուշիկ, Շուշիկ, կանչեց մայրը:

Փոքրիկ աղջիկը չը կար. Գիւլնազը սաստիկ շփոթուեց՝ հաստատ համոզուած, որ Շուշիկը իրանց տուն է գնացել:

Ձի յայտնիլ արդեօք լսածները...

Գիւլնազն շտապով դուրս եկաւ, վազեց տուն, իսկ Նունուֆարը մնաց իր սեղում վախից քարացած:

XIII

Իրար յաջորդող հողեկան ծանր ցնցումները վերջի վերջոյ խորտակեցին Շողերին: Կայտառ ու կենդանի, ապրելու, վայելելու եռանդով լի ջահիլ արարածը գէպի կեանքը նետուեց, որպէս գարնանը մեղուն գէպի բուրալից ծաղիկը, և մեղրահիւթի փոխարէն թոյն ծծեց ու գետին ընկաւ փշրուած: Նա էլ տնից դուրս չէր գալիս ինչպէս վշտահար թռչնակ, որը ոյժ չունի հեռանալու իր աւերուած բնից, մի նոր անկիւն, մի նոր բազդ-որոնելու: Ժամերով նստած միւսնոյն սեղում՝ նա մնում էր անշարժ, չէր լսլիս, չէր գանդատուում, այլ նստում էր մի կէտի անընդհատ. իսկ երբ վեր էր կենում, քայլում, շարունակ նայում էր ոտների տակ, կարծես մի շտա թանդագին կորուստ էր փնդրում:

Լացողը մայրն էր, սգացող, արցունք թափողը նա էր բոլորի համար: Զաւակի ցաւը շատ էր ծանր, որպէսզի գժբաղդ մայրը հանգիստ սենենար, որ ու գիշեր հողսը Շողերն էր: Նաւոն ամեն առաւօտ լինը գնալիս՝ միայն գազտագողի աչք էր գցում աղջկայ վրայ, գլուխն

օրօրում, չրթունքները շարժւում էին, բայց ոչ ոք չը
գիտէր, թէ նա ինչ է մտածում, ինչ է ասում: Մայրն
էր, որ ամեն առաւօտ դուրս էր գնում Շոյերի դարդի
ճարը վնդրելու սրբերի գրանը:

Եւ ամեն օր, երբ հայրը ուռկանը շալակած գէպի
լիճն էր գնում, խսկ մայրը գէպի սրբերը, Շոյերը մը-
նում էր մենակ իր վշտի հետ, տանը լուսթեան ու ա-
մայութեան մէջ նրա սև մտքերը ընդունում էին այ-
լանդակ ճիւղաների կերպարանք և տանջում, տանջում
էին նրա: Բոլոր շշուկները, գիւղում պտտուող բոլոր շար
դրոյցները Ասօի և իր մասին կամաց-կամաց ասես քա-
միւնների թևերով գալիս, ներս էին թափանցում նաւօտնոց
տուն և թանձր, սև ամպերի պէս բարդ-բարդ նստում
էին Շոյերի սրտին, և ամեն օր նրա կուրծքը ճնշող
բեռն աւելի էր ծանրանում, և ամեն օր սիրան աւելի
էր ուռչում, բարձրանում, աղջիկը խեղդւում էր, տա-
ռապում: Նրա ցաւոտ հոգին, նրա ամբողջ գոյութիւնն
այժմ նման էր մի խիստ ձգուած լարի, որ մտա է կը-
տրուելուն. աչքերը չոր էին, բայց սիրտը լալիս էր, մղկը-
տում:

Նախ ասացին, որ Շոյերը շատ սւրախ եղաւ իր
առաջին նշանածի մահուան համար. յետոյ՝ թէ Ասօն
ընկնաւոր է, Շոյերն է փախենում, փախչում նրանից.
օրեր յետոյ լսուեց մի տեղից ամենածանր շշուկը. — ա-
սում էին, թէ Ասօն ոչ խենթ է, ոչ ընկնաւոր, այլ հը-
րաժարում է Շոյերից, սրովհետև հաստատ չը գիտէ,
թէ նա իր եղբօր նշանածն է եղել, թէ կինը... ահա
այս սպանիչ շշուկն էր քարացրել Շոյերին միւսնոյն տե-
ղում: Նրան թւում էր, թէ ամբողջ աշխարհը խօսք մէկ
արած՝ իր դէմ է, թէ երբ ոտքը դուրս գնի տանից, հա-
ղար բերան կը պոռան իր յետեւից, և նա խեղդուում էր
տան մէջ մենակ, յուսահատ, ոչնչացած: Իր վշտի բոլոր
խորութիւնը, ցաւի մեծութիւնը դրել էր այն քարացած
հայեացքի մէջ, որ նա սեւեռում էր մի կէտի: Իր ամ-
բողջ սև գոյութիւնն էր խտացրել նա ապակու պէս

պազ աչքերում, որոնք նայում էին անընդհատ, ասես այս աշխարհից դուրս, անհունութեան մէջ, մի այլ աշխարհից ճարհնար էին փնդրում: Կուսական աչքերի կապերը յետ էին քաշուել ու սառած մնացել՝ ասես վախենալով ծածկել ըրերերի մէջ փայլող վիշաք, ինչպէս կապուտակ լճի երկու քնքոյշ ալեակներ, որոնք բարձրացել էին ու քաբացել միլենոյն տեղում՝ չը համարձակուելով յետ դալ ու խորշումել ջրերի հարթ-հաւասար երեսը, սր թագոյնում էր իր տակ այնքան դազանիքներ, այնքան խուժ ու խոռոչներ:

Միայնութեան ու վշտի այս սարսափելի ժամերում Շողերի միակ սփոփանքը Շուշիկն էր, Ասօի փոքրիկ քոյրը, սր այնպէս նման էր եղբորը, սր միլենոյն ձեռով աչքերը թարթել, վիզը կորացնել և ժպտալ գիտէր: Նա սիրում էր Շուշիկին այն անզօր ու խղճուկ սիրով, որ մեծ կորստից յետոյ բաւականանում է մի ժպտով, աւերակից յետոյ՝ մի տաք անկիւնով, փոթորկուած ծովի վրայ օրօրում է մի փոքրիկ նաւակում: Շուշիկը նրա սրտի ամայացած անապատում մի յետին ծաղիկ էր, որի վրայ գեռ չէր փչել մահացու քամիների կիզիչ շունչը: Եւ երբ փոքրիկ աղջիկը դուռը բանալով՝ վաղէվազ ներս էր նետուում, Շողերի թախծալից դէմքի վրայ մի տխուր ժպիտ էր անցնում, ինչպէս թխուրտ երկնքի համատարած մռայլի վրայ արեւի մի վազանցուկ փայլ: Եւ ամեն անգամ Շողերին թւում էր, թէ Շուշիկը եղբոր մի մասն է բերում, մի յետին մնացորդը այնքան գեղեցիկ, վարդագոյն յոյսերի: Եւ Շուշիկը նրա մօտ դալիս էր ուրախութեամբ, միշտ ժպտադէմ, իսկ Շողերը անձկանօք էր սպասում նրա գալստեանը, նրանց սէրը փոխադարձ էր:

Այն երեկոյ Շողերը դարձեալ մենակ էր մօր հեռանալուց յետոյ, երկու ձեռքով ծնկները դրկած՝ նայում էր անօրոյ հայեացքով, երբ փոքրիկ աղջիկը դուռը բացեց և ներս եկաւ: Այս անգամ Շուշիկը ամենօրեայ աշխոյժն ու խնդութիւնը չունէր դէմքին: Շողերը դուրսը

բարձրացրեց, ժպտաց ըստ սովորութեան ու գրկեց փոքրիկին. ապա երկու ձեռքով նրա գլուխը բռնեց, իրանից մի փոքր հեռացրեց և մի քանի վայրկեան նայում էր այն մանկական վառ աչքերին, այն սիրուն դէմքին, երկար խոտրաններին, նայում էր և չէր կշտանում, այնքան շատ բան ունէր այդ աղջիկին իր եղբորից:

— Շուշիկ ջան:

Աղջիկը տխուր էր և իր մեծ աչքերով նայում էր Շողերին:

— Շուշիկ:

Փոքրիկ աղջիկն այս անգամ հեկեկաց ու գլուխը թագցրեց Շողերի կրծքում:

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ ես լալիս, Շուշիկ ջան:

— Ի՞նչ մայրիկն էլ էր լալիս, իմ մայրիկն էլ էր լալիս, շատ լաց եղան, ես էլ վերկացայ, եկայ քեզ մօտ: Մայրիկս բաներ ասաց, յետոյ լաց եղան:

— Ի՞նչ ասաց, Շուշիկ ջան:

— Ասաց... ասաց, որ Ասօն էլ քեզ չի ուզում... ասաց՝ Սառային է ուզում... էն Շիրինենց Սառային, գիտես... յետոյ քո մայրիկը երեսը ծածկեց, հեկեկաց, յետոյ երկսով էլ լաց եղան, ես էլ վախեցայ, եկայ քեզ մօտ... դու լաց չես լինի, քուրիկ, համ. որ դու էլ լաց լինես... ես վախենում եմ, որ լալիս են...

Երեխան դեռ էլի երկար խօսում էր, պատմում էր, թէ ինչեր արին, ասացին իրանց մայրերը, բայց Շողերը դադարել էր լսելուց, հէնց առաջին խօսքերից նա գունատուեց, կծկուեց, սիրտը բռնեց թափով և գլուխը ծնկների մէջ առաւ:

Շողերին թւաց, որ երկինքը ճայթեց իր գլխին, ու այդ փոքրիկ ձայնը, որ հնչում էր նրա ականջի տակ, կարծես նրա մահուան գատավճիռն էր կարգում: Սոսկումի, ցաւի խօսքեր էին արտասանում այն փոքրիկ, անմեղ շրթունքները, և այն քնքոյշ ձայնը շարունակում էր հնչուել ահաւոր ու սպառնալիչ Շողերի մօտ էլ Շուշիկը չէր, այլ մի սարսափելի բան, որ գալարում, բարձր-

րանում էր նրան խեղդելու: Նա շարունակում էր մնալ գլուխը քաշ, կծկուած, ականջներում հազար ու մի ձայներ, դանդի մէջ անհասկանալի աղմուկ, նման այն աղմուկին, որ մարդ զգում է գլխին հասած մի ծանր հարուածից յետոյ: Ապա կամաց-կամաց ժամանակն ու տարածութիւնը խոյս տուին նրանից, Շողերն էլ չը գիտէր, ուր է ինքը, ինչ է ինքը. յետոյ նրան թւաց, թէ ընկած է մի մութ, խուլ անտառում, որ վերջ ու սահման, ճար ու ճանապարհ չ'ունի, և ճիւղներ, հրէշներ, դաղաններ թփերի տակից, ճիւղերի արանքից իր վրայ են ուղղել իրանց գիշատիչ աչքերը, մեկնում են իրանց սոսկալի ճիրանները, բռնում են, քաշում են մազերից, և նա փախչում է, փախչում է բոլոր ուժով, բայց լսում է իր յետեւից բաղմաթիւ սանաձայներ, ողջ աշխարհն է նրա յետեւից ընկած հալածում, իրանց բոլոր գիւղը. ինչէր են ասում, ճչում են, ոռնում են, և այդ բոլոր ձայներից իր մազերն են դիզանում, սաներն են դողում, բայց նա փախչում է անընդհատ, ընդհարում է ծառերին, ընկնում է, վեր է կենում, դարձեալ ընկնում, և ճչում է բարձրաձայն...

—Քուրիկ, քուրիկ...

Շողերն ուշքի եկաւ, նայեց իր շուրջը և միայն այժմ տեսաւ Շուշիկին, որ լալիս էր ու նրան կանչում: Գունատ ու դողգոջիւն Շողերը փոքրիկին իր գրկի մէջ առաւ, գլուխը սղմեց իր կրծքին և մօր պէս օրօրում ու խօսում էր նրան.

—Մի լար, Շուշիկ ջան, մի լար, չէ՞ դու պղախիկ ես, շատ պղախիկ, դեռ ինչքան ժամանակ ունիս լալու:

—Ախր դու ինձ վախեցրիր, էնպէս էիր ճչում, ես էլ նրա համար լաց եղայ:

—Այ, էլ չեմ վախեցնի, միայն դու լաց մի՛ լինիր, մատնոգ, ինչո՞ւ լանք, ես էլ դագարեմ լալուց, նոր ծով շինելու չենք, ծովը կայ, Աստուած է պատրաստել բոլոր լացողների համար:

—Լացողների համար է ծովը:

— Հն, հն, Շուշիկ ջան, լացողների համար:

— Ես էլ չեմ լայ, ծովից վախենում եմ:

— Դու մի վախեցիր, մատուղ, քեզ համար չէ, ինձ համար է, միայն ինձ համար, ծովն ելաւ, ելաւ բարձր-
րացաւ, ծածկում է ինձ, Շուշիկ ջան, թող ծածկի, ծո-
վի տակը լաւ է, խաղաղ, հանդի՛ստ...

— Գուրիկ, ախր ես վախենում եմ, որ դու էդպէս
ես խօսում:

— Մի վախեցիր, մատուղ, դեռ շուտ է քեզ համար,
ինչքան ժամանակ ունիս, ինձ համար է միայն, ինձ համար
քամի էլ կայ, դուման... փչեց քամին, դուման ելաւ,
տար ու ձոր մթնեց, թռչունի բոյնը քանդուեց...

— Գիտես, քուրիկ, էն օրը մի թռչունի բոյն կար
քարափի ճեղքում, մենք չը քանդեցինք, Ասօն ինձ միշտ
ասում էր, որ չը քանդեմ:

— Լաւ արեցիք, Շուշիկ ջան, ինչո՞ւ քանդեք, ու-
րիշները կը քանդեն. Ասօն էլ էր ասում, Ասօն... օ՛ճ, ու
զորմած Ասօն:

— Ես Ասօին շատ եմ սիրում:

— Լաւ ես անում, Շուշիկ ջան, սիրիր, սիրիր ախ-
պօրդ, միայն ախպօրդ, յետոյ երբ մեծանաս, այն ժա-
մանակ էլ միայն ախպօրդ սիրիր: Ես ախպեր չ'ունիմ,
որ սիրեմ:

— Դն էլ ինձ պէս Ասօին սիրիր:

— Ասօի՛ն... Ասօի՛ն, օ՛ճ. Շուշիկ ջան, ես քեզ եմ սի-
րում, քե՛զ, էլ սչ ոքի. և Շողերը կրկին սզմեց կրծքին
փոքրիկի դլուխը ու հեկեկաց բարձրաձայն:

— Էլի լացեցիր, ախր ես վախենում եմ. մեռելների
վրայ են լայ լինում, ես մեռելից վախենում եմ, քուրիկ:
Շուշիկն էլի սկսեց լալ:

— Մի լար, մատուղ, երբ մեռել լինի, այն ժամա-
նակ կը լաս, հիմայ հօ չը կայ, տես, ես կենդանի եմ,
քո արցունքը թէ ձեռքիս ընկնի, կ'այրի:

— Կ'այրի՞:

— Հն, կ'այրի, սիրտս էլ կ'այրի:

—Էլ լաց չեմ լինի, ես կերթամ մայրիկիս մօտ, դու լաւ չես, լաց ես լինում: Եւ փոքրիկ աղջիկն ազատուեց նրա գրկից ու դուրս թռաւ, կորաւ դրսի կիսախաւարի մէջ: Շողերը նայեց նրա յետեւից, ապա զսպուած արցունքները թափուեցին, և խաւար տան մէջ երկար լըսուամ էին նրա հեկեկանքները: Յետոյ ինքն էլ դուրս եկաւ և շտապով կորաւ խաւարի մէջ: Մութ, գալարուն փողոցներով նա վաղում էր գէպի գիւղից դուրս՝ աշխատելով չը պատահել ոչ ոքի. դուրսը մութ էր, շատ մութ, և լուսնի շուրջը կարմիր բակ կար կապուած:

Շողերի փոյթը չէր ոչ թանձր խաւարը, ոչ արիւնոտ լուսինը. նա անընդհատ գնում էր խուլ, ամայի փողոցներով: Լճի կողմից փչող հովը կամաց-կամաց զօրանում էր, երկինքը հեազհեաէ ծածկուում էր ամպերով, բնութեան մէջ մի անախորժ բան էր պատրաստուում, բայց աղջիկն ասես այդ էլ չէր նկատում և քայլում էր անընդհատ: Մի անգամ միայն նա ցնցուեց ու մի վայրկեան կանգ առաւ, երբ հեռուում լսուեց Ապրօի սարսափելի ձայնը՝ «զու՛ճւմ, զու՛ճւմ»... Շողերը լսել էր, որ Ապրօն խենթ է, բայց նա վախենում էր խենթերից, ուստի շտապեցրեց քայլերը. և հեռուում շարունակուում էր լսուել նոյն ձայնը.

— «Ձու՛ճւմ, զու՛ճւմ»...

Գիւղից դուրս, այնտեղ, ուր սկսում էր գէպի լիճը տանող ձորը, Շողերի առաջ ցցուեց մի մարդ, որ սպիտակ կտաւը գցել էր ուսին վերից վար. հէնց նա էր, որ «զու՛ճւմ» էր կանչում, Ապրօն և գալիս էր գերեզմանատնից: Նա թևերը բացեց և փակեց Շողերի առաջ:

— Ո՞ւր ես գնում, աղջի, տես, լուսինը կարմիր է, ամպերը սև, դեւերը շատ, գիշերը չար... թէ պատան ես ուզում, ա՛ռ, ահա՛ իմը... Մուրբ կարապետն ասաց, թո՛ղ ամենքը պատան առնեն, գերեզմանները գնացի մեռելահարցուկ, նրանք էլ նոյնն ասացին, ինչքան բռներ ասացին. ես էլ իմ փոսը փորեցի, խոր ու սև, սխալակ

պատանը սև փոսի մէջ շճա սիրուն է. դէ, դարձիր, զաւակս, տես լուսինը, տես գիշերը, տես ամպերը, ո՛չ մէկը չի ուզում, սր դու գնաս. գնում ես, փախչում ես, պօ՛ճ...

Շողերը չէր լսում, նա թափով վազեց, անցաւ Ապրօի առաջից ու կորաւ խաւարի մէջ:

—Փախաւ, խափանուեց... ոգի, թէ մարդ, մնաւ, թէ ազնիկ, խափանուեց:

Քամին սաստկանում էր, ամպերը կուտակուում էին, խաւարը թանձրանում, և համատարած, խեղդող գիշերուայ մէջ լսում էր.

—«Ձուլում, զուլում»...

Նաւօն գեռ չէր վերագարձել, Գիւլնազը մենակ ճշում էր փողոցներում, Շողերին էր փնդրում, այս ու այն դուռն էր թակում, վախուկ ստուերների պէս մի երկու հոգի դուրս էին գալիս, մօտենում էին Գիւլնազին, փնդրում էին միասին այս ու այն կողմ, կանչում էին՝ Շողեր, Շողեր, պատասխան չը կար, և հեռւում շարունակում էր լսուել Ապրօի ձայնը.

—«Ձուլում, զուլում»...

Փոթորիտ, սոսկալի գիշեր էր...

XIV

Այն երեկոյ ձկնորս նաւօն լճակի վրայ շատ ուշացաւ: Մի ամբողջ շաբաթ էր, ինչնա անընդհատ աշխատում էր կողովների վրայ և այսօր հաւաքում էր իր վաստակի պատւը. ձկները շատ առատ էին: Արևը մայր մտաւ. թեթև հովը վաքրիկ կնճիռներ շինեց լճի հայելանման մակերևոյթի վրայ: Բազմաթիւ մանրիկ ալիքներ իրար հրհրելով՝ եկան քսուեցին կղզու ափերին, լիպեցին խճերն ու ժայռերը, քրքջալով յետ ընկան, բայց դեռ նաւօի նաւակն այնտեղ էր: Սպիտակ, փոքրիկ առագաստը կամացուկ ուռչում էր, մեղմիւ օրորւում և իր հետ տարուբերում էր նաւակը ջրերի վրայ:

Հաւալուսները, ձկնկուլները, վայրի բաղերն ու այլ ջրային թռչունները այս երեկոյ շուա հեռացան, շամբուաներում էլ վազ լռեցին այնտեղ ծուարած թեւաւորների ձայները: Լեռներում, ձորերում հովիւները մնչեցին: Մինակայ սարերի հսկայ ստուերները ձգուելով հասան լճին, մի պահ երերացին թրթռուն ջրերի երեսին և ապա լուծուեցին երեկոցեան համատարած, միապողպղ մառախուղի մէջ: Լուսինը բարձրացաւ Մասըսի թիկունքից, արծաթաղօծեց ծեր հսկայի ալեզարդ կատարը, նրա ցոլքերը իջան ժայռերի վրայ, մութ մառախուղը ցրեցին, աստղերը մէկիկ-մէկիկ փայլեցին ու թարթեցին իրանց աչիկները կապուտակ լճի մէջ, բայց նաւակն այնտեղ էր, դեռ օրօրում էր ջրերի վրայ, դեռ առագաստը խաղում էր քամու հետ: Նաւօն հանգարտութեամբ շարունակում էր ջոկջկել ձկները և առանձին-առանձին պարկերի մէջ տեղաւորել: Նա նոյն խակ գլուխն էլ չէր բարձրացնում, հանգիստ էր, քանի որ նա սովոր էր նոյն խակ շատ աւելի ուշ վերադառնալ տուն:

Եւ նրա խաղաղութիւնն ու վստահութիւնը անհիմն չէին. նա գիտէր, որ երեկոցեան հովը միշտ փչում է Մինակայ լեռներից դէպի իրանց գիւղը, և փոքրիկ առագաստը բացած՝ նա մի կէս ժամում արագութեամբ կարում էր ջրերի տարածութիւնը և տուն հանում:

Լուսինն արդէն բաւական բարձրացել էր, երբ Նաւօն իր գործն աւարտեց, ուռկանը հաւաքեց, նաւակի մէջ տեղաւորեց, այդ ժամանակ միայն վերև նայեց լուսնին և երկիւղից քար կտրեց: Լուսնի կարմիր բակը խիստ չարագուշակ էր. հովը սաստկանում էր, խակ Մինակայ լեռների վրայ մի սև ամպ էր խտացել, որ աճում էր հն աճում: Նաւօն փորձով գիտէր, որ այդ ամպը լաւ նշան չէ: Պէտք էր շտապել: Նաւօն տեսաւ անհանդատութեամբ, թէ ինչպէս նաւակն օրօրում է աւելի ու աւելի սաստիկ, ինչպէս առագաստն սուշում է, լայնանում, և ցցին կապուած պարանը ձգձգում ու

ճարճատում: Նա շտապով ջուախները նաւակի մէջ տեղաւորեց, առագաստը պնդացրեց, պարանն արձակեց, և ըստ երեոյթին յաջող հողմը նրա նաւակը տաշեղի պէս մղեց դէպի գիւղ, լաւ էր:

Նաւօն արագութեամբ տարւում էր ուռած ալիքների վրայով և միւնոյն ժամանակ հայեացքը չէր հեռացնում Սինակայ սարերից: Այն սև ամպը չը լայնանայ, հողմն իր ուղղութիւնը չը փոխի, մտածում էր Նաւօն, մնացածը հեշտ է: Լուսնի բակն էլ չարագուշակ էր: Բայց նաւակը սլանում էր կատաղի արագութեամբ, առագաստն ուռած էր, թիակներն էլ հարկաւոր չէին: Ամեն ինչ մոռացած՝ Նաւօն աչք չէր հեռացնում սևաթոյր ամպից:

Նա զգում էր, որ պէտք է շտապել: Ահա նա լճակի կիսումն է, էլի մի փոքր այսպիսի քամի, և նա ափին կը հասնի: Բայց սև ամպը լայնացաւ, լայնացաւ, վիշապի պէս հազար գլուխ շինեց և ձգուեց առաջ դէպի աստղերը, դէպի լուսինը: Առագաստն այնպէս է ուռած, որ մօտ է արաքուելու, պարանները ճարճատում են, կայմը ճռռում է ցաւով, և նաւակը լեռնացած ալիքների վրայ տարուբերւում է ահաւոր կերպով: Նաւօն էլ ինչ անելը չը գիտէ, նա կ'ուզէր դուռէ ասագաստն իջեցնել, բայց դա այնքան էլ հեշտ չի, փոքրիկ անհաւասարութիւնը, որեւէ պարանի մի փոքր ուշ արձակուելը կարող է նաւակը թեքել ու խորասուզել: Նաւօն կանգնել, բռնել է զեկը, շփոթուած նայում է, թէ ինչպէս ծուռում ու ճոճում է փոքրիկ կայմը:

Ահա երկինքն արեմուտքում իսպառ ծածկուեց, բայց լուսինը դեռ փայլում է արևելքում, տիրը հեռու չէ, և Նաւօն ցաւով ու անհանգստութեամբ է նայում այն տարածութեանը, որ բաժանում է նրան ափից: Ալիքները բարձրանում, գիզանում են, զարկում են նաւակին, որ խաղում է անդունդների գլխին, մերթ ծոփում, առագաստը քսում է ջրերին՝ ասես չափելով խորութիւնն իր գերեզմանի, մերթ կրկին բարձրանում, տըն-

քում ու ճոնչում: Նաևն մէկիկ-մէկիկ ջուրը թափեց ձկնով լի պարկերը, իր ամբողջ շաքաթուայ աշխատանքը, իզո՛ւր, նաևակը չը փրկուեց և նա անքում է ու ճօճուում, կռանում է ու բարձրանում անդունդների վըրայ: Բայց մօտ է ավը, շատ մօտ, նաևն տեսնում է եզրը, տեսնում է դաշտերը, նաևն նշմարում է նոյն իսկ այն բարձր ցիցը, որից սովորաբար կապում է իր նաևակը: Էլի մի փոքր, և նա կը հասնի: Բայց յանկարծ քամին փոխեց իր ուղղութիւնը, նա փչում է հակառակ կողմից, ավը և գիւղն իր ճրագներով արագութեամբ փախչում են նաևի աչքերից և շուտով կորչում խաւարի մէջ: Նաևակն այժմ տարւում է դէպի լճակի հակառակ կողմը, դէպի այնտեղ, ուր գահավիժւում է ջրվէժը, և այնպիսի արագութեամբ, որ նաևի գլուխն է պտտում: Նա գցեց վերջին պարկը, դանակը հանեց, պարանները կտրանց, առագաստը փլաւ, իսկ ինքը թիակները ձեռք առաւ և թիավարում է դէպի գիւղը, դէպի մօտիկ ավը բոյսը ուժով: Իզո՛ւր, նաևակը տարւում է գլուխ շչմեցնող արագութեամբ ուղիղ դէպի ջրվէժը, որ այժմ սարսափելի է. ալիքների թափից նրա ջրերը վար են գլորւում հսկայ յորձանքներով ու ահագին աղմուկով: Մենակ է նաևն երկնքի և երկրի մէջ, կախուած անդունդների վրայ, օրօրւում է լեռնացած ալիքների վըրայ, թրջուած, գողալով, բայց դեռ կուում է բնութեան դէմ, դեռ աշխատում է փրկուել: Աստղ չը կայ, քամին մունչում է կատաղի թափով, իսկ խաւարը թանձրանում է հա՛ թանձրանում:

Այժմ նաևն մօտ է հակառակ ավին, մօտ ջրվէժին: Նաևն նայում է սարսափած այն կողմը, ուր բացւում է ահաւոր ջրվէժի մահաբեր երախը, նայում է և դողում է ամբողջ մարմնով, էլ ոյժ չունի մաքառելու տարերքի դէմ. թիակներից մէկը վազուց փչրուել է, իսկ միւսը վար է ընկնում թուլացած ձեռքից, նա այժմ մըտածում է որպէս վերջին, գերագոյն փորձ, վերջին յուսահատ ճիգ ջրվէժին հասնելուց առաջ նետուել ալիք-

ների մէջ և լողալով ավին հասնել, թողնելով՝ որ նաւակը խորասուզուի ջրվէժի առաջ: Նա լաւ լողորդ է, այդ տարածութիւնը կարող է կտրել, յոյս ունի կտրել. նա արդէն աչքով չափում է ջրային ճանապարհը, նայում է այն կէտին, ուր ինքը հաւանականաբար ավ դուրս կը գայ:

Յանկարծ կայծակը ճայթեց երկնքում ահուելի ուրտից յետոյ, փայլակը լուսաւորեց շրջակայքը մի վայրկեան, և Նաւօն սարսափով նկատեց ավին մի ստուեր, մարդ, թէ՛ դե, այդ նա ասել չի կարող, բայց մի երկայն, կասկածելի ստուեր, որ Նաւօն լաւ նշմարեց իր սրատես աչքերով: Եւ այն ստուերը հէնց այնտեղ է, ուր հաւանականաբար պէտք է դուրս գայ Նաւօն, աւելի հեռուն ջրվէժն է: Նաւօն մտահոգ է, նա չը գիտէ ինչ անել, ինչպէս դուրս գալ այդ կասկածելի ստուերի մօտ, ո՞վ գիտէ, ինչ է այն, հրէջ, դե՞... թէ չէ այս սարսափելի քամիին մարդն այնտեղ ինչ գործ ունի: Նաւօն գիտէ, որ չար գիշերներին այրերից ինչոր սե բաներ են դուրս գալիս և վազվզում լճի շուրջը, ճշում, սունում ու հրճում մրրկի հետ: Կայծակը նորէն ճայթեց, փայլակը կրկին լուսաւորեց, Նաւօն կրկին տեսնում է սոսկալի ստուերը, որ վազվզում է ավերով, զընում է դէպի ջրվէժը, յետ է գալիս:

Նաւօն երկու կրակի մէջ է, մի կողմից ջրվէժն է մօտենում, իսկ միւս կողմում կասկածելի ստուերն է, և նա նայում է մերթ մէկին, մերթ միւսին, նայում է ու դողում: Նա պարզ լսում է ջրվէժի շառաչիւնը, լսում է նրա ալիքների ձայնը, կրկին նայում է ավին, խաւար է, էլ ոչինչ չի նշմարում: Փոթորիկը սուսում է, ջրերը լեռնանում են, էլի մի քանի վայրկեան, և Նաւօն իր նաւակով կը գահավիթուի ջրվէժի բարձրութիւնից, ուստի նա կանգնում է, երեսը խաչակնքում, նետում է ջրերի մէջ և լողում դէպի ավը:

Նա մերթ կորչում է ալիքների տակ, մերթ յայտնուում է, թեկերը ձգձգում, տարածում և լողում բոլոր

ուժով: Եւ վերևում սրտտում են սև ամպերը, ճայթում է կայծակը հրեղէն ահօններով, ալիքները լեռնանում ու փրփրում են՝ ասես կատաղած, որ իրանց դէմ այդ ահաւոր ժամին մաքառող մէկը կայ: Մօտ է ամբը, մօտ է փրկութիւնը, և Նաւօն լարում է իր վերջին ոյժերը, փրփուրէ ըլլօքները պատում է ու լողում առաջ: Յանկարծ նա զգում է ջրերի մէջ մի մութ, սև զանգուած, որ մերթ զարկում է իրան, մերթ ալիքների թափով հեռանում: Նաւօն սոսկում է, սև զանգուածը մարդկային մարմին է, նրան թւում է նոյն խակ, որ նա կենդանի է, որ փորձում է բռնել իրան, գուցէ անգունգները վար քաշելու համար: Յետին ճիգերն է հաւաքում Նաւօն և ձգում է առաջ այդ սարսափելի արարածից աղատուելու համար և նոյն վայրկենին զգում է, թէ ինչպէս մի ձեռք կախուեց իր ստրից: Նաւօն սոսկումով բռնուած՝ ստրի մի ուժգին հարուածով յետ է մղում այդ ձեռքը, փորձում է կրկին լող ապ, և նոյն ձեռքը այս անգամ մի յուսահատ ճիգով գրկում է նրան, այս անգամ սկսում է մի չը տեսնուած պայքար այս խորհրդաւոր մարմնի և Նաւօնի մէջ, վերջինս աշխատում է ազատուել նրանից, ցնցւում, գալարւում է, միւսը կախւում է նրանից բոլոր ուժով, և խեղդոտում, քաշքշում են իրար այս երկու մարմինները փրփրած ալիքների մէջ, մինչդեռ կայծակները վերից ճայթում են նրանց գլխին, ամպերը որոտում խլացուցիչ թափով: Ձրի չար ոգի է, թէ մի հրէշ, Նաւօն այդ չը դիտէ, բայց զգում է, որ խորհրդաւոր մարմինը աշխատում է նրան քաշել իր հետ դէպի անգունգները: Բայց Նաւօն հմուտ է և ուժեղ, նա ուզում է ապրել, ափն էլ մօտ է. նա յոյս ունի փրկուել. ուստի մի վերջին անգամ ազատում է այդ սարսափելի էակից, ստի մի ուժեղ հարուածով մղում է նրան դէպի անգունգները և ինքը ալիքների թափով նետում դէպի ամբը և գետին ընկնում ուշաթափ:

Նոյն վայրկենին նրա վրայ կռանում է մի մարդ-

կային ստուեր, գրկում, բարձրացնում է, մումնում է
 ինքն իրան, ի վերջոյ շալակում է կիսամեռ. Նաւօին, և
 խաւարի մէջ քայլում է՝ որչափ կարելի է արագ: Կայ-
 ծակները շարունակում են ճայթել երկնքում, ամպերը
 որստում են անընդհատ, անձրևը քամու ուժեղ թափով
 շփում է շեշտակի, բայց մարդը քայլում է հնա քայլում
 խաւարի մէջ:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Գը շարունակուի)

ԳԱՐՆԱՆ ԵՐԳԻՆ ԱԿԱՆՋ ԳՐԱԾ...

Գարնան երգին ականջ դըրած՝
Գարուն-կեանքըս յիշեցի.
Ի՞նչ կար սրտումս վաղճւց լըռած,
Նորոգ կեանքի կոչեցի:

Ես ասացի.— ելէ՛ք, յոյսեր,
Գարգոտ սըրախս փարեցէ՛ք.
Էս մութ օրիս՝ օրպէս լոյսեր՝
Մութ երկինքըս վառեցէ՛ք:

Ես ասացի.— սիրտ իմ, զարթիր
Եւ նոր երգով սիրաւէտ
Քո խանգ, աւիւն, յոյզ ու թըրթիւ
Խառնիր գարնան երգի հետ...

Եւ ձեռք առայ քնարըս տըխուր
Ու լարերին խըփեցի՛.
Բայց երգի տեղ՝ աղէկաուր
Սըրախս ճղբը լըսեցի...

Ա. ՄԱՏՈՒՐԵԱՆ

ԻՆՁ ԱՍՈՒՄ ԵՆ...

Ինձ ասում են.—Երգ ենք ուզում,
Ձուներձ կեանքի տաղ ու երգ.
Ի՞նչ ես լացով դու սիրտ յուզում,
Անծայր պատմում ցաւ ու վերք...

Երգիր լուսին, աստղեր ըսիւն,
Վարդ, մանիշակ պարտիզում,
Սուրբ կարկանդ, զո՞վ ու զեփե՛ւն—
Անվիշտ երգն ենք մենք ուզում:

Եւ նորա կոյր, հոգով մեռած՝
Մի չեն նայում չորս բոլոր—
Ո՞րքան անլուր ամենձանք ու լաց
Կեանք են մաշում օրէցօր...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Ա Ր Շ Ա Լ Ո Ւ Ս Ի Ն *)

Վէպ յունաց կեանքից

Ե. ԲԵՆՍՕՆԻ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԿ

I

Գիշերը սաստիկ քամին ցրեց ամպերը, և արեգակը բարձրացաւ բաց-կապուտակ կրկնքի երեսը: Քիչ հանդստանալուց յետոյ դեռ ճանապարհ չ'ընկած՝ Պետրո-բէյը կանչեց մնացած երեք բանակների առաջնորդներին և վերջնական հրահանգներ տուաւ նրանց: Մայնեցիներից, արդուլիւացիներից և լաիոնիզացիներից երեք վաշտ պէտք է յարձակոււմ գործէին միջնաբերդի վրայ, իսկ արկաղիացիները պարտաւոր էին միանալ Մեսսենայից եկած երկու վաշտի հետ և դիմելով դէպի նաւահանգիստը՝ ոչնչացնել այնտեղի բոլոր նաւերը, բացի չորս թեթև առադատաւոր նաւակներից և սպասել թիւրքական պատերազմական նաւերի գալուստ: Մեսսենացիները ազնիւ հայրենասիրութեամբ լցուած՝ ինդրեցին Պետրո-բէյին մի առաջնորդ նշանակել երեք վաշտի համար, առանց իրանց տեղական թեկնածուին առաջարկելու, և նա մատնացոյց եղաւ սպարտացի Նիկիտայի վրայ, որը մեծ ժողովրդականութիւն էր վայելոււմ և նոր էր վերադարձել Յոնիական կղզիներից, սրովհետև թիւրքերը թանց էին գնահատել նրա գլուխը, և թէ մէկը իրանց ձեռքը մատնելու լինէր:

Կարամատայի միջնաբերդը կանգնած էր նաւահանգստից

*) Տես «Մուրճ» № 3.

մի մղոն հեռու մի բլրակի վրայ, բայց փոքր էր, և նրան նաւահանգստի հետ միացնում էր բոլորովին անպաշտպան արուարձանը, որի բնակիչները պարապում էին տեսարով ու մետաքսի արտադրութեամբ: Իսկ ինքը միջնաբերդը բոլոր կողմերից պաշտպանուած էր պարսպով և երեք կողմից չըջապատուած երեսուն ոտնաչափ բարձրութեամբ գեր քարաժայռերով: Արևմտեան կողմում, հէնց պարսպի տակ դալարում էր մի լեռնային հեղեղատ, որն ամառը ցամաքում էր, իսկ այժմ լեռնագագաթների ձիւնի հալուելուց լցուել էր ջրով: Այդ կողմից քաղաքն անմատչելի էր, մանաւանդ յոյների համար, որոնք թնդանութիւնը չ'ունէին, այլ զինուած էին միայն հնաձև հրացաններով. նմանապէս և իզուր ժամափոճառութիւն կը լինէր հիւսիսից կամ արևելքից յարձակում գործելը: Սակայն հիւսիսային պարսպի մէջ մի դուռ կար, որը բացուած էր դէպի ապառաժի մէջ փորուած քարէ աստիճանները: Այս պատճառով Պետրօ-բէյը մտադրութիւն ունէր մի անգամից գրաւել ներքին անպաշտպան քաղաքը և մի զօրագունդ կանդնեցնելով հիւսիսային դրան առաջ՝ պաշարել միջնաբերդը, որտեղից ուրիշ անցք չը կար: Այդ բանի համար նա նշանակեց երեք վաշտ, իսկ մնացած երեքը պէտք է նաւահանգիստը կտրէին քաղաքից:

Այդպիսով լուսադիմին մինչդեռ սաստիկ մատախուղը պատել էր չորս կողմը, յունաց զօրքը բաժանուեց երկու մասի. դրանցից մէկն իջաւ դէպի նաւահանգիստը, իսկ միւսը միջնաբերդի շուրջը պտտելով՝ ուղիորուեց դէպի ներքին քաղաքը: Կէս ժամ անցած՝ արեգակի ճառագայթները ցրեցին մատախուղը, և միջնաբերդի սահապաններն անսպասելի կերպով իրանց առաջ կէս մղոն հեռաւորութեան վրայ երեք վաշտ զինուոր տեսան: Իսկայն թմբկահարեցին, և յոյների յարձակման լուրը կայծակի առագութեամբ տարածուեց ներքին քաղաքում: Մի բուպէում փողոցները լցուեցին սղամարդկանց, կանանց ու երեխաների խմբերով, որոնք սարսափած այս ու այն կողմ էին վաղվում: Բայց քիչ յետոյ այդ խմբերը երկու որոշ ճանապարհը բռնեցին— դէպի միջնաբերդն ու նաւահանգիստը: Այդ միջոցին յոյները հանդարտ, լուռ ու մունջ, առանց հրազէն պարպելու գրաւեցին քաղաքը, ամենափոքր վնաս անգամ չը հասցնելով սահաբեկուած բնակիչներին, նրանք միայն ոչ որի թոյլ չէին տալիս դէպի Տրիպոլիս փախչելու: Քաղաքից դէպի արևմուտք հեղեղատի վրայով պցուած էր մի կամուրջ, և Պետրօ-բէյն այնտեղ մի քանի հարիւր մարդ գրաւ, որպէսզի արգելուի այդ կողմից որեէ մէկին դուրս գալ քաղաքից, բայց շուտով հարկաւոր եղաւ բոլոր ոյժը քաղաքում կենտրոնացնել, և Եանիին յանձնա-

բարուեց ոչնչացնել կամուրջը: Նա փայտից էր շինուած, բայց արդէն պատրաստութիւն էր տեսնուած երկաթից շինելու, և այդ պատճառով նրա մի կողմը միջանի ձողեր էին դրուած: Դրանցից մէկը լուծ շինեցին և նրա օդնութեամբ քսան առողջակազմ երիտասարդ բարձրացրին կէս դուժինի չափ տախտակներ, իսկ նրանց տակի վերանները սղոցեցին: Մի քանի բոպէից յետոյ կամուրջը փուլ եկաւ, և հոսանքը ստարաւ այն: Հեղեղատի երկու կողմում մի անդունդ կազմուեց, և քաղաքի ճանապարհը կտրուեց լիակեցած բնակիչներէ առաջ:

Այստեղ-այնտեղ երևում էին միայնակ տներ, որոնք փակ էին և ներսից պաշտպանուած, բայց առհասարակ բոլոր բնակարանները դատարկ էին և դռները կրնկի վրայ բաց: Միայն մի թիւրք ընդգիմութիւն ցոյց տուաւ և պատուհանից հրացան արձակելով սպանեց մի յոյնի: Պետրո-բէյն անձամբ մի քանի երիտասարդների հետ մտաւ այդ տունը, և հրաձգութիւն լուեց այնտեղից: Յետոյ նրանք դուրս եկան և լուս շարունակեցին իրանց ճանապարհը:

Ներքին քաղաքի հրապարակը դտնուած էր ուղղակի միջնաբերդի տակ, և նրա հիւսիսային կողմում կային մի քանի մետաքսի արհեստանոցներ, որոնց տէրերն ու մշակները թողել փախել էին. այդ պատճառով Պետրո-բէյն այնտեղ տեղաւորեց մայնեցիներէ զօրագունդը: Հէնց որ այս զօրագունդն ու արգոսցիները անցան ամբողջ քաղաքի միջից՝ բնակիչներին յորդորելով փրկութիւն որոնել կամ միջնաբերդում և կամ նաւահանգստում, կանչեցին սպարտացիներին, որոնք արևելեան կողմում արդելում էին փախտականներին, և կանգնեցրին միջնաբերդի հարաւային կողմը: Մինչ այս մինչ այն՝ արգոսցիները բաժանուեցին երկու մասի. մէկը պահպանում էր միջնաբերդի դուռը հիւսիսից, իսկ միւսը դրաւեց մայնեցիների և գետի մէջ ընկած տարածութիւնը: Այսպիսով միջնաբերդի պաշարումը կատարեալ էր—արևմուտքից նրան չըջապատում էին անանցանելի քարածայտերը, հարաւից յունաց զօրքը, իսկ հիւսիսից դուռը, որի առաջ կանգնած էին արգոսցիները:

Թիւրքերի համար փրկութեան երեք ճանապարհ կար. նրանք կարող էին կամ յարձակուել յոյների վրայ, հէնց որ իրանց զինուորական նաւերը երևային, և հասնել ծովին, կամ յոյների դէմ կուռել և Տրիպոլսի հետ հաղորդակցութիւնը վերականգնել և կամ համբերել մինչև դրսից օդնութիւն ստանալը: Յոյների անսպասելի յարձակման միջոցին բնակիչներին տիրած սարսափի առաջին բոպէներին նրանք վազեցին դէպի միջնաբերդը և չը գննուած մարդկանցով լցրին այն: Նրանցից իւրաքան-

չիւրը լսի իր և իր անձնական սպառնալուծեան մասին էր մը-
տածում: Փախտակահանների այս խմբի մէջ կային հարիւրա-
ւոր յոյներ, նրանցից մի քանիսը երկիւղից զլուխը կորցրած՝ պա-
հուկցին միջնաբերդում, բայց մեծամասնութիւնը թիւրքերից
կրած անգթութիւնների վրայ դանդատուելով՝ միացաւ հայրե-
նակիցների հետ: Բոլոր այն մարդկանց, որոնք ցանկութիւն էին
յայտնում ծառայել հայրենիքին և պիտանի էին զինուորական
ծառայութեան, Պետրո-բէյն ընդունեց իր զօրքի մէջ և յանձ-
նարարեց նրանց որոնել տներում թաղնուած թիւրքերին: Նրա
հրամանով այդ զերիներին ոչ պէտք է սպանէին և ոչ վատ վա-
րուէին նրանց հետ, այլ ուղղակի պէտք է բանտարկէին: Բայց
այնքան բազմաթիւ զրկանքներ կրած սարուկների վայրենի վը-
րէժխնդրութիւնը սահման չ'ունէր, և տներում գտնուած բոլոր
թիւրքերը գաղտնի կերպով սպանուեցին:

Միջնաբերդի պիտաւոր թերութիւնը նրանումն էր, որ ջրի
պաշար չ'ունէր: Այնտեղ կար միայն մի ջրհոր, բայց դա բա-
ւական չէր այնտեղ փրկութիւն որոնող ահապին թւով մարդ-
կանց պահանջները լրացնելու համար: Կէսօրին մօտ Դիմիտրի-
ոսը, որը կառավարում էր հիսիսային զօրագունդը, նկատեց, որ
միջնաբերդի պարսպից պարաններով դուրս կն իջեցնում
դէպի գետը և յետոյ ջրով լիքը վերև քաշում: Նա մի քանի
մարդ առաւ իր հետ և բարձրացաւ նոյն պարսպի մօտ. այդ
բայէին նրանց պիտավերել երկու դոյլ երկացին, և նրանք
կամացուկ արձակեցին պարաններից: Այսպէս շարունակելով
նրանք կէս ժամուայ մէջ մինչև քսան դոյլ քանդեցին: Պա-
շարուածները աշխատեցին մի քիչ ներքեից ջուր ձեռք բերել,
բայց այնտեղ ժայռերը սուր-սուր անկիւններ էին ներկայացը-
նում, և դոյլերը բռնուելով նրանցից՝ կամ կտրւում էին, և
կամ ջուրը թափւում էր նրանց միջից:

Այդ իսկ միջոցին նաւահանգստից բարձրացող ձխի սիւ-
նից երևում էր, որ մեասենցիները ետանդով էին դորձում: Նը-
բանց մի մասը ցրուել էր ծովափի վրայ և նաւերն ու մակոյկ-
ներն էր այրում, իսկ միւսը գերի վերցնում այն թիւրքերին,
որոնք փորձում էին ծովով փրկութիւն գտնել: Նրանցից մի
քանիսն սկսեցին վաղել դաշտավայրի միջով դէպի լեռները, բայց
նրանց ետեից հրացաններ արձակեցին, և թիւրքերը մեռած գլո-
րուեցին գետին: Իսկ մեծամասնութիւնը անսնելով՝ որ երկու կրա-
կի մէջ է, միջնաբերդից Պետրո-բէյի զօրքով կտրուած, իսկ ծովից,
մեասենցիների խմբերով, անձնատուր եղան նիկիտային, որը նը-
բանց խումբ-խումբ վաղեց նաւահանգստի շինութիւնների մէջ:
Իսկ արկաղիացիները ծովափի մօտ շարուելով՝ սպասում էին

Թիւրքական նաւերի գալուն և անգործութիւնից ծխում ու երգում էին ամբողջ առաւօտ:

Ժամը 2-ին միջնաբերդի թիւրք բերդապահների ղլխաւոր Ալի-աղային իմաց տուին, թէ ծովի վրայ երկու նաւ երկուային, որոնք յաջողակ քամու պատճառով կարող են մի քանի ժամ յետոյ մտնել Կալամատայի նաւահանգիստը: Ալին ամբողջ առաւօտ անօդուտ կատաղութիւնից տրարւում էր, տեսնելով թէ ինչպէս յոյները ոչնչացնում էին նաւերն ու մակոյցները. նրա գէնքերի և ջրի պաշարն ամենեկին չէր բաւականացնում յոյներին ընդգիծադրելու և միջնաբերդը լցուած փախստականների գոյութիւնը պահպանելու համար: Այդ պատճառով նա լաւ հասկանում էր, որ եթէ Տրիպոլից օգնութիւն չը հասնի,—իսկ զրա վրայ յոյս զնել անկարելի էր, այդպէս արագ էր տեղի ունեցել յոյների պաշարումը,—այն ժամանակ նրա համար փրկութեան միակ յոյսը ծովից մօտեցող երկու ղրնուորական նաւերի հետ միասին զործելն էր, որով կարելի կը լինէր յոյներին երկու կրակի մէջ զնել: Բայց զրա համար նա պէտք է սպասէր նաւերի մօտենալուն և յոյների հետ կոխն ըսկսելուն:

Կէս ժամ յետոյ ծովափին կանգնած արկաղիացիները պարզ նկատեցին մօտեցող թիւրքական նաւերը, որոնք ըստ երևոյթին ղրնուորական էին: Թշնամիներին գիմազրելու համար Նիկիտան օգտուեց թիւրքերի շինած, բայց զեռ չ'աւարտած նաւապահ թմբից, որի համար ափին բազմաթիւ մեծ քարեր էին թափուած:

—Թիւրքերը իրանց համար թումբ են շինել,—բացազանչեց նա՝ գառնալով իր ղրնակիցներին,—բայց Աստուած և բոլոր սրբերը այդ բանը յոյների օգտին ծառայեցրին: Պահուեցէք այս քարերի կտեր, և երբ նաւերը նաւահանգիստը մտնեն, մենք աննկատելի կերպով կը յարձակուենք նրանց վրայ: Թումբը մեզ ծածկում է ծովից, և թիւրքերը չեն տեսնիլ, մինչև որ անկիւնից ձուռելով մեր ձեռքում կը լինեն: Այստեղ խոր է, և նրբանք կը մօտենան մեզ:

Նա մտասնեցիներից մի վաշտ օգնութեան կանչեց և 1,600 հոգի տեղաւորեց թմբի կտեր, քարերի տակ. իսկ ինքը սողալով հասաւ մինչև նրա ծայրը և ժպտը երեսին սկսեց ըսպասել նաւերին, որոնցից միայն առաջինն արդէն միքանի հարիւր քայլ հեռու էր դանւում ափից:

Թմբի ծայրին մօտենալով նաւը, որի վրայ բազմաթիւ թնդանթներ էին երևում, յանկարծ ձուռեց և քարէ պարբսպի երկայնութեամբ յիսուն ստնաչափ առաջ ընթացաւ: Նիկի-

տան հրամայեց իր մարդկանց հրացանաձողութիւն սկսել հէնց որ նաւը զէմուղէմը հասնի. հաղար վեց հարիւր հրացան հրամանի էին սպասում:

Գեղեցկապէս և հանդարտ առաջ էր լողում նաւը զէտի պատրաստուած գարանատեղին: Նաւաստիները վազվզում էին տախտակամածի վրայ և շարելով առազաստակալները՝ պատրաստում էին առագաստներն իջնցնել և խարխալ գցել: Կամուրջիկի վրայ կանգնած էր նաւավարը երկու սպայի հետ, իսկ տախտակամածի վրայ շարուած էին երկու հարիւր նորակոչ զինուոր՝ հրացաններով: Քարերի ետեը թաղնուած յոյնների զլխում մի միտք ծագեց՝ «նախ զինուորներին», և հարիւրաւոր հրացանների կրակը նրանց վրայ ուղղուեց:

Այս միահամուռ հրացանաձողութեանը հետեց երկրորդը, երրորդը, և թիւրքերը խաղապնդերի նման ընկնում էին, իսկ նաւը շարունակում էր հանդարտ շարժուել. Առաջին զոհերի թւում էին և նաւավարն ու երկու սպան: Սարսափը տիրեց նաւի վրայ եղած մարդկանց: Մի քանիսը փրկութիւն էին որոնում նաւախցերի մէջ, ուրիշները ջուրը դատկում, միւսները հմայուածի նման անշարժ կանգնած՝ սպասում էին իրանց օրհասին: Մի քանի զինուոր միայն չը վհատուեցին, առաջ քշեցին մի թնդանօթ և սկսեցին լցնել: Բայց մինը միւսի ետեից նրանք ընկնում էին յոյների անվրէպ հարուածներից: Աւանուամենայնիւ հպարտ նաւը չէր ընդհատում իր ընթացքը իրան ուղղուած հրացանների մօտով, և նրա տախտակամածը ծածկուեց մեռած մարմինների կոյտերով: Քիչ յետոյ այլևս ոչ ոք չը կար, որ նաւը կառավարէր, և նա քամուռ ուղղութեամբ գառնալով իր ծայրը խփեց հակառակ ցած աւազուտ ափին: Աւազի կոյտի վրայ նստելով, նա իր բարձրացրած, բայց անշարժ առագաստներով կարծես քարացաւ:

Այն ժամանակ միայն Նիկիտան և միւս յոյները մտաբերեցին երկրորդ նաւի մասին և ետ դառնալով իրանց հայեացքները նրա վրայ ուղղեցին: Նա դեռ ևս չորս մղոն հեռու էր, բայց նրա վրայ մեծ շարժում էր նկատուում, և Նիկիտան սկսեց երկիւղ կրել, թէ չը լինի թիւրքերն իրանց մեծ թնդանօթներն են կարգի դնում: Սակայն այդ երկիւղը երկար չը տևեց, նաւը իր ընթացքը փոխեց և շտապով լողայ զէտի ծովը: Այս անվայել փախուստը յոյների զայրոյթը շարժեց, և նրանք սկսեցին բարձրաձայն հայհոյելով հրացաններ արձակել փախուստականների վրայ, բայց Նիկիտան՝ իհարկէ՛ իսկոյն հրամայեց վերջ տալ դրան, որովհետև չէր ցանկանում ի դուր ուղմամբները փչայնել:

Միննոյն ժամանակ առաջին նաւի մէջ կենդանի մնացած երեսուն հոգին յուսահատութիւնից սկսեցին հրացան արձակել և մինչև անգամ լցրին մի թնդանօթ, բայց յոյները դարձեալ հինգ-վեց հոգի կոտորեցին, և այն ժամանակ մնացածներն աւելի լաւ համարեցին հրացաններով պաշտպանուելու՝ մի կողմ թողին թնդանօթը: Բայց նրանք ստիպուած էին աներևոյթ թշնամիների վրայ հրացան արձակել, այն ինչ իրանք ուղղակի յոյների գնդակների դէմ էին կանգնած: Ինչ վերաբերում է ջուրը թափուած թիւրքերին, — նրանց գնդակահար արին բազերի նման, և մէկը միայն դուրս եկաւ ամբ, բայց հազիւ կարողացաւ վրայից ջուրը թափ տալ, երբ մի գնդակ դեպին տապալեց նրան:

Մինչդեռ այս ամենը կատարւում էր, Ալի-աղան դիտում էր, թէ ինչպէս մի նաւ մտաւ նաւահանգիստը, նա հրամայեց հրաձգութիւն անել զէպի ժայնեցիկների զօրագունդը, բայց յոյները Պետրօ-բէյի հրամանին հնազանդուելով՝ քաշուեցին մետաքսի գործարանների ետևը և մինչև անգամ հարկաւոր չը համարեցին պատասխանել այդ աննպատակ հրացանաձգութեանը: Խճրախուսուելով դրանից և տեսնելով, որ նաւահանգստում կրուում են, նա արդէն ուզում էր իր զօրքի կիսով զիմել զէպի նաւահանգիստը, երբ նկատեց, որ մի նաւը նստեց աւազի վերայ, իսկ միւսը փախաւ զէպի ծովը: Մի բան էր մնում միայն — սպասել, և իրաւ, առանց նաւերի օգնութեան դուրս գալն անմտութիւն կը լինէր:

Մթնաշողին հրացանաձգութիւնը դադարեց, և նաւից մի մակոյկ սպիտակ դրօշակ պարզած՝ լողաց զէպի ամբ: Կենդանի մնացած սակաւաթիւ թիւրքերն անձնատուր եղան, նրանց դուրս բերին ամբ և հակոզութեան տակ առան: Նիկիտան այցելելով նաւը՝ առանձին յարգանք տուաւ այնպէս քաջութեամբ հուռող մարդկանց զիակներին: Ամբողջ տախտակամածը ողորդւած էր արեան հեղեղներով: Հրացանները, վառօդը, նաւապետի սենեակում գտնուած 500 պիաստր փողը և այն ամենը, ինչ որ կարող էր պէտք դալ յոյներին, նրանք վեր առան: Մինչև անգամ փորձեցին թնդանօթներն էլ դուրս հանել, բայց առանց անհրաժեշտ յարմարութիւնների այդ բանը նրանց ոյժից բարձր էր: Վերջ ի վերջոյ նրանք նաւն այրեցին, որ թիւրքերը նորից չը փրէին այն: Ամբողջ զիշերը վառոււմ էր նա, որպէս մի բոցափայլ խարոյկ: Այսպէս վերջացաւ պաշարման առաջին օրը:

Հետեւեալ ամբողջ օրը պաշարումը շարունակուեց, բայց միջնաբերդից ոչ դուրս գալու փորձ եղաւ և ոչ յարձակում: Տապալտի մօտով անցնող Արկաղիայի բոլոր լեռնային անջերը,

որոնցով կարող էին օժանդակիչ զօրքեր գալ Տրիպոլսից, Պետրո-բէյի հսկողութեան տակ էին. նա չէր ցանկանում իղուր զոհել իր մարդկանցը, քաջ գիտենալով՝ որ համբերութեամբ էլ կարող էր հասնել սպասածին: Իր կողմից Ալին պատրաստ էր անելի շուտ անձնատուր լինել, քան թէ իր վատ զինուած հազար հինգ հարիւր մարդկանցով կուր զուրս գալ քաջասիրտ յոյների վեց գնդի գէմ, որի հետեանքը կը լինէր Կալավասայում եղած բոլոր թիւրքերի կատարեալ ջարդը:

Երբորդ օրը վաղ առաւօտեան, թիւրքերը հասկացան, որ Տրիպոլսից օդնութիւն ստանալու յոյս չը կայ, և եթէ դա գտնուէլ լինի, արդէն ուշ է: Զրհուրի շուրը ցամաքեց, և սովն զգալի եղաւ քաղաքի կիսամերկ բնակիչների մէջ, որոնք յոյների յարձակման միջոցին մերկ դուրս էին փախել իրանց մահճակալներից և այդ գրութեամբ էլ փրկութիւն գտել միջնաբերդում: Իսկ յունաց զօրքի մէջ լիութիւն ու կարգ էր թափաւորում: Նրանք տեղաւորուել էին յարմար բնակարաններում և վայելում էին քաղաքի բոլոր պաշարները, բացի դրանից՝ նրանք բաւական քանակութեամբ աւար էին ձեռք բերել, որոնց կէսը բաժանուեց զինուորների մէջ, իսկ միւս մասը Պետրո-բէյը յատկացրեց պատերազմական ֆոնդին:

Կէս ժամի չափ արդէն հնչում էր առաջին փողի ձայնը, և յոյները հաւաքուում էին նախաճաշելու, երբ յանկարծ մի սղիտակ զբօշակ բարձրացաւ անկիւնի աշտարակի վրայ, և Ալի-աղան մի մանկլախի հետ, որը բռնած ունէր նրա ծխաքարչը, դիմեց դէպի պաշարողների բանակը: Յոյներից մի քանիսը, որոնք իրանց կաշու վրայ կրել էին նրա անդթութիւնները, չըջապատեցին բարբարոսին և սկսեցին հայհոյանքներ տեղալ նրա զըլխին, մինչև անգամ թքում էին նրա վրայ: Բայց նա սառնասրբութեամբ ընտիր հայհոյանքներով պատասխանում էր յոյներին և այնպէս բարձր բղթաւում նրանց վրայ՝ չուն և շան սրգի անուանելով, որ նրանք հետզհետէ կտ էին քաշուում: Ծանապարհին նա անտաւ մի կոյր յոյնի, որը զեանին նստած՝ սղորմութիւն էր խնդրում. Ալին կանգ առաւ, բաց արաւ իւր կարմիր, աղուէսի մորթով կարուած հագուստը, միքանի հատ մանր փող հանեց և զցեց աղքատին: Յետոյ նա մի անգամ էլ կանց առաւ, ուղից հանեց հողաթափը և դուրս դրեց այնտեղ ընկած փոքրիկ քարի կտորը: Եթէ որ Ալին երկիւղի գէթ մի ամենափոքր հետք արտայայտէր, նրան հարիւր անգամ կը սպանէին, բայց նա արհամարհանքով էր վարուում ամբոխի հետ և այս վերջինս ձեռք չը տուեց նրան:

Պետրո-բէյը նստած էր իր զրաւած տան առաջ, երբ նկա-

տեց մօտեցող թիւրքին: Նա վեր կացաւ, գլուխ առաւ և հրամայեց ծառային ծխաքարչ բերել: Բայց Ալին չը պատասխանեց բարեին և ձեռքի մի շարժումով ցոյց տուաւ, թէ ինքը բերել է իր ծխաքարչը: Նրա համար բոլոր յոյները չներ էին, և նա Պետրօ-բէյի հետ վարւում էր, որպէս իր սարուկի հետ:

—Նա հարկաւոր եմ գտնում անձնատուր լինել,—ասաց նա գեղեցիկ յունարէն լեզուով,—և եկայ պայմանների մասին համաձայնութիւն կայացնելու:

Պետրօ-բէյի աչքերը կայծեր արձակեցին: Նա մեղմ բնաւորութեան տէր էր և անխօս նստելով՝ ստներն իրար վրայ գրաւ, իսկ թիւրքը կանգնած մնաց նրա առաջ:

—Ես ոչ մի պայմանի համաձայն չեմ,—պատասխանեց նա,—բայց կը հրամայեմ, որ ընդհանուր կատորած չը լինի. սակայն ես խորհուրդ կը տայի քեզ և քո մարդկանց ձեր լիրբ ձեւերով համբերութիւնից չը հանել յոյներին:

Ալին շարժեց գլուխը, առանց հրախրելու նստեց և ձեռքով նշան արաւ մանկլաւիկին, որը ծխաքարչը բռնած հետևում էր նրան:

—Դու, օրինակ, ազատ ճանապարհ չես տալ մեզ Տրիպոլիս դնալու համար.—ասաց նա:

—Ո՛չ:

—Չես թողնիլ մեր ղէնքերը:

—Նրբէ՛, —պատասխանեց Պետրօ-բէյը ծիծաղելով և սպաբարկութեամբ աւելացրեց.—բայց այն թէ ինչ կ'անեմ քեզ համար. ես կ'արգելեմ իմ մարդկանցը, որ քեզ շան նման չը սպանեն իսկոյն, ուրիշ ոչինչ:

Ալին ուսեֆը սեղմեց և ծխաքարչը մանկլաւիկի ձեռքից առնելով՝ դարձաւ իր մօտ կանգնած յոյներից մէկին՝ խնդրելով մի կրակ շորհել, ծխախոտը վառեց և սկսեց հանդարտ ծխել:

—Քո պայմանները շատ խիստ են,—ասաց նա վերջապէս,—բայց ես չեմ ասում, թէ բոլորովին հրաժարուում եմ ընդունել գրանք: Միայն ինձ հարկաւոր է հինգ ժամ խորհելու համար:

—Դու յոյս ունես, թէ այդ միջոցում Տրիպոլիսի օգնութիւն կը հասնի: Ո՛չ, ես համաձայն չեմ սպասել: Ասան իսկոյն—այն կամ ոչ:

—Իսկ եթէ ես ոչ այս ասեմ և ոչ այն, ինչ կ'անես այն ժամանակ:

—Այն ժամանակ ես կը հրամայեմ բոլորովին ապահով ճանապարհ գնել քեզ մինչև միջնաբերդը, բայց երբ մենք ձեզ սովամահ անելով առնենք ձեր ամբոցը, այն ժամանակ ես պատասխանատու չեմ լինիլ քո ապահովութեան համար: Մենք քեզ

և քո մարդկանց հետ հին հաշիւներ ունենա: Այստեղի յոյները շատ պատճառներ ունեն քեզ վրայ գանդատուելու:

—Ի՞նչ ասել կ'ուզէ, չներ: Ես ընդունում եմ ձեր պայմանները:

—Ուրեմն քեզ իմ գերին համարիր,—ասաց Պետրո-բէյը, առանց նրան նայելու վերկենալով տեղից,—տարէք սրան, Խրիստո՛, Գորգի, իսկ դու, Եանի, հրամայիր, որ բոլոր երեք վաշան էլ պատրաստ լինի:

—Բայց նախ և առաջ ինձ մի կրակ էլ տուէք,—ասաց Ալին,—իմ ծխախոտը շատ խոնաւ է:

Կէս ժամ յետոյ բոլոր թիւրք զինուորներն ու քաղաքի իշխանաւորներն արդէն գուրս եկան միջնաբերդից երկու վաշտ յոյներով շրջապատուած: Նրանք իսկոյն գանազան զօրայնզերի մէջ բաժանուեցին և դարձան յոյների ստրուկները, ինչպէս որ այդքան տարի յոյները նրանց ստրուկներն էին: Շատերն իրանց բարեկամների փրկանքով ազատուեցին, իսկ շատերին էլ, ինչպէս յոյներն ասում էին, «լուսինը լափեց»: Յունական դրօշակը բարձրացաւ միջնաբերդի աշտարակների վրայ և արդէն ըսկսուեց Յունաստանի ազատութեան գործը, որը հրեղէն խօսքով աւետեց Միսոսը Տայգետի փարոսից:

Եւ յունաց ազատութեան սկզբնաւորութեան այս օրը բոլոր յոյն սրտերը, որոնք այնքան երկար ժամանակ համբերութեամբ սպասում էին այս ուրախառիթ թողէին, ցնծում էին, իսկ երկինքն ու երկիր ըստ երեոյթին մասնակցում էին նըրանց ուրախութեանը: Արեգակը լուսածածանչ փայլում էր երկնային ջինջ կապուտակութեան վրայ, ծովն ուրախ քշում էր իր ալիքները, կարծես ծիծաղում լինէր, իսկ կանաչ մարգագետինները պծնուել էին անհամար ծաղիկներով:

Հէնց որ գերիների բաժանումը վերջացաւ, յունաց ամբողջ զօրքը շարուեց միջնաբերդի մօտ հրապարակի վրայ և ջերմազին աղօթքներ վերառաքեց երկինք՝ գոհանալով պարգեւած յաղթութեան համար: Այս բաց եկեղեցում, սրտեզ արեգակն իբրև կանթեզ էր ծառայում, իսկ հիւսիսային բարակ քամին իբրև խունիկ, անկեղծ սրտով աղօթում էր հօտիմէական բռնակալութեան ժամանակից անկախ յոյների առաջին գորարանակը: Բոլոր ծերերը, որոնց վիճակուած չէր ապրել մինչև ազատութեան վերջակէտը, և երիտասարդները, որոնք բարբարոսների հետ մղած կռիւ վրայ նայում էին սրպէս մի զուարճութեան վրայ, զգում էին, որ ամբողջ ազգի ցանկալի վերածնութեան արշալոյսին բոլորի սրտերը միևնոյն բերկրութեամբ են բարախում:

Մէջտեղում՝ փոքրիկ բլրակի վրայ կանգնած էին քառասունուերկու քահանայ, իսկ բոլորից առաջ հայր Անդրէասը: Նրա աչքերը փայլում էին լեռնային բազէի աչքերի նման, արիւնայից վրէժխնդրութեան ծարաւը վառում էր նրանց մէջ: Իսկ երբ նա իր հուժկու ձայնով, որից աւելի բարձրը չը կար Յունաստանում, սկսեց երգել «Ջրեզ Աստուած դովարանեմք»-ը, ամբողջ հազարաւոր ամբոխը ուրախութիւնը սրտում և արտասուքն աչքերին ձայնակցեց նրան:

Պետրո-բէյը լուռ նայում էր իր մօտ կանգնած Նիկողայոսին, որի ետեւը երևում էին Միտոսն ու Եանին: Խոշոր արտասուքները գլորում էին նրա արևակէզ դէմքի վրայով: Նրա, ինչպէս և բոլոր շրջապատողների համար այդ բոլորներն գոյութիւն չուներն ո՛չ անցեալ, ո՛չ ապագայ, այլ ամեն ինչ լոկ լուսափայլ ներկայի մէջ էր ամփոփուած: Այսքան դար ստրկութիւնից յետոյ նրանք վերջապէս ազատ ազգ էին և գոհութիւն էին տալիս Ասածուն՝ թշնամիներին տուած առաջին հարուածի յաջողութեան և երկնքի պարզեցած յաղթութեան համար: Երբ մաղթանքը վերջացաւ, Պետրո-բէյն ասաց Նիկողայոսին.

—Վաղեմի բարեկամ...

Իայց արտասուքները թոյլ չը սուին նրան շարունակելու: Նիկողայոսը պատասխանեց նոյնպէս.

—Վաղեմի բարեկամ...

Աւելի ոչինչ չը կարողացան նրանք արտասանել, բայց և նրանց այտերի վրայով գլորուող ուրախութեան արտասուքներն աւելի պերճախօս էին ամեն տեսակ խօսքերից:

II

Յունաց բանակը դուրս երկու օր էլ մնաց Կալամատայում՝ անձնատուր լինելով իր ուրախութեանը: Պետրո-բէյը մի քանի զինուորական պահակախմբեր գրաւ Տայդեաթի ճիւղերի վրայ և Արկադիայի անցքում, որովհետև կամենում էր Տրիպոլսից օժտնդակիչ զօրք գալիս՝ կարել նրա ճանապարհը: Առաջին յաղթանակից արբեցած՝ յոյներն ուղում էին ուղղակի այդ ամբողջի վրայ գնալ, բայց Պետրո-բէյն զգոյշ մարդ էր: Նա գիտէր, որ Կալամատայի առումը իր զօրքի պատերազմական ընդունակութիւններն ապացուցանող մի լուրջ փորձ չէր. զինուորներն իսկապէս թեկըր ծալած կանգնած էին, և աւարը երկնքից էր թափուում նրանց առաջ: Մեծաքանակ զօրքով պաշտպանուած զօրեզ դիրքի վրայ յարձակում գործելը բոլորովին այլ բան էր: Իրա համար նա այժմ ո՛չ բաւական թւով մարդիկ ուներ, ո՛չ

զէնք, և խոհեմութիւնը պահանջում էր բաւականանալ փոքր ընդհարումներով, մինչև ապստամբութիւնը կը տարածուէր ամբողջ երկրում և ընդհանուր կը դառնար: Ուստի նա մնաց կալամատայում և Մորէայի հիւսիսային կողմից փարոսներէ վառուելու հեռանքի մասին տեղեկութեան էր սպասում ու յոյս ունէր իր ոյժերը միացնել Պատրասի և Միգասսոլէլայոնի զօրազընդերի հետ: Որպէս թիւրքերի զէմ կուող յունաց առաջին բանակի զլխաւոր հրամանատար՝ նա մի կոչ հրատարակեց, թէ յոյները որոշել են թօթափել իրանցից մահմէդական լուծը, և խնդրում էր բոլոր քրիստոնեաներին օգնել ազատութեան համար կուող իրանց հաւատակիցներին:

Միևնոյն միջոցին եպիսկոպոսներն ու Մորէայի միւս հոգևորականները, որոնք մարտի վերջին հրաւիրուած էին Տրիպոլիս, Միսոսի հնարած քաղաքականութիւնից օգտուեցին և ազատուեցին այդ ճանապարհորդութիւնից: Հերմանը, որը թիւրքերէն խօսել ու գրել գիտէր, կազմեց կեղծ նամակը, որն իբր թէ գրուած էր Տրիպոլսեցի մի բարեկամ թիւրքի ձեռքով. այդ նամակով նա նախազգուշացնում էր Հերմանին, թէ Մահմէդ-Սալիկը կասկած տանելով, որ յոյները չուտով կ'ապստամբեն, կամենում էր սպանել երկու կամ երեք աչքի ընկնող հոգևորականների և այդպիսով երկու բան չահել—սարսափ գցել ամբողջ ազգի վրայ և զրկել նրան պարազլուխներից: Այդ կեղծ նամակը գրպանում նա հանդիստ սրտով ճանապարհ ընկաւ կալաւրիտա, ուր ժողովուել էին հոգևորականութեան բոլոր բարձր ներկայացուցիչները: Հերմանը երեկոյեան հասաւ այնտեղ և քնելուց առաջ նամակը տուաւ իր ծառայ Լամբրոսին և հրամայեց նրան գնալ Տրիպոլսի ճանապարհով, իսկ կէս օրին մօտ վերադառնալ և ճանապարհի կիսին նրանց պատահելով նաւակը տալ Հերմանին, բացատրելով թէ իրան պատահած մի թիւրք էր տուել և խնդրել՝ որքան կարելի է՝ չուտով յանձնել Հերմանին:

Լամբրոսը, որ հարաւարնակ մարդկանց յատուկ սէր ունէր դէպի ամեն մի խորհրդաւոր և զբամատիկական բան, յաջողութեամբ կատարեց այդ յանձնարարութիւնը, և երբ հոգևորականները առաւօտեան ճանապարհ ընկնելով՝ կէսօրին կանգ առան հանգստանալու, նա շտապով մօտեցաւ նրանց, ցած թռաւ ձիուց և կեղծ նամակը տուաւ իր տիրոջը: Հերմանը զարմացմամբ և երկիւղով աչքից անցկացրեց այդ նամակը, իսկ յետոյ բարձրաձայն կարգաց ընկերներին, որոնց սարսափ տիրեց: Ոչ ոք չը գիտէր, թէ ինչ անէր, և բոլորն սպասում էին Հերմանի հեղինակաւոր խորհրդին:

—Ահա թէ ինչ կանենք մենք, կղբայրներ,—ասաց նա,—եթէ դուք կը հաւանէք իմ ծրարիքը: Ես այս նամակը կ'ուղարկեմ իմ յարգելի բարեկամ Մահմէդ-Սալիկին, որին այնուամենայնիւ այդպէս էլ համարում եմ, և կը խնդրեմ, որ երաշխաւոր լինի մեր ապահովութեան համար. դա ի հարկէ՝ լոկ մի ձեռքանութիւն է, և նա կանէ իսկոյն, եթէ այս նամակը զրոգ միւս յարգելի բարեկամս սխալուած է: Բայց առայժմ իրաւացի համարելով նրա նախազգուշութիւնը՝ մենք պարտաւոր ենք զրա համեմատ վարուել: Այդ պատճառով ես կարծում եմ, որ մենք պէտք է ցրուենք և փոքրաթիւ թիկնապահներով չըջապատենք մեզ: Իսկ մինչև պատասխանը գալը,—աւելացրեց նա՝ ուշի-ուշով բոլոր հայրենասէրներին նայելով,—գուցէ մեր ձեռքին մի ուրիշ դործ կը լինի:

Հոգեորականներից մի քանիսը գուցէ գլխի ընկան, որ նամակը կեղծ է, բայց նրանք ուրախ էին Տրիպոլիս չը դնալու համար պատրուակ դռնուելուն և սիրով ընդունեցին Հերմանի ծրարիքը:

Յետոյ անցաւ տասն օր տենդային սպասողութեան մէջ, որի ժամանակ Պետրո-բէյը Կալամատայի առման նախապատրաստութիւններն էր տեսնում: Ամեն երեկոյ մարդիկ բարձրանում էին այն լեռնադաղաթի վրայ, որտեղ փարոսի համար նիւթ էր պատրաստուած և անհամբերութեամբ նայում հորիզոնին, սպասելով՝ թէ չէ վառուում արդեօք հեռուում մի որևէ փարոս: Եւ իւրաքանչիւր առաւօտ նրանք վերադառնում էին իրանց ընկեր-հայրենասէրների մօտ, ասելով՝ «ոչինչ, ոչինչ»: Վերջապէս մի մութ գիշեր ցանկալի յոյսը երևաց, և ամբողջ երկրում հարաւից մինչև հիւսիս փարոսները վառուեցին, ամեն կողմ լուր տարածելով թէ ազատութեան արշալոյսը բացուեց: Կալաւրիտայում, որտեղ նոյնպէս հիւսիսային մասի հայրենասէրներն առաջին հարուածը տուին, թիւրքերն աւելի բիչ էին նախապատրաստուած պաշտպանուելու, քան թէ Կալամատայում, և ապրելի Յ-ին քաղաքն անձնատուր կղաւ դարձեալ այն պայմանով, որ ընդհանուր կտորած չը լինի: Սա մի նշանաւոր քաղաք չէր, բայց նրա գրաւումն ահագին նշանակութիւն ունէր ապստամբած յոյների համար, որովհետև նա ընկած էր Յունաստանի ամենահարուստ հովտի մէջ, Մեդրասպէլայոնին մօտիկ, ուստի և նրանց գործողութիւնների կենտրոնը դարձաւ հիւսիսային մասում: Բացի զրանից Կալաւրիտայում մի քանի շատ հարուստ թիւրքեր էին ապրում, և նրանց փողերը, որոնք յոյների ձեռքն անցան, մեծ օգնութիւն էր կոխելու առաջ տանելու համար:

Այդ դէպքի մասին տեղեկութիւն ստանալով՝ Պետրօ-բէյը որոշեց գործել: Հիւսիսային մասի յաջողութիւնն ապացոյց էր, որ այնտեղ օգնութեան կարօտ չէին, իսկ երկու զօրարանակի միախորհուրդ գործողութիւնները, որոնք հարաւից ու հիւսիսից թիւրքերին վանում էին դէպի Տրիպոլիս—Բ. Դրան այս ամենադիւաւոր ամբողջ Յունաստանում,—վազուց արդէն նրա փայփայած երազներն էին: Սակայն հարկաւոր էր աւելի ևս զգոյշ և ուշիմ գործել. կալաւրիացի աման լուրն ստանալով՝ նրա զինուորներն սկսեցին պահանջել, որ իսկոյն ճանապարհ ընկնեն հիւսիսային մասի ապստամբներին ընդառաջ և Տրիպոլիսը պաշարելու, բայց Պետրօ-բէյը, որի հետ միշտ համակործիք էր Նիկողայոսը, Տայգետի նման անզորուելի մնաց. միայն պիտի քայլ կարող էր միայն աղէտի պատճառ դառնալ, որովհետև նրանք դեռ անփորձ էին պատերազմական գործողութիւնների մէջ և միանգամից կարող էին փչացնել յունաց ազատութեան սուրբ գործը: Նրանք դեռ պէտք է պատերազմի այբուբէնը սովորէին, և նրանց համար գժուար էր գտնել մի աւելի լաւ դպրոց, քան Տայգետի լանջերի վրայ փռուած այս բանակը, որտեղ թիւրքական հեծելազօրքը նրանց դէմ գործել չէր կարող: Այդ պատճառով միջնարեգի պարսպների մէջ ահադին խրամաններ բանալով, ջրհորը լցնելով և որպէս ամրոց նրա նշանակութիւնը կորցնելով, Պետրօ-բէյը յաղթողի լուսաճաճանչ փառքով ևս տարաւ իր զօրքը դէպի բանակը, որ գտնուում էր լերան զառիվայրի վրայ:

Երեք դիշեր յետոյ Եանին ու Միտոսը ընթրիքից յետոյ նստած էին խարոյկի առաջ:

—Օ՛, Եանի,—ասում էր Միտոսը,—Տրիպոլիսում երկար ժամանակ լաւ կերակրուելուց մի այնպիսի հաստ գոճի ևս դարձել, որ՝ ճշմարիտ՝ ափսոս որ քեզ խորովել չէ կարելի:

—Եթէ քեզ էլ ինձ նման կերակրէին, Միտոսս,—պատասխանեց Եանին, դու ինձանից աւելի կը հաստանայիր:

—Խեղճ Մահմէդ,—չարունակեց Միտոսը ծիծաղելով,—նրա աշխատանքն իզուր անցաւ: Գիտես, Եանի, անցեալ տարի Նաւալիայում աօնալաւճառն մի գեր կին էին ցոյց տալիս, բայց՝ ճշմարիտ՝ դու նրանից էլ հաստ ես: Չէ, լուրջ եմ ասում, ևս ատում եմ հաստափորներին, և դու շուտով պէտք է նիհարես: Մէկ նայիր Նիկողայոս մօրեղբորս,—չարունակեց երիտասարդը՝ չը նկատելով, որ Նիկողայոսը գուրս էր եկել իր վրանից և կանդած էր իրանց ետևը—չը նայելով որ նա քեզանից տասներկու վերջով երկար է, քառասուն տարով մեծ, նրա գօտին քեզ չի դալ:

—Բաւական է դատարկ-դատարկ դուրս տար,—ասաց Նիկողայոսը՝ ուրախ ծիծաղելով. եկէք ինձ մօտ. ձեզ համար գործը պատրաստ է:

Յանին շտապով վեր թաւ և ուրախ բացադանչեց.

—Մենք պէտք է գնանք և այն էլ կրկնով: Շնտ լաւ:

—Դէհ, գնանք վրանը,—արտասանեց Նիկողայոսը,—և ես ձեզ կը պատմեմ, թէ գործն ինչու՞մն է:

Նա կրկու խօսքով բացատրեց նրանց իր նոր ծրագիրը: Կալամատային մօակեցող թիւրքական նաւը վերադարձել էր Նաւալլիա և աթէնք պէտք է տեղափոխէր միջանի հարուստ թիւրք ընտանիք, որոնք այնտեղ իրանց ապահով չէին համարում, իսկ Աթէնքից ղէնքեր և պատերազմական պիտոցքներ հասցնէր Նաւալլիա: Ժամանակ էր գործի գնել հրձիգ նաւերը:

—Նիկողայոսն ասում է, թէ դու, Միասնս, լաւ ծանօթ ես Նաւալլիայի ծովածոցին,—ասաց Պետրօ-բէյը:

—Նա ինձ ծանօթ է, ինչպէս իմ հինգ մատը,—պատասխանեց կրիտասարգը՝ հրճուանքից կարմրելով.—երբ պէտք է գնամ:

—Վաղն առաւօտ: Թիւրքական նաւը երկք օր առաջ Նաւալլիա է հասել, բայց դեռ հինգ օր էլ կը մնայ այնտեղ: Բայց նրա վրայ բաց ծովի մէջ պէտք է յարձակուել, երբ արդէն այլևս սնկարելի կը լինի ետ դառնալ: Սակայն քեզ մի ընկեր էլ է հարկաւոր: Ո՞ւմ կը ցանկանայիր վերցնել քեզ հետ:

—Իհարկէ նիհար Յանին,—պատասխանեց Միասնսը ժպտալով:

—Իսկ հաստափոր Յանին ցանկանում է այդ:

—Նրա համար միևնոյնն է,—բացադանչեց Յանին՝ ուրախութեամբ լցուած.

—Թողէք դատարկաբանութիւնը և իմ հրահանգները լսեցէք,—ասաց Պետրօ-բէյն ու մանրամասն բացատրեց գործողութեան նախագիծը:

Ուշադրութեամբ լսելով Պետրօ-բէյի ճառը, կրիտասարգները դուրս եկան թարմ օդ ծծելու և կրկար ժամանակ ծխում և ուրախ խօսակցում էին, մինչև վերջապէս Նիկողայոսը պահապանների մօտ չըջիլիս՝ նկատեց նրանց և քչեց քնելու:

Հետեւեալ առաւօտ նրանք թեթև պաշար առած՝ ճանապարհ ընկան, որովհետև կայիկը հրձիգ նաւ դարձնելու համար բոլոր հարկաւոր իրերը պատրաստ էին Նաւալլիայում: Նրանք իրանց հետ վեր առան միայն մի ձի «գերուկի» համար, և Պետրօ-բէյն ու Նիկողայոսը մինչև Սպարտա տանող լեռնային անցքը ճանապարհ գրին կրիտասարգներին:

Նրանց ճանապարհն անցնում էր դաշտավայրի միջով և նրանք պարտաւոր էին կողմնակի ճանապարհով չրջան կազմել Տրիպոլի շուրջը և Արգոս չը մտնելու համար Նաւալիայի ծովածոցով անցնելու Նաւալիայում պէտք է իջկանէին Կոստանդինի տանը, բայց որքան կարելի էր ծածուկ կերպով: Ինչ վերաբերում է կայիկին, դա յանձնուած էր սրճարանատէր Լիլասին պահելու:

Ճանապարհորդութիւնը յաջող անցաւ: Առաջին օրուայ Լուսիոյին նրանք դանուում էին Լանդարդեան անցքի ծայրին— նրանց առաջ տարածուած էր Սպարտայի ահագին ստղարներ դաշտավայրը, տեղ-տեղ կանաչ, տեղ-տեղ էլ զորչաղոյն ձիթենիների այգիներից: Այնտեղից մի մղոն հեռաւորութեան վրայ լեռնային անցքի ստորոտի մօտ բոյն էր գրեկ թիւրքական փոքրիկ Միստրա քաղաքը, և երկու ընկերները լեռնային շաւղով անցան այդ քաղաքի մօտից՝ երկիւղ կրելով, թէ մի գուցէ թիւրքերը լուր ստացած լինեն Կալամատայի անցքերի մասին և յոյները զարուն սպասելիս լինեն: Բայց քաղաքի միւս կողմը հասնելով՝ Եանին ետ դարձաւ և զարմացած ասաց.

— Չարմանալի է, պատուհաններից լոյս չէ երևում:

— Այո, տարօրինակ է, — պատասխանեց Միստսոր. — սպասիր, պէտք է նայել:

Նրանք նստեցին գետնին և մթնշաղից օգտուելով՝ սկսեցին սպասել, որպէսզի քաղաքում, որը բոլորովին դատարկ էր երևում, կեանքի որևէ նշան յայտնուի: Սակայն ժամանակն անցնում էր, և ոչ մի ձայն չէր լսուում մարդկային այս տարօրինակ ընակավայրում:

— Կամացուկ մօտենանք քաղաքի դրանը, — ասաց Եանին, — անհամեմատ լու. կը լինի տան մէջ զիչերեկ, քան թէ պաղ գետնի վրայ:

— Տրիպոլի տաք ընակարաններին ևս սովորել, հա, — ծիծաղելով պատասխանեց Միստսոր. — էհ, ոչինչ, գնանք:

Դիմեցին գէպի մի գուռ, որը կրնկի վրայ բաց էր:

— Չարմանալի է, հապա առաջ գնանք, — ասաց Միստսոր: Բոլոր տները, որոնց մօտով նրանք անցնում էին, դատարկ էին և դռները բաց:

— Նրեի ընակիչները տեղեկութիւն են ստացել Կալամատայի առման մասին, — ասաց Միստսոր, — և փախել: Այստեղ ոչ մի հողի չէ մնացել: Հապա, գնանք մինչև փողոցի ծայրը:

Նրանք ձին թողեցին մէջիցի բակում և զգուշութեամբ շարունակեցին ճանապարհը: Առնն կողմ նոյն դատարկութիւնը, նոյն լուծիւնը: Պատուհաններից երևում էին թափթը-

փած թիւրքական մետաքսէ հաղուստներ, զուրանի փառահեղ հրատարակութիւններ և այն: Յունական հին եկեղեցու մուտքի մօտ, սրը սղիթ էր դարձրած, զրուած էին երկու մեծ արծաթէ աշտանակ քսան մոմակալներով:

—Գիտես ինչ,—ասաց Նանին՝ ուշի-ուշով այս աշտանակներին նայելով,—վատ չէր լինիլ այս հաղապիւտ հրաշալիքների լուսի տակ ընթրել: Վերցնենք սրանք, Միտսոս: Պահ, պահ, ինչ ծանր են:

—Բայց ուր գնենք:

—Այն գեղեցիկ տան մէջ, որը ես արդէն նայել եմ: Այնտեղ մի փոքրիկ տակառ զինի էլ էր երևում, իսկ ես այժմ լաւախորտակ ունեմ իմելու: Օ՛, այս ինչ սքանչելի կանացի հաղուստ է: Երևի սրա տէրն էլ սիրուն է եղել:

Նանիի հաւանած տունը մի երկյարկանի սրճարան էր: Պարտիզից սանդուխը տանում էր դէպի վերին յարկը. հէնց որ նրանք մօտեցան սանդուխին, յայտնի չէ՝ թէ որտեղից մի կատու դուրս եկաւ և սկսեց կասկածոտ կերպով ծուռ-ծուռ նայել նրանց: Ներքև երեք սենեակ կար, որոնցից զրախնի մէջ շուտափոյթ փախուստի հետքեր էին երևում: Յատակին ընկած էր մի երկար թիւրքական նարդիլ՝ սաթի ծխափողով, դարակների վրայ թափժփած էին մի քանի չիբուխ, իսկ սեղանի վերայ երևում էր ծխախոտով լիքը մի կիսաբաց քիսա: Սենեակի երեք պատը բռնում էր մի ցածիկ, փափուկ բազմաց, և կատուն, որն ըստ երևոյթին մի անսպասելի համակրանք զղաց դէպի օտարերկրացիները, հանդիստ նստեց բազմոցի անկիւններից մէկում և սկսեց ուրախ մլաւել: Երկրորդ սենեակը լիքն էր սուրճի և ծխախոտի արկղներով, իսկ սեղանի վրայ դրած էր մի աաշտակ, մէջը երկու կիսով չափ փետրտած վառիկ: Երրորդը դոմն էր, որի մի անկիւնում թարմ խոտ էր ածած, իսկ միւսում երևում էր վառարանը՝ մի կոյտ ածուխ առաջն ածած: Վառարանի մէջ մոխրապատ ածուխների վրայ դրուած էին երկու պղնձէ փոքրիկ սրճամաններ:

—Ես յոյս ունեմ, որ դուք այսօր ինձ մօտ կ'ընթրէք, Միտսոս,—արհեստական կերպով կոտրատուելով ասաց Նանին, երբ նրանք նայեցին բոլոր սենեակները:

Միտսոսն անխօս զլուխ տուաւ:

Յետոյ նրանք պատուհանների փեղկերը փակեցին և վառեցին աշտանակները:

Ապա զննեցին վերին երկու սենեակը, որոնցից մէկում երկու մահճակալ կար, իսկ միւսում—մէկ: Նրանք անկարգ դրութեան մէջ էին, ըստ երևոյթին դրանց վրայ քնած մարդիկ

ուղղակի անկողնի միջից էին փախել, ուստի և Միտսոսը զբողանքով ևս դիցեց սաւանները, որոնց վրայ թիւրքեր էին քնել:

Տունը նայելն աւարտելով՝ Եանին սկսեց կրակ անել հաւերը եփելու համար, իսկ Միտսոսը մառանը մտաւ:

—Ա՞յս ինչ է, անչօնու^{*)},—բացադանչեց նա.—չնա գեղեցիկ: Մենք գրանցով կը նախաճաշենք. դա մեր սխորժակը կը գրդռէ: Ո՛վ Սուրբ Կոյս, այստեղ էլ ծխախոտով լցրած ծըխաքարչեր կան: Ասելն աւելորդ է, մենք այստեղ երեկոն չափազանց ուրախ կ'անցկացնենք: Բայց մեր ձին սպասում է զբրան առաջ: Ես կը գնամ նրա ետեից, իսկ դու շտապիր ընթրիքը պատրաստելու:

Եանին ծիծաղեց:

—Բայց ճշմարիտ՝ թիւրքերը լաւ մարդիկ են: Նրանք մեզ համար պաշար են պատրաստել, որը մինչև Նաւալիա բաւական է. մենք գիշերներն այլեւ հաց ու գինի չենք գնիլ զիւղերում:

Եանին վառիկները եփելու դրաւ, և մինչդեռ Միտսոսը զնաց ձին գոմի մէջ տեղաւորելու, զուարճութեան համար սկսեց իր վրայ չափել այն կանացի հագուստը, որը գտել էին փողոցում: Երբ Միտսոսը նրան գոմը կանչեց, Եանին չը հանեց այդ շորերը և այդպէս գնաց իր ընկերոջ մօտ, որն առաջին բուպէին զարմացաւ թիւրք կին տեսնելով, իսկ յետոյ ուրախ քրքրեց:

—Ի՞նչ է, այ կին, իմ ընթրիքը պատրաստ է,—բացադանչեց նա ուրախ-ուրախ:

Նրանք ծիծաղելով նստեցին սեղան և սկսեցին ախորժակով ուտել վառիկներն ու անչօտմները և գինի խմել, որը Միտսոսը գտել էր մառանում: Մանուսանգ նրանց զուարճացնում էր այն, որ թիւրքերի հաշից էին ուտում-խմում:

—Փառաւոր թիւրքական վառիկ,—բացադանչեց Եանին,—գեղեցիկ թիւրքական գինի, պանչելի թիւրքական ծխախոտ: Մենք մեծ բաւականութեամբ այստեղից կը տանէինք և այս թիւրքական գեղեցիկ աշտանակները, բայց եթէ չալակած տանենք, ճանսպարհին բոլորի ուշադրութիւնը մեզ վրայ կը դարձնենք:

Ճաշից յետոյ նրանք գուրս եկան պարտէզը և սկսեցին թիւրքերի ծխաքարչերը ծխել: Ամեն ինչ հանդարտ էր, միայն հեռում առուակն էր կարկաչում, կամ լսում էր սոխակի դայլայլիկը: Կատուն վազվազում էր պարտիզի մէջ՝ մերթ ծառերը բար-

*) Մանր ձկների մի տեսակը:

ձըրանալով, մերթ ինչ որ երևակայական որսի վրայ յարձակուելով: Իսկ երբ նրանք ներս դնացին քնկու, նա հանդիսաւոր կերպով առաջնորդեց երիտասարդներին և Միտոսսի մահճակալի վրայ ցատկելով՝ սկսեց քնքշութեամբ մլաւել:

III

Հետեւեալ առաւօտ շատ վաղ նրանք ձին բեռնաւորեցին դանազան պաշարով և ճանապարհ ընկան դէպի հարաւ-արեւելք: Սպարտան իր կարմիր կտուրներով և ձիթենիների ծառաստաններով մնաց ձախակողմը, իսկ նրանց հանդէպ գալարուում էին խաչանձներով և դաշտային ծաղիկներով ծածկուած բլուրները: Երկու ժամ յետոյ նրանք հասան կեռամանաւոր արծաթափայլ Եվրոտի ափին: Միտոսը, որ ջրի վրայ էր մեծացել, հրապուրուեց և շտապ չորերը հանելով՝ սկսեց ուրախ լողալ: Երկու ժամ էլ անցկացաւ, և նրանք հասան լեռների ստորոտին, այնտեղ դադար առան և ճաշեցին:

Այսպիսով երիտասարդները դարձեալ երկու օր շարունակեցին իրանց ճանապարհը և վերջապէս Տրիպոլիսն ու Արդոսը իրանց կտիւ թողնելով՝ Մալայի մօտ դուրս եկան Նաւպլիայի ծովածոցի եզերքը: Այնտեղ նրանց սպասում էր մի մակոյկ, և ծագող արեգակի լոյսի տակ Միտոսը նորից տեսաւ իրան ծանօթ ծովածոցի կապտադոյն մակերևոյթը, որի հակառակ կողմում սպիտակին էր տալիս իր սիրելի կնոջ բնակարանը ծածկող պարիսպը:

Ժամը տասին նրանք արդէն Կոստանդինի տանն էին, որտեղից պարզ երևում էր թիւրքական նաւը: Ըստ երևոյթին նրանք ժամանակին էին հասել: Յարձակումը Պետրօ-բէյի տուած հրահանդի համաձայն պէտք է՝ իհարկէ՝ գիշերով կատարուէր, իսկ սրճարանատէր Լեւասից տեղեկացան, որ նաւն այդ իսկ երեկոյ ժամը 12-ին պէտք է ծով մտնէր, որը նրանց համար յարմար էր, որովհետեւ եթէ նա ցերեկը դուրս գար, ստիպուած կը լինէին մինչև մութն ընկնելը հետեւել նրան և իրանց յանդուգն գործը կատարել բաց ծովի մէջ, ափից հեռու: Լեւասը ցոյց տուաւ այն կայիկը, որը Նիկողայոսի կարգադրութեամբ պէտք է նա յանձնէր Միտոսին. երիտասարդը յայտնելով թէ հարկաւոր է մակոյկի գնացքը փորձել, ցատկեց նրա մէջ: Ափից հեռացնելով, նա աչքով արաւ Եանիին, իսկ սա ժպտաւ լով պատասխանեց.

—Շատ ախոս, որ ես չեմ կարող գալ քեզ հետ:

Նա շատ լաւ գիտէր, թէ ուր է շտապում Միտոսը, թէ-

պէտ ո՛չ մի յոյս չը կար ցերեկով տեսնել Ձիւլէյմային, և զընալով տուն, սկսեց համբերութեամբ սպասել նրա վերադարձին։

Բայց նախ քան լեւաւորի բաժանուելը այս վերջինս կամենում էր՝ ինչ էլ որ լինի՝ մի կերպ իմանալ նրանից, թէ մալոյին ինչ բանի համար էր հարկաւոր Միտսոսին։

—Նս համոզուած եմ,—ասաց նա վերջապէս,—թէ կայիկը նրան հարկաւոր է թիւրքերի դէմ որեւէ պատերազմական զործ ձեռնարկելու համար։

Բայց նանին գոհացում չը տուաւ նրա հետաքրքրութեանը, ընդհակառակը՝ նա իր խօսակցից իմացաւ Նաւալիայում տարածուած այն բոլոր լուրերը, որոնք վերաբերում էին դըլխաւորապէս քաղաքից թիւրքերի հեռանալուն։ Ո՛րը Կ.Պոլիս էր փախչում, որը Աթէնք, իսկ շատերը փրկութիւն էին որոնում նաւահանգստում կանդնած զինուորական նաւի վրայ։ Այդպէս մեծ էր Կալամատայի առման չնորհիւ թիւրքերի մէջ տարածուած սարսափը։

Այն ինչ Միտսոսը կայիկի գլուխը դարձրեց ուղղակի գէպի սպիտակ տունը։ Քամին յաջողակ էր, և որովհետեւ կայիկի առադասան աւելի մեծ էր, քան թէ երիտասարդի մալոյիինը, ուստի և նա անհամեմատ արագ էր թռչում։ Երևի այդ իսկ պատճառով էլ հէնց դա էր ընտրել Նիկոլայոսը, որ մի փորձուած ծովագնաց էր, և Միտսոսը հեռուում երևացող նաւին նայելով մտքում ասում էր ինքն իրան.

—Նս թեզ տասնհինգ բոպէ աւելորդ փամանակ կը տամ և մի փամում կը հասնեմ։

Շուտով նա արգէն պարսպի տակ էր։ Պատշգամբում ո՛չ ոք չը կար, և այդ բանը նրան տարօրինակ թւաց, որովհետեւ սուղ միշտ այնտեղ կանայք կամ ծառաներ էին երևում։ Բայց եթէ Միտսոսը չէր էլ տեսնում Ձիւլէյմային, այնուամենայնիւ բերկրալի սրտով զգում էր, որ նա մօտ է և զուցէ այդ իսկ բոպէին Ձուլէյլայի հետ իր մասին է խօսում։

Պարսպի մէջ մի փոքրիկ զուռ կար, որը միշտ փակ էր լինում, իսկ այժմ՝ ջրի հոսանքի չնորհիւ պատահմամբ մօտենալով նրան՝ Միտսոսը զարմացմամբ նկատեց, որ կրնկի վրայ բաց է։ Նա դունստուեց։ Մի սարսափելի միտք ծագեց նրա գլխում։ Նա թուաւ դէպի ափ և ներս մտաւ դռնակից։ Պարտէզը դատարկ էր, և տան դռները բաց. մի ինչ որ նապաստակ զուռս թուաւ թփերի տակից և սրահուեց ծաղկանոցում։

Երիտասարդը ցնցուեց։ Տունը դատարկ էր, և Աբգուլը իր բոլոր մարդկանցով փախել էր։ Այդ դեռ քիչ էր, ամենայն հա-

ւանականութեամբ նա ապաստան էր գտել այն նաւի վրայ, որը Միտսոսը պէտք է այրէր:

Նրա աչքերը մթնեցին: Նա չէր կարող նաւի վրայ եղած միւս թիւրքերի հետ Ձիւլէյմային էլ մահուան ենթարկել, և հետևապէս հրձիգ նաւը չը պէտք է դործադրուէր: Բայց Եանին նըրա հետ էր, և ո՛չ մի բան չէր կարող արգելել նրան իր պարտականութիւնը կատարելու: Ո՛չ, նա կայիկով պէտք է գնար Եանիի հետ և յետոյ որևէ պատճառով յետաձգէր թիւրքական նաւի կործանումը մի ուրիշ անգամի:

Տուն վերադառնալիս՝ Միտսոսի մէջ հետզհետէ աւելի հաստատոււմ էր այն համոզմունքը, թէ ինքը չէ կարող անխուսափելի մահուան մասնակցի Ձիւլէյմային: Թէպէտ պարտականութիւնը և անձնութիւնը զէպի Նիկողայոսն ու հայրենիքը այդ էին պահանջում, բայց Ձիւլէյման նրա համար թանկ էր ամեն բանից: Նա Միտսոսի առաջին սէրը, զանձն էր, նրա կիներ՝ Աստուծոյ առաջ և բացի դրանից...

Եանին ճաշում էր, երբ Միտսոսը մտաւ սենեակը, բայց նրան տեսնելուն պէս վեր թռաւ տեղից:

— Ի՞նչ է պատահել: Ի՞նչ եղաւ քեզ, — բացազանչեց նա:

Միտսոսն անխօս նայեց նրան, և իր վիշտն ուրիշին հաղորդելու փափազը յազթող հանդիսացաւ, թէպէտ վճռել էր պատահածի մասին ոչինչ չը յայտնել Եանիին, և նա ասաց.

— Եանի, թիւրքական նաւն այրել չէ կարելի: Արդուլը Ձիւլէյմայի և բոլոր տանեցիների հետ փախել է: Նրանք հաւանականաբար այդ նաւի վրայ են: Ես չեմ կարող նրան կորստի մասնել:

Եանին յուսահատուած՝ ընկաւ բազմոցին:

— Միտսոս... Խեղճ Միտսոս... — բացազանչեց նա. — Ողորմանձ Աստուած:

— Ինչո՞ւ ես ինձ «խեղճ» անուանում, չէ՞ որ ես չեմ կարող...

— Դու չես կարող, իսկ երդումը, իսկ հայրենիքը...

— Երդումից և հայրենիքից աւելի սուրբ բան էլ կայ: Սատանան տանի երդումն էլ, հայրենիքն էլ:

Եանին լուռ էր:

— Ի՞նչպէս ես համարձակուում լուռ մնալ: Ի՞նչպէս ես համարձակում դատապարտել ինձ, — շարունակեց Միտսոսը՝ սաստիկ զայրացած. — ես երկու անգամ անխուսափելի մահից ազատել եմ քեզ, իսկ դու...

— Միտսոս... — կարողացաւ միայն շշջալ Եանին:

Միտտոսը չըթուճաբը կծեց և լռեց: Մի բոսկէ յետոյ նա սկսեց երեխայի նման լաց լինել:

—Եանի,—ասաց նա՝ քիչ հանդարտուելուց յետոյ,—ներիր ինձ, բայց ես չեմ կարող, չեմ կարող այդ բանն անել: Դա իմ ոյժից բարձր է:

Եանին գրկեց իր ընկերին և նրանք սկսեցին միասին լաց լինել:

—Խեղճ Միտտոս,—չնչաց վերջապէս Եանին՝ լուռթիւնը խանդարելով,—ինչ անենք: Գուցէ Նիկողայոսն ու իմ հայրը ազատէին քեզ քո երդումից, եթէ գիտենային այս: Բայց նրանք հեռու են: Իսկ եթէ նա այդ նաւի վրայ չէ:

—Իսկ եթէ այնտեղ է...

Նորից լուռթիւն տիրեց:

—Աւելորդ է այդ մասին խօսել,—մի քանի բոսկէից յետոյ ասաց Միտտոսը,—ինչ որ լինելու է, կը լինի: Դժուար է ինձ համար այդ զարհուրելի գործը կատարել, բայց դրանից հրաժարուելն էլ անհնարին է: Խղճո՛ւ ինձ, Եանի, և ներիր այն ամեն անախորժ խօսքերիս համար, որ ես քեզ ասացի:

Եանին ժպտաց:

—Ներելու ոչինչ չը կայ, սիրելի Միտտոս: Դու ինձ վերաւորել չես կարող:

—Ուրեմն մոռացիր, սիրելիս, ես՝ ճշմարիտ՝ չը գիտէի, թէ ինչ էի խօսում:

—Այո, այո, ես ոչինչ չեմ յիշում:

Ժամերն անցնում էին ժամերի ետեից, իսկ Միտտոսը վիրաւորուած դաղանի նման անշարժ պառկած էր սրահում: Եանին հանդիստ թողեց նրան, գիտնալով՝ թէ սրպիսի ծանր կռիւ է կատարուում նրա սրտի մէջ: Սակայն քիչ-քիչ նա հանդստացաւ, անվճռականութեան ամենապիտըր ստուերն անգամ չքացաւ նրա աչքերից, և նրանց արտայայտութիւնից պարզ երևում էր, որ նա արդէն վճռել էր այս կամ այն իրազործելու:

—Մի բան կեր, —ասաց Եանին՝ վերջապէս մօտենալով նրան, երբ արդէն արեգակը մօտ էր մայր մանկուուն:

—Չեմ ուզում,—պատասխանեց Միտտոսը:

Եանին մի բաժակ գինի մօտեցրեց նրա չըթուճաբներին:

—Սմիր չուտով,—ասաց նա.—սա քեզ ոյժ կը տայ:

Միտտոսը երեխայի նման հնազանդուեց:

—Դու մի որևէ բան պէտք է վճռես,—ասաց Եանին բոսկէական լուռթիւնից յետոյ.—եթէ որոշել ես ոչինչ չ'անել, այն ժամանակ ես մի որևէ հնար կը գտնեմ:

Միտտոսը զլիսով մի շարժում արաւ:

—Կէս ժամ առանձին թող ինձ,—ասաց նա,—իսկ յետոյ քեզ կ'ստեմ, թէ ինչ որոշեցիր:

Եանին դառը կսկիծը սրտում հեռացաւ: Նա ցաւում էր ընկերի վրայ, բայց ոչ մի բանով չէր կարող օգնել նրան:

Անցաւ կէս ժամից աւելի, և այն սենեակի դրան մէջ, որտեղ նստած էր Եանին, երեսաց Միտսոսը: Նա շատ գունատ էր և գծուարութեամբ էր սարի կանգնել:

—Գհանք, Եանի,—ասաց նա, առանց նայելու իր ընկերին.—ժամանակ է ճանապարհ ընկնելու: Ո՞րտեղ են փայտերն ու բեկինի (терпентинъ) ամանները:

—Մակոյկի մէջ են. արդէն տարել եմ:

—Ուրեմն եթէ որ ես հրաժարուէի, դու ուզում էիր մեռնակ կատարել մեր յանձնարարութիւնը:

—Ես կ'աշխատէի անել այն, ինչ որ հնարաւոր էր:

Շատ անգամ են մարդիկ հաստատուն քայլերով բարձրացել զէպի կոտափնարան, և մարտիրոսներն անխուով նայել իրանց մերձաւորների մահուանը: Դիշտ միևնոյն դրութեան մէջ էր գտնուում և այժմ Միտսոսը: Բոլոր հոգով ու սրտով նա հաւատում էր Յունաստանի պաշտութեան և թիւբքերի կործանման գործի սրբութեանը, և այդ պատճառով երդում էր տուել հնազանդուելու այդ սուբր գործի պարագլուխներին և չէր կարող զրփել այդ: Նա կամովին հայրենասիրական մեքենայի անիւներից մէկն էր դարձել, և քանի որ նրա ամբողջ կազմութիւնը շարժման մէջ էր, մի անիւն անկարող էր չը շարժուել: Ուստի նա հաստատուն քայլերով, բայց բոլորովին անզիտակցաբար զիմեց զէպի մակոյկը, զննեց, թէ ամեն ինչ պատրաստ է արդեօք, և զեկը ձեռն առաւ:

Երկու երիտասարդ ընկերների ձեռնարկութիւնը վտանգաւոր էր: Կայիկը լցուած էր բռնկուող նիւթով—այնտեղ կար չորս աման բեկին, որով պէտք է ողողէին առագաստն ու ցալի բեռը: Գործողութեան ծրարներն այն էր, որ նրանք աննրկատելի կերպով պէտք է մօտենային թիւբքական նաւին, կայիկը նրա պարաններին ամրացնէին, կրակ տային, իսկ իրանք փրկութիւն գտնէին այն փոքրիկ մակոյկի մէջ, որը կախուած էր կայիկի կողքից: Բայց որովհետև կրակն արագութեամբ կը տարածուէր կայիկի մէջ, ուստի նրանց կրկնակի վտանգ էր սպառնում—նրանք կարող էին այրուել, նախքան կը յաջողուէր մակոյկը մտնել և հեռանալ հրձիգ նաւից, կամ սպանուել թիւբքական գնդակներից: Բայց հէնց այս կերպ վտանգն էր Միտսոսի արիութիւնը պահպանում:

Գիշերը գոնէ լիովին նպաստում էր այդ քաջագործու-

Թեանը—երկինքը ծածկուած էր ամպերով, և բաւական զօրեղ քամի էր փչում, այնպէս որ նրանք կարող էին աննկատելի և արագ մօտենալ նաւին: Հակառակ դէպքում պարզ գիշերը վրտանգը կրկնապատիկ կը լինէր: Քամին փչում էր հիւսիս-արևելքից: հարկաւոր էր սպասել, մինչև զինուորական նաւը մի մղոնաչափ անցնելով՝ ծովածոցից դուրս գալու համար ծրուէր դէպի հարաւ: Այն ժամանակ նա ափից հեռացած կը լինէր, և նրա դէմ գործելու ամենայարմար ժամանակը կը հասնէր: Սկզբում հարկաւոր էր քառորդ մղոնի չափ հեռու մնալ նրանից և սպասել, մինչև որ նաւը խարխիւրը հանէր:

Ժամանակ չատ կար, Միտսոսը նախ մակոյկը մօտեցրեց սպիտակ պարսպին, որին ուզում էր յաւիտեանս հրաժեշտ տալ: Եանին հասկացաւ նրա մտազրութիւնը և երեսը դարձրեց, որ նրա յուսահատութիւնը չը տեսնի: Իրաւ՝ չը նայելով իր պարտականութիւնն ու երզումը կատարելու անխախտ որոշմանը՝ նա ամենատաժանելի տանջանքի մէջ էր: Սիրտը կտոր-կտոր էր լինում: Մօտենալով սպիտակ պարսպին, Միտսոսը մի այնպիսի հայեացք գցեց նրա վրայ, որով մարդիկ հրաժեշտ են տալիս իրանց սիրելի ննջեցեալին: Նրա համար Զիւլէյման մեռած էր, և Միտսոսը մտածում էր նրա մասին, որպէս մի ննջեցեալի, որին սիրել և իր ձեռքով մահուան էր մատնել: Խորը հառաչելով՝ նա դարձրեց մակոյկի դուխը և շտապով դիմեց դէպի Նաւսլիա, որը շուտով երևաց մօտակայքում:

Քաղաքի բազմաթիւ կրակների առաջ սեխն էր տալիս զինուորական նաւի մթին կերպարանքը: Նաւի տախտակամածը վառահեղ կերպով լուաւորուած էր, և այնտեղ բարձրաձայն զրոյցներ և ուրախ ծիծաղ էր լսւում: Նաւաստիներն՝ ինչպէս երևում էր՝ պատրաստուած էին խարխիւրը հանել, որովհետև ժամանակ առ ժամանակ պարանների վրայ մարդիկ էին մաղըցում, և լսւում էր հրաման: Վերջապէս հնչեց մի զանգի ձայն, որը երևի դուրս գալու նշան էր:

Բայց մեր բարեկամներն ստիպուած եղան դեռ երկու ժամ էլ սպասել,—այնպէս դանդաղ էին առաջ գնում թիւրքական նաւի վրայ դուրս գալու պատրաստութիւնները: Հեազհետէ վառուեցին զլիսաւոր կայմի և նաւի միւս մի քանի մասերի լապտերները: Վերջապէս խարխիւրը հանեցին և դրին փոքր առադաստը, որը բաւական էր ծովածոցից դուրս գալու համար: Հանդարտ, փսեմ կերպով առաջ շարժուեց նաւը՝ իր ետեից թողնելով քաղաքը բազմաթիւ կրակներով:

Միտսոսն անխօս ուղղեց իր առադաստը, և կայիկն ընթացաւ մեծ նաւի ետեից նաւահանդստի մօտով, և շուտով նրանք

դանում էին ծովածոցի մէջտեղում, ու ամեն կողմից ծովային
ահեղ ալիքներն էին միայն շրջապատել նրանց:

—Մի ամանը լցրիւ յատակին գրած ցախի վրայ,—ասաց
Միտսոսը վեր կենալով, իսկ միւսն ինձ տուր:

Եանին հնազանդուեց, և նրա ընկերը բարձրացաւ կայմի
վրայ և այնտեղից առապաստը ողողեց դիւրաբորբոք հեղուկով:
Յետոյ նրանք միւս երկու ամանը լցրին կայիկի մնացած մա-
սերի վրայ:

—Առապաստը պարզիր և թոփր գէպի մակոյկը,—հրամա-
յեց Միտսոսը խուլ ձայնով,—բայց առաջ լապտերն ինձ տուր:

Եանին շտապով բոլորը կատարեց, և կայիկն արագ առաջ
պաշարւ: Միտսոսը սառնասրտութեամբ դարձրեց նրան ուղղակի
գէպի սև կոյտը: Մի քանի բոպէից յետոյ նաւը ծռուեց գէպի
հարաւ և կայիկի կայմը գոներից մէկի ապակին փշրելով՝ իր
ծայրը խրեց նրա մէջ: Այդ իսկ վայրկենին մակոյկը մի կողմ
չպրտուեց, և Միտսոսը լապտերը բարձր բռնած՝ թռաւ նրա մէջ:

—Շուա, չուա,—չնչաց նա,—ես չեմ կարող:

Եւ նա լապտերը տուաւ Եանիին: Սա մի ակնթարթում
բաց արաւ լապտերը և կոխեց բեկնով ողողուած ցախի մէջ:
որը լուցիւ նման բռնկուեց: Մի բոպէ ետ,—և ամբողջ կայիկը,
որի կայմը խրուած էր նաւի ջարդուած ապակու տեղը, մի ա-
հագին խարոյկ դարձաւ: Այն ինչ Միտսոսը կտրեց պարանը,
որով մակոյկը կապուած էր կայիկից, և նրանք երկսով թիւրը
ձեռք առան: Այրուող կայիկը ծածկում էր նրանց թիւրքերի
աչքից և հինգ բոպէ յետոյ մակոյկն այնքան հեռու էր, որ այլ
ևս ոչ մի վտանգ չը կար: Այն ժամանակ Միտսոսը թին վայր
զցեց և մեռածի նման փռուեց մակոյկի յատակին:

Մթին հորիզոնի վրայ բարձրանում էր կրակէ սիւնը: Բո-
ցավառ կայիկն այրեց նաւը, և կրակն ամեն կողմից շրջապատեց
նրան: Աղաղակ և լաց ու կոծ էր լսւում նաւախուցերից և
տախտակամածից, որտեղ խմբուել էին կանայք և երեխաները:
Նաւաստիները փորձեցին մակոյկ իջեցնել, բայց իւզոտած պա-
րանն այրուեց, և ալիքները քչեցին տարան մակոյկը, նախքան
աղատուած մարդիկ նրա մէջ կը մտնէին: Այն ինչ՝ կրակը լա-
փում էր ներսն ու տախտակամածը, իսկ յետոյ երկար լեզուներ
ի նման կայմերի վրայով բարձրացաւ գէպի առապաստները:
Անցաւ մի քանի բոպէ ետ, և վերջնական աղէտը վրայ հասաւ.
կրակը հասաւ վառօղի պահեստին, լսուեց մի զարհուրելի պայ-
թիւն, նաւը կտոր-կտոր եղաւ և ամեն ինչ անհետացաւ մթու-
թեան ու մրրկայոյզ ալիքների մէջ:

Պայթիւնն սթափեցրեց Միտտսին, և նա զլուխը բարձր-
բացնելով՝ շնչաց.

—Այդ ինչ է:

—Ամեն ինչ վերջացաւ,—պատասխանեց Եանին,—նաւն
օդը ցնդուեց, և նրա մնացորդները ծովի մէջ են ընկզմուում:

—Փնօք Աստուծոյ, որ ամեն ինչ վերջացաւ,—հազիւ լսե-
լի ձայնով արտասանեց Միտտսը և նորից ընկաւ մակոյկի յա-
տակին:

Եանին յենուեց թիբրին, նրան շատ դժուար էր քառու
հակառակ տանել նաւը: Բայց և այնպէս մի փամ յետոյ նա մօ-
տեցաւ Կոստանդինի տան դիմացի ակիին:

—Մենք տանն ենք,—ասաց նա՝ Միտտսի ուսերից բռնե-
լով:

Վերջինս վեր կացաւ և լուռ հետեց Եանինին: Ներս մտնե-
լով՝ նա նստեց պատուհանի մօտ և անմիտ հայեացքն ուղղեց
դէպի խաւարը:

—Մի քանի բոպէ անցաւ, և մի մարդ դուռը բաղխեց: Եա-
նին հարցրեց.

—Ո՞վ է:

—Ես եմ, Լելասը,—պատասխանեց մի ձայն զրսից: Եա-
նին դժկամակութեամբ բաց արաւ դուռը և ուրախ, հաստա-
փոր սրճարանատէրը ներս մտաւ:

—Ո՞ւր էիք կորել,—ասաց նա ժպտալով,—մի ղեղեցիկ
տեսարանից զրկուեցիք: Թիւրքական նաւն այրուեց ծովի վրայ
և սարսափելի պայթիւնից յետոյ խորասուզուեց դէպի խաւար
անդունդը, այնպէս որ ոչ մի հոգի չ'ազատուեց: Ափսոս, որ խոզ
Աբդուլը իր կանանցով նրա վրայ չէր:

—Ի՞նչ: Ո՞ր Աբդուլը,—բարձրաձայն բացադանչեց Միտ-
տսը՝ բռնելով Լելասի ուսերից և կատաղաբար ցնցելով նրան:

—Ի՞նչ պատահեց ձեզ, թողէք ինձ,—հառաչեց վերուկը,—
ես այն անիծեալ Աբդուլ-Ահմէդի մասին եմ ասում, որը երեկ
իր տանեցիների հետ գնաց Տրիպոլիս:

Միտտոսն այլակերպուեց. աչքերն սկսեցին ուրախութեամբ
փայլել, և նա խելագարի նման նայում էր Եանինին: Վերջապէս
նա զրկեց Լելասին և սկսեց նրա այտերը համբուրել:

—Մ'յ գերսուկ,—բացազանչեց նա,—կեցցես դու: Ես քեզ
սիրում եմ այդ ուրախառիթ լուրը հաղորդելուդ համար: Եանի,
կուշտ խմացնենք սրան: Ես զի՛նի կը բերեմ:

Եւ նա դուրս վազեց սենեակից:

—Ի՞նչ է, Միտտսը խելքը թռցրել է,—հարցրեց Լելասը՝
ոչինչ չը հասկանալով:

—Այն, բոլորովին, բայց միայն ուրախութիւնից,—պատասխանեց Եանին:

Եւ նա էլ դուրս վաղեց Մխտոսի ետեից: Վերջինս կանդնած էր չեմբին, և նրա գէմքը երջանկութիւնից փայլում էր: Եանին անխօս գրկախառնեց նրան: Երկու ընկերները հասկանում էին միմեանց և խօսքերի կարօտութիւն չէին զգում:

IV

Տայգետի յունաց բանակն ամեն օր նորակոչների թարմ զօրախմբեր էին գալիս. ամեն տեղ ազատութեան համար բոլոր կուռղները իրանց ընկերների քաջագործութիւններն էին պատմում: Կալամատայի առումը մի կայծ էր, որն այրեց վառօղի թիւի ծայրը, և հարիւրաւոր գիւղերում հայրենասէրներն ապստամբեցին ատելի թիւրքերի գէմ՝ սպանելով իրանց ցեղային թշնամիներին, նրանց բնակարաններն այրելով և կանանց ու երեխաներին գերի տանելով: Քիչ ղէպքերում միայն թիւրքերը նախապատրաստուած էին, և յոյներին սարսափելի կոտորած էր սպասում, բայց համարեա ամեն տեղ փափկասէր թիւրքերը նիրհում էին, երբ յանկարծ իրանց բոլոր ոճիրների ծանր պատիժը թափուեց իրանց զլխին: Ի հարկէ՝ յոյների քաջագործութիւնները բարոյական գովելի փառքով չէին պսակուած, նրանց վրէժնորդութիւնը խիստ էր, բայց արդար, և առհասարակ սարուկներն իրանց բռնակալների գէմ ապստամբելով երբէք չեն կարող բոլորովին օրինաւոր կերպով վարուել: Վրէժխնդրութեամբ յագնալով՝ հայրենասէրների իւրաքանչիւր զօրագունդ գիմում էր գէպի կենտրոններից մէկը—Կալաւրիտա կամ Տայգետ, բայց զլիաւորատէս գէպի վերջինը, որովհետեւ այնտեղի զօրքը զուեա Պետրօ-բէյի հրամանատարութեան տակ գանուելով յայտնի անուն էր վաստակել Կալամատայում թիւրքերի գէմ տարած առաջին յաղթութեամբ:

Բայց շուտով հայրենասէրների թիւն այնքան մեծացաւ, և նրանց հետ վարուելն այնքան դժուար էր, որ Նիկողայոսը որոշեց երկրորդ հարուածը տալ թիւրքերին:

Մեասենիայում, որտեղ թիւրքերի միակ ամրոցը Կալամատան էր, նրանց ոչինչ չէր մնում անելու, բայցի ստպատակութիւններից, իսկ Արկաղիայում մի քանի ամրացրած տեղեր կային, որոնց հարկաւոր էր տիրել, նախ քան Տրիպոլսի վրայ արշաւելը: Դրանցից ամենազլխաւորը՝ Կարիսենան՝ գտնուում էր Արվիտսի վերեը, մի ուղղաձիգ լեռնագագաթի վրայ: Սա մի ամրացրած, համարեա բացառապէս թիւրքական քաղաք էր, և

Պետրոս-բէյը որոշեց իր պատերազմական զործողութիւնները երկրորդ նպատակակէտն այդ քաղաքն ընտրել: Իրաւ՝ վաղուց արդէն ժամանակ էր ամեն կողմից հաւաքուած այս զինուած մարդկանց խմբից, որոնք ոչինչ չէին շինուած և պատերազմի մասին ամենափոքր գաղափար անդամ չ'ունէին, կանոնաւոր զօրք կազմակերպել: Ուստի Պետրոս-բէյն առաջարկեց Նիկողայոսին գնդի նման մի բան ձևակերպել, որի կենտրոնական մասը կը կազմէին այն մարդիկ, որոնք արդէն եղած էին կուրի մէջ և Կալամատայի առմանը մասնակցել էին: Այդ գնդով նա պէտք է յարձակուած գործէր Կարիտենայի վրայ և եթէ հնարաւոր էր՝ զբաւել այն: Յամենայն դէպս եթէ մինչև անգամ յաղթանակը չը տանէին էլ, գոնէ նորակոչ զինուորները կը վարժուէին պատերազմական ձևերին և կարգապահութեանը: Միևնոյն ժամանակ Պետրոս-բէյը իր գլխաւոր բանակատեղին կը տեղափոխէր լեռների խորքը, Արկաղիայի գաշտավայրի և Տրիպոլսի մէջ տեղը, այնպէս որ պարտութիւն կրելիս Նիկողայոսը կարող էր այն կողմը նահանջել. իսկ միւս կողմից Պետրոս-բէյը հնարաւորութիւն կ'ունենար հետամուտ լինելու, թէ ինչ են շինուած թիւրքական ամրոցում: Բայց նա պարտաւոր էր մի քանի փոքրիկ զօրախմբեր էլ թողնել Արկաղիայի և Մեսսենիայի մէջ ընկած լեռնային անցքում, ինչպէս նաև այժմեան բանակի տեղը, այնպէս որ եթէ թիւրքերը մտածէին Կալամատայում զօրքը ափ հանել, Մեսսենիայի երկու լեռնային անցքերն էլ գրաւած գտնէին:

Նիկողայոսը հաւանեց այդ ծրագիրը և երկու օրից յետոյ սամնաանփորձ և քիչ վարժուած զինուորների մի զունդ առած՝ ճանապարհ ընկաւ: Բայց նա զիտմամբ ընտրել էր պատերազմի համար այս բոլորովին անպէտք մարդկանց՝ քաջ գիտենալով, որ յունաց զործի յաղթութեան համար անհրաժեշտ էր նրանցից կանոնաւոր զօրագունդ ստեղծել: Մի կողմից նա մի այսպիսի փոփոխութիւն հնարաւոր էր համարում, քանի որ նրա զինուորներն արիասիրտ, քաջատղջ մարդիկ էին և կարող էին ամեն տեսակ զրկանքների դիմանալ, իսկ միւս կողմից՝ եթէ որ նրանք առանց որևէ պարապմունքի բանակում մնային, չուտով նրանց մէջ անկարգապահութիւն կը տարածուէր:

Սկզբում մի անգամից նրանց չը վախեցնելու համար Նիկողայոսը թոյլ տուաւ լեռներից ու ինչպէս կարող էր՝ անցնել և միայն մի տեղ նշանակեց նրանց ժողովուելու այն գաշտավայրում, որտեղ մտադիր էր սկսել նրանց զինուորական կրթութիւնը: Այնտեղ նրանց պէտք է սպասէր կարաւանը, որը մի քանի ժամ առաջ էր գուրս եկել:

Երկու օր այսպէս ցիրուցան գնալով՝ Նիկողայոսն ու իր

մարդիկ հասան Մեղալուպոլիս, որը զտնւում էր Արկաղիայի կանաչապատ դաշտավայրի մէջ: Այս քաղաքն արդէն յոյների ձեռքին էր, և այն գրաւող երկուհարիւր հոգուց բազկացած զօրախումբն իսկոյն միայաւ Նիկողայոսի զօրքին: Այստեղ առաջին անգամ երևան եկաւ այն չարիքը, որը յետոյ այնքան միասնների պատճառ դարձաւ,—այն է՝ կոփւնները աւարի համար. բայց Նիկողայոսը բորբոքուած դայրոյթով սկսեց յանդիմանել նրանց:

—Ի՞նչ է,—հարցնում էր նրանց,—մի քանի պիաստր վաստակելու համար էք ապստամբել: Հայրենիքի ազատութեան գործը զուր գոհնում էք մի տակառ գինի կամ մի թիւրք ստըրկուհի ձեռք գցելու համար...

Յետոյ նա յանձն առաւ բաժանել աւարը և կէսը ետ զըրաւ պատերազմական ծախքերը ծածկելու համար, իսկ միւս կէսը, որքան որ հնարաւոր էր, արդարութեամբ բաժանեց բոլոր զինուորների մէջ:

Մեղալուպոլիսի մինչև Կարիտենա չորս ժամուայ ճանապարհ էր. նա կամենում էր այնտեղ հասնել առաւօտ կանուխ, այնպէս որ ո՛չ ոք չ'իմանար յոյների մօտենալը: Մեղալուպոլսեցիներն էլ նրա մարդկանց նման քիչ էին ծանօթ պատերազմական գործին, բայց նրանց լաւ ծանօթ էր չրջակայ երկիրը, և Նիկողայոսը այդ մարդկանցից լրտեսների մի խումբ կազմակերպեց, որը պէտք է առաջ դնար և բռնէր նրանց, որոնք կարող էին լուր տանել Կարիտենային սպառնացող վտանգի մասին: Այս քաղաքն առնելու միակ միջոցը—Կալամատայի նման յանկարծակի գրաւելն էր:

Կարիտենան էլ Կալամատայի նման կարելի էր մի կողմից միայն առնել, բայց այստեղ ամրոցի պարսպի երկայնութեամբ մի ճանապարհ էր դնում, և յարձակուողները կարող էին ամբողջ ճանապարհին պաշարուածների դնդակներին զոհ դնալ: Այդպէս էլ իսկապէս դուրս եկաւ, և Նիկողայոսը թիւրքերի ձեռքով առաջուց պատրաստուած թակարդն ընկաւ:

Լրտեսների խումբն արեւածագից առաջ ճանապարհ ընկաւ. իսկ մնացած զօրապունդը շուտով պէտք է հետևէր նրան, այնպէս որ կէս գիշերին մօտենար քաղաքին և գիշերն իսկ յարձակում գործէր, բայց եթէ այդ բանն անհնարին լինէր իրազորձել, յոյները կը չրջապատէին քաղաքը, որը լուսաբացին իրան պաշարուած կը տեսնէր: Բայց լրտեսները Նիկողայոսի պատուէրից անցան և այնպէս շտապեցին, որ թիւրքերն իմացան նրանց մօտենալը և մի ճարպիկ պատերազմական խաղ պատրաստեցին հետևեալ օրուայ համար: Նիկողայոսը կէս գիշերին

հասաւ քաղաքի մօտակայքը և տեսնելով որ ամեն ինչ հանդարտ է, իսկ քաղաքի դռները լաւ ամրացրած, որոշեց մինչև առաւօտ յետաձգել յարձակումը: Թշնամու գիրքն անձամբ զըննելուց յետոյ նա վերադարձաւ իր զօրագնդի մօտ և հրաման տուաւ բանակի գնդ: Ամենայուսալի զինուորներին, այն է՝ արգոսցիներին՝ նա տեղաւորեց ճանապարհի վրայ և Արիէոսի կամըջի մօտ, իսկ անփորձները գրաւեցին հիւսիսային և հարաւային գիրքերը, որտեղից յարձակում չէր կարելի սպասել: Ինքը Նիկողայոսը տեղաւորուեց այս անփորձ նորակոչների մէջ, իսկ արգոսցիներին իրանց կամըջին թողեց:

Արեղակը բարձրացաւ անամպ երկնքի երեսին և Նիկողայոսը շատ վաղ վերկենալով՝ դնաց նայելու, թէ արդեօք որեէ շարժում չէ նկատուում միջնաբերդի մէջ: Բայց սրբան եղաւ նրա զարմանքը, երբ տեսաւ, որ քաղաքի դռները բաց էին և մի քանի թիւրք ծուլութեամբ քշում էին իրանց ջորիները ճանապարհով: Նիկողայոսը միջնաբերդի վրայ յարձակում գործելու համար մի այսպիսի յարմար գէտքի չէր սպասում, ուստի և շտապ վերադառնալով իր զօրագնդի մօտ՝ հրամայեց իսկոյն յարձակուել: Առաջից գնում էին արգոսցիները, յետոյ մեղալուպուսեցիները, իսկ ամենից վերջը գտնուում էր ինքն իր անփորձ զինուորներով:

Բայց հազիւ էին նրան քաղաքի պարսպին հասել, երբ թիւրքերը գնդակների տարափ տեղացին նրանց վրայ: Պատերազմական գործին անսովոր լինելով՝ յոյները կանդ առան և սկսեցին պատասխանել հրաձգութեանը, բայց դա բոլորովին անխոհեմութիւն էր, քանի որ նրանց հակառակորդները ծածկուած էին պարսպի ետևը, իսկ իրանք ուղղակի նրանց գնդակների առաջ էին: Բայց արգոսցիները՝ չը նայելով բազմաթիւ կորուսաներին, արիարար շարունակում էին ճանապարհը գէտի բաց դռները: Նրանց հետեւում էին նորակոչները, որոնք կրակին անսովոր լինելով, թիւրքերի հրացանների առաջին ճայններից ցնցուեցին և կը փախչէին, և թէ Նիկողայոսն առաջ չը վաղէր՝ գոռալով.

— Եկէք ետևիցս, տղերք: Յոյց տանք թիւրքերին մեր ոյժը:

Յոյները շուտով լցրին նոսրացած շարքերը և քաջութեամբ հետևեցին Նիկողայոսին, որը հպարտութեամբ նայելով՝ նրանց՝ մտածում էր.

— Ա՛յ, հէնց այս է հարկաւոր սրանց: Սրանք քաջ են և կըրակին շուտ կը վարժուեն:

Այդ միջոցին արգոսցիները հասան դրանը, և հէնց այդ բո-

պէին յանկարծ հինգհարիւր հողուց բաղկացած մի հեծելազօր զունդ զուրս թուա միջնաբերդից: Արգոսցիները կանգ առան և հրայան արձակեցին թիւրքերի վրայ, բայց չը կարողացան ձիաւորների ճնշմանը դիմադրել և ետ վազեցին: Տեսնելով այդ՝ Նիկողայոսը հասկացաւ, որ իր ամբողջ զօրազունը կը ջարդուի և ճնշուած սրտով բարձրաձայն գոչեց.

— Ազատուեցէք, տղերք, ով ինչպէս կարող է:

Սկսուեց մի յուսահատ փախուստ, և փախչողներին կրճնկ-կոխ հալածում էին թիւրք ձիաւորները, որոնք սիրով ջարդում էին իրանց դժբախդ զոհերին և ատրճանակներ արձակում նըրանց վրայ:

Յոյների բախտից ճանապարհին մօտիկ բարձրանում էին անտառներով ծածկուած լեռներ: Այնտեղ հետապնդումը դժուարանում էր, և յոյները կարող էին հեշտութեամբ հասնել Վայտեղա, որտեղ Պետրօ-բէյն ուղում էր բանակ դնել: Նիկողայոսը պատահմամբ սայթաքեց և ոտքը վնասելով՝ ստիպուած եղաւ ետ մնալ իր զօրագնդերից, իսկ թիւրքերի ձեռքը չ'ընկնելու համար նա սկսեց զղուշութեամբ թագնուել թփերի ու ծառերի ետեր:

Լերան դապաթին հասնելով նա ետ նայեց և տեսաւ, որ թիւրք հեծելազօրքը անհնարին համարելով այլևս հալածել թըշնամիներին, ամենահանդիստ կերպով քաղաք էր վերադառնում: Ամբողջ ճանապարհը ծածկուած էր դիակներով, զլխաւորապէս յոյների, թէպէտ և թիւրքերն էլ կորուստ էին ունեցել, որովհետև մի քանի անտէր ձիեր ծուլօրէն արածում էին: Նիկողայոսը մօտեցաւ դրանցից մէկին և թուա նրա վրայ: Ձիու զըլուխը դէպի մացառոնները դարձնելով՝ նա սկսեց զղուշութեամբ առաջ դնալ ծառերի միջով և շուտով հասաւ մի անտառային շաւղի: Ծուրջը նայելով՝ Նիկողայոսն իրանից ոչ հեռու տեսաւ մի փոքրիկ դիւղ և հեշտութեամբ ճանաչեց, որ դա Սերինան է, որտեղ ապրում էին նրա կնոջ ազգականները, և որտեղ ինքն ամուսնացել էր:

Մօտենալով դիւղին՝ նա այն համոզմունքին եկաւ, որ յոյները հաւանականաբար դիւղի թիւրքերին ոչնչացնելով՝ ձգել էին աները և Պետրօ-բէյի զօրքին միացել: Նիկողայոսը սաստիկ ցանկանում էր տեսնել այն տունը, որտեղից առել էր իր զըթբախտ կնոջը, և այն եկեղեցին, որտեղ պսակուել էր նրա հետ:

Թէ տունը և թէ եկեղեցին բաց էին, և նա տխուր մտածմունքներով պատած այցելեց երկու շինութիւնն էլ, թէպէտ ներկայ ըրպէնում նրա վշտին միացել էր և այն ուրախալի զըգացմունքը, թէ կնոջ ու դստեր վրէժն արդէն լուծւում է: Նի-

կողայոսը յիշեց իրան համար թանկագին անձերի դիակները վրայ տուած երգումը և աչքի առաջ ունենալով՝ որ այդ երգումն սկսել է իրադործուել, նա գոհութիւն առաւ Աստուծն, որ իրան էր վրիժախան ընտրել:

Արեղակը մայր էր մանուս, երբ նա նորից ճանապարհ ընկաւ և կէս գիշերին մօտ դուրս եկաւ դէպի գլխաւոր ճանապարհը, որտեղ մի պանդոկ կար. սա այն պանդոկն էր, ուր իջկանել էին Միտասն ու Եանին Տրիպոլից փախչելիս: Պատուհաններից լոյս նկատելով՝ Նիկողայոսը ծածուկ մօտեցաւ դրանցից մէկին և տեսաւ, որ ամբողջ պանդոկը լցուած էր յոյն փախստականներով: Նրանցից մի քանիսը քնած էին, իսկ միւսներին պանդոկապետ Անաստասը հացով ու սուրճով հիւրասիրում էր:

Ձին կապելով՝ Նիկողայոսը ներս մտաւ և իսկոյն մի ծանօթ ձայն լսեց.

—Նիկողայոս մօրեղբայր: Այդ գո՛ւ ես:

—Ի հարկէ ես եմ, Միտասո՛ս Բայց գո՛ւ ինչ կերպով ես այստեղ ընկել:

—Պետրօ-բէյն ինձ այսօր այստեղ ուղարկեց խմանալու համար, թէ քեզ չեն տեսել կամ քո մասին ոչինչ չեն լսել: Ճշմարիտն ասեմ, երբ պատահածը լսեցի, վախեցայ քո վերաբերմամբ:

—Թիւրքերն ինձ այդպէս հեշտ չեն ձեռք գցիլ: Անաստաս, երբէք չեմ մոռանալ, որ դու տեղ տուիր փախստականներին: Իսկ այժմ ինձ էլ սուրճ տուր:

Նիկողայոսը նստեց բազկաթոռին և սուրճը խմելով՝ շարունակեց.

—Ձրդիտեմ, Միտասո՛ս, թէ քեզ ինչ են պատմել, բայց ես կը պատմեմ այն, ինչ որ տեսայ: Իմ աչքերի առաջ երբէ պատերազմ չը տեսած մարդկանց մի զօրագունդ հաստատուն կերպով կանգնեց թշնամու կրակի առաջ, և այդ միայն այն պատճառով, որ դրա մէջ էր կայանում նրանց պարտականութիւնը: Նրանցից ոչ մէկը չը փախաւ, մինչև որ ես չը հրամայեցի ազատուել:

Միտասը քիչ կարմրեց. իսկ շուրջը պառկած յոյներն ըսկսեցին գլուխները բարձրացնել և ականջ դնել Նիկողայոսի խօսքերին. նա շարունակեց.

—Կարծես այժմ էլ աչքերիս առաջ տեսնում եմ, թէ ինչպէս մի կողմից նրանց ճնշում են ձիաւորները, իսկ միւս կողմից դնդակների տարաւի է թափւում նրանց վրայ: Ո՛չ, ես երբէք այդպիսի արիասիրտ մարդիկ չեմ տեսել:

Միտասոր մօտեցաւ կողքին կանգնած մի յոյնի և ձեռքը մեկնելով՝ ասաց.

—Ներիր ինձ: Ես ետ եմ վերցնում խօսքերս:

—Իսկ ի՞նչ էիր ասել, Միտասոս,—հարցրեց Նիկողայոսը:

—Ես ասում էի, թէ նրանք վախուկներ են, իսկ այժմ տեսնում եմ, որ մեղաւոր եմ նրանց մօտ:

—Աւելորդ է ներողութիւն խնդրելը,—վրայ բերաւ բարձր-բահասակ, լայնաթիկունք յոյնը, որին դարձել էր Միտասոր,—ինքս էլ քեզ լաւ պատասխան տուի,—ես քեզ անուանեցի օր-տախօս:

—Ի հարկէ, և մենք քիչ մնաց կուէինք: Բայց այժմ ընդ-միշտ բարեկամներ ենք: Սակայն, Նիկողայոս մօրեղբայր, ինչո՞ւ ես կաղում և կաղալով ի՞նչպէս մինչև այստեղ հասար:

—Ես մի գեղեցիկ թիւրքական ձիով եկայ:

Շրջապատողներին հարցուփորձ անելով՝ Նիկողայոսն իմացաւ, որ դրանք վերջին փախստականներն էին և նրանց մէջ վիրաւորներ չըկային, որոնց մե մասը գերի էր ընկել թիւրքերի ձեռքը, իսկ միւսը ջորիներով բանակին էր ուղարկուած: Նիկողայոսի հաշիւն նայելով նա երեք հարիւր հօգի էր կորցրել, բայց եթէ որ իր զինուորներին չը հրամայէր փախչելով ազատուելի, այն ժամանակ այդ կորուստը հինգ անգամ աւելի կը լինէր:

—Է՛, Միտասոս, իսկ դո՞ւ երբ վերադարձար և ի՞նչ արիք նաւը,—հարցրեց նա երիտասարդին:

—Մենք Տայգեա զնալուցդ երեք օր յետոյ վերադարձանք, իսկ նաւն այլևս գոյութիւն չ'ունի:

—Պատմիր ինձ բոլորը մանրամասնօրէն:

Միտասոսի պատմութիւնը բոլորը համակրութեամբ լսեցին, և երբ նա աւարտեց, Նիկողայոսն ասաց ժպտալով.

—Կեցցես, դու իմ պարծանքն ես: Սակայն, տղերք, չուտով կը լուսանայ, ժամանակ է ճանապարհ ընկնելու:

Քառորդ ժամ յետոյ նրանք ճանապարհ ընկան և մի ժամ անցած հասան այն ամրոցին, որը շինել էր Պետրօ-բէյը լեռնազագաթի վրայ: Հետուից նրանց տեսնելով՝ Պետրօ-բէյն ընդառաջ եկաւ և դռնէն Նիկողայոսին.

—Է՛հ, փառք Աստուծոյ, որ դու վերադարձար. նշանակում է խայտառակութիւն չը կայ:

—Ճշմարիտ ես ասում: Եթէ խայտառակութիւն լինէր, ես չէի վերադառնալ: Մեր քաջերը սոխուծի նման էին կուռւմ, իսկ եթէ մէկը մի բանում մեղաւոր է, այդ ես եմ միայն:

Եւ նա պատմեց բոլոր պատահածը:

—Մեր քաջերը փառքով ծածկել են իրանց անունը, իսկ դու փախչելու հրամանը տալով՝ բոլորից աւելի արիաբար ես վարուել:

—Ես յիմար կը լինէի, եթէ այդ հրամանը չը տայի, — պատասխանեց Նիկողայոսը ծիծաղելով:

V

Վայտեղա եկած օրից Պետրո-բէյը զիշեր-ցերեկ հանգըստութիւն չ'ունէր և տենդային արագութեամբ ամբասնում էր այն լեռնաճիւղի գաղաթի վրայ իր գրաւած դիրքը, որ ուղղաձիւք իջնում էր դէպի ներքին հովիտը: Այս գիւղը կրկնապատիկ յարմարութիւն ունէր. թիւրք հեծելազօրքը չէր կարող այստեղ յարձակուել նրանց վրայ, այստեղ դժուար էր պաշարելու համար բարձրացնել մեծամեծ թնդանօթները: Բացի դրանից Վայտեղան գրաւելով Պետրո-բէյը Տրիպոլիսը կտրում էր Կալամատայից, ուր թիւրքերն ամենայն հաւանակամութեամբ զօրքեր կ'ուղարկէին:

Տրիպոլիսն ընկած էր դէպի հիւսիս-արեւելք ութ մղոն հեռաւորութեան վրայ, և անհրաժեշտ էր որքան կարելի էր շատ ամբասնել Վայտեղան: Ամրոցի պաշտպանողական մասերը շինելու համար Պետրո-բէյը հրամայեց թիւրքական գիւղերի աները քանդել, իսկ յոյները տեղաւորուեցին ձողերից և ցախերից շինուած վրանների մէջ, տեղ-տեղ երևում էին մեծամեծ քարեր, բիւզանդական սիւների բեկորներ, առիւծի գլուխներ քանդակագործուած վիսեաթիկան սիւների վերնաքարեր, աղիւսներ, ծիրանաքարի (պորփիր) կտորներ... բայց չը նայելով նիւթի զանազանակերպութեանը՝ պարիսպները ցարժր էին ու հաստ, և ինչպէս Պետրո-բէյն ասում էր, նրանց մի հիմնաւոր անրութիւն էր հարկաւոր և ոչ թէ հարեմի համար մի գեղեցիկ շինութիւն:

Ամրոցի ներսը բացի զինուորների վրաններից երևում էին միայն երկու տուն—գէնքի և աղմամթերքի համար: Ինչպէս միշտ, Պետրո-բէյն ու Նիկողայոսը բնակուած էին զինուորների վրանների նման անակների մէջ: Զորիներն ու ոչխարների հօտերը գիշերները պահուում էին փարախներում, բանակից դէպի հարաւ, իսկ ցերեկն ուղեկից զօրքի հսկողութեան տակ արածում լեռների լանջին: Պաշարն առատ էր, և մարդիկ գոհ էին երևում, որովհետեւ աւարը շատ էր:

Տասն օր էլ անցաւ, և ապրիլի վերջին ամրոցի շինութիւնն աւարտուեց: Այն ժամանակ Պետրո-բէյը վաղուց ար-

դէն իր կազմած ծրագրի համեմատ սկսեց գիշեր-ցերեկ յարձակումներ գործել Տրիպոլսի չքջապատ գիւղերի վրայ, որոնց միջոցին վերջիններս կրակի էին մատնուում, տղամարդիկ, կանայք և երեխաները—մահուան, իսկ կայքը—աւարի: Ի հարկէ՛ այդպիսի գործողութիւնները մեծ փառքի չէին արժանացնում յոյներին, բայց դրանք մտնում էին ասպատակութեան ընդհանուր ծրագրի մէջ) և յոյները կարծում էին, թէ այդպիսի գործողութիւնների շնորհիւ միայն կարող էին հայրենիքի ազատութիւնը ձեռք բերել: Ինչ վերաբերում է նրանց ունեցած կորուստներին,—գրանք կարելի էր մատներով հաշուել, որովհետեւ թիւրքերը շատ սակաւ էին ընդգրկում թիւն ցոյց տալիս: Մի քանի օրում Տրիպոլսի չքջակայ փոքրիկ սպիտակ գիւղերը ծրխացող աւերակներ էին ներկայացնում:

Պետրո-բէյը մի ուրիշ բանակատեղի էլ չինեց լեռների մէջ, Տրիպոլսից դէպի արևելք, այս քաղաքի և այն դաշտավայրի միջև ընկած ճանապարհը պահպանելու համար, որտեղ Արգոսն ու Նաւալիան էին գտնուում: Յոյներն արդէն ընդհարում ունեցել էին Նաւալիայից դուրս եկած թիւրք զինուորների հետ: Առաջինները հարիւր մարդ կորցրին, իսկ թիւրքերի կորուստը կրկնապատիկ էր, որովհետեւ ծանրաշարժ, հաստափոր թիւրքերն անկարող էին դիմադրել թեթիւաշարժ լեռնաբնակների անվահերութեանը: Այս անգամ յոյները թափարգ էին պատրաստել թիւրքերի համար և ճանապարհի երկու կողմի մացառաների մէջ պահուելով՝ միանգամից կատաղի կրակ թափեցին ճանապարհից անցնող զինքերի վրայ: Թիւրքերը հեծելազօրք ունէին, որը պահասում էր յոյներին, բայց նա անօգուտ էր լեռնոտ և անտառախիտ տեղերում: Երբ թիւրքերի շփոթմունքն անցաւ, սկսեցին յոյներին դուրս վանել մացառաների միջեց, իսկ վերջիններս կարգով ետ նահանջեցին: Այս ասպատակութիւնները հանդիսաւ չէին տալիս թիւրքերին, որոնց թւում էր, թէ ուրուականների հետ գործ ունեն: Թէպէտ պատերազմի սկզբում թիւրքերը յոյներից բազմաթիւ էին, բայց իւրաքանչիւր ընդհարումից յետոյ առաջինների թիւը պակասում էր, իսկ վերջինները շարունակ բազմանում էին թարմ օժանդակիչ զօրքերով: Եթէ որ Յունաստանի ազատութեան պատերազմի այս չքջանում Պետրո-բէյը մի հարթ տեղ բացարձակ կուի դուրս գար, ամենայն հաւանականութեամբ յունաց զօրքը բոլորովին կ'ոչնչանար, ուստի և նրա ընտրած պատերազմի այս ձևը պատիւ էր բերում Պետրո-բէյին, թէպէտ ինքն անձամբ հակառակ էր դըրանս Բայց յոյներն օրէցօր փորձառութիւն և հմտութիւն էին

ձեռք բերում ղինուորական զործի մէջ, իսկ թիւրքերը պատե-
րազմի սյուպիսի եղանակի շնորհիւ անկարող էին գործի գնել
իրանց հեծելազօրն ու թնդանօթածիզ գօրքը, որոնք նրանց զը-
խաւոր ոյժն էին կազմում:

Սակայն հիւսիսային մասում զործերն այնքան յաջող չէին
զընում: Հերմանը, որն իսկապէս կալաւրիտայի գօրքի առաջ-
նորդն էր, այնքան խոհեմ չը գտնուեց, որպէս Վայլտեզայի իր
ղինակից ընկերն էր, և համարձակուելով Պատրասի միջնաբեր-
դի վրայ յարձակուել՝ պարտութիւն կրեց: Նրա զօրագունդն էլ
թակարդի մէջ ընկաւ և հեծելազօրի յարձակման ենթարկուեց,
բայն նա չ'ուզեց Նիկողայոսի նման փախչելով ազատուել, այլ
որոշեց զիմադրութեամբ առնել ամրոցը: Թիւրքերի մի հեծելա-
զօր գունդ անցաւ նրանց քամակը և ճանապարհը կտրեց: Յոյ-
ներն ապիւծի նման էին կաւում և իրանց համար ճանապարհ
բաց արին, բայց նրանց կորուստը թիւրքերի համեմատութեամբ
անագին էր և նրանք ոչ մի օգուտ չ'ունեցան, քանի որ Պատ-
րասի միջնաբերդը թշնամու ձեռքը մնաց:

Այդ ազէտի լուրը Վայլտեզա հասաւ մայիսի 5-ին. միև-
նոյն ժամանակ այնտեղ տեղեկութիւն ստացուեց, թէ հինգհա-
րիւր ձիաւորներից և հազարհինգհարիւր հետակներից բազկա-
ցած թիւրքական մի գունդ կորնթոսի ծովածոցի ուղղութեամբ
գնացել էր դէպի արևելք: Այդ գունդը գտնուում էր Ահմէդ-բէյ
անունով մի շնորհալի թիւրք սպայի հրամանատարութեան տակ:
Մի քանի օր յետոյ թիւրքերը հասան Արգոս, իսկ յետոյ, մինչ-
դեռ նրանց առաջապահ գունդը յոյների հետ հրայսանաձգու-
թեան էր բռնուած, ամբողջ զօրագունդը հանգիստ կերպով ան-
ցաւ գէպի Տրիպոլիս, ուր հասաւ միևնոյն օրուայ երեկոյեան:
Այդ շարժումը շատ ճարպիկ և համարձակ կերպով կատարուեց,
ուստի և Պետրօ-բէյն օրէջօր սպասում էր, թէ իր զօրքի վրայ
յարձակում կը լինի:

Ահմէդ-բէյը Տրիպոլիսն աւելի ևս ողորմելի դրութեան մէջ
գտաւ, քան թէ յոյները ենթադրում էին: Վերջիններիս մշտա-
կան ասպատակութիւնների շնորհիւ Տրիպոլիսը զրկուել էր գա-
շարի ներմուծութիւնից, և ընդհակառակը՝ նրանց այրած ու ա-
ւերած գիւղերի բազմաթիւ փախստակամներով բնակիչների
թիւն աւելացել էր: Ակներս էր, որ նախ և առաջ անհրաժեշտ
էր վերականգնել Մեսսենայի հազօրդակցութիւնը, քանի որ
Արգոսի դաշտավայրը աստամբած յոյների զօրախմբերով բռ-
նուած էր: Ծշմարիտ է, Նաւպլիսն դեռ ևս թիւրքերի ձեռքին
էր, բայց գաշտավայրը գրաւող յոյներն այդ քաղաքն էլ կտրել
էին երկրի ներքին մասից, և նորերս կազմակերպուած յունա-

կան նաևատորմիզը ծովային ոմրակոծութեան նման մի բան էր կատարում, այնպէս որ պաշարի ներմուծութիւնը շատ դժուարացել էր: Չը գետնալուծող որ Պետրո-բէյը պահակախմբեր է գրել Տայգետի վրայ, Կալամատայի և Արկաղիայի միջև, Ահմէդ-բէյը որոշեց Վայլտեղայի վրայ մի յաջող յարձակում գործելով՝ Մեսսենայի և ծովի հետ կանոնաւոր հաղորդակցութիւն բանալ:

Այդ յարձակումը կատարուեց մայիսի 24-ին, առաւօտ կանուխ: Կուսակցի մի Վայլտեղայի պարսպի վրայից նկատեցին, որ Տրիպոլի հարաւային գոնից դուրս էր գալիս մի հեծելազոր գունդ, իսկ նրա ետևից ձգուում էր հեռակակ զօրքը: Քանորդ ժամ յետոյ ամբողջ լուսակը ոտքի վրայ էր: Պետրո-բէյը ձորահովտի հակառակ կողմում գտնուած պահակախմբին նշաններ տալու եղանակը որոշեց, բայց ինքը սչ մի նշան չը սուսու նրան, որովհետև Ահմէդը կարող էր հանդիպել այն լեռնային անցքը պահպանող պահակախմբին, որակցից ձանապարհն անցնում էր դէպի Արդուս:

Յուրա պիշերուան յաջորդեց պարզ առաւօտը, և գոնից դուրս եկած զօրքերը սրոշակի երևում էին իրանց երկու թշնգանօթներով: Նիկողայոսը իր պեղեցիկ հեռադիտակով, որը ինչ որ ծառայութեան համար ընծայ էր ստացել մի անդլիացի նաւավարից, Պետրո-բէյի հետ ուշի-ուշով գիտում էր թշնամու շարժումները:

—Նա հասկանում, եւ, թէ նրանք ինչ են կամենում—ասաց Նիկողայոսն՝ իր ընկերին դատնալով,—նրանք ուզում են խաբելով մեզ և ձորահովտի միւս կողմը կանգնած մեր պահակախումբը՝ դուրս կոչել դէպի դաշտավայրը, բայց ես կարծում եմ, որ մեզ համար լաւ է տանը մնալ: Նա ամենին ցանկութիւն չ'ունեւմ նրանց հեծելազօրքին և երկու մահաբեր թշնգանօթին հանդիպելու: Շտապելու ոչինչ չը կայ: Գնանք և հանդիստ նախաձայնք:

Նա հրամայեց հանգստանալու նշան տալ, և Պետրո-բէյը գլխուորներին ասաց, որ լաւ ուտեն, քանի որ այդ օրը ճաշ լինելու չէր:

—Բայց դրա փոխարէն լաւ ընթրիք կ'ունենանք,—ասաց նա՝ ցոյց տալով մօտեցող թշնամուն:

Մի քանի բոպէից յետոյ հարիւրաւոր կրակներ վառուեցին, որոնց վրայ յոյներն սկսեցին սուրճ եփել, իսկ պարսպների վրայ մնացին երկու թէ երեք պահապաններ, որոնց Պետրո-բէյը հրամայեց տեղեկութիւն տալ իրան, երբ թշնամու զօրագունդը կը դառնայ դէպի արեւմուտք—Վայլտեղայի վրայ, կամ արևելք—դէպի լեռների հակառակ կողմն ընկած պահակատեղին: Բայց

Նիկողայոսն ու Պետրո-բէյը դեռ նախաճաշի չէին նստած, երբ մի լրաբեր մօտեցաւ նրան և յայանեց, թէ հովախ միւս կողմի պահակախումբը նշան է տալիս:

— Ես նշան տուողների խմբից չեմ, բարեկամ,— պատասխանեց Պետրո-բէյը՝ նախաճաշը շարունակելով,— թող նշանները թարգմանեն և հաղորդեն ինձ: Էլ սուրճ չեմ ուղում, Նիկողայոս: Սա այսօր ինձ աւելի համեղ է թւում:

Երկու բոպէ անցած՝ նշան տուողների խմբից հաղորդեցին, թէ պահակախումբը հրամաններ է խնդրում:

— Մնացէք ձեր տեղը,— թելադրեց Պետրո-բէյը պատասխանելու,— և ուշադրութեամբ նայեցէք, թէ թիւրքերին օժանդակիչ զօրքեր չեն գալիս արդեօք Արդոսից: Եթէ իրօք այդպիսի բան կը տեսնէք, իսկոյն խմաց տուէք: Երբ Տրիպոլսից դուրս եկած զօրքերը յարձակուեն ձեզ վրայ, դուք ետ նահանջեցէք և որքան կարելի է առաջ քաշեցէք նրանց, մինչև մենք ձեզ համար կուենք: Աղօթեցէք մեզ համար:

Նախաճաշը վերջացնելուց յետոյ Նիկողայոսը դարձաւ Պետրո-բէյին.

— Դէհ, այժմ խօսենք:

Անցաւ մի ժամ էլ, և մի նոր լրաբեր եկաւ տեղեկութիւն բերելով, թէ թիւրք զօրքերն ուղղակի Վայտեկայի վրայ են գալիս:

Պետրո-բէյը վեր թռաւ և բարձր ձայնով հրամայեց.

— Բողորն իրանց տեղերը, պարսպի ետեւ: Չը համարձակուէք առանց հրամանի հրացան արձակել: Եանի, իմ հրամանները հաղորդիր բոլոր վաշտապետներին:

Բոլոր պատերի մէջ հրացանների համար ծակեր էին բացուած, և դրանցից իւրաքանչիւրի առաջ չորս հողի կանգնեցին, որոնցից երկուսը հրացան էին արձակում, իսկ երկուսը լցնում էին հրացանները: Դրսից պարիսպներն ինն օտնաչափ բարձրութիւն ունէին, իսկ ներսից հինգ օտնաչափից աւելի չէին, որովհետեւ սարի լանջին էին դանուում:

Պետրո-բէյը տեղաօրուեց պարսպի վրայ, զբան վերելը, որտեղից նա կարող էր թշնամու շարժումներին հետևել: Նա հետուից նկատեց, որ թիւրքական հետևակ զօրքը բաժանուեց երկու խմբի, որոնցից մէկը դիմեց գէպի ձորահովտի միւս կողմի պահակախումբը, իսկ միւսը գալիս էր ուղղակի Վայտեկայի վրայ: Հեծելազօրքը հետևում էր երկրորդ զօրախմբին, բայց երբ լեռնային ճանապարհը հետզհետէ ուղղաձիւղ դարձաւ, կանոց առաւ: Երևում էր, որ թիւրքերը դիտաւորութիւն ունէին իրանց առաջին զօրաբաժնով յոյներին դուրս հրաւիրել գէպի գաշտա-

վայրը, իսկ հեծեկազօրների գունդը, որ կանդնած էր Վալյտե-
զայի տակ, թոյլ չէր տալ նրանց օգնութիւն ուզարկելու: Պե-
րօ-բէյր գոհ էր թիւրքերի այս դիտաւորութիւնից, թէպէտ նա
զիտէր, որ Վալյտեզայի վրայ եկող զօրաբաժնի մէջ կային ալ-
բանացի վարձկաններ, որոնք յայտնի էին իրանց քաջութեամբ
ու դազանաբարոյութեամբ:

Յոյները, որոնք չորս հոգուց բաղկացած համբախների էին
վերածուել, բաժանուած էին մի բանի հարիւրեակներին, իւրաքան-
չիւրը մի վաշտապետի հրամանատարութեան տակ, իսկ պարըստ-
ների վրայ ընդամենը երկուհազար հոգի կային: Մնացածներից
յետուընդ զբաղուած էին ղէնքեր և ուղղամտութեք բաժանելով,
հարիւր հոգի պահեստի ոյժն էին կազմում, իսկ մնացած հինգ
հարիւրը Նիկողայոսի հրամանատարութեան տակ՝ հրացանները
ձեռներին կանդնած էին բանակի մէջտեղում: Պերօ-բէյի և
Նիկողայոսի կազմած նախադժի համաձայն սրանք դեռ զործ
չ'ուռէին, ուստի և Նիկողայոսը թոյլ տուաւ ցրուել, բայց այն
պայմանով, որ հեռու չը դնային և առաջին իսկ հարկաւոր եղած
դէպքում ժողովուէին: Միաստը Նիկողայոսի մօտ էր, իսկ Նա-
նին Պերօ-բէյից չէր հեռանում և սպարաստուել էր նրա հրա-
մանները բանակի զանազան կողմերը տանելու:

Անցաւ մի ժամ, երբ բարձրութեան վրայ Վալյտեզայից
հինդհարիւր քայլ հեռու երևացել էր ալբանական հետեակ զօր-
քը, բայց և այնպէս յունաց բանակում ամեն ինչ խաղաղ և
հանդիստ էր: Ինչպէս երևում էր, թէ նամին ուղում էր յարձա-
կում զործել յունաց ամբուլթեան վրայ՝ չը դիտենալով, թէ որ-
քան զօրեղ էր նա: Թիւրքական զօրքի շարքում արդէն յարձակ-
ման հրամաններ էին լսում, իսկ յոյներն առաջուայ նման ան-
շարժ էին, միայն Նանին մօտ վազեց Նիկողայոսին և հաղոր-
դեց նրան Պերօ-բէյի հրամանը—պատրաստ լինել: Յունաց
բանակից քառորդ մղոն հեռու ալբանացիները կանդ տուան մի
փոսի մէջ: Երկու մղոն հեռու պսպղում էին թիւրք հեծեկազօրի
ղէնքերը, հեռուն՝ արևելքում սև կէտերի նման երևում էին
այն զօրքերը, որոնք դնում էին քամակից խփելու:

Յոյների նեարդերը վերին աստիճանի լարուած էին: Նը-
րանք դիտէին, որ մի քանի բուպէից յետոյ անտեսանելի թէնա-
մին կրակ կը տայ, և ցուալի սրտով սպասում էին այդ վայրկե-
սին: Իրաքանչիւրն առանձին կերպով էր արտայայտում այդ
անհանգստութիւնը: Նանին Պերօ-բէյի մօտ կանդնած՝ ցած
ձայնով նղովում էր թիւրքերին, և նրա դէմքը խաչխաչի պոյն էր
ստացել: մեղալուողութեցի մի երիտասարդ զինուոր կեղծ ծիծաղ
էր բարձրացրել, որը չ'ընդհատեց մինչև անգամ և այն ժամա-

նակ, երբ ենթասպան խփեց նրա ականջին. Մխտոսը Նիկողայոսի մօտից ոչ մի քայլ չը հեռանալով՝ գինեղործների երգն էր շուայնում. հայր Անդրէասը, որը ինդրել էր թոյլ տալ իրան գոնէ զինուորների համար հրացաններ լցնելու, «Զքեզ Աստուած զովարանեմք»-ն էր երգում կիսաձայն. Նիկողայոսն անխօս պսպղացնում էր աչքերը, իսկ մեծամասնութիւնն անհամբերութեամբ գնում-գալիս էր: Միմիայն Պետրո-բէյը բոլորովին հանդիստ էր և այդ զուցէ այն պատճառով, որ նա պարտաւոր էր բոլորի մասին մտածել:

Վերջապէս լերան ետեից երեացին թիւրքերը երկու լսմբի բաժանուած: Պետրո-բէյը մի հայեացք պցեց նրանց վրայ և Եանիին դռնալով ասաց շտապով.

—Նրանք միանգամից այս և հակառակ կողմի դռների վրայ կը յարձակուեն: Որքան կարելի է շուտ վազիր այնտեղ և ինքդ սկսիր հրացանաձգութիւնը: Հրամայելու եղանակը քեզ յայտնի է:

Եանին բանակի միջով վազեց դէպի միւս կողմը և այնտեղի դրանը մօտենալով՝ հրացանների ձայն լսեց այն կողմից, որտեղ Պետրո-բէյն էր: Իրաւ, ալբանացիները միանգամից յարձակում գործեցին թէ այս և թէ այն դռների վրայ, բայց բաւական ժամանակ անցաւ, մինչև նրանք երեացին այն դիրքի առաջ, որը յանձնուած էր Եանիի պաշտպանութեանը: Երբ նրանք վախճուեն քայլ միայն հեռու էին պարսպից, և արդէն կարելի էր դէմքերը որոշել, Եանին հրամայեց.

—Խփիր...

Յոյների առաջին միանուազ հարուածն անաշուղ էր, քանի որ գնդակների մեծ մասն ալբանացիների զլխի վրայից անցաւ. երկրորդն ու երրորդը աւելի աջողակ էին: Այս բանն արգելք չ'եղաւ յարձակուողների մեծամասնութեան առաջուայ նման մօտենալուն, իսկ մի աննշան խումբ կանդ առնելով լերան վրայ՝ հրացանաձգութեամբ պատասխանեց, որը սակայն յոյների համար անմիտաս էր, որովհետև պարիսպը պաշտպանում էր նրանց:

Այդ միջոցին երկու դռների մէջ՝ կենարոնում կանգնած յոյներն անգործ էին, բայց չ'անցաւ մի քանի բողէ, որ նրանք էլ հարկաւորուեցին Պետրո-բէյին, և սա հրաման ուղարկեց շարուել առաջին դրան ետեը, որը նրա հաշուով կարող էր չը գիմանալ թշնամու ճնշմանը: Նիկողայոսը նոյնն արաւ և երկրորդ դրան վերաբերմամբ: Ընդ սմին թէ այստեղ և թէ այնտեղ մարդկանց առաջին շարքերը ծունկ էին չօքել:

Պետրո-բէյի դիրքի առաջ ալբանացիների երկաւուց հինգ

րուպէ էլ չէր անցել, երբ դուռը շառաշմամբ բացուեց, և թիւրքերը ներս ընկան ամբողջ. բայց գնդակների մի տարափ թափուեց նրանց վրայ, և նրանք ի փախուստ դարձան: Այն փամանակ Նիկողայոսը տեսաւ, որ գործելու վայրկեանը հասել է: Նա իր զօրախոււմը երկու մասի բաժանեց և շտապով առաջ շարժեց գէպի բաց դուռը. մի մասը նա փախչող թիւրքերի ետեից գցեց, իսկ միւսն ուղղարկեց երկրորդ դրան վրայ յարձակուող ալբանացիների քամակից խփելու:

Այս ամենը տեսնելով՝ Եանին դադարեցրեց հրացանաձրգութիւնը և Պետրո-բէյի հրամանով բաց արաւ իր դուռն ու մի համարձակ յարձակում գործեց: Երջագատող ալբանացիները սարսեցին և փախան: Շուտով լեռնային զառիվայրերը ծածկուեցին փախչողներով, որոնց հետ մենամարտում էին նրանց ետեից հասած հալածողները: Թիւրքական պահեստի զօրքերը ոչ մի օգնութիւն չէին կարող հասցնել, որովհետեւ նրանք ստիպուած պէտք է լինէին միմեկին փամանակ իրանց մարդկանց վրայ հրացան արձակել:

Երկար տեւեց հալածանքն ու մուշտակուիւր: Սկզբում ալբանացիները յոյներից բազմաթիւ էին, բայց կրած կորուստների շնորհիւ նրանց թիւն էլ պակասեց:

Ընդհանուր իրարանցման փամանակ Միտոսը հանդիպեց Եանիին, և այդ իսկ րուպէին նրանց դէմ ելաւ մի բարձրահասակ, թաւամազ ալբանացի՝ սուրը բարձրացրած: Վայրենի կատուի նման Միտոսը յարձակուեց նրա վրայ և իր կարճ դաշոյնով խփեց ուղղակի նրա երեսին: Սուրը ցած ընկաւ ալբանացու ձեռքից, և նա փուռեց գետին:

— Է՛, այժմ քո հարազատ մայրն էլ չի ձանաչիլ քեզ, — բացազանչեց Միտոսը՝ նայելով իր թշնամու արիւնաթաթախ երեսին:

Յոյները և թիւրքերն այժմ դէմադէմ կուռւմ էին: Եանին աջ ու ձախ խփում էր հրացանի կոթով, իսկ Միտոսը շարունակում էր իր գործը դաշոյնով:

— Այդ լինչ է, Միտոսս, — հարցրեց վերջապէս Եանին. — քո դուրն ամբողջապէս արիւնով է ծածկուած: Խօս չես վիրաւորուել:

Իրաւ, Միտոսսի սև դանդուրները ծածկուած էին արեան կաթիլներով, և նրանց մէջ երևում էր մի փոքրիկ վէրք, որի վրայ նա ուշադրութիւն չէր դարձնում: Եանին իր շապկից մի կտոր կտրեց և կապեց ընկերի գլուխը, իսկ յետոյ նրանք նորից մտան կուի մէջ: Թէպէտ յաղթութիւնը յայտնի կերպով յոյների կողմն էր, բայց ալբանացիներն էլ ժայտերին յենուեալքի, 1903.

լով՝ աշխատում էին զօրեղ ընդդիմութիւն ցոյց տալ: Կարծե-
լով՝ որ թշնամին կարող է ոյժերը հաւաքել և նորից յարձա-
կում գործել զրան վրայ՝ Պետրո-բէյն իր մարդկանցից մի քանի
հարիւր հոգի ետ տարաւ, իսկ մնացածներին հրատաջեց զա-
գարեցնել հալածանքը, որ չը լինի թէ պատահեն ներքեր կանդ-
նած թիւրքական հեծալազօր զնոյին:

Իրաւ, ալբանացիները ետ քաշուեցին զէպի իրանց հեծե-
լազօր զունդը և այնտեղ սկսեցին հանգստանալ՝ յայտնի նպա-
տակ ունենալով կրկնել յարձակումը: Երկու ժամ յետոյ նորից
սկսեցին զէպի առաջ շարժուել և այս անգամ հեծելազօր զուն-
դը՝ ինչքան որ այս լեռնոտ տեղը թոյլ էր աալիս՝ շատ մօտիկ
հետևում էր նրանց:

Պետրո-բէյը զիտէր, թէ ինչ է հարկաւոր իրան անել, բայց
չէր վստահանում: Նրան հրապուրում էր այն միտքը, թէ պէտք
էր կտրել թիւրքերի ճանապարհը զէպի հեռուն թողած պաշա-
րի կարաւանը. բայց վախենում էր, թէ այդ նպատակի համար
բաւականաչափ զօրախումբ ուղարկելով՝ իր բանակի պաշտ-
պանութիւնը կը թուլացնէր: Բացի զբանից Նիկողայոսն էլ
սաստիկ զէմ էր այդ ծրարին. նրա կարծիքով ոչ մի բան հար-
կաւոր չէր վստանդի տակ զնել և ոչ մի աւար չէր կարող հաւա-
սարուել իրանց զիրքի պաշտպանութեանը: Վերջապէս որքան
էլ յաջող լինի թշնամու քամակից յարձակում գործելու եղանա-
կը, նրա լրտեսները կարող էին նկատել յոյների խորմանկու-
թիւնը և թիւրք զօրապետներին տեղեկութիւն տալով՝ ամբողջ
գործը փչացնել:

Երեք ժամուայ ընթացքում ալբանացիները չորս անգամ
յարձակում գործեցին թէ այս և թէ այն զոների վրայ, բայց ա-
մեն ագամ էլ մերթ յոյների յարձակումների, մերթ պարբա-
սների վրայից նրանց միահամուռ հրացանածգութեան շնորհիւ
ստիպուած էին նահանջել: Վերջապէս երբ արեղակն սկսեց
թեքուել զէպի արևմուտք, հնչեց կոիւր գաղարեցնելու նշանը,
և թիւրքերն շտապով ետ քաշուեցին զէպի իրանց հեծելազօր
զունդը: Այստեղ Նիկողայոսի կարծիքով հասել էր և այն շըր-
ջապառոյտ շարժման բողէն, որ Պետրո-բէյը ցանկանում էր
անյարմար ժամանակ կատարել: Նա վեր առաւ մայնեցիներից
հարիւր հոգի և նրանց հետ զիմեց թշնամու առաջը կտրելու,
իսկ Պետրո-բէյը իր բոլոր ոյժերով շարժուեց նահանջող թշնա-
մու ետևից: Ահմէդ-բէյն ուրախանում էր և մխիթարուում այն
յուսով, թէ յոյներն այնուամենայնիւ թակարդը կ'ընկնեն և
թիւրքերին հալածելուց յափշտակուած՝ աննկատելի կերպով իր
հեծելազօրքի զօնը կը գառնան:

Սակայն յոյները կրկին երկու կողմից յարձակուեցին թիւրքերի վրայ և զնդակների տարափ սեղացին: Տեսնելով որ նիկողայոսի զօրախումբը իր քամակից խփեց և կարող էր պաշարի կարաւանը խլել, Ահմէզն սկզբում կամենում էր հեծելազօրքն ուղարկել աղաակելու այն, բայց յետոյ մտադրութիւնը փոխեց և աւելի լաւ համարեց հեծելազօրքի ոյժը իր անձնական պաշտպանութեան համար գործադրել: Ուստի պաշարը զոհելով նա հեծելազօրքն առաջ շարժեց դէպի իրան հալածող յոյները:

—Յրուեցէք և ետ նահանջեցէք,—հրամայեց Պետրօ-բէյը:

Եւ երբ թիւրքական հեծելազօրը հասաւ այնտեղին, որտեղ յոյներն էին դառնում, իր առաջ թշնամի չը տեսաւ—նըրանք ցրուել էին զանազան կողմեր:

Մի անգամ էլ թիւրքերն սկսեցին նահանջել, և յոյները վերադառնալով ստուարացրին իրանց շարքերը և շարունակեցին հալածել: Սակայն այս բանը երկար չը տևեց, քանի որ արդէն մութը կոխում էր: Այն ժամանակ իր հերթին Պետրօ-բէյն էլ հրամայեց կռիւը դադարեցնելու նշան տալ, և յոյները կարգով դիմեցին դէպի իրանց բանակատեղին: Ճանապարհին նրանք բարձր ձայնով երգում էին կլեֆտաների երգը, որն այնուհետև ապստամբութեան հիմնը դարձաւ:

VI

Պետրօ-բէյն շտապով օգտուեց տարած յաղթութիւնից: Այժմ ակներև էր, որ յոյներն այլևս երկիւղ կրելու ոչինչ չ'ունէին Տրիպոլսում կենտրոնացած թիւրքական ոյժերի հետ ընդհարուելուց: Սակայն եթէ թիւրքերը չը կարողացան յոյներին դուրս վանել իրանց լեռնային զօրեղ զիրքից, միւս կողմից յոյներն էլ անկարող էին դիմադրել թիւրքերին դաշտավայրի վրայ, որտեղ հեծելազօրքը կարող էր գործել: Բայց յոյներին վայլտեղայի վրայ մնալն էլ անկարելի էր, որովհետև ոյժերը հետզհետէ աւելանում էին զանազան կողմերից եկող նորանոր զօրաբաժիններով, և կաբիբ էր զգացւում մի նոր օղակ ևս ստեղծելու այն երկաթէ շղթայի մէջ, որը վերջիվերջոյ պէտք է ամեն կողմից չրջապատէր Տրիպոլիսը:

Այդ քաղաքից դէպի արևմուտք, նրա պարիսպներից հրացանի մի հարուածի հեռաւորութեան վրայ երեք ուղղաձիգ լեռնաթևեր կային, որոնք յայտնի էին «Տրիկորֆոս» անունով: Այս երեք գագաթները մի բարձրաւանդակով միացած էին միմիանց հետ. Պետրօ-բէյը մտածեց այդտեղ մի նոր ամուր դիրք ստեղծել: Գործն շտապով առաջ գնաց, և թիւրքերը չէին

խանդարում այդ նոր ամբողջիւնները շինելուն: Այդպիսով յունիսի սկզբին Վայլտեղայի բերդապահ զօրքը բաժանուեց երկու մասի. արդոսցիները Դիմիտրիոսի հրամանատարութեան տակ մնացին հին տեղը, իսկ Պետրո-բէյը մայնեցիներով զբաւեց հիւսիսային լեռնազագաթը, Նիկողայոսը արկայիացիներով—հարաւայինը, իսկ սպարտացիները իրանց առաջնորդ Պոնիրոպոլոսի հետ—միջինը:

Միևնոյն ժամանակ երկրի բոլոր կողմերից սեղեկութիւններ էին ստացուում ոչ թէ առանձին խոճիթներում անպաշտպան թիւրքերի կոտորածի, այլ թիւրքական քաղաքների կանոնաւոր պաշարումների մասին, որոնք մասամբ յաջող էին վերջացել, մասամբ դեռ շարունակուում էին: Յունական կղզիներից մի քանիսը, ինչպէս Պսարան, Սպեցիան և Հզիրան, ապստամբեցին և մի ամբողջ նաւատորմից ուղարկեցին ծովափերը պաշտպանելու և թիւրքական նաւերը ոչնչացնելու համար,—և այդպիսով արդեւք էին դառնում թիւրքերին ամեն տեսակ օգնութիւն՝ մարդիկ, զէնք և սրաշար տեղ հասցնելուն: Մայիս ամսին արդէն յունական նաւատորմիցը մի քանի համարձակ քաջագործութիւններ կատարեց, որոնց մէջ ամենափառաւորն էր այն թիւրքական նաւատորմի կործանումը, որով Փոքր-Ասիայից մարդիկ ու զէնք էին կրում: Յոյներն այդ պատերազմական նաւերը կանդնեցրին Նաւալիսայի մօտ և կատաղի պաշտպանութիւնից յետոյ առան ու կրակի մասնեցին:

Այդ ծովային պատերազմից երկու օր յետոյ հիզրացիների երկու նաւ հասան Կ.Պոլսից Եգիպտոս ուղևորուող մի թիւրքական նաւի, որով սուլթանից հարուստ ընծաներ էին տանում Մահմէդ-Ալիին: Նաւի վրայ եղած բոլոր թիւրքերն անխնայ կոտորուեցին. իսկ հարուստ աւարն այն աստիճան չլացրեց յոյն ծովազնացիներին, որ նրանք մոռացան զբա կէսը անկախութեան պատերազմի ֆոնդին յատկացնելու համար իրանց տուած երդումը և դիւրամարս աւարի քաղցր համն աննելով՝ դարձան ոչ թէ ազատութեան համար մարտնչողներ, այլ ծովահէններ: Նրանք վերադարձան Հիդրա, թագգրին իրանց աւարը և նորից դուրս եկան ծովը սրգէն իրանց զբաւանը լցնելու նպատակով: Սակայն հիզրացիների մէջ ևս կային ճշմարիտ հայրենասէր մարդիկ, նոյն իսկ կանաչք, ինչպէս օրինակ հրաշաղիզ Կապսինան, որն անձամբ կառավարում էր նաւը, արիարար կուում թիւրքական նաւերի դէմ և իւր երկրացիների յանցանքը քաւելու համար աւարից իրան ոչինչ չէր վերցնում, այլ բոլորը տալիս էր պատերազմական ծախքերի համար:

Սպեցիայից երեք նաւ եկան դէպի Պելոպոնեսի ափը ըս-

պարտացիներին օգնութիւն հասցնելու համար, որոնք ցամաքային ճանապարհի կողմից պաշարել էին Մոնեմվազիան: Այս քաղաքը յայտնի էր իր հարստութեամբ, և պաշարողների առաջնորդը տեսնելով՝ որ անհնար է քաղաքը անձնատուր լինելու աստիճանին հասցնել, քանի որ նա ծովով պաշար էր ստանում, նաւատորմին օգնութեան հրաւիրեց: Միևնոյն ժամանակ նա պայման կապեց, որ աւարի մի կերորդ մասը զինուորներին բաժին ընկնի, միւսը նաւատորմին, իսկ մնացածը ազգային գանձարանին. բայց հէնց որ նաւերը տեղ հասան, անվերջ վէճեր սկսուեցին ցամաքային և ծովային ոյժերի մէջ: Զինուորները մեղադրում էին նաւաստիներին այն բանում, թէ նրանք ուզում են միանալ թիւրքերի հետ և իրանց նաւերով նրանց տանել Փորթ-Ասիա, որով բոլոր աւարը նրանց ձեռքը կ'ընկնէր, իսկ ընդհակառակը նաւաստիները գատապարտում էին զինուորներին, ասելով թէ նրանք մտադիր են սուտ յարձակում գործել և ազատ թողնել պաշարուածներին՝ նրանցից բոլոր աւարն ըստանալուն պայմանով: Իւրաքանչիւր մարդ իր մասին էր մտածում, ոչ ոք չէր հողում ազգի շահերի մասին, բայց զինուորների համար ամենամտանելին կրեք եպիսկոպոսների վարմունքն էր, որոնք թիւրք իշխանաւորների նման խրոխտ դիրք էին ընդունել, և թէպէտ ծագած պատերազմը մասամբ կրօնական բնուորութիւն էր կրում, այնուամենայնիւ չինականները չէին ցանկանում նախկին հպարտ իշխանաւորների տեղ նորերն ունենալ:

Իրաւ, եկեղեցու պետերը, որոնք մինչև թիւրքերի տիրապետութիւնը իրանց ձեռքին ունէին ոչ միայն հողեր, այլ և մարմնաւոր իշխանութիւնը, մտածեցին այժմ վերադարձնել իրանց նախկին դիրքը: Նրանցից շատերը պատրասցի Հերմանի նման անկեղծօրէն աշխատում էին հայրենիքի ազատութեան գործում և այժմ, երբ ժողովուրդն սկսում էր օգտուել իրան աշխատանքներից, ցանկանում էին նոյնպէս իրանց պարզին ըստանալ: Բայց երբէք մի այսպիսի պահանջ այսպէս չէր յայտնուած, որովհետև զօրապետները բնականաբար ընդգլխմանում էին հողերականութեան կարծեցեալ իրաւունքներին, և նրանց մէջ անհաճոյ ընդհարումներ էին ծագում՝ ամեն կողմ անվստահութիւն և կասկած սերմանելով: Հողերականներն ուղղակի յանդիմանում էին զինուորական իշխանաւորներին, թէ նրանք միմիայն իրանց անձնական շահերի մասին են հողում, իսկ զինուորականներն իրանց կողմից գատապարտում էին հողերականներին, թէ նրանք իրանց սահմանից դուրս են գալիս:

Վերջին մեղադրանքը սուր կերպարանք էր ընդունում և լարում զինուորականների ու հողերականների յարաբերու-

թիւնները, երբ եկեղեցու պաշտօնեաները, ինչպէս օրինակ Հերմանը, անձամբ՝ սուրբ ձեռներին մասնակցում էին պատե-
րազմին:

Այն մեծ ազդեցութիւնը, որը վայելում էին Պետրօ-բէյն ու Նիկողայոսը, զսպում էր յիշակալ չարիքը Տրիպոլիսը պաշարող բանակի մէջ. սակայն նրանք էլ զղում էին, որ իրանց դրու-
թիւնը հաստատուն չէ և կախում է լոկ իրանց ժողովրդականու-
թիւնից: Հէնց որ Հերմանը մի զինուած զօրաբաժնով եկաւ բա-
նակը, գործը վտանգաւոր կերպարանք ընդունեց: Պէտք է ա-
սել, որ նա ոչ թէ իշխանութիւնը իր ձեռքը դրելու ցանկու-
թիւն ունէր, այլ ձգտում էր եկեղեցին տիրապետող դարձնել:
Որպէս եկեղեցու պաշտօնեայ և Աստու վոխանորդ՝ նա իրան
բոլորից բարձր էր համարում և բոլորովին մոռացել էր խոնար-
հութեան մասին Աստուծոն տուած պատուէրը:

Հերմանի մուտքը դէպի Տրիպոլիսի մօտի բանակին ամենե-
ւին նմա չէր Յիսուս Գրիստոսի մուտքին Երուսաղէմ: Առջևից
գնում էր զինուած մարզկանց մի զօրաբաժին, որոնց հետևում
էին վեց սպասաւոր բուրվառները ձեռներին և մի քահանայ
այն մեծ արծաթէ խաչը բռնած, որն առնուած էր Հերմանին
բաժին ընկած աւարի գնով: Այս բոլորից յետոյ դալիս էր ին-
քը-արքեպիսկոպոսը մի բազիլիկոսի վրայ բազմած, որը չորս
վարդապետ բռնած բերում էին: Նրա զլուխը բաց էր, սրովհետև
ձեռներում բռնած ունէր Մեգասպէլայոնի մենաստանին Պալէո-
լոզ կայսեր նուիրած ս. հաղորդութեան ոսկէ անօթները:
Ուսերի վրայ փռուած էին երկար, սև մազերը, որոնց մէջ տեղ-
տեղ սպիտակ էր երևում: Կարմիր երիզով չըջապատուած ըս-
պիտակ, մետաքսէ շուրջառը իջնում էր նրա պարանոցից
մինչև ոտները, իսկ վերևից ամրանում էր մի խոշոր զմրուխտի
կոճակով: Հերմանի ետևից գնում էին մնացած հոգևորական-
ները խաչվառները ձեռներին: Նրա ամբողջ շքախումբը բազ-
կացած էր երեք հարիւր հոգուց:

Ի հարկէ՝ այս կերպով պատերազմելն անխոհեմութիւն կը
լինէր, սակայն այս անմտութեան մէջ ևս մի որոշ բարձր դա-
ղափար կար, որովհետև Հերմանը մտածում էր միայն եկեղեցու
փառքի ու պատւի վրայ: Հինգ օր տևեց այս գնացքը Կալա-
բիտայից, և յունական բոլոր պահակախմբերը խորին յարգան-
քով էին ընդունում նրան. բայց Տրիպոլիսի տակ կանգնած բա-
նակի ընդունելութիւնից էր կախում նրա ձեռնարկած գործի
յաջողութիւնը, որովհետև մայնեցիները միշտ արհամարանքով
էին նայում հոգևորականների վրայ: Նրա տեսակէտով ինքը և
կել էր այնտեղ ուղղափառների վրայ եկեղեցու զերիշխանու-

թիւնը հաստատելու համար և իր պարտականութիւնն իրազօր-
 ձեւու մէջ մի ամենափոքր զիջում չէր կարող անել:

Եանին ու Միտսոսը հեռուից նկատեցին հանդիսաւոր զը-
 նացքի մօտենալը, և առաջինը խորհրդաւոր կերպով շուայնե-
 լով՝ ասաց.

—Թշուառութիւն է գալու: Հերմանը բարի և հայրենիքին
 անձնուէր մարդ է, սակայն միւս հոգեւորականները նման չեն
 նրան:

—Լաւ կը լինէր, եթէ որ նրանք չը խառնուէին մեր գոր-
 ձերի մէջ, —պատասխանեց Միտսոսը, —նրանք բոլորին հաւա-
 տայնում են, թէ մենք պատերազմում ենք ի փառս Աստուծոյ:
 Ասինք այդ այդպէս է, բայց պատերազմի համար զինուորներ
 են հարկաւոր, իսկ տէրութիւնները վառ զինուորներ են: Սակայն
 նայիր, Եանին, ինչպիսի փառահեղ մարդ է Հերմանը: Ափսոս,
 որ ևս եպիսկոպոս չեմ ծնուել:

Գնացքը մօտեցաւ երիտասարդներին, և նրանք տեսնելով
 որ Հերմանը ձեռներուս բռնած ունի ս. Հաղորդութիւնը, ծունկ
 չորեցին: Եանին սկսեց ջերմեռանդօրէն խաչակնքել, իսկ Միտ-
 սոսը յօնքերը կիսեց:

Պետրօ-բէյն ամենախորին յարզանքով ընդունեց արքե-
 պիսկոպոսին և նրա համար մի վրան պատրաստեց իրանի մօտ:
 Ամբողջ բանակում յայտարարուեց, թէ հետեւալ օրն առաւօ-
 սեան վաղ յոյները պարտաւոր են ներկայ լինել այն պատա-
 րագին, որը պէտք է մատուցանէ արքեպիսկոպոսը: Բայց նախ-
 ընթաց երեկոյին ընթրիքից յետոյ Պետրօ-բէյն ու Նիկողայոս-
 սը իրանց մօտ հրաւիրեցին Հերմանին՝ անկեղծօրէն խօսելու
 համար, իսկ Միտսոսին յանձնարարուեց քսան կամաւորներով
 յարձակում գործել թիւրքական հարեան զիրքի վրայ, որ
 շատ մեծ բաւականութիւն պատճառեց նրան: Հերմանը
 շատ սիրալիբ կերպով էր վերաբերում դէպի Միտսոսը, ուս-
 աի և ճանապարհ գնելիս՝ օրհնեց նրան:

—Դու միշտ յայտնի ևս եղել մարդկանց հետ վարուելու
 ընդունակութեամբ, — ասաց արքեպիսկոպոսը՝ Նիկողայոսին
 դառնալով. — և ճշմարիտն ասած՝ կարողացար Յունաստանի
 ամենալաւ երիտասարդներից մէկին պատրաստել կենսական
 գործունէութեան համար: Բայց մենք պէտք է բոլորովին ուրիշ
 բաների մասին խօսենք. ամենից առաջ թոյլ տուր, որ սեզ-
 մեմ քո ձեռքը, որովհետեւ գուցէ իմ խօսքերը քեզ դուր չը
 դան: Մենք բարեկամներ ենք, այնպէս չէ:

—Հին բարեկամ, — ժպտալով պատասխանեց Նիկողայոսը,
 և տայ Աստուած, որ յաւիտեան բարեկամ էլ մնանք:

—Ես էլ յոյս ունեմ զրա վրայ,—չարունակեց Հերմանը,— սակայն իմ բերած լուրը կը հաստատէ միայն մեր հին բարեկամութիւնը: Մեր Գրիգորիոս պատրիարքը, որին դու հաւանականարար ճանաչում էիր, սուլթանի հրամանով սպանուած է Կ. Պոլսում:

Նիկողայոսն ու Պետրո-բէյը վեր թռան ակզերից:

—Անկարելի է,—բացագանչեցին երկուսը միարեւան:

—Այն, նա սպանուած է և ամենախայտառակ կերպով նրան կախել են պատրիարքարանի դռնից: Բայց Աստուծոյ պատիժը չուտով կը թափուի ամբարիշտների վրայ, և այդ սուրբ նահատակի մահը կը բողոքէ Ամենակալի առաջ: Միայն տայ Աստուած, որ այս տխուր դիպուածն աւելի ևս բարեկամական կապերով միայնէ մեզ: Չարասիրտ թիւրքերը չեն բաւականացել սուրբ մարդուն մահայնելով, այլ երեք օր շարունակ նրա զիակը փողոցում կախուած են թողել, այնպէս որ չենքք Քրիստոսն ու կծոակ են նրան, իսկ յետոյ զիակը տուել են հրէաներին, որոնք չենքից էլ վատ են: Նրանք քարչ են տուել բոլոր փողոցներով և ծովը զցել: Սակայն բարեպաշտ մարդիկ ազատել են սուրբ մարդու մարմինը, տարել Օդեսսա և այնտեղ եկեղեցական օրէնքով հողին յանձնել: Չը նայելով դրան՝ Գրիգորիոսը հրաչքներ էր գործել այն նաւի վրայ, որով նրա մարմինը Օդեսսա են հասցրել: Այդ նաւի վրայ դանուած մարդկանց մէջ եղել է մի անդամաւրջ՝ կին, հէնց որ նրան մօտեցրել են պատրիարքի մարմնին, նա խկոյն առողջացել է:

—Փնօք Քեզ, Տէր, փնօք Քեզ,—բացագանչեց Նիկողայոսը,—այդ նահատակը մեր միջնորդը կը լինի Աստուծոյ առաջ:

—Փնօք Քեզ, Տէր, փնօք Քեզ,—կրկնեց Պետրո-բէյը խաչակրներով.—բայց, հայր, պատմիր, թէ ինչպէս է պատահել այդ:

—Նա մեռել է մեզ համար,—պատասխանեց Հերմանը,— նա մեռել է յոյների ազատութիւնը պաշտպանելով: Ինչպէս ձեզ յայտնի է, հայրենասէրների հետ համախորհուրդ էր գործում նա, և մասնաժողովի անդամներին դրած նրա նամակները բռնուել են: Ահա թէ ինչ ճանապարհով են թիւրքերն իմացել նրա հայրենասիրական գործունէութեան մասին և վրէժխնդիր եղել: Նրա մահից յետոյ նոր պատրիարքի ընտրութիւն է նշանակուել և ընտրուած է Պիտրիայի Եւզենիոսը: Իսկ այդ ընտրութիւնը հաստատել է Գրիգորիոսին սպանողը:

—Ես չեմ ցանկանում հնազանդուել այդ ընտրութեանը,—բացագանչեց Նիկողայոսը՝ բաւեցքը սեղանին խփելով.—եկեղնցին խաղալիք չէ դե-թիւրքերի ձեռքին:

—Ես ուզում էի քո կարծիքն իմանալ,—չարունակեց Հեր-

մանր,—իսկ դու, Պետրո-բէյ, ազդականիդ կարծիքին համամիտ ես: Բայց և այնպէս եկեղեցին անդլուխ կը մնայ:

—Իսկ ինչպէս պէտք է վարուել պատրիարքի մահից յետոյ,—հարցրեց Նիկողայոսը:

Հերմանը մի քանի բողբ է լուռ մնաց, իսկ յետոյ շարունակեց.

—Գիտէ՞ք, ինչու ես իսկոյն չը պատասխանեցի այդ հարցին,—բանը նրանումն է, որ եկեղեցական օրէնքով մինչև նոր պատրիարքի ընտրութիւնը բոլոր իշխանութիւնն անցնում է աւագագոյն արքեպիսկոպոսի ձեռքը:

—Եւ շատ զեղեցիկ, բացազանչեց Նիկողայոսը՝ վեր կենալով,—քեզանից աւելի արժանաւոր մարդ չը կայ, և ես պատրաստ եմ ընդունել քս իշխանութիւնը և ի փառս Աստուծոյ հնազանդուել քեզ այն ամենի մէջ, ինչ որ եկեղեցական գործերին է վերաբերում:

Նիկողայոսն ու Պետրո-բէյը մտեցան Հերմանի օրհնութիւնն առնելու, և սա խաչակնքեց նրանց:

—Ես մասամբ նրա համար իսկ եկայ այստեղ,—ասաց նա բողբեկան լուռութիւնից յետոյ,—որ յորդորեմ յունաց գօրքին սուրբ եկեղեցու գերիշխանութիւնն ընդունել: Անընդհատ ընդհարումների ժամանակ մենք չը պէտք է մոռանանք, որ կուում ենք ոչ միայն ազատութեան համար, այլ և ի փառս Աստուծոյ: Հաւատացէ՛ք ինձ, բարեկամներս, ես խոստովանուում եմ, որ բոլորովին անարժան եմ այն բարձր զիրքին, որը պատահմամբ ինձ բաժին ընկաւ. բայց օգնեցէ՛ք ինձ հետու մնալ զայթաղութիւնից, ազատուել ոյժիցս բարձր ճշնումից: Ես գիտեմ, որ դուք մեծ ազդեցութիւն ունէք, ուստի և կարող էք ինձ սնագին օգնութիւն ցոյց տալ: Չէ որ եթէ ես հպատակուեմ Աստուծոյ կամքին և ինձ վրայ առնեմ ազատութեան համար ապրտամբուած յոյն ազգի զլուխը լինելու պատասխանատուութիւնը, այն ժամանակ պէտք է եռանդով պաշտպանեմ իմ իշխանութիւնը ոչ թէ անձնական եսասիրութիւնից, այլ Աստուծոյ ճշմարտօրէն ծառայելու փափաղից:

Նիկողայոսն ուղտում էր պատասխանել, բայց Պետրո-բէյը մի աննկատելի նշանով արգելեց նրան, և արքեպիսկոպոսը շարունակեց.

—Ո՛ւմ առաջնորդութեամբ ենք մենք պատերազմում, եթէ ոչ Աստուծու: Ո՛ւմնից է կախուած յաղթութիւնը, եթէ ոչ Աստուծուց: Իսկ ես, նրա խոնարհ սպասաւորս, Աստուծոյ հօտի հովիւն եմ: Ի չարը մի մեկնէք իմ խօսքերը, բարեկամներ, ևս խօսում եմ ոչ թէ ինձ համար, այլ Աստուծոյ: Մեր մէջ արդէն

գլուխ են բարձրացրել թիւրքերից ոչ պակաս թշնամիներ: Կալաբրիտայում և Մոնեմվադիայում, — բայց ես յուսով եմ, որ այստեղ չը կան այգւլիսիներ, — երևան են եկել շահասէր, անիրաւ մարդիկ, որոնք իրանք գործում և իրանց կողմնակիցներին էլ յորդորում են գործել շահի նպատակով և իրանց անձնասէր գիտաւորութիւններին հասնելու համար: Այդ անարժան մարդիկ հաւասար են այն աւաղակներին, որոնք կողոպտում են անպաշտպաններին:

— Ներիր ինձ, հայր, — պատասխանեց Պետրօ-բէյը, — բայց եթէ այգւլիսի մարդիկ պատահել են յունական նաւերի վրայ, դրա նման բան դեռ չէ երևում զօրքի մէջ: Մեր աւարի կէսը տալիս ենք պատերազմի ծախքերի համար, իսկ միւս կէսն արգարացի կերպով բաժանում ենք նրանց մէջ, որոնք ձեռք են բերել այն:

— Դու, իմ բարեկամ, շօշափեցիր հէնց այն հարցը, որի մասին ես ուզում էի խօսել, — արտասանեց Հերմանը, — քո խօսքերով կէսը յատկացնում էք պատերազմի ծախքերին, թէպէտ, ես կարծում եմ, դա չափազանց մեծ բաժին է, բայց չը խօսենք այդ մասին: Ես կամենում եմ ձեր ուշադրութիւնը դարձնել բոլոր գիտուորների մէջ մնացած մասի բաժանման կատարեալ անարգարութեան վրայ: Ինչո՞ւ համար ենք մենք պատերազմում — հարստութիւն ձեռք բերելու, թէ ազատութեան համար: Ի հարկէ՞ ազատութեան համար և ի փառս Աստուծոյ: Նշանակում է մի այգւլիսի գործի համար կուելը և մինչև անգամ մեռնելը բարձր է ամեն տեսակ պարգևից: Այդ պատճառով այդ ամենը, ինչ որ մենք վաստակում ենք մեր կուով, պէտք է գործադրուի ի փառս Աստուծոյ, այսինքն եկեղեցու վրայ: Չէ որ Աստուած է միայն, որ մեզ ոյժ է տալիս յաղթելու թիւրքերին, և ինչ — իւրաքանչիւր մարդ ստանում է իր բաժինը, իսկ միայն եկեղեցուն ոչինչ չեն տալիս: Ուստի մենք պէտք է մի քիչ էլ մտածենք Աստուծու, եկեղեցու ու նրա պաշտօնականների մասին: Աւարի կէսը նրանց է հարկաւոր տալ և ոչ թէ բոլորի մէջ բաժանել այն:

Պետրօ-բէյն ու Նիկողայոսը լուռ լսում էին Հերմանին, որովհետև յարգում էին նրան իբրև մարդ և իբրև արքեպիսկոպոս: Նրա անկեղծութեան և ազնւութեան մասին էլ կասկած չ'ունէին. բայց նրա քարոզած թէ որի ան ամենին գործնական չէր, միթէ նա կարծում էր, թէ կուպիտ, անկիրթ մարդիկ եկեղեցու շահերի համար կը պատերազմէին: Արդէն տռանց այն էլ հողերակամները շատ չարիքներ էին գործում. նրանք մեծ կարևորութիւն էին տալիս իրանք իրանց և յոյների զժողոճու-

թիւնն էին շարժում նրանով, որ համաձայնութիւն էին կայացնում թիւքերի հետ, որոնք իրանց գոյքերը տալով՝ փրկում էին իրանց կեանքը: Հերմանն ինքը բոլորովին բարեխղճաբար և անշահաօիրութեամբ արծարծում էր աւարի կէսը եկեղեցուն յատկացնելու միտքը, բայց միւս հողերականներն այդպէս չէին մըտածում. իսկ որ գլխաւորն է, ինչպէս կարող էին Պետրո-բէյը՝ իբրև գլխաւոր հրամանատար, և Հերմանը՝ որպէս Աստծու ժողովրդի հովիւ՝ մանել համարձակ երիտասարդների խմբի մէջ և տակ նրանց.

—Դուք ձեր կեանքը վտանդի ենթարկեցիք երէկ, վրտանդի էք ենթարկում այսօր, վաղն էլ վտանդի կ'ենթարկէք միմիայն նրա համար, որ հարստացնէք եկեղեցին ու նրա պաշտօնեաներին, իսկ դուք և թէ չը մեռնէք էլ պատերազմի դաշտում, առաջուայ նման ազքատ գրութեան մէջ կը մնաք:

Սակայն չը նայելով Հերմանի բոլոր ազնուութեանը, Պետրո-բէյն ու Նիկողայոսը հասկանում էին, որ նա ի փառս Աստուծոյ դործելով, միևնոյն ժամանակ ձգտում էր և իր ինքնաօիրութեանը դոհացում տալու: Նա վերին աստիճանի փափաղ ունէր իշխանութիւն ձեռք բերելու, և թէ որ նրան ընտրէին սպանուած պատրիարքի տեղ, այն ժամանակ նրա ոյժին ու ղորութեանը ոչ մի բան չէր հաւասարուիլ: Որ մի այդպիսի միտք էր ծագել նրա գլխում և հանգստութիւն չէր տալիս, ապացուցանում էին հետեւեալ խօսքերը.

—Եւ որքան մեծ գործ է—չարունակեց նա—մի այնպիսի եկեղեցու գլուխ լինել, որը թէ հողեր և թէ մարմնաւոր ծայրագոյն իշխանութիւն ունի իր ձեռքում: Ես մի այդպիսի դերք չէի փոխիլ նոյնիսկ պապի դերի հետ: Դժուարանում եմ երևակայիլ անգամ, թէ ես անարժանս կարող եմ մինչև այդ աստիճան բարձրանալ:

—Հայր,—յօնքերը կիտելով՝ ընդհատեց նրան Նիկողայոսը, —ինչո՞ւ ես ասում այդ: Չէ որ դու ձգտելով եկեղեցին ղորացնել ի փառս Աստուծոյ՝ ուրիշ ոչ մի բանի վրայ չես մտածում:

—Ճշմարիտ ես ասում,—պատասխանեց Հերմանը, բոպէական լռութիւնից յետոյ,—ես ձգտում եմ միայն Աստծու եկեղեցին փառաւորելու:

—Ես դեռ այս էի ուզում ասել քեզ, հայր, չարունակեց Նիկողայոսը,—որ ես և Պետրո-բէյը բացի եկեղեցու շահերից պարտաւոր ենք նաև ուրիշ շահերի մասին էլ մտածել: Վերջին ժամանակներում մեր բանակի մէջ, թէև ուրիշ տեղերից պահաս, տարաձայնութիւններ են ծագել, որոնք ամենազարհուրե-

լի հեռանդրներ կարող են ունենալ: Մեր բանակում հոգևորականներ կան, որոնք զինուորներին ասում են այն, ինչ որ դու ասացիր մեզ, բայց ոչ այնքան էլ անշահասէր նպատակով: Նրանց խօսքերով՝ մենք կրօնի համար կնք կուռում և պէտք է խոնարհուենք հոգևորականների առաջ, բայց մեր տղերքը չեն ուզում նրանց լսել: Այն ժամանակ նրանք խորամանկութեան են զիմում և հաւատացնում, թէ խեղճ զինուորներն արիւն են թափում այն բանի համար, որ հարստացնեն իրանց զօրապետներին: Երգում են Աստուծոյ անունով, դա դարչելի զրպարտութիւն է, բայց անկարելի է երաշխաւորել, որ եթէ իրերի զրութիւնը չը փոխուի, իրօք մի այդպիսի բան չը ծագի: Ահա օրինակի համար, Մոնեմվազիայում այժմ արգէն վատութիւնը մուտք է գործել. այնտեղ զօրախմբեր են հաւաքում առաջուց ընտրուած զօրապետների հետ, որոնք ուղղակի ասում են, թէ եթէ հոգևորականները ոչ մի բան չ'արած՝ ուզում են իւրացընել աւարը, աւելի լաւ է իրանք վերցնեն այդ, քանի որ սպաներազմի բոլոր ծանրութիւնն իրանք են կրում: Եւ ահա այդպիսով ներքին երկպառակութիւններ են ծագում հոգևորականների և զինուորական առաջնորդների մէջ, իսկ հետզհետէ զինուորներն էլ սկսում են իւրաքանչիւրը իր օգտին գործել: Եւ ամեն բանում հոգևորականութիւնն է մեղաւոր: Այստեղ մեր մէջ նրա տեղը չէ: Քանի դեռ հոգևորականները չէին մտել զօրքերի մէջ, այդպիսի բաների մասին խօսք անգամ չը կար: Ահա այն ամենը, ինչ որ ուզում էի ասել:

Նիկողայոսը խօսում էր տաքացած, և նրա աչքերը բարկութեամբ փայլում էին: Միթէ յազթութիւնն իրանց իսկ շընորհիւ յոյների ձեռքից պէտք է գնար. իսկ նա զիտէր, որ ինչքան էլ մօտ լի էր Տրիպոլի անկումը, սակայն վարք ու բարքով ապականուած զօրքով ոչինչ չէր կարելի անել:

—Քո խօսքերը ճշմարիտ չեն, Նիկողայոս,—բացադանչեց Հերմանը՝ իրանից դուրս գալով.—ձեր զօրքը հարկաւոր եղածի չափ չէ յարգում հոգևորականներին և աւելի շուտ նանման է ուսուցչի քանոնի տակից դուրս եկած անպիտան տղաների խումբի, քան թէ ինչպէս հարկ է լինել հնազանդ և յարգող զօրքին:

—Ո՛չ,—պատասխանեց Նիկողայոսը,—զինուորի առաջին պարտականութիւնը իր մեծերին հնազանդուելն է, և այդ կողմից մեր տղաներն անպարտաւելի են:

—Բայց ձեր զինուորները մարդիկ են, իսկ մարդու առաջին սրբապանութիւնն է հնազանդուել նրանց, որոնց Աստուած է կարգել նրանց վրայ:

—Բայց, հայր,—բացադանչեց Նիկողայոսը,—ժամանակ չէ

այժմ այդ մասին խօսելու: Ի հարկէ՛, քո խօսքերը ճշմարիտ են — մարդիկ պարտաւոր են յարգել Ասածու պաշտօնեաներին, սակայն պատերազմի ժամանակ հոգևորականները չը պէտք է տարածայնութիւններ գցեն: Ես չեմ վիճում, թէ մենք կուու՞մ ենք ի փառս Աստուծոյ, բայց մեզ մի խանդարէք, թոյլ տուէ՛ք ազատօրէն գործելու:

— Զեզ ոչ որ չէ խանդարում, եթէ իրօք Ասածու փառքի համար էք աշխատում:

Նիկողայոսը ոչինչ չը պատասխանեց, այլ միայն շարժեց գլուխը:

— Այժմ ժամանակ չէ վիճելու, — ասաց Պետրօ-բէյը, որ մինչև այդ լուռ էր. խօսեմք լուրջ և գործնականօրէն: Նիկողայոսը ճշմարիտ է ասում, թէ մեր զօրքերի մէջ քահանաները խոտովութիւն են սերմանում: Խօսի՛ր նրանց հետ, հայր: Համոզի՛ր նրանց, թէ զինուորներին չը պէտք է զրդուել իրանց մեծերի դէմ, այլ ընդհակառակը՝ նրանց պարտականութիւնն է զօրքի մէջ քարոզել յարգանք դէպի զօրապետները:

Պետրօ-բէյը շատ հմուտ կերպով դրսւ հարցը, և Հերմանն անկարող էր չը համաձայնուել նրա հետ, բայց միւս կողմից նրա խորհուրդը կատարելը նշանակում էր ընդունել, որ հոգևորականների գործողութիւններն անկանոն են: Մի քանի րոպէ Հերմանը տատանում էր, իսկ յետոյ ասաց.

— Ես չեմ ուզում իմ սահմանից դուրս դալ. ես եկեղեցու գլուխ եմ և ոչ թէ զօրապետ, ուստի չեմ կարող իրաճնուել այն գործերի մէջ, որոնք զօրքին են վերաբերում:

— Եթէ դու չես կարող, ուրեմն ի՞նչպէս կարող են սոյգ անել քո ստորադրեալները, — բացազանչեց Նիկողայոսը, — ասա՛ նրանց, հայր, որ հետևեն քո խոհեմ օրինակին:

Հերմանը չը գիտէր ինչ պատասխանել:

— Ահա տեսնում ես, — շարունակեց Նիկողայոսը, — դու հէնց նոր մեղանից օգնութիւն էիր խնդրում, իսկ այժմ մենք ենք խնդրում, որ դո՛ւ մեզ օգնես: Եթէ այդ չես ուզում ասել քո քահանաներին, ուրեմն խօսի՛ր զօրապետների հետ. գուցէ նրանք քեզ լսեն:

— Յամենայն դէպս ես իմ ստորադրեալներին սանձահարելու համար ձեզանից օգնութիւն չը խնդրեցի, — զայրացած պապասխանեց Հերմանը, — իսկ եթէ դուք կամենում էք, որ ես օգնեմ ձեզ ձեր մարդկանց դէմ, հապա ուրեմն կարող եմ ասել միայն...

Նա կանգ առաւ, և դա շատ լաւ ժամանակին էր, քանի որ ուզում էր մի ինչ որ չսփազանց վերաւորական բան ասել:

Պետրո-բէյը ծանր հառաչեց, իսկ Նիկողայոսը պատասխանեց հեղնօրէն.

—Եթէ դու կարծում ես, թէ մեր գործերն անկարգ զբոսածութեան մէջ են, ուրեմն էլ ինչո՞ւ ես մեղանից օգնութիւն խնդրում: Թոյլ տուր ինձ կրկնել հէնց քո խօսքերը և ասել, որ ես գործում եմ ոչ թէ իմ, այլ այն զօրքի շահերի համար, որը սուրբ գործի համար է կուռում: Բացի գրանից ես համոզուած եմ, որ Աստուած մեր կողմն է:

Հերմանը մտածմունքի մէջ ընկաւ և մի քանի բոպէից յետոյ ասաց մեղմ կերպով.

Ի հարկէ, Աստուած օգնում է քեզ նման մարդուն, Նիկողայոս: Ձը վիճենք այլևս—ես մեղաւոր եմ, ինքս սկսեցի այս վէճը: Խօսենք սառնարիւն կերպով: Չէ կարելի արդեօք վերջ դնել այն տարածայնութիւններին, որոնք քո խօսքերով ծաղկւ են զօրքի մէջ: Դու բոլոր յանցանքը զցում ես հոգևորականների վրայ, այնպէս չէ:

—Գոնէ քանի դեռ նրանք չը կային, ամեն ինչ հանդարտ էր բանակներում,—պատասխանեց Նիկողայոսը:

—Ես գտայ այդ գծուարութիւնից գորս գալու ելքը,—ասաց Պետրո-բէյը:—Հոգևորականներն ու զօրապետները մեր զօրքը երկու բանակի են բաժանել: Չէ կարելի արդեօք այդ ցաւին ճար անել՝ զօրապետներից և հոգևորականներից մի ծայրագոյն խորհուրդ նշանակելով:

—Այդ բանը կ'աւելացնէ միայն չիտթութիւնը,—պատասխանեց Նիկողայոսը՝ գլուխը շարժելով,—մենք այժմ պէտք է Տրիպոլիսը պաշարենք, և ինչո՞վ կարող են մասնակցել հոգևորականներն այդ գործում: Լսու կը լինէր գրութիւնս, եթէ ինձ սինոդի անդամ դարձնէին:

Հերմանի աչքերը փայլեցին: Նա հասկացաւ, որ Պետրո-բէյի առաջարկած ընդհանուր խորհուրդը կարող էր իրան առաջնակարգ դիրք տալ և իսկոյն սկսեց համոզել Նիկողայոսին համաձայնելու այդ առաջարկութեանը:

—Սիրելի բարեկամ,—ասաց նա,—ես շատ ցաւում եմ, որ դու սինոդի անդամ չես և, իհարկէ, կը հասնէիր այդ աստիճանին, եթէ կրօնաւոր դարձած լինէիր: Բայց դու ուրիշ ասպարէզ ես ընտրել, որի մէջ ամեն գովասանքից էլ բարձր ես: Սակայն մտածիր, Նիկողայոս, չէ որ այս շարժումն ազդային է, իսկ եկեղեցին մի ազդային հիմնարկութիւն է և միշտ ձայն է ունեցել ազգային գործերում: Մի վախոնար, մենք չենք խառնուիլ զինուորական գործերի մէջ, և մեղանից ոչ ոք չի առաջնորդիլ զօրքը դէպի յարձակում: Ի հարկէ՝ քեզ յայտնի է,

որ Անպիայում երկու ժողով գոյութիւն ունի—մէկում նստում են լորդերը, որոնք ոչ մի նախաձեռնութիւն չ'ունեն, այլ կատարում են միւս ժողովի կամքը, որը կազմուած է ժողովրդի ներկայացուցիչներին: Դուք զօրապետներդ ժողովրդի ընտրելիներն էք, իսկ մենք սկզբունքը պահպանողները: Դու տեսնում ես, Նիկողայոս, որ ես համաձայնութեան դայիս եմ: Այժմ ժամանակ չէ եկեղեցու առաւելութեան մասին խօսելու: Մեզ միայն ձայն տուէք ձեր ժողովների մէջ, և ուրիշ ոչինչ հարկաւոր չէ մեզ: Եթէ զօրապետներն ու հոգևորականները միասին գործեն, Յունաստանն ազատուած է:

—Լաւ, քանի որ այդ ծրագիրը Պետրօ-բէյի առաջարկածն է, ևս համաձայն եմ,—պատասխանեց Նիկողայոսը:

Հերմանը իր սրտի ուրախութիւնը ցոյց չը տուաւ և բշտակեց խօսակցութիւնը փոխել: Նա ասաց, որ շուտով Պելուպոնէս կը հասնէ իշխան Դիմիտրիոս Իպսիլանտին, որին հետեւեալն կամ հիւսիսային Յունաստանի հայրենասէրների ժողովը նշանակել էր նրա անընդունակ դաւաճան եղբոր տեղ: Մինչև այդ՝ ժողովը վազանի էր գործում Նիկողայոսի և Հերմանի նման իր մի քանի գործակալների միջոցով, բայց պատերազմի յաջողութիւնն աչքի առաջ ունենալով՝ այլևս աւելորդ էր թափնուել, և ժողովի անգամները, երևան հանելով իրանց գործունէութիւնը՝ սկսեցին յայտնի կերպով առաջ տանել Յունաստանի ազատութեան գործը: Հերմանի խօսքերին նայելով, Պետրօ-բէյն ու Նիկողայոսը ժողովի յարգանքն էին վայելում, և իշխան Դիմիտրիոսը շատ սիրում էր նրանց: Նա յայտնեց նոյնպէս, թէ իշխանը չէր ցանկանում պատերազմական գործերի մէջ խառնուել, քանի որ յայն զօրապետներին փորձուած և ընդունակ մարդիկ էր համարում, նա մտադիր էր խաղալ այն հետեւեալի գերը, որը պատերազմը կազմակերպել և նրա համար զրամական միջոցներ էր գտել:

—Եւ ես բոլորովին համոզուած եմ,—աւելացրեց Հերմանը,—որ իշխան Իպսիլանտին կը հաւանէ ազգային ձեռակոյտ կազմելու համար մեր կայացրած վճիռը և այդ ձեռակոյտի գըլուխն անկասկած ինքը կը լինի:

VII

Նիկողայոսի, Պետրօ-բէյի և Հերմանի մէջ տեղի ունեցած խօսակցութիւնն ստեղծեց Պելուպոնէսի ձեռակոյտը, և երբէք որևէ ազգ կառավարելու համար մի այնպիսի անպորձնական միջոց չէր հնարուած, որպիսին այդ չարաբախտ հիմնարկութիւնն

էր: Հէնց սկզբից նրա զինուորական և հոգևորական անդամները թշնամաբար էին վերաբերում միմեանց, և ծերակոյտի գործունէութեան միակ գործնական հետեանքն այն եղաւ, որ յետաձգութիւններ և զանազան արդելքներ առաջացան Տրիպոլսի պաշարման գործում: Ծերակոյտը նչ միայն չը վերացրեց զօրքի մէջ կղած տարաձայնութիւնները, այլ աւելի ևս զրդեց: Շատ անգամ Պետրօ-բէյը կամենում էր հրաժարուել ծերակոյտի մէջ ունեցած պաշտօնից, բայց այդ կը նշանակէր իշխանութիւնը վերջնականապէս հոգևորականութեան ձեռքը մատնել: Իսկ ինչ վերաբերում է Նիկողայոսին ու Հերմանին, նրանց մէջ մի խիստ կռիւ սկսուեց, որովհետև՝ Նիկողայոսի կարծիքով՝ Հերմանը նրան խաբել էր: Վերջինս հաւատացնում էր, թէ բարձր մարդասիրական նպատակներ ունի, բայց իսկապէս լոկ անձնական ինքնասիրութիւնն էր նրան առաջնորդողը: Այն ժամանակ, երբ Նիկողայոսին ու Պետրօ-բէյին հաւատացընում էր, թէ ինքն աշխատում է ի փառս Աստուծոյ, նա բոլորովին անկեղծօրէն էր խօսում, բայց հետզհետէ անձնական շահերն աւելի բարձր նշանակութիւն ստացան նրա աչքում, քան զաղափարական նպատակները:

Նիկողայոսը մեծ յոյս ունէր իշխան Իպսիլանտիի գալու վրայ, բայց դրա մէջ էլ ստիպուած եղաւ հրասթափուել: Զօրքն իշխանին ցնծութեամբ ընդունեց, որովհետև մշտական ինտրիգները ձանձրացրել էին նրան: Պետրօ-բէյն իսկոյն ստորագրեալ դիրք բռնեց, բայց իշխանը յայտնեց նրան, թէ պաշարման գործը կամենում է նախկին մարդկանց ձեռքին թողնել: Հերմանն էլ իշխանին շատ սիրալիբ կերպով ողջադուբեց՝ յուսալով իր ձեռքի տակն առնել նրան և եկեղեցու կողմնակիցը զարձնել:

Եթէ որ իշխան Դիմիտրիոսը զօրեղ կամքի տէր մարդ լինէր, կարող էր ընդհանուր հաշտութիւն գցել. բայց դժբախտաբար նա բոլորովին անընդունակ էր այն դերի համար, որը վիճակուել էր նրան: Նա բարի դիտաւորութիւններ և ազնիւ սկզբունքներ ունէր, բայց թոյլ էր և անվճռական: Նա հակուում էր երբեմն այս, երբեմն միւս կուսակցութեան կողմը և այս բանն անում էր ամենաանչնորհք կերպով, ցոյց տալով՝ որ բոլորովին թոյլ է մարդ ճանաչելու մէջ և անվստահ—գէպի ինքը: Զինուորների աչքին նրա բնաւորութեան թուլութիւնը երևում էր մինչև անգամ արտաքինից: Իշխանը կարճահասակ էր, իսկ շարժումները երբեմն ամաչկոտ էին, երբեմն էլ յանդուգն: Դէմքը նրհար էր, մաշուած, իսկ մազերը ախխտոն էին, թէպէտ երեսներկու տարին նոր էր լրացրել: Կարճատես լինելով, նա, ինչպէս Միտսոսն ասում էր, շարունակ բուռի նման

Թարթուս էր աչքերը, իսկ ձայնը սուր էր, ճշող: Այս բոլոր արտաքին պակասութիւնները բոլորովին համապատասխանում էին նրա ներքին թերութիւններին: Նա շիտակ, աղնիւ, քաջ մարդ էր, բայց նրա լիտիսարէն մի պակաս արժանաւորութիւնների աէր անձն աւելի օգուտ կը բերէր, եթէ կամքի ոյժ ունենար: Այս կրիտիկական բողէին առաջնորդից մի բան էր պահանջւում — վճատկանութիւն, որից և զուրկ էր Իպսիլանտին: Բացի դրանից՝ նա չափազանց զիւրազրդիտ էր իր արժանաւորութեան վերաբերմամբ, և ծիծաղելի էր լսել, թէ ինչպէս այդ հիւանդոտ կերպարանքի տէր մարդը ճշում էր իր սուր ձայնով.

— Ես այդպէս եմ կամենում... Ես այդպէս եմ հրամայում...

Իշխանի այդ թոյլ բնաւորութիւնից հմտութեամբ օգտւում էր Հերմանը, որը նրանից յետոյ երկրորդ տեղն էր զբաւում ծերակոյտի մէջ և մշտապէս շողորթում էր նրան, սւստի և իշխանն էլ ամեն բանում համաձայնում էր նրա հետ:

— Դու ուղիղ ես ասում, սիրելի արքեպիսկոպոս, անկարելի է ուշադրութիւն չը դարձնել այն բանի վրայ, թէ ինչ կ'առէ մեր բարեկամ զլխաւոր հրամանատարը, թէպէտ և ես հետերկայի կամքով ձեր երկախ վրայ էլ իշխանաւոր եմ կարգուած:

Իսկ երբ Պետրո-բէյն սկսում էր բացատրել, թէ անհրաժեշտ էր Տրիպոլիսը զբաւել, որովհետեւ ժամանակ էր մի կողմ գոյել ներքին երկպառակութիւնները և առաջ տանել զօրքը, որի պաշարեղէնն սկսում էր հատնել, այն ժամանակ իշխան Դիմիտրիսը պատասխանում էր.

— Դու բոլորովին ճշմարիտ ես ասում, սիրելի Պետրո-բէյ, և ես կատարելապէս համաձայն եմ, որ չը պէտք է ժամանակ կորցնել: Զինուորական խորհուրդ հրաւիրիր, և որոշեցէք, թէ ինչ պէտք է անել, իսկ յետոյ խորհրդի վճիռն ինձ ներկայացրին: Հաստատելու համար: Ես յիշում եմ, զու սսում էիր, թէ անհրաժեշտ է վերակազմել հեծելազօր զուհրդ: Ես այդ ծրագիրը շատ օգտակար եմ համարում և կը ցանկանայի այդ մասին աւելի մանրամասնօրէն խօսել: Այն, այն, ճշմարիտ ես ասում: Մենք պէտք է շտապենք: Բայց իսկոյն ճաշը կը բերեն. ես շատ ուրախ կը լինէի, պարոններ, եթէ դուք երկուսդ էլ ինձ հետ ճաշելու պատիւն անէիք: Թողնենք գործերը վաղուան: Փառք Աստծու, այսօր մի բան արինք:

Նիկողայոսը տեսնում էր, որ Իպսիլանտի օգնութեան վրայ յուսալ չէր կարելի, և սկսեց ամեն կերպ զիմադրել Հերմանին, որի ներկայութիւնը բանակի մէջ նա չափազանց վշտակար էր համարում, քանի որ դա ինտրիգներ, վէճեր և ա-

բաձայնութիւններ էր առաջ բերում: Ծերակոյտի ժամանակ նա հերքում էր Հերմանի բոլոր կարծիքները, թէկուզ նրանք նոյն իսկ օգտակար էլ լինէին, և իր ատելութիւնից դէպի եպիսկոպոսը այնպիսի մարդկանց կողմն էր բռնում, ինչպէս էին Պորնիլոպուլոն ու Ազնոստոսը—այս թշուառ աւաղակները, աբկածախնդիրները:

Օրէցօր ծերակոյտի նիստերը հետզհետէ աւելի անկարգ և անկանոն էին դառնում, այնպէս որ վերջապէս իշխան Դիմիտրիոսը հասկացաւ, որ ինքը ծերակոյտի աչքում ոչինչ է: Նիկողայոսն անձնական ինքնասիրութիւն չ'ունէր և եթէ զօրքը պաշտպանում էր եկեղեցու դէմ, այդ այն համոզմունքից էր, որ ազգային ժողովների մէջ կուսակցութիւնների բաժանուելը կործանում է հայրենիքի ազատութեան սուրբ գործերը:

Հասաւ արդէն յունիսի երկրորդ կէսը, իսկ զօրքերը դեռ ևս անզործ էին. Պետրօ-բէյին յաջողուեց հարկադրել իշխանին կարգադրութիւն անել զօրքի պաշարի վերաբերմամբ, բայց դեռ ևս ոչ մի միջոց ձեռք չէր առնում Տրիպոլիսի պաշարումն առաջ տանելու համար: Մի անգամ սովորութեան համեմատ ծերակոյտի մէջ մի կատաղի ընդհարում տեղի ունեցաւ մի կողմից Կոլոկոտրոնի և Նիկողայոսի, իսկ միւս կողմից Հերմանի և Խարալամպոսի մէջ: Իզուր էր աշխատում Իպսիլանտին կարգը վերականգնել, և վերջապէս Հերմանը Նիկողայոսի կատաղի յարձակումներից համբերութիւնից դուրս եկած՝ վեր թռաւ տեղից և յայտնեց, թէ այլևս չի մասնակցիլ ծերակոյտի նիստերին:

—Ժամանակ է վերջ դնել սրան,—աւելացրեց նա,—չստ վաղուց է, Նիկողայոս, որ դու երգուեցիր հնազանդուել ինձ:

—Այն, այն ամեն բանում, ինչ որ վերաբերւում է հողիոր գործերին,—պատասխանեց Նիկողայոսը,—և այն էլ ի փառս Աստուծոյ, այլ ոչ թէ ի փառս Հերմանի:

Կոլոկոտրոնին, որ նստած էր Նիկողայոսի մօտ, ծափահարեց ի նշան հաւանութեան:

—Լսիր, քանի ևս այստեղ եմ,—բացադանչեց Հերմանը,—բայց ես իսկոյն կը հեռանամ և այլևս երբէք չեմ վերադառնալ: Տեսնենք՝ ինչ կ'ապէ ժողովուրդը, երբ իմանայ, թէ ինչպէս են վարւում ինձ հետ այստեղ:

—Գնա՛ ժողովրդի մօտ: Գնա՛ մայնեցիների մօտ,—բացադանչեց Նիկողայոսը.—տեսնենք նրանք ինչպէս կ'ընդունեն քեզ:

—Մայնեցիների մօտ,—ասաց Հերմանը,—բայց նրանք շատ էլ լաւ չեն թիւրքերից:

—Սիրելի արքեպիսկոպոս... Սիրելի արքեպիսկոպոս... —արտասանեց Իպսիլանտին:

—Բայց բացի այդ չներից Յունաստանում կան և ազնիւ ու անձնուէր մարդիկ,—չարունակեց Հերմանը՝ ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով իշխանի խօսքերի վրայ:

—Արքեպիսկոպոս,—կրկնեց Իպսիլանտին մի տեսակ հըպարտ դիրքով,—ես հրամայում քեզ լսել:

—Դու հրամայում ես,—բացագանչեց Հերմանը չարութիւնից իրան կորցրած և արհամարանքով քրքջաց:

Իշխան Դիմիտրիոսը կարմրեց, և ծերակոյտի մէջ տիրեց լռութիւն: Առաջին անգամն էր այս թուլամորթ մարդը իրան իրրև հպարտ, հրամայող իշխանաւոր ցոյց տալիս:

—Նեղութիւն կրիր, արքեպիսկոպոս, քո տեղը նստել, ևս ուղում եմ մի քանի խօսք ասել:

Հերմանը նայեց բոլոր ներկայ եղողներին և անկարող էր չը նկատել, որ նրանք իրանց դարմանքով լի աչքերը չէին հեռացնում իշխանից:

—Աւելի լաւ է՝ ևս կը գնամ այստեղից,—ասաց նա զայրացած.—ես այլևս չեմ մասնակցիլ ծերակոյտի գործերին:

—Դու չես կամենում ինդիրս կատարել,—բարձր և հրամայական կերպով արտասանեց Իպսիլանտին.—ես քեզ հրամայում եմ—նստիլ:

Արքեպիսկոպոսի բարկութիւնը մի ակնթարթում անհետացաւ, և նա հասկացաւ, որ ընդ միշտ զրկուեց յարդանքից: Ի հարկէ, իշխանն ինքն ըստ ինքեան ոչինչ էր, բայց նա էր երկրի բարձր իշխանաւորը: Այս հպարտ, անձնուէր մարդու բոլոր ծրարերը մի անգամից ցրուեցին, և նա գունատ, վշտաբեկ նստեց իր տեղում:

—Ես զգում եմ,—արտասանեց Իպսիլանտին բոպէական լռութիւնից յետոյ,—որ չը կարողացայ անել այն բարիքը, որին ձգտում էի, և իմ բոլոր ջանքերն իզուր են: Բայցի միայն զլխաւոր հրամանատարից, ծերակոյտին հաճելի չէր ինձ վրայ ուշք դարձնել. նա իրան այնպէս է պահում, կարծես ևս բոլորովին չը կամ այստեղ: Պետրօ-բէյի միայն ևս յարդանք ու մարդավարութիւն տեսայ: Եկեղեցու կուսակցութիւնը մանաւանդ մի այնպիսի յանդուգն դիրք է բռնել, որը ես տանել չեմ ուղում: Դուք, սրարոններ, տեսաք, թէ արքեպիսկոպոսը հէնց նոր ինչպիսի օրինակ ցոյց տուաւ նրանց: Շատ ցաւում եմ, որ սլարտաւոր եմ բաժանուել ձեզանից, բայց այդ անհրաժեշտ է, և ես վաղուց արդէն մի այդպիսի ելք էի նախատեսել: Այսօր ևս կը հեռանամ բանակից: Նիստը վիակուած է:

Նա զլուխ տուաւ բոլորին և Պետրօ-բէյին դառնալով աւելացրեց.

— Գնանք ինձ հետ, մենք այստեղից միասին դուրս կը գանք:

Եւ նրա թէն առնելով Իսպիլանտին ուղղուեց դէպի դուռը: Կէս ժամ յետոյ նա մի փոքրիկ չքախմբով դուրս եկաւ բանակից, բայց նրա հեռանալու պատճառն իսկոյն յայտնի եղաւ Տրիկորֆոսում, և ամբողջ զօրքը, որը նրան յարգում էր Պետրօ-բէյի հետ մտերիմ լինելուն և հօր հետերիայի մէջ բռննած բարձր դիրքի համար, գայրացած ոտքի կանգնեց հողերաւիանութեան դէմ: Մնկարգութիւններ տեղի ունեցան, և եթէ Պետրօ-բէյը միւս զօրապետների հետ, զրանց թւում և նիկողայոսի, չը թապչնէին հողերաւիաններին մի անվտանգ տեղում, զործն արիւնհեղութեամբ կը վերջանար: Միմիայն Հերմանը, որը յայտնի էր իր համարձակ քաջութեամբ, հրաժարուեց որեւէ պաշտպանութիւնից, և երբ մի մայնեցի թքեց նրա երեսին, արքեպիսկոպոսը մի աջնպիսի հարուած տուաւ նրան, որ զինուորը փոռուեց գետին: Մայնեցիներն այնպէս էին յարգում ոյմն ու քաջութիւնը, որ ակնածութեամբ ևս քաշուեցին և ճանապարհ տուին այն մարդուն, որին մի բոպէ առաջ ուզում էին սպանել:

Ամբողջ օրը յոյները յուզման մէջ էին, և նրանց մի նշանաւոր մասը պահանջում էր իր ձեռքը տալ մի առանձին տեղում պահած զէնքերը, որպէսզի ադատուեն այն մարդկանցից, որոնք միմիայն ինտրիզներով են զբաղուած և ստիպելին Իսպիլանտիին հեռանալ բանակից: Նրանք դաւաճաններից էլ վատ էին, իսկ պատերազմի ժամանակ դաւաճանն անհամեմատ վրտանդաւոր է թշնամուց: Հետեւալ օրը յուզմունքը հողերաւիանութեան դէմ ծայրայեղութեան հասաւ, և վերջապէս բոլոր զօրապետները հաւաքուեցին Պետրօ-բէյի մօտ և յայտնեցին, որ նա իշխանին վերադարձնէ, հակառակ դէպքում զործը բանակում եղած բոլոր հողերաւիանների սպանութեամբ կը վերջանայ:

Պետրօ-բէյը համաձայնուեց անձամբ գնալ Իսպիլանտիի ետևից, որովհետև իրօք նա երկիւղ էր կրում, թէ բանակից նրա հեռանալը վատ հետեանքներ կ'ունենայ: Նա իշխանին հասաւ Լէճնդարիայում, Մեզարպոլսի մօտ, և ամբողջ զօրքի, նոսնապէս և հողերաւիանութեան կողմից խնդրեց վերադառնալ: Սկզբում իշխանը չէր ուզում համաձայնուել, բայց յետոյ հասկացաւ, որ այսպիսի հանդամանքներում հետերիա վերադառնալը շատ ցաւալի բան կը լինէր, իսկ ընդհակառակը՝ բանակում տեղաւորուելով յաղթութիւնը տարած կը լինէր և կ'ապացուցանէր, թէ որպիսի քաղաքագէտ էր ինքը: Այդ պատճառով

չաբթի վերջին իշխանը վերադարձաւ և ցնծութեամբ ընդունուեց ամբողջ զօրքի կողմից, իսկ Հերմանը հրապարակով ներողութիւն խնդրեց նրանից, որովհետև իշխանն այդ բանը իր վերադարձի համար ամենաառաջին պայմանն էր դրել: Ի հարկէ՝ մի այդպիսի ստորութիւն անտանելի էր հպարտ արքեպիսկոպոսի համար, իսկ Նիկողայոսը ցնծութեան մէջ էր:

Անընդունակ, բայց աղնիւ Իպսիլանտիի թաղաւորութիւնը տեկ պարտոյ յուշիս ամիսը: Նա առաջուանից աւելի անվրձնական դարձաւ, կամքի հիւանդութիւնը, որը նրա բնաւորութեան գլխաւոր գիծն էր կազմում, առաջուանից աւելի խիստ կերպով երևան եկաւ: Տրիպոլիսը դեռ գիմանում էր, և Ահմէդ-բէյը թէպէտ հասկանում էր, որ անկարելի է իր զօրքով անցնել պաշարող խմբերի միջից, բայց անձնատուր լինելու մասին չէր էլ մտածում: Նա բաւական պաշար ունէր երեք ամսուայ համար, և Մահմէդ-Սալիկը բարձրաձայն յայտարարում էր, թէ ամբողջ Յունաստանում Տրիպոլիսից աւելի ապահով տեղ չը կայ:

Օրերն անցնում էին օրերի ետեից, և ազատութեան գործը վնասուում էր անհասկանալի յետաձգութիւններէից:

VIII

Օգոստոսի սկզբին տեղեկութիւն ստացուեց, թէ Մոնեմվաղիայի թիւրքերն առաջարկում են անձնատուր լինել շնորհիւ այն բանի, որ ծովի կողմից պաշարուած էին Սպեցիայի նաւերով, իսկ ցամաքի կողմից — ապստամբուած յոյների գնդերով: Անձնատուր լինելու հարցը իշխան Դիմիտրիոսն առաջարկեց ծերակոյտի քննութեանը, և այդ առթիւ բաղմաթիւ հակառակ կարծիքներ յայտնուեցին: Նիկողայոսն ու Պետրօ-բէյը կարծում էին, որ թիւրքերին հարկաւոր էր թոյլ տալ ազատ կերպով հեռանալ Զմիւռնիա կամ Փոքր-Ասիայի ուրիշ օրև էնաւահանգիստ, բայց այն պայմանով, որ նրանք զէնքերը վայր դնեն և վճարեն պաշարման ծախքերը, բացի դրանից՝ տաս հազար թիւրքական ոսկի, որը երեք մասի կը բաժանուէր — ցամաքային զօրքի, նաւատորմի և սղզային փանձարանի մէջ: Հերմանը իր կուսակիցներով հակառակեց դրան. Մոնեմվաղիան Պելոպոնէսի ամենահարուստ քաղաքներից մէկն էր, և նա առաջարկեց, որ նրա բնակիչներն իրանց ամբողջ զոյքի արժէքով գնեն իրանց կեանքը: Իչև. Դիմիտրիոսը հակառակ ծայրայեղութեան մէջ ընկաւ. նա ասաց, որ հեաերիան իր վրայ կ'առնի զինուորների ոռճկի անվրձար մնացած մասի հատուցումը, քանի որ նա իր ֆոնդը հէնց

զրա համար էր հաւարել. բայց իրանց ամբողջ հասանելիքն ստանալով՝ զինուորները չը պէտք է մտածեն աւարի մասին. իսկ Մոնեմվազիայի անձնատուր լինելու թեթև պայմանները լսելով՝ Տրիպոլիսի թիւրքերն աւելի սիրով կը համաձայնուէին քաղաքը յոյներին յանձնել: Վերջապէս վէճը մուշտակուէի փոխուեց, և ընդհանուր խառնաշփոթութեան միջոցին իշխան Դիմիտրիոսը հրամայական կերպով ստիպեց բոլորին լսել: Հերմանի հետ տեղի ունեցած գէպրից յետոյ նա հեղինակութիւն ունէր և երբ ձայնը բարձրացնում էր, բոլորը հնազանդում էին նրան:

—Ես ինքս անձամբ կը դնամ Մոնեմվազիա, —ասաց նա, — և իբրև զօրքի գլխաւոր-հրամանատար և նմանապէս հետերիայի կողմից նշանակուած փոխարքայ՝ կը բանակցեմ քաղաքը մեզ յանձնելու մասին: Ասում են՝ այնտեղի զօրքերը ձեռքից գնացել են. ես այնտեղից կը վերջնեմ մայնեցիներին՝ Պետրօ-բէյի առաջնորդութեամբ: Մենք այնտեղ նորից կը քննենք թիւրքերի զինաթափի պայմանները, բայց ես յոյս ունեմ, որ մեզ աւելի համեստ կը պահենք:

Սակայն ծերակոյտին շատ լաւ յայտնի էր իշխանի թոյլ ընաւորութիւնը, ուստի և գծուար էր նրան իր կողմը զբաւել, իսկ Իպսիլանտի վարմունքի հրամայական ձեր վերին աստիճանի կոմիկական էր թւում: Պետրօ-բէյը, որ միշտ պաշտպանում էր իշխանին, այս անգամ հարկաւոր համարեց հակաձանկ նրան.

—Ձերդ պայծառափայլութիւնն՝ ի հարկէ՝ չէ մոռացել, որ պաշարումն արդէն երեք ամիս շարունակուում է և որ դա բացառապէս ժողովրդի գործն է: Հետերիան ոչ մի մասնակցութիւն չ'ունի զրա մէջ: Այդ պատճառով պաշարողները միայն իրաւունք ունեն կարգադրութիւն անել քաղաքն ստանալու պայմանների մասին, և միմիայն նրանց կամ նրանց առաջնորդին պէտք է անձնատուր լինի քաղաքը:

Իշխանը զայրացաւ:

—Նշանակում է, ևս չեմ յունաց ամբողջ բանակի գլխաւոր-հրամանատարը:

—Դու ես զօրքերի գլխաւոր հրամանատարը, որն ստեղծել և պահում է հետերիան: Բայց Մոնեմվազիան պաշարող զօրագունդը մասնաւոր միջոցներով է կազմակերպուած և այն էլ քո նշանակուելուց շատ առաջ, իսկ երբ դու Մորէա եկար, այդ զօրագունդն ընդունեցիր քո հրամանատարութեան տակ, բայց ոչ մի օգնութիւն ցոյց չը տուիր նրան: Այնտեղից դամա-

քային զօրքերի զլիաւորը մեր ծերակոյտի անդամն է և հաւանականաբար կը կատարէ նրա կարգադրութիւնները:

—Աւելի շուտ, քան թէ փոխարքայի կարգադրութիւնները:

—Փոխարքան նոյնպէս ծերակոյտի անդամն է,—վրայ բերաւ Պետրօ-բէյը:

Իշխանը մտածումնքի մէջ ընկաւ:

—Լաւ,—ասաց նա վերջապէս,—ծերակոյտը կը վճռէ, թէ ում անուհով պէտք է զրաւել Մոնեմվազիան—էր, թէ իմ:

Առաջին անգամ յոյները մոռացան բոլոր վէճերը, և միաձայն որոշուեց, որ Մոնեմվազիան զրաւուի ծերակոյտի անուհով:

Յետոյ վերանորոգուեցին վիճաբանութիւնները քաղաքի զինաթափի պայմանների վերաբերմամբ, բայց քանի որ պաշարող զօրագնդի զլիաւորն անպայման կերպով աւելի հեղինակութիւն ունէր այդ հարցի առթիւ, քան թէ Տրիպոլիսը չըջապատող զօրքերի զօրապետները, ուստի Հերմանը Նիկողայոսից գերազանցելու նպատակով առաջարկեց, որ այդ հարցը վճռուի իշխանի և յունաց զօրագնդի զլիաւորի բարեհայեցողութեամբ: Նիկողայոսը յօժարութեամբ համաձայնուեց՝ դիտենալով, որ Պետրօ-բէյը կ'ուղեկցէ իշխանին, և ժպտալով աւելացրեց, թէ Հերմանի արդարացի նկատողութիւնն աւելի հոգեւոր իշխանաւորներին է վերաբերում:

Այդպիսով պատերազմի կենտրոնը տեղափոխուեցին Մոնեմվազիա, և ամբողջ օգոստոս ամսի ընթացքում յունաց զօրքի կէսն անգործ մնաց Տրիպոլի տակ, և իշխանի բացակայութիւնից օգտուելով՝ հողերականներն սկսեցին նորից խայտառակ զրպարտութիւններ տարածել: Հերմանը թէև դիտէր այդ ամենը, բայց մի կողմ էր քաշուել և բանակի ներքին գործերի մէջ չէր խառնուում, իսկ միեւնոյն ժամանակ ոչ մի ջանք գործ չէր դնում այդ գայթակղեցուցիչ ինտրիգները ոչնչացնելու համար:

Սակայն Նիկողայոսն այդ ամսին շատ գործեր ունէր, մի կողմից նա աշխատում էր, որ զօրքին պաշար հասցնելու գործը կանոնաւոր լինի, իսկ միւս կողմից նորակոչ զինուորներին էր կրթում: Նրա հմուտ ձեռքի տակ նոր կազմուած գնդերն սկսում էին կանոնաւոր կազմակերպութիւն ստանալ: Միւս զօրապետներն էլ հետևում էին նրա օրինակին, թէպէտ նրանցից շատերը ամենափոքր զաղափար անգամ չ'ունէին զինուորական գործի մասին: Սակայն չը նայելով որ յոյների մէջ քիչ-շատ կարգապահութիւն էր տարածուում, նրանց մէջ հետզհետէ աւելի ու

աւելի հաստատում էր այն համոզմունքը, թէ իշխանը բոլորովին անընդունակ է մի այբովիսի մեծ զօրաբանակի առաջնորդ լինելու համար: Մոնեմվապիս գնալուց ի վեր անհետացաւ նրա իշխանութեան վերջին ստուերը, իսկ երբ տեղեկութիւններ ստացուեցին այդ քաղաքում պատահած դէպքերի մասին, նա մի կատարեալ կոմիկական անձնաւորութիւն դարձաւ բոլորի աչքում:

Տրիպոլիսի շրջակայ գիւղերն այլևս չէին ենթարկուած յոյների գիշերային արշաւանքներին, որովհետև նրանք արդէն ամայացել էին, և թէ բանակի մէջ, թէ նրա շուրջը ոչ մի շարժում չէր նկատուում: Թիւրքերը գիտէին, որ անօգուտ էր յարձակում գործել Տրիկորֆոսի վրայ, իսկ յոյները մտապիւր չէին մինչև Պետրօ-բէյի վերադառնալը գնալ քաղաքի վրայ, և Միտսոսի գլխում պարապութիւնից մի անգամ զիշերը մի միտք ծագեց:

Թիւրքական նաևն այրելուց յետոյ միքանի օր շարունակ նրա սիրաը բոլորովին հանգիստ էր Զիւլէյմայի վերաբերմամբ, և երիտասարդին մխիթարում էր այն միտքը, թէ Աստուած կը պահպանէ իր սիրելուն, մինչև հնարուոր կը լինի տեսակցուել նըրա հետ: Երկար ժամանակ նա մինչև անգամ չէր էլ մտածում, թէ Զիւլէյման պաշարուած քաղաքումն է, որը վաղ թէ ուշ պէտք է անձնատուր լինի, և այն ժամանակ ամենայն հաւանականութեամբ՝ կողոպտման և բռնաբարութեան նոյնպիսի տեսարաններ տեղի կ'ունենան, ինչպէս և Կալամատայում, կամ թէ յարձակում կը լինի և դրա հետ էլ անխուսափելի կոտորած փողոցներում: Մինչև իսկ վերջին դէպքում էլ Զիւլէյման կարող էր վտանգից խուսափել, եթէ կատարէր նրա խորհուրդը և յունարէն ասէր պաշարողներին, թէ ինքը նրանց հայրենակիցն է: Բայց այժմ, երբ անց էին կացել պատերազմական հողին յուզող ընդհարումները թիւրքերի հետ, և հասել ճանձրացուցիչ անդործութիւնն ու վէճերը հոգևորականների հետ, նա սկսեց հոգեպէս տանջուել՝ մտածելով այն վտանգների մասին, որոնց կարող էր ենթարկուել Զիւլէյման: Իսկապէս քաղաքի պաշարման ժամանակ ապահովութեան մասին խօսք անգամ լինել չէր կարող: Մի պատահական գնդակ կամ մի զայրացած յոյն կարող էին ամեն ժամանակ սարսափելի կոտորած առաջ բերել: Կարող էր նաև հրդեհ ծագել քաղաքում, և դնրձեալ մարդկային զոհերն անխուսափելի էին:

Յիշած զիշերը Միտսոսի երկիւղն աւելի որոշ կերպարանք ընդունեց: Նրա աչքերի առաջ պատկերանում էր գարհուրելի աղէտների մի շարք, որոնց մէջ զլխաւոր զոհը Զիւլէյման էր:

Նա դուրս եկաւ թարմ օդը և յուսահատ կերպով աչքերը յանկն քաղաքային պարսպի վրայ բարձրացած հինգ թէ վեց մեծ տներին, և դրանց իւրաքանչիւր պատուհանում նրան կրեւծ էր բանտարկութեան մէջ հայրամայ կղամ Ձիւլէյմայն:

Այս չարագուշակ միրաժները հեռո՞հեռէ աւելի տաժանելի էին դառնում. վերջապէս նա չը համբերեց և առանց որոշ հաշիւ տալու իրան, թէ ինչ է անում, վաղեց արտաքին խրամատի միջով, որի խորութիւնը հինգ ասնաչափ էր միայն, շտապով անցաւ այնտեղից և դեռ չէր սթափուել, երբ իրան միւս կողմը դառաւ:

Ո՞ւր էր գնում Միտասոր: Այդ բանը լաւ յայտնի էր նրա սրտին: Երիտասարդն այսպէս թէ այնպէս պէտք է դանէր նըրան, որը կեանքից էլ թանկ էր իր համար: Աւելի յարմար լինելու համար նա հանեց կօշիկները և սկսեց բոբիկ անցնել բազալի ժայռերի միջով՝ հէնց նոր կրկնքի կրեսը բարձրացած լուսնի արծաթափայլ ճառագայթների տակ: Մի լեռնային հեղեղատի հասնելով՝ նա կանգ առաւ, որ իր այրուող մարմինը թարմ ջրով զովացնէ: Վերջապէս սկսեց վազել քաղաքի պարիսպների առաջ սարածուած դաշտավայրի միջով և կրբ արդէն քաղաքի մօտ էր, պառկեց մի ձիթենու տակ, որ իր դրութեան վրայ մի քիչ մտածէ:

Մարտկոցներով լցուած այդ պարիսպները կրեւծ էին ուղղակի նրա դէմուդէնը, դաշտավայրից քսան ասնաչափ բարձրութեան վրայ: Նբանցից յիտուն քայլ հեռու պարսպի մէջ մի ընդարձակ խոռոչ կար, որի վրայ բարձրանում էր մի քանի տուն՝ փոքրիկ, կրկաթէ ձողերով պաշտպանուած պատուհաններով: Այդ ընկալարաններին ծածուկ մօտենալով՝ Միտասոր կանաչի ուրախ ձայներ լսեց և մտածեց, որ այնտեղ կրեի անուանի թիւրքերի հարեմներն են դառնում:

Երիտասարդը սողալով շարունակեց իր ճանապարհը, մինչև կրկին հասաւ քաղաքային պարսպի շարունակութեանը: Ապա դարձեալ վերադարձաւ դէպի թիւրքական տները, որովհետև այնտեղ իրան մօտ էր զղում Ձիւլէյմային: Նա նորից պառկեց հորեան քարածայտի ստուերի տակ: Լուսինը ծածկուեց ամպերի ետեւը, իսկ աներում հեռո՞հեռէ չքայաւ լոյսը, և ձայները լսեցին:

Անցաւ կէս ժամ, և յանկարծ քաղաքային պարսպի վրայ կրեաց մի թիւրք, որը շարժում էր մի ինչ որ սպիտակ բան ձեւորում: Միտասոր անխօս մօտեցաւ այդ տեղին: Թիւրքը ցած ձայնով ասաց.

—Ո՞ւշ է: Ահա ստորադրուած թուղթը,— և նա ձեռքի

Թուղթը գցեց գետնին, յետոյ ետ դարձաւ ու շտապով անհետացաւ:

Միտոսը վեր առաւ Թուղթը և դրաւ գրպանը՝ տարակուսած, թէ այդ ինչ պէտք է լինի: Դեռ ձեռքը գրպանից դուրս չէր հանել, երբ տների մէկից, որտեղ լոյս էր երևում դեռ, մի քնքոյշ երգեցողութիւն լսուեց: Երիտասարդը չէր հաւատում իր ականջներին: Չայնը Ձիւլէյմայինն էր, և նա երգում էր զիննգործների երգը:

Այդ իսկ բողբոջներն պատուհանի առաջ ոտից մինչև գլուխ սպիտակ շորեր հագած մի երիտասարդ աղջիկ երեաց: Միտոսն իսկոյն սկսեց ձայնակցել երգեցողութեանը:

—Միտոսս,—լսուեց պատուհանից:

—Ես այստեղ եմ. այդ դ՞ուրս ես, աղաւնեակս:

—Վերջապէս ես քեզ տեսնում եմ, սէ, ես քեզ բոլորովին չեմ տեսնում,—չարունակեց Ձիւլէյման երջանիկ, ուրախ ձայնով.—ինչպէս ես:

—Լաւ եմ, ամեն ինչ լաւ է, եթէ միայն մենք տեսնուենք իրար հետ: Ի՛հ, դա էլ շուտով կը լինի, վիճյ է Աստուած, շատ շուտով:

Ձիւլէյման գլուխը դուրս հանեց պատուհանից:

—Այստեղ մի մնար, ես էլ չեմ կարող մնալ այստեղ: Այս պատուհանը նախասենեակումն է, և ինձ կարող են շրջանել: Հեռացիր, թանկագինս, բայց մենք շուտով, շուտով կը տեսնուենք, այնպէս չէ, և այն ժամանակ գուցէ ինձանից մի պարզեւ էլ ստանաս...

—Պարգեւ,—կրկնեց Միտոսը զարմացած, բայց յետոյ հասկանալով թէ գործն ինչու՞ն է, բացազանչեց.—ա՛, սիրելիս, սիրելիս...

—Այն, իմ Միտոսս,—պատասխանեց Ձիւլէյման,—բայց ինձ տանք այստեղից. այս քաղաքը շուտով անձնատուր կը լինի:

—Անկասկած, բայց մի մոռանար, որ երբ կը գայ ըտ ազատութեան օրը, պէտք է դուրս գաս յոյների մօտ և ասես՝ «ես ձեր հայրենակիցն եմ»: Այն ժամանակ կ'ազատուես ամեն վտանգից:

—Մնաս բարով, սիրելիս,—արտասանեց երիտասարդ աղջիկը և անհետացաւ մթութեան մէջ:

Միտոսը եօթերորդ երկնքումն էր և ուրախութեամբ լցուած՝ վերադարձաւ բանակը: Անկողին մտնելիս միայն նա չիչեց գրպանում եղած թղթի մասին, կրակ արաւ և կարգաց հետեւալ յունարէն գրուած տոմսակը.

«Աբդուլ-Ահմէդը խոստանում է վճարել Կոստանդին Պար-

պիրոպուլօին 200 թիւրքական ոսկի այն պայմանով, որ նրա և նրա հարեմի գրութիւնն ազանովուի բոնաբարութիւնից: Տրիպուլի պաշարումը վերջանալիս՝ վերոգրեալներին անվտանգ ապաստարան տեղափոխելու համար՝ բացի դրանից կ'աւելացուի 10 ոսկի իւրաքանչիւր հոգուն:

«Արդու-Ահմէյ, նախկին նահանգապետ Արգոսի»:

Միտոսը կարգաց մինչև վերջը, կրակը հանդցրեց և երկար մտածում էր այդ տարօրինակ թղթի վրայ: Ամենից առաջ նա զգուանք զգաց, որ հինգհարիւր հոգուց կազմուած մի զօրախմբի յոյն առաջնորդը շահասիրական բանակցութիւն էր ըսկուել թշնամիներին հետ, բայց յետոյ մի անընկճելի դայթակղութեան ենթարկուեց: Նրա համար այդ թուղթը Զիւլէյմայի ազատութիւնն էր նշանակում, և նա այդ ազատութիւնն ազանովելու համար ամեն բանի պատրաստ էր: Դարձեալ, ինչպէս թիւրքական նաւն այրելու գիշերը, նրա սէրն ու պարտականութիւնը օրհասական կռիւ էին մղում միմեանց դէմ: Բայց և այժմ, ինչպէս այն ժամանակ, չը նայելով որ նրա սրտից արիւն-արցունք էր հոսում, Միտոսը պարսականութիւնն ընտրեց:

Ուստի նա վեր թռաւ, հագաւ շորերը և գնաց Նիկողայոսի մօտ՝ սրտելով ամեն ինչ ասել նրան: Դուրս գալով իր վրանից, նա մթութեան մէջ լսեց պահապանի ձայնը.

—Ո՞վ է դալիս:

Այդ բողէին խրամատի եղերքին երեսց մի մարդկային կերպարանք. Միտոսը ճանաչեց Պարպիրոպուլօին, որը կամայուկ սկսեց խօսել պահապանի հետ:

—Յիսուն ոսկի,—լսուեց Պարպիրոպուլօի ձայնը:

—Իսկ երբ պէտք է վճարուի,—հարցրեց հրապուրուած պահապանը:

Տրիպուլի անկման օրը:

Միտոսը սրտից միջամտել այդ ամօթալի սակարկութեանը և մօտենալով խօսակիցներին՝ ասաց.

—Լսիր, ընկեր,—արտասանեց նա՝ պահապանին դառնալով,—մի համաձայնուիր և հարցրու, թէ ինչո՞ւ էր գնացել խրամատի միւս կողմը:

—Քեզ ինչ, լակնոտ,—բարկութեամբ ասաց Պարպիրոպուլօն:

Պահապանը կասկածոտ հայեացքով մերթ մէկին, մերթ միւսին էր նայում և վերջապէս ասաց.

—Նա ինձ յիսուն ոսկի խոստացաւ:

—Յիմնր,—պատասխանեց Միտոսը, —եթէ չը լսես ինձ,

ևս քեզ մի այնպիսի քոթակ կը տամ, որ փողերի մասին ըտլորովին կը մոռանաս:

—Գնա՛ ըս բունը, լակնո՛ւ,—բացադանչեց Պարպիրոսուլուն,—թէ չէ վաղը կը գանդատուեմ քեզ վրայ անհնազանդութեանդ համար:

—Լաւ,—ասաց երիտասարդը ծիծաղելով,—այդ վաղը կը լինի, իսկ այժմ դեռ այսօր է: Միտդ պահիր, բարեկամ,—աւելացրեց նա՝ պահապանին դառնալով,—փորձանքի մէջ կ'ընկնես, եթէ չը լսես ինձ:

Նա վերադարձաւ իր վրանը, որպէսզի ժամանակ տայ Պարպիրոսուլուն հեռանալու, որովհետեւ չէր ուզում, որ մէկը տեսնէր իր գիշերային այցելութիւնը Նիկողայոսին: Հինգ րոպէ յետոյ Միտոսը ձանադարձ ընկաւ և համներով Նիկողայոսի բընակարանը՝ դուռը բաղխեց:

—Ո՞վ է,—լսուեց Նիկողայոսի ձայնը:

—Ես եմ, Միտոսը, և ինձ հարկաւոր է իսկոյն տեսնել քեզ, մօրեղբայր:

—Սպասիր մի րոպէ:

Եւ ներսից եկող ձայնը ցոյց էր տալիս, որ նա կրակ էր անում:

—Ես չեմ կարող կրակ վառել,—ասաց նա մի րոպէ յետոյ,—բայց այդ ոչինչ, ներս մտիր և նստիր մահճակալի կամ վառօդի արկղի վրայ: Դէհ, սաս շուտով, ի՛նչ կայ:

—Ահա թէ ինչ,—պատասխանեց երիտասարդը՝ թիւրքից ստացած թուղթը նրան տալով,—սրա մէջ ասուած է, թէ Պարպիրոսուլուն երկու հարիւր սակի կը ստանայ Տրիպոսի անկման օրը Աբդուլ-Ահմէդի և նրա ամենեցոյ կեանքն ապահովելու համար:

Նիկողայոսը մտածմունքի մէջ ընկաւ, իսկ յետոյ արասասանեց.

—Դե՛հ, Բայց դու ձրտեղից ձեռք բերիր այս թուղթը:

—Իսկոյն կը յայննեմ:

Բայց երիտասարդը չը գիտէր, թէ ինչպէս սկսէր իր խոստովանութիւնը:

Նիկողայոսն աշխատում էր նրան սիրտ տալ:

—Ես լսում եմ: Ո՛չ, սպասիր, մի ինչ որ մարդ է գալիս: Այդ՝ իսկ րոպէին լսուեց դրան ձայնը, և Նիկողայոսը հարցրեց.

—Ո՞վ կայ այդտեղ:

—Խորեմիսը,—պատասխանեց մի ձայն,—պահապանը:

—Ի՞նչ կայ:

— Ես երկու ժամ պահապան էի կանգնած. երեսուն րոպե առաջ կապիտան Պարպիրոսյան խրամատի միւս կողմից եկաւ: Անհրաժեշտ եմ համարում այդ մասին յայտնել քեզ:

— Կապիտանը բացատրեց, թէ որտեղ էր:

— Ո՛չ:

— Ներս մտիր, Խորեմիս: Նա քեզ փող առաջարկեց:

— Ո՛չ, — պատասխանեց պահապանը:

— Դու լաւ արիր, որ ինձ ասացիր այդ: Կարող ես գնալ: Իսկ դու, Միտոս, — աւելացրեց Նիկողայոսը՝ երիտասարդին գառնալով, երբ պահապանի ոտնաձայները լռեցին մթութեան մէջ, — պատմիր, թէ ինչպէս ձեռք բերիր այս թուղթը:

Միտոսն անկեղծօրէն բաց արաւ նրա առաջ իր զազանիքը:

— Օ՛, մօրեղբայր, — ասաց նա, խոստովանութիւնը վերջացնելով, — ապահովիր նրա կեանքը Տրիպոլի անկման օրը: Աշխարհիս երեսին չը կայ մի այդպիսի գեղեցկուհի, և ես չեմ կարող ապրել, եթէ նրան մի որևէ բան պատահի:

Նիկողայոսը բաւական ժամանակ լուռ էր. իսկ յետոյ հարցրեց.

— Ե՛, իսկ երբ դու թիւրքական նաւն այրեցիր, քո մրտաբոյ չ՛անցնու, թէ նա կարող էր ուղեորների մէջ լինել:

— Ես համոզուած էի զբանում և միայն աղէտից յետոյ իմացայ, որ նա նաև լիբայ չէր:

— Թող Աստուած ներէ քեզ, — խօսեց Նիկողայոսը՝ Միտոսսի ձեռքից բռնելով, — իսկ դու մեզ ներում ես:

Երիտասարդն այնպէս էր յուզուած իր խոստովանութիւնից, որ յանկարծ լաց եղաւ:

— Ի՞նչ պատահեց մեր կորիւնին, — քնքոյշ ձայնով ասաց Նիկողայոսը. — մի վշտանար: Դու լաւ լուր բերիր և տեսար քո գեղեցկուհուն: Հանդարտուիր, երբու՞մ եմ քեզ բոլոր սրբերի անունով, որ նչ հիւանդութիւնը, նչ վէրքերը, նչ փառքը, ոչ մի բան, բայց պատուից, չեն արդելիլ ինձ ապահովելու նրա գրութիւնը:

Միտոսը պինդ սեղմեց Նիկողայոսի ձեռքը, բայց ոչ մի խօսք չը կարողացաւ արտասանել:

— Իսկ դու էլ քո կողմից պէնք է խոստանաս, — շարունակեց Նիկողայոսը, — որ այլևս առանց թոյլաւութեան գուրս չես դալ բանակից: Այդպիսի անկարգութիւնների պատիժը բանակից արտաքսելն է, և վաղն այդ անպիտանը կը վռնդուի այստեղից. նա արդարացրեց հողերականների ամբաստանութիւնը և անարգեց մեզ բոլորիս: Դէ՛հ, այժմ գնա քնելու, Միտոս: Դու

քաւեցիր քո յանցանքը՝ անարժան յոյնի դաւաճանութիւնը երևան հանելով:

Հետեալ օրը Պարպիրոպուլօին հրապարակով արտաբանեցին բանակից, իսկ յետոյ Միտսոսը ծածուկ այցելեց Խորեմիսին և բացատրեց նրան, թէ լաւ էր արել, որ մատնել էր Պարպիրոպուլօին, որն առանց այդ էլ կը պատժուէր:

Մոնեմիսիացի անձնատուր լինելու լուրը լիքն էր վշտալի և ուրախառիթ, ողբերգական և ծիծաղաշափ զիպուածներով: Իշխան Դիմիտրիոսն ըստ երևոյթին չը նայելով ձերակոյտի վճռին՝ պայմանագիրն իւր անունով էր ստորագրել, իսկ երբ թիւրքերը քաղաքից դուրս էին գալիս նաւերը մտնելու համար, զայրացած մայնեցիները սպառնալիքներով ընդունեցին նրանց, որովհետև անձնատուր լինելու պայմանագիրն առանց ձերակոյտի ներկայացուցիչների ստորագրութեան անսարտաղիր էին համարում: Ընդհարում անդի ունեցաւ, որի ժամանակ հինգ թիւրք սպանուեցին և մի քանի տներ կողոպտուեցին: Մոնեմիսիական անբարեկամող հանդամանքներում անձնատուր եղաւ: Զօրքն ու նաւատորմիցը կասկածով էին վերաբերւում միսեանց, իսկ զինուորները մեղադրում էին սպանութիւն թիւրքերի հետ շահասիրական յարաբերութիւն ունենալու համար. վերջապէս վէճ ծագեց այն բանի համար, թէ ո՞վ պէտք է բարձրացնէր յունական դրօշակը անձնատուր եղած քաղաքում: Մի բանում միայն բոլորն էլ համաձայն էին—իշխան Դիմիտրիոսին արհամարհելու մէջ: Առաջ բոլորին էլ յայտնի էին նրա թոյլ բնաւորութիւնն ու անըզունակութիւնը դէպի գինուորական գործը, բայց այժմ, երբ նա ձերակոյտի վճիռն անվայել կերպով խախտեց, մի այնպիսի խայտառակութեամբ ծածկեց իւր անունը, որ այդ բոլորէից, գործնականապէս ասելով, վերջացած էր նրա դերը յունաց յեղափոխութեան գործում:

Իհարկէ՝ քաղաքի անձնատուր լինելու պայմանագիրը վատ էր կազմուած, և թիւրքերն ազատ կերպով հեռացան՝ առանց մի գրօջ վճարելու: Եթէ որ այդ միևնոյն պայմանով թիւրքերը յանձնելու լինէին Մորէայի միւս ամրոցները, այն ժամանակ հեաերիայի գանձարանը բոլորովին կը սնանկանար: Այդպիսով չընայած որ բռնաբարութեան և կողոպտման յետագայ դէպքերը բարոյական դատապարտութեան արժանի են, սակայն պատերազմն առանց աւարառութեան չէր կարող շարունակուել, իսկ յաղթութեան բոլորէին յոյների գործած անդթութիւնը կարելի էր վերադրել վրէժխնդրութեան ծարաւին՝ դարաւոր բռնութեան լծի փոխարէն:

Մայնեցիների զօրագունցը շարունակում էր գրաւել Մո-

նեմվազիան, Պետրո-բէյր նոր զինուորներ էր ժողովում Տրիպոլի վրայ յարձակում դործելու համար, իսկ իշխան Դիմիտրիոսը իր ազատ ժամանակը, այսինքն քսանեչորս ժամ մի օրուայ մէջ՝ նուիրում էր քաղաքային պարսպները կարմիր կտորով զարդարելուն, երբ յանկարծ տեղեկութիւն ստացուեց Նալարինի արևմտեան ծովափի նաւահանիդատներէց մէկի անկման մասին: Իսպիլանտին այնտեղ ուղարկեց մի ոչ զինուորական պաշտօնեայ իբրև իր և ծերակոյտի ներկայացուցիչ: Այս անարժան հայրենասէրն իր հետ վերջրեց աւարառունների մի աւազակախումբ: Նաւարինի այս գէպքն ընդմիշտ մի նախատական բիծ դրաւ յոյների վրայ: Բերդապահ զօրքը զէնքերը վայր դրած՝ զեռ քաղաքից դուրս չէր եկել, երբ Պելուպոնէսի ծերակոյտի ներկայացուցիչն այրեց նրա անունով իր ստորադրած զաշնագիրը և կոտորածի նշան տուաւ: Ոչ մի թիւքը կենդանի չը մնաց: Կանանց մերկացրին, և նրանք իրանց նախատինքը ծածկելու համար ծոյն էին թափւում, որտեղ ձկնկուլների նման զնդակահար էին անում նրանց. երեխաներին խլում էին մայրերի ձեռքից և մաս-մաս կտրատում. տղամարդկանց կախում էին իրանց բնակարանների դռներից և սարսափելի տանջանքների ենթարկում: Մի մահմէդականի առաջարկեցին ընտրել մահ կամ քրիստոնէութիւն, և երբ ընտրեց վերջինը, նրան խաչեցին: Մի ժամուայ ընթացքում կատարուեց այս խայտարակ սճիրը, իսկ յետոյ Սպեցիայի երկու նաւեր ամեն տեսակ աւարով բեռնաւորուած՝ ծովը դուս եկան:

IX

Սեպտեմբերի սկզբին մայնեցիների զօրադունդը Պետրոբէյր և իշխանի հետ վերադարձաւ Տրիպոլի չրջակայքը: Իսպիլանտին այժմ հակում էր հողերականների կուսակցութեան կողմը, որովհետև զօրքի վարմունքը իր համար անձնական անպատուութիւն էր համարում: Այդ բանը Հերմանին ձեռնտու էր, և նա սկսեց միջոցներ որոնել, որպէսզի իշխանին վերադարձնէ այն իշխանութիւնը, որից նա իր բնաւորութեան թուլութիւնից զրկուել էր, և միևնոյն ժամանակ զինուորների աչքում ականաւոր զօրապետների վարկը զցէ:

Զրպարտութիւն զրպարտութեան ետեից էր գալիս, և դա աւելի հեշտ էր այն պատճառով, որ իսկութեան վրայ էր հիմնուած: Մի ուրիշ յոյն կապիտան էլ բռնուեց պաշարուածների հետ շահասիրական յարաբերութիւն ունենալու մէջ: Ստոյգ էր նաև այն բանը, որ յոյները ուտեստ էին վաճառում պաշա-

բուածներին, և մի անգամ գիշերը մի թիւրք բռնուեց, որը իր կեանքը փրկելու համար յայտնեց, թէ ինչ կերպով քաղցած թիւրքերը հաց և միս են ստանում զբսից: Այս բանը յայտնուելուց յետոյ Պետրօ-բէյը յայտարարեց, որ եթէ մի ուրիշն էլ բռնուի, անինայ կերպով զնդակահար չիր լինի, իսկ գիշերային պահապանների թիւը կրկնապատկուեց: Յայտնի չէ, այս միջոցների, թէ անպիտանների ճարպիկութեան կամ դաւադրութեան սարածուած լինելու շնորհիւն էր, որ դաւաճաններ այլևս չը բռնուեցին, թէպէտ և պաշարն առաջուայ նման զնոււմ էր քաղաք. և վերջապէս Հերմանը կանգնեց ծերակոյտի մէջ և բարձր ձայնով բոլոր սպաներին մեղադրեց դաւաճանութեան մէջ:

—Պաշարումը շարունակուում է,—ասաց նա,—բայց արդեօք ինչ միջոց է ձեռք առնուած աւարտելու համար: Յանուն հայրենասիրութեան ևս պատասխանում եմ—նչինչ: Ո՞ւմ օգտի համար են պահում այստեղ մարդկանց՝ զրկելով նրանց զործից, քանի որ խաղողը հասնում է, իսկ ոչ ոք չը կայ, որ հաւարէ այն: Թռչունները կոցահարում են պտուղները, իսկ աշխատաւորները փչանում են այստեղ շան բնիւում, արեգակի կիզող ճառագայթների տակ կամ դժուարատար զօրախաղերի մէջ: Գուցէ այդ բանն օգուտ է բերում հոգևորականներին: Ո՞չ, և կեղեցիները դատարկ են, տասանորդի հաւաքումը յետաձգուած է: Իշխան Դիմիտրիան է պահում զօրքն այս բարձրութիւնների վրայ: Դժուար չէ պատասխանել, թէ ով էր բանակցութիւնների մէջ մտել Աբգուլ-Ահմէդի հետ նրա շահերը պահպանելու համար: Զօրապետներից մէկը: Ո՞վ էր, որ անցեալ շաբաթ դաւաճանութեան մէջ բռնուեց: Մի ուրիշ զօրապետ: Ո՞վ է այժմ ուսելիզէն վաճառում պաշարուածներին: Զօրապետները: Նշանակում է՝ ում է օգուտ բերում այս պաշարումը, որի միջոցին թիւրքերը երջանկութիւն են վայելում: Զօրապետներին: Եւ սա կոչուում է պաշարում: Ոչ, սա Տրիպոլիի շուկան է, և առևտրականները—զօրապետներն են: Մանաւանդ նշանաւոր է նրանցից մէկը: Նա կարող էր վից շաբաթ առաջ աւարտել այս պաշարումը: Ազնուատե՛մ իշխանը մեր կողմն է, և ևս պարս եմ համարում բաց անել նրա աչքերը: Նրանից միայն կախում ունեն զօրապետները, բայց ամբողջ օգոստոսին իշխանըն այստեղ չէր, և Նիկողայոս Վիդալիսն էր իշխում անսահման: Ուստի եթէ նա ազնիւ մարդ է, ևս հարցնում եմ, ինչո՞ւ չը փորձեց քաղաքը զրաւել:

Այս ճառի ընթացքում մի քանի անգամ տրտունջ լսուեց զինուորականների մէջ, բայց Նիկողայոսը ձեռքը բարձրացնելով՝ ստիպում էր նրանց լուր: Իսկ ինքը ժպտաղէմ լսում էր, և երբ

Հերմանն սկսեց իր աղնուլթեան մասին խօսել, նա բարձր ծի-
ծաղեց: Վաղուց արդէն նա նախատում էր ինքն իրան, որ այն-
պէս չէր վարւում, ինչպէս հարկն էր և այժմ որոշեց վճռական
քայլ անել: Հերմանը բացարձակ էր խօսում, ինքն էլ նոյն ձե-
ւով կը պատասխանէ նրան: Նա կամացուկ կանգնեց, խօսք
ինդրեց իշխանից և խօսեց հանդարտ կերպով.

—Վերջապէս արքեպիսկոպոսը բացարձակ խօսեց, և թէ-
պէտ ևս նրա հետ միշտ բացարձակ կերպով էի վարւում, բայց
նա այս առաջին անգամն է, որ այդ ընթացքը բռնեց: Նա հա-
ւատացնում է, թէ ոչ մի միջոց ձեռք չէ առնուած պաշարունակ
աւարտելու համար, բայց այդ,—ես վստահանում եմ ասել ի
լուր ամենեցուն,—սուտ է: Ո՛չ, կը ինդրէի քեզ նստել,—աւե-
լացրեց նա, երբ Հերմանը վեր թռաւ անդից,—ես քեզ լսում
էի, իսկ այժմ կը ստիպեմ, որ դու էլ ինձ լսես: Կրկնում եմ, որ
ինչ որ դու ասացիր պաշարման մասին,—սուտ է և դիտաւո-
րեալ սուտ: Նա ինքը զիտէ այդ: Օգոստոսին նա այստեղ էր և
զիտէ, որ ես բոլոր ժամանակ զբաղուած էի մարդկանց սովորե-
ցնելով, և եթէ որ նա գոնէ մի վոքը դադարաւ ունենար զի-
նուորական գործի մասին, այն ժամանակ կը հասկանար, որ
այդ վարժութեան շնորհիւ նրանք այժմ սքանչելի զինուորներ
են դարձած: Նա մեզ ասաց, թէ այդ մարդիկ այստեղ մնալով՝
իրան ոչ մի օգուտ չեն տալիս. մասամբ դա ճիշտ է, բայց ոչ բոլոր-
ովին, որովհետև նրանց համար մեծ շահ է, եթէ Յունաստա-
նըն ազատուի, իսկ այստեղ մնալով նրանք հայրենիքի ազատու-
թեան գործին են ծառայում: Նշանակում է՝ այդ մարդկանց ա-
մենամեծ շահը, ես առաւել նրանց պարտականութիւնը—մնալն
է: Ապա Հերմանն ասում է, թէ հողերականները ոչ մի շահ
չ'ունեն բանակում մնալով: Ուրեմն ինչու են մնում և երկպա-
ռակութիւն պետւում մեր մէջ: Յանուն Աստուծոյ երգուեցնում
եմ նրանց հեռանալ: Թող գնան և հաւաքեն իրանց համար այն-
պէս թանկագին տասանորդը: Ոչ ոք չի արգելիլ նրանց: Բայց
նրանք մնում են. նշանակում է դրա մէջ է նրանց շահը: Չեն
մտածում արդեօք ստանալ սպասելի աւարի նշանաւ որ մասը:
Նրանց պետք, ինքն արքեպիսկոպոսը՝ այդ նպատակով չէ եկել
այստեղ, որ աւարի կէսը եկեղեցու համար պահանջէ, միւս
կէսը թողնելով ազգային դանձարանին, իսկ հայրենիքի համար
կուռղներին—ոչինչ: Այո՛, նա ինքն առաջարկեց ինձ և Պետրո-
բէյին այդպէս վարուել և հէնց այդ նպատակով էլ նա ու բո-
լոր հողերականներն սպասում են աւարը բաժանելու բոպէին՝
յուսալով եթէ ոչ կէսը, գոնէ մի նշանաւոր մասն ստանալ:

Նիկողայոսը մի յաղթական հայեացք գցեց Հերմանի վրայ,

որը քաթանի նման սպիտակ էր և ամբողջ մարմնով զոդում էր զայրոյթից:

—Դու կարող ես ինձ ատել, որքան կամենաս,—բայց զանչեց Նիկողայոսը՝ վերջապէս սաստիկ զայրացած,—բայց ես քեզանից չեմ վախենում: Եթէ դու ազնուութեամբ ես գործում, հապա ուրեմն ես ինչո՞ւ չը յայտնեմ քո գաղտնի նպատակները. և թէ ոչ, ժամանակ է դիմակը վայր դնել երեսիցդ:

Հերմանն շտապով վեր թռաւ:

—Դա զգուելի զրպարտութիւն է,—զոչեց նա շնչասպառ: Բայց Պետրօ-բէյն առանց տեղից բարձրանալու՝ արտասանեց ցած, բայց այնպէս, որ բոլորը լսեցին.

—Բոլորը, ինչ որ ասաց Նիկողայոսը, ճիշտ է: Ես ինքս եմ լսել:

—Նստիր, արքեպիսկոպոս,—ասաց իշխանը,—Նիկողայոս վերջալին, շարունակիր:

—Այս մարդը,—սկսեց Նիկողայոսը,—հաւատացնում է, թէ այստեղ դատապարտելի առետուր է տեղի ունենում թիւրքերի և զօրապետների մէջ. Մեզ բոլորիս՝ դժբախտաբար յատնի է, որ դրա մէջ մի կտոր ճշմարտութիւն կայ: Երկու ամիս սրանից առաջ այդ բանը դեռ ես գոյութիւն չ'ունէի, իսկ նա իր մարդկանցով միևնոյնն էր ասում: Ես ձեզ հարցնում եմ, ազնուութիւն էր այդ կերպ վարուել: Պարզ չէ արդեօք դրա նպատակը: Խռովութիւն ցանկելով զինուորների և զօրապետների մէջ՝ նա ուզում էր բոլոր աւարը իր զրպանը լցնել ի փառս Աստուծոյ: Բայց նրա բոլոր ջանքերն աջողութիւն չ'ունեցան, և երբ իշխան Դիմիտրիոսը հեռացաւ այստեղից, տէրտէրներն այնքան էլ բարի համբաւ չէին վայելում բանակի մէջ: Վերջիվերջոյ արքեպիսկոպոսն առանձնապէս ինձ վրայ յարձակուեց: Նրա խօսքերին նայելով՝ ես կարող էի յարձակուել քաղաքի վերայ օգոստոսին, երբ որ յարմար դատէի: Դա էլ կեղտոտ սուտ է, բայց զուցէ ոչ դիտաւորեալ, քանի որ արքեպիսկոպոսը ոչ մի զաղափար չ'ունի զինուորական գործերի մասին: Բացի այն, որ անհրաժեշտ էր վարժեցնել զինուորներին, ևս Պետրօ-բէյն խօսք էի տուել առանց մայնեցիներին յարձակում չը գործել, որոնք նրա հետ Մոնեմիլաղիայում էէին: Ասա՛, Պետրօ-բէյ, այդպէս չէ:

—Այդպէս է,—պատասխանեց զլիսաւոր-հրամանատարը:

—Իսկ այն բանի վերաբերմամբ, թէ ես օդուտ էի քաղում յարձակման յետսձգութիւնից,—շարունակեց Նիկողայոսը,—թո՛ղ արքեպիսկոպոսը իր զրպարտութեան արկայոյցները ներկայացնէ: Խօսիր, Հերման, ևս պատասխանի եմ սպասում:

Տիրեց մեռելային լռութիւն: Հերմանը ոչ մի խօսք չ'ար-

տասանեց: Միայն նրա աչքերը կայծեր էին արձակում, որոնք աւելի պերճախօս էին, քան թէ խօսքերը:

—Եթէ նա մտրում հաւաքում է իր ապացոյցները,—արտասանեց Նիկողայոսը,—ուրեմն ես դեռ կը սպասեմ:

Բայց եւ այնպէս Հերմանը լուռ էր:

—Դուք տեսնում էք,—բացադանչեց վերջապէս Նիկողայոսը,—որ այդ բոլորը սուտ է: Ինձ հրապարակով մեղադրեցին սարսափելի սճրագործութեան մէջ եւ չեն կարող մի ամենափոքր ապացոյց ներկայացնել հաստատելու համար: Բայց ինչո՞վ կը վերջանայ այս: Այս մարդը չի գղջալ իր արածի վրայ եւ ներողութիւն չի խնդրել ինձանից, թէպէտ ես չեմ էլ ուզում ներել նրան: Փառք Աստծու, ինձ համար մի ուրիշ ելք կայ: Ինձ զգուցրին բոլոր ինտրիզներն ու վէճերը, բոլոր ամբաստանութիւններն ու զրպարտութիւնները: Ես այլիս մտադիր չեմ համբերել զբանց: Երդուում եմ Աստծու անունով, որ իմ նպատակն է միայն հայրենիքի ազատութիւնը, եւ ես չեմ կարող ծառայել այդ սուրբ գործին՝ անդադար վիճարանելով այն մարդկանց հետ, որոնք չեմ յարգում: Մի մարդ այստեղ մի անգամ ասաց, թէ կը հեռանայ, բայց չը հեռացաւ: Այժմ ես եմ ասում, թէ այս ժողովն ինձ այլիս չի տեսնիլ եւ չի լսիլ ձայնս, բայց ես իմ խօսքս կը պահեմ: Սակայն նախքան գնալս դարձեալ խնդրում եմ, ով որ կասկած ունի ինձ վրայ իբրի գաւաճանի, թող բացարձակ ասէ:

Մի խորին լուսթիւն եղաւ նրա հրաւերի պատասխանը:

—Լաւ,—արտասանեց նա զուարթ դէմքով,—ուրեմն ես այստեղից հեռանում եմ բոլորովին մաքուր:

Նա քանդեց իր սուրբ, դրաւ սեղանի վրայ, իշխանի մօտ, եւ պարզ ու հանդարտ ձայնով ասաց.

—Իշխան, ես հրաժարւում եմ ծերակոյտի մէջ իմ ունեցած սեղից եւ վայր դնում զօրապետի կոչումը, մինչև անգամ սպայի աստիճանը: Ի ծնէ ես մայնեցի եմ, եւ եթէ դու, իշխան, համաձայն ես, այն ժամանակ իբրի հասարակ զինուոր կը մտնեմ մայնեցիների զօրադնդի մէջ: Դարձեալ մենք միասին կը ծառայենք, վաղեմի բարեկամ,—աւելացրեց նա՝ Պետրօբէյին դառնալով:

Եւ պատասխանատուութեան դժուարութիւնից ազատուելով՝ նա թեթեւ քայլերով եւ թեթեւցած սրտով զուրս եկաւ ծերակոյտի ատենանից:

Դիմելով ուղղակի դէպի մայնեցիների բանակը եւ Միասոսին ու Նանիին տեսնելով, որոնք խօսում էին մի խուճբ վի-

նուորների հետ, Նիկողայոսը նստեց նրանց մօտ, վառեց ծխաքարչը և ուրախ արտասանեց.

—Առաջին անգամն եմ ես այստեղ բաւականութեամբ ծրծում: Եւ սրբան լաւ է ձեզ հետ ընկերաբար նստել այստեղ: Ես ձեր ընկերն եմ, հասարակ զինուոր:

—Այդ ինչ է նշանակում, Նիկողայոս մօրեղբայր,—բայագանչեց Միտասը և աւելացրեց յօճքերը կիսած.—չը լինի՞ դա Հերմանի գործն է:

—Ո՛չ, Միտաս, այդ միայն ես կարող էի անել: Ես յօժարակամ հրաժարուեցի պաշտօնիցս և բոլոր պատիւներիցս: Ես այժմ զինուոր Նիկողայոսն եմ, բայց այս րօպէին թաղաւորից էլ երջանիկ եմ. այլևս ոչ ոք չէ կարող զրպարտել ինձ: Փնօք Աստծու, բոլորովին հանգիստ եմ:

Եւ նա բարձրաձայն, ուրախ ծիծաղեց:

—Բայց ինչ է պատահել,—հարցրեց Միտասը՝ ոչինչ չը հասկանալով:

—Առանձին ոչինչ: Ես ինձ ազատեցի շատախօսելու և վատաբանելու կարիքից. այժմ կարող եմ զլիսովին հայրենիքին ծառայել: Ահա մեծաւորները գալիս են, հարկաւոր է պատիւ տալ նրանց:

Նա վեր թռաւ և ուղիղ կանգնեց:

Պետրօ-բէյն իշխանի և միւս զօրապետների հետ մօտեցաւ նրան:

—Թո՛ղ այդ յիմարութիւնը, կղբայր,—ասաց Պետրօ-բէյը, և գնանք իմ վրանը: Տեսնո՞ւմ ես, որ բոլորս քո ետևիցն ենք եկել:

—Չեմ գալ, ինձ համար այստեղ շատ լաւ է,—պատասխանեց Նիկողայոսը զուարթ դէմքով:—Խօսիր, ինչ ուզում ես, իսկ ես կը լռեմ:

Իշխանն առաջ եկաւ և ամենապիրալիբ կերպով ասաց.

—Մենք եկել ենք խնդրելու քեզ, որ փոխես վճիռդ: Այլևս ոչ ոք չի անպատուիլ քեզ ձերակոյտի մէջ:

—Իշխան, —վրայ բերաւ Նիկողայոսը.—իմ ամբողջ անցեալը յիշելով՝ ես համարձակ կարող եմ ասել, որ մի խելացի գործ եմ արել միայն—այսօր հասարակ զինուոր դառնալով, և եթէ ճիշտ է, որ ինձ այլևս չեն անպատուիլ ձերակոյտի մէջ, դա աւելի ես հաստատում է իմ արած քայլի խոհեմութիւնը:

—Բայց չէ՞ որ դա անհեթեթ բան է,—ասաց Պետրօ-բէյը, —բոլոր հողերականները, մինչև իսկ Հերմանը՝ ցաւում են քո արածի վրայ:

—Քաղցր է ինձ համար լսել քո խօսքերը,—բայագանչեց

Նիկողայոսը ծիծաղելով,—բայց ես երեխայ չեմ, և ինձ քաղցր խօսքերով չէ կարելի դնել:

—Բայց մտածիր, ըս աջակցութիւնը մեզ համար կարևոր է: Դու մեզ բոլորիցս աւելի ժողովրդականութիւն ես վայելում գինուորների մէջ:

—Աւելի լաւ: Ես իբրև զինուոր աւելի օգտակար կը լինեմ, քան իբրև զօրապետ:

—Բայց դու ապագան,—արտասանեց Պետրո-բէյը,—իշխախանը խոստացաւ...

—Ես ձեռք վերցրի դրանից,—աշխոյժով ընդհատեց նրան Նիկողայոսը,— և ինձ զգում եմ այնպէս, ինչպէս ծանր ընտից աղատուած մի ձի: Մի աշխատիր ինձ նորից թամբել: Հաւատան, որ ինձ համար թանկ է միայն Յունաստանի աղատութեան գործը, որին մենք միասին վաղուց արդէն ծառայում ենք: Երեք ամիս շարունակ ես կաբժուեմ էի, թէ արքեպիսկոպոսի հետ կուեղով՝ ծառայութիւն եմ անում այդ գործին, բայց այժմ տեսնում եմ, որ դա ոչ մի օգուտ չէ բերել: Իսկ եթէ ես մնամ ծերակոյտի մէջ, դարձեալ ակամայ պէտք է հայհոյեմ: Ոչ, հանգիստ թող ինձ: Ինձ համար այստեղ աւելի լաւ է:

Նա նայեց իր մօտ կանգնած Միսոսին և աւելացրեց.

—Ես քեզ հետ առանձին խօսելիք ունեմ, Պետրո-բէյ, բայց դեռ ժամանակ կը լինի: Իսկ այժմ, պարոններ, թոյլ առէք ինձ շորհակալութիւն յայտնել ձեզ ձեր մտերմութեան համար, բայց չը կատարել ձեր ցանկութիւնը:

Պետրո-բէյը հասկացաւ, որ զոնէ այժմ Նիկողայոսին ոչինչ չէր կարելի անել և հեռացաւ: Այն ժամանակ Նիկողայոսը բռնեց Միսոսի ձեռքից և ինքն էլ դնաց դէպի իր բնակարանը:

Ճանապարհին նա պատմեց երիտասարդին, ինչ որ պատահել էր, և վերջինս այնպէս զայրացաւ, որ խոստացաւ ամբողջ զօրքը Հերմանի դէմ հանել:

— Ես չեմ ներում նրան և չեմ մոռանալ այն, ինչ որ նա արաւ իմ դէմ,—ասաց Նիկողայոսը,—բայց չ'արժէ նրան հալածել: Հանգիստ թող այդ անպիտան մարդուն: Մենք աւելի կարևոր գործ ունենք: Եթէ հարկաւոր է աւանակների զոմերը մաքրել, հապա ուրեմն մեզանից սկսենք: Գնանք մեր կերակրի բաժինն ստանալու: Ես հրամայել եմ այսօր մարդկանց միս բաժանել, դա իմ գործունէութեան փառաւոր վերջակէտն էր: Ահա հէնց զրա համար էլ վարձատրեց ինձ Աստուած:

Նիկողայոսն անդրդուելի մնաց, և Պետրո-բէյը տեսնելով, որ իր ջանքերն ապարդիւն են, այլևս չէր աշխատում համոզել

նրան: Բայց նա չարունակում էր ամեն բանում խորհրդակցել Նիկողայոսի հետ, և վերջինս չէր կարող մերժել այդ: Իսկ ինչ վերաբերում է զինուորներին, մանաւանդ մայնեցիներին, նրանք իրանց ձեռների վրայ էին սանում Նիկողայոսին, բայց Հերմանի գրութիւնն անտանելի դարձաւ. նրա զրպարատութիւնները չարդարացան, և նա ոչ միայն օգուտ չը ստացաւ Նիկողայոսի զօրապետութիւնից հրաժարուելուց, այլև պէտք է խոստովանուէր, որ իր իշխանութիւնը չքայաւ: Մնաք բարոյ, պատրիարքութիւն և նրա միւս անձնասէր մտեր... Նա հետացաւ Կալարիտա, որտեղ իր հաշուով դեռ ժողովրդականութիւն ունէր: Նրա համախոհ եպիսկոպոսներն ու քահանաները մնացին բանակում՝ յուսալով, որ նորից ձեռք կը բերեն իրանց օրհնութիւնը: Սակայն չափազանց սխալւում էին. նրանց յաջողուեց զինուորների առաջ գցել սպաների վարկը, բայց դրա հետ միասին անհետացաւ և անձնուիրութիւնը դէպի հոգևորականները:

Նիկողայոսն առիթ ունեցաւ խօսելու Պետրօ-բէյի հետ Միտոսսի սիրոյ մասին, բայց մի քանի օրից յետոյ տեղեկութիւն եկաւ, թէ թիւրքերը Կորնթոսի ծովածոցի եզերքը, Վոսաիցայի շրջակայքում զօրքեր են դուրս հանում, և իշխան Դիմիտրիոսը խոհեմաբար կարևոր համարեց գնալ այնտեղ: Պետրօ-բէյը նրա հետ ուղարկեց Միտոսսին, որպէսզի կարողանայ հաւաստի սուրհանդակի միջոցով տեղեկութիւններ ստանալ Վոսաիցայի անցքերի մասին: Այդպիսով իշխան Դիմիտրիոսը սեպտեմբերի վերջին ճանապարհ ընկաւ բանակից՝ յուսալով վերականգնել իւր ժողովրդականութիւնը, իսկ Միտոսսին վերադառնալ իր հետ որպէս փոխարքայի ազիւտանտ:

Մի առժամանակ Տրիպոլսի շուրջը գաղարկցին ինտրիգներն ու յոյների յարաբերութիւնները պաշարուածների հետ, որովհետև Պետրօ-բէյը սաստիկացրեց հսկողութիւնը իւր ստորադրեալների վրայ: Սակայն առաջուայ նման նա չէր վստահանում յարձակում գործել՝ դիտենալով, թէ որքան հեծեղազօր, հետևակ և թնդանօթաձիգ զօրք կար ամբողջում, և սողասում էր, որ քաղաքն ինքն անձնատուր լինի: Ընդհանուրի կարծիքը, թէ մօտ է Տրիպոլսի անկման օրը, այնքան զօրեղ էր, որ իւրաքանչիւր օր զիւղացիների խմբեր էին գալիս՝ քաղաք մտնելու ժամանակ մասնակցելու աւարատութեանը: Նրանք գրաւել էին շրջակայ լեռները, և Պետրօ-բէյն իզուր էր աշխատում ազատուել նրանցից:

Վերջապէս սեպտեմբերի 24-ին Տրիպոլսի մի փախտական զերի բռնուեց՝ Նրան բերին բանակը և խոստացան կեանքը

խնայել, եթէ ճշտութեամբ պատմէ ամբողջի զբուծիւնը: Այն ժամանակ նա ասաց, թէ Տրիպոլսում սովն սկսուել է, թէ արդէն մի քանի ձի են մորթուած կերակրուելու համար, և եթէ օղնութիւնն չըստացուի, անձնատուր լինելը ժամերի հարց է: Այդ լուրի անթիւ Պետրո-բէյը խորհրդակցութիւն ունեցաւ Նիկողայոսի հետ, և վերջինս ասաց, թէ հասել է յարձակման բուպէն, բայց Պետրո-բէյն այնուամենայնիւ լաւ էր համարում դես սպասել, որովհետեւ նրա կարծիքով անձնատուր լինելն անխուսափելի էր, և երկար վիճարանութիւնից յետոյ համաձայնուեց կատարել Նիկողայոսի խորհուրդը, եթէ երեք օրուայ ընթացքում թիւրքերը չ'առաջարկեն քաղաքը դրաւել և Միտոսը տեղեկութիւնն չը բերէ, թէ օժանդակ զօրքեր են եկել: Մինչև այդ նա որոշեց աւելի մօտենալ քաղաքին:

X

Բանակը վերցնելու հրամանն ընդհանուր ցնծութեան ազդակներով ընդունուեց, և սեպտեմբերի 25-ին ամբողջ օրը ջորիների երկար շարքերը ետ ու առաջ էին անում լեռնային նեղ շաւղով: Մայնեցիների գունդն ամենից առաջ շարժուեց և քաղաքի հարաւային պարսպի հակառակ դիրքը դրաւելով սկըսեց փոսեր փորել և իրանց վրանները խփել: Քաղաքային պարսպների վրայ ծուլութեամբ շրջում էին թիւրքերը, իսկ ժամանակ առ ժամանակ երևում էին և փաթաթուած կանայք. նրանք հետաքրքրութեամբ նայում էին թշնամիներին, որոնք չորս հարիւր քայլ միայն հեռու էին քաղաքի դռներից: Մայնեցիների ետևից եկան և միւս զօրապետները և նախ հողից պատնէշներ բարձրացրին, իսկ յետոյ բանակ զրին, որտեղ ծանր աշխատանքից յետոյ այժմ հանգստանում էին:

Երկու օր գործ զրուեց քաղաքի շուրջը պաշտպանողական դիրքեր չինելու վրայ, իսկ 27-ին ամեն ինչ պատրաստ էր, և քաղաքն ամեն կողմից շրջապատուած: Այնուամենայնիւ Տրիպոլսից ոչ անձնատուր լինելու լուր և ոչ ընդդիմութեան նշան էին տալիս: Վերջապէս երրորդ օրուայ երեկոյեան, արեգակը մայր մտնելուց յետոյ հարաւային դրան աշտարակի վրայ բարձրացաւ սպիտակ դրօշակը, և մի քանի բուպէից յետոյ Մահմէդ-Սալիկն իր չքախմբով դուրս եկաւ քաղաքից: Նրան զիմաւորեց Պետրո-բէյն իր ազիւտանտ Ծանիի հետ, որը մեծ բաւականութեամբ տեսաւ իր հին ծանօթին:

Մահմէդը Պետրո-բէյի հետ գնաց նրա բնակարանը: Սա մի հաստափոր, փոքրիկ մարդ էր, կարճ ոտներով և կնճռոտ

դէմքով, թէպէս նրա տարիքը երեսունից անց չէին: Նա մի հայկապոլ շափեց Եանիին ոտքից մինչև դրուխ և ուսերը սեղմելով՝ նստեց Պետրո-բէյի գիմացը:

— Ինձ ուղարկեցին հարցնելու, թէ ինչ պայմաններ ևս առաջարկում անձնատուր լինելու համար, — ասաց նա, — ինչդրում եմ, մտածիր և ասած ինձ:

— Լաւ, — պատասխանեց Պետրո-բէյը, — ևս քեզ պատասխան կը տամ կէս գիշերին:

— Շնորհակալ եմ, — ասաց Մահմէդը՝ ժամացոյցին նայելով, — մենք կը սղասենք:

Նա վեր կացաւ և նորից ուշի-ուշով նայեց Եանիին:

— Մենք դարձեալ պատահեցինք միմիանց, — ասաց նա՝ ձեռքը մեկնելով, — դու մի քիչ անքաղաքավարի կերպով հեռացար իմ մօտից: Բայց ինչու չես ուղում ձեռքս սղմել:

Եանիի մազերը բարկութիւնից բիզ-բիզ եղան, և նա ձեռքը չը տուաւ Մահմէդին:

— Դու անհետացար այն ժամանակ, — շարունակեց Մահմէդը, — երբ ևս յոյս ունէի, թէ քեզ աւելի մօտիկ կը ճանաչեմ:

— Դու այստեղ մեզ անպատուելու համար չես եկած, — կծու կերպով պատասխանեց Պետրո-բէյը:

— Ես մտադիր չեմ մէկին անպատուել, — պատասխանեց Մահմէդը, — բայց պատմիր ինձ, քով աղայ, թէ ինչպէս փախար: Ինձ հարկաւոր է խմանալ այդ, որովհետև ես զբաղ եմ եկել: Դէհ, ասած, դու դժնապանին կաշտուցիր և կոտորը բարձրացար:

— Ես կտրի ծակից դուրս եկայ, — ասաց խուլ ձայնով՝ Եանին:

— Տանուլ տուի: Ես համոզուած էի, թէ դու կաշտուել ևս դժնապանին, և նրան սաստիկ ձեռք տուի, իսկ յետոյ բանադրի: Այսօր իսկ նրան աղատ կը թողնեմ: Դէհ, մնա՛ք բարով:

— Թո՛ղ տուր ինձ մի լաւ հարուած տալ դրան, — ասաց Եանին, հէնց որ թիւրքը հեռացաւ:

— Ես չեմ կարող թո՛ղ տալ այդ, — պատասխանեց Պետրո-բէյը:

Բայց զեռ Մահմէդը երեք քայլ էլ չէր արել, երբ երիտասարդը հասաւ նրան, բռնեց օձկրից և ստքով մի այնպիսի հարուած իջեցրեց մէջքից վայր, որ նա քիչ մնաց գետին վառէր:

— Դու ինձ անպատուցիր քո տան մէջ, — ասաց Եանին, — միկնոյնն ստացիր և՛ ինձանից: Այժմ մենք այլևս հաշիւ չ'ունենք:

Նա ետ դարձաւ և գնաց հօր մօտ:

Պետրոս-բէյը սաստիկ զբազուած էր և զլուխը սեղանից տտանց բարձրացնելու՝ մի թուղթ առաւ Եանիին։

— Եանի, զնա այն զօրապետների մօտ, որոնց անունները ես այստեղ գրել եմ, — ասաց նա, — և խնդրիր, որ իսկոյն զան այստեղ քաղաքն ստանալու պայմանի մասին խորհելու համար։ Այն, հա, այդ ինչ աղմուկ էր դուրսը։

— Մի մասնաւոր խօսակցութիւն էր այդ, — պատասխանեց Եանին, — հին հաշիւներս տեսանք։ Ուրիշ ոչինչ։ Գործը վերջացած է։

— Այդպէս է, բայց կարծեմ խօսակիցներից մէկին այնքան էլ հաճելի չէր այդ։

Երկար չը տեսց զօրապետների խորհուրդը, և երկու ժամ յետոյ պայմանների թուղթն ուղարկեցին Մահմէդին։ Թիւրքերը պարտաւոր էին վայր դնել զէնքերը, հեռանալ Մորէայից և քառասուն միլլիոն պիստոն տուղանք վճարել։

Իսկոյն պատասխանն եկաւ։ Թիւրքերը յոյների պահանջները անհնարին էին գտնում, որովհետև չէր կարելի այդքան փող հաւաքել. բայց նրանք իրանց կողմից փոխ-առաջարկութիւն էին անում։ Նրանք կը տան իրանց բոլոր թէ շարժական և թէ անշարժ կայքը ու կը վերցնեն միայն անհրաժեշտ իրերը մինչև Նաւպլիա հասնելու համար, որտեղից կ'ուղևորուեն զէպի Փոքր-Ասիա։ Ինչ վերաբերում է զօրքերին, զրանք պէտք է մնան իրանց մօտ ինքնապաշտպանութեան համար։ Նրաք պընդում էին նաև, թէ Արգոլիզայի դաշտավայրի և Տրիպոլսի մէջ ընկած Պարտենիի լեռնային անցքը պէտք է իրանք գրաւեն, մինչև որ կանայք ու երեխաները նաւերով ծովը դուրս գան։ Վերջին պայմանը կարևոր էր, որովհետև զէնքերը յանձնելով թիւրքերը ապահով չէին կարող լինել, թէ նրանց պայմանն էլ չի խախտուիլ, ինչպէս այդ եղաւ Նաւարինում։

Յոյները չ'ուղևոյին անգամ քննել այս առաջարկութիւնն այն հիման վրայ, որ եթէ թիւրքերը նրանց չէին հաւատում, այդ զէպըում իրանք էլ հիմք չ'ունէին թիւրքերին հաւատալու։ Եթէ թոյլ տային նրանց գրաւելու Պարտենիի լեռնային անցքը, այն ժամանակ թիւրքերն անարգել կարող էին սնալ Նաւպլիա և այնտեղ մնալ։ Նաւպլիան դեռ ևս յարաբերութիւն ունէր ծովի հետ, և միթէ յոյները կէս տարի նրա համար պաշարեցին Տրիպոլիսը, որ վերջիվերջոյ թոյլ տան պաշարուածներին մի ուրիշ աւելի լաւ պաշտպանուած քաղաքում ամրանալ։

Դարձեալ յոյներն անեղանելի գրութեան մէջ ընկան, և այստեղ Պետրոս-բէյը մի աններելի սխալ գործեց։ Նա պարտաւոր էր իսկոյն յարձակուել ամրոցի վրայ և մի անգամից գործը

վերջացնել: Բայց նա ստարակուսուած՝ հարցը զինուորական խորհրդի քնննութեանը յանձնեց, և ձայների մեծամասնութեամբ որոշուեց յետաձգել յարձակումը: Նրանց նպատակն ակներև էր: Այդ մարչիկ գիտէին, որ քաղաքում սով է, և յոյս ունէին մեծ հարստութիւն գիղել՝ պաշարուածներին ուտելուէն հասցնելով: Հերմանի խօսքերը ճշմարիտ դուրս եկան: Պաշարումը շուկայ էր դարձել:

Սեպտեմբերի 28-ին Տրիպոլսից նոր առաջարկութիւն եկաւ, բայց այս անգամ ոչ թէ թիւրքերից, այլ այն արբանացի վարձկաններից, որոնք մայիսին յարձակում գործեցին Վալյակոզայի վրայ: Այդ առողջակազմ երիտասարդները թուով 1500 հոգի էին, բայց, որպէս վարձկաններ՝ նրանք յարգանքի կամ անձնուիրութեան ոչ մի զգացմունք չէին տածում դէպի թիւրքերը, և այդ պատճառով նրանց շահը պահանջում էր համաձայնութիւն կայացնել պաշարողների հետ: Ուստի առաջարկեցին հեռանալ Ալբանիա և այլ ևս երբէք չը ծառայել թիւրքիային, եթէ թոյլ տան դէնքերը ձեռներին գնալ: Միւս կողմից յոյները նրանց դէմ ոչինչ չ'ունէին, իսկ շատերն էլ բարեկամական կամ ազգակցական կապեր ունէին նրանց հետ, ուստի և համաձայնուեցին առաջարկած պայմաններին:

Նշանակը սաստիկ շոգ էր ու սով, և հարաւային կողմում կանգնած մայնեցիները բոլորից շատ էին նեղուած: Այդ չարթուայ մէջ Պետրօ-բէյի ազգականները կորցրին իրանց հաւատը դէպի նա, որովհետև նրանք միայն չէին մասնակցում պաշարուածների հետ սեղի ունեցած ամօթալի առևտրին: Նա համաձայնուեց շահասէր, իրանց պատի գնով հարստացած մարդկանց խորհրդի հետ, և թէպէտ նրա վրայ ոչ մի կասկած տանել չէր կարելի, բայց նրա թուլութիւնը դատապարտելի բնաւորութիւն էր ստանում: Ի դուր էր Նիկողայոսն աղաչում, Պետրօ-բէյը չէր ուզում ոչ մի բանի հաւատալ և ապացոյցներ էր պահանջում, որ սակայն Նիկողայոսը չէր կարող ներկայացնել, որովհետև մայնեցիների զօրազնդումն էր լինում: Նա շարունակ յիշեցնում էր քաղաքի սովը, որը յանկարծ ընդհատուել էր. սնդուած էր, թէ քաղաքը չէր կարող գիմանալ, եթէ զազանի կերպով կերակրել պաշար չը ներմուծուէր այնտեղ. խօսում էր բանակը լցուած գիւղացիների մասին, որոնք կարող էին խայտառակ առևտուրն անել,—սակայն ոչինչ դուրս չ'եկաւ, և Պետրօ-բէյը կարծես կուրացել ու խլացել էր:

Վերջապէս կողոկարոնին բռնուեց ապացոյցը ձեռքին, և երբ Նիկողայոսը Պետրօ-բէյի մօտ տարաւ նրան, վերջինս բռնեց զլուխը և յուսահատութեամբ յայտնեց, թէ ոչինչ չէ կա-

րող անկէ: Եթէ Կողովարո՞նին առևտուր է անում թիւրքերի հետ, հապա ուրեմն հաւանական է, որ նրա ամբողջ զօրաբաժինն էլ զրանով է պարապում. նշանակում է նրան պատժելով՝ ստիպուած պէտք է լինէին հարիւրաւոր մարզկանց պատժել:

Օ, Նիկողայնոս, Նիկողայնոս,—բացազանչեց նա, ցաւալի և պազատական ձայնով,—եթէ դու երբեիցէ սիրում էիր ինձ, ուրեմն օգնիր ինձ, փրկիր ինձ: Ես միշտ եղել եմ ազնիւ, բայց թոյլ: Իսկ քո ոյժն ու պատիւը ոչ մի բանով չէ արատաւորուած:

Այս դէպքը պատահեց հոկտեմբերի 5-ին: Նիկողայնոսը տեսաւ, որ հարկաւոր է եռանդուն կերպով գործել, հակառակ դէպքում ամեն ինչ կորած էր:

Նա գնաց իր մայնեյիների մօտ և ասաց նրանց.

—Ահա թէ ինչ, տղերք: Այսօր Տրիպոլիսը պէտք է առնուի: Մենք մայնեյիներս կ'առնենք այդ քաղաքը: Ես ինձ վերայ եմ վերցնում բոլոր պատասխանատուութիւնը: Կանչեցէք բոլորին:

Հինգ բողէ անցած մօտ հինգհարիւր մայնեյի արգէն շըրջապատել էին նրան:

—Հարկաւոր չէ մի բողէ անգամ կորցնել,—ասաց Նիկողայնոսը՝ դառնալով սպաներին և մոռանալով՝ որ ինքը մի հասարակ զինուոր է.—ես առաջ կ'ընկնեմ, իսկ դուք բոլորդ, բունրդ ինձ հետեցէք: Մենք կը դնանք դէպի Արգոսեան աշտարակը: Դուրս ցցուած քարերի վրայից մաղլցելով՝ հեշտութեամբ կարելի է բարձրանալ այնտեղ: Ես այդ նրանից զիտեմ, որ երեկ փորձեցի բարձրանալ նրա վրայ, և յիմար թիւրքերը չը նրկատեցին ինձ: Ես այժմ էլ կը բարձրանամ և ինձ հետ մի պարան առնելով՝ կ'ամրացնեմ վերից ու վայր կը գցեմ: Նրա վերայով առաջին բարձրացողը կը վերցնէ և յունական դրօշակը, որը ես կը ցցեմ աշտարակի զլիսին: Ընկերներ, ինձ չնորհեցէք այդ պատիւը: Սակայն ոչ, ընտրենք մէկին, որին պէտք է յանձնարարուի այդ գործը:

—Քեզ... Քեզ... Նիկողայնոսին... Նիկողայնոսին...—լսուեց ամեն կողմից:

—Դէհ, այժմ սկսենք,—բացազանչեց Նիկողայնոսը՝ երջանկութեամբ լցուած,—բայց նախ թոյլ տուէք ինձ սղմել ձեր ձեռքը: Աստուած չափազանց ողորմած է դէպի ինձ:

Այդ փորձն այն աստիճան անմիտ և համարձակ էր, որ Արկադիայի զօրադունդը, որ Արգոսեան աշտարակի զիմացն էր գտնուում, չէր հաւատում աչքերին, երբ տեսաւ մի բուռ մայնեյիներին դէպի աշտարակը վազելիս: Նիկողայնոսը կատուի

ճարպիլութեամբ բարձրացաւ նրա գաղաթը և նախ գցեց այնտեղից թիւրք պահապանին, իսկ յետոյ պարանը, որի վրայով բարձրացաւ մի մայնեցի յունական գրօշակը ձեռքին, որն իսկոյն յցուեց այնտեղ:

Նիկողայոսն սպասեց, մինչև որ քառասունի չափ մայնեցի զինուորներ բարձրացան աշտարակի գլուխը և խմբուեցին այնտեղի հրապարակի վրայ: Այն ժամանակ նա յարձակուեց դուռը պահպանող թիւրքերի վրայ, ջարդեց նրանց և իր ձեռքով բաց արաւ այն: Արկաղիւայի զօրագունդն իսկոյն մտաւ քաղաք և մայնեցիների հետ գլմեց գէսլի Ներքին-Տրիպուլսի գլխաւոր փողոցը: Նրանց հետեւում էին զիւղացիների խմբերը, որոնք աւարի էին սպասում: Պետրօ-բէյը մայնեցիների մէջ էր: Սաւկայն ոչ որ իշխանութիւն չէր ճանաչում, և իւրաքանչիւր մարդ գործում էր ինքնազուտ:

Այս յարձակումն այն աստիճան անսպասելի էր, որ երբ յոյներն արդէն աիրել էին քաղաքի հարաւային մասին, հիւսիսային մասում ամօթալի առևտուրն էր կատարւում: Ընդգիւմուլթեան մասին խօսք անգամ լինել չէր կարող: Յաղթութեամբ արբած յոյները գաղանների նման ընկան անսպաշտպան թիւրքերի վրայ: Կոտորածն ու աւարառութիւնը թաղաւորում էին անսահման:

Մայնեցիները նախ և առաջ զիմեցին գէսլի Մահմէդի տունը, և Եանին ներս վազելով ահաբեկուած թիւրքի մօտ՝ դաշոյնը խրեց նրա սիրտը՝ բարձրաձայն գոչելով.

—Նրանից, որը պէտք է ծառայէր քո հարեմում:

Մահմէդի տանը իրանց հաշիւը վերջացնելով մայնեցիները շարունակում էին իրենց սարսափելի գործը և անխնայ մորթոտում բոլոր պատահած թիւրքերին: Քիչ մնաց, որ արիւնալի ընդհարում տեղի ունենար այլաբանացի վարձկանների հետ, և նրանց գեթուարութեամբ հաւատացրին, թէ զրանք ոչ թէ թըշնամի են, այլ բարեկամներ, որոնք նախօրոք համաձայնութիւն էին կայացրել յոյն զօրագետների հետ, որպէսզի Տրիպուլսի առման որը անարգել թոյլ արուի նրանց հետանալ: Այն ժամանակ խաղաղ կերպով արձակեցին նրանց, և մինչդեռ յոյներն սպանում ու աւարի էին մասնում Տրիպուլիսը, այլաբանցիներն ամենահանդիստ կերպով ճանապարհ ընկան գէսլի իրանց հայրենիքը:

XI

Աբգուլ-Ահմէդի տունը, որտեղ ապրում էր Զիւլէյման,

գանուում էր արևմտեան Տրոզեան գրան մօտ, Արդուլիդայի զօրագնդի գիմացը: Այս զօրագունդը միւսներից ուշ մտաւ Տրիպոլիս և այն էլ ստիպուած էր խորտակել դուռը, բայց կարճ միջոցում իր սպանած սղամարդկանց, կանանց և երեխաների քանակութեամբ հասաւ միւսներին: Ամենից աւելի կատաղի էր դարձել հայր Անդրէասը, և ոչ ոք չէր ազատոււմ նրա արիւնհաներկ սրից, որը նա «Աստուածային Սուր» էր անուանում: Վերջապէս մի ինչ որ ազատուած թիւրք վախչելիս գիպաւ նրան և ժողուեց գետին, իսկ հայր Անդրէասն էլ վայր ընկնելիս՝ այնպիսի սաստկութեամբ գլուխը խփեց սալաշատակի քարերին, որ երկար ժամանակ ուշաթափ մնաց պտոկած:

Այդ միջոցին Զիւլէյման, որ բոլոր ժամանակ ապարդիւն սպասում էր Միսոսին, յիշեց նրա խօսքերը, թէ յարձակման ժամանակ բաց դէմքով պէտք է դուրս վազէ փողոցը և յունարէն լեզուով յայտնէ յոյներին, թէ ինքը նրանց հայրենակիցն է: Այդ պատճառով նա չէր վախենում տան չուրջը տեղի ունեցող կոտորածից ոչ իր անձի և ոչ իր սպաղայ երեխայի համար, որի աշխարհ գալուն օրէցօր սպասում էր, և համարձակ դուրս եկաւ տանից:

Այդ բողբէին Անդրէասն սթափուեց և ոտքի կանգնելով՝ յարձակուեց Զիւլէյմայի վրայ, որն իր հազուաստով նման էր թիւրք կնոջ, վայրենաբար գոռալով.

— Աստուածային Սուրը... Աստուածային Սուրը...

Աղջիկը սարսափահար չը փախաւ, այլ ընդհակառակը՝ մօտեցաւ նրան և բարձրաձայն գոչեց.

— Փրկիր ինձ, հայր: Ես քո արիւնակիցն եմ: Ես յոյն աղջիկ եմ:

— Սատանան տանի... Սատանան տանի... — կատաղաբար կրկնեց Անդրէասը և արդէն իւր արիւնոտ սուրը բարձրացրել էր Զիւլէյմանի գլխի վրայ, որը յուսահատութեամբ բաց արաւ իւր թիկնոցը և արտասուքն աչքերին բացազանչեց.

— Մի՛թէ դու կը սպանես ինձ և իմ երեխային...

— Դու յոյն աղջիկ ես, — արտասանեց նա զարմացած, — իսկ այնինչ թիւրքի տանից դուրս եկար: Ի՞նչ կերպով ես այդտեղ ընկել:

— Չը գիտեմ, — պատասխանեց Զիւլէյման, — ինձ թիւրքերը փախցրել են սրանից տաս կամ տասներկու տարի ստաջ: Բայց տան ինձ այտուեղից, հայր: Այստեղ զարհուրելի է:

Իրաւ, Արդուլի տանից կանանց սրտածմլիկ ազաղակներ էին լաւում, որոնց սպանում էին այնտեղ ներս ընկած յոյները:

Հայր Անդրէասն ուշի-ուշով նայեց Ձիւլէյմային, և նրա զլիւում մի տարօրինակ, խելացնոր միտք ծագեց.

— Ես կ'ազատեմ քեզ, աղջիկս, — արտասանեց նա ամբողջովին դողալով: — Դէհ, գնանք չուտով: Մղաջիր Աստծուն, որ նա քեզ խնայէ:

Ճանապարհին նրանք տեղ-տեղ կանգ էին առնում, և հայր Անդրէասը Ձիւլէյմային թազցնում էր զոների ետեւը, մինչև որ արեան ծարաւից խելքները կորցրած յոյների խումբն անցնում էր: Վերջապէս նրանք հասան արևմտեան դրանը, իսկ այնտեղից էլ հայր Անդրէասի վրանին, որտեղից նա վերցրեց իր ձին և զգուշութեամբ Ձիւլէյմային նրա վրայ նստեցնելով՝ ճանապարհ ընկաւ դէպի Նաւալիա:

Երիտասարդ աղջիկը շարունակ լուռ էր, և միայն երբ քաղաքն անհետացաւ և նրանք մօտեցան Դոլիեանի գիւղին, հարցրեց:

— Նաւալիա ենք գնում:

— Այո, աղջիկս:

— Բայց որտեղ է Միտսոսը: Ինձ Միտսոսի մօտ տար, հայր:

— Միտսոսի:

— Այո, այն բարձրահասակ, երիտասարդ Միտսոսի, որն ապրում է Նաւալիայի ծովածոցի ափին:

— Միթէ դու ճանաչում ես Միտսոսին, — հարցրեց Անդրէասը զարմացած:

Ձիւլէյման լուռ լաց եղաւ:

Կէսօրին մօտ նրանք կանգ առան, և Անդրէասն զգուշութեամբ ցած առաւ Ձիւլէյմային ձիուց ու դրաւ գետնին, ծառի ստուերի տակ, իսկ ինքը նստեց նրա մօտ:

— Մենք այստեղ կը հանգստանանք, մինչև շոգն անցնի: Իսկ երբ Աստուծոյ, աղջիկս, պատասխանիր իմ մի քանի հարցերին: Վաղձուց է, որ դու թիւրքի տանն ես:

— Տաս կամ գուցէ տասներկու տարի, լաւ չեմ յիշում:

— Բայց ինչպէս ես ընկել այնտեղ:

— Չը գիտեմ, չեմ յիշում, հայր, ես շատ յոյնել եմ: Թոյլ տուր ինձ քնել, իսկ յետոյ կը պատմեմ, ինչ որ գիտեմ:

Նա զլուխը դրաւ հայր Անդրէասի ծնկներին և չուտով քրնեց: Որքան էր քնել, նա չը գիտէր, բայց աչքերը բանալով արտասանեց.

— Բայց որտեղ է Միտսոսը: Ե՞րբ կը գայ նա... Հայր, դու ինձ ինչորեքի պատմել իմ անցեալը: Ես երեխայ ժամանակս

ճանապարհորդում էի հօրս հետ Աթէնքի շրջակայքում, երբ ինձ փախցրին և տուին Արդուլ-Ահմէդի տունը:

—Արդուլ-Ահմէդի:

—Այն, նա այն ժամանակ ապրում էր Աթէնքում, իսկ յետոյ տեղափոխուեց Նաւպլիա: Իմ հայրը,—ես այդ լաւ եմ յիշում,—քահանայ էր, նրա վերարկուն սե էր, ինչպէս քոնը, բայց մազերն ալեխառն չէին, այլ սև:

Անդրէասը երկու ձեռքով բռնեց և պինդ սղմեց իր կրծքին:

—Չաւահա, իմ Թէոդորն,—բացազանչեց նա,—վերջապէս գտայ քեզ: Ես քո հայրն եմ: Աստուած մեզ միացրեց, Թէոդորն, Թէոդորն... Ի՞մ գուտար...

Հայր Անդրէասի և Չիւլէյմայի հեռանալուց կէս ժամ էր անցել, երբ Նիկողայոսը մօտեցաւ Արդուլ-Ահմէդի տանը: Երկու թէ երեք արդուլիպացի վինուորներ, որոնք այնտեղ աւար էին սրնում, յայտնեցին նրան, թէ տան մէջ բոլոր եղած-չեղածը իրանց է պատկանում:

—Ինձ սչինչ հարկաւոր չէ,—պատասխանեց Նիկողայոսը,—ևս որոնում եմ մի յոյն աղջկայ, որ ապրում էր այս տանը:

Նրան առաջնորդեցին այն սենեակը, որտեղ գտնուում էին կենդանի մնացած կանայք, և նրանցից մէկը բացազանչեց թիւրքերէն.

—Համբուրիր մեզ, եթէ կամենում ես, չնու:

—Ես ձեզ ձեռք չեմ տալ,—ասաց Նիկողայոսը,—և ես ախտոտում եմ, որ ինքս էլ չը գնացի հետը: Ո՞րտեղ է այժմ խեղճը: Եւ նա դեռ մօտ օրերս էլ պէտք է ծնի:

—Դու համոզուած ես, որ նա գնաց,—չարունակեց Նիկողայոսը,—ոչ, աւելի լաւ է՝ ես ամբողջ տունը նայեմ:

Եւ երբ յոյները չէին ուզում նրան թողնել միւս սենեակները, նա բացազանչեց.

—Յիմարութիւն մի անէք: Ես սչ մի բանի չեմ զիպչել. ևս որոնում եմ մի յոյն աղջկայ, որին թիւրքերը չատ ասրի առաջ յափշտակել են: Ես Միտոսսին խոստացել եմ գտնել նրան:

Նիկողայոսին թոյլ տուին նայել ամբողջ տունը. և երբնայտր կից սկսած մինչև վերնայարկը, բայց Չիւլէյման չը գտնուեց, և Նիկողայոսն ամենատիտուր մտածմունքներով հեռացաւ:

—Աստուած եմ,—մտածում էր նա,—եթէ աղջիկը մենակ է գուրս եկել փողոց, լաւ բան սղասել չէ կարելի:

Կէսօր էր արդէն: Փողոցներում թափուած էին դիակնէրի կոյսեր, և օդի մէջ արեան դարչնի հոտ էր կանգնած: Նիկողայոսի համար անտանելի դարձաւ այս տեսարանը, և նա ըչ-

տապեց այն կողմը, որակզ իր կարծիքով դանոււմ էին մայնեցիները: Ճանապարհին կոտորածի և աւարտութեան սարսափելի տեսարանների հանդիսատես եղաւ: Ոչ սրի չէին խընայել—ոչ կանանց, ոչ երեխաների...

Մի տան դրան առաջ նա տեսաւ Եանիլին, որի աչքերի մէջ վտանգաւոր կրակ էր վառոււմ:

—Դու այստեղ ես.—բացադանչեց նա Նիողայոսին զստալով,—իսկ մենք կարծոււմ էինք, թէ մեռել ես Ախսոս, որ Միսոսոսն այստեղ չէր:

—Առանց քեզ էլ բաւական դահիճներ կան, Եանի,—պատասխանեց Նիկողայոսը,—աւելի լաւ է օգնիր ինձ Զիւլէյմային գտնել:

—Զիւլէյմային,—սարսափած բացազանչեց Եանին,—ողորմած Աստուած: Ես մոռացել էի, որ նա այս քաղաքումն է, իսկ Մաւրոմիլիայիների ամբողջ ստիճը արիւնից խելագարուել է:

—Որոնէնք նրան, Եանի,—չարունակեց Նիկողայոսը,—գումի կողմ գնա, իսկ ես միւս, և մի ժամաց վերադառնանք այստեղ: Բայց, տես, բոլոր պատահած կանանց հետ յունարէն խօսիր:

—Այո, այո,—պատասխանեց երիտասարդը:—Խեղճ Միսոսս, խեղճ Միսոսս: Ես ինքս երկու կին սպանեցի, որովհետեւ նրանք ուզում էին ինձ սրախողխող անել:

—Գնա և զգոյշ եղիր. իսկ ձրտեղ է Պետրո-բէյը:

—Այս տանն է,—արտասանեց Եանին՝ ցոյց տալով այն տունը, որտեղից ինքը դուրս էր եկել:

Այս սարսափելի և սնմիտ օրը Պետրո-բէյն այն սակաւաթիւ մարդկանց թւումն էր, որոնք պահպանել էին զիտակցութիւնը: Առանց նրան և ուրիշ մի քանիսների՝ յունաց ազատութեան պատմութեան այս չարաչուք էջն աւելի ևս զարհուրելի կը լինէր. այս աննպատակ կոտորածին վերջ գնելու համար նրանք ամեն ջանք դործ էին գնում: Նիկողայոսին տեսնելով՝ Պետրո-բէյը շատ ուրախացաւ:

—Մնն մեզ մօտ,—ասաց նա,—և մի բան կեր: Նիկողայոս, քեզ է պատկանում իմ կեանքը և բոլորը, ինչ որ ունեւ: Դեռ միայն չը թողիր ինձ, երբ մինչև անդամ Աստուած էլ երես էր զարձրել խեղճ Պետրոսից:

—Մի բան տուր, հետս վերցնեմ,—պատասխանեց Նիկողայոսը,—ես պէտք է գտնեմ Միսոսոսի զեղեցկուհուն: Աստուած զիտէ, թէ նա ուր է չքացել: Ես սիրումեմ Միսոսոսին, և բայի դրանից մենք շատ պարտական ենք նրան: Ես ինձ կրէր չեմ ներիլ, եթէ Զիւլէյման սպանուի:

—Նա գուցէ իր համար ապաստարան է գտել որեէ տան մէջ,—նկատեց Պետրօ-բէյը.—կամ...

—Ո՛չ, նա թափառում է փողոցներում ։

—Ի՞նչ կսասում, եթէ նա փողոցներումն է, ուրեմն վաղուց արդէն սպանուած է։ Խեղճ Միսոսս...

Նիկողայոսը մի կուժ գինի խմեց, առաւ մի կտոր հաց և չտապով հեռացաւ։

Ամբողջ մի ժամ նա թափառում էր փողոցներում և տըխրութեամբ նայում ամեն մի սպանուած կնոջ, բայց իզուր, և կրբ նշանակուած տեղում պատահեց Յանիին, նրանք երկուսն էլ վշտալի սրտով խոստովանուեցին, որ իրանց ջանքերն ապարգիւն էին։ Սյնուամենայնիւ Նիկողայոսը չը վնասուեց և մինչև ուշ գիշեր շարունակում էր որոնել։ Մինչև անգամ գիշերը նա մաքով էլ որոնում էր Զիւլէյմային, իսկ լուսարացին գնաց մայնեցիների բանակը և Պետրօ-բէյի մօտ նախաձայնեց։

Մի կերպ կարգ էր մտքրուած դօրքի և քաղաքի մէջ, բայց և այնպէս կոտորածը շարունակուած էր, և յոյների մէջ մի տարօրինակ հիւանդութիւն, մի տեսակ անեղ ընկաւ, որը մի օրուայ մէջ մօտ յիսուն հողի տարաւ. դա մի վարակիչ հիւանդութիւն էր, որով լցուել էր օդը փողոցներում թափուած ու նեխուած գիւակներից։

Սեպտեմբերի 7-ին գիշերը թիւրքերն անսպասելի կերպով դուրս եկան միջնարեղից, որտեղ փակուած էին նրանք, և մի մասը Արգոսի ճանապարհը բռնելով կարողացաւ աղատուել, իսկ մնացած մասը ժամանակին հասած յոյների շնորհիւ կոտորուեց։ Նիկողայոսը, որի առողջութիւնն ամբողջ գիշերը ինչ որ լաւ չէր, աղմուկի ձայնին առաջինը դուրս թողոյնների մէջ էր և կուտում էր մայնեցիների առաջին շարքում։ Մթաթեան մէջ հակառակորդները չէին երևում, և Նիկողայոսը չը նկատեց, թէ ինչպէս վէրք ստացաւ ուսին։ Վէրքն իսկոյն կապեցին, բայց գիշերը նա հիւանդացաւ այն անեղով, որն արդէն շատ զոհեր էր տարել յոյներից։

Հետևեալ օրը կէսօրին Նիկողայոսը ուշաթափ պառկած էր, կրբ յանկարծ նրա բնակարանի դրոսից ցնծութեան աղաղակներ լսուեցին. նա բաց արաւ աչքերը և մահճակալի մօտ տեսաւ Յանիին։

—Ի՞նչ պատահեց,—չնշաց հիւանդը,—Զիւլէյմային դտար։

—Միջնարեղն անձնատուր եղաւ,—պատասխանեց Յանին,—աշտարակի վրայ սալտակի դրօշակ է բարձրացրուած։

Նիկողայոսը գլուարութեաւ բարձրացաւ մահճակալի վրայ։

—Փնօք Աստուծոյ,—չնճաց նա— ուրեմն ամբողջ Մորէան աղատ է, կորնթոսից սկսած մինչև Մայնա. այժմ մնում է միայն Ջիւլէյմային գտնել:

Եւ նրա վրա նորից թմբութիւն եկաւ, ու երբ ժամանակ առ ժամանակ ուչքը վրան էր դալիս, կամաց մրմնջում էր.

—Ինչո՞ւ Միտսոսը չէ գալիս: Նա ինձ հարկաւոր է: Ես ուզում եմ ասել նրան, որ մեր հայրենիքն աղատ է, որ թիւրքերի լուծը թոթափուած է:

Շուտով ամբողջ բանակում լուր տարածուեց, թէ Նիկողայոսը ծանր հիւանդ է: Բոլորը սիրում ու յարգում էին նրան իբրև միակ անարատ զօրապետի: Հիւանդին տեղափոխեցին միջնաբերդը, որպէս մի առողջարար, բարձր տեղ և զբին. աշտարակի վերին սենեակում, որի վրայ ծածանուում էր յունական դրօշակը:

Այդ օրը երեկոյեան տեղի ունեցաւ աւարի բաժանումը և նշանաւոր եղաւ մի նախատելի, արիւնհալից գործով. . . Երկու հազար թիւրք տղամարդիկ, կանայք և երեխաներ, որոնք դեռ կենդանի էին մնացել, տարուեցին Տրիկորֆոսի ետը, մի ձոր և բոլորն անխնայ կոտորուեցին: Միևնոյն ժամանակ յայտնուեց, որ հիւսիսային կողմում թիւրքերի ափ գուրս գալու լուրը սուտ է, և իշխան Դիմիտրիոսը Հերմանի հետ ճանապարհ ընկաւ դէպի Տրիպոլիս: Բայց ճանապարհին նա տեղեկութիւն ստացաւ քաղաքի առման մասին, և Միտսոսը թոյլուութիւն վերցրեց նրանից առաջ անցնել:

Երիտասարդն օր ու գիշեր արչաւում էր և սեպտեմբերի 8-ին արեւակը մայր մտնելուց յետոյ հասաւ Տրիպոլիս:

Նա ուղղակի գնաց Պետրօ-բէյի մօտ՝ իշխանի յանձնարարութիւնը հաղորդելու, բայց Պետրօ-բէյը հետևալ խօսքերով ընդունեց Միտսոսին.

—Խեղճ երիտասարդ, հաւաքիք ոյժերդ ավուր նորութիւններ լսելու համար: Մենք նրան չը գտանք, իսկ Նիկողայոսը մեռնում է: Գնա՛ նրա մօտ:

—Գուցէ ես դեռ կը գտնեմ նրան,—չնճաց Միտսոսը՝ խոր հառաչելով.—կանայք ու գերիները ձրտեղ են:

Այստեղ ո՛չ կին կայ և ո՛չ գերի,—տխրութեամբ պատասխանեց Պետրօ-բէյը:

Միտսոսն ամբողջ մարմնով ցնցուեց և կախեց գլուխը:

—Նիկողայոս մօրեղբայրս մեռնում է,—չնճաց նա մի քանի բոպէից յետոյ.—ես կը գնամ նրա մօտ:

XII

Յածլիկ սենեակը, որակը պատկած էր մահամերձ Նիկողայոսը, լուսաւորուած էր իւզի ճրագով: Մահճակալի մօտ, յատակի վրայ պատկած էր Եանին, որը չէր հեռանում հիւանդից: Միտոսին տեսնելով՝ նա վեր թռաւ, վազեց նրա մօտ և շընջալով ասաց.

—Ո՛րքան ուրախ եմ, որ վերադարձար. նա միշտ քեզ է հարցնում:

—Առանձին թող մեզ,—ասաց Միտոսը, և երբ Եանին դուրս եկաւ սենեակից, նա ծունկ չոքեց մահճակալի առաջ և ցած ձայնով արտասանեց.

—Մօրեղբայր, սիրելի մօրեղբայր, ես այստեղ եմ:

Նիկողայոսը դժուարութեամբ բաց արաւ աչքերը, բայց չը ճանաչեց յրօջողուն, այլ սկսեց անկապ կերպով խօսել:

—Ես մեղաւոր չեմ, ես ամեն տեղ որոնեցի նրան, խեղճ Միտոս, նա ինձ երբէք չի ներիլ այդ: Բայց ուր կորաւ նա, ինչո՞ւ չէ վերադառնում... Ես քեզ ասում էի, Պետրօ-բէյ, վերջ դիր այդ ամօթալի առևարին, չես ուզում... Ուրեմն ես ինքս կը վերջացնեմ այդ և միայնակ կ'առնեմ Տրիպոլիսը: Տուէք ինձ գրօշակը, քաղաքի պարսպների վրայ կանգնեցնեմ: Ինչ... զրան համար էլ պէտք է փող վճարել... Ծախու հողիներ... Լաւ, ես ձեզ կը աամ մի միլիոն, երկու միլիոն: Է՛, ահա ես արդէն վերն եմ, ահա գրօշակն էլ կանգնեցրած է:

Հիւանդը դարձեալ թմրութեան մէջ ընկաւ, իսկ Միտոսը ախուր, դառն մտածմունքների մէջ խորասուզուած՝ նստած էր նրա մօտ:

Պետրօ-բէյը կերակուր և զինի բերաւ, բայց Միտոսը չէր ուզում ոչ մի բանի ձեռք տալ: Այսպէս անցաւ ամբողջ գիշերը: Արշալուսին Նիկողայոսն սթափուեց և Միտոսին տեսնելով՝ ճանաչեց նրան:

—Փառք Աստուծ, որ դու վերադարձել ես, Միտոս,—ասաց նա հազիւ լսելի ձայնով,—մի բարկանար ինձ և Եանիի վրայ: Մենք ինչ որ կարող էինք, զորձ գրինք, բայց նա չքացել էր...

Բաւական է, մօրեղբայր,—պատասխանեց երիտասարդը՝ արտասուք թափելով,—ես զիտեմ, որ դու ինչ որ կարող էիր, արիր: Բայց մի մեռնիր, ես առանց քեզ չեմ կարող ապրել:

Նիկողայոսը զողոջիւն ձեռքով շփեց նրա զլուխը և կամաց շնջաց.

—Այդ է Աստծու կամքը. ես կատարեցի իմ գործը, իսկ այժմ դու աշխատիր: Ես երջանիկ եմ մեռնում: Մեր հայրենիքը— Կորնթոսից մինչև Մայնա աղատ է: Բայց այդ դեռ բոլորը չէ, և հարկաւոր է մինչև Թերմոպիլէս ազատել: Երգուիր, որ կը վերջացնես սուրբ գործը:

—Երբեք ում եմ, մօրեղբւոյր: Բայց ես ինչ կարող եմ անել առանց քեզ:

—Աստուած կ'օգնէ քեզ: Իպսիլանտին վերադարձաւ:

—Նա գալիս է Հերմանի հետ:

—Ես չեմ ուզում սուտը բերանումս մեռնել,—չարունակեց Նիկողայոսը՝ յօնքերը կիսելով:—Նա լաւ մարդ չէ, ես չեմ ներում նրան, և տես, Միտոսոս, նրան մի հաւատար:

—Նրա մասին մի մտածիր, մօրեղբւոյր:

—Ճշմարիտ է, չ'արժէ նրա մասին մտածել,—չարունակեց Նիկողայոսը երկարատև լռութիւնից յետոյ. — ես ներում եմ նրան: Այդպէս էլ ասո՛ւ իրան իմ կողմից: Եթէ այստեղ լինէր, ես ձեռքը կը սեղմէի: Բայց և այնպէս չը հաւատան նրան:

Հիւանդի դէմքը շատ գունատ էր, և նա ջուր խնդրեց:

—Ես շատ բան չ'ունեմ ասելու քեզ,—արտասանեց նա հաղիւ լսելի կերպով.— ես բոլոր թագաւորներից երջանիկ եմ: Մեռնում եմ, բայց յաղթութեան բոպէին: Քեզ եմ ավաստում միայն... Յաղթութիւն... ազատութիւն... Իսկ ո՛ւր է Պետրօբէյը: Կանչիր նրան և բոլոր ազգականներին: Թող բոլորը ներս գան, բայց նախ համբուրիր ինձ:

Միտոսը կատարեց նրա ցանկութիւնը, և մի բոպէից յետոյ սենեակը լցուեց մարդկանցով, որոնք արտասուքն աչքերին՝ հետևում էին մահամերձի վերջին բոպէներին: Իր հին ընկերների տեսնելով՝ նա կամենում էր անդից բարձրանալ, բայց այդ ջանքից վերակապը տրաքուեց, և արիւնը դուրս հոսեց վերքից:

Նիկողայոսը յանկարծ վեր թռաւ անդից և բարձրաձայն բացապանչեց.

—Բոլորդ ուռած գոչեցէք... Յունաստանն ազատ է... Օ՛, Կատարինէ, գալիս եմ քեզ մօտ: Դէհ, գոչեցէք... Ուռած... Յունաստանն ազատ է...

Բոլոր ներկայ եղողների կրճերից դուրս եկաւ յաղթական աղաղակը, և նրա ձայներով հերոսի հոգին դէպի յաւիտենականութիւն փոխուեց:

Նիկողայոսի մարմինը անդափոխեցին միջնաբերդի թիւրքական մզկիթը և նրա առաջ մի մեծ փայտէ խոչ կանդնեցրին: Բոլոր յոյները, —մեծաւորներից սկսած մինչև հասարակ

զինուորը—գալիս էին հրաժեշտ աալու այն մարդուն, որին բոլորը սիրում ու յարգում էին: Իշխանն ու Հերմանը կէսօրին հասան քաղաք: Վերջինս իր հակառակորդի մահը լսելով ասաց.

—Նս երբէք կենդանութեան ժամանակ նրան չը տուի այն պատիւը, որին արժանի էր: Բայց այժմ հարկ եղած յարգանքը կը տամ նրան:

Նիկողայոսի թաղումը նշանակուած էր նոյն երեկոյն արեւոյսը մայր մտնելու ժամանակ, և նրան հողին յանձնեցին մղկիթի մօտ: Ժամերգութեան առաջին մասը կատարուեց մըղկիթում, իսկ մնացածը բաց օդում: Արդէն մութն էր, երբ վառուած ջահերի լուսով դադաղն իջեցրին գերեզմանը: Նրա գըլխի վերեր կանգնած էր Հերմանը, իսկ ոտքերի մօտ Պետրօբէյն ու Միտասը: Մայնեցիները չորս կողմից շրջապատել էին նրան և դառնապէս լաց լինում: Սովորական աղօթքները կարդալուց յետոյ Հերմանն ասաց յուզուած ձայնով.

—Այսօր նոր ազդի վերածնութեան օրն է, և Նիկողայոսն ինքը դո՛հ կը մնար, եթէ որ մենք այդպէս նայէինք այս օրուայ վրայ: Մեզ բոլորին յայտնի է, որ մեծ յաղթութիւն ենք տարել և մի կորուստ ունեցել: Բայց, վկայ է Աստուած, ոչ ոք այնքան չէ ցաւում այդ կորստի վրայ, որքան ես: Նս իմ մասին չէի խօսիլ այստեղ, եթէ որ Նիկողայոսը մեռնելիս չը ներէր ինձ այն չարիքը, որը ես արել եմ նրան: Միւրայն նրա ներումն է ինձ իրաւունք տալիս այստեղ լինելու: Դուք բոլորդ լաւ էիք ճանաչում նրան, նա ձեր հայրենակիցն էր, բայց լաց մի լինէք: Աստուած իր անասելի ողորմութեամբ թող տուաւ նրան տեսնել ուրախալի օրուայ արշալոյսը և իր մօտ կանչեց ցնծութեան բոսիկին: Սուրբ գործին այնպիսի ծառայութիւններ մատուցանելը, ինչպիսին Նիկողայոսինն էր,—մեծ բախտաւորութիւն է, բայց այն վայրկենին մեռնելը, երբ արդէն տեսնում ես քո աշխատանքների պոռուղը,—մի այնպիսի բարեբախտութիւն է, որը շատ քչերին է վիճակուում: Իր գերբով ու գործունէութեամբ Նիկողայոսն ամենաբարձր տեղերից մէկն էր զբաւում Յունաստանում, բայց իր սեփական կամքով մեռաւ իբրև հասարակ զինուոր: Թէպէս այս հանգամանքն էլ ինձ համար շատ տիրալի է, բայց դա կարծես ապացոյց է, թէ Նիկողայոսը ժողովրդի յաղթութեան նշանն էր: Յիշեցէք միշտ այս օրը՝ որպէս ազատ ազդի ծննդեան օր, իսկ Նիկողայոսին՝ որպէս ժողովրդի յաղթութեան մարմնացում: Այժմ էլ հարկաւոր չէ լաց լինել, հարկաւոր չէ հառաչել: Ի՞նչպէս հրաժեշտ տուաւ նա մեզ—յաղթական ազադակով: Նա մեռաւ երջանիկ, ցնծութեամբ լցուած, և դուք այդպէս էլ երեսկայացէք նրան: Նա

զնաց ոչ թէ գէպի մռայլ խաւարը, այլ գէպի զերեկուայ լոյսը՝ այն լուսաւոր դիտակցութեամբ, թէ հայրենիքն ազատ է: Այդ ուրախալի դիտակցութեամբ էլ մենք ճանապարհ ենք դրնում նրան գէպի գերեզման: Փնօք աղատուած Յունաստանին... Փնօք Նիկողայոսին, ազգային յաղթութեան աղնիւ մարմնացումին...

Եւ բաց գերեզմանի շուրջը, զիչերային մթութեան մէջ հնչուեց ազատուած ժողովրդի միահամուռ ցնծալին աղաղակը: Երեք անգամ կրկնուեց դա, և յետոյ բոլորը լուռ ցրուեցին:

Այդ իսկ զիչերը Միտոսը հրաժեշտ տալով Պետրօ-բէյին և Եանիին՝ ճանապարհ ընկաւ Նաւալլա իր հօր մօտ: Վշտով ու սիրութեամբ լցուած էր նրա սիրտը:

—Մի բարկանար, որ ևս գնում եմ,—ասաց նա՝ Եանիից բաժանուելիս,—բայց ես ուշում եմ մենակ մնալ իմ կրկնակի վշտի հետ: Ես զրկուեցի Նիկողայոսից և Զիւլէյմայից, որին անօգուտ որոնեցի ամեն տեղ: Նրանից և հօրիցս յետոյ ես ամենից աւելի քեզ եմ սիրում: Բայց դու ինձ կը հասկանաս:

—Այո, զնա, Միտոսս,—արտասուելով պատասխանեց Եանին,—բայց եթէ երբ և իցէ ես քեզ հարկաւորուեմ, ուղարկիր Կանիցս, և ես կը թռչեմ քեզ մօտ:

—Յիչենք Նիկողայոսին,—հաստատուն ձայնով ասաց Միտոսը.—և հայրենիքի ազատութեան մասին մտածենք միայն:

Նրանք բաժանուեցին, և Միտոսը ճանապարհ ընկաւ:

Ամբողջ զիչերն անդադար գնում էր նա և առաւօտեան մօտեցաւ իր ծնողական տանը: Հետուից տեսաւ, որ ձերուներն աշխատում է այգում, բայց չը զնաց այնտեղ, այլ արձանացած մնաց տան բաց դրան սուղև:

Այնտեղից նրա ախանջին էին հասնում գինեկործների երգի ծանօթ ձայները: Միտոսը ներս վազեց—նրա առաջ նստած էր Զիւլէյման և օրօրում էր իր երկիտային, փոքրիկ Միտոսին:

—Ի՞մ ուրախութիւն... ի՞մ կին...—բացազանչեց նա՝ երջանկութիւնից չնշասպառ եղած:

Թարգմ. Յ. ԱՐՍԻՍԱԶԵԱՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹԸ *)

(Դիցազնական վէպ)

XVI

Իսպէս անհամար դօրքեր հաւաքեց,
Եկաւ Սասմայ դաշտ բանակը զարկեց
Ու ծանրը նըստեց Մըսրայ թագաւոր:
Էնքան անհամար բաղուժիւնն էն օր
Բաթմանայ դետին եկաւ ու չըբեց,
Ով եկաւ—խըմեց, դետը ցամաքեց,
Սասմայ քաղաքում մընացին ծարաւ:
Ձէնով Օհանին զարմանքը տարաւ.
Քուրքը վեր առաւ, սարը բարձրացաւ,
Սարը բարձրացաւ, տեսաւ, ի՜նչ տեսաւ,
Ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,
Ատես էն դիշեր ձըմեռը եկել,
Ըսպիտակ ձիւնով ծածկել էր Սասուն:
Լեղին ջուր կըտրեց, կապ ընկաւ լեղուն,
Հարնց կանչելով՝ փախաւ, տուն ընկաւ.
—Վնյ, փախէ՛ք, եկա՛ւ... հնյ, հարնյ, եկա՛ւ:
—Ի՞նչը, հօրեղբնյր, ի՛նչը... ի՛նչն եկաւ:

*) Տես «Մուրճ» № 3.

—Յաւն ու կըրակը Դաւթի պինչն եկաւ,
 Մըսրայ թագաւոր ելել է, եկել,
 եկել, մեր դաշտին բանակ է դարկել,
 Թիւ կայ աստղերին, թիւ չը կայ զօրքին...
 Վայ մեր արևին, վայ մեր աշխարհքին...
 Ե՛կ, ոսկին տանենք, աղջիկներ տանենք,
 Չօքենք առաջին, պաղատանք անենք,
 Գուցէ մեզ գըլթայ,
 Մեզ սըրի չը տայ...

—Դու կնոց, հօրեղբայր, դու դարդ մի անիր.
 Դընն, քու օգուժ դու հանդիսա քընիր:
 Հիմի ես կ'եղնեմ Սասմայ դաշտ կերթամ,
 Մըսրայ Մելիքին պատասխան կը տամ:
 Ու գընաց Դաւիթ ծանօթ պառաւին:
 —Նանի ջան, ասաւ, ժանգոտած ու հին
 Երկաթի կըտոր, անթարոց, շամփուր,
 Ինչ ունիս-չ'ունիս, հաւաքիր, ինձ տուր,
 Մի էշ էլ գըտիր, որ վըրէն նըստեմ,
 Կըսիւ եմ գընում Մըսրայ զօրքի գէմ:
 —Վայ, Դաւիթ, ասաւ, մահըս տանի քեզ.
 Դու պէտք է էն հօր դաւակը լինես...

Բու հէրն ունէր կըուի համար
 Հըրեղէն ձի, ոսկի քամար,
 Ձըրահ շապիկ, կապէն հաղի,
 Աջ թևին խոչ պատարագի,
 Կուռ սողաւարտ, կայծակի թուր...
 Իսկ դու կ'ուզես էշ ու շամփուր...

—Սման, նանի, չեմ լըսել դեռ,
 Ո՞ւր են հիմի իմ հօր զէնքեր:
 —Հօրեղբօրըդ գընա հարցուր.
 Ո՞ւր են, ասա, հանիր, բեր, տուր.
 Բան է, թէ որ չը տայ սիրով,
 Աչքը հանիր, խըլիւր զօռով:

XVII

Դաւիթ գընաց հօրեղբօր մօտ.
 —Է՛յ հօրեղբայր, կանչեց հերստտ.
 Իմ հէրն ունէր կըռւի համար
 Հըրեղէն ձի, ոսկի քամար,
 Զըրահ շապիկ, կապէն հագի,
 Աջ թևին խաչ պատարագի,
 Կուռ սաղաւարտ, կայծակի թուր,
 Կը տաս—բեր, տնւր...

—Վայ, Դաւիթ ջան,

Ահից դուաց Զէնով Օհան.
 Քու հօր մահաւան տարուց, օրից
 Դուրս չեմ հանել ձին ախոռից,
 Ոչ սընտուկից թուր կայծակին,
 Զըրահ շապիկ, ոսկի գօտին...
 Ինձ թո՛ղ, ամա՛ն, մի ըսպանիր,
 Կուզես, հըրէն, գընան, հանիր:

XVIII

Դաւիթը թողեց Զէնով Օհանին,
 Դընաց, ախոռից դուրս քաշեց հօր ձին,
 Զըրահը հագաւ, զէնքերը կապեց,
 Զին հեծաւ, կանգնեց ու ձէնով երգեց.

«Սասման քոյրեր, բարո՛վ մնաք,
 Քուրու՛թին էք արել ինձ.
 Սասման մայրեր, բարո՛վ մընաք,
 Մօր նըման էք սիրել ինձ:»

Կըռիւ կ'երթամ, դուշմանը ձեզ
 Զը գայ, գերի չը տանի.
 Ո՛վ իմանայ—մին էլ էսպէս
 Ինձ չը տեսնէք կենդանի...

Խընդհում անէք, թէ դաշտ գընաք,
 Չը մոռանաք ձեր Դաւթին,
 Բարով մընաք, բարով կենաք
 Մեր աշխարհքին, մեր հանդին:

Երգեց Դաւիթ ու ձին քըչեց,
 Չէնով Օհան հողոց քաշեց.
 —Ափսոս, հազար ափսոս հըրեղէն մեր ձին,
 Ա՛խ, հըրեղէն մեր ձին,
 Ափսոս, հազար ափսոս մեր ոսկի գօտին
 Ա՛խ, մեր ոսկի գօտին,
 Ափսոս թանգ կապէն, որ հագին տարաւ,
 Ա՛խ, որ հագին տարաւ:
 Դաւիթ բարկացաւ,
 Չին քըչեց, դարձաւ.
 Օհանը վախեց,
 Իր երգը փոխեց.
 —Ափսոս, նորեւուկ Դաւիթըս կորաւ,
 Ա՛խ, Դաւիթըս կորաւ:

Էս որ իմացաւ,
 Դաւիթ մեղմացաւ,
 Իջաւ, Օհանի ձեռքը համբուրեց,
 Չէնով Օհանն էլ ինչպէս հայր ու մեծ՝
 Օրհնեց, խըրատեց նըրան հայրաբար
 Ու խըրատելով՝ գըրաւ ճանապարհ:

XIX

Իր ձին հեծաւ, քըչեց Դաւիթ,
 Ելաւ Սասմայ սարի գըլուխ,
 Նայեց ներքեւ, —դաշտը խիտ-խիտ
 Կոխած փոշին, կըրակ ու ծուխ:
 Տեսաւ, կանգնեց ամպի տակին,
 Ու էն անծայր ծովի վըրայ

Գոռաց ձէնովն իր ահագին՝
Տարածելով սարսափ ու ահ.

—Ով քրնած էք—արթնն կացէք,
—Ով արթուն էք—ելէք, կեցէք,
Ով կեցեր էք—զէնք կապեցէք,
Չէնք էք կապել—ձի թամբեցէք,
Չի էք թամբել—ելէք, հեծէք,
Յետոյ չ'ասէք, թէ մենք քրնած,
Դաւիթ զող-զող եկաւ, գընաց...»

Էսպէս գոռաց, ասպանդակեց
Ու, ինչ ամպից կայծակ զարկի,
Մըսրայ զօրքի մէջ տեղ զարկեց,
Շողացնելով թուր—կայծակին:

Ձարդեց, փըչեց մինչև կէսօր:
Կէս օր արիւնն ելաւ հեղեղ,
Քըչեց, տարաւ հազարաւոր
Մարդ ու գիակ ողջ միատեղ:

Կար զօրքի մէջ մի ալևոր,
Աշխարհք տեսած ու բանադէտ,
—Տղերք, ասաւ, ճամբայ տուէք,
Դընամ, խօսեմ ես Դաւթի հետ:

Դընաց, կանգնեց Դաւթի առաջ,
Էսպէս խօսեց էն ծերունին.
—Դաւնր կենայ կուռըդ, ո՛վ քաջ,
Թուրըդ կտրուկ միշտ քու ձեռին:

Մի ծերունուս խօսքին մըտիկ,
Տես՝ քու խելքը ինչ է կըտրում,
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մօր որդի,
 Ամեն մինը մի տան ճրարդ,
 Որը կինն է թողել էնանց՝
 Աչքը ճամբին, խեղճ ու կրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,
 Որը ծընող աղքատ ու ծեր,
 Որը լացով, քօղն երեսին,
 Նորապրտակ ջահէլ հարսին...

Թագաւորը զօրով-թըրով
 Հաւաքել է, էստեղ բերել,
 Խեղճ մարդիկ ենք սպակաս օրով,
 Մենք քեզ վսաս ինչ ենք արել:

Թագաւորն է քու թըշնամին,
 Կրուիւ ունիս, իր հետ արա.
 Հէր ես քաշում թուր-կայծակին
 Էս անճարակ խալխի վըրայ:

—Լաւ ես ասում դու, ծերունի,
 Ասաւ Դաւիթն ալևորին,
 Բայց թագաւորն ո՛ւր է հիմի,
 Որ սե կապեմ նրա օրին:

—Մեծ վըրանում քընած է նա,
 Է՛ն, որ միջից ծուխը կ'ելնի.
 Էն ծուխն էլ հօ ծուխ չի, որ կայ,—
 Գողորշին է իր բերանի,

Ասին. դէպի մեծ վըրանը
 Ասպանդակեց Դաւիթն իր ձին,
 Քըչեց, դընաց ու դըռանը
 Գուռաց կանգնած արաբներին.

—Ո՞ւր է, ասաւ, ի՞նչ է կորել,
Դ՛ուրս կանչեցէք, գայ ասպարէզ.
Թէ մահ չունի—մահ եմ բերել,
Գըրող չունի—գըրողն եմ ես:

Մեղիքն, ասին, քուն է մըտել,
Օխաը օրով պէտք է քընի.
Երեք օրն է գեռ անց կացել,
Չորս օր էլ կայ—քունը առնի:

—Ի՞նչ, բերել է ազքատ ու խեղճ
Խալխին լյրել ծովն արիւնի,
Ինքը մտել վըրանի մէջ,
Օխաը օրով հանդիստ քընի՛...

Քընել-մընել չեմ հասկանում:
Վէր կացրէք շուտ, գուրս գայ մէյդան,
Էնպէս գըրան ես քընացնեմ,
Որ չը զարթնի էլ յաւիտեան...

Ելան մարդիկ, ճարահատուած՝
Շամփուր գըրին թէժ կըրակին
Ու զարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մեղքի բաց կըրընկին:

—Օ՞ք, էլ հանդիստ քուն չունի մարդ
Էս անիծուած լըւի ձեռից,
Խոր մըռընչաց հըսկան հանդարտ
Ու շուտ եկաւ, քընեց նորից:

Ելան, բերին մեծ գուլթանի
Խովը, գըրին թէժ կըրակին
Ու կաս-կարմիր, կէճկըծալի,
Շիկնած գըրին մերկ թիկունքին:

—Օ՞ք, էլ հանգիստ քուն չունի մարդ
 էս անիրաւ մոծակներէց,
 Աչքը բացաւ հըսկան հանդարտ,
 Ուզում էր ետ քընել նորից.

Տեսաւ Դաւթին, գլուխն ահեղ
 վեր բարձրացրեց մըռընչալով,
 Փըչեց վըրէն, որ թըռցընի
 էն աժգըհին մի փըչելով.

Տեսաւ, տեղից ժած չի դալի,
 Ձարմանքն ու ահ պատեց հոգին.
 Արնոտ աչքերն ըսպառնալի
 Յառեց խոժոռ Դաւթի աչքին:

Նայեց թէ չէ—ըզգաց՝ իր մէջ
 Տասը գոմչի ուժ պակասեց,
 Պառկած տեղից վրայ նստեց
 Ու ժպտալով՝ հետը խօսեց:

—Բարձ՜վ, Դաւթ. յոգնած ես դեռ,
 Եկ, մի նստիր, խօսենք կարգին...
 Յետոյ դարձեալ կուի կ'անենք,
 Եթէ կըռիւ կ'ուզես կըրիին...»

Իր վըրանում բըռնակալը
 Քառսուն գազ խոր հոր էր փորել,
 Յանցով փակել մուտ բերանը,
 Վըրէն փափուկ խալի վըռել:

Ում որ յաղթել չէր կարենում,
 Շողմելով կանչում էր նա,
 Նըստեցնում էր իր վըրանում
 էն կորստեան հորի վըրայ:

Իջաւ Դաւիթ ձիուցը ցած,
 Դընաց, նըստեց... ընկաւ հորը:
 — Հն, հն, հն, հն, վերից խընդաց
 Մտայ դաժան թագաւորը:

— Դէ, թնղ հիմի դընայ, խաւար
 Հորում վըթի, էնքան մընայ.
 Ու ահագին մի ջաղացքար
 Բերաւ, դըրաւ հորի վըրայ:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)

Մ Ա Կ Ո Ի*)

I

Միանքու կամ Կապան-կալէսի.—Երկուսն էլ միևնոյն տեղի անուններն են, որ անցեալում ասում էր. Միանքու պարսկերէն է և նշանակում է երկու քարերի-ապառաժների մէջտեղ, որ հետզհետէ աղճատուելով Մակու ասուեց և այսօր էլ յիշում է այդ անունով. իսկ Կապան-կալէ (սլարս. նշանակում է վարազների բերդ) յիշում էր աւելի հին ժամանակ. այս անունով յիշում է Շահ-Աբասը իր մի ստանաւորի մէջ, որ փորագրել է տուել Մակուայ ապառաժի վրայ, Մակուն քանդած ու աւերած ժամանակը, հիջրէթի 1052 թւականին. այդ արձանագրութեան մէջ ասուած է. «Կապան-կալէն, որ յայտնի էր ամբողջ աշխարհին, ևս քանդեցի ու կործանեցի...»

Բոլոր հետքերը ցոյց են տալիս, որ Շահ-Աբասի ժամանակ այնտեղ տիրող տարրը միայն հայեր են եղել, և հաւանական է, որ Շահ-Աբասը ինչպէս Ջուղան, այնպէս էլ այդ հրաշալի տեղը քանդեց ու ժողովրդին գերի վարեց **):

Մակուն ընկնում է Պարսկաստանի հիւսիս-արևմտեան ծայրում, փոքր Մասսի հարաւային ստորոտում, Արաքսից արևմուտք, արևելքից դէպի արևմուտք ուղղութեամբ. իրարից $2\frac{1}{2}$ —3 ժամ հեռաւորութեան վրայ ընթանում են երկու զուգահեռական լեռնաշղթաներ, որոնց արևմտեան ծայրում բացւում է մի մեծ փոս քարածոց, ուր տեղաւորուել է Մակուն: Երկու լեռնաշղթ-

*) Համեմատիր՝ «Մակուի» մասին նաև այնցեալ տարուայ «Մուրճի» № 12 տպուած յօդուածը:

**) Ժողովուրդը գերուելու մասին աւանդաբար պատմում է ներկայումս:

թաները *) տեղ-տեղ կարծես միանում են իրար հետ. միայն բաժանում է նրանց Ջանգեմար դեառը, որ անցնում է երկուսի արանքից. այդ կատաղի դեառը դարերի ընթացքում կտրտել է շերտեր ու անդնդային ճանապարհ բաց արած իր համար՝ վազել է ու թափուել Արաքսը:

Սև-սև լաւայի քարերի արանքից երբեմն սպիտակ ու երբեմն կամրագոյն օձի նման ցոլում է Ջանգեմարը, կորչում է այս ու այն քարի արանքում մտնում է անդունդ կամ քարի վրայից սողալով՝ շտապելով հեռանում է աչքիցդ:

Քարածայր բերանի երկու կողմը ձգւում են հնադարեան բերդի պարիսպները կարմրագոյն քարերով. պարիսպների միջում տեղ-տեղ ցցւում են սպառաժներ, որոնք կարծես յատկապէս հանդոյցներ լինեն, որ մի ուրիշ ուղղութիւն են տալիս պարսպին. պարսպի վերին (հիւսիսային) ծայրերին բացւում են դռներ, այդ քարէ ստաստաղի միջով անցնող ճանապարհի մուտքը:

Մակուայ քարի միջով են անցնում Թաւրիզից դէպի Թիւրքիա—Բիթլիս, Կարին ու Տրապիզոն զնացող ուղտի կարավանները: Ճանապարհի աջ թևի վրայ գէղի արեմուտք՝ հնադարեան հրաշալիքներից որպէս նմուշ զետես մնում է մի քարէ կամուրջ երկու սպառաժների գլխին տնկուած, որ հազիւ տեսնւում է ներքևից (Մակուից) դիտողին: Քարածոցի ճանապարհից վերև սպառաժի վրայ փորագրուած կան հայերէն գրեր, որ անմատչելի են կարգալու համար. վերև բարձրանալու և կարգալու համար թէ միջոցներ և թէ բաւական ծախս է հարկաւոր:

Պատմական ճանապարհի վերն ու վարը հակայ սար-բարի ձեղրուածներում կան այրեր, որոնք իբրև դադանի պահարաններ են ծառայել ժամանակի տեղացիներին. այդ այրերից մէկը, որ այժմ էլ մատչելի է տեղացիներին (մակուեցիներին), մէջն աղբուր ունի. այդ այրի բերանից կախ էր ընկած մի շղթայ, աստիճաններով բարձրանում ու հասնում էին շղթային, որի օգնութեամբ էլ բարձրանում էին այրի բերանը. մինչև վերջերս այդ այրը դորձ էր ածոււմ որպէս բանտ Մակուայ խաների ձեռքին. բանտարկեալը մնում էր այդ տեղ ու դիտում էր ներքև. իջնելու կամ փախչելու ճար ու ճամպայ չը կար: Այնտեղ կար դարերից մնացած աման-չամանի կտորտանք ու մի հատ էլ երկանք՝ հատիկներ աղալու համար: Այս այրից աւելի բարձր,

*) Հորաւային լեռնաշղթայի արեմտեան գագաթն (Մակուայ դիմաց) ունի հրաբխային բերան, որին տեղացիները կրակ-ընկային են ստում. 500 ոտնաչափ խորութիւն ունի:

դէպի վերև, որ այժմ անմատչելի է բոլորովին, մի ուրիշ ձեղքուածքից արծիւները մօտ ժամանակ այնտեղ կուեկիս՝ մի դաշոյն և մի քանի շորի կտորտանք ևն ներքև պեղ, գուցէ և լինեն այդտեղ շատ հնութիւններ: Ժամանակին այդ այրերը, որ տեղաւորուած են կ'ասես երկնքում բարձրացած քարակազմ կամարի մէջ, ամենքն էլ մատչելի են եղել մարդկանց համար:

Ահա այս բերդն էր, այդ քարէ ճանապարհը, ազատամի ծոցը մտած ու տեղաւորուած Կապան-կալէն էր, որ Շահ-Աբասը քանդեց ու հիմնովին խորտակել տուաւ, որտեղ այդ ժամանակ մնաց միայն քարերի մի ամբողջ կոյտ... և անցնում է մի դար ու էլ աւելի, որտեղ կրկին բնակութիւն լինելու մասին ոչինչ չէ պատմուում, մինչև դալիս ու սկիզբ է առնում Մակուայ խանութիւնը:

II

Նադիր-Շահի օրերն էր, տաճիկներն ու պարսիկները միշտ կուում էին իրար դէմ, խլում էին Երևանի գաւառն ու Ատրպատականն իրարից: Շահը Թաւրիզումն էր, երբ գեռ տաճիկները տէր էին Մակուայ և Խոյի գաւառներին, երկու կողմն էլ ոչ գոճ և ոչ էլ հաշտ էին իրար հետ, միջոցներ էին հնարում ու մտածում կրկին խլելու երկրներն իրարից: Ինչո՞ւ այս խառնակ ժամանակ Երևանում ապրող թաթար քանաթ կապիլայի աղսախկալ Ահմադ-սուլթանն այս ու այն կողմն է բնկնում, թախանում մի թալան կամ աւար ձեռք գցելու համար: գալիս է, հասնում Չօրս աւանը, որ զիսաւոր կենտրոնատեղին էր Թաւրիզի և Մակուի մէջ. Խոյը այնքան բազմամարդ ու անուանի չէր այդ ժամանակ, որպէս առևտրական քաղաք ճանաչուում էր Չօրսը. Ատրքպատականի կարալանն այստեղից էր անցնում ու Մակուից էլ ուղղուած՝ դէպի Թիւրքիա էր գնում: Չօրսն այժմ էլ 700 տնից բազկացած թրքաբնակ մի գիւղ է Խոյի ու Մակուի մէջակողմ, Խոյից 6 ժամ հեռու: Չօրսում կայ մի հին բերդ, հնաչէն բաղնիսներ և ջրի մի քանի մեծ և փոքր աւազաններ մարմար քարերով շինուած, որոնք այն ժամանակի պարտէզների ու աների պակաս զարդը լրացնում էին: Չօրսը տաճիկական մի փոքրիկ քաղաք էր, և կառավարում էր այդտեղ տաճիկ փաշան...

Ահմադ-սուլթանը թալան չը գտնելով ու մի կողմից տեսնելով տաճիկների շարժումները, իր ծրագիրը փոխում է բոլոր

բովին ու սկսում է հետաքրքրութեամբ հետեւել անցուղարձին. այսպէս պարապ շրջելիս Չօրսի փողոցներում՝ մի օր տեսնում է, որ փաշայի դրան առջև ծառան ձին թամբած ու պատրաստած՝ սպասում է փաշային, որ պէտք է գնար բաղնիս. մի ինչ որ դործի պատճառով ծառան ձին յանձնում է Ահմադ-սուլթանին ու ինքն անհետանում է. փաշան իսկոյն դուրս է գալիս, առանց հարց ու փորձի նստում է ձին ու գիմում դէպի բաղնիս. հետևում է և Ահմէդ-սուլթանը, բաղնիսի դրանն էլի օգնում է փաշային, որ ձիուց իջնում ու ներս է գնում, իսկ Ահմադ-սուլթանը պատրաստի արարական նփոյզը նստած՝ շտապում է դէպի Թաւրիզ ու տեղն ու տեղը տաճիկիների անկիւքի մասին պատմում է Նազիր-Շահին, վերջինս խոստանում է ցանկացածը տալ, եթէ նրա առածը իրողութիւն լինի... Նազիր-Շահն անմիջապէս ուղարկում է զօրքը Ահմադ-սուլթանի ուղեկցութեամբ և յաղթութիւնը տանում է: Այսպէս Ահմադ-սուլթանն իր փափագին է հասնում՝ խնդրելով Մակուն, որ Շահը իսկոյն նուիրում է նրան Ահմադ-սուլթանը հաւաքում է իր էլը-բայաթներին ու կամաց-կամաց հաստատում է Մակուն մօտ դար ու կէս առաջ, և մինչև այսօր էլ Մակուն մնում է նրա յաջորդների ժառանգութիւն:

Ահմադ-սուլթան-խանին յաջորդեց Հիւսէյն-խանը, զրա օրով Մակուայ մուլաներից Միրզա-աղասին սաղրադամութեան բախտին արժանացաւ. սրա չնորհիւ էլ բանեց և մակուեցիների բախտը. ժամանակակից Մահմէդ-Շահը չնարհեց մակեցիներին տաննչորս գիւղեր. նրանք կամաց-կամաց առաջ գնացին ու տեղ գտան կառավարական շրջաններում, հետզհետէ չէնցրին Մակուն ու իր գաւառը: Հիւսէյն-խանը խաղաղ կեանք վարելով մեռաւ, հարստութիւնը թողնելով իր սրգուն:

Հիւսէյն-խանին *) յաջորդեց Ալի-խան, որի ժամանակ տեւիլի ու տեւիլի հարստացաւ Մակուն. Մակուայ խաները հրապարակ ելան, մեծ-մեծ պաշտօնների զլուխ անցան, Իսպահանի, Խորասանի, զանազան քաղաքների ու տեղերի դատաւորներ կղան, գինսուորականութեան մէջ մտան, պաշտօններ ստացան. այսպիսով միջոց եղաւ նրանց համար ահագին դամարներ ձեռք բերելու, միևնոյն ժամանակ ազդեցութիւն բանեցնելու կառավարութեան վրայ. նրանք կապուեցին զանազան բարձր ընտա-

*) Սրա օրով նորոգուած է ս. Թաղէի վանքը Սիմէոն եպիսկոպոսի ձեռքով. վանքի շրջապատ պարսպների վերանորոգութեանը նպաստել է և Հիւսէյն-խանը:

նիքների հետ, կազմակերպեցին իրանց համար տեղական մի ղինուորական ոյժ, որ այսօր էլ մնում է, Շահից ստանում են առանձին ծախս ու սոճիկ զրա համար: Խաները իրանց հաւաքած գումարներով էլ շատ գիւղեր գնեցին, այնպէս որ Մակուայ ամբողջ գաւառին գրեթէ տէր դարձան:

Ալի-խանից յետոյ գալիս է Թէյմուր-խանը, որ յայտնի է ամենքին. Թէյմուր-խանը բաւական ժամանակ մնացել է Թէհրան՝ Շահի զօրագնդի մէջ՝ փոքր պաշտօնով, որտեղ բաւական ուսումնասիրել է ռազմագիտութիւնը: Նա պարսկին յատուկ խորամանկութեան հետ միանդամայն յանդուգն էր ու անվախ, միևնոյն ժամանակ բոլորովին անկրօն, այնպէս որ ոչ մի կերպ նա չէր հաշտուում ոչ մոլլայի և ոչ էլ սէյիդների հետ և նրանց ոչ մի դէպքում թոյլ չէր տալիս, որ տեղ բռնեն իր շրջանում, ծիծաղում էր նրանց վրայ ու ծագրում էր նրանց բոլոր ծիսակատարութիւնները, նա չէր մասնակցում նրանց սուղ ու չիվան օրերին. նա սիրում էր միայն կոխ, թալան, սիրում էր և կտրիճին. միշտ կոխ էր անում, կռիւներ էր սարքում ու կռեցնում էր սրան ու նրան իրար հետ: Քիւրդ գեղերին աւելի տեղ տուաւ ու հաւաքեց իր չորս կողմը. այդպէս էլ զրանց միջոցով էր ստանում Տաճկաստանից, Ռուսաստանից և Պարսկաստանից բերած թալանը: Թէյմուր-խանն էր, որ գնաց իր մարդկանցով ու առաջին հարուածը հասցրեց Շէյխ-Իրազուլլահին Ուրմիէ սահմանում: Ռուս-տաճկական պատերազմի ժամանակ նա հանգիստ չը նստեց, շարունակ այս ու այն կողմը գնաց ու մարդիկ ուղարկեց, այսպիսով ոչ միայն թալան ու հարստութիւն բերաւ, այլև մեծ քանակութեամբ գէնքի ու պաշարի տէր դարձաւ. Մակում էլ ոչ մի մարդ—հայ, քիւրդ, թուրք չէր մնացել, որ հրացան չ'ունենար, ամենքն էլ ղինուած ու ղինուում էին Մարտենի ու Բերդանի հրացաններով: Այժմ էլ այդ խաների մէջ կարծես այդպիսի մի պահանջ կայ, «սխ, ասում են, ինչո՞ւ չեն կուում սուաներն ու տաճիկները, որ մի քիչ հրացան բերենք»:

Թէյմուր-խանը մի պատուհաս էր դարձել ամբողջ տեղական խաների գլխին. ամենքն էլ վախենում էին նրանից. վախենում էր մինչև անգամ պարսիկ կառավարութիւնը, որ մի գուցէ ապրտամարտի իր դէմ. Թէյմուր-խանը կարևորութիւն չէր տալիս կառավարութեանն ու նրա մամուրներին, որ զանազան պահանջների համար գալիս էին Մակու, զրանց շատերին էր ճանապարհ ցոյց տուել, և ոմանց էլ ծեծելով վերագարձրել է յետ: Թէյմուր-խանի օրով աւելի ազատ էր Մակուն ու աւելի հանդիստ, քան թէ այժմ. այդ ժամանակ Թէյմուր-խանն էր մենակ զատաւորը

Մահուի մէջ, բայց այժմ նրա մեռնելուց յետոյ ամենքն էլ դատաւորութիւն են անում, ներքին կռիւները շարունակուում են անդադար ու միշտ արորում, ճիւղատում են խեղճ բահաթին *):

Թէյմուր-խանին յաջորդեց Մուրթզա-ղուլի-խանը, ներկայ դատաւորը կամ սարգարը, որ իր հօր հակապատկերն է—հիււանդոտ, վերին աստիճանի կասկածոտ ու փոփոխական մէկն է. ամեն տարի ճանապարհորդում է կովկաս ու հեռու է մնում տեղական ղալմաղալից, իրան վէրիլ ղնելով մէկ ուրիշի: Սրա օրով Մահուի դրութիւնը փոխուեց բոլորովին. Թէյմուր-խանի մեռնելուց յետոյ անմիջապէս՝ կառավարութեան ժամուրները բըզբըզարով սկսեցին թափուել այնտեղ, Մահուայ դատաւորութիւնն աճուրդի հանեցին, Մուրթզա-ղուլի-խանից բաւական համեզ պատահներ ուտելուց յետոյ՝ իր հօր Թէյմուր-խանի տեղը նստեցրին: Պարսիկ կառավարութիւնն այս հանգամանքից շատ ու շատ օգտուեց, Մահուից հանեց ահագին գումարներ ի վրէժ նախորդ տարիները՝ միանգամայն իր ազդեցութիւնը ի ցոյց ղնելով այնտեղ:

III

Մուրթզա-ղուլի-խանի դատաւոր լինելուց յետոյ սկսուեցին անսկզբ խռովութիւններ, ներքին երկպառակութիւնները սովորական դարձան. պարսից կառավարութիւնն էլ միշտ վառ է պահում նրանց մէջ իր ինարիզները ու այսպիսով երկու կողմից էլ փող է պսկում. բացի այդ՝ Թէյմուր-խանից յետոյ մահուեցի խաները վարժուեցին սահմանուած տուրքից զատ զանազան վէճքեաչներ (նուէրներ) էլ տալ Խոյի դատաւորին, Թաւրիզի դատաւորներին հայլն:

Հետաքրքրութեան համար այստեղ ղնում եմ խաների ստացած որոշ ոսճիկների—ցորենի, փողի ու սահմանուած ամբողջ տուրքերի ցուցակը. միևնոյն ժամանակ նրանց պաշտօնապէս ներկայացրած՝ առանձին առանձին, և ամբողջ՝ զիւղերի թիւը.

*) Հոգադործ, աշխատող դասակարգին Պարսկստանում սահասարակ բահաթ են ասում:

Մսկուայ խաների ստացած թռչակի և կառավարութեան վճարած տարեկան տուրքի հաշիւը.

Թ ռ ա կ ն և ր .

Տ ու ր ք և ր .

Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր .		Չինս* խալ- վար.	լիտր.	դռան.	դինար.	գիւղ.	Չինս խալվար.	լիտր.	դռան.	դինար.
1	Մուրթիւ-գուլի-խան (սարդար)	—	—	8360	—	20	317	37	23636	—
2	Արդուլլահ-խան	—	—	3666	—	7	672	24	15128	—
3	Մահմադ-փաշա-խան	—	—	—	—	6	103	27	3050	—
4	Փարաջուլլահ և Իսսադուլլահ խաներ (որդիներ) . . .	—	—	3600	—	12	53	35	2936	—
5	Իհսակ փաշա	—	—	—	—	4	64	75	4450	—
6	Բալուլ-աղա և Մահմադ-փաշա (որդիք)	—	—	8360	—	18	199	65	12681	—
7	Առադուլլահ-խան	20	—	1800	—	7	189	48	5468	276
8	Չարիք-փաշա	—	—	2500	—	4	207	48	5795	94
9	Իմամ-գուլի-խան	—	—	1000	—	—	—	—	—	—
10	Մի ֆուլլի (դունդ գորքի, 600 հոգու) ծախսերի համար .	66	35	4800	—	—	—	—	—	—
*) Չինս նշանակում է բերք—ցորեն, գարի, ¹ / ₂ դինարի 100-ը հաւասար է մէկ կոպէկի, 1000 դինարը արժէ 20 կոպէկ կամ մի դռան:		86	35	34086	—	78	1807	59	73144	370

Մ Ո Ւ Ր Ճ

The first part of the document discusses the importance of maintaining accurate records of all transactions. It emphasizes that every entry, no matter how small, should be recorded to ensure the integrity of the financial statements. The second part of the document provides a detailed breakdown of the company's revenue and expenses for the period. It includes a table showing the following data:

Category	Amount
Revenue	\$1,200,000
Cost of Goods Sold	\$750,000
Gross Profit	\$450,000
Operating Expenses	\$300,000
Net Income	\$150,000

The final part of the document concludes with a summary of the company's financial performance and a recommendation for future actions. It suggests that the company should continue to focus on cost reduction and revenue growth to improve its overall profitability.

Յուշակից երևում է, թէ որքան ողորմելի տուրք են տալիս կառավարութեան: Եազըրան փողըրմաղ (գրուածը չի ջնջուել), ասում են իրանք խաները: Թէ ինչ ժամանակ է որոշուել այդ տուրքը, և ինչ ժամանակ է եղել, որ միայն 78 դիւղ է ունեցել Մակուս, չը գիտեմ. այժմ ընդհակառակն՝ փոխանակ 78 դիւղերի, Մակուսի դիւղերը 300-ից էլ աւելի են, էլ ինչպէս հարուստ չը լինեն խաները. հէնց այսօր Պարսկաստանում՝ կարող եմ ասել, որ ամենահարուստ մարդն է Մուրթլա-ղուլի-խան սարգարը (Թէյմուր-խանի որդին). նա ամեն տարի ահագին քանակութեամբ փողեր է փոխադրում կովկաս և տեղաւորում է բանկերում, նա մեծ եկամուտ ունի և աննշան ծախս. 150-ի չափ սեփական դիւղերի արդիւնքն ստանկուց զատ՝ ստանում է և քրդական աշիրէթներից-ցեղերից տարեկան խաֆիրը, իսկ զրսից՝ կալուածներից եկած եկամուտներն էլ առանձին ունի Երևանում, Նախիջևանում, Խոջում և այլ տեղերում:

Մակուայ գաւառում առհասարակ տասանորդական տուրքը վեր են ածնում ըահաթից (գիւղացիներից) 9-ից 3 մաս, շատ քիչ տեղեր պատահում են 9-ից երկու, այն էլ խիստ անբերրի տեղեր. խեղճ գիւղացին յարգից, խստից էլ ըահրա (տասանորդ) տալուց զատ՝ ստիպուած է փոխադրել այն, որպէս և տասանորդ վերցրած սերմը, ուր որ խանը կամենում է. օլլամ-ից (ձրի աշխատութիւն) զատ, որ գնում է խանի համար առու հանելու, վար ու քաղ անելու, առն ու պատ շինելու, մշակութիւն անելու, գիւղացին ստիպուած է միաժամանակ պատրաստ ունենալ և պահել իր ձին ու հրացանը՝ խանի հրամայած տեղը գնալու, թալան բերելու կամ կուելու համար, որ ամեն մի գէպքում սպասում է. նա չէ կարող հեռանալ և հեռու տեղ գնալ. խանը կանչած բոլէին կթէ ներկայ չէ գտնուում, այն ժամանակ ջարմա (տուգանք) է տալիս, ձեծւում, մինչև անգամ առնն էլ թալանի է արւում:

Խաներն էլ ցոյցի համար անսպասելի կերպով կանչում, տանում-բերում են խեղճերին, օրերով պահում, հրացաններ են արծակիլ տալիս նրանց ու գուարձանում, վարժութիւն-բան չը կայ, հէնց օղի մէջ են պարպում. զինակիր դեղջուկն ստիպուած է հացի պաշարն իր հետ պահել, շատ անգամ օրերով շարաթներով են սպասում ու քարչ են գալիս այս ու այն կողմ. խաների վէճ ու կռիւն էլ առիթ են տալիս միշտ այսպիսի հաւաքումների, աշխատող գիւղացին բան ու գործը թողած՝ սպասում է նրանց կամայականութիւններին, թէ տեսնես՝ կրք պիտի բաց թողնեն, որ գնան իրանց աները, խեղճեր, որոնք տանում են թէ

նեղութիւն, թէ՛ ծախսեր, ուտելիք են ամնում ապրում, պաշտպանում են, դրանց և ոչ մէկին էլ չէ մասնակցում խանը *):

Սաներն ամենրն էլ ապրում են Մակում, թւով 15 տուն, բոլորն էլ մօտիկ ազգականներ են իրար—հօր հօրեղբոր որդիներ են. դրանք ոչ մի ժամանակ հաշա չեն լինում իրար հետ, այսպէս թէ այնպէս կուում են և մէկը միւսին անպատեկու ժամանակ բռնում են խեղճ բահաթին, ձեծում են, բանտարկում են, աուզանքի են ենթարկում. ու այս կերպ փոխադարձ միւս խանն է անում. մէկը միւսի գիւղացուն գցում է քարի ու սրի արանք, այն ժամանակ են գաղարում, երբ տեսնում են, որ երկու կողմից էլ բաւական վնասուեցին. մէկ էլ տեսնես, որ առօք-փառօք պարսիկ մամուրը եկաւ, այս ու այն կողմը հաշտեցնելու ձեռնարկութիւններ արաւ, երկու կողմից էլ իր զահմաթ-քիրահսին (նեղութեան վարձ) առած՝ գնաց. հալիւ գուրս է գալիս նա, որ էլի շարունակուում է կոխը և հանում այն աստիճան բարդութիւնների, որ առաջն առնել բաւական պէտք է լինում. օրինակ՝ այս սարի սարգարի քրոջ որդի Իսաղուլահ-խանի և նրա հօրեղբոր որդի Մահմադ և Ասիեար փաշաների մէջ երկուստեք լինելու ծագեց. նախ սկսեցին քանդել մէկը միւսին պատկանած արտերը, կտրատել այգիները, ծառերը հայրն, առունները քանդել, գիւղացիներին ելումուտըն արգելել, բացարձակ բռնել, ձեծել և բանտարկել. այս դրութիւնը շարունակուեց գարունից մինչև աշնան վերջերը. սկսեցին հրացաններ պարպել սնների պատուհանների վրայ և ահագին վնաս հասցնել. խառնուեց և սարգարը **). այրեցին իրար խոտի դէզեր. սարգարը քանդեց հակառակ կողմի կարախաչի ***) ամարանոցները. Խրաքանջիւր խան իր գիւղերից գինուորներ հաւաքեց ու տեղ-տեղ գիրքեր ընտրեց իր համար, օրուայ պարապմունքն էր միայն՝ գիւղեր թալանել, մարդիկ ձեծել, աուն ու տեղ այրել, մի խօսքով աւերելն էր. մի քանի անգամ հակառակ խմբակներն ընդհարուեցին իրար հետ, որտեղ սպանուեցին տասից աւելի՝ քրորդ ու պարսիկներ: Մէկը բռնեց մի գիւղապետի, ձեծելով մեռցրեց (պարսիկ),

*) Վերջին տարիներս սովորութիւն եղաւ երբեմն-երբեմն քաջաերկու համար օրեկան մի-մի ցամաք հայ և ձիերի համար զարի բաշխել:

**) Մակուայ գատաւորին սարգար անունն են տալիս, որ երկրի տէր սակ է, մի ուրիշ փաղոսով իղբալ-սալթանա են ասում:

***) Մակուայ խաների ամարանոցը Մակուի արեմտեան կողմը, 3 ժամ հեռու:

միւսը բռնեց, հակառակ գիւղապետի քիթ ու ականջները կտը-
րեց: Այս դրութեան մէջ էլ իւրաքանչիւր կողմի խաների յա-
տուկ պատրաստած ասպատակամբերը թալան էին անում.
ոչխար ու տաւար էին բերում, գիւղում ցորենի ու դարու ամ-
բարներ էին գրաւում, քանդում, աւերում, իրանց ուղածն
անում, գիշեր-ցերեկ պարապ չէին ճանապարհները, խեղճ գիւ-
ղացին իր տուն ու տեղը բարձած սայլի, եղան, էջի վրայ՝
փախչում էր այս գիւղը, փախչում էր այն գիւղը և ոչ մի տեղ
սպառնալով թիւն չէր գտնում. այսպէս շատ գիւղեր՝ տեսնում
էիր՝ տուն-տեղ թողած, գոները բաց, յարգն ու խտոր ցրիւ և-
կած, ամեն բան թափթփած, խառնիխուռն, ոչ մարդ կայ, ոչ
չուն ու կատ ու և ոչ մի անասուն, այդ տեսարանը միայն մարդուն
սարսափ էր աղղում. վերջապէս էլի մամուրները շտապեցին՝
մեկ, երկու, երեք, ամենքն էլ իրար ետևից. եկաւ թագաժա-
ռանդի ամենամօտիկ ու ազդեցիկ մարդը, մէկից հարիւր սուի
պոկեց, միւսից էլ մի ուրիշ գումար, իրար մօտ տարաւ և՛
«հաշտուեցէք»՝ ասաց ու խուղա-հաճիզ անելով մեկնեց թաւ-
րիզ. բայց խաները էն է որ տեսան իրար, գէնա օ թաս,
գէնա օ դարաղ (նորից նոյն թասը ու սանրը): Այժմ էլի մամուր
կայ Մակում և սարգարից պահանջում է հակառակ կողմի գիւ-
ղացիների վնասը՝ որ հաշւում են 150,000 թուման (300,000
բուրլի):

Խաները մեծ մասամբ բարոյսպէս փչացած մարդիկ են, նը-
րանք որեէ մի տեսակէտից ժողովրդի շահերը աչքի առջև չ'ու-
նեն, և միմիայն իրանց շահն են ճանաչում ու նրա մասին մը-
տածում. պարսիկէն քիթ թէ շատ կարգալ իմանում են, բայց
գրեղ ոչ, գա յատուկ է միայն միբղային (գրագրին). միբղան է
կարգում ու գրում նամակներ, իսկ խանը իր կնքով կնքում է.
ստորագրելը խիստ ամօթ բան է, իրանց ամբողջ կեանքը անց
են կայնում կերուխումով, ներքին զաւրմաղալով: Շատ անգամ
գնում են Կովկաս, Թիֆլիս, Երևան, Բագու, Նախիջևան և այդ
տեղերում հասարակաց տներն այցելելուց յետոյ՝ գինեաներին
լաւ ծանօթանում ու կոնծում: Այսպէս թէ այնպէս կրօնի
մասին ոչինչ գաղափար չ'ունեն, բայց որպէս ի ցոյց իրանց ժո-
ղովրդին, սէյիզ ու մողային, կրօնական ծիսակատարութիւն-
ների ժամանակ խիստ մոլեռանդ են գառնում, նրանց սուգ ու
չիփանի օրերում մասնակցում են խմբերին. այս տարի, վերջին՝
դաթիլի, Հիւսէյնի սպանուած օրը ինքը, սարգարն էր զաստա-
բաշին (խմբապետ), նրան հետևում էր իր հակառակորդ խանը, ու-
րիշները և նրանց հետևորդները. սարգարը և իր խումբը ոտաբորիկ,

սպիտակը շապիկ^{*)} վզերից կախ, սուրը ձեռներին, դիմերին վերքեր տալով, արիւնդուայ, Հասան, Հիւսէյն, շախսէ, վախսէ անելով՝ շրջում էին ցեխոտ փողոցներում: Այստեղ կրօնական զպայտմաներով լի, ֆէյզամբարի (մարդարէի) անուան շէհիզ (զոհ) լինելու արամադրութեան տակ՝ որպէս պատրաստ յաւիտենական կեանքը ճամպորդելու, հրապարակաւ հակառակորդ խաները համբուրում են, գրկում են իրար, գնում են իրար առն, և չես կարող երևակայել, որ որեւէ մի թթու խօսք եղած լինի զրանց մէջ. ժողովուրդն ուրախանում է, խաղում ու խնդում է աղաների փոխադարձ համակրանքի ու սիրոյ համար, գէթ սրանց այն տեսակէտից, որ իրանք վասաների չեն կնթարկում. բայց արի տես, որ սլի օրերը վերջացան թէ չէ, խաներն սկսում են էլի իրանց սովորական խաղը... և ինչքան ժողովուրդը ապահովուած լինի գրանցից, շատ գէպքում հարստութիւնն ու կեանքը տալուց լետոյ պատիւն էլ է վրայ գնում:

Թողնենք խաներին, միրզաներն էլ իրանց ընկած բաժնում պակաս տեղ չեն թողնում. կաշառք են անում, գեղերում տասանորդ հաւաքելու ժամանակ իրանց ցանկացած քէյֆը սարքում են... ծեծում են, կեղերում են, ջարմա են առնում. հերիք է մէկի հետ վատ եղան, առիթ են վնդրում խեղճի ցանքերից եկած արգիւնքը իւրացնելու և լցնում աղայի ամբարը. դանդաղը չէ լսում, ծեծն էլ վրան աւելանում է, «յանցաւոր էր, որ նրա կալը չափել են և լցրել աղայի ամբարը,» անաքեղ միակ պատասխանը, որ արւում է չորս կողմից. ինդճ ժողովուրդը հողով ու մարմնով, տնով ու անդով միայն ապրում է ու աշխատում իր խանի համար—կատարեալ ճորտեր են զրանք:

Խաները որոշ տուրքեր անելուց դատ՝ արտաքոյ կարգի ծախսեր էլ են հաւաքում ժողովրդից, օրինակ՝ մի մամուր դայ ու գնայ, կամ մի տուգանք տան, խանը պէտք է հաւաքէ այդ պակասը ու մի բան էլ աւելի: Շահին, թագաժառանգին փէշքեաշ (նուէր) են ուղարկում, այդ ծախսին պէտք է մասնակցէ ժողովուրդը, եթէ չ'առնեն հէնց բացարձակ, կը գանձեն ուրիշ դէպքում: Արտասահման գնան իրանց քէյֆին, վերադառնալիս ծախսը վեր են առնում սրանից-նրանից. հիւանդ սարգարը Գերմանիա գնաց բժշկուելու, կրք որ վերադարձաւ, որոշ գումարներ հաւաքեց ժողովրդից—պարսիկներից ու քիւրդերից՝ բժիշկներին և ճանապարհներին տուած ծախսերի համար. խա-

*) Դա որպէս պատանք վզերից կախում են՝ ցոյց տալու, որ իրանք էլ հասան և հիւսէյնի համար ճշմարիտ շէհիզներ (զոհեր) են:

ների միակ համոզմունքն է, որ սնդուկ մտած փողը դուրս չի գալ, այսպէս էլ ասում են ու նորն են գանձում:

IV

Մակուի դաւառը բաժանւում է մի քանի մահալների (գաւառակների). իւրաքանչիւր գիւղ զնալիս, պէտք է յիշել մահալի անունը և ոչ գիւղի, որ չէ ճանաչւում: Ահա այդ մահալները.

Մակու կամ Բայեաթ, Աղգեօլ, Մասիս-կող, Ընկ-նում ևն բուն Մակուի հիւսիսում: Արևելքի կողմից՝ Չայփարա, Դարաշամ և Գարագոյուն: Հարաւային կողմից՝ Բարա-ջուր, Թամաշէք և Սեօքմանաւա: Արևմուտքի կողմից՝ Աւա-ջուղ և Չարդերուն կամ Չհար-Դերուն. վերջին երկու գաւառակները Մակուից անկախ կառավարւում են տարբեր խաների ձեռքով: *)

Աւաջուղի խաները զաղթել ևն Ալէքսանդրապոլի գաւառից, որոնց ցեղին այրումցիներ ևն ասում, որ այժմ էլ կայ այդտեղ. զրանք զիմել ևն առաջ Սուլթուղ—Պարսկաստանի Ուրմիի գաւառը. երբ ուսուպարսկական պատերազմից յետոյ գաղթում են անգլիան հայերը, այրումցիները զիմում են այստեղ և բնակւում մօտաւորապէս 70 տարի առաջ: Առաջին խանն էր Խալֆա-Ղուլի-խանը, նրան յաջորդեց Փաշա-խանը, որ այժմ էլ կայ և Աւաջուղի զլխաւոր խանն է, տարիքը 70-ից անց է, բաղդատմամբ Մակուի արդի խաների հետ՝ ամենից խելօք ու բարի մարդն է, ուսութիւրքական պատերազմին հիւրընկալել ու պաշտպանել է փախստական հայերին, նամանաւանդ բայազէդցիներին:

Չարդերունի (չորս վանքի) գաւառակի խանը քիւրդ է, որինախահայերը հին ժամանակ զաղթել ևն Հայաստանի Արձէշ գաւառից և մի դարից աւել է, որ հաստատուել են այդտեղ. զրանք պատկանում են հէյդարանցի աշիրէթ ցեղին. այժմեան ցեղապետը Մուստափա-բէյ կամ խանն է: Քիւրդ խաների ու մակուեցիների մէջ կայ մի ներքին ոխ, նրանք շատ անգամ մեծ ընդհարումներ են ունենում իրար հետ. տաս տարի առաջ Թէյմուր-խա-

*) Աւաջուղ հաշւում է 35 գիւղ և նոյնքան էլ անլի Չարդերուն. Չարդերունում են Մակուայ խաների սեփական զիւղերը. ուրեմն այս երկու գաւառները միասին հաշւած, ամբողջ Մակուայ սահմանը, որ բաժանում է Մակուն Խոյից, կը լինեն մօտաւորապէս 400 գիւղեր. զրանց մէջ 10-ի շփ գիւղեր միայն ձահին է, որ յանձնուած են մակուեցիներին, որի փոխարէն մի աննշան տուրք է ստանում տարին:

նը կուեց քիւրդ Տահար-խանի հետ, երկու կողմից հարիւրաւոր մարդիկ սպանուեցին:

Համեմատած միւս խաների հետ՝ քիւրդ խանն աւելի քիչ է ծանրաբեռնուած աշխատող դասակարգի վրայ, թէև որպէս քիւրդ՝ անհամութիւններ է անում առնելու տալու մէջ, բայց և այնպէս այնքան չարքաշութեան մէջ չէ դրում ժողովրդին, ինչպէս որ անում են մսկուեցիները, և քիւրդ խանը իր էլաթից (հպատակ քիւրդերից) այնքան տուրք չի առնում, որքան սարդարն է առնում, կարելի է ասել՝ կէսը. սարդարը վերցնում է իր հպատակ քիւրդերից, որոնք 2000 տուն են հաշուում—Չալալցի, մըլլանցի եւ ըրոուկցի, հարուստ ի է աղքատ տնուորից մանր-մունր ծախսերով (միրզային կայն) իւրաքանչիւրից երկու տաճկական ոսկի, անկարողների բաժինը կիսուում է հարուստների վրայ. ծախուող ոչխարների համար (որոնք մեծ թւով պահուում են) որպէս գլխահարկ տալիս են 3 շահի (երեք կող), տալիս են ղալի (զոմի) վարձ 20—100 թուման տարեկան. տալիս են արօտատեղիների համար էլ որոշ տուրքեր, քաղած խոտերի համար տալիս են տասանորդ, նոյնպէս ոչխարի բըրդից, բացի զանազան փէշքետչներից—իւղից, պանրից, ոչխարից, դառից և այլն: Բացի այդ՝ մի յատուկ տուրք էլ նրանք տալիս են էլխանային *) (աչիրէթի գլխաւորին), որ որոշում է ինքը սարդարը. էլխանան իշխում է նախ վրանաբնակ քիւրդերի վրայ, որոնք զարնանը բարձրանում են կայաղ—(ամաբանոցներ). էլխանայի կամ էլաղասիի վարձը իւրաքանչիւր չորս տուն մի ոսկի է տալիս, այդ էլ մեծաւ մասամբ սարդարի գրքպանն է մտնում, քիւրդերի մեծ մասը որպէս չորանքեարա (ոչխարներ արածեցնող, պահող) ծառայում են սարդարին:

Այս մարդակեր ու մարդակուլ դաւառում—Մակուում էլ հայերը դիմացել են ու իրանց դոյութիւնը պահել են մինչև այսօր: Շահ-Աբասի աւերումից յետոյ՝ կարելի է ասել, որ սչ մի ժամանակ էլ հանդիստ ու խաղաղ չը մնաց Մակուն: Տաճիկներն ու պարսիկները մի քանի անգամ խլեցին իրարից ու աւերումներ գործեցին. այդ ժամանակ արդի խաների նման յայտնի էին ղըմըլինները **), որ աէր էին Չօրսին և Սոյին. սրանց ազանների մէջ էլ պակաս չէին չարունակ թէ ներքին խռովութիւնները և թէ ընդհարումները. կուում էին գլխաւորապէս իրանց կը պաշտպանելու և իրարից հողեր խլելու համար: Սոյի այժմեան

*) էլխանան ընտրում է տեղացի խաներից և ոչ քիւրդ:

***) Դըմըլիններն այժմ էլ կան Հայաստանի մի քանի գաւառներում, բայց աննշան թիւ են կազմում:

բերդն ու խրամատները զբմըլի ազաներից մէկն է շինել՝ իր ազգական Չօրս աւանի զբմըլի յայտնի Թահար-աղայի դէմ պաշտպանուելու համար: Դրմըլիները միշտ կուեցին իրար հետ, մինչև ջնջուեցին. ջնջեց և ինքը պարսիկ կառավարութիւնը քիւրդերի հետ միացած: Դրմըլիներն այժմ էլ ցրուած կան Մակուի և Խոյի շրջանում, նրանց թողած յիշատակներից Մակուում մընում են մի քանի հողէ բերդեր միայն: Այժմ գրանց հողակցսն ու պատերն են երևում:

V

Ամբողջ Մակուի գաւառում ո՞ր կողմ, ո՞ր սարի և քարի մէջ ման գաս, որ հայի ցրիւ ընկած նմուշների ու յիշատակների չը հանդիպես, որոնք տեղ-տեղ հիացում, տեղ-տեղ արդահատանք ու տեղ-տեղ գայրոյթ են պատճառում: Մենք սկսեալք Աւաջուղից, որ գտնուում է Բայազէդին մօտ, տաճկաց սահմանին կից, մի փոքրիկ գաշտ, որ այժմ այդ գաշտում և լերան լանջերում տեղաւորուում են 35 դիւղ պարսիկներ (այրուցիներ) 1000 տան չափ: Այդ գաշտ ու լեռների բարձրաւանդակների վրայ առհասարակ գտնում ես աւերակներ, բերդեր, պարիսպներ, դերեզմանատներ, որոնց չուրջը թափթփած են խաչքարեր և խաչեր, ձորեր, որ տեղ-տեղ ապաստանների կարավան է կապել մի ժամ հեռաւորութեամբ. բացի հին ու նշանաւոր բերդերի աւերակներից այստեղ այժմանս Քիլիսէ-Քեանդի մէջ մի աւերակ եկեղեցի կայ, թիւ ու թւական չը կայ, տեղացիները քարերի մեծ մասը փչացրել են՝ յարմարեցնելով իրանց շինութիւններին, ախոռներին ու դռներին. եկեղեցին շինուած է սպիտակ փափուկ քարերից, քարերն առհասարակ մեծ դիրքով են կարտուած ու պատրաստուած, ամենափոքր քարը մի ուսական արշին բարձրութիւն ունի. զբրան ճակատի մի քարի երկարութիւնը $4\frac{1}{2}$, բարձրութիւնը $2\frac{1}{2}$ և հաստութիւնը մէկ-մէկ ուսական արշին է, հաւանական է, որ 16-երորդ դարու շինութիւն լինի: Աւաջուղը մինչև 19-երորդ դարի սկիզբներն էլ շէն էր, և տեղացիները այնքան հարուստ, որ նպաստել են սուրբ Թադէի վանքի նոր շինութեան: Աւաջուղից եկալք Չարդերուն, որ տաճկաց սահմանին կից է. այստեղ էլ կան քարափոր երկու եկեղեցիներ. գաշտի մէջ էլ կային երկու վանքեր, որոնք այժմ անհետացել են, կարէյնցի թուրքերը իրանց տուն ու տեղն են շինել, չորս եկեղեցու անունով էլ անուանել են քիւրդերը Չար-Դերուն: Այս գաշտի մէջ էր սուլթան Սէլիմի և պարսիկների նշանաւոր կիւր: Հայոց դերեզմանները զեռ ես երևում են:

Չարդերունի ու Մակուի մէջտեղն է Բաքաջուք, որտեղ է Քաղէի հոշակաւոր վանքը. վանքը վերանորոգուած է երկու ժամանակ, 16 և 19-երորդ դարերում. հին մասը սե քարերով է շինուած Չաքարեա եպիսկոպոսի ձեռքով, իսկ նոր մասը, որ մարդարէների, առաքեալների, թագաւորների և դանադան տեսակ կենդանիների ու թռչունների քանդակներով է զարդարուած, շինուած է սպիտակ քարերով էջմիածնեցի Սիմէոն եպիսկոպոսի ձեռքով 80 տարի առաջ. վանքում որպէս հնութիւն հետաքրքրուելու համար ոչինչ չը կայ, Չաքարեա եպ.՝ի գրած մի կտոր տեղ կայ եկեղեցու ներսի պատի վրայ, որ ասում է. «Երկրաշարժից կործանուեց վանքս. և ես ամենադան ժամանակի մէջ, որ աշխարհն ալան-թալան էր, Աստուծոյ կամօք շինեցի տաճարս և դմբէթս» կային: Չաքարեա եպիսկոպոսի մէկ երկու գրուածներն էլ գտնուում են Մակուայ ճանապարհի վրայ, ուր նրա անունը միայն կարելի է ջոկել ու գծուած խաչերը. հաւանական է թւում, ուր Մակուայ քարի վրայ գտնուած գրուածքն էլ Չաքարեա եպիսկոպոսինը լինի, գրերը շատ նման են մէկ մէկի, ինչպէս Մակուայ քարի ճակատին է գրուած, նոյնպէս էլ այդ ճանապարհի վրայ գտնուած երկու հսկայ ապառաժների ճակատներին է գրուած ու խաչը քանդակուած: Դժբաղդաբար անցեալի մասին որեւէ մի խօսք անգամ չենք գտնում այդ հնադարեան վանքի զրքերի քունջ ու պուճախում: Ձեռագրերի մեծ մասը Խաչիկ վարդապետ Դադեանըն է վերցրել տանելու Եջմիածին, գրանց մէջեց կարելի էր մի բան գտնել՝ կարող եմ ասել, որովհետեւ, եթէ չեմ սխալուում, Խաչիկ վարդապետը Քաղէի վանքի ձեռագիր զրքերի միջոցով գտաւ Չուարթնոց եկեղեցին, ուր այսօր պեղումներ է կատարում:

Վանքից հիւսիս՝ մօտիկ՝ երեք հին մատուռներ կան կիսափրլած վիճակում. գրանց մէջ էլ ոչինչ չես գտնում. իսկ դէպի հարաւ, մի քառորդ ժամ հեռու, գաշտի միջից ցցուած մի բլրի վրայ շինուած է սուրբ Սանդուխտի մատուռը, այդտեղ էլ ոչինչ չը կայ: Վանքին կից՝ համանուն հայ գիւղն է 30 արնուորով, գրանք էլ շատ հին չեն, միշտ փոփոխուել են, զաղթել են այդտեղ Տաճկաստանից և Պարսկաստանից. պարսպում են հողագործութեամբ, սղորմելի վիճակ ու ապրուստ ունեն, շատ անգամ զարէ հայով են ապրում. նրանց հողերը, որ վանքի սեփականութիւն էին, խտները գրաւել ու տուել են զբրանց, բոլորն էլ դէմային են. ոչ զպրոց ունեն և ոչ էլ վարժապետ:

Վանքի գիւղի մէջ էլ կայ մի մատուռ, բաւական հին է

երևում, բայց ոչ մի դրութիւն չ'ունի: Վանքը միմիայն անուեն ունի, ոչ հարստութիւն ունի, ոչ էլ հնութիւն, ինչպէս երևում է՝ հազիւ կարողացել է մասամբ իր շինութիւնն ու քարերը պահել այդ մարդակուէնների մէջ, խաները ամեն մի բանից խարջ ու խուրջ անելուց յետոյ՝ չէին կարող վանքից էլ չ'աննել: Վանքի կալուածք ամբողջ հողերը զբաւեցին անարգել, սուսիկ ու փուսիկ տիրացան. վանքը ցանում է մէկ երկու անջուր արտեր—գէմեր: Առաջուայ զոյգ-զոյգ գութաններն ու սարքը փչացաւ գնաց. այժմ վանքը իր տարուայ ուտելիք հացը հազիւ է ձեռք բերում...

Վանքից զէպի հարաւ կէս ժամ հեռու գտնուում է այժմեան Գրիբուլաղ *) գիւղը, որ պատկանում է քիւրդ բէյ Մուստաֆա-խանին. երկու տարի ստաջ այստեղ 40 տան չափ հայեր կային, բայց նախորդ քիւրդ բէյը տաճկական մի կուր մէջ մեռնելով, իսկոյն՝ մօտիկ մակուեցի զիւղացիները թափուեցին Գրիբուլաղի վրայ, աւարի մասնեցին ու զիւղացիներին հեռացրին. հայերը ստիպուած գաղթեցին Կովկաս ու մի մասը Տաճկաստան. այժմ այդ գիւղը չէնանալու վրայ է, ունի միայն 7 տնուօրներ: Գրիբուլաղը հայոց հին Շաւարշան քաղաքն է, աւերակներ լիքն են, բայց բոլորն էլ գետին հաւասար. մի քարաշէն եկեղեցի կայ, որ հողից գուրս երևում է, կան կիսաջնջուած խաչքարեր. արտեր հերկելիս՝ գտնուում են հողէ և պղնձէ ամաններ. զիւղի վերեւ բարձրանում է մի սպառաժ, որի վրայ կարծուում է, որ Սանատրիկ բերգն է լինելու. այդտեղ հազիւ նշմարուում են պարսպի խաւեր. երևում են և ճանապարհի (զէպի բերդը տանող) հետքեր... ուրիշ եկեղեցու նմուշներ էլ են երևում, որոնք թաղուած են բոլորովին հողի տակ. գերեզմանատան մի մասը երևում է. քիչ գրուածքներ կան և չեն կարդացւում:

Մակուում հեռաբերութեան համար արդի հայերը շատ բան չեն սալիս մեզ, 700 տուն թուրք ու խաների մէջ ընկել են 70 տնուօր հայեր, տաս տունը բերդի մէջ (բուն Մակուում) և 60 տունն էլ բերդից գուրս, $\frac{1}{2}$ ժամ հեռու զէպ արեմուտք— թաղի մէջ, որ յատկապէս Էրմանի-մանլասի է աւոււմ. երկու եկեղեցի ունեն, մէկը բերդում և միւսը թաղում. բերդի եկեղեցին աւելի հին է սուրբ Վարդան անունով. այս տարի

*) Քառասուն տղիւր ասել է, և իսկապէս քաղցր և անուշ ջրերի աղբիւններով լիքն է, որոնք տեղ-տեղ առունք են կազմում, որոնք հնում տեղական ջրաղացներն էր բանեցնում, բայց այժմ օգտոււմ են զբայի գիւղացիք. ամբողջ գիւղը գարունքին մարգագետնով ծածկոււմ է, մօքուր ու գով օդ ունի:

ուսումնարան ունեն, ուսուցիչը ձեմարանական վանեցի մէկն է: Հայերը պարապում են առևտրով, զինագործութեամբ, դարբնութեամբ, հիւան են, որմնագիր, պայտառ, դերձակ կայն. շատ են աշխատում, բայց արդիւնքը քամին տանում է, տուածը շատ անգամ չեն կարողանում առնել, այնպէս որ հետզհետէ թուլանում են, հազիւ իրանք իրանց կառավարում են, տեղական բէժիմը չէ թողնում նրանց հարստանալու, նոյն իսկ յառաջագիմելու: Մակուից զէպի հիւսիս արեմուտք 1½ ժամ հեռու հայաբնակ Գլմիշ-թափէ գիւղն է. այստեղ էլ հայերը 70 տուն կը լինեն. մի եկեղեցի ունեն, որ զիւղի վերև մի բլրակի վրայ է շինուած. ունեն զպրոց ու վարժապետ. վարժապետը տաճկաստանցի մի տիրացու է, պարապում է զբացութեամբ, այնպէս որ պարսիկ կանանց համար մի ուխտատեղի է մեր վարժապետի տունը... Այստեղ որպէս հնութիւն ոչ մի բան չը կայ, միայն նրանից վերև Փառախոտիկ հայ գիւղն է, ուր աւերակներ կան. զէպի Մակու մի անցք կայ, ուր գտնուում է մի ճգնաւորի մատուռն ու այրը: Դեռ չէն են հայոց գերեզմանատունն ու եկեղեցու աւերակները, Մասսի մօտ նոյնպէս:

Մակուի հարաւ արեւելքում Արաքսի ափում ձգուում է Դարաշամը. այս անունով կոչուում են Նախավկայի վանքը չրջապատող բոլոր գիւղերը. վանքից ½ ժամ հեռու զէպի արեմուտքը ընկնում է հայ Դարաշամ գիւղը, ուր 22 տուն հայեր են, շատ խեղճ վիճակ ունեն, միշտ ծեծուում ու թալանուում են Վարմազիարի գող աւազակներից. քահանայ չ'ունեն, հոգևոր պէտքերը վանահայրն է հոգում: Նախավկայի վանքը համեմատած Թագէի վանքի հետ՝ շատ լաւ է, բաւական եկամուտներ ունի և պարտքից ազատ է: Դարաշամ գիւղում զպրոց չը կայ, երեսխաները վանքից են օգտուում: Դարաշամ հայ գիւղի քարաչէն մեծ եկեղեցին տեղ-տեղ մնասներ է կրել, շինուած է 16-երորդ դարում. Դարաշամի շուրջը զըտնում է 1000-ից աւելի տուն և չորս հատ էլ եկեղեցու աւերակներ: Այստեղ լի է այժեամներով, որոնք խմբերով ման են գալիս. տեղացիները ամեն ժամանակ որսում են, և միշտ էլ նրա միան ունենում են: Դարաշամից զէպ արեմուտք ու հարաւ գետեզերքի հետ շարունակուում են կցկաուր աւերակներ աւելի հին և նոր, որ 16-րդ դարում են շինուած. վանքից մինչև երեք ժամ հեռաւորութեան վրայ չորս տեղում չորս հատ քարաչէն եկեղեցիներ կան զեռ ևս կանգուն, որ միևնոյն ձևի և միևնոյն ժամանակուայ բաներ են, որոնց մէկը գողերի Վարմազիար գիւղումն է. նոյն եկեղեցու նման կայ Խոյն մօտիկ Մանլազան գիւղում. Խոյում կայ ս. Սարգիս

եկեղեցին. ինչպէս երևում է, 16-րդ դարում հայերը խաղաղ ու ապահով ժամանակներ են անցկացրել, որ առատ-առատ եկեղեցիներ են կառուցել:

Վերջապէս Մակուի—հայոց այդ Արտաղ-Շաւարշան դաւառի անցեալի մասին իմանալու ու հետաքրքրուելու համար պէտք է գիմել այնտեղ թաղուած ու ծածկուած դարաւոր բերդերին, շէնքերին ու աւերակներին, որոնք կարող են տալ մեզ պէտք եղած դոհայումն ու պատմել աւելի հին անցեալի մասին: Մասի ստորոտները լիքն են աւերակներով:—Արչակաւանի աւերակներում, որտեղ այժմ Տմսլատ քրդաբնակ գիւղն է, զիտական խուղարկութիւնները շտտ բան կը գտնեն: Սակայն երբ հնարաւոր կը դառնայ այդ...

ՆԺԴԵՂ

ՔԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻՉՈՒՄ

(Моление о чашѣ)

Ն Ի Կ Ի Տ Ի Ն Ի Յ

Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ 'ի վերայ
երեսաց իւրոց, կայ յալօթս և ասէ. Հայր Իմ, եթէ
հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն, բայց ոչ որպէս
ես կամիմ, այլ որպէս Դու:

Մատթէոս, գլ. ԻԶ. էջ 60.

Ահա արեւմուտն Հըրէաստանի
Ոսկեվառուում է՝ կրակած հորիզոն,
Եւ շուրջ թափանցիկ մէդ-մառախուղի
Շըղարշ ծաւալում նիրհուն երեկոն:
Եւ վերջալուսի շողերով վառուած՝
Վեր է ամբառնում փառահեղ, անխուով,
Դաշտերի գողից լեառը Ձիթենեաց
Իւր անուշաբոյր, ճոխ այդիներով:
Եւ փայլիլըում են նըրա չորս բոլոր
Կենդանանըկա՛ր, թովի՛չ պատկերներ—
Այստեղ պսակում են լեռ, հովիտ ու ձոր
Երուսաղէմի հոյակա՛ս շէնքեր:
Դէպի արևելք—Յորդանան սահուն,
Գաբաղ, Գարազին լեռները հեռում,
Շուրջը հովիտներ թաւշապատ, նիրհուն

Պատկերանում են մըշուշի միջում :
 Եւ Մեռեալ ծովը՝ ասես խոր քընում
 Իւր յըստակ փայլով երկինք է նայում.
 Իսկ այնտեղ, հեռուն, դէպի արեւմուտ,
 Միջերկրականի լազուր պլիքներ
 Անդօր քերում են ափերն աւաղուտ,
 Լայնաձիգ ափեր, որպէս պարիսպներ...
 Մթնում է... չորս կողմն հանգիստ է խորին...
 Գիշերն իւր ցարուն ասաղերն է վառում,
 Եւ Գեթսեմանի պարտէզն այդ ժամին
 Լիարուսինն է վառ լուսաւորում :
 Եւ այնտեղ թաւշեայ դալարի վերայ,
 Անուշ հովանում ձիթենիների՝
 Երեք առաքեալ քընած են ահա—
 Երեքն էլ թարգման Տիրոջ պատուէրի.
 Եւ նրայ նինջը քնդցր է ու անդորր :
 Բայց ժանտ աշխարհն էր անսթափ քընած.
 Անցեալի մեղքն էր, մեղքը դարաւոր
 Սերունդից—սերունդ նըրան կաշկանդած :
 Եւ որպէս մի բիծ անփառք գոյութեան՝
 Կըրում էր աշխարհն անէծք նախահօր.
 Ամեն դար իր հետ բերում էս նրան
 Խոցող վէրքի պէս չարիք նորանոր...
 Եւ Ուսուցիչն էր միայն այդ ժամին
 Արթուն ու ըզգաստ ամբողջ աշխարհում.
 Անհազորդ հանուր մեղքին ու չարին՝
 Մարդկային անշուք վիճակն էր խորհում :
 Եւ նա անձնուէր վեհ ճըշմարտութեան՝
 Նախատեսնում էր խաչն ու Գողգոթան.
 Եւ սըրտում վըշտի յուզմունք ու ցասում,
 Հօրն էր մեն-մենակ Որդին պերսում.
 «Ո՛հ, Հայր իմ, Հայր իմ, անմըւունչ թախծից
 Ես տառապում եմ, հողիս նուազում,
 Եւ զալիք օրուան տըխուր պատկերից
 Իմ ճընշուած սըրտից արիւն է հեզում :

Ես գիտեմ, այդ օրն կը գայ անկասկած,
 Եւ Աստուածորդին ողջակէզ դարձած՝
 Ամբոխի ձեռքով կը մասնուի մահուան՝
 Աղատ կեանք տալով համայն մարդկութեան...
 Եւ թագապըսակ, տիրական գըլխիս
 Կը թընդայ անէծք վայրագ խուժանի.
 Նա անարգելով սուրբ գործը Չոհիս՝
 Այդ գործը թունտա ծաղրի կը հանի:
 Եւ նոքա, որոնց խաչիս վերայից
 Սիրոյ, օրհնութեան շընորհ կ'առաքեմ,
 Նոքա չարախինդ, հըպարտ, ռլալից՝
 Ձեռք կը բարձրացնեն իրանց Փըրկչի դէմ...
 Ո՛հ, Հայր Իմ, Հայր Իմ, անցցէ այս բաժակ,
 Ինչոն է ինձ համար տեսնել, թէ ինչպէս
 Չարիք է գործում աշխարհ սանձարձակ,
 Իր մօտ փըրկութեան կոյր հանդիսատես:
 Բայց եթէ, Հայր Իմ, Քո ժողովըրդին
 Փառք պիտի բերէ Իմ անարագութիւն,
 Փոյթ չէ, մահանայ թո՛ղ Մարդոյ Որդին՝
 Հանուրին բաշխած սուրբ ազատութիւն»:
 Աղօթքն աւարտած, տըխուր, վըշտագին
 Մօտեցաւ Քրիստոս աշակերտներին
 Եւ նրանց անդորր նիրհը տեսնելով՝
 Դարձաւ ու ասաց. «Վեր կացէք շուտով,
 Հասե՛լ է ժամը, շուտ աղօթք արէք,
 Որ անփորձ մընաք, չը գայթակղուէք,
 Որ ձեր սըրտերում հաւատն ամբացած՝
 Հաւատով ելնէք փորձանքի դիմաց»:
 Ասաց և հանդարտ հեռացաւ կըրկին
 Այնտեղ, ուր առաջ Նա արտասուում էր,
 Եւ մի նոր վըշտով համակուած հոգին,
 Նա ծունկ խոնարհեց և աղօթում էր.
 «Հայր Իմ, Իու աշխարհ ինձ առաքեցիր,
 Բայց ահա աշխարհն ինձ չէ ընդունում.
 Սէր քարոզեցի նորան անձանձիր,

Բայց նա բարբառիս ականջ չէ գընում.
 Ես բուժում էի հէգ հիւանդներին,
 Թըշնամիներն համար աղօթում:
 Եւ Ինձ խաբերայ կոչած՝ Իմ գըլլին
 Երուսաղէմն էր սև լուտանք թափում:
 Ես մարդկանց խաղաղ կեանք աւանդեցի,—
 Մարդիկ դատով են Անպարտիս սաստում.
 Ես մեռեալներին կեանքի կոչեցի,—
 Աշխարհն Ինձ համար խաչ է պատրաստում...
 Ո՛հ, Հնչր Իմ, Հնչր Իմ, լըսէ Իմ խընդրուած,
 Անցցէ Ինձանից այս դառըն բաժակ.
 Դու լուսոյ ըսկիզբ, Դու սիրոյ Աստուած,
 Դու ես եւ հըզօր, եւ կարող միանի:
 Բայց թէ որ պէտք է Իմ արեան գընով
 Մեղատից երկիրն հաշտուէ երկնի հետ,
 Ես խաչ հանուելու պատրաստ եմ սիրով,
 Թող օրհնեալ լինի Գո կամքը յաւէտ»:
 Եւ մի լուռ թախիժ սըրաում թագուցած՝
 Մօտեցաւ դարձեալ երկրորդ անգամը
 Աշակերտներին անխըռով նիրհած
 Եւ ասաց. «Ելէք, հասել է ժամը.
 Հեռու չէ արգէն փառքի յաղթանակ,
 Անհաշտ խաւարի և լուսոյ մըրցում:
 Աղօթէք—չուտով երկրի դառն վիճակ
 Այս արեան օրը կը ստանայ լուծում»:
 Ասաց և նորից նա մեկուսացած
 Ձիթենիների անդօրը հովանում
 Սկսեց տըրտմիլ և ծունկ խոնարհած՝
 Դարձեալ լալիս էր ու աղօթք անում:
 «Ո՛հ, Հնչր Իմ, Հնչր Իմ, ծանր է Իմ վիճակ,
 Միտքըս վարանում, միտքըս մըթնանում,
 Մարդկային աղբի չարութիւնն համակ
 Որդուզ վերայ է միայն ծանրանում:
 Մարդկութեան արատ, դարերի ամօթ—
 Ո՛ղջը տանելու հոգիս է յօժար,

Բայց իբրև ես մարդ՝ ո՞յժի եմ կարօտ,
 Ընկճուում, լըբուում է մարմինըս տըկար...
 Հնչյր Իմ, առաքիր փրկիւթիւն ազգիդ,
 Տնւր կարող Ինձ այժ սըխրագործութեան,
 Եւ ուրախ սըրտով կը մնունէ Որդիդ,
 Որպէս մի Մեծ Զոհ հանուր հաշտութեան...»
 Եւ նա ընկըզմուեց ջերմ աղօթքներում՝
 Զեռքերն ու հայեացքն ամբարձած երկինք...
 Տառապման հուրն էր նորա դէմքն այրում,
 Այսերից արեան թորում էր քըրտինք:

Եւ ահա յանկարծ վայլով Եդեմի
 Իշաւ երկինքից անամպ, լուսաւոր
 Մունեաթիկն Աստծոյ սուրբ հըրաչքների՝
 Փըրկչի աղօթած վայրը մենաւոր:
 Հայեացքը չըքնա՞յ, թովի՞չ ու հեղի՞կ,
 Անյոյզ, լուսաշող ճակատի վերան
 Ոգևորութեան դրոշմուած էր կընիք,
 Եւ դէմքն էր վառւում տօթ օրուայ նըման:
 Եւ նա Տիրոջ մօտ կանգնեց քով ի քով
 Եւ ոգևորիչ, երկնաշունչ խօսքով
 Խըրախուսում էր արարաչխարհի
 Ազատչին դէպ դորձ վըսեմ, քաջարի:
 Եւ ինքն էլ նըման թեթև լստուերին,
 Բայց լեցուն անհուն, երկնատուր շնորհքով,
 Գեաին խօնարհեց ծունկերն օգային
 Եւ աղօթում էր մի ջերմ աղօթքով:

Այդ պահուն երկիրն ընկզմուած խոր քուն,
 Անդորրութիւն էր երկնի վրայ տիրում:
 Եւ սասանան էր միայն ապարդիւն
 Տառապում մենակ իշխող խաւարում:
 Նա դիտէր, որ իւր չար իշխանութեան
 Կուռքն է երեբուում և մ՞տ է անկման,
 Որ արդէն մեղսոտ աշխարհի համար

Թագ է պատրաստում և խաչ լուսավոր.
 Նա հասկանում էր—ինչու քըրտնաթոր
 Այն մեծ Անպարտն է աղօթում մենակ.
 Եւ խաւար ոգին ողբում էր անդօր
 Լուսառար Տիրոջ փառքի յաղթանակ:

Փայլում էր լուսին: Երկնակեաց ոգին
 Ամպերի վրայով շապում էր Եդեմ:
 Եւ Աղատիչը մօտեցաւ կրրկին
 Աշակերտներին: Օ՛, սրբան վըսեմ,
 Ո՛րքան ազդու էր Նա այդ ժամանակ.
 Ոգևորութեան սրպիտի կըրակ
 Այդ սուրբ փայրկեանին շողում էր Նորա
 Չըքնաղ, լուսազարդ պատկերի վերայ.
 Ո՛րպիտի պայծառ ցոլում էր փայլով
 Ո՛ղջ կամքը Նորա խորունկ աչերից.
 Հիանում էին աստղեր Նորանով
 Կէս-դիշերային դունաստ երկնքից:
 Եւ Ուսուցիչը գարձաւ իր նիրհած
 Աշակերտներին ու գարձեալ ասաց.
 «Ելէք, մերձ է օրն վըշտի, տըրտմութեան,
 Եւ ժամն է հասել անարդ մասնութեան»:
 Եւ խուլ շաչիւնից սուր-սուսերների
 Նիրհուն պարտէղը իսկոյն ըսթափուեց,
 Եւ չարագուշակ ցոլքում ջահերի
 Մատնիչ Յուդայի չար գէմքը փայլեց...

Թարգմ. Ա. ԵՄԱՏՈՒՐԵԱՆ

ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԳՈՒՆԻՑ

Արդուին քաղաքը գտնուում է Քութայիսի նահանգում, Բաթումի շրջանում և հաստատուած է Բարխար լեռանց շարունակութեան Կարձ-խալ ճիւղի հարաւային լանջի վրայ:

Ճորոխ գետը իր պղտոր ու սրընթաց կոհակներով քերում է Կարձ-խալի ստորտը և Արդուին քաղաքի ներքին Գործուլ թաղի տների առջևից անցնում զէպի արեմուտք ու իր զործած շրջանով Արդուինին տալիս կիսալուսնի ձև:

Արդուինն՝ ունի մօտ հազար տուն հոովմէական և 250 տան չափ լուսաւորչական հայ բնակիչ: Կան և մի քանի տուն սիւննի թիւրքեր:

Արդուինը բնութեամբ հարուստ է: Ունի առողջարար կլիմա և ախորժահամ ջրեր: Այստեղ լինում են մի քանի տեսակ պատուական մրգեր—ձիթապտուղ, դեղձ, թուզ, շաղանակ, սերկեիլ, նուռ, խաղող և այլն:

Մեղք, սակայն, որ բնութեան այդ առատ չնորհների վայելող արդուինցիները իրանց կեանքով ներկայանում են անարժան զաւակներ այդ անդին ծննդավայրի...

Այցելելով Արդուինին և ի մօտոյ ծանօթանալով արդուինցուն՝ աւելորդ չը համարեցի դրի առնել նրանց կեանքից բնորոշ, առանձնայատուկ զժեր, սրանց և ներկայացնում եմ «Մուրձի» ընթերցողներին:

*
*
*

Եթէ զուր ատաջուց ծանօթ էք եղել Արդուինին, այժմ կը զգաք այն—թէև ոչ կատարեալ—էւօլիւցիան, որ կատա-

րուել է մասամբ վերջին տարիներում այս տեղի Հռովմէական և Լուսաւորչական հայերի յարաբերութեանց մէջ: ժամանակի ընթացքում արգուինցին, կարծէք, սխում է զզալ, որ տարբեր գաւանութիւնների պատկանող համարիւն կղբայրները պարտաւոր են համերաշխ լինել և այսպէս թէ այնպէս տեղի տալ ընդհանուր, ցանկալի մերձեցման, դուրս վանել իրանց միջից խրտոզական ոգին և ասել՝ «եղբայր ենք մենք»...

Յաւօք սրտի պիտի ասեմ սակայն, որ այդ բարեփոխութիւնը կատարուել է խիստ աննշան, ոչ—ցանկալի չափով: Այնպէս որ՝ եթէ ի նկատի ունենանք այդ երկու կրօնական հատուածների միջև պահպանուած յարաբերական ուրիշ գծերը՝ կատարուած բարեփոխութիւնը լուծուած—անհետանում է խտրութեանց ովկիանոսում...

Նախ որ՝ արգուինցի մեր կաթողիկ եղբայրները դեռ ևս չեն հասել զարգացման այն կէտին, որ նրանց աչքում հաւասարապէս սիրելի լինէին այն ամեն «լաւ ըաները», որոնք պատկանում են ն' լուսաւորչականներին: Այսպէս օրինակ. կաթողիկ հայը իրան թոյլ չի տայ մանել լուսաւորչականաց եկեղեցին: Բայց դրանում ինքն իրան կարող է արդարացնել հայ-կաթողիկը՝ բոլոր մեղքը պցելով իր հոգևորականների վզին, որոնք խտոււ արգելում են իրանց հօտին այդ բանը:

—Պէտք է մօտենալ հերձուածող հայոց ժամուն, քարոզում են այդ ողորմելի արարածները... պէտք է զբուշանալ...

Չընայած այդ խիստ դառն իրականութեան՝ ևս ուրախութեամբ պիտի արձանագրեմ հայ-կաթողիկների մի մեծկակ մասի այն օրինակելի քայլը, որով դրանք ցանկանում են դաւանանքից անկախ, ցեղային կապեր հաստատել իրանց և լուսաւորչականաց մէջ:

*
* *

Արգուինցու մտաւոր կեանքը կատարեալ մեռելութիւն է ներկայացնում: Թանձր խաւարը տարածել է իր թևերն այս կողմերի վրայ: Միայն նպատակայարմար դպրոցները կարող են մասնաւոր լոյս սփռել և խոր տգիտութեան անգութ ճիրաններից փրկել ժողովրդին: Բայց, դժբաղդաբար, չը կան այդ դպրոցները: Կայ պետական երկդասեան մի դպրոց, ընթերցասիրութիւնը վաղուց տուել է իր հրաժեշտը. երևակայեցէք, մօտ 1,300 տուն հայեր ունեցող Արգուինը չ'ունի մի համեստ ընթերցարան անգամ (մի ժամանակ եղել է, իբր թէ, բայց յաճախող չը լինելու պատճառով էլ փակուել է, և ոչ ոք չը գիտէ, թէ ինչ են եղել «ընթերցարանի» գրեանքը...) Մեր թերթերից ու պարբերական այլ հրատարակութիւններից այստեղ ստացուում

է 1 օրինակ միայն «Մշակ»: «Մուրճ» թէև ստացուած է 1 օրինակ, բայց ոչ Արզուինի համար, այլ Տանձոտ զիւզի, որ Արզուինի վրայով է ստանում: 1000 տուն հայ-կաթողիկէները, ամօթ է ասելն անդամ, չեն ստանում ոչ մի օրինակ «Բագմավէպ-Գեղունի»-ի պէս հրատարակութիւնը:

Ի դէպ, այստեղի հայ-կաթողիկէ եկեղեցիներում նոյն իսկ մի չոր ու ցամաք հագեհանդիստ էլ է՝ չէ կատարուել անմտանայի Հ. Ղևնդ Ալիշանի յիշատակին... Այս քարացած մարդիկը դեռևս անծանօթ են եղել Ալիշանի նման աշխարհածանօթ դէմքին...

Ո՛չ թշուառ աստիճանայ Որբերի մասին եղած արտասուչ կոչերը, ոչ երկրաչարժից ու անրերրիութիւնից փառաւածների օգտին բացուած հանգանակութիւնները և այլն չեն կարողացել կակղացնել անպարտածանայ արդուինցու քարացած սիրտը և մի քանի կուպէկ դուրս բերել նրա քակից...

Սխալ կը լինէր կարծել, թէ այդ ամենի պատճառը չքաւորութիւնն է, ամենինն ոչ! Բաքոսին երկրպագելիս նոյն արդուինցին խիստ ձեռնբաց է և անում է ահագին ծախսեր:

* * *

Արդուինցիք էլ շատ տեղերի հայոց նման սիրում են իւրանք իրանց ցոյց տալ երոպականացած: Իսկ «երոպականանայ» ասելով պէտք է հասկանայ երոպական ձեռով հագնուել, ուրիշ ոչինչ, երոպականանայ դրսի կեղևով միայն...

Իր, մանուսանդ կանացի, արդուղարդին դոհուցում տալու համար արդուինցին շի խնայում ոչ մի միջոց: Ի՞նչ ասել կ'օգտի, նա երոպականանայ է ուղում: Նա մինչև անգամ ծախում է իր տան անհրաժեշտը կահ-կարասին, որպէսզի իր կինը ոչ մի բանով չը մեղանչէ վերջին մօլային առջև: Այդ առթիւ խիստ ընդհարաւ և հետաքրքիր են հետևեալ տողերը, որ իրանք իրանց երպում են.

«Կուկուսները, ¹⁾ եթաղները ²⁾ մէղէթումը ³⁾ հանուեցան, ին փարով էլ զութնի-ղումալ ⁴⁾ էնթարխտան ⁵⁾ կարուեցան... Պուքմէն ⁶⁾ քիշ էր՝ էրիկ-կինիկ կուեցան, ին գիշերը եթաղները ⁷⁾ պաշխաւ-պաշխա ⁸⁾ գցուեցան...

Հարուստ կնոջ կողքին կեցող աղքատ կինը երբէք չի ների իրան, եթէ իր արդուզարդը միւսից պակաս է մի բանով:

Ծան. ¹⁾ սափոր. — ²⁾ տեղաշօք. մահիճ. — ³⁾ աճուրդ. — ⁴⁾ մետաքսեղէն, արբշումէ. — ⁵⁾ պարեգօտ, շրջազգեստ. — ⁶⁾ սկիւթիկ իրեղէն. — ⁷⁾ անկողին. — ⁸⁾ ջոկ-ջոկ:

Դուք տեսնելով արդուինցի կնոջ փայլուն արտաքինը՝ արամազրոււմ էք կարծելու, որ այդ Անահիտներէ տանը ամեն ինչ կարգին է: Բայց մտէք նրա տունը և պիտի տեսնէք, որ— ինչպէս ասում են ճառագիւցիցիք— «Եթէ տունը մուկ մը իյնայ, հազար ու մէկ կտոր կը լլայ»... Անճաշակ ու աղքատիկ կահաւորանք, չափից դուրս աղտոտ սենեակներ, աղբակոյտի նմանուող բակեր, իստակ տաճկական փողոցներ և դրանց կազմին բոլորիլ քաղաքավարութիւն...

Ազտեղութեան կողմից Արդուինը կարող է մրցել աշխարհի ամենայեւորնիպօժ, ամենազազրելի անկիւններէ հետ, և այդ, ի հարկէ, պատիւ է բերում արդուինցու իրստ զարգացած անճաշակութեանը...

Դրանց հակառակ արդուինցիք, առանց դաւանանքի և դասակարգի խարութեան, պահպանել են հայի պատմական հիւրասիրութիւնը: Զարմանում ենք մենք, որ «Բնաշխարհիկ բառարանում» կասկածանքի է ենթարկուում արդուինցու այդ անժըխտելի բարի յատկութիւնը:

*
* *

Արդուինցիք, կարելի է ասել ընդհանուր առմամբ, աշխատասէր մարդիկ են և իրանց ապրուստը ճարում են ճակատի քրտինքով:

Ի դէպ. զոգութիւն, վաշխառութիւն, դիտաւորեալ հրձգութիւն և այլն զոյութիւն չ'ունին այս կողմերում: Լինում են մարդասպանութեան դէպքեր և այդ լեռնցի կիսավայրենի թիւրքերի ձեռքով:

Արդուինցի հայոց զբաղմունքներն են՝ օգարարութիւն (УВЯШНИКЪ), կոշկահարութիւն, երկաթագործութիւն, նոսրամրրգավաճառութիւն և այլն: Բայց ստուար մեծամասնութեան արհեստն է օգարարութիւնը: Դրանք զբաղում են Հարաւային Ռուսաստանի զանազան նահանգներում, սկսած զարնանից և միայն աշտանը վերադառնալով իրանց ծննդավայրը՝ ձմեռում են այստեղ: Մոսկուալից այս կողմ մտէք որ քաղաքը, նոյն իսկ զիւղը և կամենաք, — այդտեղ կը գտնէք մի քանի «չափալածի» — թիւֆլիճիներ»: Այդ արհեստն իսկն ասած արդուինցոց մենապաճառն է:

Սակայն յաւայի է ստելը, որ այդ երկակենցսոց արարածները իրանց հետ հայրենիք են բերում զանազան վեներական, վարակիչ հիւանդութիւններ ու սխտեր, որոնցով վարակոււմ են նրանց ընտանիքն ու մերձաւորները:

*
* *

Արդուինի արևելեան կողմը, 40 վերստաչափ հեռաւորու-

Թեան վրայ, գանձում է Ս. ր տ ա ն ու չ աւանը, յայտնի իր հնա-
գարեան աւերակներով, բարձրաբերձ միջնաբերդով և դեռ՝ կի-
սով չափ կանգուն մնացած պարիսպներով՝ նման Անի քաղաքի
աւերակներին:

Արդանուշում բնակուում են բացառապէս 250 տուն հայ-
կաթողիկէներ, որոնք ունեն մի եկեղեցի և մի ծխական ուսում-
նարան: Արդանուշոց կեանքի նկարագիրը նման լինելով Ար-
դուինին՝ աւելորդ ևս համարում նկարագրել:

Արդանուշից դէպի հարաւ, մօտ 15 վերստ հեռու, Տ ա ն ձ ո տ
դիւզն է, որ հաստատուած է մի բարձր սարահարթի վրայ և
որը նշանաւոր է այդ կողմերում իր հրաշալի ջրերով և ամառ-
նային դով, առողջարար կլիմայով: Բնակիչներն են՝ 200 տուն
սիւննի թիւրքեր, 100 տուն լուսաւորչական և 5 տուն կաթո-
լիկ հայեր: Այստեղ թէ թիւրքերը և թէ հայերը ապրում են ի-
րար հետ գոհ և հաշտ:

Հայ-լուսաւորչականներն ունեն մի անշուք ու աճի հին
եկեղեցի, մութ և խոնաւ Բայց դրա հակառակ ունեն մի զար-
գացած, գաղափարական երիտասարդ քահանայ, հաղիւ 30—32
տարեկան—արժ. Գրիգոր քահ. Եսայեանց: Այս ծաղիկ-հոգևո-
րականը հետամուտ է լինում ամեն մի նորութեան և աշխատում
է իր անշահասէր ու պարտաճանաչ կեանքով բարի օրինակ
հանդիսանալ իր հօտին առջև:

Տէր Գրիգորը՝ միացած Տանձոտի—այսպէս ասած—ինտել-
լիգենցիայի հետ՝ զովիկի նախանձախնդրութեամբ աշխատում
են զարթեցնել իրանց հայրենակիցների մէջ սէր դէպի ըն-
թերցանութիւնը:

* *

Տանձոտի ծաղկաւէտ սարերն ու կանաչադեղ հովիտները
մեծապէս նպաստաւոր են գիւղատնտեսութեան մի ուշագրաւ
ճիւղի—մեղուարուծութեան համար:

Բայց տանձոտցիք մինչև այսօր, դժբաղդարար, անընդու-
նակ են եղել օգտուելու բնութեան այդ առատ շնորհներին:
Պէտք է լաւ գիտնան տանձոտցիք, որ մեղուարուծութիւնը մի
չահաւէտ և պատաւոր զբաղմունք է և իմ կարծիքով զա ա-
ւելի մեծ օգուտ տալ կարող էր իրանց, քան ծխախոտի արդիւ-
նաբերութիւնը, որով զբաղւում են իրանք և շատ քիչ են օգ-
տւում:

Մենք խորհուրդ ենք տալիս տանձոտցիներին հէնց ներ-
կայ տարուանից սկսել մեղուարուծութիւնը, և խելացի հիմքե-
րի վրայ դնել նրան: Նախ պէտք է այս գիտենալ, որ այժմ
լաւ և մեծ մեղուարուծների մօտ գործածութիւնից բողբոջին

ընկել են փեթակների հին սակառածև տեսակները, որպիսին գործ են ածում դեռ Արգունի շրջակայքում:

Այժմեան յայտնի մեղուաբուծների մօտ ընդունուած սխաւեմն է Dadane—Գաղանի շրջանակաւոր և բազմալարկ փեթակները, որոնք անհամեմատ նպատակայարմար են:

Փեթակների այդ—Dadane—սխաւեմից մի քանի հատ ձեւք է բերել Տ. Գրիգոր քահանան և փորձեր է անում առաջ տանելու մեղուաբուծութիւնը: Հէնց առաջին տարիննա հասաւ կատարեալ յաջողութեան և ստացաւ իւրաքանչիւր փեթակից 2,50—3 պուղ մեղր ու մեղրամոմ: Այդ իրողութիւնը ցոյց է տալիս, որ Տանձոտի ընութիւնը նպաստաւոր է, և սեղուաբուծութիւնը կարող է մի օր դառնալ Տանձոտի մի արգիւնարեբուծեան ամենազլխաւոր ճիւղը, եթէ տանձոտցիք վճռեն զբաղուել զբանով:

Տանձոտցիք պէտք է արհամարեն այդ կողմերում դոյութիւն ունեցող այն նախապաշարմունքները, որ իբր թէ մեղուաբուծական պարագաների փոխելովը մեծ ազլաների կ'ենթարկուեն փոխողները: Հօրկ կայ ասել, որ զբանք պառաւական, զբոջ չ'արժող խօսքեր են, որ պէտք է քամիին տալ...

Չը նայած որ Տանձոտ գիւղն ունի ընդարձակ տարածութեամբ վարելահողեր և լաւ-լաւ արօտասանդեր, սակայն հողերի օրինաւոր բաշխում չը լինելու շնորհիւ գիւղացիներից ոմանք ունեն, կարելի է ասել, անհրաժեշտ քանակութիւնից աւելի, մինչդեռ ստուար մեծամասնութիւնը այնքան քիչ, որ իրանց տարեկան պաշարը գուրս բերել չեն կարող. այդ դասակարգը բոլորովին անապահով դրութեան մէջ է:

Կայ և հողագուրկ դասակարգը (հայերի), որոնք պարապում են կօշկակարութեամբ, խաղախորդութեամբ, պղնձագործութեամբ, մսավաճառութեամբ և մի քանի այլ արհեստներով:

* *

Տանձոտից դէպի հիւսիս-արևելք, 15 վերստ հեռու, Մորաշէն կամ Ենի-րաքաթ գուտ հայաբնակ գիւղն է, որ ունի 25 տուն բնակիչ և ամենքը պատկանում են շուսաւորչական շաւանութեան:

Նորաշէնում է հնադարեան ս. Յովհաննէս եկեղեցին, ուր զիմում են շրջակայքից բաղմաթիւ հայեր, Աստուածածնի տօնին, ուխտի: Բայց այդ նշանաւոր ուխտատեղին լինելով խարխուլ դրութեան մէջ և կարօտ վերանորոգութեան՝ նորաշէնցիք ընտրել են երեք հողուց բաղկացած հողարարծութիւն Բաթում

քաղաքում: Այդ հոգաբարձութիւնը սրանից 3—4 տարի առաջ պաշտօնապէս հաստատուել է Թիֆլիսի Հայոց կոնսիստորիայի առևանից: Հոգաբարձութեան պարաքը լինելու էր հանդանակութիւն բանալ և ձեռնարկել յիշեալ ուխտատեղիի վերանորոգութեանը: Այդ պարտականութիւնը նրանք յանձն էին առել սերայօժար կամբով, բայց մինչև այսօր դեռ ոչ մի քայլ չեն տրել այդ պարտաները, և եկեղեցին շարունակում է մնալ խարխուլ, վտանգաւոր դրութեան մէջ:

Ի դէպ. լուռում է, որ երբեմն-երբեմն ինչ որ վրացիներ են յայտնւում Նորաշէնում, որոնք յիշեալ ուխտատեղիի հաստատութիւնը վերադրելով իրանց պապերին՝ կամենում են իւրացնել նրան, չը նայած որ այդ եկեղեցւոյ յատկադիծը (ուրլան) և ճարտարապետութեան ձևը՝ միացած աւանդութիւնների և ծերունիների վկայութեանց հետ՝ հաստատում են դրա հայկական լինելը:

Նորաշէնը գտնւում է Հին-Հայաստանի և Վրաստանի սահմանների վրայ, մի քանի վերստով ներս Հայաստանի բուն սահմանադրից:

Երևակայեցէք մի բուպէ, որ Բարխար լեռների և հանդիպակաց լեռնաշղթայի վրայ բուն վրացական տանակի վանքեր ու եկեղեցիներ կան կիսաւեր և ամայի դրութեան մէջ, որ այդ սրբավայրերը այսօր դառել են խաչնարած մահմէդական ցեղերի անամոց փարախներ, աւաղակների և այլ չարագործների օթեան... Այդ ոչինչ, մեր հայրենակից վրացիները դրա դէմ ոչինչ չ'ունեն, բայց երբ դրանցից մէկն ու մէկը,—ընդունելով նոյն իսկ, որ բուն վրացական եղած լինէր Նորաշէնի կուածաղիկ-ուխտատեղին,—քրիստոնէայ հայերի ձեռքով պէտք է շէնանայ և դառնայ աղօթքի տուն, այդ պարագայում արդէն մեր դրացիներն ասպարէզ են գալիս «որպէս ցեղային իրաւունքների նախանձախնդիր մարդիկ» և սահանջում են, որ «ցեղային» աւերակ սրբավայրը շարունակէ մնալ ամայի և փարախ... Բայց ինչ դուրս կը գայ այդ տեսակ «նախանձախնդրութիւնից»:

* * *

Նորաշէնցիք իրանց վարք ու բարքով նման են տանձուցիներին: Նրանց հովուում է Տանձուտի քահանան:

Նորաշէնի բնութիւնն էլ պակաս նպաստաւոր չէ մեղուարուծութեան համար:

Թէ Տանձուտում և թէ Նորաշէնում չեն լինի Արդուինի պտուղները, այստեղերում եղածներն են՝ տանձիկ (տեղական բարբառով «բանդա»), խնձոր, թութ և սալոր:

Արդուինի դաւառի Շաւշէթի վիճակում բացի յիշածներէցս, կան և հետեակ հայաբնակ գիւղերը:

Օքրոպակերտ՝ 150 տուն հայ-լուսաւորչական բնակչով, ունի մի քահանայ և երկու եկեղեցի, որոնցից մին համբաւաւոր ուխտատեղի:

Սաթլէլ՝ որ կենտրոնաւայրն է Շաւշէթի և Մերխէվի վիճակների, բնակիչներն են 60 տուն կաթողիկ, 30 տուն լուսաւորչական հայեր և 20 տուն սիւննի թիւրքեր:

Մամանեղիս՝ զուտ հայաբնակ, 30 տուն հայ-կաթողիկ բնակիչներով:

Պիլիկուր՝ 20 տուն հայ-կաթողիկներով, որոնք տառապում են բարոյական և նիւթական յետին աղքատութեան գրկում:

ԱՍՈՐԻՆՆԵՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՕՏ

189... Թւականին էր, երբ ևս իմ մի ընկերի և քիւրդ ջորեպանի հետ Աղբակի կառավարչական կենտրոն Բաշկալէից գնում էինք Հէրեարի կուսակալութեան Ջուլամերկ քաղաքը:

Մեր առաջին իջիւանն եղաւ Աղբակի նշանաւոր բէզերի մէկի դիւղում: Երբ երեկոյեան մօտեցանք բէզի տանը, այդ քիւրդ Ֆէյզուլլահ-բէգը ման էր գալիս իր տան տանիքի վերայ: Նրա վէս ու հպարտ անցուդարձը նրա խոժոռ նայուածքի հետ կարծես անցորդին ասում էր. «Նս եմ այս դաշտերի ու բլուրների ազատ, անպատասխանատու տէրը, ահարկու վրէժխնդիր իմ թշնամիներին, եթէ համարձակուեն խլելու իմ ազատութիւնը»:

Մենք իջանք ջորիներից, և մեզ առաջնորդեցին նրա մօտ: Նրա կողքին նստած էր մի մօլլա: Երբ լսեց, որ վանի կուսակալից յանձնարարականներ ունենք Ջուլամերկ, «գիշերս իմ հիւրն էք, ասաց նա. գնացէք, հանգստացէք ու ձեր ջորիներին էլ հանգիստ տուէք»:

Մեզ առաջնորդեցին դիւղական մի սենեակ, որին կից էր ախոռը: Ջորիներն այնտեղ կապեցինք: Բէզի տանից առատ խոտ ու գարի եկաւ մեր ջորիների համար և ընթրիք մեզ համար:

Ընթրիքի միջոցին շատացան մեր քիւրդ այցելուները: Այդ մեզ կասկածել տուաւ, թէ նրանք պատրաստոււմ էին մեզ կողոպտելու:

Ամեն մի քիւրդի աչք պսպղում էր: Թիւրքահային ծանօթ են քիւրդի գող աչքերը: Երբ քիւրդին ասես. «Օ՛րօ, ծավէտա ձավէ տղան ա» (այ քիւրդ, աչքերդ գողի աչքեր են), նա հրճը-

ւում է: Այդ սուր յափշտակիչ աչքերը թափառում էին մեր իրեղէնների վրայ:

Գիշերը վերջապէս մի կերպ նրանց հեռացրինք՝ պատճառելով, թէ յոգնած ենք ու հանդստանալ ենք ուզում. բայց մեր աչքերին քուն չէր գալիս, նրանք մեր օթեանի շուրջը գալով՝ փախում ու կասկածելի կերպով խորհրդակցում էին. իսկ մեր երևալուն պէս դադարում էր նրանց փախուքը: Մենք մեր իջևանին պաշտպանողական դիրք տալ սկսեցինք. նախ ամբարացրինք ախոռի դուռը՝ ետեր գցելով քարեր, փայտեր ու հաստ գերաններ, որ ախոռում կային, յետոյ էլ մեր իջևանի դուռը և առանց հանուելու, կազմ ու պատրաստ, ճրագը հանգցրած, ամեն մէկս մի պուճախ քաշուած՝ նստել, սպասում էինք:

Կէսգիշերը մտանալու վրայ էր, երբ տանիքի վրայ, երկրի մօտը մի դրմբոց լսուեց, յետոյ քայլելու ձայն. մենք երկրի ծածկել էինք քարով, այժմ այդ քարը աշխատում էին վերցնել՝ երևի մեր քուն թէ արթուն մնալն իմանալու համար: «է՛յ, սահէ հարաման» (է՛յ, անհարազատ շուն), կանչեցինք մենք յանկարծ և դուռը շուտ բանալով՝ դուրս եկանք: Քրդերը տանիքից իրանց մի կողմ գցեցին ու փախան: Կրկին ետ դառնալով մեր պուճախները՝ անքուն հսկեցինք մինչև առաւօտ, բայց էլ ձայն չը լսուեց: Լոյսը արդէն բացուած էր, որ դռները բանալով դուրս եկանք ու մեր մեկնելը յայտնեցինք բէգի ծառաներին, ըստ սովորութեան նրանց մի քանի դուռուչ նուէր (քաշիւիչ) տալով՝ յայտնեցինք, որ գիշերը շատ հանդիստ անց կացրինք, բայց գործերն ստիպողական լինելով, ներողութիւն ենք խնդրում, որ անձամբ չենք ներկայանում բէգին և շնորհակալութիւն յայտնում նրա հիւրասիրութեան համար...

* *

Մեր առաջ կամաց-կամաց գեղեցիկ դաշտավայրերը չբանում էին, և երևում էին Հէքեարի քառաժայռ բլուրներն իրանց ցից-ցից ծայրերով: Հասել էինք արդէն Նհել գետին: Անձրեկից գոյացած հեղեղները յորդում են Նհելը, որի երկու կողմերի լեռներն անընդհատ ուղղածիզ են կանգնած: Նեղ ճանապարհով հազիւ մի մարդ միայն կարող է անցնել: Անասունների մէջ միայն ջորիներն են, որ կարող են այս ճանապարհներից անցրնել, սակայն բռնները պէտք է շատ փոքր լինեն: Որպէսզի Աղբակից Զուլամերկ և Զուլամերկից Աղբակ եկողները փոխադարձ ճանապարհ տան և յանկարծակի իրար գէ՛մ չը գան, որ նրանցից մի մասն ստիպուելի ջուրն ընկնել, սեղ-տեղ քարափոր դադարի տեղեր են շինուած. ճանապարհորդը որ կողմից որ գալու կամ դնալու լինի, կը պարտաւորուել մի քոտորդ

ժամ այդ կայանում սպասելու, մինչև որ կանչելով՝ դիմացի քարա-
փոր կայանից պատասխան առնէ, եթէ ձայն եկաւ, սպասում է, եթէ
ոչ, շարունակում է ճանապարհը: Այդ կայաններին բակ են ա-
սում: Այդ ճանապարհը շինել տուող քիւրդ բէգը իր վիշա-
տակարանը ճանապարհի կիսում մի քարի ճակատին փո-
րագրել է տուել: Գետի հարաւային կողմը բնակուում են կի-
սանկախ ասորիներ, իսկ հիւսիսային կողմը հպատակ ասորիներ:
Մեզ հիւրասիրեցին գիւղի հարուսաններից մէկի տանը: Մեր
իջևանը մի ընդարձակ տուն էր քարերից շինուած, պատերի
վրայ ձգուած հաստ գերանները իրար մօտ խիտ-խիտ շարուած՝
վարից վեր բարձրանալով ու չորս կողմից հաւասարապէս
միանալով առաստաղի կենտրոնում՝ վերջանում էին բոլորակ ձևով
մէջտեղ թողնելով մի կլոր երգիկ, որ այդ ընդարձակ տան
միակ լուսամուտի տեղ էր ծառայում, թէև գուռն էլ գործած-
ւում էր թէ եղնեւ-մտնելու համար և թէ իբր լուսամուտ: Գուռն
այնքան մեծ էր, որ անասուններն իրանց բեռներով ազատ ներս
էին մտնում:

Երբ անասունների ու մարդկանց մուտքը վերջացաւ, գուռը
փակուեց, վառուած հնոցի կողքին ջուր շաղ տուին, աւելցին
ու չուկեր փռելով մեզ հրաւիրեցին նստելու: Կտաւատի ձէթի
ճրագը վառուած էր ազոտ պլպլացող լուսով, մի փայլ էլ հնոցի
կրակն էր տալիս, որի բերանը չը ծածկեցին:

Մենք ընթրեցինք նրանց հետ առանց սեռի ու հասակի
խարութեան: Անգամ այս հետաւոր ծայրերում գտնուած լեռնը-
ցիների խօսակցութեան նիւթը քաղաքական խնդիրների վրայ
էր դառնում:

Սօսակցութեանը երբեմն խառնուում էին ընտանիքի մեծ
կիներն էլ, իսկ նորահարսերը և աղջիկները լուռ լսում էին մեզ:

Գիշերը տան երգիկը քարով ծածկուեց, մի սալ էին
դցել ու վրան ծանր քարեր դրել:

Արդէն գիշերը բաւական անցել էր, մենք յոգնած
էինք, մեր քնելու ժամանակը գեռ անցել էր, բացեցինք մեր
եափուենջիները, ղէնքերնիս վար առնելով մեր գլխատակը դրինք ու
քնեցինք: Երեք չորս ժամ քնել էինք, երբ իմ ընկեր Սիսակը
ու քիւրդ ջորեպանը արթնացան ու շուռ-մուռ գալով ինձ էլ
իրանց հետ արթնեցրին: Մենք հանգիստ քուռ կը քաշէինք
բոլորովին սպահով, բայց այս անգամ էլ չը կարողացանք քնել.
գոմէջների և ուրիշ տաւարների չնչառութիւնը խառնուելով մարդ-
կանց չնչառութեան հետ՝ օղջ այն աստիճանի տաքացրել էր,
որ կարող եմ ասել՝ բազմիքի տաքութեան հաւասարում էր:

իմ ու իմ ընկերի շորերը քրտնքի մէջ թրջուած՝ ջուր էին կըտրել, մեզ էլ տաքութեան դիմանալու կարողութիւն չէր մնացել, շունչներս էլ կտրուելու վրայ էր, էլ դիմանալ չը կարենալով մօտիս մոմպատը վառեցի, և վառ մոմը ձեռքիս մնաց, էլ ոչ կարողացայ խօսել, ոչ շարժուել, համբացայ, շփոթուեցի որովհետեւ աչքս միանգամից ընկաւ ընտանիքի այն ամուսին զոյգերի և աղջիկների վրայ, որոնք զանազան ուղղութեամբ, իրարից շատ քիչ հեռու, զոյգ-զոյգ պառկած էին աղաւ-եւա-յական մերկութեամբ: Մոմիս լոյսից ընտանիքի մայրը արթնացաւ ու հարցրեց, թէ ի՞նչ է եղել:

Ասացի, որ շունչս կտրուում է, տաքին չեմ կարող դիմանալ, կթէ այսպէս մնայ, զուցէ ուշաթափուեմ. նա իմ ասածս հաստատեց իր այս խօսքերով. «Անկարելի է շորերով քնել, մերկացիր»:

Ասորուհի աղջիկներից մէկը վեր կացաւ և նստեց տեղաշորում՝ իր մերկութիւնը ծածկելով միայն մի շորի նեղ շերտով: Կարծես թէ դրանց մէջ ամօթի սովորութիւնը մեր հասկացողութեան պէս բարոյականութեան մաս չէր կազմում. պատուը ինձ հետ վարուում ու խօսում էր, ինչպէս իր զաւակի հետ: Մոմը հանդցրի անմիջապէս՝ խաւարի մէջ թողնելով կնոջական մերկութիւնները, և հետեւելով պառաւի խորհրդին՝ ես էլ մերկացայ: Լոյսը չը բացուած՝ զարթնեցի, շորերս մթութեան մէջ հաղայ ու պառկեցի: Դեռ քնածներից ոչ մինը վեր չէր կացած. ինձանից յետոյ կանայք էլ վերկացան, հագնուեցին մթնով, իսկ սղաճարդիկը դեռ քնած էին:

Լոյսը բացուեց թէ չէ, դուրս եկանք, սառը ջրով լուացուեցինք ու տուն վերադառնալով՝ պատրաստուեցինք մեկնելու: Երեկոյին մեզ հետ ճաշող ու միասին մէկ տան մէջ քնող երկսեռ ամբողջ ընտանիքը դուրսը կանգնած՝ մեր մեկնելուն էր սպասում. մենք նրանց հիւրասիրութեան համար դրամական մի փոքրիկ նուէր տուինք. թէ և առաջ մի քիչ նազ արին վերցնելու, ասելով թէ հիւրասիրութիւնը անփող ու անվարձ պէտք է լինի, բայց մեր պնդելու վրայ համաձայնուեցին և առանձն իրանց շնորհակալութիւնը յայտնելով:

* *

Մենք ուղևորուեցինք դէպի Ջուլամերիկ, ուր և հասանք երեկոյեան: Ջուլամերիկը քարաժայռերի միջում փոս ընկած մի խոռոչում է տեղաբնակ. ընակչութեան մեծ մասը քիւրդ է: Մի ժամանակ նահանգական բազաք լինելով՝ ունի բաւական մեծ կառավարչական պաշտօնատուն, շուկայ, զօրանոց, փոքրիկ ծառաստաններ, ծաղկոյններ ու աղբիւրներ: Տիրաւ ու Տիւուրի երկու կիրճերում ընակուող կիսանկախ ասո-

րիները ծախու են բերում Ձուլամերկ բրինձ, չամիչ, մեղր և այլն: Այստեղ կողոպուտի վայրենի բնագոյն ասեմ, թէ պէտքը՝ այնքան զօրեղ է, ու քիւրդերն այնքան անզուսպ, որ շուկայում խանութներէ մէջ միայն ապրանքի նմուշներն են դնում ի տես յաճախորդի, եթէ յաճախորդը բաւական քանակութեամբ գնել կամենայ, պէտք է սպասէ, որ խանութպանը տանից բերել տայ:

Ձուլամերկը ամառն անտանելի շողեր է անում, ուստի քաղաքում գրեթէ ոչ ոք չէ մնում, բոլորն էլ լեռներն են քաշում:

Կէս վերստ հեռաւորութեամբ մի բարձրաւանդակի վրայ գտնւում է Փականը, որ Ձուլամերկի արուարձանն է, դուռ հայաբնակ, նրա օդը մարուր, տները գեղեցիկ են, բնակչութիւնը խիտ է, գրեթէ մօտ 200 տուն, ունի ցածրիկ բլուրների, փոքրիկ դաշտերի ու հեղեղաանների տեսարաններ: Լեռնային այս մասերում դաշտային քիչ տեղ գտնուելուն համար, նայած երկրին ու նրա տնտեսական վիճակին, անհամեմատ թանգ է ծախուում նրանց արտն ու մարդագետինը:

Փականի հայերը պարապուում են առետրով, արհեստով ու երկրագործութեամբ: Լուսաւորչական են, եկեղեցի էլ ունեն: Փականից զատ Ձուլամերկի Գիւրդիստանի մասում գտնւում են չորս-հինգ հայ ուրիշ գիւղեր էլ, որոնց անունները մոռացել եմ:

Այստեղի հայերը պահպանում են իրանց կրօնը, ազգութիւնը և իրանց կեանքի գոյութիւնը Մար-Շիմոնի պաշտպանութեան տակ: Իբրև պատմութիւն լսել են ու գիտեն, որ հայոց պատրիարքարան կայ Պօլսում, պատրիարք կայ, սահմանադրական ժողովներ, կամ վանում հայոց առաջնորդարան ու առաջնորդ. հեռաւորութիւնն ու հաղորդակցութեան դժուարութիւնը այստեղի հայերին անջատել է միւս հայերից: Մար-Շիմոնը փոխանակում է հայ հողեր հովիւներին ու լուծում է նրանց մէջ ծագած վէճերը. կրօնական խնդիրներն էլ լուծում է ըստ հայ եկեղեցական օրինաց, իբր հարեան ազգութեան կրօնի աւանդապահ: Փականի հայերն ինձ ասացին, որ Աղբակում գտնուած ասորիների կրօնական հարցերն էլ լուծում է ըստ ասորական օրինաց Բարդուղիմէոս վանքի վանահայրը:

Մար-Շիմոնը խաղաղ ժամանակ բնակւում է Քոչանիստում, իսկ ոչ խաղաղ ժամանակ անցնում է կիրճերը իր ժողովրդի մօտ:

Ձուլամերկ այնքան վայրենացած, առանձնացած մի տեղ է, որ տաճկահպատակ մի ուրիշ քաղաքացի եթէ գտնուի այն-

տեղ, նրանց համար մի տարօրինակ երևոյթ է, այնպէս որ եթէ որեէ մէկը ինքն իրան մտանայ կամ վտանդ յանձն առնի այնտեղ ուղևորելու համար, դեռ Զուլամերկի սահմաններից ներս չը մտած՝ լուրեր են ստանում նրա մասին, ժողովուրդը՝ ճանապարհորդներից, կառավարութիւնը՝ հեռագրով:

Զուլամերկը տէրութեան միւս մասերին կապող հաղորդակցութեան միակ մօտիկ ու կտրուկ միջոցն այստեղ հեռագիրն է, այն էլ եթէ խառնակութիւն պատահի, քիւրդերը քարուքանդ կ'անեն լեռների բարձունքներում անկուած հեռագրական սիւներն ու թիւերը կը կտրեն: Այս լեռնցի քիւրդերը քաղաքականութեամբ շատ են զրազուտ. գիր, գրականութիւն չունենալով, նրանց խելօք ու հեռաբրբիք ջորնպանները սրարտական են իրանց բէգերի հրամանով մի վանեցի, բիթլիսցի, բայաղէդցի կամ էրզրումցի քիւրդ ճանապարհին հեռուից տեսնելիս (տարազից որ սեղացի լինելը ճանաչուած է)՝ նրան կանչել, մօտենալ և պատմել ամեն մէկը իր երկրի քաղաքական կեանքի, գոյութեան, սպանութեան դէպքերի մասին, որ ամեն միւն իր տեղը հասնելով՝ հաղորդէ իր բէգին: Այս էլ քրդական լրագրութիւնն ու հաղորդակցութեան միջոցն է քիւրդ հասարակութեան համար:

* * *

Այսպիսի տեղ ապրել են և ապրում են հայերը, ոչ մի վարժարան չունենալով՝ թաղուած են խոր տղիտութեան մէջ, կանայք սպիտակամորթ են, սիրուն, ունեն փայլուն սև-սև աչքեր, նայում են մեղմիկ, հանդարտ, ժպտերես:

Զուլամերկում այն ժամանակ կային երկու հայ պաշտօնեաներ, արդարադատութեան բաժնի երկու անդամ, որոնց ամբողջ զործունէութիւնը կայանում էր ժամանակակից աղղեցիկ պետերի սասձները կրկնել, այոին այո ասել, ոչին էլ ոչ: Մէկը զբանցից սոճկով էր ծառայում, իսկ միւսը պատուոյ անդամ էր: Ալլահվերդին այդ ժողովների սոճիկ ստացող անդամն էր: Մենք ծանօթացանք նրա հետ, հարուստ, կալուածատէր, խորամանկ մի մարդ էր:

Տեղական սակաւաթիւ հայերը առհասարակ կարծես թիւրքերի, քիւրդերի ու ասորիների մէջ խաղաղարարի դեր են կատարում, կառավարութիւնը զրա համար այս կողմերում հայ ոստիկաններ է պահում: Տեղիս հայերը արհեստներով են պարապում:

* * *

Մենք իմացանք, որ ասորիների կաթողիկոս Մար-Շիմոնը

Փականումն էր իջեանել, և այցելութեան դնացինք: Նախապէս իւր հաճութիւնն ընդունելով, զբախ դռնից ներս մանկիս տեսանք, որ տան առջևի պարտիզում ման էր դալիս ասորիների աղղապետը: Նա հագած էր սև հասարակ շալէ շալվար շատախցիներն ձևով, մէջքին կապած գեղին մետաքսէ մի մէջքկապ, որի կլոր փոքրիկ ծուկերը կախուելով՝ երեւում էին միշտ. հագած ունէր լաջվարթ մահուդից կարծիկ սանձա, որի երկարութիւնը հասնում էր մինչև դօսին, դօսիւմ խրած երկայն խանջալի ոսկեզօծ կոթը դուրս էր ցցուած կրծքի վրայ, գլխին զրած ունէր ֆէս՝ մետաքսէ սև փօշի-ով փաթաթը շուրջը, կապոյտ Ֆիւսիլիւն էլ փօշիի տակից իջել էր ջահէլվարի մինչև ուսը: Հինգ վեց սպառազինուած ասորիներ կտակից միշտ շուրջ էին տալիս նրա անցուդարձի միջոցին:

Մեզ տեսնելով՝ «հրամեցէք» ասաց ու սենեակը մտնելով՝ իր տեղը բազմեց: Նրա մարդիկը դուռը բռնեցին՝ այնտեղ կանգնելով: Երբ մենք մեր յարգանքը արտայայտեցինք, նա իր դիմացը տեղ ցոյց տուաւ, և մենք նստեցինք: Խօսակցութիւնը սկսուեց, ու հարցը անցկացաւ հայերի ու հայատակ ասորիների հարստահարուած վիճակի վրայ. նա կրօնական հայեացքներով բացատրել ուղեց ու ասաց. «Մենք մտապել ենք Աստուծու ուղիղ ճանապարհները, անպէտք մարդիկ ենք դարձել, ու զրա համար էլ այս վիճակին է հասել քրիստոնէութիւնը»:

Մեզ խափէ տուաւ: Մօտ մի ժամից յետոյ դարձեալ մեր յարգանքը մատուցանելով՝ ընկերոջս հետ դուրս եկանք:

Դեռ չէր անցել երեք ժամ, մի փախուկ էր անցնում Փականի հասարակութեան մէջ. Մար-Շիմոնը կանչել էր տուել արդարադատութեան ժողովների հայ անդամներից մէկին, յիշած Ալլահվերդիին ու չը դիտեմ նրա ինչ մի պակասութեան համար հրաման էր արել, որ իր աչքի առջև գետին դցեն նրան ու յիսուն փայտի հարուած իջեցնեն. հրամանը զործադրուած էր, ու Ալլահվերդիին ջարդուած բարձրացրել էին, որ ներսդութիւն ու մեղայ ասելով՝ աջը համբուրի...

*
* *

Ինձ ասացին, որ ասորիները 40,000 հրացանաւոր պատերազմիկներ կարող են հանել: Նրանք իրանց մէջ հըրացաններ չինող փոքրիկ զործարաններ ունեն. վարժարաներ չ'ունեն: Նրանց քահանաները զողանում են իրանց աւանդուած ձեռագիր ասորական հնութիւնները ու տանում Անգլիա ծախում: Տեղիս ասորիներ ընդհանրապէս իրանց սլաշտպանութիւնը որոնում են Անգլիայի մօտ: Մի միսսիոնար կայ, որ միշտ

Մար-Շիմոնի մօտն է. ինչպէս երկայ, նա աւելի անդլիական ազննտ էր, քան միսսիոնար:

Բաշկալէից 4¹/₂ ժամ հեռու գտնուում է Աղբակի կառավարչական կենտրոնատեղին, Հայաստանի առաջին լուսաւորիչ ս. Բարդուղիմէոս Առաքեալի հռչակաւոր վանքը, որ ս. Էջմիածնի վանքից յետոյ հայոց ամենահին վանքն է: Այդ վանքից մինչև Պարսկաստանի սահմանները 16 ժամուայ ճանապարհ կայ: Երբեմն հայաշատ Աղբակի և Անձեաղեայ երկրի մէջ վաղուց ի վեր տիրապետող տարրը քիւրդն է: Քառորդ դար կայ, որ այստեղ ահագին ազդեցութիւն ունի. քիւրդ Շէյխ-Համիդը, որ յետոյ եղաւ Շէյխ-Համիդ-փաշա, որ հեռաւոր ու մօտաւոր քիւրդերի վրայ իր թողած համալրանքով միշտ զօրեղ է մնում: Բաշկալէում թէ կուսակալ նստի, թէ տեղակալ, պարտաւոր է Շէյխ-Համիդին լսել, նրան հետևել, ապա թէ ոչ քրդական բանախները պատրաստ են կուսակալութիւնն էլ փոշու պէս ցրել ապր: Ինչպէս մեծ հեղինակութիւն ունի Մար-Շիմոնը Ասորեստանում, այնպէս էլ չէյխը այս կողմերում: Այստեղի հայերը երկար ժամանակ վանահայր ունեցել են Բարդուղիմէոսի վանքում մի վարդապետ, որ ունէր իր ինքնուրոյն տիպը և պատմութիւնը: Սա կոչուում էր Յովհաննէս Բազունի: Բազունին չէր կամենում մեքենական հրամանակատար դառնալ պատրիարքարանի ու առաջնորդարանի, նա երբէք ուշադրութիւն չէր դարձնում թղթէ անպօր հրահանգներին, որոնք բնաւ տեղական հանգամանքներին չէին նախատում. չէր հաւատում, որ այդ ալան-թալանի երկըրում, խաչնարած, երկրագործ ժողովուրդի մէջ կարելի լինի տեղական դպրոց պահպանել ու նրանից արդիւնք սպասել, դրա համար վախայնելով վախցրել էր երբեմն այնտեղ ուղարկուած գրագէտ հոգևորականներին ու դպրոցը փակել էր: Նա քիւրդերի մէջ մրցելու ու հաւասար դիրք ունենալու համար ընտրել էր միայն աւազակութիւնն ու ինքն աւազակապետ էր. ամօթ էր համարտ մ իրան վարժապետ դառնալ, երեխայ կարդացընել կամ երեխայ կարդացնող պահել և աւելի ամօթ՝ ժամաստղ լինել խնդճայած, ստրկութեան մէջ թուրացած զիւղական հայի համար, որովհետև բնակչութեան գլուխը գտնուելով՝ ինքն էլ ուղում էր լինել տեղական հայերի Մար-Շիմոնը, Շէյխ-Համիդը, որով նրա ցեղն ունենար հաւասարապէս իր հողերը, զինուորական աւազակապետը. նա վանքի լուսարարութիւնը յանձնել էր մի քիւրդի ու եկեղեցու բանալին նրա ձեռքը տուել. մի օր նրան պատահելով երբ նկատողութիւն արինք, նա

կանչեց լուսարար քիւրդին. «Չահար, եկ այստեղ»: Չահարը չէր նմանում մեր ճաշակեր լուսարարներին, մեռելաթաղ ժամհարներին, զինուած մի ահռելի աւազակային սիպ էր: Վարդապետը հրամայեց նրան. «Չահար, շան պէս գետին թաւալուի»: Չահարը իրան գետին խփեց ու թաւալուելով՝ եկաւ լիզելու իր տիրոջ ոտքը. վարդապետը հրամայեց. «Վեր կաց»: Նա վերկացաւ շատ շուտով ու ձեռքը խանչալի կոթի վրայ դնելով անմիջապէս՝ կանգնեց նրա առաջ պատրաստ, մի ուրիշ հրաման կատարելու: Այս տեսարանը ներկայացնելուց յետոյ՝ վարդապետը մեզ դառնալով ասաց. եթէ ասեմ, որ խանչալը իր սիրտը խրի, կը խրի անմիջապէս. եթէ քիւրդ լուսարար եմ պահում, հայր ինձ հաւատարիմ չէ: Բազունին ազգայինին, հանրականին, դաղափարականին հետևողներից չէր, չէր էլ հաւատում դրան, բոլորին էլ անուանում էր երկչոտ. ինքը զուրկ էր նոր ժամանակի գաղափարականութիւնից, իսկ միւսներն էլ զուրկ էին իր աւազակային յատկութիւններից: Հետևապէս ոչ մէկը միւսից աւելորդ արժանաւորութեամբ չէր գերազանցում: Մենք մեր աչքով տեսանք, որ Յովհաննէս վարդապետը բարկանալով վանքի գիւղում նստած միւղիբի վրայ, ատրճանակն առաւ, դնաց նրան սպանելու: Միւղիբը փախաւ, ու ոտտիկանները աղաչանք - պաղատանքով նրան ետ դարձրին վանքը. նա թրքացած հայ էլ է սպանել, քիւրդ էլ ու քիւրդից էլ գնդակի վէրք ընդունել, որ իր թևի վրայ շատերին ցոյց էլ տալիս: Նոյնպէս տեսանք, որ պարսկահայերից եկան վարդապետից խնդրելու, որ իրանց գողացուած չորս եզները դանէ: «Ամեն մի եզի համար մի շուալ ցորեն եմ ուղում վանքի համար», ասաց նա: Նրանցից մի մասն էլ մի տոմսակ վերցրին, տարան Շէյխ-Համիդին, որ իրանց եզները դանէ, իրանց տայ. մենք դեռ այնտեղ էինք, որ եզները բերին:

ՃԱՄԲՈՐԴ

ՊՐՈՒՍՍԱԿԱՆ ԱՆՃԱՄԲԵՐՈՂՈՒԹԻՒՆ

Գերմանիայում Բիսմարկի ոգին սչ մի ասպարիզում թե-
րևս այնչափ բնորոշ չէ արտայայտուում, որչափ պրուսսական յա-
րաբերութիւնների մէջ գէպի լեհերը: «Նրկաթէ կանցլէրի» սկզբ-
բունքը՝ Macht geht vor Recht (ոյժը ընթանում է իրաւուն-
քից առաջ) ամբողջովին մարմնացած է Պրուսսիայի լեհական
քաղաքականութեան մէջ: Լեհացիների շուտափոյթ գերմանա-
ցումը—ահա այն կէտ նպատակը, որին համարեա մի դար է
(1815 թւից) ձգտում է հասնելու Պրուսսիան: Սակայն այսօր
նոյն իսկ ծայրայեղ լեհատեաց պրուսսակը ստիպուած է խոս-
տովանուելու, որ գերմանացումը շատ ու շատ հեռու է իր
նպատակից: Եւ զարմանալի չէ:

Մի կողմ թողնելով Պրուսսիայի դիւրափոփոխ քաղաքա-
կանութիւնը (որը 1815 թւականից սկսած 13 անգամ փոխուել
է), բաւական է ի նկատի առնել այն պարզ պատմական օրէնքը,
որ բռնութիւնը միշտ հակառակ հետեանքների է հասցնում:
Նոյնն է և այս դէպքում:

Պրուսսիայի բեպրեսիւ ձեռնարկները ոչ միայն չեն կա-
րողացել խեղզել ու ոչնչացնել լեհերի ինքնաճանաչութիւնը,
այլ բոլորովին ընդհակառակը, բաւականաչափ նպաստել են
դրա զարգացման: Արեւմտեան Պրուսսիայի ու Պոզնանի նահան-
գում՝ որտեղ լեհերը կազմում են ընակիչների մեծամասնու-
թիւնը *) ու այդ պատճառով հեշտութեամբ պահպանել են
իրանց ազգային առանձնայատկութիւնները, — «լեհական շար-
ժումը» այսօր խոր արմատներ է ձգել, իսկ գերմանացած
Արեւելեան-Պրուսսիայում ու Սիլեզիայում համարեա արդէն

*) Լեհերի ընդհանուր թիւն է Պրուսսիայում 3¹/₂ միլիոն:

մարած լեհական ազգային ղգացմունքը հետզհետէ արթնանում է: Վրէշենի դէպքը, Բերլինի համալսարանի լեհ ուսանողների ցոյցը պատմութեան պրօֆ. Շիմանի դէմ, սովորական, իսկ այժմ խստացած, գերմանական սպորտընների բոյկոտը—ահա փաստեր, որոնք ազայուցում են լեհական ինքնաճանաչութեան ոյժը:

Պրուսիայի նեղ շովինիստական քաղաքականութիւնն արձագանք է դնում և գերմանական կայսրի արտասանած ճառերում. ապացոյց՝ Մարիենբուրգում Ս. Յովհաննու օրդենի տօնակատարութեան ժամանակ 1902 թ. (յունիսի 5-ին, Ն. Տ.) արտասանած ճառը:

«Լեհական խրոխտ մեծամտութիւնը—ասաց կայսրը—ըստ պատնում է գերմանականութեան. ես հարկադրուած եմ հրաւիրելու իմ ժողովուրդը պաշտպանել իր ազգային ստացուածքը: Այստեղ, Մարիենբուրգում, յայտնում եմ իմ ակընկալութիւնը, որ Ս. Յովհաննու օրդենի եղբայրները պատրաստ կը լինեն ծառայելու, երբ ես կը գիմեմ նրանց»:

Հետաքրքիր է համեմատել այս ճառը Պողնանում երեք ամիս յետոյ (սեպտեմբերի սկզբում) արտասանած ճառի հետ:

«Ես շատ ցաւում եմ—ասաց Վիլհելմը—որ իմ հպատակների գերմանական ցեղին չը պատկանող մի մասը միայն ծանրութիւն է զգում մեր փոխադարձ յարաբերութիւնների մէջ: Երկու սխալ կայ, որով բացատրում է այդ հանդամանքը: Ամենից առաջ նա ձգտում է իր դաւանութիւնը անձեռնմխելի պահել: Այն մարդիկ, որոնք պնդում են, թէ իմ կաթոլիկ հրպատակները կարող են դժուարութիւնների պատահել և նոյնիսկ կարող են, իբր թէ, հարկադրուած լինել ուրանալ իրանց կրօնը, — բացարձակ սուտ են ասում: Իմ կառավարութեան ամբողջ ժամանակամիջոցը և իմ Աախենում ասած խօսքերը *) ազայուցանում են, թէ որչափ խոր յարգում եմ ես կրօնը, այսինքն՝ անհատի անձնական վերաբերմունքը դէպի իր Աստուածը: Միևնոյն ժամանակ այդպէս ամբաստանողները վիրաւորում են ինձ, այն թագաւորի (König)**) յաջորդիս, որ ասել է՝ իւրաքանչիւր մարդ պէտք է իր տեսակով (Façon) վրկութեան հասնի:

Երկրորդ սխալը այն է, իբր թէ նրանց ազգային առանձնայատկութիւնները ու աւանդութիւնները պէտք է իսպառ ոչնչացուին: Այդ ճիշտ չէ: Պրուսիան բազկացած է մի շարք ցեղերից, որոնք կարող են հպարտանալ իրանց առանձ-

*) Տես «Մուրճ» 1902 թ. № 8.

***) Փրկւբրիս II Մեծ (1740—1786):

նայատուրութիւններով: Սակայն այդ հանդամանքը չէ արգելում նրանց ամենից առաջ ուղղամիտ պրուսացիներ լինել: Այսպէս և ներկայ դէպքում: Աւանդութիւնները ու յիշողութիւնները կարող են ազատ ու անխախտ մնալ, սակայն դրանք կաղմում են պատուութիւնը, պատկանում են անցեալին: Այժմ, այստեղ, ես ճանաչում եմ մլմիայն պրուսացիներ. իսկ իմ նախնիների աշխատանքը հարկադրում է ինձ ամեն ջանք գործ դնել, որպէսզի այս նահանգը անբաժան լինի, որ նա կապուած մնայ Պրուսիայի միապետութեան հետ, որ նա միշտ բուն պրուսական, բուն գերմանական նահանգ լինի»:

Կայսրի այս խօսքերը բոլորովին ուրիշ կերպ են հնչում. խօսք չը կայ «լեհական վտանգի» մասին, չը կայ որեէ յարձակում լեհերի դէմ, ընդհակառակը, մեղմութեան, հաշտութեան, խաղաղութեան նօսանքներ են սպրդում ամեն մի նախադասութեան միջից: Ահա թէ ինչու վարչութիւնը շտապել էր այդ ճառը առանձին սոցալգրութեամբ ցրել Պոդնանի ամբողջ հասարակութեան մէջ. հարկաւոր էր Մարիենբուրգի ճառի սպաւորութիւնը թուլացնել... Սակայն, չը նայած արտաքին մեղմ ձևերին, կայսրը շատ աներկդիմի կերպով պարզում ու պաշտպանում է Պրուսիայի հակա-լեհական քաղաքականութիւնը:

Այժմ տեսնենք, թէ ինչպէս է վերաբերում Գերմանիայի հասարակութիւնը դէպի լեհական հարցը: Այտեղ պէտք է դանադանել խնդրի երկու կողմը:

Լեհացիների ձգտումները դէպի քաղաքական անկախութիւնը արձագանք չեն գտնում ո՛չ մի գերմանացու սրտում, սկսած արմատականներից մինչև ծայրայեղ պահպանողականները: Բայց ինչ վերաբերում է Պրուսիայի հակա-լեհական քաղաքականութեան ձևին, նրա ամբողջ սիստեմին, այն է՝ բունի գերմանացման, այստեղ հասարակութիւնը բաժանւում է երկու մասի:

Պահպանողականները ու նացիօնալ-լիբերալները անսպասան համամիտ են կառավարութեան հետ, նրանք նոյն խի յորդորում են ուրիշ աւելի խիստ միջոցներ ձեռնարկել սպառնող «լեհական վտանգի» դէմ: Դրանք, որպէս հարուստ կալուածատէրեր, խոշոր կապիտալիստներ ու բարձր պաշտօնեաներ, անտեսապէս շահադրգուած են հակա-լեհական քաղաքականութեան մէջ, թէև ամեն կերպ ջանում են իրանց այդ նւթական շահախնդրութիւնը քողարկել ազգասիրական նպատակներով...

Արմատական ու ազատամիտ կուսակցութիւնները, լինե-

լով սկզբունքով արդէն հակառակ ամեն տեսակ բռնի միջոցների ու բացառիկ օրէնքների, բողոքում են լեհերի բռնի գերմանացման դէմ:

Իսկ ինչպէս է վերաբերում խնդրին հզօր Centrum-ը: Նա, ինչպէս միշտ ու ամեն տեղ, այնպէս և լեհական հարցում, երկդիսի դեր է խաղում: Որպէս կաթոլիկ կուսակցութիւն՝ նա ստիպուած է պաշտպանել կաթոլիկ-լեհերին, որպէս կառավարչական կուսակցութիւն՝ նա չէ վստահանում բացարձակ դիմադրել կառավարչական բռնի սխտեմին... Չը նայած որ Centrum-ը այսպէս միշտ գտնւում է Սցիլլայի ու Սարիբդայի մէջ, նա յամենայն դէպս կարողանում է պահպանել իր դիրքը:

Այսպէս ընդհանուր առմամբ, կուսակցութիւնների մեծամասնութիւնը կողմնակից է կառավարութեան բռնած ընթացքին լեհական հարցում: Չարմանալի չէ հետեւաբար, որ լեհ-դերմանական յարաբերութիւնները ոչ միայն չեն մեղմանում, այլ նոյնիսկ հետզհետէ աւելի սուր կերպարանք են ստանում: Եթէ լեհերը իրանց կողմից ձեռք են առնում ամեն միջոց կասեցնելու գերմանացումը, Պրուսիան ևս յետ չէ մնում, նա ամենայն մոլեռանդութեամբ նորանոր րեպրեսիւ միջոցների է ձեռնամուխ լինում...

Այսպէս անցեալ 1902 թ. սկզբներում նա պահանջեց Լանդտագից 250 միլլիոն մարկի փոխառութիւն գերմանացման գործը շարունակելու համար լեհական դաւառներում:

Յայտնի է, որ դեռ 1886 թ. իշխան Բիսմարկի օրով Պրուսիան հիմնեց Պոզնանում մի մարմին «գաղթականական յանձնաժողով» (Ansiedelungs kommission) անունով. նրա նպատակն էր հողեր, կալուածներ գնել լեհացիներից և մասջելի գներով ծախել այդ կալուածները գերմանացիներին: Այս իսկ պատճառով յանձնաժողովը պէտք է աշխատէր գերմանացի գիւղացիներ գրաւել դէպի Լեհաստան, ամեն կերպ զիւրացնելով նրանց գաղթականութիւնը: Կառավարութիւնը սկզբից յանձնաժողովի տրամադրութեան տակ գրեց 100 միլլիոն մարկի գրամագլուխ: 1898 թ. յանձնաժողովը նորից 100 միլլիոն մարկ պահանջեց, իսկ անցեալ տարուայ սկզբին, ինչպէս վերե յիշեցինք, հարկ եղաւ նոր խոշոր փոխառութիւն անելու, այն է՝ 250 միլլիոն մարկ:

Պրուսիայի Լանդտագը չովինիստական ոգեորութեամբ ընդունեց կառավարութեան առաջարկը, և այդպիսով յանձնաժողովը ստացաւ իր պահանջած խոշոր գումարը:

Յանձնաժողովի արդարև եռանդուն գործունէութեան հետևանքը ամենից առաջ այն եղաւ, որ Լեհաստանում լեհական

հողերի գները յանկարծ սաստիկ բարձրացան: Պարզ է թէ ինչու: Ընդհանուր տնտեսական օրէնք է, որ երբ մի սրէէ բանի պահանջը աւելանում է, մինչդեռ առաջարկութիւնը մնում է անփոփոխ, այդ բանի գները, բնականաբար, բարձրանում են: Այս իսկ պատճառով տեղի են ունեցել մի շարք այսպիսի դէպքեր. ծայրայեղ անկման հասած լեհ կայուածատէրը կարողացել է կրկնակի գնով ծախել յանձնաժողովին իր հողերը և ստացած փողով նախ աղատուել հին կալուածի վրայ կուտակուած պարտքերից և ապա մի նոր աւելի լաւ կայուած գնել գերմանացիներին... Այսպէս, կառավարութեան այդ զարմանալի ձեռնակութեան ամբողջ հետեանքը այն է եղել, որ լեհական հողերի քանակը փոխանակ պակասելու, աւելացել է, և լեհ տարրը տնտեսապէս փոխանակ նուազելու, աւելի զօրեղացել է:

Ահա ինչպէս է նկարագրուած այդ գրութիւնը մի նախկին պաշտօնեայ, որ ծառայել է 70-ական թւականներին Պոզնանում և լաւ ծանօթ է տեղական պայմանների հետ:

«Գաղթականական յանձնաձողովը—ասում է նա—գործել է բոլորովին անդիտակցաբար յօդուտ լեհերի: Լեհ աշնուականների մեծամասնութիւնը՝ զէսլի զեղլու ու չուայլ կեանքը ունեցած իր հակումների նորհիւ, մօտ էր արդէն սնանկութեան ու պատրաստ ածուրդի հանել իր կայուածները: Բայց ահա հոսեցին պրուսսական միլիտները, որպէսզի լեհերի հողերի վրայ գերմանացիներ բնակեցնեն, և պարտքի տակ ընկած մագնատները շտապեցին օգտուել բարեյաջող հանգամանքներից. նրանք լաւ գներով ծախեցին իրանց հողերը և ապա կամ նոր կալուածներ գնեցին կամ ստացած փողով արդիւնաբերական ձեռնարկութիւններ սկսեցին...»

Աւելի հետաքրքիր է մի ուրիշ նորագոյն և թերևս աւելի հեղինակաւոր վիպութիւն, որ պատկանում է նորերս իր պաշտօնը թողած Պոզնանի քաղաքապետիս Վիտինգին (Witting):

«Անտարակոյս է ու յայտնի փաստ, ասում է նա, որ գերմանականութիւնը (Պոզնանում) յետադիմում է. նա, ով պնդում է հակառակը, ինքնախաբէութեան մէջ է ընկնում. ոչ, գերմանականութիւնը յետ է գնում, բացարձակ յետ...» *)

Արդ, եթէ 16 սարուայ պատմական անդրդուելի փաստերը խօսում են բացարձակ ընդդէմ յանձնաժողովի գործունէութեան նպատակայարմարութեան, ապա ինչն է—թերևս հարցնեն զարմացած ընթերցողները—ստիպում Պրուսսիայի կառավարութեան ամենայն ստոնաբարտութեամբ դէն չպրտել այդչափ խոշոր գու-

*) Տես Vorwärts, № 292. 1902.

մարներ: Այս հանելուկը ունի մի պարզ լուծումն: Նախ ի նը-
կատի պիտի առնել, որ այդ փողերը բացառապէս լին ժողովրդի
դրպանից են դուրս գալիս, որպէս պետական տուրքեր. ապա,
որ մի շարք մարդիկ, զլիսաւարապէս մեծ ու փոքր պաշտօնեա-
ներ, ուղղակի նիւթապէս շահագրգռուած են վերոյիշեալ ձեռ-
նարկութիւնների մէջ, աշխատելով պղտոր ջրում ձուկ որսալ...
վերջապէս, որ յանձնաժողովը, թէև շատ դանդաղ ու միկրոս-
կոպիկ չափերով, բայց և այնպէս կարողանում է կատարել իր
երկրորդ փունկիան՝ գերմանացիների գաղթականութեան գոր-
ծը: Համաձայն կանցիէր կոմս Բիւլօի վիպութեան՝ *) մինչև
1901 թ. վերջը յանձնաժողովը ձեռք է բերել 164,000 հեկտար**) հող,
որոնցից 100,000 հեկտար ծախուած են Լեհաստան գաղ-
թած 4700 գերմանական գիւղացի ընտանիքներին, իսկ մնա-
ցած 64,000-ը դեռ սպասում է նոր գաղթականների արևմուտ-
քից... ***)

Ինքը պետական կանցիէր կոմս Բիւլօն, որին գերմանա-
կան մամուլը շատ իրաւացի՞ անուանում է der Mann kleiner
Klugheiten (փոքրիկ խելքի տէր մարդ),—ահա թէ ինչպէս մո-
տիւներով էր պնտճառարանում 250 միլլիոն մարկի փոխառու-
թեան անհրաժեշտութիւնը Պրուսիայի Լանդապուստ անցեալ
մայիս ամսին.

«Հարցը, ինձ թւում է, այսպէս է դրուած.

Իրաւունք ունենք արդե՞ք մենք այնպիսի օրինական մի-
ջոցներ ձեռք առնել որոնք անհրաժեշտ են Պրուսիայի միա-
պետութեան ապահովութեան ու ամբողջութեան համար: Իմ
կարծիքով, մենք ոչ միայն իրաւունք ունենք, այլև պարտաւոր
ենք այդ անել (Շատ իրաւացի՞ է—աջ կողմից): Մեզ համար
ինքնապաշտպանութեան մի պահանջ է՝ դիմել այնպիսի միջոցների,
որպէսզի կարողանանք խելդել լեհացիների հակապետական ա-
գիտացիան և ոչնչացնել նրանց սպառնալի զառանցանքները...
Մենք պէտք է ձգտենք ամեն տեսակ միջոցներով ապահովել ու
բարձրացնել գերմանականութեան զարգացումը թէ նիւթապէս և
թէ կուլտուրապէս (կեցցէ՛—աջ կողմից)»: ***)

*) Տես „Münchener N. Nachr.“ № 244.

**) Հեկտարը հաւասար է $\frac{11}{12}$ գեսետինի:

***) Պէտք է նկատել, որ գերմանացիք շատ սիրով չեն տեղափոխուում
Լեհաստան. հարկ է լինում գանազան միջոցներ ձեռք առնել նրանց զբաւելու
համար: Սակայն գլխաւոր դժբախտութիւնը նրանում է, որ եթէ մի կողմից նոր
գաղթականներ են գալիս, միւս կողմից հները կամաց-կամաց հեռանում են, ան-
կարող լինելով ընտելանալ տեղական պայմաններին:

****) Տես „Münch. N. Nachr.“ № 244.

«Համաշխարհային փրկիստիայ» *) Բիւլօի փերուն շովինիզմից թելադրուած այս խօսքերը պատշաճաւոր պատասխան ստացան ազատամիտ կուսակցութեան (Freisinnige Volkspartei) պարագլուխ Եւզենից Ռիխտերից:

Յայտնելով նախորդը, որ ինքը չէ համակրում Լեհերի Պըրուստիայից բաժանուելու ու ֆեդերատիւ յարաբերութիւններ ստեղծելու ձգտումներին, ցոյց տալով, որ ամբողջ զազթակա-նական գործը չի համնում իր նպատակին ու հանդիսանում է որպէս մի բացառիկ միասակար օրէնք, նա շարունակեց՝ դառնալով կոմս Բիւլօին:

«Ձեր պատճառաբանութիւնը ոչ այլինչ է, եթէ ոչ մի ֆէլիէտօն. նա այնպիսի տպաւորութիւն է թողնում, կարծես թելադրուած է մի ձիււորից, որ ձեւընթաց վազում է յարձակում գործելու, բայց ինքը եւ չէ իմանում իրօք ի՞նչ պիտի կործանի... և ամբողջ արշաւանքը վերջանում է նրանով, որ սղորմելի ձիււորը ճահճի մէջ է խրուում (կեցցէ՛-ձախ կողմից): Այդ արդէն գերմանականութիւն չէ, այլ դեր-գերմանականութիւն» (Das ist kein Deutschthum mehr, das ist Ueberdeutschthum): **)

Ueberdeutschthum! Սրանից աւելի համապատասխան խօսք չէր գտնի բնորոշելու ոչ միայն Պրուստիայի, այլ և ամբողջ Գերմանիայի ներքին քաղաքականութիւնը: «Deutschland, Deutschland über alles, über alles in der Welt!» ***)—անհանձն գերմանական շովինիզմի զազափարի փայլուն ձևակերպումը, որ տեղ է գտել ազգային հիմնի մէջ:

Մի երկու խօսք էլ ասե՛նք գերմանացի լեհատեսչների կազմակերպուած գործնէութեան մասին. առանց դրան անկարելի է ըմբռնել թէ լեհ-գերմանական յարաբերութիւնների ներքին զսպանակը (պրուժինը) ընդհանրապէս և թէ մի քանի դէպքեր մասնաւորապէս:

Մենք ի նկատի ունինք «հակատիզմը» ու «հակատիստներին»:

1894 թ. իշխան Բիսմարկի անմիջական ազդեցութեան տակ գերմանացի շովինիստները որոշեցին իրանց ոյժերը համախմբել ու կազմակերպուած միահամուռ կռիւ մղել «լեհական փտանդի» դէմ: Այդ նպատակով նրանք հիմնեցին «Ostmarkenverein» («Արևելեան սահմանի ընկերութիւն») անունով մի ըն-

*) Գերմանական մամուլը այդպէս է անուանում կոմս Բիւլօ-ին, հեղինակով նրա սովորութիւնը՝ խօսելիս յաճախ իշել աշխարհառջակ փրկիստիաններին:

**) Տես „Münch. N. Nachr.“ № 244.

***) Գերմանիան, Գերմանիան ամեն բանից բարձր է, ամեն բանից բարձր է աշխարհիս երեսին!

կերութիւն, որ այսօր ունի իր ձեռքի տակ հարուստ նիւթական միջոցներ և սեպական օրդան՝ «Die Ostmark» անունով: Այդ ընկերութեան հիմնադիրներն էին Հանսեման, Կեննեման ու Տիգեման, որոնց անունների սկզբնատառերով այդ ընկերութեան անդամները «հակատիստներ» կոչուեցին:

«Ostmarkenverein»-ը սկսեց իր գործնէութիւնը 1894 թ. վերջերում և իր տենդային աշխատանքի շնորհիւ շատ շուտով մեծ հեղինակութիւն ձեռք բերեց թէ հասարակական և թէ կառավարչական շրջաններում: Հակատիստները պնդում են, որ Պրուսիայի կառավարութեան ձեռք առած բոլոր միջոցները՝ զօրայնել գերմանական տարրը Լեհաստանում ու գիմադրել լեհերի ազգայնական ձգտումներին, բաւական չեն: Լեհացիք, ասում են նրանք, ճնշում ու հարստահարում են Լեհաստանի գերմանացիներին, սպառնում են գերմանականութեան հետքերը անգամ ոչնչացնել, ձգտում եմ խախտել հիմնովին պետական միութիւնը: Հետևաբար, սղանող այդ վտանգի դէմ անհրաժեշտ է ծայրայեղ բեպրեսիւ միջոցներ ձեռք առնել: Այսպէս, չը պէտք է թող տալ լեհերին հրապարակական ժողովներում, հասարակական հիմնարկութիւնների մէջ մայրենի լեզուով խօսել. պէտք է պահանջել, որ լեհական լրագրերը տպագրուեն երկու լեզուով՝ գերմաներէն ու լեհերէն. անհրաժեշտ է լեհացիներին նոր հողեր գնելու և սեփականութիւն ժառանգելու իրաւունքից զրկել, հարկաւոր է արգելել նրանց կառավարչական պաշտօններ վարել կայն կայն:

Այս ծրագիրը գլուխ բերելու համար հակատիստները չեն խնայում ոչ մի միջոց: Նրանք ճանապարհորդելով ամբողջ Գերմանիայում հրապարակական դասախօսութիւններ են կարդում «լեհական վտանգի» մասին, ժողովում են զրամական միջոցներ, ամեն կերպ նպաստում են գերմանացիների զաղթականութեանը դէպի Լեհաստան, բոյկոտ են կազմակերպում լեհերի առևտրի ու արդիւնաբերութեան դէմ կայն կայն: Այսպէս զրգրուելով ու պատրաստելով հասարակական կարծիքը, հակատիստները քաջում են իրանց ետևից նաև պրուսական կառավարութիւնը: «Հակատիգմը—ասում է «Frankfurter Zeitung»-ը—այն օրից երբ սկսեց ուղղութիւն տալ պաշտօնական լեհ-քաղաքանութեանը, դարձաւ մի հասարակական զօրաւոր ոյժ»*):

Սակայն այդ «հասարակական զօրաւոր ոյժը» ընդհանուր կուլտուրական տեսակէտից միմիայն քաղաքական ոյժ է: Հակատիգմի անբարոյականացուցիչ ազդեցութիւնը գերմանական

*) Տես «Wochenbl. d. Frank. Zeit.» № 32.

կեանքի վրայ՝ անտարակոյս է: Ամենից առաջ այդ նկատուում է Պրուսսիայի պաշտօնեաների, բիւրոկրատիայի վրայ:

Իւրաքանչիւր դերմանացի պաշտօնեայ՝ բժիշկ թէ փաստաբան, ուսուցիչ թէ դատաւոր, սպայ թէ հասարակ զինուոր, Լեհական դաւաճանները ոտ կոխելիս՝ «աղգային վսեմ դաղափարի» ներկայացուցիչ է իրան համարում. նա նայում է լեհ բնակիչների վրայ վերեւից ներքեւ, և շատ լաւ զգալով իր արտօնեալ դրութիւնը, չէ քաշուում մի կողմից կառավարութիւնից ամեն տեսակ գրամական աջակցութիւն պահանջել, միւս կողմից հաշածել ու կեղեքել, որչափ հնարաւոր է, լեհ աղգաբնակութիւնը: Այն, ինչ որ նրա համար պետութեան միւս մասերում անհնարին էր, այստեղ դառնում է հնարաւոր և նոյնիսկ խրախուսանքի արժանի:

Ի հարկէ՝ կան և արժանաւոր պաշտօնեաներ, որոնք «յանդգնում են» հակառիստների ուղղութեան դէմ բողոքել: Այդպիսիներից էր Պոզնանի հարկային տեսուչ Լոհնինգը, որ համարձակութիւն ունեցաւ անկեղծօրէն յայտնելու կառավարութեան, որ «նա համարում է հակառիգմը ու նրա ներկայ ազդեցութիւնը կորստաբեր Պոզնանի նահանգի եւ վնասակար գերմանականութեան համար»: Հակառիստները լուր են առնում այս մասին և դայրացած ու գրգռւած, անմիջապէս միջոցներ են ձեռք առնում հեռացնելու Լոհնինգին իր պաշտօնից: Նրանք ուղղում են մի շարք անստորագիր նամակներ Պրուսսիայի ֆինանսների մինիստրութեան, պահանջելով Լոհնինգի հրաժարեցումը: Մինիստրութիւնը թէև դէմ չէ այդ առաջարկին, սակայն դժուարանում է, ինչպէս հեռացնել մի պաշտօնեայի առանց որևէ «յարգելի» պատճառի, առանց որևէ «պատուաւոր» առիթի: Նա յապաղում է:

Բայց անհայդ դէպքից մի քանի ամիս չ'անցած՝ այդ առիթը ներկայանում է: Լոհնինգը փետրուարի 17-ին (1902 թ.) նշանուում է մի նախկին Փելդֆելդբելի աղջկայ հետ... «Հարկային տեսուչ և մի ինչ որ ֆելդֆելդբելի աղջիկ... սա արդէն աւեն չափ ու սահմանից դուրս է»—վրդովուած աղաղակում են Պրուսսիայի նեղ կաստայական ողով տողորուած պաշտօնեաները: «Այսչափ դեղեցիկ առիթ Լոհնինգի մէջքը կոտրելու համար այլևս հաղիւ թէ ներկայանայ»—որոշում են հակառիստները ու կրկնապատկում իրանց եռանդը: Տեղում են անընդհատ անստորագիր նամակներ ուղղած կառավարութեան ու նոյնիսկ իրան Լոհնինգին:

Սակայն Լոհնինգը այն մարդկանցից չէ, որոնք կարծում են, թէ մարդ միայն «հացիւ կեցցէ»: Նա անտես է առնում Իւպրիլ, 1903.

րան ուղղած սպառնալիքները և 4 օրից յետոյ հանդիսաւոր կերպով կատարում է իր պսակադրութիւնը: Բայց արդէն մարտի 4-ին Պրուսիայի ֆինանսների նախարարութիւնից պաշտօնապէս յայտարարում է Լոհնինգին, որ «մինիստրը խիստ դժգոհ է, ստացել է մի շարք անստորադիր նամակներ և առաջարկում է հրաժարական տալ»: Լոհնինգը կտրուկ պատասխանում է, որ նախարարը կարող է նրան պաշտօնից զրկել, սակայն ինքը իր կամքով հրաժարական չի ներկայացնի: Մի քանի ժամանակից յետոյ ֆինանսների մինիստրը պարզ ու բացորոշ կերպով յայտնում Լոհնինգին. «Ո՛ր նկատի առնելով, որ նա իր ամուսնութեամբ եւ ապա իր անհամակրական վերաբերմունքով դէպի կառավարութեան լին. քաղաքականութիւնը պարտազանց է գտնուել իր պաշտօնում եւ այլեւս չէ վայելում կառավարութեան վստահութիւնը, նա՛ մինիստրը, պահանջում է Լոհնինգից անմիջապէս թողնել իր պաշտօնը... Կառավարութեան այս յայտարարութիւնից յետոյ Լոհնինգը հեռանում է:

Այսպէս, Լոհնինգը զոհ է դնում հակառիստների ստորինորիզներին ու պրուսական բիւրօկրատիայի հակումներին: Բայց Լոհնինգը միակ զոհը չէ. հակառիզմի զոհերի թիւը Լեհաստանում հաշւում է տասնեակներով, որոնք այսօր էն մնում Գերմանիայի հասարակութեանը: Լոհնինգը միայն իր բարձր դիրքի չնորհիւ կարողացաւ պատռել հակառիստների դյաձ խիտ ցանցը և բանալ հասարակութեան առաջ Լեհաստանում տիրող կարգերի անմխիթար պատկերը...

Հասարակութիւնը սաստիկ զրգռուած՝ յարձակում է հակառիստների ու կառավարութեան կողմից նրանց ցոյց տուած հովանաւորութեան դէմ. առողջամիտ մամուլը բարձրաձայն պահանջում է վերջ դնել նրանց ստոր ու անբարոյականացուցիչ գործնէութեանը. նա անզրդուելի փաստերով ապացուցանում է, որ ներկայ ըէժիմը՝ նոյն իսկ գերմանական շահերի տեսակէտից, կորստաբեր ու մլեասակար է. մի մոռանա՛ք, զգուշացնում է մամուլը հակառիստներին ու Պրուսիայի կառավարութեանը, որ «քամի ցանողը փոթորիկ կը հնձի»:

Բաւականանք լեհ-պրուսական յարաբերութիւնների այս համառօտ նկարագրով: Մեր նպատակն էր միայն մի երկու փաստերով բնորոշել Գերմանիայի, ներքին քաղաքականութեան կողմերից մէկը, որ շատ ցայտուն կերպով երևում է լեհ-գերմանական յարաբերութիւնների մէջ:

QUIDAM

ԲԱԳՈՒԻ ՀԱՅ. ՄԱՐԿԵՍԻՐԵԿԱՆ ԸՆԿ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1902 Թ.

Քանի զարգանում է կեանքը, այնքան աւելանում են մարդկային պահանջները: Բայց հեշտ չէ այդ պահանջներին բաւարարութիւն տալը: Գոյութեան կռիւը, չըջապատող տընտեսական-սոցիալական պայմանները իրանց ուժգին հարուածներով դառնացնում են շատերի կեանքը, դժուարացնում են շատերի առօրեայ ավրուստը-գոյութիւնը, ուստի և առաջ է դալիս բարեգործութեան կարևորութիւնը իբրև մի պալիատիւ միջոց: Եւ այդ միջոցը շատ մեծ դեր ունի կատարելու այն քաղաքներում, այն կենտրոններում, որտեղ ետում է տնտեսական կեանքը, որտեղ սուր հակադրութիւնները՝ ծայրայեղ հարըստութիւնն ու չքաւորութիւնը կանգնած են իրար դէմ և օրեցօր աւելի ու աւելի սուր կերպարանք են ընդունում:

Ահա մի այդպիսի կենտրոն է ներկայացնում և նաւթի աշխարհը—Բագուն իր բազմաթիւ նաւթահորերով, գործարաններով ու բազմամարդ ազգաբնակչութեամբ: Հասկանալի է ուրեմն, թէ գործունէութեան սրբան լայն ասպարէզ է բացուած «մարդասիրական ընկերութեան» առաջ: Իսկ ի՞նչ է արել նա այդ ասպարիզում: Տեսնենք *):

Ընկերութեան գործունէութիւնը կենտրոնացած է եղել պլիտաւորապէս երեք հիմնարկութիւնների՝ ճաշարանի, աշխատանքի ստան և գրադարան—ընթերցարանի շուրջը: Բացի դրանից նա բաժանել է և մշտական ու միանուագ նպաստներ:

Մշտական նպաստների համար դիմում արուած է ընդա-

*) Տեղեկութիւնները քաղում ենք նորերս լոյս տեսած «1902 թ. տեղեկագրից»:

մենը 1202 անգամ, որոնցից 1198-ին բաւարարութիւն է ար-
րուած, բաժանելով 6091 ր. 63 կոպ.:

Միանուագ նպաստ տրուած է.

Մնունդի համար . . .	147	անգամ.	889	ր.	82	կոպ.
Ճանապարհածախսի.	257	»	1651	»	99	»
Բժշկութեան	65	»	243	»	20	»
Թաղման	39	«	249	»	45	»
Բնակարանի	24	»	121	»	10	»
Հագուստեղէնի . . .	22	»	154	»	80	»
Օժիտի	10	»	176	»	—	»
Գործիքների	14	»	139	»	—	»

Ընդամենը 578 անգամ 4,534 ր. 16 կոպ.

Այդպէս ուրեմն մշտական և միանուագ նպաստների հա-
մար ամբողջ տարեշրջանի ընթացքում ծախսուած է ընդամենը
6091 ր. 63 կ. + 4534 ր. 16 կ. = 10,625 ր. 79 կոպ.:

Ճաշարանը մատակարարել է 51,341 ճաշ, որ ընկերու-
թեան վրայ նստել է 5,213 ր. 14 կոպ., այսինքն միջին թւով
իւրաքանչիւր ճաշը 8,92 կոպ., որ զոյացել է հետեւեալ ձևով.

Հաց	3,41	կոպ.
Միս	1,52	»
Կերակրի մթերք . . .	1,90	»
Ռոճիկ և տան վարձ .	2,09	»

8,92 կոպ.

Աշխատանքի տունը զբաղմունք է տուել 144 կանանց,
145 տղամարդկանց և 525 երեխաների—ուրեմն ընդամենը 814
հոգու: Կանայք աշխատել են գլխաւորապէս կարի և ձկնորսա-
կան ցանցեր պատրաստելու բաժանմունքում, տղամարդիկ՝ խձուժ
(պակլիա) մաքրելու և կաղմարարական բաժանմունքում, իսկ ե-
րեխաները զբաղեցրել են բոլոր բաժանմունքներում բացի խձուժի բա-
ժանմունքից: Աշխատողների ընդհանուր թիւը եղել է օրական
միջին թւով 46 հոգի, որոնց օրավարձը տատանուել է 4,39
կոպ. մինչև 29,03 կոպ. կամ ուրիշ խօսքով սասած՝ իւրաքանչիւր
աշխատող ստացել է միջին թւով 16,71 կոպ. և ձրի ճաշ ու առա-
ւօտները թէյ-հաց, որ ընկերութեան վրայ նստել է օրական
11 կոպ.:. Ուրեմն իւրաքանչիւր աշխատաւոր ստացել է ընդա-
մենը 16,71 կոպ. + 11 կ. = 27,71 կոպ. օրավարձ: Աշխատանքի
օրը տևել է ամառը—8 ժամ, խի ձմեռը—6 ժամ:

Աշխատանքի տան վրայ ընկերութիւնը ծախսել է 10,573
ր. 18 կոպ.:

Ընկերութեան պահպանած հիմնարկութիւնների շարքում

ամենանշանաւորը կարող է համարուել գրադարան-ընթերցարանը թէ իր կազմով և թէ կատարած դերով:

Դրադարանն ունեցել է (առ 1 յունուարի 1903 թ.) ընդամենը 9,155 անունով գիրք՝ 14,354 հատոր—13,689 ր. 67 կ. արժողութեամբ: Դրանց թւում եղել են.

Ռուսերէն գրքեր . . .	7,735	հատոր	12,757	ր.	21	կ.	արժողութ.
Հայերէն » . . .	2,589	»	2,982	»	10	»	»
Օտար լեզուներով . . .	53	»	133	»	04	»	»
Ռուս. ամսագիրք . . .	3,421	»	5,689	»	20	»	»
Հայեր. ամսագ. . . .	411	»	1,916	»	62	»	»
Օտար լեզուներով . . .	145	»	211	»	50	»	»

Ամբողջ 1902 թ. ընթացքում գրադարանը ձեռք է բերել ընդամենը 399 գիրք և ամսագիր՝ 1,152 ր. 59 կոպ. արժողութեամբ: Այդտեղ էլ ամենամեծ տեղը բռնել են ռուսերէն գրքերը և ապա հայերէն ու օտար լեզուներով:

Գրադարանի բաժանորդների թիւը եղել է 878, որոնցից 655 տղամարդ և 223 կին, իսկ ըստ ազգութեան՝ ռուս—337, հայ—337, հրէայ—110, գերմանացի—46, թուրք—15, լեհացի—14, վրացի—12, չեխ—3, ֆրանսիացի—2, օս—1 և սերբ—1: Պարագմունքի տեսակէտից բաժանորդների ամենամեծ տոկոսը կազմել են մասնաւոր ծառայութեան մէջ գտնուող անձինք, ապա ուսանողները, արհեստաւորները, ուսուցիչները և այլն:

Ամենից շատ վերցրել են զեղարուեստական գրականութեան վերաբերեալ գրքեր (81%), ապա լուրջ և գիտական բովանդակութեամբ գրքեր (10%) և պարբերական հրատարակութիւններ (9%): Ամենից քիչ կարդացուել են աստուածաբանական գրքեր, իսկ ամենից շատ՝ վէպեր և մանր պատմուածքներ: Հայ հեղինակներից ամենից շատ կարդացուել են՝ Րաֆֆի, Պրնոչկան, Ծերենց, Աբովեան, Ծիրվանդադէ, Լէօ և այլն:

Ընթերցարանում ստացուել են ընդամենը 67 պարբերական հրատարակութիւններ, այն է՝ ռուսերէն—44, հայերէն—16 և օտար լեզուներով—7: Յաճախողների թիւը եղել է 32,686, որոնց շարքում ամենապլիւսուոր տեղը բռնել են հայերը, ապա ռուսները, հրէաները, վրացիները, գերմանացիները, յոյները, թուրքերը և այլն:

Գրադարան-ընթերցարանի պահպանութեան համար ընկերութիւնը ծախսել է 3033 ր. 29 կոպ.:

Ամիսփոխով բոլորը, ստանում ենք հետեւեալ պատկերը. ընկերութիւնը ծախսել է՝

Նպաստների համար . . .	10,625	ր.	79	կոպ.
Աշխատանքի տան » . . .	10,573	ր.	18	»

Ճաշարանի համար . . . 5,213 ր. 14 կ.

Գրադարան-ընթերցարանի » 3,033 » 29 »

Ընդամենը 29,445 ր. 20 կոպ.

Ընդհանրապէս նա մուտք է ունեցել (անդամաւճարներ, գրամագլխի տոկոս, նուէրներ, պահեստի գրամագլխից և այլն) 110,644 ր. 78 կոպ., իսկ ծախս՝ 110,253 ր. 32 կոպ., ուրեմն մնացորդ առ 1-ն յունուարի 1903 թ.—391 ր. 46 կոպ. . .

Իսկապէս պատկանելի գործունէութիւն է դա առանձին վերցրած. բայց եթէ համեմատական չափ դնենք, այսինքն եթէ բարեգործութեան այդ քանակը համեմատենք տեղական պայմանների ու պահանջի հետ, այն ժամանակ կը տեսնենք, որ դա միայն մի կաթիլ է կարիքի ընդարձակ ուղիւնոսում, մի ողորմելի փշրանք է հարստութեան ճոխ սեղանից ընկած:

Ե.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մմբատ Չահազիզեան. «Մի ԳԱՆԻ ԽՕՄՔ ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ» . 63 էր., դ. 60 կ.
Մոսկուա, 1903 թ.:

«Աշուղի երգը որ պակսի, նէյնիմներ կ'ասի»:

Պ. Մմբատ Շահազիզեան վաղուց է սկսել նէյնիմներ ասել, «Մի քանի խօսք»-ն՝ էլ նէյնիմ է, թէև ոչ ըստ էութեան, այլ միայն ըստ ձևի:

Ըստ էութեան՝ պ. Մմբատ Շահազիզեանի վերջին գրքոյկը վերին աստիճանի հետաքրքրական է և այդ պատճառով կրկնակի ցաւալի է նրա նէյնիմական ձևը:

«Ի՞նչ անենք, որ փոքր ազգերը չը հալուեն ժամանակիս լայնափոր ու լայնաբերան քուրայի մէջ»:

Ահա այն հարցը, որ հեղինակը դնում է իր ընթերցողներին առաջ և որ ուղում է պարզել Եզոպեան ոճով:

Մենք ոչինչ չ'ունենք այդ ոճի դէմ, որ երբեմն անհրաժեշտութիւն է, բայց չենք կարող չը զարմանալ, որ մեր գրականութեան մէջ պատուաւոր տեղ ունեցող մի հեղինակ տրւում է մի գրքոյկի, որ զուրկ է որևէ գրական արժանաւորութիւնից:

Մեր լուրջ հեղինակներին մէջ չը կայ մի ուրիշը, որ այնքան անհող վերաբերուի իր գրուածքին, որքան պ. Մմբատ Շահազիզեան: Բաւական է ասել, որ երկար տարիներ Լազարեան ճեմարանում հայկաբանութեան ուսուցիչ լինելուց յետոյ պ. Շահազիզեանը գրում է մի այնպիսի անկանոն պարբերութիւն, ինչպէս, օրինակ՝ «Վահան Մամիկոնեան» վերջ ի վերջոյ նրանց (պարսից) Վաղարշ թագաւորին ստիպեց խաղաղութիւն հաստատել և իր պահանջած արտօնութիւնները ստանալ» (այնպէս որ՝ դուրս է գալիս, թէ Վաղարշ թագաւորն է արտօնու-

թիւններ ստացել, մինչդեռ, ընդհակառակը, Վահան Մամիկոնեանն է ստացել):

Այդպիսի անհոգ վերաբերմունք մի համբաւաւոր հեղինակի կողմից դէպի իր գրուածքը, կրկնում ենք, վերին աստիճանի ցաւալի է մանաւանդ այն պատճառով, որ գրքոյկի նիւթը էական կարեորութիւն ունեցող հարց է:

«Ի՞նչ անենք, որ փոքր ազգերը չը հալուեն ժամանակիս լայնափոր և լայնարերան քուրայի մէջ»:

Շատ քչերն են մեղանում մտածում այդ հարցի մասին: Շատ քչերը՝ նոյնիսկ նրանցից, որոնք ի պաշտօնէ կոչուած են հանրային շահերը պաշտպանելու և հասարակութիւնը ղեկավարելու:

Մեր իմացական և վարիչ տարրերը մեծ մասամբ՝ կամ բարոյապէս դասացած ու մտաւորապէս կապկացած կօսմօպօլիտներ են, կամ «ծառերի յետից անտառը չը տեսնող» լիբէրալներ, և կամ շօլիսիստ պահպանողականներ՝ խօսքով ազգասէր, գործով ազդակեր:

Այդպիսի հանգամանքներում չի կարելի չ'ողջունել «Մի քանի խօսքի» նման մի գրքոյկ, ինչքան էլ նա անբաւարար լինի գրական տեսակէտից:

S. Յ.

Լ.—Ման. «ՕՏՆՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ». հրատ. Լ. Յ. 32 էր., գ. 15 կ., Թիֆլիս, 1903 թ.:

Այն ժամանակ, երբ Ռուսսօն փառաբանում էր բնական վիճակը և նզովում քաղաքակրթութիւնը, Վօլտէրը բացազանչում էր. «Ռուսսօի դրքերը կարգալիս՝ սիրտս ուղում է չորեքթաթ ման գալ»:

Դժուար էր աւելի փայլուն կերպով հեղնել այն, ինչ որ ծիծաղելի ծայրայեղութիւն էր Ռուսսօի հանճարեղ քարոզի մէջ:

Նոյն ծայրայեղութիւնը, նուազ տաղանդաւոր կերպով, մենք գտնում ենք ուս Նարոդնիկների գրուածքներում, որոնք իրանց արձագանքներն ունեցան նաև մեր գրականութեան մէջ:

Պ. Լ.—Ման.—ի պատկերը, որ, ի դէպ ասել, գեղարուեստական տեսակէտից թոյլ գրուածք է, մի այդպիսի արձագանք է, և ուշացած արձագանք:

Ասում եմ՝ ուշացած, որովհետև Ռուսաստանում նարոզ-

նիկութիւնը վաղուց կորցրել է իր ազդեցութիւնը, տեղի տալով նոր ուղղութիւնների, որոնք, նոյնքան իզէպլասէր լինելով, որքան նարոզնիկութիւնը, աւելի ճիշտ գաղափար ունեն սակայն պատմութեան ընթացքի և յառաջագիմութեան գործօնների մասին:

«Օտարութեան մէջ»-ի հեղինակը փառաբանում, երկինք է հասցնում գիւղացիներին, և խօսք չի գտնում քաղաքը և քաղաքացիներին պախարակելու համար:

Գիւղացիներին միակ պակասութիւնը՝ տգիտութիւնն է. ուրիշ ոչ մի պակասութիւն չ'ունեն նրանք: «Մսկ քաղաքնում: Այնտեղ տիրում է կեղծութիւնը իր բոլոր զղուելի տեսակներով: Այնտեղ մոռացել են ճշմարիտ Աստուծոն: Այնտեղ տիրում է փողապաշտութիւնը: Այնտեղ տիրում է նոր արծարծուած հեթանոսութիւնը, կռապաշտութիւնը: Այնտեղ այլևս Աստուած չը կայ. մարդիկ վաղուց երես են դարձրել նրանից, և պաշտում են մի նոր, ուրիշ աստծոյ—փողին»:

Այդպէս ուրեմն թող նղովուի քաղաքը, որի արդիւնքն է քաղաքակրթութիւնը, ինչպէս այդ երևում է թէ հայերէն, թէ եւրոպական (ցիվիլիզացիա) բառի ստուգաբանութիւնից: Թող նղովուի քաղաքը, որ լոյս է սփռում երջանիկ գիւղերում տիրող «խաւարի թաղաւորութեան» մէջ, և կեցցէ գիւղը, որ այնքան յաճախ ներկայանում է իբր ստրկութեան բուն, ուր հարիւրաւոր վղեր կռանում են մի վայտի առաջ, կեցցէ նահապետական կեանքը իր գայլ քրդերով և ոչխար «ֆլայով», կեցցէ թմբուլը իր խաչադռններով, կեցցեն բոլոր գիւղացիք, ի բաց չ'առած և նրանց, որոնք շահասէր կրօնավորութեան կարապետներ են հանդիսանում մեղնում:

Թող չը կարծուի, թէ ես հիացած եմ քաղաքներից և քաղաքացիներից: Ես միայն կարծում եմ, որ այն, ինչին այժմ ձգտում են մարդկութեան լաւագոյն ոյժերը, աւելի մեծ չափով կայ քաղաքներում, քան գիւղում, և իրականանալու է գլխաւորապէս քաղաքացիների միջոցով, ինչպէս քաղաքացիների միջոցով է կատարուել այն բոլորը, որով այժմեան մարդկութիւնը տարբերում է նախապատմական մարդկային նախիրներից:

Տ. Յ.

Արշակ Հախվերդեան. «ՎՋՏԱՅԱՐ ՍՐՏԻՑ». 64 եր. գ. 20 կ. Թիֆլիս, 1902 թ.:

Պ. Արշակ Հախվերդեան բանաստեղծական ձիրք չ'ունի,

բայց զարմանալի յիշողութիւն ունի: Յիշում է, թէ ինքը ինչ-
պէս էր ծծում մօր կաթը.

«Եւ յիշում եմ այն օրերը,
Երբ քունդ էի խանգարում,
Երբ քո կաթով լի ծծերը,
Բերնէս չէի արձակում»:

(«Մայրիկիս»)

Հեղինակը «Վշտահար սրտից» բղխած է անուանում իր
ոտանաւորները, բայց ընթերցողը այդպիսի տպաւորութիւն չի
ստանում նրանցից:

Կարող է պատահել, որ ընթերցողն է մեղաւոր, այսինքն
այս դէպքում ես, որովհետև ուրիշ ընթերցողների հետ պ. Հախ-
վերդեանի ոտանաւորների մասին չեմ խօսել և ընթերցող ա-
սելով միմիայն ինձ եմ հասկանում:

Թող ուրիշները դատեն: Ահա նմուշներ «Վշտահար սրտի»
գեղումներից:

«Այն խոստումդ կարծում էի
Կը կատարես — դու ազնիւ
Եւ լի յուսով պաշտում էի
Քո պատկերդ ամեն տիւ»:

.

«Այժմ ի դուր տեղը տրտունջ՝
Գանգատում եմ ես անյոյս,
է՛հ լաւ գիտես դու իմ մրմունջ,
Խորտակեցիր մի մեծ յոյս»:

(«Խորտակուած յոյսը»)

«Աղան դուրս եկաւ, բազմեց իր կառքում,
Նրա կինն էլ, իր փափուկ կողքին,
Կառքը սլացաւ շքեղ փողոցով,
Նրանց ծածկելու կեանքի ինջոյքում»:

(«Նմանութիւն»)

«Իմ դրօշն է ճշմարտութիւն,
Լինենք նրան հաստատուն՝
Կառաւարող ու պինդ պահող,
Թէկուզ թափուի իմ արիւն:
Թող մի մարդ էլ շատերի հետ,
Մաշուի, դոհուի պէս ասպետ,
Ճշմարտութեան փշոտ ուղին,
Քաղցր է ինձ ու սիղաւէտ»:

կարծես ազգային «հանճարեղ դիւյազներդու» Գրիգոր Բալասանցի «Ձգացմունքի» գոհարներիցը լինեն, այնպէս չէ:

Տ. Յ.

Ջերմ Ջերմ. ՆՈՐ ՑՆՈՐՔ», (պատմուածք), ազատ թարգմ. ուսեր. Գ. Մ.-
Չահնագարեանց, 30 եր. գ. 5 կ. Զուլի, 1902 թ.:

«Նոր ցնորքը» մի երգիծաբանութիւն է սօցիալիստների դէմ:

Պատմուածքի հերոսը մի երեկոյ ընթրում է «սօցիալիստների հասարակական ակումբում»: Ճոխ ընթրիքի ժամանակ լաւ կոն-ծում են և մեծ-մեծ խօսում «մարդկանց ապագայ հաւասարութեան և զրամագլխի հասարականացման մասին»:

Պատմուածքի հերոսը տուն է վերադառնում այդ խօսակցութիւնների ազդեցութեան տակ և քնում ու երազ է տեսնում, թէ ինչպէս է աշխարհս կերպարանափոխուել սօցիալիստների շնորհիւ:

Բոլոր մարդիկ հաւասար են: Բոլոր մարդիկ ստիպուած են նոյն բանն ուտել, նոյն ժամին ճաշել, նոյն ժամին քնել և այլն և այլն: Մի խօսքով, բոլոր մարդիկ ձանձրալիութեան չափ նման են միմեանց և բոլորն էլ պետական իշխանութեան ըստրուկն են:

Մարդկանց նոյնիսկ թոյլ չի տրւում տարբեր անուններ կրել: Նրանց զանազանում են թւահամարներով: Տղամարդկանց մէջքին զոյգ համարներ են գրուած, կանանց մէջքին՝ կենտ համարներ:

«Ինքնակամ լուացուելը խստիւ արգելւում է: Տէրութիւնը իր ձեռն է առել լուանալու գործը և զրա համար ունի որոշ գործակալներ, որոնք օրական երկու անգամ լուանում են իւրաքանչիւր մէկին»:

Մարդկանց ամեն կողմից հաւասարեցնելու համար տէրութիւնը կտրել է տալիս մեծ ոյժ կամ հասակ ունեցողների մի ձեռքը կամ ոտքը:

Եթէ մէկը չատ խելօք է, ուղեղի մի մասը զլխիցը հանում են:

Մարդկութիւնը անասունների մի նախիր է ներկայանում:

Ես չեմ կարդացել Ջերմ Ջերմի այդ գրուածքը, ուստի և չեմ կարող ասել, թէ «Նոր ցնորքի» մէջ պարունակուած հեղ-

նութիւններից որն է նրանը և որը՝ «ազատ թարգմանիչ» Գ. Մ.-Շահնազարեանցինը: Մի բան միայն պարզ է, որ կամ Ջերոմ Ջերոմը, կամ պ. Մ.-Շահնազարեանը, և կամ երկուսն էլ միասին ոչ մի գաղափար չ'ունեն այժմեան առաջաւոր կուսակցութիւնների իդէալների մասին:

Պ. Մ.-Շահնազարեանցը հայերէնի մասին էլ քիչ գաղափար ունի, որովհետև матушка земля-ն թարգմանում է «մայր յամաք»:

Տ. Յ.

„Весь Кавказ“. — Иллюстрированный справочно—литературный сборникъ. Тифлисъ, 1903. ц. 4 руб. «Ամբողջ Կովկասը».— պատկերազարդ տեղեկատու-գրականական ժողովածու: Թիֆլիս. 1903. գինը 4 բուբլի:

Մեր առաջ դրուած է մի մեծածաւալ հատոր, որի բուն նպատակն է՝ «մանրակրկիտ և բազմակողմանի ուսումնասիրութեան ենթարկել Կովկասը»:

— Կովկասագիտութեան վերաբերեալ անաղին գրականութիւնը, ասում են հրատարակիչներն իրանց առաջաբանում, ցրուած է պարբերական հրատարակութիւնների մէջ և շատ քիչ է մատչելի ընթերցողների մեծամասնութեանը, այն ինչ երկրի կուլտուրական առաջադիմութեան շնորհիւ արագ զարգանում է դէպի այդ գրականութիւնն ունեցած հետաքրքրութիւնը:

Ահա այդ հասունացած պահանջին բաւարարութիւն տալու համար «Ամբողջ Կովկասի» հրատարակիչները նպատակ դրին իւրաքանչիւր տարի լոյս ընծայելու մի այնպիսի հրատարակութիւն, որը սեղմուած ձևով ծանօթացնէր ընթերցողներին Կովկասին վերաբերեալ այն տեղեկութիւնների հետ, որոնք մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում և արժանի են բազմակողմանի ուսումնասիրութեան...»

Նպատակը գեղեցիկ է. ծրագիրն համակրելի. տեսնենք ուրեմն, թէ հրատարակիչներն ինչ չափով ու ինչ ձևով են իրագործել իրանց խոստումը, որի մասին այնքան երկար ժամանակ յայտարարում էին լրագրերում:

Ժողովածուն բաղկացած է երկու գլխաւոր մասերից: Առաջին մասը պարունակում է օրացոյց և իրաւաբանական, փոստային ու վիճակագրական տեղեկութիւններ, իսկ երկրորդ մասում զետեղուած են մի շարք պատմական, գրականական, աղբազրական և տնտեսական յօդուածներ:

Առաջին մասը իր կոչմանը կարող էր ծառայել միայն այն

ժամանակ, եթէ նրա հազորդած տեղեկութիւնները լինէին թարմ, ճիշտ և անմիջական աղբիւրներից քաղուած: Դժբաղդարար այդպէս չէ: Օրինակ փոստային բաժնում ասուած է, թէ փոստով միանգամայն 100 բուբուլուց աւել չէ կարելի փոխադրել, այն ինչ այդ օրէնքը վաղուց արդէն փոխուած է, և այժմ կարելի է փոխադրել մինչև 200 բ.:

Պարբերական մամուլի մասին խօսելիս յիշուած է, թէ Ռուսաստանում լոյս են տեսնում 775 հրատարակութիւն, այն ինչ այդ թիւը դեռ անցեալ 1902 թ. հասնում էր մօտ 1000-ի *): Ճապոնիայում լոյս են տեսնում մօտ 2000 զանազան ձևի լրագիրներ, իսկ բոլոր պարբերական հրատարակութիւնների թիւը սչ թէ 2000 է, ինչպէս ասում է «Ամբողջ Կովկասը», այլ դրանից շատ աւելի **): Եւայն կային:

Բայց դրանք շատ չնչին սխալներ են, կան աւելի խոշորները: Այսպէս օրինակ ասում է (եր. 43), թէ ամբողջ Բագուում միայն 8,494 բանուոր կայ, այն ինչ այդ թիւը եղել է ***)

1897 թ.—10,952

1898 » —13,705

1899 » —16,895

1900 » —21,253

Իսկ վերջին երկու տարիներում ամենաքիչը 15,000 —16,000:

Կարծում ենք այդ մի քանի նմուշները բաւական են տեղեկատու—վիճակագրական բաժնի մասին դռնէ մօտաւոր գաղափար կազմելու համար:

Դառնանք այժմ II մասին, որ ժողովածուի գլխաւոր հիւմքն է կազմում:

Այդտեղ զետեղած յօդուածների ամենամեծ մասը վրացիների անցեալին ու ներկային է վերաբերում, կարծես միւս աղբուրները՝ հայերը, ռուսները, թիւրքերը և այն երկրի խորթ զաւակներն են և ոչ մի դեր չեն խաղում նրա տնտեսական—սոցիալական կեանքում:

Երևում է ժողովածուի խմբագրութիւնն ինքը շատ խակ հասկացողութիւն է ունեցել այդ կեանքի մասին: Նա «սոցիալական—տնտեսական» վերնագրի տակ զետեղել է մի քանի թըրուցիկ յօդուածներ «վրացիների անբաժանելի կալուածների», «Վրաստանում տարածուած վաչխառութեան», «հին Վրաստանի

*) Гинлейнъ: „Газеты и журналы всей Россіи на 1902 г.“

***) „Revue des Revus, 1901.“

****) „Труды съѣзда Нефтепромышленников.“

եկեղեցական հողային յարաբերութիւնների» մասին և այլն. չէ մոռացել զետեղելու նոյն իսկ 1861 թ. արտասանած մի ճառ «վրաց ազնւականութեան նշանակութեան մասին», բայց ոչինչ չէ ասում Կովկասի տնտեսական կեանքի սիրտը կազմող նաւթային արդիւնագործութեան մասին, տնայնագործութեան, հանքագործութեան, զործարանների և արհեստների մասին: Եւ այդպիսի ձևով ուզում են «Կովկասը բազմակողմանի ուսումնասիրութեան ենթարկել»!?

Սմբազրութեան սէրը դէպի վրացիները այն աստիճանի է հասել, որ նա ուզեցել է նոյն իսկ մի խումբ վրացախօս հայերին էլ իբրև «անխառնուրդ վրացիներ» ներկայցնել: Նա Ա. Սախանովի բերանով՝ «վրացի յուսաւորչականներ» վերնազրի տակ ձգտում է հաւատացնել, թէ Քովթայիսի և Թիֆլիսի նահանգներում ապրող վրացախօս հայերը իրանց «սոսմէխի» (հայեր) են անուանում միայն այն պատճառով, որ նրանք հայկական եկեղեցի են այցելում: Հեղինակի կարծիքով դրանք «լուսաւորչական վրացիներ են», և այդ հին երգը նա երգում է միայն կէտերեսի վրայ: Չէ որ այդքանն էլ բաւական է. ինչ հարկաւոր են փաստեր, դիտական վերլուծում, բարեխղճութիւն:

Ընդհանրապէս «Ամբողջ Կովկասը» մեծ է ծաւալով, բայց շատ փոքր ու աննշան իր բովանդակութեամբ, իր նիւթերի որակով: Յողուածների մեծ մասը արտատպումներ են «Кавк. календарь»-ից, «Вся Россия»-ից և զանազան պարբերական հրատարակութիւններից ու հեղինակութիւններից:

Ժողովածուի վերջում գրուած են առանձին 50 թերթ պատկերներ, որոնց թւում է Գր. Արծրունու, Բաֆֆիի, Վեհափառ Հայրիկի և Աղայեանի պատկերները:

Վերջացնելով մեր խօսքը, մնում է ցանկալ, որ խմբադրութիւնը դոնէ հետեւեալ տարիներում աւելի լուրջ վերաբերուի դէպի իր սկսած գործը, հեռու մնայ թթու միակողմանիութիւնից ու ազգայնական նեղ ձգտումներից և ամեն կերպ աշխատի «Ամբողջ Կովկասը» դարձնել մի օգտակար ձեռնարկ մեր երկրի ուսումնասիրութեան համար:

Հակառակ դէպքում նա կը մնայ իբրև մի օգտակար Geschäft, իբրև ճարտիկ շահասիրութեան մի միջոց, բայց ոչ գրական արժէք ունեցող հրատարակութիւն:

Բժ. Ա. Բուդուշեան. «ՔՌԻՆ ԵՒ ԵՐԱԶ», 110 էրես, 1 պատկերով. գինը 25 կոպ. Պետերբուրգ. 1903.

«Վնայ այն ժողովրդին, ասում է գերմանացի հեղինակ Բեկկերը *), որի ընթացիկ կեանքում մեծ դեր են խաղում նախապաշարմունքն ու սնտոխապաշտութիւնը», գրանք մի առանձնայատուկ զօրութիւն ունեն, որ կապում-կաշկանդում է մարդկային միտքն ու քննադատութիւնը, որ շատ ու շատ չարիքների պատճառ են դառնում:

Դժբախտաբար մեզանում էլ դեռ բաւական խոշոր տեղ է բռնում չարիքների այդ աղբիւրը: Տղէտ ժողովուրդը անծանօթ լինելով գիտութեան խօսքին, դեռ հրաշքների շարքն է դասում բնութեան շատ ու շատ երևոյթներ, դեռ հաւատում է երազների ու տեսիլների զանազան սնտոխապաշտ բացատրութիւններին:

Իսկ ճարպիկ մարդիկ շահասիրական նպատակներից դժբախտա՞ծ օգտուում են տգիտութեան այդ ստոր հակումներից և զանազան միջոցներով շոյում-քաջալերում են ժողովրդի սնտոխապաշտութիւնն ու նախապաշարմունքը:

Մտէք մեր քաղաքների ու գիւղերի խուլ անկիւնները և դուք այնտեղ կը հանդիպէք մեծ հեղինակութիւն վայելող «զըրբայներին», «ֆալչիւներին» և «եղունդ աշողներին»:

Թողէք այդ անկիւնները, թերթեցէք մեր օրացոյցները և դուք կը տեսնէք, որ նոյնիսկ տպագրական խօսքի միջոցով—երազահան ու վիճակարան կոչուող յաւելուածներով գրանք սընտոխապաշտութեան թոյն են մատակարարում հայ ժողովրդին:

Մի խօսքով չարիքն այնքան ակներև է, այնքան մլասակար, որ անհրաժեշտ է ամեն կերպ մաքառել նրա դէմ:

Ահա այդ տեսակէտից մի անգնահատելի զէնք է ներկայացընում պ. Բուդուշեանի ներկայ գրքոյկը՝ «Քուն և Երազ»: Այդտեղ հեղինակը թեթև ու հանրամատչելի լեզուով բացատրում է, թէ ինչ է քունը, երազը, սնտոքը, լուսնոտութիւնը և էքստազը, թէ որոնք են դրանց պատճառներն ու հետեանքները, թէ որպիսի տգիտութիւն ու անմտութիւն է այդ երևոյթների մէջ հրաշք որոնելը, նախապաշարմունքով վերաբերուելը:

Դրքոյկին կցուած է մի նկար բաւական ֆանտաստիկ բովանդակութեամբ. ահա պատկած է հայուհին և երազ է տես-

*) J. Becker: „Aberglaube und Mystik im 19 Jahrhundert.“

նում: Նրա առաջ պատկերանում են՝ կատարելագործուած երկր-
րադործութիւն, համաշխատակցող-կոպերատիւ ընկերութիւն-
ներ, գործարանի սեփականատէրեր դարձած բանուորներ, մա-
տաղ սերնդի կանոնաւոր դաստիարակութիւն, ծնողների հա-
մախմբումներ, առողջ ու երջանիկ ամուսիններ կայն կայն:
Գեղեցիկ հեռանկար է դա, բայց ափսոս, որ կրազ է:

Ե. Թ.

Georg Brandes: «Armenien und Europa» 24 s. Genf. 1903. Գէորգ Բրան-
դէս. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ» 24 եր. Ժընեվ. 1903. գինը 40 սանտիմ.

Այս փոքրիկ գրքոյկն իր մէջ պարունակում է այն ճառը,
որ աշխարհահռչակ գրականագէտն արտասանել է Բերլինում
ներկայ թւականի փետրուարի 2-ին, Եւրոպայի Հայ ուսանողա-
կան միութեան հրաւերով:

Մի բուն բողոք է այդ ճառը—բողոք առ Եւրոպա: Բայց
միևնոյն ժամանակ նա մի ջերմ կոչ է՝ ուղղուած ընդհանրապէս
Եւրոպական հասարակութեանը և յատկապէս դերմանացիներին:

«Ես մեծ նշանակութիւն չեմ տալիս մի հասարակ գրողի
խօսքին, ասում է անուանի հեղինակը, որովհետև շատ լաւ գի-
տեմ, որ քաղաքական մեծ հարցերում ոյժ ունեցողներից է
կախուած վճիռը: Բայց մեր օրերում նոյն իսկ այդ ոյժ ունե-
ցողները ստիպուած են ուշադրութեան առնել ուժգին և միա-
համուռ ձևով արտայայտուած հասարակական կարծիքը: Ահա
հէնց այդ պատճառով հարկաւոր է մի այդպիսի կարծիք զար-
թեցնել բոլոր երկրներում և մասնաւանդ Գերմանիայում»
(եր. 3):

Դրանից յետոյ նա առաջ է քաշում հայկական մօտիկ ան-
ցեալի արիւնոտ էջերը, յիշում է այն գաղանթութիւնները, որ
վերջին տարիներում տեղի ունեցան Թիւրքահայաստանում, և
եղբակացնում է.

«Հայերը արժանի են մեր կարեկցութեանն ու օգնու-
թեանը նոյնիսկ այն դէպքում, եթէ բայի իրանց թշուառու-
թիւնից ուրիշ ոչինչ չ'ունենային»:

Բայց հայերը մի կուլտուրական ժողովուրդ են, աշխար-
հիս ամենահին ազգերից մէկը, որը մօտ չորս հազարամեայ մի
պատմութիւն ունի, որ քաղաքակրթութեանը մեծ ծառայու-

թիւն է մատուցել թէ իր բուն հայրենիքում և թէ մանաւանդ այդ հայրենիքից դուրս...

Հայաստանը Փոքր-Ասիայի Շվեյցարիան է»... (եր 14):

Այդ կարծիքն ազատուցանելու համար պ. Բրանդէս թընուցիկ կերպով մի քանի տեղեկութիւններ է հաղորդում հայազգի զինուորական ու քաղաքական գործիչներէ մասին և հայկական հին և նոր գրականութիւնից:

Վերջում նա խիստ դատաւարաբանութեան է ենթարկում Գերմանիայի ներկայ քաղաքականութիւնը, «մի բացարձակ ոճրագործութիւն» է անուանում նրա բարեկամութիւնը արիւնքաւոր թիւրքիայի հետ և եզրափակում է իր խօսքը, ցանկութիւն յայտնելով.

«—Որպէսզի դո՛նէ գերմանական հասարակութիւնն ինքը պահանջէ իր կառավարութիւնից ապահովութիւն ու ազատութիւն հայ ժողովրդի համար»...

Բարի ցանկութիւն, բայց կարող է արգեօք իրականանալ: Կարծում ենք՝ ոչ:

Ե. Թ.

1. Общественная борьба съ туберкулезомъ въ западной Европѣ и Россіи, А. И. Хатисова.
2. Какъ осуществить идею постройки санаторіи для туберкулезныхъ больныхъ на Кавказѣ, д-ра А. Хатисова.

Պ. բժ. Ա. Խատիսեանի այդ վերնագիրներով գրած գեղուցումները վերաբերում են տուբերկուլեօզի (բարակացաւի) դէմ մաքառելուն:

Ինչպէս յայտնի է, բարակացաւը ահագին զոհ է տանում մարդկութիւնից, մեռնողների $\frac{1}{7}$ կազմում են բարակացաւով հիւանդները: Եւ ցաւալին այն է, որ մահը բարակացաւից լինում է գլխաւորապէս 20—35 տարեկան հասակում: Այդ հիւանդութեան ամենամեծ զոհ տուող նամանաւանդ աշխատաւոր, բանուոր դասակարգն է, որի առողջութիւնից կախուած է ամբողջ ընտանիքների ապրուստը. աշխատաւորի մահով ամբողջ ընտանիքը ընկնում է թշուառութեան մէջ: Մինչդեռ այդ սարսափելի արտը բուժելի է իր սկզբնաւորական շրջանում: Բայց դրա համար հարկաւոր են յայտնի նպաստաւոր պայմաններ՝ թէ մտունդի, թէ օդի և թէ Ֆիզիկական և հոգեկան կենցաղի կողմից:

Հիւանդի համար այդպիսի պայմաններ ստեղծելու մէջ է

գտնուում նրա բժշկութեան զբաւականը: Սակայն այդ պայմաններն ստեղծելը մի անհատի, մանաւանդ հիւանդի բանը չէ, այլ պահանջուում է հաւաքական ոյժ:

Արեւմտեան Եւրոպայում, առաջի անգամ Անգլիայում 1841 թւականից, սկսեցին հիմնել սանատորիաներ (առողջարաններ), բարակացաւով հիւանդների համար: Այդ սանատորիաներն ունեն ահադին հասարակական նշանակութիւն, որովհետև նրանք իսկ որ կարողանում են դէմ դնել տուբերկուլեօզի բացիլների տարածման: Այժմ Անգլիայում կան 18 սանատորիաներ բարակացաւի համար, որտեղ կարող են պատուարուել մօտ 6-7 հազար հիւանդ: Եւ դորա շնորհիւ վերջին 50 տարուայ ընթացքում Անգլիայում մահացութիւնը բարակացաւից պակասել է 24% աղամարդկանց մէջ և 40% կանանց մէջ:

Արեւմտեան Եւրոպայի բոլոր պետութիւններում ամբողջ ընկերութիւններ են կազմուել՝ բարակացաւի դէմ կռելու համար. և կռելու միջոցներից զլիւաւորը հէնց սանատորիաներն են ճանաչուած: Բացուում են սանատորիաներ ոչ միայն հարուստ դասակարգի համար, որը միշտ հնարաւորութիւն ունի իր համար ստեղծել նպաստաւոր պայմաններ, այլ, որ գլխաւորն է, և աղքատների համար: Տասնեակ հազարաւոր անգլիական և գերմանական բանուորներ այժմ հնարաւորութիւն ունեն ամսեկան 4—5 ր.—ով բժշկութիւն գտնել ժողովրդական սանատորիաներում, որոնք կառուցուել են զանազան քաղաքներում, օր. Բերլինում, Լէյպցիգում, Ֆրանկֆուրտում: Մի քանի մեծ գործարաններ (օր. Կրուպպի, Շտուսմի) նոյնպէս ունեն սանատորիաներ իրանց բանուորների համար:

Նոյն շարժումը սկսուել է այժմ և Ռուսաստանում: Թէ Ռուսաստանում մեծ կարիք կայ սանատորիաների—դա պարզ է նրանից, որ ամեն տարի Ռուսաստանում մօտ 1/2 միլլիոն մարդ մեռնում է բարակացաւից: Մոսկուան և Պետերբուրգը բարակացաւի մահացութեան կողմից բռնում են առաջին տեղը ամբողջ երկրապագում...

Եւ Մոսկուան այժմ, իր առատաձեռն նուիրատուների շնորհիւ, պատրաստուում է հիմնել մի սանատորիա 500 մարդու համար:

Պ. բժ. Խատիսեանը առաջարկում է սնանատորիաներ հիմնել Կովկասում ևս, մասնաւորապէս Թիֆլիսում, ուր կլիմայական պայմանները շատ նպաստաւոր են բարակացաւով հիւանդների համար:

Դրա համար նա մի գոծնական միջոց է ցոյց տալիս: Նա առաջարկում է, որ մի քանի քաղաքական ինքնաւարութիւն-

ներ և մի քանի մեծ հաստատութիւններ և ընկերութիւններ միանան և հաւաքական ոյժերով հիմնեն մի սանատորիա 100 հոգու համար յայտնի պայմաններով:

Դժբախտաբար մեր քաղաքական ինքնավարութիւններից հազիւ թէ կարելի լինի այդպիսի քայլեր սպասել, քանի որ նոյնիսկ մեր ամենամեծ քաղաքները (Թիֆլիսը, Բագուէն) իրանց սովորական հիւանդներին անգամ չեն կարողանում բաւարարութիւն տալ: Պէտք է յորդորել, որ հասարակութեան ունեւոր դասակարգը առատ նուիրատուութիւններով իրագործելի դարձնէ այդ վերին աստիճանի անհրաժեշտ ձեռնարկութիւնները:

ԲՃ. Գ. ՍԱՐԳ.

ՍՏԱՄՔՈՔՍԻ ԿՏԱՐԲԸ (ստամոքսի մի քանի հիւանդութիւնները), կազմեց բժույ. Վ. Օրլովսկի. մէկ պատկերով Պետերբուրգ. 1903 թ. դինն է 20 կող.

Այդ դրքոյկը ներկայացնում է բժ. Ա. Բուդուզեանի հրատարակութիւնների № 25: Նա կազմուած է հմուտ ձեռքով և ընթերցողին անխփի դադափար է տալիս թէ ստամոքսի ֆիզիոլոգիական գործունէութեան և թէ կատարր հիւանդութեան մասին, համեմատելով նրա հետ հեշտութեամբ շփոթուող ըստամոքսի մի քանի ուրիշ հիւանդութիւնները:

Գրքոյկին կցուած է մի պատկեր, որը ներկայացնում է ստամոքսը, աղիքները, լեարզը և այլն:

Թարգմանութիւնը կատարուած է աջող: Գրքին կցած է բժ. Բուդուզեանի յտուաջաբանը, որի մէջ բարի ցանկութիւն է յայտնուում, որ Թիֆլիսի, Բագուի և ուրիշ քաղաքային վարչութիւններ և հիմնարկութիւններ բանան նորմալ ճաշարաններ, որտեղ ազքատ դասակարգը կարողանար ստանալ լաւ սնունդ. նա նոյնպէս փափազ է յայտնում, որ մեղանում, ինչպէս Պետերբուրգում, հիմք դնուի այնպիսի մի հիմնարկութեան, որտեղեց կարելի լինի ստանալ երեխաների համար մաքուր և լաւ կաթ:

ԲՃ. Գ. ՍԱՐԳ.

ՏՐԵՆՈՍՄԱ (վարակիչ աչքացաւ), փոխադրեց բժ. Ն. Տէր-Նսահակեան, 1902 թ. Ալէքսանդրովու, դինն է 3 կող.:

Մեկանում բժշկական գիտութիւնը ժողովրդականացնող դրականութիւնը աւելի բախտաւոր է, քան միւս մասնագիտու-

թիւնների վերաբերեալ գրականութիւնը: Ոչ մի մասնագիտութեամբ այնքան գրքեր չեն հրատարակուել մեզ մօտ, որքան բժշկութեան վերաբերեալ:

Մինչև այժմ մենք ունէինք բժշկական-առողջապահական զիանլիքները ժողովրդականացնող երկու բժիշկներ—Ա. Բուզուղեան և Վ. Արծրունի. այժմ ասպարէզ է դալիս բժ. Ն. Տէր-Խահակեանը իր արդէն № 3 հրատարակութիւնով: Առաջին և երկրորդ գրքայինները վերաբերում են ժանտախտին և զիֆտերիտին, իսկ վերջինը, «Տրախոմա» վերնադրով գրքայիլը՝ մեր երկրում շատ տարածուած աչքացաւին: Նա պարզ լեզուով բացատրում է ընթերցողին, թէ «ինչպէս պէտք է մարդիկ պաշտպանեն իրանց աչքերն այդ հիւանդութիւնից և չը վարակեն ուրիշներին»:

Բժ. Գ. ՍԱՐԳ.

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Լ.—Ման, «Օտարութեան մէջ», Թիֆլիս, 1903 թ., գինն է 15 կոպէկ:
- 2) Ա. Հախալերդեան, «Վշտահար սրտից», բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1902 թ., գինն է 20 կոպէկ:
- 3) Ջէյթունցի, «Ջէյթունի անցեալէն և ներկայէն», բ. մասն, Բարիզ, 1903 թ., գինն է 1 բուլբլի:
- 4) Բժ. Ա. Բուզուղեան, «Քուն և երազ», մէկ պատկերով, Ս. Պետերբուրգ, 1903 թ., գինն է 25 կոպէկ:
- 5) Յով. Թաղէոսեան, «Քուչուկ Նահապետի երգերը», Թիֆլիս, 1903 թ., գինն է 15 կոպէկ:
- 6) Ed. Bernstein, «Die Leiden des armenischen Volkes und die Pfeichten Europas,» Berlin, 1902:
- 7) A. Vandal, «Les armeniens et la réformé de la Turquie,» Genève, 1903:
- 8) Georg Brandes, «Armenien und Europa,» Genf, 1903:
- 9) Francis de Pressencé, «L'Arménie et la Macédoine.»
- 10) Հ. Գ. Վ. Մէնէվիչեան, Արդի լեզուագիտութիւնը, հատոր ա., Վիեննա, 1903 թ., գինն է 3 ֆր.:
- 11) Ե. ք. Ալխազեան, Ինքնուսուցիչ Հայերէն և Վրացերէն լեզուի, Թիֆլիս, 1903 թ., գինն է 20 կոպ.:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱԾԽԱՐՅԻՑ

Անտեսանելի ճառագայթների մասին.

Էլեքտրականութեան հսկայական դարգացումը և բնագիտութեան այդ հրաշալի ճիւղի մէջ ամեն օր նոր ու սքանչելի երևոյթների գիւտերը պէտք է յոյց տային, թէ որքան անհիմն են այն յոռետեսների գուշակութիւնները, որոնք կանխօրէն սահմաններ են դնում մարդկային իմացականութեան առաջ...

Ըստ երևոյթին կարծես այդ յոռետեսները նաև հեռատեսներ են. չէ որ արդի գիտութեան մէջ ընդունուած հիպոթէզներն և թէորիաները անգօր են լուծելու «նիւթի», «ոյժի» և «հողու» էութիւնը: Սակայն չը պէտք է մոռանալ, որ բնագիտութիւնը համեմատաբար նոր է սկսել ընթանալ փորձի և գիտողութեան վրայ հիմնուած ճանապարհով, չը պէտք է մոռանալ, որ գիտական ենթադրութիւններն (հիպոթէզ) և տեսութիւնները (թէորիա) նրա համար լոկ օժանդակիչ, ժամանակաւոր շինուածքներ են, ինչպէս որ ճարտարապետի համար են՝ կառուցուող հսկայ շինութեան շուրջը տնկոտած գերաններն ու զբանց վրայ կապկպած տախտակները, որոնք անհրաժեշտ են բանուորների աշխատանքը դիւրացնելու համար միայն...

Գիտութեան մէջ հիպոթէզներն ու թէորիաները երբէք ոչ համբալինների աչքում անքննադատելի, անսխալական զողմանների նշանակութիւն չեն ունեցել, թէկուզ նրանց հեղինակները հանճարներ լինէին: Բաւական է գիտութեան մէջ ճշտուն մի քանի նոր ֆակտեր, որոնք չեն բացատրուում եղած թէորիաներով, և ահա արխիւը բաց է այդ անաջողակ ենթադրութիւնների համար. մի կողմ է նետուում անպէտք դառած օժանդակիչը, իսկ փոխարէնը ստեղծուում է աւելի հաստատուն, եղած ֆակտե-

րին աւելի համապատասխան մի հիպոթէզ... Եւ այդպէս շարունակ առաջ է գնում գիտութիւնը, քայլ առ քայլ մօտենալով վերջնական ճշմարտութեան, որ նրա նմատակն է:

Գիտութեան անեղբ ուղիւնոսից մենք մի փոքրիկ շերտ վերցնենք՝ օրինակով պարզելու համար վերեւում մեր ասածը: «Մուրճում» տպուող յայտնի Բօլլէսի «Հրաշալի դար» գրուածքից էլ գիտէ մեր ընթերցողը, որ տաքութեան, լոյսի, մագնիսականութեան և էլեքտրականութեան երեոյթները բացատրուում են մի ինչ որ «տիեզերական եթերի» շարժումով: Մինչև այդ տեսութեան հասնելը շատ ուրիշ ենթադրութիւններ են արուել և թողնուել. այժմ հասել են «տիեզերական եթերին», որ այնուամենայնիւ գիտ ևս չէ գոհացնում «բոլոր սկիզբների սկիզբը» գտնել խիզախող գիտութեան... Իսկապէս ինչ է ինքնըստինքեան այդ «ամենանուրբ, ամեն ինչ թափանցող և խիստ առաճրգական» եթերը: Չը գիտենք, բայց չը պէտք է ասենք, թէ «չենք էլ իմանալու»: Եւ վերջին տարիների ընթացքում գիտութեան մէջ հաւաքուած ֆակտերն, նուրբ հետազօտութիւններով գտնուած նոր երեոյթները կարծես նշաններ են սոյց տալիս այդ հանելուկի լուծման...

Ինականաբար առանձին հետաքրքրութիւն պէտք է շարժեն այդ նոր ֆակտերն ու երեոյթները նաև մեր հայ ընթերցողների մէջ, որոնք կարծես հէքիաթից, հոգևորականութիւնից և դերեզմանաքարերից զէնը լոյս աշխարհ չեն ուզում տեսնել... Ի հարկէ՝ այդ բոլորը իրանց տեղը ունեն. ցաւալին այն է, երբ մեզ պիտաւորապէս հետաքրքրողը հէնց դրանք են...

Նպասակ դնելով մեր ընթերցողներին հերտաքրքրել այդ նոր ֆակտերով և երեոյթներով, մենք այս անգամ կ'աշխատենք ծանօթացնել նրան մի շարք «անտեսանելի ճառագայթների» հետ, որոնք պէտք է լոյս սփռեն բնութեան ամենամեծ դաղանիքներից մէկի վրայ:

Ընթերցողը վերև յիշած «Հրաշալի դար»-ից էլ կարող է իմանալ, թէ ինչ բան է արեգակնային սպեկտրը: Յայտնի է, որ արեգակի ճառագայթը անցնելով ազակիայ հատուածակողմի միջով՝ բաժան-բաժան է լինում և մութ սենեակում պատի վրայ տալիս ծիածանի գոյնով շողշողող մի շերտ կամ ստեկտր, որի աչքի ընկնող գոյներն են. կարմիր, նարնջային, դեղին, կանաչ, կապոյտ, մանիշակալին:

Փորձը սոյց է տալիս, որ այդ սպեկտրը իր երկու հակառակ ծայրերին կից ունի համարեա իր երկայնութեամբ մի-մի անտեսանելի շերտեր ևս. մէկը իբրև սպեկտրի կարմիր մասի

չարունակութիւն (անդրակարմրագոյն), միւսը՝ իբրև սպեկտրի մանիչակային մասի շարունակութիւն (անդրամանիչակային): Այդ երկու աներևոյթ սպեկտրների գոյութեան մէջ համադուելու համար բաւական է ջերմաչափը պահել անդրակարմրագոյն շերտերում և լուսանկարչական թիթեղը՝ անդրամանիչակային մասում: Ուրեմն, արեգակը բացի մեր աչքին երևացող ճառագայթներից ունի նաև անտեսանելի ջերմային և քիմիական ճառագայթներ, որոնք սակայն, իրանց բոլոր միւս յատկութիւններով, — բեկբեկումով, անդրադարձումով կայլն, — յար և նման են լուսաւոր ճառագայթներին:

Բայց աւելի հետաքրքրական են ուրիշ տեսակ աներևոյթ ճառագայթները: Դեռ 1862 թւականին Գերմանիայի բնագէտ Իօհան Հիտտորֆը և ապա անկախ նրանից հոչակաւոր անգլիացի գիտնական Ուիլիամ Կրուքսը ուշադրութիւն դարձրին էլեքտրական հոսանքի պարպումների ժամանակ բացասական բեւեռից (կատոդ) տարածուող ճաճանչների վրայ: Վերջնելով չափազանց նոսրացած դազ պարունակող ապակեայ խողովակներ («կրուքսեան խողովակ») և զրանց մէջ էլեքտրական հոսանքի պարպումներ առաջացնելով՝ Կրուքսը գտաւ, որ բացասական բեւեռից կամ կատոդից հաղիւ նշմարելի ճառագայթներ են հոսում: Այդ կատոդային ճառագայթները չեն նմանում սովորական տեսանելի թէ՛ անտեսանելի ճառագայթներին. զրանք ոչ բեկբեկում են և ոչ անդրադառնում: Կատոդային ճառագայթները ազդում են մադնիսից՝ շեղելով իրանց ուղղութիւնը: Զարմանալին այն է, որ այդ ճառագայթները կազելով կրուքսեան խողովակի պատերին՝ հաղորդում էին զրանց՝ մուլթ տեղում լուսավայելու յատկութիւն (Փոսփորեսցենցիա): Կատոդային ճառագայթների ճանապարհին, խողովակի մէջ գրուած թիթեւ անլուները շարժում են ին կատոդին հակառակ ուղղութեամբ, կարծես հրուելով այդ ճառագայթներից: Նշանաւոր է և այն, որ այդ ճառագայթները առարկաներին հաղորդում էին բացասական էլեքտրականութիւն...

Ահա հէնց այդ զարմանալի կատոդային ճառագայթներն էին, որոնցից գտնուեցան 1895 թւին աւելի ևս զարմանալի Բեօնտգենեան ճառագայթները: Այդ ճառագայթների մասին «Մուրճի» ընթերցողը երևի որոշ գաղափար արդէն կազմել է՝ կարդալով «Հրաշալի դար»-ի 38-րդ երեսը, ուստի թողուցիկ ակնարկով կ'անցնենք, լրացնելով մի քանի կէտեր: Բեօնտգենը աշխատելով Կրուքսեան խողովակի կատոդեան ճառագայթների վրայ՝ նկատեց, որ եթէ այդպիսի խողովակը զրսից պինդ փաթթել սև ստուարաթղթով և մօտը պահել մի թղթէ էկրան

(պատասպար), որի մի երեսը ծածկուած լինի բարձր մետաղի որոշ բաղադրութեամբ, և էլեքտրական հոսանքների պարսպումներ առաջացնել խողովակի մէջ—մութ սենեակում էկրանը կը սկսի լուսափայլել. նոյն այդ երևոյթը կը նկատենք, եթէ գէպի խողովակը դարձնենք էկրանի նաև այն կողմը, որը չի կրում իր վրայ քիմիական բաղադրութիւնը: Ուրեմն, սև հաստ թղթի միջով անցնում են ինչ որ ճառագայթներ, մինչդեռ մինչև դրանց գտնելը մեզ յայտնի ամեն տեսակ ճառագայթների համար այդպիսի մի խոչընդոտ անթափանցելի էր: Այդ ճառագայթները ոչ բեկբեկուած են, ոչ անդրադարձուած, ինչպէս և կատողայինները, սակայն դրանց գլխաւոր տարբերութիւնը այդ վերջիններից կայանում է նրանում, որ դրանք անտարբեր են գէպի մագնիսը:

Ինչպէս կատողային ճառագայթների վրայ կատարած փորձերը դանել տուին բեօնտգենեան ճառագայթներն, այնպէս և այս վերջինների վրայ կատարած ուսումնասիրութիւնները երևան հանեցին դարձեալ նոր խորհրդաւոր ֆակտեր. 1896 թըւակաւնի սկզբներում Ֆրանսիացի գիտնական Հանրի Բեկկերելը գտաւ, որ ուրան կոչուած մետաղը ունի յատկութիւն ինքն իրան, առանց նախապէս որեւէ աղբիւրից լուսաւորուելու, ամիսներ ու տարիներ շարունակ իրանից բեօնտգենեան ճառագայթներ արձակելու: Ուրանի այդ բաղիօտիւ կամ ճառագայթաւոր յատկութիւնը այնքան մեծ սենսացիա արաւ գիտական շրջաններում, որ գիտնականները սկսեցին այդ ուղղութեամբ մի շարք փորձեր: Մե լեհուհի գիտնական (տիկին Կիւրի) իր ամուսնու հետ ուրանի հանքային մի բաղադրութիւն դաելով գտաւ նրա մէջ մի ինչ որ նիւթ, որը հարիւր հազար անգամ աւելի զօրեղ կերպով էր արձակում այդ ընկկերելեան ճառագայթները: Բանից դուրս եկաւ, որ նա գտել է մի նոր քիմիական տարր, մի նոր հազազիւտ մետաղ, այդ սքանչելի նորածին տարրը մկրտուեց լատինական ըաղիյ *) անունով... Այդ բաղիւր այնքան զօրեղ կերպով է արտայայտում իր բաղիօտիւ յատկութիւնը, որ նրա բաղադրութիւնը, խողովակի մէջ և դրսից սև թղթով փաթաթած անդամ, եթէ մօտեցնենք խփած աչքերին—աչքերը լցւում են պայծառ լուսով: Միթէ զարմանալի կը լինի, եթէ ասեն մեզ շուտով, թէ կոյրերն էլ սկսում են տեսնել...

Այդքան աներեւոյթ ճառագայթների գիւտերից յետոյ զարմանալի չէ սպասել, որ մարդկային միտքը եթէ դեռ հետու է «բո-

*) Radium=ճառագայթ:

լոր սկիզբների սկիզբը՝ ճանաչելուց, նա յամենայն դէպս քայլ առ քայլ մօտենում է տիեզերքի ամենամեծ գաղտնիքներից մէկը՝ «տիեզերական եթերի» էութիւնը լուծելու զարմանալի սիրագործործութեան:

Թէ ինչ կապ ունեն վերև յիշուած երևոյթները եթերային հիպոթէզի հետ—այդ մենք կը տեսնենք յաջորդ անգամ:

Լ. Ս.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

1. Ռուսաստանի Ֆինանսական քաղաքականութիւնը.

Այս ընդհանուր ակնարկից յետոյ դառնանք այժմ Ռուսաստանի սնտեսական քաղաքականութեանը, քննենք նրա ֆինանսները, հիմք ընդունելով ֆինանսների մինիստր պ. Վիտտէի 1903 թ. համար կազմած և Նորին Մեծութեան ներկայացրած զեկացումը, որի մէջ ասուած է *).

«Պետութեան համար ամենաանհրաժեշտ սրահանջն այն է, որին բաւարարութիւն տալով կարելի է ապահովել պետութեան գոյութիւնն ու արտաքին անձեռնմխելիութիւնը: Հէնց այդ պատճառով էլ ազդարնակութիւնը որոշ անհատական պարտականութիւններ է կրում և վճարում է հարկերի մեծ քանակութիւնը, դրա փոխարէն ստանալով մի գիտակցութիւն, թէ Նորին Մեծութեան իւրաքանչիւր հաւատարիմ հպատակը, նրա ընտանիքը, ունեցուածքը և հայրենիքը իր ինքնակալ պետի հովանաւորութեան տակ ապահով ու անվտանգ են արտաքին թըշնամիներէից: Եւ այդ գիտակցութիւնը թանգ ու բարձր է ամեն մի նիւթական բարիքից: Տնտեսական և մարդասիրական տեսակէտից պէտք է ցաւել, որ մարդկութիւնը դեռ չէ ըմբռնել, չէ համակուել ընդհանուր խաղաղութեան բարձր գաղափարով: Պէտք է խոստովանել, որ այժմ մենք գտնուում ենք մի երկաթէ օրէնքի ազդեցութեան տակ: Կուլտուրական պահանջներին բաւարարութիւն տալ միմիայն նրանով, ինչ որ կը մնայ երկրի պաշտպանութեան ծախսերը հողալուց յետոյ—ահա այդ օրէնքը»

*) „Русская Мысль“, 1903, № 2, կր. 189.

Այդ բացատրութիւնից յետոյ հասկանալի պիտի լինի, թէ ինչու Ռուսաստանն այնքան խոշոր գումարներ է ծախսում զինուորական պէտքերի համար, թէ ինչու նրա զինուորական ծախսերն անում են տարէցտարի: Ներկայ տարուայ նախահաշուով այդ ծախսերի ընդհանուր գումարը հասնում է 445,555,047 ռուբլու, այսինքը անցեալ տարուանից 23,620,960 ռուբլի աւել: Մի պատկառելի գումար, որի նշանակութիւնն աւելի պարզ կը լինի, եթէ աչքի առաջ ունենանք, որ ընդհանուր ծախսերի գումարը 1,473,732,862 ռուբլի է: Ինչպէս յայտնի է, Ռուսաստանի ազգաբնակչութեան թիւը մօտ 130 միլլիոն է. ուրեմն իւրաքանչիւր ռուսահպատակ՝ զինուորական ծախսերի համար ուղղակի կամ կողմնակի հարկերի միջոցով վճարում է տարեկան մօտաւորապէս $3\frac{1}{2}$ ռուբլի: Իայց դա, ի հարկէ, չնչին գումար է, եթէ աչքի առաջ ունենանք, որ նա դրա փոխարէն ստանում է զիտակցութիւն, թէ իր ընտանիքն ու ունեցուածքը ապահով են արտաքին թշնամիների յարձակումներից:

Եթէ ներկայ տարեշրջանի նախահաշիւը համեմատելու լինենք նախորդ տարիների հետ, այն ժամանակ կը նկատենք խոշոր տարբերութիւն, այսպէս օրինակ՝ 1893 թւականի համեմատութեամբ ներկայ 1903 թ. բիւջէի ընդհանուր գումարը գրեթէ երկու անգամ աւելի է. իսկ անցեալ 1902 թ. համեմատութեամբ սովորական ծախսերի գումարը աւելացել է 104 միլլիոն ռուբլով*): Մի պատկառելի գումար, որը լրացնելու համար անշուշտ հարկաւոր էր և եկամուտների աւելացում:

Այդպիսի աւելացում կառավարութիւնն սպասում է ըմպելիների պետական վաճառումից—36 միլլիոն ռուբլի, երկաթուղիներից—16,7 միլլիոն, մաքսային տուրքից—1,05 միլլիոն, շաքարի հարկից—9 միլլիոն եւ այլն: Ուրիշ խօսքով ասած՝ գլխաւորապէս աւելացրած կողմնակի հարկերով պէտք է ծածկուի ծախսերի պակասորդ գումարը: Մի փաստ, որ բաւական ընտրուած է Ռուսաստանի տնտեսական քաղաքականութիւնը: Ռուսաստանում առհասարակ կողմնակի հարկերը չափազանց խոշոր գումար են կազմում: Այսպէս օրինակ՝ ներկայ տարեշրջանում միայն ոգիւից ըմպելիներից ստաւում է մօտ 56 միլլիոն ռուբլի եկամուտ, չաքարահարկից—78,4 միլլիոն, նաւթից—29 միլլիոն, լուցկիից—7,9 միլլիոն և այլն:

«Ալիոհոլը, ասում է յայտնի ֆիզիոլոգ Լանդուան, մի չար դև է, որ սիֆիլիսի հետ միացած ամբողջ ազգեր է ջնջել աշխարհից:» Ուրեմն ուրախալի երևոյթ պէտք է համարել, որ

*) „Вѣстникъ Европы“, № 2.

կառավարութիւնն իր կողմնակի հարկերով ուղղում է թանկացնել ոգելից ըմպելիները և դրանով սանձահարել «չար դեի»—ալիոհոլի ազդեցութիւնը: Սակայն այդ միջոցը իր բուն նպատակին կը հասնէր միայն այն ժամանակ, եթէ կառավարութիւնը դիւրութիւններ տար ոգելից ըմպելիների փոխարէն ուրիշ ըմպելիներ դործածելու: Դժբաղդաբար չը կան այդ դիւրութիւնները, որովհետեւ միւս կողմից շաքարի վրայ ծանրացած հարկը շատերի համար դժուարացրել է ամենասովորական խմելիքի—թէյի դործածութիւնը:

Միւս կողմնակի հարկերն էլ թեթևութիւն չեն բերում ազդարնակութեան համար, այլ միայն ծանրութիւն: Մասամբ այդ ծանրութիւնն է պատճառը, որ նոյն իսկ ամենաանհրաժեշտ առարկաներից շատերը դեռ յայն դործածութիւն չեն ստացել: Օրինակ. Ռուսաստանը և մասնաւորապէս Կովկասը նաւթի հայրենիք է համարուում, բայց չը նայելով այդ հանդամանքին, Կովկասի ազդարնակութեան իւրաքանչիւր անդամը համեմատաբար աւելի քիչ նաւթ է դործածում, քան թէ ուրիշ երկրների բնակիչները: Այսպէս օրինակ՝ Անգլիայի, Գերմանիայի, Ռուսաստանի և Կովկասի իւրաքանչիւր բնակիչը դործ է անել տարեկան միջին թուով հետեւեալ քանակութեամբ նաւթ *).

	Անգլիա	Գերմանիա	Ռուսաստան	Կովկաս
1896 թ.	33 ֆունտ.	40 ֆունտ.	11 ֆ.	8 ֆ.
1897 »	29 »	41 »	11 »	8 »
1898 »	39 »	40 »	12 »	9 »
1899 »	42 »	40 »	13 »	9 »
1900 »	42 »	41 »	13 »	11 »

Աւելացրէք դրա վրայ նաև այն հանդամանքը, որ Անգլիայում ու Գերմանիայում չափազանց տարածուած է գազն ու էլեկտրականութիւնը, և այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ Ռուսաստանն ու Կովկասը այդ տեսակէտից որքան յետ են մնացել: Դրա պատճառը մի կողմից ժողովրդի կուլտուրան ու անտեսական պայմաններն են, իսկ միւս կողմից—կողմնակի հարկերը՝ ակցիզի ճնշումը:

Այդքանը կողմնակի հարկերի մասին:

* *

Դառնանք այժմ մաքսային խնդրին, որ նոյնպէս նշանաւոր տեղ է բռնում անտեսական քաղաքանութեան մէջ: Ինչպէս յայտնի է, Ռուսաստանը հետևում է պրոտեկցիոնիզմի սիս-

*) Տես „Труды XIV съезда нефтепромышленниковъ въ Баку. Докладъ М. Алибекова“.

տեմին, այսինքն բարձր մաքս նշանակելով ուղում է ճնշել ներմուծումը և դարգացնել արտահանումը և հէնց դրանով էլ զարկ տալ անդական արդիւնադործութեան ու վաճառականութեան զարգացմանը: Ահա այդ սիստեմի շնորհիւ է, որ մաքսային եկամուտը այնքան բարձր աստիճանների է հասել: Ներկայ տարեշրջանի բիւջէով նախատեսուած է 98 միլլիոնից աւելի մաքսային եկամուտ: Բայց որքան նպատակայարմար է այդ միջոցը:

Հարցը լուսաբանելու համար աւելորդ չի լինի համեմատել մի քանի առարկաների դները Ռուսաստանում և հարևան երկրներում: Այդ համեմատութիւնը ցոյց է տալիս, *) որ սուսահպատակ սպառողը վճարում է աւելորդ՝ թէյի համար—մօտ 300%, ծախտախ համար—600%, քարածուծի—200%, թղթի—700%, դիւղատնտեսական մեքենաների—160% և այլն: Մեխի մէկ փութն արժէ Ամերիկայում 1 ռ.—1 ռ. 50 կոպ., իսկ մեղանում—4 ռ.—8 ռ.:

Պարզ է, որ այդպիսի տարբերութեան պատճառը բարձր մաքսն է, որից տուժում է սպառողը: Իսկ ինչ է շահում երկիրը դրա փոխարէն: Տեսնենք:

Թէև մաքսային բարձր սակազնի շնորհիւ բացուեցին բազմաթիւ նոր դործարաններ, թէև կառավարութիւնն ամեն կերպ աշխատեց նպաստել նրանց, բայց այնուամենայնիւ վրայ հասաւ տնտեսական տալանպար և կլանեց նրանցից շատերին, որովհետև առաջարկի համեմատ պահանջ չը կայ, որովհետև «վաճառանոցը» սպահովուած չէր: Հէնց այժմ էլ նշանաւոր դործարաններից շատերը իրանց գոյութիւնը պահպանում են միմիայն երկաթուղային պատուէրներով: Այսպէս օրինակ. անցեալ 1902 թ. երկաթագործարանները պատրաստել են մօտ 92 միլլիոն ռուբլու շոգեկառքեր, բեխներ, վագոններ և այլն: Ներկայ տարեշրջանում պատրաստելու են մօտ 107 միլլիոնի **): Բայց չէ որ այդպիսի պատուէրները երկար շարունակուել չեն կարող: Ուրեմն հարկաւոր է աւելի լայն, ապահով ու մշտական վաճառանոց ունենալ. իսկ դրա համար անհրաժեշտ է մի կողմից մրցել արտասահմանեան արդիւնադործութեան դէս, ապրանքներ արտահանելով հեռու երկրներ, իսկ միւս կողմից ապահովայնել ներքին վաճառանոցը: Առաջին դէպքում Ռուսաստանը գրեթէ անզօր է, որովհետև նրա արդիւնադործութիւնը զեռ շատ խափ դրութեան մէջ է և անկարող է եւրոպական մրցանքը զիմանալ: Ուրեմն փրկութեան գլխաւոր յոյսը ներքին վա-

*) „Русскія Вѣкомости“.

**) „Курьеръ“, № 231.

ճառանոցն է, կամ ուրիշ խօսքով ասած՝ տեղական ազգաբնակիւթեան սպառողական ոյժը: Իսկ լինէ է ներկայացնում այդ ոյժը...

Ֆ. Ա. Շչերբինան իր „Крестьянские бюджеты“ խորազրբով աչխատութեան *) մէջ ցոյց է տալիս, որ Ռուսաստանի գիւղական ազգաբնակիւթեան իւրաքանչիւր անդամի տարեկան հաշւեկշիռը ներկայացնում է հետեւեալ մօտաւոր պատկերը.

Շկամուտ

Հացահատիկներից	18	ր.	12	կոպ.
Խոտից, յարդից ու ձղտից	8	«	16	»
Այգիներից, բանջարանոցից և այլն	2	»	63	»
Անասնապահութիւնից.	9	»	99	»
Արհեստներից	9	»	47	»
Ուրիշ աղբիւրներից.	7	»	26	»
	<hr/>			
Ընդամենը.	55	ր.	63	կոպ.

Ծախս

Հացահատիկների համար.	18	ր.	10	կոպ.
Անասունների կերակրի »	8	»	47	»
Բանջարեղ. և մրգեղ. »	1	»	30	»
Մսեղ. և կաթ. կերակր. »	3	»	90	»
Հողի կապալագնի »	1	»	02	»
Չանազան ծախսերի »	20	»	10	»
	<hr/>			
Ընդամենը.	52	ր.	89	կոպ.

Այդպիսով աւելորդ գումար մնում է մօտ երեք րուբլի, որը և խսկապէս ծախսւում է հարկերի համար: Բայց դա ոչ թէ աւելորդ գումար է, այլ խնայողութիւն: Տարեկան ամբողջ եկամուտը բաժանելով օրերի թւի վրայ՝ կը ստանանք $\frac{5563}{360} =$ մօտ 15 կոպ... ողորմելի գումար է դա նոյն իսկ ամենասակաւապետ ապրուստի համար, սակայն գիւղացին ստիպուած է զըրանից էլ խնայողութիւն անել ստիպողական հարկերը վըճարելու համար: Իսկ եթէ այդ խնայողութիւնը չը բաւականացնէ, այն ժամանակ նա ընկնելու է վաչխատուի ճանկերը և դրանով փորելու իր կորստեան վիհը: Այդպէս է եղել գիւղացու գրութիւնը ութսունական թւականներին, զրեթէ այդպէս է և այժմ: Ուրեմն երկրի անսուստական կեանքը բարեկարգելու համար անհրաժեշտ է ամենից առաջ այդ դրութիւնը բարուղբել, որովհետև դրանով կարելի է ազգաբնակիւթեան սպառողական ոյժը բարձրացնել, իսկ այդ ոյժը մեծ դարկ

*) „Вліяніе урожаевъ и хлѣбныхъ цѣнъ“, томъ II.

կարող է տալ արդիւնադործութեանն ու վաճառականութեանը: Նկատուած է, որ լաւ հունձը զգալի չափով ազդել է նոյն իսկ արտաքին վաճառականութեան վրայ: Ռուսաստանը *).

արտահանել է		ներմուծել է	
1892 թ.	417 միլլիոն ռուբլու պարանք,	329 միլլիոնի	
1893 »	539 » » »	388 »	
1894 »	627 » » »	486 »	
1895 »	638 » » »	468 »	
1896 »	632 » » »	509 »	
1897 »	662 » » »	480 »	
1898 »	669 » » »	530 »	
1899 »	570 » » »	561 »	
1900 »	655 » » »	544 »	
1901 »	684 » » »	495 »	
1902 »	783 » » »	483 »	

Ուրեմն վերջին տարին, այսինքն ամենալաւ հունձի ժամանակ, Ռուսաստանի արտահանման դումարը ներմուծման դումարից աւելի է եղել:

Իսկ բարձր մաքսը կամ ուրիշ խօսքով ասած՝ մաքսային հովանաւորող սխտեմը չէ կարող օգտակար համարուել այդ ոյժի համար, որովհետեւ նա իր հովանավորութեան տակ է վերջընում միայն սակաւաթիւ ունեւորներին—կապիտալիստներին, անուշադիր թողնելով ընդհանրութիւնը:

Ռուսաստանի ազդաբնակութեան մեծամասնութիւնը ներկայումս երկրագործ դասակարգն է կազմում, իսկ դրա զլխաւորը դբադմուները—գիւղատնտեսութիւնը, դժբաղդաբար, շատ աննախանձելի պատկեր է ներկայացնում: Յետամնացութեան ատիճանը գէթ մասամբ նկատելի դարձնելու համար բաւական է յիշել այն փաստը, որ Ռուսաստանում մէկ դեսեատին տարածութիւնը բերում է տարեկան միջին թւով **) 38,8 փութ, արդիւնք, իսկ Բելգիայում—նոյնքան տարածութիւնը—128,5 փութ, Սնդլիայում—123,4 փութ, Նապոնիայում—115,7 փութ, Միացեալ Նահանգներում—83,2 փութ, Ֆրանսիայում—80,5 փ. Գերմանիայում—74,5 փութ և այլն:

Եթէ փոփոխութեան ենթարկուեն չրջապատող պայմանները, այն ժամանակ հնարաւոր կը դառնայ կամաց-կամաց կերպարանափոխել յիշեալ մտայ պատկերը: Այդ տեսակէտից էլ բարձր մաքսը նպաստաւոր չէ կարող համարուել, որովհետեւ նա

*) „Рус. Мысль“, № 2, стр. 172.

**) „Петербург. Ведомости“, 1902, № 252.

թանկացնում է առօրեայ գործածութեան շատ նիւթեր և դրանով տնտեսական մի լուծ է դնում աղքատներին:

* * *

Ամփոփելով մեր բոլոր ասածները Ռուսաստանի տնտեսական քաղաքականութեան մասին, գալիս ենք այն եզրակացութեան, որ նա ամենամեծ առաւելութիւնը տալիս է այն պահանջներին, որոնց նպատակն է պաշտպանել հայրենիքը արտաքին թշնամիներից և ապահովել նրա ամբողջութիւնը: Հայրենի արդիւնագործութեանը զարկ տալու նպատակով նա ընտրել է մաքսային հովանաւորող սիստեմը, իսկ անհրաժեշտ ծախսերը հոգալու համար բացի դրանից լայն չափով սահմանել է և կողմնակի հարկեր:

Ռուսաստանի տնտեսական քաղաքականութիւնը քննադատողներից առանձնապէս հետաքրքրաշարժ է տնտեսագէտ Բուխի յօդուածը «Вѣст. Европы» ամսագրի № 2—ում: Նա մանրրակրկիտ կերպով վերլուծում է հարցը, մատնանիչ է անում Ռուսաստանի ներկայ տնտեսական քաղաքականութեան պակասաւոր կողմերը և առաջարկում է պակասեցնել—սահմանափակել մաքսային սակագինը և վերացնել կողմնակի հարկերի մեծ մասը, դրա փոխարէն առանձին հարկ նշանակելով եկամուտների վրայ, այսինքն սահմանելով եկամուտային հարկ:

Այդպիսով շատ եկամուտ ունեցողը շատ հարկ կը վճարէր, իսկ քիչ-քիչ, որով և մասամբ թեթեւացած կը լինէր աղքատ դասակարգի հարկային ծանրաբեռնութիւնը:

2. Ռուսաստանի մաքսային նոր սակագինը:

Ինչպէս յայտնի է, շուտով լրանալու է Ռուսաստանի մաքսային դաշնագրութիւնը օտար պետութիւնների հետ, ուստի և հերթական հարց է դարձել մաքսային նոր սակագին որոշելը: Այդ սակագնից շատ մեծ կախում ունին արտաքին վաճառականութիւնն ու տեղական արդիւնագործութիւնը, ուստի և կառավարութիւնը առանձին ուշադրութիւն է դարձնում ինչորի վրայ:

Մինչև այժմ նա հետևել է հովանաւորող քաղաքականութեան և, ինչպէս երևում է արդէն հրատարակած նոր սակագրերից, սրանից յետոյ էլ ուզում է շարունակել այդ միևնույն քաղաքականութիւնը: Բարձր մաքսերով ճնշել արտասահմանեան մրցումը և պաշտպանել մայրենի արդիւնագործութիւնը—անա այդ քաղաքականութեան նշանաբանը: Այդ նշանաբանը բխլիֆ կերպով աչքի կ'ընկնի, եթէ համեմատենք առաջուայ և այժմեան

մաքսային գները: Այսպէս օրինակ՝ արտասահմանից ներմուծուող ապրանքների համար մաքս վերցնուած էր

	առաջ	այժմ
Հում սուրճի պուզից . . .	4 րուբլի 50 կոպ.	5 ր. 85 կոպ.
Բոված սուրճի » . . .	6 » — »	9 »
Ծխախոտի » . . .	23 » 10 »	34 » 65 »
Չկան սոսնձի » . . .	9 » — »	13 » 50 »
Մեզրի, գարեջր. » . . .	2 » 25 »	2 » 50 »
Կօշիկների մէկ ֆունտից.	1 » 50 »	1 » 95 »
Կանանց մետաքս		
Կօշիկների մէկ ֆունտից	2 » — »	3 » 90 »
Գերանդիների պուզից	2 » 10 »	3 » 60 *) »
Իւրաքանչիւր կառքից	198 » — »	240 » — »

Առաջ ուսերէն լեզուով արտասահմանում ապագրուած գրքերից վերցնուած էր մաքս պուզին 4 ր. 50 կոպ., իսկ այժմ 17 րուբլի: Մեծ չափով բարձրացրուած է նաև բամբակէ և մետաղէ առարկաների մաքսը:

Առհասարակ նոր սակագնի մէջ նշմարուած է մի առանձին ձգտում՝ բարձր մաքսերով ճնշելու գերմանական ապրանքների ներմուծումը: Եւ դա միանգամայն հասկանալի կը լինի, եթէ աչքի առաջ ունենանք, որ Գերմանիան էլ շուտով դորձադրելու է մաքսային բարձր սակագին հաղահատիկների և առհասարակ գիւղատնտեսական մթերքների վերաբերմամբ:

Ռուսաստանը իւրաքանչիւր տարի ահպին քանակութեամբ հացահատիկներ ու գիւղատնտեսական մթերքներ էր արտահանում դէպի Գերմանիա, իսկ այսուհետև գերմանական բարձր մաքսը զգալի չափով սահմանափակելու է այդ արտահանումը: Դա անտեսական մի հարուած էր Ռուսաստանի համար, ուստի և նա ուզում է մի փոխադարձ հարուած հասցնել Գերմանիային, ճնշելով նրա ապրանքների ներմուծումը:

«Ակն ընդ ակն»—այդ է ասում Ռուսաստանի մաքսային նոր սակագինը:

*) Իսկ ծովային ճանապարհով բերուածների համար 3 ր.:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Մի քանի ընկերակցական ձեռնարկութիւններ Երեսնի նահանգում

Մեր ժողովրդի կեանքի մէջ այժմ նկատոււմ են մի քանի խնդրոյնական փոքրեր: Մեր մէջ մուտք են գործում նոր հոսանքներ, և մեր անտեսական կեանքը կամայ-կամայ ենթարկոււմ է կերպարանափոխութեան: Առաջ են գալիս երիտասարդ ուժերի համախմբումներ, կազմոււմ են ընկերակցութիւններ՝ միացած ուժերով այս և այնտեղ գործ սկսելու նպատակով: Այսպէս օրինակ, Աշտարակ գիւղում բացուել է հասարակական բանկ, Վաղարշապատում հիմնուել է սպառողների ընկերութիւն, Իգդիրում ջանքեր են լինում կազմելու գիւղատնտեսութեան նպաստող մի ընկերութիւն, Ղամաքլուի շրջանում կազմուելու վրայ է նոյնպէս մի ընկերութիւն, որը սակայն դեռ ևս չէ որոշել ձեռնարկութեան տեսակը, թէև տրամադրութիւնը աւելի սպառողների ընկերութեան կողմն է: Էջմիածնի մօտ Քեօրիալու գիւղում մի խումբ երիտասարդներ յղացել են միտք Աղբ-գեօլից ջուր բարձրացնել իրանց 3—400 գեսեաօին հողերի համար կայն:

Այդ ձեռնարկութիւնները կարելի է բաժանել չորս տեսակների—1) սպառողական ընկերութիւններ, 2) հասարակական բանկեր, 3) գիւղատնտեսութեան նպաստող ընկերութիւններ և 4) արդիւնաբերող ընկերակցութիւններ:

Դրանից առաջին երկուսը որպէս հեշտ և գիւրին ձեռնարկութիւններ՝ արդէն սկսուել են: Այսպէս Վաղարշապատում արդէն սկսել է իր գործողութիւնը սպառողների ընկերութիւնը: 10 բուրլի վճարողը համարոււմ է անգամ՝ իրաւունք ու-

նենալով ընկերութեան խանութից ստանալ իրան հարկաւոր մթերքներ մատչելի գներով:

Աշտարակի գիւղում բացուած հասարակական բանկին 100 ր. վճարողը համարուում է անդամ՝ իրաւունք ունենալով բանկից դուրս բերել մինչև 600 բուբլի:

Աշտարակի բանկը բաց է թողել 12,000 բուբլի փոխառութիւն Ազգայնական գիւղի համայնքին, հնարաւորութիւն տալով նրան գնել գիւղը սեփականատէր աղալարից, հետզհետէ այդ պարտքը հանգցնելու պայմանով:

Իգգիբրում մշակուել և ուղարկուել է պատշաճաւոր իշխանութեան երրորդ տեսակի ընկերութեան ծրագիրը, որը նըպատակ է գրել օգնութեան հասնել երկրագործ դասին և գիւղատնտեսութեան: Նա հայթհայթելու է երկրագործական գործիքներ և բացի այդ հանդիսանալով միջնորդ գիւղացու և զընտրների մէջ՝ հնարաւորութիւն պիտի տայ զարգացնելու բերքերի վաճառումը, որը ներկայ պայմաններում ենթակայ է վաշխառուների և հարստահարողների քմահաճոյքներին:

Եթէ մի ժամանակ առաջ վաշխառուն սոկոսով տուած փողը ստանում էր կալի ժամանակ ցորենով ու գարով, այդեկութի ժամանակ խաղողով և այլն, այժմ գիւղացին իր նեղ բողբենքում հարկերից, կոո ու բէգառից ազատուելու համար գիմելով վաշխառուին՝ փոխանակ սոկոսով և բարաթով փող վերցնելու, ամիսներ առաջ, գլխաւորապէս գարնան, ծախում է իր ապագայ բերքը—գարին, ցորենը, խաղողը, բամբակը, մի այնպիսի գնով, որ երևակայել չի կարելի: Բերքը առատ կը լինի արդեօք, թէ պակաս, գները էժան կը լինեն, թէ թանկ, այսպիսի հաշիւների մէջ մասնելու բոլորովին կարիք չը կայ, այդպիսի հեռաւոր հաշիւներ անմատչելի են գիւղացուն, իսկ հեռատես վաշխառուն այդ բոլորը չափել—ձեկուց յետոյ ինքր որոշում է մթերքի գինը և սկսում է բաժանել կարօտ գիւղացիներին այսպէս անուանուած բամբակի, խաղողի, ցորենի, գարու փող և այլն:

Օրինակ, կորիզով բամբակի փող վերցնող գիւղացին պարտաւորուում է տալ իր ժամանակին պուղը 2 բուբլով, յաճախ զրանից էլ պակաս գնով: Երեք պուղ կորիզով բամբակից ստացուում է մի պուղ մաքուրը, այլ խօսքով բամբակի պուղը գնում են 6 բուբլ., այն ինչ վաճառուում է 9 ր.—10 ր. մինչև անգամ 11 ր.:—ով: Խաղողը գնում են՝ 12—10 ր., նոյն իսկ 8 բուբլով խալվարը. մինչդեռ այդեկութիւն 15—16 ր. պակաս խաղող չի կարելի ամենել: Այսպէս էլ ցորեն, գարի և այլն: Ուրեմն 5—6 ամիսների սոկոսը հաւասար է լինում գրամագլխին: Ահա

երկրագործ դասին այս քայքայող գրութիւնից սղատելու համար պէտք է օգնութեան հասնել նախ գրամական փոխառութեամբ չափաւոր տոկոսով՝ և ապա միջերջների ժամանակ միջնորդ հանդիսանալ վաճառել օրուայ մաղանդով զիւզացուրերը:

Ահա այն նպատակը, որը ընտրել է Իզդիրում կազմուող ընկերութիւնը. զովելի և միանդամայն նպատակայա՛մար ծրարագիր:

Ընկերութիւնների չորրորդ տեսակը, որը դեռևս գտնուում է ծրագրների չրջանում, վերաբերում է համեմատաբար խոշոր, այն է գիւղատնտեսական և արդիւնաբերական ձեռնարկութիւններին: Այսպիսի ձեռնարկութիւնը որքան էլ դժուարին և մեծ կապիտալ ու ձեռնհասութիւն պահանջող գործ լինի, այնուամենայնիւ նա շատ կարևոր է մեր դեռևս բերքերով և արդիւնարկութիւններով աղքատ գաւառների համար՝ մանուսանդ այն տեսակէտից, որ չնորհիւ երկաթուղու՝ արդէն մուտք են գործում մեր երկիրը օտար կապիտալիստներ և նրանք շուտ թէ ուշ իրանց ձեռքը անցկացնելու և շահագործելու են մեր ստղաբեր հողերը իրանց արդիւնաբերութիւններով:

Հաւաքական կապիտալով կարելի է ջուր մատակարարել հազարաւոր դեսեսաին տարածութիւն պարունակող Սարգարաբատի և Սադարակի անապատներին, որոնք ընդունակ են ոսկի արտադրելու:

Գինեգործութիւնը կարող էր արդիւնաբերական մի խոշոր ճիւղ լինել:

Պարտիզպանութիւնը և առհասարակ պտուղների մշակումը կարելի էր այժմեան ընկած գրութիւնից մի ծաղկած գրութեան հասցնել:

Ձիթապտուղներից և նոյն իսկ բամբակի կորիզից կարելի է լաւ իւղեր պատրաստել:

Տնայնագործութիւնը, մանաւանդ գորդագործութիւնը շատ աւելի ընդարձակ չափեր կ'ընդունէր, քան այժմ:

Ինչպէս ամեն մի գործ, այնպէս և ընկերակցութիւնները ի հարկէ՝ կ'ունենան և անաջողութիւններ: Այդպէս երկու տարի առաջ Երևանում կազմուած Էկոնոմիա ընկերութիւնը վեասներից բաց թողեց մի տխուր յիշատակ: Մեզրիի սպառող ընկերութիւնը՝ որքան լսել ենք, անաջողութեան մէջ է: Մի թեթիւ փորձ երկու տարի առաջ տեղի ունեցաւ Նոր-Բայազէղում, որը սակայն անաջող անցաւ: Մի խումբ մարդիկ մի որոշ գումար վեր գալով՝ բացին գորդագործութեան մի արհեստանոց: Ենթադրած վաստակից զատ՝ նպատակ

էին գրել ոչխարի բրդով հարուստ այդ շրջանում զարդացնել
գորգագործութիւնը: Սակայն արհեստանոց կռաւարող մասնա-
դէա Մաղբեցի այէա մի պարսիկ կին աշակերտուհիների հետ
վարուել չը կարողացաւ, միւս կողմից գործերի վաճառման հա-
մար չուկայ չը կար, և մի երկուջաննալաստ պայմաններ սառցը-
րին ձեռնարկողներին, և սկսած դեղեցիկ գործը դադարեց դեռևս
սկզբնական շրջանում:

Օրդուբադում 1902 թւականին օրդուբադցի Հաջի-Մահմէդ-
Ղուլի Միրզաբէգովի նախաձեռնութեամբ բացուել է մի գոր-
ծարան—ապրելումի թելերից զանազան գործուածքներ պատ-
րաստելու: Օրեկան պատրաստուում է 50 արչին գործուածք:
Այդ փորձը ցոյց է տալիս, որ անայնագործութեան այդ ճիւղն
ևս ընկերակցութիւնների շնորհիւ կարող է զարգանալ մեղա-
նում:

Ա.-Դ.Ս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մոյրեցեաղ մամուլի վսակաւոր դերը.—Ռուս մացիոնալիս-ակսիստիսներ.—Քիչիւնէի հրեական շարժը.—Նացիոնալիս-ակսիստիս անենասարածուած ոռուսաց քերթի կաշառակերութիւնը.—„Новое Время“-ի աջողութիւնը.—„Русская Мисль“ ամսագրի վաճառման հարցը եւ նրա խիսական խնրագրի դուրքիւնը.—Փուրթերէն յեզուով լոյս տեսնող «Ըսրթը Ռուս» քերթը.—Կրօնական եւ մշաւոր կապ.—Միջնակարգ դպրոցների մասին որոշում.—Նոր շեզուների գործնական պարսպմունքներ միջնակարգ ուսումնարաններում.—„Кавказь“—ը Սոչիի դէպքի մասին.—„Правит. Вѣстн.“—ը Պեւ. իգ. քժ. Ինսիսուի յուզմունքների մասին.—Պ. պ. Ա. Մանրաշեանի եւ Մ. Արամեանի դրամական նուէրները.—„Правит. Вѣст.“ Քիչիւնէի ակարգութիւնների մասին.—Բարձրագոյն հրամաններ.—Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ.—Պաշտօնից հեռացրուած ֆալսեագրուիս.—Նախկին ոսիկակապէս Չափրովի դադարաւորումը:

Մամուլը հասարակական-քաղաքական կեանքում երկասյրի սրի դեր է կատարում. մեծ բարիքների հետ նա կարողանում է և մեծագոյն չարիքների պատճառ լինել, մանաւանդ երբ հանգամանքները նպաստում են մոլորեցնող մամուլին ծածկուել «հայրենիքի միակ հարադատ զաւակներէ» և «ուղղափառ կրօնի պաշտպաններէ» զիմակի տակ: Սխտեմատիկաբար կեղծելով ճշմարտութիւնը, ստեր և զրպարտութիւններ տարածելով իրանց գրական հակաուսուցիչների գէմ, ստութիւն ներշնչելով դէպի նոյն պետութեան օրէնքների տակ ապրող այլազգիները—այդ նեղ ազգասէրները կամ չովինիսաները, որ նոյնն է իէ նացիոնալիստները, բոլոր երկրներում հանդիսանում են յետադիմութեան և անարդարութեան ջատագովներ: Աւելի վտանգաւոր է գտնում նրանց գործունէութիւնը, երբ պետութեան մէջ գոյութիւն ունեցող կարգերի զօրութեամբ հասարակական կարծիքը զեկավարող գեր չէ կատարում և նախաձեռնութիւն չ'ունի օրէնսդրական-վարչական գործերում: Այդ հանգամանքներում աւելի դժուար է լինում մաքառել մամուլի վնասակար ազդե-

ցութիւնները գէտ: Եւ ահա օրէցօր, կաթիլ-կաթիլ թունաւորում են իրանց գրուածքներով անարդարութեան և խաւարի ներկայացուցիչները տգէտ ու նախապաշարուած ամբողի մտածողութիւնը, աւելի ևս խոր կերպով արմատացնելով նրա մէջ հին գարեկից մնացած անմիտ նախապաշարմունքները:

Մի այդպիսի ցուալի միջնադարեան նախապաշարմունք է բրիստոնեաների վերաբերմունքը դէպի հրէաները: Տգէտ ամբօխը ի միջի այլոց հազար ու մի առասպելներ է պատմում այն մասին, թէ հրէաները գողանում են քրիստոնեայ մանուկներին և զրանց արիւնով ըստարջ պատրաստում... Եւ ահա դանոււմ են մամուլի դործիչներ, սրնք տարիներ շարունակ զրգոում են ամբօխը այդ ընդունակ և հալածուած ցեղի գէտ: Ռուսաստանի մայրաքաղաքների թերթերից հակահրէական պրոպագանդով հռչակուած են „Новое Время“, „Свѣтъ“ Պետերբուրգում, և „Московскія Вѣдомости“, „Московскій Листокъ“ Մոսկուայում, ամսագրներից՝ „Русскій Вѣстникъ“ (Վելիչկօի): Յաւալին այն է, որ ձրի փողովրդական գրագորան-ընթերցարաններում թողարտուած են հէնց այդ թերթերը... Գաւառական թերթերից Բեսարաբիայում ամենատարածուած լրագիրն է „Бессарабенецъ“, որի հրատարակիչ-խմբագիր Կրուչեւանը մի կատաղի հակահրէական է: Այդ պարոնը կարող է իր անձը դասել պ. պ. Սուվորինի, Կոմարովի, Գրինգմուտի և Վելիչկօի՝ այդ փառաւոր թթու աղգասէրների և օտարակերների շարքում:

Հինգ տարի շարունակ իր թերթի մէջ Կրուչեւանը գրողում էր ուղղափառներին հրէաների գէտ, և ահա այս տարուայ Ջատկական օձներին նա և նրա հետ ամբողջ աշխարհը տեսան այդ զգուելի պրոպագանդայի սոսկալի հետեանքները:

Միւրոյ և հեղութեան Ուսուցիչ Քրիստոսի յարութեան օձները Քիչինեւի հրէաների համար դառան չարչարանքների և ջարդի սոսկալի օրեր, ուղղափառ ռուս ամբօխը մի շարք քսամնելի բարբարոսութիւններ կատարեց իր համաքաղաքացի հրէաների դիմին: Ականատեսները պատմում են զարհուրելի ֆակտեր:

Չարդից յետոյ Քիչինեւը այնպիսի տեւր էր ստացել, որ կարծես այդ քաղաքը թշնամու աւերումների լինէր մասնուած. համարեա բոլոր հրէական տներն ու խանութները, թէ քաղաքի կենտրոնում և թէ ծայրերում, քարուքանդ են արուած, աւարառութեան ենթարկուած: Չեն խնայել նաև քաղաքից դուրս գտնուած հրէական այգիները և ամառանոցները: Փողոցներն ու կառէրները ծածկուած են բարձերից և զօշակներից թափուած փետուրներով: Աւերմունքի են ենթարկուել հրէական սինագոգ-

ները, ուր մոլեզնած ֆանատիկոսները չեն յարգել նոյնիսկ ս. գրքերը:

Զարգից փնատուել են զլիաւորապէս ազրատ հրէաները: Վնասը միլլիոններով է հաշւում: Զարգողները կահկարասիքի կտորներով և մահակներով հարուածներ են եղել հասցնում, բնտրելով անպաշտպան հրէաների խեղճ գլուխները: Սպանուած են հրէաներից 45 հազի, հիւանդանոցում անյոյս դրութեան մէջ պառկած են 60 հազի և վիրաւորուած են մի քանի հարիւր: Պատմում են, թէ կատաղած ուղղափառները հրէաներին պցում էին երրորդ յարկից փողոցների սալայատակների վրայ: Եղել են և կանանց բռնաբարելու գէպեր...

Երեք օր շարունակ Քիչինեւի փողոցներում շրջում էին ջարդողները, բաժանուելով 10—20 հազուց բազկացած խմբերի, որոնց հետևում էր հետաքրքրութեան թաղմութիւն: Ասում են, որ այդ հանգիսակահները, որոնց մէջ և «ինտելլիգենաներ», խրախուսում էին այդ բարբարոսութիւնների հեղինակներին: «Русс. Вѣд.», С.-Петербург. Вѣд.» և «Новости» լրագրների թղթակիցները, ինչպէս և Քիչինեւի քաղաքային Դուման, վիսյում են, որ տեղական պոլիցիան իրան շատ թոյլ էր պահում այդ անկարգութիւնների ժամանակ: Դեռ Զատիկից երկու շաբաթ առաջ քաղաքում յամառութեամբ լուրեր էին պատում «ջնուղներին ջարդելու» նախապատրաստումների մասին: «Кіевлянинъ» թերթը ասում է. «Բոլորովին անհասկանալի են երևում տեղական իշխանութիւնների անզօրութիւնը և անկարգադիր վարմունքը»: «Русское Слово»-ի ասելով՝ «Քիչինեւի Դուման իր արտակարգ ժողովում միաձայն որոշեց դարձնել ներքին դործոց մինիստրի ուշադրութիւնը տեղական պոլիցիայի թոյլ դործունէութեան վրայ և զօրեղացնել պոլիցիական վերահսկողութիւնը ապագայում»:

Կրուչեւանները այժմ կարող են հրճուել իրանց քարոզների փայլուն հետևանքներով: Ասենք՝ այդ ախլի պարոնները, իրանց ներկայացուցիչ Սուվորինի նման գիտնէ ճարպիկ կերպով դուրս պրծնել անախորժ գրութիւններից, թէև ոչ միշտ միատեսակ աջողութեամբ: Այգպէս, Սուվորինի կամակատար Բուլդակովը, որ անցեալ տարուայ վերջում մի արշաւանք էր սկսել «Новое Время»-ի մէջ՝ բաղմաթիւ թերթերի հրատարակիչ Լամմի դէմ, այժմ լուրջ կերպով մեղադրուած է ուղղակի կաշառակերութեան մէջ: «Новое Время»-ի խմբագրութեան վրայ մի շարք նման մեղադրանքներ են սկսել տեղալ ամեն կողմից... Այդ լրագրի աշխատակիցներից մէկը, պ. Չերմանը, այժմ հեռացուել է խմբագրութիւնից, որովհետև համարձակուել է երևան

հանել պ. խմբագրի արարքները: Բուլղակովը իրան արդարա-
ցրնելու համար այժմ կեղտ է քսում իր աշխատակիցներից մի
քանիսի վրայ: Խմբագրութիւնից արտաքսուած Չերմանը իր
պատիւը վերականգնելու համար այլ պէնք չի գտել, բայցի շուն
ծեծելու մտրակից... Եւ մարտի 15-ին «Новое Время»-ի խմբ-
ագրատան առաջ տեղի է ունենում մտրակով մենամարտու-
թիւն, սուրուզմտոց խմբագիր Բուլղակովի ու Չերմանի մէջ...

Չը նայած այդ ըտոյր սկանդալներին, Սոււվորինը և իր հետե-
ւողները շարունակում են մեծ աջողութեամբ իրանց նացիոնա-
լիստական—անախեմիտական միասխան: Իզուր չէ Ալեքսէյ Սոււվո-
րինը իր կեանքի երկար տարիների փորձով մօտից ուսումնասի-
րել ամբսխի հողերանութիւնը, որով աջողութիւնը ամեն ինչ մօ-
ռացնել է տալիս. ով է հարցնում, թէ ինչ ճանապարհով ես
նիւթական այժ ձեռք բերել: Ծատ ճարպիկ մարդ է Սոււվորինը.
գաւառական ուսումնարանի այդ նախկին ուսուցիչը և զանա-
զան թերթերի գաւառական թղթակիցը յետոյ գամնում է մայ-
րաքաղաքի մի տարածուած թերթի սրամիտ ֆելիետոնիստ ու
պամֆլետիստ: Իսկ 1876 թւականից ձեռք բերելով «Новое
Время»-ն նա թողնում է և՛ չափաւոր լիբերալութիւնը ու կամայ-
կամայ գամնում հզօր քամիների ուղղութեամբ տատանուող
մի եզեզն, որ զիտէ հանդամանքներից և ամբոխի նախապաշար-
մունքներից չահուել. թթու ազգասիրութիւնն ու օտարակերու-
թիւնը ընդհանրապէս և հակահրէականութիւնը մասնաւորա-
պէս գամնում են նրա ճարպիկ զրական գեշեֆաների առարկան:
Հետեանքը նիւթական կողմից փառաւոր էր. «Новое Время»-ն
այժմ ամենատարածուած թերթն է. նա ունի 60 հազար բաժա-
նորդ...

Երբէք այսպիսի նիւթական աջողութեան ի հարկէ չէր
կարող հասնել Վիկտոր Գոլցեւի նման մի հրապարակախօս,
չը նայած իր զիտական լուրջ պատրաստութեան (նախկին պը-
րոֆէսսոր) և լայն մարդասիրական ու ազատասիրական սկըզ-
բունքներով սոգորուած հրապարակախօսութեան: Նա 20 տարի
շարունակ ղեկավարել է «Русская Мысль» ամսագիրը: Այժմ,
ինչպէս երևում է, Վ. Գոլցեւը ստիպուած պէտք է լինի թողնել
այն ասպարէզը, որին նա նուիրուած էր իր ամբողջ էութեամբ,
մոռանալով հասարակական ծառայութեան մէջ իր անձնական
չահերը:

«Նշմարւում է մի զրական աղէտ,—գրում են «С.-Пет.
Вѣд.» թերթին Մոսկուայից—ծախւում է «Русская Мысль»
ամսագիրը: Այդ վաճառումը արդէն ոչ պիտի համար գաղտնիք չէ,
և գործի շահի անսակէտից ցանկալի է, որ այդ բանի մասին

որքան կարելի է շատ անձինք իմանան Ամսագրի հրատարակիչ-խմբագիր Լավրովին, որ վճուել է հրատարակութիւնը ծախել, արգէն արուել են մի քանի լուրջ առաջարկութիւններ, ի միջի այլոց Մոսկուայի մի խումբ ժուրնալիստների կողմից, որոնք ցանկանում են «Русская Мысль»-ը հրատարակել պայերով: Այդ առաջարկութիւնը, ի հարկէ, շատ լաւ է, սակայն հազիւ թէ նա ժպտայ նրանց, որոնք զիտեն ամսագրի ներքին կողմը: Ոչ ոքի համար դադանիք չէ, որ «Р. М.»-ի իրական խմբագիրը Վ. Ա. Գոլցեն է: Նա վարում էր օրգանը 20 ամբի՝ լինելով ամսագրի ներկայացուցիչ նաև մամուլի գործերի գլխաւոր վարչութեան առաջ: «Рус. Мыс.» թէ իր նիւթական է թէ բարոյական աջողութեամբ ամբողջապէս պարտական է Վ. Ա. Գոլցենին, որ կարողացաւ անսպասելի շուրջը միջնորդ ստեղծել: Ի հարկէ, ամսագրի ուրիշի ձեռք սնցնելը կարող է խմբագրութիւնից Գոլցեի հեռանալու պատճառ լինել: Ասում են, թէ «նախագրւով այդպիսի հետեանք», Վ. Ա. Գոլցեւը երգուեալ հաւատարմատար է գրուել: Պէտք է ցանկալ, որ այդ լուրերը չ'արդարանան, և որ ամսագիրը մնար նրա ձեռքում, ու իրապէս նրան ստեղծեց և գրոչանոց վարձատրութեամբ՝ բառացի հասկացողութեամբ՝ առանց կոայած մէջքը ուղղելու՝ աշխատելով, գրեց այդ ամսագիրը մամուլի չիտակ օրգանի պատուանդանի վրայ»:

Բնականաբար, ներկայ հասարակական պայմաններում գրական գործիչները, նոյնիսկ ուսական կեանքում, կատարելով այնպիսի մաշող և պատասխանատու աշխատանք, ինչպիսի է իրական խմբագրի պաշտօնը, չի կարող յոյս ունենալ այնպիսի նիւթական ապահովութիւն ձեռք բերելու վրայ, ինչպէս հետեւութեամբ այդ իրադրութեամբ է ուսու պեղարուեստական խոշոր տաղանդների կեանքում,—բայց և այնուամենայնիւ սարսափելի ապերախտութիւն կը լինի, եթէ իսկապէս ստիպուած լինի գրական ասպարիզում իր երիտասարդ աշխուր սպառած մարտնչողը իր կեանքի վերջալուսի մօտ լող հայել ինգրի համար, աշխատել ոչ իր ձգտումներին համապատասխան ասպարիզում: Ցաւալի իրականութիւն, որ Սուվորիններին զարձնում է միլիոնատէր, իսկ Գոլցեններին ընդ միշտ թողնում է ինտելիգենտ պրոլետարի գերում...:

Այդպիսի հեռանկար միշտ պէտք է աչքի առաջ ունենայ հասարակական գործիչը և մեղանում... Բնականաբար աւելի ևս ծանր պէտք է լինի մամուլի աշխատատեղերի վիճակը մեղանից անպատկուտութեամբ ստոր թուրքերի մէջ: Այդ երկի լաւ գիտէ Թիֆլիսում մարտի 30-ից լոյս տեսնող թուրքական «Շարքի-Ռուս» թերթի հրատարակիչ-խմբագիր Մոհամմէզ Շախ-

տախտինսկին, որ որոշ անուն ունի և՛ իբրև տեղական ուսւթերթի աշխատակից: Խօսել այն մեծ կուլտուրական նշանակութեան մասին, որ պէտք է ունենայ այդ միակ թուրքական լըրագիրը թէ թուրքերի մտաւոր առաջագիմութիւն և թէ առհասարակ ամբողջ Անդրկովկասի համար, որի ազգաբնակչութեան ամենատուար, միևնոյն ժամանակ և ամենախտուար մասը թուրքն է—նշանակում է կրկնել մի անվլուծելի ճշմարտութիւն:

Մեզ հարկան թուրքերը մինչև այժմ իրար հետ կապուած էին կրօնական նեղ կապերով, այժմ աւելանում է նրանց կեանքում և մի նոր մտաւոր զործօն, որ ունի յատկութիւն բնագործակելու նեղ կրօնական կապը, դարձնելով նրան միջազգային, համապետական և համաշխարհային, մամուլն է, որ իրարից կտրուած նեղ ազգային—կրօնական լճակները միացնում է իրար հետ և դարձնում համամարդկային կեանքի ովկիանոս, մինչդեռ ամեն կողմից կտրուած, լսկ իր կեանքով ապրող լճակը հեշտութեամբ ներխուժ է և դառնում ճահիճ, այդ վտանգից ազատում է նրան չիտակ ուղղութիւն և լայն հորիզոններ ունեցող մամուլը, որ ընդունակ է միացնել առանձին լճակները և ներխուժից ազատ պահել զրանց նաև անհատական կեանքը...

Լ. Ս.

25 ապր.

«Правительство. Вѣстникъ»-ում հրատարակուած են ժողովրդական լուսաւորութեան մինիստրին Բարձրագոյն տուած հրահանգները, որոնք պէտք է հիմք ծառայեն միջնակարգ զբարոցի վերակազմութեան վերաբերեալ օրէնսդրական աշխատանքների համար: 1) Գիմնագիտները պահպանում են ութ դասարանեան կազմը, նրանց մէջ աւանդում են երկու հին լեզուներն ևս, բայց յունարէնի դասաւանդութիւնը նրանցից շատերի մէջ անպարտադիր կը լինի: Գիմնագիտական դասընթացի իւրացումը արտօնութիւն է տալիս մտնելու համալսարանները: 2) Բէալական դպրոցները, որոնց ուսման ծրագիրը պէտք է ենթարկուի վերաբնութեան, պահում են իրանց վեց հիմնական և եօթներորդ լրացուցիչ դասարանները: Այս վերջին դասարանըն աւարտելը իրաւունք է տալիս մտնելու բարձրագոյն տեխնիկական ուսումնարանները: 3) Բացի գիմնագիտներից և բէալական ուսումնարաններից՝ կը կազմակերպուեն ուրիշ միջնակարգ դպրոցներ ամբողջացրած հանրակրթական ուսման ծրագրերով՝ բաղկացած վեց դասարաններից: Այս ուսումնարաններում ուսման աւարտումը իրաւունք է տալիս ծառայութեան մտնելու

լու նահանգներում: 4) Լայն զարգացումն պէտք է ստանայ տեխնիկական և պրոֆեսիոնալ միջնակարգ կրթութիւնը, որ պէտք է գոհացումն սայ կեանքի գործնական պահանջներին: 5) Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնուի միջոցներ գրանելու վրայ, որոնցով ամեն տեսակ ուսումնարանների կրօնական—բարոյական և առհասարակ կրթիչ ազդեցութիւնը ուսանողների վրայ բարձրացնելու, նոյնպէս և ամրապնդելու նրանց մէջ անձնութիւն գէպի ուսական պետութիւնը և ժողովուրդը: 6) Կրթական գործը ըստ հնարաւորութեան լիովին իրականացնելու համար պէտք է հիմնուեն պանսիոններ, որոնց մէջ կարողանային համապատասխան ղեկավարութիւն գտնել որ և է քաղաքի որոշ խմբի ուսումնարանների սաները: 7) Համապատասխան այն պահանջներին, որոնք անոււմ են վերակազմուող միջնակարգ ուսումնարաններից, պէտք է անյապազ միջոցներ ձեռք առնուեն աւելի նպատակայարմար նախապատրաստութիւն տալու այդ ուսումնարանների ուսուցիչներին:

«Правительственный Вѣстникъ» լրագրի № 72-ի մէջ մարտի 30-ից ապուած է. «Պետերբուրգի բժշկական իգական ինստիտուտում արգէն ներկայ տարուայ փետրուարի վերջում երեաց մի փոքր յուզմունք ունկնդրուհիների միջև, որին առիթ էր տուել այն կանոնների նախագծի յայտարարութիւնը, որը որոշում է փոխադրական քննութիւնների կարգը ինստիտուտում: Այդ յուզմունքը աւելի ևս սաստկանալով այն տեղը հասաւ, որ մարտի 10-ին, ժամ 5 կէսօրից յետոյ, կազմուեց անատոմիական առդիտորիայում մօտ վեց հարիւր ունկնդրուհիների մի ապօրինի ժողով: Ինստիտուտի ղերեկտորի, և ապա ուսումնարանական շրջանի հոգաբարձուի յորդորները աջողութիւն չ'ունեցան, և ժողովը շարունակուեց երեք ժամ: Ի նկատի ունենալով ունկնդրուհիների նշանաւոր թւի յամառութիւնը, որոնք հաւարուել էին բողոքելու նպատակով այն կանոնների գործադրութեան դէմ, որ մշակել էր ինստիտուտի խորհուրդը և ղեկ մարտի 3-ին հաստատել էր ժովովրդական լուսաւորութեան մինխտրութիւնը, բոլոր ղիտական և դասատուական զբաղմունքները մարտի 11-ից դադարեցրուեցին մինչև առանձին կարգադրութիւն: Ժողովին մասնակցող նկատուածները ենթարկուեցին պրոֆեսսորական կարգապահական դատին: Գործը քննելուց յետոյ դատարանը պատժի ենթարկեց 345 ունկնդրուհիների, որոնցից 28-ը դատապարտուեցին զանազան պատիժների՝ նկատողութիւնից բարձր, բայց որոնք չեն հասնում ինստիտուտից արձակուելու աստիճանին, իսկ մնա-

ցած 317-ը—նկատողութեան: Աւելի յանցաւոր ճանաչուած 28 ունկնդրուհիներին ապա կանչեց ինստիտուտի զիրեկտորը պրոֆեսորական դատարանի դատաւճիռները լսելու համար. սակայն վերայիշեալ կատեղորիայի 28 ունկնդրուհիները զիրեկտորի առաջարկութեանը չ'ենթարկուեցին: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչը ունկնդրուհիներին այդպիսի վարմունքը համարելով ոչ միայն նոր, այն եւ կարգապահութեան դիտաւորեալ խախտումն, այլ և դեմոնստրատիւ արհամարհանք զԼպի պրոֆեսորական դատարանը, նոյնպէս և չկատուութիւն սրանից յետոյ եւ Էնթարկուելու օրինական կարգին, հարկաւոր համարեց մասամբ հեռացնել ինստիտուտից, մասամբ արձակել այնտեղից վերայիշեալ 28 ունկնդրուհիներին: Մարտի 27-ին պարապմունքները ինստիտուտում վերսկըսուեցին:

Պետերբուրգի համալսարանում կարգը խախտուած էր մարտի 18-ին, թէպէտ և պարապմունքները այդ օրը առհասարակ ընթանում էին անընդհատ: Վերայիշեալ թւին ուսանողներին մի խումբ, թւով մինչև 500 մարդ (Պետերբուրգի համալսարանի ուսանողների ընդհանուր թիւը մօտ 4000 է), ակներև առաջուց խմբուած, ցերեկուայ մօտ 12 ժամին մտաւ գլխաւոր դռների միջով և արագութեամբ լցնելով սանդուղքի ստիւարակը՝ կազմեց ապօրինի ժողով, որը անջուրկան պաշտօնականների պահանջներին՝ ցրուել—չ'ենթարկուեց: Դրանից յետոյ և՛ կած համալսարանի բէկտորը և ուսումնարանական շրջանի հոգաբարձուն իրուր աշխատում էին վերականգնել կարգը. ներանց յորդորներն ընդունուեցին չստիպանց կողմիտ և անքաղաքավարի բողոքներով: Երկու ժամ շարունակուող ժողովի մասնակցողների դատողութեան առարկաներն էին այն անկարգութիւնները, որոնք տեղի ունեցան մի քանի օր դրանից առաջ իրական բժշկական ինստիտուտում, նոյնպէս և ակադեմիական կեանքին կատարելապէս խորթ հարցեր: Այդ պատճառով 68 անձերի մասին, որոնց ներկայութեան վերաբերութեամբ ժողովին ցուցմունքներ կային, պրոֆեսորական կարգապահական դատարանում պատշաճաւոր քննութիւն նշանակուեց, իսկ զործի դատաստանական քննութեան կանոնաւոր ընթացքը ապահովելու համար, նոյնպէս և մարտի 18-ին ուսանողների անկարգութիւններին չը մասնակցողներին պաշտպանելու համար ալիտատորների աղբեցութիւնից, որոնք հետևեալ օրերը ամեն ջանք զործ կը զնէին նոր ապօրինի ժողովներ կազմելու համար, պարապմունքները համալսարանում ժամանակաւորապէս դադարեցրուեցին այնպէս, ինչպէս այդ տեղի ունե-

ցաւ իրզական բժշկական ինստիտուտում մարտի 10-ի ժողովից յետոյ: Պետերբուրգի համալսարանի կարգապահ դատարանը քննելով մի ամբողջ շարք նիստերում վերոյիշեալ 68 ուսանողների դործը և լսելով վկաների ցուցմունքները, նոյնպէս և այն մեղադրուողների բացատրութիւնները, որոնք ներկայացան դատարանին, որոշեց. 4 անձանց վերաբերմամբ դործը դադարեցնել՝ հիւանդութեան կամ իր ժամանակին դատաբան կանչելու ծանուցադիրը չը յանձնուելու պատճառով. 4 ուսանողներին ժողովին մասնակցելու մեղադրանքից արզարացնել, իսկ մնացած 60 հոգուն մեղաւոր ճանաչել այդ յանցանքի մէջ: Վերջինների թւից, աչքի առաջ ունենալով նրանց մեղաւորութեան աստիճանը, նրանց բացատրութիւնների անկեղծութիւնը դատարանում, նոյնպէս և ուրիշ հանգամանքներ, դատարանը դատաւարտեց 14 անձանց Պետերբուրգի համալսարանից հեռացնելուն առիշտ, բայց առանց զրկելու նրանց ուրիշ բարձրագոյն դպրոցները մտնելու իրաւունքից՝ համաձայն պատիժների կանոններին վերաբերեալ 7-րդ սլարազրաֆին, 21 անձանց դատաւարտեց այդ համալսարանից արձակելուն, այն է՝ 7 հոգուն մինչև 1903 թւի օգոստոսի 15-ը, 7 անձանց բարոյական պախարակման և ազատ ունկնդիրների կարգը փոխադրելուն, 4 հոգու ազատ ունկնդիրների կարգը փոխադրելուն, 12 անձանց յանդիմանութեան և 2 անձի՝ նկատողութեան: Այդ պատվճիւրը, ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կողմից հաստատուելուց յետոյ ի կատար է ածուած, և մարտի 28-ից նորից բացուած են համալսարանի զբաղարանը, դիւանատունը և մի քանի լաբորատորիաներ, նոյնպէս և սենեակները գիտական ընկերութիւնների համար: Ի նկատի ունենալով զատկական արձակուրդների մերձաւորութիւնը, որոնք այս տարի սկսուում են մարտի 30-ին, դասախօսութիւնների ընթերցումը չէ վերսկսուում պարապմունքների վերոյիշեալ ընդմիջումից յետոյ, բայց քննութիւնները կը կատարուեն համաձայն հաստատուած և իր ժամանակ յայտարարուած ցուցակի:

Վերջին տարիների ընթացքում, երբ համալսարանական կեանքի բնական ընթացքը ենթարկուում էր յաճախակի խախտումների, ուսումնարանական վարչութիւնը և վարչական իշխանութիւնները ուշադրութիւն դարձրին այն բանի վրայ, որ Պետերբուրգի Կայսերական համալսարանի չքաւոր ուսանողներին օգնող ընկերութեան վարչութեան տակ գտնուող ուսանողական ճաշարանը մի այնպիսի տեղ է, ուր ուսանող երիտասարդութիւնից ամենից աւելի անհանդիստ անձինք հաւաքուում են քննելու համար այսպէս անուանուած ուսանողական

գործադուլների, օրստրուկցիաների և այլն կաղմակերպութեան հարցերը, որի պատճառով այդ ճաշարանը ենթարկուում էր փակման: Ներկայումս ներքին գործերի մինիստրութեան տրամադրութեան տակ զանուոզ տեղեկութիւններով կատարելապէս ճիշդ ստուգուած է, որ ինչպէս 1899, 1900 և 1901 թւերին, նոյնպէս և 1902 և 1903 թւերին վերոյիշեալ ճաշարանում բայի խմբովին արդելուած երգեր երգելով կարգը խախտելուց, տեղի ունէին երիտասարդութեան առանձին խմբակների ժողովներ՝ քննելու համար ոչ միայն անկարգութիւններ կաղմակերպելու հարցերը համալսարանի պատերի մէջ, այլ և փողոցային ցոյցեր սարքել և այլն: Այդ ճաշարանում, չը նայելով այն բանին, որ նրա կանոններով իրաւունք չ'ունեն այցելել ճաշարանը այնպիսի անձինք, որոնք չեն պատկանում Պետերբուրգի համալսարանի ուսանողական կազմին, անարգել զայիս էին ուսանողական շրջանին օտար մարդիկ: Այդ ճաշարանում նոյնպէս կասկածելի անձանց միջև տեղի էին ունենում տեսակցութիւններ իրանց յանցաւոր գործունէութեան առարկաների առիթով: Նա վերջապէս ծառայում էր որպէս մի տեղ, ուր համարեա աշխարայ տարածուում էին և մինչև անգամ բարձր կարգացուում էին արդելուած հրատարակութիւնները: Ներկայ ժարտի 18-ին համալսարանում կայացած ժողովը, ինչպէս գործը քննելու ժամանակ պարզուեց, առաջուց կաղմակերպուած էր, և նրան մասնակցողների մեծամասնութիւնը ժողովին ևկաւ անմիջապէս ուսանողական ճաշարանից: Այդպիսով վերոյիշեալ ժողովի սարքելը վճռուած էր նախընթաց ժողովի մէջ ճաշարանում: Վերոյիշեալի հիման վրայ, նոյնպէս և ի նկատի առնելով այն, որ վերև նկարագրած ոչ ցանկալի երեոյթներով, որոնք տեղի էին ունենում առաջուց ուսանողական ճաշարանում, բուսական աղացուցում է Պետերբուրգի կայսերական համալսարանի չքաւոր ուսանողներին օգնող ընկերութեան կատարեալ անցորութիւնը ապահովելու համար կարգը ընկերութեան հսկողութեան տակ զանուոզ ուսանողական ճաշարանում, վերջինս ներքին գործերի մինիստրի և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարչի համաձայնութեամբ փակուած է»:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կամենալով նպաստել երոպական նոր լեզուների—Ֆրանսերէնի, գերմաներէնի և անգլիերէնի—առաջադիմութեան գործին միջնակարգ դպրոցներում, առաջարկել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին կարգադրել, որ աշակերտները պա-

րապեն այդ լեզուներով նաև այն ժամանակ, երբ ազատ են միւս դասերից: Պարապմունքները այդ ազատ ժամերին չը պէտք է լինեն պարտաւորական, այլ կամաւոր. չը պէտք է գործածուեն դասադրքեր կամ այլ գրաւոր աշխատանքներ. դասատու ուսուցիչը պէտք է աշխատի զբաղեցնել աշակերտներին նոր լեզուների գործնական ուսումնասիրութեամբ՝ խօսակցելով նրանց հետ կարգացած զանազան գրքերի բովանդակութեան մասին: Նոր լեզուների այս կամաւոր պարապմունքները կը մտցնուեն միջնակարգ դպրոցներում 1903—04 ուսումնական տարուայ սկզբից: Նրանց կը մասնակցեն բարձր դասարանների աշակերտները՝ սկսած 4-րորդ դասարանի աշակերտներից, իւրօքանչիւր աշակերտ, իբրև վարձատրութիւն պարապող ուսուցչին, կը վճարէ 20 կոպէկ իւրաքանչիւր ժամի համար:

«КАВКАЗЪ» լրագրի պաշտօնական բաժնուժ տպագրուած է հետևեալը. «Սև-ծովեան նահանգի Սոչի աւանում մարտի 17 զիշերը բանտի չինութեան մէջ մեռաւ «3-я Рота» զիւղի բնակիչ Սվինոստրիզին, որ ձերբակալուած էր նախընթաց օրը հարբած գրութեան մէջ: Գաւառումստի գլխաւորը և չրջանային բժիշկը քննեցին զիսկը, և բժիշկը գտաւ, որ կալանաւորուածը մեռել է հարբեցութիւնից: Մօտ 12 ժամին մօտ 100 մարդուց բաղկացած ամբօխը (սրոնց թւում և շատ հարբածներ) կանդնեցրեց Սվինոստրիզինի զիսկը, որ տանում էին բանտից չրջանային բժիշկի կարգադրութեամբ անդամահատելու: Ամբօխը յայտնեց Սոչիի չրջանի կառավարչին, որ չտապել էր այդտեղ, թէ երկիւղ է կրում, որ Սվինոստրիզինի թաղումն առանց անդամահատութեան կատարուի, որովհետև վերջինը սպանուած է ոստիկանների ձեռքով բանտի չինութեան մէջ: Չը նայելով կառավարչի համոզեցուցիչ խօսքերին և բացատրութիւններին, թէ թաղումը չէ կարող տեղի ունենալ առանց անդամահատութեան, ամբօխը զիմեց դէպի բանտ, ծեծեց ոստիկաններին, քարերով ջարդեց բանտի չինութեան թոյլ փակահրներն ու դռները և ազատեց բոլոր կալանաւորներին: Ամբօխի միջից գցուած մի քար զիպաւ չրջանի կառավարչի ձեռին, միւսը Փոթիի գնդի մի պորուչիկի պարանոցին, իսկ մի ոստիկան սաստիկ ծեծուեց: Վրայ հասած զօրախումբը ցրեց ամբօխին: Բանտի մէջ եղած կալանաւորներից փախան միայն 8 հոգի ոչ նշանաւոր յանցաւորներից: Բժիշկների ձեռքով Սվինոստրիզինի մարմինը անդամա-

հասելուց երկաց, որ նրա մահը առաջացել է այն ձեռից, որ նրան ենթարկել են ձերբակալելու ժամանակ, իսկ ալիոսոլից թունաւորման հետքեր չը գտնուեցին: Յանցաւոր օտարականները կ'ենթարկուեն դատի, իսկ ինչ վերաբերում է գաւառամասի գլխաւորին, որի իշխանութեան տակ գտնուում է բանտը, ինչպէս նաև Սվինստորիզինի զիակը քննող շրջանային բժշկի յանցաւորութեան աւտիճանին, այդ բանը կ'որոշուի այն դատական քննութիւնից յետոյ, որ կատարուում է այժմ Եկատերինոգրի նահանգական գատարանի սլոնիւրորի անձնական մասնակցութեամբ. իսկ մինչ այդ ժամանակ՝ յիշուած պաշտօնատար անձինք հետաքրքուած են իրանց պաշտօններից: Պատասխանատուութեան կ'ենթարկուեն նաև այն յանցաւորներն ամբոխի միջից, որոնք թոյլ են տուել իրանց անկարգութիւններ գործել և ինքնակամ կարգադրութիւններ անել»:

Մարտի 26-ին Վեհախառ Կաթողիկոսը այցելել է ս. Ս. Մանթաշեանին և մեծարուել այդ նշանաւոր հայ հարուստի տանը: Տանտէրը իր բարձր Հիւրին յայտնել է, թէ իր վրայ է յանձն առնում Էջմիածնի տաճարի վերաշինութեան ամբողջ ծախսը, որ մօտ 150 հազար թուրքի է հաշոււմ:

Էրազմներում տպուած էր, որ նոյն հարուստը խստացել է Կովկասի պոլիտեխնիկայի համար 900 հազար թ.:

Ապրիլի 14-ին կայացաւ Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի (գումա) առաջին նիստը նախագահութեամբ նոր քաղաքապետին իշխան Ն. Վ. Արզումանսկից—Դուլգորուկովի: Այդ նիստում քաղաքապետը յայտնեց մի այլ հայ հարուստի՝ Միքայէլ Արամեանցի նուիրատուութեան մասին. Արամեանցը նուիրում է Թիֆլիսի քաղաքային վարչութեան 100 հազար թուրքի այն պայմանով, որ այդ գումարով քաղաքային հիւանդանոց բացուի:

Թիֆլիսի քաղաքային ուսարական իր նիստերից մէկում քննելով Մ. Արամեանի նուիրած 100,000 թուրքու գործադրութեան հարցը, որոշեց. — 1) Արամեանի նուիրած 100,000 թուրքին, որից 25,000 թուրքի արդէն ստացուած է, ընդունել և յանձնել Թիֆլիսի հասարակական ինքնաւարտութեան կարգադրութեանը. 2) այդ նուէրը յատկացնել հիւանդանոցի շինութեան գործին, համաձայն նուիրատուի ցանկութեան, առայժմ բաց թողնելով այն հարցերը, թէ հիւանդանոցը որպիսի հիւանդների համար պէտք է լինի և որքան մահճակալ պէտք է զետեղէ իր մէջ, մինչև որ քաղաքային սանիտարական-բժշկական խորհուրդը

ներկայացնէ դումային իր դիտողութիւններն այդ մասին. 3) այս գումարով շինուելիք հիւանդանոցը անուանել Մ. Արամեանի անունով և կախել նրա պատկերը հիւանդանոցի դահլիճներից մէկում. 4) ընտրել մի պատգամաւորութիւն, որ բաղկացած լինի ուպրաւայի ամբողջ կազմից և 5) ձայնաւորներից, որը քաղաքագլխի առաջնորդութեամբ ներկայանայ նուիրատու Արամեանին՝ շնորհակալութիւն յայտնելու նրան թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան կողմից այն առատաձևուն նուիրատութեան համար, որ միջոց է տալիս քաղաքին հիւանդների բժշկութեան գործը դնելու աւելի ամուր հիմքերի վրայ: Հիգչաբթի, ապրիլի 17-ին, այդ հարցը քննուեց և քաղաքային բժշկակական-սանիտարական խորհրդում, որ որոշեց Արամեանի նուիրած գումարով շինել հիւանդանոց բացառապէս ներքին հիւանդութիւններ ունեցողների համար:

«Правительственный Вѣстникъ»-ում տպագրուած է. «Ապրիլի 6-ին և 7-ին Գիշինեւում տեղական հրէական ազգաբնակութիւնը ենթարկուեց մի խումբ բանուորների յարձակման: Անկարգութիւնները սկսուեցին հրէաների խանութները և բնակարանները կողոպտելով և արագութեամբ ընդհանուր անկարգութիւնների բնաւորութիւն ստացան: Չը նայելով ոստիկանութեան, ապա նաև օգնութեան կանչուած զօրամասերի ջանքերին, քաղաքի մէջ ցրուած խողովարարները կոտորատում էին հրէաների բնակարանների ապակիները (պատահաբար ջարդուեցին նաև մի քանի քրիստոնեաների տների ապակիներ) և ոչնչացրնում ու կողոպտում էին նրանց զոյքը: Հետևեալ օրը վերսկսուած անկարգութիւնները, ուղղած կրկին հրէաների դէմ, չը նայելով զօրքերի ներկայութեան՝ սպառնական բնաւորութիւն ստացան, - տեղի ունեցան մի քանի խոշոր կոիւններ, որոնց ժամանակ գործ էին դրւում ոչ միայն քարեր ու փայտեր, այլ նաև երկաթէ նիղեր և ստրճանակներ: Հետևանքն այն եղաւ, որ սպանուեցին 25 մարդ, մօտ 75 հոգի լուրջ և մօտ 200 հոգի թեթի վէրքեր ստացան: Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ Գիշինեւ քաղաքը և նրա գաւառը յայտարարուած են որպէս անդեր, որ գտնւում են սաստիկացրած պաշտպանութեան տակ»:

Ապրիլի 16-ին տպուած է հետևեալ Բարձրագոյն Ուկազը. «Աւելի քան կէս դար առաջ, Մեր նախապապ Կայսր Նիկոլայ I-ի թագաւորութեան ժամանակ, հրատարակուած էր 1845 թւին քրէական և ուղղիչ պատիժների օրէնսդիրքը, որի հրատա-

րակութիւնից առաջ տեղի ունեցան երկարատև օրէնսդրական աշխատանքներ: Մեր Պապ Կայսր Ալէքսանդր II-ի թաղաւորութեան ժամանակ տեղի ունեցած արմատական վերանորոգութիւնները թարմացրին Ռուսաստանի պետական կենցաղի ամբողջ կազմը. այդ վերանորոգութիւնների ազդեցութեան տակ փոխուած պայմանները անհրաժեշտ դարձրին համապատասխան դարձնել նրանց հետ քրէական օրէնքները. այդ գործը, որ սկսուեց Կայսր Ալէքսանդր II-ի Արքայական նախաջուլումներին, Մեր անմոռանալի Մոտզ Կայսր Ալէքսանդր III-ի ինքնակալ կամքի համեմատ, յանձնուած էր մի առանձին յանձնաժողովի, որին հրամայուած էր զծագրել ծրագիր: Մենք չէինք դադարում հող տանելուց աւարտելու առաջնակարգ պետական նշանակութիւն ունեցող այդ աշխատանքը. այդ նկատումներով, յանձնաժողովի ընդարձակ աշխատանքները աւարտելուց յետոյ, Մենք հրամայեցինք պատժական օրէնսդրութեան նրա մշակած նախագիծը վարչութիւնների եզրակացութիւնների հետ միասին ենթարկել քննութեան նախ Պետական Խորհրդին կից առանձին խորհրդակցութեան մէջ, և ապա նրա միացեալ դեպարտամենտների առանձին ատեանում և նրա ընդհանուր ժողովի մէջ: Բարուոք համարելով հաստատել այդ կարգով կազմուած և քննուած քրէական կանոնադրութիւնը և ուղարկելով դա Կառավարչական Սենատը, հրամայում ենք պատշաճաւոր կարգադրութիւններ անել դրա հրատարակութեան համար և ապա գործադրել այն ժամանակամիջոցին, որ Մենք առանձնապէս դրա համար կը նշանակենք: Յուսայով, որ նոր քրէական օրէնքը, համակերպուած պետական և հասարակական կենցաղի ժամանակակից պայմաններին, կը նպաստէ քրէական դատավարութեան աջող կատարմանը, Մենք հաստատ հաւատ ունենք, որ այդ օրէնքը, բաժանելով արգելուածի և թոյլատրուածի շրջանը և դիմադրելով յանցաւոր փորձերին, կը ծառայէ քաղաքացիական կարգի խիստ պաշտպանութեանը և ժողովրդի մէջ օրինականութեան զգացմունքի ամրանալուն, որը պէտք է մշտական ղեկավարը լինի իւրաքանչիւրի համար՝ որպէս առանձին իր անձնական գործունէութեան շրջանում, նոյնպէս և դասակարգերի և հասարակութիւնների միացեալ կազմի մէջ»:—Իսկականի վրայ նորին Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրուած է. «Նիկողայոս»— Յարսկոյէ-Սելուում, 1903 թւի մարտի 22-ին:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ

Փինլանդիայի գեներալ-նահանգապետի անունով.

Մեր ֆինլանդական գեներալ-նահանգապետին.

Հող տանելով Մեր Փագաւորութեան սերտ պետական կապակցութեան մասին, Մենք նախապէս ձեռնարկ արեցինք միջոցներ միացնելու Ֆինլանդիայի Մեծ Իշխանութիւնը կայսրութեան հիմնական մասերի հետ, սակայն այդ միջոցների գործադրութիւնը Ֆինլանդիայի ազգաբնակչութեան մի մասի մէջ յանդուգն դիմադրութիւն առաջացրեց: Չարամիտ մարդիկ նպատակ ունենալով կառավարութեան դէմ յարուցանելու խաղաղ ազգաբնակչութիւնը, որ տրամադիր չէ հետեւելու նրանց խորհուրդներին, թոյլ տուին իրանց գործողութիւններ, որոնք խանգարեցին կեանքի անդորր ընթացքը, և նոյնիսկ կանգ չձառնելու բացարձակ բռնութիւն գործադրել դէպի իրանց պարտակութիւնները հաւատարիմ մնացած անձանց նկատմամբ: Սովորական հանգամանքներում այդպիսի գործողութիւններով խանգարուած կարգը կարող էր վերականգնուել յանցաւորներին դատաստանական պատասխանատւութեան ենթարկելով և ընդհանուր օրէնքների մէջ ցոյց տուած այլ միջոցներով: Սակայն այժմ այդ միջոցները անդործադրելի են, որովհետեւ մի քանի պաշտօնավար անձինք, մանաւանդ դատաստանական հիմնարկութիւնները, ոչ միայն չեն նպաստում հասարակական կարգի պահպանութեան, այլև ոչ սակաւ իրանք օրէնքի անհրճադանդութեան կորստարեւ օրինակ են ցոյց տալիս: Ցանկալով վերականգնել կարգը Ֆինլանդիայում և պաշտպանել օրինահնազանդ ժողովուրդը խտվարարների ազդեցութիւնից, Մենք բարուրդ համարեցինք ժամանակակերպապէս, երեք տարով, տալ Ֆինլանդական Մեծ Իշխանութեան բարձրագոյն պետական իշխանութիւններին առանձին լիազօրութիւններ՝ պետական կարգը և հասարակական անդորրութիւնը պահպանելու համար: Այդ լիազօրութիւնները թւում են այն որոշումների մէջ, որոնք Մեզանից հաստատուած են մարտի 20-ին (այս, 2-ին):

Հղելով Ձեզ այս որոշումը նպատակադարձար գործադրութեան՝ միաժամանակ անցետաձգելի պարտաւորութիւն ենք դրնում Մեր ֆինլանդական սինոդի վրայ՝ դատակազմութեան և դատավարութեան վերաբերեալ օրէնքների վերաքննութեան շուտափոյթ աւարտում:

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով
զձայրուած է:

«ՆԻԿՈՒԱՅ»

Ցարսկոյէ Սելօ.
27-ն մարտի (9-ն ապրիլի) 1903 թ.

Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ.

Գրաբննչ. կանոն. 178 յօդ. հիման վրայ ներքին գործոց
մինիստրը որոշեց.

Արգելել հետեւեալ լրագրերի հատով վաճառումը. «Рус-
скія Вѣдомости», «Кіевское Слово», «С.-Пет. Вѣд.» և «Но-
вое Время».

Յինդանդիայում նախազգուշացում է յայտնուած հետեւեալ
թերթերին. „Helsingfors Posten“, „Vestra Finland“, „Sano-
mia Turusta“, „Unsi Suometar“ (2-րդ անգամ), „Päivälehit“
„Tampereen Untiset“, „Borgobladet“, „Unsimaa“ և 5 օրով
զադարեցրուած է „Hufvudstadsbladet“:

Այսուհետև ֆինլանդական լրագրները կարող են համերդ-
ների, ներկայացումների և բոլոր նման խրատձանձրների մասին
յայտարարութիւններ սպել միմիայն պատշաճ իշխանութեան
թոյլաութեամբ:

«Баку» լրագրում սպաղրուած է. «Մեր մշտական աշխա-
տակիցներ Գ. Ստարցև (Vox) և Ա. Մատիչինսկի (Մոնզոր,
Չանտով) ուղևորում են երկրի սահմաններից դուրս. այսուա-
մենայնիւ նրանց աշխատակցութիւնը մեր լրագրներում չի գա-
դարի»:

Արձակուում է պաշտօնից Վիտերսկի քաղաքապետին Վալ-
կովիչ քաղաքային կանոնադրութեան 149-րդ և 150-րդ յօդ. հի-
ման վրայ:

Յոճուեար և փետրուար ամիսների ընթացքում Պետերբուր-
ցի դատատանական պալատը քննում էր Կրոնշտադտ քաղաքի
նախկին ոստիկանապետ Իոսի-գնդապետ Շաֆրովի գործերը:
Սկսելով իր ծառայութիւնը Մոսկուայում 1887 թւականին նախ

պրիստաւի օղնականի, ապա պրիստաւի պաշտօնում, Շաֆրովը 1892 թ. արձակուում է իրրե կաշառակեր: Այդ չէ խանդարում նրան շարունակել իր ծառայութիւնը Պետերբուրգում: 1894 թւականին այգտեղ ևս արձակուում է նոյն պատճառով: Չը նա-յած դրան, պաշտօնապէս յայտնի էր միայն այնքան, որ «Շաֆ-րովը արձակուած է տնային հանգամանքներով», ուստի նա 1896 թւականին կարողացաւ ստանալ Կրօնչտագրտի ուտիկա-նապետի պաշտօնը: Այգտեղ ևս Շաֆրովը շարունակեց իր սո-վորական աղօրինի կաշառակերութիւնը և բազմաթիւ զեղծում-ները, մինչև որ նրա դէմ դանդատներն վերջապէս 1899 թւա-կանին դարձրին նաև դատախազական վերահսկողութեան ու-չադրութիւնը: Եւ միմիայն դատախազական վերահսկիչի ցոյց տուած հաստատակամութեան շնորհիւ կառավարչական Սինոդը 1900 թւականի մայիսի 22-ին հրամայեց կատարել նախնական քննութիւն Շաֆրովի գործած բազմաթիւ զեղծումների մասին և հեռացնել նրան պաշտօնից:

Պալատը դատապարտեց Շաֆրովին, զրկելով բոլոր առան-ձին իրաւունքներից և արտօնութիւններից, և երկու տարի ժամանակով յանձնելով նրան ուղղիչ կալանաւորական բաժան-մունքը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մակեդոնական հարցի ընդարձակումը.—Ջահագրգռուած կողմերի երկդիմի վերաբերմունքը.—Աւստրո-Ունգարիայի ձգտումները.—Մակեդոնացիների որոշումը.—Գիւնամիսայի կայսրումներ Սոլունում.—Մի քանի մեծ պետութիւնների կողմից նաւաստիօղներ ուղարկելը Սոլուն.—Գիլիկիայի նորընտիր կաթողիկոսի ժամանումը Սիւ.—Պոսով դրամ փոխադրելու համաձայնութիւն Ռուսաստանի եւ Բուլղարիայի մեջ:

Ոչ էջուարդ VII-րդի այցելութիւնը Պորտուգալիային, Իտալիային և Ֆրանսիային, ոչ Վիլհելմ II-րդի ճանապարհորդութիւնը Հռոմ և Լուբէի ճանապարհորդութիւնը Ալժիր, ոչ Մարոկկոյում շարունակուող ներքին արիւնահեղ երկպառակութիւնը, ոչ Սոմալիլէնդում Անգլիայի կրած պարտութիւնը «խենթ մուլայից», նոյնիսկ ոչ գրէյֆուսեան դործի կրկին յարուածն առնելը կամ բայստապի նոր ընտրութիւնների համար անուող պատրաստութիւնները—ոչ մէկը զրանցից այնքան չեն գրաւում այժմ քաղաքակիրթ ազգերի ուշքը, որքան օրէցօր առաւել սուր կերպարանք ստացող մակեդոնական ինդիքը, որ այժմ դառաւ նաև Ալբանիայի և Հին Սերբիայի (Կոստովեան վիլայէթ) հարց:

Այդպիսով Մակեդոնական հարցը, որ սկզբում վերաբերում էր եւրոպական Թիւրքիայի իսկապէս միայն երկու վիլայէթներին—Սալոնիկեան և Մոնաստըրեան—ընականաբար ընդարձակուելով տարածուեց նաև Ալբանիայի հիւսիսային մասի, ինչպէս և Հին-Սերբիայի կամ Կոստովեան վիլայէթի վրայ, մի կողմ թողնելով ոչ միայն Փոքր-Ասիայի վիլայէթները, այլև եւրոպական Թիւրքիայի Ադրիանոպոլի, Եանինայի (հարաւային Ալբանիա) և Սկուտարիի (միջին Ալբանիա) վիլայէթների վարչական բարեփոխութեան հարցը, չենք գրում իսպառ մոռացուած «ինքնավարութիւն» կամ «աւտոնոմիա» խօսքը, որ

կարծես այժմ ամաչում են դործածել Բերլինի դաշնագիրը ըստորագրող մեծ պետութիւնները...

Թիւրքիայի բեֆորմները իրագործելու հարցում կարելի է նկատել բոլոր շահագրգռուած կողմերի մէջ (բայի ճնշուած ռայայի) կեղծիք. հրատարակօրէն ասում են մի բան, իսկ տակից, ծածուկ ուրիշ պատրաստութիւններ են տեսնում... Ամենից շատ երկզիմութիւն է բանեցնում Ասարօ-Ունդարիան: Հետաւոր գաղութներից զուրկ այդ եւրոպական ցամաքային մեծ պետութիւնը ուզում է Հին-Սերբիայի և Մակեդոնիայի վրայով հասնել Սալոնիկի ծոցը մի կողմից և՛ Հիւսիսային Ալբանիայի, Սկուտարիի վիայէթի վրայով, Ադրիական ծովի ափը: Իր այդ նպատակի մէջ Աւստրիան մի կողմից անբարեացակամ վերաբերմունք է գտնում սլաւոնական տարրերի կողմից (Չերնոգորիա, Սերբիա, Բուլղարիա), միւս կողմից էլ՝ գէպի Ադրիական ծովը ձգտելու մէջ, զսպում է Իտալիայի տենչանքով—պահել իր համար հարկան Ալբանիան:

Իր այդ ձգտումների մէջ Աւստրիան կթէ ունի մի տարր, որ համեմատաբար համակրանքով է վերաբերում իրան—գա կաթոլիկ ալբանացիներն են, որոնք Սկուտարիի վիլայէթի ազգաբնակչութեան մեծամասնութիւնն են կազմում: Սակայն անկախութիւն սիրող մահմէդական ալբանացիները, ինչպէս և «Մակեդոնիան մակեդոնացիներն համար» դաւանող Մոնաստրի և Սալոնիկի սլաւոնները՝ մտադիր չեն կրակից չաղանակներ հանել Աւստրիայի համար: Այդ լաւ իմանալով Աւստրիան՝ վերագասում է Թիւրքիայի status quo-ն—որովհետեւ այդ պայմաններում նա de facto անտեսապէս կը նուածի իր բան ցանկալի երկիրները (գէպի Ադրիատիկ ծովը և Սալոնիկի ծոցը): Հասկանալի է, թէ ինչու նա պէտք է աշխատի պահպանել status quo-ն և դէմ լինի մակեդոնական յեղափոխական շարժման և ալբանացիների անկախութեան ձգտումներին:

Լաւ ծծում է Թիւրքիային նաև Գերմանիան, որ մի պարագիտի նման տեղաւորուել է այդ ախմախ հրէջի շլինքին և զեչեփոտներ է անում... Նրան ինչ ձևեր կը տայ, որ իսկապէս վերածնունդ այդ հրէջը...

Ֆրանսիական կապիտալիստները և կղերականները պակաս չա՛հ չ'ունեն այդ փթած կարգերից: Գուցէ ամենից շատ Անգլիան անկեղծօրէն ցանկանար տանել Թիւրքիայի բոլոր մասերի ինքնավար անջատումները, բայց նախ՝ որ վախենում է «պանսլաւիզմի» զարգացումից, որի շնորհիւ Ռուսաստանի ազդեցութեանը կ'աւելանար Միջերկրական ծովում, իսկ երկրորդ՝ միւս

մեծ պետութիւնների շահերը հակառակ են նրա այդ բարի ցանկութիւններին:

Եւ ահա այդ արտաքին խճճուած հանդամանքներում մակեդոնական յեղափոխականները յոյս դնելով արիւնակից Բուլղարիայի անպայման (թէկուզ սրողուած) աջակցութեան, երկար տարիների ընթացքում նախապատրաստուեցին թոթափելու Օսմանեան անարդ ու սպանիչ լուծը: Եւրոպան ուղեցնրանց հանդստացնել և առաջարկեց բեֆորմների մի ծրագիր, որը ոչ գոհացրեց մակեդոնացիներին, ոչ էլ ոյժ ունեցաւ դապել բեֆորմներին հակառակ արձանացիներին: Այդ բեֆորմները իրազորձելու համար առնուադր հարկուոր էր ղինաթափ անել արձանացիներին, եւրոպական Թիւրքիայի այդ քրդերին և համիդականներին, պէտք էր թիւրքական ժանդարմերիայի մէջ քրիստոնէական տարր մտցնել և հրաժանատարութիւնը յանձնել եւրոպական օֆիցիւրներին: Իսկ ով կը ստիպէր քաջ արձանացուն իջնել իր անմառչելի լեռներից ու ծմակներից և դէնքը յանձնել, ով կը լցնէր Թիւրքիայի գատարկ զանձարանը՝ կանոնաւորապէս վարձատրելու համար թէ վերանորոգուած ժանդարմերիան և թէ եւրոպացի մեծապահանջ օֆիցիւրներին:

Ամենից լաւ դիւտում էին դիւլտմատիայի մշտիւած ծրագրերի անիրազորձելի լինելը՝ Թիւրքիայի բեժիմը իրանց կաշուի վրայ ուսումնասիրած մակեդոնացիները: Ուստի դրանք շարունակեցին իրանց հրոսակախմբերով անհաւատար կռիւր և — դգալի գարձնելու համար նաև եւրոպական բուրժուազիայի հաստ կաշուի վրայ թիւրքական կարգնրի գեղեցիկ կողմերը — գինամիտային մի շարք պայթումներ առաջացրին թէ Սալոնիկում և թէ այլ տեղերում: Այդ պայթումներից վնասուեց Սալոնիկի Օտտոմանեան բանիւր, որ կիսաեւրոպական մի հաստատութիւն է, վնասուեց նոյն քաղաքում եւրոպական կողմիսաների ժողովարանը, գերմանական կլուբը, ֆրանսիական մի նաւ: Նման ձեով աւերումներ եղան Բիտոլի և Ուսկիւբի մէջ: Վնասուեցան շատ տեղերում երկաթուղային կամուրջներ եայն:

Թէ ինչ տղաւորութիւն են թողել այդ պայթումները և ինչ քաղաքական դրութիւն են ստեղծել, այդ երևում է Berliner Tagedlatt-ի հետեւեալ թղթակցութիւնից.

«Սալոնիկեան անցքերի արած տղաւորութիւնը Պոլսում չմեցուցիչ էր. երկիւզ կրելով, որ չը լինի թէ պայթումները կրկնուեն, Պոլսում բոլոր պետական շինութիւնները պահպանում են զօրքերով: Զօրքեր և ուղարկուած նաև Սոլուն: Սակայն մեծ յոյս չ'ունեն, որ զօրքերը պահպանեն ճանապարհների

սպանությունները, որովհետև 7 ամիս է դրանք ոտճիկ չեն ստանում և ստիպուած են իրանց սպրուստը հայթայթել գողութիւններով... Իլլըղ-Քեօշկում դրութիւնը անօրինական է, քաղաքական շրջանները արամադրուած են յոռետես կերպով, լուրեր են սլտաւում պետութիւնների ծովային ցոյցի մասին Սոլունի առաջ: Սոլունի բուլղարների տներում կատարուած խուզարկութիւնների ժամանակ շատ ոռւմբեր են գտնուելը:

Իտալիան և Աւստրո-Ունգարիան արդէն նաւատորմիդներ են ուղարկել Սոլունի ջրերը: Պարիզից հրաման է ուղարկուած Տուլոն՝ նաւերի զօրաբաժնին ուղևորել Սալոնիկի: Ասում են թէ Իլլըղ-Քեօշկում արամադիր են ուլտիմատում ուղարկել Բուլղարիային...

Լ. Ս.

26 ապր.

Մարտի 18-ին Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս Սահակ Խապայեանը Մխիթից մեկնեց դէպի Սիւ մեծ հանդիսով:

Ժամ 10-ին թափորը հասաւ Սոյ կամուրջին: Կաթողիկոսը կամուրջին վրայ կառքէն իջնելով միութէսարիֆ փաշայի կողմէ զրկուած զարդարուն թամբով ձին նստելով, թափորը դէպի Մայրավանք ուղղուեցաւ, դպիրք միշտ կ'երգէին. երբ թափորը վանքին հասաւ, քահանայք զգեստաւորեալ դիմաւորեցին: Կաթողիկոսը ձիէն իջնելով ծանրադին շուրջառ և կաթողիկոսական գաւազան առաւ, շարահանների երգերով և ինկարկութիւններով տաճարը մտաւ, սեղան իջնելով ուխտը կատարեց, վերջ ժողովրդին դառնալով գտած ընդունելութեան համար գոհունակութիւն յայտնեց: Քարոզէ վերջ, միևնոյն խանդիսաւորութեամբ վեհարանն իջաւ: Հոն բարի դալստեան շնորհաւորութիւններն ընդունեց: Գիշերը վանքին մէջ լուսավառութիւնք եղան:

Կիրակոս և Մովսէս եպիսկոպոսները մարտի 23-ին շրջաբերական հանեցին, որ կաթողիկոսը ապրիլ 20 աշխարհամատրան կիրակին օծումը պիտի ընդունի և ապրիլ 27 կանաչ կիրակին ալ սրբալոյս մեռնսօրհնէք պիտի կատարէ: Յիշեալ շրջաբերականէն Կիլիկիոյ բոլոր թեմերը զրկուած է:

(Քաղուած է «Բիւզանդիոնից»)

„Собр. Узакон. и Распор. Правит.“-ի մէջ տպուած է ռուսական և բուլղարական կառավարութիւնների մէջ կայացած համաձայնութեան մասին՝ Ռուսաստանի և Բուլղարիայի մէջ

պոստային գրամական փոխադրութիւնների վերաբերեալ: Այդ համաձայնութեան զօրութեամբ իւրաքանչիւր փոխադրութեան զումար նշանակուելու է ուղարկողից այն երկրի գրամով, որտեղ յանձնուում է այն: Պոստային վարչութիւնը հետևեալ հաշուով պէտք է ընդունի գրամը—1 ր.—2,87 ֆր. և 1 ֆր.—37, 5 կ.:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Русская Мысль», Մարտ.— «Գրքերի հոսանք».— ակնյայտնի փաստ է, որ իւրաքանչիւր երկրի, իւրաքանչիւր ժողովրդի քաղաքակրթութեան աստիճանին համապատասխանում է ընթացիկ գրականութեան յատկութիւնը, լոյս տեսած գրքերի որակն ու քանակը: Լայնարձակ Ռուսաստանն իր բազմամիլիոն ազգաբնակչութեամբ բաւական խայտարդեալ անասրան է ներկայացնում այդ տեսակէտից, որովհետև ունի բազմաթիւ ազգեր տարբեր կուլտուրայով ու առանձնայատկութիւններով: Բայց այդ բոլոր ազգերի շարքում դերակշռող տեղը բռնում է ինքը ուս տարբը, ուստի և նրա քաղաքակրթութեան աստիճանը, նրա գրականութեան որակը կարող է մօտաւոր նշանացոյց լինել ամբողջ պետութեան համար:

Ան այդ նշանացոյցը բնորոշելու տեսակէտից մի հետաքրքրաշարժ նիւթ է ներկայացնում Ն. Բուրակինի յօդուածը՝ «Գրքերի հոսանք» խորագրերով: Գրքերը մարդկութեան բիրտեղացած մտաւոր աշխատանքն են ներկայացնում, ասում է հեղինակը, որ իսկական հոսանքի նման սահում է անցեալից դէպի ապագան, ժամանակի և տարածութեան միջոցով, մեր վրայով, մեր շուրջը...

Գրքերի հոսանքը տնում է իբրև մի համաշխարհային, տարերային երեւոյթ: Ամբողջ աշխարհում չը կայ մի

երկիր, որտեղ գրական խօսքը չ'աճէր ու չը զարգանար: Նոյնիսկ Թիւրքիայի ու Պարսկաստանի նման յետամնաց երկիրները գրականական կենդանութեան որոշ նշաններ են ցոյց տալիս:

Վերջին 25 տարիներում ուսաց գրականութեան մէջ տեղի են ունեցել մի շարք հետաքրքրաշարժ ու նշանաւոր երևոյթներ, որոնց վրայ արժէ ուշք դարձնել:

Անցեալ 1887 թ. Ռուսերէն լեզուով լոյս են տեսել 18,540,390 օրինակ գրքեր ու բրոշխուրներ: Այդ միևնույն թիւանիւն ազգաբնակչութեան թիւը եղել է մօտ 110 միլիոն, ուրեմն իւրաքանչիւր բնակչին զալիս է միջին թւով 0,17 գիրք: Բայց ազգաբնակչութեան միայն մի որոշ մասն է օգտուել գրական բարիքից, որովհետև ամբողջից միայն 26 միլիոն է զբաղեալ եղել: Ուրիշ խօսքով ասած՝ ամբողջ տարուայ ընթացքում իւրաքանչիւր բրնակչին հասել է միայն 0,7 գիրք—մի ողորմելի քանակութիւն, եթէ նոյնիսկ ընդունելու լինենք, թէ լոյս ահասած բոլոր գրքերն էլ ընթերցանութեան օգտակար նիւթեր են սլարունակել իւրանց մէջ:

1888 թ. լոյս են տեսել 17,395,050 օրինակ գիրք, ուրեմն համեմատաբար ավելի պակասել է քանակը: Դա մի եզակի երևոյթ պէտք է համարել, որ XIX—բորգ դարի վերջերում ուրիշ

ոչ մի երկրում չէ նկատուել: Այդ երկոյթի պատճառները հասկանալու համար անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ 80—ալան թափանները ուսաց կեանքի պայմանները:

Այդ թափանից յետոյ էլ ուսերէն զրքերը քանակութիւնը տարէցտարի աւելացել է և 1901 թափանին հասել է 58,529,480:

Այդպէս ուրեմն 15 տարուայ ընթացքում ուսերէն զրքերը քանակութիւնը շատացել է գրեթէ 3 անգամ: Խոշոր առաջադիմութիւն է դա առանձին վերջրած, բայց դարձեալ շնչին՝ ազդարընակութեան համեմատութեամբ: Վերջին թափանին զրադէտները թիւը եղել է 40 միլիոն, ուրեմն զրանցից իւրաքանչիւրին հասել է մօտաւորապէս 1¹/₂ գիրք:

Գրականութեան այդպիսի զարգացումը ցոյց է տալիս, որ ուսաց ներքին կեանքում խոշոր փոփոխութիւն է տեղի ունեցել, աւելացել է մտաւոր նոր ոյժ, գիտակցութիւն: Այդ փոփո-

խութիւնը նկատելի է նաև զրադիտութեան շափից: 1887 թ. ուս գիրնուրների ընդհանուր թւից 29,26%—ը է եղել զրադէտ, իսկ 1898 թ.—40,15%: Գրագիտութեան զարգացմանը մեծ դարկ են տուել, բացի դպրոցներէց, նաև ժողովրդական զրադարաններն ու ընթերցարանները, որոնց թիւը այժմ 15,000-ի է հասնում:

Գրականական հասանքի մեծանալն աւելի ճիշտ կերպով ընդդռնելու համար անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ ոչ միայն զրքերի քանակութիւնը, այլ և բովանդակութիւնը, ուղղութիւնը: Բայց նախքան այդ՝ յիշենք, թէ յիշեալ ժամանակաշրջանի գէթ երեք տարին վերջրած քանի անուն գիրք կամ ուրիշ լսօքով ասած՝ քանի հեղինակութիւն է տուել:

1887 թ. լոյս է տեսել 5,442 հեղինակութիւն:

Այդ բոլոր հեղինակութիւններն իրանց բովանդակութեամբ՝ 1091 թ. ներկայացնում են հետեւեալը.

հեղինակութիւն	16,483,597	օրինակ
Կրթականութիւն	2,222	
Բնութագրական	798	»
Գրամատիկական	318	»
Գրականական ուրիշ ժողովածուներ	49	»
Գեղարուեստական	139	»
Թժշկական	763	»
Գիւղատնտեսական	338	»
Տեխնիկական	604	»
Բնագիտական	412	»
Աշխարհագրական	206	»
Օղերութարանական	62	»
Մատենատիկական	60	»
Պատմական	400	»
Իրաւարանական	220	»
Վիճակագրական	141	»
Կենսագրական	171	»
Գրակ. պատմութիւն	67	»
Լեզուաբանական	156	»
Տնտեսական	48	»
Քննադատական	123	»
Փիլիսոփայական	144	»
Վաճառակ. և արդիւնագ.	84	»
Քաղաքակ. և հասարական.	164	»
Քաղաքատնտեսական	44	»
Ժողովրդ. էժան. լուրոշնի	457	»

Մանկական	427	»	3,243,945	»
Զինուորական գործի մասին	250	»	538,478	»
Հաշւապահական	32	»	46,970	»
Խառը	217	»	826,505	»
Մանկավարժական	208	»	271,704	»
Տեղեկատու գրքեր	690	»	8,404,219	»
Ջանադան հաշիւներ	555	»	488,663	»
Նոտաներ ընազրի հետ	66	»	159,710	»
Ալբոմներ	8	»	18,250	»
Քարտէզներ	28	»	65,580	»

Այդպէս սւրեմն Ռուսաստանում ամենից շատ կը օճական գրքեր են լոյս տեսել, ապա՝ բելլետրիստիկական, բըժշկական և այլն: Դրանից կարելի է գէթ մի մտաւոր գաղափար կազմել ուստի մոռովրդի քաղաքակրթութեան մասին:

«Սուրհանդակին» Պակաթայից գըրում են.—Դեռ Հնդկաստանը չը տեսած, իմացած էի թէ մեծահարուստ հայ վաճառականներ կան հոս: Ասոր համար երբ Պակաթա հասայ, առաջին գործս եղաւ հարցնել փնտրել տեղացի հայերուն կեդրոնը:

Բաւական ատեն թափառելէ վերջը, հազիւ յաջողեցայ տեղացի վաճառականի մը շնորհիւ գտնել մէկ երկու հայերու հասցէն: Կրնաք երևակայել թէ որչափ ուրախութիւն զգացի, երբ վերջապէս յաջողեցայ ազգակից մը գտնել:

Բայց յուսախարութիւնը շուտով վրայ հասաւ ինձի: Ճանչցուցածնիս անունով միայն հայ էր. դէմքը, շարժումները, հագուածքը և մանաւանդ խօսուածքը երբէք հայու յատկանիշ մը չ'ունէին: Մէկ երկու հարցումներ ըրի Պոլսեցի լեզուովս, բայց հազիւ կրցուէս անգլիերէն, կէս զրաբար լեզուով պատասխաններ մը տայ:

Չը կրցայ բան մը հասկնալ իր տուած բացատրութիւններէն: Միայն սաշափը հետևցուցի թէ, հոս գտնուող հայերը շատ հեռու չեն բոլորովին ձուլուելէ, եթե չեն ձուլուած դեռ:

Այս պայմաններուն տակ ի՞նչ կուզէք որ գրեմ ձեզի: Ազգակիցներ փնտրելու ձանձրացայ, որովհետև քանի

տեսնէի զանոնք, սիրտս անշափ կը ճմուռէր:

Իմացածիս նայելով, Պակաթայի մէջ հայերը ս. Նազարէթ անուն եկեղեցի մը ունին: Թերևս ուրիշ անուն առիթ ունենամ անոր հովիւին հետ տեսակցելու և ձեզի գրելու»:

«Миръ Божій»-Մարտ.—Դեռ գերտնդաբար անուանութեան մասին, շատ և գրուել ամբաստութեան մասին, շատ անգամ են քննուել հարցերը, թէ արդեօք միմիայն Ֆիզիոլոգիական պահանջի հետևանք է ամուսնութիւնը, թէ այդտեղ առաջնակարգ դեր են խաղում նաև անհատների հոգեկան-բարոյական ձգտումները և գաղափարական հակումները: Այո, գրուել ու քննուել են այդ հարցերը, բայց տարբեր կարծիքները դեռ չեն վերացել, հակադիր համոզումները դեռ շարունակում են մերթ ընդ մերթ տաք բանակը պիւններ առաջացնելը:

Անցեալ 1902 թ. «Миръ Божій» № 5 ում դ. Ժրմանկով «о врачахъ» խորագրով յօդուածում ի միջի այլոց խօսելով այդ խնդրի մասին, յիշել էր, թէ աշխարհահոշակ գրականագէտ Գլորգ Բրանդէսի կարծիքով «ամուսնութիւնը մի օրինաւոր ապահովութիւն է սեռական անընդհատ բաւականութեան համար...»

Սեռական բաւականութիւն... իսկ հոգեկան գործոնն աննշան է—այդ էր հետևում հեղինակաւոր քննադատի կարծիքից: Բայց ահա նա մի յատուկ նամակով զարխ է յայտնելու ընթերցողներին, որ իր մտքերն աղաւղել

են, որ ինքը բոլորովին այլ կարծիք ունի ամուսնութեան մասին.

— «Ես երբէք և ոչ մի տող չեմ գրել կամ ասել այն յիմար ու ստոր կարծիքներից, գրում է Բրանդէսն իր նամակում, որ ինձ են վերագրում: «Իրանք վերցրած են Նորդաուի «Այլասերումն» («Entartung») գրքից, որտեղ պատմուած է այդ սուան եմ մասին. դուցէ զրան հիմք է ծառայել հետեւելը.

— Ընդէ Հարբորդի մասին գրած յօդուածում ես ցաւակցութիւն էի յայտնել այն ասկետիզմի առիթով, որին ենթարկում են բարձր դասակարգերի ամուրի կանանց: Իրա համար յարձակուեցին ինձ վրայ, և ես պատասխանեցի, համառօտակի պատկերացնելով Լիւստրի հայեցակէտը պատկի և անպատկ ամուսնութեան մասին: Ես ցոյց տուի, թէ Լիւստրը մի քանի ստոր կարծիք ունէր ամուսնութեան մասին: Բայց ասել, թէ ես էլ այդ միևնոյն կարծիքի եմ, ես, որի հեղինակութիւնները այնպիսի բուռն կերպով արտայայտել են ուժեղ իղէւղիզմ թէ սեռական յարաբերութիւնները և թէ բոլոր միւս խնդիրները մասին, — դա տյնքան անհիմն է, այնքան տարօրինակ, որ չ'արժէ քննութեան առնելը»

Բայց որպէսզի ընթեցողն աւելի ամփոփ գտափար կազմէ Բրանդէսի կարծիքի մասին, աւելորդ չենք համարում առաջ բերել մի քանի քաղուածքներ նրա գրուածքներէից.

— «... Հասունացած մարդիկ զիտեն, որ աւելի բնական, աւելի առողջաբար է անկայուն բարեմասնութիւնը, քան թէ բնական ոխտը: Իսկ մարդկութեան վարդաքման ներկայ պայմաններում սովորաբար հարկաւոր է լինել գրանցից մէկը կամ միւսը: Թող դատարարութիւնն առանց քողարկելու սեռական յարաբերութիւնները պատկերը՝ կատարէ իր գործը և աշխատէ պահել ինստիտուտները իրանց բնական սահմաններում, բայց չ'երևակայինք, թէ կարելի է նրանց խեղդել

կամ արմատախիլ անել՝ առանց առաջացնելու մարդու մէջ զեֆեկաներ կամ բթացումն: Այն տեսակ ասկետիզմը, որ ներկայումս գարծաղրում է բարձր դասակարգերի ամուրի կանանց մեծամասնութիւնը, — դժբաղդութիւն է, անբնական երևոյթ է, զոհաբերութիւն է յանուն շնչին նախապաշարմունքի: Բնազգի կեանքը՝ կայ և նոյն շափով կը մնայ իբրև հող երևակայութեան ու զեղեցկութեան ծաղիկ համար, ինչպէս նաև թունաւոր ու զարշահոտ բոյսերի համար...»

Մատնանիշ անելով ծայրայեղ պահեցողութեան — ասկետիզմի բացասական կողմերը, «XIX դարի գրականութեան գլխաւոր հոսանքները» վերնագրով աշխատութեան մէջ Բրանդէս տեսում է.

— «... Ամենաբարձր ամուսնութիւնն այն է, երբ երկու մարդկային էակներ, որոնք միացել են մինչև մահ միասին ապրելու համար, սիրում են իրար այնպիսի սիրով, որը մահուն սահմաններէց էլ այն կողմն է անցընում: Բայց այդ իղէպը, այդպիսի բարձր ամուսնութիւնը միայն հազաւազիտ բաղդաւոր ընտրութեան հետեանք կարող է լինել և ոչ ստիպողական միջոցների արդիւնք...»

Այդպէս ուրեմն Բրանդէսի կարծիքով՝ «սիրով, ազատ ընտրութեամբ կատարուած բաղդաւոր ամուսնութիւնը ամենից լաւ կարող է լուծել ողջախոհութեան, պահեցողութեան և անկայն բարեմասնութեան» բարդ հարցերը: Սէրն ու ազատութիւնը մարդկային երջանկութեան հիմքն են կազմում:

Բրանդէսին մեծ ցաւ են պատճառում ամուսնութիւնից դուրս կատարուած սեռական յարաբերութիւնները պտուղները — ապօրինի վաւակները: «Մարտին Լիւտերի» մասին գրած յօդուածում նա է միջի այլոց ասում է.

— «Այժմ գոյութիւն ունեն երկու տեսակ ծնունդներ և մի տեսակ մահ: Ես չեմ հաւատում, թէ մեր հիմնարկութիւնները կարող են յաւիտենական

լինել: Ես հաւատում եմ, որ մարդկութիւնը պիտի կարողանայ յաղթել այն դժուարութիւններին, որոնք անյաղթելի են երևում մեր այժմեան քաղաքակրթութեանը»...

Այն, կը կարողանայ, բայց ոչ առանց ջանքերի: Իսկ այդ ջանքերից մէկն էլ սեռական յարաբերութիւնները, ամուսնական կեանքի կանոնաւորութեան շուրջը պէտք է պատուի:

«Вѣстникъ Европы», Մարտ. — Ազնւակաւուքիւհը եւ հոգիւսիւքիւհը» վերնագրի տակ պ. Փ. Տերներ խօսում է ռուսաց ազնւականութեան մօտիկ անցեալի, նրա կատարած դերի և կրած փոփոխութեան մասին:

— Ռուսաստանի ամբողջ դիւզատընտեսական կազմը, սուում է նա, հիմնուած է երկու դասակարգերի՝ աղընրւականութեան և գիւղացիների վրայ: Ճորտութիւնը վերացնելուց յետոյ փոխուցին այդ երկու դասակարգերի յարաբերութիւնները և դրա հետ միասին ազնւականութեան վարչական դերը: Մինչև 1861 թ. երկրի ներքին կառավարութիւնն ամբողջապէս ազնւականութեան ձեռքին էր, չը հաշուելով քաղաքային շահերը:

Ճորտութեան հետ վերացաւ և սղընրականութեան այդպիսի դրութիւնը, ուստի բնականաբար հարց առաջ եկաւ, թէ արդեօք դրանից յետոյ նա ինչ դեր պէտք է լաղայ:

Գոյութիւն ստացան երկու ուղղութիւն: Գրանցից մէկը պնդում էր, թէ ազնւականութեանը կորուստ և քայքայում է սպառնում, եթէ կառավարութիւնը նրան ամենաջերմ պաշտպանութիւն ցոյց չը տայ: «Միթէ մենք հանգիստ որտով պէտք է նայինք աղընրականութեան կործանման վրայ, բացազանչում էր «Московскія Вѣдомости», գիտենալով հանդերձ, որ դրան պէտք է հետի միապետութեան կործանումը»...

Ահա այդպիսով այդ ուղղութեան հետեղները ազնւականութիւնը համարում էին զահի և հայրենիքի գլխա-

ւոր նեցուկը, ուստի և պահանջում էին նրա համար հովանաւորութիւն, արտօնութիւններ ու օժանդակութիւններ:

Երկրորդ ուղղութեան հետեղները, որոնց թուումն և Բ. Չիչերին, Եւրկինով, Նովիկով, Մարկով պնդում էին, թէ չի կարելի սսել, որ միայն ազնւականութիւնն է զահի և հայրենիքի գլխաւոր նեցուկը, որովհետև ամբողջ առաւ ժողովուրդը պատմութեան ընթացքում ցոյց է տուել անսահման անձնագոհութիւն դէպի իր հայրենիքը: Գրանց կարծիքով հարկաւոր է ոչ թէ ուժեղացնել ազնւականութիւնն իբրև մի առանձին դասակարգ—կաստա, այլ աշխատել, որ նա իր բարձր զարգացման շնորհիւ կրթիչ աղբեցութիւն ունենայ աղբարնակութեան մնացած մասի վրայ...

Պատմութիւնը ցոյց է տալիս, շարունակում է պ. Տերներ, որ ազնւականութիւնը միայն այնտեղ է պահպանել իր նշանակութիւնը, որտեղ նա կենդանի մասնակցութիւն է ունեցել երկրի բարբորութեան ու վարգայման զործում:

Իսկ ինչ ուղղութեամբ է զնալու ռուսաց ազնւականութիւնը:

Այդ հարցին պատասխանելու համար պ. Տերներ վերլուծում է ռուսաց ազնւականութեան վիճակն ու կրած փոփոխութիւնները վերջին 40 տարիների ընթացքում, յիշում է, որ նա զանազան տնտեսական պատճառներով վերջին տարիներս մեծ տաղնապի է ենթարկուել, ուստի նրան օգնութեան է հասել կառավարութիւնը գանաղոն միջոցներով: Ազնւականութեան սեփականութիւնը հետգհետէ սահմանափակուել է (օրինակ՝ միայն 8 կենտրոնական նահանգներում 1893 թ. աղետականութիւնը վաճառել է իր հողերից 582,000 դեսետաին, որի մեծ մասը գիւղացիների ձեռքն է անցել), բայց այնուամենայնիւ նա դեռ շատ մեծ նշանակութիւն ունի, որովհետև Ռուսաստանը գլխաւորապէս հողագործական երկիր է և հէնց դրա պատ-

ճառով սպնականութիւնը պինդ կապով կապուած է հրկրադուրծ դասակարգի հետ...

Հանդէս Ամսօրեայի մարտի համարում կարգում ենք. — «Մուրճի» բաժանորդներուն վիճակագրութենէն*) կը տեսնուի թէ «Մուրճ» բովանդակ Աւստրիայ մէջ, ուր երկու հայ մեծ գաղթականութենէ զատ՝ որոնք տակաւ ոչնչանալու վրայ են, աստ անդ բաւական ստուար թուով ազգասէր գաղութներ եւս կան—ընդ ամէնը՝ մեկ բաժանորդ ունի, շահուելով թերթերու հետ փոխանակութիւնը. եւ այս մէկ բաժանորդն ալ օտարազգի մըն է՝ Մորաւիոյ Նիկոլշից փոքրիկ գիւղին լատին ժողովրդագրաբար—Ալ. Կուտելկա (Köudelka): Յարգելի եկեղեցականը գրեթէ եւրոպական ամէն լնդունքէն բազմաթիւ ընտիր երկեր թարգմանած է բոհեմերէնի, մեծու մասամբ գեղեցիկ զբաղանութենէ: Իւր հայրենակցաց՝ Հայոց արգի գեղարուեստական զբաղանութենէն ճաշակ մը տալու բաղձանքը մղած է զինքը հայերէն հին ու նոր լեզուներն ալ սորվելու: Հայերէն ձոխ բառամթերքին իրեն զարհուրելի երկնալովն հանդերձ՝ ինքը ընաշխատութեամբ այնչափ յառաջ գացած է հայերէնի մէջ, որ առանց բառազրթի օգնութեան՝ կարող է հայերէն սրև է գրութիւն—ի մասնաւորի արևելեան կամ Ռուսահայոց լեզուաւ գրուածք—շեխերէնի կամ—բոհեմերէնի թարգմանել: Արդէն թարգմանած է և առանձին գրքով հրատարկած է Բաֆֆիին «Խենթը»**), որ սիրուն

հատոր մը եղած է և նուիրուած՝ մեր Վ. Յ. Պիլէզիկճեան Վարդապետին: Hlas (Չայն) ամենօրեայ բոհեմերէն թերթին մէջ նոյն հայ հեղինակին «Ջալալէղլին» և Վէպիկներէն երկու հարը թարգմանութեամբ ի լոյս ընծայած է: Միևնոյն թերթին մէջ բոհեմերէնի վերածած է Ս. Ահարոնեանի Պատկերներէն Փշուր-րալ խա՛ցն և Պուս-րալ կա՛ր-ը: Hlidka (Հանդէս) թերթին մէջ զբած է Միւրթարեան Միարանութեան վրայ սինարկ մը***), համառօտ տեսութիւն մը հայոց նորագոյն գեղեցիկ մատենագրութեան վրայ (1900—1901)՝ հետեւողութեամբ «Մուրճի», ուրիշ աղբերաց և անձնական ուսումնասիրութեամբ. անկարկ մը հայոց երկրին, հայերէն լոյս տեսած գրութեանց կայլն մասին՝ հետեւողութեամբ Հանդէս Ամսօրեայի, Մուրճի և ուրիշ աղբերաց: Հիմայ կը թարգմանէ Չիրվանդալէի Նառուսը, որուն պիտի յաջորդէ Ահարոնեանի գրութիւններէն հանուած ընտիր ժողովածոյք մը: Որչափ կը լսենք, այս վերջին երկուքը՝ տարւոյս ընթացքին մէջ լոյս ելլելով՝ Չ գեղեցիկ հատոր պիտի կազմեն: Հայագէտիս մէկ մեծ բաղձանքն եղած է տարիներէ ի վեր՝ նաև Պոօշեանցի Հայցի իւնդիտը բոհեմերէն թարգմանութեամբ իր հայրենակցաց ներկայացնել: Այս բաղձանքը լոկ անոր համար մինչև ցայսօր ամուլ բաղձանք մնացած է, վասն զի «Հայցի ինդիտ»-ը կարելի չէ եղած հայ զբաղանառաց քով գտնել սղաւած ըլլալուն:

*) Մուրճ» 1902 թ. 12, էջ 254—59.
 **) R a f f i, Chent. Historicky román z rusko-turecke války. Prelazolil z novoarmenstiny O. S. V e t-

ti. V Praze, 1902 թ, 454.—Կանխենք ըսենք որ O. S. Vetti Ալ. Կուտելկայի կեղծանունն է:
 ***) Köudelka Al., Mechitaristé: «Hlidka» ԺԸ. տարի, 1901 Թ., 2—5:

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Բ Ո Ւ Թ Ե Ա Ն

14 ապր. 1903 թ.

Խնարհաբար խնդրում եմ թոյլ տաք «Մուրճի» միջոցաւ յայտնել շնորհակալութիւն Ռիգայի վաճառական Պ. Աղէքսանդր Սողոյեանցին, որը այս 1903 թւի Մուրճի մի օրինակը նուիրել է իւր հայրենի Քեաֆթաուլի գիւղի դպրոցին: Ուսուցիչ Քեաֆթաուլայ դպրոցի Աւետիս Մարտիրոսեանց:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

ՇՈՒՇԻ. Լ. Տ.-Մ.—Ձի տպագրուելու:

ԼԷՅՊՑԻԳ. Լ. Բ.—Ձեզ նամակով կը պատասխանենք:

ԲԱԳՈՒ. պ. Մ. Ս.—Մուրճի համարները ուղարկելիս խմբագրութիւնս իւրաքանչիւր անգամ ճշտում է եւ այնպէս յանձնում պոստին. համարը չը ստանալու դէպքում պէտք է վարուել համաձայն խմբագր. կանոնների § 5-ին:

ՌՈՒՇՁՈՒԿ. պ. Գ. Մ.—Կարող ենք ուղարկել միմիայն № 4-ից սկսած:

ԲԱԳՈՒ. Ա. Բ.—Մենք կանոնաւոր ուղարկում ենք Աշտարակ վ. Գ.-ի հասցէով:

ԹԷԼԻՄՆ. պ. Տիգրան.—Անկարող եղանք տպագրել Ձեր «Ֆրանսացի մէկ քանի հասարակական գործիչներ» յօդուածի շարունակութիւնը:

ՍԱՄԱՐՂԱՆԻ. Ռ. ք. Բ.—Ստացանք «Մուրճի» երկու բաժանորդագիրն եւ ըստ Ձեր ցանկութեան ուղարկում են «Մուրճ» ի յիշատակ հանգուցեալ Բարդուղիմէոս ա. ք. Բէկզիւլեանի:

ՓՈԹԻ. պ. Հ. Բ.—Դժբախտաբար այդ երեսները չը կան:

ՈՄՍԿ. պ. Կ. Ա.—Կարդացէք խմբագր. կանոն § 5:

Ն.-ՁՈՒՂԱ. պ. Մեղք. Ղարիբ.—Կենտրոնական դրավաճառանոցից մինչեւ այժմ էլ մենք չենք ստացել:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

		Մուրճի № 1-ում		
երես	տող	տպուած է	պիտի լինի	
75	վ. 3	անհրաժեշտ է, ասորի	անհրաժեշտ է պահպանել ազգութիւնը կայն. հէնց գրապատճառով էլ վայելում են ասորի	
№ 2-ում				
126	» 13	աչքերնուս մէջ	աչքերնուն մէջ	
»	» 14	պատարազի աւանդումէն	պատարազի աւարտումէն	
129	» 3	ճակատել	ճակատիլ	
131	» 5	ազգայինը օր մը	ազգայինը իմ նկարագրութեամբս ճանչնալէ յետոյ՝ եթէ երբէք օր մը	
133	» 11	կը խոստովանիմ այս մեծ	կը խոստովանիմ որ այս մեծ	
»	» 16	ցունելու	ցուցնելու	
»	» 23	արժանանանք	արժանանաք	
134	ն. 4	Լուլոնց Մեկրոնի տարին նոր լուր մը	Լուլոնց Մեկրոնը տարին ողջառողջ կը ըլլորէ և յաջորդաբարին նոր լուր մը	
134	ն. 17	սկեռամտածումին նուիրում	սկեռամտածումին նուիրած	
135	» 1	ոչ որ չը կասկածէր	ոչ որ կը կասկածէր	
136	վ. 9	անսովոր պատիւը, անարգուած	անսովոր պատիւը անոր անարգուած	
139	» 5	հիմա, ամենէն աւելի բամբասած էին զինք	հիմա, ամենէն աւելի անոնք էին խանդավառուողները, որոնք ամենէն աւելի բամբասած էին զինք	
139	ն. 15	ծափահարութիւններէ ընդարմացած	ծափահարութիւններու ընդկերացած	
146	» 5	սակայն հիման	սակայն հիմայ	
147	վ. 7	սրտակոտոր զոհերու	սրտակոտոր զոհերու	
151	» 22	300	900	
№ 3-ում				
197	» 38	հաճեց	աճեց	
№ 4-ում				
171	» 5	Բաշկալէից 4 1/2 ժամ հեռու գտնուում է Աղբակի կառավարչական կենտրոնատեղին	Աղբակի կառավարչական կենտրոնատեղի Բաշկալէից 4 1/2 ժամ հեռու գտնուում է	

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՄՈՒՐՃԻ» այս տարուայ բաժանորդագիրը

№ 4-ից սկսած

Ռուսաստանում 7 բուրլի
Արտասամանում 8 բուրլի

Բուլղարիայում և Ռումանիայում «Մուրճի» գործակալն է պ.
Գառնիկ Մազմանյան.
Հասցեն՝ Roustchouk (Bulgarie) Karnig Mazmanian.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՆԱՐԻՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

Սարգիս Արքեպիսկոպոս Հասան-Ջարալեանցի դրամազլիի
1902 թվականի հաշիւը.

Մուտք.	% թղթ.	Առձեռն դրամ.
	բուրլի	բուրլի կոպ.
Մինչև 1-ն յունուարի 1902 թ. մնում էր	84,550	852 43
1902 թ. ընթացքում մուտք է եղել	4,330	3398 35
	88,850	4250 78

Երախտ

Կնուած տոկոսաբեր թղթերի համար վճարուած է. 4.193 ռ. 77 կ.
և 1901 թ. հաշիւը տպագրելու համար 24 ռ. 60 կ. . . . ընդ. 4218 ռ. 37 կ.
Մինչև 1-ն յուն. 1903 թ. առձեռն պատրաստ կայ 88,850 ռ. . . . 32 ռ. 41 կ.
Ծանօթութիւն. Դրամազլուիւր գտնուում է Մոսկուայի Նա-
հանգական Գանձարանում և պիտի աճէ՝ 1883 թ-ից սկսուած՝
125 տարուան ընթացքում մինչև 12 միլլիոն բուրլի գումարի
հասնելը. այնուհետև պիտի գործադրուի նուէրատուի անուամբ
զպրոցներ հիմնելու և թոշակներ յատկացնելու համար:

1903 թ. „ԲԱՆԱՍԷՐ“ 1903 թ.

5-րդ տարի

ԱՄՍԱԹԵՐԹ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Տարեկան՝ 15 ֆր. = 6 բուրլի = 3 դոլլար: Կանխիկ:

Հասցեն՝ Basmadjian, 112, Bd. Rochechouart. Paris.

Начальникъ Закавказскихъ желѣзныхъ дорогъ, обремененный массою служебныхъ дѣлъ, рѣшительно не въ состоянїи принимать ежедневно просителей, которые являются во всякій часъ занятїи и, настаивая на немедленномъ приѣмѣ ихъ, заявляютъ, что они прїѣзжіе; а потому просить всѣхъ имѣющихъ до него дѣло и желающихъ личныхъ переговоровъ, обращаться къ нему въ приемные дни—по вторникамъ и пятницамъ отъ часу до двухъ дня.

3—1

1903 թ. „ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ“ 1903 թ.

Ժ. Է. տարի

ԲԵՐՈՅԵԿԱՆ, ՌԻՍՈՒՄՆԵԿԱՆ, ԵՐՈՒԵՏՏԵԳԻՏԵԿԱՆ ԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Տարեկան 10 ֆր. սահի—4 ռ.:

Վեցամսեայ 6 » » —2 » :

Մէկ թիւ կ'արժէ 1 ֆր.—50 կոպ.:

Հասցէն՝ VIENNE (Autrich) VII/2 Mechitharistengasse 4.
Pedaction de la Revue „HANDESS“

Բացում է բաժանորդագրութիւն

ՅՈՎՀԵՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵՆՅԻ

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ի

Մեծ զիւրքով մօտ 350 էջ

Զքեղ թղթի վրայ, հեղինակի պատկերով և

Փառակազմ 10 ռ.

Լաւ թղթի վրայ. 3 ռ.

Բաժանորդագրութիւնը կը փակուի յունիսին, և զրքերը կը արպուեն բաժանորդների թւով:

Թիֆլիսում զիմեւ—Իլիսանուհի Մ. Թումանեանցին (Барятин., 8)
և Փ. Վարդապարեանին (Вельямин., 24)

Բազում ինժեներ Միխիթար Տէր-Անդրէասեանին (Т-во Андраникъ) և Արամ Նազարէթեանին (К-ра Шагиданова):

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„Մ Չ Ա Կ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(31-րդ տարի)

ԱՌՍՁԻԿԱՅ 1903 ԹԻԱԿԱՆԻՆ

«Մշակը» հրատարակուելու է նոյն պրոգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր ըացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնևմէկ և տասն ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը՝ 1 ռուբլի:

Արտասահմանեան բաժանորդագրութիւն. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրամտանը (Բաղարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն), իսկ Բազում—ն. Գաւթեանի մօտ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրուելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններն ընդունուով են բոլոր լեզուներով:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունուով:

1903

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ա Ր Տ Է Մ Ի Ս

ԸՆՏՈՒՆԵԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԵԳՐԻ

Օ Ր Գ Ա Ն Ք Ս Ա Ն Ե Ր Ո Ր Գ Գ Ա Ր Ո Ւ Հ Ա Յ Կ Ա Ն Ա Ն Ց
(Բ. ՏԱՐԻ)

Բաժանորդագրութեան պայմաններն են՝

Եզրագրոսի համար տարեկան բաժանորդագրինն է դահ. ողջ.	40
Վեցամսեայ » » » »	25
Արտասահմանի համար տարեկան բաժանորդագրինն է ֆր.	12
Պարսկաստանի համար » » » »	8
Ռուսաստանի համար » » » »	5

ԱՊՍՈՒԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՁԷ ԸՆԴՈՒՆԵՒՈՒՄ
Դիմել
Rédaction de la Revue des Femmes Arméniennes

«**ARTÉMIS**»

Boîte Postale, 548, Alexandrie (Egypte)

Հոյս տեսաւ

„ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ“

ժողովածու հանդուցեալ բժիշկ

ԳԻՈՐԳ ԱԽՎԵՐԴԵԱՆԻ

Հրատարակութեամբ օր. ՄԱՆԷ ԱԽՎԵՐԴԵԱՆԻ
Խմբագրութեամբ «Ազգագրական Հանդիսի»:
Նքեղ տպագրութեամբ, 550 մեծադիր երեսներով:
Գինն է առանց ճանապարհածախսի 1 ր. 50 կ.
Դիմել Եր. Լալայեանցին, Тифлис, Саперная, № 5.
Հանդուցեալ բժիշկ Ախվերդեանի ղուստը՝ օր. Մանէ Ախ-
վերդեանը «Հայ Աշուղների» հրատարակութիւնն ամբողջապէս
նուիրել է «Ազգագրական Հանդիսի» խմբագրութեանը, իսկ
բժշկականութեան վերաբերեալ իր հօր հարուստ մատենադա-
րանը նուիրել է Կովկասեան Բժշկական ընկերութեանը:

ԱՄԲՈՂՁ 1902 թ. „ՄՈՒՐՃ“

ԱՐԺԷ 8 ԲՈՒԲԼԻ,

Ճանապարհածախսով 9 ռ.

և ո ս ն

ԹԻՍՎԱՆԻ „ՄՈՒՐՃԻ“

դատ-դատ համարների գինն է (բացի № 4) 50 կոպ.,
ճանապարհածախսով 65 կոպ.

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՌՈՂՋԱՊԱՅԻԿ ԹԵՐԹ“

երկշաբաթեայ պատկերազարդ հանդէսի

1903-4 ԹԻՎԵՆԻ ՀԱՄԱՐ

Իբրև յաւելուած, բաժանորդները կը ստանան ծրիապէս

4-ից մինչև 6 պատկերազարդ գրքոյկներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ Է 2 ռ. 50 կ. (ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ—10 Ֆրանկ)

կարկի է վճարել եւ մաս-մաս, սկզբում 1 ռ. 50 կ. յունուարին—1 ռ.:

Հրատարակութիւնը սկսուելու է սեպտեմբերին: Տարին սեպ-
տեմբերից—սեպտեմբեր է:

Աշխատակցելու են շատ հայ բժիշկներ թէ Ռուսաստանի և թէ
Թիւրքիայի ու Պարսկաստանի:

Բաժանորդագրութեան համար թէ Թիֆլիսի մէջ և թէ գաւառնե-
րից պէտք է գրմել կամ թերթիս խմբագրատունը (Сергиевская
ул. д. № 12), կամ «Գուտտենբերգ» գրավաճառանոցը (Книжная
торговля „Гуттенберг“):

Բազում կարկի է գրուել «Պրոմէթէուս» գրավաճ. (Товарище-
ство „Прометеусъ“), Պարսկաստանում գրմել Դ-ր ֆաշայեանին
(Թաւրիզ):

Մեր հասցէն Тифлисъ, Редакция „Арогджапайкъ Тергъ.“

Արտասահմանից. Tiflis. Redaction „Arogdjapahik Tert“.

ԽՄԲ.—ՀՐ. ԲԺ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ:

Փանակաւոր պատասխանատու-խմբագիր՝

Յ. ՍՊԵՆԳԻՆԵՐԵՆ

Հրատարակիչ՝ Կ. Կրասիցնիկեան

կան խմբադրի դրուծիւնը.—Թուրքերէն լեզուով լոյս տեսնող «Շարքը Առւա» թերթը.—Կրօնական եւ մտաւոր կապ.—Միջնակարգ դպրոցների մասին որոշում.—Նոր լեզուների գործնական պարապմունքներ միջնակարգ ուսումնարաններում.—„Кавказъ“—ը Սոչիի դէպքի մասին.—„Прав. Вѣст.“—ը Պետ.իգ.բժ. ինստ. յուզմունքների մասին.—Պ. պ. Ա. Մանթաշեանի եւ Մ. Արամանի դրամական նուէրները.—„Правит. Вѣст.“—ը ֆիշինեւի անկարգութիւնների մասին.—Բարձրադոյն հրամաններ.—Կարգադրուծիւններ մամուլի վերաբերեալ.—Պաշտօնից հեռացրուած քաղաքագուխ.—Նախկին ոստիկանապետ Շաֆրովի դատապարտումը 218

17. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Մակեդոնական հարցի ընդարձակումը.—Շահազրդուած կողմերի երկրի մի վերաբերմունքը.—Աւստրօ-Ունգարիայի ծգտումները.—Մակեդոնացիների որոշումը.—Գինամիտային պայթումներ Սոլունում.—Մեծ պետութիւնների կողմից նաւատորմի ղնք ուղակիքը Սոլուն.—Կիլիկիայի նորընտիր կաթողիկոսի ժամանումը Սիս.—Պոստով դրամ փոխադրելու համաձայնութիւնն Ռուսաստանի եւ Բուլղարիայի մէջ 235

18. ՊԱՐԲԵՐՔԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 240

19. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. 246

20. ՎՐԻՊԱԿՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ 247

21. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 249

22. ՅԱԻԵՂՈՒԱԾ, Ա. ԸՕԼԷՍԻ՝ Հրաչալի դար, թարգմ. Ստ. Լիսիցեանի. 65—80

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից զբեւ պարզ մանաւանդ թւերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:
2. Զընդունուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս: Զեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերագարձնուում:
3. Գրուածքների վարձատրութեան շափը որոշում է խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուշի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ուուերէն գրուած ազգով (заглавие) մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Եթ տեղեկութեանն անհրաժեշտ է կցել տեղական պոստային դրասենեակի հաւաստագիրը (удостоверение), որ ամսագրի համարը չէ յանձնուած դանդատաւորին:
6. Խմբագրութեանը ղանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակագրոջմ կամ պոստային բւանկ:

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

(նոր շրջան, III-րդ տարի)

Խմբագրութեան անդամների եւ աշխատակիցների նոյն կազմով:

Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ւ Ն Ն

Ռուսաստանում տարեկան 10 ըուր. Արսաստանում 12 ըուր.

„ կէս տարին 6 „ „ 7 „
„ 1 տնտես 1 „ „ 1 „ 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է բաժանորդ գրուել.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձափճափճեան փողոց, տ. № 16):

Գալստաթեան այլ քաղաքից պէտք է գրմել՝ Тифлисъ, въ редакцію

журнала „МУРՃ“.

Արսաստանից՝ Тифлис, Rédaction de la revue „MOURTCH“.

Բացի այդ, «Մուրճին» կարելի է գրուել նաև՝

Թիֆլիսում—«Դուտտենբերգ» գրափճառանոցում:

Ծանոթութիւն. Ռուսաստանի բաժանորդներէից նրանք, որոնք դժուարու-
նում են տարեկան բաժանորդադիւնը (10 ռ.) վճարել միանուազ՝ կարող են տալ
մ ա ս - մ ա ս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.:

Ոչ-Թիֆլիսի բաժանորդները հասցէն փոխելու համար պէտք է ուղար-
կեն 40 կոպ.:

Ձեռագիրները և նամակները պէտք է ուղղել խմբագրու-
թեան, ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով:

